ՌՈՒԲԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ԹԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

IV-X

դասարանների համար

ՌՈՒԲԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ ԹԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

IV-X

Դասարանների համար

Երկար սպասված սույն ժողովածուն գրված է IV-X դասարանների աշակերտների համար: Հեղինակները նյութերն ընտրել են անձնական բծախնդրությամբ՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրություններն ու տարիքային առանձնահատկությունները:

Ժողովածուում տեղ են գտել ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրականության դասականները՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև Ռազմիկ Դավոյան, Էկզյուպերիից մինչև Վիլյամ Թեքերի, Բրեխթ ու Ջեյմս Ջոյս: Ընտրված նյութերն ունեն ճանաչողական և դաստիարակչական մեծ նշանակություն, իսկ թեմաների մատուցման և առաջադրվող պահանջների յուրօրինակությունը նորություն են հայոց լեզվի ուսուցիչների համար: Առհասարակ ամբողջ գիրքը նոր խոսք է և ունի մեկ հիմնական առաքելություն՝ չափավորել ճաշակ, ընդլայնել սովորողների մտահորիզոնը, կրթել և դաստիարակել հոգին ու միտքը:

ՌՈՒԲԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ԹԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

IV-X

Դասարանների համար

Երևան 2000

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ

ԴՀՏ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Ն 152

Խմբագիր՝ ***Վիկտոր Մարտիրոսյան***

Նկարիչ՝ ***Արա Բաղդասարյան***

Նազարյան Ռ., Ալեքսանյան Թ.
Ն 152 ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ
IV-X դասարանների համար
Եր., «Զանգակ-97», 2000, 480 էջ:

Ն $\frac{460202010}{0003(01)\text{-}2000}$ - 2000 ԳՄԴ 81. 2Հ

ISBN 99930 - 2 - 093 - 1

· «Զանգակ-97»
· Ռ. Նազարյան, Թ. Ալեքսանյան

ՆԱԽԱԲԱՆ

Եթե ցանկանում ենք մտածել սովորեցնել,
ապա նախ և առաջ պետք է ծորինել սովորեցնենք:

Ջանի Ռոդարի

Տարիներ շարունակ մայրենի լեզվի և գրականության ուսուցիչները տրտնջացել են արդիական ոգով շնչող, երեխաների միտքն ու հոգին կրթող, ճաշակավոր փոխադրության նյութերի ձեռնարկ չունենալու համար:

Այս ժողովածուի հեղինակները փորձել են մեղմել խիստ արդարացի բողոքի ձայնը, լրացնել տարիներով բաց մնացած, ուսուցչին խիստ անհրաժեշտ այդ ձեռնարկի տեղը:

Սույն գիրքը նախատեսվում է հանրակրթական դպրոցի միջին (4-8-րդ) և ավագ (9-10-րդ) դասարանների աշակերտների համար: Նյութերն ընտրվել են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության գանձարանից: Դրանց ընտրությունը կատարվել է հետևյալ նկատառումներով.

ա) այսօրվա աշակերտի հետաքրքրությունների բավարարում.

բ) գրական ճաշակի ձևավորում.

գ) բարության և ազնվության սերմանում.

դ) մտահորիզոնի ընդլայնում, երևակայության զարգացում.

ե) ինքնաճանաչում, ազգային արժանապատվության դաստիարակում.

զ) օտարներին հասկանալու և նրանց ստեղծածը արժևորելու ունակության ձևավորում:

ԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ձանձրույթը մտքի թշնամին է:
Ջանի Ռոդարի

Փոխադրության սույն ժողովածուում նյութերն ընտրված են՝

ա) ըստ դասարանների՝ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և ավագ (9-10-րդ).

բ) ըստ նյութի բարդության. նախ տրվում են վերարտադրելու առումով դյուրին նյութեր, ապա աստիճանաբար բնագրերը բարդանում են.

գ) ըստ թեմաների ընդհանրության. եթե մի նյութ պատմում է մայրական սիրո մասին, հաջորդ նյութն էլ շարունակում է այդ թեման: Օրինակ՝ հինգերորդ դասարանում «Աղոթք» (ըստ Բաբկեն Շահումյանի), «Մայրը» (ըստ Գեզա Գարդոնի), «Արծիվը» (ըստ Վախթանգ Անանյանի) նյութերը մայրական սիրո և անձնազոհության մասին են պատմում.

դ) ըստ հեղինակների. եթե միջնադարի նշանավոր մտածող Լեոնարդո դա Վինչիից երկու կամ երեք հեքիաթ է ընտրված, ապա աշխատել ենք, որ դրանք հաջորդեն իրար:

Յուրաքանչյուր բնագրից հետո տրվում են պլան, առաջադրանքներ: Աշխատել ենք ուսուցչին օգնել, հուշել, թե ինչ բառեր ու բառակապակցություններ պիտի ուսուցանի տվյալ դասի ընթացքում: Որոշ դեպքերում էլ խորհուրդ է տրվում փոխադրության նյութերին զուգահեռ ցուցադրել կտավների, մանրանկարների վերատպություններ, կատարել լրացուցիչ աշխատանքներ:

Առաջադրանքներից հետո տրվում է հատուկ բաժին՝ «Տեղեկություն» վերտառությամբ, ուր հակիրճ ներկայացվում է քիչ ծանոթ հեղինակը, ումից որ վերցված է տվյալ նյութը: Ուսուցիչը կարող է նախօրոք ծանոթանալ տրվող տեղեկությանը, ապա այլ աղբյուրներից նյութեր քաղել՝ տվյալ հեղինակին ավելի ընդգրկուն ներկայացնելու համար: Նա կարող է նաև այդ գործը հանձնարարել իր լավագույն աշակերտին, իր օգնականին, որպեսզի նա նախօրոք կարդա և պատրաստվի՝ դասարանում՝ իր ընկերների առջև ելույթ ունենալու համար:

Ավագ դպրոցում բացի այդպիսի տեղեկություններից տրվում են նաև հարակից նյութեր, որոնք կօգնեն ուսուցչին գրական այս կամ այն թեմայի ուսուցման ընթացքում: Օրինակ՝ «Գրիգոր Նարեկացի» թեման ուսուցանելիս ուսուցիչը կարող է օգտագործել «Մրմունջ առ գեղեցկություն», «Ջրույց ամենազոր սրբի մասին» պատմվածքները, «Սայաթ-Նովա» թեման առավել ամբողջական կդառնա, եթե ուսուցիչն օգտագործի «Սիրո օրենքը» նյութը:

Այս դասարաններում հարակից նյութերը տրվում են և՛ ուսուցչի, և՛ աշակերտի մտահորիզոնը ընդլայնելու, գրական ճաշակ ձևավորելու, իմացական կարողությունները զարգացնելու նպատակով: Օրինակ՝ «Ռեքվիեմ» թեմայի համար իբրև հարակից նյութ տրված է Պուշկինի «Մոցարտ և Սալյերի» ողբերգությունից մի հատված:

Ձեռնարկում առաջին անգամ տրվում են նաև փոխադրության մի քանի տեսակ: Սրանք նոր խոսք են նմանօրինակ ձեռնարկի մեջ ընդգրկելու առումով, բայց բնավ էլ զարմանալի չեն պրպտող և ստեղծագործող ուսուցչի համար: Այս ձեռնարկի հեղինակները իրենց աշխատանքի ընթացքում բազմիցս կիրառել են փոխադրության այս տարատեսակները: Աշակերտները հաճույքով են ընդունում լավ մտածված և մշակված ցանկացած նորություն, հատկապես, եթե դա աշակերտի երևակայության և ստեղծագործական հակումների դրսևորում է պահանջում:

Այս ձեռնարկում առաջին անգամ նյութեր են նախատեսվել նաև ավագ դպրոցի (9-10-րդ) դասարանների համար: Կարծում ենք՝ ոչ մի տարիքի համար չպետք է բացառել փոխադրության՝ գրավոր խոսքի այս կարևոր տեսակի կիրառությունը:

Հատուկ ուշադրության է արժանացել հանրակրթական դպրոցի Ժրդ դասարանը: Այս դասարանի համար ընտրվել են բազմատեսակ և բազմաքանակ նյութեր, քանի որ սա ավարտական փուլ է, և աշակերտը տարեվերջին հանձնելու է պետական քննություն հայոց լեզվից, գրելու է փոխադրություն:

Փոխադրության դասական տեսակը այս ձեռնարկում զուգորդվում է անավարտ, ստեղծագործական հավելումներով, անվերնագիր, ստեղծագործական մուտքով, ինքնուրույն հանգուցալուծումով, դատողական-ստեղծագործական և այլ բնույթի պատումներով:

Գրքի վերջում տրված են նաև գործնական գրությունների գրեթե բոլոր տեսակները: Ուսուցիչն իր գործունեության ընթացքում հաճախ է բախվում դրանց կիրառության անհրաժեշտությանը: Ուստի՝ աշխատել ենք այդ հարցում ևս օգտակար լինել ուսուցչին (նաև՝ աշակերտին)՝ գրության այդ տեսակները գրագետ ու հայեցի կազմելու, դրանց ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿՈՎ

Բառերը ճիացնում են միտքը և թևավորում հոգին:

Արիստոֆան

Փոխադրության դաս:

Նախ խոսենք սովորական ուսուցողական փոխադրության դասի կազմակերպման մասին: Հարկ է հատկացնել երկու դասաժամ: Ուսուցիչը նախօրոք տանը ընտրում է փոխադրության նյութը, տեղեկանում գրողի կյանքի և գործի մասին, իր աշխատանքային տետրում դուրս է գրում անծանոթ բառերը, բառարանով գտնում դրանց բացատրությունը կամ հոմանիշները: Ձեռնարկում նյութից հետո տրվում են պլան և առաջադրանք: Եթե առաջարկվում է լսել երաժշտություն կամ ցուցադրել որևէ կտավի վերատպություն, դրանք ևս պատրաստում է և այդպես ներկայանում դասարան:

Ուսուցիչը գրատախտակին գրում է փոխադրության վերնագիրը: Աշակերտներին խնդրում է պատրաստել սևագրության տետր և գրիչ: Նպատակահարմար չէ փոխադրությունը միանգամից գրել տետրերում, որովհետև նախ՝ երեխային զրկում ենք իր գրածը մշակելու հնարավորությունից, ապա՝ նրան վարժեցնում ենք անփույթ ու ջնջումներով գրելուն:

Այնուհետև ուսուցիչը մեկ-երկու բառով ներկայացնում է տվյալ հեղինակին: Իսկ եթե նախօրոք հանձնարարել է որևէ աշակերտի հաղորդումով հանդես գալ, ապա լսում են նրան: Հետո ուսուցիչը արտահայտիչ և գեղեցիկ կարդում է բնագիրը: Կարդալուց հետո տեղեկանում է՝ նյութը դուր եկա՞վ աշակերտներին կամ ի՞նչ հասկացան: Բացատրում է բոլոր անծանոթ բառերը՝ գրել տալով բառատետրերում:

Հաջորդ փուլը խմբովին պլան կազմելն է: Ողջ դասարանով կազմում են պլան և գրում գրատախտակին: Ուսուցիչը բնագիրը կարդում է երկրորդ անգամ, որից հետո գրատախտակին գրվում են օգնող բառեր և բառակապակցություններ, նշվում է այս կամ այն բառի հոմանիշը կամ համարժեք դարձվածքը: Ապա ըստ պլանի կետերի, օգտագործելով սա-

վորած բառերն ու բառակապակցությունները՝ բանավոր վերարտադրում են նյութի բովանդակությունը: Ուսուցիչն այս աշխատանքին մասնակից է դարձնում բոլոր աշակերտներին: «Դու ի՞նչ կասես, դու ինչպե՞ս կպատմես այս հատվածը», - հաճախ դիմում է ուսուցիչը աշակերտներին:

Հատված-հատված պատմելուց հետո ուսուցիչը երկու կամ երեք աշակերտի խնդրում է պատմել ողջ նյութը՝ գործածելով անհրաժեշտ բառերն ու բառակապակցությունները:

Այնուհետև սկսվում է ինքնուրույն աշխատանքի փուլը: Աշակերտները սկսում են աշխատել սևագրության տետրերում: Եթե դասարանը թույլ է, ուսուցիչը բարձրաձայն կարդալ է տալիս մեկ-երկու աշակերտի գրած առաջին հատվածը, ուղղումներ է անում, իսկ ինքն էլ շրջում է, պատասխանում հարցերին, հիշեցնում, կանխում ուղղագրական և կետադրական սխալները:

Երբ սևագրության մեջ աշխատանքն ավարտվում է, ուսուցիչն առաջարկում է աշակերտին մտքում կարդալ գրածը, ստուգել, ապա թույլ է տալիս արտագրել ուսուցողական գրավոր տետրում:

Ուսումնական կիսամյակի ընթացքում առաջարկվում է գրել երկու ուսուցողական, որոնց կհաջորդի ստուգողական փոխադրություն: Ստուգողական փոխադրության ժամանակ ուսուցիչն աշխատում է քիչ միջամտել, պլան, օգնող բառեր, բառակապակցություններ չտալ: Իսկ եթե ցածր դասարան է, կամ աշակերտները դեռևս ինքնուրույն գրելու փորձառություն չունեն, ուսուցիչը կարող է օգնել կազմելու պլան, մեկ-երկու աշակերտի պատմել է տալիս և ապա հանձնարարում սևագրել, ստուգել գրածը և արտագրել տետրերում:

Հաճախ ուսուցիչները տրտնջում են, թե այս կամ այն նյութը ծավալուն է, աշակերտները չհասցրին գրել և այլն: Բայց ելք կա: Եթե դասարանը թույլ է, կապակցված խոսք կազմելու վարժված չէ, ապա կարելի է նյութեր ընտրել ավելի ցածր դասարանի համար նախատեսվածներից: Օրինակ՝ յոթերորդ դասարանում առաջին կիսամյակում կարելի է ընտրել վեցերորդ, նույնիսկ հինգերորդ դասարանցու համար նախատեսված նյութեր: Աշակերտներին վարժեցնելուց հետո միայն տալ յոթերորդ դասարանի համար ընտրված բնագրերից առավել մատչելին:

Բնավ էլ պարտադիր չէ վերարտադրել ողջ բնագիրը՝ իր բոլոր մանրամասներով: Կարելի է ծավալուն խոսքը շարադրել հակիրճ՝ պատմելով միայն գլխավորը: Սա շատ օգտակար աշխատանք է, որովհետև երեխային սովորեցնում է զատել գլխավորը երկրորդականից:

Կարելի է անել նաև հակառակը՝ նյութը հակիրճ պատմել և վերաշարադրել ավելի մանրամասն՝ ստեղծագործելով, ավելացնելով որոշ մանրամասներ և պատկերներ:

Փոխադրության տեսակները:

ա) Ստեղծագործական փոխադրություն.

ուսուցիչը վերնագրի տակ նշում է տեսակը, կարդում է փոխադրության նյութի տրված հատվածը, ապա հանձնարարում, որ աշակերտները ստեղծագործեն ու հորինեն շարունակությունն և ավարտ: Լավ կլինի, որ ուսուցիչը չկասեցնի աշակերտի երևակայության թռիչքը, չվախենա առանձին աշակերտների՝ առաջին հայացքից անհեթեթ թվացող հորինվածքներից: Հաճախ մյուս աշակերտներն էլ խիստ ոգևորվում են իրենց ընկերոջ գյուտից և փորձում նրան գերազանցել: Եթե դասարանը դեռ սովոր չէ այսպիսի աշխատանքի, կարելի է խմբովին հորինել. մի աշակերտ մի միտք է տալիս, մյուսը շարունակում է, երրորդը՝ լրացնում և այլն:

Այս դեպքում, քանի որ ուսուցիչը պլան, օգնող բառեր և բառակապակցություններ չի տալիս, աշակերտներին առաջարկում է իրենց մտքերը հղկել, հարստացնել անհրաժեշտ բառերով, պատկերավոր արտահայտություններով:

բ) Անավարտ փոխադրություն.

ուսուցիչը կարդում է այսպիսի նյութ ունեցող փոխադրության բնագիրը և աշակերտներին հանձնարարում գտնել համապատասխան վերջաբան: Լավ կլինի, որ ավարտը լինի հանկարծակի, անսպասելի և սրամիտ:

Ութերորդ դասարանի բաժնում տրված է ֆրանսիացի գրող Պրոսպեր Մերիմեի «Մաթեո Ֆալկոնե» պատմվածքը, որի վերջաբանը պետք է հորինեն աշակերտները: Իսկ ուսուցչի համար տրվում է նորավեպի ավարտն ըստ Մերիմեի:

գ) Ստեղծագործական հավելումներով փոխադրություն.

նյութը վերնագիր չունի, չի տրվում պլան, չկան առաջադրանքներ: Բնագիրն ամբողջական չէ, տրված է ընդհատումներով: Աշակերտը ուսուցչի օգնությամբ ընտրում է վերնագիր, փորձում է յուրովի, ստեղծագործաբար լրացնել բնագրի բաց թողնված հատվածները:

դ) Անվերնագիր փոխադրություն.

վերնագիրը չի տրվում. տրվում է ողջ բնագիրը, վերջում՝ պլան և առաջադրանքներ: Ուսուցիչը կարդում է բնագիրը և առաջարկում աշակերտներին գտնել համապատասխան վերնագիր: Այստեղ ևս ուսուցիչն աշխատում է զարգացնել աշակերտների մտածողության ինքնատիպությունը և նախաձեռնելու կարողությունը:

ե) Ստեղծագործական մուտքով փոխադրություն.

բնագիրն ունի վերնագիր, սակայն բացակայում է մուտքը: Նյութը շարադրված է առանց անհրաժեշտ սկզբի: Այս դեպքում էլ աշակերտը հորինում, ընտրում է համապատասխան մուտք, որը բխելու է տրված բնագրի բովանդակությունից:

զ) Ինքնուրույն հանգուցալուծումով փոխադրություն.

բնագիրը շարադրված է մինչև դեպքերի զարգացման գագաթնակետ, իսկ հանգուցալուծումը պիտի տա աշակերտը: Այստեղ պլանի մի քանի կետ տրվում է, մյուս մեկ-երկու կետերը ամեն աշակերտ ինքն է ավելացնում՝ ելնելով իր իսկ հանգուցալուծումից:

է) Գրական դատ-փոխադրություն.

այսպիսի փոխադրությանը նախորդում է տվյալ թեմայով անցկացվող գրական դատը: Ուսուցիչը դասարանում կարդում է բնագիրը: Ապա ընտրվում են դատավոր, դատապաշտպան, մեղադրող, վկաներ և այլն: Կազմակերպվում է դատ, գրական դատ: Հաջորդ օրը աշակերտները շարադրում են նյութը՝ ըստ այդ գրական դատի: Աշակերտների շարադրանքի մեջ տեղ կգտնեն ինքնուրույն դատողություններ, վերլուծություններ, հերոսների բնութագրումներ և այլն:

ը) Դատողական-ստեղծագործական փոխադրություն.

ուսուցչի՝ նյութը կարդալուց հետո աշակերտները բանավոր վերարտադրում են բովանդակությունը՝ նշելով միայն դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը: Իսկ հետո արդեն ինքնուրույն՝ աշակերտը շարադրանքի մեջ ներմուծում է նաև իր դատողությունները այս կամ այն հերոսի որևէ արարքի կամ տվյալ երևույթի վերաբերյալ: Այսինքն՝ աշակերտը դատում է և շարադրում իր տեսակետները տվյալ հարցի շուրջ: Օրինակ՝ ութերորդ դասարանում հանձնարարվում է «Հոր Երանելու վարքը»՝ ըստ Աստվածաշնչի: Աշակերտը ոչ միայն շարադրում է Հորի հետ կապված պատմությունը, այլև ինքնուրույն դատողություններ անում «մանանեխի չափ» հավատ ունենալու, Արարչի փորձության, սատանայի չարության մասին:

Կարելի է նաև այս կամ այն թեման շարադրել որևէ հերոսի անունից՝ մենախոսության ձևով: Օրինակ՝ յոթերորդ դասարանում Մովսես Խորենացուց ընտրված է «Տրդատ և Նագինիկ» նյութը: Ողջ պատմությունը կարելի է հաղորդել կա՛մ Տրդատի, կա՛մ Նագինիկի անունից՝ իբրև իր անձի հետ կատարված դեպք:

Իհարկե, չեն բացառվում և խրախուսելի են փոխադրության տեսակների այլևայլ կիրառություններ, շարադրանքի ինքնուրույն և ինքնատիպ վերարտադրություններ, աշակերտի և ուսուցչի ստեղծագործական երևակայության նորանոր դրսևորումներ:

ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Բառերի կյանքը գործածության մեջ է:
Պարույր Սևակ

«Լեզուն, մտածողություն լինելով, նաև գործիք է, իսկ այդ գործիքն ապրում է բանելիս և բանելով, հակառակ դեպքում փտում է կամ ժանգոտում», - սա Պարույր Սևակի՝ իբրև բնաբան ընտրված մտքի շարունակությունն է: Երեխային մեր լեզվի ճոխությանն ու պերճությանը հաղորդակից դարձնելու հնարքներից մեկը փոխադրության դասի ճիշտ մշակումն ու կազմակերպումն է: Լսածը կամ կարդացածը վերարտադրելը հեշտ չէ. պահանջվում է որոշակի հմտություն ու նախ և առաջ՝ բառապաշար: Հետևաբար փոխադրության դասը նախ և առաջ բառի, դրա հոմանիշների, պատկերավոր և փոխաբերական արտահայտությունների ուսուցման և գործնականում դրանց կիրառության դաս է: Անհրաժեշտ է հատուկ աշխատանք տանել բնագրում հանդիպող բառերի բացատրության, բառատետրերում գրանցելու, դրանք շարադրանքի մեջ գործածելու հմտություն ձևավորելու ուղղությամբ:

Աշխատել ենք ձեռնարկում ընդգրկել բառեր, որոնք ոչ միայն կհարստացնեն երեխայի բառապաշարը, այլև ուղղագրական առումով բարդություն են ներկայացնում: Սա առիթ է երեխային մի անգամ էլ հիշեցնելու բառի կազմությունը, գրությունը և այլն:

Կարելի է նաև աշակերտին առաջարկել տվյալ բառի մի քանի հոմանիշ և տալ ընտրության հնարավորություն: Աշակերտը այս դեպքում սովորում է ճիշտ գործածել բառը, զգում է դրա նրբերանգային-իմաստային առանձնահատկությունները, խոսքի մեջ կիրառության յուրահատկությունները:

Վերջում, հաջողություններ մաղթելով մեր սիրելի գործընկերներին, ցանկանում ենք նշել, որ ժողովածուի IV-VII դասարանների նյութերը կազմել է Թամար Ալեքսանյանը, VIII-X-ի նյութերը՝ Ռուբինա Նազարյանը:

Ռուբինա Նազարյան
Թամար Ալեքսանյան

IV

ԴԱՍԱՐԱՆ

ԱՆԻ ՔԱՂԱՔԸ

Ըստ Հայկ Խաչատրյանի

999 թվականն էր՝ առաջին հազարամյակի վերջը: Հայաստանի մայրաքաղաք Անին բուռն հուզումների մեջ էր: Լուրեր էին պտտվում, թե հազարամյակը լրանալուն պես աշխարհը պիտի կործանվի, թե եկել է մարդկության վերջը: Անեցիները ո՛չ շինարարություն էին ուզում սկսել, ո՛չ ամուսնանալ, ո՛չ որևէ լուրջ գործով զբաղվել: «Միևնույնն է, աշխարհի վերջն է, բոլորս պիտի մեռնենք», - ասում էին միմյանց ու տարվում միայն հարբեցողությամբ, կերուխումով: Խուճապը գնալով մեծանում էր:

Ահա այդ անօգուտ իրարանցման մեջ անեցիներին ոգեկոչեցին Գագիկ Թագավորը, նրա կինը՝ դշխո Կատրանիդեն, և արքունի ճարտարապետ Տրդատը:

Շուտով մայրաքաղաքում նոր լուրեր տարածվեցին: Իբր թե Աստծուն էր հասել հայոց աղոթքը, և իբր թե Տերը երևացել էր Գագիկ Թագավորին և ասել.

- Հայտնի՛ր քո ժողովրդին, որ Հայաստան աշխարհը չի կործանվի, եթե ազգովին զբաղվեն արարչագործությամբ՝ կառուցեն, կանաչապատեն, շենացնեն երկիրը և հիացնեն ինձ:

Եվ Անին սկսեց շենանալ: Դրանք մի-մի հրաշալիք էին, որ կառուցում էր հանճարեղ ճարտարապետ Տրդատը: Անին տեսած օտարականները, վերադառնալով իրենց երկրները, պատմում էին ամենքին, որ հայոց մայրաքաղաքում շատ ավելի հրաշալիքներ կան, քան Եվրոպայի բոլոր քաղաքներում միասին վերցրած:

Զբաղված լինելով աշխարհաշեն գործով՝ անեցիները մոռացան ահ ու երկյուղ և շարունակեցին ապրել՝ պաշտելով ու ծաղկեցնելով անզուգական Անին:

ՊԼԱՆ

1. Լուրեր աշխարհի կործանման մասին:
2. Կերուխում և հարբեցողություն:
3. Տիրոջ պատգամը:
4. Անի քաղաքը շենանում է:
5. Գործի մեջ մոռացվում է ահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

առաջին հազարամյակի վերջը, բուռն հուզում, լուրեր պտտվել, որևէ լուրջ գործ, միմյանց, տարվել հարբեցողությամբ, խուճապ, անօգուտ իրարանցում, ոգեկոչել, դշխո Կատրանիդե, արքունի ճարտարապետ Տրդատ, հայոց աղոթք, ազգովին զբաղվել արարչագործությամբ, շենացնել երկիրը, շքեղ տաճարներ, մի-մի հրաշալիք, օտարերկրացի, Եվրոպայի բոլոր քաղաքները միասին վերցրած, աշխարհաշեն գործ, ահ ու երկյուղ, ծաղկեցնել Անին:

ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Սարգիս Պիծակը հայ հանճարեղ մանրանկարիչ է: Նա ապրել է տասնչորսերորդ դարում Կիլիկյան Հայաստանում: Դեռ մանկուց նա մարդկանց զարմացնում էր նկարելու իր ձիրքով և քանքարով:

Մի անգամ այսպիսի դեպք պատահեց: Սարգսենց տանը շատ հյուրեր կային: Նրանք ուտում-խմում էին, զվարճալի պատմություններ անում, բաժակաճառեր ասում:

Իսկ Սարգիսը մի անկյունում իր ներկերի ու նկարների հետ էր: Հենց այդ ժամանակ պատուհանին մի պիծակ է նստում: Սարգիսը արագորեն նկարում է այդ պիծակը: Հետո նկարը մեկնում է հյուրերին: Գինով հյուրերը կարծում են, թե մազաթին պիծակ է նստել և փորձում են ձեռքով քշել-հեռացնել միջատը: Հետո սթափվում են ու քահ-քահ ծիծաղում: Նրա մականունը դառնում է «Պիծակ»:

Բայց իզուր չէ, որ նրան կնքել էին այդ անունով: Նա պիծակի պես խայթել գիտեր այս աշխարհի զորեղներին և անարդարներին:

Մի անգամ հարուստ մի իշխան գալիս է Սարգսի մոտ և ասում.

- Ես ուզում եմ գնել քո բոլոր նկարները: Ես պատրաստ եմ քո ամեն նկարի դիմաց մի ընտիր նժույգ տալ: Իմ նժույգներով մի հզոր հեծելախումբ կկազմես:

Սարգիս Պիծակը քմծիծաղ է տալիս և պատասխանում.

- Ցավում եմ, բայց իմ նկարները նժույգներով փոխանակել չեմ կարող:

- Ինչու՞, - խոժոռվում է իշխանը:

- Որովհետև մի քանի տասնամյակ հետո քո նժույգներն այլևս չեն խրխնջա, իսկ իմ նկարների գույները կթրթռան և մարդկանց հոգիները կջերմացնեն նույնիսկ հազար տարի հետո:

ՊԼԱՆ

1. Մանրանկարիչ Սարգիսը:
2. Մի դեպք նրա մանկությունից:
3. Հյուրերը ուզում են քշել պիծակը:
4. Մականուն:
5. Ամբարտավան իշխանը:
6. Գործարքի առաջարկ:
7. Մերժում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Համճարեղ մանրանկարիչ, տասնչորսերորդ դար, Կիլիկյան Հայաստան, ծիրք ու քանքար, ուռել-խմել, զվարճալի պատմություններ, բաժակաճառեր ասել, արագորեն նկարել, գինով հյուրեր, մազաղաթ, քշել, հեռացնել, սթափվել, քահ-քահ ծիծաղել, պիծակի պես խայթել, զորեղներ և ամարդարներ, ընտիր նժույգ, քմծիծաղ տալ, խոժոռվել, նժույգները խրխնջալ, գույները թրթռալ, մարդկանց հոգիները ջերմացնել, հազար տարի հետո:

2. Ցուցադրել Սարգիս Պիծակի մանրանկարների վերատպությունները:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Բյուզանդիայի մայրաքաղաքում է կատարվել այս դեպքը: Աշխարհի տարբեր կողմերից այստեղ էին հավաքվել նշանավոր իմաստուններ և իմաստասերներ: Նրանք պիտի մրցեին և պատասխանեին բյուզանդացի գիտունների բազում հարցերին:

Հայաստան աշխարհից մրցույթին մասնակցում էր Դավիթ անունով մի իմաստասեր: Այս Դավիթը քերթողահայր Մովսես Խորենացու քրոջ որդին էր:

Հերթով ներկայանում են իմաստասերները: Նստում են սրահի կենտրոնում դրված գահույքին և պատասխանում մրցավեճի ղեկավարի հարցերին:

Հասավ Դավթի հերթը: Նա նստեց գահույքին: Հնչեց առաջին հարցը: Հայ իմաստասերը պերճ հունարենով պատասխանեց հարցին: Այսպես չորս ժամ անընդմեջ: Չորս ժամ անընդմեջ աշխարհի տարբեր ծայրերից հավաքված իմաստունները հիանում էին հայ գիտունի տված պատասխաններով:

Վերջում ղեկավարն ասաց.

- Դավի՛թ Հայկազուն, դու փայլեցիր քո իմացությամբ ու պերճախոսությամբ: Եթե դու պատասխանես վերջին հարցին, ապա քեզ կօծենք մեծ իմաստասեր:

Ապա ղեկավարը մի պահ լռեց, զննեց Դավթին և հարցրեց.

- Ի՞նչն է, որից մարդ երբեք չի ձանձրանում:

- Հա՛ցը, - արագորեն ասաց Դավիթը, - ամեն տեսակ ուտելիք, որքան էլ համեղ լինի, կարող է ձանձրացնել մարդուն: Իսկ հացը՝ երբեք: Ինչ էլ ուտես, առանց հացի չես կշտանա:

- Նա անհաղթ է, նա անհաղթ է, - բացականչեցին հիացած իմաստունները, և բոլորը ոտքի կանգնած պատիվներ մատուցեցին հայ գիտունին:

- Այո՛, իսկական Դավիթ Անհաղթ, - հիացմունքով եզրակացրեց մրցավեճի ղեկավարը:

ՊԼԱՆ

1. Գիտունների մրցույթ Բյուզանդիայի մայրաքաղաքում:
2. Հայ իմաստունը:
3. Վերջին հարցը:
4. Դավթի փայլուն պատասխանը:
5. Հաղթանակ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ իմաստասեր, քերթողահայր, գահույք, մրցավեճի ղեկավար, պերճ հունարեն, անընդմեջ, աշխարհի տարբեր ծայրեր, օծել, պատիվներ մատուցել, եզրափակել.

բ/ հատուկ անունները.

Բյուզանդիա, Մովսես Խորենացի, Դավիթ Հայկազուն, Դավիթ Անհաղթ:

2. Նախօրոք հանրագիտարանից կարդալ և պատմել իմաստասեր Դավիթ Անհաղթի մասին:

3. Ցուցադրել Դավիթ Անհաղթի արձանի պատկերը:

1. ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՆՈՒԿԸ

Ըստ Ղազարոս Աղայանի

Մի ժամանակ մի հին քաղաքում ապրում էր մի տղա՝ անունը Մանուկ: Նա մոտ տասներկու-տասներեք տարեկան էր: Շատ խելացի և ուշիմ էր այս տղան:

Մի անգամ Մանուկը փողոցում էր իր ընկերների հետ: Այդ նույն փողոցով մի մարդ էր գնում, մի իշատեր: Նա իր էշի վրա ձու էր բարձել և տանում էր շուկա՝ վաճառելու: Նրա հետևից էլ մի ուրիշ մարդ էր գնում՝ իր գիժ եզը առաջն արած: Այս եզան մարդը տանում էր սպանդանոց:

- Էշիդ կապը բռնի՛ր, մի կողմ քաշվի՛ր. եզս գիժ է, քացի կտա, - զգուշացնում է եզան տերը:

Մի քանի անգամ կանչում է, զգուշացնում, բայց իշատերը չլսելու է տալիս: Մեկ էլ այս գիժ եզը կտրում է կապը, հասնում և եղջյուրներով զարկում է էշին, կթոցները վայր են գլորվում, ձվերը կոտրվում են:

Իշատերը աղմուկ-աղաղակ է դնում, բռնում է եզան տիրոջ օձիքը և տանում դատարան:

Մանուկը, որ այս դեպքի ականատեսն էր, վազում է սրանց կողքով և բղավում.

- Եզնատերը համրանա, եզնատերը համրանա:

Դատավորի մոտ իշատերը գանգատը շարադրում է: Հետո դատավորը հարցնում է եզան տիրոջը, թե ի՛նչ ունի ասելու: Եզան տերը համր է ձևանում և ցույց է տալիս՝ իբր լեզու չունի:

- Այս մարդը համր է, - ասում է դատավորը:

- Ո՛չ, տե՛ր իմ, սա համր չէ. սա սուտ է ասում. քանի անգամ հետևիցս բղավեց, թե էշդ մի կողմ քաշիր, եզս գիժ է, աքացի կտա:

- Շատ լավ, - ասում է դատավորը, - ինչու՞ չկատարեցիր մարդու ասածը, քանի որ քեզ զգուշացնում էր: Հիմա ի՞նչ ես ուզում նրանից:

Ապա դատավորը արդարացնում է եզան տիրոջը և երկուսին էլ ճանապարհում:

Այդպես իմաստուն Մանուկը փրկում է անմեղ մարդուն:

ՊԼԱՆ

1. Հին քաղաքում ապրող Մանուկը:
2. Իշատերը և եզնատերը:
3. Զգուշացում և դրա անտեսում:
4. Մանուկի խրատը եզնատիրոջը:
5. Դատավորի մոտ:
6. Արդարացում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

տասներկու-տասներեք տարեկան, խելացի և ուշիմ տղա, բարձել, գիժ եզը առաջն արած, սպանդանոց, եղջյուրներով զարկել, կծոց, աղմուկ-աղաղակ դնել, եզան տիրոջ օձիքը բռնել, դեպքի ականատես, շարադրել գանգատը, համր ձևանալ, աքացի տալ, արդարացնել, անմեղ մարդ:

2. ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՆՈՒԿԸ

Ըստ Ղազարոս Աղայանի

Մի ժամանակ մի հին քաղաքում մի իմաստուն Մանուկ էր ապրում: Նա հայտնի էր դարձել քաղաքում իր արդար և իմաստուն խորհուրդներով:

Այդ քաղաքում ապրում էր մի շատ հարուստ և երևելի մարդ: Նա երկար ժամանակ է, որ հեռացել էր քաղաքից և իր ընտանիքին ապրուստ չէր ուղարկել: Կինը նախ վաճառել էր ողջ ունեցածը, ապա սկսել էր ուրիշների համար ձեռագործ անել:

Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան այս երևելի վաճառականը վերադառնում է հայրենի քաղաք: Երբ տեսնում է իր ընտանիքի թշվառությունը, կատաղում, մոլեգնում է.

- Ես իմ ծառայի հետ քեզ շատ թանկարժեք գոհար եմ ուղարկել, - ասում է ամուսինը կնոջը:

- Ոչ մի բան ինձ չի հասել: Իսկ այդ ծառան հիմա քաղաքի առաջին հարուստն է:

Այդ քաղաքում մի սովորություն կար. բարեկենդանի հաջորդ օրը իշխանությունը տալիս էին որևէ երեխայի: Այդ տարին մեկօրյա իշխանությունը տրվել էր Մանուկին:

Ահա առավոտ վաղ Մանուկը տեսնում է, որ մի մարդ է գնում՝ ինքն իրեն խոսելով ու ձեռքերը զայրացած թափահարելով:

Նրան բռնում, բերում են Մանուկի մոտ: Վաճառականը պատմում է իր ստախոս ծառայի մասին, որը իր ուղարկած թանկարժեք գոհարը չի ավել կնոջը: Բացի այդ, հիմա էլ երեք վկա է բերել, որոնք հաստատում են, թե իրենց աչքի առաջ այդ գոհարը տրվել է վաճառականի ընտանիքին:

Մանուկը իր մոտ է կանչում խաբեբա ծառային և երեք վկաներին: Նախ նա հարցաքննում է և հարցնում, թե ինչ տեսք ուներ քարը:

- Այդ քարը կատվի աչքի չափ էր: Ցերեկը դժգույն էր, իսկ գիշերը փայլում էր: Այդ գոհարը ինչ դատարկ քսակում դնեիր, խսկույն ոսկով կլցվեր, - ասում է նախկին ծառան:

Մանուկը հրամայում է տանել և փակի տակ պահել հարստացած ծառային: Ապա հերթով և առանձին -առանձին հարցաքննում է վկաներին: Նրանցից մեկն ասում է, թե քարը սպիտակ ու կլոր էր, մեկն էլ՝ քարը իր բռունցքի մեծությամբ էր, երրորդն էլ ասում է, թե քարը տափակ էր ու սև:

Հետո բոլորին միասին հավաքում է և կարդում բոլորի ցուցմունքները: Բոլոր հանդիսականները ապշում են Մանուկի խորաթափանցության վրա:

Նենգ ծառան սոփված բոլորի ներկայությամբ հանում և տիրոջն է վերադարձնում թանկարժեք գոհարը:

ՊԼԱՆ

1. Հին քաղաքում ապրող Մանուկը:
2. Երևելի վաճառականը և նրա թշվառ ընտանիքը:
3. Վաճառականի վերադարձը:
4. Մանուկի մեկօրյա իշխանությունը:
5. Հարստացած ծառան և նրա սուտ վկաները:
6. Առանձին-առանձին հարցաքննություն:
7. Արդարության հաղթանակը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

արդար և իմաստուն խորհուրդներ, հարուստ և երևելի մարդ, ողջ ունեցածը, ձեռագործ տաել, բուն բարեկենդան, կիրակի երեկոյան, ընտանիքի թշվառություն, մոլեգնել, թանկարժեք քար, առաջին հարուստ, մեկօրյա իշխանություն, ինքն իրեն խոսել, ձեռքերը թափահարել, ստախոս ծառա, խաբեբա ծառա, հարցաքննել, կատվի աչքի չափ, գիշերը փայլել, դատարկ քսակ, առանձին-առանձին, բռունցքի մեծությամբ, երրորդ, տափակ, ցուցմունք, հանդիսական, խորաթափանցություն:

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԱՏԱՄՆԵՐԸ

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Եղել է չի եղել, աշխարհում մի տղա է եղել: Այս տղան մի շատ լուրջ հիվանդություն ուներ, որով տառապում են անգամ մեծահասակները: Մի խոսքով՝ տղան անվերջ շատախոսում էր, խոսում էր ու խոսում:

- Այս ի՞նչ կրակ ու պատիժ է լեզուն, - փնթփնթում էին ատամները: - Տեսնե՞ս երբևէ կլինի՞, որ գոնե մի պահ դադար՛ տա:

- Ինձ հետ ի՞նչ գործ ունեք, - ասում էր անպատկառ լեզուն: - Աղացե՛ք, ինչ որ ձեզ կտամ և լռե՛ք: Մեր միջև ոչ մի ընդհանուր բան չկա: Ես ոչ մեկին թույլ չեմ տա խառնվել իմ գործերին կամ էլ ինձ հիմար խորհուրդներ տալ:

Եվ տղան շարունակում էր անդադրում բլբլացնել հարկի ու անհարկի: Երանության գիրկն ընկած՝ լեզուն արտաբերում էր նորանոր իմաստակություններ՝ չհասցնելով ըմբռնել դրանց իմաստը:

Մի անգամ տղան իր չաչանակության պատճառով ընկավ ծուղակը: Նեղ վիճակից դուրս գալու համար սկսեց լեզվին ավելի շատ զոռ տալ ու ստեր փչել: Այնժամ ատամներն այլևս չդիմացան: Նրանց համբերությունը սպառվեց: Նրանք սեղմվեցին և ուժեղ կծեցին չափն անցկացրած սուտասանին:

Լեզուն արյունոտվեց, իսկ տղան ամոթից ու ցավից լաց եղավ:

Այդ օրից լեզուն դարձավ շատ երկչոտ ու զգուշավոր, իսկ տղան որևէ բան ասելու համար երկար մտածում էր:

ՊԼԱՆ

1. Տղայի հիվանդությունը:
2. Ատամների բողոքը:
3. Ամբարտավան լեզուն:
4. Նեղ դրություն:
5. Պատիժ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

շատախոսել, կրակ ու պատիժ լեզու, երբևէ, անպատկառ, անդադրում բլբլացնել, իմաստակություն, չաչանակություն, ծուղակ, լեզվին զոռ տալ, ստեր փչել, երկչոտ ու զգուշավոր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Լեոնարդո դա Վինչին (1452-1519) Վերածննդի դարաշրջանի իտալացի նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, գիտնական, ինժեներ է: Գրել է նաև հեքիաթներ և փոքրիկ պատմվածքներ:*

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՈՒՂՏԸ ԴԱՐՁԱՎ ՍԱՊԱՏԱՎՈՐ

Ըստ Ռուդիարդ Քիփլինգի

Դարեր առաջ աշխարհը դեռ այնքան մանուկ էր. կենդանիները նոր-նոր էին սկսել աշխատել մարդու համար: Մի ուղտ կար: Սա ապրում էր անապատում, որ չբանի մարդու համար:

Ձին, շունն ու եզը գիշեր-ցերեկ աշխատում էին, քրտինք թափում, մարդու համար բարիք ստեղծում, իսկ այս անբանը թափառում էր, ուտում ճյուղեր ու փշեր, կթխնախոտ ու տատասկ և տրտինգ տալիս ոսկեցոլ ավազների մեջ:

Մի օր էլ աշխատավոր եռյակը բողոքեց մարդուն, բամբասեց ուղտին, որն աշխատ-արձակ շրջում է ու չի ուզում աշխատել: Այնինչ աշխարհում այնքա՜ն գործ կա անելու: Երբ տեսան մարդը չի ուզում զբաղվել ուղտի դաստիարակությամբ, նրանք խորհուրդ արեցին, ժողով գումարեցին, համագումար հրավիրեցին: Այդ համագումարին հրավիրված էր նաև բոլոր անապատների ոգին: Սա ժամանեց՝ փոշու ամպի մեջ պարուրված: Ուշադիր լսեց ձիուն, շանն ու եզին:

- Բոլոր անապատների՛ ոգի, մի՞թե կարելի է անգործ նստել, երբ աշխարհը դեռ այսքան մանուկ է, - հարցրեց ձին:

- Իհարկե, ո՛չ, - պատասխանեց ոգին և խոստացավ օգնել և կարգի հրավիրել ուղտին:

Ոգին կոլոլվեց փոշեթիկնոցի մեջ, կտրուկ շրջվեց դեպի անապատը, տեսավ ուղտին, որ մի ջրափոս էր գտել և հիանում էր դրա մեջ արտացոլված իր պատկերով:

- Երկուշաբթի առավոտից ի վեր քո ահավոր ծուլության պատճառով եռյակն աշխատում է նաև քո փոխարեն, - ասաց նրան ոգին:

- Ու՜ղ, ու՜ղ, - քմծիծաղ տվեց ուղտը:

- Դու պետք է աշխատես, - սպառնաց ոգին:

- Ու՜ղ, ու՜ղ, - նորից ձգեց ուղտը:

Բայց դեռ խոսքը բերանում էր, երբ կլորիկ մեջքը սկսեց ուռչել, ուռչել և դարձավ ցցուն կուզ:

- Կուզը մեջքիս ինչպե՞ս աշխատեմ, - սրտնեղեց ուղտը:

- Դա քո անգործ նստելու վաստակն է: Հիմա առանց ուտելու, կուզիդ հաշվին կաշխատես: Գնա՛, միացի՛ր եռյակին և քեզ կարգի՛ն պահիր, - խրատեց ոգին:

Այդ օրվանից մինչև օրս նա աշխատում է մարդու համար, և նրան ոչ ոք «կուզիկ» չի ասում, որ չվիրավորվի: «Սապատավոր ուղտ», - այդպես են անվանում նրան:

ՊԼԱՆ

1. Կենդանիներն աշխատում են մարդու համար:
2. Անբան ուղտը:
3. Եռյակի բողոքը:
4. Համագումար՝ անապատի ոգու մասնակցությամբ:
5. Ոգին որոշում է դաստիարակել ուղտին:
6. «Ուղը» դառնում է կուզ:
7. Սապատավո՛ր ուղտը խելքի է գալիս:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քրտինք թափել, բարեք ստեղծել, անբան, կաթնախոտ ու տատասկ, տրտինգ տալ, ոսկեցոլ ավազ, աշխատավոր եռյակ, խորհուրդ անել, համագումար հրավիրել, կոլոլվել փոշեթիկնոցի մեջ, արտացոլված պատկեր, կլորիկ մեջք, ցցուն կուզ, սրտնեղել, կուզի հաշվին, սալատավոր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ռադիարդ Քիփլինգը (1865 - 1936) անգլիացի բանաստեղծ, վիպասան է: 1890 թվին Լոնդոնում հրատարակվել է «Լույսը հանգավ» վեպը, որը միանգամից նրան հռչակ է բերել: Քիփլինգի հեքիաթ-պատմվածքները ստեղծվել են իր երեխաների բազմաթիվ հարցերին պատասխանելու համար:*

ԵՐԱԽՏԱՄՈՌ ԱՌՅՈՒԾԸ

Ըստ հնդկական ժողովրդական հեքիաթի

Հիմալայան լեռների փեշերին տարածված ջունգլիներում մի փայտփորիկ էր ապրում: Ապրում էր և մի հսկա առյուծ, որ շարունակ քաղցած էր և երբեք չէր կշտանում:

Օրերից մի օր առյուծը մի մեծ կտոր միս է գտնում և սկսում ագահաբար խժռել: Համկարծ ոսկորը դեմ է առնում կոկորդին: Առյուծը շատ է չարչարվում, բայց ոսկորը ոչ մի կերպ չի կարողանում հանել: Կոկորդը սաստիկ ցավում էր, հետո քիչ-քիչ ուռչում է:

Այնպես է պատահում, որ փայտփորիկը թռչում էր հենց այդ կողմերով: Նա լսում է առյուծի մռնչյունը և հարցնում.

- Ջունգլիների՛ արքա, ի՞նչ է պատահել:

- Ոսկոր է մնացել կոկորդումս, չեմ կարողանում հանել, - պատասխանում է առյուծը խռպոտ ձայնով:

- Մի՛ մտածիր, - ասում է փայտփորիկը, - ես կհանեմ, միայն թե վախենում եմ՝ համկարծ կուլ տաս ինձ:

- Մի՛ անհանգստանա, - պատասխանում է առյուծը,- օգնի՛ր, խնդրում եմ, խոսք եմ տալիս՝ քեզ չեմ ուտի:

Փայտփորիկը առյուծին համձնարարում է համգիստ պառկել: «Համենայն դեպս, առյուծն է, չարժե վստահել»,- մտածում է նա և վերցնելով մի հաստ փայտ՝ դնում է արքայի ծնոտների արանքում, որ նա չկարողանար փակել բերանը: Հետո կտուցով դուրս է քաշում ոսկորը:

Որոշ ժամանակ է անցնում, և փայտփորիկը նորից է համդիպում առյուծին, որը դարձյալ միս էր խժռում: Փայտփորիկը մտածում է, որ հարմար առիթ է՝ ստուգելու առյուծի երախտագիտությունը: Նստելով մոտակա ծառի բարձր ճյուղին՝ ասում է.

- Ջունգլիների՛ արքա, հիշու՞մ ես՝ ինչպե՛ս մի անգամ օգնեցի քեզ, երբ ոսկորը մնացել էր կոկորդումդ: Հիմա էլ դու՞ ինձ օգնես՝ հյուրասիրելով այդ մսից:

- Փայտփորի՛կ, - ասում է առյուծը, - դու մոտր աշխարհի ամենահզոր գազանի երախը և անվնաս դուրս եկար այնտեղից: Ուրիշ էլ ի՞նչ ես ուզում:

Լսելով երախտամոռ առյուծի պատասխանը՝ փայտփորիկն այլևս ոչինչ չի ասում ու թռչում գնում է:

ՊԼԱՆ

1. Ջունգլիների բնակիչները:
2. Փորձանքի մեջ ընկած առյուծը:
3. Փայտփորիկը օգնում է առյուծին:
4. Հանդիպում:
5. Երախտամոռ առյուծը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հիմալայան լեռների փեշերին տարածված ջունգլիներ, ագահաբար խժռել, ոսկոր, ուշքի, համենայն դեպս, հարմար առիթ, երախ, ամենահզոր գազան:

ԳՈՐՇ ՄԿՆԻԿԸ

Ըստ Լիլիկ Ստեփանյանի

Կար - չկար մի գորշ մուկ: Այս մկնիկը աշխարհում ամենից շատ վախենում էր գորշությունից: Ամեն անգամ նայում էր հայելուն և տխրում. «Աստված իմ, ի՜նչ գորշ եմ ես», - հոգոց էր հանում նա:

Մի օր մկնիկը տան բոլոր հայելիները թաքցրեց աչքից հեռու մի տեղ: Ինքն էլ գնաց խանութ և գնեց բազմագույն կերպասներ՝ իր սիրած վարդագույնից մինչև սև: Մի խոսքով, բոլոր գույները կային, բացի գորշից և մուգ կապույտից:

Հաջորդ օրը հագավ իր կարած զգեստը ու դուրս եկավ փողոց: Փոքրիկ գորշ մուկը զարմանալիորեն հրապուրիչ էր: Նրա շուրջը սկսեցին պտտվել երկրպագուները: Նրանք հաճոյախոսում էին մկնիկին, գովերգում էին նրա ճաշակն ու նրբագեղությունը: Նրան ծաղիկներ էին նվիրում, փորձում էին գրավել ուշադրությունը: Շուտով մկնիկը մոռացավ, որ ինքը գորշ է:

Ժամանակ անցավ: Նրա շուրջը վխտում էին փեսացուները: Բայց մկնիկը անտարբեր էր. նա ոչ մեկին չէր սիրում:

Մի օր նրան մոտեցավ մի թիկնեղ ու մարզված մուկ: Նա թովիչ ժպիտ ուներ և երկար բեղեր:

- Իմ սիրունիկ, գո՛րշ մուկիկ, - շշնջաց մուկը նրա ականջին:

Ի պատասխան՝ մեր մկնիկը միայն ժպտաց: Նա հանկարծ հասկացավ, որ գորշ գույնն էլ է շատ լավը:

Առաջին անգամ նրան թվաց, որ գորշ գույնը շատ բնական է ու գեղեցիկ:

Այսպես մկնիկը սովորեց տարբերել գորշ գեղեցիկ գույնը գորշությունից:

ՊԼԱՆ

1. Գորշ գույնից փախչող մուկը:
2. Բազմագույն հանդերձով մկնիկը:
3. Երկրպագուների բազմությունը:
4. Մկնիկի սրտի ընտրյալը:
5. Գործն ու գործունեությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

գորշ մուկ, հայելի, հողոտ հանել, բազմագույն կերպասներ, զարմանալիորեն հրապուրիչ, հանդարտ խոսել, գովերգել ճաշակը և նրբագեղությունը, վխտալ, թիկնեղ և մարզված մուկ, թովիչ ժպիտ, չարաճճի բնակարան:

ՄՈԼԱԽՈՏԸ

Ըստ Աշոտ Սեռյանի

Ձմեռն անցավ: Ծիլերը զարթնեցին ու մեկը մյուսի հետևից դուրս եկան հողից: Զմայլված դիտեցին իրենց շուրջը: Ծիլերից մեկին գերեց վերջալույսը: Արևը հանդարտ լողում է դեպի իր հանգստարանը: Նրա ծիրանին կարմրում է, հետո փոխվում է սևի ու կորչում գիշերվա ցոլքերում:

Այդ ծիլը կարմիր ու սև զգեստ հագավ ու զարձավ նրբաթերթ կակաչ:

Մյուս ծիլը հմայվեց ժպտացող երկնքով լողացող ճերմակ ամպերով և նարնջագույն հորիզոնով: Զուգվեց այս ծիլը ճերմակաթույր զգեստով ու դարձավ շողշողուն մի շուշան:

Երրորդին դուր եկավ արևածագը, որ պատռում է աղամամութի գորշ ամպերը ու իր թարմ շնչով ողողում աշխարհը: Եվ նա հրավառ զգեստ հագավ ու վերածվեց կարմրաշուրթ ու անուշաբույր վարդի:

Եվ այսպես ամեն մի ծիլ իր զգեստը հագավ, անմահական բույրով օծվեց և իր ժպիտը շաղեց չորս կողմ:

Միայն մի ծիլ էր, որ ո՛չ ճերմակով էր գերվում, ո՛չ լուրթ կապույտն էր նրան հմայում, ո՛չ վարդ ամպերն էին երազներ բերում:

Ոչ մի զգեստ դուր չէր գալիս նրան: Նախանձից կանաչեց, զարձավ գրեթե սև և սկսեց ամենա ոչնչացնել իր շուրջը աճած բազմերանգ ծաղիկները:

Այդ չարաբերը մոլախոտն էր ...

ՊԼԱՆ

1. Արթնացած ծիլերը:
2. Կարմիր և սև հագած կակաչը:
3. Ճերմակաթույր շուշանը:
4. Կարմրաշուրթ վարդը:
5. Չար ծիլը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

զմայլված դիտել, վերջալույս, նրբաթերթ կակաչ, ժպտացող երկինք, ճերմակ ամպեր, ճերմակաթույր զգեստ, շողշողուն շուշան, աղամամութի գորշ ամպ, հրավառ զգեստ, կարմրաշուրթ վարդ, անմահական բույր, ժպիտ շաղել, վարդ ամպեր, նախանձից կանաչել:

2. Նկարագրել այլ ծաղիկներ՝ համեմատելով բնության այս կամ այն երևույթի հետ:

ԱՐԵՎԻ ԾԱՂԻԿԸ

Ըստ Նոր աշխարհի հնդկացիների հեքիաթի

Ժամանակով մի աղջիկ էր ապրում: Նրա անունը Ծաղիկ էր: Ծաղիկը արև շատ էր սիրում: Վաղ առավոտից հիանում էր նրանով և հետևում նրան մինչև վերջալույսը: Իսկ երբ արևը անհետանում էր սարերի հետևում, նա տուն էր գնում, պառկում իր փոքրիկ մահճակալին և քուն մտնելիս միայն ու միայն արևի մասին էր մտածում:

Մի ամառ արևն անխնա այրում էր: Օրեր շարունակ երկնքում ամպի նշույլ չէր հայտնվել: Տարավից թոշնել էին ծառ ու արտ: Մարդիկ տանջվում էին տապից ու տոթից:

Այդ ժամանակ փոքրիկ աղջիկը հասկացավ, որ մարդիկ չեն կարող առանց անձրևի ապրել: Նա մի օր կանգնեց ուղիղ արևի տակ և խնդրեց նրան.

- Սիրելի՛ արև, դու գիտես, թե ես քեզ որքան եմ սիրում: Առանց քեզ ապրել չեմ կարող: Բայց մարդկանց անձրև է պետք: Խղճա՛ նրանց:

Արևը կատարեց փոքրիկ աղջկա խնդրանքը: Ամպերը ծածկեցին երկինքն, ու անձրև եկավ: Մի քանի օր անընդմեջ անձրև էր գալիս:

Դաշտերը կանաչեցին, ծաղիկներն ու խոտերը ուղղվեցին, մարդիկ երջանիկ էին: Միայն Ծաղիկն էր, որ բոլորովին թուլացել էր ու նվաղել:

Ահա նորից երևաց արևը: Նա իր շողերով քնքշորեն փայփայեց փոքրիկ աղջկան և ասաց.

- Ծաղի՛կ, արի՛ ինձ հետ այն երկիրը, որտեղ երբեք մայրամուտ չի լինում, որտեղ միշտ ծաղկում են ծաղիկները:

Եվ աղջիկը դարձավ մի հիասքանչ ոսկեգույն ծաղիկ, միայն ծաղկի կենտրոնն էր սև, ինչպես նրա մազերն ու աչքերն էին:

Այսօր էլ կարելի է տեսնել արևածաղիկ դարձած աղջկան, որը ողջ օրը իր ժպտուն դեմքը շրջում է արևի հետ:

ՊԼԱՆ

1. Ծաղիկ անունով աղջիկը:
2. Արևոտ ամառ. մարդկանց տառապանքը:
3. Ծաղիկ աղջկա խնդրանքը արևին:
4. Անձրևն ու մարդկանց փրկությունը:
5. Արևածաղիկ դարձած աղջիկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հիանալ, վերջալույս, անհետանալ, պառկել, անխնա այրել, ամպի նշույլ, թոշնել, տանջվել տապից, անընդմեջ ուղղվել, թուլանալ ու նվաղել, քնքշորեն փայփայել, մայրամուտ, հիասքանչ ոսկեգույն ծաղիկ, ժպտուն դեմք:

ՄԱՅՐԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Ըստ Զորայր Խալափյանի

Մայրիկի ծննդյան օրը Անին շատ մտահոգ էր: Նա չգիտեր՝ ինչ նվիրեր մայրիկին: Մտամոլոր քայլեց դեպի դաշտ: Տեսավ գույնզգույն ծաղիկներ՝ դեղին, կապույտ, կարմիր, սպիտակ: Անին ասաց.

- Մի դեղին ծաղիկ տանեմ մայրիկիս:

Մոտեցավ, որ ծաղիկը պոկի, հեռվից մի դեղին թիթեռ շնչակտուր մոտ թռավ ու ասաց.

- Վա՜յ, վա՜յ, Անի՛, դեղին ծաղիկը իմ տունն է: Որ պոկես, ես որտե՞ղ ապրեմ:

Ասելն ու դեղին ծաղկի վրա իջնելը մեկ եղավ:

- Լավ, դեղի՛ն թիթեռ, - ասաց Անին, - թող մնա, չեմ պոկի, թող մնա քո տունը:

Գնաց, գնաց Անին, տեսավ մի կապույտ ծաղիկ: Նա ժպտում էր իր լուրթ աչիկներով: Հենց Անին մոտեցավ կապույտ ծաղկին, մի թիթեռ մոտ թռավ ու խնդրեց.

- Անի՛ ջան, Անի՛, խնդրում եմ, տունս մի՛ պոկիր: Չե՞ս տեսնում՝ ես էլ եմ կապույտ:

Անին լսեց թիթեռին ու գնաց առաջ: Տեսավ՝ մի ճերմակ ծաղիկ նազանքով ու տխրությամբ օրորում է գլխիկը: Մոտեցավ ձյունաթույր ծաղկին ու սպասեց սպիտակ թիթեռին: Բայց նա չկար:

Տեսավ՝ պոչ պոչի մրջյուններ են գնում:

- Մրջյուննե՛ր, դուք սպիտակ թիթեռին չե՞ք տեսել, - հարցրեց Անին:

- Տեսել ենք, - եղավ պատասխանը, - սպիտակ թիթեռին սարդը բանտարկել է:

Անին շատ անվախ աղջիկ էր: Վազեց մրջյունների ցույց տված ուղղությամբ: Նա տեսավ սարդին, որ ճերմակ թիթեռին գցել էր իր ոստայնը և կապկպել:

Անին ազատեց սպիտակ թիթեռին, առվակից ջուր բերեց, լցրեց գլխին: Սա ուշքի եկավ և թափահարեց թևիկները: Անին թիթեռին տարավ ու դրեց սպիտակ ծաղկի վրա:

- Սա քո տունն է, սպիտա՛կ թիթեռ: Ապրի՛ր այստեղ, - մեղմաձայն ասաց Անին:

Հետո վազելով տուն եկավ: Մայրիկին շնորհավորեց ու պատմեց, թե ինչո՛ւ նրա համար ծաղիկ չէր բերել: Մայրիկը գրկեց նրան, համբուրեց ու ասաց.

- Դու իմ ծաղիկն ես:

ՊԼԱՆ

1. Մայրիկի ծննդյան օրը:
2. Գույնզգույն ծաղիկներով դաշտը:
3. Դեղին ծաղիկն ու դեղին թիթեռը:
4. Կապույտ ծաղկի մոտ:
5. Սպիտակ թիթեռը բացակայում է:
6. Ջրույց մրջյունների հետ:
7. Բանտարկված սպիտակ թիթեռը:
8. Անին փրկում է թիթեռին և նրան տանում իր տունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ծննդյան օր, մտահոգ, մտամոլոր քայլել, գույնզգույն ծաղիկներ, շնչակտուր մոտ թռչել, լուրթ աչիկներ, նազանքով ու տխրությամբ օրորել, ձյունաթույր ծաղիկ, պոչ պոչի գնալ, ոստայն, մեղմաձայն ասել, շնորհավորել:

ԹԻԹԵՌՆԻԿԸ

Ըստ Հանս Քրիստիան Անդերսենի

Թիթեռնիկը որոշեց ամուսնանալ: Եվ, իհարկե, ուզում էր ամենալավ ծաղիկը իրեն կին դարձնել: Նա շուրջը նայեց: Ծաղիկները իրենց ցողունների վրա նստած էին լուռ ու համեստ, ինչպես վայել է դեռ չնշանված աղջիկներին: Հարսնացու ջոկելը շատ դժվար էր. ախր ծաղիկներն այնքա՜ն շատ էին:

Շուտով թիթեռնիկը հոգնեց մտածելուց և ճախրեց դաշտային երիցուկի մոտ: Թիթեռնիկը համբուրեց երիցուկին և ասաց.

- Իմաստու՛ն երիցուկ, դու գուշակություն անել գիտես: Խնդրում եմ՝ գուշակի՛ր իմ բախտը:

Բայց երիցուկը լուռ մնաց: Նա նեղացած էր: Ինքը պակա՞ս հարսնացու է: Պատասխան չստանալով՝ թիթեռը գնաց նշանվելու:

Վաղ գարուն էր: Քնքշորեն բուրում էին ձնծաղիկները, գինարբուկները: «Վատ չեն, բայց շատ մատղաշ են», - մտածեց թիթեռնիկը:

Հետո նա դիտեց մյուս ծաղիկները: Մանուշակները մելամաղձոտ են, կակաչները շատ հպարտ են, նարգոսները՝ հասարակ, լորենու ծաղիկները մանրիկ են և չա՜փազանց՝ ազգականներ ունեն:

Ահա նա տեսավ սիսեռի ծաղիկը: Շատ լավիկն էր, բաց վարդագույն, քնքուշ, չքնաղափայլ: Նա ոչ միայն գեղեցիկ էր, այլև շատ տնարար: Ձեր խորշում սև աշխատանքից: Մի խոսքով, իսկ և իսկ հարսնացու: Թիթեռնիկն արդեն ուզում էր նշանվել սիսեռի ծաղկի հետ, երբ հանկարծ տեսավ հարսնաքրոջը՝ մի պատիճ՝ ծայրին թառամած ծաղիկ: «Հարսնացուս էլ շուտով այսպիսին կլինի», - ահաբեկվեց թիթեռը և թռավ հեռու:

Գարունն անցավ, անցավ ամառը, աշունն էլ սահեց գնաց, բայց թիթեռնիկը այդպես էլ մնաց ամուրի:

Եղանակը վատացավ: Սկսվեցին ցրտեր: Պաղ քամի փչեց: Թիթեռնիկը ներս ընկավ մի տաք սենյակ: Այստեղ նրան գտան մարդիկ, և քանի որ թիթեռը գունագեղ ու երփնավառ էր, գնդասեղ խրեցին մարմնի մեջ և ամրացրին մի բարձիկի վրա:

«Հիմա ես էլ մի ծաղիկ եմ, նստել եմ ցողունիս վրա», - թախիծով շշնջաց թիթեռը:

ՊԼԱՆ

1. Ամուրի թիթեռնիկը:
2. Գուշակ երիցուկը:
3. Վաղ գարնան ծաղիկները:
4. Սիսեռի քնքուշ ծաղիկը:
5. Սմքած հարսնաքույրը:
6. Ծաղիկ դարձած թիթեռը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ամենալավ ծաղիկը, կին դարձնել, լուռ ու համեստ, չնշանված աղջիկ, ճախրել, դաշտային երիցուկ, համբուրել, գուշակել բախտը, քնքշորեն բուրել, ձնծաղիկ, գինարբուկ, մատղաշ, մելամաղձոտ մանուշակ, հպարտ կակաչ, հասարակ նարգոս, լորենու ծաղիկներ, սիսեռի ծաղիկ, բաց վարդագույն, քնքուշ, չքնաղափայլ, խորշել սև աշխատանքից, հարսնաքույր, մի պատիճ՝ ծայրին թառամած ծաղիկ, ահաբեկվել, մնալ ամուրի, պաղ քամի, գունագեղ և երփնավառ, գնդասեղ խրել, նստել ցողունի վրա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Հանս Քրիստիան Անդերսենը (1805-1875) դանիացի գրող է: Աշխարհին հայտնի է իր նշանավոր հեքիաթներով:*

ՀՐԱՇՔ ԾԱՌԸ

Ըստ Դոնալդ Բիսեթի

Այգու ծայրին աճում էր ծառը, արևը ջերմացնում էր նրան, քամին՝ մեղմորեն շոյում ճյուղերը, իսկ տերևները շշնջում էին. «Ցանկացի՛ր, ցանկացի՛ր»:

Դա Հրաշք ծառ էր: Ով կանգներ ծառի տակ, որևէ բան ցանկանար, մտածածը կիրագործվեր:

Ծառի մոտ՝ մի տնակում, ապրում էր մի գեր ծերուկ: Նա գյուղի խանութում օճառ էր վաճառում: Այդ ծերուկը չէր սիրում փոքրիկ աղջիկներին ու տղաներին:

Մի օր ծերուկը կանգնեց ծառի տակ և ասաց.

- Լավ կլինի, որ շրջապատի բոլոր աղջիկներն ու տղաները ապրեն լուսնի վրա:

Դեռ նա խոսքը չէր վերջացրել, երբ բոլոր տղաներն ու աղջիկները հայտնվեցին լուսնի վրա: Շատ ցուրտ ու տխուր էր լուսնի վրա: Ո՛չ ծառ կար, ո՛չ թռչուն: Երեխաներից մի քանիսն սկսեցին լաց լինել:

Երկրի վրա լռեցին բոլոր թևավորները: Նրանք այլևս չէին երգում. շատ տխուր էր առանց փոքրիկ տղաների ու աղջիկների:

Մի օր էլ, երբ ծերուկը կանգ առավ Հրաշք ծառի տակ՝ մի քիչ շունչ առնելու, մի կեռնեխ թռավ եկավ, կանգնեց ծառի ճյուղին և ասաց.

- Ուզում եմ, որ այս ծերուկը դառնա բարի:

Ծերուկը ուզում էր բերանը բացել, բայց միտքը փոխեց: Հանկարծ նրա բերանի անկյունները հետ գնացին, ու ծերուկի դեմքին գծագրվեց ժպիտի պես մի բան: Թռչունները քարացան, հետո իրար անցան ու ուրախ ծլվլացին:

- Ուզում եմ, որ կեսօրին բոլոր երեխաները ինձ մոտ գան թեյելու: Ես նրանց կհյուրասիրեմ կարկանդակով ու մրգահյութով: Էլ օճառ չեմ վաճառելու:

Ծերուկը մի քիչ էլ մտածեց, նրա ժպիտը տարածվեց ողջ դեմքով մեկ, հասավ աչքերին, հետո էլ՝ ականջներին:

- Ես կպատրաստեմ աշխարհի ամենահամեղ ու զարմանահրաշ պաղպաղակը ու կհյուրասիրեմ երեխաներին:

Ծերուկն ինքն իր գյուտից հիացավ, երջանկացավ: Նույն րոպեին երեխաները վերադարձան Երկիր մոլորակ, շրջապատեցին ծերուկին: Թռչուններն էլ սկսեցին հնչեցնել իրենց երգը:

Արևը ջերմացնում էր ծառի ճյուղերը, իսկ տերևները շշնջում էին. «Ցանկացի՛ր, ցանկացի՛ր»:

ՊԼԱՆ

1. Ցանկություններ իրագործող ծառը:
2. Օճառ վաճառող ծերուկը:
3. Տղաներն ու աղջիկները լուսնի վրա:
4. Կեռնեխն ու ծերուկը:
5. Բարի դարձած ծերուկը:
6. Երեխաների վերադարձը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

մեղմորեն շոյել, շշնջալ, որևէ բան ցանկանալ, մտածածը իրագործել, գեր ծերուկ, թևավոր, կեռնեխ, ինչ-որ տհաճ բան, բերանի անկյուն, ժպիտ գծագրվել, ուրախ ծլվլալ, կեսօր, հյուրասիրել, մրգահյութ, ամենահամեղ և զարմանահրաշ պաղպաղակը, հնչեցնել երգ:

ՍՈԽԱԿՆ ՈՒ ԱԳՌԱՎԸ

Ըստ Արևելքի ժողովուրդների հեքիաթի

Մի անգամ սոխակը նստել էր ընկուզենի ծառին ու երգում էր: Բոլորը շունչները պահած ու զմայլված լսում էին սոխակին: Նա այնպես էր իր երգով տարվել, որ չնկատեց, թե ինչպես իր կողքին նստեց ագռավը:

- Է՜յ, սոխա՛կ, չե՞ս ամաչում, ինձ մոտ երգում ես, - կռկռաց ագռավը:

Սոխակը չհավատաց իր ականջներին: Մի՞թե ագռավը իր մասին էր ասում: Նա զարմացած ու զայրացած հանդիմանեց ագռավին:

- Մարդիկ և կենդանիները անչափ ուրախանում են, երբ լսում են իմ երգը: Դու ինչպե՞ս կարող ես լավ երգը հասկանալ ու ինձ դատել:

- Լավ, - ասում է ագռավը, - արի թռչենք քաղաք և իմաստուններին հարցնենք, թե մեզնից ով է լավ երգում: Միայն մի պայմանով: Մեզնից ով տարվի, հաղթողը նրա աչքը թող հանի:

Սոխակը համաձայնեց:

Նրանք թռան քաղաք: Տեսան՝ ջրափոսի մեջ պառկել է խոզը: Թռան խոզի մոտ և ասացին.

- Խո՛զ, լսի՛ր մեզ և ասա՛, թե մեզնից ով է լավ երգում:

- Իհարկե, ագռավը, - պատասխանեց խոզը: - Նա հիանալի բամբ ձայն ունի:

Ագռավը կտցահարեց ու հանեց սոխակի աչքը: Սոխակը թռավ - գնաց անտառ, նստեց նույն ընկուզենի ծառին և տխուր երգ երգեց: Ագռավը լսեց սոխակին, ուրից եկավ նրա մոտ:

- Հիմա՛ր սոխակ, դու պարտվեցիր, էլ ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես երգում ու մորմոքում, - հարցրեց ամբարտավան ագռավը:

- Ես աչքիս կորուստը չեմ ողբում, - պատասխանեց սոխակը, - ո՛չ, ես ողբում եմ, որ քեզ լսեցի և մեր վեճի լուծումը վստահեցի խոզին: Չէ՞ որ խոզը միշտ էլ խոզ կմնա:

ՊԼԱՆ

1. Սոխակը և նրա հրաշք երգը:
2. Նախանձ ագռավը:
3. Պայման:
4. Խոզի կարծիքը:
5. Սոխակի ողբը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ընկուզենի ծառ, շունչները պահած, զմայլված, երգով տարվել, կռկռալ, չհավատալ ականջներին, մի՞թե, զարմացած ու զայրացած հանդիմանել. անչափ ուրախանալ, իմաստուն, աչքը հանել, ջրափոս, պառկել. բամբ ձայն, կտցահարել, մորմոքել, ամբարտավան ագռավ, ողբալ աչքի կորուստը, վեճի լուծում:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Ըստ Վարուժան Նալբանդյան

Փիղը ժամիկներով հողը հերկեց, ցանեց լոլիկ, վարունգ, լոբի, կանաչի: Հետո կնճիթով ջուր քաշեց առվակից ու պուտ-պուտ ջրեց մատղաշ սածիլները:

Մինչ փիղը աշխատում էր, թռչունները ճախրում էին նրա գլխավերևում ու երգում: Սոխակը դայլայլում էր.

- Իմ սե՛րը, քո սե՛րը ...

Լորիկը թե՝

- Հոգսե՛րը, հոգսե՛րը ...

Հոպոպն էլ իր հերթին՝

- Ո՜ւ, ո՜ւ անցած հուշե՛րը ...

Ճնճղուկը ճռվողում էր.

- Մեր հույսի ծիլե՛րը ...

Երգչախմբի անուշ մեղեդու և հսկա փղի սիրագորով կնճիթի տակ հասակ առան ծիլերը:

Բայց շուտով փիղը սարսափով տեսավ, որ դալար ծիլերը մեկը մյուսի հետևից թառամում են: Նա վշտից ուռնաց: Գուցե քի՞չ է ջրել իր սիրելի սածիլները: Պատահաբար հո չի՞ տրորել նրանց քնքուշ տոտիկները ու նրանք, ցավին չդիմանալով, ուշաթափ են եղել: Նա լաց եղավ: Արցունքի խոշոր կաթիլները ընկան սածիլների վրա, ներծծվեցին հողի մեջ:

Մեկ էլ գետնի տակից դուրս եկավ վեցոտնանի տգեղ իշախառանչը:

- Ես եմ կրծել սածիլների արմատները, հի՜, հի՜, հի՜ ...

- Ես քեզ ի՞նչ եմ արել, ա՜յ բզեզ, որ ինձ այդքան ատում ես,- խեղճ-խեղճ հարցրեց փիղը:

- Ուժեղ ես, փարթամ ու գեղեցիկ,- նախանձավառ սրտով ասաց իշախառանչը: - Իմացի՛ր, որ ես մենակ չեմ. գետնի տակ ապրում է միջատների ու որդերի իմ ամբողջ հսկա տոհմը:

- Վա՜յ իմ գլխին,- ողբաց փիղը,- ինչպե՞ս ազատվեմ այս միջատների դժոխքից:

- Մենք՝ քեզ օգնական,- ճռվողեցին սոխակն ու ճնճղուկը, հոպոպն ու լորիկը:

Հետո նրանք մի պահ ընդհատեցին երգչախմբի փորձն ու ցած թռան: Ոչնչացրին իշախառանչին, նրա զարմիկ-զարմուհիներին, բոլոր որդերին ու թրթուրներին: Ապա փիղը շեփորի պես բարձրացրեց իր կնճիթը և ավետեց երկնային երգիչների հաղթանակը:

Թևավորները նորից գրավեցին իրենց տեղերը, և երգչախումբը նորից դայլայլեց, գեղգեղաց ու ճռվողեց:

Եվ ծլեցին ու փարթամացան լոլիկ ու վարունգ, լոբի ու դդում փղի գորովալից խնամքի շնորհիվ և թևավորների սիրառենչ երգերի ուղեկցությամբ:

ՊԼԱՆ
1. Հողագործ փիղը:
2. Թևավորների երգը:
3. Թառամած սածիլները:
4. Նախանձ իշխատանչը:
5. Հաղթանակ:
6. Խնամք և երգ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հողը հերկել, լոլիկ, վարունգ, պուտ-պուտ ջրել, մատղաշ սածիլ, դայլայլել, ճռվողել, սիրագորով կնճիթի տակ հասակ առնել, քնքուշ տոտիկ, ուշադրաց լինել, վնասատու իշխատանչ, միջատների ու որդերի տոհմ, գծուխ, ընդհատել փորձը, զարմիկ-զարմուհի, որդ ու թրթուր, ավետել հաղթանակը, դդում, սիրատենչ երգ:

Բառի բացատրություն

իշխատանչ - գետնի տակ ապրող թունավոր սև բզեզ

ԽԵԼԱՑԻ ԴԱՏԱՎՈՐԸ

Ըստ ֆրանսիական մանրապատումի

Մի աղքատ մարդ ճանապարհին հացի մի կտոր գտավ: Սենա գետի ափին տեսավ, որ մի հաստլիկ խոհարար միս է խորովում: Աղքատը մոտեցավ կրակին, վախվխելով նստեց և սկսեց հացն ուտել:

- Ինչ էլ ախորժակով ես ուտում չոր հացի կտորը, - միսը շուռումուռ տալով՝ ասաց հաստլիկը:

- Խորովածի հոտից հացս համովանում է:

Խոհարարը, իրեն կողոպտված զգալով, շատ զայրացավ ու աղքատից վճար պահանջեց: Վիճեցին, վիճեցին ու գնացին դատավորի մոտ:

- Այս մարդը խորոված կերե՞լ է, - հարցրեց դատավորը հաստլիկին:

- Ո՛չ, միայն նայել է ու հոտը քաշել:

Դատավորը մի պահ մտածեց ու ասաց.

- Լա՛վ, հիմա խորովածիդ արժեքը կստանաս:

Նա հանեց դրամապանակը, ձեռքի մեջ զնգզնգացրեց մետաղադրամները:

- Լսեցի՞ր, - հարցրեց դատավորը:

- Ի՞նչը:

- Մետաղադրամների զնգոցը:

- Լսեցի:

- Շա՛տ լավ, դե հիմա գնա՛:

- Ո՞նց թե, - բղավեց խոհարարը: - Բա ինձ ո՞վ է վճարելու:

- Աղքատը նայել է խորովածիդ ու հոտն առել, դու էլ մետաղադրամների զնգոցը լսեցիր: Ուրեմն ամեն ինչ կարգին է, - պատասխանեց դատավորը, ու դատն ավարտվեց:

ՊԼԱՆ
1. Աղքատ մարդն ու հաստլիկ խոհարարը:
2. Դատավորի մոտ:
3. Սրամիտ դատավորը:

ԷՇԸ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ

Ըստ իսպանական զրույցի

Երկու գիտնական, վերցրած հատուկ սարքեր, ինչ-որ ուսումնասիրություն կատարելու նպատակով մեկնել էին Իսպանիայի գյուղերից մեկը: Երբ մութն ընկնում է, նրանք մտնում են պատահական մի տուն և գիշերելու համար օթևան խնդրում:

- Տիկի՛ն, - ասում են տանտիրուհուն, - կարո՞ղ եք այս գիշեր մեզ ապաստանել:

Տանտիրուհին, որ չափազանց բարի և հյուրընկալ կին էր, սրտաբացորեն ընդունում է գիտնականներին, սեղան գցում, հյուրասիրում: Երբ գալիս է քնելու ժամանակը, տղամարդիկ, հիացած գեղեցիկ պարտեզով, ասում են.

- Ի՜նչ հիանալի տեղ է: Կարելի՞ է դրսում քնել:

- Լավ կլիներ ներսում քնեիք, որովհետև անձրև է գալու:

- Ի՜նչ եք ասում, տիրուհի՛, - բացականչում են հյուրերը, - անձրև՞: Ոչ մի դեպքում: Գիտեք՝ մենք գիտնականներ ենք: Մեր սարքավորումները գուշակում են անձրևը: Երկինքը պարզ է, սնդիկի սյունը՝ բարձր: Անձրև չի լինի:

- Լա՛վ, պարոննե՛ր, եթե ուզում եք, կարող եք գիշերել բակում, - ասում է տանտիրուհին, և ինքը տուն մտնում:

- Նկատեցի՞ր, թե ինչ հաստատ էր խոսում, - ծիծաղում է գիտնականներից մեկը, - անձրև է գալու, չէ մի՜:

Այսպես զրուցելով՝ նրանք պառկում են պարտեզում գցված փափուկ անկողիններ մեջ: Եվ քանի որ շատ հոգնած էին, իսկույն քուն են մտնում:

Գիշերն իսկապես անձրև է գալիս: Գիտնականները թրջված ներս են վազում:

Առավոտյան՝ հրաժեշտի ժամանակ, նրանք ամոթահար էին, շփոթված:

Տիկինը, մեղմ ժպտալով, ասում է.

- Ես ձեզ ասացի, որ անձրև է գալու, իսկ դուք չհավատացիք:

- Տիրուհի՛, ներողություն ենք խնդրում, բայց մեր սարքերին չէինք կարող չհավատալ: Նրանք պարզ եղանակ էին գուշակում:

- Ձեր սարքերը չգիտեմ, բայց գիտեմ մի բան, որ իմ էշը երբեք չի սխալվում: Անձրևից առաջ նա պատերին քսվելով քորվում է: Երեկ երեկոյան նա այդպես էլ անում էր:

- Գնա՛նք այստեղից, - դիմում է մի ընկերը մյուսին, - այս գյուղի էշերը ...

Սակայն նրա խոսքը ընդհատվում է էշի՝ ախոռից հնչող զռռոցից:

ՊԼԱՆ

1. Երկու գիտնական:
2. Հյուրընկալ իսպանուհին:
3. Պարտեզում քնելու ցանկություն:
4. Անձրև:
5. Խելացի էշերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հատուկ սարքեր, օթևան խնդրել, ապաստանել, հյուրընկալ կին, սրտաբացորեն ընդունել, սեղան գցել, անձրև գուշակել, սնդիկի սյուն, գիշերել, փափուկ անկողիններ, քուն մտնել, ամոթահար, ընդհատվել, ախոռ:

ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒԽՏԸ

Ըստ իսպանական ժողովրդական հեքիաթի

Իսպանացի Խուանը շատ աղքատ էր: Ունեցած-չունեցածը մի կով էր, և նրա բազմանդամ ընտանիքը այդ կովի տված բարիքներով էր կերակրվում:

Մի օր նրա կինը՝ Ռամոնան, ծանր հիվանդացավ: Խուանը հուսահատվեց: Եթե կինը մեռներ, ո՞վ պիտի խնամեր զավակներին, ո՞վ պիտի վարեր տնտեսությունը: Նա ուխտեց, որ եթե Ռամոնան ապաքինվի, ինքը կովը կվաճառի և դրամը կնվիրի եկեղեցուն: Նրա ուխտը հրաշք ազդեցություն ունեցավ. կինը շուտով ոտքի կանգնեց: Ամուսինը ստիպված էր կատարել խոստումը, չնայած չէր ուզում ընտանիքը զրկել կովի կաթից, յուղից ու պանրից: Երկար մտածելուց հետո նա ելքը գտավ: Կովը տարավ շուկա, հետն էլ՝ մի աքաղաղ: Տեղավորվեց հարմար մի տեղ և սկսեց սպասել գնորդի:

- Կովիդ համար որքա՞ն ես ուզում, - հարցրեց մեկը՝ շոյելով կենդանու մեջքը:
- Մեկ դուրո:
- Այս մարդը խելքը թռցրել է, - ինքնիրեն շշնջաց գնորդը, - կամ գուցե լավ չլսեցի՞:

Եվ նա հարցը կրկնեց: Պատասխանը նույնն էր: Զարմացած մարդը ձեռքը տարավ գրպանը՝ դրամ հանելու:

- Սպասի՛ր մի րոպե, - ասաց Խուանը, - կովի հետ վաճառում եմ նաև այս աքաղաղը:
- Իսկ ի՞նչ արժե աքաղաղը, - հարցրեց գնորդը:
- Հարյուր դուրո:
- Գժվե՞լ ես, ինչ է, մի աքլորի համար հարյուր դուրո՞:
- Էդպես է: Ոզում ես առ, ուզում ես մի՛ առ:

Երկար մտածելուց հետո մարդը գնում է և՛ կովը, և՛ աքաղաղը: Ձեռնտու առևտուր էր:

Եվ այսպես, Խուանը մեկ դուրոն՝ կովի արժեքը, իր խոստման համաձայն, նվիրում է եկեղեցուն, իսկ հարյուր դուրոյով մեկ ուրիշ կով է գնում:

ՊԼԱՆ

1. Աղքատ Խուանը:
2. Ռամոնայի հիվանդանալը և Խուանի երդումը:
3. Ձեռնտու առևտուր:
4. Կատարված ուխտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աղքատ, ունեցած-չունեցածը, բազմանդամ ընտանիք, տնտեսությունը վարել, հրաշք ազդեցություն, ապաքինվել, ելքը գտնել, դուրո, ինքնիրեն շշնջալ, խոստման համաձայն:

ԾՈՒՅԼ ԾԱՌԱՆ

Ըստ իսպանական զրույցի

Մի մարդ ծառայության է անցնում մի մեծահարուստ պարոնի մոտ: Նա իր կյանքում երբեք այդպիսի շքեղ տուն տեսած չկար: Զարմացած նայում էր ընդարձակ սրահին, շքեղ գորգերին, կայծկլտուն ջահերին, փարթամ ծաղկաթաղարներին, դրվագազարդ կահույքին:

Նրան առաջնորդեցին տանտիրոջ առանձնասենյակը: Թանկարժեք պատմուճան հագած մեծահարուստը բազմել էր փափուկ օթոցի մեջ:

- Դու ինչ է, առաջին անգա՞մ ես ծառայելու, - հարցրեց տերը:

- Այո՛, պարո՛ն:

- Եթե գոհ մնամ քեզանից, - ասաց տանտերը, - ուրեմն կստանաս շաբաթական երեսուն պեսո, սենյակ, ուտելիք, հանգստյան օր և բացի այդ՝ ես քեզ կհագցնեմ:

Ծառան շատ գոհ մնաց այդ ամենից և չգիտեր՝ ինչպես հայտներ իր ուրախությունը:

Հաջորդ օրը պարոնը շատ ուշ արթնացավ և ծառային չգտնելով՝ մտավ նրա սենյակը: Շատ զարմացավ՝ վերջինիս պառկած տեսնելով:

- Ա՛յ ծույլ, անպիտա՛ն, այդպե՞ս ես կատարում քո պարտականությունները: Արդեն կեսօր է, իսկ դու դեռ թավալվում ես անկողնում: Չե՞ս ուզում վեր կենալ:

- Բա չե՞մ ուզում, պարո՛ն: Արդեն կես ժամ է՝ այդ մասին եմ մտածում: Բայց քանի որ երեկ ասացիք՝ ինձ կհագցնեք, պառկել ու համբերությամբ սպասում եմ:

ՊԼԱՆ

1. Ծառան մեծահարուստի տանը:
2. Մեծահարուստ պարոնը:
3. Ծառային առաջարկվող պայմանները:
4. Անկողնում թավալվող ծառան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ծառայության անցնել, մեծահարուստ պարոն, երբեք, շքեղ տուն, ընդարձակ սրահ, շքեղ գորգեր, կայծկլտուն ջահեր, փարթամ ծաղկաթաղարներ, դրվագազարդ կահույք, թանկարժեք պատմուճան, փափուկ թիկնոց, շաբաթական, երեսուն պեսո, պառկած, անկողնում թավալվել, համբերությամբ սպասել:

ԹՈՒՅՆԸ

Ըստ ճապոնական հեքիաթի

Ճապոնիայի քաղաքներից մեկում ապրում էր մի ժլատ մարդ: Նա կտորեղենի խանութ ուներ, ուր աշխատեցնում էր երեք փոքրիկ տղայի: Խանութի տերը շատ էր սիրում մրգահյութ: Բայց այնքան ժլատ էր, որ ո՛չ ինքն էր խմում, ո՛չ էլ ուրիշներին էր հյուրասիրում:

Մի օր նա կանչում է իր խանութում ծառայող երեք տղաներին և ասում.

- Տեսնու՞մ եք դարակին դրված այն սափորը: Դրա մեջ թույն է լցված: Հանկարծ չմոտենաք այդ սափորին: Տեղնուտեղը կմեռնեք, եթե խմեք դրա պարունակությունը:

Երբ տերը խանութից դուրս է գալիս, տղաներից ավագը քմծիծաղ է տալիս, ապա մոտենում է սափորին, վերցնում, մի բաժակ լցնում և խմում է: Մյուս երկուսը վախեցած նրան են նայում:

- Մի՛ վախենաք: Այս սափորի մեջ մրգահյութ է: Ուղղակի մեր տերը այնքան ժլատ է, որ վախենում է, թե կխմենք օշարակը: Տղաները մի-մի բաժակ են վերցնում և ըմպում հյութը: Ապա մեծ տղան մտնում է տիրոջ սենյակը, հատակին գցում և կոտրում է նրա սիրած ծաղկամանը: Հետո ծաղկամանի կտորտանքը դնում է սափորի կողքին ու սպասում տիրոջը:

Հենց տերը երևում է, տղան սկսում է բարձրաձայն լաց լինել ու ողբալ:

- Ի՞նչ է պատահել, - հարցնում է տերը:

- Տե՛ր իմ, ես պատահաբար վայր գցեցի և կոտրեցի ձեր սիրած ծաղկամանը: Հուսահատությունից ու վախից դրդված՝ ես որոշեցի ինքնասպան լինել: Խմեցի այս սափորի պարունակությունը: Հիմա սպասում եմ, սպասում, բայց չեմ մեռնում: Շատ անհարմար եմ զգում ինձ, չգիտեմ՝ ինչ անեմ:

Տերը լսում է տղայի բացատրությունները, անխոս հեռանում: Խելացի մանուկը լավ դաս էր տվել ժլատ մարդուն:

ՊԼԱՆ

1. Կտորեղենի խանութի տերը:
2. Թույնով լի սափորը:
3. Զգուշացման անտեսում:
4. Փշրված ծաղկամանը:
5. Լաց ու կոծ:
6. Բացատրություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Ճապոնիա, ժլատ մարդ, կտորեղենի խանութ, մրգահյութ, ուրիշներին հյուրասիրել, դարակին դրված սափոր, տեղնուտեղը մեռնել, խմել պարունակությունը, տղաներից ավագը, քմծիծաղ տալ, վախեցած նայել, օշարակ, մի-մի բաժակ, վերցնել, ըմպել, հատակին գցել, կոտրել ծաղկամանը, բարձրաձայն լաց լինել, ողբալ, հուսահատությունից և վախից դրդված, ինքնասպան լինել, անհարմար զգալ, լսել բացատրությունները, դաս տալ:

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԴԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Ժամանակին մի աշխարհում մի ժպտերես մարդ էր ապրում: Այս մարդը բնավ չէր ընկճվում, երբ նրան որևէ դժբախտություն էր պատահում: Հենց առաջին փորձության ժամանակ նա Աստծուն էր հիշում և նրան փառաբանում:

- Թող օրհնյալ լինի Տիրոջ իմաստությունը: Նա գիտե, թե ինչ է անում:

Եվ հավատով առլեցուն մարդը միշտ կրկնում էր այս խոսքերը: Բայց շատերը նրան հիմարի տեղ էին դնում: Այնինչ մարդը բարի էր և, ճիշտը որ խոսենք, շատ էլ խելացի:

Մի օր մի խումբ երիտասարդներ որոշեցին նրա գլխին խաղ խաղալ և փորձել նրա հավատը:

Ժպտերես մարդը մի էշ ուներ, որին շատ էր սիրում: Չէ՞ որ այդ էշի շնորհիվ էր պահում իր ընտանիքը, իսկ գիշերներն էլ հանգիստ ու վաստակած քնում էր: Եվ Աստծո ողորմածությունը անպակաս էր նրանից:

Անհավատ երիտասարդները նրա էշը տարան բլուրները, կապեցին ծառից: Հավատացյալը եկավ, խոնարհաբար հարցրեց.

- Ո՞ւր է իմ էշը, եղբայրնե՛ր:

- Քուրդ ձիավորները գողացան, տարան, - պատասխանեցին նրան:

Խեղճ մարդը զգաց, որ առանց էշի իր տունը քանդվելու է, բայց իրեն չկորցրեց և ասաց.

- Թող օրհնյալ լինի Աստծո իմաստությունը: Նա գիտե, թե ինչ է անում:

Անհավատ երիտասարդները նստեցին իրենց էշերը և գնացին տուն: Խեղճ հավատացյալն էլ ոտքով ճանապարհ ընկավ:

Մի քանի ժամ հետո նա հասավ իրեն ծաղրողներին: Նա զարմացած տեսավ, որ նրանք առանց էշի էին: Տասնմեկն էլ էշ չունեին:

- Ի՞նչ է պատահել: Ձեր էշերն ի՞նչ եղան, եղբայրնե՛ր, - հարցրեց ժպտերես մարդը:

- Քուրդ ձիավորները եկան, մեր էշերը քշեցին, տարան, ասացին նրանք:

- Ուրեմն դուք էլ պետք է ինձ հետ գովաբանեք Աստծո իմաստությունը: Նա գիտե, թե ինչ է անում:

- Ճիշտ է, - ասացին դարձի եկած երիտասարդները: - Գնա՛ բլուրները, քո էշն այնտեղ է, ծառից կապված:

Խոնարհ հավատացյալը գնաց բլուրները, գտավ էշը, տուն վերադարձավ՝ կրկին ու կրկին գովաբանելով Աստծո իմաստությունը:

ՊԼԱՆ

1. Ժպտերես մարդը:
2. Անհավատ երիտասարդների չար խաղը:
3. Էշի կորուստը:
4. Կողոպուտ:
5. Դարձի եկած երիտասարդները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Ժպտերես մարդ, ընկճվել, դժբախտություն, առաջին փորձություն, փառաբանել Աստծուն, Տիրոջ իմաստությունը, հավատով առլեցուն, փորձել հավատը, հանգիստ ու վաստակած քնել, Աստծո ողորմածություն, խոնարհաբար հարցնել, ծաղրողներ; տասնմեկ, քուրդ ձիավոր, գովաբանել, դարձի եկած, խոնարհ հավատացյալ, կրկին ու կրկին գովաբանել:

ԱՐՋԱՌԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Երկու ընկեր կային, երկու որսորդ: Նրանցից մեկը մի քիչ հիմար էր, իսկ մյուսը՝ խելացի: Պատահեց այնպես, որ այդ հիմարամիտ որսորդն էլ խելքի եկավ:

Մի անգամ երկու ընկեր գնում են անտառ՝ արջ որսալու:

- Ես այդպես թանկ գնով վաճառել եմ իմ սպանած արջի մորթին: Իսկ դո՞ւ, - ասում է հիմարը:

- Ես այդ մորթին այն ժամանակ կծախեմ, երբ սպանեմ ու քերթեմ արջին, - պատասխանում է խելոք ընկերը:

Իսկ հիմարավունը ասում է պարծենալով, գլուխը գովելով.

- Ես դիպուկ կրակող եմ, մի փամփուշտով արջին գետին կփռեմ: Դու գիտես՝ այդ գործում ինձ հավասարը չկա:

Ընկերները թափառում, գնում են անտառի խորությունները: Քիչ անց հիմար որսորդին դեմ հանդիպում դուրս է գալիս մի վիթխարի գորշ արջ: Հիմարը շփոթվելուց նետում է հրացանը, պառկում գետնին և ձևանում է մեռած: Արջը մոտենում է, ոտքից գլուխ հոտոտում, հետո մեծահոգաբար դեմքը լիզում է և հեռանում:

Սարսափից կիսամեռ՝ հիմար որսորդը ելնում է տեղից, սրբում դեմքը: Իսկ ընկերը, որ ամեն բան տեսել էր, մոտենում է ու հարցնում քմծիծաղ տալով.

- Արջը քեզ ի՞նչ ասաց:

Հիմարը այդքան վախից մի քիչ խելամիտ էր դարձել, սակայն պատասխանում է.

- Արջն ասաց. «Ականջիդ օ՛ղ արա. մինչև ինձ չսպանես, մորթիս չծախես»:

ԴԱՍ

1. Երկու որսորդ:
2. Հիմար որսորդի մեծախոսությունը:
3. Հիմարն ու արջը:
4. Արջի և որսորդի զրույցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ Հիմարամիտ որսորդ, խելքի գալ, սպանել ու քերթել արջին, խմբովի, դիպուկ կրակող, փամփուշտ, գետին գլորել, անտառի խորությունները, վիթխարի գորշ արջ, մեռած ձևանալ, ոտքից գլուխ հոտոտել, սարսափից կիսամեռ, խելամիտ դառնալ, ականջին օղ անել, ծախել, մորթի:

ՄԻԱՅՆ ՄԻ ՄԱՐԴ

Ըստ Եզոպոսի կենսագրության

Մի օր Եզոպոսի տերը՝ Քսանթոսը, նրան ասաց, որ գնա բաղնիք և տեսնի՝ շա՞տ մարդ կա:

Եզոպոսը գնաց և տեսավ, որ լողացողները շատ-շատ են: Անընդհատ էլ նոր մարդիկ են գալիս՝ կապոցները թևերի տակ: Բաղնիքի մուտքի առջև մի քար էր ընկած: Եկողը գայթում էր, ընկնում, հայհոյում այն մարդուն, ով այստեղ էր գցել քարը: Բայց ոչ մի մարդու մտքով չէր անցնում հեռացնել քարը բաղնիքի մուտքի առջևից:

Եզոպոսը զարմացած նայում էր ու մտքում ծիծաղում այդ մարդկանց վրա:

Վերջապես մեկն էլ եկավ, գայթեց, լուռումունջ կռացավ, վերցրեց քարը, նետեց ճանապարհից դուրս և մտավ բաղնիք:

Եզոպոսը վերադարձավ Քսանթոսի մոտ:

- Տե՛ր իմ, բաղնիքում միայն մի մարդ կար, - ասաց նա:

- Ա՜յ քեզ հաջողություն, ուրեմն այստեղ կարելի է լողանալ: Շուտ հավաքի՛ր, ինչ անհրաժեշտ է:

Նրանք եկան բաղնիք, և Քսանթոսը տեսավ՝ ասեղ գցելու տեղ չկա: Նա զայրացավ Եզոպոսի վրա, բռնեց նրա օձիքից, հոխորտաց ու սպառնաց:

- Ինչո՞ւ ինձ ասացիր՝ միայն մի մարդ կա, - գոռաց տերը:

- Տե՛ր իմ, այն քարը տեսնո՞ւմ ես: Ընկած էր ճիշտ մուտքի դիմաց, հենց ճանապարհին: Ով գալիս էր, գայթում էր, ընկնում: Քանի հոգի ոտքերը քարին խփեցին: Բայց միայն մի մարդ կռացավ, վերցրեց ու մի կողմ շպրտեց քարը, որպեսզի ուրիշներն էլ չսայթաքեն ու չվնասվեն: Ես էլ մտածեցի, որ այդ բոլորի մեջ միայն նա է մարդ, և քեզ այդպես էլ զեկուցեցի:

ՊԼԱՆ
1. Քսանթոսի հանձնարարությունը:
2. Մուտքի առջև ընկած քարը:
3. Մարդկանց զարմանալի վերաբերմունքը:
4. Քարը հեռացնող մարդը:
5. Եզոպոսի զեկույցը իր տիրոջը:
6. Մարդկանցով լի բաղնիքը:
7. Եզոպոսի պատասխանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները:*

Եզոպոս, Քսանթոս, շատ-շատ, անընդհատ, գայթել, հայհոյել, լուռումունջ կռանալ, ասեղ գցելու տեղ, հոխորտալ, սայթաքել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Եզոպոսը անտիկ աշխարհի առակախոս է:*

ԿՐԻԱՆ

Ըստ Ազատ Շահինյանի

Գյուղի տղաները ուրախ աղմուկով վազեցին գետափ: Ամառ էր, շոգ: Նրանք հանվեցին ու իրար հրմշտելով՝ լցվեցին ջուրը:

Սուրիկը մի քիչ լողաց, հետո դուրս եկավ և պառկեց խճաքարերին: Նա դիտում էր տղաների աշխույժ կատակները:

Հանկարծ ... Սուրիկն ուղղվեց և տրորեց աչքերը: Նրանից քիչ հեռու իր կոշիկները սահում էին գետնի երեսին: Սուրիկը վեր թռավ ու կոկորդով մեկ բղավեց: Տղաները, կարծելով, թե Սուրիկին օձ խայթեց, ջրից դուրս թռան և հավաքվեցին նրա շուրջը: Իսկ վախեցած տղան անձայն ցույց էր տալիս գետնի երեսին սահող կոշիկները: Դրանք գնում էին դեպի ջուրը:

Մեծ տղաներից մեկը վազեց, վերցրեց կոշիկները, և բոլորի զարմացած հայացքի տակ կանգ առավ մի ափսեաչափ կրիա:

- Այ, սա էր ուզում գողանալ քո կոշիկները, - ասաց տղան: - Առ, պահի՛ր, քաղաք կտանես:

Տղաները նորից աղմուկով ջուրը լցվեցին: Իսկ կրիային դրին մեջքի վրա, որ չփախչի:

Մինչ տղաները լողում էին ու խաղում ջրում, մեջքին շրջված ընկերոջը մոտեցավ մի ավելի մեծ կրիա: Նա մի պահ կանգնեց, երկարացրեց վիզը, ապա մոտեցավ իր ցեղակցին: Շրջված կրիան մի մեծ և հարթ քարի վրա էր: Մեծը մոտեցավ և սկսեց գլխով հրել նրան: Մեկ էլ շրջված կրիան քարից գլորվեց և կանգնեց թաթերի վրա:

Մեծ և փոքր կրիաները շարժվեցին դեպի գետը: Իսկ գետից դեռ լսվում էին տղաների ուրախ և անհոգ ճիչերը:

ՊԼԱՆ

1. Տղաները գնում են լողալու:
2. Սուրիկը գետափին:
3. Գետնի երեսին սահող կոշիկները:
4. Կրիան և կոշիկները:
5. Մեջքի վրա շրջված կրիան:
6. Ցեղակցի օգնությունը:
7. Փախուստ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ուրախ աղմուկ, իրար հրմշտել, խճաքար, աշխույժ կատակ, ուղղվել, կոկորդով մեկ բղավել, օձ խայթել, գետնի երեսին սահող, ափսեաչափ կրիա, մեջքին շրջված, ցեղակից, ուրախ և անհոգ ճիչեր:

ՄԱՅՐԸ

Ըստ Հովհաննես Թումանյանի

Ծիծեռնակը բույն էր շինել մեր տան կտուրին:

Ամեն տարի՝ աշնանը, գնում էր, գարնանը հետ գալիս, բույնը նորոգում: Ե՛վ գարունն էր բացվում, և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիչով հայտնվում էր մեր կտուրի տակ: Եվ ի՜նչ քաղցր էր, երբ առավոտները նա ծվլվում էր մեր երդիկին կամ երբ իրիկնապահին մեր ծիծեռնակն ու իր ընկերները շարվում էին մի երկայն ձողի վրա և հնչեցնում իրիկնաժամի երգը:

Նորից գարուն է: Մեր ծիծեռնակը եկել է, նորոգել է բույնը, ձու է ածել, ճուտ հանել: Նա ամբողջ օրը ուրախ ճիչով թռչում, կերակուր է բերում իր ճուտիկներին:

Այդ օրվա երեկոյան նորից մայր ծիծեռնակը եկավ և կտուցով ձագերի համար կեր բերեց: Ճուտիկները ճվճվոցով բնից հանեցին դեղին կտուցները:

Ինչպես եղավ՝ նրանցից մեկը, գուցե ամենաբկլիկն ու անզգույշը, ավելի շատ բնից դուրս ձգվեց ու ընկավ ներքև:

Մայրը ճչաց ու ցած թռավ ճուտի ետևից: Բայց հենց այդ պահին, որտեղից որտեղ դուրս պրծավ մեր կատուն, ճանկեց փոքրիկ ճուտը և փախավ:

- Փի՛շտ, փի՛շտ, - վեր թռանք ամենքս:

Իսկ ծիծեռնակը սուր ծղրտոցով ընկավ կատվի հետևից՝ նրա շուրջը թռչկոտելով ու նրան կտցահարելով: Բայց ապարդյուն: Կատուն փախավ և մտավ ամբարի տակ:

Ամեն բան այնքա՜ն արագ կատարվեց: Ծիծեռնակը դեռ ծղրտոցով պտտվում էր ամբարի շուրջը, իսկ մենք՝ երեխաներս, մի-մի փայտ առած, ամբարի տակ պտտեցնում էինք, որ կատվին վախեցնենք: Հետո մեկ էլ կատուն դուրս եկավ ու փախավ դեպի մարագը՝ դունչը լիզելով:

Ծիծեռնակը կատվին տեսավ առանց ձագի, մի գիլ ծղրտոց հանեց, թռավ խփվավ դիմացի ծառի ճյուղին: Այնտեղ լուռ նստեց: Հաջորդ պահին քարի պես ճյուղից ընկավ գետին: Վազեցինք, տեսանք՝ մեռած է:

ՊԼԱՆ

1. Ծիծեռնակի բույնը մեր տան կտուրին:
2. Նորից գարուն է:
3. Ծիծեռնակը և իր ճուտերը:
4. Բկլիկ ճուտը:
5. Գող կատուն:
6. Հետապնդում:
7. Ծիծեռնակի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բույնը նորոգել, զվարթ ճիչ, երդիկ, ծվլվել, իրիկնապահ, երկայն ձող, հնչեցնել, իրիկնաժամի երգ, ճուտ հանել, կերակուր բերել, ճվճվոցով բնից հանել, ամենաբկլիկ ու անզգույշ, դուրս ձգվել, ներքև, դուրս պրծնել, ճանկել, կտցահարել, ապարդյուն, ամբար, ծղրտոցով պտտվել, մի-մի փայտ առած, պտտեցնել, մարագ, դունչը լիզել, ձագ, գիլ ծղրտոց, ընկնել գետին:

ԱՐԾԻՎՆԵՐԸ

Ըստ Վախթանգ Անանյանի

Անտանելի շոգ է: Հուլիսի բարկ արևը կրակ է թափում Արարատյան դաշտի վրա:

Մասիսների դիմաց չեկ ժայռերով պատած սարեր կան: Դեռ արևածագից առաջ ես բարձրացել եմ և թաքնվել ժայռերում. քարայծերի կյանքն եմ ուսումնասիրում: Կեսօր է: Դեղնագույն ապառաժները շիկացած են: Ոչ մի շունչ կենդանի, բոլորն էլ թաքնվել են անձավներում, ճեղքերում, հողի տակ:

Միայն մի արու արծիվ լուռ ու մռայլ կանգնել է ժայռի ծերպին: Ես թաքնվել եմ թփերի մեջ, դիտում եմ արծվին ու զարմանում, թե ինչու արևից չի պաշտպանվում այս թռչունը: Ժամերով նստած է նա իր բարձունքին և գդոն պահակի նման իմ կողմն է նայում: Նայում է ուշադիր, կասկածով: Վտա՞նգ է սպասում ինձնից, թևեր ունի, կարող է թռչել, հեռանալ: Թե՞ պահակ է կանգնած ուրիշների կյանքին, որոնք չեն կարող հեռանալ այստեղից: Որոշեցի լուծել այդ հանելուկը:

Հայացքով խուզարկեցի ժայռի ծերպերը: Ահա արծվի դիմաց՝ ժայռի անմատչելի բարձունքին, չոր ճյուղեր են երևում:

Անցա մի բարձր քարի հետև, արծվի թիկունքի կողմով գաղտնի վեր բարձրացա: Երբ գլուխս հանեցի քարի հետևից, տեսա՝ չոր ճյուղերի կույտին կանգնած է մի այլ արծիվ թափահարում է իր թևերը:

Զգույշ և աննկատելի վեր ձգվեցի և ուշադիր նայեցի. երկու ձագ, կտուցները վեր ցցած, հաճույքով վիզները տրամադրել էին այն մեղմ քամուն, որ գալիս էր իրենց մոր թևերից: Ահա ինչու է անընդհատ թափահարում իր թևերը այս թռչունը. հով է անում ձագերին:

Շոգ է, անտանելի շոգ Արարատյան դաշտի վրա կախված այս ժայռերում: Բոլոր շնչավորները թաքնվել են շոգից: Միայն այս փետրավոր ծնողներն են կանգնած միջօրեի արևի տակ. մեկը իր ընտանիքի պահակն է, մյուսը հով է անում սիրասուն ձագերին, սեփական հովհարներով…

ՊԼԱՆ

1. Ամառվա մի շոգ օր:
2. Ժայռի ծերպին կանգնած արու արծիվը:
3. Թևերը թափահարող մայր արծիվը:
4. Արծիվը հովհարում է իր ձագերին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բարկ արև, Արարատյան դաշտ, չեկ ժայռ, արևածագ, քարայծեր, դեղնագույն ապառաժ, շիկացած, անձավ, ճեղք, լուռ ու մռայլ կանգնել, գդոն պահակ, հայացքով խուզարկել, ժայռի անմատչելի բարձունք, չոր ճյուղերի կույտ, թևերը թափահարել, զգույշ և աննկատելի վեր ձգվել, կտուցները վեր ցցած, մեղմ քամի, անընդհատ թափահարել, հով անել, թաքնվել շոգից, փետրավոր ծնող, միջօրեի արև, սիրասուն ձագեր, սեփական հովհար:

ՓԻՂԸ

Ըստ Զորայր Խալափյանի

Փիղը աշխարհում ամենախաղաղասեր կենդանին է: Նա սնվում է միայն բուսական կերով, երբեք ուրիշ կենդանու վրա չի հարձակվում: Եթե իր ճանապարհին փոքր ու անպաշտպան որևէ կենդանու է հանդիպում, կնճիթով զգույշ վերցնում է այդ կենդանուն, դնում մի կողմ և շարունակում իր ճանապարհը: Մուկ հանդիպելիս անգամ նա փոխում է իր ուղին: Ոմանք կարծում են՝ փիղը վախենում է, թե մկնիկը կարող է իր սմբակի մեջ բույն դնել և միշտ խուտուտ տալ: Փիղը մկից չի վախենում, պարզապես նա խաղաղասեր ու մեծահոգի կենդանի է:

Մի անգամ հռչակավոր հայ ճանապարհորդ Մարկոս-Կիրակոսը անցնում էր Աֆրիկայի ջունգլիներով: Նա լսում է փղի զարհուրելի փնգստոց: «Այսպես փնգստում է միայն վիրավոր փիղը», - մտածում է Մարկոս-Կիրակոսը:

Ճանապարհորդը գիտեր, որ վիրավոր փիղը շատ վտանգավոր է: Նա կարող է կնճիթով խոշոր քարեր վերցնել և դիպուկ նետել նրանց վրա, ովքեր կփորձեն մոտենալ:

Բայց փիղը ջունգլիների խորքում շարունակում էր փնգստալ: Նա օգնություն էր աղերսում:

Մարկոս-Կիրակոսը մի քիչ էլ է գնում և ի՜նչ է տեսնում: Ահա մի հսկայական փիղ երեք ոտքի վրա կանգնել է բացատում, իսկ մյուս ոտքի մեջ խրված է փայտե մի մեծ սեպ: Վիրավոր ոտքից արյունը առվակներով հոսում է ու ներկում խոտը:

Ի՞նչ անել: Մոտենա՞լ: Գուցե փիղը չհասկանա մարդու մտադրությունը և վնասի նրան: «Սակայն, - մտածում է անվախ ճանապարհորդը, - մարդը կենդանիների բարեկամն է, պետք է օգնել»:

Նա կամացուկ մոտ է գնում, շոյում փղի ականջները և զգուշորեն հանում փայտե սեպը: Ապա մի սրվակ յոդ է լցնում վերքի վրա և արյունահոսությունը դադարեցնում:

Համգստացած փիղը կնճիթով շոյում է բարի ճանապարհորդի գլուխը, և նրանք բաժանվում են:

ՊԼԱՆ
1. Աշխարհի ամենախաղաղասեր կենդանին:
2. Մարկոս -Կիրակոսը Աֆրիկայի ջունգլիներում:
3. Վիրավոր փիղը:
4. Օգնություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աշխարհի ամենախաղաղասեր կենդանին, բուսական կեր, երբեք ուրիշ կենդանու վրա չհարձակվել, կնճիթով զգույշ վերցնել, խուտուտ տալ, մեծահոգի կենդանի, հռչակավոր ճանապարհորդ, զարհուրելի փնգստոց, դիպուկ նետել, փայտե սեպ, առվակներով հոսել, հասկանալ մտադրությունը, զգուշորեն հանել, մի սրվակ յոդ, արյունահոսությունը դադարեցնել, կնճիթով շոյել:

ԳՈՒՇԱԿՆԵՐԸ

Ըստ Նիկոլայ Սլադկովի

Մի անգամ ես Հետևեցի փասիան թռչունի մի ընտանիքի և շատ կարևոր Հայտնագործություն արեցի:

Փասիանի բնում ճտեր Հայտնվեցին: Տասը ձվերը դարձան տասը ճուտ: Փափկամազ են ու նրբին: Շուտով սկսեցին ինչ-որ բան կտցել, սովորեցին նաև վազել՝ արագ-արագ շարժելով տոտիկները: Շուտով աճեցին փասիանների թևիկները: Նրանք սովորեցին նաև ճախրել: Երեկոները նրանք ճախրում էին ու նստում ծառի վրա՝ Հեռու աղվեսի աչքից: Այդպես ողջ գիշեր նստում են ծառի վրա կողք կողքի, կարծես պոչավոր Հուլունքներ լինեն: Ամեն երեկո ես թաքուն Հետևում էի թևավոր Հուլունքներին:

Բայց մի օր տեսա՝ փասիանիկները կողք կողքի նստած են ճյուղի վրա, իսկ մայրը ներքևում է: Անհանգստանում է, կչկչում, ձագուկներին ներքև կանչում: «Ախր ներքևում աղվեսներ կան», - վախեցա ես:

Բայց փասիանիկները Հնազանդվեցին և ցած թռան: Մայրն անմիջապես տարավ նրանց փշոտ թփերի մեջ: Դեռ նոր էին նրանք Հայտնվել թփերում, երբ երկինքը փայլատակեց, ամպրոպը որոտաց, և անձրևի ծանր կաթիլներ կտորակի նման Հարվածեցին տերևներին: Այ թե կտուժեին փասիանիկները, եթե մայրը ժամանակին նրանց թփերի մեջ չտաներ: Իսկ թփերի մեջ և՛ տաք է, և՛ չոր: Աղվեսներն էլ վտանգավոր չեն. նրանք էլ թաքնվել են տեղատարափից: Փասիանն ու նրա ճուտիկները չոր էին, մինչդեռ ես տուն Հասա ջրի մեջ կորած:

Բայց դրա փոխարեն ես շատ կարևոր գյուտ արեցի: Փասիանները գուշակներ են: Եթե նրանք երեկոյան Հուլունքի նման շարվում են ճյուղի վրա, ապա սպասվում է չոր ու խաղաղ գիշեր: Իսկ եթե թփերի մեջ են, զգուշացե՛ք Հորդառատ անձրևից ու քամուց:

ՊԼԱՆ

1. Որսորդը Հետևում է փասիաններին:
2. Տասը փասիանիկ բնում:
3. Պոչավոր Հուլունքները:
4. Մայրը ձագերին կանչում է խոտերի մեջ:
5. Հորդ անձրև:
6. Որսորդի Հայտնագործությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փասիան, տասը ճուտ, փափկամազ, նրբին, ինչ-որ բան կտցել, արագ-արագ շարժել, ճախրել, Հեռու աղվեսի աչքից, կողք կողքի, պոչավոր Հուլունք, փասիանիկ, կչկչալ, ցած թռչել, անմիջապես, փայլատակել, ամպրոպը որոտալ, անձրևի ծանր կաթիլներ, կտորակի նման Հարվածել, թաքնվել տեղատարափից, գյուտ անել, Հուլունքի նման շարվել, չոր ու խաղաղ գիշեր, Հորդառատ անձրև:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Նիկոլայ Իվանի Սլադկովը ռուս գրող է, բնության կրքոտ սիրահար: «Անտեսանելի գլխարկ» գիրքը բնությամբ հետաքրքրվողների համար է:*

ԹՈՒԹԱԿԸ

Ըստ Կոնրադ Զ. Լորենցի

Խոշոր գումարով մի աննման կակադու գնեցի: Այս հրաշալի թռչունը նախորդ տերերի մոտ մեկուսի էր ապրել. նա, ճյուղին նստած, պատրաստվում էր թռչել, բայց վախենում էր. կարծում էր, թե կապված է շղթայով:

Ի վերջո թութակը հաղթահարեց վախը և դարձավ աշխույժ ու եռանդով լի: Նա ամենից շատ սիրեց մորս: Ամենուր հետևում էր նրան, պտտվում շուրջը և կատարում իր տարաշխարհիկ պարը. ծալում և կրկին բաց էր անում իր փառահեղ փունջը:

Մի անգամ մայրս իր չորս քույրերի, ազգական մի քանի կանանց հետ պատշգամբում թեյ էր խմում: Սեղանին անուշեղեն էր, թխվածք և մի մեծ տափակ ափսե՝ շաքարի փոշով լի:

Կակադուն, որ իր համար դես-դեն էր թռչում, հանկարծ նկատեց մորս: Հաջորդ վայրկյանին թութակը խցկվեց պատշգամբի նեղ դռնից, որ հասնի մորս և նստի նրա կողքին:

Սակայն նրա ճանապարհին հայտնվել էին բազմաթիվ խոչընդոտներ, դրան գումարած՝ անծանոթ մարդիկ: Թութակը օդում կտրուկ արգելակեց և ուղղաթիռի պես սեղանի գլխավերևում դողդողացրեց թևերը: Հետո անսպասելիորեն շրջադարձ կատարեց և հաջորդ ակնթարթին անհետացավ: Տափակ պնակից գոլորշիացավ նաև շաքարափոշին. թութակի թևաբախումներից առաջացած քամին քշել տարել էր բոլոր՝ մինչև վերջին պտղունցը:

Իսկ սեղանի շուրջ նստած էին տարեց պատկառելի կանայք՝ դեմքերին դիմափոշու հաստ շերտեր:

ՊԼԱՆ

1. Խոշոր գումարով գնված թութակը:
2. Թութակի սերը:
3. Թեյախմություն:
4. Թութակը թեյի սեղանի վերևում:
5. Դիմափոշի քսած պատկառելի կանայք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

խոշոր գումար, աննման կակադու, մեկուսի ապրել, մերթընդմերթ, ի վերջո, աշխույժ և եռանդով լի, տարաշխարհիկ պար, փառահեղ փունջ, թխվածք, տափակ ափսե, դես-դեն թռչել, խցկվել, բազմաթիվ խոչընդոտներ, ուղղաթիռ, դողդողացնել թևերը, շրջադարձ կատարել, հաջորդ ակնթարթին, թութակի թևաբախումները, մինչև վերջին պտղունցը, տարեց պատկառելի կանայք, դիմափոշու հաստ շերտ:

2. Պատմել տանը պահվող թռչունների կյանքից հետաքրքրաշարժ դեպքեր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Կոնրադ Զ.Լորենցը ավստրիացի է, էթոլոգիայի՝ կենդանիների վարքագիծն ուսումնասիրող գիտության հիմնադիրներից է: «Սողոմոն թագավորի մատանին» գիրքը շատերին է հայտնի: Նոբելյան մրցանակի դափնեկիր է:

Բառերի բացատրություն

կակադու - թութակի մի տեսակ, որ գլխին կատար ունի

փունջ - թռչունների գլխի փնջավոր ցցունք, կատար

ՈՐՏԵՂ Է ԾՆՎՈՒՄ ՁՅՈՒՆԸ

Ըստ Մարթա Գումիլևսկայայի

Այս դեպքը կատարվել է Ռուսաստանի մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում դեռևս Պետրոս Մեծի ժամանակներում:

Պալատական պարահանդես էր: Անընդհատ պարում էին: Զուգված տիկիններն ու պարոնները շնչահեղձ էին լինում հետզհետե սաստկացող երաժշտության ու ոտքերի հարվածների ձայնից, գլխապտույտ արագությունից: Սրահում այլևս շնչելու օդ չկար: Տիկիններից շատերը վաղուց ուզում էին հեռանալ դահլիճից, բայց պալատական բարքերը արգելում էին հրաժեշտ տալ արքայից առաջ: Մի ջահել օրիորդ նվաղեց իր ասպետի բազուկներին: Այս ասպետը առանց հապաղելու մի ձեռքով քնքշորեն գրկեց իր պարընկերուհուն, մյուս ձեռքի բռունցքով ամուր հարվածեց պատուհանի ապակուն:

Դրսում ռուսական ձմեռ էր: Պաղ օդի հոսանքը լցվում էր ներս: Հանկարծ ջահերի թրթռացող լույսերի մեջ սկսեցին փայլատակել ձյան փաթիլներ: Կախարդական տեսարան էր: Պալատի մեծ սրահում ձյուն էր գալիս: Հարյուրավոր մարդիկ սքանչացած ախ քաշեցին:

Ինչպե՞ս է առաջանում ձյան փաթիլը: Ջրային գոլորշիները գետնից բարձրանում են շատ վեր, ուր խիստ ցուրտ է: Հենց այնտեղ ջրային գոլորշիները վերածվում են փոքրիկ սառցաբյուրեղների: Սրանք դեռ շատ փոքր են: Վեցանկյունի բյուրեղիկը անընդհատ աճում, զարգանում է: Վերջապես դառնում է զարմանալիորեն գեղեցիկ աստղիկ: Ձյունիկները դանդաղ իջնում, հավաքվում են փաթիլների տեսքով և թափվում գետին: Երբ մեկնաբանվեց փաթիլի գոյացման գաղտնիքը, հասկանալի դարձավ պարասրահում տեղացած ձյան առեղծվածը:

Դահլիճում չափից ավելի ջրային գոլորշիներ էին կուտակվել: Դրանք չփվեցին պատուհանից ներխուժած շատ պաղ օդի հոսանքին և դարձան բյուրեղիկներ: Հետո էլ ցած թափվեցին ձյան փաթիլների տեսքով:

ՊԼԱՆ

1. Պալատական պարահանդես Սանկտ Պետերբուրգում:
2. Պարասրահի գաղջ օդը:
3. Նվաղած օրիորդը և նրա ասպետը:
4. Ձյուն՝ դահլիճում:
5. Փաթիլի առաջացման գաղտնիքը:
6. Պարասրահում կատարվածի մեկնաբանությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ Ռուսաստան, Սանկտ Պետերբուրգ, Պետրոս Մեծ

բ/ պալատական պարահանդես, զուգված տիկիններ, շնչահեղձ լինել, հետզհետե սաստկացող երաժշտություն, ոտքերի հարված, գլխապտույտ արագություն, պալատական բարքեր, արգելել, հրաժեշտ տալ, արքա, ջահել օրիորդ, նվաղել, ասպետի բազուկներ, առանց հապաղելու, քնքշորեն գրկել, պարընկերուհի, բռունցք, պաղ օդի հոսանք, ջահերի թրթռացող լույսեր, հարյուրավոր մարդիկ, սքանչացած ախ քաշել, ջրային գոլորշի, փոքրիկ սառցաբյուրեղ, վեցանկյունի բյուրեղիկ, առեղծված:

ԾԱՂԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Ըստ Մարգո Ղուկասյանի

Դու տեսե՞լ ես ծաղկի բացվելու պահը: Երբևէ պատահե՞լ է, որ քո աչքի առաջ կոկոնը փթթի: Օ՜, դա սքանչելի պահ է, այնքան հազվադեպ ու գեղեցիկ, որ կարելի է դասել հրաշքների շարքը:

Ծաղիկները բացվում են դանդաղ ու աննկատ: Մարդու աչքը հաճախ չէ, որ որսում է այդ պահը:

Մի անգամ՝ երեկոյան աղջամուղջին, զբոսնում էի պարտեզում: Մութն իջնում էր կամացուկ, խառնվում լույսին, զովն աստիճանաբար հաղթում էր տոթին: Ես զգում էի, թե ինչպես թեթևացած շունչ էին քաշում նաև բույսերը:

Մեկ էլ թեթև շրշյուն եմ լսում: Կանգնում ու սկսում եմ զննել ծխածաղիկների թումբը: Ողջ թուփը ծածկված է նիհարիկ բամիա հիշեցնող կոկոններով: Հանկարծ դրանցից մեկի կանաչ թաղանթը շրջվում է. երևում են իրար փաթաթված ծաղկաթերթերը: Եվս մեկ-երկու վայրկյան, և ներսում ինչ-որ ուժ է խլրտում: Դեղին ու նուրբ թերթիկները դողդողում են: Հետո կարծես աներևույթ մի ձեռք սեղմում է կոճակը. ծաղկեպսակը միանգամից բացվում է անձրևանոցի նման:

Թուփը այլևս գորշ չէ. այն մթնշաղի մեջ առկայծում է իր դեղին ծաղիկներով: Այսպես կլինի ողջ գիշեր: Իսկ առավոտյան, երբ ծագի արևը, ծխածաղկի քնքուշ թերթերը կհավաքվեն և կոլորվեն: Ցերեկը նրանք կկախվեն ցողուններից աներգ զանգակների նման:

Իսկ իրիկվա զով շնչի հետ նորից կբացվեն ու կվառվեն դեղին ճրագ-ծաղիկները:

ՊԼԱՆ

1. Ծաղկի բացվելու պահը:
2. Զբոսանք երեկոյան:
3. Ծխածաղիկների թումբը:
4. Շարժում կանաչ թաղանթի ներսում:
5. Անձրևանոցի նման բացվող ծաղիկները:
6. Ցերեկվա աներգ զանգակները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ծաղկի բացվելու պահը, փթթել, դանդաղ ու աննկատ բացվել, երեկոյան աղջամուղջ, կամացուկ իջնել, թեթևացած շունչ քաշել, զննել ծաղիկների թումբը, նիհարիկ բամիա հիշեցնող կոկոններ, իրար փաթաթված ծաղկաթերթեր, մեկ-երկու վայրկյան, ինչ-որ ուժ խլրտալ, աներևույթ ձեռք, անձրևանոցի նման բացվել, դեղին ծաղիկներով առկայծել, ցողուններից կախվել աներգ զանգակների նման, դեղին ճրագ-ծաղիկներ:

Բառի բացատրություն

ծխածաղիկ - մորմազգիների ընտանիքին պատկանող ծաղկաբույս

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՍՈՍՅԱՑ ԱՆՏԱՌՈՒՄ

Ըստ Հրաչյա Մաթևոսյանի

Երբ դու հաց ես ուտում, և պատառը մնում է կոկորդիդ, ուրեմն քո մոտ բարեկամդ մի հեռու տեղ սոված է:

Ահա Հրայրը հաց է ուտում. պատառը մնում է բկին, կուլ չի գնում: Ո՞վ է քաղցած: Որտե՞ղ: Աչքերը մի պահ ջրակալում են: Մեկ էլ աչքերի մշուշի միջից նրան է նայում եղնիկը: Հիշում է, թե ինչպես ուշ աշնան մի օր նա կճղակով ետ էր տալիս խաշամը, մի երկու ծեղ խոտ պոկում, ապա տխուր հեռանում: Հրայրը հիշում է եղնիկին և հանկարծ ասում.

- Սոսյաց անտառ խոտ եմ տանելու:

Նրա վրա ծիծաղում են: Ծնկահար ձյունին ինչպե՞ս է հասնելու այդքան հեռու: Հրայրին պաշտպան է կանգնում Մանուշակը.

- Մեր բարեկամների համար էլ Նոր տարվա սեղան բացենք:

Երկուսով գնում են իրենց ընկերների մոտ: Հետո էլ Ստեփան պապին են համոզում:

Ամեն ինչ շատ լավ է ստացվում: Պապը թամբում է ձին, խուրջինները լիքը լցնում է հաց-մաց, կուտ ու ճամփա ընկնում: Երեխաները գնում են նրա ձիու բացած հետքով: Շուրջը ճրթճրթան ձյուն է, արևը այնպես է պսպղացնում ձյունը, որ քիչ է մնում ձին խրտնի:

Նոր տարի է, նոր տարվա օր է:

Հասնում են սոսյաց անտառ: Պապը երեխաների հետ բաց է անում հենց այդտեղ դիզած խոտը և փռում ձյուների վրա: Աղջիկները հանում են հատիկ ու կուտ և կլտում այստեղ-այնտեղ: Նրանք հանում են գազար, կաղամբ, իսկ Մանուշակը՝ իր թխած գաթան:

Սոսյաց անտառում ճոխ սեղան է բացվում: Նոր տարվա սեղան:

Թռչում գալիս են բոլոր թևավորները, վազում գալիս են եղնիկ, նապաստակ ու սկյուռ:

Անտառում ամանորյա տոնախմբություն է...

ՊԼԱՆ

1. Երբ հաց ուտելիս պատառը կոկորդիդ է մնում:
2. Խեղդվող Հրայրը:
3. Տխուր եղնիկի հուշը:
4. Անակնկալ որոշում:
5. Դեպի սոսյաց անտառ:
6. Ամանորյա տոնախմբություն անտառում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

պատառը մնալ կոկորդին, կճղակով ետ տալ խաշամը, մի երկու ծեղ խոտ, սոսյաց անտառ, ծնկահար ձյուն, թամբել ձին, ճրթճրթան ձյուն, պսպղացնել, այստեղ-այնտեղ, ճոխ սեղան, թևավոր, ամանորյա տոնախմբություն:

Բառի բացատրություն

խաշամ - աշնանը ծառերից թափված տերևներ, խազալ

V

ԴԱՍԱՐԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԵՎ ԽԱՆԴՈՒԹ ԽԱՆՈՒՄ

Ըստ «Սասունցի Դավիթ» դյուցազներգության

Սասունցի Դավթի համբավը բերնեբերան էր անցնում: Մարդիկ հիացմունքով պատմում ու պատմում էին Դավթի հաղթ բազկի զորության, առնական գեղեցկության, քաջագործությունների մասին:

Դավթի մասին շատ էր լսել նաև Կապուտկողի Թագավորի աղջիկը՝ Խանդութը: Սա մի հուրի-փերի էր, այնքան գեղեցիկ, որ տեսնողին խելքահան էր անում:

Բազմաթիվ փեսացուներ եկել կուտակվել էին Կապուտկողի Թագավորի պալատում: Սպասում էին, թե ո՛ւմ պիտի ընտրի գեղաշուք օրիորդը: Իսկ նա մտքում արդեն ընտրել էր դյուցազուն Դավթին:

Մի օր էլ օրիորդը կանչեց երեք գուսանների, պատվիրեց գնալ Սասուն և Դավթի մոտ իր գովքն անել:

Եկան գուսանները, եկան Սասնա երկիր, դժվարությամբ գտան Դավթին: Առաջին գուսանը, որ ալեհեր էր ու զառամ, ձեռքն առավ սազը, լարեց ու երգելով ասաց.

- Լսի՛ր, Դավի՛թ, Խանդութ խանումի իրանը ճկուն եղեգն է, հասակը սոսի ծառ է, աչքերը գինու կթղաներ են: Ինքն էլ մեծահոգի է ու լայնսիրտ:

Հետո Թուլխմորուս գուսանն առավ սազը, լարեց ու երգեց.

- Նայում եմ Խանդութ խանումին ու հիանում. ձեռքն ու ոտքը վրձնով են նկարված, մազերի սև ջրվեժը թափվում է ճերմակ ուսերին:

Երրորդ անգամ պատանի գուսանը ձեռքն առավ նվագարանը և երգեց սքանչացումից շողարձակող աչքերով.

- Օ՛, Դավի՛թ, Խանդութ խանումի թերթերունքները կռունկի թևեր են, իսկ մաշկը նոր եկած ձյան պես ճերմակ է, թևերը փամփլիկ են, ինչպես բամբակի քուլաներ:

Լսե՛ց, լսե՛ց Դավիթը գուսաններին, և սիրտը լցվեց անեղը սիրով: Երբ վերջին երգիչն էլ ավարտեց, Դավիթը տեղից ելավ ու ասաց.

- Գուսաննե՛ր, դուք բարո՛վ եկաք, իմ սիրտը ամուր բերդ էր, ձեր երգից սկսեց երերալ, իմ սիրտը զուլալ գետ էր, ձեր գովքից դարձավ գարնան պղտոր հեղեղ:

Դարձե՛ք, գուսաննե՛ր, Խանդութ խանումի մոտ, ասացե՛ք, որ վեց օր թող սպասի, իսկ յոթերորդ օրը իր հյուրն եմ:

Այսպես Սասունցի Դավիթը գնաց Խանդութ խանումի մոտ, խնդրեց նրա ձեռքը, և քաշազուն օրիորդը դարձավ Սասնա տիրուհին:

ՊԼԱՆ

1. Հիացմունք Սասունցի Դավթի հանդեպ:
2. Կապուտկողի թագավորի աղջիկը:
3. Գուսաններին տրված հանձնարարությունը:
4. Գովք՝ երգով:
5. Երգից ծնված սեր:
6. Ամուսնություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) բերնեբերան անցնել, հաղթ բազկի զորություն, առնական գեղեցկություն, հուրի-փերի, գեղաշուք օրիորդ, դյուցազուն, ալեհեր ու զառամ, ճկուն եղեգն, սոսի ծառ, գինու կթղա, Թուխմորուս գուսան, մազերի սև ջրվեժ, սքանչացումից շողարձակող աչքեր, թերթերունք, փամփլիկ, բամբակի քուլա, անեղը սեր, ամուր բերդ, զուլալ գետ, գարնան պղտոր հեղեղ, քաշազուն օրիորդ:

բ) Սասունցի Դավիթ, Սասնա երկիր, Խանդութ խանում, Կապուտկողի թագավոր:

2. Կարդալ հատվածներ «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունից:

ՏՐԴԱՏ

Ըստ Ագաթանգեղոսի

Հայոց Խոսրով Թագավորի որդին՝ Տրդատը, իր ուսումն ու դաստիարակությունը ստանում էր Լիկինոս անունով մի հռոմեացու մոտ: Տրդատը մանկուց ֆիզիկապես շատ ուժեղ էր, կորովի ձիավար էր, իսկ զենքերի գործածության մեջ քաջահմուտ էր: Նա հաճախ էր կրկեսային մրցումների մասնակցում և միշտ հաղթանակում էր:

Օրերից մի օր Հռոմի կայսրը հրովարտակ է ուղարկում իր բոլոր իշխաններին, հրամայում է շուտափույթ գալ Հռոմ: Լիկինոսը իր սիրելի Տրդատի հետ գալիս է կայսրի կանչին:

Հռոմի կայսրը փոքրամարմին և վտիտ մի անձ էր: Այդ օրերին նա սարսափած էր, որովհետև գոթերի զորքը պատերազմի էր ելել Հռոմի դեմ: Գոթերի թագավորը կայսրին լուր էր ուղարկել, թե ուզում է մենամարտել նրա հետ, որպեսզի անմեղ զորականների արյունն չթափվի:

Երբ Լիկինոսը լսում է գոթերի թագավորի առաջարկի մասին, համոզում է մենամարտի ուղարկել Հայոց արքայազն Տրդատին:

-Թող իմ տիրոջ սիրտը բնավ չտագնապի, քանզի այստեղ՝ քո արքունիքում է Տրդատ դյուցազունը. նա կընդունի մենամարտի հրավերը:

Տրդատին կանչում են կայսրի մոտ. վերջինս համաձայնվում է մենամարտել գոթերի թագավորի հետ:

Հաջորդ օրը՝ առավոտյան, Տրդատին հագցնում են կայսեր արքայական պատմուճանը, զարդարում կայսերական նշաններով և կանգնեցնում հռոմեական զորքի առջևում՝ իբրև կայսր:

Տրդատը՝ զորքի գլուխ անցած, մարտական փողերի գիլ ազդարարությամբ մոտե-
նում է և կանգնում թշնամու դեմ հանդիման:
Առաջ են գալիս Տրդատն ու գոթերի թագավորը: Նրանք մտրակում են իրենց ե-
րիվարներին, և սկսվում է մարտը: Կայսերակերպ Տրդատը հաղթում է գոթերի թա-
գավորին, նրան իջեցնում է նժույգից և բերում կանգնեցնում է Հռոմի կայսեր առջև:
Կայսրը մեծամեծ պատիվներ և պարգևներ է տալիս Տրդատին: Ապա նրա գլխին
թագ է դնում, զարդարում է արքայական ծիրանիով, օգնական զորք է տալիս և ու-
ղարկում հայրենի Հայոց աշխարհը՝ տիրանալու իր հոր թափուր գահին:

ՊԼԱՆ

1. Խոսրով Թագավորի որդի Տրդատը:
2. Հռոմի կայսեր հրովարտակը:
3. Գոթերի Թագավորի պահանջը:
4. Փոքրամարմին կայսեր սարսափը:
5. Տրդատին ուղարկում են մարտի:
6. Հաղթանակ:
7. Հռոմի կայսրը Տրդատին օծում է Հայոց Թագավոր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) կորովի ձիավար, քաջահմուտ, կրկեսային մրցումներ, հրովարտակ ուղարկել, շուտափույթ գալ, փոքրամարմին ու վտիտ, բնավ չտագնապել, արքունիք, դյուցազն, մենամարտի հրավեր, արքայական պատմուճան, կայսերական նշաններ, մարտական փողերի գիլ ազդարարություն, գոթական զորք, մեծամեծ պատիվներ և պարգևներ, գլխին թագ դնել, զարդարել արքայական ծիրանիով, թափուր գահ:

բ) Խոսրով Թագավոր, Տրդատ, Լիկինոս անունով հռոմեացի, Հռոմի կայսր, Հայոց աշխարհ:

ՃԵՐՄԱԿԱՑԻ՛Ր, ԹՈՂ, ԳԻՆԻ ԽՄԻ

Ըստ Փավստոս Բուզանդի

Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղը հորից հետո դարձավ Հայոց զորքի սպարապետ: Նա քառասուն հազար զորք հավաքեց և գնաց Ատրպատական՝ Հայոց աշխարհը պարսիկների ներխուժումից պաշտպանելու համար: Պարսից Շապուհ թագավորն էլ իր զորքով եկավ Ատրպատական աշխարհը:

Մուշեղը հարձակվեց պարսիկների վրա, նրանց մի լավ ջարդեց: Պարսից արքան մի ձիով հազիվ ճողոպրեց ու փախավ իր երկիրը: Նա նույնիսկ չհասցրեց իր հետ տանել կանանցը:

Մուշեղ սպարապետը մեծ թվով գերիներ վերցրեց, նրանցից շատերին մորթազերծ արեց, խոտով լցրեց և ուղարկեց Հայոց Պապ թագավորին: Այսպես կամեցավ իր հոր վրեժը լուծել Շապուհից:

Հայերը գերեվարեցին նաև Շապուհի հարեմը: Մուշեղը հրամայեց ոչ մի կնոջ մազին չդիպչել: Ընդհակառակը, մեծամեծ պատիվներով, պատգարակներով ու դեսպաններով կանանց ուղարկեց իրենց թագավոր ամուսնու հետևից:

Շապուհը ապշեց Մուշեղ սպարապետի այս ազնվական արարքից: Իր գավաթի վրա նա նկարել տվեց Մուշեղին՝ ճերմակ նժույգ հեծած:

Խնջույքների ժամանակ նա այդ գավաթով էր գինի ըմպում, շարունակ նայում էր ազնվազարմ հայորդու պատկերին և ասում.

- Ճերմակաձին թող գինի խմի...

ՊԼԱՆ

1. Մուշեղը Հայոց զորքի սպարապետ:
2. Պարսիկների ջարդը:
3. Շապուհի կանանցը:
4. Մուշեղի վեհանձն արարքը:
5. Մուշեղի պատկերով գավաթը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քառասուն հազար, Ատրպատական, Հայոց աշխարհ, Շապուհ թագավոր, ճողոպրել, կանանց, մորթազերծ անել, գերեվարել, պատգարակ, դեսպան, ապշել, ճերմակ նժույգ, ազնվազարմ հայորդի:

ՄԱՐԴՆ ԱՆՄԱՀ Է ԳՈՐԾՈՎ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Բարձրահասակ են եղել և՛ Տրդատ Մեծ թագավորը, և՛ նրա կինը՝ թագուհի Աշխենը: Ի տարբերություն ծնողների՝ նրանց որդին՝ Խոսրովը, կարճահասակ էր: Ժողովուրդը նրան տվեց «Կոտակ» մականունը, որ նշանակում է կարճ, կարճահասակ:

Հոր մահից հետո գահ բարձրացավ Խոսրովը: Երիտասարդ գահակալը կանչեց իր խնամակալին և ասաց.

- Հաճախ եմ լսում, որ մեծ ու փոքր իմ հետևից ինձ «Կոտակ» են անվանում: Արդյոք դա չի նսեմացնում իմ արժանապատվությունը:

- Բոլորովին, տե՛ր իմ, - պատասխանեց խնամակալը: - Աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացին քեզնից բարձր չէր, բայց իր սխրանքներով, խելքով ու փառքով գերազանցեց բարձրահասակ երևելիներին: Աշխատի՛ր քո գործերով բարձրանալ մարդկանց աչքում:

Անցան տարիներ: Շատ բարենորոգումներ արեց Խոսրով Կոտակը: Նա հիմնադրեց աքանչելի Դվին մայրաքաղաքը, հսկայական մի անտառ, որն արգելանոց դարձրեց, որպեսզի բազմանան գազաններ, թռչուններ ու սողուններ: Ժողովուրդն այնպես սիրեց այդ անտառը, որ այն անվանեց հիմնադրի անունով՝ Խոսրովի անտառ:

Արքան դարձյալ կանչեց իր երբեմնի խնամակալին, որ արդեն զառամյալ ծերունի էր, և հարցրեց.

- Հը՞, արդարացրի՞ քո հույսերը:

- Այո՛, Խոսրո՛վ, քո բարենորոգումներով ու շինարարությամբ դու սիրելի դարձար քո ժողովրդին: Հիմա «Կոտակ» ասելով՝ մարդիկ հասկանում են ոչ թե կարճահասակ, այլ բարձր, վսեմ, գեղեցիկի արժեքը հասկացող ու գնահատող տիրակալ: Դու բոլորիս համար այժմ ամենագեղեցիկն ու բարձրահասակն ես, - պատասխանեց խնամակալը:

ՊԼԱՆ

1. Խոսրով Կոտակ թագավորը:
2. Կարճահասակ թագավորի անհանգստությունը:
3. Համեմատություն Ալեքսանդր Մակեդոնացու հետ:
4. Խոսրով թագավորի բարենորոգումները:
5. Զառամյալ խնամակալի կարծիքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բարձրահասակ, Տրդատ Մեծ, Կոտակ, նսեմացնել արժանապատվությունը, աշխարհակալ Ալեքսանդր Մակեդոնացի, արգելանոց, երբեմնի խնամակալ, զառամյալ ծերունի, արդարացնել հույսերը, վսեմ, գեղեցիկի արժեքը հասկացող, ամենագեղեցիկն ու բարձրահասակը:

ՎԱՆԻ ՋՐԱՆՑՔԸ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Քրիստոսից առաջ ութերորդ դարում Վանում թագավորում էր Հզոր արքա Մենուան:

Մի օր նստած իր քարակոփ միջնաբերդ-պալատում՝ նայում էր Հրաշագեղ ծովական ոսկյա զանգակին: Երևում է՝ խորհում էր ինչ-որ բանի մասին: Քիչ անց ձեռքը տարավ արքայական սենեկապետը.

- Լսու՛մ եմ, տե՛ր արքա:
- Ես սպասում եմ տերության յոթ իմաստուններին:
- Նրանք այստեղ են, տիրակա՛լ:
- Նե՛րս Հրավիրիր:

Գահասրահ մտան ծիրանագույն պարեգոտներ Հագած յոթ իմաստուն:

- Քանի տարի է, - խոսեց Մենուան, - ոչ մի կերպ արքունի Հացամբարները չեն լցվում այնքան ցորենով, որ Հերիքի յոթ տարի: Դուք ի՞նչ եք խորհուրդ տալիս, ի՞նչ անենք, որ Հացն ավելանա տերության մեջ, և Վանի ամբարները բերնեբերան լցված լինեն ցորենով:

Մտածեցին իմաստունները, խորհուրդ արեցին և այսպես խոսեցին.

- Տե՛ր արքա, մեր երկրում ջուրը քիչ է: Արտերը ջրում են կժերով, սափորներով, տիկերով: Դրա Համար էլ բերքը խանձվում է: Պետի օգտագործենք Հայոց ձորի առատ աղբյուրների ջուրը: Ջրանցք պետի կառուցել, տիրակա՛լ, ջրանցք, որը այգեստան կդարձնի ծովեզրյա Հողերը:

Լսեց Մենուան իմաստուններին և Հրովարտակ արձակեց ութսուն կիլոմետր երկարությամբ ջրանցք անցկացնելու մասին: Յոթ տարի տևեց ջրանցքի կառուցումը: Այն միագիծ առու չէր: Նրանից ճյուղավորվում էին մեծ ու փոքր տասնյակ ջրատարներ, որոնք ոռոգում էին Վանա լճի արևելյան ափին սփռված քսանհինգ գյուղերի այգիները: Շուտով Վանը և նրա շրջակայքը թաղվեցին Հուռթի այգեստաններ մեջ: Բարձրացան ցորենի Հասկերը, ուռճացան, լցվեցին ընտիր ցորնահատիկներով: Հարստացավ Վանա թագավորությունը, ամբարները չէին տեղավորում առատ Հացահատիկը:

Վանի ջրանցքը Մենուայի Հպարտությունն էր: Թշնամիներից ու չարագործներից այն պաշտպանելու Համար Մենուան մի քանի ամրոց է կառուցել ջրանցքի երկարությամբ, դրանց մեջ պահել զորագնդեր: Թողել է նաև տասնչորս սեպագիր արձանագրություն՝ Հավաստելով աշխարհին, որ ջրանցքը կառուցողն ինքն է:

Վանի ջրանցքն այժմ երեք Հազար տարեկան է և անխափան գործում ու ջուր է մատակարարում ոչ թե իր բնիկ, այլ նոր, անօրինական տերերին:

ՊԼԱՆ

1. Վանի թագավոր Մենուան:
2. Յոթ իմաստունները արքայի մոտ:
3. Իմաստունների խորհուրդը:
4. Ջրանցքի կառուցումը:
5. Վանի թագավորության բարգավաճումը:
6. Ամրոցներ՝ ջրանցքը պաշտպանելու՝ համար:
7. Մենուա թագավորի սեպագիր արձանագրությունները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ութերորդ դար, արքա Մենուա, քարակոփ միջնաբերդ, հրաշագեղ ծովակ, արքայական ոսկյա գահ, սննկացնել, դահահրահ, ծիրանագույն պարեգոտ, հացամբարներ, բերնեբերան, բարեբեր դաշտ, ուռենալ, ցորնահատիկ, սեպագիր արձանագրություն, աշխարհին հավատել, անխափան գործել:

ՔԱՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Վոլտերի

Սետոկ անունով մի վաճառական հինգ հարյուր ունկի արծաթ էր պարտքով տվել ծանոթ հրեային: Խաբեբա հրեան որոշել էր յուրացնել այդ գումարը, քանի որ երկու վկաները մեռել էին, և ոչ ոք չէր կարող վկայություն տալ:

Սետոկը դատարան է դիմում: Նրան պատրաստվում է պաշտպանել մի իմաստուն:

- Որտե՞ղ եք տվել այդ գումարը հրեային,- հարցնում է իմաստունը Սետոկին:

- Լեռան ստորոտում գտնվող մի մեծ սալաքարի վրա,- պատասխանում է վաճառականը:

- Ի՞նչ բնավորության տեր է ձեր պարտապանը. տաքարյո՞ւն է, համդա՞րտ, գգուշավո՞ր, թե՞ անխոհեմ:

- Իմ պարտապաններից ամենից տաքարյունն ու դյուրաբորբոքն է,- ասում է Սետոկը:

Իմաստունը դատարանում դիմում է օրենքի պաշտպանին.

- Վաճառական Սետոկի անունից ես այս մարդուց պահանջում եմ հինգ հարյուր ունկի արծաթը, որը նա հրաժարվում է վերադարձնել:

- Իսկ դուք ունե՞ք վկաներ,- հարցնում է դատավորը:

- Ո՛չ, նրանք մեռել են,- ասում է իմաստունը,- բայց մնացել է այն քարը, որի վրա համրել են արծաթը: Հանձնեցե՛ք կարգադրել, որ այստեղ բերեն այդ քարը, որը վկայություն կտա: Ես ու հրեան կմնանք այստեղ, մինչև այդ քարը բերեն:

Դատավորը համաձայնում է և անցնում այլ գործերի քննության: Նիստի ավարտին նա դիմում է իմաստունին:

- Ինչ է, տեղ չհասա՞վ ձեր քարը:

Այդ ժամանակ հրեան ծիծաղում է և ասում.

- Եթե մենք բոլորս մի քանի օր փակված նստենք, դարձյալ քարը տեղ չի հանի, որովհետև գտնվում է ավելի քան վեց մղոն այստեղից հեռու, իսկ դա տեղից շարժելու համար առնվազն քսան հաղթանդամ տղամարդիկ են պետք:

- Ես ձեզ ասացի,- բացականչում է իմաստունը,- որ քարն ինքը կգա վկայություն տալու: Քանի որ այս մարդը գիտե քարի տեղը, ապա դրանով իսկ հաստատում է, որ վաճառական Սետոկը հենց այդ քարի վրա է հաշվել գումարը:

Շփոթված հրեան լեզուն կծում է, բայց արդեն ուշ էր: Դատավորը, պատժի խիստ սպառնալիք տալով, պահանջում է, որ հրեան վերադարձնի պարտքը:

ՊԼԱՆ

1. Խաբեբա հրեան:
2. Տեղեկություններ պարտապանի մասին:
3. Իմաստունը դատարանում:
4. Հրեան մատնում է իրեն:
5. Պարտքը վերադարձվում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հինգ հարյուր ունկի արծաթ, հրեա, խաբեբա, սալաքար, տաքարյուն, հանդարտ, զգուշավոր, դյուրաբորբոք, օրենքի պաշտպան, գործերի քննություն, վեց մղոն, հաղթանդամ տղամարդիկ, շփոթված:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Վոլտեր Ֆրանսուա Մարի Արուե (1694-1778) - ֆրանսիացի նշանավոր գրող, փիլիսոփա-լուսավորիչ:*

Բառի բացատրություն
ունկի - կշռի միավոր Եվրոպայում

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՍՈՒՏ

Ըստ Ազատ Շահինյանի

Հսկա շենքի բակում՝ ցանկապատի մոտ դարսված գերաններին, հավաքվում էին տղաները: Նրանց մեջ ցից-ցից մազերով մի տղա կար, որ ընդամենը մի քանի ամիս է՝ ապրում էր այդ շենքում:

Մայրամուտ էր: Իրենց սովորության համաձայն՝ տղաները դարձյալ հավաքվել և նստոտել էին գերաններին:

- Գլխի վրա ցատկելն ինչ է, որ, - խոսում էր ցից-ցից մազերով տղան:- Այ, խսկական լողորդը նա է, որ չորս րոպե սուզված կմնա ջրի տակ:

- Չորս րոպե՞, - զարմացած ու հիացած ծոր տվին տղաները:

Ցից-ցից մազերով տղան մեծագույն ոգևորությամբ սկսեց պատմել, թե ինչպես մի անգամ Սևանում նավակով թիավարությամ է դուրս եկել քեռու հետ, ինչպես թիավարելիս պատահմամբ քեռու գրպանից ջուրն է ընկել նրա ձեռքի ժամացույցը: Հետո ինքը համել է շորերը, սուզվել հատակը, որոնել ու գտել ջրակայուն ժամացույցը:

Տղաներին խիստ ոգևորեց պարծենկոտի քաջագործությունը: Նրանք առաջարկեցին գնալ մոտակա ջրանցքը, որ սա ցուցադրի իր շնորհքը:

Մայրամուտի շառագունած երկինքը արտացոլվել էր հանդարտ հոսող ջրերի վրա:

Տղաներն իսկույն համվեցին և իրար հրմշտելով՝ թափվեցին ջուրը: Ցից-ցից մազերով տղան մոլորված կանգնել էր ափին: Հետո, երբ տեսավ, որ իրեն շտապեցնում են, դողդողալով մոտեցավ ու ցած կախվեց ջրերի վրայով անցնող երկաթալարից: Մեկ էլ նրա մատները սահեցին, և նա չլմփոցով ընկավ ջուրը: Նա գահավիժեց ջրի տակ, աչքերը մթնեցին, և մի ահավոր միտք շամփրեց նրա ուղեղը՝ վերջ...

Տղաները կարծեցին, թե լողորդը ցույց է տալիս իր բարձրագույն արվեստը: Նրանք լողալով մոտեցան: Մեկ էլ ջրի երեսին հայտնվեց պարծենկոտ լողորդը՝ սարսափից չռված աչքերով: Նա հուսահատ ծեծկոտեց ջուրը, փորձեց ինչ-որ բան հասկացնել ու նորից սուզվեց:

Տղաները ծիծաղեցին. լողորդը երևի կատակ է անում: Բայց երբ նա մի վերջին օրհասական ճիգով ելավ ջրի երես, իսկ հետո սուզվեց, համկարծ հասկացան, որ նա խեղդվում է:

Նրանք դուրս բերին թշվառ «լողորդին», կախեցին գլխի վրա, հետո էլ անցան արհեստական շնչառություն տալուն:

Վերջապես «լողորդը» խուլ տնքաց, բաց արեց աչքերը և սրտառուչ ու երկարատև լացով ավետեց իր վերադարձը դեպի կյանք:

ՊԼԱՆ	1. Շենքի բակի հավաքատեղին:	5. Ջրի մեջ:
	2. Ցից-ցից մազերով տղան:	6. Խեղդվող «լողորդը»:
	3. Տղայի զարմանալի պատմությունը:	7. Փրկություն:
	4. Դեպի ջրանցք:	

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ցանկապատի մոտ դարսված գերաններ, ցից-ցից մազերով տղա, ընդամենը մի քանի ամիս, հիացած ծոր տալ, մեծագույն ոգևորություն, ջրակայուն ժամացույց, մոտակա ջրանցք, ցուցադրել շնորհքը, շառագունած երկինք, արտացոլվել, շամփրել ուղեղը, բարձրագույն արվեստ, սարսափից չռված աչքեր, հուսահատ ծեծկոտել, օրհասական ճիգ, սրտառուչ և երկարատև լաց, ավետել վերադարձը դեպի կյանք:

ԾԱՂԿՈՒՆ ՊԱՐՏԵԶ

Ըստ Զորայր Խալափյանի

Մի թագավոր շենացրել ու ծաղկեցրել էր իր երկիրը: Հիմա ծերացել էր: Հինգ որդի ուներ: Եվ մտածում էր, թե որ որդուն հանձնարարի իր փթթուն աշխարհի կառավարումը:

Շատ մտածեց ու գտավ ելքը: Մի օր կանչեց իր որդիներին, նրանց գանազան ծաղիկների սերմեր բաժանեց ու ասաց.

- Իմ սիրելի՛ զավակներ, հողեր ընտրեցե՛ք ձեզ համար: Մշակե՛ք հողը և ցանե՛ք այս սերմերը: Ում պարտեզը ճոխ ու խնամված լինի, նա կթագավորի ինձանից հետո:

Որդիները վերցրին սերմերն ու գնացին: Ընտրեցին հողամասեր, խնամեցին հողը, պարտեզներ շինեցին, առուներով ջուր բերեցին:

Գարնանը Թագավորը իր պալատականների և օտար երկրների դեսպանների մեծ բազմությամբ ելավ գնաց՝ պարտեզները նայելու և թագաժառանգը որոշելու:

Գնաց, մոտեցավ ավագ որդու պարտեզին: Ի՜նչ պարտեզ, իսկական դրախտ: Ամեն գույնի, ամեն բույրի ծաղիկներ ծով էին կապել պարտեզում: Նայեց Թագավորը, նայեց, տրտմեց, մռայլվեց ու անխոս գնաց առաջ:

Դրանիկներն ու դեսպանները զարմացան արքայի վերաբերմունքից և լռելյայն գնացին նրա հետևից:

Ահա մյուս պարտեզը: Էլի ճոխ, առավել շքեղ ու զարդարուն: Այսպես նաև մյուս երկու որդիների պարտեզները շլացնում էին իրենց ճոխությամբ, փարթամությամբ ու գունեղությամբ:

Ավելի ու ավելի էր մռայլվում արքան, դեմքը ցավից խորշոմել ու ծերացել էր:

Վերջապես հասան կրտսեր որդու պարտեզին: Բոլորը ապշահար ու կարկամած կանգ առան: Մշակած, խնամած ու ոռոգած իր պարտեզում կանգնել էր արքայազնը: Նրա պարտեզում ոչինչ չկար: Անգամ մոլախոտ:

- Ո՞ւր են քո ծաղիկները, որդի՛, ցույց տուր մեզ, - ասաց հայրը:

Որդին ասաց.

- Հա՛յր իմ, որքան աշխատեցի, քրտինք թափեցի, օր ու գիշեր ջրեցի, խնամեցի այս հողը, սակայն քո տված սերմերից և ոչ մեկը չծլեց, իմ հողաբաժինը այսպես մնաց ամայի:

Հոր դեմքը պայծառացավ, խորշոմները հարթվեցին: Նա գրկեց, համբուրեց կրտսեր որդու ճակատը:

- Ապրես, որդի՛, - ասաց հայրը, - դու ազնիվ, շիտակ և աշխատասեր մարդ ես: Քո բոլոր եղբայրները անազնիվ և խաբեբա գտնվեցին, որովհետև այն սերմը, որ տվել էի բոլորիդ, նախապես խաշել և ոչնչացրել էի ներսի հունդը: Այդ սերմից ոչինչ բուսնել չէր կարող: Դու միակն ես, որ չննենգեցիր ու ուրիշ սերմ չցանեցիր քո պարտեզում:

Ապա Թագավորը բռնեց որդու ձեռքը, կանգնեց ժողովրդի առջև և հայտարարեց բարձրագոչ.

- Ահա ձեր Թագավորը: Նա արդար, շիտակ մարդ է և ձեզ կտանի ճշմարիտ ու գեղեցիկ ճանապարհով:

ՊԼԱՆ
1. Ծեր թագավորը:
2. Ծաղիկների սերմերի բաժանումը:
3. Որդիները խնամում են իրենց պարտեզները:
4. Թագավորի այցը իր որդիներին:
5. Կրտսեր որդու ամայի պարտեզը:
6. Թագավորի գաղտնիքը:
7. Թագաժառանգն ընտրված է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

շենացնել, ծաղկեցնել, փթթուն աշխարհ, թագավորել, մեծ բազմությամբ գնալ, պել, տրտմել, դրամիկ, լռելյան գնալ, շլացնել ճոխությամբ, ցավից խորշոմել, կրտսեր որդի, ապշա- դրախտ, ծով կա- հար ու կարկամած, արքայազն, խորշոմները հարթվել, խաբեբա, հունդ, ննջել, բարձրադիր հայա- բարել, արդար ու չիտակ մարդ:

ԱՍՏՂԵՐՈՎ ՍԱՅԼԸ

Ըստ Համաստեղի

Կար ու չկար մի ձկնորս: Այդ ձկնորսը մի գիշեր վառեց լապտերը, շալակեց իր ուռկանն ու իջավ ծովափ: Երկինքը լիքն էր աստղերով, աստղեր կային նաև ծովի մեջ: «Ծովն ինչ խաղաղ է», - ասաց ձկնորսն ու նավակ մտավ: Լապտերը կախեց նավակի քթին ու սկսեց խոշոր մառյանի պես թերթատել էջերը ծովի:

Շատ գնաց, թե քիչ, կանգ առավ, ուռկանը ծովը նետեց հանդարտ: Երկար սպասեց, մեկ էլ ուռկանը ծանր դուրս քաշեց ծովից: Եվ ի՜նչ տեսնի. ուռկանը լեփ-լեցուն է աստղերով, աստղեր ու աստղեր, դրանցից մի քանիսին էլ կպած էին չարժուն կարմիր խեցիներ:

- Աստղերն ի՞նչ անեմ, ես ձուկ եմ ուզում, - ասաց ձկնորսն ու տրտմեց:

Լուսադեմին շալակեց աստղերով լեցուն ուռկանն ու ուղիղ տուն գնաց:

- Հե՜յ, կնի՛կ, դու՛րս եկ, աստղեր եմ բերել, - գոռաց ձկնորսն ու նորից թնկթնկաց, - ա՜յ քեզ չար բախտ, աստղերն ի՞նչ անեմ:

Կինը արթնացավ, դուռը բացեց, աստղերը տեսավ ու անչափ ուրախացավ:

- Օ՜հ, ի՜նչ գեղեցիկ են, ի՜նչ փայլփլուն, - ծիծաղեց ձկնորսի կինը, պարեց, ցատկեց, ամուսնուն համբուրեց: Ապա մեկ-մեկ վեր առավ աստղերը, կապեց վզին, կախեց ականջներին, մատներին հագցրեց, մեկն էլ այծի կոտոշից կախեց:

Հաջորդ առավոտ ձկնորսը աստղերը լցրեց սայլի մեջ, հանեց փողոց՝ վաճառելու:

- Աստղե՛ր, հա աստղե՛ր, շատ էժա՜ն աստղեր, - փողոցից փողոց անցնելով՝ գոռաց ձկնորսը:

Գյուղացիները դուրս թափվեցին ու սկսեցին աստղեր գնել: Կառապանն առավ, իր գույգ ձիերի ճակատներին աստղեր կախեց, պառավն իր կովի կոնակին փակցրեց,

կանայք առան, թևերը, պարանոցները, անգամ կոշիկները զարդարեցին աստղերով:

Գյուղի ծայրին՝ մի խարխուլ տան մեջ, ապրում էր խեղճ բանաստեղծը: Աշուղ էին ասում նրան: Աղքատ Աշուղը, պատից կախված սազից բացի, ուրիշ ոչինչ չուներ:

- Ա՛յ ձկնորս եղբայր, ինձ էլ աստղ տու՛ր, - աղերսեց Աշուղը:

- Դրամ տու՛ր, - պահանջեց ձկնորսը:

- Դրամ չունեմ, կուզե՞ս քեզ համար մի լավ երգ ասեմ կամ սազս տա՞մ քեզ:

- Ո՛չ, միայն դրամ: Սազն ի՞նչ անեմ:

- Այդ դեպքում կյա՛նքս առ, միայն թող մի աստղ բռնեմ ափիս մեջ, - թախանձեց Աշուղը:

- Ո՛չ, ո՛չ, - ավելի դաժանացավ ձկնորսը:

Ու խեղճ Աշուղը գնաց սայլի հետևից: Իսկ ձկնորսը անցավ այգիներ ու կամուրջներ, վաճառեց աստղերը ջրեպանին ու հողագործին, ծանոթին ու անծանոթին:

Երեկո էր, արևամար, ձկնորսն ու Աշուղը շարժվեցին դեպի իրենց գյուղը: Մեկ էլ մի խենթ քամի բարձրացավ, սուլեց ճանապարհներին, սրընթաց անցավ ողջ գյուղով ու հավաքեց աստղերը կովի կռնակից, ձիու ճակատից, կանանց սևաթույր վարսերից ու տարավ երկինք: Աստղերն իրենց տեղերում թառեցին:

Հետո խենթ քամին դարձավ մրրիկ, երկնքում կայծակը ցոլաց, զարկեց, սևացրեց, քարացրեց ձկնորսին ու նրա սայլը:

Իսկ Աշուղին աստղերը զույգ թևեր տվին, տարան վեր՝ երկինք, դարձրին իրենց խաղընկեր:

ՊԼԱՆ

1. Ձկնորսն ու ծովը:
2. Աստղերով ուրկանը:
3. Ձկնորսի կնոջ ուրախությունը:
4. Ձկնորսի առևտուրը:
5. Խեղճ Աշուղը:
6. Դաժան ձկնորսը:
7. Խենթ քամին:
8. Աշուղը աստղերի խաղընկեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Թերթատել ծովի էջերը, կարմիր խեցի, կովի կռնակ, խարխուլ տուն, թախանձել, արևամար, սևաթույր վարս, խենթ քամի, սրընթաց անցնել, կայծակը ցոլալ, մրրիկ, սևացնել, քարացնել, զույգ թևեր տալ, դարձնել խաղընկեր:

ԱՎԳՅԱՆ ԱԽՈՌՆԵՐ

Ըստ հունական առասպելի

Հին Հունաստանում ապրող Ավգիաս արքան անթիվ հարստության տեր էր: Հատկապես բազմաբյուր էին նրա նախիրները: Ձյունաճերմակ ոտքերով բոսորավուն ցուլեր, հպարտ, երկարոտն, ազնվացեղ նժույգներ ու էլի ինչքան սանս կենդանիներ համալրում էին նրա նախիրները:

Ախոռներում կուտակվել էր աղբը: Ոչ մի ծառա ի զորու չէր մաքրել դրանք:

Մի օր Ավգիաս թագավորի մոտ է գալիս հզոր Հերակլեսը և այսպիսի առաջարկ է անում.

- Արքա՛, տու՛ր ինձ քո նախիրների տասներորդ մասը, և ես մի օրում կմաքրեմ քո ախոռները:

Ավգիասը քթի տակ սոսկ ժպտում է. նա անհնար էր համարում այդպիսի աշխատանքը: Բայց համաձայնում է Հերակլեսի պայմանին:

Հերակլեսը իսկույն ևեթ քանդում է ախոռների պատերը: Ապա այդ կողմերով հոսող երկու գետերի հունը փոխում է և ուղղում դեպի Ավգիաս արքայի ախոռները: Ջրերի ուժգին հոսանքը մաքրում և իր հետ տանում է ողջ գոմաղբը:

Հերակլեսը գետերի ջրերը վերադարձնում է իրենց տեղը և նորից շարում է ախոռների պատերը:

Ավգիաս արքան զարմանքից ու նեղսրտությունից ընդարմացել էր: Նա չէր ուզում իր նախիրների մեկ տասներորդից զրկվել:

Հերակլեսը մոլեգնում է, գոռում, ոտքը գետին զարկում, բայց այդպես էլ դատարկաձեռն վերադառնում է իր երկիրը:

Այս զրույցից էլ սկիզբ առավ «ավգյան ախոռ» արտահայտությունը. այսպես ասում են շատ կեղտոտ, աղտեղությունով լի վայրին, որը հանկարծակի և արագորեն մաքրվում է:

ՊԼԱՆ

1. Ավգիաս արքան ու նրա նախիրները:
2. Աղբով լի ախոռները:
3. Հերակլեսի առաջարկը:
4. Ախոռների մաքրումը:
5. Ագահ Ավգիասը:
6. Ձեռնունայն վերադարձ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) Հին Հունաստան, Ավգիաս, Հերակլես

բ) անթիվ հարստություն, ձյունաճերմակ ոտք, բոսորավուն ցուլ, հպարտ, երկարոտն, ազնվացեղ նժույգ, ի զորու լինել, իսկույն ևեթ, ընդարմանալ, մոլեգնել, դատարկաձեռն վերադառնալ, աղտեղությունով լի:

ՎԱՉԱԳԱՆ

Ըստ Զարզանդ Դարյանի

Բարձրաբերձ Զանգեզուրում ապրում էր մի ազատատենչ ու հայրենասեր երիտասարդ: Անունը Վաչագան էր: Այս քաջ Վաչագանը իր մի ընկերոջ հետ վեր է կենում, գնում աշխարհեաշխարհ՝ բախտ որոնելու: Քառասուն անգամ յոթ օր յոթ գիշեր գնում են, գնում, հանդիպում են յոթ ճամփի մեջտեղում նստած մի զառամյալ ծերունու:

- Բարով եք եկել, - ասում է ծերունին, - ես ձեր որոնած բախտն եմ: Ի՞նչ եք ուզում:

Երիտասարդները գլուխ են խոնարհում ծերունուն, և Վաչագանն ասում է.

- Ո՜վ իմաստուն ծերունի, ես քաջություն եմ ուզում քեզնից: Մեր երկրով շատ թշնամիներ են անցնում, շատ արյուն է հոսում մեր ձորերով. առանց քաջության ապրել չի լինում:

- Իսկ ես, - ասում է Վաչագանի ընկերը՝ խորը երկրպագելով ծերին, - անմահություն եմ խնդրում, ուզում եմ ապրել մեր լեռների արծիվների հետ և բարձրությունից նայել աշխարհին:

- Թող ձեր ուզածը լինի,- ձեռքը բարձրացնում է իմաստունը, - գնացե՛ք ձեր աշխարհը և ապրեք. մեկդ՝ քաջի, իսկ մյուսդ՝ անմահի կյանքով:

Ուրախ-ուրախ վերադառնում են հայրենի երկիր: Հենց մտնում են Զանգեզուր, տեսնում են՝ ոսոխի զորքը շեներ է քարուքանդ անում, անմեղ մարդկանց սպանում: Վաչագանը անմիջապես ձի է հեծնում, կայծակի պես ընկնում թշնամու վրա:

Իսկ մյուսը՝ Վաչագանի ընկերը, քաշվում է Հալիձոր, մի խուլ քարայրում փակվում է, որ թշնամին իրեն չտեսնի, և ականջ է դնում աշխարհի անցուդարձին:

Վաչագանի քաջությունը տեսնելով՝ մարդիկ նետ-աղեղ, զենք են վերցնում, վրա են տալիս թշնամուն, ջարդում և շպրտում իրենց երկրից դուրս: Կռվի թունդ միջոցին մի նետ խոցում է Վաչագանին ու նրան սպանում: Զանգեզուրցիները փառքով թաղում են նրան անտառի պռնկին՝ մի բարձր տեղ: Նրա շիրմի շուրջը նոր շեն են հիմնում ու անունը դնում Վաչագան:

Ասում են՝ մինչև այսօր էլ ապրում է մյուսը Հալիձորի իր քարայրում: Ծեր է արդեն ու կույր: Ոչ ոք չգիտե նրա անունը, չգիտե նրա տեղը ու չի էլ ուզում իմանալ:

ՊԼԱՆ

1. Վաչագանն ու նրա ընկերը:
2. Դուրս են գալիս բախտ որոնելու:
3. Իմաստուն ծերունին:
4. Վաչագանի և մյուսի խնդրանքը:
5. Վերադարձ տուն. Վաչագանը ելնում է թշնամու դեմ:
6. Մյուսը փակվում է քարայրում:
7. Փառավոր մահ:
8. Անփառունակ անմահություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) բարձրաբերձ, ազատատենչ, աշխարհեաշխարհ, քառասուն անգամ յոթ օր յոթ գիշեր, զառամյալ ծերունի, խոնարհել, իմաստուն ծերունի, խորը երկրպագել, լեռների արծիվներ, ուրախ-ուրախ, ոսոխ, քարուքանդ անել, կայծակի պես ընկնել, խուլ քարայր, անցուդարձ, նետ-աղեղ, կռվի թունդ միջոց, անտառի պռունկ.

բ) Զանգեզուր, Հալիձոր:

ԼՈՒՍՆԻ ԾԱՂԻԿԸ

Ըստ Նոր աշխարհի հնդկացիների հեքիաթի

Հին ժամանակներում մի հուռթի ու արգավանդ դաշտում ապրում էր քաջարի մի ցեղ: Ցեղի առաջնորդը հզոր ռազմիկ էր ու անվրեպ որսորդ:

Մի անգամ ուշ գիշերին, առաջնորդն արթնացավ երեխայի լացի ձայնից: Նա վեր կացավ, բացեց իր խրճիթի դուռը և մի քանի քայլ այն կողմ տեսավ մի փոքրիկ աղջկա: Առաջնորդը մոտեցավ, սիրալիր խոսեց նրա հետ և տարավ իր խրճիթը:

Օրերն անցնում էին, բայց ոչ ոք չէր հայտնվում, որ տաներ աղջկան: Առաջնորդը վեց որդի ուներ, իսկ աղջկան նա շատ սիրեց ու մեծացրեց, ինչպես իր հարազատ երեխային:

Աղջիկը մեծացավ, գեղեցիկ, խելոք ու քնքուշ օրիորդ դարձավ: Առաջնորդի մեծ որդին մի օր հորն ասաց, որ ուզում է ամուսնանալ նրա հետ: Բայց պարզվեց, որ մյուս հինգ որդիներից յուրաքանչյուրը ցանկանում է ամուսնանալ աղջկա հետ:

- Թող աղջիկն ինքը ընտրություն կատարի, - ասաց հայրը:

Երբ աղջիկը իմացավ, որ ինքը պետք է եղբայրներից մեկին ընտրի, շատ հուզվեց: Նա չգիտեր՝ ինչպես վարվեր: Օրերն ու շաբաթներն անցնում էին, բայց աղջիկը դեռ ոչ մեկին չէր ընտրում:

Այդ ժամանակ առաջնորդը գնաց կախարդի մոտ և խորհուրդ հարցրեց:

- Սպանի՛ր աղջկան, - ասաց կախարդը, - այլապես քո տան մեջ արյունահեղություն կլինի:

Բայց առաջնորդը շատ էր սիրում աղջկան և չէր կարող նրան սպանել: Մյուս կողմից էլ՝ նրա որդիների մեջ խռովություն էր ընկել:

Առաջնորդը մտածեց, մտածեց և երկու ռազմիկի հրաման տվեց, որ աղջկան տանեն անտառ և սպանեն: Աղջիկը հասկացավ, թե իրեն ի՛նչ է սպասում: Նա ուշաթափվեց: Ռազմիկները թողին աղջկան անտառի խորքում և հեռացան:

Ուշ գիշերին աղջիկը ուշքի եկավ անտառի խորքում: Փայլում էր լուսինը: Շուրջբոլորը բարձր պարիսպի պես ծառեր էին կանգնած: Նա քայլում էր, իսկ փշերն ու տատասկները ծակծկում ու վիրավորում էին նրա ձեռքերն ու ոտքերը:

Մեկ էլ աղջիկը քարացավ սարսափից: Մի մեծ ու մութ ստվեր փակեց նրա ճանապարհը: Դա մի հսկա հովազ էր: Նույն վայրկյանին մի քնքուշ ձայն նրան ասաց.

- Մի՛ վախեցիր, ես քեզ կօգնեմ, կփրկեմ հովազից:

Նա իր կողքին մի ծաղիկ տեսավ, որ հյուրընկալորեն բացել էր իր թերթիկները: Աղջիկը զգաց, որ փոքրանում է: Այնքան փոքրացավ, որ հեշտությամբ փակվեց ծաղկի բաժակում: Հետո աստիճանաբար ձուլվեց ծաղկին ու խոր քուն մտավ:

Այսպես հայտնվեց լուսնի ծաղիկը կամ շիկատակը: Նրա հյութը լայնացնում է աչքերի բիբերը, իսկ չորացած թերթիկների եփուկը քնաբեր է:

ՊԼԱՆ

1. Քաջարի ցեղն ու նրա առաջնորդը:
2. Որբ աղջիկը:
3. Քնքուշ օրիորդը:
4. Առաջնորդի որդիները:
5. Կախարդի խորհուրդը:
6. Աղջիկը անտառի թավուտում:
7. Փրկություն՝ ծաղկի գրկում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հուրթի ու արգավանդ դաշտ, քաջարի ցեղ, անվրեպ որսորդ, քնքուշ օրիորդ, արյունահեղություն, խռովություն ընկնել, շուրջբոլորը, բարձր պարսպի պես, փշեր ու տատասկներ, մեծ ու մութ ստվեր, հյուրընկալորեն բացել, աստիճանաբար ձուլվել ծաղկին, չորացած թերթիկների նփուկ:

ԳԵՏՆ ՈՒ ԹՌՉՆԱԿԸ

Ըստ Զինուա Աչեբեի

Աֆրիկայում լեռների, դաշտերի միջով հոսում էր Մեծ գետը: Նրա ափին՝ մի բարձր ծառի վրա, ապրում էր խատուտիկ Թռչնակը: Նա անընդհատ թռչկոտում էր ճյուղեից ճյուղ, անհոգ երգում, իսկ ծարավ ժամանակ էլ թռչում, գետի սառնորակ ջրից մի կաթիլ կուլ տալիս:

Գետը շատ մեծամիտ էր, նա ուղղակի արհամարհում էր իր ջրերի վրա ոստոստող բոլոր թռչուններին: Բայց ամենից շատ նա չէր սիրում այս ուրախ-զվարթ ծլվլանին:

- Ձեր ցեղից ամենամեծն անգամ արժանի չէ իմ ուշադրությանը, - ասում էր գետը Թռչնակին: - Իսկ դու՝ առավել ևս: Դու ինձ համար մի չնչին ավազահատիկ ես, մի չնչին փոշեհատիկ: Որքա՞ն է քո երկարությունը, հազիվ երկու, երկուսուկես սանտիմետր: Իսկ ես, գիտե՞ս, թե ի՛նչ երկար եմ ես: Ես հինգ երկրի միջով եմ հոսում:

Իսկ Թռչնակը բոլորովին չէր նեղվում Մեծ գետի փնթփնթոցից: Նա ամեն անգամ թափով թռչում էր դեպի գետը, խմում էր մի կաթիլ սառնորակ ջուր և ասում.

- Իհարկե, Գե՛տ, դու շատ երկար ես, մեծ ու ջրառատ: Բայց ես կաթիլով պակասեցնում եմ քեզ: Ամեն կաթիլից հետո դու ավելի ու ավելի ես փոքրանում: Թե կարող ես, բռնի՛ր ինձ:

Այս ասելով՝ Թռչնակը հպարտորեն խոյանում էր դեպի երկնի կապույտը: Գետը գլորում էր իր ջրերը և հոգու խորքում խիստ տխրում: Նա հասկանում էր, որ Թռչնակն իրավացի է: Մի բան կա, որ ինքը՝ գետը, անել չի կարող, իսկ այս Թռչնակը և ցանկացած թևավոր կարողանում է անել:

Գետը թռչե՛լ չի կարող…

ՊԼԱՆ

1. Աֆրիկայում հոսող Մեծ գետը:
2. Նրա ափին ապրող թռչնակը:
3. Գետի արհամարհանքը:
4. Թռչնակի պատասխանը:
5. Գետի տխրությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ա) գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

խատուտիկ թռչնակ, անընդհատ թռչկոտել, ճյուղից ճյուղ, անհոգ երգել, սառնորակ ջրի մի կաթիլ, ջրերի վրա ոստոստող թռչուն, ուրախ-զվարթ ծլվլան, ամենամեծը, ջնչին ավազահատիկ, ջրառատ, մի կաթիլով պակասեցնել, հպարտորեն խոյանալ, երկնի կապույտ, գլորել ջրերը:

բ) Քարտեզի վրա ցույց տալ Աֆրիկա աշխարհամասը և այնտեղ հոսող մի քանի մեծ գետերը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Չինուա Աչեբեն (ծնվել է 1930 թվին) - Աֆրիկայի ժամանակակից գրողներից է: Ապրում և ստեղծագործում է Նիգերիայում: Միջազգային մի շարք մրցանակների դափնեկիր է: Ներկայացվող հեքիաթը վերցված է նրա «Չիկին և գետը» վիպակից:*

ԸՆԿՈՒՅԶՆ ՈՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Մի ագռավ, որ ընկույզ էր ճարել, գոհունակ թռավ դեպի մոտակա զանգակատունը: Հարմար տեղավորվելով՝ նա սկսեց եռանդագին կտցահարել ավարը, որ հասնի անուշահամ միջուկին: Հանկարծ ընկույզը դուրս պրծավ ագռավի ճանկից ու գլոր-գլոր գնաց ընկավ պատի ծերպի մեջ:

-Օ՜, ողորմած ու ազատարա՛ր պատ, - կերկերաց ագռավի անագորույն հարվածներից դեռ ուշքի չեկած ընկույզը, - գթա՛ ինձ, մի՛ թող՝ կործանվեմ: Դու այնքա՜ն ամրակուռ ես ու վեհատես, այնքա՜ն շքեղ է զանգակատունդ: Մի՛ վանիր ինձ:

Զանգերը խուլ ու չարագույժ ղողանջեցին: Նրանք նախազգուշացնում էին որմին, որ հավատ չընծայի ընկույզին, զգուշանա: Այդ փոքրիկ հյուրը կարող է փորձանք բերել: Իսկ ընկույզը խոսում ու խոսում էր, շոյում էր պատի ինքնասիրությունը և աշխատում էր խլացնել զանգերի տագնապահար ղողանջները:

- Արդեն ես պետք է թողնեի հարազատ ճյուղս և ընկնեի խոնավ հողի մեջ, երբ վրա հասավ չարագործ ագռավը: Երբ հայտնվեցի նրա կտցում, ինքս ինձ երդվեցի, որ եթե հաջողվի գլուխս ազատել, կյանքիս վերջին օրերը սուսուփուս կանցկացնեմ որևէ խանդակում:

Ընկույզի զգայացունց խոսքերն արտասվելու չափ հուզեցին ծեր որմին: Հակառակ զանգերի չարագուշակ ղողանջին՝ նա որոշեց հյուրընկալ գտնվել և թույլ տալ, որ ընկույզը պատսպարվի որմնախորշում:

Ժամանակի ընթացքում ընկույզի վախը փարատվեց: Նա հարմարվեց նոր կացարանին, արմատներ արձակեց, որոնք սկսեցին թափանցել-խորանալ հյուրընկալ որմի մեջ: Շուտով ճեղքից դուրս եկան առաջին շիվերը: Նրանք համերաշխ վեր ձգվեցին ու հետզհետե զորացան: Որոշ ժամանակ էլ անցավ, և ընկուզենու ջահել ըն-

ճյուղները արդեն հպարտորեն ծածանվում էին հենց զանգակատան գլխավերևում:

Որմն առանձնապես տուժում էր արմատներից: Լինելով կառչուն ու համառ՝ նրանք ավելի խորն էին տարածվում, խարխլում հնամենի շարվածքը և անգթորեն դուրս մղում աղյուսներն ու քարերը:

Շատ ուշ որմը գլխի ընկավ, թե որքան նենգ էր երբեմնի խեղճուկրակ ընկույզը: Այժմ ծեր պատը միայն դառնագին զղջում և խարազանում էր ինքն իրեն, որ ժամանակին չէր լսել իմաստուն զանգերի խորհուրդը:

Ընկուզենին աճում ու հասակ էր առնում հպարտ անտարբերությամբ, իսկ զանգակատունն ավելի ու ավելի էր խարխլվում:

ՊԼԱՆ

1. Ագռավը ընկույզ է գտնում:
2. Ընկույզը փրկվում է ագռավից:
3. Պատի խորշում հայտնված ընկույզը:
4. Աղաչանք պատին:
5. Զանգերի զգուշացումը:
6. Հյուրընկալ ծեր որմը:
7. Ընկույզը հարմարվում է իր կացարանին:
8. Ընկույզի ջահել շիվերը:
9. Հպարտ ընկուզենին և խարխլված զանգակատունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

գոհունակ թևել, մոտակա զանգակատուն, եռանդագին կտցահարել, անուշահամ միջուկ, գլոր-գլոր գնալ, ողորմած ու ազատարար պատ, անագորույն հարված, ամրակուռ և վեհատես, շքեղ զանգակատուն, խուլ ու չարագույժ ղողանջներ, հավատ ընծայել, զանգերի տագնապահար ղողանջներ, չարագործ ագռավ, գլուխն ազատել, սուսուփուս անցկացնել օրեր խանդակում, զգայացունց խոսքեր, ծեր որմ, հյուրընկալ գտնվել, պատսպարվել որմնախորշում, վախը փարատվել, թափանցել-խորանալ, ընկուզենու ջահել ընձյուղները, հպարտորեն ծածանվել, կառչուն և համառ արմատներ, հնամենի շարվածք, խեղճուկրակ, դառնագին զղջալ, խարազանել ինքն իրեն, իմաստուն զանգերի խորհուրդը, հպարտ անտարբերություն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Լեոնարդո դա Վինչին (1452-1519) Վերածննդի դարաշրջանի իտալացի նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, ինժեներ է: Գրել է նաև հեքիաթներ և փոքրիկ պատմություններ:*

ՄԱՅՐ ՀԱՎԱԼՈՒՍՆԸ

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Հավալուսնը ձագեր ունեցավ: Նա ամեն օր թռչում էր որսի, կեր էր հայթայթում իր սիրասուն, աղվամազոտ ու անուշիկ ձագուկների համար:

Մի օր, երբ հավալուսնը դարձյալ գնացել էր կեր հայթայթելու, դարան մտած մի իժ զողզող սողաց դեպի նրա բույնը: Փափկափետրիկ թռչնակները խաղաղ քնած էին:

Օձն ընդհուպ մոտեցավ նրանց: Նրա աչքերը վառվում էին չարության փայլով: Սկսվեց սոսկալի նախճիր: Մեկական մահացու խայթոց ստանալով՝ անխռով քնած թռչնակներն այդպես էլ չարթնացան:

Արածից գոհ՝ չարագործը ետ սողաց դեպի իր թաքստոցը: Նա ուզում էր այնտեղից չարախնդալ մայր հավալուսնի վրա:

Շուտով որսից վերադարձավ հավալուսնը: Նա ուղղակի շանթահար եղավ, երբ տեսավ իր ձագուկներին՝ անշունչ ընկած: Թևավոր մայրը այնպիսի ողբ ու կոծ դրեց, որ անտառի բնակիչները ցնցվեցին: Նրանք հավաքվեցին ծառի շուրջը և տեսնելով այդ աննախադեպ դժբախտությունը՝ քար կտրեցին ու համրացան:

- Առանց ձեզ ես կյանք չունեմ, - ձագուկներին նայելով՝ կերկերաց տարաբախտ ծնողը: - Թող ես էլ մեռնեմ ձեզ հետ:

Եվ մայր հավալուսնը սկսեց կտուցով ծվատել իր կուրծքը՝ հենց սրտի մոտ: Տաք արյունը շիթերով ցայտեց լայն բացված վերքից: Արյան կայլակները ցողում էին անշնչացած ձագուկներին: Հետզհետե թուլացավ, թալկացավ մայր հավալուսնը:

Նա մի վերջին սիրագորով հայացքով ընդգրկեց իր բույնն ու իր ձագուկներին: Նրա կրծքից վերջին շնչի հետ դուրս թռավ ուրախ մի ճիչ:

Հրաշք էր կատարվել: Մոր հեղած արյունը և սերը կենդանացրել էին ձագերին՝ նրանց ետ խլելով մահվան ճիրաններից:

Մայր հավալուսնը թեթևացած սրտով ավանդեց հոգին:

ՊԼԱՆ

1. Մայր հավալուսնը և նրա ձագերը:
2. Դարան մտած իժը:
3. Ջարագործը հավալուսնի բնում:
4. Հավալուսնի ողբը:
5. Մայր հավալուսնի ինքնազոհաբերումը:
6. Կենդանացած ձագերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կեր հայթայթել, սիրասուն, աղվամազոտ ձագուկներ, գողեգող սողալ, փափկափետրիկ թռչնակ, խաղաղ քնել, ընդհուպ մոտենալ, աչքերը վառվել, չարության փայլ, սոսկալի նախճիր, մահացու խայթոց, անխռով քնել, չարախնդալ մայր հավալուսնի վրա, շանթահար լինել, ողբ ու կոծ դնել, աննախադեպ դժբախտություն, համրանալ, կերկերալ, տարաբախտ ծնող, ծվատել կուրծքը, շիթերով ցայտել, արյան կայլակներ, թալկանալ, սիրագորով հայացք, հեղած արյուն, մահվան ճիրան, ավանդել հոգին:

ԹԱԳԱՎՈՐԸ ՄԵՐԿ Է

Ըստ Հանս Քրիստիան Անդերսենի

Շատ ու շատ տարիներ առաջ կար մի թագավոր: Նա շատ էր սիրում նոր ու գեղեցիկ հագուստ հագնել. իր ողջ հարստությունը հագուստի վրա էր ծախսում: Եթե զորահանդեսի էր դուրս գալիս, թատրոն կամ զբոսանքի էր գնում, միայն մի նպատակով՝ իր հագուստը ցույց տալու:

Մի անգամ այդ թագավորի քաղաքը եկան երկու խաբեբա: Նրանք ձևացրին, թե իրենք ջուլհակ են: Ապա հայտարարեցին, որ կարող են կախարդական դիպակ հյուսել: Այդ դիպակը ոչ միայն գեղեցիկ գույներ ու նախշեր կունենա, այլև հիմար մարդը այն չի տեսնի:

Թագավորը այս որ լսեց, շատ ուրախացավ: Նա խաբեբաներին նախօրոք մեծ գումար տվեց, բոլոր պայմանները ստեղծեց, որ ջուլհակները աշխատեն:

Խաբեբաները Ջուլհակի երկու դազգահ դրին և սկսեցին ձևացնել, թե աշխատում են: Դիպակը իբրև թե հյուսեցին, հետո էլ հագուստներ կարեցին:

Պալատականները գալիս էին հաճախ, հետևում նրանց աշխատանքին: Որպեսզի հիմար կամ իրենց պաշտոնին ոչ հարմար չերևային, ասում էին, թե այդ դիպակը աննման է, նույնիսկ նկարագրում էին նախշերն ու գույները:

Ջուլհակները Թագավորին խնդրեցին հանել բոլոր հագուստները և իբրև թե հագցրին նոր, շքեղ հանդերձը: Ահա Թագավորը քայլում էր փողոցով՝ պալատականներով շրջապատված: Մարդիկ նայում էին, բայց ոչ ոք չէր ուզում խոստովանել, որ Թագավորի հագին ոչինչ չկար:

Հենց այդ պահին մի թմբլիկ ու աշխույժ երեխա բացականչեց.

- Թագավորը մե՛րկ է, Թագավորը մե՛րկ է:

- Նրա հագին ոչինչ չկա՜, - վերջապես գոռաց ամբողջ ժողովուրդը:

Թագավորը ցնցվեց: Բայց որոշեց արարողությունը մինչև վերջ հասցնել: Նա ավելի հպարտ դիրք ընդունեց, իսկ սենեկապետները քայլում էին նրա հետևից՝ ձևացնելով, թե բռնել են Թագավորի շքեղ հագուստի քղանցքը, թեև իրականում ոչ մի հագուստ ու քղանցք էլ գոյություն չունեին:

ՊԼԱՆ

1. Պճնամոլ Թագավորը:
2. Խաբեբա Ջուլհակները:
3. Հիմար պալատականները:
4. Թագավորը նոր հագուստով:
5. Երեխան տեսնում է Թագավորի մերկությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հագուստ, ծախսել, զորահանդեսի դուրս գալ, կախարդական դիպակ, նախշեր, նախօրոք մեծ գումար տալ, աննման դիպակ, նոր, շքեղ հանդերձ, թմբլիկ ու աշխույժ երեխա, արարողություն, հպարտ դիրք ընդունել, սենեկապետ, շքեղ զգեստի քղանցք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Հանս Քրիստիան Անդերսենը (1805-1875) դանիացի գրող է: Աշխարհին հայտնի է իր նշանավոր հեքիաթներով:*

ՕՁԱՄԱՆՈՒԿ

Ըստ Սարգիս Հարությունյանի

Կար մի Թագավոր: Նա զավակ չուներ: Շատ էր վշտանում դրա համար: Ինչքա՜ն բժիշկ էր բերել, ինչքա՜ն դեղ ու դարման էր արել: Ոչինչ չէր օգնել:

Հուսահատվել ու իրեն տվել էր որսորդության: Առավոտ վաղ գնում էր անտառ, լեռ, դաշտ, ուշ գիշերով վերադառնում:

Մի օր Թագավորը տեսնում է, թե ինչպես մի հսկա օձ փաթաթվել է իր ձագերին ու գուրգուրում է: «Աստվա՛ծ ջան, մի օձի չափ էլ չկամ, որ իմ զավակին փայփայեմ»:

Աստված լսում է Թագավորի գանգատը: Անցնում է մի ժամանակ, և ահա թագուհին մի տղա է ունենում: Այս տղայի գլուխը մարդու էր, իսկ վերջույթները՝ օ-

ծի: Թագավորը էլ ավելի է տխրում և հուսահատվում: Նա հրամայում է, որ օձամանուկին տանեն, գցեն մի խոր փոսի մեջ:

Թագավորի իմաստունները խորհուրդ են տալիս ամեն օր մի աղջիկ տանել և գցել հորը, որ մանուկն ուտի: Ամեն առավոտ քաղաքում սուգ էր: Թագավորի մարդիկ սրա-նրա աղջկան ուժով տնից հանում, տանում, գցում էին օձամանկան մոտ:

Հերթը հասնում է մի խեղճ աղջկա: Սա խորթ մայր ուներ, որը օր ու՜ արև չէր տալիս որբին: Երազում այս աղջիկը իր հարազատ մորն է տեսնում, որը նրան մի քանի պատվեր է տալիս: Առավոտ վաղ աղջիկը փաթաթվում է գոմեշի կաշվի մեջ, հետը մի սուր դանակ և երեք կուժ կաթ է վերցնում:

Աղջիկը Թագավորի մարդկանց խնդրում է, որ իրեն պարանով կախեն հորը: Ահա աղջիկը իջնում է օձամանուկի մոտ:

- Դո՛ւրս եկ գոմեշի կաշվից, - ասում է օձը:

Աղջիկը չլսելու է տալիս և օձին երեք անգամ հրամայում.

- Դո՛ւրս եկ օձի շապիկից, որ քեզ կաթով լողացնեմ:

Այս խոսքերը լսելով՝ օձը ուռչում է, փքվում: Ապա բարկությունից պատռվում է: Օձի շապիկից դուրս է գալիս շատ գեղեցիկ տղա: Աղջիկը տղային կաթով լողացնում է, հետո պահապաններին խնդրում, որ լուր տան Թագավորին ու Թագուհուն:

Գալիս են, տղային ու աղջկան վիրապից հանում, ամուսնացնում և յոթն օր ու գիշեր հարսանիք են անում:

ՊԼԱՆ	1. Անզավակ Թագավորը:	6. Որբ աղջկա երազը:
	2. Մայր օձը:	7. Աղջիկը հորում:
	3. Թագավորի գանգատը:	8. Օձի շապիկը պատռվում է:
	4. Օձամանուկը:	9. Թագավորի անմահ տղան:
	5. Իմաստունների խորհուրդը:	10. Հարսանիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

դեղ ու դարման անել, հուսահատվել, իրեն որսորդության տալ, հսկա օձ, փաթաթվել, զավակին փայփայել, վերջույթ, իմաստուն, խորհուրդ տալ, սրա-նրա աղջիկը, սուգ, խեղճ աղջիկ, խորթ մայր, գոմեշի կաշի, ուռչել, փքվել, բարկությունից պատռվել, վիրապ, յոր օր ու գիշեր:

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ԽԻՂՃԸ

Ըստ Ղազարոս Աղայանի

Մի աղքատ ու խեղճ գյուղացի իր տասնվեց տարեկան տղային տանում է քաղաք: Տալիս է մի վաճառականի մոտ աշակերտ: Այս վաճառականի հետ պայմանավորվում է, որ հինգ տարի տղան կմնա նրա մոտ, կապրի, կաշխատի, հետո վարձ կստանա, կվերադառնա գյուղ: Գյուղացին վարձը թողնում է վաճառականի խղճին:

Անցնում է երկու-երեք տարի: Գյուղացու որդին հմտանում է իր գործի մեջ, դառնում է շատ լավ գործակատար: Բոլոր հարևանները նախանձում են այս վաճառականին: Շատերը դիմում են տղային, առաջարկում լավ վարձատրություն, բարձր պաշտոն իրենց վաճառատներում: Բայց տղան մերժում է: Նա ասում է, որ իր հոր խոսքը պետք է սրբությամբ կատարի:

Ծառայության հինգ տարին լրանում է: Տղան տնից մի նամակ է ստանում: Մայրը նրան հայտնում էր, որ հայրը մերձիմահ հիվանդ է, որ թող հաշիվը փակի վաճառականի հետ և գյուղ գա:

Տղան գնում է վաճառականի մոտ, նրան ցույց է տալիս մոր նամակը և խնդրում, որ իր վարձը տա:

- Ի՞նչ վարձ, ի՞նչ հաշիվ, - ասում է անաստված վաճառականը, - քեզ կերցրել-խմեցրել եմ, արհեստ եմ սովորեցրել, դեռ դու ես ինձ պարտք:

Գյուղացու տղան մնում է մոլորված: Հետո գնում է տեղի քահանայի մոտ և ասում, որ իր տերը մահացել է:

Մեկ-երկու ժամ հետո վաճառականի տունը լցվում է մարդկանցով. Նրանք եկել էին վաճառականի հոգեհանգստին: Խիստ զայրացած՝ վաճառականը դիմում է թագավորին և բողոքում, որ իր գործակատարը ուզում է իրեն ողջ-ողջ թաղել:

Թագավորը կանչում է գյուղացու տղային: Սա էլ պատմում է եղելությունը և ավելացնում:

- Քանի որ տերս խիղճ չունի, ինձ համար մեռածի հաշիվ է, դրա համար էլ մարդկանց կանչեցի թաղման:

Թագավորը դահիճներին կանչում և հրամայում է, որ տղային տանեն, կախեն: Ապա դիմում է վաճառականին.

- Դու ի՞նչ ասելիք ունես:

- Ոչինչ, թող տանեն, կախեն, - ուրախ-ուրախ ասում է վաճառականը:

Թագավորը դահիճներին հրամայում է տղային բերել և տիրոջը տանել կախելու:

- Ասելիք ունե՞ս, - հարցնում է թագավորը գործակատարին:

- Թագավորն ապրա՛ծ կենա, մի՛ պատժիր դրան, թող ապրի: Ինձ ոչինչ հարկավոր չէ, - արտասվախառն ձայնով ասում է տղան:

Թագավորը հրամայում է վաճառականին չկախել: Հավաքում է քաղաքի բոլոր հայտնի վաճառականներին, անխիղճ տիրոջ ունեցվածքը կիսում են, կեսը տալիս գործակատարին և ճանապարհ դնում հայրենի գյուղ:

ՊԼԱՆ

1. Աղքատ գյուղացին քաղաքում:
2. Պայման վաճառականի հետ:
3. Հմուտ գործակատարը:
4. Նամակ տնից:
5. Անաստված վաճառականի մերժումը:
6. Հայտարարություն տիրոջ մահվան մասին:
7. Գանգատ թագավորին:
8. Թագավորի արդար որոշումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աղքատ ու խեղճ գյուղացի, տանվեց տարեկան տղա, վարձ տանալ, թողնել վաճառականի խղճին, երկու-երեք տարի, հմտանալ, նախանձել, լավ վարձատրություն, բարձր պաշտոն, սրբությամբ ողջ-ողջ թաղել, եղելություն, մեռածի հաշիվ լինել, դահիճ, ուրախ-ուրախ, արտասվախառն ձայն, ունեցվածքը կիսել, ճանապարհ դնել:

ԽԵՂՃ ՀՆԱԿԱՐԿԱՏԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Աշխարհում ապրում էր մի խեղճ հնակարկատ, նրա անունը Մուսա էր: Այդ հնակարկատը ուներ մի փառասեր կին: Կինը անընդհատ գնում էր սրա-նրա տունը, զրուցում հարևանների հետ ու բոլորի մոտ պարծենում էր իր կողակցով:

- Իմ ամուսնու պես իմաստուն մարդ չկա, - ասում էր կինը:

Այնքան գովեց, այնքան խոսեց, որ բոլորը սկսեցին հավատալ, և հնակարկատ Մուսան հռչակվեց որպես քաղաքի իմաստուն:

Հնդկաստանից մի գիտուն և ուսյալ մարդ էր եկել: Նա ցանկություն է հայտնում մրցելու այդ քաղաքի իմաստունի հետ: Գալիս, խեղճ հնակարկատին տանում են, որ մրցի հնդիկի հետ: Ճանապարհին Մուսան մի սոխ է գտնում ու դնում գրպանը:

Հնդիկ իմաստունը գրատախտակին կավիճով մի շրջան է գծում, և հնակարկատը մտածում է. «Ձմերուկ է»: Հետո մեջտեղից գիծ քաշելով՝ ասում է ինքն իրեն. «Կեսը այս հնդիկին, կեսը՝ ինձ»:

Հնդիկը խիստ զարմացած էր: Այս անգամ նա գրպանից մի ձու է հանում, դնում սեղանին: Հնակարկատ Մուսան մտածում է. «Դա կես նախաճաշիկ է, իսկ սոխի հետ ամբողջ նախաճաշ կլինի»: Ու սոխը դնում է ձվի կողքին: Հնդիկ իմաստունի լեզուն կապ է ընկնում, շշմել մնացել էր: Նա բռունցքը դնում է սեղանին՝ Մուսայի առաջ: Սա արդեն շա՜տ էր խեղճ ու կրակ հնակարկատի համար: Նա սկսում է հայհոյել կնոջը.

- Ա՜խ, քեզ ի՞նչ ասեմ, Վա՛րդ, Վա՛րդ, Վա՛րդ ...

Հնդիկ իմաստունը տեղից ցատկում է և ասում.

- Դուք միանգամայն ճիշտ եք: Այս մարդը իմաստուններից իմաստունն է: Ես սեղագրատախտակին երկրագունդ նկարեցի, իսկ նա կիսեց այն հասարակածով: Ես սեղա-

նին, որպես երկրագնդի խորհրդանիշ, ձու դրեցի, իսկ նա՝ սոխ՝ հասկացնելով, որ երկրագունդը կազմված է շերտերից: Այս խառաշունչ ժամանը սեղմած բռունցքս դրեցի սեղանին՝ հարցնելով՝ ի՞նչ կա դրա մեջ, իսկ այս իմաստունը իմացավ, որ վարդ է:
Հնդիկը բացում է մատները և սեղանին գցում վարդը:
- Կյանքում այս մարդու պես իմաստունի չէի հանդիպել, - ասում է նա:
Այսպես Հնակարկատ Մուսան դառնում է քաղաքի ամենահռչակավոր մարդը:

ՊԼԱՆ

1. Հնակարկատ Մուսայի փառասեր կինը:
2. Մուսան որպես քաղաքի իմաստուն:
3. Մրցույթ Հնդիկ իմաստունի հետ.
   ա) կավիճով շրջան գրատախտակին.
   բ) սեղանին ձու է դրվում.
   գ) Հնդիկը իր բռունցքը դնում է սեղանին.
   դ) Մուսայի հուսահատությունը:
4. Հնդիկի բացատրությունները:
5. Հնդիկ իմաստունի հիացմունքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փառասեր կին, անընդհատ գնալ, սրա-նրա տուն, գիտուն և ուսյալ մարդ, նախաճաշիկ, խեղճ ու կրակ, հայհոյել, տեղից ցատկել, միանգամայն իրավացի, հասարակած, երկրագնդի խորհրդանիշ, ամենահռչակավոր մարդ:

ԽՐՏՎԻԼԱԿԸ

Ըստ Էդվարդ Միլիտոնյանի

Մի խրտվիլակ կար՝ սև պիջակով: Հեռվից հեռու ահազանգում էր՝ չմոտենաք: Բայց դա հեռվից էր այդպես ...
Խրտվիլակի սև գլխարկը ծերացած ծաղրածուինն էր, իսկ պիջակը՝ պարտիզպանի բանաստեղծ տղայինը: Եվ պարզ է՝ խրտվիլակն էլ ծաղրածուի և բանաստեղծի նման ուզում էր իր սրտի ջերմությունը տարածել:
Բայց այսքանը ինչպե՞ս հասկանային թռչունները: Ցավն այն է, որ խրտվիլակը լեզու չուներ, որ մտքինը գրեր տերևներին, իրեն հասկանային:
Խրտվիլակը դատարկ թևքերը թափահարում և մոտ էր կանչում թռչուններին, գլխարկը ծաղրածուի նման պտտեցնում էր գլխին, բայց դրանից ավելի էին երկնչում թևավորները: Խրտվիլակի ցավը խորանում էր ամռան կեսերին, երբ այգում հասունանում էին ոսկեշող ծիրաններն ու դեղձերը, խնձորներն ու սալորները, իսկ արևածաղիկները բարձր ցողուններից բացբերան ժպտում էին՝ ցուցադրելով մանր ու կանոնավոր ատամնաշարերը:

Խրտվիլակն ամաչում էր, որ ո՛չ ինքն էր կարողանում համտեսել, ո՛չ էլ թռչուններին էր թույլ տալիս կտցել բնության բարիքները:

Բայց ավելի էր ամաչում, որ իրեն մարդու տեղ էին դնում և հեռու փախչում այգու պարիսպներից: Ախր ինքը ի՞նչ մարդ. խրտվիլակ է, տանտիրոջ սարքած ծիծաղելի տիկնիկը: Այդ ամենը ինչպես բացատրեր, ինչպես արտահայտեր իր արդարացի վրդովմունքը, որ ինքը պարզապես պիջակի ու գլխարկի մեջ բույն դրած բարություն է, չար չէ, սև չէ, ահ ու սարսափ չէ:

Մի օր էլ թռչունների և խրտվիլակի բախտից հողմը եկավ, թաթերը գցեց պիջակին, պոկոտեց, ծվեն-ծվեն արեց և իր թևին առած՝ ցրեց աշխարհի չորս կողմերը: Գլխարկն էլ հայտնվեց հողմի թևերին ու սավառնում է նրա հետ:

Հիմա այգում մնացել է խաչափայտը՝ աշնան մերկացած ծառերի մեջ: Ծտերը անվախ թառում են վրան, անձրևի կաթիլները ներծծվում են թաց փայտի մեջ:

Բայց ով կարողանում է առանց բառերի հասկանալ դիմացինին, գիտե, որ խրտվիլակը բարության բույն էր հյուսել այդ խաչափայտի մեջ: Եվ այդ բարությունը լույսի պես շողարձակում էր այգու վրա և ցույց էր տալիս բոլոր-բոլորին չամիչ դարձած խաղողների ու սերկևիլների տեղը:

ՊԼԱՆ

1. Խրտվիլակի հագուստը:
2. Խրտվիլակը լեզու չունի:
3. Խրտվիլակի ցավը:
4. Հողմը և խրտվիլակը:
5. Խաչափայտի մեջ բույն դրած բարությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

սև պիջակ, հեռվից հեռու աչագանգել, ծաղրածու, պարտիզպան, սրտի ջերմություն, երկնչել, ռռկնչող ծիրան, բացբերան ժպտալ, ատամնասերմ, կտցել բնության բարիքները, ծիծաղելի տիկնիկ, արդարացի վրդովմունք, ծվեն-ծվեն անել, թևին առած ցրել, սավառնել, խաչափայտ, բարության բույն, լույսի պես շողարձակել, սերկևիլ:

2. Աշակերտներին առաջարկել նկարել խրտվիլակ:

ՄԻԴԱՍ ԹԱԳԱՎՈՐԸ

Ըստ հունական դիցաբանության

Հնագույն Փռյուգիայում իշխում էր Միդաս թագավորը: Նա անբավ հարստության տեր էր: Բայց դարձյալ քիչ էր համարում: Օրերով Միդասը փակվում էր իր գանձարանում, նորից ու նորից կշռում,տեղավորում իր ոսկին, արծաթն ու գոհարեղենը:

Մի օր Միդաս արքայի մոտ բերին մի մարդու, որը թունդ հարբած էր: Արքան խսկույն ճանաչեց Դիոնիսոս աստծո ուսուցչին՝ Սիլենոսին: Միդասը պատիվներ տվեց խաղողի և գինու աստված Դիոնիսոսի ուսուցչին: Ինը օր պահեց իր տանը, ապա անձամբ տարավ աստծո մոտ: Դիոնիսոսը շատ ուրախացավ, երբ տեսավ իր ուսուցչին:

- Ո՞վ Միդաս, պահանջի՛ր, ի՞նչ շնորհ ես ուզում ստանալ ինձնից, - ասաց Դիոնիսոսը:

Ագահ Միդասը գոչեց.

- Տե՛ր աստված, հրամայի՛ր, որ մաքուր, շողշողուն ոսկի դառնա այն ամենը, ինչին որ ես դիպչեմ:

Դիոնիսոս աստվածը կատարեց Միդասի խղճը: Իսկ մտքում շատ ափսոսաց, որ Միդաս արքան ավելի լավ շնորհ չընտրեց:

Միդասը ճեպով հեռացավ՝ ցնծությամբ լի սրտով, ցանկանալով բոլոր առաջ փորձել ստացած շնորհը: Նա մի կանաչ ճյուղ պոկեց կաղնուց. ճյուղը նրա ձեռքին դարձավ ոսկեղեն: Հասկեր պոկեց դաշտում, ոսկեղեն դարձան դրանք: Ծառից խնձոր պոկեց, այն դարձավ ոսկի: Կռացավ ձեռքերը լվանալու առվի ջրում, խկույն ոսկի դարձավ նրա ձեռքերին հպված ջուրը և ցած թափվեց ոսկու կաթիլների տեսքով:

Ցնծաց Միդասը. հիմա ինքը անծայր հարստություն կունենա:

Ուրախ-զվարթ եկավ իր պալատը: Սպասավորները շքեղ սեղան են պատրաստել նրա համար: Նստեց արքան, մեկնեց ձեռքը: Ավա՜ղ, ոչինչ ուտել չի կարող. ամեն ինչ վերածվում է ոսկու: Հասկացավ Միդասը, որ դատապարտված է սովամահության: Նա ձեռքերը կարկառեց վեր և մեղա եկավ, ապա խնդրեց Դիոնիսոս աստծուն հետ վերցնել իրեն տրված շնորհը:

Աստծո հրամանով Միդասը գնաց, լեռնային մի վտակի ակունքը գտավ և ընկղմվեց սառնորակ ջրում: Պաղպաջուն, ականակիտ ջուրը սրբեց-տարավ Միդասին տրված շնորհը:

ՊԼԱՆ

1. Փռյուգիայի թագավոր Միդասը:
2. Դիոնիսոս աստծո ուսուցիչը:
3. Սիրալիր հյուրընկալություն:
4. Հյուրընկալության վարձը:
5. Միդասի ցնծությունը:
6. Ուրախությունը մթագնվում է:
7. Զղջացող Միդասը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝ հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) Փռյուգիա, Միդաս, Դիոնիսոս աստված, Սիլենոս ուսուցիչ.

բ) անբավ հարստություն, գանձարան, գոհարեղեն, թունդ հարբած, շնորհ ստանալ, մաքուր, շողշողուն ոսկի, ճեպով հեռանալ, կանաչ ճյուղ, ձեռքերը կարկառել, լեռնային վտակի ակունք, ընկղմվել, ականակիտ, պաղպաջուն ջուր, սրբել-տանել:

Երեխա՜ս, երեխաս մնաց ծովափին, խնդրում եմ ձեզ, աղաչում եմ ... երեխա՜ս, թողե՛ք ինձ ...

Կանացի այս խոսքերը խելագարի նման արտասանում էր երիտասարդ մի կին՝ գրկելով մերթ նավաստիներին, մերթ ուղևորակիցներին, հրում պատահական մարդկանց: Ուժասպառ եղած այդ կինը, նորից ինչ-որ ուժից մղված, նորից փարվում էր նավի եզրին ու նայում՝ ասես փորձելով մի թռիչքով հասնել այն, ուր մնացել էր նրա սրտի:

Այնտեղ արդեն թշնամին էր:

Թուրքական այդ մոտորանավը վերջին պահին մոտեցել էր ափին՝ վերցնելու այնտեղ սպասող մի քանի նավաստու: Նավաստիներին իրենց հետ նավ բարձրացրին նաև կնոջը, և վայրկենապես նավը շարժվեց բաց ծով:

Այս ամենն այնքան արագ կատարվեց, որ կինը հետո միայն նկատեց, որ նավաստիները չեն վերցրել երեխային, որը խաղում էր ամպաների արանքում:

Կինը գտավ նավի հրամանատարին: Այլևս խոսելու անընդունակ՝ նա ուժասպառ տապալվեց գետնին, գրկեց հրամանատարի ոտքերն ու հեծկլտաց.

– Նուք էլ երեխա ունեք ..... խնդրում եմ, աղաչում եմ ..... գնանք ....., – աղերսում ձայնով թախանձում էր կինը:

Հրամանատարը մի պահ մտածեց, նայեց կնոջը, նայեց ծփացող ծովին և խառնված կարուկ հրամայեց.

– Ամբողջ թափով ե՛տ: Մոտեցրե՛ք չորրորդ նավամատույցին:

Ապա նա կարգադրություններ արեց, թե ով պետք է բարձրացնի երեխային, ով պետք է պաշտպանի նավի վրա գտնվողների պաշտպանությունը:

Մի վայրկյան նավը դանդաղեցրեց ընթացքը, ապա ալեցավ դեպի նավահանգիստ: Թշնամու ինքնաթիռները, տեսնելով դեպի ափ սուրացող նավը, շրջվեցին նրա կողմը:

Չորրորդ նավամատույցն արդեն ջարդված էր: Ամայի քարափին լալագին այս ու այն կողմ էր վազում երեխան: Նավաստիների գործողություններն արագ էին և անսխալ:

Քիչ հետո երեխան նավի վրա էր՝ մոր գրկում: Նավը էլ ավելի արագ հեռանում էր ափից: Թշնամու ինքնաթիռները կրակ էին բացել նավի վրա: Սովայինները զենիթային գնդացիրներից կրակում էին թշնամու ինքնաթիռների վրա: Բոլորը զբաղված էին. աշխատում էին ետ մղել թշնամու գրոհը:

Կինը, երեխային գրկած, առանձնացել էր տախտակամածի անկյունում: Նա չուզեց էր և աղոթում էր՝ ուրախության ու վշտի արտասուքները խառն խառնած: Դա գավակին գտած մոր աղոթքն էր ...

ՊԼԱՆ

1. Երիտասարդ կնոջ մորմոքը:
2. Ռազմական նավը ափին:
3. Նավաստիները նավ են բերում կնոջը:
4. Երեխան ափին է՝ թշնամու մեջ:
5. Խնդրանք հրամանատարին:
6. Նորից դեպի ափ:
7. Քարափին վազվզող երեխան:
8. Երեխան նավի վրա է:
9. Սրտառուչ պոռթկում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

կցկտուր խոսքեր, տախտակամած, պատահական մարդիկ, ուժասպառ լինել, նավի խռնամաս, ռազմական մոտորանավ, վայրկենապես, բաց ծով, տակառ, խոսելու անընդունակ, հեծկլտալ, աղեկտուր ձայն, ծփացող ծով, կտրուկ հրամայել, չորրորդ նավամատույց, դանդաղեցնել ընթացքը, դեպի ափ սլացող նավ, ամայի քարափ, լալագին, արագ և անսխալ գործողություններ, կրակ բացել, գնիթային գնդացիր, չոքել, ուրախության ու վշտի արտասուքներ:

ՄԱՅՐԸ

Ըստ Գեզա Գարդոնի

Միցո. այդպես էր կատվի անունը: Ինչե՞ր չէր անում այդ զարմանալի կատուն: Նա իսկույն հայտնվում էր, հենց որ լսում էր իր տիրոջ՝ Անդրիշի սուլոցը: Իսկ եթե տղան սուլում և չորեքթաթ ման էր գալիս, կատուն ցատկում էր նրա մեջքին և սկսում տրորել թաթերով, ճիշտ այնպես, ինչպես տնային տնտեսուհիները խմորն են հունցում:

Միցոն չերտավոր էր: Ճերմակի և մոխրագույնի մի զարմանալի խառնուրդ էր: Աչքերը կանաչ էին, և դրանց խորքերում ոսկե ցոլքեր կային:

Աշնանային մի օր Անդրիշը ասաց ընկերոջը.

- Կատվի ձագ ուզո՞ւմ ես տեսնել:

Նրանք վազեցին դեպի ախոռ: Մի ակնթարթում բարձրացան խոտանոց: Կատվի ձագերն իրոք շատ էին: Նրանք անիմաստ սողում էին մեկը մյուսի վրայով: Միցոն նստած էր նրանց մեջտեղում և լիզում էր մերթ մեկին, մերթ մյուսին: Միցոն նրանց մայրն էր: Այսօր ի՜նչ տարօրինակ հայացքով, գրեթե չարությամբ էր նայում իր սիրելի Անդրիշին ու նրա ընկերոջը:

Նա կարծես հարցնում էր. «Ինչո՞ւ եք բարեհաճել, տղանե՛ր»:

Հետո կատուն շարունակեց լողացնել իր ձագերին: Եվ մռռացնում էր այնպես, կարծես մեղմորեն դիպչում էր թավջութակի լարերին:

Այդ գիշեր մեծ դժբախտություն պատահեց: Անդրիշենց տունը հրդեհվեց: Գյուղում աղմուկ էր, խառնաշփոթություն: Ահազանգում էին: Մարդիկ դույլերով, տակառներով վազում էին դեպի վառվող տունը:

Մի բոպեից կրակը հասավ ախոռին, այնտեղից՝ խոտանոց: Տղաները ուզում էին վազել, փրկել Միցոյին ու նրա ձագերին, բայց մեծերը խստորեն արգելում էին:

Այդ պահին խոտամացի դռան մեջ երևաց Միցոն: Նրա ատամների մեջ ճոճվում էր
ձագուկը: Մայրը զգուշորեն իջավ և ձագին դրեց գետնին՝ տղամների ոտքերի մոտ:
Այնուհետև նորից պատի վրայով բարձրացավ խոտամաց և նորից հայտնվեց ձա-
գուկի հետ, որին ևս ներքև իջեցրեց:
Բոցը հանկարծ կլանեց ամբողջ տանիքը: Կտուրը ճարճատում էր, ճռռում,
քանդվում: Միցոն մի անգամ էլ կարողացավ վեր մագլցել: Նա աղեկտուր ու սրր-
տակեղեք մլավոցով դեսուդեն էր նետվում պատի եզերքով, կրակի լեզուների մի-
ջով: Հետո հանկարծ շեշտակի թռիչքով նետվեց կրակի մեջ:
Տղամները երկար սպասեցին. Միցոն այլևս չերևաց:

ՊԼԱՆ

1. Միցո կատուն:
2. Մայր Միցոն և նրա ձագերը:
3. Այցելություն Միցոյին:
4. Հրդեհ. իրարանցում գյուղում:
5. Մայր Միցոն փորձում է փրկել ձագերին:
6. Միցոյի անձնազոհությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Անդրիչ, չորեքթաթ ման գալ, խմոր հունցել, ճերմակի և մոխրագույնի զարմանալի խառնուրդ, ոս-
կի ցոլքեր, անիմաստ սողալ, տարօրինակ հայացք, բարեհաճել, մեղմորեն դիպչել թավշոււթակի լարե-
րին, ճարճատել, ճռռալ, աղեկտուր և սրտակեղեք մլավել, շեշտակի թռիչք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Գեզա Գարդոնը (1863-1922) հունգար գրող է, հայտնի վիպասան, նորավեպերի հեղինակ: Նրա գրչին են պատկանում «Ջահը» վիպակը, «Իմ գյուղը» նորավեպերի ժողովածուն, «Էգերի աստղերը» պատմավեպը, «Գի-նի» կատակերգությունը, «Անտեսանելի մարդը»-ն «Աստծո ստրուկներ» վեպերը:*

ԱՐԾԻՎԸ

Ըստ Վախթանգ Անանյանի

Գարուն եկավ: Սար ու ձոր զմրուխտ հագան: Խաշնարածները սար բարձրա-
ցան: Վրան խփեցին ու սկսեցին արածեցնել իրենց հոտերը: Վրաններից
քիչ հեռու մի բլուր կար, որի բարձրաբերձ ժայռի վրա մի արծիվ իր բույնն էր հյուս-
ել: Պատուհաս էր այդ արծիվը սարվորների համար: Մեկ էլ տեսար, թռչում էր
գառների հոտի վրայով, ճանկում էր մի գառնուկ և թռչում դեպի իր բույնը:
Մի օր էլ սարվոր կանայք անկողինները փռել էին արևի տակ: Երեխաները թա-
վալվում էին փափուկ կանաչին: Իսկ մի նորածին մանուկ խանձարուրով մեկնված
էր վերմակի վրա:
Հանկարծ կանայք աղաղակ բարձրացրին.
- Տարա՜վ, տարա՜վ, երեխային տարա՛վ …
Օդում մի ահագին գառնակեր իր մետրանոց թևերն էր թափահարում, իսկ նրա
ոտներից կախված էր բարուրը:

Երեխայի մայրը ճչալով վազում էր և օդում ճոճում ձեռքն ընկած փայտը, մյուսները քարեր էին նետում: Բայց արծիվը հավաքեց ուժերը և թեքվեց դեպի իր բույնը, ուր էլ իջեցրեց բեռը:

Հովիվները սկսեցին մագլցել ժայռը: Արծվի բույնը ժայռի սեպ լանջին էր: Վրաններից պարան հասցրին, որը փաթաթեցին մի ջահել հովվի մեջքին ու իջեցրին արծվի բույնը:

Երեխան, բնի մոտ ընկած, ճչում էր. արծվի ճուտերը դեռևս տարակուսում էին. կտցե՞լ, թե՞ ոչ:

Մայր արծիվը հեռվից դիտում էր մարդկանց. նա հանգիստ էր. չէ՞ որ որսը արդեն ձագերի մոտ էր: Բայց հենց որ հովիվը սկսեց մոտենալ բնին, մայր արծիվը տագնապեց, սկսեց պտտվել հովվի շուրջը, կտցահարում էր նրա թիկունքը: Իսկ երբ տեսավ, որ չի կարողանում ետ դարձնել տղային, կտուցով կախվեց պարանից, ծամեց ու քրքրեց: Պարանը կտրվեց, և հովիվը գլորվեց ցած:

Բայց տղայի ձայնը ներքևից եկավ: Նա միայն ոտքն էր վնասել և դաշույնը ձեռքին պայքարում էր արծվի դեմ, որ փրկի մանկիկին: Ջահել հովիվը մոտեցավ բարուրին, որ վերցնի: Այդ պահին մայր արծիվը թափ առավ, խոյացավ հովվի վրա, ճանկեց ուսը և կտցահարեց գլուխը: Տղան իր դաշույնով խոցեց արծվին, և մայրը վերջին շնչում թևերը տարածեց իր ձագերի վրա ու անշնչացավ:

Երբ երեխային վերջապես մորը տվին, ջահել հովիվը ներքևից գոչեց.

- Կոտորե՞մ արծվի ձագերին:

- Ձե՛ռք չտաս ... ճուտերին ձե՛ռք չտաս, - արգելեց երեխայի մայրը:

Նա փրկված երեխային կրծքին էր սեղմել, իսկ աչքերում ահ կար, երբ արգելում էր սպանել արծվի ճուտերին:

ՊԼԱՆ

1. Խաշնարածները բարձրանում են սար:
2. Պատուհաս արծիվը:
3. Գառնակերը առևանգում է նորածին մանկանը:
4. Հետապնդում:
5. Պայքար արծվի բնի վերևում:
6. Փրկված մանկիկը:
7. Մանկիկի մոր արգելքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ամրուխտ հագնել, բարձրաբերձ ժայռ, բույն հյուսել, պատուհաս, ճանկել, խանձարուր, աչագին գառնակեր, մետրանոց թև, սեպ լանջ, կտցահարել, տագնապել, պտտվել, դաշույն, խոյանալ, ճանկել, խոցել, թևերը տարածել, կրծքին սեղմել:

ԹՈՒԹԱԿԻ ՎԻՇՏԸ

Ըստ Արիգ Ավագյանի

Լուսիկը կենդանիներ շատ է սիրում: Եվ եթե չվախենար իր մանկաբույժ մայրիկի նախատինքներից, իրենց բնակարանը կվերածեր կենդանաբանական այգու: Տանն արդեն փառավորապես բնակություն են հաստատել Ուտի անունով մի շուն, մի մռայլ, մոխրագույն կատու, մի դեղձանիկ ու մի թութակ:

Ամենազվարճալին թութակն է: Իր բոլոր հույզերն ու ցանկությունները նա արտահայտում է երկու բառով: Մեկ էլ տեսար ողջ բնակարանով մեկ լսվում է նրա ճիչը.

- Բառռև ձեզ:

Երբ նա արտասանում է այդ բառերը, բոլորը ծիծաղում են, բացի մայրիկից:

- Լավ կլիներ, որ այդ երկու բառը սերտած չլիներ, - դժգոհում է նա, - գլուխներս տարավ:

Տանը միայն Լուսիկն է հոգ տանում այդ խայտաբղետ քառյակին. ժամանակին կերակրում է, մաքրում թռչունների վանդակները, սաստում մշտապես գժտվող շանն ու կատվին:

Գարնանավերջի մի տաք, պայծառ օր էր: Լուսիկը դպրոցից եկավ, պայուսակը նետեց աթոռին, հագուստը շտապ փոխեց, որ վազի բակ՝ խաղալու: Հետո հիշեց, որ թռչունների վանդակները պետք մաքրի: Նա իջեցրեց դեղձանիկի վանդակը, դրեց սեղանին. հետո բերեց վանդակի հատակի թիթեղը մաքրելու լաթն ու մի աման ջուր: Ապա բաց արեց վանդակի դուռը, և հենց այդ ժամանակ տատիկը խոհանոցից կանչեց:

- Լուսի՛կ, հե՜յ, Լուսի՛կ, - բակից կանչեցին խաղընկերները:

- Եկա՛, եկա՛, - ձայն տվեց աղջիկը և վազեց բակ:

Նա մոռացավ դեղձանիկին էլ, բաց թողած վանդակն էլ: Կատուն կարծես գետնի տակից հայտնվեց ու դիվային բնազդով հասկացավ, որ Լուսիկը սխալ է թույլ տվել:

Իր վանդակի ձողին կանգնած թութակը ձգվեց տեղում, աչքերը լայնացան ու բոցավառվեցին:

- Բառռև ձեզ, - տագնապահար ճչաց նա:

Դեղձանիկն էլ զգաց իր օրհասը և սկսեց զարնվել վանդակի պատերին ու ծվծվալ: Նա ճչում ու օգնության էր կանչում Լուսիկին, իսկ թութակն էլ ձայնակցում էր նրան:

Բայց բակում երեխաները, խաղով տարված, այնպիսի աղմուկ էին բարձրացրել, որ խոհանոցում ճաշ պատրաստող տատիկը ոչինչ չլսեց:

Հետո ամեն ինչ վերջացավ: Կատուն ցատկեց սեղանից, կայծակի արագությամբ փախավ, և վանդակը մնաց թափուր:

Ճաշի ժամ է, բոլորը հավաքվել են ճաշասեղանի շուրջը: Դեղձանիկի վանդակը իր տեղում չէ: Լուսիկը տարել է պատշգամբ: Նա հիմա տխուր-տրտում նստել ու չի ուտում իր ճաշը: Կարծում է՝ դեղձանիկը թռել-գնացել է: Միայն թութակը գիտե զարհուրելի իրողությունը, կծկվել է վանդակի անկյունում և լայն բացված աչ-

քերով, որոնց մեջ քարացել է վիշտը, նայում է միայն ու միայն կատվին:

Անցան օրեր: Թութակի դիմաց կախված վանդակում նոր դեղձանիկ է ճռվողում: Իսկ Թութակը լուռ է: Տնեցիների համար առեղծված է, թե ինչու նա այլևս չի ասում իր այնքան սիրած բառերը.

- Բարեւ ձեզ ...

ՊԼԱՆ

1. Լուսիկի կենդանիները:
2. Թութակն ու նրա սիրած բառերը:
3. Գարնանամուտի մի օր:
4. Կատուն և բաց դռնակով վանդակը:
5. Դիվային արարք:
6. Թութակի լուռ վիշտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

մանկաբույժ, նախատինք, բնակություն հաստատել, մռայլ, մոխրագույն կատու, դեղձանիկ, ամենազվարճալի, սերտել, խայտաբղետ քառյակ, գարնանավերջ, լաթ, դիվային բնազդ, բոցավառվել, տագնապահար ճչալ, կայծակի արագությամբ փախչել, մնալ թափուր, տխուր-տրտում, թռչել-գնալ, զարհուրելի խռովություն, ճռվողել, առեղծվածային:

2. Երեխաներին առաջարկել պատմել իրենց տնային կենդանիների և թռչունների մասին:

ԵՂՆԻԿՆԵՐԸ

Ըստ Լևոն Շանթի «Մանկական աշխարհ» ընթերցարանի

Եղնիկները մրսում էին: Երկուսն էին: Սեղմվել էին իրար մի հսկա եղևնու տակ: Ցուրտ ու մութ գիշեր էր: Ձյունը անընդհատ տեղում էր: Տեղում ու իր թավ սավանն էր փռում ամստառի ծառերի, եղնիկների վրա և գետնին:

Եղնիկները սեղմվել էին իրար, պառկել էին ու դունչ դնչի տվել:

Ի՜նչ սև գիշեր էր, ի՜նչ անախորժ էր սանձարձակ քամու ձայնը: Ծառերի մերկ գագաթները փլվում էին՝ իրար զարկվելով, օձերի նման սվվում էին: Երկու եղնիկները դողում էին ամորոշ երկյուղից: Քամին բուքով ձյուն էր լցնում եղնիկների ականջների մեջ, ոռնում էր, քաշքշում նրանց:

Հեռվից՝ քամու սուլոցի միջից, առանձնացավ մի ուրիշ ոռնոց: Եղնիկների շունչը կտրվեց, վախից քարացան:

Հակառակ կողմի լեռներից իբրև պատասխան առաջին ոռնոցի լսվեց էլ ավելի սարսափազդու ձայն: Ձյան ծանրության տակ մի չոր ճյուղ կոտրվեց և ճռճռալով ընկավ գետին: Եղնիկները սարսափահար թռան ոտքի:

Անսամձ երկյուղից գլուխները կորցրած՝ նայեցին միմյանց, հետո երկուսը միասին առաշ նետվեցին և սկսեցին փախչել: Փախչում էին նետի պես, ծառերի միջով,

ընկած կոճղերի ու դիզված ձյուների վրայով, փախչում էին վար՝ դեպի ձորը:

Իսկ վերևում՝ ծառերի մեջ, փայլեցին շարժուն կայծեր, առաջ մեկը, երկուսը, բայց շուտով շատացան ու խռնվեցին:

Եվ այնտեղ, ուր քիչ առաջ պառկել էին եղնիկները, կանգ առավ գայլերի ոհմակը: Կանգ առավ սոված, ատամները կափկափելով: Սկսեցին որոնել, որովհետև առել էին եղնիկների հոտը: Մեկը վազեց աջ ու ձախ՝ ծառերի մեջ, իսկ մյուսները վրա ընկան ձյունին, հետևի ու առջևի ոտքերով սկսեցին փորել ձյունը. ոչինչ չկար: Մի պահ դադարեցին որոնել, կանգ առան ու բարձր ծոր տվին.

- Ուո՜ւ, ուո՜ւ ...

Նրանցից մեկը լռեց, բարձրացրեց քիթը և սկսեց հոտոտել օդը, կարծես սառն օդից ուզում էր ստանալ իր հարցերի պատասխանը, թե ուր գնացին եղնիկները:

Բայց ոչինչ չհասկանալով՝ նորից քիթը կոխեց ձյան մեջ, մի քիչ էլ փորփրեց և գտավ եղնիկների ճանապարհը: Գայլերը հոտոտելով շարժվեցին եղնիկների հետքով:

Կատաղի քամին ավլել էր ձյունը, տարել դիզել էր այլ տեղ և սրբել-տարել էր եղնիկների հոտը:

Գայլերը ոռնում էին՝ իրար կողքի պպզած, դունչները տված քամուն, սոված ու խաբված: Ձիգ, երկար ու չարագուշակ ոռնում էին նրանք: Նրանց պատասխանում էր հողմը՝ էլ ավելի գիլ ու չարախինդ:

Սարսափելի գիշեր էր:

ՊԼԱՆ

1. Երկու եղնիկները:
2. Սև գիշեր:
3. Քամու սուլոցն ու գայլերի ոռնոցը:
4. Եղնիկների փախուստը:
5. Գայլերը գտնում են եղնիկների նախկին տեղը:
6. Ապարդյուն որոնում:
7. Խարերա քամին և անոթի գայլերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հսկա եղևնի, անընդհատ տեղալ, թավ սավան, դունչ դնչի տալ, անախորժ, սանձարձակ քամի, ծառերի մերկ գագաթներ, անորոշ երկյուղ, սարսափազդու ձայն, անսանձ երկյուղ, դիզված ձյուն, շարժուն կայծեր, գայլերի ոհմակ, ատամները կափկափել, հոտոտել օդը, կատաղի քամի, տանել-դիզել, դունչները քամուն տալ, ձիգ, երկար ու չարագուշակ ոռնալ, գիլ ու չարախինդ:

ԻՆՉ ԵՆ ՔՉՓՉՈՒՄ ԽԵՑԳԵՏԻՆՆԵՐԸ

Ըստ Միխայիլ Պրիշվինի

Մի անգամ Դոմնա տատիկը իր Թոռնիկ Զինայի հետ գնաց մոտակա գետը:
Որոշել էին խեցգետին բռնել: Նրանք հասան գետի ափ, ջրի մեջ իջեցրին
խեցգետին որսալու իրենց ցանցերը: Այդ ցանցերը տատիկն էր պատրաստել: Նա
ուռենու ճյուղը ծռել, օղակ էր դարձրել, օղակի վրա քաշել էր հին ուռկանի ցանց
և մեջը դրել տապակած գորտ: Խեցգետնի սիրած խորտիկն է սա:
Երբ խեցգետինները առնում են տապակած գորտի հոտը, նրանք դուրս են գա-
լիս առափնյա ճեղքից և մտնում ցանցերի մեջ: Ժամանակ առ ժամանակ որսացան-
ցը պարանով դուրս են քաշում, հանում խեցգետինները ու ցանցը նորից ջուրն ի-
ջեցնում:
Ամբողջ գիշեր տատ ու Թոռ դուրս քաշեցին խեցգետինները, լցրին մեծ զամ-
բյուղը, իսկ առավոտյան ճանապարհ ընկան դեպի իրենց գյուղը:
Արևը դուրս եկավ: Ճամփան երկար էր: Տատ ու Թոռ Թուլացել էին անքնությու-
նից, արևն էլ մյուս կողմից էր այրում: Նրանք հազիվ էին քարշ տալիս ծանր զամ-
բյուղը:
- Տե՛ս, խեցգետինները քչփչում են, - ասաց տատիկը Զինային:
- Իսկ ի՞նչ են քչփչում, - հարցրեց Զինան:
- Նրանք մահից առաջ իրար հրաժեշտ են տալիս, - բացատրեց տատիկը:
Իսկ խեցգետինները այդ ժամանակ բոլորովին էլ չէին քչփչում: Նրանք միայն
իրենց ոսկրոտ ու կոպիտ կողերով, չանչերով, բեղերով ու վզերով հրմշտում էին
իրար: Խեցգետինները մեռնելու բոլորովին միտք չունեին. ընդհակառակը, նրանք
ուզում էին ապրել: Բոլորն էլ գործի էին գցել իրենց ոտքերը, որ մի անցք գտնեն
և դուրս պրծնեն զամբյուղից:
Նրանց ջանքերը ապարդյուն չանցան: Ահա գտան մի մեծ անցք: Նախ մի մեծ
խեցգետին անցավ, անցքը ավելի լայնացրեց: Նրան հետևեցին ավելի փոքրերը:
Զամբյուղից նրանք իջան տատիկի մորթե բաճկոնակին, բաճկոնակից կիսաշրջա-
զգեստի վրա, ապա Թրմփացին ճանապարհի փոշու մեջ: Այնտեղից սողացին խոտե-
րի մեջ, իսկ խոտերից դեպի գետը մի քանի քայլ էր:
Արևը այրում էր ու այրում: Տատ ու Թոռ գնում էին ու գնում, խեցգետիննե-
րը սողում էին ու սողում:
Վերջապես հասան խրճիթին: Իջեցրին զամբյուղը: Իսկ այն դատարկ էր:
- Ահա թե ինչ էին քչփչում խեցգետինները. նրանք մեզ հրաժեշտ էին տալիս, -
ասաց Զինան:

ՊԼԱՆ

1. Տատ ու Թոռ գնում են խնցգետին որսալու:
2. Տատիկի պատրաստած ցանցերը:
3. Գիշերային որս:
4. Դեպի գյուղ. ծանր զամբյուղը:
5. Խեցգետինները քչփչում են:
6. Խեցգետինների փախուստը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

մոտակա գետ, ուռենու ճյուղ, հին ուռկանի ցանց, տապակած գորտ, սիրած խորտիկ, առափնյա ճեղքեր, ժամանակ առ ժամանակ, քարշ տալ, ծանր զամբյուղ, հրաժեշտ տալ, ոսկրոտ, կոպիտ կողեր, չանչեր, բեղեր, հրմշտել, ապարդյուն չանցնել, մորթե բաճկոնակ, կիսաշրջագգեստ, թրմփալ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Միխայիլ Պրիշվինը (1873-1954) մանկական գրող է: Գրել է ակնարկներ, պատմվածքներ, վեպ-հեքիաթներ, բանաստեղծություններ: Ռուսական բնության գիտակ է, իր ստեղծագործություններում պատկերում է այդ բնաշխարհը, նրա գրկում ապրող մարդուն:

ԿԱՊԻԿՆԵՐԸ

Ըստ Նատալյա Պոժարիցկայայի

Լաբորատորիայի մեծ սենյակում լռություն է: Մաքուր: Լուսավոր: Ոչ ոք չկա: Շուրջս եմ նայում: Հետո ցնցվում եմ երկու զույգ աչքերի սևեռուն հայացքից: Վանդակի ցանկապատված տարածությունից ինձ են հետևում երկու կապիկ: Տեղավորվել են հենց առաստաղին կպած թարեքին և ինձ են նայում: Մեկը կիսապառկած է, գլուխը ձեռքին հենած՝ խոռ է ծամում: Երկրորդը մտածողի կեցվածք է ընդունել՝ կզակը բռունցքին հենած, աչքերում՝ իմաստություն ու դարավոր թախիծ: Մի րոպե այնպիսի զգացողություն է, թե դիմացդ մարդ է՝ խելացի ու հոգնած:

- Հը, բարեկա՛մս, - հարցնում եմ քնքուշ ձայնով, - գործերդ լա՞վ են:

Ես ավելի եմ մոտենում: Հաջորդ պահին կապիկը մի ոստյուն է անում, հայտնըվում իմ դիմաց, ճանկում խալաթս, և լսվում է պատռվող կտորի ձայնը: Կապիկը կառչել էր խալաթիցս և ինձ իր մոտ էր քաշում:

- Կարևորը չվախենալն է: Երբ կապիկները զգում են, որ իրենցից վախենում են, դյուրագրգիռ են դառնում, - զգուշացրել էր ինձ լաբորատորիայի վարիչը:

Որպեսզի կապիկներն ինձ ընտելանան, որոշվեց, որ ես նրանց կերակրեմ և խնամեմ:

Նախաճաշը, ճաշը և ընթրիքը իմ նոր խնամարկյալները դիմավորում են խանդավառությամբ: Օժանդակ շենքից հենց որ լսվում է թասերի թրխկոց-չրխկոց, նրանք սկսում են վազվզել վանդակով մեկ, ուրախ ճվճվում են, բարձրանում առաստաղից կախված ճոճաձողի վրա, ճոճվում մի քանի անգամ: Հետո ճարպկորեն անցնում են օժանդակ սենյակին կպած ցանկապատի վրայով և սեղանի մոտ դիրք ընդունում: Նրանք հիանալի «չարժուձև» ունեն: Շիլան ուտում են թասիկների միջից՝ գդալով կամ ձեռքերով: Կաթը խմում են գավաթներով: Եթե կաթը կամ շիլան տաք է լինում, գիտեն, թե ինչպես պետք է սառեցնեն: Նրանք փչում են՝ ծիծաղելիորեն դուրս ցցելով շրթունքները:

Բայց երբ միրգ են մատուցում, կապիկները բոլորովին մոռանում են քաղաքակիրթ շարժուձևը: Համեղ պտուղը սեղմում են ոտքի կեռ մատներով, ատամներով ու ձեռքերով կեղևում և երբ հասնում են քաղցր միջուկին, հաճույքից ճպճպացնում ու տնքում են:

Այդ խնջույքների ժամանակ ինչ-որ բան էլ ինձ է հասնում: Բանանի ու նարինջի կեղևները, դեղձի և ծիրանի կորիզները, որոնք կապիկները ճարպկորեն դուրս են թքում: Պետք է տեսնել, թե ինչպիսի վսեմաշուք ժպիտով են նրանք ինձ մեկնում այդ կոճոնները: Բայց ես դրանք ընդունում եմ որպես աճող վստահության նշան: Այդ պատճառով էլ կապիկների նվերները ընդունում եմ հարգանքով ու շնորհակալությամբ:

ՊԼԱՆ

1. Լաբորատորիայի մեծ սենյակում:
2. Երկու կապիկ վանդակում:
3. Ծանոթություն նոր աշխատակցուհու հետ:
4. Կապիկները ճաշում են:
5. Մատուցվում է միրգ:
6. Կապիկների նվերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ոչ ոք, ցնցվել, երկու զույգ աչքերի սևեռուն հայացք, ցանկապատված տարածություն, առաստաղին կպած թարեք, կիսապառկած, մտածողի կեցվածք ընդունել, իմաստություն և դարավոր թախիծ, խելացի ու հոգնած մարդ, քնքուշ ձայն, ոստյուն անել, պատռվող կտոր, դյուրագրգիռ դառնալ, ընթրիք, խանդավառությամբ դիմավորել, թրխկոց-չրխկոց, ճվճվալ, ճռճռող, հիանալի շարժուձև, դիրք ընդունել, ծիծաղելիորեն դուրս ցցել, քաղաքակիրթ շարժուձև, ատամներով և ձեռքերով կեղևել, քաղցր միջուկ, հաճույքից ճպճպացնել, բանանի և նարնջի կեղև, վսեմաշուք ժպիտ, կոճոն, աճող վստահության նշան:

2. Եթե ուզում եք կապիկների մասին շատ բան իմանալ, կարդացեք Նատալյա Պոժարիցկայայի «Կապիկներ, կապիկներ, կապիկներ» գիրքը:

ՍՈՒՐԲ ԷԼՄԱՅԻ ԿՐԱԿՆԵՐԸ

Ըստ Մարթա Գումիլևսկայայի

Այս դեպքը պատահել է մեզանից երկու հարյուր տարի առաջ:

Ռուս ծովագնաց Ալեքսեյ Չիրիկովի նավը լողում էր Խաղաղ օվկիանոսի հյուսիսային ջրերում: Ուշ աշուն էր: Ծովայինները տուն էին վերադառնում հիանալի ճանապարհորդությունից: Նրանք հայտնաբերել էին Ալյասկան:

Վերադարձի ճանապարհը շատ դժվար էր: Վրա էր հասել աշունը՝ իր հաճախակի մրրիկներով ու փոթորիկներով: Իսկ Չիրիկովի նավը թեթև առագաստավոր էր, և քամին պտտեցնում էր նրան ալիքների վրայով:

Սկսվում է շատ ուժեղ փոթորիկ: Նավաստիները մի քանի օր պայքարում էին

մրրիկի ու լեռնացող ալիքների դեմ: Նրանք ուժասպառ էին եղել անհավասար պայքարից, այլև ի վիճակի չէին դիմադրելու մոլեգնող տարերքի ճնշմանը: Նրանք հաշտվել էին օվկիանոսի խորքերում իրենց մահկանացուն կնքելու մտքին:

Հանկարծ առագաստանավի կայմերի ծայրերին բռնկվում են բոցի երկար լեզուներ: Այդ տեսնելով՝ հոգնատանջ մարդիկ ծնկի են գալիս, շնորհակալ լինում բախտից ու Աստծուց՝ մահից փրկվելու համար: Այդ կրակները ավետաբեր էին: Դրանք եկել էին ասելու, որ փոթորիկը հանդարտվում է:

Բոլոր ժամանակների և բոլոր երկրների ծովայինները կայմերին տեսել են բոցի այդ լեզվակները: Դրանց մասին հիշում են Հին Հունաստանի ծովագնացները, դրանց մասին պատմում են Ամերիկա աշխարհամասը հայտնաբերող Քրիստափոր Կոլումբոսի նավաստիները, նշանավոր Ֆերդինանդ Մագելանի ուղեկիցները:

Պատահում էր՝ կրակները բռնկվում էին բոլոր կայմերի վրա, հետո սողում ցած, փախչում տախտակամածով, բայց ոչ մեկին վնաս չէին տալիս:

Այդ կրակները մթնոլորտային էլեկտրականության պարպումներ են: Բայց խաղաղ են ու անվնաս: Դրանք կանխագուշակում են փոթորկի ավարտ: Այնպես որ նավագները իզուր չէ, որ ուրախանում են դրանց հայտնությամբ:

Այդ կրակները կոչվում են Սուրբ Էլմայի կրակներ: Դրանք այրվում են ոչ միայն ծովի, այլև ցամաքի վրա փոթորիկների ու ձնամրրիկների ժամանակ: Բռնկվում են միշտ բարձր դիրք ունեցող առարկաների վրա՝ շենքերի սրածողերին, ծառերի կատարներին:

Ավետաբեր կրակները իրենց անունը ստացել են Իտալիայում գտնվող Սուրբ Էլմա եկեղեցու անունից: Այս եկեղեցին հովանավորում էր աշխարհի բոլոր ծովայիններին:

ՊԼԱՆ

1. Ռուս ծովագնացի նավը:
2. Խաղաղ օվկիանոսի ջրերում:
3. Փոթորիկ:
4. Նավաստիների պայքարը մրրիկի դեմ:
5. Կրակներ կայմերի վրա:
6. Բոլոր ժամանակների ծովագնացները:
7. Մթնոլորտային պարպումներ կրակների տեսքով:
8. Սուրբ Էլմա եկեղեցին և ավետաբեր կրակները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) երկու հարյուր տարի, ռուս ծովագնաց, հիանալի ճանապարհորդություն, հաճախակի մրրիկներ, թեթև առագաստանավ, պտտեցնել ալիքների վրայով, լեռնացող ալիքներ, ուժասպառ լինել, անհավասար պայքար, մոլեգնող տարերք, մահկանացուն կնքել, առագաստանավերի կայմեր, բռնկվել, բոցի երկար լեզուներ, հոգնատանջ մարդ, ավետաբեր կրակներ, հանդարտվել, սողալ, փախչել տախտակամածով, մթնոլորտային էլեկտրականության պարպումներ, կանխագուշակել փոթորկի ավարտը, շենքերի սրածողեր, հովանավորել ծովայիններին.

բ) Ալեքսեյ Չիրիկով, Ալյասկա, Խաղաղ օվկիանոս, Հին Հունաստան, Ամերիկա աշխարհամաս, Քրիստափոր Կոլումբոս, Ֆերդինանդ Մագելան, Սուրբ Էլմայի եկեղեցի, Իտալիա:

ԱՖՐՈԴԻՏԵԻ ԱՐՁԱՆԸ

Ըստ մամուլի

1820 Թվականի մի պայծառ օր էր: Միլոս կղզում ապրող Գեորգիոս Կենտրոտաս գեղջուկը իր որդու հետ փորում էր հողը: Նա որոշել էր մի տնակ կառուցել, ուր կապրեին ամռան ուրախ օրերին: Հանկարծ տղայի քլունգը ինչ-որ բանի դիպավ: Խուլ զնգոցից երկուսն էլ անշարժացան: Իրենց բոլոր հարևանները հողի տակից ինչ ասես՝ չէին գտել: Այդ գտածների համար լավ էլ վարձատրվել են:

Հայր ու որդի լռելյայն գործի անցան: Մեկ էլ հողի տակից դուրս եկավ կնոջ մարմարակերտ մի գլուխ: Շարունակեցին փորել և հայտնաբերեցին մարմնի մնացած մասերը:

Հենց փոսի մեջ էլ իրար միացրին արձանի մասերը և ստացվեց կնոջ չքնաղ մի քանդակ: Շատ որոնեցին, բայց կնոջ թևերը չգտան: Հայր ու որդի սքանչացել էին այդքան կատարյալ քանդակված արձանով:

Մեկ էլ նրանք հիացական բացականչություններ լսեցին: Մարդիկ էին խմբվել փոսի շուրջը, խոսում էին ոչ հունարեն ու հիանում էին գեղջուկների գտածոյով:

Հետո երեկո եղավ: Հայր ու որդի արձանը նորից մասերի բաժանեցին, փաթաթեցին շորով ու տուն տարան: Նրանք գտել էին մեր թվագրությունից առաջ երկրորդ դարում կերտված Աֆրոդիտե աստվածուհու արձանը;

Անցավ ժամանակ: Մի օր էլ Կենտրոտասի տանը հայտնվեցին այն նույն մարդիկ, որոնք արձանը գտնելու օրը շրջապատել էին փոսը: Դրանք ֆրանսիացիներ էին: Ֆրանսիացի նավաստիները այդ հրաշք արձանի մասին պատմել էին իրենց նավապետին, սա էլ տեղեկացրել էր Կոստանդնուպոլսում ֆրանսիայի դեսպանին: Դեսպանը ուղարկել էր իր քարտուղարին, որ ինչ գնով էլ լինի՝ արձանը տեղափոխեն ֆրանսիա:

Սկզբում ֆրանսիացիները բարեկամաբար փորձեցին համոզել Միլոս կղզու բնակիչներին: Իսկ երբ հանդիպեցին վերջիններիս աներեր համառությանը, որոշեցին ուժի դիմել: Ընդհարում եղավ, հույները պարտվեցին, և ֆրանսիացիները տիրացան Աֆրոդիտեի արձանին և տարան Ֆրանսիա: Դեսպանը արձանը նվիրեց Լյուդովիկոս Տասնութերորդ թագավորին, սա էլ իր հերթին՝ Լուվրի թանգարանին:

Հիմա կանգնած է Միլոսյան Աֆրոդիտեն Փարիզի Լուվրի թանգարանում:

Հունաստանի կառավարությունը բազմիցս դիմել է Ֆրանսիայի ղեկավար մարմիններին՝ արձանը հետ ստանալու ակնկալիքով:

Բայց Ֆրանսիան նրբորեն և շատ քաղաքավարի մերժում է վերադարձնել Միլոսյան Աֆրոդիտեն իր իսկ ստեղծող հույն ժողովրդին:

ՊԼԱՆ

1. Միլոս կղզում ապրող հայրն ու որդին:
2. Հող փորելիս գտնում են կնոջ չքնաղ արձան:
3. Օտարերկրացիների հիացմունքը:
4. Ֆրանսիայի դեսպանի ցանկությունը:
5. Ընդհարում. արձանը Ֆրանսիայում:
6. Հունական կառավարության արդարացի պահանջը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) գնդլուկ, խուլ զնգոց, գտածո, լռելյան գործի անցնել, մարմարակերտ գլուխ, չքնաղ քանդակ, հիացական բացականչություններ, մեր թվարկությունից առաջ երկրորդ դար, անհերեր համառություն, ընդհարում, բազմիցս, ակնկալիք:

բ) Հատուկ անուններ.

Գեորգիոս Կենտրոտաս, Միլոս կղզի, Կոստանդնուպոլիս, Միլոսյան Աֆրոդիտե, Ֆրանսիա, Լյուդովիկոս Տասնութերորդ, Լուվրի թանգարան:

2. Ցուցադրել Միլոսյան Աֆրոդիտեի արձանի նկարը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Աֆրոդիտեն Հին Հունաստանում պաշտվել է որպես գեղեցկության և սիրո աստվածուհի:

ՄՏՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ

Ըստ Ռոբերտ Շեքլիի

Լերոյ Քլիվիի փոստային տիեզերանավը հրաժարվեց շարունակել միջաստղային իր ճամփորդությունը: Նրա նավը ծանր թրմփոցով ընկավ ինչ-որ անհայտ մոլորակի վրա: Քլիվին հազիվ հասցրեց հեռանալ նավից, երբ այն պայթեց: Տիեզերագնացը ուշակորույս մեկնվել էր անհայտ մոլորակում՝ մի բլրի վրա, որը ծածկված էր խոտով ու թփերով:

Հազիվ էր նա ուշքի եկել, երբ կողքին տեսավ մի գազանիկ: Սա նման էր սկյուռի, բայց ո՛չ աչքեր ուներ, ո՛չ էլ ականջներ: Տիեզերագնացը բոլորովին չզարմացավ: Ինչո՞ւ պիտի սկյուռը աչք ու ականջ ունենա: Այս մտքի հետ էր, երբ նրանից երկու քայլ այն կողմ հայտնվեց մի գայլ՝ կանաչ մորթով, դարձյալ անաչք ու անականջ: Բայց զինված հոյակապ ատամներով:

Գայլը պատառոտեց սկյուռին, ապա ընդհուպ մոտեցավ Քլիվիին: «Հիմա ինձ կուտի», - մտածեց տիեզերագնացը և նորից ուշաթափվեց:

Երբ աչքերը բացեց, արդեն երեկո էր: Նա փորձեց վերհիշել պատահածը: Հիշեց սկյուռին, հետո՝ գայլին: Այս կենդանիները աչք ու ականջ չունեին, ինչպե՞ս էին որս անում: Գուցե այս մոլորակի վրա գայլերից բացի հովազներ, առյուծներ էլ կան: «Հովազ» բառի վրա նրա առջև կանգնեց անաչք ու անականջ հսկայական չերկան: «Հովազ» բառի վրա նրա առջև կանգնեց անաչք ու անականջ հսկայական կատվազգի գազանը: Այս ի՞նչ է: Մի՞թե կենդանիները հետևում են իր մտքերին: Այս ի՞նչ մոլորակ է: Հովազը դանդաղ հեռանում էր:

«Անիծյալ հովազ», - մտածեց Քլիվլին:

Հովազը շրջվեց դեպի Քլիվլին և մռնչոցով ոստյուն արեց իր որսի կողմը:

Մարդը հասկացավ, որ այդ կենդանիները որսում են մտքի բույրով: Ինչ-ինչ զգայարաններով նրանք «լսում» կամ «հոտոտում» են մտքերը:

Հենց որ սա հասկացավ, Քլիվլին սկսեց պատկերացնել, որ ինքը թութ է: Ճիշտ այդ պահին մի անաչք փայտփորիկ կանգնեց գլխին և սկսեց կտցահարել վիզը:

«Անիծյալ թռչուն», - մտքում զայրացավ Քլիվլին: Նա բռնեց թռչունին և նետեց հովազի երախը: Բայց թռչունը կարողացավ ճողոպրել և թռավ վեր:

Քլիվլին սկսեց տենդագին մտածել. նա մտաբերեց Երկիր մոլորակը, իր քաղաքը, իր տունը, իր սիրած աղջիկներին, իր դպրոցական տարիները: Ամեն բան, բացի հովազից:

Մեկ էլ աջ կողմում տեսավ չորս գայլ, որ կասկածելով գալիս էին դեպի Քլիվլին:

«Ջահ, կրակ», - անցավ Քլիվլի մտքով: Նա վերածվեց հսկա խարույկի ու սկսեց վառվել: Բոցը կպավ խոտին, հետո՝ թփերին: Նրա շուրջը ամեն բան այրվում էր: Քլիվլին հայտնվել էր կրակե օղակի կենտրոնում: Մռնչացող ու ոռնացող կենդանիները մնացել էին կրակից այն կողմ: Մեկ էլ նրա գլխին ջրի կաթիլներ թափվեցին, հետո կաթիլները վերածվեցին շիթի, և հորդահոս հեղեղ թափվեց նրա գլխին: Տիեզերագնացը հառաչեց և ուշագնաց եղավ:

Քլիվլին աչքերը բացեց: Պառկած էր մահճակալին: Գլխավերևում իր ընկեր Ջոնն էր: Տեսասարքերը գրանցել էին Քլիվլի աստղանավի վթարը, և նա շտապել էր ընկերոջը օգնության:

ՊԼԱՆ

1. Վթար տիեզերքում:
2. Լերոյ Քլիվլին անհայտ մոլորակի վրա:
3. Անաչք ու անականջ սկյուռը:
4. Կանաչ մորթով գայլը:
5. Հովազին կեր դառնալու վտանգը:
6. Քլիվլին բացահայտում է այդ մոլորակի գաղտնիքը:
7. Թութ դարձած Քլիվլին:
8. Ջահ դարձած Քլիվլին:
9. Փրկություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փոստային տիեզերանավ, միջաստղային ճամփորդություն, ծանր թրմփոց, ուշակորույս մեկնվել, կանաչ մորթ, հոյակապ ատամներ, պատառոտել, հսկայական շերտավոր գազան, կտցահարել, երախ, ճողոպրել, տենդագին մտածել, վերածվել հսկա խարույկի, կրակե օղակ, մռնչացող, ոռնացող գազաններ, շիթ, հորդահոս հեղեղ, տեսասարք, աստղանավի վթար:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ռոբերտ Շեքլին ամերիկացի նշանավոր ֆանտաստ գրող է: Ծնվել ու մեծացել է ԱՄՆ-ի Նյու Ջերսի նահանգում: Ավարտել է Նյու Յորքի համալսարանը: 1952 թվին լույս է տեսել Շեքլիի առաջին պատմվածքը: Նրա գրչին են պատկանում բազմաթիվ ֆանտաստիկ և արկածային գրքեր՝ «Ուխտագնացություն Երկիր», «Ալիսթըր Քրոմփթընի ալքիմիական ամուսնությունը», «Գիտակցափոխություն», «Մտքի բուրմունքը» և այլն:*

VI

ԴԱՍԱՐԱՆ

ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏ

Ըստ Աստվածաշնչի

Մեզանից բյուրավոր տարիներ առաջ տիեզերքի տերը՝ Աստված, ստեղծեց երկիրը, կենդանիներին, մարդկանց: Միակ բանական էակը մարդն էր, որին Արարիչն ստեղծեց իր պատկերով: Նա ուզում էր, որ բանական էակը լինի կատարյալ: Բայց, ավա՜ղ, մարդը չարդարացրեց Տիրոջ ակնկալիքները: Նա ամբարիշտ ու ապերախտ էր:

Օրավուր ավելի ու ավելի էր աղտոտվում մարդու հոգին: Նա հղանում էր չար խորհուրդներ, եղկելի արարքներ:

Տեսավ այդ բոլորը Արարիչը և զղջաց, որ ստեղծել է մարդուն: Որոշեց ջնջել ադամորդուն դրախտային երկրի երեսից:

Այդ ժամանակ մեղսալի աշխարհում մի արդար մարդ էր ապրում՝ Նոյ անունով: Նա մի օր հայտնվեց Նոյին և ասաց.

- Նո՛յ, քեզ համար խեժոտ փայտից մի տապան սարքի՛ր, ներսից ու դրսից ծեփի՛ր կուպրով: Կվերցնես գերդաստանդ՝ կնոջդ, որդիներիդ, հարսներիդ: Տապանում կտեղավորես թռչուններից ու կենդանիներից զույգ-զույգ՝ էգ ու արու: Յոթ օր հետո ջրհեղեղ է լինելու երկրի վրա:

Նոյը անմիջապես գործի անցավ: Վարվեց այնպես, ինչպես պատգամել էր Արարիչը:

Սկսվեց քառասունօրյա ջրհեղեղը: Թափվում էր հորդառատ անձրևը, աղբյուրներից բխում էր արագահոս ջուրը:

Մարդիկ սկզբում ոչինչ չէին հասկանում, կարծում էին՝ սովորական տարերք է: Բայց համկարծ կռահեցին, որ Աստծո զայրույթն է պոռթկացել: Աղոթքներ էին մրմնջում՝ ձեռքերը երկինք կարկառած: Զղջում էին իրենց մեղքերը, ապաշխարում: Բայց ամեն ինչ անօգուտ էր, Տերն անողոք էր:

Միայն Նոյի տապանն էր, որ բարձրացել էր ջրերի վրա և լողում էր հանգիստ ու անվտանգ:

Մի պարզկա օր վաղորդյան արեգակի ոսկյա շողերի տակ Նոյը նշմարեց մի կայծկլտուն ձյունաշերտ. դա Արարատի կատարն էր: Այդտեղ էլ հանգրվանեց Նոյը: Հարյուր հիսուն օր տապանը մնաց լեռան գագաթին, մինչև ջրերը ցամաքեցին:

Դարձյալ հայտնվեց Աստված և թույլ տվեց, որ Նոյը դուրս գա տապանից և նորից աշխարհ մտնի:

- Աճեցե՛ք և բազմացե՛ք, - ասաց Տերը: - Ես ուխտ եմ հաստատում իմ և ձեր միջև: Այդ ուխտի նշանը թող լինի աղեղը՝ ծիածանը, որ կապում է երկինքն ու երկիրը:

Կատարվեց Աստծո կամքը, իսկ Արարատ լեռը դասվեց աշխարհի սրբությունների շարքում:

ՊԼԱՆ

1. Երկրի ստեղծումը Աստծո կողմից:
2. Ամբարիշտ մարդ արարածը:
3. Աստծո զայրույթը:
4. Ջրհեղեղ:
5. Խուճապ:
6. Տապանը Արարատ լեռան կատարին:
7. Տիրոջ պատգամը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բյուրավոր տարիներ առաջ, բանական էակ, Տիրոջ ակնկալիքները, ամբարիշտ ու ապերախտ, հղանալ չար խորհուրդներ, եղկելի արարքներ, ադամորդի, մեղսալի աշխարհ, խեժոտ փայտ, հորդառատ անձրև, արագահոս ջուր, զայրույթը պոռթկալ, աղոթք մրմնջալ, կայծկլտուն ձյունաշերտ, հանգրվանել, ուխտ:

ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Ըստ Արամ Ղանալանյանի

Երևանից քառասուն կիլոմետր դեպի հարավ-արևելք՝ ժայռակոփ բարձունքի վրա, կանգուն է մի հազվագյուտ կոթող: Տասներեքերորդ դարում կառուցված Գեղարդի վանքն է: Այս սրբավայրի մասին ժողովուրդը բազում զրույցներ է ստեղծել և վանքին վերագրել է աստվածային հրաշագործ զորություն:

Մի զրույցում պատմվում է, որ եղել են ազնվատոհմ քույր ու եղբայր: Նրանք փափագում են իրենցից հետո աշխարհին թողնել անմահ հիշատակարան:

Երկար դեգերելուց հետո քույր ու եղբայր գալիս են այս կիրճը, ուր գոռումգոչյունով թավալվում էր լեռնային գետը, իսկ վիթխարի ապառաժները մխրճվել էին երկնքի կուրծքը: Երկմտում են՝ որտեղ կառուցեն տաճարը: Եղբայրը ծնկաչոք աղոթում է և դիմում Աստծուն:

- Տե՛ր, ցույց տուր մեղավորիս քեզ ընծայվող տաճարի տեղը:

Հաջորդ առավոտ արթնանալով քնից՝ եղբայրը տեսնում է՝ իր մուրճը դրված է հսկայաբեկոր մի ապառաժի վրա:

Սկսվում է տաժանակիր աշխատանքը: Քույր և եղբայր փորում են ապառաժը, ճեղքում են վեմը, ուղղակի քարի սրտի մեջ կառուցում հրաշալի տաճարը:

Անցնում են տարիներ: Վառվռուն երիտասարդը դառնում է ալեզարդ տղամարդ, իսկ փթթուն օրիորդը՝ սպիտակահեր ու խորշոմապատ դեմքով, ճաքճքած ձեռքերով տարեց կին: Սակայն նրանք երջանիկ էին. իրենց մարմնավորված էին տեսնում վիմափոր տաճարի յուրաքանչյուր հյուլեի մեջ: Քույր ու եղբայր սավառում են հրաշակառույց տաճարում և այնտեղ էլ կնքում իրենց մահկանացուն:

Աշխարհակալ Լենկթեմուրը լսել էր Գեղարդի վանքի հրաշագործ հատկությունների մասին: Իր անթիվ-անհամար զորքով դիմում է դեպի վանքը՝ հափշտակելու սուրբ գեղարդի նշանը: Սակայն վրա է հասնում երկնային պատիժը: Հենց որ բարբարոսները իրենց ձեռքերը մեկնում են նշանավոր սրբությանը, անմիջապես նրանց ձեռքերը գոսանում են, աչքերը՝ կուրանում, ընկնում են գետին՝ թպրտալով հոգեվարքի մեջ:

Սարսափահար Լենկթեմուրը թողություն է խնդրում Աստծուց, վանքին մեծագին ընծաներ է տալիս և անվերադարձ հեռանում նշանավոր վանքից:

ՊԼԱՆ	1. Գեղարդի վանքը:	4. Աստծո տված նշանը:
	2. Քույր ու եղբոր երազանքը:	5. Տաճարի կառուցումը:
	3. Կառուցելիք տաճարի տեղի որոնում:	6. Սուրբ տաճարի զորությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հարավ-արևելք, քառակուսի բարձունք, հազվագյուտ կոթող, աստվածային հրաշագործ զորություն, անմահ հիշատակարան, վիթխարի ապառաժ, մխրճվել երկնքի կուրծքը, տաժանակիր աշխատանք, քարի սրտի մեջ կառուցել, վառվռուն երիտասարդ, փթթուն օրիորդ, խորշոմապատ դեմք, ճաքճքած ձեռք, վիմափոր տաճար, հյուլե, կնքել մահկանացուն, աշխարհակալ Լենկթեմուր, գոսանալ, թպրտալ հոգեվարքի մեջ, անվերադարձ հեռանալ:

2. Ցուցադրել Գեղարդի վանքի նկարը:

ԳՈՂԸ

Ըստ Արամ Հայկազի

Հրաբորբ արևի տակ ննջող անանուն մի գյուղ կար: Գյուղի ծայրին՝ հարթավայրի վրա, մի հրաշք չինարի ծառ՝ առողջ և հաստարմատ: Դրա սաղարթախիտ հովանու տակ մի աղբյուր էր քչքչում:

Գյուղի ամենաուշագրավ շինությունը հավատացյալների հավաքական աշխատանքով կառուցված եկեղեցին էր: Փոքր, կոկիկ մի եկեղեցի էր, որ աղքատ էր ճիշտ այնքան, որքան գյուղը:

Բայց եկեղեցին մի գանձ ուներ: Դա ձուլյալ ոսկուց շինված Հիսուս Մանուկն էր: Այդ հրաշքը եկեղեցուն նվիրել էր մի հարուստ այրի, մի երախտագետ բարեպաշտուհի:

Այդ ընծայից գյուղը խառնվեց իրար: Ինչպե՞ս պահեն ձուլյալ ոսկե Մանուկ Հիսուսը: Ժողով արեցին, որոշեցին եկեղեցու հատակը փորել, երկաթե պահարան շինել և այնտեղ պահել գանձը: Այդպես էլ արեցին. տեղավորեցին Հիսուս Մանուկի արձանը այդ պահարանում, իսկ բանալին կախեցին քահանայի վզից: Գիշեր-ցերեկ չէր հանում երբեք այդ բանալին իր պարանոցից:

Այդ պահարանը բացվում էր Հիսուս Մանուկի ծնունդը ավետող աստղի երևալու օրը: Երեցը գյուղի մի քանի երևելու հետ բաց էր անում խորանի տակ գտնվող պահարանի դուռը, սաղմոս և շարական երգելով՝ հանում էր Հիսուս Մանուկը և հանգչեցնում խորանի աջ կողմում:

Հավատացյալները գալիս էին ծնրադրելու, մոմ վառելու և երկրպագելու Մանուկ Հիսուսին:

Մի տարի՝ Սուրբ Ծննդյան պատարագի պահին, մի կին խելագարի պես մոտ վազեց քահանային:

- Տե՛ր Հայր, տե՛ր Հայր, ու՞ր է Հիսուս Մանուկը, գողացել են, չկա, - աղաղակեց նա:

Բոլորն իրար անցան, պատարագը մնաց անավարտ: Բոթը տարածվեց գյուղում, մարդիկ խմբերի բաժանվեցին և ճամփա ընկան գտնելու Մանուկ Հիսուսը:

Գողին գտնելու բախտը մի կնոջ վիճակվեց: Նա տեսավ արևախանձ դեմքով մի մանչուկի, որն իր խաղալիք մեքենայի վրա դրել էր Մանուկ Հիսուսին և տանում էր:

Շուտով բազմություն հավաքվեց, հետո տղային իր մեքենայով և Մանուկ Հիսուսով ծնրադիր աղոթող քահանայի մոտ տարան:

- Ասա՛ ինձ, զավա՛կս, ո՞վ քեզ թելադրեց, որ գողանայիր սուրբ Մանուկը, ու՞ր էիր տանում:

- Բայց, տե՛ր Հայր, ես չեմ գողացել Մանուկը: Ես իմ խոստումն եմ կատարում, որ տվել եմ Աստվածամորը: Ես ամեն օր նրան խնդրում էի, որ ինձ մի մեքենա ուղարկի: Խոստացել էի, որ երբ խաղալիք մեքենա ունենամ, առաջինը իր Որդուն պիտի նստեցնեմ և երեք անգամ պտտեմ գյուղի շուրջը: Երկու անգամ արդեն պտտել եմ, բայց այս կինը խանգարեց, չթողեց, որ երրորդ անգամ էլ պտտեցնեմ: Չէ՞ որ խոստումը չկատարելը լավ բան չէ:

Քահանան հուզված և գորովով սեղմեց «գողին» իր սրտին: Ապա լռելյայն դրեց

Մանուկ Հիսուսը նրա մեքենայի վրա, իսկ ինքն էլ ընկերացավ ողային, որ խոստացված շրջանը կատարեն գյուղի շուրջը:

Շուտով ողջ գյուղը միացավ քայլողներին: Սկսեց հնչել եկեղեցու կոչնակը: Դաշտերը լցվեցին քաղցր ու խաղաղ ղողանջներով:

Գյուղը երջանիկ էր:

ՊԼԱՆ

1. Աննշան գյուղը:
2. Գյուղի եկեղեցին:
3. Եկեղեցու զանգը:
4. Սրբապղծություն Սուրբ Ծննդի օրը:
5. Մանչուկն ու իր տված խոստումը:
6. Երջանիկ գյուղը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հրաբորբ արևի տակ ննջող, հրաշք չինարի ծառ, սաղարթախիտ հովանի, ամենաուշագրավ շինություն, ձույլ ոսկուց շինված, երախտագետ բարեպաշտուհի, ծնունդը ավետող աստղ, խորանի տակ գտնվող, սաղմոս և շարական երգել, հանգչեցնել, ծնրադրել, երկրպագել, արևախանձ դեմք, ծնրադիր աղոթող, գորով, լռելյայն, կոչնակ, քաղցր և խաղաղ ղողանջներ:

*2. Բացատրել **սաղմոս և շարական** բառերը:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Արամ Հայկազը սփյուռքահայ գրող է: Ծնվել է 1900 թվին Շապին-Գարահիսարում: Մեծ եղեռնի օրերին ապաստանել է Շապին-Գարահիսարի բերդում, մասնակցել նրա հերոսամարտին: 1924 թվից հաստատվել է ԱՄՆ-ում: Հրատարակել է «Ցեղին սիրտը», «Չորս աշխարհ», «Պանդոկ», «Կարոտ» ժողովածուները:*

ԽՈՍՔԻ ՈՒԺԸ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Ժամանակով մի արքա էր ապրում՝ Ամանակ անունով: Տարեվերջին այս արքան կանչում է պալատականներից մեկին և ասում.

- Գնա՛ և մտածի՛: Մի այնպիսի բա՛ն արա, որ Նոր տարվա խնդությունը մարդկանց հերիքի մինչև տարեվերջ: Եթե հաջողվի, թագավորությանս կեսը կնվիրեմ քեզ:

Պալատականը մտածում է, մտածում և գործի անցնում: Քաղաքից գյուղ է գնում, գյուղից քաղաք ու ամենքին խորհուրդ տալիս, թե ինչպես տոնեն Ամանորը:

Ամբողջ երկրով մեկ բոցկլտում են խարույկները, թոնիրներից ձգվում է կապտերից ծուխը: Մարդիկ թարմ, անուշաբույր լավաշ են թխում, զանազան համադամ խորտիկներ ու աղանդերներ պատրաստում:

Նոր տարին սկսվում է խելահեղ խրախճանքով ու գինարբուքով:

Մի քանի ամիս հետո Ամանակը իր իմաստուն խորհրդականին ասում է.

- Գնա՛ մարդկանց մեջ, իմացի՛ր, թե ով է մոռացել Նոր տարվա խնդությունը:

Իմաստունը շրջում է երկրում, վերադառնում արքունիք և արքային զեկուցում գլխիկոր.

- Արքա՛, ամենքն էլ մոռացել են Նոր տարվա խնդությունը: Հազար հոգս ու ցավի մեջ կորել է երեկվա կերածի հիշողությունը:

Նորից տարեմուտ է գալիս: Ամանակ արքան այս անգամ կանչում է երկրորդ դրանիկին:

- Գնա՛ և մտորի՛ր, - ասում է նա, - մի այնպիսի միջոց գտի՛ր, որ Նոր տարվա խնդությունը մարդկանց մեկ տարի հերիքի:

Երկրորդ պալատականը շրջում է երկրով մեկ, մարդկանց սովորեցնում, թե ինչպես դիմավորեն Ամանորը: Այս անգամ ընտիր ուտեստներից բացի, մարդիկ տոնածառ են զարդարում, երգում են ու պարում, մրցում են նժույգավարությամբ և նետաձգությամբ, համբուրում են, ում կամենում են:

Անցնում են Նոր տարվա տոնախմբության բուռն օրերը: Իմաստունը շրջում է մարդկանց մեջ և գլխիկոր ետ գալիս պալատ:

- Ոչ ոք ոչինչ չի հիշում տոնախմբությունից: Հազար ցավ ու հոգս ունեն, համբույրի պատճառած խնդությունն ինչ է, որ ծղվի նավասարդից նավասարդ:

Հաջորդ տարեմուտին արքան կանչում է իր իմաստուն խորհրդականին և նույն պատվերը տալիս:

Իմաստունն իսկույն ճամփա է ընկնում, շրջում գյուղից գյուղ, քաղաքից քաղաք ու ամեն մարդու մի ջերմ, հոգեպարար խոսք ասում:

Անցնում է որոշ ժամանակ, Ամանակ արքան ինքն է որոշում շրջել ժողովրդի մեջ, հարցուփորձ անել:

- Իմաստունի հոգեհմա խոսքը ուրախ ու զվարթ է պահում մեր սիրտը, - ամենուր ասում են մարդիկ, - ոչ մի բան չի կարող մարդու խնդությունը տևական դարձնել, ինչպես սրտալի խոսքը:

Զարմանում է արքան և վերադառնում արքունիք: Տարեվերջին նորից է շրջագայում իր երկրում. տեսնում է՝ մարդիկ ուրախ են ու զվարթ: Իմաստունի սրտալի խոսքը դեռ ապրում էր նրանց հիշողության մեջ:

- Գտե՛ք իմաստունին, - բացականչում է արքան, - թող գա, ստանա իմ թագն էլ, գահն էլ:

Սակայն իմաստունին չեն գտնում արքունիքում: Ամանակին հայտնում են, որ իմաստունը ժամանակ չունի թագ ու գահի մասին մտածելու, որովհետև բարի խոսք է տանում նաև մյուս տերություններում ապրող մարդկանց:

ՊԼԱՆ

1. Ամանակ արքան:
2. Տարեմուտին տված նրա պատվերը:
3. Առաջին պալատականը ժողովրդի մեջ:
4. Երկրորդ դրանիկի այցը ժողովրդին:
5. Իմաստունի սրտալի խոսքը:
6. Թագավորի զարմանքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Նոր տարի, Ամանոր, կապտերիզ ծուխ, համադամ խորտիկ, աղանդերներ, խնկահեղ խրախճանք, Նոր տարվա խնդություն, հազար ցավ ու հոգս, տոնախմբության բուռն օրեր, տարեմուտ, ջերմ, հոգեպարար խոսք, հարցուփորձ անել, խնդությունը տևական դարձնել, սրտալի խոսք, ապրել հիշողության մեջ, թագ ու գահի մասին մտածել, բարի խոսք տանել:

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Կիլիկյան Հայաստանում տասներեքերորդ դարում ապրում և ստեղծագործում էր Թորոս անունով մանրանկարիչը: Նրա անունը թնդում էր ողջ Հայաստանով մեկ: Թորոսի շնորհիվ հայտնի էր դարձել նաև Հռոմկլայի վանքը, որի գրչատանը ապրում էր նկարիչը:

Մի անգամ Իտալիայի Վենետիկ քաղաքից Կիլիկյան Հայաստան է գալիս մի վաճառական: Նա իր հետ բերել էր իր չքնաղ դստերը: Հպարտ իր գեղեցկուհի աղջկանով՝ իտալացին ներկայանում է Թորոսին: Նա խնդրում է պատկերահանել իր դստերը:

- Պահանջի՛ր ցանկացածդ վարձը, անվանի՛ վարպետ, - դիմում է նրան վաճառականը:

Թորոս նկարիչը գերված ու հմայված նայում է գեղանի իտալուհուն, զննում և ուսումնասիրում է վարպետի աչքով և ասում.

- Եկե՛ք երկու օր հետո:

Վաճառականը շնորհակալություն է հայտնում, հրաժեշտ տալիս և ուրախ-ուրախ վերադառնում իր օթևանը:

Պայմանավորված օրը վաճառականը զուգված-զարդարված դստերը բերում է մեծ նկարչի մոտ: Աղջիկը պատրաստվել էր, նույնիսկ հետը նախաճաշ էր վերցրել: Գիտեր՝ ժամերով նստելու էր վարպետի դիմաց, որպես բնորդուհի: Նա հայելու առջև նույնիսկ փորձ էր արել, թե ինչ դիրքով, դեմքի ինչ արտահայտությամբ պետք է ներկայանա նկարչին:

Բայց Թորոսը նրանց անակնկալի է բերում: Նա սիրալիր ողջունում է իր հյուրերին: Ապա խնդրում, որ մոտենան նկարակալին: Նա վերցնում է օթոցը, և հոր ու աղջկա զարմացած հայացքի առջև հառնում է գեղեցկուհի իտալուհին՝ իր ողջ պերճանքով ու շքեղությամբ:

- Սքանչելի է, - բացականչում է վաճառականը, - ապշել կարելի է: Դու ինչպե՞ս կարողացար, մի անգամ նայելով, այսքան ճշգրիտ պատկերել աղջկաս: Աստվա՛ծ վկա, զմայլանքից ես կորցնում եմ գլուխս: Քո նկարն ավելի է նման աղջկաս, քան աղջիկս՝ ինքն իրեն: Սիրելի՛ վարպետ, քո նկարն ավելի թանկ արժե, քան իմ ամբողջ կարողությունը:

Թորոսը մեղմ ժպիտով լսում էր իտալացու գովեստն ու հիացական բացականչությունները:

- Այս նկարի դիմաց ես ոչինչ չեմ պահանջում, - հանգիստ ասում է նկարիչը:

- Ինչու՞, - զարմանում է իտալացի վաճառականը:

- Նկարչի համար մեծ երջանկություն է բնական գեղեցկությունը հավերժացնելը: Քո դուստրը լուսեղեն էակ է, քայլող կանթեղ է, ռոշն է, ռոշնական կանթեղ:

Վաճառականը չգիտեր, թե ինչպես հայտներ իր շնորհակալությունը: Թորոսի գործածած **ռոշն** բառը նրան շատ էր դուր եկել: Նա Թորոսին սկսում է **Ռոշն** կոչել, որը նա արտասանում էր «Ռոսլին» ձևով:

Ի պատիվ հայ նկարչի՝ վաճառականը իր նավը անվանում է «Թորոս Ռոսլին»:

Այդ անունով էլ հանճարեղ մանրանկարիչը հայտնի դարձավ աշխարհին:

ՊԼԱՆ

1. Թորոս անունով մանրանկարիչը:
2. Իտալացի վաճառականն ու նրա գեղանի դուստրը:
3. Իտալացու խնդրանքը:
4. Նկարչի պատրաստած անակնկալը:
5. Վաճառականի հիացմունքը:
6. Ռոշնական կանթեղը:
7. Իտալացու կնքած մականունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Կիլիկյան Հայաստան, տասներեքերորդ դար, մանրանկարիչ, Հռոմկլայի վանք, Իտալիայի Վենետիկ քաղաք, պատկերահանել, ուրախ-ուրախ, զուգված-զարդարված, բնորդուհի, անակնկալի բերել, նկարակալ, օթոց, հառնել, պերճանք ու շքեղություն, գմայլանք, հիացական բացականչություններ, լուսեղեն հակ, քայլող կանթեղ, ռոշն, ռոշնական կանթեղ:

2. Ցուցադրել Թորոս Ռոսլինի մանրանկարների վերատպությունները:

Բառի բացատրություն

Ռոշն - ռոշնական - լուսավոր, պայծառ, լուսավառ

ԿՈՄԻՏԱՍԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Ըստ Վլադիմիր Վարդանյանի

Հազար ինը հարյուր վեց թվականին էր. Կոմիտասը ուղևորվեց Փարիզ՝ աշխարհի արվեստների կենտրոնը: Ֆրանսիայի մայրաքաղաքը յուրօրինակ փորձաքար էր այն արվեստագետների համար, որոնք ձգտում էին համաշխարհային հռչակ ձեռք բերել: Ինչպե՞ս կընդունեն երաժշտական հրավառություններից հղփացած վիթխարի քաղաքը մի անհայտ ժողովրդի անհայտ զավակի երգը:

Կոմիտասն օրնիբուն աշխատում էր՝ գիտակցելով, որ իր արվեստով օտար ունկնդրին պատկերացում պիտի տա Հայաստանի և հայ ժողովրդի՝ մինչ այդ աշխարհին անծանոթ մշակույթի մասին:

Լեփ-լեցուն է Փարիզի ամենամեծ դահլիճներից մեկը. բազմահազար մարդկանց մեջ են նաև ֆրանսիացիների այն ժամանակվա կուռքերը՝ Դեբյուսին, Ռավելը, Ռոմեն Ռոլանը և այլք: Մեկը մյուսի հետևից բեմ են բարձրանում համընդհանուր ճանաչում ունեցող երգիչներ, դաշնակահարներ, ջութակահարներ՝ արժանանալով բուռն ծափողջույնների:

Հերթը Կոմիտասինն էր: Դահլիճը մի երկվայրկյան ապշեց, երբ բեմ մտավ մի հոգևորական՝ սև սքեմով ու վեղարով: Ի՞նչ էր անելու նա, ինչպե՞ս պիտի դիմանար համաշխարհային աստղերի մրցակցությանը:

Արտաքուստ հանգիստ՝ Կոմիտասը կանգնեց դաշնամուրի մոտ՝ ներքուստ զգալով թպրտացող սրտի տրոփյունը: Ու կարկաչեց երգը…: Մեղմահնչյուն, թավշային թրթիռով բխում էր վշտի երգը՝ ցողված արյուն-արցունքով, պատմում իր տանջալլուկ ժողովրդի դժխեմ բախտի մասին, և բեկբեկվում էին ևևէջները՝ թափանցելով ունկնդիրների հոգու գաղտնարանները: Դահլիճն ապշանքից քարացել էր,

թվում էր՝ օրորուն նիրհ էր իջել ամենքի վրա, ընդարմացնող նիրհ: Հետզհետե թախծահնչյուն երգի հնչյունները մարեցին դահլիճի կամարների տակ:
Ու հանկարծ պայթեց քար լռությունը՝ տեղը զիջելով պոռթկուն հիացմունքին և որոտընդոստ բացականչություններին: Մարդիկ հոտնկայս ծափահարում էին՝ ծաղկեփնջերով ու «բռավոներով» վարձահատույց լինելով անսովոր երգչին:
Իսկ երբ աշխույժ քայլերով բեմ բարձրացավ Փարիզի պաշտամունքը՝ Դեբյուսին, սրահով մեկ շշուկ անցավ:
Մոտենալով Կոմիտասին՝ Դեբյուսին խոնարհվեց և ասաց.
- Հա՛յր Կոմիտաս, խոնարհվում եմ ձեր հանճարի առջև:
Ապա դառնալով դեպի դահլիճը՝ խոսեց հուզված.
- Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ, որ նա համարվեր աշխարհի մեծագույն երաժիշտներից մեկը:

ՊԼԱՆ

1. Արվեստի համաշխարհային կենտրոնը:
2. Համերգասրահում:
3. Սև սքեմով երաժիշտը:
4. Երգ՝ հայ ժողովրդի բախտի մասին:
5. Երգի ուժը:
6. Դեբյուսին Կոմիտասի մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) յուրօրինակ փորձաքար, համաշխարհային հռչակ, հղփացած, օրնիբուն աշխատել, օտար ունկնդիր, բուռն ծափողջույններ, երկվայրկյան, սև սքեմ, վեղար, մեղմահնչյուն, թավշյա թրթիռ, տանջալլուկ ժողովուրդ, դժխեմ բախտ, ելևէջներ, հոգու գաղտնարաններ, ապշանքից քարանալ, օրորուն նիրհ, ընդարմացնող նիրհ, լռությունը պայթել, հոտնկայս ծափահարել, «Անտունի» երգը.

բ) հետևյալ հատուկ անունները.
Դեբյուսի, Ռավել, Ռոմեն Ռոլան:

ՄԱՐԿ ՏՎԵՆ

Ըստ Միրիամ Մեյսոնի

Ամերիկացի գրող Մարկ Տվենին բոլորն են ճանաչում: Նրա գրքերը հափշտակությամբ են կարդում թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Նրա փառքը հասել է մինչև Հաննիբալ փոքրիկ քաղաքը, որտեղ անցել է մեծ գրողի մանկությունը: Քաղաքի բնակիչները լավ էին հիշում փոքրիկ, գանգրահեր Սեմուել Կլեմենսին: Նրանք հպարտությամբ միմյանց պատմում էին, որ հռչակավոր գրող Մարկ Տվենը հենց ինքը՝ Սեմուել Կլեմենսն է:

Նշանավոր գրողի երևակայությունը երբեք էլ չի խամրել: Հասուն տարիքում էլ նա նույն երեխան էր, որն իր ավազակախմբի գլուխն անցած՝ արշավում էր ճմերուկ գողանալու, քաղաքից դուրս գտնվող մի քարանձավում գանձ էր որոնում: Սա այն տղան էր, որը խենթի պես սիրում էր գետ, որը երազում էր շոգենավով լողալու և լոցման դառնալու մասին:

Մարկ Տվենի գրքերը այնպես լավ ու ճշմարտացի են գրված, որ ամեն ոք, ով կարդում է, ընդմիշտ հիշում է նրա հերոսներին: Ասես ինքն անձամբ ծանոթ է այդ պատանիներին, եղել է մեծ գետի ափին՝ այդ փոքրիկ երազային քաղաքում: Նշանավոր գրողը իր գրքերում պատմում է իր մանկական խաղերի ու չարաճճիությունների մասին:

Միսսուրիի նահանգի Հաննիբալ քաղաքի բնակիչները խոր ակնածանքով են վերաբերվում իրենց հայրենակցի հիշատակին:

Քաղաքի կենտրոնում՝ բլրի գլխին, կանգնած է Մարկ Տվենի արձանը: Քարայրը, որտեղ նա մի ժամանակ իր ընկերների հետ գանձ է փնտրել, այժմ կոչվում է «Մարկ Տվենի քարանձավ»: Քաղաքում նրա անունով կա փողոց և պողոտա: Կլեմենսների տունը խնամքով պահպանվում է. ամեն օր այստեղ բազմաթիվ այցելուներ են գալիս:

Հաննիբալում կա հրաշալի հուշարձան՝ նվիրված Թոմ Սոյերին և Հեքլբերի Ֆիննին: Սրանք նրա երկու նշանավոր հերոսներն են: Այս անուններով Մարկ Տվենը կոչել է իրեն և իր ընկեր Թոմ Բլենքենշիփին: Նրանք երկուսն էլ տասնմեկ տարեկան են: Նրանցից մեկը իր ձեռքին բռնել է կարթ, իսկ մյուսը՝ սատկած կատու:

Խոր ծերության հասակում Մարկ Տվենը խոստովանել է, որ իր կյանքում ամենից շատ սիրել է Միսսիսիպի գետը: Այդ է պատճառը, որ այժմ Ամերիկայում շատերը Միսսիսիպին համարում են Մարկ Տվենի գետը: Ոչ ոք նրանից լավ չի գրել մեծ գետի և նրա ափերին փռված քաղաքների կյանքի մասին:

ՊԼԱՆ

1. Ամերիկացի նշանավոր գրողը:
2. Փոքրիկ Սեմուել Կլեմենսը:
3. Մարկ Տվենի հերոսները և ընթերցողը:
4. Հաննիբալ քաղաքի վերաբերմունքը մեծ գրողի հանդեպ:
5. Մարկ Տվենը և մեծ գետը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ Հափշտակությամբ կարդալ, գանգրահեր, լողման, երազային քաղաք, խոր ակնածանք, հայրենակցի հիշատակ, քարայր, գանձ փնտրել, բազմաթիվ այցելուներ, խոր ծերության հասակ:

բ/ Մարկ Տվեն, Սեմուել Կլեմենս, Թոմ Սոյեր, Հեքլբերի Ֆինն, Հաննիբալ քաղաք, Միսսուրի նահանգ, Միսսիսիպի գետ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Մարկ Տվեն (անգլ. Mark Twen, նշանակում է չափ երկու) - խորաչափի այսպիսի նշումը հուշում էր, որ գետը շոգենավի համար նավարկելի է, այսինքն՝ ունի անհրաժեշտ խորություն:*

ՇԱՀ - ԱԲԱՍՆ ՈՒ ՀԱՅԸ

Ըստ Սերո Խանզադյանի

Սպահան քաղաքի փողոցներով անցնում էր ահեղ Շահ-Աբասը՝ բազմած իր երիվարին: Փողոցում բոլորը ծնկի էին գալիս, ճակատները հպում հողին, երկյուղից կիսամեռ՝ սպասում շահի հրամանին:

Այդ պահին մի հայ, որը սաստիկ գինով էր, ճոճվելով մոտենում է, բռնում շահի ձիու պախուրցը ու գոչում.

- Ի՞նչ արժե ձիդ, ո՜վ Շահ-Աբաս: Ձիդ ծախի՛ր, առնեմ...

Շահի զինվորները թափվում են գինովցած հայի վրա, ուզում են գլխատել այդ հանդուգն մարդուն: Սակայն շահը հրամայում է նրան տանել իր տունը, իսկ առավոտ վաղ բերել պալատ:

Նրա հրամանը կատարվում է: Հայի գինովությունն անցնում է, և սարսափով հասկանում է, որ իր վերջը եկել է: Նա պատմում է կնոջը իր գլխին եկած փորձանքը:

Ողջ գիշեր մարդ ու կին աչք չեն փակում: Մտածում են, թե ինչ պատասխան տան շահին:

Առավոտյան կինը ամուսնու գրպանը դնում է մի շիշ գինի և ճանապարհում պալատ:

Հային կանգնեցնում են շահի առաջ:

- Քանիսո՞վ ես ուզում գնել ձիս, ո՜վ հայ...

Հայը շտապով գրպանից հանում է գինու շիշը, դնում շահի ոտքերի մոտ, գլուխ է տալիս ու ասում.

- Շահն ապրած կենա, ես չեմ ձիդ գնողը: Գնորդը այս գինին է, դու էլ վաճառողն ես: Ես միայն միջնորդի դեր եմ կատարում: Հաշտվեցե՛ք իրար հետ դու և գինին:

Շահը բարձրաձայն ծիծաղում է, մի պահ մտածում և բաց թողնում սրամիտ հային:

ՊԼԱՆ

1. Շահ-Աբասը Սպահանի փողոցներով անցնելիս:
2. Հպատակների երկյուղը:
3. Գինով հայը:
4. Շահի հրամանը:
5. Անքուն գիշեր:
6. Սրամիտ պատասխան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Սպահան քաղաք, Շահ-Աբաս, երիվար, երկյուղից կիսամեռ, պախուրց, հանդուգն մարդ, սրամիտ հայ:

2. Վերհիշել, դասարանում կարդալ (արտասանել) Հովհաննես Թումանյանի «Թագավորն ու չարչին» ստեղծագործությունը:

ԳԻՆԻ

Ըստ Վարդան Այգեկցու

Թագավորն ուներ մի որդի: Սա պարկոտ ու անբան էր: Սիրում էր միայն խրախճանք անել և գինի կոնծել: Ամեն գիշեր նա խիստ հարբած էր գալիս տուն, հաճախ նրան բերում էին թևերն ընկած:

Մի օր էլ Թագավորի նախարարներից մեկը տանում է արքայազնին իր տունը, ճոխ գինարբուք կազմակերպում և պատվում ապագա Թագավորին: Թագավորի տղան այնքան էր խմել, որ նրան հազիվ հասցնում են իր անկողնուն: Սակայն գիշերվա մի ժամի տղան դուրս է գալիս տնից, մոլորվում է, ընկնում աղբանոցը: Այդպես էլ մեռնում է աղբ ու կեղտի մեջ՝ առանց ուշքի գալու:

Թագավորը սաստիկ վշտանում և հրովարտակ է արձակում, որ իր հպատակները արմատահան անեն որթատունկերը, կոտրեն գինու կարասները: Մահվան սպառնալիքով Թագավորը վերացնում է խաղողն ու դրանից ստացվող գինին:

Այդ տերության ծայրամասում մի խեղճ այրի կին էր ապրում: Նա իր մինուճար որդուն առավոտ և երեկո մի-մի գավաթ գինի էր տալիս: Այս կինը իր նկուղում պահել էր գինով լի մի կարաս:

Մի գիշեր այրի կնոջ տղան մի առյուծի պատահեց և սպանեց նրան: Պարզվեց, որ դա Թագավորի առյուծն էր, որ փախել էր արքունիքից:

Առավոտյան Թագավորը հրաման արձակեց.

- Ինձ մոտ Թող գա առյուծին սպանողը: Եթե գա և պատմի, Թե ինչպես է սպանել, նրան չեմ պատժի:

Թագավորի մոտ եկան այրի կինը և նրա որդին: Տիրակալի այն հարցին, Թե ինչպե՞ս սպանեց առյուծին, այրի կնոջ տղան պատասխանեց.

- Գիշերով գրոսնում էի, երբ այդ գազանը դեմս ելավ, հարձակվեց ինձ վրա: Ես էլ սպանեցի նրան:

- Բարի՛ կին, ինչո՞վ ես սնուցել քո քաջարի որդուն:

- Գինով, տե՛ր արքա, գինով, որ դու արգելել ես, - ասաց կինը և անկեղծորեն պատմեց իր Թաքցրած կարասի և գինու մասին:

Ուշադիր լսեց արքան, միտք արեց և հրաման արձակեց.

- Այգի տնկեցե՛ք, խաղող աճեցրե՛ք, հնձան կառուցե՛ք, գինի խմեցե՛ք, բայց այնպես խմեք, որ առյուծ սպանեք և ոչ Թե աղբանոցում մեռնեք:

ՊԼԱՆ

1. Թագավորի չվայտ որդին:
2. Մահ աղբանոցում:
3. Վշտահար Թագավորի հրամանը:
4. Այրի կինն ու նրա որդին:
5. Թագավորի առյուծին սպանողը:
6. Այրի կնոջ խոստովանությունը:
7. Թագավորի նոր հրամանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

խրախճանք անել, հրովարտակ արձակել, որԹատունկ, մինուճար որդի, արքունիք, քաջարի որդի, հնձան կառուցել, գինի խմել, առյուծ սպանել, աղբանոցում մեռնել:

- *2. Բացատրել **հրովարտակ, հնձան** բառերը:*

ԿՈՒՅՐ ԽԱԲԵԲԱՆ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Մի այր ու կին, իրենց էշը հեծնած, դեպի Բիթլիս էին գնում: Ճանապարհին նրանց մի կույր հանդիպեց:

Ամուսինն ասաց կնոջը.

- Աստված քեզ երկու աչք է տվել, իսկ այդ խեղճին՝ ոչ մեկը: Էշից իջի՛ր, թող կույրը նստի:

Կինը պատասխանեց.

- Խաբեբայի մեկն է, կույր է ձևանում: Արի գնանք, գործ չունենք հետը:

Բայց ամուսինը համառեց, կնոջն իջեցրեց, կույրին առավ իր ավանակի վրա: Կինը ոտքով էր գնում, տղամարդիկ՝ էշի վրա բազմած: Վերջապես հասան Բիթլիս:

Ամուսինը կույրին խնդրեց, որ իջնի էշից, որովհետև քաղաք էին հասել:

- Ինչպես թե իջնեմ: Եթե էշիս և ինձ բլուրների միջով մինչև Բիթլիս ուղեկցեցիք, ուրեմն հիմա էշս պիտի խլե՞ք ինձանից:

Կինը, կանխազգալով մոտալուտ վտանգը, միայն հառաչում էր: Ամուսինը ցածր ձայնով դարձյալ խնդրեց իջնել իր սեփական էշից: Կույրը ձայնը գլուխը գցեց, ահագին բազմություն հավաքվեց: Ամբոխի համակրանքը, բնականաբար, կույրի կողմն էր:

Ամուսինը կնոջն ասաց.

- Դու ճիշտ էիր: Ես սխալվել եմ: Արի մեր էշը տանք այս խարդախին, գնանք:

Նրանք դեռ մի քայլ չէին արել, երբ կույրը աղաղակեց.

- Չէ՛, ինձ չես կարող խաբել: Սրան տեսեք՝ քիչ առաջ ուզում էր էշս ինձանից խլել, հիմա էլ՝ սեփական կնոջս: Ա՜խ, կանայք, կանայք... Հենց որ երկուաչքանի մեկին տեսավ, խելքը գնաց, էլ ինձ չի հավանում... Իր խեղճ, կույր ամուսինը սրտով չէ...

Կինը աճաբեկված արդարանում էր, ամուսինը վրդովմունքից կարմրել էր:

Ամբոխը կույրին հավատաց: Չէ՞ որ նա կույր էր ու խեղճ: Իսկ մարդիկ կարեկցում էին խեղճին:

Գործը տվին դատարան: Դատավորը երեքին էլ լսեց, բայց չկարողացավ անազնիվը ազնիվից զատել:

Դատավորը ճարահատյալ հրամայեց.

- Սրանցից յուրաքանչյուրին առանձին սենյակում փակեցե՛ք: Հետևեցե՛ք, թե ինչ են անում, առավոտյան ինձ հայտնեցե՛ք:

Այդպես էլ արին: Երբ կույրը մենակ մնաց, սկսեց ժպտալ, մռռացավ, որ կույր է: Պարեց, երգեց և ինքն իրեն խոսեց. «Էշը խլեցի այդ հիմարից: Եթե կարողանամ կնոջն էլ խլել, կյանքս հրաշալի կդասավորվի»:

Միամիտ ամուսինը հայհոյում էր ինքն իրեն, որ այդքան թեթևամիտ է եղել: Իսկ խեղճ կինը լուռ արտասվում էր:

Առավոտյան դատավորը կույրին գնդան նետել տվեց, իսկ այր ու՛ կին, իրենց էշը հեծնած, գնացին տուն:

ՊԼԱՆ

1. Այր ու կին Բիթլիսի ճանապարհին:
2. Կույրը:
3. Ամուսինը խղճում է կույրին:
4. Բիթլիս քաղաքում կույրը չի իջնում էշից:
5. Կույրի երկրորդ խարդախությունը:
6. Դատավորի մոտ:
7. Մենախցերում տեղի ունեցածը:
8. Արդար վճիռ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

խաբեբա, էշի վրա բարձած, մոտալուտ վտանգ, կանխազգալ, ձայնը գլուխը գցել, ահագին բազմություն, խարդախ, երկուաչքանի, ահաբեկված արդարանալ, վրդովմունքից կարմրել, կարեկցել խեղճին, ճարահատյալ, հայհոյել, թեթևամիտ, ընդամ նստել:

ԿԱՐԱՊԸ

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Կարապը դյուրաթեք պարանոցը խոնարհեց ջրի հայելու վրա: Նա անքթիթ զննեց ինքն իրեն: Նայեց, նայեց ու հասկացավ իր մարմնով անցնող ցուրտ սարսուռի պատճառը: Ժամը հասել է, պետք է հրաժեշտ տա կյանքին:

Կարապի փետուրները զարմանալիորեն ձյունաճերմակ էին: Դրանք նույնքան գեղեցիկ էին, որքան ջահելության երազ օրերին: Նա կարողացել էր կյանքի բոլոր փորձություններից ու ձախորդություններից պատվով դուրս գալ և պահպանել փետուրների անաղարտությունն ու փայլչագեղությունը: Եվ այժմ պատրաստ է համգիստ և արժանավայել վերջակետել իր կյանքը:

Նա ճկեց գեղանի պարանոցը և սահեց դեպի լացող ուռին, որի ստվերախիտ հովանու տակ սիրում էր երբեմն հանգիստ առնել՝ պատսպարվելով ամռան տապից:

Երեկոն իջավ, և մայրամուտը լճի ջրերը ներկեց բոսոր կարմիրով:

Իրիկվա խոր անդորրի մեջ թևածեց կարապի երգը: Առաջ նա երբեք չէր երգել այդքան հոգեցունց: Նա ոգեշնչված երգում էր բնության, երկնքի, ջրի ու հողի հանդեպ տածած իր անշեջ սիրո մասին:

- Կարապն է երգում, - շշնջացին հրաժեշտի երգով հմայված ձկներն ու թռչունները, հանդ ու անտառի մնացած բնակիչները: - Մեռնող կարապն է երգում:

Թախծանուշ երգը դեռ երկար ժամանակ լսվում էր շրջակայքում և մարեց միայն արևի վերջին շողերի հետ:

ՊԼԱՆ

1. Կարապի մարմինը պատած սարսուռը:
2. Պատվով անցած կյանք:
3. Դեպի լացող ուռենին:
4. Երգ իրիկվա մեջ:
5. Մեռնող կարապի երգը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

դյուրաթեք պարանոց, անքթիթ զննել, ցուրտ սառույց, ձյունաճերմակ փետուրներ, երազ օրեր, անպարտություն և փայլչադեղություն, վեջակետել կյանքը, ճկել, լացող ուռի, սավերախտ հովանի, բոսոր կարմիր, հոգեցունց երգել, անշեջ սեր, թախծամուշ երգ:

2. Նախօրոք կարդալ և պատմել միջնադարի նշանավոր նկարիչ, քանդակագործ Լեոնարդո դա Վինչիի մասին:

3. Ցուցադրել Լեոնարդո դա Վինչիի կտավների վերատպություններից մեկ-երկուսը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Լեոնարդո դա Վինչին (1452-1519) Վերածննդի դարաշրջանի իտալացի նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, գիտնական, ինժեներ է: Գրել է նաև հեքիաթներ և փոքրիկ պատմվածքներ:

ՎԱԽԻ ԱՉՔԵՐԸ ՄԵԾ ԵՆ

Ըստ Լեոնարդո դա Վինչիի

Անտառում սարսափելի իրարանցում էր ընկել: Բոլոր բնակիչները, անգամ ամենախիզախներն ու խորամանկները, չէին կարողանում գլխի ընկնել, թե որտեղից էր գալիս այդ փորձանքը: Բավական էր՝ մեկը հայտնվեր հաստաբուն ու սաղարթախիտ ծեր ծառի մոտ, հաջորդ վայրկյանին ահասարսուռ փախչում էր: Շշուկներ էին շրջում, թե անտառում ահռելի մի հրեշ է հայտնվել, որը շուտով անտառի բնակիչների վերջը տալու է:

Գազանները հավաքվեցին խորհրդի: Շատ խոսեցին, քննարկեցին, վերջը դիմեցին աղվեսին.

- Դու մեր մեջ ամենախորամանկն ու ճարպիկն ես: Ողորմա՛ծ եղիր, պարզի՛ր, թե այդ ի՞նչ գազան է, այդ ի՞նչ պատուհաս է բնակվում ծառի մեջ:

Աղվեսը շատ շոյվեց նման վերաբերմունքից, թույլ չավեց, որ երկար համոզեն: Սակայն աղվեսը այնքան էլ միամիտ չէր, որ հանուն համրային բարօրության՝ սեփական կաշին վտանգի ենթարկեր:

Շեկլիկ խաբեբան դիմեց իր ընկերուհու՝ կաչաղակի օգնությանը: Կաչաղակը վախվխելով թռավ դեպի ծառը, թեթևակի զննեց և թանձր սաղարթի արանքից նկատեց երկու վառ ճրագ: Նա լսեց նաև, թե ինչպես մեկը վրա-վրա թևերն է թափահարում:

Կաչաղակի լեղին վախից ջուր կտրեց:

Աղվեսն անմիջապես հավաքեց բոլոր գազաններին և հայտնեց.

- Մեծ աղետ է եկել մեր մայր անտառի գլխին, բարեկամնե՛ր: Հայտնվել է յոթգլխանի մի հրեշ: Առայժմ դեռ ոչ ոք չի տեսել նրա բազմաժանիք երախը, չի լսել նրա ահեղ մռնչյունը: Բայց...

Ասաց աղվեսը և սուսուփուս բռնեց հարևան անտառի ճանապարհը: Մյուս գազանները գլխահակ հետևեցին նրան:

Իսկ ծեր կաղնու վրա՝ սաղարթների խորքում, նստել էր մեծակն բվեճը և տարակուսում էր, թե ինչո՞ւ անտառը միանգամից դատարկվեց, ո՞ւր կորան բոլոր գազանները:

Իրավ է ասված՝ վախի աչքերը մեծ են:

Երբ Արեսը արձակեց մահվան աստծուն, նա դուրս կորզեց Սիզիփոսի հոգին և տարավ Հադեսի խավարչոտ թագավորությունը:

Բայց այստեղ էլ երբ գտավ խորամանկ Սիզիփոսը: Նա նախօրոք կնոջը պատվիրել էր, որ վերջինս չթաղի իր մարմինը և զոհեր չմատուցի ստորերկրյա թագավորության աստվածներին:

Սիզիփոսի կինը սրբությամբ կատարեց ամուսնու պատվերները: Հադեսի թագավորությունում երկար սպասեցին թաղման ծիսակատարություններին: Ի վերջո, Սիզիփոսը եկավ Հադեսի մոտ և խնդրեց՝ թույլ տա վերադառնալ դեպի լուսավոր երկիր:

- Կհրամայեմ կնոջս, որ քեզ առատ զոհեր մատուցի և կրկին հետ կգամ, - ասաց խաբեբան:

Հադեսը հավատաց նրան և թույլ տվեց, որ վերադառնա իր տունը: Սիզիփոսը ուրախ-ուրախ տուն հասավ և իր շքեղազարդ պալատում խնդագին խրախճանք կազմակերպեց: Նա ուտում-խմում էր, երգում-պարում և իր գլուխն էր գովում, թե ինքը միակն է բոլոր մահկանացուներից, որ կարողացել է վերադառնալ ստվերների խավարամած թագավորությունից:

Ահեղորեն զայրացավ Հադեսը, որոտաց, ցնցեց գետինը և նորից ուղարկեց մահվան աստծուն Սիզիփոսի հետևից: Հիմա արդեն ոչինչ չէր կարող օգնել խաբեբային: Նա ընդմիշտ անցավ ստվերների աշխարհը:

Երկրի վրա կատարած իր սև գործերի, խաբեությունների և կեղծարարությունների համար շատ ծանր պատիժ է կրում Սիզիփոսը:

Նա մի վիթխարի քարաբեկոր է գլորում սարնիվեր: Տառապագին աշխատանքից նա տանջահար է, քրտինք է կաթում ճակատից ու լցվում աչքերը: Լեռնագագաթն ավելի ու ավելի է մոտենում. մի ճիգ ևս, և իր ավարտին կհասնի ծանր գործը: Բայց քարաբեկորը դուրս է պրծնում նրա ձեռքից և դղրդյունով գլորվում ներքև՝ իր հետևից փոշու ամպ բարձրացնելով: Եվ նորից ու նորից գործի է անցնում Սիզիփոսը:

Ահա թե ինչպես է առաջացել «սիզիփոսյան աշխատանք» արտահայտությունը: Այն այսօր նշանակում է ծանր, անօգուտ և անպտուղ գործ, աշխատանք:

ՊԼԱՆ

1. Խաբեբա Սիզիփոսը:
2. Մահվան աստծո բանտարկությունը:
3. Զևսի զայրույթը:
4. Արեսը փրկում է մահվան աստծուն:
5. Սիզիփոսի պատվերը կնոջը:
6. Նոր խորամանկություն:
7. Խրախճանք պալատում:
8. Նորից ստվերների թագավորությունում:
9. Պատիժ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ խարդախ ու խաբեբա մարդ, անբավ հարստություն, ուրախ-զվարթ, բացահայտ ծիծաղել, դժնադեմ մահվան աստված, խավար նկուղ, շանթարձակ, զնդան, աստվածների հայր, պատերազմի մեծազոր աստված, դուրս կորզել հոգին, խավարչոտ թագավորություն, նախօրոք պատվիրել, զոհեր մատուցել, թաղման ծիսակատարություններ, առատ զոհ մատուցել, շքեղազարդ պալատ, խնդագին խրախճանք, ստվերների խավարամած թագավորություն, ահեղորեն զայրանալ, ընդմիշտ անցնել, սև գործ, կեղծարարություն, ծանր պատիժ, վիթխարի քարաբեկոր, սարնիվեր լեռնագագաթ, դղրդյունով գլորվել, փոշու ամպ բարձրացնել, ծանր, անօգուտ և անպտուղ գործ:

ՈՏՔԸ ԳԵՏՆԻՆ ԽՓՈՂ ԹԻԹԵՌՆԻԿԸ

Ըստ Ռադյարդ Քիփլինգի

Այս պատմությունը Դավթի որդի Սողոմոնի մասին է: Սողոմոնը իմաստուն թագավոր էր: Նա հասկանում էր գազանների ոռնոցը, թռչունների ճռվողյունը, ձկների լռությունը, միջատների բզզոցը: Նա լսում էր գետնի տակ խոր թաղված և միմյանց հակվող ժայռերի տնքտնքոցը, հասկանում էր ծառերի շրշյունը վաղ առավոտյան:

Սողոմոնը շատ ուժեղ էր և ամենակարող: Նրա ձեռքի միջնամատին կար մի կախարդական մատանի: Բավական էր՝ պտտեր այդ մատանին, հայտնվում էին ոգիներն ու ջինները, կատարում արքայի ցանկությունները: Բայց իմաստունը շատ հազվադեպ էր դիմում մատանու օգնությանը: Նա ասում էր, որ մարդ պիտի իր բարձունքին հասնի իր իսկ խելքով և կամքի ուժով:

Մի անգամ նա ստիպված եղավ դիմել իր մատանուն: Ոչ իր համար: Ոգիների ու ջինների օգնությունը պետք եկավ՝ սատարելու մի պարծենկոտ պարոն թիթեռնիկի:

Սողոմոն իմաստունը զբոսնում էր իր պարտեզում: Նա քայլում էր շուշանների, վարդենիների միջով, հիանում հիրիկների արփիագոծ թերթիկներով: Մեկ էլ թռան եկան երկու թիթեռնիկ: Դրանք չքնաղ էին իրենց գույնզգույն թևիկներով ու նման էին թռչող ծաղիկների:

Նրանցից մեկը խիստ զայրացած ասում էր.

- Լռի՛ր, կի՛ն, մի՛ հակաճառիր ամուսնուդ: Այլապես հիմա ոտքս գետին կխփեմ, ու որոտի մեջ կանհետանան Սողոմոնի պալատն ու ապարանքը:

Սողոմոն իմաստունը, քանի որ հասկանում էր թիթեռների լեզուն, ծիծաղեց՝ լսելով պարծենկոտ այր-թիթեռնիկին: Նա մոտ կանչեց թիթեռնիկին: Սա, վախից դողալով, եկավ նստեց իմաստունի մատին:

- Պստլի՛կ, դու գիտես՝ եթե ոտքդ գետին խփես, խոտի ցողունն անգամ չես շարժի: Ի՞նչը ստիպեց այդ սոսկալի սուտն ասել կնոջդ: Նա անկասկած քո կի՞նն է:

- Այո՛, տիրակա՛լ, - թևիկները թափահարելով՝ ասաց ամուսին թիթեռը: - Նա իմ կինն է, իսկ դու գիտես, թե ի՛նչ են կանայք:

- Այո՛, գիտեմ, - հառաչեց Սողոմոնը, - դժվար է այդ քմահաճ էակներին կարգի հրավիրել:

- Այդ դեպքում, օգնի՛ր ինձ, տիրակա՛լ, - աղաչեց թիթեռնիկը:

- Լավ, գնա՛ կնոջդ մոտ և կրկնի՛ր սպառնալիքդ, - ասաց Սողոմոն իմաստունը:

Թիթեռնիկ ամուսինը թռավ իր տիկնոջ մոտ: Վեճը շարունակվեց ու բորբոքվեց: Տիկինը սոսկ ծիծաղում էր ամուսնու վրա, որ այդպես անզգորեն պարծենում է: Այդ ժամանակ ամուսինը զայրացավ և բարձրացրեց ոտիկը ու խփեց շուշանի թերթիկին:

Սողոմոն իմաստունը պտտեց մատանին, կանչեց բոլոր ոգիներին և հրամայեց գետնի տակը տանել իր ապարանքն ու պարտեզը: Ոգիները տեղնուտեղը կատարեցին նրա հրամանը: Պարտեզում մնացել էր միայն այն շուշանը, որին իջել էր թիթեռների զույգը:

Տիկին Թիթեռնիկը սկսեց անզոր թպրտալ և ողբալ.

- Ներողություն, սիրելի՛ ամուսնյակս, ես քեզ չեմ հակաճառի, միայն թե խո բեր Սողոմոնի հրաշակերտ պալատն ու պարտեզը:

Պարոն Թիթեռնիկն էլ էր սարսափել, իսկ Սողոմոնը ծիծաղից թուլացել էր: Նա մի կերպ ուշքի եկավ, մատով իր մոտ կանչեց պարոն Թիթեռնիկին և ականջին շշընջաց. «Նորից ոտքդ գետին խփի՛ր, ե՛տ բեր իմ պարտեզն ու ապարանքը: Դու արդեն լավ դաս տվեցիր կամակոր ու քմահաճ կնոջդ»:

ՊԼԱՆ

1. Դավթի որդի Սողոմոն թագավորը:
2. Նրա ամենակարող մատանին:
3. Զբոսանք պարտեզում:
4. Տեր և տիկին Թիթեռնիկների վեճը:
5. Պարծենկոտ պարոն Թիթեռը:
6. Սողոմոնը օգնում է պարոն Թիթեռին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Թռչունների ճռվողյուն, ձկների լռություն, միջատների բզզոց, ժայռերի տնքտնքոց, ծառերի շշըշյուն, սատարել, հիրիկ, արփիապօծ թերթիկ, թռչող ծաղիկ, քմահաճ էակ, հակաճառել, հրաշակերտ պալատ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ռադիարդ Քիփլինգը (1865-1936) անգլիացի բանաստեղծ և վիպասան է: 1890 թվին Լոնդոնում հրատարակվել է «Լույսը հանգավ» վեպը, որը միանգամից նրան հռչակ է բերում: Քիփլինգի հեքիաթ-պատմվածքները ստեղծվել են իր երեխաների բազմաթիվ հարցերին պատասխանելու համար:*

ՀԻՄԱՐԻ ՀԵՏ ԳՈՐԾ ՄԻ՛ ԲՌՆԻՐ

Ըստ հնդկական ժողովրդական հեքիաթի

Հնդկաստանի Բենարես քաղաքում ապրում էր մի հարուստ վաճառական՝ Սոմդութ անունով: Մի անգամ նա մեծ քանակությամբ թանկարժեք կտորեղեն գնեց և կաշվե պարկերի մեջ տեղավորելուց հետո որոշեց ծառա վարձել, որ օգներ իրեն ճամփորդության ընթացքում: Երկար փնտրելուց հետո վերջապես հանդիպեց մի հիմար մարդու, որը պատրաստ էր այդ աշխատանքը անել կես գնով: Իսկ քանի որ Սոմդութը չափազանց ժլատ էր, որոշեց խնայողություն անել և հիմարին վարձեց: «Հետո ինչ, որ նա մի քիչ խելապակաս է, - մխիթարեց ինքն իրեն վաճառականը, - վերջիվերջո մեծ խելք պետք չէ ուղտեր բարձելու և բեռնաթափելու համար, կարևորն այն է, որ փողերս չեմ վատնի»:

Եվ այսպես Սոմդութը վարձեց հիմարին:

Մի քանի մղոն ճանապարհ անցնելուց հետո նա նկատեց, որ ուղտը ուժասպառ է եղել չափից դուրս ծանր բեռից: Որոշեց ևս մի ուղտ գնել և բեռը կիսել:

- Մնա՛ այստեղ՝ ուղտի մոտ, - ասաց Սոմդութը ծառային, - և աչքդ կաշվե պարկերի վրա պահի՛ր, շատ թանկ արժեն: Անձրև որ գա, չթողնես՝ թրջվեն:

Ծառան անխոս գլխով արեց, կուչ եկավ ուղտի կողքին ու սպասեց տիրոջ վերադարձին:

Քիչ անց բարակ անձրև մաղեց, որը գնալով ուժեղացավ: Ամենախելոք բանը, որ կարելի էր անել, ուղտին մոտակա ծածկի տակ տանելն էր: Բայց ծառան ախր, շատ հիմար էր: Տերը պատվիրել էր պարկերը չոր պահել, ուրեմն այդպես էլ պետք է անել: Առանց երկար-բարակ մտածելու՝ նա բացեց պարկերը, դուրս թափեց ամբողջ թանկարժեք կտորեղենը և պարկերը խցկեց կերպասների արանքը:

Անձրևը կտրվեց նույնքան հանկարծակի, ինչպես սկսվել էր: Շուտով վաճառականը վերադարձավ՝ մեկ ուրիշ ուղտ բերելով հետը: Պատկերացնու՞մ եք նրա սարսափը, երբ տեսավ թրջված ու կեղտոտված կտորեղենը:

Վաճառականը կատաղեց.

- Այս ի՞նչ ես արել, հիմա՛ր ապուշ, - գոռաց նա:

- Տե՛ր իմ, - ասաց ծառան՝ վախից դողալով, - դու ասացիր, որ կաշվե պարկերը չոր պահեմ, ես էլ պահեցի:

Ախուվախ անելով՝ վաճառականը շվարած նստեց: «Ես եմ հիմար, ե՛ս, որ վարձեցի այս խելապակասին, - մտածեց նա խեղճացած: - Մի քիչ խնայելու համար զրկվեցի այդքան հարստությունից»:

Ու տեղնուտեղը վռնդեց ծառային՝ երդվելով, որ այլևս երբեք հիմար մարդու հետ գործ չի բռնի:

ՊԼԱՆ

1. Հարուստ վաճառականը:
2. Սոմդուլթը վարձում է հիմարին:
3. Սոմդուլթը որոշում է ևս մի ուղտ գնել:
4. Հանձնարարությունը:
5. Հիմարի արարքը:
6. Հիմարի հետ գործ մի՛ բռնիր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել բառերն ու բառակապակցությունները.*

Թանկարժեք կտորեղեն, կաշվե պարկեր, խնայողություն անել, խելապակաս, բարձել, բեռնաթափել, ուղտ, փողերը վատնել, ուժասպառ լինել, աչքը կաշվե պարկերի վրա պահել, թրջվել, կուչ գալ, երկար-բարակ մտածել, խցկել, կերպաս:

ԲԱՐԻ ՁԿՆՈՐՍԸ

Ըստ ճապոնական հեքիաթի

Մի ժամանակ Ուրասիմա Տարո անունով մի ձկնորս էր ապրում: Նա շատ բարի ու քնքուշ սիրտ ուներ: Այս Ուրասիմա Տարոն մի օր քայլում էր ծովափով և տեսնում է մի խումբ երեխաների, որոնք աղմկում էին: Նրանք բռնել էին մի մեծ կրիա և տանջում էին:

- Մի՛ տանջեք կրիային, մեղք է: Ինձ զիջեք դրան:

Տարոն փրկում է կրիային և ազատ արձակում:

Անցնում են օրեր: Ինչպես միշտ, այդ օրն էլ Տարոն նստում է նավակ, բայց ծով է դուրս գալիս՝ ձուկ որսալու:

Համկարծ մեկը ձայն է տալիս.

- Ուրասի՛մա Տարո, բարի՛ մարդ:

Ձկնորսը շրջվում է և տեսնում, որ ծովի ջրերի վրա տատանվում է մի մեծ կրիա: Նա գալիս է դեպի նավակը, գլուխ տալիս ձկնորսին և ասում.

- Ես այն կրիան եմ, որին դուք ազատեցիք: Շատ շնորհակալ եմ ձեզնից: Ի նշան երախտագիտության՝ ես ձեզ կուղեկցեմ ծովային վիշապի պալատը, ուր դուք կապրեք ուրախ, անհոգ և անմահություն ձեռք կբերեք:

Կրիան նստեցնում է Ուրասիմային իր մեջքին ու բերում ծովային վիշապի դղյակը: Պալատը շլացուցիչ էր՝ իր թանկարժեք քարերով ու երփնավառ խեցիներով: Արքայադուստրն ու ձկները դիմավորում են Ուրասիմային:

- Զգացե՛ք ձեզ ինչպես ձեր տանը, - ասում է արքայադուստրը:

Հետո հյուրասիրում են ձկնորսին ընտիր խորտիկներով և օշարակով: Հյուրասիրությանը հետևում է համերգ: Պերկեսները, տափակաձկներն ու ութոտնուկները գվարճալի պար են բռնում ձկնորսի շուրջը:

Օրերը թռչում են իրար հետևից: Ձկնորսը չի էլ նկատում, թե ինչպես է անցնում ժամանակը:

Բայց շուտով նա կարոտում է ցամաքը, իրենց գյուղը և մարդկանց: Արդեն վաղուց նա մահկանացու չէր տեսել: Նա սկսում է ավելի ու ավելի հաճախ մտածել իրենց տան, գյուղի մասին:

Տեսնելով նրա տրտմությունը՝ կրիան նորանոր զվարճալիքներ էր հորինում, որ ձկնորսին պահի իր պերճ դղյակում:

Բայց մի օր ձկնորսն արցունքն աչքին խնդրում է իրեն տուն տանել:

- Այդ դեպքում, - ասում է արքայադուստրը, - ես նվիրում եմ ձեզ այս արկղիկը: Բայց հիշեցեք՝ ինչ էլ պատահի, չբացեք սա:

Ուրասիմա Տարոն նորից նստում է կրիայի մեջքին, որը նրան ափ է հանում: Ձկնորսը գնում է դեպի իր գյուղը: Բայց գյուղն անճանաչելի էր դարձել: Չկար այն տունը, ուր մի ժամանակ ինքն էր ապրել: Չկային իր ճանաչած մարդիկ: Բոլորը զարմանքով նայում էին օտարականին, նրա հնաոճ հագուստին: Լսում էին նրա խոսքը և ավելի զարմանում: Ինչ-որ ուրիշ կերպ և այլ բառերով էր խոսում այս անծանոթը:

Խեղճ ձկնորսը այստեղ՝ մարդկանց մեջ, իրեն ավելի մենակ ու լքված էր զգում, քան ծովի հատակում:

Մի օր էլ մոռացության է տալիս արքայադստեր խոսքերը և բաց է անում արկղիկը: Արկղիկից սպիտակ ծուխ է ելնում: Հենց որ ծուխը դիպչում է Ուրասիմայի մազերին ու մորուքին, դրանք ձյան պես սպիտակում են: Ուրասիմա Տարոն ջահել տղամարդուց վերածվում է կնճռոտ ծերունու: Նա կորցնում է անմահությունը:

ՊԼԱՆ

1. Բարեսիրտ ձկնորսը:
2. Տանջահար կրիան:
3. Ազատություն:
4. Հանդիպում բաց ծովում:
5. Ծովային վիշապի դղյակում:
6. Կարոտ:
7. Վերադարձ. հուսախաբություն:
8. Կնճռոտ ծերունին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Ուրասիմա Տարո, բարի, քնքուշ սիրտ, մի խումբ երեխաներ, մեծ կրիա, գիշել, ազատ արձակել, բաց ծով դուրս գալ, ջրերի վրա տատանվել, ի նշան երախտագիտության, ծովային փիշապի պալատ, ուրախ և անհոգ ապրել, անմահություն ձեռք բերել, շլացուցիչ պալատ, երփնավառ խեցիներ, ցնծությամբ դիմավորել, ընտիր խորտիկ, օշարակ, պերկես, տափակաձուկ, ութոտնուկ, զվարճալի պար բռնել, օրերը թռչել, մահկանացու, տրտմություն, նորանոր զվարճալիքներ, պերճ դղյակ, արցունքն աչքին խնդրել, անճանաչելի դառնալ, հնաոճ հագուստ, մենակ ու լքված զգալ, մոռացության տալ, սպիտակ ծուխ ելնել, ձյան պես սպիտակել, կնճռոտ ծերունի, կորցնել անմահությունը:

ՓԱՌԱՍԵՐ ԵՂՋԵՐՈՒՆ

Ըստ Եզոպոսի

Հվոր առյուծը հիվանդացավ: Պառկեց և աղիողորմ տնքում ու տնքում էր: Իր սրտամոտ զրուցակցին՝ աղվեսին, ասաց.

- Սիրելի՛ս, սիրտս անտառում ապրող այն աժդահակի՝ եղջերվի փորոտիք ու միս է ուզում: Եթե ուզում ես, որ չմեռնեմ, բեր քարայրս այդ կենդանուն:

Աղվեսը գնաց անտառ, գտավ եղջերվին, որ ուրախ ու անհոգ թռչկոտում էր դալար խոտերի մեջ:

- Աչքդ լույս, սիրելի՛ եղջերու, մեր թագավոր առյուծը հոգու վրա է, սպասում է իր մահին: Նա սկսել է միտք անել, թե իրենից հետո ո՛ւմ դնի թագավոր: Ասում է՝ վարազը հիմար է, արջը՝ ալարկոտ, հովազը՝ տաքարյուն, վագրն էլ պարծենկոտ է: Ամենից արժանավոր թեկնածուն եղջերուն է: Եվ հասակն է բոլորից բարձր, և՛ շատ է ապրում, և՛ ահռելի եղջյուրներ ունի: Մի խոսքով՝ առյուծը քեզ չտապ կանչում է, որոշել է քեզ մի քանի խորհուրդ տալ, թե ինչպես թագավորես:

Այս խոսքերից եղջերվի գլուխը պտտվեց, փառասիրությունը մթագնեց միտքը և վազեվազ մտավ առյուծի քարայրը: Առյուծը վրա պրծավ, որ հոշոտի եղջերվին, բայց վրիպեց: Միայն եղջյուրակիր անասունի ականջները պատառոտեց: Եղջերուն նետից էլ արագ դուրս թռավ ու փախավ անտառ:

Առյուծը քաղցից ու վիրավորանքից մռնչաց, հառաչեց: Նորից դարձավ աղվեսին, որ մի կերպ եղջերվին համոզի ու իր մոտ բերի:

Աղվեսը եղջերվին գտավ անտառի մի թավուտում: Նա շունչն էր հետ բերում, իսկ ականջներից արյունն էր կաթկթում: Անամոթ աղվեսը սկսեց լեզու թափել, միևնույն ժամանակ...

ուզում էր եղջերվի ականջին շշնջալ իրենից հետո կառավարելու գաղտնիքը: Օ՜,

- Հիմա առյուծը բարկացել է քեզ վրա ու որոշել է գայլին կարգել թագավոր: Օ՜, ի՜նչ չար թագավոր է լինելու մեր գլխին: Սիրելի՛ եղջերու, փրկի՛ր մեզ, դարձի՛ր թագավոր: Արի՛ գնանք առյուծի մոտ:

Այսպես խաբեց աղվեսը եղջերուին, սրտում փառասիրական տենչեր արթնաց-

րեց և բերեց առյուծի մոտ: Այս անգամ առյուծը դիպուկ նշան բռնեց, հարձակվեց, պատառոտեց հիմար եղջերուին: Նա քեֆ արեց եղջերուի փորոտիքով ու ոսկրածուծով:

Իսկ աղվեսը, որ կողքից նայում էր, գգուշորեն մի կողմ քաշեց եղջերվի գանգը և ամբողջ ուղեղը ծծեց՝ ի հատուցումն իր ջանքերի:

Առյուծը վերջում սկսեց որոնել եղջերվի ուղեղը: Աղվեսը նրան ասաց.

- Ուղեղ ո՞վ էր տվել նման արարածի, որ մի անգամ փրկվելով՝ երկրորդ անգամ խցկվի առյուծի երախը:

ՊԼԱՆ

1. Հիվանդ առյուծի ցանկությունը:
2. Անհոգ եղջերուն:
3. Աղվեսը մոլորեցնում է եղջերվին:
4. Առյուծը վրիպում է:
5. Վիրավոր եղջերուն:
6. Երկրորդ անգամ է աղվեսը մոլորեցնում եղջերվին:
7. Առյուծի խրախճանքը:
8. Եղջերվի ուղեղը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աժդահակ, փորոտիք, հոգու վրա լինել, միտք անել, արժանավոր թեկնածու, ահռելի եղջյուրներ, փառասիրությունը մթագնել միտքը, եղջյուրակիր անասուն, նետից էլ արագ, լեզու թափել, կառավարելու գաղտնիք, կարգել թագավոր, փառասիրական տենչ, դիպուկ նշան բռնել, ոսկրածուծ, ի հատուցումն իր ջանքերի, առյուծի երախ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Եզոպոսը անտիկ աշխարհի առակախոս է:*

ՇՈՒՆԸ

Ըստ Աղասի Այվազյանի

Նա շուն էր: Արդեն մի քանի անուն էր ունեցել: Զարմանալիորեն հավատարիմ շուն էր: Գիտեր՝ երբ վազի տիրոջ առջևից, երբ՝ հետևից, երբ լիզի նրա ձեռքը, երբ ընկնի ոտքերը: Ուրիշի հաճույքը իր հաճույքն էր:

Նա չէր վախենում, որ որևէ մեկը կարող է իրեն նեղացնել. նա վախենում էր որևէ մեկին տհաճություն պատճառել: Շունը նայում էր յուրաքանչյուր մարդու աչքերի մեջ, հետևում տրամադրությանը ու համգիստ էր, երբ շուրջը գոհ էին:

Աշուն եկավ: Շունը սիրեց: Դա մանր աչքերով ճարպիկ շուն էր: Մի անգամ այդ ճարպիկ շունը սողոսկել էր տուն և մտել տիրոջ մահճակալի տակ ու գիշերել այնտեղ:

Տերը տեսավ, զայրացավ: Ճարպիկ շունը փախավ, իսկ իրեն ծեծեցին ու դուրս արին տնից: Դրսում՝ անձրևի տակ, ծեծված ու կուչ եկած շունը փորձեց հասկանալ մարդկանց, փորձեց հասկանալ այդ զարմանալի երկոտանիներին, ովքեր դաժանությամբ էին պատասխանում իր անսահման նվիրվածությանը:

Հետո տերերը նրան ներս թողին, ու շունը մոռացավ մարդկանց անողորմությունը: Նա նորից ապաքինվեց ու բարիքացավ:

Եղավ մի օր էլ, որ շունը ձագեր ծնեց: Նա երջանիկ էր, մի քիչ տխուր ու սուսուփուս երջանիկ: Աչքերը ճպճպացնում էր, հոտոտում և նայում իր ձագերին: Բայց երջանկությունը երկար չտևեց: Մթնեց երկինքը խեղճ շան գլխին. մի առավոտ վերցրին նրա ձագերին և տարան անհետացրին:

Իրար անցավ շունը, գլուխը կորցրեց: Լալիս էր, կաղկանձում, ոռնում, խնդրում տիրոջը, բացատրում էր, ինչպես կարող էր: Ասում էր, որ սխալ է նրանց արածը, լիզում տիրոջ ոտքերը: Բայց ոտքերը հրում էին նրան, և տերը թափ էր տալիս չալվարը:

Փոխվեց շունը, միանգամից փոխվեց, մոռացավ հավատարմությունը: Վերջապես հասկացավ ու պատասխան գտավ իր կասկածներին: Սկսեց հաչել բոլորի վրա, ընկել էր փողոցները, մի մայթից մյուսն էր վազում, մռռում էր, վախեցնում, ատամներն էր ցույց տալիս: Ի վերջո մի երկու հոգու չալվար պատռեց և կծեց մեկի ոտքը:

Այնքան ծեծեցին շանը, որ նա հազիվ իրեն փախցրեց ու մնաց այդպես կաղ: Շունը փախավ մարդկանցից: Հիմա նրա աչքերում միշտ արցունք կար: Պատսպարվել էր ձորի պոնկին, մարդկանցից հեռու մի վայրում:

Մի անգամ մի մերկ տղա գետից դուրս եկավ, վազեց վեր: Նա մագլցեց և հասավ ճիշտ այն ծառին, որի տակ պառկած էր շունը:

Տղան բարձրացավ ծառը և սկսեց թութ ուտել: Նա պոկում էր թութը, դնում բերանը, հետո ժպտում էր շանը և մեկ-մեկ թութ նետում նրան: Շունը սկզբում ուշադրություն չէր դարձնում: Հետո խղճաց տղային: Սկսեց բերանով բռնել թութը և դնել մի կողմ: Հետո տղան իջավ ծառից ու կանգնեց շան գլխաց: Շունը ժպտաց տղային, տղան էլ ժպտաց շանը: Հետո ընդհուպ մոտեցավ շանը և ոտքի մատներով շոյեց նրա գլուխը, ականջները, հետո՝ փորը: Շունը թուլացավ, շատ հաճելի մի ջերմություն սողոսկեց մարմինը: Նա ուզեց համբուրել տղայի ոտքը և շուռ եկավ մեջքի վրա:

Ու հանկարծ ոտքի մի ուժեղ հարված շանը նետեց ձորը:

ՊԼԱՆ

1. Հավատարիմ շունը:
2. Շան սերը:
3. Պատիժ, շան գարմանքը:
4. Մայր շունը:
5. Դժբախտություն:
6. Զարացած շունը:
7. Փախուստ մարդկանցից:
8. Թութ ուտող տղան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները*

տհաճություն պատճառել, սողոսկել, զարմանալի երկոտանի, անասահման նվիրվածություն, անդորմություն, սուսուփուս երջանիկ, կաղկանձել, ատամները ցույց տալ, պատսպարվել ձորի պոնկին, ընդհուպ մոտենալ:

ՄԱՅՐ ԱՐՋԸ

Ըստ Վախթանգ Անանյանի

Մի հովիվ հեռու սարերից իրենց գյուղն էր գնում ոտքով։ Ճանապարհին մոլորվում է, բարձրանում է մի բարձր ծառի վրա, որ դիտի շուրջը։ Տեսնում է, որ առջևում բարձր սար է՝ վրան թավ մի անտառ։ Հենց այն է, ուզում է իջնել ծառից, դիմացի լանջին տեսնում է մի արջ, որ քշելով և պատսպարելով տանում էր իր երեք քոթոթին։ Իսկ քոթոթները չէին ենթարկվում, խաղում էին իրար հետ, գզվռտվում։

Հովիվը զարմացած նայում էր, թե ումի՞ց է այդպես աճապարանքով փախչում արջը։ Հենց այդ մտքին էր, երբ ժայռի հետևից դուրս եկավ գայլերի ոհմակը և սկսեց հետապնդել արջին։ Բայց գայլն ի՞նչ կարող էր անել արջին։ Սովորաբար բրդոտ այդ կենդանին արհամարհում է գայլերին։ Սակայն այդ պահին արջը խիստ անհանգիստ էր իր ձագուկների համար։

Ձագերի հետ նա շատ արագ գնալ չէր կարող։ Մինչև արջը հարայ-հրոցով իր քոթոթներին էր քշում դեպի վեր, գայլերը առաջ սլացան և շրջապատեցին արջին։ Մայր արջը գոռաց ահից ու անզոր կատաղությունից, իր ահագին թաթերով դեսուդեն շպրտեց իր ճամփան փակողներին և ձագերին առաջն արած՝ դուրս եկավ օղակից։ Բայց նենգ գազանները մտադրվել էին մորից խլել ձագուկներին, ուստի շարունակեցին հետապնդումը։

Մի քանի գայլ հարձակվում էին մոր վրա, նրան զբաղեցնում, իսկ մյուսները վրա էին տալիս, որ քոթոթներին փախցնեն։ Սրանք էլ ճվճվալով պատսպարվում էին մոր փորի տակ, ու երբ նա ճամփա բացելով առաջ էր գնում, վազում էին հետևից։

Անտառը մոտ էր, և արջը շտապում էր հասնել անտառ։ Անտառում ծառ կբարձրանային ու կփրկվեին։ Գայլերը լավ էին հասկանում, թե ինչո՞ւ է շտապում արջը։ Նրանք նոր թափով գրոհեցին արջի վրա։ Հուսահատ ու վշտահար՝ արջը իր ձագերից մեկին բռնեց ու շպրտեց գայլերի բերանը։ Նա ստիպված էր մեկին զոհել, որ փրկի մյուսներին։

Բայց գայլերի ճաշը կարճ տևեց։ Նրանք գրգռված ախորժակով ու նոր ուժով վրա տվին արջին։ Կռվում էր հուսահատ մայրը, գոռում սրտի ցավից, բայց այլևս անզոր էր գիշատիչների ոհմակի դեմ։

Արջը վերջապես հևիհև հասավ բլրի գագաթը, բայց քոթոթներից մեկին փախցրին, իսկ անտառի պռնկին շփոթեցրին ու տարան երրորդ ձագին։

Դժբախտ մայրն այլևս անտառ չմտավ. ո՞ւմ համար մտներ, ո՞ւմ ազատեր. սիրասուն ձագերն այլևս չկային։

Արջը վշտահար, գլխիկոր նստեց մի ծառի տակ ու երկար անշարժ մնաց։

Իսկ գայլերը իրենց ոճիրը գործելուց հետո ծույլ-ծույլ նորից ձորն իջան և կուշտ ուտելուց հետո թմրել-մրափում էին ժայռի տակ, արևի վերջին շողերի մեջ։

Մեկ էլ արջը սուսուփուս իջավ լանջով, ժայռի գլխից ցած նայեց, հետո ետ դարձավ, ժայռի մի մեծ բեկոր պոկեց, գրկեց, առաջ եկավ, կռացավ, ցած նայեց ու գրկի բեկորը թափով նետեց մրափող գիշատիչների կույտի վրա։

ՊԼԱՆ

1. Ճանապարհը կորցրած հովիվը:
2. Արջը իր ձագերով:
3. Գայլերի ոհմակը:
4. Հետապնդում:
5. Հուսահատ արջի զոհողությունը:
6. Գայլերը տանում են ձագերին:
7. Մայր արջի վրեժը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Թավ անտառ, գզվռտել, աճապարանքով փախչել, գայլերի ոհմակ, արհամարհել, հարայ-հրոցով, անզոր կատաղություն, դես-դեն, ննջ գազան, պատսպարվել մոր փորի տակ, հուսահատ ու վշտահար, գրգռված ախորժակ, հեւհեւ հասնել, սիրասուն ձագեր, գլխիկոր, ծուլլ-ծուլլ, Թմբլ-մրափել, սուսուփուս իջնել, մեծ բեկոր, մրափող գիշատիչ:

ՄԱՅՐԸ

Ըստ Մաքսիմ Գորկու

Հիսուն տարի անընդմեջ Լենկթեմուր բռնակալի երկաթե ոտքը ճզմում էր քաղաքներ ու պետություններ: Նրա անցած ճանապարհներից արյան բոսոր գետեր էին հոսում, նա պարտված ժողովուրդների ոսկորներից բարձր աշտարակներ էր կառուցում: Լենկթեմուրը մրցում էր մահվան հետ և խորտակում էր կյանքը:

Մի օր գեղեցիկ հովտում՝ վարդերի մեջ, խփեցին բռնակալի վրանը: Գորգեր փռեցին, շքեղ ու փափուկ բարձեր դրին, որոնց մեջ ընկողմանեց դաժան ու մռայլ Լենկթեմուրը:

Սկսվեց խրախճանքը: Շարված են ոսկե սափորները՝ լի ոսկեգույն ու թունդ գինով: Վրանի առջև պարում են նրբիրան հարճերը, ուժերն են չափում ըմբիշները, լարախաղացները մրցում են իրենց ճարպկությամբ:

Այս խելահեղ գինարբուքի ժամին հանկարծ բռնակալ Լենկթեմուրի ականջին հասավ մի կնոջ ճիչ՝ էգ արծվի հպարտ կանչ:

Աշխարհի երեք կողմերի տիրակալը պահանջեց իր մոտ բերել այդ կնոջը:

Եվ ահա նրա առջև կանգնած է մի կին՝ բոկոտն, արևից խունացած հագուստի ծվեններով: Նրա սևաթույր վարսերն արձակ թափված են մերկ ուսերին: Դեմքը բրոնզի գույն է ստացել, իսկ աչքերից ցայտում է հրամանի բոցը:

- Այդ դո՞ւ ես հաղթել սուլթան Բայազետին, - հարցրեց կինը:

- Այո՛, ես: Իսկ ի՞նչ կասես դու քո մասին, - հարցրեց Լենկթեմուրը:

- Լսի՛ր, - համարձակորեն ասաց կինը, - ինչ էլ դու արած լինես, դու միայն մարդ ես, իսկ ես Մայր եմ: Դու ծառայում ես Մահին, իսկ ես՝ Կյանքին:

Այնուհետև անվախ կինը պատմեց, որ ինքը Իտալիայից է, փոքրիկ մի գյուղից: Ամուսինը ձկնորս էր, և իրենք շատ երջանիկ էին: Ունեին մի չքնաղ զավակ: Բայց մի օր սուլթան Բայազետը հարձակվեց իրենց գյուղի վրա, սպանեց ամուսնուն և էլի շատերին: Իսկ նրա ավազակ մարտիկները առևանգեցին վեցամյա որդուն:

- Արդեն չորս տարի է, որ ես փնտրում եմ որդուս: Նա քեզ մոտ է, ես այդ գիտեմ: Դու հաղթել ես Բայագետին և խլել նրանից ամեն ինչ:

- Կի՛ն, իսկ ինչպե՞ս եկար դու ինձ անհայտ այդ երկրից, ծովերի, գետերի ու լեռների վրայով, անտառների միջով: Ինչո՞ւ գազաններն ու մարդիկ ձեռք չեն տվել քեզ:

- Լեռնե՞ր, - ծորուն ձայնով ասաց կինը, - երբ սիրում ես, լեռը հովիտ է դառնում: Գազաննե՞ր: Այո՛, այո՛ պատահել են հովազներ, որ ինձ նայել են այնպիսի աչքերով, ինչպիսիք քոնն են: Բայց չէ՞ որ յուրաքանչյուր գազան սիրտ ունի: Նրանք հավատում և զգում էին, որ ես Մայր եմ:

- Այո՛, - ասաց բռնակալը, - առանց Մոր չկա ո՛չ արքա, ո՛չ հերոս, ո՛չ բանաստեղծ:

- Տո՛ւր ինձ իմ երեխային, որովհետև ես Մայր եմ և սիրում եմ նրան:

Ահեղ Լենկթեմուրը ելավ տեղից ու գոռ ձայնով հրամայեց.

- Երեք հարյուր ձիավոր թող ճամփա ելնեն, գտնեն ու բերեն այս կնոջ որդուն:

ՊԼԱՆ

1. Մահաշունչ ու բռնակալ Լենկթեմուրը:
2. Խրախճանք գեղեցիկ հովտում:
3. Ցնցոտիներով կինը և նրա պատմածը:
4. Որդու առևանգումը:
5. Կնոջ փնտրտուքը:
6. Որդուն վերադարձնելու պահանջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հիսուն տարի անընդմեջ, երկաթե ոտք, արյան բոսոր գետեր, չքեղ ու փափուկ բարձեր, ընկուզենել, ոսկե սափորներ, ոսկեգույն ու թունդ գինի, նրբիրան հարճեր, խելահեղ գինարբուք, արծվի հպարտ կանչ, բոկոտն, արևից խունացած հագուստի ծվեն, սևաթույր վարս, աչքերից ցայտել հրամանի բոցը, առևանգել, ծորուն ձայն, գոռ ձայն:

ՀՊԱՐՏ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Ըստ Նոր աշխարհի հնդկացիների հեքիաթի

Սա պատահել է շատ վաղուց, այն ժամանակ, երբ սպիտակադեմ մարդիկ դեռ ոտք չէին դրել հնդկացիների հողը: Հյուսիսային ցեղերից մեկի առաջնորդը դուստր ունեցավ: Հեռուներից մարդիկ էին գալիս՝ տեսնելու նրան: Աղջկա դեմքը ամառային խաղաղ օրվա նման պայծառ էր, իսկ աչքերը՝ աստղերի նման փայլուն:

Տարիների ընթացքում առաջնորդի աղջիկը դարձավ մի հրաշալի օրիորդ: Միայն թե նա շատ սառն ու արհամարհական հայացք ուներ: Մարդիկ սկսեցին նրան կոչել Հպարտ Գեղեցկուհի: Ծեր առաջնորդը միայն գլուխն էր օրորում, իսկ դստերը շատ դուր եկավ այդ անունը:

Աղջկա գեղեցկության համբավը թռավ տարածվեց ամենուր. քաջ ռազմիկներից շատերը նվերներ բերեցին առաջնորդի վիգվամի մոտ՝ հուսալով բարեկամանալ նրա հետ: Հպարտ Գեղեցկուհին նայում էր հագվադյուտ մորթիներին կամ զարմանահրաշ

զարդերին, բայց ասես չէր նկատում դրանք նվիրող երիտասարդներին: Դեռ ավելին, հենց ռազմիկների ներկայությամբ ծաղր ու ծանակի էր ենթարկում նրանց:

- Արդյոք չե՞մ ուզում իմ ամուսինը դառնալ այն ձկան աչքերովը, կամ նա, որի քիթը բադի կտուցի է նման: Իսկ այս մե՞կը, որին Մեծ արծիվ են ասում, - ծիծաղելով խոսում և մատնացույց էր անում աղջիկը: - Նրա գլխակալի մեջ այնքան փետուր կա, կարծես աշխարհի բոլոր քաջագործությունները է կատարել: Այդ դեպքում ինչու՞ է վախենում շարժվել. գուցե նա ձմեռային գետի պես սառե՞լ է:

Հպարտ Գեղեցկուհու չար խոսքերը աշնանային անձրևի պես էին թափվում: Բայց Մեծ արծիվ անունը կրող ռազմիկի դեմքի ոչ մի մկանը չէր շարժվում:

- Դու կզղջաս, մնաս բարով, - ասաց ռազմիկն ու հեռացավ:

Գնաց Մեծ արծիվը անտառի խորքը և մոգական բառեր շշնջալով՝ ձյունից մի հրաշք տղամարդ կերտեց: Ապա շունչ տվեց նրան, կենդանացրեց, փառահեղ զգեստներով զուգեց և ուղարկեց Հպարտ Գեղեցկուհու մոտ:

Հազիվ էր նա մտել ծեր առաջնորդի վիգվամը, երբ բոլորի հայացքները ուղղվեցին Ձյունե մարդու կողմը:

- Ահա նա, ահա նա, - ասաց հորը Հպարտ Գեղեցկուհին, - ես համաձայն եմ նրան իմ ամուսինը անվանել:

Առաջնորդը շքեղ հարսանիք արեց: Երբ խնջույքը վերջացավ, Ձյունե մարդը հայտարարեց, որ անմիջապես պետք է վերադառնա իր ցեղի մոտ:

Մարդը գնում էր առջևից, Հպարտ Գեղեցկուհին հետևում էր նրան: Օրեր շարունակ նրանք թափառում էին ձյունոտ անտառներում, անցնում էին սառցակալած գետերի վրայով:

Մի անգամ հարավային քամին ցրեց ցածր, ծանր ամպերը, արևը երևաց, ու օդը տաքացավ: Կեսօրին ձյան կեսը հալվեց, ու քայլելը դժվարացավ: Մեկ էլ Ձյունե մարդը կանգնած տեղում օրորվեց, ընկավ: Հպարտ Գեղեցկուհին իր ամուսնու փոխարեն միայն հալվող ձյան կույտ տեսավ:

Հպարտ Գեղեցկուհին բարձրաձայն լաց եղավ, անօգնական ու միայնակ չոքեց կիսահալ ձյան մեջ:

Անապատի լռության մեջ հնչեց մի ձայն.

- Մխիթարվի՛ր: Իմաստուն արևը քեզ նոր ճանապարհ ցույց տվեց: Դու իմացար՝ ինչ է վիշտը, դու լալիս ես: Նշանակում է՝ հալվեց քո սրտի սառույցը:

ՊԼԱՆ

1. Առաջնորդի դուստրը:
2. Հպարտ Գեղեցկուհու սառնությունը:
3. Մերժում և ծաղր:
4. Մեծ արծիվ ռազմիկը:
5. Ձյունե մարդը:
6. Հարսանիք և դեգերում:
7. Հալվում է գեղեցկուհու սրտի սառույցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

սպիտակադեմ մարդ, ամառային խաղաղ օրվա նման պայծառ, աստղերի նման փայլուն, արհամարհական հայացք, թռչել-սարածվել, վիգվամ, հագվագյուտ մորթիներ, աշնանային անձրևի պես թափվել, մոգական բառեր, փառահեղ զգեստ, հալչող ձյան կույտ, սրտի սառույցը հալվել:

Բառի բացատրություն

Վիգվամ - Հյուսիսամերիկյան հնդկացիների՝ ճյուղերից հյուսված կամ մորթիներից սարքված խրճիթ, հյուղակ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Անտոն Չեխովի

Վալենտին Պետրովիչ Պերեդերկինը հաճելի արտաքինով մի երիտասարդ էր: Այդ օրը նա հագավ իր ֆրակը, սրածայր, փչի պես քթերով, լաքած կոշիկները: Հազիվ զսպելով հուզմունքը՝ նա ճանապարհվեց իշխանադուստր Վերա Զապիսկինայի մոտ:

Իշխանուհի Վերա՜ն... Մի հաճելի, չքնաղ էակ՝ կապույտ - երկնագույն, հեզ աչքերով, մետաքսյա ալիքաձև խոպոպիկներով:

Ծովի ալիքները, դիպչելով ժայռին, փշրվում են, բայց յուրաքանչյուր ապառաժ ջարդուփշուր կլինի՝ բախվելով իշխանադստեր հերարձակ ալիքներին: Միայն անզգա և անխելք մարդը կարող է չհրապուրվել նրա փաղաքուշ ժպիտով, նրա քաղցր ձայնով և շրթունքների տակից փայլատակող ճերմակ ատամներով:

Պերեդերկինին ընդունեցին: Նա զգույշ նստեց իշխանադստեր դիմաց և հուզմունքից հալվելով՝ սկսեց.

- Իշխանադստրի՛կ, կարո՞ղ եք արդյոք ինձ լսել:

- Օ՛, իհարկե, - ասաց Վերան:

- Ներեցե՛ք, չգիտեմ՝ ինչի՞ց սկսեմ, - կմկմաց երիտասարդը: - Ձեզ համար դա այնքան անսպասելի է: Դուք կզայրանաք:

Նա կանգ առավ, ձեռքը տարավ գրպանը, հանեց թաշկինակը, սրբեց ճակատի քրտինքը: Իշխանադուստրը սիրալիր հայացքով նայում էր նրան ու հարցական ժպտում:

- Իշխանադստրի՛կ, - շարունակեց երիտասարդը, - այն օրվանից, որ ձեզ տեսա, իմ հոգու խորքը թափանցեց մի անհաղթահարելի ցանկություն: Այդ ցանկությունը զորուգիշեր ինձ հանգիստ չի տալիս: Եվ եթե իմ երազանքը չիրականանա, ես խիստ դժբախտ մարդ կլինեմ:

Իշխանադուստրը մտահոգ և ամոթխածորեն կախեց իր երկնքի գույն ունեցող աչքերը:

- Դուք, անշուշտ կզարմանաք, դուք ամենայն երկնավորից բարձր եք, բայց ինձ համար դուք ամենահարմարն եք..., - կմկմաց երիտասարդը:

Տիրեց լռություն:

- Բացի այդ, - հառաչեց Պերեդերկինը, - իմ կալվածքը սահմանակից է ձերին: Ես հարուստ եմ:...

- Բայց ի՞նչ հարցով եք ինձ դիմում, - շիկնելով հարցրեց օրիորդը:

- Թանկագի՛նս, թույլ տվեք ձեզ առաջարկություն անել, - վրա տվեց երիտասարդը, - մի՛ մերժեք, ձեր մերժումով կխափանեք իմ բոլոր ծրագրերը:

Ապա արագ թեքվեց դեպի օրիորդը և հուզմունքից խեղդվելով՝ շշնջաց.

- Եկեք մեր սահմանամերձ կալվածքներում բաժնետիրական հիմունքներով գործարան կառուցենք, ճարպ հալող գործարան:

Իշխանադուստրը մի քիչ խորհեց և ասաց.

- Հաճույքո՜վ....

ԹԵՄԱ 1. Հանկի արտաքինով երիտասարդը: 2. Արդուզարդ՝ իշխանավայել մահու գնալու համար: 3. Իշխանավայել վերջ: 4. Մանրմիկ խոստովանություն: 5. Անակնկալ առաջարկություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Հանկի արտաքին, փրակ, արանայր, փչի պես քթերով, լայնած կոշիկ, կապույտ-երկնագույն աչքեր, մանրավայր ալիքաձև խոպոպիկներ, հերարձակ ալիքներ, փաղաքուշ ժպիտ, քաղցր ձայն, չքնաղների ցանկություն, զարդեր, մատնոց և ամոթխածորեն, բամբասանքի հիմունքներ:

ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Էդմոնդո դե Ամիչիսի

Դեկտեմբերյան մի առավոտ անգլիական նավահանգիստ Լիվերպուլից դուրս եկավ մի մեծ շոգենավ: Նա ուղևորվում էր Միջերկրական ծովում գտնվող Մալթա կղզին: Ուղևորների մեջ էին տասներկուամյա մի տղա և նրանից մեկ տարով մեծ մի աղջիկ: Երկու երեխաներն էլ իտալացի էին: Տղան որբ էր. նրա հայրը, որ վարպետ էր և բանվոր էր աշխատում Լիվերպուլում, մահացել էր: Տղան մնացել էր մեն-մենակ: Իտալիայի հյուպատոսը այժմ նրան ուղարկում էր իր հայրենիքը, ուր հեռավոր ազգականներ ուներ: Իսկ աղջիկը Անգլիայում ապրել էր իր հորաքրոջ մոտ, որը մահացել էր: Հիմա նրան էլ ուղարկում էին Իտալիա՝ իր հոր և մոր մոտ:

Երեխաները շուտ մտերմացան, ճաշեցին միասին և գրեթե ամբողջ օրը նստած մնացին նավի ցռուկին:

Երեկոյան կողմ ծովը փոթորկվեց: Ալիքները բարձրանում և փշրվում էին նավի տախտակամած վրա: Բոլոր ուղևորները իջան իրենց խցիկները: Տղան և աղջիկը ևս իրարից բաժանվեցին՝ առավոտյան տեսնվելու հույսով:

Սակայն կեսգիշերին պայթեց զարհուրելի փոթորիկը: Տախտակամած խուժած ալիքները մի քանի րոպեում ջարդուփշուր արին կայմը, չոր տերևների նման սրբեցին տարան նավակողից կախված երեք մակույկը և ցռուկից չորս կամրջապուն պոկեցին:

Սկսվեց խուճապ: Սարսափը պատեց մարդկանց: Աղմուկ-աղաղակ բարձրացավ, լացի ու աղոթքի ձայներ լսվեցին:

Անսպասելիորեն խուժած վիթխարի ալիքը ճեղքեց նավը, ջուրը սկսեց հոսել նավի մեջ: Նավը ծանրորեն սկսեց թեքվել մերթ մի, մերթ մյուս կողքի վրա:

Երկու ժամ անց շոգենավն արդեն կիսով չափ ընկղմվել էր ջրի մեջ: Սոսկալի պատկեր էր տախտակամածի վրա: Խելակորույս մայրերը կրծքներին էին սեղմում երեխաներին, ընկերները գրկվում և հրաժեշտ էին տալիս միմյանց, ոմանք իջնում էին ցած՝ նավախցերը, որպեսզի մեռնեն առանց ծովը տեսնելու:

Երկու երեխաները՝ Մարիոն ու Ջուլիետը, կայմին հենված, ցնորվածի պես նայում էին ծովին: Մնում էին հաշված րոպեներ:

Ջուրն իջեցրին վերջին ու միակ մակույկը: Տեղավորվեց տասնչորս նավաստի և երեք ուղևոր: Նավապետը մնաց նավի վրա:

- Իջե՛ք մեզ մոտ, նավապե՛տ, - ներքևից աղերսում էին նրան:

- Իմ պարտքն է մեռնել նավի վրա, - եղավ նրա պատասխանը:

- Մի տեղ էլ կա, - գոռացին նավաստիները՝ դիմելով մյուս ուղևորներին: - Մի երեխա ուղարկե՛ք:

Այդ ձայնի վրա երկու իտալացի երեխաները, վայրի գազանիկների պես մեկը մյուսին հետ մղելով, նետվեցին դեպի նավեզրը:

- Ամենափոքրի՛ն, - գոռում էին նավաստիները, - մակույկն առանց այն էլ ծանրաբեռնված է, ամենափոքրի՛ն:

Այս խոսքը լսելով՝ աղջիկը չանթահար կանգ առավ ու անշարժացավ՝ մարած աչքերը հառած Մարիոյին: Տղան նայեց նրան, հանկարծ նրա դեմքը ողողվեց մի զարմանահրաշ լույսով:

- Դու, Ջուլիե՛տ, թռի՛ր: Դու հայր ու մայր ունես, ես մեն-մենակ եմ: Ես իմ տեղը զիջում եմ քեզ: Թռի՛ր:

Մարիոն գրկեց Ջուլիետի մեջքը և ալիքների մեջ նետեց նրան:

Աղջիկը ճչաց ու սուզվեց ջրի մեջ, նավաստիներից մեկը բռնեց նրան ու մակույկի մեջ քաշեց:

Տղան, գլուխը բարձր պահած, քարացավ նավեզրին: Քամին ծածանում էր նրա գանգուրները, բայց նա կանգնել էր անշարժ՝ լի խաղաղ վսեմությամբ:

ՊԼԱՆ

1. Լիվերպուլից Մալթա ուղևորվող շոգենավը:
2. Երկու իտալացի մանուկ:
3. Անհամբերատ ծովը:
4. Զարհուրելի փոթորիկը:
5. Սարսափ:
6. Վերջին մակույկը:
7. Տղայի վեհանձն արարքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ անգլիական նավահանգիստ, փարամիդ, հյուպատոս, նավի ցռուկ, տախտակամած, զարհուրելի փոթորիկ, ջարդուփշուր անել, չոր տերևների նման սրբել-տանել, մակույկ, խուճապ, աղմուկ-աղաղակ, վիթխարի ալիք, խելակորույս մայրեր, ցնորվածի պես, չանթահար կանգ առնել, մարած աչքեր, զարմանահրաշ լույս, խաղաղ վսեմություն:

բ/ Հատուկ անունները.

Լիվերպուլ, Միջերկրական ծով, Մալթա կղզի, Անգլիա, Իտալիա, Մարիո, Ջուլիետ:

2. Աշակերտներին առաջարկել գտնել այլ վերջաբան:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Էդմոնդո դե Ամիչիսը (1846-1908) իտալացի նշանավոր գրող է: Իր գրքերում պատկերել է ժողովրդի կենցաղը, կերտել է ժամանակակիցների դիմանկարները, գրի է առել ազգային զրույցներն ու լեգենդները: Զբաղվել է նաև դաստիարակության և կրթության հարցերով:*

«Սիրտը» («Աշակերտի հուշատետրը») նրա ամենահայտնի գիրքն է:

ՏՈՐԻՉԵԼՅԱՆ ԴԱՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Ազատ Շահինյանի

Ես նստում եմ առաջին շարքի նախավերջին նստարանին՝ պատուհանի մոտ: Իմ կողքին նստում է Օրինակելի տղան: Մորս ասելով՝ բախտս բերել է, որ նա նստում է իմ կողքին: Այդպիսով գուցե ես մի քիչ կարգ ու կանոն սովորեմ նրանից:

Այսօր վերջին դասն է: Զանգի ձայնը ուշանում է: Դասարանում ծանր ու թմրեցնող լռություն է:

- Իտալացի գիտնական Տորիչելին մի այսպիսի փորձ կատարեց, - շարունակում է բացատրել ուսուցչուհին:

Ետևիս նստած տղան ախորժակով հորանջեց: Ես էլ վարակվեցի ու եռանդով բաց արեցի բերանս:

- Հերիք հորանջես, - զգուշացրեց ինձ Օրինակելի տղան, բայց այնպիսի բարձր ձայնով, որ ողջ դասարանը աշխուժացավ:

Ուսուցչուհին վիրավորված ու հանդիմանող հայացքով նայեց ինձ ու շարունակեց խոսել:

Սակայն շուտով հորանջելու վարակը փոխանցվեց Օրինակելի տղային: Նա սկսեց ջանասիրությամբ բացուխուփ անել բերանը:

Հանկարծ մի օգտակար միտք փայլեց գլխումս: Հիշեցի, որ այդպիսի դեպքերում անհրաժեշտ է անակնկալի բերել դիմացինին, և նա անմիջապես կդադարեցնի հորանջելը: Այն պահին, երբ Օրինակելի տղան նորից բերանը բաց արեց պատռվելու չափ, մատս արագ տարա ինձնից քիչ հեռու սևին տվող մութ խոռոչը: Օրինակելի տղան հանկարծակիի եկած միանգամից փակեց բերանը՝ մատս թողնելով սրածայր ժանիքների արանքում: Ցավից այնպես բղավեցի, որ ամբողջ դասարանը ցնցվեց, իսկ իմ հետևում նստած անհոգները բռնկվեցին ախորժալուր քրքիջով:

- Ի՞նչ պատահեց, - տանջահար դեմքիս նայելով՝ հարցրեց ուսուցչուհին:

- Նա իր մատը բերանս խոթեց, - տեղից վեր թռչելով՝ ասաց Օրինակելին:

- Իսկ ի՞նչ գործ ուներ նրա մատը քո բերանում, - զայրացավ ուսուցչուհին:

Դասարանը փոթկաց, իսկ ետևիս անհոգները անզուսպ ծիծաղից սկսեցին ծլնկները ծեծկռտել:

- Գուցե իրեն հարցնեք, - վրդովված վրա բերեց Օրինակելի տղան և ամենայն քաղաքավարությամբ ավելացրեց, - թույլ տվեք նստել:

- Նստե՛ք, - ասաց ուսուցչուհին և բարկությունը զսպելով՝ դարձավ ինձ: - Ապա մի ասա տեսնեմ՝ ո՞վ է Տորիչելին:

Ես թռա տեղիցս.

- Իտալացի նշանավոր գիտնական:

- Այդպե՜ս ... Իսկ ի՞նչ է հայտնագործել:

- Դատարկություն, - վստահ պատասխանեցի ես:

Դասարանը ցնցվեց հոմերական քրքիջից, իսկ ետևիս անհոգները պարզապես կապտեցին:

«Մի՞թե սխալվել եմ, - մտածեցի ես: - Եթե այդպես է, ապա ինչո՞ւ էր մեծ եղ-

բայրս մատով թրխկացնում ճակատիս ու ասում. «Ա՜խ, դու, տորիչելյա՛ն դատարկություն ...»:

Վերջապես դասարանում կարգ ու կանոն հաստատվեց, ուսուցչուհին շարունակեց ընդհատված դասը:

Դրանից հետո նոր միայն իմացա, թե ինչ է հայտնագործել Տորիչելին, և ինչպիսի դատարկություն եմ ես:

ՊԼԱՆ

1. Իմ տեղը դասարանում:
2. Վերջին դասը:
3. Ուսուցչուհու բացատրությունը:
4. Զգուշացում՝ բարձրաձայն:
5. Օգտակար միջոց՝ հորանջը կանխելու համար:
6. Հարց Տորիչելլի և նրա գյուտի մասին:
7. Պատասխան, որը բխում է սեփական փորձից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *ա) Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.* ծանր, թմրեցնող լռություն, ախորժակով հորանջել, վիրավորված ու համդիմանող հայացք, ջանասիրությամբ բացուխուփ անել բերանը, անակնկալի բերել, հանկարծակիի գալ, մութ խուուչ, ախորժալուր քրքիջ, փոթկալ, ծնկները ծեծկոտել, Հոմերական քրքիջ:

բ) Բացատրել **տորիչելյան դատարկություն, Հոմերական քրքիջ** արտահայտությունների իմաստը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Էվանջելիստա Տորիչելին (1608-1647) իտալացի ֆիզիկոս և մաթեմատիկոս է: Կրթություն ստացել է Հռոմում, Գալիլեյի աշակերտի ղեկավարությամբ: Օգնել է Գալիլեյին մշակելու իր աշխատությունները: Մշակել է մթնոլորտային ճնշման տեսությունը, ապացուցել է դատարկության ստեղծման հնարավորությունը:*

ԳՅՈՒՏԸ

Ըստ Ստեֆան Վայնֆելդի

Մաք Կրայգի գրասենյակը գտնվում էր քաղաքի երկնաքերներից մեկի տասներկուերորդ հարկում: Մուտքի մոտ և նախասրահում նա սահմանել էր խիստ հսկողություն: Ոչ ոք չէր կարող անցնել գործակալների խիտ շղթայից: Բոլորը գիտեին, որ միավորման տերը խիստ և անողորմ մարդ է:

Այդ օրը Մաք Կրայգի գրասենյակում հայտնվեց մի անծանոթ երիտասարդ: Նրա ձեռքին ուռած մի թղթապանակ կար:

- Դուք որտեղի՞ց հայտնվեցիք, - զայրացած հարցրեց Մաք Կրայգը:

- Ես ներս մտա պատուհանից, - հանգիստ պատասխանեց երիտասարդը:

Ապա նա տեղավորվեց բազկաթոռին և սկսեց պատմել.

- Ես ստեղծել եմ հատուկ հաբեր: Իմ հաբն ընդունած մարդու վրա չի ազդում երկրի ձգողական ուժը, և նա կարող է մի թեթև հրում անելով՝ թևածել օդում և գնալ, ուր կամենա: Ես իմ հաբը կուլ տվեցի և բարձրացա վեր ու ներս մտա պատուհանից: Ես արդեն շատ անգամ եմ փորձել ձեզ մոտ ընկնել, բայց ձեր հսկիչներն արգելել են:

Ապա երիտասարդը մանրամասն շարադրեց, թե ինչ օգուտ կտան իր Հաքերը մարդկությանը:

- Լավ, իսկ դուք չե՞ք կարող ցուցադրել ձեր Հաքերի ներգործությունը, - Հարցրեց Կրայգը՝ քմծիծաղ տալով:

- Դժբախտաբար, դրամական դժվարությունների պատճառով ես ընդամենը երկու Հաբ կարողացա պատրաստել, մեկը կուլ տվեցի, որ ձեզ մոտ ընկնեմ: Իսկ երկրորդ Հաբը թողել եմ տանը:

- Լավ, որքա՞ն եք ուզում ձեր գյուտի դիմաց, - Հարցրեց գործարար մարդը:

- Գիտե՞ք, ես դժվար կացության մեջ եմ: Իմ գյուտը շատ թանկ արժե, - կմկմաց երիտասարդը:

- Ձեր թղթապանակի Համար ես կվճարեմ տասը Հազար դոլար, - ընդՀատեց Մաք Կրայգը:

- Դե, դուք ծիծաղում եք, - վրդովվեց գյուտարարը:

Հետո Կրայգը բացատրեց, որ այդքան տալիս է, որ երիտասարդը կարողանա իր գյուտի Համար արտոնագիր ձեռք բերել: Որից Հետո նա կարող է իր գյուտը ներկայացնել մրցակից ընկերությանը:

Երիտասարդ գյուտարարը, որ արդեն երեք օր է՝ քաղցած էր, Համաձայնեց պայմանին: Երբ նրան տվին տասը Հազար դոլարի անդորրագիրը, երիտասարդը խոստացավ նրանց Հյուրասիրել մի շիշ կոնյակով:

Գյուտարարը դուրս գնաց: Իսկ տնօրենը իր մոտ կանչեց Հսկիչների պետին: Որոշել էր նրան տուգանել տասը Հազար դոլար, քանի որ օտար անձ էր թափանցել ընկերության շենք:

Մինչ նա սպասում էր Հսկիչ ծառայության պետին, պատուՀանի ապակին ծեծեցին: Մաք Կրայգերը այնպես շրջվեց դեպի պատուՀանը, որ քիչ մնաց կոտրեր վիզը:

ՊատուՀանից այն կողմ՝ օդի մեջ, Հայտնվել էր երիտասարդ գյուտարարը: Նրա ձեռքին մի շիշ լավագույն տեսակի կոնյակ կար:

ՊԼԱՆ

1. Մաք Կրայգի գրասենյակը:
2. ՊատուՀանից Հայտնված գյուտարարը:
3. Երիտասարդի գյուտը:
4. Գործարք:
5. Երիտասարդ գյուտարարի խոստումը:
6. Թակոց պատուՀանի ապակուն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

երկնաքեր, տասներկուերորդ Հարկ, խիստ Հսկողություն, գործակալների խիտ շղթա, անողորմ մարդ, ուռած թղթապանակ, երկրի ձգողական ուժ, թեթև Հրում, դրամական դժվարություն, դժվար կացություն, կմկմալ, տասը Հազար դոլար, արտոնագիր, անդորրագիր, տնօրեն, լավագույն տեսակի կոնյակ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ստեֆան Վայնֆելդը ժամանակակից լեհ գրող է:*

Ըստ Վերջում Թակի

Սեմ Վերերը խոսափուկ էր, աշխատում էր մի գրասենյակում և առանձնապես հաջողակ չէր:

Մի գեղեցիկ առավոտ նա մի ծանրոց ստացավ: Արկղը բավական ծանր էր: Վրան գրված էր Սեմի անունը, հասցեն և ավանդական մակնշումներ: Արկղը բովանդակ ծանր էր: Վրան նշաններ ուներ, ոչ կափարիչ: Նրա մակերեսին ոչ մի ճեղք չկար: Արկղը ո՛չ բանալի գույն նույնից պատրաստված խորանարդ էր: Դա ինչ-որ գաղտնի հանգստ էր, նույնպես առանց որևէ ճեղքի: Արկղի հակառակ կողմն էլ նույնն էր: Հետո մեկ էլ գլորվեց, ապա գլորեց արկղը և այն նման փակվեց, և փնթփնթաց. «Չեմ ուզում մի բացվիր»:

Հանկարծակի խորանարդը նրա հարվածից առանց ընդհատվել, բացվեց: Արկղի ներսում Սեմը տեսավ փոքրիկ գործիքների լաբիրինթոս: Այնտեղ գրված էին հաշվարկով սարքեր, կարմիր փոշով բանկաներ, գանազան մանուկներով թափանցիկ պատկուծներ: Արկղի հատակին գրված էին յոթ տարօրինակ առարկաներ: Իսկ գրանց կողքին կար մի գիրք: Նա վերցրեց գիրքը: «Աստղի մարդ», - գրված էր գրքի վրա:

Հաջորդ օրը Սեմը գրասենյակում շատ անուշադիր էր ու ցրված: Նրա գլխից դուրս չէր գալիս ստացած տարօրինակ նվերը: Մինչև ուշ գիշեր նա անհանգստությամբ ծանոթացել էր գրքի բովանդակությանը և հիմա շատ լավ գիտեր, թե ինչպես կարելի էր արտասովոր ճանապարհով մարդ դառնալ:

Այնուհետև նա տուն եկավ գրքին փակելով ու շնչասպառ: Թեավորությամբ Սեմը գաղտնապահ ու ամաչկոտ էր: Նա ոչ մեկին չէր պատմել իր ստացած տարօրինակ ընծայի մասին: Օրվա վերջում նրա գլխում մի փայլուն միտք էր ծագել: Նա որոշել էր կերտել իր նմանակը: Վերջապես մի մութ անկյուն, որի մոտ կարող է բացել իր սիրտը, որին կպատմի իր բոլոր գաղտնիքները:

Նա հասավ տուն, արկղից հանեց բոլոր սրվակներն ու անոթները: Ամեն ինչ պատրաստեց այնպես, ինչպես նշված էր գրքում: Հետո անցավ ջուր հավաքելուն: Չէ՞ որ ջրի քանակը չափազանց շատ է մարդու օրգանիզմում:

Հատուկ սարքով գրանցեց իր մարմնի և ներքին օրգանների մասին տեղեկությունները: Հետո անոթների և սրվակների պարունակությունները օգտագործելով ստեղծեց իր նմանին:

Մեկ ժամ հետո Սեմ Վերերը կանգնել էր մահճակալի մոտ ու նայում էր պառկած Սեմ Վերերին: Նա դեռ չէր շնչում: Մնում էր միայն շունչ հաղորդել կենդանին: Նա միացրեց կենդանացնող սարքը:

Մահճակալին պառկած մարդը հազաց, շարժվեց, նա նստեց:

– Ու՜ֆ, – ասաց նմանակը, – չգիտես՝ քեզ նման տխուր մեկի հետ պատահավում եմ ապրել այս կյանքս:

Հանկարծ նա վեր թռավ մահճակալից, վերցրեց իրեն կենդանացնող սարքը և ջարդուփշուր արեց, ապա պատուհանից դուրս նետեց բոլոր սրվակներն ու անոթները: Հետո էլ հրաժեշտ տալով Սեմի հագուստներն ու դուրս վազեց երգելով ու սուլելով:

Իսկական Սեմ Վերերը դեռ երկար քարացած ու ապշած կանգնած էր սենյակի կենտրոնում:

ՊԼԱՆ

1. Իրավաբան Սեմ Վեբերը:
2. Տարօրինակ ծանրոցը:
3. Հանելուկային արկղը և նրա պարունակությունը:
4. Սեմը գրասենյակում:
5. Փայլուն միտք:
6. Սեմը ստեղծում է իր նմանին:
7. Նորակերտ Սեմ Վեբերի դավաճանությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հաջողակ, Ծննդյան տոներ, բռնակ, կափարիչ, հանելուկային խորամարդ, փոքրիկ դարակների լաբիրինթոս, մածուկներով թափանցիկ պարկուճներ, ամենայն մանրամասնությամբ, գաղտնապահ, ամոթխած, կերտել իր նմանակը, շունչ հաղորդել:

2. Կարելի է աշակերտներին հանձնարարել գտնել նոր ավարտ և վերնագիր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Վիլյամ Թենը ամերիկացի ֆանտաստ գրող է:*

ՀԻԱՆԱԼԻ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Ըստ Մյուրիել Սփարքի

Կար-չկար հիանալի մի ժամացույց, որի անունը Թիկլի էր: Թիկլին Շվեյցարիայից բերել էր պրոֆեսոր Ջոն Մորիսոնը շատ տարիներ առաջ՝ ձմռան մի օր: Այդ օրից սկսած՝ Թիկլին և պրոֆեսորը նվիրվեցին միմյանց ու շատ լավ հասկացան իրար:

Թիկլին միշտ դրված էր բուխարիկի կողքին՝ իր սիրած տեղում: Ամեն գիշեր՝ տասն անց քսանին, պրոֆեսորը գալիս, լարում էր Թիկլիին, լսում նրա սրտի բաբախյունը: Հետո նա իր թևի ժամացույցը ճշտում էր Թիկլիի ժամանակով, իսկ դրանից հետո ճշտում ու լարում էր տան մյուս բոլոր ժամացույցները:

- Դու հիանալի ժամացույց ես, Թիկլ՛, - ասում էր պրոֆեսորը, - միշտ ստույգ ժամանակն ես ցույց տալիս:

- Շնորհակալություն, պրոֆեսո՛ր, - պատասխանում էր Թիկլին, - եթե ձեր գովեստը պապս լսեր, շատ կհպարտանար:

Ամեն հինգշաբթի պրոֆեսոր Ջոնին այցելության էին գալիս նրա չորս ընկերները: Նրանք ևս պրոֆեսորներ էին և շատ պատկառելի ու հարգարժան այրեր: Այս չորս անվանի գիտնականներն էլ շատ էին սիրում Թիկլիին, որովհետև նա պրոֆեսոր Ջոնի ամենահավատարիմ և անդավաճան բարեկամն էր:

Հինգշաբթին տոն էր Թիկլիի համար: Որքա՜ն շատ նորություններ էր լսում, որքա՜ն գիտելիքներ էր կուտակում լուսնի, արևի, դրանց շարժման և այլնի մասին: Հաջորդ օրերին, երբ պրոֆեսորը գնում էր համալսարան, նա տան մյուս ժամացույցներին պատմում էր իր լսածները: Իսկ նրանք էլ պատմում էին դեպքեր իրենց կյանքից: Ամենից զվարճախոսը խոհանոցի ժամացույցն էր: Նա շարունակ բարձ-

բաժայն շաղակրատում և ուրախ պատմություններ էր անում: Իսկ ամենից քնքուշ ու գողտրիկը խոպանական մարգարտախնցուկ պատրաստված որբ ժամացույցն էր: Որբուկի սիրտը հաճախ էր անկանոն բաբախում: Թիկլին սիրում էր այդ որբուկին իր կորովի և ամուր սրտի ողջ զորությամբ:

Մի հինգշաբթի երեկո, երբ հավաքվեցին պրոֆեսորները, նրանցից մեկը նայեց Թիկլին ու ասաց.

- Ես կարծում եմ, որ Թիկլին խելացի ու բանիմաց է, ինչպես մեզնից ամեն մեկը: Եկեք Թիկլին պրոֆեսորի կոչում տանք:

Մյուս պրոֆեսորները միաձայն ողջունեցին այդ հիանալի առաջարկը և շրջվեցին դեպի Թիկլին.

- Ինձ հրճվանք է պատճառում ձեր առաջարկը, պրոֆեսո՛ր, - շատ քաղաքավարի ու լրջմիտ խոսեց Թիկլին: - Բայց ես վախենում եմ, որ պրոֆեսոր դառնալով կկորցնեմ տան մյուս ժամացույցների բարեկամությունը: Կա մի հին ասացվածք. «Սերը սեր է բերում»: Այս տան սրբությունն ու նշանաբանն է այս ասացվածքը: Ընկերներս ինձ ճիշտ չեն հասկանա: Նրանք ինձ ամբարտավան կհամարեն, կկարծեն, թե իրենց այլևս չեմ սիրում: Իսկ ես սարսափում եմ այն մտքից, թե ընկերներս կարող են լքել ինձ:

- Թիկլի՛, - ասաց պրոֆեսոր Ջոնը, - դու իմ հիասքա՛նչ ընկեր, հիմա ավելի եմ հպարտանում քեզնով: Ազնիվ բան է հանուն ընկերների հրաժարվել պրոֆեսորի կոչումից ու մնալ սովորական Թիկլի:

Բոլոր պրոֆեսորները հուզված ծափահարեցին, իսկ Թիկլին միայն ժպտաց ու ցույց տվեց կեսգիծերը:

ՊԼԱՆ

1. Ժամացույց Թիկլին և պրոֆեսորը:
2. Ջերմ բարեկամություն:
3. Պրոֆեսորի չորս անվանի ընկերները:
4. Հինգշաբթի օրվա հավաքները:
5. Տան մյուս ժամացույցները:
6. Փայլուն առաջարկ:
7. Մերժում՝ հանուն ընկերության:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա/ Հիանալի ժամացույց, նվիրվել միմյանց, բուխարիկ, սրտի բաբախյուն, սուրբ ժամանակ, պատկառելի և հարգարժան այրեր, ամենահավատարիմ և անդավաճան ընկեր, զվարճախոս, շաղակրատել, քնքուշ և գողտրիկ, խոպանական մարգարտախնցի, կորովի և ամուր սիրտ, միաձայն ողջունել, լրջմիտ, ասացվածք, ամբարտավան, կեսգիծեր:

բ/ Թիկլի, Ջոն Մորիսոն, Շվեյցարիա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Մյուրիել Սփարքը անգլիացի ժամանակակից նշանավոր արձակագիր է: Իր գրական գործունեությունն սկսել է իբրև բանաստեղծ և գրաքննադատ:*

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿԻՉԸ

Ըստ Ջերալդ Դարելի

Գազանանոցը հարստացնելու համար Աֆրիկայից բերել էին զանազան կենդանիներ: Դրանց մեջ ամենազվարճալին փողհար Թրամպին էր, որն ինքն իրեն նշանակել էր կենդանաբանական այգու վերակացու, հասարակական հսկիչ: Հենց որ մի նոր կենդանի էին բերում, Թրամպին քթի տակ կռթկռթալով՝ շտապ թռչում էր նորեկին իր հարգանքի հավաստիքը մատուցելու և օգնելու ընտելանալ: Քառորդ ժամ նա կանգնում էր վանդակի ներսում, հետո որոշելով, որ նորեկն արդեն ընտելացել է, գոհ կռթկռթում էր և թռչում հին բարեկամների մոտ՝ ներկա-բացակա անելու:

Երբ տեր և տիկին խոզուկներ Խուանը և Խուանիտան առաջին օրը մտան գազանանոց և գրավեցին իրենց հարկաբաժինը, Թրամպին իսկույն հայտնվեց, որ հոգա նրանց մասին: Խոզուկները դա միանգամայն հանգիստ ընկալեցին: Բայց ահա նրանք դարձան ծնողներ: Թրամպին ուրախ թռավ, որ տնավորի խոզուկներին: Քանի դեռ խոսքը վերաբերում էր իրենց, Խուանը և Խուանիտան չէին առարկում, սակայն ժառանգների նկատմամբ Թրամպի հոգատարության մեջ ինչ-որ կասկածելի սպառնալիք ենթադրեցին: Բիզ-բիզ կանգնեցնելով մազերը և չխկչխկացնելով ատամները՝ գրոհեցին թռչնակի վրա, որը մի ոտքի վրա կանգնած՝ բարեհոգաբար նայում էր խոճկորներին: Թրամպին սոսկ վերջին պահին գլխի ընկավ վտանգի մասին, և միայն ճարպիկ ցատկը փրկեց նրան խոզուկների հարվածից:

Շուտով գազանանոց բերին երկու ակնոցավոր պինգվին՝ Դելլին և Դիլլին: Ծառերի հովանու տակ լճակ էին սարքել, որտեղ նրանք շատ լավ էին զգում: Թրամպին, ըստ սովորության, մի օր հերթապահեց նրանց տիրույթներում՝ փոքր-ինչ դժգոհ, որ ջուրը թույլ չի տալիս մոտենալ Դելլին և Դիլլին:

Պինգվիններին երջանկացնելով իր հովանավորությամբ՝ Թրամպին բարեկամական զգացմունքներով լցվեց նրանց հանդեպ և ամեն առավոտ այցելում էր զույգին: Մոտենում էր ցանցին և թավաձայն կռթկռթում: Տեր և տիկին պինգվինները ուրախ ձայներով պատասխանում էին Թրամպի ողջույնին:

Հայտնի չէ, թե այդ հուզիչ մտերմության վրա ե՞րբ և ի՞նչ առիթով սև ամպեր կուտակվեցին, բայց գազանանոցի աշխատակիցները մի առավոտ տեսան, թե ինչպես Թրամպին, թռչելով պատնեշի վրայով, կատաղորեն հարձակվեց Դելլի և Դիլլի վրա: Թևերը պարզած և փետուրները ցցած՝ Թրամպին կտցահարում էր նրանց և ճանկերով խփում: Տեր և տիկին պինգվինները, զարմացած այս կատաղած պարոնի վարքագծից, իրենց շտապ նետեցին ջուրը: Սակայն զայրացած պարոնը չէր հանգստանում: Հաղթական կռթկռթալով՝ նա դիրք գրավեց լճակի ափին: Այդ դեպքից հետո նա առիթը չէր փախցնում վիրավորելու խեղճ պինգվինների արժանապատվությունը: Թրամպին տեսնելով՝ նրանք խուճապահար նետվում էին ջուրը:

Բայց մի օր Թրամպին պատժվեց: Առավոտ կանուխ նա խցկվել էր պինգվինների մոտ և մի լավ դնգստել նրանց: Դելլին և Դիլլին, որ արդեն հոգնել էին այդ անդաստիարակ պարոնի անվերջանալի ծաղրուծանակից, դիմեցին գրոհի: Պինգվինն-

րի կտրուկ հարվածից Թրամպին կորցրեց հավասարակշռությունը և ընկավ ջուրը: Թրջված փետուրները նրան թույլ չէին տալիս ափ դուրս գալ: Դեյլին և Դիլին տանում էին իրենց փառավոր հաղթանակը: Մինչ Թրամպին անօգնական թպրտում էր ջրի մեջ, նրանք լողում էին խեղճի չորս կողմը և մախաթի պես սուր կտուցներով անխնա խոցում էին հոգեառին: Երբ գազանանոցի աշխատակիցները հասան, Թրամպին արդեն ուշակորույս էր և արնոտված: Նրան տարան, վերքերը մշակեցին, բայց վիճակն անհուսալի էր: Երկու օր նա օրհասական դրության մեջ էր, բայց երրորդ օրը սկսեց կոթկոթալ: Մի քանի ժամ հետո թափահարեց նորացած փետուրները և թռավ ստուգելու, թե ինչ կա-չկա հարազատ միջավայրում:

ՊԼԱՆ

1. Ինքնակոչը:
2. Խուանը և Խուանիտան:
3. Գազանանոցի նոր բնակիչներ Դեյլին և Դիլին:
4. Սրտառուչ բարեկամություն:
5. Անբացատրելի թշնամանք:
6. Թրամպին պատժվում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փողհար, վերակացու, կոթկոթալ, հարգանքի հավաստիքը մատուցել, ներկա-բացակա, խոճկոր, չխկչխկացնել, հուզիչ մտերմություն, սև ամպեր կուտակվել, խուճապահար, խցկվել, անվերջանալի ծաղրուծանակ, փառավոր հաղթանակ, անօգնական թպրտալ, մախաթի պես սուր կտուցներ, հոգեառ, օրհասական դրություն, նորացած փետուրներ, կա-չկա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *ա/ Ջերալդ Դարելը անգլիացի է, քսաներորդ դարի ճանաչված գրող, բնախույզ-կենսաբան:*

բ/ Փողհարը թռչուն է, աղավնու ցեղերից մեկը:

VII

ԴԱՍԱՐԱՆ

ՀՈՂԻ ԲՈՒՅՐԸ

Ըստ Սերո Խանզադյանի

Երեք երաժիշտ, երեք ջերմ ընկեր, երեք անբախտ տարագիր թողել են իրենց Հայրենիքը և ընկել են աշխարհեաշխարհ՝ իրենց երգով մի պատառ հաց վաստակելու: Նրանցից ավագը արդեն զառամ է ու կույր: Մյուս երկուսը դեռ երիտասարդ են, բայց Հայրենիքի կարոտից մաշվել, ծերացել են:

Գրեթե ամեն օր նրանք նվագում և երգում են օտարների համար՝ մի կում գինի ու մի պատառ հաց ստանալու հույսով:

Մի օր այդ օտար երկրի թագավորը լսում է նվագածուների եռյակի մասին: Նա երաժիշտներին հրավիրում է իր ապարանքը, որ այրեն այնտեղ և մշտապես ուրախացնեն իրեն և իր կոչնականներին:

Ամենայն բարեխղճությամբ երաժիշտները կատարում են իրենց գործը, բայց նրանց նվագի և երգի մեջ ուրախություն քիչ կար: Ինչ նվագում են կամ երգում, թախծոտ է ու տրտում: Ինչ խոսում են, հիշում են հեռուներում թողած հայրենին:

Մի օր բարկացավ թագավորը, երաժիշտներին հրամայեց անհապաղ հեռանալ իր երկրից:

- Եթե մինչև արևի ծագելը դուրս չգաք իմ երկրի սահմաններից, ապա ես գլխատել կտամ երեքիդ էլ, - սպառնաց ահեղ թագավորը:

Խավարչտին գիշեր է: Երեք երաժիշտները ճեպով հեծնում են իրենց ձիերը ու սլանում դեպի հայրենի երկիր:

Սլանում են երեք նվագածուները՝ փորձելով սրտով գտնել դեպի տուն տանող ճանապարհը: Ձիերը հևում են սանձակոծ վազքից: Գիշերն սկսում է սպառվել, մոտ է արշալույսը: Փախչողների սրտում ահագնանում է վախը:

Կույր երաժիշտը հոտոտում է օդը: Աչքերի կույր մթությամբ շոշափում է երկինքը. չեն հասել արդյոք իրենց հողին, իրենց աշխարհին:

Առավել տագնապում են երաժիշտները, երբ լսում են ցայգահավի կանչը: Ուր որ է լույսը կբացվի, ու դաժան թագավորի մարդիկ կբռնեն իրենց:

Ահա աղոթարանն սկսեց շառագունել. մշուշի մեջ ուրվագծվում են անողորմ թագավորի գինվորները:

- Մահն է մոտենում մեզ, - աղաղակում են երիտասարդ երաժիշտները:

Կույր երաժիշտը կտրուկ ձգում է ձիու սանձը:

- Զավակնե՛րս, մեր երկրի օդն եմ շնչում հիմա ես: Հասել ենք, հասել ենք մեր աշխարհը:

- Ո՛չ, վարպե՛տ, մենք չենք հասել մեր հողին: Մեր երկիրը հեռու է, մեր մահը մոտ, - ախողորմ ձայնում են մյուս երկուսը:

- Կանգնեցե՛ք, - գոչում է կույր երաժիշտը,- մի բուռ հող տվե՛ք ինձ:

Ջահել երաժիշտները նրան մի բուռ հող են տալիս: Կույրը հոտոտում է հողը և ցնծությամբ ավետում.

- Սա մեր հողն է, մեր հողի բույրը: Մի՛ վախենաք, զավակնե՛րս, մենք արդեն մեր աշխարհում ենք:

Երիտասարդ երաժիշտները հետ են նայում, տեսնում՝ թագավորի գինվորները կանգ են առել ու նայում են իրենց: Նրանք այլևս չեն համարձակվում առաջ գալ:

Երաժիշտները երկարատև դեգերումներից հետո հասել են իրենց աշխարհը: Նրանք փրկված են:

ՊԼԱՆ

1. Տարագիր երաժիշտները:
2. Թագավորի հրավերը:
3. Թագավորի գայրույթը:
4. Փախուստ օտար ու անողոք թագավորից:
5. Կույր երաժշտի ավետիսը:
6. Փրկություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անբախտ տարագիրներ, աշխարհեաշխարհ, մի պատառ հաց, զառամ ու կույր, նվագածուների եռյակ, թախծոտ, տրտում, անհապաղ հեռանալ, աչքերի կույր մթություն, ցայգահավի կանչ, աղոթարան, շառագունել, ուրվագծվել, ցնծությամբ ավետել, երկարատև դեգերումներ:

ԱՐՇԱԿ ԵՎ ՇԱՊՈՒՀ

Ըստ Փավստոս Բուզանդի

Չորրորդ դարում երեսունչորս տարի մեր Հայոց աշխարհը պատերազմ մղեց պարսից թագավորի դեմ: Եվ հայերը, և պարսիկները անչափ հոգնել էին երկարատև կռիվներից: Շատ Հայ նախարարներ ըմբոստացան Արշակ թագավորի դեմ և հրաժարվեցին մասնակցել կռվին:

Պարսից Շապուհ թագավորը մեծ ընծաներով, հրովարտակներով, աղաչանք-պաղատանքով խնդրեց Արշակ արքային գնալ Պարսկաստան՝ սեր և խաղաղություն հաստատելու: Արշակը չէր ուզում գնալ Շապուհի կոչին: Բայց հայ իշխանները ստիպեցին նրան ընդունել պարսից թագավորի սիրալիր հրավերը:

Արշակը ճամփա ընկավ: Նրան ուղեկցում էին Հայոց զորավար սպարապետ Վասակ Մամիկոնյանը, թագավորի դայակը և այլ մեծամեծներ:

Շապուհը դրժեց իր ուխտը և Արշակին ընդունեց իբրև իր ծառայի: Նա նախատեց ու համդիմանեց Արշակին, իսկ սա էլ իրեն համեստ և մահապարտ ճանաչեց արքայի առաջ:

Հետո Շապուհ թագավորը խորհրդի կանչեց իր աստղահմաններին ու աստղագուշակներին:

- Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ թագավորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Եթե ես գիտենայի, թե նա այսուհետև ինձ հնազանդ կլինի, ապա մեծամեծ պարգևներով նրան իր աշխարհը կուղարկեի: Բայց ես վստահ չեմ նրա այժմյան հնազանդության ցույցերին և չգիտեմ՝ ինչպես փորձեմ նրան:

Աստղագուշակները մտածեցին, մտածեցին և Շապուհ արքային մի հնարք սովորեցրին:

Շապուհը իր մարդկանց ուղարկեց Հայաստան, պահանջեց այնտեղից հող ու ջուր բերել: Երբ կատարվեց արքայի պահանջը, նա իր սրահի հատակի կեսի վրա հայոց հող լցրեց, վրան ջուր ցանեց: Ապա կանչեց Արշակ արքային, բռնեց նրա թևը, և երկուսով զրուցելով ճեմում էին սրահում: Քանի դեռ պարսկական հողի վրա էին, Արշակն ասում էր.

-Ես մեղանչեցի և համեստ եմ քո առաջ, իմ թշնամիները ինձ մոլորեցրին, և սուր առա քո դեմ:

Իսկ երբ գալիս էին Հայոց հողի վրա, Արշակը ամբարտավան ու գոռոզ կերպարանք էր ընդունում և սկսում հոխորտալ ու նախատել Շապուհին:

- Հեռու ինձանից, չարագո՛րծ ծառա, ես չեմ ների քեզ իմ նախնիների վրեժը:

Եվ այսպես շարունակ: Պարսկական հողի վրա Արշակը խեղճանում, մեղա էր գալիս, իսկ Հայոց հողի վրա ըմբոստանում էր ու սպառնում Շապուհին:

Այդ նույն օրվա երեկոյան՝ ընթրիքի ժամանակ, պարսից թագավորն Արշակին նստեցրեց բոլոր կոչնականներից ներքև, նրա գահույքի տակ էլ Հայոց հող լցրեց, վրան ջուր ցանեց:

Երբ բերին Արշակին, բազմեցրին իր տեղում, նա մի պահ ուռած-փքված նստեց, հետո ոտքի կանգնեց ու ասաց Շապուհին.

- Իմն է այդ տեղը, որտեղ դու ես բազմել: Երբ ես իմ երկիրը համնեմ, քեզնից խստագույնս վրեժխնդիր կլինեմ:

Շապուհը հրամայեց անմիջապես շղթայել Արշակին, տանել Անհուշ բերդը և պահել այնտեղ մինչև մահը:

ՊԼԱՆ

1. Պատերազմ երեսունչորս տարի անընդմեջ:
2. Պարսից Շապուհ արքայի հրավերը:
3. Աստղաշմաների խորհուրդը:
4. Հող և ջուր հայոց երկրից:
5. Հայրենի հողի ուժը:
6. Կալանում Անհուշ բերդում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ըմբոստանալ, հրովարտակ, աղաչանք-պաղատանք, ուխտը դրժել, իրեն հանցավոր և մահապարտ ճանաչել, աստղաշմա, հնազանդության ցույց, ճեմել, ամբարտավան ու գոռոզ կերպարանք, հոխորտալ, գահույք, ուռած-փքված, խստագույնս վրեժխնդիր լինել:

ԱՐՇԱԿ ԵՎ ԴՐԱՍՏԱՄԱՏ

Ըստ Փավստոս Բուզանդի

Պարսկաստանի Շապուհ թագավորը հայոց Արշակ արքային խաբեությամբ կանչել էր իր մայրաքաղաքը և ձերբակալել Անհուշ բերդում: Մեր արքայի հետ գերել էր նաև շատ հայ նախարարների, որոնց պահում էր իր պալատում և հարկ եղած դեպքում ուղարկում էր իր թշնամիների դեմ կռվելու: Այդ նախարարների կազմում էր նաև արքունի գանձերի պահապան Դրաստամատ հայր Մարդպետը:

Մի անգամ քուշանների դեմ մղված կռվում պարսից Շապուհ թագավորը շրջապատվեց թշնամու զինվորներով: Մահ կամ գերություն. այդպես անփառունակ կարող էր գտնել իր վախճանը չար Շապուհը, եթե այդ պահին վրա չհասներ կտրիճ Դրաստամատը: Նա առյուծի պես վրա ընկավ և կոտորեց Շապուհին շրջապատող քուշաններից շատերին, մյուսներին էլ փախուստի մատնեց: Հայ նախարարի մեծահոգությունն ու քաջությունը ցնցեցին Շապուհին:

- Խնդրի՛ր, քա՛ջ, ինչ որ կամենաս՝ ի հատուցումն քո հերոսության:

Այդ ժամանակ Դրաստամատը խոր հառաչեց, ոչինչ չասաց ու սկսեց մտորել:

- Մի՛ երկմտիր, քաջազու՛ն, կստանաս՝ ինչ խնդրես, ահա քեզ իմ արքայական երդումը:

- Տե՛ր արքա, ինձ ոչինչ պետք չէ՝ ո՛չ գանձ, ո՛չ հարստություն, ո՛չ կալվածքներ: Թո՛ւյլ տուր այցելեմ հայոց Արշակ թագավորին՝ իմ իսկական տիրոջը:

Շապուհը խոժոռեց ճակատը:

- Դժվար բան խնդրեցիր: Քանի դեռ պարսից թագավորությունը կանգուն է, չի եղել մի մարդ, որ համարձակված լինի թագավորին հիշեցնել Անհուշ բերդում ցմահ բանտարկվածների մասին: Բայց քանի որ մեծ է քո ծառայությունն իմ հանդեպ, թող կատարվի ցանկությունդ:

Շապուհը Դրաստամատին տվեց մի թիկնապահ ու հրովարտակ՝ արքունական մատանիով կնքված: Դրաստամատն անմիջապես մեկնեց Խուժիստան, ուր գտնվում էր Անհուշ բերդը:

Քաջ նախարարին շատ վշտացրեց իր արքայի ծանր վիճակը: Նա անմիջապես արձակել տվեց երկաթե կապանքները, ապատեց ձեռնակապերից ու ոտնակապերից, նրան լողացրեց, ազնիվ զգեստներ հագցրեց, օծեց անուշաբույր յուղերով: Ապա թագավորավայել ընթրիք պատրաստել տվեց, բազմեցրեց Արշակին և սկսեց նրան մատուցել գինի, մատուցել տեսակ-տեսակ խորտիկներ: Իր թագավորին ուրախացնելու համար կանչել էր նաև նվագածուներ, որոնք հայկական մեղեդիներով փորձում էին ամոքել արքայի վիշտը:

Ընթրիքի վերջում Դրաստամատը աղանդեր մատուցեց՝ միրգ ու ամիճ: Տվեց նաև մի դանակ, որ կտրի և ուտի ամիճը: Արշակն արդեն բավականին գինի էր խմել և մի քիչ գինով էր: Նա հանկարծ վեր թռավ տեղից և սկսեց սրտամորմոք ձայնով ողբալ իր վիճակը.

- Վա՜յ ինձ՝ Արշակիս, որտեղից ուր ընկա, ի՜նչ օրի հասա:

Եվ մինչ Դրաստամատն արցունքից մշուշված աչքերով նայում էր իր արքային, վերջինս ամիճ կտրելու դանակը խրեց իր սիրտը: Հայոց արքան մահացավ հենց նստած տեղում՝ ընթրիքի սեղանի մոտ, իր տիրասեր նախարարի սարսափահար հայացքի առաջ:

Դրաստամատը հուսահատ մի ճիչ արձակեց, վրա ընկավ, դանակը քաշեց հանեց Արշակի կրծքից և խրեց իր կողը:

Այդպես Հայոց Արքան ու Դրաստամատ նախարարը իրենց ողբերգական վախճանը գտան Հայրենի հողից հեռու՝ Անհուշ բերդում:

ՊԼԱՆ

1. Պարսկաստանում գերված հայ նախարարները:
2. Կռիվ քուշանների դեմ:
3. Շապուհ արքայի գլխին կախված վտանգը:
4. Փրկություն Դրաստամատի ձեռքով:
5. Շապուհի երախտագիտությունը:
6. Դրաստամատի խնդրանքը:
7. Անհուշ բերդում բանտարկված Արշակ արքան:
8. Ուրախ ընթրիք:
9. Արշակ թագավորի կսկիծը և ինքնասպանությունը:
10. Տիրասեր Դրաստամատ նախարարի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) արքունի գանձեր, քուշաններ, անփառունակ վախճան, կորիճ, ի հատուցումն, երկմտել, քաջազուն, ցմահ բանտարկված, հրովարտակ, երկաթե կապանք, ձեռնակապ, ոտնակապ, անուշաբույր յուղ, խորտիկ, նվագածուներ, ամոքել արքայի սիրտը, աղանդեր մատուցել, ամիճ, սրտամորմոք ձայն, հուսահատ ճիչ.

բ) հատուկ անուններ.

Պարսկաստան, Շապուհ արքա, Անհուշ բերդ, Խուժիստան, Դրաստամատ Հայր Մարդպետ, Արշակ թագավոր:

*2. Բացատրել **աղանդեր, ամիճ** բառերը:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Փավստոս Բուզանդը հինգերորդ դարի պատմիչ է: Նրա մասին կենսագրական տեղեկություններ հայտնի չեն:*

Բուզանդի «Հայոց պատմություն» երկն ամփոփում է Արշակունի թագավորների և քահանայապետերի գործունեության հիսունամյա ժամանակաշրջանը (330-387 թթ):

Պատմիչը հավաստի և վավերական նյութերին զուգահեռ օգտագործում է հեթանոսական զրույցներ, ավանդավեպեր, երգեր, հրաշապատում տեսիլներ և այլն: «Հայոց պատմությունը» հայ հին գեղարվեստական արժեքի նշանավոր երկերից մեկն է:

ԱՄԵՆԱԼԱՎ ԽՈՍՔԸ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Հին ժամանակ Շիրակում երիտասարդ մի իշխան էր ապրում՝ Թաթ անունով: Ինքը գեղեցիկ էր, խոսքը՝ տգեղ: Ինչ աղջկա հետ խոսում էր՝ բան չէր ստացվում:

- Մեր ինչի՞ն է պետք նրա գեղեցիկ դեմքը, մի կարգին խոսել չգիտե, - միաբերան ասում էին Շիրակի չմահավան աղջիկները:

Թաթը ճարահատյալ դիմում է իմաստունների օգնությանը:

- Իմ ունեցած ոսկու կեսը ձեզ. միայն թե մեկ ամսում ինձ ճարտասան դարձնեք, - պայման է դնում Թաթը:

- Դա մեր ուժերից վեր է, - փորձում են առարկել իմաստունները:

- Ինչո՞ւ:

- Որովհետև ոչ մեկը չի կարող մեկ ամսում սովորել այն, ինչ ուրիշները սովորում են ամբողջ կյանքում:

- Հաստագլուխնե՛ր և տխմարնե՛ր, ինձ թոթովախո՞ս եք կարծում, ինչ է, ես այնպես կանեմ, որ դուք քնեք աղբանոցում:

Իմաստունները ահից պարտավորվեցին մեկ ամսում պերճախոս դարձնել Թաթին: Բան դուրս չեկավ: Զայրույթից նա գազազեց, սկսեց ճամարտակել ավելի անվարժ և անվայելուչ:

Վերջապես որոշեց գնալ Աստծու մոտ: Շալակն առավ իր ոսկու պարկն ու ճամփա ընկավ: Կեսօրին հասավ մի թզենու, որտեղից ճանապարհը երկատվում էր:

- Է՛յ, ի՞նչ ես գլուխդ տմբտմբացնում, ասա՛ ինձ, այս երկու ճամփաներից ո՞ր մեկն է տանում Աստծու մոտ:

— Դու մոռացար «բարի օր» ասել, երիտասա՛րդ,- պատասխանեց ծերունին:

- Վերցրո՛ւ այս երկու ոսկին, մեկն իմ չասած «բարի օրվա» դիմաց, մյուսն էլ որպես վարձ՝ Աստծու մոտ տանող ճանապարհը ցուցանելու համար:

- Չէ՛, երիտասա՛րդ, ինձ ոսկի պետք չէ: Դու պետք է կատարես իմ պայմանը:

- Ի՞նչ պայման:

- Մի ամիս կնստես իմ տեղը և անցնող-դարձողի «բարի օր» ողջույնին կպատասխանես «Աստծու բարին» խոսքերով: Բայց պետք է այդ բառերն ասես մեղմ, հանգիստ, սրտանց, այնպիսի ավյունով, որ արձագանքդ ուժ տա հոգնած ճամփորդին ու վհատ անցվորին: Մի ամիս հետո ես կերևամ և կասեմ, թե որն է Աստծու մոտ տանող ճամփան:

Այս ասելով՝ ծերունին անհետացավ:

Թաթը մի ամիս նստեց թզենու մոտ և առավ անցնող-դարձողի բարևը: Երեսուներորդ օրը երևաց ծերունին և ասաց.

- Բարի օր, երիտասա՛րդ:

- Աստծու բարին, բարի՛ մարդ, - պատասխանեց Թաթը:

- Դու կարո՞ղ ես ասել, թե ո՞րն է աշխարհի ամենալավ խոսքը:

- Ողջույնին ողջույնով պատասխանելը՝ Աստծու բարին: Ես ամբողջ կյանքում դա չեմ մոռանա:

- Դու կատարեցի՞ր պայմանը, բռնի՛ր ձախ ճամփան և գնա՛ Աստծու մոտ. բարին ընդ քեզ, - ասաց ծերունին:

Թաթը շարունակեց ճամփան: Գնաց, գնաց ու դեմ առավ մի բերդաքաղաքի: Այստեղից հետո մի ճանապարհը երեք էր դառնում: Ի՞նչ իմանա, թե որն է Աստծու մոտ տանում: Նա դիմեց բերդաքաղաքի տիրոջը: Վերջինս ասաց.

- Իսկ դիմացն ի՞նչ կտաս:

- Տաս ոսկի,- պատասխանեց Թաթը:

- Ոչ՛, ոսկին մեր աշխարհում գին չունի: Ես մի պայման ունեմ:

- Ի՞նչ պայման:

- Դու պետք է մի ամիս ծառայես ինձ մոտ:

- Իսկ ի՞նչ պիտի անեմ:

- Ամեն օր պիտի համդիպես իմ տիկնոջը և ասես.«Այդ շրջազգեստով դու ավելի հմայիչ ես. անման են քո նոր խոպոպիկները, դեմքդ էլ ծիծաղախիտ է»:

Թաթն ուտում ու խմում էր և օրվա մեջ մի անգամ համդիպում բերդաքաղաքի տիրուհուն: Զարմանալի կին էր, ո՛չ հրապուրիչ էր, ո՛չ անհրապույր: Երևի բոլոր կանայք էլ այդպես են. հոգու խնդությունից հրապուրիչ են դառնում, տխրությունից՝ անհրապույր:

Թաթը ջերմագին բարևում էր տիրուհուն և ասում.

- Այդ շրջազգեստով դու ավելի հմայիչ ես. անման են քո խոպոպիկները, դեմքդ էլ ծիծաղախիտ է:

Տիրուհու դեմքը պայծառանում էր, և նա լիաթոք ժպտում էր Թաթին:

Ամսվա վերջին բերդաքաղաքի տերը Թաթին հարցնում է.

- Ո՞րն է աշխարհի ամենագեղեցիկ խոսքը:

- Կնոջն ասված տղամարդու շոյիչ խոսքը, որից կերպարանափոխվում է կնոջ հրապույրը՝ ինչ համդերձի մեջ էլ նա լինի:

- Դու կատարեցի՛ր պայմանը, - ասում է բերդաքաղաքի տերը, բարի ճանապարհ մաղթում նրան և ցույց տալիս, թե ինչպես պիտի գնա Աստծու մոտ:

Թաթը նորից բռնում է ճամփան: Հասնում է մի բերդի, որի սպարապետը պահակն ասում է.

- Ոչ՛, ոսկու դիմաց ես քեզ Աստծու մոտ տանող ճանապարհը ցույց չեմ տա:

- Իսկ ի՞նչ ես ուզում:

- Դու պիտի կատարես իմ պայմանը:

- Ի՞նչ պայման:

- Սա հանցագործների խուց է: Այստեղ բանտարկված են բոլոր տեսակի ավազակները: Ինչ հայհոյանք, զազրախոսություն ասես, որ դուրս չի գալիս սրանց բերանից: Սրանց հետ մնալը նույնն է, ինչ մարդ ամբողջ կյանքն ապրի արտաքնոցում: Մի ամսով ես քեզ կգցեմ սրանց մեջ: Դու պիտի կարողանաս ոչ մի հայհոյանք չտալ, կռիվ ու կոպիտ ոչ մի խոսք չասել:

Թաթը համաձայնվում է և կամովին մտնում խուց: Մտնում է թե չէ, բանտարկյալները սկսում են հայհոյել ու լուտանք թափել նրա գլխին:

Թաթը չլսելու է տալիս և ասում.

- Բարի օր ձեզ, մարդի՛կ:

Բոլորն արձագանքում են անսանձ հռհռոցով, անպարկեշտ ծամածռություննե-

րով: Ամբողջ մի ամիս բանտարկյալները անպատրվակ կոպտում ու վիրավորում են Թաթին, այլազան հիշոցներ թափում նրա գլխին: Թաթը համբերում է և ոչ աքի ոչ մի հայհոյանք չի տալիս: Ամսվա վերջին պահակը բացում է խցի դուռը, Թաթին դուրս հրավիրում և հարցնում.

- Ի՞նչ հասկացար այս մեկ ամսում:

- Որ մարդն անասունին կարող է նմանվել նախ և առաջ հայհոյանքով և անառակ խոսքերով:

- Քայլենք, հիմա ես քեզ ցույց կտամ, թե որն է Աստծու մոտ տանող ճամփան,- ասում է պահակը:

- Չէ՛, ես պետք է տուն վերադառնամ, որովհետև Աստծուն այլևս անելիք չունեմ:

ՊԼԱՆ

1. Երիտասարդ Թաթը. նրա արատը:
2. Թաթը օգնություն է խնդրում իմաստուններից:
3. Աստծու մոտ գնալու որոշումը:
4. Ծամփաբաժանում հանդիպած ծերունին և նրա պայմանը:
5. Բերդաքաղաքի տերը և նրա պայմանը:
6. Ավազակների խցի պահակը և նրա պայմանը:
7. Վերադարձ հայրենիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

չմահավան աղջիկ, ճարահատյալ, ճարտասան, Թոթովախոս, ճամարտակել, վհատ անցվոր, ծիծաղաշարժություն, լիաթոք ժպիտ, տղամարդու չոփչ խոսք, հանդերձ, հանցագործների խուց, հայհոյանք, գաղրախոսություն, լուտանք, անսանձ հռհռոց, անպարկեշտ ծամածռություն:

ԱՄԵՆԱԳԵՏ ՄԱՐԴԸ

Ըստ Վարդան Այգեկցու

Մի աշխարհում տիրում էր մի Թագավոր: Սա կամեցավ բարձրաբերձ աշտարակ շինել, որ կանգնի այնտեղ և դիտի իր տերության մեջ կատարվող գործերը:

Հավաքվեցին վարպետներ ու բանվորներ, չափ ու ձև արեցին, գծեցին, հետո էլ հիմք փորեցին ու սկսեցին շարել պատերը: Ցերեկը պատերը շարում էին, բայց գիշերը դրանք փլվում էին:

Թագավորը կանչեց իր երկրի իմաստուններին և հարցրեց պատերի փուլ գալու պատճառը:

- Պիտի գտնես մի շատ ագետ ու հիմար մարդ, Թագավո՛րն ապրած կենա, ու կենդանի դնեն այդ պատի մեջ և շարեն: Պատն այլևս չի փլվի, - ասացին իմաստունները:

Թագավորը մարդիկ ուղարկեց իր տերության բոլոր կողմերը, որ գտնեն-բերեն մի հիմար մարդ:

Իսկ գիտուններն էլ սկսեցին մտածել, թե ո՛վ կարող է լինել ամենահիմարը:

- Ջլնորսից ագետ չկա. նրա գործը ձկան և ջրի հետ է, - ասաց մեկը:

- Կարծում եմ՝ խշապանը ավելի հիմար է. ամառ-ձմեռ էշի հետ է շրջում, - առաջարկեց երկրորդը:

Մի երրորդ գիտուն էլ ասաց, որ Թագավորը մի հովիվ ունի, որ երբեք գյուղ ու քաղաք չի տեսել, ծնվել ու մեծացել է սարում, մշտապես ոչխարի մեջ է ապրել, այ նա է խելապակասը: Ուրախացան, որ գտան հիմարին: Մի քանի մարդ ելավ գնաց հովվի մոտ:

- Մեր ողորմած Թագավորը կանչում է քեզ, հովի՛վ, - ասացին նրան:

Հովիվը ոչխար մորթեց, պանիր ու մածուն բերեց և սրտանց հյուրասիրեց իր մոտ եկած մարդկանց: Հովվի սրտաբացությունից ազդված պալատականները բացեցին գաղտնիքը և ասացին, թե ինչո՛ւ է Թագավորը կանչում նրան:

Հովիվը քահ-քահ ծիծաղեց և ասաց.

- Ցգետը այն գիտուններն են, որ իմ տեղն են ցույց տվել:

Հետո դուրս եկավ, բերեց մի մաքի և ասաց.

- Այս մաքին շուտով գառ պիտի ունենա: Այդ գառը էգ է, գլուխը սպիտակ է, մարմինը՝ սև:

Այս ասելով՝ նա մորթեց ոչխարը և պատռած դրանիկները տեսան, որ նրա ասածը ճիշտ էր:

- Ձեր գիտունները կարո՞ղ էին այսքան բան իմանալ, - հարցրեց հովիվը:

- Ո՛չ, - պատասխանեցին պալատականները:

Այդ ժամանակ հովիվը նրանց սովորեցրեց, թե ինչպես գտնեն այդ տերության ամենահիմար մարդուն:

Հաջորդ օրը Թագավորը կանչեց իր գլխավոր նախարարին, նրա ողջ ունեցվածքը բռնագրավեց, հրապարակավ գանահարել տվեց և հրամայեց կախել:

Ապա երեք օր հետո մունետիկները շրջեցին քաղաքում և հայտարարեցին, թե ով ուզում է դառնալ Թագավորի գլխավոր նախարար, թող ցանկություն հայտնի, և Թագավորը նախկին նախարարից մնացած ինչքն ու պաշտոնը նրան կտա:

Եվ ահա առաջ եկավ մեկը, որ տեսնելով հանդերձ նախորդ նախարարի գլխին եկածը՝ կամեցավ բռնել նրա տեղը:

- Ահա և քո տերության ամենահիմար մարդը, Թագավո՛ր, նրան դի՛ր աշտարակի պատի մեջ, - ասաց հովիվը:

Թագավորը այդպես էլ վարվեց, և աշտարակի պատերը ամուր ու հաստատուն վեր բարձրացան:

ՊԼԱՆ

1. Աշտարակը. փլվող պատեր:
2. Գիտունների առաջարկը:
3. Հիմար մարդու փնտրտուք:
4. Իմաստուն հովիվը:
5. Գլխավոր նախարարի գլխին եկած փորձանքը:
6. Ամենահիմար մարդը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

բարձրաբերձ աշտարակ, գտնել-բերել, ամառ-ձմեռ, խելապակաս, սրտանց հյուրասիրել, սրտաբացություն, քահ-քահ ծիծաղել, դրանիկ, ունեցվածքը բռնագրավել, հրապարակավ գանահարել, մունետիկ, ինչք:

Բացատրել **մունետիկ, դրանիկ, գանահարել** բառերը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Վարդան Այգեկցին ծնվել է Ասորիքի Տլուք գավառի Մարաթա գյուղում: Կրթություն ստացել է Կիլիկիայի Արքակաղին վանքում: Եղել է վարդապետ և քարոզիչ, հաստատվել և ապրել է Այգեկում 1270 թվին:*

Այգեկցու առակները պատասխանում են նաև այսօրվա մարդու հարցադրումներին: Դրանք ծաղրում են մարդկային արատները և թերությունները, խարազանում են ագահությունը, չարությունը, մեծամտությունը, նախանձը:

Այգեկցու առակները հետագայում մշակել են Խաչատուր Աբովյանը («Պարապ վախտի խաղալիք»), Հովհաննես Թումանյանը («Մի կաթիլ մեղրը», «Անբուն կկուն»), Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Աթաբեկ Խնկոյանը և այլք:

ԵՐԵՔ ԽՐԱՏ

Ըստ Ռուբեն Զարդարյանի

Մի օր իմաստուն և բարեբար Խիկարի մոտ հյուր եկավ: Իրիկվա դեմ տեղ հասավ ու իր էշով ներս մտավ իմաստունի տան դարպասով:

Ծառաները էշը ախոռ տարան, իսկ հյուրին, որի անունը Ամիր էր, տարան Խիկարի մոտ: Ամիրին կերակրեցին, թույլ տվեցին, որ հանգստանա, երկար ճանապարհի հոգնությունը թոթափի:

Այդ գիշեր Խիկարը հրավիրված էր թագավորի պալատը` խնջույքի: Երկմտանքի մեջ ընկավ Խիկարը: Ի՞նչ անի: Եթե հյուրին թողնի ու գնա, նրան վիրավորած կլինի: Շատ խորհեց իմաստունը, վերջը որոշեց Ամիր հյուրին իր հետ պալատ տանել:

- Սիրելի՛ հյուր, այսօր միասին գնալու ենք թագավորի պալատը` խնջույքի: Գիտեմ, որ մեծամեծների հետ սեղան չես նստել: Բայց ոչինչ, մի՛ ամաչիր, մի՛ քաշվիր: Միայն հիշի՛ր և արիությամբ հետևի՛ր իմ տված երեք խրատին:

Խրատ առաջին. տեղդ ճանաչի՛ր, վերը մի՛ նստիր, որ հետղհետե վար չիջնես:

Խրատ երկրորդ. ուրիշի խոսակցությանը մի՛ միջամտիր, մեջ մի՛ ընկնիր, խոսի՛ր, երբ քեզ հարց տան, բայց տասը լսի՛ր, մեկ պատասխանի՛ր:

Խրատ երրորդ. մինչև քեզնից որևէ բան չխնդրեն, մեջ չընկնես և չտաս:

- Շատ շնորհակալ եմ, իմաստու՛ն Խիկար, կհետևեմ քո խրատներին, - ասաց հյուրը:

Գնացին պալատ: Ամիրը Խիկարից չէր հեռանում: Թագավորը իմաստունին հրավիրեց բազմելու իր կողքին: Ամիրը չսպասեց հրավերքի, անմիջապես տեղ գրավեց Խիկարի կողքին: Շուտով այլ մեծամեծներ ու իշխաններ եկան և Ամիրին տեղից հանելով` իջեցրին մինչև դռան մոտ:

Խիկարը մտքում քմծիծաղ տվեց.«Հյուրս չհետևեց իմ առաջին խրատին»:

Խնջույքը տաքացավ. կենդանացան երգ ու խոսակցություն: Խեղճ Ամիրի գլուխը պտտվում էր թունդ գինուց և համադամ խորտիկներից: Գինի էր խմել, կատաղը տաքացրել ու կողքին նստածներին պատմում էր իր քաջագործությունները: Թե ինչպես առյուծի երախն էր պատռել, թե ինչպես ձի էր գողացել, թե ինչպես կնոջն էր ծեծել: Եվ վերջապես պատմում էր, թե ինչպիսի աննման գինիներ է խմել իր ողջ կյանքում, թե որքան խեղճ է թագավորի սեղանը իր տեսածների համեմատ:

Կողքին նստածները ձանձրանում էին ու կշտամբանքով Խիկարի երեսին էին նայում: Բայց Ամիրը ոչինչ չէր տեսնում, ձայնն ավելի բարձրացնում, չէր թողնում, որ մեկը բերան բացի, մեջ էր ընկնում և ընդհատում հյուրերին:

«Ավա՜ղ, երկրորդ խրատս էլ հովը տարավ առաջինի պես», - մտածում էր իմաստուն Խիկարը:

Ուրախությունը մոտենում էր վախճանին: Ներս բերին վերջին խորտիկը: Սա թագավորի կտրիճ որսորդի սպանած եղնիկն էր, որ խոհարարը խորովել էր թոնրի մեջ, դրել մեծ սկուտեղի վրա ու շուրջը փլավ լցրել: Մատակարարը սկուտեղը բերեց և դրեց երիտասարդ որսորդի առջև: Ըստ ընդունված սովորույթի` նա ինքը պետք է կտրեր և մատուցեր եղնիկի միսը:

- Դանակ տու՛ր, դանակը մոռացել ես, - ձայնեց որսորդը մատակարարի հետևից:

Եվ մինչ մատակարարը կրծեր դանակը, Ամիրը տեղից վեր թռավ և գոտիկից կախված ոսկրե կոթով դաշույնը գիրթ շարժումով հանեց ու խրեց եղնիկի փորը:
«Հե՛յ վախ, վերջին խրատս էլ ջուրը ընկավ»,- մտքում մղկտաց Խիկար իմաստունը:

Այդ պահին Թագավորն այլևս չդիմացավ և ծառաներին հրամայեց այդ չար ու անհամ մարդուն գնդան տանել:

ՊԼԱՆ

1. Իմաստուն Խիկարի հյուրը:
2. Հրավերք Թագավորի պալատում:
3. Խիկար իմաստունի տված երեք խրատը:
4. Ամիրը անտեսում է առաջին խրատը:
5. Երկրորդ խրատի անտեսում:
6. Կարիճ որսորդի բերած եղնիկը:
7. Երրորդ խրատն էլ ջուրն է ընկնում:
8. Թագավորի պատիժը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Թոթափել ճանապարհի հոգնությունը, երկմտանքի մեջ ընկնել, մեծամեծներ, երգ ու խրախճություն կենդանանալ, թունդ գինի, համադամ խորտիկներ, կատարը տաքացնել, կչտամբանք, ընդհատել, հովը տանել, սկուտեղ, մատակարար, ոսկրե կոթով դաշույն, գիրթ շարժումով հանել, ջուրը ընկնել, մղկտալ, գնդան տանել:

2. Աշակերտներին առաջարկել այս պատմության համար գտնել նոր ավարտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ռուբեն Զարդարյանը (1874- 1915) արևմտահայ գրող, հրապարակախոս, խմբագիր, քաղաքական գործիչ, Մեծ եղեռնի զոհերից է: Ծնվել է Արևմտյան Հայաստանի Սևերեկ գավառում: Սկզբնական կրթությունը ստացել է Խարբերդում, այնտեղ էլ ստացել է իր կրթությունը: Մեզրե քաղաքի ազգային կենտրոնական վարժարանում աշխատել է որպես ուսուցիչ.*
Ստեղծագործել է տարբեր ժանրերով՝ չափածո և արձակ բանաստեղծություններ, վիպակ, նորավեպ, լեգենդ, հեքիաթ:

ԿՈԼԻԲՐԻՆ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Մեր տան դիմաց ապրում էր Տիգրան անունով մի ծերունի: Ութսունն անց էր և գրեթե կույր:

Ծերունին մի տնակ ուներ, որը ներսից շատ մաքուր ու կոկիկ էր, իսկ դրսից անչափ սովորական էր: Բայց տնակը շրջապատում էր աշխարհի լավագույն պարտեզը: Բուրալի, սև, տամուկ հողում աճում էին ծառեր ու թփեր. Տիգրանի հոգատարության շնորհիվ այգին փթթում էր ու իր գիրկը կանչում թևավորներին: Երկնքում թևող բոլոր արարածները սիրում էին մեր խղճուկ շրջակայքի այդ դրախտային անկյունը: Տիգրանն էլ սրանց էր սիրում:

Ձմռան մի ցուրտ օր, երբ վերադառնում էի դպրոցից, տեսա մեր փողոցի մեջտեղում կանգնած Տիգրանին, որն իր ձեռքի ափի մեջ ինչ-որ բան էր պահում: Ծերուկը հայացքը մե՛կ դարձնում էր իր ծառերին ու երկնքին, մե՛կ կրկին իր ձեռքի ափին:

Հետո մոտեցավ ինձ, բացեց ափը և հարցրեց.

- Ափիս միջինն ի՞նչ է:

- Կոլիբրի է, - պատասխանեցի:

- Ի՞նչ բան է:

- Դու գիտես դրանց: Ամռանն են հայտնվում, անշարժ կախվում են օդում ու հետո մեկ էլ սլանում գնում են: Թևերը արագ-արագ թափահարում են: Դրանցից մեկն է ձեռքումդ. մեռնում է:

Սրտաճմլիկ տեսարան էր: Ամառվա չքնաղ պստիկ էակը ծեր գեղջուկի մեծ ու կոշտացած ձեռքում: Ձմռան այս ցրտին մեռնում էր ամռան ամենավեհասքանչ էակը:

- Հետս ե՛կ, - ասաց ծերունին ինձ: - Դիմացի՛ր, սիրունի՛կ թռչունս, դիմացի՛ր, շուտով ամառը կգա,- սա արդեն թռչնակին էր ասում:

Մենք մտանք նրա փոքրիկ տան խոհանոցը, ու մինչ իր տաք շնչով ջերմացնում էր պստլիկին, ինձ ասում էր, թե ինչ պիտի անեմ:

- Գազօջախի վրա ճաշի մի գդալ մեղր տաքացրու ու լցրու ափիս մեջ, բայց տես, որ շատ տաք չլինի:

Ամեն ինչ արեցի ծերունու ասածով: Քիչ հետո կոլիբրին սկսեց կենդանության նշաններ ցույց տալ. սենյակի ջերմությունը, տաք մեղրի գոլորշին, և ծերունու սերն ու գորովը իրենցն արեցին: Շուտով ծերուկն իր ափի մեջ փոփոխություն զգաց, իսկ մեկ-երկու րոպե անց թռչնակն սկսեց կտցել մեղրը:

- Սա կապրի, - հայտարարեց ծերունին:

Ծերուկը խանդաղատանքով լայն բացեց ափը: Սքանչելի էր նոր կյանք առած փոքրիկ թռչունը. նա ճախրում էր նեղլիկ խոհանոցում, մոտենում էր պատուհանին, վերադառնում էր կրակի մոտ, կախվում օդում, ողջ կյանքում երբեք իրեն այդքան լավ չէր զգացել:

Ծերունին նստեց աթոռին: Նա լսողությունը լարել և ջանում էր տեսնել թռչնակին, բայց ոչինչ չէր տեսնում: Ինձ էր հարցուփորձ անում՝ ինչպե՞ս է, չի՞ թուլացել, լա՞վ է զգում իրեն: Ես մանրամասն նկարագրում էի ամեն ինչ:

- Բա՛ց արա պատուհանը, - ասաց ծերունին:

- Կապրի՞, - հարցրի ես:

- Հիմա ապրում է ու թռչել է ուզում, - ասաց նա: - Բա՛ց արա պատուհանը:

Ես բացեցի պատուհանը, կոլիբրին կախվեց բաց պատուհանի առջև, հետո դուրս թռավ:

Մենք մի երկու րոպե խոսեցինք, ու ես տուն գնացի:

Դրանից հետո ծերուկը միշտ պնդում էր, թե ձմռանը կոլիբրին ողջ է մնացել, բայց ես հավատացած չէի:

Նորից ամառ եկավ, նորից կոլիբրի թռչուններ տեսա, բայց անհնար էր իրարից զանազանել: Մի օր հարցրի ծերունուն թռչնակի մասին:

- Շուրջդ նայի՛ր: Կոլիբրի տեսնու՞մ ես:

- Շա՛տ, - բացականչեցի ես:

- Դրանցից ամեն մեկը մեր թռչնիկն է, - ասաց ծերուկը մեղմաձայն,- դրանցից ամեն մեկը, ամեն մեկը:

ՊԼԱՆ

1. Կույր ծերունին:
2. Փթթող պարտեզը:
3. Ձմռան մի ցուրտ օր:
4. Մենավոր կոլիբրին:
5. Խնամք:
6. Վերակենդանացած թռչնակը:
7. Նորից ամառ:
8. «Դրանցից ամեն մեկը մեր թռչնիկն է»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

բուրալի, սև, տամուկ հող, դրախտային անկյուն, անշարժ կախվել օդում, սրտաճմլիկ տեսարան, ծեր գեղջուկ, ամենակենսախինդ էակ, սիրունիկ թռչնակ, կենդանության նշաններ, տաք մեղրի գոլորշի, խանդաղատանք, ճախրել, հարցուփորձ անել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Կոլիբրին աշխարհում ապրող թռչուններից ամենագեղեցիկն ու ամենափոքրիկն է: Նրանցից շատերը սովորական իշամեղվի մեծության են: Իսկ ծիծեռնակի չափերն ունեցող կոլիբրիներին ասում են հսկաներ:*

Կոլիբրին ունի վառ գույնի և արտասովոր ձևի փետուրներ: Այս սիրունիկ թռչնակը շատ արագ է շարժվում և մեծ քանակությամբ էներգիա է վատնում: Ծախսվածը լրացնելու համար անընդհատ սնունդ է հայթայթում: Նա շատակեր է. օրվա ընթացքում իր կշռից երկու անգամ ավելի սնունդ է ընդունում: Իսկ սնունդը ծաղիկների նեկտարն է կամ մանր միջատները:

Կոլիբրին ապրում է Հարավային և Կենտրոնական Ամերիկայում:

ՈՍԿԻՆ ԵՎ ՑՈՐԵՆԸ

Ըստ Արևելքի ժողովուրդների հեքիաթի

Մի ժամանակ Հայաստանում ավելի շատ սիրում էին զբաղվել առևտրով կամ արհեստով: Հող մշակել չէին սիրում: Հաճախ արտերը մնում էին անջրդի ու անմշակ: Թագավորը տեսավ, որ այսպես մարդը երես է թեքում հողից՝ իրեն կերակրողից: Նա հրաման արձակեց, որ վարեն ու ցանեն դաշտերը, ջրեն աճեցնեն, որ ամեն ոք հաց ունենա, և սովը չավերի երկիրը:

Բայց շատերը չանսացին թագավորի կոչին. շարունակեցին առևտուր անել: Այդ ժամանակ նա իր մոտ կանչեց համբավավոր մի առևտրականի և մի իմաստուն շինականի:

Թագավորը նրանց հարցրեց.

- Ի՞նչն է աշխարհում ավելի կարևոր՝ ոսկի՞ն, թե՞ ցորենը:

Հարուստ առևտրականն ասաց.

- Ոսկին: Ոսկին մարդուն ոչնչությունից դարձնում է նշանավոր: Եթե մարդ ոսկի ունի, նա վայելում է հարգանք, ունի իշխանություն, ապրում է լիության մեջ: Ես խոնարհվում եմ ոսկու առջև:

- Մեր աշխարհում, - ասաց գեղջուկը, - ցորենից կարևոր բան չկա: Ցորենից ենք քաշում մեր ուժը և առողջությունը: Ես խոնարհվում եմ ցորենի առջև:

Հարուստը քամահրանքով քմծիծաղ տվեց, սկսեց վիճել և ապացուցել, որ ոսկին է կարևոր:

Այդ ժամանակ Թագավորը հրամայեց, որ և՛ առևտրականը, և՛ գյուղացին գնան իրենց տները, յոթ օր հետո ներկայանան իրեն՝ իրենց ընտանիքներով:

- Ձեզ հետ կվերցնեք այն ամենը, ինչը դուք կարևոր եք համարում, - ասաց Թագավորը և արձակեց նրանց:

Յոթ օր անընդմեջ հարուստը ոսկուց զարդեր էր պատրաստել տալիս, կնոջն ու աղջիկներին զուգում-զարդարում էր ապարանջաններով, մանյակներով ու մատանիներով: Իսկ գեղջուկը աղաց ցորենը, կնոջը հրամայեց մեծ քանակությամբ լավաշ թխել, իսկ աղջիկներին՝ թխել կարկանդակ ու գաթա:

Նշանակված օրը եկան Թագավորի ծառաներն ու երկու ընտանիքներին առաջնորդեցին պալատի կողքին գտնվող երկու խրճիթ: Նրանց առանձին-առանձին փակեցին՝ թույլ տալով վերցնել իրենց յոթ օրվա պատրաստածը:

Երեկոյան ամեն ընտանիքին մեկական գավ ջուր տվին:

Շինականի ընտանիքը կերավ իր լավաշը, գաթան, վրայից աղբյուրի սառը ջուր խմեց և պառկեց: Հաջորդ երեք օրն էլ այդպես անցկացրին: Հարուստի խրճիթից լացի և աղաչանքի ձայներ էին հասնում գեղջուկներին: Հարուստը խնդրում էր շինականին, որ իրենց էլ լավաշ տա: Սակայն Թագավորը արգելել էր ցանկացած փոխանակություն:

Հինգ օր հետո Թագավորը բացել տվեց խրճիթների դռները: Շինականը իր ընտանիքով ուրախ-զվարթ էր, իսկ առևտրականի ընտանիքը սովից չարացած էր աշխարհի և մարդկանց դեմ:

- Դե՛, ի՞նչն է ավելի կարևոր՝ ցորե՞նը, թե՞ ոսկին:

- Ցորենը, ցորենը ու դրանից թխված լավաշը,- հազիվ կմկմաց քաղցից նվաղած առևտրականը:

Դրանից հետո Հայաստան աշխարհում այլևս անմշակ հող չմնաց: Մարդիկ քարից անգամ հաց էին քամում:

Երկիրը լիացավ հացով, և երկար ժամանակ սովը մոռացավ Հայոց աշխարհի ճանապարհը:

ՊԼԱՆ

1. Մարդը և հողը:
2. Թագավորի հրամանը:
3. Առևտրականն ու շինականը Թագավորի մոտ:
4. Երկու ընտանիքի պատրաստությունը:
5. Հնգօրյա կալանք:
6. Սովից նվաղած առևտրականը:
7. Լիություն Հայոց աշխարհում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անջրդի, անմշակ հող, չանսալ, համբավավոր առևտրական, իմաստուն գեղջուկ, քամահրանքով քմծիծաղել, զուգել-զարդարել, ապարանջան, մանյակ, մեկական գավ ջուր, ուրախ-զվարթ, սովից չարանալ, քաղցից նվաղել, քարից հաց քամել:

2. Հիշել ցորենի ու հացի մասին ասույթներ, առած-ասացվածքներ, գրական ստեղծագործություններ:

ՎԻՇԱՊԸ

Ըստ Վրթանես Փափազյանի

Վաղուց, շատ վաղուց բարձրագագաթ լեռներից բխում էր մաքուր ու ականակիտ ջուր, գնում էր, միանում այլ վտակների ու առվակների: Դառնում էր հորդառատ գետ և իր ճանապարհը զարդարում հուռթի ու բարեբեր այգիներով, զմրուխտաշող մարգագետիններով, ծանրասաղարթ անտառներով:

Այդ ջրի ափերին մի մարդաշատ ավան էր ծաղկում: Մարդիկ ուրախ-զվարթ աշխատում էին, երգում և հավասարապես վայելում ջրի պարգևած բարիքը:

Բայց մի օր խուլ հուզում ընկավ մարդկանց մեջ. գետի ջրերը սկսել էին նվազել: Այդպես եթե շարունակվեր, մի քանի տարուց հետո գուցե բոլորովին ցամաքեր գետը: Արդեն սկսել էին չորանալ արտերը, ծառաստանների կանաչը խամրել էր, գորշացել:

Եվ դուրս եկան մարդիկ, խմբերի բաժանվեցին ու քայլեցին գետի հունով վեր, որ գտնեն դրա ակունքը, պարզեն ջրի նվազելու պատճառը:

Քայլեցին նրանք հոգնեցուցիչ, տաժանելի ճամփաներով, ուշադիր զննեցին ամեն ժայռ ու քար. ոչ մի հողաթումբ չէր փլվել, ոչ մի ժայռ ու քար տեղից չէր շարժվել, ոչինչ չէր փակել ջրի ճանապարհը:

Տասնհինգօրյա շրջագայությունից հետո վերադարձան մարդիկ, խորհրդի նստեցին: Երկար վիճեցին, թեր ու դեմ կարծիքներ հայտնեցին, գրեթե ցնորական առաջարկություններ արին: Վերջապես տեղից ելավ մի կորիճ և ասաց.

- Եղբայրնե՛ր, մեր ջրերը կլանում է վիշապը, որը բույն է դրել լեռներում:

Բարձրացավ ընդհանուր քրքիջ. հետո ծաղրի ու ծանակի կարկուտ թափվեց երիտասարդի գլխին: Ու հենց այդ օրն էլ նրան կպավ «խենթ» մականունը:

Նրա եղբայրները ոչ միայն ծաղրեցին Խենթին, այլև ծեծեցին ու ստիպեցին լռել և այլանդակ մտքեր չհայտնել:

Անցավ ժամանակ: Ջուրը հիմա մի բարակ առու էր, որ օր օրի ավելի էր նվազում: Մարդիկ այս անգամ նորից հիշեցին Խենթին, գտան նրան և առաջարկեցին գնալ, գտնել վիշապին:

Քայլեցին նորից անմատչելի ծործորներով, մագլցեցին քարափներն ի վեր, հասան գետի ակունքին: Նորից նստեցին, որ խորհեն, ծրագիր կազմեն:

- Մի՛ նստեք, եղբայրնե՛ր, եկեք փորենք, ժամանակ չկա, - փորձեց հորդորել Խենթը:

Բայց նրան լսող չեղավ: Ծարահատյալ ու հուսաբեկ՝ նա վերցրեց բրիչը և սկսեց փորել: Նրա բրիչի հարվածից դղրդում էր լեռը, թնդում էր գետինը: Ժայռերի խորքում լսվում էր խուլ մռնչյուն:

Երբ երեկո դարձավ, ու Խենթը վերջին կարծր քարն էր ջարդում, ականջները գրեթե խլացել էին վիշապի ցասումնալից աղաղակներից: Մյուս մարդիկ՝ դողահար ու դալուկ, հեռվից նայում էին. ոչ ոք սիրտ չէր անում միանալ կամ օգնել Խենթին: Ամեն մեկն ուզում էր իր կաշին փրկել՝ թեկուզ կիսամեռ, ծարավ ու թշվառ մնալու գնով:

Բրիչը մի վերջին ուժգին հարված հասցրեց, գլորվեց վերջին ժայռաբեկորը, և

մարդկանց սարսափահար հայացքի առջև պատկերվեց Հրեշի պլանդակ գլուխը: Նա բերանը դեմ էր տվել ջրերին, անկշտում ու անհագուրդ կլանում էր՝ հետզհետե ուռչելով ու հաստանալով:

- Հեռու, համդու՛գն, թե չէ կուլ կտամ, - որոտաց Հրեշը:

Բայց Խենթը բնավ չերկնչեց, թափով նետեց իր բրիչը և վնասեց Վիշապի ճակատը: Ցավից նա կծկեց բերանը, և մի քիչ ավելի շատ ջուր հոսեց նրա շրթունքների անկյուններից:

Հայրենակիցները, փոխանակ օգնելու Խենթին, նրան ուժով հետ քաշեցին, իրենք էլ բերանքսիվայր փռվեցին Վիշապի առջև և սկսեցին ներում հայցել:

- Լավ, - խոստացավ Հրեշը, - ձեզ ծարավ չեմ թողնի: Գնացե՛ք, ապրեցե՛ք իմ ողորմածությամբ: Ես շրթունքներիս ծայրերից միշտ ձեզ համար մի քիչ ջուր բաժին կհանեմ:

Ու իր դաժան խոստումը մինչև այսօր էլ ճշտությամբ կատարում է Հրեշը: Մարդկանց այնքան ջուր է տալիս, որ կարողանան մի կերպ քարշ տալ իրենց նվաստ ու չնչին գոյությունը:

Մարդիկ պաշտում են Հրեշին, նրա համար տաճարներ են շինում, գովաբանական ճառեր ասում, իսկ Խենթին և նրա նմաններին քարկոծում են և քշում լեռների բարձունքները:

ՊԼԱՆ

1. Հորդառատ գետը և ծաղկուն ավանը:
2. Գետի ջրերի նվազումը:
3. Արշավ դեպի գետի ակունքը:
4. Մարդկանց խորհուրդը:
5. Խենթի կարծիքը:
6. Մարդկանց ծաղր ու ծանակը:
7. Նոր որոնում:
8. Խենթի ծանր և միատեսակ աշխատանքը:
9. Ջրերը կլանող վիշապը:
10. Խնդրանք և զիջում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բարձրագագաթ լեռներ, ականակիտ ջուր, հորդառատ գետ, հունթի և բարեբեր այգիներ, զմրուխտաշող մարգագետին, ծանրասաղարթ անտառ, խուլ հուզում ընկնել, տաժանելի ճամփաներ, թեր ու դեմ կարծիքներ, ցնորական առաջարկություններ, ծաղրի ու ծանակի կարկուտ, անմատչելի ծործորներ, ցասումնալից աղաղակներ, դողահար ու դալուկ, անհագուրդ կլանել, բերանքսիվայր փռվել, ներում հայցել, նվաստ ու չնչին գոյություն, գովաբանական ճառ:

*2. Բացատրել **ծործոր, անհագուրդ, բերանքսիվայր** բառերը:*

ՈՍԿԻ ՈՒՂԵՂԸ

Ըստ Ալֆոնս Դոդեի

Աշխարհում մի մարդ կար, որի ուղեղը ոսկուց էր: Երբ նա աշխարհ եկավ, բժիշկները մտածեցին, որ նա չի ապրի. նորածնի գլուխը շատ ծանր էր ու զարմանալիորեն մեծ: Սակայն նա ապրեց և մեծացավ արևի տակ, ինչպես ձիթենու մի գեղեցիկ տունկ: Միայն թե նրա խոշոր գլուխը միշտ առաջ էր ձգվում և ցավալի էր տեսնել՝ ինչպես քայլելիս բախվում է կահույքին: Հաճախ էր սայթաքում և ընկնում:

Մի օր էլ նրա գլուխը բախվեց մարմարե աստիճանին, զանգը ձուլածո մետաղի պես զնգաց: Երբ մայրը նրան բարձրացրեց, շիկավուն մազերի մեջ միայն մի թեթև քերծվածք նկատեց՝ մակարդված ոսկու երկու-երեք շիթով: Հենց այդ ժամանակ էլ ծնողներն իմացան, որ իրենց տղան ոսկե ուղեղ ունի:

Սա դարձավ ընտանիքի սուրբ գաղտնիքը: Նրան թույլ չէին տալիս խաղալ հարևան տղաների հետ:

- Քեզ կգողանան, գա՛նձ իմ, - բացատրում էր մայրը:

Երբ տղան դարձավ տասնութ տարեկան, ծնողները բացատրեցին ի վերուստ տրված պարգևի գաղտնիքը: Եվ քանի որ իրենք սնել ու դաստիարակել էին ոսկե ուղեղով իրենց զավակին, պահանջեցին իրենց խնամքի վարձը: Պատանին չզլացավ և անմիջապես իր գանգից մի կտոր ոսկի պոկեց, նետեց մոր ծնկներին:

Այնուհետև իր գլխում կուտակված հարստությունից շլացած, հզորությունից արբած՝ լքեց հայրական տունը և գնաց շրջելու աշխարհով մեկ՝ վատնելով ու շռայլելով իր գանձը:

Նա վարում էր ցոփ ու շվայտ կյանք, աջ ու ձախ շաղ տալիս ոսկին: Կարելի էր կարծել, որ նրա ուղեղն անսպառ է:

Սակայն այդպես չէր. նա սպառվում էր աստիճանաբար, աչքերը խամրում էին, այտերը փոս էին ընկնում: Իսկ գանգի վրա առաջացել էր մի հսկայական բացվածք:

Մի գիշեր էլ խեղճ մարդն արթնացավ ահավոր գլխացավից: Սարսափած վեր թռավ տեղից և լուսնի լույսով տեսավ իր ամենամոտ ընկերոջը: Սա վերարկուի տակ թաքցրած ինչ-որ բան էր տանում: Եվս մի քիչ ուղեղ, ևս մի քիչ ոսկի:

Մի օր էլ այս մարդը հանդիպեց մի փոքրիկ խարտյաշահեր օրիորդի: Սիրեց դեղձան վարսերով այդ պչրուհուն, ամուսնացավ նրա հետ: Սիրուց կուրացած՝ իր ողջ գանգը դրեց թեթևամիտ ու թռվռուն կնոջ ոտքերի տակ:

- Ուրեմն մենք շա՞տ հարուստ ենք, ամուսի՛նս, - հրճվանքով հարցնում էր կինը:

- Օ՜, այո՛, հոգյա՛կս, - մեղմ ձայնով պատասխանում էր ոսկե ուղեղով մարդը:

Եվ քաղցր սիրով ժպտում էր կապույտ թռչնակին, որն անմեղորեն ուտում էր իր ամուսնու ուղեղը:

Այդպես երկու տարի: Հետո մի առավոտ նրա քնքուշ կինը մահացավ, մեռավ գնաց, ինչպես մի թռչնիկ:

Ուղեղի մնացած ոսկով մարդը շքեղ թաղում կազմակերպեց: Բարձրաղողանջ զանգակներ, ծանրաշարժ թավշապատ մեքենաներ, արծաթե փայլազարդեր: Մնացած ոսկուց բաժանեց գերեզմանափորներին, բեռնակիրներին, անթառամ ծաղիկ վաճա-

ողներին, ամենուրեք բաժանեց առանց սակարկելու:

Աշխարհում կան խեղճ մարդիկ, որոնք դատապարտված են ապրելու իրենց ուղեղով և վճարում են իրենց ուղեղի ու գոյության մաքուր, անաղարտ ոսկով՝ կյանքի ամենաչնչին ու ողորմելի բաների համար:

ՊԼԱՆ

1. Մեծ գլխով նորածինը:
2. Ընտանիքի գաղտնիքը:
3. Ծնողների խնամքի վարձը:
4. Գանգի չռայլում:
5. Դավաճան ընկեր:
6. Սեր և ամուսնություն:
7. Կնոջ մահը:
8. Իրենց ուղեղով ապրող մարդիկ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Ճիթենու գեղեցիկ տունկ, մարմարե աստիճան, ձուլածո մետաղ, չիկավուն մազեր, մակարդված ոսկի, ի վերուստ տրված, ցոփ ու շվայտ կյանք, փոքրիկ խարտիշահեր օրիորդ, դեղձան վարսեր, կապույտ թռչնակ, բարձրաղաղանջ զանգակներ, թավշապատ մեքենաներ, արծաթե փայլազարդեր, պչրուսակարկել, ուղեղի մաքուր, անաղարտ ոսկի:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ալֆոնս Դոդե (1840-1897) ֆրանսիացի նշանավոր գրող է: Հարել է Էմիլ Զոլայի գլխավորած նատուրալիստական դպրոցին: Իր ստեղծագործություններում ծաղրել է քաղքենիական աշխարհը, նրա բարքերը:*

Հայերեն թարգմանված են նրա «Պստիկը», «Տարասկոնցի Տարտարենը» վեպերը, «Նամակներ իմ հողմաղացից» պատմվածաշարը:

ՕՐՓԵՈՍ ԵՎ ԵՎՐԻԴԻԿԵ

Ըստ հունական դիցաբանության

Հին Հունաստանում ապրում էր երգիչ Օրփեոսը, նա կիթառ էր նվագում և երգում դրա նվագակցությամբ: Երբ նա սկսում էր նվագել, նույնիսկ հավքերը, ծառերը, ջրերը քարանում էին, որ լսեն նրան:

Երջանիկ էր Օրփեոսը, որովհետև նրա հետ էին երգը և սիրած կինը՝ Եվրիդիկեն, որի հետ նոր էր ամուսնացել: Ուրախ խայտում էր գեղանի Եվրիդիկեն՝ ջերմացած իր ամուսնու սիրով և երգով:

Մի օր էլ Եվրիդիկեն ուրախ-զվարթ խաղում էր մարգագետնում: Վազվզում էր իր ընկերուհիների հետևից, ծաղիկ փնջում կամ էլ պառկում էր դալար խոտին և նայում երկնքի անծայր խորությանը:

Համկարծ խոտերի վրայով կայծակի պես սողաց մի օձ և խայթեց Եվրիդիկեին: Այդ օձը չար էր, ու նրա թույնը ներգործում էր ակնթարթորեն: Մեռավ մանկամարդ կինը, ընդմիշտ փակեց աչքերը, նրա հոգին թռավ մեռյալների խավարչոտ թագավորությունը:

Վշտից ու կսկիծից խելագարվում էր Օրփեոսը, լալիս էր ու կանչում իր գեղեցկուհի կնոջը:

Մի օր էլ մի խելահեղ որոշում կայացրեց: Առավ իր կիթառը և գնաց Ստիքս գետի ափը, այնտեղ, ուր խոժոռ ու մռայլադեմ Քարոնը մեռյալների հոգիները նավով անցկացնում էր մյուս ափ՝ Հադեսի դժնի թագավորությունը:

Շատ խնդրեց Օրփեոսը Քարոնին, որ իրեն էլ անցկացնի մյուս ափ, աղաչեց, լաց եղավ, բայց անդրդվելի էր Քարոնը:

Վշտաբեկ և հուսահատ Օրփեոսը հանեց կիթառը և սկսեց նվագել ու երգել: Երգի մեջ նա պատմում էր, թե որքան են իրար սիրել, որ կյանքը հիմա անիմաստ է առանց նրա: Այնպե՛ս սրտահույզ էր հնչում Օրփեոսի երգը, այնպե՛ս տխուր ծորում էին կիթառի հնչյունները:

Քարոնի աչքերը տամկացան: Նրա կրծքի տակ սիրտը սկսեց բաբախել, և նա անձայն տեղափոխեց երգչին Հադեսի թագավորություն:

Օրփեոսը անցավ շատ սարսափների միջով: Վերջապես կանգնեց Հադես արքայի և նրա կնոջ առջև: Անխոս վերցրեց կիթառը: Նորից երգով պատմեց իր սիրո մասին: Լսում են նրան Հադեսն ու Պերսեփոնեն: Նրանց աչքերում շողշողում են արցունքները:

Երբ ավարտեց երգիչը, և քար լռության մեջ հալվեցին մեղեդու վերջին հեծկլտոցները, Հադեսը հարցրեց Օրփեոսին, թե ինչու՛ է եկել իր աշխարհը:

Օրփեոսը ծնկի եկավ, արքային կարկառեց ձեռքերը և աղիողորմ ձայնով խնդրեց.

- Վերադարձրո՛ւ իմ կնոջը, Թո՛ւյլ տուր որ էլի մի քիչ երջանիկ լինենք միասին:

Հադեսը մի քիչ խորհեց, նայեց իր կնոջը, որը նրան էր հառել իր աղերսագին հայացքը և ասաց.

- Լա՛վ: Բայց մի պայմանով: Դու պետք է հետ չնայես: Պիտի քայլես իմ աշխարհով դեպի լույսը և կենդանությունը, բայց ինչ էլ որ պատահի, պետք է հետ չնայես, այլապես վերջնականապես կկորցնես Եվրիդիկեին:

Ստվերների թագավորության միջով քայլում են Հերմեսը, սրա հետևից՝ Օրփեոսը, իսկ նրանց հետևում է Եվրիդիկեի ստվերը:

Անցնում են բազմաթիվ սարսափների միջով, ահա հեռվում երևում է լույսը, ուր որ է լքելու են Հադեսի տիրույթները: Անհանգիստ է Օրփեոսը, գալի՞ս է արդյոք Եվրիդիկեն, ու՞ր է նա, ինչու ոչինչ չի լսում ինքը, ինչու չի զգում թիկունքում իր կնոջ թարմ շունչը: Անհուն տվայտանքներից հուսահատ Օրփեոսը այլևս չի դիմանում և շրջվում է՝ տեսնելու՝ գալիս է արդյոք Եվրիդիկեն, թե խաբեց իրեն մեծ արքան:

Ու սարսափով տեսնում է Օրփեոսը, որ իր հետևից եկող Եվրիդիկեն սահում է հետ՝ դեպի ստվերների թագավորությունը:

Հերմեսը հեռացրեց նվաղած Օրփեոսին մեռյալների թագավորության սահմաններից, իսկ ինքը վերադարձավ Հադեսի մոտ՝ կատարելու նրա հրամանները:

ՊԼԱՆ

1. Երգիչ Օրփեոսը:
2. Նրա կինը՝ Եվրիդիկեն:
3. Եվրիդիկեի մահը:
4. Օրփեոսի խիզախ որոշումը:
5. Օրփեոս և Քարոն:
6. Օրփեոսը մեռյալների թագավորությունում:
7. Հադեսի պայմանը:
8. Անցում սարսափների աշխարհով:
9. Եվրիդիկեի երկրորդ մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) ուրախ խայտալ, գեղանի կին, դալար խոտ, երկնքի անծայր խորություն, մանկամարդ, խելահեղ որոշում, խոժոռ ու մռայլադեմ, անդրդվելի, սրտահույզ երգ, կիթառի հնչյուններ, ծորալ, տամկանալ, մեղեդու վերջին հեծկլտոցներ, աղերսագին հայացք, անհուն տվայտանք, նվաղել:

բ) հատուկ անունները.

Օրփեոս, Եվրիդիկե, Հադես, Քարոն, Հերմես, Պերսեփոնե:

2. Դասարանում լսել երգահան Հայդնի «Օրփեոս» ստեղծագործությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Օրփեոսը Հին Հունաստանում առասպելական երգիչ էր, երաժշտություն և բանաստեղծություն հորինող:*

Ըստ առասպելի՝ իր երգով ու նվագով կախարդել է մարդկանց ու աստվածներին, սանձել է բնության տարրերը: Մասնակցել է Յասոն հերոսի գլխավորած արգոնավորդների արշավանքին: Իր նվագով ու երգով ուղեկիցներին փրկել է կործանումից:

Օրփեոսի կերպարը, նրա մասին առասպելները ոգեշնչել են շատ բանաստեղծների և դրամատուրգների (Էսքիլես, Եվրիպիդես, Շելլի, Ռիլկե): Շատ երգահաններ են անդրադարձել թրակիական այս հերոսին (Մոնտեվերդի, Լիստ, Հայդն, Բեռլիոզ): Հռչակավոր նկարիչ Ռուբենսն էլ գույների լեզվով է երգել Օրփեոսին:

*Այսօր **Օրփեոս** կոչում են անգուգական երգիչներին և երաժիշտներին:*

ԺՈՂՈՎՐԴԻ ՍԻՐԵԼԻՆ

Ըստ Ռուբեն Զարյանի

Հովհաննես Ներսիսյանը քայլում էր փողոցով՝ ձեռքերը մեջքին դարսած, գլուխը վեր, քայլը՝ համգիստ: Համգիստ ու համդիսավոր՝ նա քայլում էր՝ շրջապատից կտրված, վերացած: Նա բարձրանում էր, գնում էր դեպի վեր: Շուրջը երևանյան աշուն, վերը՝ անամպ կապտություն, իսկ ոտքերի տակ՝ ծառերից նոր ընկած, դեղնած, խշխշան տերևներ:

Նրա մեջ ապրում էր միայնության մի թաքնված սեր: Եվ մեն-մենակ քայլելը իր կյանքի սիրելի պահերից էր: Մարդիկ սաես զգում էին այդ, և չնայած արտիստի պարզ ու հասարակ բնավորությանը, հաճախ որոշ տարածություն էին պահում ընկերոջ և մեծ դերասանի միջև. նրանք չէին կամենում խանգարել, ընդհատել ակիզբ առած մի կյանք, որտեղ նա ամեն ինչ էր: Մերթ խսկապես արքա էր, որին թվում էր, թե ամեն ինչ ենթակա է իրեն, մերթ իրեն չվստահող մի հուսահատ անձ, մերթ խենթ բանաստեղծ էր, մերթ ծեր ու զառամ դերասան:

Քիչ էր խոսում: Ինչպես բոլոր շատ խորը և խսկապես մեծ մարդիկ:

Միշտ նայում էի Հրաչյային ու մտածում՝ կնճիռներով պատված այդ դեմքը գեղեցիկ է արդյոք: Նրա մերձավորներից, նրա խաղընկերներից շատերը չէին կարողանա այս հարցին պատասխանել: Այդ դեմքը գունեղ և գեղեցիկ չէր, բայց անչափ հմայիչ էր ու արտահայտիչ: Մարդ մի տեսակ կախարդվում էր, գերվում նրանով ու փորձում էր հասկանալ նրա արտաքինի ծագումը, նրա հմայքի գաղտնիքը:

Կնճիռները մի ուրիշի դեմքին ծերությունն են վկայում, իսկ Հրաչյայի դիմագծերին դրանք հաղորդում են կամք և ուժ: Դեմքի առնացի արտահայտությունը մեղմում էր աչքերի կապույտը: Խորունկ, բովանդակալի, հաճախ առանց խոսքի արտահայտում էին մի ամբողջ կյանքի պատմություն:

Նրա աչքերը կապույտ էին, բայց բեմում դրանք այլ էին: Դժվար էր որոշել գույնը: Կարելի՞ է նկարագրել այն գույնը, որը առնում է ծովը, երբ փոթորկված զարկում է ափերին: Եվ որովհետև Ներսիսյանը հաճախ էր բեմում փոթորկահույզ վիճակներ ապրում, նրա աչքերը ցոլում էին, փայլում, գույն տալիս, գույն առնում, ասես նույնիսկ գունափոխ լինում, մե՛կ մռայլվում, ինչպես ահեղ ծովը գիշերով, մե՛կ մաքրվում, դառնում ջինջ, ինչպես պայծառ առավոտ:

Այդ պայծառ ու կապույտ, արտահայտիչ ու խոսուն աչքերն էին, որ ջահել օրերին փրկել էին Հրաչյային Թուրքի դատավճռից:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերն էին: Պոլսի շատ ուրիշ պատանիների հետ զորակոչվում է նաև Հրաչյան: Զինվորական կարգապահությունը խախտելու համար նրան բանտ են նետում: Հրաչյան տաճիկ է ձևանում, քանի որ թուրքերենին տիրապետում էր մայրենի լեզվին հավասար: Բայց առաջին իսկ նամակի ժամանակ թուրքերը հասկանում են, որ նա մահմեդական չէ, գյավուր է: Գանակոծություն, հետո էլ դատապարտում են մահվան: Բանտապահը, որ ազգությամբ հայ էր, գգուշացնում է, թե միակ փրկությունը գերմաներենին տիրապետելն է: Հրաչյան ֆրանսերեն շատ լավ գիտեր, իսկ գերմաներեն՝ ոչ: Մահից ազատվելու մի ելք կար. կարճ ժամանակում սովորել գերմաներեն: Բանտապահը գտնում բերում է գերմաներեն մեկ-երկու գիրք ու բառարան:

Մի շաբաթ հետո, երբ գերմաներենի նրա իմացությունը մի քանի բառից այն կողմ չէր անցնում, բանտից նրան ուղարկում են գնդացրային տեխնիկության՝ իբրև թարգմանիչ: Ներկայանում է մայոր Բարեկլային:

Հրաչյան իր սովորած մեկ-երկու բառով զեկուցում է մայորին: Հետո Բարեկլան ինչ-որ բան է ասում: Հ՛րաչյան չի հասկանում ու չի պատասխանում: Մայորը զարմացած նայում է նրան, զարմացյալ հարց: Հետևում է Հրաչյայի լռությունը: Մայորը բարկանում է, սկսում արագ-արագ խոսել, ձայնը արտահայտում է սպառնալիք, դեմքը գայրույթից կաս-կարմիր է կտրում: Հետո մեկ էլ խոսքի կեսից կտրուկ կանգ է առնում և ապշած նայում իր դիմաց կանգնած երիտասարդին:

Երիտասարդ թարգմանիչը գգաստ ու ձիգ կանգնած էր նրա առջև, իսկ ծովի պես կապույտ աչքերից հոսում էին արցունքի խոշոր կաթիլներ: Հրաչյան նրա գայրույթի մեջ իր մահն էր տեսել:

Մայորը մեղմանում է, հետո երևի կռահում, որ դիմացինը գերմաներեն չի հասկանում: Խոսում է ֆրանսերեն: Հրաչյան պատասխանում է նրա հարցին և պատմում իր գլխին եկածը:

Բարխլյան, որ բարի մի մարդ էր, շատ զգացվում է, հովանավորում է նրան և փրկում Հրաչյայի կյանքը:

Ինչ իմանար այդ վեհանձն մարդը, որ այդ օրերին հայ ժողովրդի համար փրկում էր նրա պաշտելի զավակի կյանքը:

ՊԼԱՆ

1. Զբոսանք երևանյան փողոցներում:
2. Մարդկանց վերաբերմունքը Հրաչյա Ներսիսյանի հանդեպ:
3. Հրաչյա Ներսիսյանի դեմքը. կնճիռներ և աչքեր: Հրաչյան բեմի վրա:
4. Երիտասարդ օրեր: Պոլիս. գինակոչություն:
5. Բանտ. մահվան սպառնալիք:
6. Գերմաներենի ուսանում:
7. Մայոր Բարխլյայի մոտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ձեռքերը մեջքին դարսած, երևանյան աշուն, անամպ կապտություն, մեն-մենակ քայլել, կնճիռներով պատված, հմայքի գաղտնիք, առնացի արտահայտություն, փոթորկահույզ վիճակ, ահեղ ծովը գիշերով, պայծառ առավոտ, խոսուն աչքեր, գանակոծություն, գայլույթից կաս-կարմիր կտրել, գայլույթի մեջ մահ տեսնել:

2. Բացատրել ***նամազ, գյավուր*** *բառերը:*

3. Դիտել հատվածներ «Պատվի համար», «Տժվժիկ», «Պեպո» կինոնկարներից:

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

Ըստ Վիլյամ Շեքսպիրի

Հին ժամանակներում Իտալիայի Վենետիկ քաղաքում ապրում էր Անտոնիո անունով մի երիտասարդ: Նա վաճառական էր, ուներ շատ նավեր, որոնք առևտուր էին անում հեռավոր երկրների հետ: Այս Անտոնիոն, որը մի բարի ու ազնվասիրտ մարդ էր, ընկերություն էր անում Բասանիո անունով մի երիտասարդի հետ:

Բասանիոն շատ աղքատ էր, բայց խելացի էր, հաղթանդամ ու խիզախ: Նա անհույս սիրահարված էր Պորցիա անունով մի չքնաղ օրիորդի: Բասանիոյի սերն անհույս էր, որովհետև Պորցիայի հայրը Վենետիկի հարուստ և ազդեցիկ մարդկանցից մեկն էր:

Մի օր էլ Բասանիոն որոշեց գնալ և խնդրել Պորցիայի ձեռքը: Ամեն ինչ բարեհաջող անցավ. պարզվեց, որ սիրուն օրիորդն էլ սիրում է Բասանիոյին:

Սակայն Բասանիոն հարսանեկան ծախսերի համար դրամ չուներ և խնդրեց իր ընկեր Անտոնիոյին օգնել իրեն: Այդ պահին Անտոնիոյի մոտ դրամ չկար. նրա ողջ հարստությունն ու դրամը այն երեք նավերի վրա էին, որ հեռու երկրներից շուտով հասնելու էին Վենետիկ:

Այդ ժամանակ իր ընկերոջ խնդրանքով Բասանիոն գնաց Վենետիկի ամենահարուստ և չար մարդու՝ հրեա Շայլոկի մոտ և պարտքով դրամ խնդրեց: Այս Շայլոկը իր չար ու նենգ սրտի ողջ զորությամբ ատում էր Անտոնիոյին: Երբ իմացավ, որ իր պարտքը պիտի վերադարձնի Անտոնիոն, նա այսպիսի զարհուրելի պայման դրեց.

- Եթե Անտոնիոն իր նշած օրը պարտքը չվերադարձնի, իր մարմնից ինձ պիտի մի ֆունտ միս տա:

Անտոնիոն միայն ուրախ քրքջաց՝ այդ պայմանը կարդալով, և ստորագրեց պարտամուրհակը: Նա հանգստացրեց Բասանիոյին, որը չէր ուզում այդ գնով ձեռք բերված դրամը վերցնել:

Հետո հարսանիք եղավ: Հարսն ու փեսան անչափ երջանիկ էին: Նրանք քաշվեցին Պորցիայի՝ Վենետիկից հեռու գտնվող առանձնատունը և անդորր ու խաղաղ բնության գրկում վայելում էին իրենց սերը:

Բայց մի օր Բասանիոն մի բոթաբեր նամակ ստացավ: Անտոնիոյի նավերը խորտակվել էին, նա սնանկացել էր, իսկ Շայլոկը, չստանալով իր պարտքը, նրան բանտ էր նետել և պահանջում էր իրեն խոստացված մի ֆունտ միսը:

Բասանիոն Պորցիայից պարտքի եռապատիկը վերցրեց և շտապեց ընկերոջը օգնության:

Դատի ժամանակ նա Շայլոկին պարտքի կրկնապատիկն ու եռապատիկը առաջարկեց, բայց հրեա վաշխառուն դանակը սրել, դրել էր կողքին և ասում էր, որ Անտոնիոյից պիտի մի ֆունտ միս կտրի:

Այդ ժամանակ Վենետիկ հասավ մի երիտասարդ փաստաբան և Բասանիոյին և Անտոնիոյին առաջարկեց իր օգնությունը:

Նորից դատ եղավ: Երիտասարդ դատավորը Շայլոկին փորձեց համոզել, որ դրամ վերցնի իր պարտքի դիմաց: Սակայն հրեան համառ էր: Այդ ժամանակ երիտասարդ դատավորն ասաց.

- Այո՛, Շայլո՛կ, օրենքով դու պիտի ստանաս քո ցանկացածը՝ մի ֆունտ միսը: Միայն մի ֆունտ միս. ուրիշ ոչինչ, այնպես չէ՞:

- Այո՛, այո՛, ամենագե՛տ դատավոր, - երջանկացած բացականչեց Շայլոկը:

- Մի ֆունտ միս, բայց ոչ մի կաթիլ արյուն: Եթե դու միսը կտրես, և թափվի գեթ մի կաթիլ արյուն, ապա ամբողջ քո փողը և ունեցվածքը կբռնագանձվի հօգուտ Վենետիկի:

- Այդ դեպքում, - արագ ասաց Շայլոկը, - տվե՛ք ինձ իմ դրամը. Բասանիո, եռակի: Չէ՞ որ խոստացար:

- Մի՛ շտապիր, - վրա բերեց դատավորը, - դատարանի առջև դու հրաժարվեցիր փողից: Վերցրու՛ քո մի ֆունտ միսն ու գնա՛:

Լսելով այդ՝ Շայլոկը պահանջեց միայն իր տված պարտքը: Սակայն դատավորը դրամից էլ նրան զրկեց:

Այդ ամենից հետո Անտոնիոն և Բասանիոն երիտասարդ դատավորին շնորհակալություն հայտնեցին և խնդրեցին վերցնել այն դրամը, որ պիտի Շայլոկին տային:

Սակայն երիտասարդը ուրախ ժպտաց, գլխից հանեց կեղծամը, և նրանց առջև կանգնեց Բասանիոյի քնքուշ կինը՝ Պորցիան:

Դեռ երբեք վենետիկցիները այդպիսի բարձր և ուրախ քրքիջ չէին լսել:

ՊԼԱՆ

1. Վենետիկցի վաճառական Անտոնիոն:
2. Աղքատ, բայց գեղեցիկ Բասանիոն:
3. Անհույս սեր:
4. Շայլոկի մոտ. զարհուրելի պայման:
5. Բասանիոյի և Պորցիայի ամուսնությունը:
6. Գուժկան նամակը:
7. Դատ. անխիղճ Հրեան:
8. Երիտասարդ դատավորն ու նրա արդար վճիռը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա) Իտալիա, Վենետիկ, Անտոնիո, Բասանիո, Պորցիա, Շայլոկ.

բ) առևտուր, Հաղթանդամ, անհույս սիրահարվել, չքնաղ օրիորդ, հարսանեկան ծախս, սիրուց խենթացած, ամենախաբեբա, Հրեա, զարհուրելի պայման, մի ֆունտ միս, պարտամուրհակ, առանձնատուն, բոթաբեր նամակ, սնանկանալ, բռնագանձվել, հօգուտ, կեղծամ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Վիլյամ Շեքսպիրը (1564-1616) անգլիացի հանճարեղ թատերգակ և բանաստեղծ է:*

Ծննդյան և մահվան ամսաթիվը նույնն է՝ ապրիլի 23: Ապրիլի 23-ը մարդկության հիշողությունից չի ջնջվում արդեն 400 տարի և երբեք չի ջնջվելու: Այդ օրը ծնվեց Շեքսպիրը: Իսկ 1616 թվականի նույն՝ ապրիլի 23-ին երկու հանճարներ ավարտեցին իրենց մարմնավոր գոյությունը՝ անցնելով երկնային անմահ կեցության.

Անգլիայում մահացավ Շեքսպիրը, իսկ Իսպանիայում՝ Սերվանտեսը:

Հանճարեղ Շեքսպիրը մեզ թողել է սոնետներ՝ գրված «թուխ կնոջ» համար, պոեմ, կատակերգություններ («Մեծ աղմուկ ոչնչից», «Վենետիկի վաճառականը», «Կամակոր կնոջ սանձահարումը»), ողբերգություններ («Ռոմեո և Ջուլիետ», «Օթելլո», «Համլետ», «Լիր արքա»):

Բառի բացատրություն

ֆունտ – ծանրության չափ Եվրոպայում, հավասար է 453,6 գրամի

ԴԱՆԱՅԱՆ ՏԱԿԱՌ

Ըստ հունական դիցաբանության

Հնում Եգիպտոսն ու Դանայոսը եղբայրներ էին: Եգիպտոսը իշխում էր ջրառատ Նեղոսի ափերին: Նա շատ հարուստ էր և ուներ հիսուն որդի: Պակաս հարուստ և անվանի չէր նրա եղբայրը՝ Դանայոսը, որը Լիբիայի արքան էր: Սա էլ ուներ հիսուն գեղանի դուստր:

Մի անգամ Եգիպտոսն իր որդիներով այցի եկավ Դանայոսին: Նրա հիսուն որդիներն էլ տեղնուտեղը գերվեցին չքնաղ դանայուհիներով:

- Կնությա՛ն տուր դուստրերիդ իմ ուստրերին, եղբա՛յր, - խնդրեց Եգիպտոսը Դանայոսին:

Բայց Դանայոսը կտրուկ և արհամարհանքով մերժեց: Եգիպտոսի որդիները որոշեցին ուժով տիրանալ այդ ամբարտավան, բայց շատ գեղեցիկ աղջիկներին: Նրանք զորք հավաքեցին, եկան Լիբիա:

Դանայոսը ելավ իր զորքով եղբորորդիների դեմ: Բայց շատ շուտով պարտվեց և ստիպված եղավ ընդունել Եգիպտոսի առաջարկը:

Եգիպտոս արքան բացել տվեց գինու տակառները, եղավ ճոխ հարսանիք: Ողջ ժողովուրդը ամբողջ մի օր կերավ-խմեց, օրհներգեց Եգիպտոսի դյուցազուն զավակներին ու նրանց հարսնացուներին:

Իջավ խավար գիշեր: Ավարտվեց Հարսանեկան խրախճանքը: Գինարբուքից հոգնած մարդիկ խոր քուն մտան: Նորապսակներից յուրաքանչյուրը քաշվեց իրեն հատկացված շքեղ առանձնարանը:

Եգիպտոսի ավագ զավակը գրկեց իր դեռատի կնոջը, քնքշությամբ հետ տարավ նրա դեմքը ծածկող շղարշը: Բայց նա չհասցրեց որևէ բառ շշնջալ: Նորահարսը վայրկենաբար մերկացրեց դաշույնը և մխրճեց բուռն սիրով համակված իր ամուսնու սիրտը: Ընկավ Եգիպտոսի անդրանիկ որդին. նրա խրոխտ կրծքից միայն վերջին մի հեծկլտոց դուրս թռավ:

Շուտով նույն դառն ու մահասարսուռ տնքոցը լսվեց մյուս նորապսակների սենյակներից: Բոլոր դանայուհիները իրենց հոր տված դաշույններով սրախողխող էին արել իրենց փեսացուներին:

Սուգ ու կական սկսվեց: Եգիպտոսը խելագարի պես վազում էր սպանված մի որդուց դեպի մյուսը:

Հենց այդ պահին Եգիպտոսի ամենափոքր որդին՝ գեղագանգուր Լինքեոսը մի հավատարիմ ծառայի և իր չքնաղ կնոջ ուղեկցությամբ փախչում էր մահվան մշուշով պատված պալատից:

Միայն այս վերջին դանայուհին էր զլացել կատարել հոր պատվերը: Նա սիրել էր Լինքեոսին և գիշերվա լռության մեջ խոստովանել, թե ինչ է պատրաստել Դանայոսը:

Շատ զայրացավ Դանայոս արքան, երբ իմացավ փոքր դստեր դավաճանության մասին: Անվախ և աներեր՝ աղջիկը կանգնեց հոր դեմ և դատապարտեց նրա տմարդի արարքը: Աղջկան պաշտպան կանգնեցին բոլորը՝ Դանայոսի բոլոր խորհրդականներն ու իմաստուն ծերերը: Աղջիկը գնաց իր ամուսնու մոտ, և նրանք խաղաղ ու երջանիկ ապրեցին սիրո աստվածուհու հովանու տակ:

Իսկ Դանայոսի քառասունինը աղջիկներին պատիժը վրա հասավ մահից հետո: Հադեսի խավարչտին թագավորությունում նրանք դատապարտված են ջուր կրել և լցնել մի շատ մեծ տակառ: Բայց տակառը հատակ չունի:

Ահա ուր որ է տակառը կլցվի, բայց ջուրը հոսում է, և տակառը դատարկ է: Կրկին ու կրկին գործի են անցնում մարդասպան դանայուհիները, դարձյալ ջուր են կրում և լցնում անտակ տակառը: Եվ այսպես շարունակ:

Այսպես առաջացել է «դանայան տակառ» թևավոր արտահայտությունը, որը նշանակում է ծանր, բայց անօգուտ աշխատանք:

ՊԼԱՆ	1. Եգիպտոսն ու Դանայոսը:	5. Հարսանիք:
	2. Եգիպտոսի առաջարկը:	6. Դանայուհիները՝ մարդասպան:
	3. Դանայոսի մերժումը:	7. Խիզախ կրտսեր դանայուհին:
	4. Պատերազմ և պարտություն:	8. Պատիժ Հադեսի թագավորությունում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) Եգիպտոս, Դանայոս, Լիբիա, Նեղոս, Լինքեոս, Հադես.

մահասարսուռ տնքոց, սրա-

բ) ամբարտավան, դյուցազուն, օրհներգել, Հարսանեկան խրախճանք,

խողխող անել, գեղագանգուր, տմարդի արարք, խավարչտին թագավորություն:

ՄԱՐԴՈՒ ԱՉՔԸ

Ըստ Նար-Դոսի

(ավանդություն)

Մի անգամ մի չքավոր մարդ մի ինչ-որ իր գտավ: Գտած իրը կակուղ էր, կլոր ու փոքրիկ ընկույզի չափ: Գտնողը շատ զարմացավ: Տարավ տուն, ցույց տվեց կնոջը, հարևաններին, բայց ոչ ոք չիմացավ, թե ինչ է չքավոր մարդու գտածը:

Շուտով ողջ քաղաքում լուր տարածվեց, թե այսինչ մարդը մի չտեսնված-չլսված բան է գտել: Իրը ո՛չ ադամանդ է, ո՛չ քար, ո՛չ ընկույզ:

Լուրը հասավ թագավորին: Նա ուզեց տեսնել այդ հազվագյուտ իրը: Չքավոր մարդը իր իրով կանգնեց թագավորի առաջ: Թագավորն առավ իրը, ձեռքի մեջ շուռումուռ տվեց, մտածեց, գլուխ կոտրեց, ոչինչ չհասկացավ:

- Ծախի՛ր ինձ այս իրը, - ասաց թագավորը, - որքա՞ն կուզես սրա դիմաց:

Գյուղացին ասաց.

- Դրա քաշով ինձ ոսկի տո՛ւր:

Գնացին գանձարան, որն անբավ հարստություն էր ամբարում իր ներսում: Գանձապետը վերցրեց ամենափոքր կշեռքը, դրա մի նժարին դրեց իրը, մյուսին՝ մի ոսկի: Սակայն կշեռքը տեղից չշարժվեց: Գանձապետը ավելացնում էր ոսկիները, բայց անօգուտ: Այդ ժամանակ գանձապետը վերցրեց ամենամեծ կշեռքը ու սկսեց ոսկի լցնել նժարին: Բայց զարմանալի իրը դարձյալ ծանր էր: Սկսեցին ոսկիները տոպրակներով դնել, բայց իրը միշտ ծանր էր մնում:

Զայրացավ թագավորը, ոտքը գետին խփեց, սպառնաց չքավորին, թե նրան կախել կտա: Բայց գեղջուկն էլ պակաս զարմացած չէր: Նա սարսափից դողում էր և ներում խնդրում արքայից:

Թագավորը խղճաց նրան, հավատաց, որ գեղջուկը ոչնչից տեղյակ չէ: Ապա հրամայեց, որ իսկույն ևեթ իր երկրի բոլոր գիտնականներին հավաքեն, որ պարզեն, թե ինչ իր է այդ:

Եկան բոլոր գիտնականներն ու իմաստունները, շատ մտածեցին, շատ վիճեցին, բայց չիմացան, թե ինչ է այդ զարմանալի իրը:

Թագավորը հրամայեց գլխատել նրանց բոլորին, ցասկոտ դարձավ իր պալատականներին ու պահանջեց որոնել, գտնել որևէ իմաստունի, որ կարողանար լուծել այդ հանելուկը:

Դրանիկները ցրվեցին աշխարհով մեկ, շատ որոնեցին, վերջապես մի զառամյալ ու փորձված մարդ գտան: Նրան բերին թագավորի մոտ:

Ալևորը հենց տեսավ իրը, պահանջեց, որ բերեն ամենափոքր կշեռքը և մի բուռ հող: Բերին ծերունու ուզածը: Կշեռքի մի նժարին դրեց իրը, իսկ մյուսին սկսեց հող լցնել: Կշեռքի նժարները շարժվեցին և հավասար կանգնեցին:

Ապշահար թագավորը հարցրեց.

- Այդ ի՞նչ է, ո՛վ խելոք մարդ:

- Սա մարդու աչք է, թագավո՛ր, - պատասխանեց ծերունին: - Դուք ինչպե՞ս էիք ուզում սա կշռել ոսկով. բացի հողից սրան ոչինչ չի կշտացնի:

ՊԼԱՆ
1. Չքավորի գտած իրը:
2. Թագավորի մոտ:
3. Իրը կշռելու փորձ:
4. Շատ իմաստուններ են գլխավորում:
5. Զառամյալ իմաստունը կշռում է իրը:
6. Մարդու աչքը կշտանում է միայն հողով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

չոխանված-չլված, գլուխ կոտրել, անբավ հարստություն, ամբարել, ցասկոտ, դրամին, ոտքը գետին խփել, գեղջուկ, իսկույն ևեթ, զառամյալ ու փորձված մարդ:

ԵՐԿՆՔԻ ԶԱՆԳԱԿԸ

Ըստ Նար-Դոսի

Շատ հին ժամանակներում, երբ ո՛չ թագավորներ կային, ո՛չ իշխաններ, ո՛չ դատավորներ, մարդկանց գործերը քննվում էին մի զանգակով, որ կախված էր երկնքից: Մարդիկ իրենց տարաձայնությունների դեպքում դիմում էին զանգակին: Վկաներ կանչելու հարկ չկար, որովհետև զանգակը առանց որևէ մեկի ցուցմունքի էլ ամենաանաչառ վճիռն էր կայացնում, թե ով է արդարը, ով՝ մեղավորը:

Զանգակը կախված էր մի ընդարձակ դաշտի վրա: Նրա տակ՝ գետնից բավական բարձր, շինված էր մի տախտակամած, որի վրա բարձրանում էին սանդուղքով: Դատավորները միայն իրավունք ունեին բարձրանալու այդ տախտակամածի վրա, իսկ ամբոխը կանգնում էր ներքևում և այնտեղից դիտում: Գործի քննության ժամանակ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ չէր լսվում. հանդիսատեսը լռելյայն, սրբազան երկյուղածությամբ սպասում էր զանգակի վճռին:

Դատավորները երկուսով բարձրանում էին տախտակամածը և փոխադարձաբար բռնում էին զանգակին կապված պարանից: Ով մեղավոր էր, նա բնավ չէր կարողանում շարժել լեզվակը, իսկ ով արդար էր, հենց որ ձեռքն էր առնում պարանը, զանգակն ահագնալի և սարսափազդու ձայնով ամբոխին տեղեկացնում էր, որ անմեղ և արդար է նա:

Մի անգամ մեկը իր հարևանին մի քանի հարյուր ոսկի էր պարտք տվել: Նշանակյալ ժամանակից հետո երբ նա իր ոսկին պահանջեց, պարտապանը կեղծ զարմացավ՝ ասելով, որ արդեն վերադարձրել է իր պարտքը:

- Դու ինձ ոչինչ չես տվել, ինչու՞ ես սուտ խոսում:
- Ես չեմ ստում, պարտքս վաղուց վերադարձրել եմ:

Գնացին զանգակի դատաստանին: Ամբոխը շրջապատել էր տախտակամածը: Ամենքն անհամբեր սպասում էին նրա արդար վճռին:

Գանգատավորները բարձրացան տախտակամածը: Պարտապանը ձեռքին մի հաստ գավազան ուներ: Նախօրոք նա փորել էր այդ գավազանը և պարտք վերցրած ոսկին լցրել էր այդ փորվածքի մեջ, ապա գավազանի գլուխը նորից ամրացրել:

- Բռնի՛ր այս գավազանը, - ասաց նա՝ գավազանը պարտատիրոջը տալով:

Պարտատերը բոլորովին ոչինչ չկասկածեց, վերցրեց գավազանը: Պարտապանը համարձակ մոտեցավ պարանին և բացականչեց.

- Ո՜վ անաչառ դատավոր-զանգակ, դու ասա՛, ոսկին տվե՞լ եմ այս մարդուն, թե՞ ոչ:

Եվ բռնեց լեզվակի պարանից: Լեզվակը նույն վայրկյանին շարժվեց, և զանգակը պարզ ու մեկին ղողանջով հայտարարեց, որ պարտքը արդեն տվել է:

- Տեսա՞ր, - դիմեց նա իր հարևանին, - անամո՛թ, երկու անգամ էիր ուզում առնել փողդ: Տու՛ր ինձ գավազանս:

Նա խլեց քար կտրած պարտատիրոջ ձեռքից իր գավազանը և ուրախ-ուրախ իջավ տախտակամածից:

Ամբոխն սկսեց թքել-մրել խեղճ պարտատիրոջը, որը աչել էր զանգակի անարդար վճռից: Բայց զանգակը անարդար չէր: Այն րոպեին, երբ պարտապանը կանգնել էր զանգակի տակ, նա արդեն պարտք ոսկին, գավազանի մեջ լցրած, տվել էր պարտատիրոջ ձեռքը:

Զայրացավ Աստված մարդու անիրավ խարդախությունից և զանգակը գարհուրելի ղողանջյունով քաշեց տարավ երկինք:

Այսպես մահկանացուն զրկվեց արդար և անաչառ դատավորից:

ՊԼԱՆ

1. Անաչառ դատավոր-զանգակը:
2. Ստախոս պարտապանը:
3. Խաբեություն:
4. Անարգված պարտատերը:
5. Աստված զրկեց մարդուն արդար դատավորից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

տարաձայնություն, ամենաանաչառ, տախտակամած, սրբազան երկյուղածություն, ահագնալի ու սարսռազդու ձայն, ամբոխին տեղեկացնել, մի քանի հարյուր ոսկի, պարտապան, կեղծ զարմանալ, գանգատավոր, հաստ գավազան, ոսկին լցնել փորվածքի մեջ, անաչառ դատավոր-զանգակ, պարզ ու մեկին ղողանջ, քար կտրած պարտատեր, ուրախ-զվարթ, անիրավ խարդախություն, գարհուրելի ղողանջյուն:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՎԱ ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐԸ

Ըստ Անդրե Մորուայի

Ու թսունամյա նշանավոր դերասանուհին դուրս եկավ տնից: Նա մտավ ծաղկի խանութ:

- Այսօր չորեքշաբթի է, տիկի՛ն, - հոնքերը վեր ձգելով` ոչ այն է` հարցրեց, ոչ այն է` հաստատեց խանութի տերը:

- Այո՛, մի՞թե մոռացել եք:

Վաճառողը լռելյայն տիկնոջը մեկնեց մի փունջ մանուշակ:

Ծեր կինը, որին ճանաչում էր ողջ Փարիզը, քայլեց առաջ` պատասխանելով խոնարհ և հիացական ողջույններին: Դերասանուհին հասավ Մոնպառնասի գերեզմանոց, մոտեցավ մի շիրիմի և ձեռքի փունջը հոգածությամբ դրեց մարմարե սալիկին:

Ապա կանգնեց լուռ, խորհրդածությունների մեջ թաղված: Մտովի հիշեց իրեն երիտասարդության փայլուն տարիներին:

Այն ժամանակ քսաներկու տարեկան էր, բայց արդեն ճանաչված ու սիրված էր հանդիսատեսի կողմից: Հատկապես դեռահասներն ու պատանիները խենթանում էին հրաշեկ վարսերով, նշաձև չդանակագույն աչքերով, սլացիկ հասակով այդ դերասանուհու համար: Նա հմայիչ էր ու չքեղ: Ծնվել էր բեմի վրա քայլելու համար:

Իր երկրպագուներից բազմաթիվ ծաղիկներ, նամակներ ու բացիկներ էր ստանում` ամենախենթ և բուռն սիրո բացատրություններով:

Մի չորեքշաբթի օր` հերթական հաղթական ներկայացումից հետո, դռնապանը նրան բերեց մանուշակների մի համեստ փունջ: Այն զարմանալիորեն քնքուշ բույր ուներ և կարծես ինչ-որ խորհրդավոր աշխարհի համր մունետիկն էր: Ջեննին հիացավ, ըմբոշխնեց մանուշակների ու հեքիաթի աշխարհից եկող բույրը:

- Ո՞վ է բերել այս փունջը, - հարցրեց աղջիկը:

- Մի համեստ ուսանող, - եղավ պատասխանը:

Եվ այդպես վեց ամիս անընդմեջ, ամեն չորեքշաբթի նույն ուսանողը բերում էր մանուշակների փունջը: Ջեննին վարժվել ու սիրում էր չորեքշաբթի օրվա այդ խորհրդավոր ընծան:

Մի օր էլ նա խնդրեց դռնապանին, որ վերև թողնի այդ համեստ երկրպագուին: Ջեննին սրտի թրթիռով էր սպասում նրան: Զարմանալի բան: Այդ օրը մանուշակներ չկային, չնայած դարձյալ չորեքշաբթի էր:

Ջեննին անհանգստացավ, սրդողած հարցուփորձեց դռնապանին: Վերջինս ասաց, որ այդ օրը ուսանողը չի երևացել: Անցավ էլի մի չորեքշաբթի. ուսանողը չկար:

Ջեննին մեկնեց հյուրախաղերի: Երկու ամիս նա բացակայում էր Փարիզից: Երբ վերադարձավ, գտավ մի նամակ, որով նրանից տեսակցություն էր խնդրում մի գնդապետ:

- Օրիո՛րդ, ես ուզում եմ հանձնել իմ որդու նամակները, որոնք ձեզ են հասցեագրված: Ավա՛ղ, նա այլևս չի կարող դա անել: Արդեն երկու ամիս է, ինչ նա հիվանդացել և նահատակվել է Մադագասկարում:

Ջեննին հուզված ու ալեկոծված նայում էր նամակների տրցակին: Նա դեռ ոչ մի խոսք չէր ասել:

- Օրիո՛րդ, ես հասկանում եմ ձեր շփոթմունքը: Բայց, կարծում եմ, դուք կհասկանաք իմ որդուն, որը պաշտում էր ձեզ և որի միակ մխիթարությունը ամեն չորեքշաբթի ձեզ մի համեստ փունջ մանուշակ բերելն էր:

Դերասանուհին սթափվեց իր հուշերից: Նա մտովի ժպտաց իր պատանի ասպետին, մտքում աղոթք մրմնջաց ու քայլեց դեպի մուտքը:

Այսպես ամեն չորեքշաբթի:

ՊԼԱՆ

1. Ութսունամյա դերասանուհին:
2. Ծաղկի խանութում:
3. Մոնպառնասի գերեզմանատանը.
4. Քսաներկուամյա դերասանուհին:
5. Անծանոթ երկրպագուն ու նրա մանուշակները:
6. Խնդրանք դռնապանին:
7. Տեսակցություն գնդապետի հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

լռելյայն, խոնարհ և հիացական ողջույններ, հոգածություն, մարմարե սալիկ, թաղվել խորհրդածությունների մեջ, հրաշեկ վարսեր, նշաձև շագանակագույն աչքեր, սլացիկ հասակ, ամենախենթ և բուռն սիրո բացատրություններ, քնքուշ բույր, խորհրդավոր աշխարհի համր մունետիկ, ըմբոշխնել բույրը, սրտի թրթիռ, սրտողած հարցուփորձել, նամակների տրցակ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Անդրե Մորուան (1885-1967) ֆրանսիացի նշանավոր գրող է, կրթությամբ փիլիսոփա. Մասնակցել է թե՛ առաջին, թե՛ երկրորդ համաշխարհային պատերազմներին. Գրել է հումորիստական վեպեր, նորավեպեր, հեքիաթներ:*

Աշխարհի ընթերցասեր հասարակությունը Մորուային ճանաչում է Շելլիի, Բայրոնի, Ժորժ Սանդի, Վիկտոր Հյուգոյի, Դյումաների, Բալզակի մասին գրած կենսագրական վեպերով:

ԱՆՁՆՎԵՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Ըստ Օսկար Ուայլդի

Այս կողմերում՝ մի փոքրիկ խրճիթում մեն-մենակ ապրում էր Փոքրիկ Հանս անունով մի շատ բարի և սիրալիր պատանի: Նա ամբողջ օրը աշխատում էր, աճեցնում հիասքանչ գույնզգույն ծաղիկներ: Ողջ երկրում չկար նրա պարտեզի նման դրախտային մի այլ վայր: Ամիսը վազում էր ամսվա հետևից, իսկ պարտեզում մի տեսակ ծաղիկները իրենց տեղը զիջում էին մի այլ տեսակի: Նրա այգին միշտ աչք էր շոյում ու լցնում մարդու սիրտը խինդով և ուրախությամբ:

Փոքրիկ Հանսը շատ բարեկամներ ուներ: Նրանք բոլորը շատ սիրում էին կլորադեմ, ժպտերես պատանուն: Հանսի ամենանվիրված բարեկամը մի մեծատուն էր՝ Ջրաղացպանը: Սա անչափ հարուստ էր, ամբարները պայթում էին հացահատիկի առատությունից, նկուղում տակառներով գինի, չորացրած ու թարմ զանազան մրգեր ուներ: Ջրաղացպանը անձնվեր էր և շատ էր սիրում Հանսին: Օրինակ, երբ անցնում էր նրա սքանչելի այգու կողքով, անպայման կանգ էր առնում, մտնում ներս

Հանսի ծաղիկներից մի հսկա փունջ էր կազմում կամ էլ գրպանները լցնում ամեն տեսակի մրգերից:

- Իսկական բարեկամների ինչքն ու ունեցվածքը միշտ պետք է ընդհանուր լինի, - մշտապես ասում էր Ջրաղացպանը:

Իսկ Հանսը գլխով էր անում և հպարտանում, որ այդ վեհանձն մարդու պես բարեկամ ունի: Ախր շատ գեղեցիկ էր խոսում Ջրաղացպանը անկեղծ բարեկամության մասին:

Այսպես Հանսը գարնանը, ամռանը ու աշնանը անընդհատ աշխատում էր այգում և հոգս ու վիշտ չուներ: Սակայն ցրտաշունչ ձմռանը, երբ նա ծաղիկ ու պտուղ չուներ, որ շուկա տաներ, տառապում էր ցրտից ու քաղցից: Բացի այդ, ձմռանը նա շատ միայնակ էր: Անձնվեր բարեկամը՝ Ջրաղացպանը, երբեք չէր այցելում նրան:

- Պետք չէ անհանգստացնել փոքրիկ Հանսին, չէ՞ որ նա հիմա շատ վատ վիճակում է, - ասում էր Ջրաղացպանը իր կնոջը: - Գարնանը կայցելեմ Հանսին, և նա իմ զամբյուղը կլցնի ծաղիկներով:

- Բարեկա՛մս, դու ոսկի սիրտ ունես: Միշտ մտածում ես ուրիշի մասին, - քնքուշ ժպիտով ասում էր նրան կինը:

Ձմեռն անցավ: Հանսը հրաշքով չմեռավ այդ դաժան ցրտերին:

Գարունը թառեց նրա խղճուկ տնակի քիվին: Հազիվ էր Հանսը մտել պարտեզ, որ խնամի իր լռակյաց, բայց անուշիկ կանաչ բարեկամներին, երբ Ջրաղացպանը կանգնեց նրա դիմաց:

Ողջունեց Հանսին, շուրջը նայեց և խնդրեց, որ իր զամբյուղը լիքը լցնի գարնան առաջին ծաղիկներով:

Հանսը մոլորվեց: Նա որոշել էր վաճառել այդ ծաղիկները և դրանց փողով գրավատնից ազատել իր սայլը, ոսկե կոճակները և էլի մանր-մունր բաներ:

Երբ սայլակի մասին լսեց Ջրաղացպանը, մեծահոգաբար ասաց, որ իր հին ու կոտրված սայլակը նրան կտա, միայն հիմա թող իր զամբյուղը լցնի ծաղիկներով:

- Ես գիտեմ, որ ես առատաձեռն եմ, և շատերը կասեն, որ հիմարություն եմ անում՝ քեզ տալով իմ սայլակը: Սակայն առանց առատաձեռնության բարեկամություն լինել չի կարող:

- Դուք իրոք չափազանց առատաձեռն եք, - ուրախությունից փայլելով՝ ասաց Հանսը:

Այդ չարաբաստիկ գարնանը, հենց որ Հանսը մտնում էր պարտեզ՝ խնամելու իր սիրելի ծաղիկները և ծառերը, հայտնվում էր Ջրաղացպանը և գործի դնում նրան:

- Բարեկա՛մս, մի՛ մոռացիր, որ քեզ եմ տալիս իմ սայլակը:

Գարնան մի մրրկահույզ գիշեր էր: Քամին ոռնում էր և շաչում, ստեպ-ստեպ երկինքը պատռում էր կայծակի կուրացուցիչ շեղբը, իսկ երբեմն էլ քամու ոռնոցին միանում էր ամպերի որոտը:

Հանսը նստել էր իր երերուն տնակում՝ ականջալուր հողմի ահռելի գոռոցներին: Մեկ էլ խրճիթի դուռը ծեծեցին: «Երևի մոլորված ճամփորդ է», - մտածեց Հանսը և վազեց ու բացեց դուռը:

Շեմքին կանգնած էր Ջրաղացպանը՝ լապտերը ձեռքին:

- Հա՛նս, վազի՛ր բժշկի հետևից, տղաս ընկել է երկրորդ հարկից և կոտրել ոտքը:

- Իհարկե, սիրելի՛ բարեկամ, միայն ինձ տվեք ձեր լապտերը:

- Ես հաճույքով կտայի քեզ լապտերը, բայց ես վախենում եմ՝ մի բան պատահի: Հետո, բարեկա՛մս, մի՛ մոռացիր, որ պատրաստվում եմ քեզ նվիրել իմ սայլակը:

Համսը ոչինչ չասաց և փոթորկի ու ականակիր գիշերվա մեջ վազեց դեպի բժշկի տունը: Մի կերպ տեղ հասավ, լուր տվեց բժշկին:

Տունդարձի ճանապարհը կորավ Համսի չար բախտից: Նա ընկավ ճահիճը և խեղդվեց:

Շատ սգացին նրա հարևանները, շատ լացուկոծ արին: Մորմոքալով ու սգալով համբերձ՝ չկարողացան հասկանալ, թե ինչո՞ւ էր Փոքրիկ Համսը գիշերով հայտնվել գյուղից դուրս ընկած վայրում՝ ճահիճների մեջ:

ՊԼԱՆ

1. Փոքրիկ Համսը. նրա այգին
2. Նրա բարեկամ Ջրաղացպանը:
3. Ձմռան ցուրտ օրեր:
4. Ջրաղացպանի խոստացած նվերը:
5. Համսը բանում է սայլակի դիմաց:
6. Մի փոթորկալի գիշեր:
7. Համսի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հիասքանչ, գույնզգույն ծաղիկներ, դրախտային վայր, աչք շոյել, մեծատուն հարևան, ամբարները պայթել, ինչք ու ունեցվածք, պերճախոս մարդ, անընդհատ քնել, ոսկի սիրտ, գարունը թառել, քիվ, չարաքաստիկ գարուն, գարնան մրրկահույզ գիշեր, թրատել, կայծակի շեղբ, ականջալուր հողմի գոռոցներին, ականակիր գիշեր, տունդարձի ճանապարհ:

ՍՈԽԱԿՆ ՈՒ ՎԱՐԴԸ

Ըստ Օսկար Ուայլդի

Սոխակը նստել էր կաղնու ճյուղին: Նա նստել ու մտորում էր, իսկ մտքում սիրո խորհուրդն էր: Այսօր առավոտ նա լսել էր ուսանողի բողոքը: Նա պ կարմիր վարդ էր փնտրում, որ նվիրի իր սիրած աղջկան:

«Իսկական սերը հրաշք է», - մտածեց սոխակը, ապա ուղղեց մուգ թևիկները և թռավ վեր:

Կանաչ մարգի կենտրոնում վարդի մի թուփ կար: Թռավ նստեց վարդենու թփին և խնդրեց նրան.

- Ինձ մի կարմիր վարդ տու՛ր, և ես քեզ համար կերգեմ իմ ամենալավ երգը:

- Իմ վարդերը ճերմակ են, ինչպես ծովի փրփուրը, ինչպես ամենաբարձր լեռան կատարը զարդարող ձյունը:

Սոխակը ճախրեց օդում և տեսավ մի ուրիշ վարդի թուփ, որ աճել էր արևային ժամացույցի կողքին:

Նույն խնդրանքով դիմեց նա այդ վարդենուն, բայց պարզվեց, որ նրա վարդերը դեղին են, ինչպես արևի շողերը, ինչպես գեղեցկուհու դեղձան վարսերը:

Սոխակը նստեց այն վարդենու ճյուղին, որ աճում էր ուսանողի պատուհանի տակ:

- Տո՛ւր ինձ մի ալ վարդ, - խնդրեց սոխակը:

- Իմ վարդերը կարմիր էին, այո՛, էին, - հառաչեց վարդենին, - բոսոր էին ինչպես արյունը, որ հոսում է քո երակներով: Բայց հիմա դրանք գունատվել են ձմռան ցրտից: Իմ երակներում սառել է արյունը, ցուրտը սպանել է իմ կոկոնները, փոթորիկը կոտրել է իմ ճյուղերը:

- Միայն մեկ հատիկ կարմիր վարդ, խնդրում եմ, -ասաց սոխակը:

- Եթե դու ուզում ես ունենալ կարմիր վարդ, պետք է դու ինքդ ստեղծես այն լուսնի կաթնագույն լույսի տակ ու քո երգով: Բացի այդ, դու պետք է ջերմացնես վարդը քո սրտի արյունով: Ամբողջ գիշեր դու պիտի երգես, և իմ փուշը կծակի քո սիրտը, և քո տաք արյունը կթափանցի իմ երակները և կդառնա իմ արյունը:

- Մահը թանկ գին է մեկ վարդի համար, - բացականչեց սոխակը: -Բայց սերը թանկ է կյանքից:

Երբ երկնակամարի վրա սահեց գունատ լուսինը, սոխակը թռավ, եկավ վարդենու մոտ:

Նստեց նրա ճյուղին և իր փոքրիկ կրծքով սեղմվեց փշին: Գաղ լուսինը լսում էր սոխակի երգը և ավելի էր վար կախում իր գունատ դեմքը: Ողջ գիշեր երգում էր սոխակը, իսկ փուշը ավելի ու ավելի խորն էր մխրճվում նրա կուրծքը, և արյունը կաթ-կաթ հոսում էր սոխակի մարմնից դեպի վարդը:

Սկզբում սոխակը երգում էր, թե ինչպես է հանկարծ բռնկվում սերը պատանու և աղջկա սրտերում: Վարդենու ամենավերին ճյուղին գոյացավ մի չքնաղ վարդի կոկոն: Սոխակը երգում էր երգ երգի հետևից, և բացվում էին վարդի թերթերը մեղեդուն ներդաշնակ:

Ավելի ու ավելի կից էր կպչում սոխակը փշին, և նրա երգերը հնչում էին ավելի ու ավելի բարձր: Սոխակը երգում էր անընդմեջ: Ավելի ու ավելի տաժանելից էր դառնում ցավը: Բայց նա երգում էր սիրո մասին, որը գերազանցում է մահին, այն սիրո մասին, որ չի մեռնում երբեք:

Աքանչելի վարդը շիկնեց ու շառագունեց, ինչպես արշալույսը վաղորդայնին: Ալ գույնով սկսեց վառվել նաև վարդի սիրտը:

Սոխակի ձայնը ավելի ու ավելի էր թուլանում: Ահա աչքերին մահվան մշուշն իջավ, ու ձայնը մարեց, հանգավ:

Գունատ լուսինը մոռացավ հեռանալ երկնակամարից: Արշալույսի աղջամուղջի մեջ զվարթ շողում էր բոսոր կարմիրով զուգված վարդը:

Վաղ առավոտ ուսանողը բացեց պատուհանը և տեսավ հրաշք վարդը:

Իսկ վարդենու ոտքերի տակ հանգչում էր սոխակը՝ սրտում սուր մի փուշ:

ՊԼԱՆ

1. Սոխակի մտորումը:
2. Ուսանողի բողոքը:
3. Սոխակը ճերմակ վարդենու մոտ:
4. Սոխակի դիմումը դեղին վարդենուն:
5. Կարմիր վարդենու պայմանը:
6. Լուսնի լույսի տակ երգող սոխակը:
7. Ալ գույնով ներկված վարդը:
8. Սոխակի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

սիրո գաղտնիք, մտմտուք, ալ կարմիր վարդ, մութ թևիկ, ամենաթարմ լռան կաթը գողտրող ձյուն, դեղձան վարսեր, բոսոր արյուն, ցուրտը սպանել, գունատ լուսին, մխրճվել, չքնաղ վարդի կոկոն, գերազանցել մահին, չիկնել, շառագունել, մահվան մշուշ, բոսոր կարմիր, ոտքերի տակ հանգչել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Օսկար Ուայլդը (1854- 1900) անգլիացի նշանավոր գրող և քննադատ է: Ծագումով իռլանդացի է, Դուբլին քաղաքից: Ավարտել է Օքսֆորդի համալսարանը: Ապրել և ստեղծագործել է Լոնդոնում, հարել է սիմվոլիզմին: Գրել է բանաստեղծություններ, վեպեր, պատմվածքներ, հեքիաթներ, թատերգություններ:

«Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը մեծ ճանաչում ունի: Վեպի սցենարով կինոնկար է ստեղծված:

Ուայլդի հեքիաթները շատ ինքնատիպ են, դրանք գրված են նրանց համար, «ովքեր չեն կորցրել ուրախանալու և զարմանալու ի վերուստ տրված շնորհը»:

ՏՐԴԱՏ ԵՎ ՆԱԶԵՆԻԿ

Ըստ Մովսես Խորենացու

«... զի յոյժ գեղեցիկ
էր և երգեր ձեռամբ»
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Բակուր իշխանի ապարանքը լողում էր լույսերի ծովում: Մեծ Հրավերք էր կազմակերպել Սյունյաց Հզոր իշխանը: Գինին հոսում էր գետի պես, սեղանները բեռնված էին խորտիկներով և համադամ կերակուրներով:

Կոչնականները ուտում-խմում էին ախորժակով՝ ականջալուր նվագածուների մեղեդիներին և հայ դյուցազունների կյանքը երգող վիպերգերին:

Այդ պահին մի սրընթաց ձիավոր հասավ Բակուր իշխանի ապարանքի դարպասին և ձգեց իր փրփրաբաշ աշխետի սանձը:

Ծառաները Բակուր իշխանին շտապ տեղեկացրին նորեկի մասին: Խրոխտ քայլվածքով իշխանը դուրս եկավ խրախճանքի սրահից. եկողը հասարակ սպուհ չէր, այլ Հայոց Տիրան Թագավորի փեսան՝ Տրդատ Բագրատունին: Բակուրը ջերմագին ողջագուրվեց Տրդատի հետ և առաջնորդեց խրախճանքի սրահ ու տեղավորեց իր կողքին: Երբ Տրդատը հագեցրեց քաղցը, կոչնականները փորձեցին տեղեկանալ, թե ինչ կա արքունիքում:

Տրդատի առնական դեմքի վրայով անցավ քամահրանքի ժպիտ: Նա ճկպով դատարկեց գինու գավը, սրբեց շուրթերը և ասաց.

- Ձեր աչքի առջև նստած է մի մարդ, որ խույս է տալիս Հայոց արքայի ցասումից: Ես փախչում եմ Մարաստան: Բակուր իշխանից միայն այս գիշեր եմ օթևան խնդրելու, իսկ վաղորդայնին պետք է առաջ սուրամ առանց հետ նայելու:

Տեսնելով տանտիրոջ և հրավիրվածների հարցական հայացքները՝ Տրդատը պատմեց.

- Դուք գիտեք՝ ես Հայոց արքայի փեսան դարձա, որովհետև այդպես էր կամե-

նում իմ Հայրը: Երամյակը՝ արքայի աղջիկը, երբեք չսիրեց ինձ, դեռ ավելին՝ անընդհատ ծաղրում և պախարակում էր ինձ նույնիսկ ծառաների ներկայությամբ: Ասում էր, որ ես բոբի եմ և վայրենի, մազոտ եմ ու ստոր ծագում ունեմ: Եվ վայել չէ իր նման ազնվազարմ մի կնոջ ունենալ ինձ նման ամուսին: Երկու օր առաջ, երբ իմ անգին կողակիցը նորից սկսեց ինձ ծաղրել, ես քաշեցի այդ անամոթի սանձերը. մի լավ ծեծեցի, կտրեցի ոսկե գանգուրները և դուրս արեցի ննջարանից:

Բակուր իշխանի հյուրերը ապշած նայում էին և հիանում նրա քաջությամբ ու առնացի բնավորությամբ:

Հենց այդ պահին սրահ խուժեց Բակուրի սուրհանդակը և գուժեց Հայոց Տիրան արքայի մահը:

Տրդատը ելավ տեղից, գինով գավը բարձրացրեց գլխից վեր և բարձրագոչ շնորհակալ եղավ աստվածներին:

Գինարբուքը դարձավ ավելի խելահեղ. կոչնականների աչքերը մշուշվել էին գինուց և հոգիներին իջած խնդությունից:

Մեկ էլ վերնահարկից սկսեց իջնել մի կին:

- Վարձա՜կը, վարձա՜կը, տե՛ղ բացեք, վա՛րդ տեղացեք, Նազենիկն է պարելու:

Երաժիշտները հնչեցրին պարի եղանակ: Նազենիկը նազանքով բարձրացրեց ճերմակ ձեռքերը, ոտքերը համաչափ սկսեցին շարժվել, և մեկ էլ, մեղեդու հետ ձուլված, վարձակը սկսեց ճախրել սրահով մեկ՝ սքանչացած հյուրերի հիացական բացականչություններից շիկնած: Նրա մազերը և թափանցիկ քողը ծածանվում էին հյուրերի գլխավերևում:

Տրդատը նայում էր անթարթ, ձեռքի մեջ ճզմում էր մի նուռ: Երբ Նազենիկը վերջին ճախրն արեց օդում, Տրդատը վեր թռավ տեղից, գրկեց նրան, բերեց, նստեցրեց իր ծնկներին և իր իսկ գավով նրան գինի խմեցրեց: Ապա սկսեց գգվել և փայփայել պարուհուն:

- Բակու՛ր իշխան, ինձ տու՛ր այս կնոջը:

Բակուրը զայրույթից նախ կարկամեց, ապա հաղթահարեց շփոթմունքը և կտրուկ մերժեց Տրդատին: Բագրատունին ելավ, հափշտակեց մրգով լի սկահակը և նետեց Բակուրի վրա: Կոչնականները խառնվեցին իրար, շատերը հանեցին իրենց սրերը:

Բայց Տրդատը մի բան շշնջաց Նազենիկի ականջին և դուրս թռավ սրահից, հեծավ իր ձին և արշավեց ապարանքից հեռու:

Լուսաբացի զովը սկսեց շոյել պատուհանի առջև սպասող կնոջ դեմքը: Նազենիկը ողջ գիշեր չէր քնել և սպասում է իր ասպետին, որին սիրեց միանգամից ու ինքնամոռաց:

Ահա աղջամուղջի մեջ լսելի եղավ սմբակների ձայն: Իր ասպետն է:

Վերնահարկի պատուհանից Նազենիկը ցատկեց իր սիրեցյալի գիրկը, ու ամեհի նժույգը ուղղակի խնձացավ գեղուհու հայումից: Առանց հրամանի նա սուրաց առաջ՝ իր մեջքին տանելով սիրահարներին:

ՊԼԱՆ

1. Խրախճանք Բակուր իշխանի ապարանքում:
2. Անկոչ նորեկը:
3. Նրա պատմությունը:
4. Տիրան արքայի մահվան գույժը:
5. Նազենիկ վարձակը. նրա պարը:
6. Տրդատի պահանջը:
7. Բակուրի թունոտ մերժումը:
8. Խառնաշփոթ:
9. Նազենիկի փախուստը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *Գրատախտակին գրել*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Լողալ լույսերի ծովում, գինին հոսել գետի պես, համադամ կերակուր, կոչնական, ուտել-խմել, ականջալուր մեղեդիներին, փրփրաբաշ աշխետ, հասարակ սեպուհ, քամահրանքի ժպիտ, ճեպով դատարկել, ծաղրել, պախարակել, ազնվազարմ կին, գանահարել, հզոր և պարթև մարդ, առնացի բնավորություն, գուժել, հոգիներին մշուշ իջնել, մեղեդու հետ ձուլված կին, սքանչացած հյուրեր, վերջին ճախր, գգվել, փայփայել, գայրույթից կարկամել, սկահակ, ամեհի նժույգ:

բ) Հատուկ անունները.

Տրդատ Բագրատունի, Սյունյաց Բակուր իշխան, Երանյակ, Նազենիկ, Տիրան թագավոր, Մարաստան:

գ) Մովսես Խորենացուց վերցված բնաբանը. «...գի յոյժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ»:

2. Դասարանում ընթերցել հատվածներ Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմից:

ՍՊԱՍՈՒՄ

Ըստ Մուշեղ Գալշոյանի

Կոմիտասը ելավ հյուրանոցից, վերարկուի օձիքը բարձրացրեց, ձեռքերը խոթեց գրպանները և քայլեց արագ ու ճկուն: Դեկտեմբերի կեսն էր. Փարիզի փողոցներում վնգստում էր ցուրտը: Մրսած օր էր: Եվ փարիզցիները դուռ ու լուսամուտ գոցել էին օրվա դեմ: Հատուկենտ էին անցորդները՝ աչքերը վար թողած ցրտակեզ մայթերին: Թվում էր, թե պաղը երկնքի հետ կապ չունի, ամեն մեկի համար իր ոտնատակից է ելնում ցուրտը, շինություններից, գոց դուռ ու լուսամուտներից, ծխնելույզների շուրթերից դժկամորեն անջատվող ծխի քուլաներից:

Փողոցի շրջադարձում Կոմիտասը մայթին ընկած մի դրամապանակ տեսավ: Հնամաշ էր, պարունակությամբ աղքատ՝ եղած-չեղածը տասը ֆրանկ:

«Խեղճ ու կրակ մեկն է կորցրել, - տխուր մտածեց նա և նայեց շուրջբոլորը, - այս ցուրտ օրվա ապրուստն է կորցրել: Կորոնի, կդառնա, հետ կգա: Մի քիչ սպասեմ»:

Նայեց ժամացույցին: Տասներկուսին քառորդ էր պակաս: Իսկ ժամը տասներկուսին Մարգարիտը ճաշի է հրավիրել:

Համդարտ սկսեց քայլել՝ փողոցի շրջադարձն ու ետ, շրջադարձն ու ետ՝ ուշադիր փողոցով անցնող հատուկենտ անցորդներին: Եվ համոզված էր, որ կգա նա, ու ինքը խսկույն կճանաչի նրան: Կճանաչի, որովհետև ինքը լավ գիտե քաղցի և պաղի դեմքը:

Հիշեց Բեռլինը, ուսանելու տարիները:

1896 թվին էր, էլի ձմեռ: Բարերարի ուղարկելիք ամսականն ուշանում էր: Դուրս էր եկել՝ մի ծանոթից պարտք խնդրելու: Մեկ էլ ոտքերի տակ նշմարեց կես մարկ, վերցրեց ու ավելի մոլորվեց: Կես մարկով ոչինչ չես գնի:

Բայց կարելի է: Կես մարկով վիճակախաղի տոմս գնեց և շահեց հարյուր մարկ:

Այդ հուշը մի պահ կախվեց գլխավերևում, մի միտք լուսավորեց դեմքը: Նա ուրախացավ: Արա՛գ, արա՛գ. քանի դեռ չի հայտնվել նա:

Կոմիտասը գրպանից հանեց հարյուր ֆրանկանոց թղթադրամ և դրեց տասը ֆրանկի տակ: Ապա ժպտաց, ձեռքերը շփեց, խոր շունչ քաշեց. թվաց՝ ազատվել է մի հին ու ծանր պարտքից: Հանկարծ հասկացավ, որ տասը տարի առաջ վիճակախաղում շահածը պարտք է համարել: Որովհետև հարյուր մարդ հուսախաբ էր եղել, իսկ ինքը շահել էր:

Ձմռան այդ օրն աշխարհում միլիոն ու մեկ մարդ ճաշի հրավեր ունի: Միլիոն ու մեկ մարդ թատրոնի տոմս է գնել, միլիոն ու մեկ մարդ աշխատում է, գլուխ կոտրում ինչ-որ առեղծված լուծելու համար:

Ձմռան այդ օր ու ժամին աշխարհում մեն մի մարդ է, միայն մեկը, որ ժամադիր էր կորած դրամապանակի տիրոջ հետ: Դե, թող շու՛տ գա, թող չորոնի ու թող գլուխը չկոծի այդ փոքրիկ ու մեծ կորստի համար:

Արդեն չորս ժամ է, որ նա սպասում էր: Չորս ժամ է՝ ետ ու առաջ էր անում փողոցով:

Ու եկավ նա:

Դեռատի կին էր՝ այր մարդու բաճկոնով, այր մարդու ոտնամաններով, բգկոտված գլխաշորով: Մանկամարդ կնոջ աչքերում բողոք կար, և հույսը լացի պես կախվել էր շուրթերից ու շողում էր: Նա քայլում էր տրտում ու անվստահ, պեղելով մայթը, փնտրելով, զննելով:

- Օրի՛որդ, - կինը ցնցվեց տղամարդու ձայնից, - օրի՛որդ, դուք որևէ բան կորցրե՞լ եք:

- Այո՛, դրամապանակս եմ կորցրել, - ասաց ցածրաձայն:

Կոմիտասը ձեռքը տարավ գրպանը և կնոջը մեկնեց դրամապանակը:

ՊԼԱՆ

1. Ձմռան մի ցուրտ օր:
2. Կոմիտասը մի դրամապանակ է գտնում:
3. Վերհուշ. շահած հարյուր մարկը:
4. Դեռատի կինը:
5. Կորուստը գտնված է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

օծիք, վնգստալ, մրսած օր, գոցել, ցրտակեզ մայթ, ծխնելույզ, շուրջբոլոր, հատուկենտ, հուշը կախվել գլխավերևում, հարյուր ֆրանկ, հուսախաբ լինել, միլիոն ու մեկ մարդ, առեղծված, գլուխը կոծել, դեռատի, մանկամարդ կին, հույսը լացի պես կախվել շուրթերից:

2. Ունկնդրել կոմիտասյան մեղեդիներ:

ԽՌՊՈՏ ՁԱՅՆՈՎ ՀԱՅԸ

Ըստ Շարլ Ազնավուրի

1924 թվականի մայիսի 22-ին Փարիզի ծննդատներից մեկում լույս աշխարհ եկավ Քնար և Միշա Ազնավուրյանների միակ մանչ զավակը: Մայրը կամեցել է, որ որդին Շահնուր կոչվի:

Բայց ֆրանսուհի մանկաբարձը ոչ մի կերպ չի կարողացել արտասանել այդ անունը և մանկանը կնքել է Շարլ:

Ազնավուրյանների ընտանիքն ապրում էր համերաշխության և ներդաշնակության մթնոլորտում: Ուրախ-զվարթ ընտանիքում է մեծացել Շարլը, նրա ծնողները երգում էին հայկական ժողովրդական երգեր և զուրկ չէին դերասանական շնորհքից: Այդ էին վկայում սիրողական ներկայացումները, որոնց մանկուց ականատես էր Շարլը:

Նրանց ընտանիքը ապրում էր հայրենիքից գաղթած բոլոր հայերի պես. տաժանակիր աշխատանք՝ մի կտոր հաց և գլխավերևում տանիք ունենալու համար:

Աշխատասեր ու ստեղծագործող Շարլը փորձում է արվեստի շատ ոլորտներ՝ երգ, պար, թատրոն, կինո, բանաստեղծություն և երաժշտություն: Շարլը հպարտությամբ կարող է ասել, որ երբեք չի հանգստացել, որ իր կյանքը եղել է ծանր, երկարատև աշխատանք: Բայց հանդիսատեսը դեռ չի հանձնվում: Սիրով ընդունում է երգահան և բանաստեղծ Ազնավուրին, երբ դրանք կատարում են ժամանակի նշանավոր երգիչներ և երգչուհիներ՝ Էդիտ Պիաֆը, Ժան Բեկոնը և այլք:

Բայց երգիչ Ազնավուրը դեռ երկար ժամանակ մնում է ստվերում: Մարդկանց զարմացնում և հիասթափեցնում է Շարլի խռպոտ և խզված ձայնը: Բայց համառ է Ազնավուրը, նա գիտե, որ մի օր հաղթելու է հանդիսատեսին և ստիպելու է հիանալ իրենով նաև որպես երգիչ, որպես իր իսկ երգերի ինքնատիպ կատարող:

1959 թիվ, Փարիզ, «Օլիմպիա» համերգասրահ: Հարդասենյակի պատերը բանտ են հիշեցնում: Այսօր վճռական օր է Շարլ Ազնավուրի համար: Այսօր նա մեն-մենակ կանգնելու է Փարիզի պահանջկոտ հասարակության առջև: Շատ է տառապել այս փոքրամարմին հայը, շատ է տքնել, մինչև հասել է այստեղ: Այսօր առաջին անգամ համերգասրահի մուտքի առջև դրվել է իր ազդագիրը:

Հիմա նա հիշում է անցած քառասուն տարիները: Իր ելույթները Էդիտ Պիաֆի հետ, երբ երկրպագուները շրջապատում էին այդ փոքրամարմին, բայց տաղանդավոր կնոջը, իսկ ինքը անտեսված մնում էր մի անկյունում:

Ահա, ահա, կսկսվի:

Հանկարծ նվագախումբը սկսում է համերգի առաջին մասի նախերգանքը: Շարլը վախից ավելի է փոքրանում, կոկորդը չոր է, սիրտը թպրտում է: Հագնվում է, կարգի է բերում փողկապը, ոչ մի կերպ չի կարողանում կապել կոճկների քուղերը:

Բեմ դուրս գալու պահն է: Սարսափահար է, ու դա ավելի է կատաղեցնում Ազնավուրին:

Վերջապես նրան հրում են բեմ: Լույսերը կուրացնում են աչքերը: Քաղաքավարի ծափերը բնավ էլ չեն սրտապնդում: Մարմինը վառվում է, սրտխառնուք է զգում: Մի ճանճ է անցնում կողքով . Հանկարծ կուլ չտա՞:

Մեկ էլ հնչում է ձայնը, իր ձայնը, ինքը երգում է:

Դահլիճը չի տեսնում: Հսկայական վիհ է բացված իր առջև, ավելի շատ զգում է, քան լսում: Լավ գիտե, որ մթի մեջ դարանակալ՝ ողջ Փարիզն է ուշադիր ու սառը հետևում իրեն: Նա այստեղ է եկել արժանագրելու կուռքի ոչնչացումը կամ նոր աստղի ծնունդը:

Վեցերորդ երգն էլ վերջացավ: Մնում է յոթերորդը, վերջինը: Ցոթերորդ երգից առաջ Ազնավուրը արագ դուրս է գալիս՝ հանելով բաճկոնը, քանդելով վերնաշապիկի կոճակները:

Բեմ է վերադառնում, սկսում է դանդաղ հագնվել ու երգել:

Ես առույգ էի, վստահ և ուժեղ,
Ես ձայն ունեի, ունեի մտքեր,
Բայց իմ երգերը լոկ ինձ հուզեցին:
Բայց ես մեղավոր չեմ,
Մեղավորը նա է, ամբոխը,
Որն այնպես էլ ոչինչ չհասկացավ:
Ես շատ մաքուր էի, կամ շատ էի նոր
Հասկացվելու համար:

Երգի ավարտի հետ արդեն հագնված, մեջքով կանգնած է դեպի դահլիճը: Լույսերը հանդարտ մարում են: Բեմի խորքում վարագույր է բացվում, որտեղից լուսարձակները շլացուցիչ լույսով են լցնում դահլիճը և պարուրում են հանդիսատեսին: Ու թվում է՝ ամեն մի հանդիսատես հենց ինքն է երգիչը, ինքն է բեմի վրա: Իսկ Ազնավուրը օրորվում է մեղեդու, թույլ լույսի ներքո, մինչև որ դանդաղ իջնում է նախաբեմի վարագույրը:

Ազնավուրը կանգնած է՝ երկընտրանքի ու վարանումի ահը սրտում: Նրա ականջին է հասնում բազկաթոռների աղմուկը: «Գնում են», - անցնում է երգչի մտքով, ու սիրտը ծակում է:

Վարագույրը բարձրանում է: Ահա այդ ահավոր հանդիսատեսը, որ լուռ կանգնած է նրա առջև: Հետո որոտընդոստ ծափերից դղրդում է դահլիճը:

Շառլ Ազնավուրը՝ ազգությամբ հայ այդ տաղանդավոր մարդը, իր խռպոտ ձայնով ծնկի էր բերել աշխարհի ամենաքմահաճ քաղաքը՝ Փարիզը:

ՊԼԱՆ

1. Շառլ (Շահնուր) Ազնավուրյանի ծնունդը:
2. Ազնավուրյանների ընտանիքը:
3. Զարքաշ աշխատանք դեռ մանկուց:
4. Երգիչ Ազնավուրը հիասթափեցնում է:
5. 1959 թիվ, Փարիզ. առաջին ինքնության համերգը:
6. Երգչի հաղթանակը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները. տաժանակիր աշ-

ա) ֆրանսուհի մանկաբարձ, գերասանական շնորհք, սիրողական ներկայացում, տաժանակիր քուղեր, խատանք, խռպոտ, խզված ձայն, ազդագիր, նվագախումբ, նախերգանք, փողկապ, կոշիկի քուղեր, որոտընդոստ ծա-
հսկայական վիհ, բաճկոն, լուսարձակ, շլացուցիչ լույս, երկընտրանք և վարանում, որոտընդոստ ծափեր, ծնկի բերել, ամենաքմահաճ:

բ) Հատուկ անունները.

Փարիզ, Շառլ Ազնավուր, Էդիտ Պիաֆ, Ժան Բեկոն:

2. *Դասարանում ունկնդրել Շառլ Ազնավուրի երգերի ձայնագրությունները:*

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Ըստ Օ՛ Հենրիի

Նյու Յորքի աղքատ արվարձանում արվեստանոց էին վարձել երկու ջահել նկարչուհիներ՝ Սյուն և Ջոաննան: Նրանք ծանոթացել էին շատ պատահաբար, մի սրճարանում ընթրելիս: Զրույցի էին բռնվել, և պարզվել էր, որ նույն տեսակետն ունեն արվեստի, աղցանի և նորաձև թևքամիկների մասին: Եվ ընկերացել էին: Արդյունքում՝ ընդհանուր արվեստանոց աղքատիկ թաղամասի եռահարկ աղյուսե շենքի վերին հարկում:

Դա մայիս ամիսն էր: Իսկ հիմա նոյեմբերն է: Ցուրտ է, մռայլ երկինքը շարունակում է խոժոռվել ու դժգոհել: Իսկ աղքատիկ թաղամասում հյուր է պարոն Թոքաբորբը:

Բարալիկ ու քնքուշ օրիորդ Ջոաննային էլ դիպավ այդ գզվելի պարոնի գավազանը: Նա անկողին ընկավ: Ահա պառկած է Ջոաննան անշարժ. անթարթ ու անքթիթ նայում է դիմացի աղյուսե շենքի պատին:

Մի անգամ՝ առավոտյան, բժիշկը հերթական այցից հետո Սյուին կանչեց միջանցք և ասաց.

- Ես արեցի հնարավոր ամեն ինչ, նա կանոնավոր բուժում է ստացել: Հիմա արդեն պետք է սկսվեր ապաքինումը: Դժվար է բուժել այն մարդուն, որը գործում է հօգուտ գերեզմանափորի և ոչ թե հօգուտ բժշկի: Ձեր օրիորդը որոշել է, որ ինքն այլևս չի բուժվի: Ինչի՞ մասին է նա մտածում:

- Նա ուզում էր յուղաներկով նկարել Նեապոլիտանական ծոցը:

- Յուղաներկո՞վ: Դատարկ բան: Իսկ կարող է՝ մտածում է որևէ տղամարդու մասին: Անպատասխան սեր, կոտրված սիրտ և այլն:

- Տղամարդ, ո՛չ, ո՛չ: Մի՞թե տղամարդն արժանի է այդպիսի տառապանքի:

- Այդ դեպքում նա շատ է թուլացել: Եթե իմ հիվանդը արդեն հաշվում է իրեն գերեզմանատուն ուղեկցող մեքենաները, ապա հիսուն տոկոսով պակասում է ցանկացած դեղորայքի ազդեցությունը: Եթե դուք կարողանաք հետաքրքրել նրան, եթե նա գոնե մեկ անգամ հարցնի, թե ինչ տեսակ թևքամիկներ են հիմա նորաձև, փրկված է:

Սյուն վազեց սենյակ, տեսավ, որ Ջոաննան պառկած է՝ դեմքով դեպի պատուհանը դարձած:

Աղջիկը ներս բերեց նկարակալը և ներկապնակը, ամրացրեց մի թերթ սպիտակ թուղթ ու սկսեց նկարը, որ նրան հանձնարարել էր մի ամսագիր:

Հանկարծ նա լսեց Ջոաննայի շշուկը: Աղջիկը հաշվում էր: Սյուն մոտեցավ ընկերուհուն: Հիվանդը, աչքերը լայն բացած, հաշվում էր դիմացի տան պատին կառչած բաղեղի տերևները:

- Վեց, - շշնջաց հիվանդը, - երեք օր առաջ դրանք համարյա հարյուր էին, հիմա մնացել է վեցը: Երբ վերջին տերևը պոկվի, ես կմեռնեմ: Ուզում եմ տեսնել, թե ինչպես է պոկվում վերջին տերևը:

Սյուն խիստ վրդովվեց ու անհանգստացավ: Նա կշտամբեց ընկերուհուն, որ իր բախտը կապել է ինչ-որ փտած տերևների հետ:

Այդ շենքի երկրորդ հարկում ապրում էր ծեր նկարիչ Բերմանը: Նա անհաջողակ մարդ էր: Արդեն վաթսուն տարեկան էր, բայց միշտ երազում էր ստեղծել իր գլուխ-գործոցը: Ծեր ջենտլմենը իրեն կարգել էր մատղաշ նկարչուհիների հովանավոր:

- Ի՞նչ, - գոռաց նա, երբ լսեց Սյուի պատմածը, - մեռնել միայն այն պատճառով, որ անիծյալ բաղեղից պոկվում են տերևները: Ա՜խ, իմ խեղճ, փոքրի՛կ օրիորդ:

Իսկ դրսում մոլեգնում էր ուշ աշնան անձրևը, որ երբեմն ձյուն էր դառնում: Երկնքի գույնը սև էր, քամին Թոցնում և իր սառը Թևին առած՝ տանում էր ամեն ինչ: Արև չկար: Կարծես չէր եղել:

Անցավ երեք օր: Հիվանդը ամեն առավոտ ահով նայում էր պատին, ուր դեռ մեկ հատիկ տերև կար: Փոթորկալի երեք գիշեր դիմացել էր այդ վերջին տերևը:

Ջոաննան երկար նայեց տերևին, ապա շրջվեց դեպի ընկերուհին և խնդրեց ի-րեն արգանակ տալ: Վտանգն անցած էր: Հետո բարձերի մեջ Թաղված հիվանդը խոսեց Նեապոլիտանական ծոցը նկարելու մասին:

Իսկ երկրորդ հարկում ցուրտ լռություն էր: Ծեր նկարիչը այդ առավոտ մահացել էր հիվանդանոցում: Երկու օր առաջ նա խիստ Թրջվել ու Թոքաբորբ էր ստացել: Ոչ ոք չգիտեր, Թե ուր էր նա գնացել այդ սոսկալի գիշերը:

Հարևան շենքի պատին՝ Ջոաննայի պատուհանի դիմաց, նա վերջապես կերտել էր իր գլուխգործոցը՝ բաղեղի կանաչ տերևը:

ՊԼԱՆ

1. Երկու նկարչուհիների ծանոթությունը:
2. Ընդհանուր արվեստանոց:
3. Ջոաննան հիվանդ է:
4. Անհաջողակ ծեր նկարիչը:
5. Ծեր նկարչի գլուխգործոցը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) արվարձան, աղցան, Թեզանիք, մռայլ երկինք, պարոն Թոքաբորբ, բարալիկ ու քնքուշ օրիորդ, անքԹիԹ նայել, հօգուտ, նկարակալ, ներկապնակ, մոլեգնել, ուշ աշնան արև, արգանակ, ցուրտ լռու-
Թյուն, Թրջվել, Թոքաբորբ ստանալ, սոսկալի գիշեր, բաղեղի կանաչ տերև, գլուխգործոց:

բ) Նյու Յորք, Սյու, Ջոաննա, Բերման, Նեապոլիտանական ծոց:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Օ'Հենրի - Ուիլյամ Սիդնի Պորտերը (1862-1910) ամերիկացի հայտնի գրող է, կրթությամբ դե-ղագործ: Հրատարակել է երգիծական շաբաթաթերթ, որի էջերում տպագրել է իր առաջին գրական փորձերը: Մի կարճ ժամանակահատված ամերիկյան բանկի գանձապահ- հաշվապահ է աշխատել: Ազատազրկվել է և բանտ նետվել բա-նակի դրամը վատնելու մեղադրանքով: Բանտում անգործ չի նստել. գրել է պատմվածքներ, նորավեպեր:*

Նրա գրիչը խիստ ինքնատիպ է. ամենալուրջ հարցերը քննարկում է զվարճալի հումորով:

ԶԱՐԴԸ

Ըստ Գի դը Մոպասանի

Տիկին Մաթիլդը ժամանակին սիրուն և հրապուրիչ աղջիկ էր: Նա ծնվել էր հասարակ պաշտոնյայի ընտանիքում և ամուսնացել էր լուսավորության նախարարության ծառայողի հետ: Ապրում էին շատ համեստ, իսկ տիկին Մաթիլդը միշտ երազում էր շքեղ հագուստների, ադամանդակուռ արդուզարդի մասին:

Մի օր նրա ամուսինը պարահանդեսի հրավեր բերեց: Տիկինը հրաժարվեց գնալ՝ պատճառաբանելով, որ պատշաճ հագուստ չունի: Ամուսինը նրան տվեց իր խնայած դրամը, որ կինը պարահանդեսի համար նոր և շքեղ հագուստ ունենա:

Հագուստը պատրաստ էր, բայց դրա հետ կրելու ոչ մի զարդ չուներ տիկինը:

- Գնա բարեկամուհուդ՝ տիկին Ֆորեստիենի մոտ, խնդրի՛ր որևէ զարդ այդ օրվա համար, - հուշեց Մաթիլդի ամուսինը:

- Ճիշտ է, այդ մասին ես բոլորովին չէի մտածել, - բացականչեց Մաթիլդը:

Տիկին Ֆորեստիենը Մաթիլդին մի մեծ արկղիկ տվեց և առաջարկեց ընտրել: Մաթիլդը այդ արկղիկից հանեց ապարանջաններ, մարգարտե մի մանյակ, զանազան շղթաներ՝ զմրուխտով ու ակնեղենով ընդելուզված:

Վերջապես Մաթիլդը ադամանդե մի սքանչելի մանյակ գտավ. սիրտը սկսեց բաբախել, ձեռքերը դողում էին: Նա կապեց մանյակը պարանոցին և երկար ժամանակ հիանում էր ինքն իրենով:

Տոնախմբության օրը եկավ: Մաթիլդը չքնաղ էր՝ իր նոր շրջազգեստով և ադամանդե մանյակով: Բոլոր տղամարդիկ գերված էին այդ քնքուշ մանկամարդ կնոջով, անընդհատ հիացական խոսքեր էին՛ ասում իրենց գործընկերոջ սքանչելի կնոջը: Մաթիլդը պարեց ողջ գիշեր: Դա նրա համեստ կյանքի եզակի օրերից մեկն էր:

Առավոտյան ժամը չորսին հյուրերն սկսեցին ցրվել: Ամուսինը Մաթիլդի ուսերին գցեց նրա սովորական թիկնոցը, որը բոլորովին չէր ներդաշնակում պարահանդեսի շքեղ հագուստի հետ:

Տուն վերադարձան ոտքով: Մաթիլդը հոգնած էր, բայց երջանիկ:

Հայելու առջև նա ուսերից վերցրեց թիկնոցը, և ամուսինը լսեց նրա սարսափահար ճիչը. մանյակը պարանոցին չէր: Ամուսնու հետ Մաթիլդը փնտրեց ամեն տեղ, հագուստի և թիկնոցի ծալքերում: Մանյակը չկար: Ամուսինը մի ճրագ վերցրեց և գնաց փնտրելու փողոցներում:

Առավոտյան յոթին վերադարձավ ձեռնունայն:

Մյուս օրը նրանք շրջեցին բոլոր ակնավաճառների խանութները: Միայն մի խանութում տեսան իրենց կորցրածի նման մի մանյակ: Այն քառասուն հազար ֆրանկ արժեր, բայց ակնավաճառը խոստացավ զիջել և տալ երեսունվեց հազարով:

Ամուսինը հորից մնացած տասնյոթ հազար ֆրանկ ուներ, մնացածը պարտք վերցրին, նսեմացան, մուրհակներ գրեցին, տոկոսով վերցրին: Անհրաժեշտ գումարով ներկայացան ակնավաճառին, գնեցին մանյակը, և Մաթիլդը արկղիկով տարավ այն իր հարուստ բարեկամուհուն:

Սկսվեց ծանր ու չարքաշ կյանքի շրջան: Մաթիլդը դարձավ լվացարար, ուրիշների լվացքն էր անում: Մաշկը կոպտացավ, կորցրեց գեղեցկությունը:

Անցավ տասը տարի: Բոլոր պարտքերը վճարված են: Հիմա Մաթիլդը տգեղ և ծեր կին է:

Մի օր զբոսանքի դուրս եկավ: Տեսավ Հարուստ բարեկամուհուն, որը նույնքան գեղեցիկ ու քնքուշ էր, ինչպես տասը տարի առաջ:

Նա Հազիվ ճանաչեց Մաթիլդին: Վերջինս անկեղծորեն պատմեց ողջ ճշմարտությունը: Բարեկամուհին շանթաՀարված լսեց և կերկերուն ձայնով թոթովեց.

- Մաթի՛լդ, Հրեշտա՛կս, բայց չէ՞ որ իմ մանյակի ադամանդները կեղծ էին. այն Հազիվ Հինգ Հարյուր ֆրանկ արժենար:

ՊԼԱՆ

1. Հասարակ պաշտոնյայի դուստրը:
2. Նրա ամուսնությունը:
3. ՊարաՀանդեսի Հրավեր և նոր շրջազգեստ:
4. Հարուստ բարեկամուհու մոտ:
5. Ադամանդե մանյակը:
6. Մաթիլդի Հաղթանակը:
7. Կորուստ:
8. Պարտքեր. Թանկարժեք մանյակ:
9. Տասը տարի անց:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

չքեղ Հագուստներ, ադամանդակուռ, արդուզարդ, պատշաճ Հագուստ, ապարանջան, մանյակ, գրմբուխտով և ակնեղենով ընդելուզված շղթաներ, քնքուշ և մանկամարդ կին, սարսափաՀար ճիչ, ձեռնունայն, քառասուն Հազար, երեսունվեց Հազար, ակնավաճառ, մուրՀակ, ծանր ու չարքաշ կյանք, Հինգ Հարյուր ֆրանկ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Գի դը Մոպասանը (1850-1893) ֆրանսիացի հռչակավոր իրապաշտ գրող է: Մեկ ուրիշ հռչակավոր ֆրանսիացու՝ Ֆլոբերի գլխավորությամբ թափանցել է գրողական արվեստի նրբությունների մեջ:*

Գրական աշխարհ մտել է բանաստեղծությունների գրքով: Սակայն գրական տաղանդը դրսևորվել է արձակի ժանրում: Գրել է վեց վեպ («Մի կյանք», «Սիրելի բարեկամ», «Մահվան պես հզոր» և այլն), պատմվածքների և նորավեպերի տասնութ ժողովածու, ակնարկներ, պիեսներ, հոդվածներ:

Մոպասանը իր գերխնդիրը համարում է «կյանքի անողոք ճշմարտության» բացահայտումը:

ԴԵՂ ՍԻՐՈ

Ըստ Վիգեն Խեչումյանի

Մթնում էր աշնան արեգակը, լույսը գունատ էր, ջերմությունից զուրկ թեք ճառագայթները լիզում էին տների Հողե պատերը:

Տարեց մի տղամարդ նստած էր դռան սեմին, նայում էր շուրջն ու միտք անում:

Դեղնել էր անտառը, նոսրացել: Գյուղի տակ՝ ձորում, խշշոցով գլորվում էր գետը, զարնվում ժայռոտ ափերին, պոկում նրա ճեղքերում մնացած վերջին ծաղիկների չորացած ցողունները և կորչում կամրջի տակ:

Դռան սեմին նստած տղամարդը մտածում էր, որ շուտով ծանր կնստի ձմեռը, ձյուն կիջնի անտառ տանող արաՀետներին: Ի՞նչ ցավեր ու Հիվանդություններ կբերի ձմեռը մարդկանց, և կբավականացնեն արդյոք այն ծաղիկներն ու բույսերը, որ ամբողջ ամառ Հավաքել է դեղորայք պատրաստելու Համար:

Քամի բարձրացավ, պտույտ տվեց ու թերթեց կողքին դրված հին բժշկարանը: Նա սթափվեց մտքերից, ուշադրությունը գրավեց բացված էջը, աչքը կարդաց կարմիր մի տող. «Դեղ սիրո»:

Կարդաց, ժպտաց, միտքը սահեց հետ:

Վաղուց էր, տարիներ առաջ, երիտասարդ էր:

Հայրը՝ Սիմեոնը, բժիշկ էր, ամեն խոցի դեղ էր տալիս, ոտքի կանգնեցնում անդամ ծանր հիվանդին:

Ձմռան երկար գիշերներին նստում էին հայր ու որդի ճրագի առջև. հայրը թերթում էր բժշկարանը, կամաց-կամաց որդուն մասնակից էր դարձնում իր արվեստի գաղտնիքներին: Երբ բացվում էր գարունը, նրանք գնում էին անտառ, ենում սարերը, ծաղիկներ, արմատներ, բույսեր էին հավաքում դեղորայքի համար: Երբեմն հիվանդի մոտ էին գնում միասին, Գնելը օգնում էր հորը:

Հետո հայրը մահացավ՝ Գնելին թողնելով բժշկելու արվեստն ու իր բժշկարանը:

Գնելը սարսուռով թերթում էր այդ մատյանը:

«Առ հյութն վաղամեռուկի և աղավնաբուր ծաղկանց, խեժ մի նուկի, բարկ ցախով եփ տուր, մինչև կես կթղա մնա և աղոթի՛ր: Կոկորդի ցավի է»: Սրա դիմաց հոր ձեռքով գրված էր. «Փորձյալ է»: Ապա հիշատակված էին այն մարդկանց անունները, որոնք ընդունել էին այդ դեղը:

Հին բժշկարանի մեջ կար մի դեղատոմս, որի դիմաց ոչինչ չէր գրված: Գնելն այդ դեղատոմսը կարդում էր շիկնելով, որովհետև ջահել էր, ու մտքի մեջ հարևանի աղջիկն էր՝ Հրանուշը:

Խոսուն հոնքեր ուներ Հրանուշը. նրանք մերթ անշարժ կամար էին կապում քիչ տամուկ աչքերի վրա, մերթ մեկը ձգվում էր վեր, մյուսն իջնում, կամ հավաքվում էին քթարմատի մոտ ու մթնեցնում հայացքը: Գնելը սարսռում էր այդ մութ նայվածքից ու խուսափում էր:

Այդ տարի գարունը եկավ մի օրվա մեջ:

Հենց այդ առավոտ Գնելը կտրեց Հրանուշի ճանապարհը, որ Վարսենիկի հետ էին մնացել աղջիկներից:

- Կա՛ց, անսի՛րտ:

Աղջիկը խոժոռեց դեմքը և շրջվեց դեպի Վարսենիկը և ասաց.

- Ասա՝ թող քար չդառնա ջրիս ճամփին, ասա՝ իրեն չեմ սիրում:

Գնելը հարբածի պես մոլոր մտավ տուն, ընկավ թախտին: Սենյակում զգուշությամբ պտտվում էր Վարսենիկը, իբրև գործ էր անում, կարեկցող, տրտում աչքերով նայում էր նրան: Վարսենիկը և նրա մայրը օգնում էին Գնելին տնային գործերում:

Դրսում բացվում և փրփրում էր գարնան առաջին օրը. սարալանջի մացառների մեջ խոսում էր կաքավը:

Տեղից ելավ Գնելը, գնաց թռչնի ձայնին: Մացառները մերկ էին, թաց, ոտնատակը՝ ցեխ, կավը կպչում էր ոտքին ու չէր պոկվում: Լուռ էր կաքավը: Գլխում ոչ մի միտք չէր մնացել: Սրտում եփվում էր ցավը, ինչպես պղնձե անոթի մեջ եփվում է օձի կծածից ազատելու պղտոր դեղը, որ նա պատրաստում էր նռան կեղևի և մարդատակի արմատներից:

Իրիկունն ուշ դարձավ տուն: Հաջորդ օրը նորից գնաց սարերը: Սարից եկավ շաբաթն անցած: Խաթուն նանից իմացավ, որ Հրանուշը հիվանդ է, որ իրեն փնտրել են:

Մախաղի մեջ մի փունջ ցայգածաղիկ կար: Հանեց դողացող մատներով, մամլեց, խառնեց օշարակի հետ, լցրեց մի կճղայի մեջ ու դուրս թռավ տնից:

Պառկած էր Հրանուշը՝ գլուխը ծածկած ծաղկավոր հաստ վերմակով, և ինչքան էլ մայրը խնդրում-աղաչում էր, վերմակը չէր հեռացնում երեսից:

Գնելը կանգնել, ոտքից ոտք էր փոխվում, խեղճ ու մեղավոր ժպտում էր միայն:

«Չեմ ուզում, - ասում էր աղջիկը վերմակի տակից: Ասա՛ թող գնա, ասա՛ երեսն էլ չեմ ուզում տեսնել»:

Տուն եկավ Գնելը մթնած: Խորշում տեղավորեց ձեռքի կճղան, նստեց, գլուխը դրեց ձեռքերին:

Ինչի՞ն էր պետք գարունը, եթե Հրանուշը իր երեսն էլ չէր ուզում տեսնել:

Ի՞նչ էր անելու հին բժշկարանը, որտեղ բազմաթիվ դեղեր ու սպեղանիների դիմաց արդեն գրել է.«Փորձյալ է»:

Հետո ուշ էր, դրսում գիշեր էր: Վարսենիկը կանգնել էր գլխավերևում, խնդրում էր. «Ա՛ռ, կե՛ր այս տաք ապուրից, գլխիդ ցավը կանցնի: Ես կուժ արի, իմ գլուխը էլ չի ցավում»:

Գնելը կճղան մոտեցրեց շուրթերին, ըմպեց մի կում և նոր միայն լայն բացեց աչքերը: Կճղայի մեջ մի կում սիրո դեղ էր մնացել. խմել էր միամիտ աղջիկը գըլխացավի դիմաց, մնացածը տվել էր Գնելին:

Տարեց մարդը ժպտաց իր հուշերին, անցած օրերին, ձեռքով արեց մարդերի վրա կռացած կնոջը և բժշկարանի լուսանցքում «Դեղ սիրո», «Փորձյալ է» բառերի տակ ավելացրեց. «Վարսենիկ՝ դուստր Անանիայի, որ եղև կողակից նվաստ բժշկիս Գնելի՝ որդվո Սիմեոնի»:

ՊԼԱՆ

1. Աշունն ու տարեց տղամարդը:
2. Հին բժշկարանը:
3. Վերհուշ. հայրը՝ բժիշկ Սիմեոնը:
4. Հրանուշը:
5. Խոստովանություն և մերժում:
6. Սարերում:
7. Հիվանդ Հրանուշը:
8. Գլխացավի դեղը:
9. Նշում հին բժշկարանում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աչնան արեգակ, գունատ լույս, ժայռոտ ափեր, ձմեռը ծանր նստել, սթափվել մտքերից, սպեղանի, վաղամեռուկ, աղավնաբուր ծաղիկ, բարկ քացախ, կճղա, խոսուն հոնքեր, տամուկ աչքեր, մութ նըրվաղամեռուկ, աղավնաբուր ծաղիկ, բարկ քացախ, կճղա, խոսուն հոնքեր, մարդատակի արմատ, մախաղ, ցայգածաղիկ, օշարակ, «Վարսենիկ՝ դուստր Անանիայի, որ եղև կողակից նվաստ բժշկիս Գնելի՝ որդվո Սիմեոնի»:

2. Աշակերտներին առաջարկել թվել ծաղիկների և բույսերի անուններ, որոնք օգտագործվում են բժշկելու համար:

Բառի բացատրություն

Նուկի - ծանրության չափ (հատուկ է խոսակցական լեզվին):

ԱՐՅՈՒՆՈՏ ՄԱՏՅԱՆԸ

Ըստ Կիմ Բակչիի

Հակոբը գրիչ է, արդեն ո՞րերորդ մատյանն է ընդօրինակում: Բայց այս մեկն ուրիշ է: Միշտ երազել է մի մատյանի մեջ հավաքել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տղայի տաղերը: Տաթևի համալսարանի մատենադարանում Հակոբը գտավ դրանք՝ կարված մի պատմական աշխատության հետ:

Այդ տաղերից մի տող միրճվել էր Հակոբի հիշողության մեջ.«Կյանքը նման է ճատրակի խաղի»: Նա միայն հիմա խորամուխ եղավ այս բառերի իմաստնության:

Ո՞վ է շարժում խաղաքարերը: Ո՞վ կարող է ստույգ ասել, որ հենց վաղը բանական - խաղաքար գրիչ Հակոբը հավերժ դեն չի նետվի խաղատախտակից:

Հակոբը մտածում էր իր մասին, մատյանի մասին, որը երևի իր մահվան հետ մնա անավարտ:

Անցավ մի շաբաթ: Մոնղոլները մի քանի անգամ ելարաններ դրին ու փորձեցին բարձրամալ Տաթևի պատերի վրա: Բայց եկեղեցու զանգերը ղողանջում էին, և ուսուցիչը բոլորին օգնության էր կանչում:

Հակոբը հեռու էր մնում կռիվներից: Ուսուցիչը նրան պատվիրել էր փակվել խցում և շարունակել աշխատանքը: Եվ Հակոբը գրում ու գրում էր՝ ականջներում կռվի շունդը: Իսկ մտքում շարունակ պտտվում էր իր և ուսուցչի զրույցը:

Նա բոլորին պատվիրել էր սուր վերցնել: Բայց վերջում պահել էր Հակոբին և հորդորել, որ կռվից հեռու մնա և շարունակի ընդօրինակությունը:

- Բայց, հա՛յր սուրբ, մի՞թե հիմա գրչագրի ժամանակն է: Ի՞նչ իմաստ ունի ընդօրինակությունը, երբ չգիտենք՝ ուր պահենք մատյանները:

- Իրավ չես դու, Հակո՛բ, - մեղմաձայն ասել էր Հովհաննես Որոտնեցին, - ինքդ մտածի՛ր՝ ի՞նչ կլինի, եթե քո իսկ հայտնաբերած այդ հին, այրված, հողի խոնավությունը ճաշակած եզակի ձեռագիրը չվերածնվի քո աշխատանքով:

Ամբողջ հաջորդ օրվա ընթացքում, չնչելով թշնամու խարույկների խեղդող ծուխը, լսելով նրանց թմբուկների թնդյունը, Հակոբը ջանադիր ընդօրինակում էր մատյանը:

- Ռաբունապետը կարգադրեց քեզ մատյանը վերցնել և վազել տաճար: Անհավատները հետևի կողմից ճեղքեցին - ներս մտավ մի սարկավագ:

Հակոբը արագորեն ձեռքն առավ խուրջինը: Որտե՞ղ է թանաքը, ահա սրվակները, թանաքամանը, ներկերը, մաքուր մագաղաթի կապոցը ու նաև նոր ընդօրինակած մատյանը:

Գրիչը տենդորեն ուսը նետեց կապոցը ու վազեց դեպի ավանդատունը: Այնտեղ էին նաև մյուս վանականները՝ ուսներին մատյաններով լի խուրջիններ: Հովհաննես Որոտնեցին իր գավազանով մատնացույց էր անում դեպի ներքև, դեպի խոնավ ու խավար գետնախորշը:

Անցավ երկու տարի: Վանականների խումբը գիշերը քայլում էր, իսկ ցերեկը թաքնվում որևէ ապահով տեղում: Ահա այսօր նրանք ապաստանել են աչքից հեռու գտնվող մի բացատում: Իր ճամփորդական գրակալի առջև նստած է գրիչ Հա-

կոբը: Նա նկատելի նիհարել է, բայց դեռ ծամրամարմին է: Ամեն կողմից նրան շըրջապատել են մագաղաթի թերթերը, ներկերով ու թանաքով լի սրվակները, ապագա մատյանի կարված էջերը: Մատյանն ավարտված է, հիմա Հակոբը գրում է հիշատակարանը, պատմում է, թե ինչպես փախան Թշնամուց, ինչպես երկու տարի անընդմեջ տեղից տեղ էին գնում, և ինքը հանգստի պահերին անգամ գրում էր ու գրում:

Արևն անցավ սարի հետևը, երկինքն անմիջապես կանաչեց, մեկը մյուսի հետևից կապտեցին լեռների եզրագծերը: Վանականները կապկպեցին ունեցած-չունեցածը, պատրաստվեցին գիշերով ճամփա ելնելու:

Հակոբի սիրտը կուչ եկավ: Նորից գիշեր, նորից ճանապարհ, նորից ոտքերի տակ ընկնող կարծր քարեր, իսկ ոտնամանները հալից ընկել են: Նորից խուրջինը ուսերը կքերի, շատ ծանր է: Աչքերը լավ չեն տեսնում: Այս ամենը նորից ու նորից. տե՜ր Աստված:

Քայլեցին ողջ գիշեր և առավոտ: Կեսօրին մոտ նրանք մեծ ճանապարհ դուրս եկան, որ մտնեն անտառապատ խոր կիրճը: Ջհասցրին: Դանդաղ դեպի նրանց էր գալիս մոնղոլական հեծյալ ջոկատը: Հեծյալները հետաքրքրությամբ դիտում էին ճամփեզրին խռնված ցնցոտիավոր մարդկանց:

Ջոկատի վերջապահը մի երիտասարդ զինվոր էր: Այսօր նրա տրամադրությունը շատ բարձր էր: Ձին տակին խաղում էր: Ձեռքերը դադար չէին մնում. նա վեր-վեր էր գցում վահանը, մերթընդմերթ էլ ձեռքը դեպի կեռ թուրն էր մեկնում: Հանգիստ, կատակի տալով՝ նա թըցրեց հաստլիկ վանականի գլուխը և շարունակեց ճամփան:

Գրիչ Հակոբը ընկավ խուրջինի վրա, և նրա արյունը ողողեց մատյանները:

ՊԼԱՆ

1. Գրիչ Հակոբը:
2. «Կյանքը նման է ճատրակի խաղի»:
3. Մոնղոլների հարձակումը Տաթևի վանքի վրա:
4. Ուսուցչապետի պատվերը:
5. Փախուստ վանքից:
6. Դեգերում:
7. Գրիչ Հակոբի մահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ա) ընդօրինակել, «կյանքը նման է ճատրակի խաղի», վանական-խաղաքար, ելարան, կովի չոնդ, գրչագիր, ջանադիր ընդօրինակել, ռաբունապետ, մագաղաթ, ավանդատուն, գետնախորշ, լեռների եզրագծեր, ցնցոտիավոր մարդիկ, ճամփեզրին խռնված, ձին տակին խաղալ, վեր-վեր գցել, մերթընդմերթ, կեռ թուր, հաստլիկ վանական, խուրջին:

բ) Հատուկ անունները.

Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա, Հովհաննես Որոտնեցի, Տաթև:

*2. Բացատրել և բառատետրերում գրել տալ **գրիչ** և **ռաբունապետ** բառերը:*

3. Դասարանում ցուցադրել ձեռագիր մատյանների վերատպություններ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Կիմ Բակշին ժամանակակից ռուս գրող է, հրապարակախոս: Ապրում է Մոսկվայում: Շատ հաճախ է լինում Հայաստանում: Գրքեր է գրել Երևանի Մատենադարանի և ձեռագիր մատյանների մասին: Վերևում տըրված պատմությունը վերցված է Բակշիի «Ճակատագիր և քար» էսսեից:*

ԵՐԵՔ ՀԱՍՏԼԻԿ ԿԱՆԱՅՔ

Ըստ Սոմերսեթ Մոեմի

Բոլոր երեքն էլ քառասունն անց, կյանք տեսած և ապահովված կանայք էին: Նրանց միացրել էր գիրությունը, իսկ բրիջը ցեմենտել էր այդ ընկերությունը: Առաջին անգամ հանդիպել էին առողջարանում, ապրում էին նույն հյուրանոցում, բուժվում նույն բժշկի մոտ, որը միևնույն անողոքությամբ էր վերաբերվում նրանց: Կանայք այս առողջարանում փորձում էին ազատվել գիրությունից:

Երբեք երեք կին այդքան հավատարիմ ընկեր չեն եղել: Նրանք լրիվ անկախ կլինեին ուրիշներից, եթե թղթախաղում չորրորդի կարիքը չունենային: Մոլի, ջերմեռանդ խաղացողներ լինելով՝ մտերիմներն ավարտում էին օրվա բուժումը և նստում էին բրիջ խաղալու:

Կանայք հոյակապ ժամանակ էին անցկացնում: Շաբաթը երկու անգամ խաշած ձվից և հում պոմիդորներից բացի ոչինչ չէին ուտում և ամեն առավոտ թեթև սրտով հեծնում էին կշեռքը: Էրոուն նիհարել էր մինչև յոթանասուն կիլոգրամ և իրեն աղջնակի նման էր զգում: Բեատրիսն ու Ֆրենսիսը ութսուներեք-ութսունչորս կիլոգրամից ավելի չէին կշռում:

Բայց մի դժվարություն էր մնացել՝ չորրորդ բրիջ խաղացողը:

Մի օր՝ առավոտյան, Ֆրենսիսն առաջարկեց հրավիրել իր զարմիկի այրուն՝ Լինա Ֆինչին: Լինան խոր, բայց ոչ ցուցադրական սուգ էր տանում վերջերս մահացած իր ամուսնու համար: Ֆրենսիսը դիմավորեց Լինային կայարանում, ուշադիր զննեց նրան և ասաց.

- Շատ նիհար ես, ջանի՛կս:

Բեատրիսն ու Էրոուն փափուկ սիրտ ունեին և կարեկցանք զգացին դեպի որբևայրին: Իսկ սա գունատ էր, վտիտ և ոչնչով աչքի չընկնող:

Բայց շուտով երեք հաստլիկ կանայք սկսեցին ատել իրենց նոր ընկերուհուն: Ամեն ինչ սկսվեց նախաճաշից:

Կանանց ափսեների կողքին փոքրիկ չգիրացնող չորահաց էր դրված: Լինան ուրախ ժպտաց և ասաց.

- Կարելի՞ է հաց խնդրել:

Սա ռումբի հարված էր ուղիղ երեք հաստլիկների սրտերին. տասը տարի էր՝ նրանցից ոչ մեկը հաց չէր կերել: Էլ ավելի քնքուշ ձայնով Լինան խնդրեց կարագ, սեր: Ծառայապետը մի երկար խրթխրթան բլիթ բերեց:

Լինան կարագը հաստ շերտով քսեց հացին և կերավ:

Հաստլիկները դժգոհ դեմքով դարձան դեպի իրենց խաշած սպանախն ու գառան անյուղ կողիկները:

Բայց բրիջի սեղանի շուրջ հաստլիկների դեմքը բացվեց. Լինան արտակարգ էր խաղում: Նա խաղալու բնատուր տաղանդ և մեծ փորձ ուներ: Խաղում էր՝ հանդես բերելով երևակայություն և համարձակություն:

Այսպես շարունակվեց երկու շաբաթ: Լինան նրանց աչքի առաջ կուլ էր տալիս ֆրանսիական կարմրակող հացեր, տապակած կարտոֆիլ, լյարդի պաշտետ, կարագի ու պանրի մեջ ծփծփացող մակարոն և այլն, և այլն:

Լինայի պատճառով կամայք գրեթե խռով էին: Ինչ-որ սառնություն և լարվածություն էր սկսվել: Այրին նրանց աչքի առաջ ուտում էր այն, ինչ բժիշկը խոստ արգելել էր հաստլիկներին:

Վերջապես Ֆրենսիսը ճանապարհեց Լինային:

Վերադարձավ, հագավ լողազգեստը, որ գնա բուժումների: Նա անցնում էր ընդարձակ սրահով, որի ծայրին սրճարան կար: Մեկ էլ քարացավ՝ զարմանքի ու սարսափի արտահայտությունը դեմքին:

Բեաթրիսը նստել էր սեղաններից մեկի առջև:

- Ի՞նչ ես անում, - գոռաց Ֆրենսիսը:

- Ուտում եմ, - չնչակուռ պատասխանեց Բեաթրիսը:

Նրա առջև ֆրանսիական բլիթներ էին, մի ափսե կարագ, ամանով ելակի ջեմ, սուրճ, մի սափոր սեր: Բեաթրիսը կարագը հնարավորին չափ հաստ շերտով քսում էր ախորժելի, տաք հացին, ծածկում ջեմով և այդ ամենի վրայից թանձր սեր լցնում:

Նույն պահին հայտնվեց նաև Էրոուն: Երկու կանայք անխոս ընկան աթոռներին և գոռացին.

- Մատուցո՛ղ:

Մոտեցած մատուցողին ձեռքի գգայացունց շարժումով պատվիրեցին բերել նույն բաները, ինչ որ ուտում էր իրենց ընկերուհին:

ՊԼԱՆ

1. Ընկերուհիները առողջարանում:
2. Հաստլիկների բուժումն ու սննդակարգը:
3. Չորրորդ բրիջ խաղացողի որոնում:
4. Որբևայրի Լինա Ֆինչը:
5. Ռումբի հարված:
6. Երկշաբաթյա տառապանք:
7. Լինայի մեկնումը:
8. Բեաթրիսը վրեժ է լուծում Լինայից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անողոքություն, մոլի, ջերմեռանդ խաղացող, հոյակապ ժամանակ, հեծնել կշեռքը, գարմիկլի այրի, կամ կարտոֆիլ, լյարդի պաշտետ, կարագի ու պանրի մեջ ծփծփացող մակարոն, զարմանքի ու սարչգիրացնող չորահաց, խաշած սպանախ, անյուղ կոլիկ, բնատուր տաղանդ, կոպտրակող հաց, տապակած կարտոֆիլ, լյարդի պաշտետ, կարագի ու պանրի մեջ ծփծփացող մակարոն, զարմանքի ու սարսափի արտահայտություն, ախորժելի հաց, թանձր սեր, գգայացունց շարժում:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Սոմերսեթ Մոեմը (1874-1965) անգլիացի նշանավոր գրող է: Ստացել է բժշկական կրթություն: «Ստրկություն մարդկային», «Լուսին և վեցպենսանոց», «Բլիթ և գարեջուր» նշանավոր վեպերի հեղինակն է:*

ՆԱՎԱՍՏԻՆ

Ըստ Գիյոմ Ապոլիների

(ստեղծագործական փոխադրություն)

Հոլանդական մի նավ վերադառնում էր ծովա կղզուց: Սնունդ և ջուր վերցնելու համար նավը խարիսխ ձգեց անգլիական մի փոքրիկ նավահանգստում: Հենրի անունով մի նավաստի ափ իջավ՝ այս քաղաքում իր թութակը, կապիկն ու հնդկական ընտիր գործվածքի մի հակ վաճառելու հույսով:

Հազիվ էր մի քանի քայլ անցել, երբ նրա դեմ ելավ վայելչատես մի պարոն: Այդ պարոնը շատ քաղաքավարի դիմեց նավաստուն:

- Դուք վաճառու՞մ եք այդ թութակը: Վաղուց է՝ այսպիսի թութակ էի փնտրում:

Նավաստին ասաց թութակի գինը, պարոնը համաձայնեց և առաջարկեց հետևել իրեն, որովհետև ուզում էր գործվածքը ևս տեսնել և իր ճաշակին համեմատ գնում անել:

Հենրին շատ երջանիկ էր երկնային այդ պարգևից: Նա շահավետ առևտուր կաներ: Դրամը հիմա իրեն շատ էր պետք. հայրենիքում նրան էին սպասում մայրը և նշանածը:

Շատ երկար քայլեցին, քաղաքից դուրս եկան: Վայելչակազմ պարոնը լուռ էր ու մռայլ: Նավաստու սիրտը սկսեց կրծել տագնապի որդը:

Բայց ահա պարոնը կանգ առավ երկաթյա ցանկապատի առջև, գրպանից հանեց բանալիների տրցակը, բացեց դարպասը, և հենց որ Հենրին ներս մտավ, արագ փակեց:

Լռակյաց, անծանոթ, անկյանք տուն. այս ամենը շատ էր չարագուշակ: Բայց նավաստին ակամայից հետևում էր մարդուն: Երբ մտան գավիթ, անծանոթը նավաստուն մի լապտեր տվեց և առաջարկեց սենյակ մտնել: Հենրին մտավ սենյակ: Դուռը կողպվեց նրա վրա: Նավաստին սկսեց բախել և հրել դուռը:

Հանկարծ երդիկից լսվեց անծանոթի չոր ու հրամայական ձայնը:

- Լսեցե՛ք և հնազանդվեցե՛ք:

Նավաստին նայեց վեր և առաստաղին բացված անցքից տեսավ իր վրա ուղղված ատրճանակի փողը:

- Սենյակի խորքում վարագույր կա: Հե՛տ քաշեք, - հրամայեց վայելչակազմ անծանոթը:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ *Հանձնարարել աշակերտներին շարունակել և ավարտել պատմությունը:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Գիյոմ Ապոլիները (1880-1918) բանաստեղծ է, ազգությամբ՝ լեհ: Ապրել և ստեղծագործել է Փարիզում, գրել է ֆրանսերեն: Գրել է բանաստեղծություններ, նորավեպեր: Բանաստեղծական արվեստի նորարար է:*

ՄԻ ԲՈՒՌ ԿԱՆԱՉ

Ըստ Ֆրեդրիկ Բրաունի

(ստեղծագործական փոխադրություն)

Մանուշակագույն երկնքում հուրհրատում էր հսկայական բոսորագույն արևը: Հորիզոնում՝ կարմրագորշ թփերով ծածկված հարթավայրից այն կողմ, երևում էին կարմիր ջունգլիները:

Նա բացեց գոտուց կախված պատյանը և ամուր սեղմեց արեգակնային ատրճանակը: Հարյուրերորդ անգամ նա շնորհակալ եղավ իր երջանիկ աստղին այն բանի համար, որ վթարի ժամանակ հաջողվել էր փրկել այդ զենքը: Բավական էր՝ մի երկու ժամ ատրճանակը պահեր արևի տակ, և նա սկսում էր կլանել էներգիա, որը հետո անջատվում էր ձգանը սեղմելիս: Առանց այդ ատրճանակի Մաքհերին չէր կարողանա դիմանալ երկար հինգ տարիները Կրյուգեր մոլորակի վրա:

Դա մի հրաշալի մոլորակ էր: Այստեղ ո՛չ գիշեր կար, ո՛չ ցերեկ: Չկային նաև տարվա եղանակներ: Ջերմաստիճանը միշտ նույնն էր. ո՛չ քամի կար, ո՛չ ամպրոպ:

Միայն մի բան էր պակասում, կանաչ գույնը: Ուտելիք ինչքան ասես կար: Այդ մոլորակում Մաքհերին միակ բանական էակն էր: Նա արդեն գրեթե հաշտվել էր իր վիճակի հետ:

Բայց, Աստվա՛ծ իմ, ինչպես էր նա ուզում նորից տեսնել կանաչ աշխարհը՝ Երկիրը: Միակ մոլորակը տիեզերքում, որտեղ գերակշռում է կանաչ գույնը, որտեղ քլորոֆիլը բուսական աշխարհի հիմքն է:

Մաքհերին ցնցեց գլուխը և նորից նայեց շուրջը, նորից մանուշակագույն երկինք, բոսորագույն արև, կարմրագորշ հարթավայր, կարմրագորշ թփեր:

Բայց այս ի՞նչ ձայն է: Նա դեպի երկինք բարձրացրեց աչքերը և տեսավ...

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ *Առաջարկել աշակերտներին շարունակել և ավարտել պատմությունը:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ֆրեդրիկ Բրաունը ամերիկացի ժամանակակից ֆանտաստ գրող է:

ՊՐՈՖԵՍՈՐԸ

Ըստ Ռաբինդրանաթ Թագորի

(դատողական-ստեղծագործական փոխադրություն)

Ճեմարանում հատուկ փառք էի վայելում: Ընկերներս գտնում էին, որ գիտակ եմ ու շատ զարգացած: Ես միշտ ունեի իմ ուրույն տեսակետները ցանկացած հարցի շուրջ, բանաստեղծություններ, պոեմներ ու դրամաներ էի գրում: Հանդես էի գալիս գրականագիտական զեկուցումներով: Փառքս օր օրի ուռճանում էր, ես էլ սավառնում էի գիտության հովանու տակ՝ իմաստասիրության թևերին բազմած:

Բայց մի օր հայտնվեց հակառակորդ՝ Բամաչորո անունով մեկը: Նա սկսեց քննադատել իմ բոլոր ելույթները: Նա լուրջ տոնով և շատ համոզիչ բացատրում էր, թե ես այս հատվածը յուրացրել էի այսինչ գրողից, այն հատվածը՝ այս մեկից: Նա ամեն օր ապացուցում էր իմ գրագողությունը:

Փառքս աստիճանաբար խամրեց, խախտվեց ընկերներիս հավատը իմ հանդեպ:

Այդ ժամանակ որոշեցի բոլորից մեկուսանալ և գրել մի գլուխգործոց, որը թաթախված կլիներ մարդկության, բնության, տիեզերքի հանդեպ անեզր ու անհուն սիրով:

Ես ապրում էի Գանգես գետի ափին գտնվող իմ տանը, միայնության մեջ ու խորհրդածում էի: Առավոտյան շատ ուշ էի վեր կենում, օրվա երկրորդ կեսին քնում էի, զարթնում ժամը հինգին, պարելով դուրս էի գալիս, շրջում փողոցներում: Հետո տուն էի գալիս, ընթրում և նորից մտնում անկողին:

Մի օր էլ, երբ պատշգամբից նայում էի դիմացի պարտեզին, տեսա շատ գեղեցիկ մի աղջիկ: Տեղնուտեղը սիրահարվեցի: Ողջ բնությունը սկսեց շողալ, փայլել: Կյանքը նոր ու չքնաղ իմաստ ձեռք բերեց:

Մի օր էլ համարձակվեցի հյուր գնալ հարևաններիս: Պարզվեց՝ իմ սիրած աղջիկն ապրում էր իր հոր հետ: Շատ համակրելի ու հյուրասեր մարդիկ էին: Նստում էի, ժամերով զրուցում, փորձում էի աղջկա հորը բացատրել իմաստասիրական իմ հայացքները: Սակայն միշտ զրույցի ամենաթունդ պահին Կիրոնը /այդպես էր ամուրջներիս թագուհու անունը/ տեղից վեր էր կենում և ինձ որևէ գործի դնում: Մե՛կ պետք էր հասուն կիտրոն գտնել, մե՛կ մանգոյի ծառից մի պտուղ պոկել, մե՛կ պատին մի գամ խփել:

Իսկ ես երազում էի իմ Կիրոնին ծանոթացնել անգլիական բանաստեղծությանը, նրա համար կարդալ ու մեկնաբանել Շելլիին, Բայրոնին:

Այսպես երազներով ապրում էի, սպասում էի հարմար առիթի, որ սիրտս բացեմ Կիրոնի առջև, ստանամ հոր համաձայնությունը և հետը ամուսնանամ:

Ասեմ նաև, որ ես մասնակցել էի արվեստների բակալավրի համար հայտարարված քննություններին և միայնությանս օրերին սպասում էի պատասխանի:

Վերջապես փոստով ստացա պատասխանը: Իմ անունը ոչ մի տեղ չկար: Ես տապալվել էի: Իսկ առաջին կարգի քննություն տվողների մեջ կարդացի իմ քնքուշ Կիրոնի անունը:

Քարացա: Մի կերպ գնացի հարևաններիս մոտ: Իմ ախոյանի՝ Բամաչորոյի հետ սենյակ մտավ ուրախությունից ու հրճվանքից փայլող Կիրոնը:

Ինձ համար ամեն ինչ պարզ դարձավ: Ես չգրեցի պոեմը, որ պատրաստվում էի հորինել Գանգեսի ափին: Բայց ես այն ապրեցի:

ՊԼԱՆ

1. Փառքի թևերին սավառնողը:
2. Հայտնվում է հակառակորդ:
3. Առանձնություն:
4. Սիրահարություն:
5. Իմաստասիրական զրույցներ:
6. Տապալում:
7. Չգրված, բայց ապրված պոեմ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ա/ Համձնարարել աշակերտներին շարադրել իրենց դատողությունները ըստ բնագրի պահանջի.

բ/ գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

փառք վայելել, ուրույն տեսակետ, գրականագիտական, իմաստասիրական զեկուցումներ, օր օրի ուռճանալ, իմաստասիրության թևերին բազմած, ապացուցել գրագողությունը, փառքը խամրել, խախտվել հավատը, անեզր ու անհուն սեր, տեղնուտեղը սիրահարվել, համակրելի ու հյուրասեր մարդիկ, ամենաթունդ պահ, ամուրջների թագուհի, պատին գամ խփել, անգլիական բանաստեղծություն, արվեստների բակալավր, ուրախությունից ու հրճվանքից փայլող:

Բառի բացատրություն

բակալավր – կրտսեր գիտական կոչում արտասահմանում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ռաբինդրանաթ Թագորը (1861-1941) հնդիկ նշանավոր գրող է: «Զոհաբերության երգեր» արձակ բանաստեղծությունների ժողովածուի համար արժանացել է Նոբելյան մրցանակի:*

(անվերնագիր)

Ըստ Միխայիլ Պրիշվինի

Վաղ աշուն էր: Կեչիներն ու կաղամախիները ջահել եղևնիների վրա ոսկեգույն և կարմիր օղակներ էին թափում:

Շոգ ու գաղջ օր էր: Ես գիտեի, որ հիմա անտառում անթիվ-անհամար սունկ կլինի: Դրանք իրար հետևից դուրս էին գալիս խոնավ ու տաք հողից: Պատահում է՝ ինչքան սունկ կա, հավաքում ես, իսկ հողից նույն տեղում նորից ու նորից դուրս են գալիս սնկերը:

Զամբյուղս առած՝ անտառ մտա: Բայց այս անգամ բախտս չէր բերում: Ինչ տեսակ սունկ ասես կար, բայց սպիտակ սունկ ընդամենը երկու հատ էի գտել:

Օրը շատ տոթ էր: Կռանալուց ու շտկվելուց ներսս այրվում էր: Տանջվում էի ծարավից: Մոտերքում առվակ չկար, անձրևաբեր ամպի հետք անգամ չէր երևում: Մինչև առուն ոտքս չէր գնա, մինչև ամպ ձեռքս չէր հասնի:

Հանկարծ լսեցի, որ խիտ եղևնուտում մի գորշ թռչուն է ծկլթում:

- Խը-մել, խը-մել ...

Այդպես ծկլթում են անձրևից առաջ: Գորշ թռչնակը՝ անձրևասերը, խմել էր ուզում: Այս պահին մի հասարակ թռչնակ ու ես նույն բանն ենք ցանկանում:

Խիտ եղևնուտում զգույշ ու անձայն առաջ գնացի: Բարձրացրի մի ճյուղ: Անտառային այդ լուսամուտից իմ առջև մի բացատ երևաց. մեջտեղում երկու կեչիներ էին կանգնած: Կեչիների տակ մի կոճղ կար, իսկ կոճղի կողքին՝ հապալասի կանաչ մի թուփ, թփի տակ՝ կարմիր մի սունկ՝ դառնամատիտեղ: Կյանքումս այդպիսի մեծ սունկ չէի տեսել: Սունկը այնքան էր հասունացել, որ եզրերը վեր էին ձգվել: Այդ պատճառով էլ սունկը նմանվել էր մի մեծ, խոր ափսեի: Եվ այդ ափսեն պռնկեպռունկ լցված էր ջրով:

Մեկ էլ կեչու վրայից ցած թռավ մի գորշ թռչնակ, նստեց սնկի եզրին և կտուցով թը՜խկ ջրին: Հետո գլուխը վեր բարձրացրեց, որ կաթիլը կոկորդը գնա ...

Ջրի մեջ մի տերև էր ընկած՝ փոքրիկ, չոր, դեղին: Թռչնակը կտցում էր, ջուրը թրթռում էր, տերևը լող էր տալիս: Ես լուսամուտից տեսնում եմ այդ բոլորը, ուրախանում եմ և չեմ շտապում, թռչնակին շատ ջուր պետք չէ: Թող իր համար խմի, ինձ էլ կբավականացնի:

Խմեց, թռավ կեչու վրա: Մյուսը ցած իջավ, նստեց սնկի եզրին, ջուր խմեց:

Եղևնուտից այնպես զգույշ դուրս եկա, որ թռչնակները ինձնից չվախեցան, միայն մի կեչուց մյուսը թռան: Նրանք տագնապով ծվծվացին, կարծես իրար հարցնում էին.

- Կխմի՞:

- Չի խմի, - պատասխանում էր մյուս թռչնակը:

- Կխմեմ, կխմեմ, բարեկամնե՛րս, - ասացի ես:

Տնքտնքալով ծունկ չոքեցի, պառկեցի փորիս: Կարիքից ստիպված՝ երկրպագեցի սնկին: Մի շնչով դատարկեցի անտառային բաժակը:

Ինձնից հետո անձրև կգա, դարձյալ սունկ-գավաթը կլցվի ջրով, թռչնակներն ու

ինձ նման պապակած անցորդը կլմեն ու կերկրպագեն ծեր սնկին: Հետո կհասնեն սնկի սերմերը, քամին կթռցնի, ցրիվ կտա անտառում, որ նոր սերունդ աճի:

Սա բնության հրաշքն է: Իրական հրաշք:

Իսկ մենք՝ մահկանացուներս, հաճախ մի ծեր սնկի չափ էլ օգուտ չենք տալիս: Աչքեր ունենք, չենք տեսնում, ականջներ ունենք, չենք լսում ...

ՊԼԱՆ

1. Աշնան մի տոթ օր:
2. Մարդը գնում է սունկ հավաքելու:
3. Ծարավ մարդը:
4. Անճրևասեր թռչնակները:
5. Ջրով լցված մեծ սունկը:
6. Թռչնակները ջուր են խմում:
7. Երկրպագություն ծեր սնկին:
8. Բնության հրաշքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ա) Աշակերտներին հանձնարարել գտնել վերնագիր այս պատմության համար:

բ/ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

վաղ աշուն, կեչի, կաղամախի, ջահել եղևնի, ոսկեգույն և կարմիր օղակներ, գաղջ օր, անթիվ-անհամար սունկ, տանջվել ծարավից, անճրևաբեր ամպ, խիտ եղևնուտ, գորշ թռչուն, ծկլթալ, գդույշ ու անձայն առաջ գնալ, անտառային լուսամուտ, բացատ, հապալասի կանաչ թուփ, դառնամատիտեղ, եղբերը վեր ձգվել, մեծ, խոր ափսե, պոնկեպռունկ լցվել, ջուրը թրթռալ, տերևը լող տալ, տնքտնքալով ծունկ չոքել, երկրպագել սնկին, անտառային բաժակ, սունկ-գավաթ, պապակած անցորդ, թռցնել, ցրիվ տալ, իրական հրաշք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Միխայիլ Պրիշվինը (1873-1954) ռուս գրող է, բնության նուրբ երգիչ:*

ՄԵՆԱՄԱՐՏ

Ըստ Ջեկ Լոնդոնի

[ստեղծագործական մուտքով փոխադրություն]

Մի տրորված արահետ տանում էր դեպի սառցանցք: Ջորս կողմում փռված էր խոր ու փափուկ ձյունը: Մարդկանց լռակյաց շարանը շարժվում էր կածանով: Նրանց հետ քայլող քահանան՝ իր սև սքեմով, թաղման տեսք էր տալիս թափորին:

Մենամարտի շտապող երկուսը լուռ էին ու մռայլ: Նրանք հոգու խորքում զարմանում էին իրենց ընկերների վրա: Երկուսն էլ ենթադրում էին, թե ընկերները սպակվիճեն, կբողոքեն, և այդ լուռ համակերպումը խիստ վիրավորում էր նրանց: Սպասում էին, որ ընկերները կարեկցանք ու ցավ կդրսևորեին, բայց այսպիսի անբարբառ համաձայնության չէին սպասում: Բեթլզին հատկապես զարմացնում էր այն, որ ընկերները կարծես տոնակատարության էին գալիս:

- Ի՞նչ հեռավորությունից ենք կրակելու, Բե՛թլիգ, - հարցրեց Լոնը, - Հարյու՞ր, թե՞ հիսուն քայլից:

- Հիսուն քայլից, - չոր նետեց Բեթլիգը:

Հենց այդ պահին նա տեսավ ընկերներից մեկի՝ Քիդի թևին անփութորեն փաթաթված պարանը:

- Իսկ ի՞նչ ես անելու այդ պարանով, Քի՛դ, - հարցրեց Բեթլիգը:

Քիդը նրան պատասխանի չարժանացրեց, միայն սկսեց շտապեցնել, որ արագացնեն, կրակեն իրար վրա: Մնացածները ևս, ամեն մեկն իր ձևով, սկսեցին անհամբերություն ցուցաբերել:

- Բայց ինչի՞ համար է պարանը, Քի՛դ, - անհանգստացած խոսեց Լոնը:

- Այս պարանը երկրորդի համար է նախատեսված, - դժկամորեն, բայց հաստատակամ ձայնով ասաց Քիդը:

- Ու՞մ նկատի ունես, - բամբ ձայնով ոչ այն է՝ հարցրեց, ոչ այն է՝ աղերսեց Բեթլիգը:

- Լսի՛ր, Լո՛ն, դու էլ լսի՛ր, Բե՛թլիգ: Մենք քննարկեցինք ձեր այդ փոքրիկ վիճաբանությունը և մի որոշում կայացրինք: Մենք իրավունք չունեինք արգելելու ձեր մենամարտը: Սակայն մենք այնպես կանենք, որ ձեր մենամարտը առաջինը և վերջինը լինի մեր փոքրիկ քաղաքում: Ձեր երկուսից նա, ով կենդանի կմնա, կկախվի մոտակա ծառից: Իսկ հիմա գործի՛ անցեք:

Լուռ կանգնել էին մարդիկ: Երկինքն ավելի էր ցածրացել՝ գետնին շաղ տալով սառնամանիքի բյուրեղյա փոշին:

Լոնը և Բեթլիգը կանգնել և սևեռուն նայում էին Քիդի դեմքին: Սակայն այդ դեմքը անթափանց էր սֆինքսի պես:

Նրանք լավ էին ճանաչում իրենց ընկեր Մելմութ Քիդին. նրա խոսքը խոսք էր: Կենդանի մնացողը կախվելու էր հենց Քիդի ձեռքով:

Հանկարծ մենամարտողները ուղիղ Քիդի ոտքերի տակ նետեցին իրենց ատրճանակները և քայլեցին դեպի քաղաք տանող արահետը:

ՊԼԱՆ

1

2

3.

4. *Մենամարտի չտապող թափորը:*

5. *Լոնի և Բեթլիգի զարմանքը:*

6. *Քիդը և նրա պարանը:*

7. *Քիդի որոշումը:*

8. *Հրաժարում մենամարտից:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Հանձնարարել աշակերտներին գտնել համապատասխան սկիզբ այս պատմության համար և լրացնել պլանի առաջին երեք կետերը:*

2. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ա/ տրորված արահետ, խոր ու փափուկ ձյուն, սև աչքեր, թաղման թափոր, լուռ համակերպում, կարեկցանք ու ցավ դրսևորել, անբարբառ համաձայնություն ցուցաբերել, փոքրիկ վիճաբանություն, նետել ատրճանակները, սառնամանիքի բյուրեղյա փոշի, սևեռուն նայել, սֆինքսի պես անթափանց,

բ/ Լոն, Բեթլիգ, Մելմութ Քիդ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ջեկ Լոնդոնը (1876-1916) ամերիկացի նշանավոր գրող է: Եղել է Ալյասկայում, ուր է ապրել, պատմել և ծնվել են նրա պատմվածքները:

ԿԱՊԻԿԸ

Ըստ Գրիգոր Զոհրապի

(անավարտ փոխադրություն)

Ծանոթներիցս մեկի տանը հաճախ էի լինում: Սա մի հյուրասեր մարդ էր, ուներ շքեղ այգի և կենդանիներ էր պահում: Այգու՝ ամենից աչքի ընկնող անկյունում մի վանդակ կար, որի մեջ բարակ շղթայով կապված մի կապիկ էր ապրում: Աշխույժ ու չարաճճի էր այս կապիկը:

Ամեն անգամ կանգ էի առնում, նայում կապիկին, որը զարմացնում էր իր դյուրաթեք մարմնի խաղերով, դեմքի ծամածռություններով: Ես մտածում էի, որ սա մարդ է, միայն թե զգացմունքից զուրկ:

Սակայն շատ շուտով հասկացա սխալս:

Այդ տանը հույն մի սպասուհի կար: Շատ գեղեցիկ և հմայիչ աղջիկ էր: Մենք՝ բոլոր տղամարդիկս, հիանում էինք հույն աղջկա դասական դիմագծերով և անթերի կառուցվածքով: Բայց մեզնից ավելի շատ այդ սպասուհուն համակրում էր կապիկը: Նա սնունդ ընդունում էր միայն այս աղախնի ձեռքից, խոնարհ պառկում էր և սպասում, որ աղջիկը իր փափուկ ձեռքով շոյի և փայփայի իրեն: Աստիճանաբար կապիկի համակրանքը վերածվեց բուռն և կատաղի սիրո: Վա՜յ այն այր մարդուն, որ կհամարձակվեր խոսել, առավել ևս՝ դիպչել սպասուհուն: Կապիկը կոկորդային ցասումնալից հնչյուններ էր արձակում, մերկացնում էր ատամներն ու կատաղի հայացքով շանթում այդ տղամարդուն:

Եվ բավական է՝ սպասուհին շրջվեր դեպի կապիկը, գար նրան հանդարտեցնելու, երբ ցնորական երջանկությունից խենթացած, հրճվանքի սարսուռը մռութին՝ դառնում էր հեզ ու խոնարհ: Բարձրացնում էր թաթը և դիպչում աղջկա ձեռքին այնպե՜ս քնքշագին աղերսով, որ դեռ չեմ տեսել ոչ մի տղամարդու աչքերում:

Տառապում էր կապիկը, տառապում էր սիրուց, տառապում էր մարդու պես, մարդուց ավելի:

Սպասուհին աշխատում էր կապիկի աչքին չերևալ, թաքնվում էր նրանից: Կապիկը քաշվում էր վանդակի մի անկյունը, տխուր-տրտում, աչքերի մեջ լացը պահած, նստում էր: Չէր ուտում ոչինչ, որովհետև մյուս ծառաներն էին նրան կերակուր տանում:

Մի օր էլ ...

ՊԼԱՆ

1. Հյուրասեր ծանոթս:
2. Վանդակում ապրող կապիկը:
3. Իմ մտորումները:
4. Հույն սպասուհին:
5. Կապիկի համակրանքը:
6. Բուռն սեր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՈՒՍՈՒՑՉԻՆ *1. Վերջաբանը թողնել աշակերտների ստեղծագործական երևակայությանը:*

2. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

հյուրասեր մարդ, շքեղ այգի, աշխույժ ու չարաճճի, դյուրաթեք մարմին, դեմքի ծամածռություն, հույն սպասուհի, գեղեցիկ և հմայիչ աղջիկ, դասական դիմագծեր, անթերի կառուցվածք, սպասուհուն համակրել, խոնարհ պառկել, փափուկ ձեռքով շոյել ու փայփայել, բուռն և կատաղի սեր, կոկորդային ցասումնալից հնչյուններ, կատաղի հայացքով շանթել, ցնորական երջանկությունից խենթանալ, հրճվանքի սարսուռը մռութին, քնքշագին աղերս, տառապել սիրուց, աչքերի մեջ լացը պահած:

VIII

ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԵՎ ԲԵԼ

Ըստ Մովսես Խորենացու

Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Նա քաջ ու երևելի այն դյուցազուններից էր, որոնք ըմբոստացան բռնացողների դեմ:

Դժնադեմ մի բռնակալ էր Բելը, որին հաջողվեց տիրույթներ գրավել և ստրկացնել շատերին: Հայկը չցանկացավ ենթարկվել Բելին, ընդդիմացավ և իր զարմով` մոտ երեք հարյուր հոգի, ծառաներով և նրանց ընտանիքներով գնաց բնակվեց մի լեռան ստորոտում` կանաչազարդ հարթության վրա: Լեռնահովիտն անվանեց Հայք, այսինքն թե այստեղ բնակվողները հայեր են Թորգոմյան տան սերնդի: Շինեց նաև մի գյուղ` այն իր անունով կոչելով Հայկաշեն:

Ապրում էր Հայկը խաղաղ, աշխարհաշեն գործով` առանց երբևէ ոտնձգություններ կատարելու և ստրկացնելու այլոց: Իսկ Բելը հանգիստ ու դադար չուներ: Զորուգիշեր հնարքներ էր որոնում, թե ինչպես ծնկի բերեր Հայկին ու նրա որդիներին: Եվ ահա որդու գլխավորությամբ իր հավատարիմ մարդկանց ուղարկում է Հայկի մոտ` հետևյալ պատգամով. «Տաքացրու` և մեղմացրու` քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով` խաղաղ ապրի՛ր որտեղ որ կհաճես»: Հայկը Բելի պատգամաբերներին հետ է ուղարկում` խստությամբ մերժելով:

Այդ ժամանակ Տիտանյան Բելը հսկայական զորք է ժողովում և հանդուգն ու անճոռնի ամբոխով, խառնիճաղանջ հրոսակախմբով հեղեղի պես խուժում Հայկի բնակության սահմանները` վստահ իր ուժին ու հաղթանակին:

Գանգուր մազերով, վառվռուն աչքերով ուշիմ և խոհեմ Հայկը շուտափույթ հավաքում է որդիներին ու թոռներին, քաջ աղեղնավորներին և շարժվում դեպի Վանա ծովակը: Հավաքելով զորքերին` նա ասում է.

– Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պատահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի խմբի մեջ: Եթե մեռնենք, կամ մեր զորությունը ցույց տանք և հաղթենք:

Ամբողջ տարածքներ կտրելով՝ հասնում են բարձրաբերձ լեռների միջև ընկած մի դաշտաձև տեղ և ամուր դիրքեր գրավում բարձրավանդակի աջ կողմում:

Ձախ կողմում Բելի բազմամբոխ և խուռներամ հրոսակախումբն էր, կենտրոնում՝ Բելը՝ ամբարտավան կեցվածքով: Նա կրում էր երկաթյա գլխանոց, թիկունքին ու կրծքին՝ պղնձե տախտակներ, սրունքների ու թևերի վրա՝ պահպանակներ, մեջքին՝ գոտի: Աջ ձեռքով բռնել էր նիզակ, ձախով՝ վահան: Կողքերին կանգնած էին սպառազինված զինվորներ, իսկ թիկնապահները պաշտպանության համար մի քանի շարքով շրջապատել էին նրան:

Այնինչ Հայկը կանգնած էր զորքի առջևում՝ անվախ ու հպարտ:

Երբ երկու կողմի հսկաները բախվեցին, երկրի վրա ահռելի դղրդյուն բարձրացավ: Զգալով Հայկյան բազկի ուժը, անվրեպ հարվածները՝ ամբարիշտ Բելը զարհուրեց և սկսեց նահանջել: Աղեղնավոր Հայկը, տեսնելով այդ, առաջ նետվեց, թափով քաշեց լայնալիճ աղեղը, և երեքթևյան նետը, ճեղքելով Բելի լանջապանակը, չեչտակի անցավ թիկունքով ու խրվեց հողի մեջ: Բելը օրորվեց տեղում և ընկնելով ցած՝ շունչը փչեց: Առաջնորդին կորցրած զորքը դիմեց վայրիվերո փախուստի:

Հայկն իր սերունդներով շարունակեց ապրել մեծ լեռան փեշերին և շենացնել երկիրը:

Այդ ժամանակներից սկսած՝ մեր աշխարհը կոչվեց Հայք, ժողովուրդը՝ հայեր:

ՊԼԱՆ

1. Հայկը:
2. Բռնակալ Բելը:
3. Ահեղ բախում:
4. Բելի պարտությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

վայելչակազմ, թիկնավետ, գանգուր մազեր, վառվռուն աչքեր, հաստ բազուկներ, ըմբոստանալ, ընդդիմանալ, զարմ, ոտնձգություն, ամբարիշտ, ցուրտ սառնություն, խառնիճաղանջ հրոսակախմբեր, ամբարտավան կեցվածք, լայնալիճ աղեղ, երեքթևյան նետ:

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Ըստ Կարեն Մուսայելյանի

Արամայիսը բնակության համար տուն է
շինում գետի ափին՝ մի բլրի վրա,
և իր անունով կոչում է Արմավիր.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Բլուրը ժայռոտ էր և բուսականությամբ հարուստ: Ապառաժներ, խարամ և բազալտ՝ ինչքան ուզես: Արամայիսն այդ բլուրը շատ էր հավանել: Դեռ այն ժամանակ, երբ Արամանյակ հայրը կենդանի էր, ինքը գործի բերումով հաճախ էր անցնում այդ կողմերով: Մոտենում էր բարձունքին, կանգնում և ուշադիր զննում տեղանքը: Որքա՜ն շինաքար կար: «Իսկական ամրոց կառուցելու տեղ է», - մտածում էր նա:

Երբ այս աշխարհին հրաժեշտ տալուց առաջ Արամանյակը երկիրը հանձնեց որդուն, վերջինս անմիջապես գործի անցավ:

Ահա մի քանի պարթև տղամարդկանց հետ նա հաղթահարում է սարալանջի թեքությունը: Վերելքը դժվար է, սակայն հսկաները գնում են առանց դադար առնելու:

Բլուրը սրագագաթ չէ և ունի մի քանի հարթակներ, որոնք աստիճանների նման հաջորդում են իրար: Տեղ-տեղ վեր են հառնում հսկա ժայռերը:

Ամենաբարձր ժայռը Արամայիսի ոտքի տակ է: Այդտեղից հրաշք տեսարան է բացվում: Այն, ինչ երևում է, իրենն է: Ինքն է իշխանն այս ամենի, բոլորն իր տիրույթներն են: Հյուսիսային կողմում Արամանյակի լեռն է, արևմուտքից գետ է հոսում՝ լայնահուն ու համդարտ: Գետից այն կողմ, ուր վերջանում է դաշտը, սրագագաթ լեռներ են բարձրանում: Երկուսն էլ կանգնած են վեհորեն: Ափսոս, որ անուն չունեն: Իր նախորդների անուններով շատ վայրեր են անվանակոչվել: Կառուցվելիք քաղաքի վրա պիտի իր՛ անունը դնի:

Այս խոհերով համակված՝ կանգնել է հայոց տերն ու նահապետը բլրի ամենավերին ժայռի վրա՝ կողքից կախած կապարճն ու աղեղը, ասես պատրաստ մեն-մենակ դիմագրավելու թշնամիներին:

Այո՛, ինքը բլրի վրա ապարանք կկառուցի, միջնաբերդ, կպարսպապատի, կպահի մշտական զորաբանակներ, կհավաքի շուրջը Հայք երկրի մարդկանց և այնտեղից կիշխի իր ընդարձակ աշխարհի ցեղերին: Շուրջը բնական ծառաստաններ են ու ակիշխի իր ընդարձակ աշխարհի ցեղերին: Շուրջը բնական ծառաստաններ են ու բոստավայրեր, իսկ գետից կարելի է առուներ հանել, ափերին մրգատու այգիներ գցել, բարեկեցիկ կյանքով ապրեցնել մարդկանց:

Արամայիսի հրամանով հաջորդ օրն իսկ սուրհանդակներ գնացին Հայք երկրի տարբեր կողմերը՝ շինարարներ ու քարգործ վարպետներ բերելու: Մարդիկ ուղարկվեցին նաև Շումերի երկիր, որ գնան տեսնեն, թե ինչպես են կառուցում ժամանակակից մեծ ու գեղեցիկ քաղաքները: Միջագետքում շատ չմնացին նրանք: Երբ եկան ու բերեցին այդ քաղաքների հատակագծերը, զարմանքով տեսան, որ բլուրն ու նրա շրջակայքը արդեն վերածվել են հսկայական շինհրապարակի: Հարյուրավոր մարդիկ էին աշխատում այնտեղ: Ոմանք քար էին տաշում, մյուսները բլրի հրապա-

րակներն էին հարթում, ուրիշները՝ հող տեղափոխում, պատգարակներ ու փայտե սանդուղքներ պատրաստում: Եվ այդ ամենը՝ Արամայիս արքայի աչքի առաջ: Նա թողել էր Արմանյակ լեռան և Արագածոտնի հարուստ շենները և ընտանիքով բնակություն հաստատել այս փոշոտ վայրում:

Վաղ առավոտյան արևածագից առաջ դուրս գալով վրանից՝ արքան հետևում էր աշխատանքի ընթացքին, և ինքն էլ բանվորների հետ քարեր գլորում, ժայռեր էր տապալում, փայտ սղոցում, գերաններ կապում: «Իմ անունը կրող քաղաքը պետք կրի նաև ձեռքի՛ս դրոշմը», - մտքում որոշել էր նա: Ու աշխատում էր օրնիբուն:

Մի քանի տարում կանգնեց հրաշալի կառույցներով, ապարանքներով, կրկնահարկ տներով, ուղիղ փողոցներով քաղաքը: Ապա կառուցեցին հաստաբեստ ատամներով ու դիտաշտարակներով պարիսպը, որը տեղ-տեղ ընդհատվում էր պղնձակերտ ծանր դարպասներով:

Բլրի չորս կողմը դարձրին բուրաստաններ ու ծաղկանոցներ, պարսպից դուրս կառուցեցին դաստակերտներ և բնակեցրին անթիվ մարդկանց:

Բլրի վրա, ուր միջնաբերդն էր, որպես վեհության և իշխանության խորհրդանիշ՝ վեր էր խոյանում ամենաբարձր աշտարակը, որի վրա ամեն օր՝ արևածագին, քրմերը և ժողովուրդը դիմավորում ու փառաբանում էին Արևին:

Քաղաքը անվանեցին Արմավիր, որտեղ ապրեցին հետագա սերունդները և այնտեղից իշխեցին Հայք երկրին: Բնակավայրը տարեցտարի մեծանում էր՝ իր մեջ առնելով մերձակա տարածքները:

Հայոց առաջին մայրաքաղաքը այդպես հիմնվեց: Նա տեղը զիջեց միայն այն ժամանակ, երբ տեսավ իր ավելի շքեղ մրցորդին՝ Արտաշատը՝ Հայոց մյուս հնագույն մայր քաղաքը:

Անցան շատ դարեր: Պատմական իրադարձությունների թելադրանքով «Արմավիր» գեղեցիկ անունը փոխարինվեց «Հոկտեմբերյանով»:

Եվ միայն այժմ, երբ մեր Հայրենիքը ձեռք բերեց այնքան բաղձալի անկախություն, ազգային բազում ավանդությունների, սովորությունների հետ վերականգնվեցին նաև մի շարք պատմական անուններ:

Արամայիսի հիմնած քաղաքը դարձյալ անվանվեց Արմավիր:

ՊԼԱՆ

1. Արամայիսի հավանած բլուրը:
2. Քաղաք կառուցելու որոշում:
3. Քաղաքի հիմնադրումն ու ավարտը: Առաջին մայրաքաղաքը:
4. Հոկտեմբերյանը՝ Արմավիր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

խարամ, բազալտ, պարթև տղամարդիկ, հսկա ժայռեր, լայնահուն ու հանդարտ գետ, սրագագաթ լեռներ, կապարճ, լայնալիճ աղեղ, բնական ծառաստաններ, բարեկեցիկ կյանք, քարգործ վարպետներ, Միջագետք, հաստաբեստ ատամներով ու դիտաշտարակներով պարիսպ, պղնձակերտ ծանր դարպասներ, վեհության ու իշխանության խորհրդանիշ:

2. Բացատրել կապարճ և լայնալիճ բառերի իմաստը:

ԵՐԿՆԷՐ ԵՐԿԻՐ...

Ըստ Կարեն Մուսայելյանի

(Հեթանոսական պատկեր)

Երկնքում մարեց վերջին աստղը: Լուսնի եղջյուրը իր աղոտ փայլն է արձակում, իսկ արևն աստիճանաբար դուրս է գալիս լեռնագագաթների հետևից, սփռվում Հայոց կուսական բարձունքների վրա: Արթնացել է Արեգակը, բարի՛ Աբեգակը, որպեսզի ամբողջ օրը կառք նստած շրջի երկնքում, հսկի, որ հանկարծ որևէ չար բան չպատահի երկրի ու տիեզերքի հետ: Նա՛ է ամենազոր աստվածը, բոլոր բարիքների արարիչը: Նա բացել է իր բարի աչքը երկրի վրա, զարթնել կարճատև քնից: Ո՞վ է այն համդուգնը, որ կարթնանա Արեգակից հետո: Արեգակնապաշտ այս մարդկանցից մեկը եթե նրա արթնանալու հետ ոտքի վրա չէ, ուրեմն անկողնին գամված հիվանդ է: Բայց նա էլ պարտավոր է ողջունել Արեգակի ծագումը: Հիվանդին իր մահիճով դուրս կբերեն տնից, և եթե տեղն է գիտակցությունը, ընդունակ է խոսելու, ձեռքերը կհանի ծածկոցի տակից, վեր կկարկառի և օգնության աղոթք կմրմնջա. «Արեգա՛կ ամենազոր, արարի՛չ ամենայնի, կենսատու՛ աղբյուր, տու՛ր ինձ քո լույսը, քո ջերմությունը, օգնի՛ր տկարիս, ո՛վ մեծդ տիեզերքի»:

Եվ կթողնեն հիվանդին, որ ջերմանա արևի կենարար շողերով, իսկ իրենք կբռնեն դեպի սրբարան տանող ճանապարհը...

Սրբատեղին հեռու չէ: Բարձրաբերձ հսկայական քարակոթող է՝ կանգնեցված ուղղահայաց դիրքով, կենտրոնում՝ արևի խորհրդանշանը՝ ճառագայթավոր շրջանակ: Եվ ահա ծեր ու երեխա, տղամարդ ու կին խմբվում են ժայռաբեկորի առաջ: Ծնկաչոք, հայացքները դեպի բացվող արևը՝ շշնջում են բառեր: Ապա բարձրանում են մոտակա ժայռաբեկորների վրա և ձեռքերը լայն տարածում դեպի Արևը: Քրմերի ու ժայռերի ծերպերին թառած մարդկանց բերանից լսվում է արևագալի հինգհազարամյա օրհներգը.

Երկնէր երկի՛ն,
Երկնէր երկի՛ր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր
Եվ զկարմրիկն եղեգնիկ...

Ձայնում է ամբոխը, և լեռները վերադարձնում են արձագանքը:

- Այսօր Վահագնին դեռ զոհ չենք մատուցել, - լսվում է քրմապետի ձայնը, - Վահագնը պահանջկոտ է, չպիտի զայրացնել նրան: Նա երկնքում կռիվ է տալիս վիշապների դեմ, որոնք ուզում են կլանել Արեգակին և զրկել մեզ բարիքներից: Եթե զոհ մատուցենք, պաշտամունք կատարենք, ուժ կտանք Վահագնին, և նա կհաղթի վիշապներին:

- Ի՞նչ պետք է զոհաբերենք Վահագնին, - հարցրեց տոհմապետը, - հարևան ցեղերը մարդ են զոհաբերում:

- Իզուր, - խոսեց քրմապետը, - Վահագնը բարիքներ է գործում մարդկանց, ին-

չու՞ պիտի մարդու արյուն ցանկանա: Կզոհաբերենք նրա թշնամի օձերին, և այդ տեսնելով՝ Վիշապաքաղը կոգևորվի նոր ուժով:

- Փա՛ռք Վահագնին, փա՛ռք Վահագնին, - գոչում է բազմությունը, - նա չի թողնի, որ վիշապը կլանի Արեգակին:

Բոլորը միասին շրջվում են դեպի Վահագնի հսկայակերպ բագինը և հնչեցնում հազարաձայն.

Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,
Եվ ի բոցոյն վազեր
Խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուս,
Եվ աչքունքն էին արեգակունք:

- Զոհաբերությու՛ն Վիշապաքաղ Վահագնին, - դարձյալ գոչեց քրմապետը:

Արձանի մոտ արագիլներ էին կանգնած, նրանց կողքին՝ տղամարդիկ՝ ձեռքներին կաշվե տոպրակներ: Դրանց բերանները բացեցին, ֆշշալով ու գալարվելով դուրս սողացին հսկայական օձեր:

Արագիլները, նկատելով նրանց, հարձակվեցին և սկսեցին անխնա կտցահարել: Պայքարը երկար չտևեց: Սատկած օձերին խարույկի վրա այրեցին և մոխիրը ցրեցին Վահագնի ոտքերի տակ:

Ու նորից քրմապետի գլխավորությամբ ամբոխը ձայնեց.

- Երկնեց երկի՛ր, երկնեց երկի՛ն... Փա՛ռք Վահագնին, փա՛ռք Արեգակին...

- Փա՛ռք, - արձագանքում էին Հայոց լեռները:

Եվ այսպես՝ ամեն առավոտ...
Եվ այսպես՝ դարեր, մինչև...

ՊԼԱՆ

1. Արևածագ:
2. Ողջույն Արեգակին:
3. Արևազալի հինգհազարամյա օրենքը:
4. Վիշապաքաղ Վահագնի պաշտամունքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

լուսնի եղջյուր, աղոտ փայլ, կուսական բարձունքներ, կառք, ամենազոր ատված, բարիքների աբարիչ, արեգակնապաշտ մարդիկ, անկողնում գամված հիվանդ, կարկառել, բարձրաբերձ քարակոթող, ուղղահայաց դիրք, խորհրդանշան, քուրմ:

2. Պատմությունը շարունակել՝ համառոտ պատմելով հեթանոսության կործանման և Հայաստանում քրիստոնեության հաստատման մասին:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

Ըստ Ստ. Օրբելյանի

Ո՛վ եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի Հրաշքի մասին, որ եղավ աստվածային տնօրինությամբ:

Աղվանքի գահերեց իշխան Վարազ Տրդատը մի դուստր ուներ՝ Շահանդուխտ անունով: Նրա կերպարանքն արտասովոր էր ու Հրաշագեղ. չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է, այլ կարծես կերպարանավորված էր լուսատառը օդից ու նրբանուրբ շողերից, արևի թրթռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:

Շահանդուխտին Հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Նա դուրս եկավ Հայրենի աշխարհից՝ ուղևորվելու իր նոր բնակատեղին: Մտնելով Բաղաց աշխարհը՝ անցնում էր մի ապառաժոտ վայրով: Կողքը լերկ Հեղեղատ էր, որի տորոտը կորչում էր անհատակ ու խավարչոտին անդունդում: Երբ նազելի օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր երկնակարկառ քարաժայռի գլխով, Հանկարծակի նրա վրա Հարձակվեցին զինյալներ՝ ահասարսուռ կերպարանքներով, Թրերի շաչյուն-շառաչյունով: Դրանք ապարոշներով գլուխները փաթաթած վայրենաբարո ելուզակներ էին, որոնց միայն տեսքը բավական էր սարսափի մատնվելու Համար:

Ընդհատենք այստեղ պատմությունը և այն ավելի Հավաստի դարձնելու Համար կարդանք իր՝ Շահանդուխտի ձեռքով գրված նամակը, որ, բարեբախտաբար, պահպանվել է. «Ես՝ Քրիստոսի մեղավոր աղախին Շահանդուխտս, Թորգոմյան տունը Հարս էի գնում: Հասա Բաղքի սահմանը՝ այն քարաժայռի գլուխը, որտեղով ճանապարհն է անցնում: Ահա այստեղ Հանկարծակի Համդիպեցին խմայելացիները, որոնք Հոչակված գեղեցկությանս պատճառով կամենում էին ինձ Հափշտակել: Նրանք, սրերը քաշելով, կոտորեցին մեր Հեծելազունդը: Ես ճիշտ Համարեցի գայլաբարո այլազգիների ձեռքով կորչելու փոխարեն դահավիժումով մեռնել Համուն Քրիստոսի: Եվ Հիշելով սուրբ Հռիփսիմեին՝ խաչակնքեցի ու ձիուս Հետ Թռա քարաժայռից: Քամու ուժգին Հոսանքով ու աներևույթ զորությամբ կարծես թե կառքով իջա ձորի խորխորատը, ձին էլ Հետս՝ անվնաս: Այնտեղ դադար առնելով՝ Հիացմունքով ու խոնարհությամբ խորին գոհունակություն վերառաքեցի ինձ այդպես փրկողին և այս անդորր տեղում անձս նվիրեցի Քրիստոսին: Ուխտեցի այլևս երբեք այստեղից դուրս չգալ: Շինեցի մի մատուռ, որտեղ ճգնեցի և ապաշխարեցի ամբողջ կյանքիս ընթացքում: Թեև ծնողներս և Թորգոմյան իշխանները շատ Թախանձեցին վերադառնալ աշխարհիկ կյանք, բայց ես անդրդվելի էի: Կանչեցի Սյունյաց եպիսկոպոսին, ամբողջ ունեցվածքս տվեցի նրան՝ կեսը բաժանելու կարիքավորներին, մյուս կեսը նվիրելու սուրբ եկեղեցուն»:

Այստեղ ավարտվում է Շահանդուխտի նամակը: Քաջարի օրիորդի մասին պահպանված գրույցն ասում է, որ նա իր մոտ Հավաքում է ուրիշ կույսերի և տառապալից ճգնությամբ ապրելով երեսուն տարի՝ մեռնում:

Տաթևի վանքի ճիշտ դեմուդեմ՝ ձորի վրա, այսօր էլ կախված է մի Հսկա քարաժայռ: Ասում են՝ դա Հենց այն ժայռն է, որի գլխից ձիով Թռել է Շահանդուխտը: Ահա Թե ինչու տեղաբնակներն այդ ժայռաբեկորն անվանել են «Շահանդուխտի քար»:

ՊԼԱՆ

1. Զքնաղ Շահանդուխտը:
2. Ուղևորություն դեպի Թորգոմյան տուն:
3. Իմաստլացիների հարձակումը:
4. Անվնաս գաղափիժում:
5. Շահանդուխտի ուխտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

նյութեղեն, շաչյուն-շառաչյուն, հավասար, ուխտել, ճգնել, ապշահարել, թախանձել, լուսատարր օդ, նրբանուրբ շողեր, խավարչտին անդունդ, երկնակարկառ քարաժայռ, ահասարսուռ կերպարանք, վայրենաբարո ելուզակներ, ապարոշ:

ԻՄԱՍՏՈՒՆ ԹԱԳՈՒՀԻՆ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Վանի Թագավոր Սարդուրի Երրորդը գահակալել է մեր թվարկությունից առաջ 645-635 թվականներին:

Մի օր նրան տեղեկացրին, որ Տուշպա մայրաքաղաքի մի բնակչուհի՝ Վանուհի անունով, արդեն տասնութ զավակների մայր է:

- Տե՛ր արքա, - ասացին պալատականները, - այդ Վանուհու ավագ որդիները ծառայում են մեր բանակում: Ամեն մեկը մի-մի հսկա է, դյուցազուն և արժե տասը զինվոր: Նրանք բոլորը հերոսներ են: Ասում են նաև, որ նրանք ունեն մի քույր, որ արտասովոր ուժի, խելքի և գեղեցկության տեր օրիորդ է:

Շատ զարմացավ Սարդուրի արքան, ափսոսաց, որ իր թագավորության մեջ այդպիսի ընտանիք է ապրում, բայց ինքը տեղյակ չէ: Նա կանչեց արքունի գանձապահին և հրամայեց.

- Պետության միջոցներով մեկական տուն կառուցել տուր այդ տասնութ հերոսների համար, իսկ արքունի կալվածքներից մեկը հատկացրու բազմազավակ մորը: Հայրենիքին այդքան զինվոր տվող կնոջ ոտքը պետք է գետնին չկպչի:

Սարդուրին այդ ժամանակ դեռ ամուսնացած չէր: Շատ աղջիկներ կային նրա շրջապատում, բայց նա ոչ մեկին չէր հավանում:

- Երկրի թագուհին, - ասում էր նա, - պետք է լինի ոչ միայն գեղեցիկ, այլև առաջին հերթին՝ իմաստուն, որպեսզի ամեն րոպե կարողանա կանգնել թագավոր ամուսնու կողքին և օգնել խորհուրդներով: «Եթե Վանուհու դուստրը այդպիսին է, ինչու՞ չտեսնել նրան», - մտածեց Սարդուրին և մի քանի թիկնապահներով գնաց նրանց տուն: Սարդուրին

Իսկապես, օրիորդը, որի անունը Օրաշ էր, չքնաղագեղ մի հաշ էր: Նրան թվում էր, թե աղջիկն առանց երբևէ այդպիսի գեղեցկուհու չէր հանդիպել:

սեթևեթանքի կհամաձայնի արքայի կին դառնալ: Բայց արի ու տես, որ այդպես չեղավ:

- Ես կհամաձայնեմ քո կինը դառնալ միայն այն դեպքում, եթե մի Հրասախ վազքում առաջ անցնես ինձնից, - ասաց օրիորդ Օրաշը:

Երիտասարդ արքան քմծիծաղ տվեց և ընդառաջելով աղջկա ցանկությանը՝ բազմության աչքի առջև նրա հետ մրցույթի դուրս եկավ: Առաջին կես Հրասախ մրցուղում առջևից վազում էր Օրաշը, հետո արքան ուժեղացրեց իր քայլքը, առաջ անցավ ու հաղթեց օրիորդին:

Այս վազքից հետո, կատարելով իր խոստումը, օրիորդ Օրաշը համաձայնեց հարս գնալ արքունիք: Բայց, չգիտես ինչու, աղջիկն անընդհատ ձգձգում էր հարսանիքը: Եվ ահա Սարդուրի արքան օրիորդին ասաց.

- Օրա՛շ, երևում է, որ քո մտքում ինչ-որ բան կա, ինչու՞ ես անընդհատ ձգձգում մեր հարսանիքը: Չէ՞ որ ես կատարեցի քո ցանկությունը: Իմ արքա տեղով չինականների առջև վազեցի ինչպես արագընթաց զորական, որ հաճույք պատճառեմ քեզ:

- Դա ճիշտ է, ցանկությունս կատարեցիր, բայց չհաղթեցիր, - ասաց աղջիկը:

- Ինչպե՞ս թե չհաղթեցի, - զարմացավ Սարդուրի արքան:

- Այո՛, ոչ թե դու հաղթեցիր, այլ ես պարտվեցի:

- Դա ի՞նչ է նշանակում:

- Գնանք, մարդկանց աչքից հեռու մի տափարակ տեղ ընտրենք, վազենք, և դու կհամոզվես, որ չես հաղթել ինձ:

Սարդուրին համաձայնեց: Ինքն ու Օրաշը կառք նստեցին, բավական հեռացան Վանից և հարմար մի տեղ գտնելով՝ չափեցին մի Հրասախ երկարությամբ ճանապարհ ու դուրս եկան մրցության: Այս անգամ հաղթեց Օրաշը:

- Այո՛, ընդունում եմ իմ պարտությունը, դու հաղթեցիր, - ասաց արքան, - իսկ ինչու՞ առաջին մրցության ժամանակ պարտվեցիր:

- Զուգեցի հաղթել, Սարդուրի՛, հպատակների առջև արքան պիտի միշտ հաղթող լինի ամեն ինչում:

Աղջկա այդ պատասխանը հիացրեց Սարդուրիին, և նա ասաց.

- Դու ոչ միայն գեղեցիկ ես, այլև իմաստուն:

Եվ մի քանի օր հետո Օրաշը դարձավ հայոց թագուհի:

1. Հրասախ-հնում երկարության չափ

ՊԼԱՆ

1. Սարդուրիին տեղեկացնում են բազմազավակ Վանուհու մասին:
2. Հրաման՝ բազմանդամ ընտանիքին օգնելու:
3. Սարդուրին որոշում է տեսնել Օրաշին:
4. Օրիորդի պայմանը:
5. Իմաստուն թագուհին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

գաճակալել, Տուշպա մայրաքաղաք, դյուցազուն, չքնաղագեղ կակ, սեթևեթանք, Հրասախ, քմծիծաղ տալ:

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ըստ Լեոյի

Չորս հարյուր հինգ թվականին էր, ամառային չքնաղ մի օր: Արարատյան դաշտը շողշողում էր հազարերանգ գույներով, բուրում սերկևիլի, դեղձի, փշատի, դաղձի բույրերով՝ հագեցնելով օդը ինչ-որ թրթռուն ու թափանցիկ ելևէջներով: Փչում էր մեղմ սյուքը՝ ստեղծելով միմյանց քսվող տերևների ախորժալուր խշշյուն ու սոսափ: Թռչուններն ուրախ ճռվողում էին՝ խումբ-խումբ թռչկոտելով ծառից ծառ: Ինչ-որ հուզիչ ու խորհրդավոր, ինչ-որ համընդհանուր հրճվանք էր թևածում շուրջբոլորը:

Եվ իրոք, այդ օրը ցնծության մեջ էր ողջ Հայաստան աշխարհը, առավել ևս՝ Վաղարշապատը: Հանդիսավոր ղողանջում էին եկեղեցական զանգերը, մեղմանուշ ու քաղցրահնչյուն նվագում էին վինն ու քնարը, ընդոստ փոթորկվում բամբիռն ու ծնծղան: Լեփ-լեցուն փողոցներում ու հրապարակներում մոլեգնում էր գվարթ շուրջպարը: Ամենուրեք արտառոց եռուզեռ ու աշխուժություն էր տիրում. բոլորը՝ մեծ թե փոքր, դրսում էին, իսկ քաղաքի դարպասների մոտ Թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի, նախարարների ու հոգևոր դասի շուրջը խլրտում էր տոնականորեն հագնված ամբոխը: Բոլորի ձեռքին ծաղիկներ էին՝ դեղին, վարդագույն, կարմիր, կապույտ՝ կապված գույնզգույն ժապավեններով:

Եվ ահա հեռվում՝ ճանապարհի երևացող հատվածում, փոշի բարձրացավ: Ձիավորներ էին՝ փայլփլուն զենքերով, զարդարված ձիերով: Առաջին ձիավորի ձեռքին փողփողում էր Հայոց դրոշը՝ վառվռուն, ինչպես ինքը՝ հեծյալը: Մարդկանց անհամբեր աչքերը սրարշավ վարգող խմբի մեջ փնտրում էին մեկին, և ամենքը նայում էին այնպիսի երկյուղածությամբ, այնպիսի անքթիթ հայացքով, որ թվում էր՝ հայտնվելու է Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Բայց նա Աստծո Որդին չէր, այլ ինքը՝ Աստված, որին դարեր փնտրելով երկնքում՝ այժմ գտել էին երկրի վրա:

Եկողը գեղեցիկ տղամարդ էր՝ բարձրահասակ, թիկնեղ, միջին տարիքի: Սևաթույր ու խռիվ մազերն ըմբոստ անհնազանդությամբ թափվել էին լայն ուսերին: Աչքերում գերբնական կայծեր էին շողում, որ մեղմանում էին բարի ժպիտով և գորովագութ, կարոտակեզ հայացքով՝ ուղղված դիմավորող բազմությանը:

Երևում է՝ շատ էր տառապել, որովհետև արևակեզ դեմքին դրոշմված էր տքնանքի ու որոնման կնիքը:

Այդ սքանչելի հայկազունը Մեսրոպ Մաշտոցն էր՝ հայ գրերի երկնողը, որ վերադառնում էր արտասահմանից՝ բերելով իր հորինած այբուբենը:

Ուրախության աղաղակները, գոռում-գոչյունները, որ թնդում էին օդում, վկայում էին, որ ամենքը հասկանում էին, թե ինչ է ճանապարհորդ վարդապետի բերածը:

Մաշտոցի աշակերտը՝ Կորյունը, ուսուցչի վերադարձը նմանեցնում է Մովսեսի՝ Սինա լեռից իջնելու հետ, երբ հրեաների մեծ մարգարեն իր ժողովրդին էր տանում Աստծո տասը պատվիրանները:

Ապրեց հայ ժողովուրդը, և նրան ապրեցնողը նախ և առաջ իր այբուբենն էր: Անցավ հարյուրամյակների դժխեմ քառուղիներով՝ միշտ կրծքին սեղմած հայատառ մատյանները, իսկ սրտում՝ սուրբ ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի լուսապսակ անունը:

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ըստ Լեոյի

Զորս հարյուր հինգ թվականին էր, ամառային չնչող մի օր: Արարատյան դաշտը շողշողում էր հազարերանգ գույներով, բուրում սերկևիլի, դեղձի, փշատի, դաղձի բույրերով՝ հագեցնելով օդը ինչ-որ թրթռուն ու թափանցիկ ևլևէջներով: Փչում էր մեղմ սյուքը՝ ստեղծելով միմյանց քսվող տերևների անորժալուր խշշյուն ու սոսափ: Թռչուններն ուրախ ճռվողում էին՝ խումբ-խումբ թռչկոտելով ծառից ծառ: Ինչ-որ հուզիչ ու խորհրդավոր, ինչ-որ համընդհանուր հրճվանք էր թևածում շուրջբոլորը:

Եվ իրոք, այդ օրը ցնծության մեջ էր ողջ Հայաստան աշխարհը, առավել ևս՝ Վաղարշապատը: Հանդիսավոր ղողանջում էին եկեղեցական զանգերը, մեղմանուշ ու քաղցրահնչյուն նվագում էին վինն ու քնարը, ընդոստ փոթորկվում բամբիռն ու բնծղան: Լեփ-լեցուն փողոցներում ու հրապարակներում մոլեգնում էր գվարթ շուրջպարը: Ամենուրեք արտառոց եռուզեռ ու աշխուժություն էր տիրում. բոլորը՝ մեծ թե փոքր, դրսում էին, իսկ քաղաքի դարպասների մոտ Թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի, նախարարների ու հոգևոր դասի շուրջը խլրտում էր տոնակամորեն հագնված ամբոխը: Բոլորի ձեռքին ծաղիկներ էին՝ դեղին, վարդագույն, կարմիր, կապույտ՝ կապված գույնզգույն ժապավեններով:

Եվ ահա հեռվում՝ ճանապարհի երևացող հատվածում, փոշի բարձրացավ: Ձիավորներ էին՝ փայլփլուն զենքերով, զարդարված ձիերով: Առաջին ձիավորի ձեռքին փողփողում էր Հայոց դրոշը՝ վառվռուն, ինչպես ինքը՝ հեծյալը: Մարդկանց անհամբեր աչքերը սրարշավ վարգող խմբի մեջ փնտրում էին մեկին, և ամենքը նայում էին այնպիսի երկյուղածությամբ, այնպիսի անքթիթ հայացքով, որ թվում էր՝ հայտնվելու է Աստծո Որդին՝ Հիսուս Քրիստոսը: Բայց նա Աստծո Որդին չէր, այլ ինքը՝ Աստված, որին դարեր փնտրելով երկնքում՝ այժմ գտել էին երկրի վրա:

Եկողը գեղեցիկ տղամարդ էր՝ բարձրահասակ, թիկնեղ, միջին տարիքի: Սևաթույր ու խուիվ մազերն ըմբոստ անհնազանդությամբ թափվել էին լայն ուսերին: Աչքերում գերբնական կայծեր էին շողում, որ մեղմանում էին բարի ժպիտով և գորովագութ, կարոտակեզ հայացքով՝ ուղղված դիմավորող բազմությանը:

Երևում է՝ շատ էր տառապել, որովհետև արևակեզ դեմքին դրոշմված էր տքնանքի ու որոնման կնիքը:

Այդ սքանչելի հայկազունը Մեսրոպ Մաշտոցն էր՝ հայ գրերի երկնողը, որ վերադառնում էր արտասահմանից՝ բերելով իր հորինած այբուբենը:

Ուրախության աղաղակները, գոռում-գոչյունները, որ թնդում էին օդում, վկայում էին, որ ամենքը հասկանում էին, թե ինչ է ճանապարհորդ վարդապետի բերածը:

Մաշտոցի աշակերտը՝ Կորյունը, ուսուցչի վերադարձը նմանեցնում է Մովսեսի՝ Սինա լեռից իջնելու հետ, երբ հրեաների մեծ մարգարեն իր ժողովրդին էր տանում Աստծո տասը պատվիրանները:

Ապրեց հայ ժողովուրդը, և նրան ապրեցնողը նախ և առաջ իր այբուբենն էր: Անցավ հարյուրամյակների դժխեմ քառուղիներով՝ միշտ կրծքին սեղմած հայատառ մատյանները, իսկ սրտում՝ սուրբ ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի լուսապսակ անունը:

ՊԼԱՆ 1. 405 թվականի ամառային պայծառ օրը։
2. Ցնծություն՝ Վաղարշապատում։
3. Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է աշակերտներով։
4. Հայ ժողովրդի հավերժության գաղտնիքը։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրառատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ամառային շինչող օր, հազարերանգ գույներ, սերկևիլ, դեղձ, դաղձ, թրթռուն ու թափանցիկ ելևէջներ, մեղմ սյուք, ախորժալուր խշշյուն, հուզիչ ու խորհրդավոր համընդհանուր հրճվանք, չորս-բոլորը, ընդոստ փոթորկել, բամբիռ, գվարթ շուրջպար, տոնականորեն հագնված ամբոխ, վառվռուն աչքեր, անքթիթ հայացք, ոգևորված ամբոխ, վառվռուն աչքեր, անքթիթ հայացք, ոգնանքի ու որոնման կնիք, հազարամյակների դժխեմ քառուղիներ, լուսապսակ անուն։

ՕՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՆՆՋԵՑՅԱԼԸ

Ըստ Լեոյի

Չորս հարյուր երեսունինը թվականի փետրվարն էր։ Թխպոտ երկնքից անընդհատ թափվում էր ձյունը՝ իր սպիտակ ծածկոցի տակ առնելով ամեն ինչ։

Համընդհանուր սպիտակության մեջ աչքի են զարնում քաղաքի կավե պարիսպներն ու աշտարակները։ Վաղարշապատն է՝ Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը։ Այդտեղ փետրվարի տասներեքին մի մարդ մեռավ՝ ցնցելով ողջ մայրաքաղաքը և համայն հայ ժողովրդին։

Վերջին տասը տարիների ընթացքում հայ ժողովուրդը մեծ կորուստներ էր ունեցել. ընդամենը վեց ամիս առաջ հողին էին հանձնել Սահակ Պարթևին՝ գիտության ու լուսավորության պայծառ հովանավորին։ Բայց այս կորուստն ուրիշ էր, որովհետև աշխարհից հեռանում էր մի սուրբ մարդ՝ սուրբ անունով, սուրբ գործով հռչակված։ Այդքան պաշտված ու հարգված հանգուցյալը թագավոր, մեծատոհմիկ կամ իշխանազն չէր, ոչ էլ պատերազմի հերոս կամ մեծատուն։ Մոտ ութսուն տարեկան ծերունի էր՝ լայն ճակատով, որի վրա ասես դարերի իմաստությունն ու խորհուրդն էր ամփոփված, փառահեղ մորուքով և կրծքին խաչված մոմե մատներով, ծագումով՝ հասարակ գեղջուկի որդի։ Բայց նա ուներ անուն, որ ի վերուստ միայն իրեն էր շնորհված՝ հայերենի առաջին ուսուցիչ։ Գործել էր երեսունհինգ տարի՝ դաստիարակելով տաղանդավոր սաներ՝ Խորենացի, Կորյուն, Եղիշե, Վարդան Մամիկոնյան՝ նրանցից յուրաքանչյուրի մեջ պատվաստելով իր հոգու գանձերը՝ գիտելիքները, բարությունը, հայրենասիրությունը, վեհանձնությունը։

Մինչ կաթողիկոսարանում դրված էր Ուսուցչի մարմինը, քիչ այն կողմ շշուկով վիճում էին, թե ու՞ր պիտի որոնել այն մի ափ հողը, որ սուրբ մարդուն ամփոփելու պատիվն ունենա։

Բացվեց փետրվարյան սառնաշունչ օրը: Լեփ-լեցուն էին փողոցները, Մայր աթոռի գավիթը, թախծոտ թրթիռով ղողանջում էին եկեղեցական զանգերը՝ նշան սգո և ազգային մեծ վշտի:

Ահա մարդկային գլուխներից վեր երևաց դագաղը՝ թանկագին բեռով, ամբողջովին ծաղիկների մեջ: Ուսերի վրա տանում էին Ուսուցչին՝ աչքերում անթեղած վիշտ ու արտասուք: Հազարավոր մարդիկ, և ո՛չ մի ձայն, ո՛չ մի շշուկ: Մեծ լռություն էր իջել Արարատյան դաշտի վրա:

Թափորը թեքվեց դեպի Օշական՝ Վահան Ամատունու կալվածքը: Այդտեղ իջեցրին դագաղը: Օդում ելևէջում էր հուզիչ պատարագը, բուրվառներում բուրում էին խունկն ու կնդրուկը: Վշտալլուկ հողարկավորները, լռելյայն անցնելով դագաղի մոտով, խոնարհում էին գլուխները՝ վերջին հրաժեշտը տալով սուրբ մարդուն: Իսկ նրա աշակերտները, ցավից կծկված, խեղդելով փղձկոցը, վերջին անգամ համբուրեցին Ուսուցչի՝ արևից էլ պայծառ ճակատը:

Դագաղն իջավ փոսի մեջ, և գերեզմանը փակվեց:

Այն օրից շուրջ հազար հինգ հարյուր տարի Օշականի հողը իր ծոցում պահում է սուրբ մարդուն՝ Մեսրոպ Մաշտոցին:

ՊԼԱՆ

1. 439 թվական: Վաղարշապատ:
2. Ուսուցչի մահը:
3. Նրա գործունեությունը:
4. Վեճ՝ թաղման տեղի համար:
5. Սուրբ շիրիմն Օշականում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Թխպոտ երկինք, սարսռուն ծածկոց, համընդհանուր սպիտակություն, կավե պարիսպներ ու աշտարակներ, մեծ կորուստներ, պաշտված ու հարգված հանգուցյալ, դարերի իմաստություն ու խորհուրդ, փառահեղ մորուք, մոմե մատներ, գեղջուկ, ի վերուստ, լեփ-լեցուն, թախծոտ թրթիռ, Մայր աթոռ, մեծ լռություն, հուզիչ պատարագ, բուրվառներ, վշտալլուկ հողարկավորներ, կծկված, փղձկոց:

2. Աշակերտներին հանձնարարել շարադրել իրենց խոհերը Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գյուտի, հայոց այբուբենի համազգային նշանակության մասին:

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

Ըստ տարբեր աղբյուրների

Չորս հարյուր իննսունինը թվականի գարնանային մի տաք երեկո Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքի բացօթյա դահլիճներից մեկը լեցուն էր բազմությամբ: Բեմի վրա՝ փափուկ բազմոցների մեջ, նստած էին պատկառելի տարիքի մի քանի այր: Դրանք մեծանուն փիլիսոփաներ էին, գիտնականներ ու պատմիչներ, որոնք եկել էին ղեկավարելու աշխարհի տարբեր կողմերից ժամանած վաթսուն իմաստասերների մրցույթը: Վերջիններիս թվում էր նաև մի հայ երիտասարդ փիլիսոփա՝ անունը Դավիթ:

Դահլիճը լարված հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչ հարցեր կտրվեն, և ինչպես կպատասխանեն իմաստասերները: Դա խելքի, իմացության, գիտելիքների, ճկուն մտածողության մրցույթ էր: Արդյոք ո՛վ պիտի դառնար օրվա հերոսը, ո՛վ պիտի շահեր հաղթանակի դափնին:

Ահա հրապարակ դուրս եկավ հայորդի Դավիթը: Մեծահամբավ իմաստասեր Օլիմպադորասը հետաքրքրությամբ նայեց նրան, ապա ծանրումեծ հարցրեց.

- Երիտասա՛րդ, ի՞նչն է աշխարհում հավերժական:

- Ժամանակը, - անվարան պատասխանեց Դավիթը, - այն անտեսանելի է, անչափելի, անսկիզբ, անվերջ ու անվախճան:

- Կա՞ տիեզերքում որևէ բան, որ հավերժական ընթացքի մեջ է և երբեք կանգ չի առնում:

- Կա՛: Դարձյա՛լ ժամանակը: Այն հոսում է անդադար, անկախ որևէ մեկի ցանկությունից: Միակ բանն է ողջ տիեզերքում, որին ո՛չ կանգնեցնելու, ո՛չ սանձելու ի զորու չենք:

Եվ կրկին հարց առաջադրեցին Դավթին.

- Ո՞րն է երկարակեցության գաղտնիքը:

- Քչակերությունը, ժուժկալությունը, սակավապետությունը: Ոչ թե պիտի ապրել ուտելու, այլ ուտել՝ ապրելու համար:

- Այն ո՞ր առաքինությունն է, որ մարդուն մոտեցնում է Աստծուն:

- Աստծո նման սիրել աշխարհն ու մարդկանց, կյանքում առաջնորդվել Աստվածաշնչի ոսկե օրենքով. «Այն ամենը, որ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, այնպես և դուք արեք նրանց համար»:

- Անսահմանության մեջ ի՞նչն է ամենից արագ թռչում:

- Մի՛տքը: Այն վայրկենապես կարող է կտրել հեռավոր աշխարհներ, թափանցել օվկիանոսների հատակը, կարող է սլանալ դարերի խորքը, հասնել բիբլիական ժամանակները, հաղորդակցվել նախամարդուն, Ադամին ու Եվային, Հիսուս Քրիստոսին:

- Ո՞վ է ամենաիմաստունը բոլոր ժամանակների համար:

- Բնությունը՝ մայրը ամենայն գեղեցկի, բարու և չարի: Նա գիտե ամեն ինչ իր տեղում և ժամանակին անել: Բնությունն անսխալական է:

Հարց ու պատասխանն ավարտվեց: Մի պահ տևած լռությանը հաջորդեցին բուռն ծափահարությունները: Ունկնդիրները հոտնկայս վանկարկում էին.

- Դավիթ Արմենիո՛ս, Դավիթ Անհա՛ղթ:

Օլիմպադորոս փիլիսոփան բարձրացրեց աջը՝ ի նշան լռության:

- Մենք որոշեցինք, - խոսեց նա, - հաղթանակի դափնին շնորհել Դավիթ Արմենիոսին:

Երկու օր անց ծեր իմաստասերը ճանապարհում էր Դավթին: Համբուրեց երիտասարդի ճակատն ու աչքը.

- Որդի՛ս, քարոտ է լինելու ճանապարհդ: Խավարամիտ մարդիկ չեն սիրելու առաջադեմ մտքերդ: Իմացի՛ր, չարերի նախանձն ես շարժելու, իսկ նախանձը միշտ չար է: Պիտի դիմանաս, ճակատամարտես: Բարին ընդ քեզ: Գնա՛ և լո՛ւյս սփռիր քո հեռավոր հայրենիքում:

Մարգարեացավ Օլիմպադորոս փիլիսոփան: Դավիթ Անհաղթը Հայրենիքում շատ պայքարեց, բայց չդիմացավ հալածանքներին և քաշվեց Հաղպատի վանքը: Չնստեց պարապ: Գրեց օրնիբուն՝ մտքերը հանձնելով մագաղաթներին:

Վեցերորդ դարի մի շա՛տ-շատ արևոտ ամսի, որ կոչվել է «Հրոտից», Հաղպատում կոպիտ փայտերից դագաղ մեխեցին, տերտերը կիսատ-պռատ «Տե՛ր, ողորմյա՛» կարդաց, և չորս ողամարդ հալածված մի մարդու հողին հանձնեցին: Հարյուր տարի էր պետք, որ եկեղեցին այդ մարդուն աշխարհական սուրբ հռչակեր, հաներ աճյունը հինավուրց խնձորենու տակից, հասցներ Տարոն և մեծ ծեսերով, հանդիսություններով, պատարագով, խնկով ու կնդրուկով ամփոփեր Մշո «Առաքելոց» վանքում:

Դավիթ Արմենիոս Անհաղթին:

Սուրբ հռչակված փիլիսոփային:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Որպեսզի աշակերտները կարողանան այս նյութը հեշտությամբ վերարտադրել, առաջարկում ենք առաջին ընթերցման ժամանակ կարդալ Դավիթ Անհաղթին տրվող հարցերը միայն, իսկ պատասխանները՝ ոչ: Թող աշակերտն ինքը մտածի, թե ինչ կպատասխաներ, եթե դրանք իրեն առաջադրվեին: Վստահ ենք, որ երեխաները կտան սրամիտ և խելացի պատասխաններ: Երկրորդ անգամ նրանց համար ընթերցել տեքստն ամբողջությամբ:

Երեխաներին օգնելու նպատակով Դավիթ փիլիսոփային առաջադրվող հարցերը կարելի է գրել գրատախտակին: Դրանց պատասխանն այդ դեպքում դյուրին կլինի:

ՊԼԱՆ

1. Իմաստասերների մրցույթ:
2. Դավիթ իմաստասերին առաջադրված հարցերն ու դրանց պատասխանները:
3. Դավիթն ստանում է «Անհաղթ» պատվանունը:
4. Մեր փիլիսոփայի կանխագուշակությունն ու խորհուրդները:
5. Հալածանք:
6. Աշխարհական սուրբը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ Հնագույն ժամանակներում հուլիս ամիսն անվանվել է «Հրոտից»:

ԶՐՈՒՅՑ ԱՄԵՆԱԶՕՐ ՍՐԲԻ ՄԱՍԻՆ

Ըստ Ա. Ղանալանյանի

Միջնադարի հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին պաշտված է հայ ժողովրդի կողմից: Այնքան մեծ է եղել նրա «Մատյան ողբերգության» պոեմի հմայքն ու ներգործուն ուժը, որ ժողովուրդն այն հռչակել է սուրբ գիրք՝ անվանելով «Նարեկ», իսկ իրեն՝ բանաստեղծին, դասել է սրբերի շարքը՝ նրա մասին հորինելով պատմություններ: Ստորև ներկայացնում ենք հնագույն մի զրույց:

Ծիծաղախիտ Վանա ծովակի ափին՝ իրենց համեստ տնակում, ապրում էին մարդ ու կին՝ Գնելն ու Շահանդուխտը: Ամուսինը ձուկ էր որսում, վաճառում, և ստացված եկամուտով ոչ միայն իրենք էին ապրում, այլև օգնում դրացիներին: Այդ բարի մարդիկ, սակայն, մի անփարատելի վիշտ ունեին. Աստված նրանց զավակ չէր պարգևում: Գնելն ու Շահանդուխտը շատ սրբերի դուռ գնացին, Աղթամարի վանքում մոմեր վառեցին, ծնկաչոք աղերսեցին Բարձրյալին, սակայն ապարդյուն: Երկնքի դռները փակ էին նրանց համար:

- Ամենազորավոր սուրբը Գրիգոր Նարեկացին է, գնացե՛ք նրա շիրմին այցի, և նա ձեզ զավակ կտա, - խորհուրդ տվին հարևանները:

Ամուսիններն այդպես էլ արին: Եվ հրաշք կատարվեց. չանցած ինն ամիս՝ արու զավակ ունեցան և ի մեծարումն սրբի՝ անվանակոչեցին Գրիգոր:

Փոքրիկը աշխույժ, առողջ երեխա էր՝ փայլուն աչիկներով, պայծառ մտքով, գեղագանգուր խարտյաշ մազերով ու խնձորի պես կարմիր թշիկներով: Եթե ուրիշ երեխաներ օրեօր էին մեծանում, ապա Գրիգորն աճում, փարթամանում էր ժամ առ ժամ: Երբեմնի խաղաղ ու լուռ տնակն այժմ լցվել էր ուրախությամբ, երեխայի զրնգուն ծիծաղով: Ծնողները երջանկությունից իրենց կորցրել և առավոտ-գիշեր փառաբանում, օրհներգում էին սուրբ Նարեկացուն:

Երբ տղան դարձավ յոթ տարեկան, Գնելն ու Շահանդուխտը որոշեցին դարձյալ ուխտի գնալ և երկրպագել սրբի շիրմին: Վարդավառ էր, օրը տաք ու հաճելի: Նազանի հարսի պես պչրում էր ծովակը, համբուրում ավազոտ ափերը: Այդ խաղաղ պահին որտեղից որտեղ անսպասելիորեն մի չար քամի բարձրացավ, գալարվեց օձապտույտ և իր հոսանքի մեջ առնելով տղային՝ օդ բարձրացրեց, ապա նետեց ծովակի կապույտ ալիքների հորձանուտը: Շահանդուխտը ճչաց աղեկտուր, Գնելն իրեն ջուրը նետեց՝ տղային փրկելու, բայց ոչինչ անել չկարողացավ: Երեխան անհետացել էր կապուտակ խորխորատի մեջ: Մի քանի օր խեղճ ծնողները դեգերում էին ծովափին, կորած զավակին կանչում, ողբում: Համոզվելով, որ անդառնալիորեն կորցրել են փոքրիկ Գրիգորին, Գնելն ու Շահանդուխտը կոտրված սրտով բռնեցին տունդարձի ճանապարհը: Եվ քանի որ արցունքը չէր կտրվում նրանց աչքերից, կորցրին տեսողությունը, կուրացան:

Անցավ մեկ տարի: Երբ մոտենում էր Վարդավառի տոնը, դրացիներն ասացին.

- Արտասուք թափելով ձեր որդուն չեք վերադարձնի: Եղածը եղած է: Եկեք դարձյալ գնանք Նարեկացու գերեզմանը, աղաչենք, որ գոնե ձեր աչքերը բուժի:

Դրացիներով ու բարեկամներով, ամբողջ գյուղով ճամփա ընկան դեպի սրբի

տապանը: Հենց մոտեցան, մեկ էլ տեսան մանուկ Գրիգորին, որ ջրաթաթախ նստած էր տապանաքարի վրա: Մարդիկ իրենց աչքերին չէին հավատա, կմտածեին տեսիլք է, եթե երեխան վազելով չգար և չփարվեր ծնողներին:

Երբ ընդհանուր հուզմունքը մի քիչ հանդարտվեց, Գնելն ասաց.

- Որդի՛ս, պատմի՛ր, ինչ պատահեց քեզ հետ, որտե՞ղ էիր և ինչպե՞ս հայտնվեցիր մեր կողքին:

- Երբ ընկա ծովը, - պատմեց տղան, - հայտնվեց մի անձոռնի հրեշ, որն իր սուր մագիլներով ուզում էր ինձ խեղդել: Բայց այդ ժամանակ երևաց սուրբ Գրիգոր Նարեկացին, գավազանով սաստեց հրեշին, ձեռքիցս բռնեց և իր հետ տարավ ծովի հատակը: Գավազանը խրեց տիղմի մեջ, ճերմակ Թիկնոցը հանեց ու փռեց գավազանի վրա՝ սարքելով վրան: Ջրերը հետ գնացին ու վրանի վրա կամար կազմեցին: Սուրբ չորս կողմը խաչակնքեց, ու լճի հատակը լուսավորվեց արևի տաք ճառագայթներով: «Տղա՛ս, - ասաց նա, - այստեղ մնա, մինչև կվերադառնամ»: Հաջորդ օրը եկավ և երկու նշխար բերեց: Դրանք կերա ու զորացա: Այսպես՝ ամեն օր: Իսկ այսօր ասաց. «Քո հայրն ու մայրը գալիս են ուխտի: Հասել է մեր բաժանման ժամը: Վերցրու՛ այս Թաշկինակը, քսի՛ր ծնողներիդ աչքերին: Նրանք նորից կտեսնեն Աստծո լույսը: Գնաս խաղաղությամբ, որդի՛ս, Տեր ընդ քեզ»: Այսպես խոսեց սուրբ Նարեկացին, և ես չհասցրի անգամ նրա աջը համբուրել, ինձ գտա տապանաքարի վրա:

Տղան Թաշկինակը տվեց ծնողներին: Գնելն ու Շահանդուխտը այն Թեթևակի հպեցին իրենց աչքերին, և նույն պահին լույս իջավ նրանց բիբերին: Կրկին տեսան պաշտելի գավակին, Վանա ծովակը, Աղթամար կղզին: Հրաշքի ականատեսները գոհունակություն հայտնեցին Աստծուն և փառաբանելով ամենազոր Գրիգոր Նարեկացուն՝ ուրախությամբ, ծափ ու ծիծաղով վերադարձան իրենց տները:

ՊԼԱՆ

1. Միջնադարի հանճարեղ բանաստեղծը:
2. Անփարատելի վիշտ:
3. Փոքրիկ Գրիգորը:
4. Ծովակի հատակում:
5. Երկրորդ հրաշքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

«Մատյան ողբերգության» պոեմը, ծիծաղախիտ Վանա ծովակ, դրացի, Բարձրյալ, արու զավակ, ի մեծարումն սրբի, գեղագանգուր խարտյաշ մազեր, օրեօր, օրհներգել, Վարդավառ, Նազանի հարս, պչրել, չար քամի, օձապտույտ, կապույտ ալիքների հորձանուտ, խորխորատ, դեգերել, անդառնալիորեն կորցնել, մագիլ, նշխար:

Պատանի՛ բարեկամ, ժողովուրդն այնքան է սիրել միջնադարի խոշոր բանաստեղծ-երգահան Նահապետ Քուչակին, որ նրա մասին հորինել է բազմաթիվ զրույցներ ու առասպելներ: Ստորև ներկայացնում ենք այդ զրույցներից մեկը:

ՀԵՔԻԱԹ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Ըստ Վ. Սանթրյանի

Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա...
Ե. ՉԱՐԵՆՑ

Սուգ էր Ստամբուլ քաղաքում: Մեծ սուլթանը երեք օր էր՝ քուն ու դադար կորցրած՝ բերանը պատառ չէր դրել: Երեք օր էր՝ նա չափում էր իր սուլթանական հարկի երկարությունն ու լայնությունը, բայց սփոփանք չէր գտնում: Նրա սրտից արյուն էր կաթում:

Մեծ սուլթանի կնոջը՝ Թագուհուն, այդ օրերին դժբախտություն էր պատահել: Նրա զավակը, որ ապագա գահակալն էր, հիվանդացել ու կաթ չէր ուտում, իսկ Թագուհին վշտից քարացել էր. ո՛չ խոսում էր, ո՛չ սնվում, ո՛չ ուշադրություն դարձնում ամուսնուն ու պալատականներին, նույնիսկ՝ երեխային: Նա խոր ընդարմացման մեջ էր: Հեքիմները նախ փորձել էին բուժել, ապա խոստովանել էին, որ իրենք անզոր են: Մորը և զավակին մահ էր սպառնում: Սուլթանի հրավիրած իմաստուններն ասել էին.

- Տիեզերքի՛ արեգակ, հրավիրի՛ր աշուղներին ու բանաստեղծներին: Թագուհին կուրախանա, կարտասվի և կսթափվի: Միայն մա՛յրը կարող է փրկել գահաժառանգին, նախ մո՛ր մասին պիտի մտածենք:

Սուլթանը կատարեց իմաստունների խորհուրդը, սակայն դա՛ էլ օգուտ չտվեց:

Յուրաքանչյուր կես ժամը մեկ սողալով ներս ու դուրս անող պալատականները բարի լուր չէին բերում: Հրամայված էր՝ եթե հրաշք տեղի ունենար, ուրախության աղաղակով պիտի ներս մտնեին, ճչոցով, ոտքի վրա: Բայց... սողում էին, ու աղաղակ չկար:

Իսկ մոլլաները բարձրացել էին մզկիթների մինարեներն ու աղաղակում էին առ աստված, փրկություն աղերսում Թագուհու ու գահաժառանգի համար:

Մութ է, կորել է արևը: Լուսինը երևաց մի պահ ու անցավ ամպի տակ: Խավարում մնացին մինարեները, մոլլաները: Սուլթանի համար ո՛չ արև կա, ո՛չ լուսին: Նա դեռ չափում է իր հարկի լայնությունն ու երկարությունը:

Ծափ զարկեց: Զորեքթաթ ներս սողաց վեզիրը:

- Հը՞, ի՞նչ կա:

- Հուսադրիչ լուր ունեմ, տե՛ր իմ: Ասում են՝ մի աշուղ կա հայոց աշխարհում, աշուղ Նահապետ Քուչակը: Նրա երգը, ասում են, սպեղանի է:

Սուլթանի աչքերում հույսի կայծ երևաց:

- Գտե՛ք ու բերե՛ք, - հրամայեց:
- Մարդ եմ ուղարկել, տե՛ր իմ:
- Մարդ եմ ուղարկել, տե՛ր իմ, - սուլթանը ծաղրաբար կրկնեց վեզիրի ասածը, - գուցե զե՞նք, գուցե զո՞րք ուղարկեիր, գուցե սպառնայի՞ր, որ եթե չգաս, գլուխդ կթռցնենք: Հը՞, հիմա՛ր:
- Ո՛չ, տե՛ր իմ, ո՛չ: Խնդրագիր եմ ուղարկել: Բանաստեղծի դեմ չի կարելի սուր ճոճել:
- Փա՛ռք աստծո, մի խելացի բան ասացիր: Կորի՛ր աչքիցս:
Այդ նույն պահին Վասպուրականի Խառակոնիս գյուղում Նահապետ Քուչակն իր այգին էր ջրում, բահով փոխում ջրի ճամփան:
Սուլթանի բանագնացները գտան նրան ու աղաչանքով հրավիրեցին պալատ՝ բուժելու թագուհուն: Ու երգեց Քուչակը թագուհու համար, այնպես երգեց իր կախարդական տաղերը, որ թագուհին անզուսպ հեկեկաց, ու արցունքի հետ նրա մարմնից դուրս եկան ցավերը: Թագուհին ու թագաժառանգը փրկված էին:
Բազմել է սուլթանը ոսկեհուռ գահին, կողքին նստեցրել հայ տաղասացին: Գահից երկու կանգուն ներքև չոքած են նազիր ու վեզիր:
- Ի՞նչ գանձեր ես ուզում, բանաստե՛ղծ, ի՞նչ ցանկություններ ունես, - Քուչակին դիմեց սուլթանը, - թագավորությանս կե՞սը, ոսկի ու արծա՞թ, քարե՞ր թանկագին: Լեզուդ ինչ պատի, քոնն է:
Բանաստեղծը ոչինչ չխնդրեց: Բայց երբ սուլթանը շատ ստիպեց, ասաց.
- Ստամբուլից մինչև Խառակոնիս կառուցել տուր յոթ եկեղեցի և յոթ կամուրջ:
Ասում են՝ յոթերորդ եկեղեցու բակում այժմ էլ խաղաղ ննջում է միջնադարի անմահ բանաստեղծ Նահապետ Քուչակը:

ՊԼԱՆ

1. Սուգ՝ Ստամբուլ քաղաքում:
2. Թագուհին և գահաժառանգին փրկելու անօգուտ ջանքեր:
3. Քուչակը հրավիրվում է պալատ:
4. Երգի ուժը:
5. Յոթ եկեղեցի և յոթ կամուրջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

սուլթանական հարկ, արյունն կաթել, ապագա գահակալ, վշտից քարանալ, խոր ընդարմացում, մոլլա, մինարե, չորեքթաթ սողալ, խնդրագիր, Վասպուրականի Խառակոնիս գյուղ, բանագնացներ, կախարդական տաղեր, անզուսպ հեկեկալ, ոսկեհուռ գահ, տաղասաց:

2. Դասարանի համար ընթերցել Նահապետ Քուչակի տաղերից մի քանիսը:

ԳՈՐԾՍ ՄՆԱ ՀԻՇԱՏԱԿՈՂ...

Ըստ Գևորգ Դարբինյանի

Անիի բազում եկեղեցիների և ապարանքների ճարտարապետ Տրդատը ժամանել էր Բյուզանդիայի մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիս: Ամեն ինչ այստեղ նոր էր նրա համար և հետաքրքիր: Շրջում էր քաղաքում, ուսումնասիրում յուրաքանչյուր կառույց: Քարե պալիսպներով, բարձր աշտարակներով, հոյակերտ տաճարներով, հաղթական կամարներով, շատրվաններով ու պուրակներով այս քաղաքը մի սքանչելի աշխարհ էր ճարտարապետի համար:

Սակայն ուր էլ գնար, որքան էլ զարմանալի բաներ տեսներ, ձգտում էր կրկին ու կրկին լինել Ավգուստեոն կոչվող հրապարակում, ուր արծաթի և ոսկու մեջ շողշողում էր Բյուզանդիայի փառքը՝ Սուրբ Սոֆյայի տաճարը: Կոստանդնուպոլիս գալուց ի վեր Տրդատը քանի՜ անգամներ էր կանգնել տաճարի առջև, դիտել որմ առ որմ, մուտք առ մուտք, հայացքով չափել բարձրությունը և ցավով նայել այն պարապությանը, ուր մի ժամանակ եղել էր գմբեթը: Ասես գլխատվել էր հրաշակերտը, որ ոչ հեռավոր անցյալում համարվում էր նոր աշխարհի հրաշալիքներից մեկը: Գմբեթը, որ տաճարի պսակն էր, կառուցումից երկու տասնամյակ անց՝ Տիրոջ 558 թվականին փլվեց ուժեղ երկրաշարժից: Այդպես մնաց տարիներ, և ոչ մի ճարտարապետ համձն չառավ վերաշինել:

Շոգ միջօրե էր: Տրդատը, կանգնած տաճարի մոտ, մտքում չափում էր փլված գմբեթի մեծությունը և հաշվարկներ անում, երբ նրան մոտեցավ շքեղ համդերձներով պալատական մի պաշտոնյա:

- Տաճարո՞վ է հետաքրքրվում Անի մեծահամբավ քաղաքի արքունի ճարտարապետ Տրդատը, - հարցրեց նա:

Տրդատը գլխով արեց:

- Եվ ի՞նչ է մտածում տաճարի մասին ճարտարապետը, - շարունակեց պաշտոնյան:

- Տաճարը հոյակապ է և արժանի իր փառքին: Ափսոս, որ զրկվել է պսակ-գմբեթից:

- Դա ցավ է օգոստոսափառ կայսրի սրտին: Փլուզումից հետո բազմիցս հրավերներ է հղել շատ անվանի ճարտարապետների, որ ձեռնամուխ լինեն տաճարի վերականգնմանը, սակայն ապարդյուն: Գմբեթի վիթխարի չափերը վախեցնում են բոլորին:

- Հարկ չկա վախենալու վիթխարի չափերից: Անհրաժեշտ է պարզել փլուզման պատճառը, որ եղել է սխալ հաշվարկների հետևանքով:

- Չլինի՞ ցանկանում ես համձն առնել կառուցումը:

- Վախ չունեմ նման մտքից:

Գմբեթի վերակառուցման գործը համձնարարվեց հայ ճարտարապետին:

Ողջ գիշեր վառվում էր ճրագը Տրդատի գրակալին: Գծում էր, ջնջում, հաշվարկներ կատարում: Ի վերջո որոշեց օգտվել հայկական շինարվեստի փորձից ու ավանդներից: Ոչինչ, թող մի քիչ էլ հայանա տաճարը:

Ամիսների երկար տքնանքից հետո որմերին ձուլված չորս հզոր մույթերի վրա ճարտարապետը կանգնեցրեց գմբեթը՝ նախկինից ավելի ամուր ու գեղեցիկ: Եվ որպես հայ մտքի հաղթանակ՝ գմբեթն օղակող քարե գոտու վրա հաստատուն տառերով փորագրեց՝ Տրդատ:

Մեծ տոնահանդես էր Կոստանդնուպոլսում. Հասել էր օրը տաճարի վերօծման: Բոլորը շտապում էին Ավգուստեոն հրապարակ՝ մասնակցելու հանդիսավոր արարողությանը: Առջևից ընթանում էր կայսերական շքախումբը, որն արևի ցոլքերի ներքո շողշողում էր իր ողջ շքեղությամբ:

Տաճարի մուտքի մոտ կանգնած պատրիարքը խաչակնքեց կայսրին և կայսրուհուն ու ներս հրավիրեց: Քաղցրաբարբառ հնչեց սաղմոսերգը, և սկսվեց տաճարի օծման ծիսակարգը: Տրդատ ճարտարապետը, պատվավոր հյուրերին հատկացված տեղում կանգնած, դիտում էր այդ ամենը: Քիչ է ասել, թե ուրախ էր: Գործը հասցրել էր հաղթական ավարտին:

Հաջորդ օրը Տրդատին իր ապարանքը հրավիրեց արքունի դիվանապետը և հաղորդելով կայսեր ողջույնը՝ ադամանդակուռ մի շքեղ մատանի նվիրեց:

- Օգոստոսափառ կայսեր գոհունակությունն եմ հայտնում՝ սուրբ տաճարը նախկինից ավելի շքեղ դարձնելու համար: Եվ եթե Արմենիայի մեծանուն ճարտարապետը ցանկանա մնալ կայսեր մայրաքաղաքում, նրան կմատուցվեն բոլոր պատիվները, կարժանանա տիտղոսի, փառքի, հարստության և հնարավորություն կունենա իր մտքի թռիչքին վայել կառույցներ կերտելու:

Առաջարկը շատ պարզորոշ էր: Տրդատը թեթևակի խոնարհվեց և բարեկրթորեն պատասխանեց.

- Պատվարժան տեր դիվանապետին խնդրում եմ խորին շնորհակալություն հայտնել մեծազոր կայսեր՝ ինձ առաջարկվող մեծարանքների համար: Սակայն պետք է մերժեմ, որովհետև ինձ է սպասում անավարտ տաճարը Անի քաղաքիս: Շատ հաճելի է ինձ մատուցվող պատիվը, բայց առավել թանկ է հայրենիքս: Դեռ պիտի պայծառացնեմ Անի տիեզերահռչակ քաղաքս՝ ի պարծանս Հայ երկրի:

Երկու օր անց Տրդատը ուղևորվեց հայրենիք:

ՊԼԱՆ

1. Տրդատ ճարտարապետը Կոստանդնուպոլսում:
2. Սուրբ Սոֆյայի տաճարը:
3. Գմբեթի վերականգնումը Տրդատի կողմից:
4. Օծման արարողություն:
5. Շռայլ առաջարկ:
6. Անին կանչում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Բյուզանդիա, Կոստանդնուպոլիս, Սուրբ Սոֆյայի տաճար, որմ առ որմ, օգոստոսափառ կայսր, հայկական շինարվեստի փորձ և ավանդներ, երկար տքնանք, հանդիսավոր արարողություն, պատրիարք, սաղմոսերգ, տիեզերահռչակ քաղաք:

*2. Բացատրել **որմ** և **մույթ** բառերի իմաստը:*

643 Թվականն էր: Գարունն արդեն լիիրավ կերպով մտել էր իր պարտականությունների մեջ, և Վաղարշապատում նույնիսկ շոգ էր:

Մայր տաճարի դիմաց գտնվող վեհարանի սենյակներից մեկում, սեղանին փռված թղթերի վրա հակված, զրուցում էին երեք մարդ: Մեկը բարձրահասակ էր, կորովի, խորաթափանց կապույտ աչքերով: Դա հայոց Ներսես Երրորդ Իշխանցի կաթողիկոսն էր: Մյուսը, որ միջահասակից քիչ բարձր անձնավորություն էր, կաթողիկոսի տեղապահ Անաստաս Ակոռեցին էր: Ի տարբերություն այս երկու վեղարավոր անձանց՝ երրորդը աշխարհական էր՝ երկար մազերով, խելացի կրակոտ աչքերով և յուրօրինակ հագուստով: Դա Հայաստան աշխարհում ճանաչված ճարտարապետ և շինարար Վրթանես վարպետն էր՝ հայտնի իր կառուցողական արվեստով, քարին շունչ հաղորդելու բացառիկ ունակությամբ:

- Իմ սրտին չափազանց հաճո էր քո համձնարարությունը, վեհափա՛ռ տեր, - խոսեց վարպետը, - և աշխատեցի այնպիսի նախագիծ ներկայացնել, որ ըստ նրա կառուցված տաճարը նման չլինի մինչ այժմ եղածներին:

- Կառուցվելիք տաճարի նախագիծը ինձ ևս հաճելի ու վեհաշուք երևեցավ, որդյա՛կ, - ասաց վեհը, - վստահ եմ, որ Մասիսների համայնապատկերի վրա այն առավել վսեմ և պերճաշուք կլինի: Որքա՞ն ժամանակ է պետք կառույցն ավարտին հասցնելու համար:

- Տասը կլոր տարի, վեհափա՛ռ, եթե ինձ տրամադրեք բանվորներ և անհրաժեշտ շինանյութ:

- Ես արդեն պատրաստել եմ նամակներ մեր նախարարներին և երևելիներին ուղարկելու համար և խնդրել, որ օգնեն իրենց ուժերի ներածին չափով: Անհո՛գ եղիր: Այժմ գնա՛ խաղաղությամբ և սպասի՛ր իմ կանչին:

Նույն օրը երեկոյան Վաղարշապատից Հայաստան աշխարհի տարբեր ծայրերը սլացան կաթողիկոսի բանբերները՝ նախարարներին հասցնելու նորին սուրբ օծության նամակները:.

Ներսես Երրորդ Իշխանցի կաթողիկոսը նախապես շրջել էր ու ընտրել նմանը չունեցող տաճարի տեղը: Դարեր առաջ Վաղարշապատից 3 կմ հարավ ընկած հարթ տարածության վրա կանգնած էր հեթանոս հայերի Տիր աստծո մեհյանը: Տասը դար էր, ինչ այն փլատակվել էր, և պահպանվել էր միայն հատակագիծը: Բայց որպեսզի իսպառ ջնջվեին հեթանոսության հետքերը, դրա վրա հարկավոր էր կառուցել նորը՝ քրիստոնեականը: Այս նկատառումով, ինչպես նաև տեղանքի բացառիկ գեղեցկության համար կաթողիկոսն ընտրեց այդ տարածքը:

Զանցած մեկ ամիս՝ սկսվեց Սուրբ Գրիգոր եկեղեցու կառուցումը: Դա նմանը չունեցող եռահարկ, հետզհետե նվազող տրամագծերով գմբեթավոր հորինվածք էր՝ հինգ մուտքերով, բոլորեքյան միմյանց շատ մոտիկ պատուհաններով: Ճարտարապետի մտքի թռիչքը, հաշվարկներն ապշեցնում էին իրենց ճշտությամբ, տաճարի արտաքինը՝ շքեղությամբ:

Տասը տարի ընդարձակ շինհրապարակում աշխատում էին հազարավոր մարդիկ, քարգործ վարպետներ: Ո՛չ Արարատյան դաշտի անտանելի շոգը, ո՛չ դաժան ձմեռը, ո՛չ բուքն ու անձրևը չէին վհատեցնում նրանց: Վարպետների հրաշագործ ձեռքերից ծնվում էին քարե ժանյակներ, արծիվներ, նուռ ու խաղող, տերև ու ոստ: Իսկ շրջակա գյուղերի ու քաղաքների բնակիչները հայ մեծագործ վարպետներին սալերով ուտելիք ու քաղցրահյութ գինի էին մատակարարում:

Վերջապես 652 թվականի սեպտեմբերյան մի օր տաճարի շինարարությունն ավարտվեց: Շրջակայքում և դեպի Վաղարշապատ տանող ճանապարհներին ասեղ գցելու տեղ չկար: Գալիս էին սայլերով, ձիով, ոտքով, գալիս մատաղացու ոչխարներով, երինջով ու աքաղաղով: Գալիս էին երգով ու նվագով, բամբիռով ու ծնծղայով, զուռնա-դհոլով ու պարկապզուկով: Ահա և ժամանեց հոգևոր դասը՝ խաչերով ու խաչվառներով, առ Աստված ուղղված օրհներգերով: Սկսվեց տաճարի օծման արարողությունը: Գմբեթի տակ ելևէջեցին անուշ պատարագի մեղեդիները, տարածվեց խնկի մաքրագործող բուրմունքը:

Այսպես հիմնադրվեց Սուրբ Գրիգոր տաճարը, որը, հայտնի չէ ինչու, հետագայում վերանվանվեց «Զվարթնոց»:

Ժողովրդական ավանդությունն ասում է, որ տաճարի գմբեթի ու առհասարակ ողջ կառույցի ծանրությունն իրենց վրա կրող մույթերը եղբայրներ են եղել: Տարիներ ու դարեր նրանք սրբությամբ պահում էին տաճարը: Բայց մի օր հոգնեցին, և յուրաքանչյուրը մտքում ասաց. «Ի՞նչ կլինի, եթե մի փոքր հանգստանամ: Երեք եղբայրնե՛րս թող կրեն ծանրությունը»: Այսպես մտածեցին և իրարից թաքուն առանձին-առանձին բեռնաթափվեցին, հանգստացան: Եվ քանի որ եղբայրներն արդեն միասնական ու ազնիվ չէին միմյանց նկատմամբ, զարմանահրաշ տաճարը կործանվեց:

ՊԼԱՆ

1. Երեք անվանի այր:
2. Ճարտարապետի ներկայացրած նախագծերը:
3. Տաճարի կառուցման վայրը:
4. Սուրբ Գրիգոր տաճարի շինարարությունը:
5. Համաժողովրդական տոնախմբություն:
6. Ժողովրդական ավանդություն Զվարթնոցի մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

վեհարան, խորաթափանց կապույտ աչքեր, միջահասակից քիչ բարձր ամրակազմ անձնավորություն, վեղարավոր, աշխարհական, խելացի կրակոտ աչքեր, կառուցողական արվեստ, բացառիկ ունակություն, բանբեր, հետզհետե նվազող տրամագիծ, քարգործ վարպետներ, քարե ժանյակներ, բամբիռ ու ծնծղա, խաչեր ու խաչվառներ, օծման արարողություն, խնկի մաքրագործող բուրմունք, մույթ:

Հայոց աշխարհում բազում ավերածություններ կատարելուց հետո պարսից Շապուհ արքան շարժվեց դեպի Արտագերս ամրոցը, ուր սակավաթիվ զորքերով փակվել էր Փառանձեմ թագուհին: Շապուհն ընչաքաղց էր, բայց այս անգամ նրան հրապուրում էին ոչ այնքան արքայական գանձերը, որքան հայոց անկոտրում ոգին: «Նրան գերելով ես ծնկի կբերեմ այս համառ ժողովրդին և կհասնեմ կատարյալ հաղթանակի», - մտածում էր նա: Բայց ժայռեղեն բարձունքներին թիկնած Արտագերսն անառիկ էր: Տասներեք ամիսների համառ պաշարումը ոչինչ չէր տվել, և Շապուհը հուսախաբ էր: Նրա զորական ուժը փշրվում, խորտակվում էր Արտագերսի անսասան պարիսպների վրա: Փառանձեմ թագուհին, որ պատմության մեջ հայտնի է տղամարդուն բնորոշ ամուր կամքով ու խիզախությամբ, անձամբ էր ղեկավարում ամրոցի պաշտպանությունը: Շապուհն այդպես էլ ամոթահար կհեռանար բերդապարիսպներից, եթե դավաճան հայր Մարդպետը ցույց չտար Արտագերս տանող գաղտնի ճանապարհները:

Անառիկ ամրոցն ընկավ: Գերելով Փառանձեմ թագուհուն՝ պարսիկ սպաները նրան առաջնորդեցին բերդի դիմաց տարածված հարթավայրը, ուր ծանր վիշապի նման տարածվել էր թշնամին: Կենտրոնում աչքի էր զարնում ասյուծանիշ դրոշով մի շքեղ վրան:

- Աճա և արքայից արքայի վրանը, - ասաց Փառանձեմին ուղեկցող սպան:

Թագուհու շնչառությունն արագացավ. նա աչքերը ակամա փակեց: Ուրեմն ինքը հիմա պիտի հանդիպի ատելի Շապուհին, այն մարդուն, որը Արշակ թագավորին բանտարկեց Անհուշ բերդում, մորթազերծ արեց սպարապետ Վասակ Մամիկոնյանին, այնքա՜ն արյունահեղությունների պատճառ դարձավ:

Մինչ դառը հիշողություններով տարված Փառանձեմին կառաջնորդեին արքայի մոտ, վերջինս ինքը դուրս եկավ: Նա ոսկի ու արծաթ թելերով բանված թիկնոցով էր, ադամանդակուռ գայիսոնով, գլխին՝ գոհարազարդ թագ: Շապուհը չարախինդ նայեց Փառանձեմին և սպառնալից առաջ գալով՝ ասաց.

- Անզգա՛մ կին, չկամեցար գալ ինքնակամ, եկար որպես գերի և ստրուկ:

- Գերի և ստրո՞ւկ: Հայոց թագուհին երբեք ստրուկ չի եղել և չի՛ լինի:

- Քո համառության համար դու կհատուցես, անառա՛կ, - մռնչաց Շապուհը:

Այս խոսքերի վրա կատարվեց անսպասելին. շրջապատողները չհասկացան, թե Հայոց թագուհին ինչպես վիրավոր հովազի պես մի թռիչքով խոյացավ ու Շապուհի դեմքին իջեցրեց մի շառաչուն ապտակ:

- Ա՛ռ, լի՛րբ և խաբեբա՛, - կատաղած բղավեց նա, - կոչվում ես արքա, բայց չես կարող վայելուչ խոսել կնոջ հետ:

Ասաց ու թքեց Շապուհի երեսին: Այդ հանդգնությունն այնքան անակնկալ էր, որ արքայից արքան առաջին պահ շփոթվեց, ձեռքն ակամա տարավ դեպի երեսը և ճղճղաց.

- Ցի՛ց համնել անառակին, ցի՛ց համնել:

Թիկնապահները վրա թափվեցին, բռնեցին թագուհու ձեռքերն ու տարան: Փառանձեմը քայլում էր հպարտ, գեղեցիկ գլուխը բարձր բռնած:

- Թողե՛ք ինձ, - դիմեց նա պարսիկ զինվորներին, - ես կարող եմ քայլել առանց ձեր օգնության:

Նրա ձայնն այնքան տիրական էր, որ պարսիկներն ակամա ենթարկվեցին:

Ոլոր-մոլոր լեռնային ուղին իջնում էր դեպի Արաքսի ափը: Քիչ անց հասան անդընդահուն գետի եզերքը, որից սկսվում էր անհատակ մի վիհ: Խորխորատի եզրին ցցված էր մի հսկայաբեկոր ժայռ: Թագուհին ասաց.

- Պարսի՛ց սպաներ, իմ զորավարը գերեց ձեր արքայի կանանոցը և պատվով ուղարկեց Տիզբոն: Ես ձեզնից այդպիսի բան չե՛մ խնդրում: Բայց թո՛ւյլ տվեք մահից առաջ աղոթել:

- Աղոթի՛ր, - համաձայնեց սպան, որ ինքն էլ ուզում էր երկար քայլելուց հետո մի փոքր հանգստանալ:

Փառանձեմը բարձրացավ ժայռի վրա, ծնկի եկավ և սկսեց աղոթք մրմնջալ: Պարսիկ սպաները երեսները դարձրին, որ նրան չխանգարեն: Թագուհին ավարտեց աղոթքը, ապա մեկեն ելավ, խրոխտ կանգնեց և աչքերից կրակներ ցայտեցնելով՝ գոչեց.

- Հայտնեցե՛ք ձեր օձակերպ արքային, որ Հայոց թագուհին չի՛ լինի գերի:

Սպաները զարմացած հետ նայեցին ակնթարթորեն և տեսան, թե ինչպես գերի թագուհին, թևերը պարզած, վիթխարի սև թռչունի պես գահավիժեց անդունդը:

ՊԼԱՆ

1. Դեպի Արտագերս:
2. Անառիկ ամրոցը:
3. Փառանձեմ թագուհին՝ գերի:
4. Շապուհի և Փառանձեմի հանդիպումը:
5. Հայոց թագուհին չի՛ լինի գերի:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

եղեռնագործություններ, սակավաթիվ զորքեր, ընչաքաղց, արքայական գանձեր, անկոտրում դղյակ, ժայռեղեն բարձունքներին թիկնած ամրոց, համառ պաշարում, անսասան ապառաժներ, տղամարդուն բնորոշ ամուր կամք, ծանր վիշապի նման, առյուծանիշ դրոշով մի չքեղ վրան, մորթազերծ, դառը հիշողություններ, ոսկի և արծաթ թելերով բանված թիկնոց, ադամանդակուռ գայիսոն, գոհարազարդ թագ, անառակ, լիրբ, խաբեբա, վայելուչ խոսել, անհատակ վիհ, խորխորատ, սև թռչունի պես:

2. Հանձնարարել աշակերտներին ընտրել վերնագիր:

Թիկնապահները վրա թափվեցին, բռնեցին Թագուհու ձեռքերն ու տարան: Փառանձեմը քայլում էր հպարտ, գեղեցիկ գլուխը բարձր բռնած:

– Թողե՛ք ինձ, – դիմեց նա պարսիկ զինվորներին, – ես կարող եմ քայլել առանց ձեր օգնության:

Նրա ձայնն այնքան տիրական էր, որ պարսիկներն ակամա ենթարկվեցին:

Ոլոր-մոլոր լեռնային ուղին իջնում էր դեպի Արաքսի ափը: Քիչ անց հասան անդընդախոր գետի եզերքը, որից սկսվում էր անհատակ մի վիհ: Խորխորատի եզրին ցցված էր մի հսկայաբեկոր ժայռ: Թագուհին ասաց.

– Պարսի՛ց սպաներ, իմ զորավարը գերեց ձեր արքայի կանանոցը և պատվով ուղարկեց Տիզբոն: Ես ձեզնից այդպիսի բան չե՛մ խնդրում: Բայց թո՛ւյլ տվեք մահից առաջ աղոթել:

– Աղոթի՛ր, – համաձայնեց սպան, որ ինքն էլ ուզում էր երկար քայլելուց հետո մի փոքր հանգստանալ:

Փառանձեմը բարձրացավ ժայռի վրա, ծնկի եկավ և սկսեց աղոթք մրմնջալ: Պարսիկ սպաները երեսները դարձրին, որ նրան չխանգարեն: Թագուհին ավարտեց աղոթքը, ապա մեկեն ելավ, խրոխտ կանգնեց և աչքերից կրակներ ցայտեցնելով՝ գոչեց.

– Հայտնեցե՛ք ձեր օձակերպ արքային, որ Հայոց Թագուհին չի՛ լինի գերի:

Սպաները զարմացած հետ նայեցին անթարթորեն և տեսան, թե ինչպես գերի Թագուհին, թևերը պարզած, վիթխարի սև թռչունի պես գահավիժեց անդունդը:

ՊԼԱՆ

1. Դեպի Արտագերս:
2. Անառիկ ամրոցը:
3. Փառանձեմ Թագուհին՝ գերի:
4. Շապուհի և Փառանձեմի հանդիպումը:
5. Հայոց Թագուհին չի՛ լինի գերի:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

եղեռնագործություններ, սակավաթիվ զորքեր, ընչաքաղց, արքայական գանձեր, անկոտրում դժխո, ժայռեղեն բարձունքներին թիկնած ամրոց, համառ պաշարում, անսասան ապառաժներ, տղամարդուն բնորոշ ամուր կամք, ծանր վիշապի նման, առյուծանիշ դրոշով մի չքեղ վրան, մորթազերծ, դառը հիշողություններ, ոսկի և արծաթ թելերով բանված թիկնոց, ադամանդակուռ գայիսոն, գոհարազարդ թագ, անառակ, լիրբ, խաբեբա, վայելուչ խոսել, անհատակ վիհ, խորխորատ, սև թռչունի պես:

2. Հանձնարարել աշակերտներին ընտրել վերնագիր:

ԵՐՋԱՆԻԿ ԱՐՔԱՅԱԶՆԸ

Ըստ Օսկար Ուայլդի

Քաղաքից վեր՝ երկնասլաց պատվանդանի վրա, կանգնած էր Երջանիկ արքայազնի արձանը՝ ոտքից գլուխ պատված ոսկու թերթերով, աչքերի տեղ՝ փայլուն շափյուղաներ, սուսերի երախակալին՝ շողշողուն կարմիր սուտակ:

Մի գիշեր քաղաքի վրայով թռչում էր ծիծեռնակը: Նրա ընկերները վեց շաբաթ առաջ չվել էին Եգիպտոս, իսկ ծիծեռնակը հետ էր մնացել, որովհետև սիրահարված էր մի շատ գեղեցիկ եղեգնի: Ընկերներին հասնելու համար նա թռավ ամբողջ օրը և գիշերը որոշեց մնալ քաղաքում: Թառեց Երջանիկ արքայազնի ոտքերի մոտ ու կամեցավ քուն մտնել: Հենց այն է՝ գլուխը թևի տակ պետք է դներ, ջրի մի կաթիլ ընկավ վրան: Ապա երկրորդը, երրորդը: «Այ քեզ բա՜ն, - մտածեց ծիծեռնակը, - երկնքում ամպի կտոր չկա, աստղերն էլ պարզ են ու պայծառ, բայց արի ու տես, որ անձրևում է»: Թռչնակը վեր նայեց ու ի՜նչ տեսավ. Երջանիկ արքայազնի աչքերը լի էին արցունքով, և կաթիլները գլորվում էին ոսկյա այտերն ի վար:

- Ինչու՞ ես լալիս, արքայա՛զն, - ասաց նա, - տե՛ս, ոտքից գլուխ թրջեցիր ինձ:

- Երբ ես ողջ էի և մարդկային սիրտ ունեի, - պատասխանեց արքայազնը, - չգիտեի՝ ինչ բան է արտասուքը, քանի որ ապրում էի պալատում, ուր վշտի մուտքն արգելված էր: Չգիտեի՝ ինչ կա պալատի պատերից դուրս: Իսկ այժմ, երբ մեռած եմ, ինձ կանգնեցրել են այստեղ, որտեղից պարզ երևում է մարդկանց թշվառությունը: Ու թեև կապարե սիրտ ունեմ, դարձյալ անկարող եմ զսպել արցունքներս: Այս պահին, օրինակ, այնտեղ՝ հեռվում, մի աղքատիկ տնակ եմ տեսնում: Բաց պատուհանից երևում է սեղանի մոտ նստած մի կին, որի դեմքը խորշոմապատ է ու դալուկ, իսկ ձեռքերը կոշտացած են և ասեղներով ծակծկված: Նա ծաղիկներ է ասեղնագործում թագուհու զգեստի վրա: Սենյակի մի անկյունում պառկած է այդ կնոջ հիվանդ տղան: Նա ջերմություն ունի, և սիրտը նարինջ է ուզում: Բայց մայրը ջրից բացի ոչինչ չունի, և տղան լաց է լինում: Ծիծեռնա՛կ, փոքրի՛կ ծիծեռնակ, սուսերիս երախակալի սուտակը չե՞ս տանի նրանց: Իմ ոտքերը գամված են պատվանդանին, և ես տեղիցս շարժվել չեմ կարող:

- Ի՜նչ ես ասում, ինձ սպասում են Եգիպտոսում, և ես շտապում եմ, - ասաց ծիծեռնակը:

- Ծիծեռնա՛կ, փոքրի՛կ ծիծեռնակ, գեթ այս գիշեր մնա՛ ինձ հետ, աղաչում եմ, մնա՛ ու դարձի՛ր իմ սուրհանդակը: Տղան այնքա՜ն ծարավ է, ու մայրն այնքա՜ն տխուր:

- Թեև այստեղ սաստիկ ցուրտ է, բայց քեզ չեմ մերժի, մի գիշեր կմնամ ու կլինեմ քո սուրհանդակը, - հառաչեց բարեսիրտ թռչնակը:

Նա հանեց արքայազնի սուսերի խոշոր սուտակն ու կտուցն առած ճախրեց, հասավ աղքատիկ տանը: Ներս թռավ, սուտակը դրեց կնոջ մատնոցի կողքին ու հետ եկավ Երջանիկ արքայազնի մոտ, պատմեց ամեն ինչ ու ավելացրեց.

- Շատ տարօրինակ է, որ այս ցրտին չեմ մրսում:

- Պատճառն այն է, - հրճվանքով ասաց արքայազնը, - որ բարի գործ ես կատարել:

Հաջորդ գիշեր, երբ լիալուսին էր, և ծիծեռնակը պատրաստվում էր թռչել Եգիպտոս, արքայազնն ասաց.

- Ծիծեռնա՛կ, փոքրի՛կ ծիծեռնակ, խնդրում եմ, այս գիշեր էլ մնա ինձ հետ: Քաղաքի ծայրին՝ ձեղնահարկում, մի երիտասարդ եմ տեսնում: Նա, նստած սեղանի մոտ, ուզում է աշխատել, բայց չի կարողանում, որովհետև ցրտից սառել է, քաղցն էլ մյուս կողմից է տանջում: Կտուցով հանի՛ր աչքերիս շափյուղաներից մեկն ու տա՛ր այդ տղային:

- Ձմեռը եկավ արդեն, - պատասխանեց ծիծեռնակը, - և ուր որ է պաղ ձյուն կգա: Այնինչ Եգիպտոսում արևը տաքացնում է կանաչ արմավենիներին, իսկ կոկորդիլոսները ձգվել են տիղմի մեջ ու ծուլորեն նայում են իրենց շուրջը: Ընկերներս բույն են հյուսել հիմա և ուրախ թռչկոտում են: Սիրելի՛ արքայազն, ես այլևս անկարող եմ մնալ այս ցուրտ քաղաքում:

Բայց տեսնելով Երջանիկ արքայազնի՝ արցունքով լցուն աչքերը՝ բարի ծիծեռնակը չդիմացավ և այս անգամ էլ կատարեց նրա խնդրանքը:

Երրորդ գիշերը եկավ հրաժեշտ տալու և վերջապես ուղղություն վերցնելու դեպի տաք Եգիպտոս: Բայց արքայազնը դարձյալ խնդրեց մնալ և իր մյուս աչքի շափյուղան հասցնել դժբախտության մեջ ընկած մի աղջկա:

- Այժմ դու կույր ես, - ասաց ծիծեռնակը՝ արքայազնի հանձնարարությունը կատարելուց հետո, - ինչպե՞ս կարող եմ այսուհետև քեզ մենակ թողնել: Այլևս ոչ մի Եգիպտոս էլ չեմ թռչի և ընդմիշտ կմնամ քեզ հետ:

Եվ մնաց: Արքայազնը խնդրեց ծիծեռնակին թռչել քաղաքի վրայով և գալ, տեսածի մասին պատմել իրեն: Եվ երբ իմացավ, որ նա տեսել է սովահար երեխաների, անօթևան որբուկների, մուրացիկների, ասաց.

- Ծիծեռնա՛կ, փոքրի՛կ ծիծեռնակ, ես պատված եմ բարձրորակ ոսկով: Թերթ առ թերթ պոկի՛ր դրանք ու տա՛ր աղքատներին, կարոտյալներին, տնանկներին:

Եվ ծիծեռնակը թերթ առ թերթ պոկեց ոսկին, մինչև որ Երջանիկ արքայազնը խամրեց ու գորշ տեսք ստացավ: Բարի թռչնակը թերթ առ թերթ ոսկին հասցրեց բոլոր նրանց, ովքեր քաղցած էին ու սառած:

Մի օր էլ առատ ձյուն տեղաց՝ իր հետ բերելով սառնամանիք ու բուք: Խեղճ, փոքրիկ ծիծեռնակն այլևս անկարող էր դիմանալ ցրտին, բայց նա ի զորու չէր լքել արքայազնին, քանի որ շատ էր սիրում նրան: Զգաց, որ մեռնում է: Թառեց արքայազնի դեմքին, համբուրեց սև ակնախոռոչները և անշնչացած ընկավ նրա ոտքերի մոտ: Այդ պահին արձանի ներսից արտասովոր ճարճատյուն լսվեց, կարծես ինչ-որ բան պայթեց: Արքայազնի կապարե սիրտը ճաքեց և երկու կես եղավ: Իսկապես աշխարհը ցուրտ էր...

ՊԼԱՆ

1. Երջանիկ արքայազնի արձանը:
2. Ճանապարհորդ ծիծեռնակը:
3. Երջանիկ արքայազնի վիշտը և խնդրանքը:
4. Բարի ծիծեռնակը:
5. Երկու անձնազոհ սիրտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

երկնագույն պատվանդան, շափյուղա, երախակալ, սուտակ, կապարե սիրտ, խորշոմապատ ու դալուկ դեմք, լիալուսին, ձկնահարկ, կանաչ արմավենի, տիղմ, սովահար երեխաներ, անօթևան որբուկներ, կարոտյալ, տնանկ, և ակնախոռոչներ, արտասովոր ճարճատյուն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Օսկար Ուայլդ՝ անգլիացի նշանավոր գրող և քննադատ:*

ՎԱՆԴԱԿՈՒՄ ԵՐԳԵԼ ՉԻ ԼԻՆԻ

Ըստ Սոմերսեթ Մոմի

Սիամի արքան ուներ յոթ դուստր: Նրանցից վեցը չար էին ու անտանելի, իսկ յոթերորդը՝ Մերին, ոչ միայն գեղեցիկ էր, այլև սքանչելի բնավորության տեր:

Սիամի արքան մի սովորություն ուներ. իր ծննդյան օրը նվերներ ստանալու փոխարեն ինքն էր տալիս: Մի անգամ՝ դարձյալ իր տարեդարձի օրը, նա դուստրերից յուրաքանչյուրին ոսկե շքեղ վանդակների մեջ մեկական հիանալի թութակ նվիրեց: Աղջիկները շատ սիրեցին նրանց և սկսեցին խոսել սովորեցնել:

Մի օր, երբ արքայադուստր Մերին գնաց իր թութակին «բարի լույս» մաղթելու, նրան գտավ անկենդան: Սկսեց հոնգուր-հոնգուր լաց լինել, և նաժիշտները ոչ մի կերպ նրան սփոփել չկարողացան: Մերին շարունակում էր հեծկլտալ, երբ հանկարծ նրա սենյակ ներս թռավ մի չքնաղ թռչնակ և հիանալի մի երգ սկսեց թագավորական պարտեզում գտնվող լճակի, ոսկե ձկնիկների, վարսաթափ ուռենիների ու վարդի թփերի մասին: Երբ երգն ավարտվեց, արքայադուստրն այլևս չէր լալիս և բոլորովին մոռացել էր, որ քաղցած է:

- Ի՜նչ լավ երգ էր, - ուրախացավ նա:

Թռչունը գլուխ տվեց և ասաց.

- Կցանկանայի՞ք ինձ քո թութակի փոխարեն: Ճիշտ է, ես այդքան գեղեցիկ չեմ, բայց քեզ համար կարող եմ երգել:

Արքայադուստրը ուրախությունից ծափ տվեց: Այդ օրվանից նրանք անբաժան էին: Թռչնակը ուտում էր աղջկա ափսեից, խմում նրա բաժակից:

Մերիի չար քույրերը սկսեցին նախանձել նրան: Իսկ Մերին արտույտի պես երգելով վազում էր սենյակից սենյակ. թռչնակը ճախրում էր նրա շուրջը, սոխակի պես դայլայլում:

Արքայադուստրերը խելք խելքի տվին, թե ինչպես մեղադնեն իրենց քրոջ ուրախությունը: Գնացին Մերիի սենյակը, շրջան կազմած նստեցին և ասացին.

- Մեր խե՛ղճ քույրիկ, ցավում ենք քո հիանալի թութակի մահվան համար: Մենք

փող ենք հավաքել, որպեսզի քեզ համար մի նոր կանաչ թութակ գնենք:

– Անչափ շնորհակալ եմ, – պատասխանեց Մերին, – ինչի՞ս է պետք թութակը, երբ ես մի սիրելի թռչնակ ունեմ, որն անմահությունների երգերն է դայլայլում ինձ համար:

– Անմտություն է խոսել սեփական թռչունի մասին, երբ նա ցանկացած պահի ներսուդուրս է անում: Նրան վանդակը մաքրիր և այլևս բաց մի թող: Միայն այդ դեպքում կարող ես ապահով լինել, որ նա չի փախչի:

Եվ այսպես, Մերին որոշեց այլևս բաց չթողնել թռչնակին: Սա շատ զարմացավ, երբ մի օր արքայադուստրը իրեն դրեց ոսկե վանդակի մեջ: Թռչունը մի պահ քարացավ, ապա թռչելով փղոսկրյա ծառին՝ ասաց.

– Սա ի՞նչ կատակ է:

– Կատակ չէ: Մայրիկի կատուներն այս գիշեր անհայտ էին մտել: Ինձ թվում է, որ դու վանդակում ավելի ապահով կլինես:

– Բայց այստեղ ինձ բոլորովին դուր չի գալիս:

– Լա՛վ, միայն այս գիշեր համբերի՛ր, առավոտյան քեզ բաց կթողնեմ:

Թռչնակը համաձայնեց, կուչ եկավ և սկսեց երգել: Բայց երգի կեսին կանգ առավ.

– Զգու՞մ ես ինչ է կատարվում ինձ հետ: Այս գիշեր երգելու տրամադրություն չունեմ:

– Դե ուրեմն քնի՛ր, – ասաց Մերին:

Թռչնակը գլուխը դրեց թևի տակ ու խոր քուն մտավ: Լուսաբացին աղջիկն արթնացավ թռչունի ձայնից.

– Վե՛ր կաց, վե՛ր կաց, բա՛ց վանդակի դուռը: Ես ուզում եմ թռչել գնալ, քանի դեռ ցողը գետնին է:

– Ավելի լավ է՝ նստես այստեղ՝ քո հիանալի ոսկե վանդակում: Օրը երեք անգամ նաժիշտները քեզ պես-պես ուտելիքներ ու մրգեր կբերեն:

– Բա՛ց թող ինձ, բա՛ց թող, – ճչում էր թռչնակը:

– Ա՛յ քեզ հիմարի՛կ: Ես քեզ վանդակ եմ դրել, որովհետև շատ եմ սիրում: Ավելի լավ է՝ երգես ու մոռանաս վշտերդ:

– Ինչպե՞ս կարող եմ երգել: Ես ուզում եմ լինել ծառերի, թփերի վրա, բրնձի կանաչ արտերի մեջ:

Հաջորդ առավոտ արքայադուստրը վազեց դեպի վանդակը և սարսափած ճչաց: Թռչնակն ընկած էր վանդակի հատակին, ասես մեռած լիներ: Աղջիկը բացեց դռնակը, նրան դուրս բերեց և թեթևացած շունչ քաշեց. թռչնակի փոքրիկ սիրտը դեռ բաբախում էր:

– Արթնացի՛ր, թռչնա՛կ իմ, արթնացի՛ր, – ճչաց նա:

Նրա արցունքներն ընկան թռչունի վրա, և նա բացեց աչքերը: Տեսնելով, որ այլևս վանդակում չէ, ասաց.

– Ես չեմ կարող երգել, եթե ազատ չեմ, իսկ եթե չերգեմ, կմեռնեմ:

Արքայադուստրը խոր հառաչեց.

– Վերցրո՛ւ ուրեմն քո ազատությունը: Ես փակեցի քեզ ոսկե վանդակում, որովհետև սիրում էի ու ցանկանում, որ ամբողջովին իմը լինես: Գնա՛, թռի՛ր դեպի լճափի ծառերը, ճախրի՛ր բրնձի կանաչ արտերի վրայով ու երջանի՛կ եղիր, ինչպես դու ես ուզում:

Արքայադուստրը չկարողացավ զսպել արցունքները, որովհետև շատ դժվար է, երբ ուրիշի երջանկությունը բարձր ես դասում քոնից:

փող ենք հավաքել, որպեսզի քեզ համար մի նոր կանաչ թութակ գնենք:

- Անչափ շնորհակալ եմ, - պատասխանեց Մերին, - ինչի՞ս է պետք թութակը, երբ ես մի սիրելի թռչնակ ունեմ, որն ամենադյութական երգերն է դայլայլում ինձ համար:

- Անմտություն է խոսել սեփական թռչունի մասին, երբ նա ցանկացած պահի ներսուդուրս է անում: Նրան վանդա՛կը մտցրու և այլևս բաց մի՛ թող: Միայն այդ դեպքում կարող ես ապահով լինել, որ նա չի փախչի:

Եվ այսպես, Մերին որոշեց այլևս բաց չթողնել թռչնակին: Սա շատ զարմացավ, երբ մի օր արքայադուստրը իրեն դրեց ոսկե վանդակի մեջ: Թռչունը մի պահ քարացավ, ապա թռչելով փղոսկրյա թառին՝ ասաց.

- Սա ի՞նչ կատակ է:

- Կատակ չէ: Մայրիկի կատուներն այս գիշեր սենյակս էին մտել: Ինձ թվում է, որ դու վանդակում ավելի ապահով կլինես:

- Բայց այստեղ ինձ բոլորովին դուր չի գալիս:

- Լա՛վ, միայն այս գիշեր համբերի՛ր, առավոտյան քեզ բաց կթողնեմ:

Թռչնակը համաձայնեց, կուշտ կերավ և սկսեց երգել: Բայց երգի կեսին կանգ առավ.

- Զգիտեմ ինչ է կատարվում ինձ հետ: Այս գիշեր երգելու տրամադրություն չունեմ:

- Դե ուրեմն քնի՛ր, - ասաց Մերին:

Թռչնակը գլուխը դրեց թևի տակ ու խոր քուն մտավ: Լուսաբացին աղջիկն արթնացավ թռչունի ձայնից.

- Վե՛ր կաց, վե՛ր կաց, բա՛ց վանդակի դուռը: Ես ուզում եմ թռչել գնալ, քանի դեռ ցողը գետնին է:

- Ավելի լավ է՝ նստես այդտեղ՝ քո հիանալի ոսկե վանդակում: Օրը երեք անգամ նաժիշտները քեզ պես-պես ուտելիքներ ու մրգեր կբերեն:

- Բա՛ց թող ինձ, բա՛ց թող, - ճչում էր թռչնակը:

- Ա՜յ քեզ հիմարի՛կ: Ես քեզ վանդակ եմ դրել, որովհետև շատ եմ սիրում: Ավելի լավ է՝ երգես ու մոռանաս վշտերդ:

- Ինչպե՞ս կարող եմ երգել: Ես ուզում եմ լինել ծառերի, թփերի վրա, բրնձի կանաչ արտերի մեջ:

Հաջորդ առավոտ արքայադուստրը վազեց դեպի վանդակը և սարսափած ճչաց: Թռչնակն ընկած էր վանդակի հատակին, ասես մեռած լիներ: Աղջիկը բացեց դռնակը, նրան դուրս բերեց և թեթևացած շունչ քաշեց. Թռչնակի փոքրիկ սիրտը դեռ բաբախում էր:

- Արթնացի՛ր, թռչնա՛կ իմ, արթնացի՛ր, - ճչաց նա:

Նրա արցունքներն ընկան թռչունի վրա, և նա բացեց աչքերը: Տեսնելով, որ այլևս վանդակում չէ, ասաց.

- Ես չեմ կարող երգել, եթե ազատ չեմ, իսկ եթե չերգեմ, կմեռնեմ:

Արքայադուստրը խոր հառաչեց.

- Վայելի՛ր ուրեմն քո ազատությունը: Ես փակեցի քեզ ոսկե վանդակում, որովհետև սիրում էի ու ցանկանում, որ ամբողջովին իմը լինես: Գնա՛, թռի՛ր դեպի լճափի ծառերը, ճախրի՛ր բրնձի կանաչ արտերի վրայով ու երջանի՛կ եղիր, ինչպես դու ես ուզում:

Արքայադուստրը չկարողացավ զսպել արցունքները, որովհետև շատ դժվար է, երբ ուրիշի երջանկությունը բարձր ես դասում քոնից:

[illegible]

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԸ

Ըստ Մ. Գորկու

Հազարավոր տարիներ առաջ Հեռու՜-Հեռու ծովերից այն կողմ կար մի երկիր: Հոսում էր լայնահուն գետը, առատ ջուր տալիս գաշտերին: Դրա համար էլ շռայլ ու առատաձեռն էր այդ երկրի հողը: Հսկա ծառերի տերևներն այնքան մեծ էին, որ դրանցից յուրաքանչյուրի տակ կարող էր մի մարդ պատսպարվել:

Այդ երկրում ապրում էր մարդկային հզոր մի ցեղ: Ոչ ոք, ոչ մի թշնամի չէր համարձակվում խախտել նրանց անդորրը: Պատերազմելու առիթ չունենալով՝ այդ մարդիկ իրենց ուժն ու արիությունը վատնում էին գազաններ որսալու վրա: Որսից հետո խրախճանք էին անում, երգում ու պարում:

Մի անգամ՝ քեֆի ժամանակ, երկնքից մի արծիվ իջավ և փախցրեց ցեղի աղջիկներից մեկին, որը սև-սև մազեր ուներ և քնքուշ էր գիշերվա պես: Տղամարդիկ վեր թռան, նետեր արձակեցին արծվի վրա, բայց նրանց խղճուկ նետերն ընկան գետնին: Մարդիկ խմբեր կազմեցին, գնացին աղջկան որոնելու: Ոտնատակ տվին սար ու ձոր, դաշտ ու անտառ, բայց չգտան: Վերադարձան, մի քիչ խոսեցին, քննարկեցին եղածը, բայց ի վերջո մոռացան աղջկան, ինչպես ամեն բան մոռացվում է աշխարհում:

Անցավ քսան տարի, և ահա մի օր աղջիկն ինքը եկավ: Նա հյուծվել, հալումաշ էր եղել: Նրա հետ կար մի երիտասարդ, որ գեղեցիկ և ուժեղ էր, առնական ու ամբարտավան: Ու երբ աղջկան հարցրին, թե որտեղ է եղել այդքան ժամանակ, նա պատմեց, որ արծիվը իրեն տարել է լեռները, ու այնտեղ ապրել են որպես մարդ ու կին: Ահա՛ արծվի որդին, իսկ հայրն արդեն չկա:

Բոլորը զարմանքով նայում էին արծվի որդուն: Սա ուներ սառն ու գոռոզ հայացք, հպարտ էր ու ամբարտավան, ինչպես թռչունների արքան: Մարդիկ ուզում

էին զրուցել նրա հետ, բայց սա կա՛մ պատասխանում էր, կա՛մ արհամարհաբար լռում: Իսկ երբ հավաքվեցին ցեղի ավագները, արծվի որդին նրանց հետ խոսեց որպես հավասարը հավասարի հետ: Շատ վիրավորվեցին ցեղապետները, որոնք փորձառու, տարեց մարդիկ էին:

- Դու՛, - ասացին տղային, - անպետք ու բութ նետի ես նման: Միաժամանակ ո՛չ պատկառանք ունես, ո՛չ ամոթ: Քո կրկնակի տարիք ունեցողներն են մեզնից ակնածում: Քեզպեսների համար մեզ մոտ տեղ չկա: Գնա՛, ուր ուզում ես:

Արծվի որդին ծիծաղեց ու քամահրելով հավաքվածներին՝ մոտեցավ մի աղջկա ու գրկեց նրան:

- Դու ինձ դուր ես գալիս, - ասաց, - գնա՛նք ինձ հետ:

Աղջիկը հրեց նրան և ուզում էր հեռանալ, բայց տղան այնպես հարվածեց, որ աղջկա բերանից արյուն ցայտեց: Աղջիկը հեծկլտաց, օձի պես գալարվեց ու մեռավ:

Երկյուղը բռնեց բոլոր նրանց, ովքեր տեսան այդ: Ու երկար լռում էին ամենքը՝ նայելով աղջկան, որ ընկած էր բաց աչքերով ու արնաշաղախ բերանով, և տղային, որ կանգնած էր աղջկա կողքին, բոլորի դեմ մենակ ու հպարտ և չէր ծռում գլուխը:

Երբ մարդիկ խելքի եկան, բռնեցին նրան, կապոտեցին ու այդպես էլ թողին՝ գտնելով, որ անմիջապես սպանելը քիչ է, դա իրենց չի բավարարի: Ցեղապետները հավաքվեցին, որ մտքի անեն, թե ինչ պատիժ տան, որ արժանի լինի հանցագործությանը: Մի իմաստուն երկար մտածելուց հետո ասաց.

- Հարցնենք նրան, թե ինչու՞ արեց այդ:

Հարցրին տղային, և նա ասաց.

- Ես առաջինն եմ աշխարհում: Ինձնից բարձր ոչ ոք չկա:

Լսելով տղայի հանդուգն պատասխանը՝ իմաստուններից մեկն ասաց.

- Սպասեցե՛ք, կա՛ արժանի պատիժ: Դա մի սարսափելի պատիժ է, որ հազար տարի էլ ձեր մտքով չի անցնի: Դրա դատաստանը հենց իր մեջ է: Թողե՛ք դրան, թող ազատ լինի, մեզնից մերժված, մեզանից հեռու:

Այդ պահին հրաշք կատարվեց. պարզ երկինքը որոտաց, և երկնային ուժերը հաստատեցին մարդկանց որոշումը:

Իսկ երիտասարդը, որ հիմա ստացել էր Լարա, այսինքն «Վռնդված», «Մերժված» անունը, ծիծաղում էր՝ մնալով մենակ, ազատ, ինչպես իր հայրը: Բայց չէ՞ որ նրա հայրը մարդ չէր: Իսկ սա... մարդ էր: Եվ տղան սկսեց ապրել ազատ թռչունի պես: Թաքուն գալիս էր մարդկանց մոտ, անասուններ, աղջիկներ փախցնում: Ինչ ուզենար: Նրա վրա նետեր էին արձակում, բայց դրանք չէին խոցում տղային, որովհետև երկնային ուժերի կամքով նա անխոցելի էր դարձել: Այդպես միայնակ պտույտ էր գալիս բնակավայրերի շուրջը տասնամյակներ, հարյուրամյակներ:

Բայց ահա մի անգամ տղան մոտեցավ մարդկանց, և երբ վերջիններս հարձակվեցին նրա վրա, տեղից չշարժվեց, թույլ տվեց, որ իրեն խոշտանգեն: Այն ժամանակ մարդկանցից մեկը գլխի ընկավ և գոչեց.

- Ձեռք չտա՛ք դրան, ուզում է մեռնել:

Ու բոլորն արագ կանգ առան՝ չցանկանալով թեթևացնել այն մարդու վիճակը, որն իրենց չարիք էր պատճառել, չուզեցին սպանել նրան: Տղան մի դանակ խլեց, դրանով խփեց իր կրծքին: Բայց դանակը կոտրվեց: Կարծես քարի էր խփվել:

- Նա չի կարող մեռնել, - ուրախացած ասացին մարդիկ:

Ու թողնելով նրան՝ հեռացան:

Այսպես, տղան ուրուի նման շրջում էր, շրջու՛մ, շրջում: Ու չարունակ փըն-տրում ինչ-որ բան: Նրա համար կյանք չկար, տեղ չկար մարդկանց մեջ, մահն էլ չէր ժպտում նրան:

ՊԼԱՆ

1. Հեռավոր երկիրն ու նրա բնակիչները:
2. Արտասովոր գեղք:
3. Քսան տարի անց:
4. Գոռոզ ու ամբարտավան արծվորդին:
5. Մարդկանցից մերժվածը:
6. Եզրակացություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրառախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

լայնահուն գետ, առատաձեռն, անզորը, վառնել, քնքուշ գիշեր, խղճուկ ննջեր, հյուծվել, առա-կան, սառն ու գոռոզ հայացք, ամբարտավան, անպետք ու բութ նետ, քամահրել, ամի պես գալարվել, արնաշաղախ, հանդուգն պատասխան, երկնային ուժեր, անխոցելի դառնալ, խոշտանգել, ուրու:

ՄԱԹԵՈ ՖԱԼԿՈՆԵ

Ըստ Պրոսպեր Մերիմեի

(անավարտ փոխադրություն)

Կորսիկա կղզու հյուսիս-արևմուտքում՝ ժայռաբեկորներով շրջապատված հարթության վրա, տարածվում է մի ընդարձակ թավուտ՝ տեղ-տեղ ծածկված խիտ թփուտներով և բազմատեսակ ծառերով: Դա ապաստանն է բոլոր այն կորսի-կացիների, որոնք ինչ-ինչ պատճառներով գժտվել են արդարադատության հետ: Ի՞նչ հանցագործ ասես չի ապավինում այդ ամայի վայրերին՝ վստահ, որ օրենքից վախենալու մտահոգություն չի ունենա:

Հիշյալ թավուտից կես մղոն հեռավորության վրա՝ մի հարմարավետ տան մեջ, ապրում էր Մաթեո Ֆալկոնեն: Նա հարուստ մարդ էր և վարում էր ազնվական կյանք: Կարճահասակ, ամրակազմ, ձյութի պես սև մազերով, արծվային քթով այդ առնական մարդուն կարելի էր գեղեցիկ համարել: Մաթեոն հրաձգության մեջ հա-վասարը չուներ: Ասում էին, թե նա նույնքան լավ բարեկամ է, որքան վտանգավոր թշնամի: Պատմում էին նաև, որ ժամանակին ինչ-որ աղջկա համար մեջտեղից վե-րացրել է իր մրցակցին: Դա, սակայն, մոռացվել էր, և Մաթեոն շրջակա բնակիչնե-րի հետ ապրում էր հաշտ ու խաղաղ՝ ամենքին առած իր հովանավորության տակ: Նրա կին Ջուզեպան իրար հետևից երեք աղջիկ էր պարգևել ամուսնուն, շատ սա-րերներ անց՝ մի արու զավակ՝ Ֆորտունատոյին: Սա էր ընտանիքի հույսն ու ազգա-նվան ժառանգը: Տղան ընդամենը տասը տարեկան էր, բայց հրաշալի տիրապետում էր զենքին:

Աշնան մի օր Մաթեոն կնոջ հետ գնաց թավուտ՝ ստուգելու իր հոտերի վիճակը: Տանը մնաց Ֆորտունատոն: Նա պառկել էր արևի տակ, երբ հանկարծ նրա խոհերն ընդհատվեցին հրացանի կրակոցներից, որոնք հետզհետե մոտենում էին: Վերջապես շավղի վրա երևաց ոտքից վիրավոր մի մարդ, որ վազում էր ուղիղ Մաթեոյի տան ուղղությամբ: Նա մոտեցավ Ֆորտունատոյին և հարցրեց.

- Դու Մաթեո Ֆալկոնեի տղա՞ն ես:

- Այո՛:

- Ես հորդ ընկերը՝ Ջանետոն եմ: Ոստիկանները հետապնդում են ինձ: Ասա՛, որտեղ թաքնվեմ, չեմ կարող ավելի հեռու գնալ: Տեսնո՞ւմ ես, վիրավոր եմ:

- Իսկ ինչ կասի հայրս, եթե քեզ թաքցնեմ առանց թույլտվության;

- Նա քեզ կասի՝ լավ ես արել: Բայց խոսելու ժամանակ չկա, հինգ րոպեից նրանք այստեղ կլինեն:

- Իսկ ինչ կտաս ինձ, եթե ուզածդ կատարեմ:

Փախստականը հանեց հինգֆրանկանոց մի դրամ: Տղան ժպտաց, վերցրեց դրամը և ասաց.

- Ոչ մի բանից մի՛ վախենա:

Նա մի խոր անցք բացեց խոտի դեզի մեջ: Ջանետոն մտավ անցքը և կուչ եկավ: Տղան ծածկեց նրան խոտով և նորից անխռով պառկեց արևի տակ:

Մի քանի րոպե անց համազգեստավորներն արդեն կանգնած էին Ֆորտունատոյի կողքին:

- Բարև՛, փոքրի՛կ, - ասաց սպան, - այստեղով մի մարդ չանցա՞վ: Վստահ եմ, որ տեսել ես նրան: Դու լռո՞ւմ ես, փոքրի՛կ ստահակ, ուրեմն թաքցրել ես: Դե՛, տղե՛րք, տունը խուզարկենք:

- Իսկ ի՞նչ կասի հայրս, - հեգնանքով ասաց Ֆորտունատոն, - երբ իմանա, որ իր բացակայության ժամանակ մեր տունն եք մտել: Պիտի իմանաք, որ իմ հայրը Մաթեո Ֆալկոնեն է:

Սպան բացահայտորեն շփոթվեց: Մի՞թե կհամարձակվեր գժտվել Մաթեոյի հետ: Իսկ տղան, հպարտ կանգնած, առանց աչքը թարթելու, անտարբեր շոյում էր կատվին:

Զգալով փոքրիկի անսասան կամքը՝ սպան դիմեց խորամանկության.

- Դու շատ խելացի տղա ես երևում և արժանի ես քո հորը: Տեսնո՞ւմ ես այս հոյակապ ժամացույցը: Ասա՛ Ջանետոյի տեղը, և ժամացույցը քոնը կլինի:

Ֆորտունատոն շեղակի նայեց ժամացույցին: Արդյոք չէ՞ն խաբում իրեն: Սպան ավելի ու ավելի էր ժամացույցը մոտեցնում տղային: Նա պարզորոշ տեսնում էր, որ տղայի հոգում պայքար է գնում ազնվության ու ագահության միջև: Իսկ ժամացույցն արդեն ճոճվում էր նրա քթի տակ: Ինչ էլ գեղեցիկ էր՝ կապույտ թվացույցով, ոսկեգույն շողշողուն կափարիչով: Փորձությունը շատ ուժեղ էր: Վերջապես Ֆորտունատոն ձախ ձեռքը բարձրացրեց և բթամատով ցույց տվեց դեզը, իսկ աջով ճանկեց ժամացույցը:

Մինչ ոստիկանները կապկպում էին հայտնաբերված փախստականին, երևաց Մաթեոն: Իր տանը տեսնելով օրենքի ներկայացուցիչներին՝ ապշած կանգ առավ:

- Հե՛յ, Մաթե՛ո, - գոչեց սպան, - մենք ձեռք գցեցինք Ջանետոյին: Չլիներ տղադ, մենք նրան չէինք բռնի:

- Ֆորտունատո՞ն, - գոչեց Մաթեոն:

– Այո՛, տղադ թաքցրել էր նրան խոտի դեզի մեջ, բայց ժամացույցի դիմաց հանձնեց մեզ:

– Նզո՛վք, – մռնչաց Մաթեոն:

Իսկ Ջանետոն գնալիս շրջվեց դեպի տունը, թքեց շեմի վրա և ասաց.

– Դավաճանի՛ տուն:

Մահն աչքի առաջ ունենալով մարդը միայն կհամարձակվեր Մաթեո Ֆալկոնեին «դավաճան» անվանել: Բայց Մաթեոն ոչինչ չասաց. գլուխը բռնեց ձեռքերով ու կուչ եկավ:

Այդ ամբողջ ընթացքում մանուկը լուռ կանգնած էր: Նա տարակուսանքով նայում էր հորը:

– Լա՜վ ես սկսում, – խոսեց հայրը չարագուշակ հանգստությամբ, – դու մեր ցեղի մեջ առաջինն ես, որ դավաճանություն գործեց:

Ֆորտունատոն սարսափից դողում էր:

– Հա՛յր, ների՛ր ինձ, – բղավեց նա և ընկավ հոր ոտքերը, – շնո՛րհ արա, ների՛ր:

Ֆորտունատոյի հեծկլտոցը սաստկացավ, իսկ հայրը շարունակում էր նրան նայել լռելյայն իր հայացքով: Վերջապես հրացանը ուսին գցեց և հրամայեց տղային, որ հետևի իրեն: Հասնելով մոտակա թփուտները՝ կանգ առավ:

ՈՒՍՈՒՑՉԻՆ *Պրոսպեր Մերիմեի սույն նովելի վերջաբանը թողնում ենք աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Իսկ նովելն ավարտվում է այսպես.*

« – Գնա կանգնի՛ր այն քարի մոտ, աղոթի՛ր Աստծուն, և նա թող քեզ ների, – կարգադրեց Մաթեոն:

Ֆորտունատոն հեկեկալով ծնկի եկավ: Նա լուռ աղոթում էր:

– Վերջացրի՞ր, – հարցրեց հայրը մի քանի րոպե անց:

Տղան հուսահատ ճիգ արեց ոտքի կանգնելու, բայց ժամանակ չունեցավ: Մաթեոն կրակեց, և Ֆորտունատոն ընկավ դիտապաստ»:

ՊԼԱՆ

1. Հանցագործների ապաստանը:
2. Մաթեո Ֆալկոնեն:
3. Ֆորտունատոն և վիրավոր փախստականը:
4. Ֆորտունատոն և ոստիկանները:
5. Դավաճանություն:
6. Պատիժ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Կորսիկա կղզի, ընդարձակ թավուտ, խիտ թփուտներ, ապաստան, ձյութի պես սև մազեր, արծվային քիթ, առնական տղամարդ, հրաձգություն, ազգանվան ժառանգ, խոհերն ընդհատվել, հինգֆրանկանոց դրամ, անխռով պառկել, չարագուշակ հանգստություն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Պրոսպեր Մերիմեն 19-րդ դարի ֆրանսիացի գրող է:

Ի ՓԱՌՍ ՃԵՐՄԱԿԱՑԻՈՒՅՆ

Ըստ Րաֆֆու

Շոգ կեսօր էր: Արևի բարկ ճառագայթների ներքո Շապուհ արքայի բանակատեղին ներկայացնում էր խիստ տխուր տեսարան: Կիսակործան վրանները թափուր էին, իսկ ռազմադաշտը և նրա շրջակայքը ծածկված էին դիակներով: Մեծ էր նաև գերվածների թիվը: Ինքը՝ արքայից արքան, չէր երևում ո՛չ զոհվածների, ո՛չ գերիների մեջ: Ասում էին, որ նա փախավ հենց այն ժամանակ, երբ հայերն անակնկալ հարձակում գործեցին, փախավ իր սենեկապետներից մեկի հագուստով, որ չճանաչվի: Արքայական փառաշուք վրաններն իրենց ամբողջ հարստությամբ մնացել էին անտեր: Մնացել էր և Շապուհի կանանոցը՝ լի արևելքի և արևմուտքի գեղեցկուհիներով: Նրանց թվում էր և պարսից տիկնանց տիկինը՝ թագուհին: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանով հայ զինվորների մի ջոկատ բոլորել էր կանանոցի շուրջը՝ որևէ ոտնձգությունից այն զերծ պահելու նպատակով:

Շապուհի արքայական կացարաններից քիչ հեռու խփված էր անշուք մի վրան, ուր ճանապարհորդական աթոռակի վրա նստած էր հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Նրան շրջապատել էին զինակից ընկերները, այդ թվում՝ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը: Լուռ էին նրանք, և բոլորի դեմքերին դրոշմված էր դժգոհություն ու զայրույթ: Ինքը՝ սպարապետը, խոժոռ էր: Ոչ պակաս խռովքի մեջ էին նաև Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

– Ես այս պարսիկ գերիներին գլխատել կտամ և նրանց խրտվիլակներով կզարդարեմ Արտագերս ամրոցի աշտարակները, բայց այն, ինչ դուք եք պահանջում, ես երբեք ընդունել չեմ կարող, – ասաց Մուշեղը:

– Ինչու՞, Մուշե՛ղ, – հարցրեց Սահակ Պարթևը, – մոռանու՞մ ես, թե ինչպես Շապուհը Արշակ թագավորին խաբեությամբ կանչեց Տիզբոն և նետեց Անհուշ բերդը, մոռանու՞մ ես, թե ինչպես քո հորը՝ Վասակ Մամիկոնյանին, մորթազերծ արեց, հազարավոր ընտանիքներ դժբախտացրեց, մեր նախարարներից շատերի կանանց գերեվարեց:

– Ինչ որ իրեն կարող է թույլ տալ պարսիկ Շապուհը, նույնը չի կարող անել հայոց սպարապետը: Ճիշտ հակառակը, ես նրա բոլոր կանանց ամենայն հարգանքով կուղարկեմ Տիզբոն, և դա կլինի իմ ամենամեծ վրեժխնդրությունը: Մի՞թե Շապուհի վրեժը մենք պիտի հանենք կանանցից:

Այս ասելով՝ Մուշեղը դարձավ սենեկապետին.

– Գնա հայտնի՛ր արյաց դշխոյին, որ ես ուզում եմ այցելել իրեն:

Արյաց թագուհու ներքինապետը դուրս եկավ դիմավորելու հայոց սպարապետին: Մուշեղը մտավ թագուհու վրանը: Ներսում ոչ ոք չկար: Պարսից սովորությամբ կինը իրավունք չուներ երես առ երես խոսել օտար տղամարդու հետ: Նա կարող էր խոսել միայն վարագույրի հետևից:

– Ողջու՜յն և խաղաղությու՜ն արյաց մեծափառ դշխոյին, – ասաց Մուշեղը՝ գմփով կանգնած դեպի վարագույրը: – Ցավում եմ, որ բախտը չեմ գտնելու քեզ մխի-

Թարելու, ո՛վ մեծափառ դշխո: Բայց այս բոլոր ողեռնների համար ոչ թե մենք՝ հաղթողներս, այլ քո թագավոր ամուսինն է հանցավոր: Սակայն այդ ասելու համար չէ, որ եկել եմ քեզ մոտ: Ես եկել եմ ավետելու քեզ, արքա՛յ թագուհի, որ մենք գիտենք վատությունը լավությամբ ջնջել: Քեզ և Շապուհ արքայի բոլոր կանանց, որ այժմ գերի են իմ ձեռքում, վաղը զինվորներիս ուղեկցությամբ և ամենայն պատվով կուղարկեմ Տիզբոն:

Դեռ սպարապետն իր խոսքը չէր ավարտել, երբ վարագույրի հետևից հանկարծ հայտնվեց թագուհին և գրկելով սպարապետի ոտքերը՝ բացականչեց.

- Դու մարդ չես, քո բերանով բարության արարիչն է խոսում: Քո մեծահոգությունը, ո՛վ քաջ, անմոռաց կմնա իմ սրտում: Երբ հասնեմ Տիզբոն, իմ առաջին խոսքն այս կլինի թագավոր ամուսնուս. «Հայոց սպարապետը յուր ազնվությամբ մի ծանր պարտք դրեց քեզ վրա, և այդ պարտքը նույնպիսի ազնվությամբ պիտի վճարես»:

Թագուհին հանեց մատանին.

- Թողնում եմ մատանիս՝ իբրև հիշատակ իմ երախտագիտության: Երբ հարկ լինի, ուղարկի՛ր ինձ այն, և ես ամեն ջանք գործ կդնեմ՝ օգնության ձեռք մեկնելու քեզ:

Սպարապետը քաղաքավարությամբ մերժեց՝ ասելով.

- Քո բարեսրտությունը, թագուհի՛, ինձ համար մեծ առհավատչյա է:

Նա գլուխ տվեց և դուրս եկավ:

Մուշեղ Մամիկոնյանի արարքը զարմացրեց պարսից արքունիքին: Նրանց համար դա չլսված հրաշք էր: Իսկ Շապուհը հրամայեց նրա պատկերը՝ իր սպիտակ ձիով, դրվագել իր ոսկյա գավաթի վրա և ամեն անգամ, երբ ձեռքն էր առնում այն, հիշում էր ազնիվ հերոսի ազնիվ գործը և խմում՝ կրկնելով.

- Ի փառս Ճերմակաձիույն:

ՊԼԱՆ	1. Շապուհ արքայի բանակատեղին:	3. Մուշեղ Մամիկոնյանի այցը պարսից դշխոյին:
	2. Զինվորական խորհուրդ:	4. Ի փառս Ճերմակաձիույն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

արևի բարկ ճառագայթներ, խիստ տխուր տեսարան, կիսակործան վրաններ, արքայական փառաշուք վրաններ, արևելքի և արևմուտքի գեղեցկուհիներ, ոտնձգություն, զերծ, ճանապարհորդական աթոռակ, խուրձ, խրտվիլակ, Անհուշ բերդ, դշխո, ներքինապետ, ավետել, բարության արարիչ, առհավատչյա, դրվագել:

ՍԱՄՍՈՆ ԵՎ ԴԱԼԻԼԱ

Ըստ Աստվածաշնչի

Իսրայելցիներին Աստված պատգամել էր ապրել ազնիվ ու արդար աշխատանքով, լինել բարոյապես բարձր, սիրել մարդկանց, օգնել միմյանց: Ընդդիմանալով աստվածային պատվիրաններին՝ իսրայելցիները կատարում էին անօրինություններ, արգահատելի արարքներ՝ զբաղվում բանսարկությամբ, գողությամբ, խաբեբայությամբ: Զայրացավ Տերը և քառասուն տարով նրանց դրեց փղշտացիների լծի տակ: Այդ ժամանակ Իսրայելում մի մարդ ու կին էին ապրում: Սրանք վարում էին համեստ կյանք, օգտակար լինում հարազատներին ու բարեկամներին: Հավատում էին Աստծուն, կատարում նրա պատվիրանները, աղոթում, պաս պահում: Սակայն այս առաքինի ու պարկեշտ մարդկանց հոգին կեղեքում էր մի մեծ վիշտ. նրանք զավակ չունեին: Իսկ իսրայելցիների կողմից այն ժամանակ դա դիտվում էր իբրև մեծ արատ և ամոթ: Անպտուղ մարդկանց համարում էին Աստծո կողմից մերժվածներ: Բայց ահա կատարվում է անսպասելին: Մի օր հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում.

- Աստված լսեց ձեր աղոթքները, և քանի որ դուք արդար և բարեպաշտ մարդիկ եք, շուտով արու զավակ կպարգևի ձեզ, որը հետագայում անսովոր ուժի տեր և բացառիկ հատկություններով օժտված երիտասարդ կդառնա: Բայց հիշեցե՛ք, երբեք մկրատ չի դիպչելու տղայի մազերին, որովհետև դրանց մեջ է լինելու նրա զորության գաղտնիքը: Տերը նրան է շնորհել հրեաներին փղշտացիների լծից ազատելու առաքելությունը:

Այսպես խոսեց հրեշտակը և աներևութացավ:

Զանցած մեկ տարի՝ այդ բարի մարդիկ մի գեղեցիկ տղա ունեցան և անունը դրին Սամսոն: Եթե ուրիշ երեխաներ մեծանում էին տարիների հետ, Սամսոնը աճում, զորանում էր ժամ առ ժամ: Շուտով դառնում է խրոխտ, հաղթանդամ մի պարմանի՝ առասպելական ուժով, հուժկու բազուկներով, գեղագանգուր խարտյաշ մազերով: Նա թշնամիների ահ ու սարսափն էր:

Պատահեց այնպես, որ Սամսոնը սիրահարվեց Դալիլա անունով մի աղջկա: Սա սիրում էր պճնվել, երեսը ներկում էր զանազան քսուքներով ու սնգույրով, սեթևեթում էր տղամարդկանց մոտ: Իսկ Սամսոնը միամիտ էր ու անփորձ: Նա սիրում ու հավատում էր Դալիլային:

Ճանաչելով թեթևաբարո աղջկան՝ փղշտացիների նախարարները գալիս են նրա մոտ և ասում.

- Խաբեությամբ կորզի՛ր նրա ուժի գաղտնիքը: Դրա դիմաց մենք քեզ շատ փող կտանք:

Երեկոյան, երբ ահեղ ճակատամարտից վերադարձած Սամսոնը հանգստանում էր թիկնօթոցին, Դալիլան կեղծավորաբար մոտեցավ, շոյեց նրա գանգուրները, ճակատը:

- Աղաչում եմ, սիրելի՛ս, - դիմեց Սամսոնին, - ասա՛, ինչու՞մ է քո զորության գաղտնիքը:

Նրանով հմայված Սամսոնը զիջեց: Իսկ երբ հոգնած հերոսը քնել էր, Դալիլան

կտրեց նրա մազերը և տվյին հանձնեց թշնամուն: Ձեռնաշղթաներ հագցրին, աչքերը հանեցին և նետեցին բանտը: Բայց թշնամիները չգիտեին, որ մազերը աճելուն զուգընթաց վերականգնվում է Սամսոնի ուժը:

Մի օր գինարբուք էր փղշտացիների պալատում: Սրահ առաջնորդեցին Սամսոնին և նրան նվաստացնելու նպատակով ստիպեցին պարել: Հպարտ ու անընկճելի էր Սամսոնը: «Լավ է մեռնեմ արժանապատիվ, քան ապրեմ անպատված, - մտածեց նա, - Տե՛ր, զորավի՛գ եղիր, որ սրանցից վրեժս լուծեմ»: Նա հենվեց պատին, ձեռքերը հենեց աջ ու ձախ սյուներին և գերմարդկային ուժով քանդեց դրանք: Տանիքը փլվեց՝ տակով անելով նախարարներին, զորապետներին, խրախճանքի բոլոր մասնակիցներին, նաև իրեն՝ Սամսոնին:

Թե ինչ եղավ Դալիլան, հայտնի չէ: Վստահ պետք է լինել, որ Տիրոջ ամենազոր ձեռքը պատժեց դավաճանին:

ՊԼԱՆ

1. Աստծո պատգամը խորայելցիներին:
2. Զավակ չունեցող ամուսինները:
3. Աստծո շնորհը և պատվիրանը:
4. Սամսոնը:
5. Դալիլան:
6. Մատնություն:
7. Սամսոնը վրեժ է լուծում թշնամիներից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

արգահատելի արարք, բանսարկություն, խաբեբայություն, փղշտացի, առաքինի ու պարկեշտ մարդիկ, հոգին կեղեքել, զորության գաղտնիք, առաքելություն, պարման, առասպելական ուժ, հուժկու բազուկներ, գեղագանգուր խարտյաշ մազեր, քսուք, մնգույր, սեթևեթել, թեթևաբարո աղջիկ, գաղտնիքը կորզել, ձեռնաշղթա, զորավիգ լինել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *«Սամսոն և Դալիլա» առասպելի մոտիվներով 1868թ. նորմանդացի նշանավոր երգահան Կամիլ Սեն-Սանսը գրեց համանուն օպերան:*

ՄՈՌԱՆԱԼ ՀԵՐՈՍՏՐԱՏԻՆ

Ըստ Նեյհարտի

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անե՜ծք նրա չար գործին...

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Փոքրասիական Եփեսոս քաղաքում պաշտում էին մայրության և պտղաբերության աստվածուհի Արտեմիսին, ներբողում նրա շնորհները, զարմանահրաշ գեղեցկությունը: Ի պատիվ սիրելի դիցուհու՝ եփեսոսցիները որոշեցին կառուցել մի այնպիսի տաճար, որի նմանը չի եղել աշխարհում:

Հարյուր քսան տարի տևեց մարմարյա նրբագեղ տաճարի շինարարությունը: Նրա վրա աշխատում էին հազարավոր ստրուկներ: Կառույցը, որ ապշեցնում էր շքեղությամբ, բոլորեքյան շրջապատված էր բարձրաքանդակ մույթերով, ժանեկազարդ խոյակներով, ոսկյա դրոշմապատկերներով: Որմնաքանդակները ներկայաց-

նում էին Արտեմիսին իր ամբողջ պերճանքով՝ զարդարված բնական քարերով՝ հակինթով, սուտակով, շափյուղայով: Իսկ աչքերը խոշոր ադամանդներ էին, որոնք շողարձակում էին նաև ականակիտ գիշերվա խավարում: Եփեսոսի բնակիչները հպարտանում էին Արտեմիսի տաճարով և քաղաք մտած օտարերկրացիներին առաջնորդում՝ տեսնելու հրաշագեղ շինությունը, այցելելու մարդկային հանճարով:

Թվում էր՝ չնաշխարհիկ մարմարիոնե կերտվածքը պատկանելու է դարերին: Բայց, ցավոք, այն կանգուն մնաց ընդամենը հարյուր տարի: Մեր թվարկությունից առաջ երեք հարյուր հիսունվեց թվականի գարնանային արևոտ մի օր Եփեսոսի փողոցներում հանկարծ լսվեցին տագնապալի բացականչություններ.

- Արտեմիսի տաճարն այրվո՜ւմ է:

Այդ ժամանակ Եփեսոսում ապրում էր չնչին ու ողորմելի մի մարդուկ՝ Հերոստրատ անունով: Սա ոչնչով չէր զբաղվում: Վատնում էր հորից մնացած ժառանգությունը և ամբողջ օրը տանը նստած՝ անգործությունից հորանջում ու ձանձրանում: Նա անգամ ընկերներ չուներ: Հերոստրատը, սակայն, փառատենչ էր ու սնապարծ: Գիշեր-ցերեկ մտածում էր, թե ինչ անի, որ անմահանա դարերում, որ մարդկանց հիշողության մեջ միշտ անմեռ մնա իր անունը: «Բնությունն ինձ չի շնորհել ո՛չ փիլիսոփայի խորաթափանցություն, ո՛չ բանաստեղծական քանքար, ո՛չ զորավարական ձիրք, որոնցով մտնեի պատմության մեջ: Իսկ ես անմահություն եմ տենչում, թո՛ղ որ չարագործությամբ, բայց անմահանալ, ապրել պատմության էջերում ու սերունդների շուրթերին», - մտմտում էր Հերոստրատը:

Մի օր, երբ դարձյալ սին խորհրդածությունների մեջ էր, հանկարծ գլխում փայլատակեց մի զարհուրելի միտք՝ հրո ճարակ դարձնել Արտեմիսի տաճարը:

Ըստ պատմիչների՝ հրդեհը բռնկվել էր միանգամից՝ ընդգրկելով սրահը, փայտամած տանիքը, պատերն ու սյուները: Մարդիկ հոծ խմբերով վազվզում էին մոլեգնած կրակների շուրջը, բայց ոչնչով օգնել չէին կարողանում: Նրանց չկարողացավ օգնել նույնիսկ ինքը՝ Արտեմիս աստվածուհին:

Թագավորի հրամանով նույն օրը պալատում հավաքվեց Եփեսոսի ծերակույտը:

- Մենք պիտի որոշենք՝ ինչ պատիժ տալ Հերոստրատին, այրե՛ր հարգարժան: Հանցանքն անհամեմատելի է, պատիժը նույնպես բացառիկ և անսովոր պիտի լինի, - խոսեց Թագավորը:

Երկար-բարակ խորհրդակցելուց հետո որոշեցին՝ ա) Հերոստրատին հանձնել գազազած ամբոխի դատին, բ) Նզովել և մեկընդմիշտ մոռանալ նրան:

Հաջորդ օրը Թագավորն իր մոտ հրավիրեց ժամանակի մեծանուն պատմիչներին, փիլիսոփաներին, գրողներին և ասաց.

- Ձե՛զ՝ գիտության քուրմերիդ, հետևյալն եմ հանձնարարում. քերթեցե՛ք պատմությունը մեր, գրե՛ք երգ ու բանաստեղծություն, բայց ո՛չ մի տեղ ո՛չ մի բառով չհիշատակեք չարագործի անունը, որպեսզի չկատարվեն անմահանալու մասին նրա սին ցնորքները:

Բայց... Հին աշխարհի որոշ պատմիչներ թեև արհամարհանքով, զայրույթով ու նողկանքով, բայց և այնպես թղթին հանձնեցին եղելությունը, և Հերոստրատը փաստորեն անմահացավ:

Գոյություն ունի «Հերոստրատի փառք» արտահայտությունը, որով որակում են անարժան վարմունքը, տխրահռչակ փառքը:

ՊԼԱՆ

1. Արտեմիսի տաճարը:
2. Հրդեհ:
3. Հերոստրատը:
4. Տիրակույտի որոշումը:
5. Զարն էլ է միշտ ապրում սմենա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փոքրասիական, մայրության և պտղաբերության աստվածուհի, նիրբողել, մարմարյա նրբագեղ տաճար, բարձրաքանդակ մույթեր, ժանեկազարդ խոյակներ, ոսկյա դրոշմապատկերներ, որմնաքանդակներ, հակինթ, սուտակ, չափյուղա, մարմարիոնե կերտվածք, ընչին ու ողորմելի մարդուկ, սնապարծ, փիլիսոփայի խորաթափանցություն, բանաստեղծական քանքար, հրո ճարակ, գիտության քուրմեր, սին ցնորքներ:

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆ

(կենսագրական համառոտ տեղեկություններ)

Սողոմոն Թեհլերյանը ծնվել է 1896 թվականի ապրիլի 2-ին Դարանաղյաց գավառի Բագառիճ գյուղում: Ընտանիքը բաղկացած էր վեց հոգուց՝ հայրը, մայրը, ինքը՝ Սողոմոնը, և երեք եղբայրները:

Ավարտելով Երզնկայի Կեդրոնական վարժարանը՝ 1913-ին մեկնում է Սերբիա, որ մտադիր էր նախապատրաստվել և հաջորդ տարի ուսումը շարունակել Գերմանիայում: Բայց պայթեց Առաջին համաշխարհայինը, և Սողոմոնի ծրագրերը ջուրը թափվեցին:

Տասնյոթ տարեկանից Սողոմոն Թեհլերյանը նվիրվում է ազգային-ազատագրական պայքարին, կռվում Անդրանիկի գնդում:

1915 թվականին Մեծ եղեռնի արյունալի ջարդերի զոհ են դառնում միլիոնավոր հայեր, այդ թվում՝ Թեհլերյանի մայրը, եղբայրը, ազգականները՝ ութսունչորս հոգի: Հայրենասեր ազնիվ հոգին փոթորկվում է վրեժխնդրության ծարավից: Եվ նա մտադրվում է թեկուզ մահվան գնով վրեժ լուծել ջարդերի կազմակերպիչներից: Նրան առանձնապես հալածում էր Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի ճիվաղային կերպարը: Թեհլերյանը գիտեր, որ նա ծպտված բնակվում է Բեռլինում՝ Ալի Սալիհ բեյ անունով: Երեք տարվա որոնումներից, հետապնդումներից հետո Թեհլերյանը ճշտում է, որ Թալեաթը ապրում է Հարդենբերգ փողոցի թիվ 4-ում: Բնակարան վարձելով ճիշտ դիմացը՝ համառ վրիժառուն գիշեր ու զոր պատուհանից հետևում է թուրք մարդասպանի տան անցուդարձին: Եվ ահա 1921թ. մարտի 15-ին նա դեմառդեմ հանդիպում է հայակեր հրեշին:

Թե ինչ եղավ հետո, պատմում է ինքը՝ Սողոմոն Թեհլերյանը:

1921 թվականի մարտի 15-ն էր: Առավոտյան սովորականից շուտ արթնացա: Արևի շողերը արդեն հասել էին դիմացի տան պատուհանին: Հազիվ էի ավարտել նախաճաշս և ուզում էի բազկաթոռս մոտեցնել լուսամուտին, երբ հանկարծ դիմացի շքամուտքը բացվեց, և հայտնվեց Թալեաթը ու փղի պես ծանրորեն սկսեց իջնել փողոցով: Գրպանումս շոշափելով ատրճանակը՝ դուրս նետվեցի: Սիրտս հուշում էր, որ այս անգամ անկարող պիտի լինի ինձնից փախչել, բայց և հուզումը բազմալեզու աղաղակներով փոթորկում էր հոգիս: Ուղեղս գործում էր անդադար: «Վազի՛ր, անցի՛ր մյուս մայթը և՝ ուղղակի ճակատին: Շո՛ւտ, շո՛ւտ, վազի՛ր, անցի՛ր փողոցը», - կարգադրում էր ներքին հզոր մի ձայն:

Հակառակ մայթով քայլելով՝ հավասարվեցի նրան, ապա արագընթաց առաջ անցա: Երբ բավական իջել էի, կտրուկ դիմեցի դեպի այն մայթը, որով գալիս էր Թալեաթը, և քայլեցի նրան ընդառաջ: Այժմ արդեն դեմ դիմաց մոտենում էինք միմյանց: Նա գալիս էր ճեմելով և ձեռնափայտը անփույթ ճոճելով: Զարմանալի՛ բան: Փոթորկվող սիրտս միանգամից խաղաղվեց, և տարօրինակ անդորրություն համակեց էությունս: Գրեթե հավասարվել էինք, հրեշը շեշտակի նայեց ինձ. աչքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը: Նա վարանեց, մի քիչ թեքվեց, որ խուսափի, բայց զենքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մեկ եղավ: Թալեաթը հարվածից ցնցվեց, հզոր մարմինը մի ակնթարթ ձիգ պրկվեց, ապա օրորվեց և սղոցված կաղնու պես թնդյունով տապալվեց երեսի վրա: Բնավ չէի կարծում, թե այդպես դյուրին պիտի փռեի գետնին: Մի պահ մտքում ունեցա բոլոր գնդակները պարպել մեջքին, բայց, չգիտեմ ինչու, ատրճանակս նետեցի: Սև, թանձր արյունը վայրկենապես լճացավ Թալեաթի գլխի շուրջը: Կարծես ջարդված անոթից մազութ էր թափվում: Ու այդ պահին՝

- Մարդ սպանե՛ց, - լսեցի:

- Բռնեցե՛ք, բռնեցե՛ք, - ականջիս հասավ ինչ-որ մեկի բամբ ձայնը:

Անմիջապես ամբոխը շրջապատեց ինձ: Չէի հասկանում, թե ինչ են ուզում: Մեկն ինձ քաշքշեց, մյուսներն սկսեցին անխնա հարվածել: Աչքերս մթնեցին: Գլխիցս հոսող արյունը ակոսում էր դեմքս: Հասան ոստիկանները, թևերս ոլորեցին ու տարան: Ոչինչ չէի զգում: Համակվել էի ներքին հրճվանքով, որի նմանը չէի զգացել երբեք:

Հաջորդ առավոտ, երբ քննիչը հարցրեց, թե՝

- Գիտե՞ք, ով էր այն մարդը, որին երեկ սպանեցիք:

- Այո՛, Թալեաթ փաշան, - ասացի:

- Ի՞նչը ձեզ դրդեց այդ ոճիրը գործելու:

- Ոճրագործը ես չեմ, այլ Թալեաթը: Նրա հրամանով էր, որ սպանվեցին մայրս, եղբայրս, ազգականներս և իմ ժողովրդի մի մեծ հատվածը: Այդ օրից ես ապրել եմ միայն նրանից վրեժ լուծելու տենչով:

- Ընդունու՞մ եք, որ կատարել եք կանխամտածված սպանություն:

- Իհա՛րկե:

- Ձեր խիղճը չի՞ տանջում ձեզ, որ մարդ եք սպանել:

- Ընդհակառակը, սիրտս լցվում է ուրախությամբ, որ մեկ միլիոն հայերի վրեժը վերջապես լուծված է: Ես երդվել էի մորս անհայտ գերեզմանով և երդումս կատարեցի:

- Գիտե՞ք, որ օրենքով ձեզ մահապատիժ է սպառնում:

- Գիտեմ: Բայց վրեժս լուծված է, հիմա ինչ լինում է թող լինի:

Չորս ամիս տևեց իմ գործի քննությունը: 1921 թվականի հունիսի 6-ին Բեռլինի միջազգային դատարանում քննավեճն ավարտվեց: Նախագահը, երդվյալները առանձնացան՝ խորհրդակցելու և դատավճիռ արձակելու:

Քիչ անց դատական կազմը դահլիճում զբաղեցրեց իր տեղը, ապա հանդիսավոր հնչեց երդվյալներից մեկի ձայնը.

- Հանցավո՞ր է ամբաստանյալ Սողոմոն Թեհլերյանը 1921 թվականի մարտի 15-ին Թալեաթ փաշային սպանելու համար: Ո՛չ, հանցավոր չէ՛:

Սրահը դղրդաց որոտընդոստ ծափահարություններից: Երբ աղմուկը դադարեց, երդվյալը շարունակեց.

- Բանտարկության հրամանը ամբաստանյալի նկատմամբ չնչված է: Սողոմոն Թեհլերյանն արդարացված է:

ՀԵՏ ԳՐՈՒԹՅԱՆ[1] Սան Ֆրանցիսկոյի քաղաքային գերեզմանատանը կանգնած է մի գեղեցիկ հուշակոթող, որի վրա երկաթագիր տառերով դրոշմված է.

ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆ
1896 - 1960

Հուշակոթողի պատվանդանին երբեք չեն չորանում ծաղիկները...

ՊԼԱՆ

1. 1921 թվականի մարտի 15-ի առավոտը:
2. Թալեաթի սպանությունը:
3. Քննությունը:
4. Արդար դատավճիռ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու արտահայտությունները.*

անփույթ, վարանել, երդվյալ, ամբաստանյալ, փղի պես ծանրորեն սկսեց իջնել, զարմանալի անդորրություն համակեց էությունս, աչքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը, զենքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մեկ եղավ, սղոցված կաղնու պես թնդյունով տապալվեց երեսի վրա, սև, թանձր արյունը վայրկենապես լճացավ գլխի շուրջը, կարծես ջարդված անոթից մազութ էր թափվում:

1. Ըստ պրոֆ. Պ. Բեդիրյանի՝ *հետգրություն* ձևը ճիշտ չէ: Պետք է լինի *հետգրության*:

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԸ

Ըստ Գրիգոր Ջանիկյանի

Այստեղ հառնում են Հայաստանի ամենաբարձր լեռները: Սա մեր երկրի քարե տանիքն է, ուր դարեր առաջ Հայկը հաղթել է Բելին: Եկեք բռնենք այս գետի հունն ու Քաջքարի լեռներից իջնենք հովիտ: Տեսնո՞ւմ եք, դաշտ գահավիժելուն պես կտրուկ խոտորվում է, թեքվում ձորոխ: Դրա համար էլ Խոտորջուր է կոչվում:

Հարյուր, հազար տարի էլ անցնի, հնարավո՞ր է մոռանալ, թե ինչպես հրդեհեցին այդ սիրուն գյուղը, ճերմակահեր մամիկներին, ծոցվոր հարսներին, մի մաս երեխաներին ծեծելով ու խոշտանգելով ճամփա հանեցին 1915 թվականի հունիսի 11-ին: Սակայն կանայք խուճապի չմատնվեցին: Նորածիններին դրին փայտե օրորոցների մեջ, օրորոցները շալակներն առած, ճամփա ընկան: Բայց երբ Խոտորջուրը աստիճանաբար սուզվեց ամպերի մշուշում, այդ տղամարդ կանայք անգամ չդիմացան: Փլվեցին, փղձկացին ու մի ձայնի երգեցին.

- Մնա՛ս բարով, սիրո՛ւն Խոտորջուր,
Մնացե՛ք բարով, սարե՛ր ու ձորե՛ր,
Ժամե՛ր, մատուռնե՛ր,
Տո՛ւն ու թոնիրնե՛ր...

Երկինքը լսում էր նրանց ողբը ու, չէ՛, չէր ճաքում, լեռները փուլ չէին գալիս, վարարած ջրերը չէին քարանում: Ամենածեր խոտորջուրցին՝ Մարուղ մամիկը միայն, երբ Տեր-Զորի ճանապարհին տեսավ Ջեմալ փաշային, զգաց՝ նա՛ է որոշելու իրենց ճակատագիրը, լինել-չլինելը: Հարավային ճակատի գերագույն հրամանատարը հեծնել էր արաբական ճերմակ երիվարն ու զնգացնում էր ոսկյա ասպանդակները: Նայե՛ց, նայեց Մարուղ մամիկն ու մեկ էլ քանդեց լաչակը, ճերմակ մազերն ոտերն ի վար թափեց, չոքեչոք մոտեցավ:

- Փաշա՛, - ասաց, - քո գութն ենք աղերսում, թո՛ւյլ տուր դառնանք մեր տները: Մենք կինարմատ ենք, որ տեղով կրակ էլ կտրենք, ի՞նչ կարող ենք անել: Խղճա՛...

Լսեց փաշան վերից, շատ վերից ու ոսկեհյուս մտրակով քորեց ականջի հետևը: Նրա դեմքին մի անհասկանալի, անբացատրելի ժպիտ հայտնվեց:

- Քավթա՛ռ ջադու, - մեկ էլ մտրակը ծեր մամիկի դեմքին շաչեցրեց, - կարծում ես միտքդ չե՞մ հասկանում: Ուզում եք ողջ մնաք, որ էլի հայ լակոտնե՞ր ծնեք: Օձի էգն ու արուն չի լինում, հայ կանայք ավելի վտանգավոր են:

Նա մտրակը բարձրացրեց, որ մի անգամ էլ խփի, բայց նկատեց ձիու սմբակների տակ լճացող արյունն ու ցույց տվեց Տեր-Զորը:

- Տարե՛ք, բոլորի՛ն տարեք...

Ու կանանց տարան:

Դրանից մի քանի տարի անց անսպասելի լուր եկավ Թիֆլիս, որ Ջեմալ փաշան Քաբուլից տուն վերադառնալիս ցանկացել է քեֆ անել Քռի ափին, այն էլ Կախ-

թի գինով: Խոտորջուրցիները որոշեցին, որ եթե իրենք իրենց կանանց վրեժը չլուծեն, ուրեմն տղամարդ չեն, պիտի լաչակ կապեն, գնան Քուռն ընկնեն:

Վերջին գիշերը Ջեմալ փաշան, նա, որին Թուրքական դատարանն անգամ հեռակա կարգով մահվան էր դատապարտել, զվարճանում էր ճոպանուղու աղմկոտ ռեստորանում: Այդ իմանալուն պես Արտաշես Գևորգյանն ու Պետրոս Տեր-Պողոսյանը, «մաուզեր» ատրճանակները գրպանները դնելով, նետվեցին փողոց: Մյուս տասնմեկ խոտորջուրցիները հավասար հեռավորության վրա ժամապահ կանգնեցին փաշայի անցնելիք ճանապարհի ողջ երկարությամբ: Վերջապե՛ս...

Ջեմալն անձնական քարտուղարին կարգադրեց հաշիվը փակել ու թիկնապահներով շրջապատված դուրս եկավ: Նա, ըստ երևույթին, հարբած էր: Ոչ մի կերպ չէր ուզում կառք նստել, բռունցքը ճոճելով գոռում էր, որ ուր է, ուր չէ Թուրքիան ոտքի կկանգնի, ծնկի կչոքեցնի թշնամիներին ու իր սահմանները կհասցնի Բայկալ, Հնդստան: Թիկնապահները նրան թևանցուկ իջեցնում էին ու մտքում հարմար պաշտոններ ընտրում այդ անծայրածիր կայսրության մեջ: Ահա նրանք անցան Պուշկինյան պուրակը, Դվարցովայան, Գալավինսկին, Երմոլովյան վերելքը: Նոր էին Պետրոս Մեծի փողոցը մտել, երբ Արտաշեսն ու Պողոսը կարծես գետնի տակից ցցվեցին Ջեմալի դիմաց, և մինչ նա ձեռքը գրպանը կտաներ, ասացին.

- Մի՛ շտապիր, փաշա՛, մի՛տքդ բեր Տեր-Զորը, մեր անմեղ նահատակներին: Չե՞ս ուզում հիշել, հիմա կհիշես...

Որոտացին զենքերը: Այս ամենն այնքան արագ տեղի ունեցավ, որ Ջեմալը չհասցրեց ձեռքը գրպանը տանել: Օրորվելով ընկավ փողոցի սալահատակին, ու դեմքին այն ժպիտն ուրվագծվեց, որ ուրվագծվել էր, երբ Մարուզ մամիկը ծնկաչոք խնդրել էր խնայել կանանց կյանքը: Հենց այդ ժպիտը սառեց փաշայի դեմքին ու հավերժ մնաց...

ՊԼԱՆ

1. Խոտորջուր գյուղը:
2. Եղեռնի օրերը:
3. Տեր-Զորի անապատում:
4. Խոտորջուրցի տղամարդկանց որոշումը:
5. Հատուցում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քարե տանիք, կտրուկ խոտորվել, ճերմակահեր կանայք, ծոցվոր հարսներ, խուճապի չմատնվել, փայտե օրորոցներ, փղձկալ, մատուռ, լինել-չլինել, հարավային ճակատի գերագույն հրամանատար, աբաղական ճերմակ երիվար, ոսկյա ասպանդակներ, Խոտորջուր, խոտորջուրցի, Թուրքական դատարան, ծնկի չոքեցնել:

ՍՈՍԵ

Ըստ Սոնա Զեյթլյանի

Նշմարելի լեռան՝ ալ կարմիր կակաչներով ծածկված լանջերին՝ հուռթի կանաչի մեջ, տարածված էր Թեղուտը՝ շրջապատված խաղողի որթատունկերով, գողտրիկ տնակներով: Լեռնային թափանցիկ օդը, ձյունափառ գագաթները, բարձունքները գալարվող կածանները, վերևներից հոսող փրփրադեզ գետակները ստեղծել էին հեքիաթային բնապատկեր:

Իրենց բնության նման խրոխտ ու խիզախ էին թեղուտցիները, պարզ, շիտակ մարդիկ՝ զերծ ճևականություններից ու խորամանկություններից: Ցերեկն աշխատում էին, գիշերները հավաքվում որևէ մեկի տանը, ու ծայր էր առնում զրույցը՝ համեմված հրաշապատում առասպելներով, ժողովրդական դյուցազներգությամբ:

Հյուրընկալ էր թեղուտցի Մարգարի օջախը: Բազմանդամ ընտանիք էր. ապրում էին բոլորը միասին, սիրով ու համերաշխ: Մարգարը ուներ շատ երեխաներ, որոնց մեջ իր գեղեցկությամբ առանձնանում էր կրտսեր աղջիկը՝ Սոսեն: Լեռնային օդը չէր կոպտացրել մաշկը: Նա ճերմակ-վարդագույն այտեր ուներ և խարտյաշ գանգուր մազեր: Երբ երեկոյան գյուղի երիտասարդները հավաքվում էին նրանց տանը, և հորեղբայր Առաքելը հետաքրքիր դեպքեր էր պատմում նախնիների քաջագործություններից, Սոսեն հափշտակությամբ լսում էր, և այտերը վառվում էին ներքին հուզմունքից:

Բազմաթիվ ուզողներ ուներ Սոսեն, բայց համառորեն մերժում էր: Հայրը, որը հատուկ քնքշություն էր տածում լեռան ծաղիկ հիշեցնող դստեր նկատմամբ, չէր բռնանում և ներողամիտ ժպիտով էր նայում նրան:

Մի օր, երբ գյուղի երիտասարդները դարձյալ բոլորել էին նրանց օջախի շուրջը, հորեղբայրը խոսք բացեց Սոսեին նշանելու մասին: Աղջիկը հանկարծ առանց ճևականությունների խոստովանեց.

- Կնշանվեմ միայն Սերոբի հետ:

Ներկաները ծիծաղեցին: Ծիծաղեց նաև Սերոբը, բայց աղջկա ասածը չմոռացավ: Մի քանի ամիս անց նրանք ամուսնացան:

Լավ կին դարձավ Սոսեն ամուսնու համար: Նա Սերոբի ոչ միայն կինն էր, այլ նաև ընկերը, անձնվեր բարեկամը:

Փող վաստակելու նպատակով Սերոբը գնաց պանդխտության: Սոսեն դարձավ ընտանիքի և՛ հայրը, և՛ մայրը: Ո՞վ կհամարձակվեր խեթ նայել նրա օջախին կամ մոտենալ ոչխարներին: Գող ու ավազակ ահ էին զգում քաջարի կնոջից:

1896 թվականի կոտորածներից առաջ Սերոբը վերադարձավ հայրենի գյուղ: Զգալով մոտալուտ վտանգը՝ երիտասարդներին հորդորեց զենք գնել և պատրաստ լինել ամեն անակնկալի: Զինվեցին, ջոկատներ կազմեցին, որոնց ղեկավարում էր ինքը՝ Սերոբը: Խմբին միացավ նաև Սոսեն: Խնդրանքը, համոզելու բոլոր փորձերն ապարդյուն էին:

- Որտեղ Սերոբը, այնտեղ էլ ես ու զավակներս, - հայտարարեց վճռականորեն:

Խումբը քաշվեց սարերը, Սոսեն՝ նրանց հետ: Հրաշալի տիրապետում էր զենքին, փոթորկի պես ձիով սուրում՝ քաջության զարմանալի դասեր տալով տղամարդկանց:

Հաստատվեցին բարձրադիր գյուղերից մեկում: Ի՜նչ ջարդեր կերան թուրքերը, ի՜նչ ահուսարսափով էին լսում Սերոբի անունը: Բանեցրին ամեն հնար՝ բռնելու հայ գյուղացնին, որի անունն արդեն լեգենդ էր դարձել նույնիսկ իրենց՝ թուրքերի համար:

Տեսնելով, որ ուժով անհնար է հաղթել, դիմեցին ամենաստոր միջոցի՝ մատնության: Ոսկով գնված մի հայ Սերոբի ծխախոտի մեջ թույն խառնեց: Երբ գյուղը պաշարեցին, Սերոբն այնքան թույլ էր, որ հազիվ էր կանգնում ոտքի վրա: Սակայն նույնիսկ այդ վիճակում ութ ժամ հերոսաբար կռվեց՝ անընդհատ կողքին զգալով Սոսեին, նրա քաջալերանքը:

Մարտի ժամանակ Սերոբն ընկավ թշնամու գնդակից: Սոսեի աչքերը մթնեցին: Հերարձակ կռվում էր, հրե հեղեղով սարսափի մատնում թշնամուն: Անահավատ թուրքերին նա երկնային ոգի էր թվում, հրեղեն էակ: Նույնիսկ անդրանիկ որդու՝ Հակոբի զոհվելը չմարեց Սոսեի ցասումը: Արցունքները կուլ տալով՝ նոր առնլությամբ նետվեց մարտի՝ անգամ չզգալով, որ թշնամու գնդակը խոցեց աջ դաստակը: Ծորում էր արյունը, զենքը չէր կարողանում բռնել, շրջապատման օղակը նեղանում էր գնալով: Սոսեն գերի ընկավ: Այնքան հերոսական, այնքան վեհ էր նա, որ ապշեցրեց անգամ թշնամուն: Թուրք հրամանատարը հրամայեց չսպանել նրան, կալանավորել:

Սոսեին նետեցին Բաղեշի բանտը:

Թուրքական բա՜նտը: Ի՜նչ տանջանքներ, ի՜նչ կտտանքներ կրեց Սոսեն, բայց դիմացավ: Երբ դուրս եկավ բանտից, աշխարհում միայնակ էր մնացել: Զոհվել էր երկրորդ զավակը ևս: Սևեր հագած Սոսեն ցավով թողեց երկիրը, հաստատվեց Ալեքսանդրիայում:

Տարագրությունը ծանր էր նրա համար: Հաճախ սրտի խոր մրմուռով ասում էր.

- Ախր մեր անբախտ երկիրը մոռանալու բան չէ: Աստված կուրացնի թշնամու աչքը, որ մեզ այսպես անտուն դարձրեց, նետեց օտար ափեր:

Սիրելիներին կորցրած տարաբախտ կինը երբեք չհանեց սև հագուստն ու գլխաշորը: Արտասուքով էր հիշում ամուսնուն ու դողդոջուն ձայնով ժողովրդական երգեր երգում նրա մասին: Իսկ երբ երկրից եկած հայրենակցի էր հանդիպում, կարոտը նոր ուժով էր բորբոքում սիրտը: Հարազատի նման ողջագուրվում էր, ասում.

- Տղա՛, լա՛ո, փաշա Սերոբիս հողից ու ջրից ես: Հիշու՞մ են հայրենյաց փառք ու պատիվ իմ Սերոբին:

Սոսեն չէր վախենում մահից: Հավատացած էր, որ մի օր այն աշխարհում հանդիպելու է «փաշա» ամուսնուն:

1953-ին նա ավանդեց հոգին:

- Սերոբը կանչում է, իր մոտ եմ գնում, - վերջին րոպեին ասաց իր բարեկամ Հայկ Խանամիրյանին:

Սոսեն հրաժեշտ տվեց այս աշխարհին՝ իր մասին թողնելով անմար հուշ: Ժողովուրդը նրան անմահացրեց սքանչելի երգերում ու զրույցներում:

ՊԼԱՆ

1. Թեղուտ գյուղը:
2. Թեղուտցի Մարգարի հյուրընկալ օջախը:
3. Սոսին:
4. Սոսի ամուսնությունը Սերոբի հետ:
5. Ֆիդայական շրջանի կազմավորումը:
6. Հերոսամարտ. Սերոբի մահը:
7. Տարագրություն և կորուստ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

Հուրթի կամաչ, խաղողի որթատունկերով շրջապատված գողարիկ տնակներ, լեռնային թափանցիկ օդ, ձյունափառ գագաթներ, գալարվող կածաններ, փրփրադեզ գետակներ, հեքիաթային ճանապարհներ, հրաշապատում երանգներ, ժողովրդական դյուցազներգություն, ճերմակ-վարդագույն այտեր, խարտյաշ գանգուր մազեր, լեռան ծաղիկ հիշեցնող դուստր, ոսկով գնված հաց, տարագիր կին:

ՏԱՐԱԳԻՐ ՍՊԱՐԱՊԵՏԸ

Ըստ Գրիգոր Ջանիկյանի

Բոստոնի հիվանդանոցներից մեկում մեռնում էր Դրաստամատ Կանայանը: Դրոն մեռնում էր անկողնում, և նրան թվում էր, թե ճակատագիրն ավելի դաժան պատիժ չէր կարող սահմանել: Նահանգապետ Նակաշիձեին, զորավար Ալիխանով-Ավարսկուն, ոստիկանապետ Տեր-Սահակովին ահաբեկչության ենթարկելուց, Վանի, Բաշ-Ապարանի, Նախիջևանի, Ղարաքալի, Սուրմալուի, Լոռվա չեզոք գոտու ճակատամարտերում հաղթելուց հետո նա չէր կարողանում հոգի տալ փետուրե մահճում, օտար, անձրևոտ քաղաքում...

Քո մասին ճիշտ էին ասում, զորավա՛ր. «Նա մի մարդ է, որ միշտ փոթորիկներ է փնտրում»: Փոթորիկներն, իրոք, անընդհատ հետապնդել են քեզ: Անգամ մահից հետո: Բոստոնում այնպիսի բուք-բորան էր, որ օրերով հետաձգվեց նույնիսկ թաղման արարողությունը: Թե՞ քեզնից չկարողացան բաժանվել խոնարհված եռագույնները, ծերացած, բայց քո աճյունի մոտ կամավորական համազգեստով պատվո պահակ կանգնած զինվորներդ, ամերիկահայությունը:

Թաղման օրը հուղարկավորներն այնպես էին լցրել Բոստոնի հրապարակներն ու մայրուղիները, որ ամերիկացիները կանգնում, հարցնում էին զարմացած.

- Այս ու՞մ են թաղում:

Զինակից ընկերները հուղարկավորությունից մի օր առաջ մոտեցան Դրոյի կնոջը, ասացին.

- Այն սիրտը, որ ողջ կյանքում տրոփել է Հայաստանի համար, օտար հողում չպետք է թաղվի:

Տիկին Գայանեն սարսռաց: Մեռած մարդու սիրտը հանելը նրան բարբարոսու-

թյուն թվաց, բայց երբ տիրապետեց իրեն, համակերպվող խոնարհությամբ ասաց.

- Արե՛ք, ինչ ուզում եք: Նա որքան ինձ, նույնքան էլ Հայրենիքին է պատկանում:

Քո մարմինը, զորավա՛ր, վերջապես իր հանգիստը գտավ Բոստոնի ծայրամասում գտնվող գերեզմանոցում, բայց սիրտդ, հատուկ անոթի մեջ պահվող սիրտդ դեռ տառապում էր: Հայրենիք մեկնող պատվիրակությունները վերադառնում էին ձեռնունայն: Այն երկիրը, որին դու տվել էիր ողջ կյանքդ, քո սրտի համար մի փոքրիկ անկյուն, անգամ մի ափ հող գլանում էր:

Դու զարմանալի հեռատեսությամբ կանխազգացել էիր այդ ամենն ու Հայաստանից հեռանալիս եռագույն փոքրիկ տոպրակով Սարդարապատի հող վերցրել հետդ:

Սարդարապատից Ամերիկա հասցրած քո մի բուռ հողը, զորավա՛ր, արդեն մասունք է դարձել և ձեռքից ձեռք անցնելով՝ այժմ պահվում է անոթի մեջ: Տարին երկու անգամ՝ ապրիլի քսանչորսին և մայիսի քսանութին, ամերիկահայ պատանիները հանում են եռագույնով փաթաթված հողը, առջևը մոմ վառում, խունկ ծխում, քար լռության մեջ երդվում իրականացնել քո նվիրական երազանքը:

Բայց սիրտդ, նույնիսկ բժշկության գերարդիական միջոցներով պահպանվող սիրտդ չդիմացավ Հայրենիքի կարոտին: Հետզհետե թռշնեց, դալկացավ, և քսանութ տարի սպասելուց հետո տիկին Գայանեն որոշեց փրկել նրան տառապանքներից, քո մարմնին վերադարձնել:

Դա Ամերիկայում երբևէ տեղի ունեցած ամենաարտասովոր թաղումն էր: Գերեզմանոցում մարդկային սիրտ էին թաղում, և քո վերջին վիշտը մեղմելու համար արարողապետն իր ձեռքով Արաքսից բերած ջուր ու Սարդարապատի հող էր խառնում քո սրտի վրա ծանրացող օտար, պաղ հողին:

Կա սակայն մի հանգամանք, որ չպետք է անտեսել: Քո տապանաքարի նման պարզ, անշուք տապանաքարեր հայերը սովորաբար դնում էին ժամանակավո՛ր գերեզմանի վրա: Որ տեղը չկորչի: Որ տեղափոխելը հեշտ լինի...

Ճիշտ է, որ մարդկային համբերությունը, մանավանդ հայինը, ասում են, սահման չունի:

Իսկ շիրիմների՞նը...

ՊԼԱՆ

1. Մեռնող զորավարը:
2. Փոթորիկներ որոնողը:
3. Զարմանալի թաղում:
4. Մարմնից անջատված սիրտ:
5. Մի բուռ հայրենի հող:
6. Հայրենիքի կարոտին չդիմացած սիրտը:
7. Տարագիր շիրիմների համբերությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ հատուկ անունները.

Դրաստամատ Կանայան, Վան, Բաշ-Ապարան, Նախիջևան, Ղարաբաղ, Սուրմալու, Լոռի, Սարդարապատ:

ԴԱՆԿՈՅԻ ՍԻՐՏԸ

Ըստ Մ. Գորկու

Դարեր, շատ դարեր առաջ մի տափաստանում ապրում էին ուժեղ ու համարձակ մարդիկ: Անանցանելի անտառները երեք կողմից շրջապատել էին նրանց բնակավայրը, իսկ չորրորդ կողմում տափաստանն էր:

Որտեղից որտեղ երևան եկան ուրիշ ցեղեր և գրավելով տափաստանը՝ բնիկներին քշեցին խավարչոտ անտառի խորքերը, ուր նեխած ճահիճներ էին, անանցանելի թավուտներ՝ զուրկ արևի կենարար ճառագայթներից: Ծառերի ճյուղերն այնպես էին միմյանց հյուսվել, որ առաջ գնալու նույնիսկ արահետ չկար: Դողէրոցքից և զանազան ախտերից մեռնում էին մարդիկ՝ կարոտ լույսի ու մաքուր օդի: Գաղջ գարշահոտության մեջ նստած՝ նրանք անգործությունից արյուն-արցունք էին թափում՝ գիշեր-ցերեկ մտածելով այդ վիճակից դուրս գալու մասին:

Հասավ այն պահը, երբ այլ ելք չգտնելով՝ նախընտրեցին գնալ թշնամու ոտքը, ստրուկ դառնալ, միայն թե ազատվեն լպրծուն ճահիճներից: Բայց այստեղ առաջ եկավ Դանկոն՝ գեղեցիկ ու համարձակ մի երիտասարդ, և ասաց.

- Մտածելով քարը ճամփից դեն չես գցի: Վե՛ր կացեք, երթանք անտառ և ճեղքելով այն՝ ազատվենք այս գեհենից:

Դանկոն առաջնորդեց նրանց:

Դժվարին էր նրանց ճամփան: Ամեն քայլափոխի ճահիճը բաց էր անում իր ահարկու երախը՝ կլանելու նրանց: Ծառերի ճյուղերը, որ օձերի նման գալարվել էին շուրջբոլորը, փակում էին ճանապարհը: Եվ ահա երկնչելով դժվարություններից՝ մարդիկ սկսեցին տրտնջալ՝ երկմտելով, թե ուր է տանում իրենց այդ անփորձ երիտասարդը: Իսկ Դանկոն զվարթ ու համարձակ քայլում էր առջևից՝ վստահ իր առաքելությանը:

Մի անգամ փոթորիկ պայթեց, և անտառն այնքան մթնեց, որ թվաց՝ աշխարհի բոլոր գիշերները հավաքվել են այնտեղ: Ոռնում էր մրրիկը, և օրորվում էին ծառերը՝ իրենց ծուռումուռ, անճոռնի ձեռքերով ասես ցանկանալով բռնել հոգնատանջ մարդկանց:

Վհատվեցին մարդիկ և կանգ առնելով՝ անտառի չարագույժ աղմուկի մեջ սկսեցին ամբաստանել Դանկոյին:

- Դու, - ասացին, - չնչին ու վնասակար մարդ ես: Մեզ խաբեցիր և դրա համար կմեռնես:

Դանկոն ապշած նայեց. իրեն շրջապատողների դեմքերին չկար ազնվություն, կամք, ձգտում: Դանկոն է՛լ ավելի համակվեց նրանց փրկելու ձգտումով, և առավել վառվեցին աչքերը՝ շողշողալով այրող ճառագայթներով: Տեսնելով այդ՝ փոքրոգի ու ողորմելի մարդիկ կարծեցին՝ նա կատաղել է, և ավելի սեղմեցին օղակը, որ հեշտությամբ բռնեն ու սպանեն նրան:

- Ի՞նչ անեմ մարդկանց համար, - որոտից էլ ուժգին դղրդաց Դանկոյի ձայնը:

Ու հանկարծ նա ձեռքերով պատառոտեց կուրծքը, այնտեղից հանեց սիրտը ու պահեց գլխից վեր: Այն վառվում էր արևից էլ պայծառ, այնքա՛ն պայծառ, որ խա-

կույն ցնդեց խավարը՝ տեղը զիջելով վառվռուն լույսին:

Մարդիկ քարացան:

– Գնա՛նք, – անհողդողդ գոչեց Դանկոն և վառվող սիրտը ձեռքին՝ նետվեց առաջ՝ լուսավորելով ճանապարհը:

Եվ ահա անտառը բացվեց, ու մարդիկ միանգամից ընկան լույսի, անապակ օդի ու զմրուխտ կանաչի օվկիանոսը: Իսկ Դանկոյի սրտից անընդհատ հեղվում էր բորբ արյունը:

Սիգապանծ ու համարձակ Դանկոն, մի հայացք նետելով լայնարձակ երկրի վրա, հպարտ ծիծաղեց ու մեռավ: Նրա կողքին դեռ բոցկլտում էր համարձակ սիրտը:

ՊԼԱՆ

1. Տափաստանում ապրող ուժեղ ու համարձակ մարդիկ:
2. Բնիկների արտաքսումը խավարչտին անտառ:
3. Սարսափելի բնակավայրը:
4. Դանկոն առաջնորդ:
5. Ազատության դժվարին ճամփան:
6. Ապերախտ մարդկանց վարմունքը:
7. Ազատատենչ սիրտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անանցանելի անտառներ, դողէրոցք, զանազան ախտեր, արյուն-արցունք, լպրծուն ճահիճներ, ահարկու երախ, օձի նման գալարվել, առաքինություն, անճոռնի ձեռքեր, վհատվել, չարագույժ աղմուկ, ամբաստանել, չնչին ու վնասակար մարդ, փոքրոգի, ողորմելի, խավարը ցնդել, բորբ արյուն, սիգապանծ ու համարձակ:

ՊՐՈՄԵԹԵՎՍ

Ըստ հունական դիցաբանության

Սկյութների երկրում կա մի ամայի տեղ, որտեղ երկինք կարկառող դժնատեսիլ ժայռերը իրենց լերկ կատարներով մխրճվում են մթամած թուխպերի մեջ, շուրջբոլորը կուտակ-կուտակ քարեր են՝ զարհուրանք առաջացնող գորշ ու վիթխարի զանգվածներով: Ծովն այնտեղ երբեք հանդարտ ու խաղաղ չէ: Բախվելով մռայլ ապառաժներին՝ ջրերը խուլ հեծկլտում են՝ չարագույժ խշշոցով փշրվելով վայրի ափերին: Զարհուրանք առաջացնող այդ վայրում որևէ կենդանի արարած ոտք չի դրել: Չկան ո՛չ գազաններ, ո՛չ թռչուններ, ո՛չ ծառ ու թուփ, ո՛չ խոտ ու ծաղիկ:

Ծանրաբարձ Զևսի անողոք սպասավորները՝ Ուժն ու Իշխանությունը, և որդին՝ դարբնության աստված Հեփեստոսը, այս մռայլ վայրերն ուղեկցեցին շղթայակապ Պրոմեթևսին: Աստվածների հայրը՝ Զևսը, ատեց և ամբաստանեց հանդուգն տիտանին այն պատճառով, որ նա, ընդդիմանալով Օլիմպոսի օրենքներին, պաշտպան էր կանգնել մահկանացուներին՝ գաղտնի նրանց հասցնելով աստվածային կրակը:

Հավաքելով աստվածներին՝ Զևսը հայտարարեց.

- Պրոմեթևսը զրկված է Օլիմպոսի բնակիչ լինելու շնորհից: Դեմ գնալով իմ պատվիրաններին և ընդվզելով մեր օրենքների դեմ՝ նա մարդկանց է հանձնել կյանքի աղբյուրի՝ կրակի գաղտնիքը: Ահա թե ինչու պիտի գամված մնա ժայռերին, չարաչար տանջվի, քանի դեռ ներում չի հայցել իր մեղքի համար:

Աստվածները նայեցին Պրոմեթևսին: Նա կանգնել էր խրոխտ ու վեհ և չէր խոնարհում հպարտ գլուխը ամպրոպածին Զևսի առջև:

Պրոմեթևսին հասցնելով սկյութների երկրի ամայի վայրերը՝ Ուժն ու Իշխանությունը բարձրացրին մի լերկ ժայռի վրա և Հեփեստոսին կարգադրեցին նրան գամել:

- Պողպատե սուրսայր մեխով այնպե՛ս գամիր ապառաժին, որ շարժվել անգամ չկարողանա, - պատվիրեցին նրանք:

Հրամանը կատարված էր: Բիրտ Ուժը, ծաղրելով վեհատեսիլ տիտանին, որ գամված վիճակում նույնիսկ անընկճելի էր, ասաց.

- Դե հիմա՛ փորձիր մահկանացուներին տալ աստվածային շնորհները: Տեսնենք՝ կարո՞ղ են քեզ օգնել քո այդ երկրային խղճուկ զեռունները:

- Իմ տանջանքներն ու վիշտը չեմ փոխի ձեր քսու ճորտության հետ, - ընդոստ արհամարհանքով պատասխանեց տիտանը: - Լավ է ժայռին գամված մեռնել, քան Զևսի ստրուկը լինել:

Որոշ ժամանակ անց տիտաններից մի քանիսը փորձեցին միջամտել՝ Պրոմեթևսին համոզելով ներում խնդրել Զևսից: Բայց նա անդրդվելի էր:

- Օ՛, դու՛ք՝ ստրուկնե՛րդ, ծնկաչոք սողացե՛ք ձեր տիրոջ առջև: Կմեռնեմ, բայց չե՛մ սողա: Ինձ մահ չկա: Թող Զևսն ինչ ուզում է անի:

Այդ ժամանակ Զևսի բանբեր Հերմեսն ասաց.

- Ամբարի՛շտ, ամբարտավա՛ն հսկա, այսուհետև կսաստկանա՛ն տանջանքներդ, որովհետև ամեն օր քեզ մոտ կթռչի Զևսի ուղարկած արծիվը՝ սուր-սուր ճանկերով ու կեռ կտուցով ծվատելու լյարդդ: Բայց իմացի՛ր, համա՛ռ ապստամբ, լյարդդ մի գիշերում կաճի՝ հաջորդ օրը դարձյալ արծվին կեր դառնալու համար: Խոնարհվի՛ր ուրեմն և կփրկվես:

- Արծվի լլկանքը նախընտրում եմ Զևսի շնորհներից: Թող ապրեմ տանջանքով, բայց ո՛չ ծնկաչոք:

Արյունալի խրախճանքի ծարավ արծիվը ամեն օր իջնում էր Պրոմեթևսի կրծքին՝ հոշոտելու նրա լյարդը, և հեղեղի պես հորդում էր արյունը՝ ներկելով ապառաժը: Եվ այսպես՝ դարեր:

Բայց ահա մի օր որպես մեծազոր աստված՝ հայտնվեց Հերակլեսը և տեսնելով հսկայի տանջանքները՝ սոսկաց: Նա նետախողխող արեց արծվին և փշրեց դարավոր շղթաները: Խրոխտ կանգնեց տիտանը, լիաթոք շնչեց, ըմբոշխնեց ազատության բերկրանքը:

Նրա անընկճելի հոգին երբեք չխոնարհվեց՝ անգամ շղթաների մեջ մնալով ազատ:

ՊԼԱՆ

1. Սկյութների երկրի դժնատեսիլ վայրերը:
2. Զևսը պատժում է Պրոմեթևսին:
3. Մարդկանց բարեկամին գամում են ապառաժին:
4. Անկոտրում հսկան:
5. Հերակլեսը փրկում է Պրոմեթևսին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

երկինք կարկառող դժնատեսիլ ժայռեր, լերկ կատարներ, մթամած թուխպեր, կուտակ-կուտակ քարեր, զարհուրանք առաջացնող գորշ ու վիթխարի զանգվածներ, խուլ հեծկլտալ, չարագույժ խշշոց, անթարձակ Զևս, անողոք սպասավորներ, ամբաստանել, սուրսայր մեխ, խղճուկ գեռուններ, անդրդվելի, սուր-սուր ճանկեր, կեռ կտուց, արյունալի խրախճանք, նետախողխող:

ԱՐՅԱՆ ԿԱՆՉՈՎ

Ըստ Հր. Քոչարի

Պետերբուրգի երաժշտանոցում սովորելու տարիներին ապրում էի մի ընտանիքում: Ծագումով հայ էին, բայց հայերեն չգիտեին, իսկ բարքերն ու կենցաղը լրիվ ռուսական էին: Փոխել էին նույնիսկ իրենց ազգանունը: Հնչեղ Տիգրանյանը դարձրել էին Տիկրանով:

Ընտանիքի մայրը՝ Ասյա Արտեմովնան, մոտ ութսուն տարեկան վեհաշուք մի կին էր: Նա երեք տարեկան էր եղել, երբ հայրը, որ այն ժամանակ բարձրաստիճան զինվորական էր, ընտանիքով Արցախից տեղափոխվել էր Պետերբուրգ: Փոքրիկ հայուհին՝ Աստղիկը, որ հետագայում «Ասյա» էր վերանվանվել, կտրվելով հայրենի միջավայրից, ռուսացել էր:

Ասյա Արտեմովնան սիրում էր կ՚արդալ պատմական երկեր ռուսերենով, անգլերենով կամ ֆրանսերենով: Հաճախ կանչում էր ինձ, հարցուփորձ անում Կովկասից: Նրան հետաքրքրում էր, թե եղել եմ Արցախում, տեսել եմ իր ծննդավայրը՝ Շուշին:

- Տեսել եմ Եվրոպայի բոլոր մայրաքաղաքները, բայց հայրենիքս՝ ոչ: Մեղավոր եմ, բայց մեղքս քավել չեմ կարող, ուշ է արդեն, - ասում էր դառնությամբ:

- Իսկ ինչպե՞ս է, որ այդքան լեզուներ գիտեք, բայց հայերեն՝ ոչ, - մի անգամ հարցրի ես:

- Իրավունք ունեք կշտամբելու, հայերեն չգիտեմ, անգամ տառերը չեմ ճանաչում, այնինչ, հիշում եմ, մանկությանս օրերին ազատ խոսում էի:

Անցան օրեր ու շաբաթներ, և եկավ Պետերբուրգի ցրտաշունչ, մառախլապատ ձմեռը: Սառնամանիքներն սկսվեցին, և Ասյա Արտեմովնան ծանր հիվանդացավ: Բոլորս երար էինք անցել: Տեր կնոջ վիճակն օրհասական էր:

Մի օր էլ, երբ դասի էի երաժշտանոցում, հանկարծ լսարանի դուռը բացվեց, և

լսեցի Այսա Արտեմովնայի թոռնուհու՝ Վերայի տագնապած ձայնը՝ Տիգրա՛ն:

Առանց թույլտվություն խնդրելու՝ դուրս թռա լսարանից:

- Տատիկը բարձր ջերմություն ունի, - արագ-արագ պատմեց Վերան, - գիտակցությունը կորցրել է, զառանցում, քո անունն է տալիս, վազենք, շո՛ւտ:

Այսա Արտեմովնան չճանաչեց նաև ինձ: Հայացքն անորոշ մի կետի՝ մեխված, ինչ-որ բան ասում ինքն իր հոգուն: Կռացա, ականջ դրի ու զարմանքից քարացա. նա պարզ ու հստակ հայերեն բառեր էր արտասանում հայրենի Ղարաբաղի բարբառով ու առոգանությամբ. «Մնա՛ք բարով, ա՛ խոխեք, ես գնալական եմ, մնա՛ք բարով»: Ծանր էր շնչում, դեմքը ջերմից վառվում էր: Լռում էր մի պահ ու դարձյալ կրկնում նույնը: Ականջներիս չէի հավատում: Չէ՛, լսողությանս ոչ մի խաբկանք չկար. ծեր կինը հայերեն էր խոսում: 75 տարի առաջ մարած, կորած հնչյունները կենդանացել ու արձագանքում էին նրա հոգու խորին գաղտնարաններում և այնտեղից դուրս գալով՝ թրթռում չորացած շրթունքների վրա:

Հիվանդն աստիճանաբար խաղաղվում էր: Աչքերը փակեց, երկար լուռ մնաց, ապա կրկին դողդողացին շրթունքները. «Ծարա՛վ եմ, աղջի՛, ծարա՛վ եմ, քե՛ մատաղ...»:

Ջուր բերի, մոտեցրի շրթունքներին: Մի կում խմեց, մշուշոտ հայացքը մի քիչ լուսավորվեց, շշնջաց. «Ջորանա՛ս, քե՛ մատաղ, ջորանա՛ս»:

Երևույթն իսկապես որ հրաշքի էր նման: Մահվանը մոտիկ կանգնած 80-ամյա կինը արյան կանչով, Աստծո զորությամբ հնչեցնում էր վաղու՜ց մոռացված մայրենին և ինքնամոռացման մեջ ժպտում՝ ասես վայելելով հեռավո՜ր, բայց քա՜ղցր, անու՜շ, հարազատ մի մեղեդի:

ՊԼԱՆ

1. Տիկրանովների ընտանիքը:
2. Հայրենիքից կտրված հայուհին:
3. Այսա Արտեմովնան հիվանդանում է:
4. Հայաբառ մրմունջ:
5. Արյան կանչով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ծագումով հայ, բարքեր, կենցաղ, վեհաշուք կին, բարձրաստիճան զինվորական, մեղքը քավել, ցրտաշունչ ձմեռ, տագնապած ձայն, զառանցել, Ղարաբաղի բարբառ, լսողության խաբկանք, կորած հնչյուններ, խորին գաղտնարաններ, ծերունական շուրթեր, մշուշոտ հայացք, անուշ մեղեդի:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԸ

Ըստ Ալ. Խաչատրյանի

Աշնան մի պայծառ առավոտ էր, Արարատյան դաշտի հրաշալիք աշունը՝ Հուռթի այգիներից լիության անուշ բուրմունքն էր խնկում:

Երկու ընկերով գնում էինք հինավուրց Արմավիրի բլրի տակով: Քայլում էինք Երասխի հունով դեպի մի գյուղ՝ գետի ձախ ափին: Մեր գլխավերևում խորհրդավոր ծփում էին տոփիները, իսկ դեմ դիմաց Մասիսն էր՝ նման սպիտակավառ աղյուծի, որ, նստած հետևի ոտքերի վրա, սլաքը գլուխը ամպերի մեջ, խորհում էր հանգիստ ու անվրդով: Իսկ Արարատյան դաշտի լայնքով ու երկայնքով աշնան արևը փռել էր իր ծիրանին:

Հասանք գյուղ և այցելեցինք դպրոց:

Արաքսի ափին՝ հաստաբուն ընկուզենու տակ, հասարակ նստարանների վրա, խումբ-խումբ տեղավորվել էին բավական մեծ թվով մանուկներ և պատանիներ:

Օրը կիրակի էր: Գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիքն էր աշակերտներով: Այն միայն մի ուսուցիչ ուներ՝ եռանդուն ու հայրենասեր մի երիտասարդ: Մի խումբ այբուբենն էր սովորում, մյուս խմբում «Մայրենի լեզու» էին կարդում, երրորդում՝ «Դավիթ-Բեկ»:

Երբ դասաժամը վերջացավ, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ երգ շատ էր սիրում, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ ասեն: Ուսուցիչը պատասխանեց, թե ինքը դժբախտաբար «բաղաձայն» է և դրա համար էլ երգ չի սովորեցրել, սակայն ավելացրեց, որ աշակերտների մեջ երգողներ կան, և առաջարկեց նրանց, թե ով կարող է, թող երգի: Փոքրերը սիրտ չարին, մեծերն էլ քաշվեցին...

- Բայց լավ կլինի բոլորը գոնե մի ընդհանուր ազգային երգ գիտենան. օրինակ, «Մայր Արաքսին», որ շա՛տ տեղին է, հենց նրա ափին եք, - ասաց ընկերս:

Ուսուցիչը կարմրեց, ապա մի պահ մտածելուց հետո գլուխը եռանդուն թափահարելով՝ դարձավ աշակերտներին.

- Հապա՛, սիրելինե՛րս, շարվեցե՛ք այստեղ, - և հետո դարձավ մեզ, - ինչպե՞ս չէ, գիտեն և լավ գիտեն:

Ու ձեռքի քանոնը թափով վեր բարձրացնելով՝ գոչեց.

- Բոլորդ միասին ինձ հետ երգեցեք «այբ-բեն-գիմ»: Չէ՞ որ բոլորիդ անգիր սովորեցրել եմ, և միասին բարձրաձայն ասել ենք: Դե՛հ, այսպես:

Եվ քանոնի հավասար բախումներին ներդաշնակ՝ բոլորը, հետևելով ուսուցչին, սկսեցին միասին բարձր և եղանակավոր ձայնով ասել.

Այբ, բեն, գիմ,
Դա՛, եչ, զա,
Է, ըթ, թօ...

Այսպես քառասուն-հիսուն կրծքից բխած այս հուժկու, բազմահնչյուն և միահամուռ ձայնը, որ ինքնին հայոց լեզուն է, Երասխի շառաչի հետ փռվելով Արարատյան աշխարհի վրա, թվում էր, թե սլանում է ազատ Մասիսն ի վեր:

Ամենքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգևորված էր:

- Ահա՛ ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամեն հայ անպատճառ պետք է գի-

տենա. չորս-հինգ տարի է՝ ես այդ երգն եմ սովորեցնում, ուրիշ երգ չեմ ճանաչում, - բոցավառ շրթունքներով շնչասպառ ասաց ուսուցիչը և սրբեց քրտնած ճակատը:

- Շատ ճիշտ եք անում և կեցցե՛ք. իսկապես որ անմահ էր, - ոչ նվազ ոգևորությամբ պատասխանեցինք մենք:

Ապա մեր շնորհակալությունը հայտնելով՝ ամուր սեղմեցինք սրամիտ ուսուցչի ձեռքը և ուրախ ու թեթև շարունակեցինք մեր ուղին:

Մի պահ գտնվում էինք այդ տարօրինակ երգի ազդեցության տակ. ընկերս խզեց լռությունը.

- Համաձայն չե՞ս, որ քանի հայը կապրի, հայոց այբուբենը չի՛ մեռնի:

- Այո՛, - ասացի, - բայց ես հակառակին ավելի համաձայն եմ. քանի հայոց այբուբենը կապրի, հայը չի՛ մեռնի...

- Դրան նույնպես համաձայն եմ, - սրտաբուխ ձայնով պատասխանեց ընկերս:

ՊԼԱՆ

1. Արարատյան դաշտը:
2. Գյուղական դպրոցը:
3. Հյուրերի ցանկությունը:
4. Ազգային երգը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

աշնան պայծառ առավոտ, հրաշագեղ աշուն, հուռթի այգիներ, բուրմունք խնկել, հինավուրց Արմավիր, Երասխ, խորհրդավոր ծփալ, սպիտակաբաշ առյուծ, պլոր գլուխ, հաստաբուն ընկուզենի, «Մայր Արաքսի» երգը, բազմահնչյուն և միահամուռ ձայն:

ԱԼՄԱՍՏԵ ԳԱՀԸ

Ըստ տարբեր աղբյուրների

1660 Թվականի ամառային մի պայծառ օր Պարսկաստանի Նոր Ջուղա քաղաքը տոնական տրամադրության մեջ էր: Մարդիկ խռնվել էին մեծահարուստ վաճառական Սահրադ Սահրադյանի գրասենյակի բակում՝ արտակարգ մի բան տեսնելու ակնկալությամբ: Եվ իսկապես, այդ օրը ցուցադրվելու էր հայ վարպետների ձեռքով պատրաստված մի շքեղ գահ, որ պիտի ուղարկվեր ռուս ցարին՝ Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովին:

Գորգածածկ գրասենյակի փափուկ բազմոցներին նստած էին հայ և պարսիկ երևելիներ, արվեստագետներ, հոգևորականներ: Այդտեղ էր նաև ռուսաց դեսպան Լոբանով Ռոստովսկին: Այդ ընդարձակ դահլիճի մի անկյունում՝ ուղիղ լուսամուտի դիմաց, դրված էր գահը, որ առայժմ ծածկված էր թանկարժեք ոսկեթել դիպակով: Դավիթ արքեպիսկոպոսի բացման խոսքից հետո բոլորի լարված հայացքների ներքո տանտերը զգուշորեն քաշեց խշխշան կերպասը, և սենյակը հրդեհվեց ծիածանի բոլոր գույներով: Մի պահ տևած քար լռությանը հաջորդեց ներկաների աղմկալի հիացմունքը: Ռուսաց դեսպանը, որ գահին էր նայում կախարդվածի պես,

բարձրացրեց ձեռքը՝ ի նշան լռության:

- Որպես ընծա, - ասաց նա, - ես երջանիկ եմ, որ իմ վեհափառ թագավորին պիտի մատուցեմ այս ադամանդը, որ հավաստումն է նրա նկատմամբ Հայերիս տածած սիրո և հավատարմության:

Այդ անգին գահը, սակայն, Հայ վաճառականները նվիրում էին ցարին ոչ այն պատճառով, որ նրան շատ էին սիրում: Նրանք ունեին որոշակի նպատակներ:

Բանն այն է, որ այդ գործունյա մարդիկ Ռուսաստան և Ռուսաստանի վրայով Եվրոպա էին արտահանում գորգերն, գոհարներ, բրդեղեն, ներկեր, այս այդ երկրներից Հայրենիք ներմուծում շահութաբեր ապրանքներ: Եվ առանց ցարի բարեհաճության արժանանալու, մաքսերը նվազեցնելու, ազատ առևտրի իրավունք ստանալու նպատակով ռուսական պերճաշուք արքունիքին ապահովում էին արևելյան հազվագյուտ իրերով, որոնց գլուխգործոցը դարձավ գահը:

Ընտիր կաղնեփայտից դրվագված գահի վրա կային ոսկյա մեծ ու փոքր նախշազարդումներ՝ 11 կգ 450 գ ոսկու ընդհանուր քաշով, 6 կգ արծաթ, 897 մեծ ու փոքր ալմաստ, 1298 հակինթ, 18030 փիրուզ և մարգարիտ: Տարբեր չափի և հղկվածության ալմաստներից գահն ստացավ «Ալմաստե գահ» անունը: Սև թավշով պատած թիկնակին ասեղնագործված էր. «Հզորագույն և անհաղթ մոսկովյան կայսր Ալեքսեյին՝ երկրի վրա բարեհաջող թագավորողին, մեծ արվեստով ստեղծված այս գահը թող երկնային հավերժ երանության նախանշանակ լինի: Ամեն: 1659թ.»:

Ռուսական կայսրության շքեղաշուք պալատները շատ բացառիկ բաներ էին տեսել, բայց Ալմաստե գահը հավասարը չուներ:

- Ի՞նչ արժե հայերիդ այս առատաձեռնությունը, - հարցրել էր Ալեքսեյ Միխայլովիչը նվերը Մոսկվա հասցնող պատվիրակներին:

- Մեծ թագավորիդ գլուխ ենք խոնարհում և նվիրաբերում առանց գնի, - պատասխանել էին պատվիրակները, - այն թող լինի քո կամքով:

Ալեքսեյ Միխայլովիչն այնքան հավանեց գահը, որ հատուցեց ոչ միայն դրա արժեքը, այլև պատվիրակության ճանապարհածախսը, ինչպես նաև հավելավճար՝ նրա ստեղծողների անխոնջ աշխատանքի համար: Ցարի որոշմամբ գահն օգտագործվում էր միայն ռուս թագուհիների թագադրման ժամանակ: Հետագայում, երբ դաժան հաշվեհարդար տեսան ցարական ընտանիքի հետ, Ալմաստե գահը թագավորական սրահներից տեղափոխվեց Մոսկվայի Զինապալատ, ուր մինչև այսօր շլացնում է այցելուներին:

ՊԼԱՆ

1. Իրադարձություն Նոր Ջուղա քաղաքում:
2. Գահի ցուցադրությունը:
3. Հայ վաճառականների գործունեությունը Ռուսաստանում:
4. Անգին ընծան:
5. Ալմաստե գահի ճակատագիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել՝

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները. Հայ և պարսիկ [illegible] տոնական տրամադրություն, գորգածածկ դրասենյակ, փափուկ բազմոցներ, վեհափառ թագա[illegible], ոսկեթել դիպակ, խշխշան կերպաս, ի նշան լռության, ալմաստի հիացմունք, [illegible], ադամանդը, որոշակի նպատակներ, գլուխգործոց, ընտիր կաղնեփայտից դրվագված, շքեղաշուք պալատներ, անխոնջ աշխատանք, Զինապալատ.

բ) տեքստում եղած անձնանունները, գահի թիկնակի արձանագրությունը:

2. Հայտարարել մրցույթ ո՞վ սեփական պատկերացմամբ կնկարի Ալմաստե գահը:

ԶՂՋՈՒՄ

Ըստ Վ. Անանյանի

Զմռան մի գիշեր հյուր մնացինք Վեդիի լեռնային գյուղերից մեկում: Տանտերը աջ աչքը կապած, գունատ ու տխուր մի տղամարդ էր: Դեսից-դենից զրուցելուց, նրա սեղանի բարիքները վայելելուց հետո հետաքրքրվեցինք, թե ինչու է երեսը կապել: Առանց որևէ խոսք ասելու՝ համեց վիրակապը: Անսպասելիությունից վեր թռանք: Նրա աջ կիսադեմը չկար: Ոսկորները բաց էին, աչքի տեղ գարհուրելի խոռոչ էր: Անհարմար լռությունը խախտեց ինքը՝ տանտերը:

- Մի ժամանակ տարված էի որսորդությամբ: Մի օր հրացանը ձեռքիս վազում էի աղվեսի հետևից, երբ հանկարծ ընկա մի խոր փոսի մեջ: Շատ չարչարվեցի, բայց դուրս գալ չկարողացա: Մեկ էլ տեսա՝ դիմացի անկյունից մի զույգ վառվող աչքեր ինձ են նայում: Օձ էր՝ օղակ-օղակ կծկված, գլուխը ցած: Սարսափից քարացել ու չէի կարողանում ձեռքս հրացանիս տանել: Օձը հանդարտ սողաց, մոտեցավ ու անշարժացած նայեց ուղիղ աչքերիս: Օ՜ձ, ի՞նչ օձ: Վիշա՛պ: Նայե՛ց, նայեց, ապա գալարվելով առաջ եկավ, գլուխը դրեց գոգս, հետո ամբողջ մարմնով տեղավորվեց: Իմ տաքությունը հավանաբար նրան դուր եկավ: Սարսափից անշարժացել էի: Հիշեցի, որ եթե չնեղացնես, հետդ կբարեկամանա:

Գիշերն այդպես լուսացրինք: Վիշապն արևի առաջին շողերի հետ զարթնեց, գլուխը բարձրացրեց ու էլի աչքերը գամեց երեսիս: Ապա ճյուղավոր լեզվով սկսեց ձեռքս լիզել: Գոտեպնդվեցի ու իմ հերթին գգույշ շոյեցի գլուխը, վիզը, թեև նրա սառնությունից ամբողջ մարմնով փշաքաղվում էի:

Կեսօրին մոտ վիշապը դուրս սողաց փոսից: Դարձյալ փորձեցի մագլցելով դուրս պրծնել, բայց ոչինչ չստացվեց: Բռնելու տեղ չուներ: Մեկ ժամ անց չոր խոտի խշխշոց լսեցի: Օձն էր: Գլուխը ցած մեկնեց՝ մի նապաստակ բերնին: Որսը դրեց իմ առջև. մեկ նապաստակին է նայում, մեկ՝ ինձ: Ինքը մոտ չի գալիս, հասկացնում է, որ ինձ համար է բերել: Չգիտեի՝ ինչպես վարվել: Մտածեցի՝ փոսի անկյունում չոր ճյուղերով ու տերևներով կրակ անեմ, միսը խորովեմ, բայց սիրտ չարի: Ով գիտե՝ ինչ կմտածի տանտերը:

Մյուս օրը, երբ նա դուրս սողաց, նապաստակը մաշկեցի, մի մասը խորովեցի կերա, մնացածը թողեցի օձի համար: Այսպես բարեկամացանք: Երեք օր օձն ինձ համար որսի միս էր բերում: Բայց երրորդ օրն արդեն չդիմացա. ծարավը տանջում էր: Հուսահատությունից սկսեցի բարձրաձայն լաց լինել, գոռալ, պատերը ճանկռոտել: Նա զարմացած նայում էր: Համոզված էի, որ հասկանում է ինձ: Նայե՜ց, նահարևանս զարմացած նայում էր: Համոզված էի, որ հասկանում է ինձ: Նայե՛ց, նայեց, ապա սողաց, հասավ փոսի եզրին ու պոչը կախ տվեց: Սիրտ արի, պոչից կախվեցի: Օձը մարմինը լարեց ու թափով ինձ դուրս քաշեց: Հիմի փաթաթվել եմ իմ փրկարարին, լալիս եմ, շոյում, փաղաքշում, համբուրում:

Օձն ինձ ուղեկցեց մինչև գյուղ: Բաժանվեցինք: Քիչ անց հետ նայեցի, տեսնեմ՝ գլուխը ցած նայում է:

Անցավ մեկ ամիս: Օձ հավաքողներ էին եկել գյուղ: Երբ լսեցին իմ պատմությունը, սկսեցին խնդրել, համոզել, որ ցույց տամ բարեբարերիս տեղը: Սկզբում ընդ-

դիմացա, բայց երբ փող առաջարկեցին, գայթակղվեցի: Քանի մոտենում էինք փոսին, տանջանքս մեծանում էր: Գիտեի, որ լավ բան չեմ անում: Անլեզու կենդանուց ամաչում էի: Երբ տեղ հասանք, ես թաքնվեցի թփերի հետևում, իսկ հետո եկողները սկսեցին օձին հմայելու գործը: Գունավոր խալի կախեցին փոսի մեջ, պայծառ քարերով ու շվիի քաղցր ձայնով հրապուրեցին, դուրս քաշեցին հորից ու փակեցին վանդակում: Ինչպես եղավ, օձը հանկարծ ինձ նկատեց: Մի պահ քարացավ, հետո ծակող հայացքով նայեց, ֆշշացրեց: Իրեն պատեպատ էր տալիս, ուզում էր երկաթյա ձողերը փշրել, դուրս գալ: Ու մինչ ես մեխված իմ տեղում արձանացել էի, օձը կատաղի նայեց ինձ ու թքեց երեսիս: Էլ բան չեմ հիշում: Սարսափից ուշաթափվել էի:

Այդ օրից երեխս միան սկսեց փտել և կտոր-կտոր թափվել:

Օձի հայացքը մինչ օրս չեմ մոռանում: Այն կարծես ասում էր. «Թո՛ւհ, նամա՛րդ, բա ես քեզ պահեմ, փայփայեմ, փրկեմ, որ մի քանի կոպեկով ինձ ծախե՞ս»:

Այդպես օձը պատժեց ինձ: Նա իրավունք ուներ:

ՊԼԱՆ

1. Մի գիշեր Վեդիում:
2. Նախկին որսորդի պատմությունը:
3. Արդար պատիժ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

գունատ ու տխուր մի տղամարդ, դեսից-դենից, կիսադեմ, զարհուրելի խոռոչ, մի զույգ վառվող աչքեր, օղակ-օղակ կծկված, աչքերը գամել, ճյուղավոր լեզու, ընդդիմանալ, գայթակղվել, օձին հմայել, ֆշշացնել:

ՇԱՆ ՊԱՏՄԱԾԸ

Ըստ Մարկ Տվենի

Հայրս Սեն Բեռնարն էր, մայրս՝ Ջեյնը, իսկ ես՝ նրանց ձագուկը: Մայրս է ինձ պատմել այդ բոլորը: Անկեղծ ասած, ես չեմ հասկանում այդ գեղեցիկ բառերը, որոնք, ըստ իս, ոչինչ էլ չեն նշանակում: Դե, մայրս հակում ուներ ճոռոմ խոսքեր ասելու և հետևում էր, թե դրանք ինչ ազդեցություն են թողնում ծանոթ շների վրա: Իսկ վերջիններս նախանձով ու հիացմունքով նայում էին մորս և երևի մտածում, թե որտեղից նրան այդպիսի լայն մտահորիզոն ու անթերի կրթություն: Բայց իրականում մայրս կրթված չէր: Պարզապես այդ բառերը նա լսում էր հյուրասենյակում կամ ճաշասենյակում, հատկապես երբ հյուրեր էին լինում, կամ էլ երեխաներին կիրակնօրյա դպրոց ուղեկցելիս: Բացի սնապարծ լինելուց՝ մայրս բարեսիրտ էր ու նրբանկատ. երբեք քեն չէր պահում, շատ շուտ մոռանում էր իրեն

Հասցված վիրավորանքը: Մեզ նույնպես սովորեցնում էր բարի լինել և ուսուցանում էր ոչ միայն բառերով, այլև անձնական օրինակով:

Մի օր, երբ ես արդեն բավական մեծ էի, ինձ վաճառեցին, ու տարան շա՜տ հեռու. մորս այլևս չտեսա: Երկուսս էլ արտասվում էինք, բայց նա փորձում էր ինձ հանգստացնել՝ ասելով, որ մենք՝ շներս, աշխարհ ենք եկել բարի ու լավ նպատակների համար և պետք է անտրտունջ կատարենք մեր պարտքը առանց վարձատրության ակնկալիքի: Ասում էր, որ մարդիկ էլ, եթե այդպես են ապրում, արժանիորեն վարձատրվում են այնտեղ՝ երկնքում: Եվ չնայած կենդանիներս այնտեղ չենք գնալու, բայց պարտավոր ենք մեր գործը կատարել:

Այսպիսով, մենք հրաժեշտ տվեցինք, արտասվախառն աչքերով մեկ անգամ էլ նայեցինք միմյանց, և նա վերջին անգամ կրկնեց իր պատգամը. «Օգնի՛ր դիմացինիդ, զավա՛կս, եթե նա վտանգի մեջ է: Օգնիր՝ առանց մտածելու քո ես-ի մասին: Միշտ հիշի՛ր մորդ և վարվի՛ր այնպես, ինչպես նա կվարվեր»:

Իմ նոր տունը մեծ էր ու շքեղ, ընդարձակ սրահներով, նկարազարդ պատերով: Շուրջը հսկայական պարտեզն էր տարածված, խոտ ու ծաղկին վերջ չկար: Ես դարձա ընտանիքի անդամներից մեկը: Բոլորն ինձ սիրում ու փայփայում էին և կանչում մորս կնքած անունով՝ Այլին: Տանտիրուհիս՝ տիկին Գրեյը, երեսուն տարեկան էր, բարի ու գեղեցիկ: Սեդին՝ նրա դստրիկը, տասը տարեկան էր, ճիշտ մոր պատկերը: Պարտեզում հաճախ էինք իրար հետ խաղում, վազվզում այնքան, որ երկուսս էլ հոգնած փռվում էինք խոտերի վրա: Հետո Սեդին գիրք էր կարդում, իսկ ես այցելում էի հարևան շներին, որոնք իմ լավ բարեկամներն էին:

Պարոն Գրեյը բարձրահասակ, բարեկազմ մարդ էր: Նա ճանաչված գիտնական էր և տանն ուներ մի ընդարձակ լաբորատորիա, որտեղ ինչ-որ փորձեր էր կատարում: Որքա՜ն շշեր, սրվակներ կային այնտեղ: Ինչքան էլ փորձում էի գլուխ հանել տիրոջս փորձերից, ոչինչ չէր ստացվում:

Այսպիսով, շատ երջանիկ էի ու ապահով: Սակայն երջանկությունս հազարապատկվեց, երբ մայր դարձա: Իմ ձագուկն ուներ քաղցր, անմեղ աչուկներ, անուշ մռութ և թավշանման մորթ: Ամեն անգամ, երբ տեսնում էի, թե տիկին Գրեյը, Սեդին, ծառաները ինչպես են պաշտում զավակիս, սիրտս լցվում էր հպարտությամբ:

Եկավ ժամը: Մի օր մանկասենյակում հսկում էի տիրոջս փոքրիկին, որը քնած էր օրորոցում: Հանկարծ բուխարուց վառված մարխի մի կտոր թռավ երեխայի մահճակալի շղարշի վրա, ու այն բոցավառվեց: Ես ինձ վախից կորցրի: Մի ակնթարթում հասա դռանը, որ փախչեմ կրակից, բայց հանկարծ հիշեցի մորս պատգամը: Հետ եկա, դունչս բոցերի միջով մեկնեցի երեխային և ատամներով բռնելով խանձարուրից՝ վազեցի միջանցք: Նույն պահին լսեցի տիրոջս ձայնը. «Կորի՛ր գրողի ծոցը, անիծյա՛լ գազան»: Հաջորդ վայրկյանին ձեռնափայտն ամբողջ թափով իջավ ոտքիս: Ես ընկա: Այն երկրորդ անգամ կիջներ մարմնիս, եթե դայակը չբղավեր. «Մանկասենյակը վառվո՜ւմ է»: Ոտքիս ցավը դաժան էր, բայց ժամանակ չունեի կորցնելու: Անհրաժեշտ էր փախչել ու թաքնվել: Վերջապես կաղացող ոտքով մի կերպ հասա ձեղնահարկ, մտա իրերի կույտի մեջ ու սարսափից սսկվեցի:

Քիչ անց լսեցի ձայներ, որից արյունը սառեց երակներիս մեջ: Ինձ էին կանչում, անունս տալիս ու փնտրում: Ձայնը խլանում էր տարածության մեջ, բայց չէր դադարում: Տենդագին մտածում էի անելիքիս մասին: Որոշեցի հեռանալ, գնալ այն-

պիսի մի տեղ, ուր ինձ որ ոչ չէր ճանաչի: Բայց հանկարծ հիշեցի ձագուկիս: Տե՛ր աստված, ինչպես էի ապրելու առանց նրա, առանց իմ որդուկի: Չէ՛, այդ մեկին չէի դիմանա: Հեռանալ չէի կարող:

Մինչ այդ դարձյալ սկսեցին ինձ կանչել: Չէի հասկանում՝ ո՞ր մեղքիս համար են ուզում նորից ինձ ծեծել: Այնինչ ձայնը գնալով մոտենում էր: Սեդին էր: Եվ որքան էլ կծկված էի, նա ինձ գտավ: «Ես նրան գտե՛լ եմ, գտե՛լ եմ», - ուրախ-ուրախ բղավում էր նա և արցունքոտ աչքերով նայում ինձ, շոյում գլուխս:

Ես նորից երջանիկ էի: Բոլորը սիրում ու փառաբանում էին ինձ: Հարևանները, ծանոթներն իմ քաջագործության մասին էին խոսում: Սրանով չէր սահմանափակվում իմ փառքը: Լաբորատորիայում հավաքված տիրոջս ընկերները գովաբանում էին ինձ, ինչ-որ բառեր ասում, որոնցից հիշում եմ «բնազդը»: Տերս ասաց. «Ինձ թվաց այդ շունը գժվել է ու սպանում է երեխային: Մինչդեռ կենդանին ավելի խելոք էր: Հավատացե՛ք, դա ոչ թե բնազդ է, այլ բանականություն»:

Մի օր էլ նորից մարդիկ եկան: Ասում էին, որ փորձ են անելու և ձագուկիս էլ իրենց հետ տարան: Հետո տիրոջս շնորհավորեցին ինչ-որ հայտնագործության համար: Ես վազեցի ձագուկիս մոտ, մոտեցրի դունչս իմ փոքրիկին: Նա արյունոտ էր: Սկսեցի լիզել վերքերը: Նա գլուխը դիպցրեց ինձ ու թույլ նվաց: Հետո թուլացած ընկավ: Թավշյա դնչիկն այլևս չշնչեց, և հանգավ: Տերս մի պահ դադարեցրեց քննարկումը, սպասավորին հրամայեց. «Դրան տա՛ր թաղիր պարտեզի հեռավոր անկյունում»: Ես կաղալով վազեցի ծառայի հետևից՝ երջանիկ ու շնորհակալ, որ փոքրիկս այլևս ցավ չի զգում, խաղաղ քնած է: Սպասավորը փոս փորեց և ձագուկիս դրեց մեջը: Երջանիկ էի, որովհետև կարծում էի, թե նա աճելու ու դուրս է գալու հողի տակից: Դրա համար էլ ջանասիրաբար օգնում էի ծառայողին: Երբ նա գործը վերջացրեց, շոյեց գլուխս ու արցունքոտ աչքերով ասաց. «Իմ խե՛ղճ շնիկ, իսկ դու փրկեցիր նրա երեխայի կյանքը»: Ուղիղ երկու շաբաթ հսկեցի, բայց ձագուկս դուրս չէր գալիս: Վերջին շաբաթը սիրտս ահ ընկավ: Զգում էի, որ ինչ-որ սարսափելի բան է կատարվել: Վախից հիվանդացա: Ուտելիքը կուլ չէր գնում: Իսկ այսօր արդեն ոտքի վրա կանգնել չեմ կարողանում: Գիտեմ, որ պիտի գնամ այնտեղ, ուր գնում են կենդանիները, երբ հեռանում են այս աշխարհից:

ՊԼԱՆ

1. Այլինը և նրա ծնողները:
2. Բաժանում:
3. Մոր պատգամը:
4. Նոր տանը:
5. Հրդեհ:
6. Նորից երջանկության մեջ:
7. Գիտափորձ ձագուկի վրա:
8. Փոքրիկի մահը և մոր վիշտը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Նախանձով ու հիացմունքով նայել, կիրակնօրյա դպրոց, քեն պահել, առանց վարձատրության ակնկալիքի, անմեղ աչուկներ, անուշ մռութ, թավշանման դնչիկ, մարխ, խանձարուր, կծկվել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Մարկ Տվենը 19-րդ դարի ամերիկացի մեծանուն գրող է, մանկագիր:*

ՄՈՒԹՈՒԿ ՖՐԵԴԻՆ

Ըստ Ջերալդ Դարելի

Զմռան մի օր գնացի կենդանիների վաճառքով զբաղվող մի առևտրականի
մոտ՝ տեսնելու՝ չունի՞ մեր գազանանոցի համար որևէ հետաքրքիր բան:
Շրջելով խանութում՝ հանկարծ տեսա մի մութ ու խոնավ վանդակ, որի ճաղերի
հետևից ինձ էր նայում արցունքից չչորացած փայլուն աչուկներով, ածուխի պես
սև, խղճուկ ու սրտաճմլիկ մի մուկթիկ: Մոտիկից նայելով՝ հասկացա, որ նա բըր-
դոտ կապիկի ձագ է: Պստլիկն ամենաշատը մի քանի շաբաթական կլիներ: Ցավալի
էր, որ նրան դաժանորեն զրկել էին մորից: Ձագուկը դժբախտ տեսքով կծկվել էր
վանդակի հատակին և անընդհատ դողում էր, հազում, փռշտում: Վրայի բուրդը
կեղտից խրար էր կպել: Ակնհայտ էր, որ նա հիվանդ է, և եթե շուտափույթ միջոց-
ներ չձեռնարկեինք, կսատկեր: Գնեցի նրան, տեղավորեցի չոր ու մաքուր վանդա-
կում և սկսեցի հետազոտել: Պարզվեց, որ փոքրիկը հիվանդ է թոքերի բորբոքու-
մով: Հարկավոր էր շտապ սրսկել, բայց ինչպե՞ս: Ֆրեդին (մենք նրան այդպես կըն-
քեցինք), երևում է, շատ անբարյացակամ կարծիք ուներ մարդկանց մասին և ոչ մե-
կին թույլ չէր տալիս իրեն մոտենալ: Հենց վանդակի դուռը բացում էինք, այնպի-
սի մի ճղճղոց էր գցում, որպիսին կարող է անել միայն բրդոտ կապիկը: Եթե ուժ
գործադրեինք, ավելի վատ կլիներ, իսկ նրան անպայման բուժել էր պետք, այլապես
կսատկեր: Որոշեցինք պստլիկին հրապուրել խաղալիքով և նրա վանդակը նետե-
ցինք մի թավշե արջուկ, որն իր չափերով Ֆրեդիից 6-7 անգամ մեծ էր: Դրեցինք
վանդակի մեջ և սկսեցինք նայել: Սկզբում Ֆրեդին մի կողմ քաշվեց, բայց շուտով
հետաքրքրությունը հաղթեց, և նա ձեռքը դիպցրեց արջուկին: Հայտնաբերելով, որ
այն փափուկ է ու բրդոտ, Ֆրեդին անմիջապես համակրանքով լցվեց նրա նկատ-
մամբ և կես ժամ անց գրկում էր նրան ջերմագին քնքշությամբ, ու տեսքն այնքա՜ն
հուզիչ էր: Այդ պահից ասես փոխեցին Ֆրեդիին: Ամբողջ օրը փարված էր արջու-
կին: Դադարեց նաև մարդկանցից վախենալուց: Մենք ուղղակի վանդակից դուրս
էինք քաշում արջուկին և նրան պինդ կպած Ֆրեդիին, և նա մեզ թույլ էր տալիս
իրեն սրսկել, բուրդը մաքրել: Իսկ մի քանի օրից լիովին բուժվեց և անճանաչելի
դարձավ: Հիմա էլ մի ուրիշ խնդիր մեջտեղ եկավ: Բանն այն էր, որ արջուկն օր օ-
րի կեղտոտվում էր: Հարկավոր էր նրան մաքրել, ախտահանել: Ֆրեդին սոսկալի
զայրացավ, երբ արջուկին վերցրինք մոտից, ու մի աներևակայելի ճղճղոց գցեց:
Ստիպված եղանք մեքենա նստել, գնալ քաղաք և մի նոր արջուկ գնել, որ նման լի-
ներ Ֆրեդիի սիրեցյալին: Հենց որ նոր արջուկը հայտնվեց վանդակում, Ֆրեդին
ճղճղոցը կտրեց, նետվեց դեպի նա, գրկեց և քնեց տանջված արարածի խոր քնով:

Շուտով Ֆրեդին մեծացավ, չափերով գերազանցեց թավշե արջուկներին: Ժամա-
նակն էր նրան հետ վարժեցնել իր խաղալիքներից և տեղափոխել մեծ կապիկների
հարկաբաժինը: Առայժմ նրա համար ընկեր ընտրեցինք մի խոշոր սև ծովախոզու-
կի, որն աչքի էր ընկնում հաշտ բնավորությամբ և ուղեղի կատարյալ բացակայու-
թյամբ: Սկզբում Ֆրեդին ոչ մի ուշադրություն չէր դարձնում նրա վրա, բացի այն
դեպքերից, երբ ծովախոզուկը մոտենում էր իր թանկագին արջուկին: Այստեղ հան-

ՄՌՈՒԹԻԿ ՖՐԵԴԻՆ

Ըստ Ջերալդ Դարելի

Ձմռան մի օր գնացի կենդանիների վաճառքով զբաղվող մի առևտրականի մոտ՝ տեսնելու՝ չունի՞ մեր գազանանոցի համար որևէ հետաքրքիր բան: Շրջելով խանութում՝ հանկարծ տեսա մի մութ ու խոնավ վանդակ, որի ճաղերի հետևից ինձ էր նայում արցունքից չչորացած փայլուն աչուկներով, ածուխի պես սև, խղճուկ ու սրտաճմլիկ մի մռութիկ: Մոտիկից նայելով՝ հասկացա, որ նա բըրդոտ կապիկի ձագ է: Պստլիկն ամենաշատը մի քանի շաբաթական կլիներ: Ցավալի էր, որ նրան դաժանորեն զրկել էին մորից: Ձագուկը դժբախտ տեսքով կծկվել էր վանդակի հատակին և անընդհատ դողում էր, հազում, փռշտում: Վրայի բուրդը կեղտից իրար էր կպել: Ակնհայտ էր, որ նա հիվանդ է, և եթե շուտափույթ միջոցներ չձեռնարկեինք, կսատկեր: Գնեցի նրան, տեղավորեցի չոր ու մաքուր վանդակում և սկսեցի հետազոտել: Պարզվեց, որ փոքրիկը հիվանդ է թոքերի բորբոքումով: Հարկավոր էր շտապ սրսկել, բայց ինչպե՞ս: Ֆրեդին (մենք նրան այդպես կընքեցինք), երևում է, շատ անբարյացակամ կարծիք ուներ մարդկանց մասին և ոչ մեկին թույլ չէր տալիս իրեն մոտենալ: Հենց վանդակի դուռը բացում էինք, այնպիսի մի ճղճղոց էր գցում, որպիսին կարող է անել միայն բրդոտ կապիկը: Եթե ուժ գործադրեինք, ավելի վատ կլիներ, իսկ նրան անպայման բուժել էր պետք, այլապես կսատկեր: Որոշեցինք պստլիկին հրապուրել խաղալիքով և նրա վանդակը նետեցինք մի թավշե արջուկ, որն իր չափերով Ֆրեդիից 6-7 անգամ մեծ էր: Դրեցինք վանդակի մեջ և սկսեցինք նայել: Սկզբում Ֆրեդին մի կողմ քաշվեց, բայց շուտով հետաքրքրությունը հաղթեց, և նա ձեռքը դիպցրեց արջուկին: Հայտնաբերելով, որ այն փափուկ է ու բրդոտ, Ֆրեդին անմիջապես համակրանքով լցվեց նրա նկատմամբ և կես ժամ անց գրկում էր նրան ջերմագին քնքշությամբ, ու տեսքն այնքա՜ն հուզիչ էր: Այդ պահից ասես փոխեցին Ֆրեդիին: Ամբողջ օրը փարված էր արջուկին: Դադարեց նաև մարդկանցից վախենալուց: Մենք ուղղակի վանդակից դուրս էինք քաշում արջուկին և նրան պինդ կպած Ֆրեդիին, և նա մեզ թույլ էր տալիս իրեն սրսկել, բուրդը մաքրել: Իսկ մի քանի օրից լիովին բուժվեց և անճանաչելի դարձավ: Հիմա էլ մի ուրիշ խնդիր մեջտեղ եկավ: Բանն այն էր, որ արջուկն օր օրի կեղտոտվում էր: Հարկավոր էր նրան մաքրել, ախտահանել: Ֆրեդին սոսկալի զայրացավ, երբ արջուկին վերցրինք մոտից, ու մի աներևակայելի ճղճղոց գցեց: Ստիպված եղանք մեքենա նստել, գնալ քաղաք և մի նոր արջուկ գնել, որ նման լիներ Ֆրեդիի սիրեցյալին: Հենց որ նոր արջուկը հայտնվեց վանդակում, Ֆրեդին ճղճղոցը կտրեց, նետվեց դեպի նա, գրկեց և քնեց տանջված արարածի խոր քնով:

Շուտով Ֆրեդին մեծացավ, չափերով գերազանցեց թավշե արջուկներին: Ժամանակն էր նրան հետ վարժեցնել իր խաղալիքներից և տեղափոխել մեծ կապիկների հարկաբաժինը: Առայժմ նրա համար ընկեր ընտրեցինք մի խոշոր սև ծովախոզուկի, որն աչքի էր ընկնում հաշտ բնավորությամբ և ուղեղի կատարյալ բացակայությամբ: Սկզբում Ֆրեդին ոչ մի ուշադրություն չէր դարձնում նրա վրա, բացի այն դեպքերից, երբ ծովախոզուկը մոտենում էր իր թանկագին արջուկին: Այստեղ հան-

ցագործը մի ապտակ էր ուտում: Բայց շուտով Ֆրեդին հայտնագործեց, որ ծովախոզուկի հետ քնելն ավելի ձեռնտու է, քան Թավշե արջուկի, որովհետև նա ուներ իր կենտրոնական ջեռուցումը: Իսկ ծովախոզուկը, որին մենք «Հարոլդ» էինք անվանում, կենտրոնական ջեռուցման և նման դատարկ բաների մասին չէր մտածում: Նրա մտքերը, եթե ընդհանրապես գլխում մտքեր լինում էին, պտտվում էին միայն ուտելու շուրջ: Սառուցել այն ամենի ուտելի լինելը, ինչ ընկնում էր ձեռքի տակ, սրանում էր Հարոլդը տեսնում կյանքի իմաստը: Ուրեմն հազիվ թե նրա սրտով լիներ այն, ինչ անում էր մի բռնակալ բրդոտ կապիկ: Իսկ Ֆրեդին խիստ կարգուկանոն ուներ՝ երբ քնել, երբ արթնանալ, երբ խաղալ և բնավ էլ մտադիր չէր իր ռեժիմը համարեցնել Հարոլդի ճաշկերույթներին: Հենց որ Հարոլդը գազար կամ մի ուրիշ բան էր գտնում, Ֆրեդին, որոշելով որ իր քնելու ժամն է, առանց նախապես ներողություն խնդրելու և առանց ձևականությունների բռնում էր նրա ոտքից, քարշ տալիս իր անկյունը և փովելով խոզուկի փափուկ մարմնին՝ հանգիստ խռմփում: Վա՜յ որ խոզուկը համարձակվեր շարժվել: Ֆրեդին մի քանի ապտակով նրան սովորեցնում էր չխանգարել ուրիշի հանգիստը և ավելի քաղաքավարի լինել:

Այսպես աստիճանաբար Ֆրեդին մեծացավ, դարձավ լուրջ ու ծանրաբարո: Ժամանակն էր նրան ներկայացնել կապիկների հասարակությանը: Այդպես էլ արեցինք:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Դասարանում տեքստն ընթերցելիս աշխատեցե՛ք պահպանել հեղինակի մեղմ հումորը:

ՊԼԱՆ

1. Սիրունիկ մուշթով պստլիկը:
2. Կապիկին փրկելու միջոցներ:
3. Ֆրեդիի անբարյացակամ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ:
4. Թավշյա արջուկը:
5. Ֆրեդին մեծանում է:
6. Ծովախոզուկն ու կապիկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կենդանիների վաճառքով զբաղվող մի առևտրական, մուշթ ու խոնավ վանդակ, արցունքից չչորացած փայլուն աչուկներ, խղճուկ ու սրտաճմլիկ մի մուշթիկ, կծկվել, շուտափույթ, անբարյացակամ կարծիք, հրապուրել խաղալիքով, Թավշե արջուկ, համակրանքով լցվել, ջերմագին քնքշություն, անճանաչելի դառնալ, ախտահանել, աներևակայելի ճղճղոց, սիրեցյալ, հաշտ բնավորություն, ուղեղի կատարյալ բացակայություն, կենտրոնական ջեռուցում, ծանրաբարո:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջերալդ Դարելը 20-րդ դարի անգլիացի ճանաչված գրող է, բնախույզ-կենսաբան:*

ՇՉԱՑՈՂ ՍԿՅՈՒՌԸ

Ըստ Ջերալդ Դարելի

(Նկարագրական փոխադրություն)

Որպեսզի հարստացնեմ Ջերսի կղզու վրա գտնվող իմ սեփական կենդանաբանական այգին, ես ճամփորդություններ էի կատարում աշխարհի տարբեր անկյուններում՝ աշխատելով որսալ հատկապես այն կենդանիներին, որոնց անհետացում էր սպառնում: Առանձնապես ինձ հետաքրքրում էր շչացող սկյուռը, որը բավական տարածված է Արևմտյան Աֆրիկայում: Լսել էի, որ նրան բռնելը դժվար, համարյա անհնարին է, որովհետև գրեթե շարունակ նստում է ամենաբարձր ծառերի ամենավերին ճյուղերին և սնվում տեսակ-տեսակ պտուղներով, որ առատորեն աճում են այդ արևաշատ բարձունքներում: Տեղաբնակներն ինձ ասացին, որ այդ կատաղի գազանիկները ներքև իջնում են շատ հազվադեպ, այն էլ միայն լուսաբացին և մտնում են գետափնյա թավուտները՝ կեր հայթայթելու: Հույս ունեինք, որ հենց այդ ժամանակ էլ գուցե հնարավոր լիներ որսալ նրանց:

Մենք դուրս եկանք գիշերվա ժամը մեկին և լուսաբացից մեկ ժամ առաջ հասանք այն լեռան փեշերին, որ ծածկված էր խիտ անտառներով, և որտեղ էլ, համաձայն բնիկների ասածի, ապրում էին շչացող սկյուռիկները:

Դարան մտանք: Չէր կարելի ո՛չ խոսել, ո՛չ շարժվել: Լռելյայն նայում էինք, թե ինչպես է երկինքը գունատվում արևելքում: Գիշերային խավարն ասես կաթիլ-կաթիլ դուրս էր գալիս նրանից: Աստիճանաբար երկնակամարը դարձավ վարդագույն, և հանկարծ դուրս եկավ արևը. երկինքը լցվեց կուրացուցիչ լույսով: Այդ ջինջ ու նուրբ լույսի տակ չորս կողմից սկսեցին երևալ մշուշով պարուրված լեռները: Արևը բարձրանում էր ավելի ու ավելի, և մշուշը ալեկոծվելով՝ սկսում էր սահել լեռների լանջերով՝ հոսելով դեպի հովիտները: Ընդամենը մեկ վայրկյան առաջ հարթավայրերը խաղաղ նիրհով քնած էին մշուշի հովանու տակ: Եվ ահա լեռները արթնանում են քնից, հորանջում ու ձգվում սպիտակ վերմակների տակ, ծուլորեն դեն նետում վերմակը, քնաթաթախ ելնում իրենց ճերմակաթույր անկողիններից: Մշուշը գալարվում է հրաշագեղ քուլաներով և գծագրում հեքիաթային գազաններ՝ հրեշավոր մողեսներ, առասպելական փյունիկներ, թևավոր վիշապներ: «Այո՛, - մտածեցի ես՝ նայելով, թե ինչպես են արթնանում լեռները, - արժեր այսպես դողալ, հոգնել, մինչև վերջին շապիկը թրջվել, հալից ընկնել այն բանի համար, որ այս բոլորը տեսնեմ»:

Եվ այստեղ մտքերս ընդհատեց բարձր, մարտական «չակ-չակը»: Դա շչացող սկյուռի ձայնն էր:

Հանկարծ նկատեցի, որ մեր փռած ցանցի վրա զոլավոր գնդակի նման ինչ-որ բան է գլորվում: Շուտով գնդակների թիվն ավելացավ: Հետո հասկացա, որ երբ նրանք փափկամազ պոչիկները մարմնի վրայով տանելով կախում են ճակատի վրա, ծածկում դնչիկը, մեծ գնդակի տեսք են ստանում: Սկյուռիկները վազում էին շատ արագ, հետո շուտ-շուտ նստում հետևի ոտքերի վրա և հոտոտում օդը: Մինչ այդ ծառերին նստած սկյուռները նկատել էին մեզ և ներքևում գտնվող իրենց ընկերներին զգուշացնելու նպատակով տագնապահարույց ազդանշաններ էին տալիս՝

տանկ-տանկ կրկնելով իրենց «չակ-չակը»: Այդ ձայնը ցածր, թնդուն չչոց էր, որ կարծես վիթխարի զանգի մարող ղողանջ լիներ:

Մինչ սկյուռիկներն աշխատում էին ազատվել ցանցից, մենք չորս կողմից այն բարձրացրինք: Մեր գերիներն աչքները կատաղաբար փայլեցնում էին մեզ վրա, սպառնալից ոռնում: Երբ հանում էինք ցանցերից, նրանք անդադար ճչում էին և մեր ձեռքերի մեջ կատաղորեն խրում իրենց նարնջագույն կտրիչները:

Վերադառնալով հյուրանոց՝ սկյուռներին տեղավորեցի ամուր, թիթեղապատ վանդակներում: Նրանք խժռեցին իրենց համար դրված հյութալի մրգերը, ապա անցան «ննջարանները» և խոր քուն մտան: Չգիտեին, որ մի քանի օր անց ինքնաթիռն իրենց պիտի հասցնի մի նոր երկիր, և իրենք պիտի դառնան կենդանաբանական այգու մշտական բնակիչներ:

ՊԼԱՆ

1. Հազվագյուտ կենդանիներ որսացողը:
2. Շչացող սկյուռը:
3. Դեպի որսատեղի:
4. Անդնդային բնապատկեր:
5. Սկյուռիկների որսը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

արևաշատ բարձունքներ, տեղաբնակներ, գետափնյա թավուտներ, հայթայթել, լռելյայն, երկինքը գունատվել, բաց մոխրագույն՝ մարգարտյա երանգով, կուրացուցիչ լույս, շինջ ու նուրբ լույս, մշուշով պարուրված լեռներ, խաղաղ ներհ, մշուշի հովանի, սպիտակ վերմակներ, քնաթաթախ վեր ելնել, ճերմակաթույր անկողիններ, հրաշագեղ քուլաներ, հեքիաթային դաշտաններ, հրեշավոր մողեսներ, առասպելական փյունիկներ, թևավոր վիշապներ, գոլավոր գնդակ, փափկամազ պոչիկներ, տաղտկահարույց ազդանշաններ, վիթխարի զանգի մարող ղողանջ, նարնջագույն կտրիչներ, թիթեղապատ վանդակներ, հյութալի մրգեր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջերալդ Դարելը 20-րդ դարի անգլիացի գրող է, բնագետ-հետախույզ:*

ԲՈՑԱՐԻՍ

Ըստ Ռ. Պատկանյանի

15-րդ դարում Թուրքերն արդեն տիրել էին Բյուզանդական կայսրության մեծ մասին և սպառնում էին ճակատագրական հարված տալ նրա վերջին չքնաղ բեկորին՝ մայրաքաղաք Կոստանդնուպոլսին:

Գարնանային մի պայծառ օր, երբ լուրթ երկնքում շողշողում էր արևը, և բյուզանդական կղզյակներից մեկի շուրջ կապուտակվում Միջերկրական ծովը, իր համեստ խրճիթում դանդաղ մեռնում էր մի երիտասարդ հայուհի: Զգալով մահվան համբույրը՝ նա մի կերպ երկարեց դալուկ ձեռքը և մոտ կանչեց երկու զավակներին, որոնք կանգնած էին անկյունում՝ աչքերում լաց ու արտասուք: Նրանցից ավագը՝ տղան, տասնհինգ տարեկան էր, աղջիկը՝ Հեղինեն՝ տասներեք:

- Բոցարի՛ս, - ասաց Հիվանդը՝ դիմելով որդուն, - քո խնամքին եմ հանձնում քրոջդ: Բացի քեզանից աշխարհի երեսին նա չունի ուրիշ տեր ու պաշտպան: Խո՛սք տուր, որ նրան անտեր չես թողնի:

- Մա՛յր իմ, - ասաց պատանին, - երդվում եմ, որ պատգամդ կկատարեմ:

- Բարի է, որդյա՛կ իմ:

Սրանք կնոջ վերջին խոսքերն էին: Նա հոգեվարքի մեջ էր:

Նույն պահին դուռը ծեծեցին, և ներս մտան Թուրք փաշայի սպասավորներն ու հոխորտալով սկսեցին հարկը պահանջել: Բոցարիսը նրանց խնդրեց լռել. նշանացի ցույց տալով մոր կողմը՝ աղաչում էր չվրդովել նրա կյանքի վերջին վայրկյանները: Բայց իզուր: Առանց ուշադրություն դարձնելու պատանու աղերսներին՝ Թուրքերը կրեցին տարան աղքատիկ կահկարա՛սին: Տարան ամեն ինչ, բացի հարդյա մահճից, որի վրա հանգչում էր տանտիրուհու աճյունը: Երբ բարբարոսները հեռացան, տղան չոքեց մոր դիակի առջև ու մրմնջաց. «Երդվում եմ այս ահեղ վայրկյանով ու քո սուրբ աճյունով, որ պարտք ու վրեժ ունեմ քո առջև և այն կկատարեմ»:

Մոր մահից հետո մենակ մնացած քույրն ու եղբայրը պաշտում էին միմյանց: Բոցարիսը ձկնորսություն էր անում, որսը վաճառում շուկայում և այսպես հայթայթում հանապազօրյա հացը: Քրոջ ներկայությամբ ուրախ էր ձևանում, բայց ներքուստ միշտ մռայլ էր ու չգոհացած: Վրեժի գաղափարը հանգիստ չէր տալիս պատանուն:

Մի օր էլ նա տուն եկավ ու տեսավ, որ քույրը չկա: Հատակին ընկած էր ապարոշ (չալմա), որ կրում էին Թուրքերը: Բոցարիսը զարհուրած հասկացավ, որ Թուրքերը առևանգել են Հեղինեին:

Մեծահանդես տոն էր փոքրիկ կղզյակում: Հրապարակներն ու փողոցները լի էին խուռն ամբոխով: Բոցարիսը մտավ մարդկանց մեջ, պատմեց եղելությունը:

- Սիրելի՛ քրիստոնյաներ, - ասաց նա, - հասել է ժամանակը, որ Թշնամուց մեր վրեժն առնենք: Նրանք անարգում են մեզ, նվաստացնում, անպատվում, վիրավորում, կողոպտում: Կորչի՛ արնախում Թշնամին, կեցցե՛ մեր Հայրենիքը, կեցցե՛ մեր կրոնը, Քրիստոսի խաչը:

Պատանու աչքերը վառվում էին անսովոր կրակով, բառերը բոցեղեն, չիկացած անթրոց էին, որոնցով բորբոքվում էին մարդկանց սրտերը: Բոցարիսը մարմնավորված վրեժ էր ու ատելություն, անվեհերություն ու վճռականություն: Նրա վրա ասես իջել էր աստվածային վարակիչ ներշնչում, որ տոգորում էր նաև մարդկանց:

Կղզյակում չկար մեկը, որ չճանաչեր Բոցարիսին, չգնահատեր պատանու սրտի արիությունը, ազնիվ հոգին: Չնայած ընդամենը տասնվեց տարեկան էր, բայց ամենքը սիրում ու վստահում էին նրան:

_ Գնանք փրկե՛նք Հեղինեին, փրկենք մեր պատիվը: Բոցարի՛ս, առաջնորդի՛ր մեզ, - գոչում էին մարդիկ:

Հարձակվեցին Թուրքերի ոըջի վրա ու աղջկան ազատեցին: Առաջին հաղթանակը համախմբեց ամենքին: Կղզեցիները ոտքի ելան և Թուրք Թափթփուկներից երկիրն ազատեցին: Մեծ հաղթությունից ոգևորված ժողովուրդը Բոցարիսին կառավարիչ նշանակեց: Պատանին զորք հավաքեց և ամրացրեց կղզու պաշտպանությունը: Ժայռաբեկորներ գլորեցին և փակեցին կղզու մուտքը՝ այն դարձնելով անմատչելի ամրոց: Եվ երբ Թուրքերը փորձեցին կրկին անգամ մտնենալ, Բոցարիսի բա-

նակն այնպիսի դիմադրություն ցույց տվեց, որ թշնամին խուճապահար նահանջեց:

Այսպես անցան շատ տարիներ: Բոցարիսն արդեն հասուն տղամարդ էր: Բոլորը սիրում և ենթարկվում էին նրան: Բայց ո՛չ տարիքը, ո՛չ բարձր աստիճանը չկարողացան խախտել նրա առաքինությունն ու պարկեշտությունը: Նա մնաց այնպիսին, ինչպիսին ստեղծվել էր բնությունից՝ բարի, մարդասեր, հաշտ ու խոնարհ:

Բայց որտե՞ղ չկան չարերը:

Կային մարդիկ, որ նախանձում էին Բոցարիսի փառքին, տենչում նրա մահը: Ու թունավորված գինի տվին նրան: Մահը վայրկենական եղավ:

Սգաց, հեծեծաց ամբողջ կղզին: Ավա՜ղ, սիրելի հերոսն անդարձ հեռացել էր:

Երբ մարդիկ Թաղման հաջորդ օրը գերեզմանոց եկան, Բոցարիսի շիրմաքարի վրա գտան Հեղինեի սառած դիակը:

Իսկ Թուրքերը, լսելով արծվասիրտ երիտասարդի մահը, վայրի հրճվանքով ասպատակեցին կղզին և դաժան հաշվեհարդար տեսան ապստամբների հետ: Չկար այլևս սիրելի զորավարը, որ համախմբեր կղզեցիներին, խրախուսեր, ոգի և զորություն ներշնչեր նրանց: Թուրքերը գրավեցին ոչ միայն կղզին, այլ նաև Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը և այն վերանվանեցին «Ստամբուլ»:

ՊԼԱՆ

1. Մեռնող հայուհին:
2. Թուրքերի գազանաբարո արարքը:
3. Վրեժի երդում:
4. Հեղինեի առևանգումը:
5. Ապստամբություն և հաղթանակ:
6. Պարկեշտ ու առաքինի Բոցարիսը:
7. Թունավորում:
8. Դաժան հաշվեհարդար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կղզյակ, Միջերկրական ծով, մահվան համբույր, դալուկ ձեռք, հևալ, հոգեվարք, հոխորտալ, նշանացի, աղքատիկ կահկարասի, հարդյա մահիճ, ահեղ վայրկյան, սուրբ աճյուն, հանապազօրյա հաց, վրեժի գաղափար, ապարոշ, նվաստացնել, արնախում թշնամի, աստվածային վարակիչ ներշնչում, տոգորել, ողջ, թափթփուկ, անմատչելի ամրոց, խուճապահար նահանջել, սգալ, հեծեծալ, դաժան հաշվեհարդար:

ՈՒՇԻՆԱՐԱ

Ըստ Ավ. Իսահակյանի

Արդար և իմաստուն դատավոր էր Ուշինարան: Անաչառ էր նա և՛ օտարների, և՛ մերձավորների նկատմամբ: Թեև հարուստ էր, բայց համեստ կյանքով էր ապրում իր հոյակապ սրահներում, իսկ տան դռներն ու ճոխ սեղանները միշտ բաց էին աղքատների և օտարականների առջև:

Մի անգամ, երբ Ուշինարան դահլիճում նստած կարդում էր, սրտապատառ ներս ընկավ մի աղավնի, որին հետապնդում էր սրաթև անգղը: Սարսափած թռչունը նստեց դատավորի ծնկին և պաշտպանություն աղերսեց: Անգղը հասավ նրա հետևից, սակայն Ուշինարան արդեն պատսպարել էր աղավնուն:

- Դատավո՛ր, - դիմեց անգղը Ուշինարային, - քաղցը տանջում է ինձ: Մեծ հանցանք է քաղցածի ձեռքից խլել նրա սնունդը: Հե՛տ տուր ինձ աղավնին:

Ուշինարան ձեռքի շարժումով մերժեց նրա պահանջը:

- Դատավո՛ր, - շարունակեց անգղը, - դու պարտաճանաչ մարդու հռչակ ունես, սակայն ինչու՞ բնության օրենքին հակառակ ես գնում: Ինչու՞ ես ինձ զրկում իմ սնունդից:

- Այս անօգնական, մահի սարսուռով բռնված դողդոջուն թռչունը իմ պաշտպանությանը դիմեց, - առարկեց Ուշինարան, - դու՛, հզո՛ր անգղ, մի՞թե չես տեսնում, որ իմ առաջին պարտքն է չհանձնել ինձ հավատացող արարածին իր թշնամուն: Մեծ ոճիր է վտանգված թույլին զրկել օգնությունից:

- Բայց, դատավո՛ր, ամեն արարած ուտելով է ապրում: Եթե զրկես կերակուրից, իսկույն կդադարի նրա կյանքը: Հիմա որ դու իմ ձեռքից խլում ես սնունդս, շուտով կմահանամ ես, և ինձ հետ՝ կինս ու ձագուկներս: Աղավնուն խնայելով դու մեզ բոլորիս մահի ես մատնում:

- Դու շատ իմաստուն ես խոսում, ո՛վ անգղ, հզո՛ր թռչուն: Բայց խոստովանի՛ր, ինչպե՞ս կարող եմ ընդունել, որ թշվառ փախստականին հանձնեմ կորստի: Բնա՛վ, երբե՛ք: Քո առջև բաց են ահա մառանիս դռները: Գնա՛, ա՛ռ, ինչ որ ուզում ես՝ եղնիկի միս, վարազի միս: Եվ ուրիշ ինչ որ ուզում ես, ասա՛, կկատարեմ քո կամքը:

- Ո՛չ, դատավո՛ր, ես ուրիշ տեսակի միս ուտելու սովորույթ չունեմ: Բնությունից որոշված հավերժական օրենք է, որ անգղները աղավնիներ պիտի ուտեն: Տո՛ւր ինձ իմ իրավունքը:

- Ա՛նգղ, - թախանձեց Ուշինարան, - ինչ ցանկանում ես, ուզի՛ր, ես կտամ: Միայն երբեք չե՛մ կարող հանձնել թշվառության մեջ ինձ ապաստանածին:

- Դատավո՛ր, - պատասխանեց անգղը, - քանի որ դու այդքան սիրում ես այդ աղավնուն, - փոխարենը տո՛ւր քո մարմնից այնքան միս, որքան կշռում է աղավնին:

- Այո՛, հիմա արդար և ճշմարիտ է քո կամքը, - սրտահոժար ասաց Ուշինարան, - սիրով կտամ իմ մարմնից փոխարենը:

Եվ հանկարծ դահլիճի ձեղունից մի կշեռք կախվեց:

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարին, իսկ մյուս նժարին՝ իր մարմնից մի կտոր, բայց աղավնին դեռ ծանր էր կշռում: Նորից կտրեց մսի մի կտոր, և աղավ-

նին նորից ծանր էր: Դարձյալ նորանոր կտորներ կտրեց դրեց, և սակայն աղավնին ավելի և ավելի ծանր էր կշռում:

Այլ ելք չունենալով՝ Ուշինարան ամբողջ իր հոշոտված մարմնով ելավ կանգնեց նժարի վրա: Այդ ժամանակ անգղը մարդկային լեզվով ասաց.

- Ես տիեզերքի իշխանն ու դատավորն եմ: Եկա՛ քո առաքինությունը փորձելու համար: Հավիտենական փառքով դու զարդարեցիր քեզ, ո՛վ Ուշինարա, որովհետև քո մարմնով և կյանքով փրկեցիր թռչունին: Ժողովուրդների մեջ պիտի չմեռնի քո անունը, և հավիտյան պիտի ապրես դու անմահ փառքով ու փայլով, որովհետև պարտքիդ հավատարիմ եղար:

ՊԼԱՆ
1. Արդար և իմաստուն դատավորը:
2. Մարդուն ապավինած աղավնին:
3. Անգղի պահանջը և Ուշինարայի պատասխանը:
4. Պարտքին հավատարիմ:
5. Հավիտենական փառքով պսակվածը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հոյակապ սրահներ, համեստ կյանք, ճոխ սեղաններ, սրտապատառ ներս ընկնել, սրաթև անգղ, պաշտպանություն աղերսել, պատսպարել, անհրաժեշտ սնունդից զրկել, թախանձել, ձեղուն, հոշոտված մարմին, տիեզերքի իշխան, հավերժական փառքով զարդարել:

ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ՆՎԵՐԸ

Ըստ Օ՛ Հենրիի

Մեկ դոլար ութսունյոթ սենթ: Իսկ վաղը Սուրբ ծնունդ է: Միակ բանը, որ կարելի էր անել, հին օթոցին ընկնելն ու լաց լինելն էր: Դելան հենց այդպես էլ արեց: Ապա վերջ տվեց լացին ու կանգնեց պատուհանի մոտ: Վաղը Սուրբ ծնունդ է, իսկ ինքը Ջիմին նվեր գնելու համար ունի ընդամենը մեկ դոլար ութսունյոթ սենթ: Որքա՜ն էր ուզում ամուսնուն Ծննդյան տոների կապակցությամբ որևէ առանձնահատուկ բան նվիրել, այնպիսի թանկագին բան, որը արժանի լիներ նրան պատկանելու պատվին: Եվ հանկարծ մի անսպասելի միտք փայլատակեց Դելայի գլխում: Նա թափով ընկրկեց պատուհանից և նետվեց դեպի հայելին: Աչքերն ուրախությունից փայլում էին: Արագ շարժումով հանեց հերակալները, և փայլուն երկար մազերը թափվեցին թիկունքին:

Դելան և Ջիմը աղքատ էին, բայց ունեին երկու գանձ, որոնք նրանց հպարտության առարկան էին: Մեկը Ջիմի ոսկյա ժամացույցն էր՝ հորից ու պապից մնացած, մյուսը Դելայի շքեղ մազերը, որոնք արձակված վիճակում նմանվում էին շագանակագույն ջրվեժի:

Դելան նայեց հայելու մեջ, և արցունքի երկու-երեք կաթիլ ընկան խունացած գորգին: Հնամաշ վերարկուն գցելով ուսերին՝ նա վազեց փողոց և կանգ առավ մի

ցուցանակի առջև, որի վրա գրված էր. «Ամեն տեսակ մազեղեն իրեր»:

- Իմ մազերը չե՞ք գնի, - հարցրեց նա խանութի տիրուհուն:

- Հանե՛ք ձեր գլխարկը: Անհրաժեշտ է ապրանքը տեսնել, - պատասխանեց տիկինը և ուշադիր տնտղեց շագանակագույն ջրվեժը:

- Քսան դոլար, - ասաց վերջապես՝ ձեռքի մեջ ծանրութեթև անելով մազերի թանձր խուրձը:

- Համաձայն եմ, - արագ ասաց Դելան և վերցնելով դրամը՝ դուրս եկավ:

Մի քանի ժամ նա չափչփում էր խանութները՝ Ջիմի համար նվեր ընտրելու նպատակով: Վերջապես գտավ: Դա գրպանի ժամացույցի պլատինե շղթայիկ էր՝ պարզ ու զուսպ զարդանկարով: Այն ճիշտ այնպիսին էր, ինչպիսին Ջիմը՝ համեստ ու արժանապատիվ:

Ժամը յոթին սովորականի պես սուրճն արդեն պատրաստ էր, հում կոտլետները թավան դրված գազօջախին:

Ջիմը երբեք չէր ուշանում: Դելան շղթայիկը սեղմեց ափի մեջ ու սկսեց րոպեները հաշվել: Ահա աստիճանների վրա լսվեց ամուսնու ոտնաձայնը: Ջիմը ներս մտավ և մի արագ հայացք նետելով կնոջ վրա՝ տեղում քարացավ: Դելան վեր թռավ տեղից ու նետվեց դեպի նա:

- Ջի՛մ, սիրելի՛ս, - ասաց նա, - այդպես մի՛ նայիր ինձ: Ես կտրել տվի մազերս ու վաճառեցի, որովհետև չէի կարող Ծննդյան տոներին քեզ որևէ բան չնվիրել: Մազերս նորից կաճեն: Դու չես բարկանում, այնպես չէ՞: Մազերս արագ են աճում: Թե իմանաս ի՜նչ նվեր եմ պատրաստել քեզ համար, ինչ հոյակա՜պ, հրաշալի՜ նվեր:

Դեռևս չհավատալով աչքերին՝ Ջիմը լարված համառությամբ հարցրեց.

- Այդպե՞ս ուրեմն, քո հյուսերը կտրե՞լ ես:

- Մի՛ փնտրիր, այլևս չես գտնի: Ախր ասում եմ քեզ՝ կտրել տվի ու վաճառեցի: Այսօր Թաթախման երեկո է, Ջի՛մ, մի քիչ ավելի սիրալի՛ր եղիր ինձ հետ, որովհետև ես այդ արի քեզ համար: Գլխիս մազերը կարելի է հաշվել, բայց ո՛չ ոք չի կարող չափել իմ սերը քո նկատմամբ: Կոտլետը տապակե՞մ, սիրելի՛ս:

Ջիմը վերարկուի գրպանից մի փաթեթ հանեց ու նետեց սեղանի վրա:

- Սխալ մի՛ հասկացիր ինձ, Դե՛լ, - ասաց նա: - Ոչ մի ուժ չի կարող ինձ ստիպել չսիրելու քեզ: Բա՛ց արա այդ ծրարը և կհասկանաս, թե ինչու մի պահ շփոթվեցի:

Ճերմակ, ժիր մատները կտրատեցին փաթեթի թելերն ու թուղթը: Հաջորդեց հիացմունքի մի բացականչություն, ապա արցունքի կաթիլները թրջեցին կնոջ դեմքը: Սեղանին ընկած էին շքեղ սանրեր ու հերակալներ, որ Դելան շատ անգամ էր տեսել Բրոդվեյի1 ցուցափեղկերից մեկում: Հիանալի սանրեր՝ իսկական կրիայի ոսկրից, փայլուն քարերով զարդարված: Որքա՜ն էր երազել ունենալ այդ ընտիր համքածուն: Այժմ այն պատկանում է իրեն, բայց, ավա՜ղ, չկան այլևս հրաշալի մազերը:

Դելան վերջապես սթափվեց ու հիշեց, որ Ջիմին դեռ չի տվել գեղեցիկ շղթայիկը: Նա բաց արեց ափը, և ազնիվ մետաղը շողշողաց:

- Մի՞թե սա հրաշալիք չէ, Ջի՛մ: Հապա տու՛ր ժամացույցդ:

Ջիմը պառկեց օթոցին, ձեռքերը դրեց գլխի տակ ու ժպտաց:

Ժամացույցը վաճառեցի, որ քեզ համար սանրեր գնեմ:

- Դե՛լ, - ասաց նա, - հարկ կլինի առայժմ պահել մեր նվերները: Իսկ հիմա, սիրելի՛ս, թերևս կոտլետը տապակելու ժամանակն է:

1. **Բրոդվեյ** – Նյու Յորքի կենտրոնական փողոցներից մեկը, որը հայտնի է շքեղ խանութներով, ռեստորաններով, սրճարաններով:

ՊԼԱՆ

1. Ծննդյան տոների նախօրյակին:
2. Անսպասելի միտք:
3. Ընտանեկան գանձեր:
4. Հարմար գործարք:
5. Պլատինե շղթայիկը:
6. Սաթերի հավաքածուն:
7. Ամենաթանկը սերն է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

մեկ դոլար ութսունյոթ սենթ, Սուրբ Ծնունդ, օթոց, անսպասելի միտք, ընկրկել, հերակալ, շագանակագույն ջրվեժ, ուշադիր տնտղել, լարված համառություն, թաթախման ներկ, հիացմունքի բացականչություն, ընտիր հավաքածու, ազնիվ մետաղ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Օ՛ Հենրին ամերիկացի գրող է, 300 պատմվածքի և «Թագավորներն ու կաղամբը» վեպի հեղինակը:

ՁԱԲՈՒՂՈՆ

Ըստ Գրիգոր Զոհրապի

(գրական-դատ փոխադրություն)

Մարդ մը, որուն երեսը երբեք չէին տեսած, խավարի մեջ ապրող դիվային էակ մը: Գող մըն էր Ձաբուղոն: Ո՛չ այն հասարակ գողը, որ կբռնվի շարունակ, կծաղրվի ու բանտերու մեջ կփտի, ոչ ալ այն ահարկու ավազակը, որուն գողոնին արյուն կխառնվի ատեն-ատեն: Իր մեծ արժանիքը ճարպկության մեջ էր: Ամենեն ամուր փակված դուռը, ամենեն բարձր պատը մտնելե չեն արգիլեր զինքը: Բանալիին ծակեն, տախտակներուն ճեղքերեն ներս կսպրդի կարծես անշշուկ ըստվերի մը պես: Իրեն համար պատրաստված ծուղակներուն մեջեն հաջողությամբ դուրս կելլե միշտ՝ զարմանքի մեջ թողնելով զինքը բռնելու պատրաստվող միամիտները: Կապրեր գողնալով, թալնելով շարունակ՝ ավելի ննապարծութենե, քան թե իրական չարութենե մղված, ու հոժարությամբ ետ պիտի տար գողոնը, թե որ բռնվելու վախը չըլլար:

Ձաբուղոն նշանված էր: Նշանտուքը պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ, և քահանան օրհնած չէր զայն: Պարզապես հավիտյան իրար սիրելու խոսք տված էին գիշեր մը ծառի տակ՝ աստղերը ունենալով իրենց վկա: Ամենքն ալ կճանչնային Վասիլիկը՝ այն փոքր դեմքով աղջիկը, որ գույնզգույն պատմուճաններով, արտակարգ արդուզարդերով լեռը կուգար պտտելու մինակը: Ոչ ոք կհամարձակեր աչք նետել կամ դարպասել անոր: Իր բացակա նշանածին սարսափին մեջ պլլված՝ աներկյուղ կպտտեր ամեն տեղ: Անմատչելի ըլլալը հրապուրիչ

կըներ զինքը: Մասամբ նշանածին փառքը իր վրա կանդրադառնար, ու տեսակ մը պատկառանքի խառնված ըղձանքով մը կնայեին իրեն:

Վասիլեկ գոհ կթվեր այդ կյանքեն. մարդ մը կար մութին մեջ, որ զինքը կպաշտեր՝ առանց երևան ելլելու, առանց իր քովը գալու հրապարակավ: Կյանքը գիշերը կսկսեր իրեն համար ու գիշերը կվերջանար, վասնզի նշանածը մութին կրնար գալ, ամենեն անակնկալ պահուն, մտքեն չանցած ծպտումի տակ, որուն գրկաբաց կսպասեր: Ու գողը իր հարափոփոխ կերպարանքով ամեն գիշեր նոր սիրահար մը կթվեր իր աչքին:

Սկիզբները Վասիլեկ երջանիկ եղավ այսպես: Անտեսանելի սիրահարը աշխարհքը կկողոպտեր՝ զինքը հափրեցնելու համար ամեն ճոխություններով: Օր մը, սակայն, այս ամենը ծաղրելի թվեցան իր աչքին: Իր գաղտագողի ու թաքուն երջանկությունը բան մը կկորսնցներ ծածուկ մնալով և չկրնալով ուրիշներուն ցուցվել: Երևակայեցեք մեծագին ադամանդ մը, որ հավիտյան տուփի մը մեջ փակված մնալու դատապարտված ըլլա, և չկրնաք դիմացիններուդ շլացնել: Իր կյանքը այս գոցված ադամանդին տպավորությունը կթողներ, մանավանդ, որ ինքը ցուցամոլ էակ էր: Այսպես էր Վասիլեկ: Ոչ ոք իր երեսը կնայեր փողոց ելած ատեն, չնայած գեղին բոլոր երիտասարդները իր հրապույրներեն կդողային:

Օր մը տղուն մեկը կապվեցավ անոր հետ ու հետը ամուսնանալ առաջարկեց: Այն վայրկյանեն գողին սերը անտանելի լուծ մը դարձավ իրեն: Այն ատեն դիվային խորհուրդ մը անցավ մտքեն. գիշեր մը ոստիկանները կանչեց ու ձերբակալել տվավ Զաբուղոնը:

Զաբուղոն բանտին մեջ է: Հսկողության տակ է շարունակ այս բանտարկյալը: Յոթը տարի պիտի մնա այսպես: Իր նշանածին կխորհի ամեն ատեն, այն մեկհատիկ բարեկամության, որուն աներկբա կհավատա դեռ: Ու հակառակ ամեն զգուշության՝ փախչելու ջանքեր կընե: Եվ գիշեր մը կհաջողի վերջապես: Խոհանոցին ծխնելույզին մեջեն վեր կելլե նախ ու հետո հիանալի ճարտարությամբ մը այդ բարձրութենեն վար կիջնե, այս անգամ բանտին շրջանակեն դուրս: Երեք տարվան մեջ այս վեցերորդ փորձը կհաջողի ահա, ու Զաբուղոն շիտակ գեղը կդառնա նորեն: Կասկած մը չանցնիր այս հնարամիտ մարդուն մտքեն, տարակույս մը չի գար թունավորելու իր սիրույն մաքրությունը: Գիտե, որ սպասող մը կա իրեն ամենեն անակնկալ ժամուն: Ու ազատության գինը այս բերկրանքով կբազմապատկվի, կմեծնա: Վասիլեկին թովիչ ակնարկը պիտի գտնե նորեն, և ուրախության սարսուռ մը կցնցե իր հեք մարմինը:

Մեղմիվ կմոտենա անոր տունին: Պատուհանին առջև խոսակցության ձայն մը կկեցնե զինքը: Ո՞վ է ներսը: Մտիկ կընե, չի հավատար լսածին: Ներս կմտնե անձայն ու չի հավատար տեսածին: Ժամ մը անկյուն մը կծկված կսպասե՝ չկրնալով ցրված միտքը ամփոփել: Հետո ինքզինքը կգտնե, ու ձեռքը ակամա կերթա պզտիկ դանակին:

Մատները կշոյեն զենքը: Առաջին անգամ է, որ արյուն թափելու հարկը կտեսնե: Ո՞վ է այդ ապուշ էակը, որ իր թողած պակասը լեցնելու եկած է: Սա տղու՞ն համար Վասիլեկ մոռցած է զինքը: Մեկ նայվածքով կչափե, կգնահատե այս ոսոխը ու շատ վար կգտնե իրմե: Եվ իր սիրտը լեցնող արհամարհանքին առջև վրեժի գաղափարը կթուլնա: Զենքը կքաշե դանակին կոթեն, որ իր պրկված մատները դուրս քաշած

էին մեջքի գոտիեն: Ո՛չ, չեն արժեր ասոնք իր գայրույթը, ու կամացուկ դուրս կելլե կրկին: Բոլոր գիշերը կքալե փողոցներով, կխորհի, որ այդքան ծանրագնի ազատությունը բանի մը չի ծառայեր, ու արշալույսին հետ վարանոտ քայլերով ետ կդառնա իր բանտը նորեն:

ՊԼԱՆ

1. Տարօրինակ գողը:
2. Գաղտնի նշանտուք:
3. Անմատչելի աղջիկը:
4. Դավաճանություն:
5. Զարուղոն բանտում:
6. Փախուստ:
7. Արհամարհանքն ամենամեծ զենքն է:

ՆԵՂ ՕՐՎԱ ԸՆԿԵՐԸ

Ըստ Սոմերսեթ Մոեմի

(ինքնուրույն հանգուցալուծումով փոխադրություն)

Էդուարդ Հայդ Բարթընը առևտրական էր: Հարուստ մարդ էր. սեփական քըրտինքով էր վաստակել յուրաքանչյուր գրոշը:

Բարթընը նվազ ու փոքրահասակ անձնավորություն էր: Բարեկազմ էր, ալեհեր, կարմիր ու կնճռոտ երեսով, կապույտ աչքերով: Նա շատ խնամքով և համեստ էր հագնվում: Հագուստը միշտ համապատասխանում էր վաթսունամյա պատկառելի տարիքին:

Շատ չէր խոսում, մեղմ և զուսպ հումոր ուներ: Շրջապատողները հատուկ սիրում և հարգում էին այդ բարի մարդուն: Այո՛, բարի, որովհետև նրա հմայքը հենց այդ բարության մեջ էր: Ձայնը հանդարտ էր, դժվար էր երևակայել անգամ, թե զայրույթի պահին այն կարող է բարձրանալ: Ուներ մեղմ ու քնքուշ ժպիտ: Մի խոսքով՝ հմայիչ մի անձնավորություն, որը ճանճին անգամ վնաս չէր հասցնի:

Մի օր այս մեղմ ու բարի մարդու մոտ եկավ նրա անվանակիցը՝ Լենի Բարթընը: Վերջինս երեսունհինգ տարեկան երիտասարդ էր, ոչնչով չէր զբաղվում, բացի թղթախաղից: Մոլի բրիջ խաղացող էր: Բարձրահասակ ու գեղեցիկ էր: Կանայք այս երիտասարդ Բարթընով շատ էին հետաքրքրվում:

Ծեր և երիտասարդ Բարթընները գրեթե ամեն երեկո միասին էին. նրանք երկուսն էլ թղթախաղի սիրահար էին: Եվ ընկերացել էին:

Եվ ահա այս գեղեցիկ ու ջահել Լենին եկավ իր ավագ բարեկամի մոտ և մի գործ խնդրեց նրա գրասենյակում:

- Ի՞նչ եք արել մինչև այժմ, - հարցրեց ավագը ջահելին:
- Առանձնապես ոչինչ, - կմկմաց Լենին:
- Վախենամ, որ ներկա պահին Ձեզ համար ոչինչ անել չեմ կարող, - պատասխանեց առևտրական գրասենյակի տեր Բարթլը:

Երիտասարդը չշարժվեց, բայց խիստ գունատվեց: Մի րոպե երկմտեց, հետո սկսեց պատմել, որ վերջերս թղթախաղում բախտը չի բերել: Մեծ գումարներ է տանուլ տվել: Հիմա մի գրոշ անգամ չունի: Եղած-չեղածը գրավ է դրել: Մի խոսքով, քայքայված, անհույս վիճակում է: Եթե մի գործ չճարի, ինքնասպան կլինի:

Ավագ Բարթլը ուշադիր նայեց երիտասարդին: Տեսավ՝ սա շատ խմելուց լրիվ հալումաշ է եղել:

- Լավ, թուղթ խաղալուց բացի ոչ մի ուրիշ բան անել չե՞ք կարող, - հարցրեց առևտրական գրասենյակի պետը:
- Ես կարող եմ լողալ, - ասաց երիտասարդը:

Պատասխանը շատ անմիտ ու հուսահատ հնչեց:

- Ես ինքս ջահել ժամանակ լավ լողորդ եմ եղել: Մի անգամ ափից լողացի մինչև փարոս: Համարյա երեք մղոն ճանապարհ է և բավական դժվար. փարոսի շուրջը ծովային հոսանքներ կան, - պատմեց առևտրականը:

Ապա ասաց իր երիտասարդ անվանակցին, որ եթե նա կրկնի իր արածը, լողա մինչև փարոս, աշխատանք կստանա: Լենիի դեմքը ճերմակեց:

- Այնքան լավ մարզավիճակում չեմ, - պատասխանեց նա:

Ավագը ոչինչ չասաց, միայն ուսերը թոթվեց: Երիտասարդը մի րոպե լռեց, հետո գլխով արեց՝ իբրև համաձայնության նշան:

- Լավ, - ասաց նա: - Ե՞րբ եք ուզում, որ լողամ:

Ավագը նայեց ժամացույցին: Հազիվ տասն անց էր:

- Լողը Ձեզնից մի ժամ տասնհինգ րոպեից ավել չի խլի: Ես մեքենայով գետարբան կգամ և տասներկուսն անց կես Ձեզ կհանդիպեմ, - ասաց Էդուարդ Բարթլը:

Նրանք իրար ձեռք սեղմեցին և բաժանվեցին:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Աշակերտներին հանձնարարել գտնել հանգուցալուծում: Իսկ նովելն ավարտվում է այսպես.

«Երեք օր հետո միայն կարողացան գտնել երիտասարդ Լենի Բարթլի մարմինը:

Ավագ Բարթլին հարցրին.

- Երբ դուք նրան առաջարկեցիք լողալ, գիտեի՞ք, որ կխեղդվի:
- Դե այդ ժամանակ ես գրասենյակում ազատ տեղ չունեի, - կամացուկ, մեղմորեն քմծիծաղ տվեց նա»:

ՊԼԱՆ

1. Էդուարդ Բարթլը.
   ա) արտաքինը,
   բ) բնավորությունը:
2. Նրա անվանակից Լենի Բարթլը:
3. Երիտասարդ Բարթլի խնդրանքը:
4. Ավագ Բարթլի առաջարկը:
5. Համաձայնություն և մահ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու արտահայտությունները.

յուրաքանչյուր գրող, նվազ ու փոքրաՀասակ անձնավորություն, բարեկազմ, ալեՀեր, պատկառելի տարիք, մեղմ ու զուսպ Հումոր, մեղմ ու քնքուշ ժպիտ, ասմունքել, ասմուլ տալ, եղած-չեղած, Հալումաղ լինել, ծովային Հոսանքներ, ուսերը թոթվել.

բ) Հատուկ անունները.

Էդուարդ Հայդ Բարթըն, Լենի Բարթըն:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Վիլյամ Սոմերսեթ Մոեմ (1874-1965)

Անգլիացի գրող, ստացել է բժշկական կրթություն: «Ստրկություն մարդկային» վեպը որոշ չափով ինքնակենսագրական է: Հայտնի են «Լուսին և վեցպենսանոց», «Թատրոն», «Ածելու սայրը» վեպերը, ինչպես նաև բազմաթիվ պատմվածքներ և նորավեպեր:

ԳՐԱԶԸ

Ըստ Ա.Չեխովի

Աշնանային մութ գիշեր էր: Բանկիրն իր առանձնասենյակում քայլում էր անկյունից անկյուն և մտաբերում, թե ինչպես տասնհինգ տարի առաջ այս նույն օրը խնջույք էր սարքել, որին ներկա էին շատ հյուրեր: Խոսում էին տարբեր թեմաներից, կատակում, վիճում: Խոսք բացվեց մահապատժի մասին: Հյուրերի մեծ մասը գտնում էր, որ մահապատիժը անհարիր է քրիստոնյա պետություններին, այն կարելի է փոխարինել ցմահ բանտարկությամբ:

- Ես ձեզ հետ համաձայն չեմ, - առարկեց ինքը՝ բանկիրը: Մահապատիժն ավելի բարոյական է և մարդասիրական: Այն գոնե սպանում է միանգամից, իսկ ցմահ բանտարկությունը՝ աստիճանաբար:

- Թե՛ մահվան պատիժը, թե՛ ցմահ բանտարկությունը հավասարապես բարոյազուրկ են, - միջամտեց հյուրերից մեկը: - Աստծո շնորհած կյանքը պետությունը խլելու իրավունք չունի:

- Թե՛ մեկը, թե՛ մյուսը բարոյազուրկ են, դա ճիշտ է, բայց եթե ինձ առաջարկեին ընտրել դրանցից մեկը, ես կընտրեի բանտը: Ապրելը, ինչքան էլ չլինի, լավ է, - ասաց 25-ամյա մի իրավաբան:

- Ճիշտ չէ, - ասաց բանկիրը, - գրազ եմ գալիս երկու միլիոնով, որ դուք բանտում հինգ տարի անգամ նստելու համբերություն չեք ունենա:

- Եթե լուրջ եք ասում, - ասաց իրավաբանը, - ապա գրազ եմ գալիս, որ բանտում կնստեմ ոչ թե հինգ, այլ տասնհինգ տարի:

- Համաձա՛յն եմ, - գոչեց բանկիրը, - պարոնա՛յք, լսու՞մ եք, դնում եմ երկու միլիոն:

Այդ վայրենի, անմիտ գրազը վավերացվեց: Վճռվեց, որ իրավաբանն ամենա-

խիստ հսկողության տակ իր բանտարկությունը կրելու է բանկիրի պարտեզում գտնվող առանձնաշենքերից մեկում: Ոտքը շենքից դուրս չի դնելու, չի առնչվելու ոչ մեկի հետ, նամակներ չի ստանալու: Թույլատրվում էր գիրք կարդալ, երաժշտություն լսել, նամակ գրել: Այն ամենը, ինչ պետք էր, կարող էր պահանջել գրությամբ և ստանալ փոքրիկ պատուհանից: Իրավաբանի կողմից պայմանը խախտելու ամենաչնչին փորձը, նույնիսկ նշանակված ժամկետից մեկ րոպե առաջ բանտից դուրս գալը բանկիրին ազատում էր երկու միլիոնը վճարելու պարտավորությունից:

Բանտարկության առաջին տարին իրավաբանը սաստիկ նեղվում էր միայնությունից ու ձանձրույթից: Օր ու գիշեր նվագում էր, պահանջում արկածային, ֆանտաստիկ թեթև վեպեր: Երկրորդ տարին բանտախցում դաշնամուրը լռեց: Իրավաբանն իր գրություններով պահանջում էր դասական երկեր: Այնուհետև մեծ եռանդով սկսեց ուսումնասիրել լեզուներ, փիլիսոփայություն ու պատմություն: Նա այնպես էր տարվել այդ գիտություններով, որ բանկիրը հազիվ էր հասցնում գրքերով ապահովել նրան: Չորս տարվա ընթացքում բանկիրը բերել տվեց 600 հատոր գիրք: Շուտով նա կալանավորից ստացավ այսպիսի մի նամակ. «Իմ թանկագի՛ն բանտապետ, Ձեզ այս տողերը գրում եմ վեց լեզվով: Ցու՛յց տվեք նամակս գիտակ մարդկանց, թող կարդան: Եթե ոչ մի սխալ չգտնեն, ապա, աղաչում եմ Ձեզ, հրամայեցե՛ք, որ պարտեզում կրակեն: Այդ կրակոցի ձայնն ինձ կասի, որ իմ ջանքերն իզուր չեն անցել, և որ ինչքան երջանիկ եմ ես, որ աշխարհի մեծերին կարդում և հասկանում եմ իրենց լեզվով»: Երկու օր անց բանկիրը հրամայեց պարտեզում երկու անգամ կրակել:

Տասներորդ տարուց հետո իրավաբանը միայն Ավետարան էր կարդում, որին հաջորդելու եկան օրենքներն ու աստվածաբանությունը: Իսկ բանտարկության վերջին երկու տարում ուսումնասիրում էր ինչ պատահեր՝ բժշկագիտություն, քիմիա, Շեքսպիր, Բայրոն:

Հասավ իրավաբանի՝ բանտից ազատվելու օրը: Բանկիրը, որ վաղուց ի վեր ֆինանսական ձախորդությունների մեջ էր, սարսափում էր մտածել, թե պարտավոր է երկու միլիոն հատուցել: «Սնանկությունից և խայտառակությունից փրկվելու միակ միջոցն այդ մարդու մահն է», - մտածեց նա և գիշերը գնաց կալանավորի սենյակը՝ իր մտադրությունն իրագործելու: Փափուկ հողաթափերը հագին՝ նա զգուշությամբ մոտեցավ բանտախցի դռանը և ականջ դրեց: Ձայն-ծպտուն չկար: Սրտի տրոփյունով բացեց դուռը: Իրավաբանը, որի մազերն արդեն սպիտակել էին, քնած էր նստած տեղը: Սեղանին դրված էր ինչ-որ գրություն: Բանկիրն անաղմուկ վերցրեց այն և կարդաց. «Վաղը՝ ցերեկվա տասներկուսին, ես ազատություն եմ ստանալու: Հարկ եմ համարում Ձեզ ասել, որ տասնհինգ տարի գրքերն ինձ պարգևեցին իմաստնություն: Այն ամենը, ինչ մարդկային միտքը արարել է դարերով, այժմ խտացված է իմ ուղեղում: Ես արհամարհում եմ այն, ինչով Դուք եք ապրում: Եվ որպեսզի ասածս գործով ապացուցեմ, հրաժարվում եմ երկու միլիոնից, որի մասին մի ժամանակ երազում էի: Այստեղից դուրս կգամ պայմանավորված ժամկետից հինգ ժամ շուտ, այսինքն կխախտեմ պայմանը, որպեսզի զրկեմ ինձ երկու միլիոնի իրավունքից»:

Ավարտելով ընթերցումը՝ բանկիրը նամակը դրեց նույն տեղը և համր քայլերով դուրս եկավ շենքից: Մտավ իր առանձնասենյակը և շփոթահար նստեց: Նա երբեք

իրեն այդքան նվաստացած ու արհամարհված չէր զգացել:

Հետևյալ օրը պահակներն ասացին, որ իրենք տեսան, թե ինչպես բանտարկյալը թռավ պատուհանից ու հեռացավ: Բանկիրն իսկույն գնաց բանտախուց և հավաստիանալով, որ կալանավորը փախել է, վերցրեց նրա գրած նամակն ու պահեց չհրկիզվող պահարանում: Համենայն դեպս: Զգուշության համար:

ՊԼԱՆ

1. Տասնհինգ տարի առաջ:
2. Մահապատի՞ժ, թե՞ ցմահ բանտարկություն:
3. Գրազը:
4. Տասնհինգ տարի բանտում:
5. Նամակ:
6. Եզրակացություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քրիստոնյա պետություններ, ցմահ բանտարկություն, անմիտ գրազ, առնչվել, պայմանը խախտելու ամենաչնչին փորձ, Ավետարան, ֆինանսական ճախորդություններ, փափուկ հողաթափեր, համր քայլեր, շփոթահար, նվաստացած, հավաստիանալ, անկիզելի պահարան:

ԿՅԱՆՔԻ ՍԵՐԸ

Ըստ Ջեկ Լոնդոնի

(ստեղծագործական մուտքով փոխադրություն)

Նա գնում էր հանդուգն վճռականությամբ, առանց կանգ առնելու, ուշադրություն չդարձնելով ոտքի ցավին: Անճապարանքով բարձրացավ բլրի գագաթը, սակայն բարձունքից երևում էին միայն ամայի տարածություններ: Նրան նորից համակեց վախը, բայց հաղթահարելով այդ զգացումը՝ սկսեց կաղալով իջնել վար: Դժվարությամբ էր քայլում. ուժերը լքում էին: Քանի՞ օր էր՝ կուշտ չէր կերել: Հաճախ կռանում էր, պոկում դաշտային գունատ հատապտուղներ, թեև գիտեր, որ դրանցով չի կշտանա:

Իջավ գիշերը, և շուրջն ամեն ինչ կորավ անթափանց խավարի մեջ: Մարդը շոշափելով չոր ճյուղեր ու մամուռի ծվեններ հավաքեց ու խարույկ վառեց: Թաց ոտնամանները չորացրեց խարույկի մոտ: Գուլպաններն ամբողջությամբ ծակծկվել էին, և ոտքերը հարվել էին արյունլվիկ լինելու աստիճան: Նա զննեց ու տեսավ, որ կոճը ուռել ու դարձել է նույնքան խոշոր, որքան ծունկը:

Առավոտյան մարդը շարունակեց ճանապարհը: Որպեսզի դուրս գար այդ անմարդաբնակ վայրերից, հասկանում էր, որ պետք է քայլեր դեպի հարավ: Բայց ոտքը թմբել ու փայտացել էր, սոսկալի տանջում էր քաղցը: Նա գորտ էր որոնում լճակնե-

րում, ձեռքերով փորփրում էր հողը՝ որդեր գտնելու հույսով, չնայած գիտեր, որ այդքան հեռու հյուսիսում ո՛չ գորտ է լինում, ո՛չ որդ:

Մի գիշեր էլ անցավ: Օրը մառախլապատ էր ու ձյունոտ: Քաղցը նորից գլուխ բարձրացրեց մարդու մեջ: Նա շատ էր թուլացել, գլուխն այնպես էր պտտվում, որ երբեմն ոչինչ չէր տեսնում: Դադարեց քայլել ու սկսեց առաջ գնալ սողալով, հաճախ գիտակցությունը կորցնելով և դարձյալ սթափվելով: Բայց սարսափն ամբողջովին պատեց մարդուն, երբ լսեց գայլի ոռնոցը: Հրացանը կորցրել էր ճանապարհին, մերկ ձեռքերով ինչպե՞ս պայքարեր գազանի դեմ: Իսկ ինքը որքա՜ն էր ուզում ապրել: Եվ ահա թփերի մեջ խռխռոց լսեց. ոչ այն է հառաչանք էր դա, ոչ այն է՝ հազ: Իրենից քսան քայլ հեռու՝ թփերի արանքում, նա գայլի մոխրագույն գլուխ տեսավ: Ականջները ցցված էին, ինչպես ուրիշ գայլերինը, բայց աչքերը խամրած էին, գլուխը թուլացել ու կախ էր ընկել: Երևի գայլը հիվանդ էր. անդադար փռշտում ու հազում էր: Եվ քանի որ քաղցից թուլացած մարդն անընդհատ ընկնում էր ցնորքների աշխարհը, նրան թվաց, թե աչքին տեսիլք է երևում: Բայց գայլը մի կերպ քարշ եկավ դեպի մարդը՝ կարծես ապացուցելու, որ ինքն իրական է, կա: Սակայն ո՛չ մարդն էր գայլից վախենում, ո՛չ գայլը՝ մարդուց: Երկուսն էլ անուժ էին: Հիվանդ գազանը օրերով քարշ էր գալիս հիվանդ մարդու հետքերով այն հույսով, թե մարդը առաջինը կմեռնի:

Տասներորդ օրը մարդը տեսավ շողափայլ ծովը և նրա երեսին անշարժացած մի նավ: Հասկացավ, որ ձկնորսանավ է: Կիսագիտակից վիճակում մարդը չորեքթաթ գնում էր դեպի նավը, դեպի կյանք: Տասներորդ օրվա վերջում նա հասկացավ, որ մինչև նավը հասնելը իրենից կպահանջվի ևս յոթ օր: Մարդու ծնկների կաշին պլոկվել էր, և երևում էր միսը: Բայց մարդը սողում էր, հետևից՝ հազացող ու փռշտացող գայլը: Երբեմն մարդը սուզվում էր թմրության մեջ, բայց կյանքի մնացորդներն ստիպում էին ապրել: Թմրության մի պահի նա դեմքի մոտ զգաց գայլի շնչառությունը և փշոտ լեզվի հպումը այտին: Գայլը վերջին ճիգով աշխատում էր ատամները խրել մարդու մաշկի մեջ, բայց վերջինս ապրելու կամքով շրջվեց հանկարծ և իր ամբողջ ծանրությամբ ընկավ նրա վրա: Հետո գլորվեց մեջքի վրա ու քնեց:

Կետորս նավից մարդիկ նկատեցին տարօրինակ մի արարածի, որը սողում էր դեպի ծովը: Մակույկ նստեցին և շտապեցին ափ: Ավազների վրա պառկած արարածը ոչինչ չէր լսում, ոչինչ չէր հասկանում և վիթխարի ճիճվի պես գալարվում էր: Նրան գրեթե չէր հաջողվում առաջ շարժվել, բայց նա չէր նահանջում և կուչուձիգ գալով ու գալարվելով՝ առաջ էր շարժվում ժամում մոտ քսան քայլ:

Նավաստիները մարդուն տեղափոխեցին նավ: Մարդը փրկված էր: Կյանքի սերը հաղթել էր մահին:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Հանձնարարել աշակերտներին գտնել սկիզբը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջեկ Լոնդոնը 20-րդ դարի ամերիկացի գրող է:*

ԿԱՄԱԿՈՐ ԿՆՈՋ ՍԱՆՁԱՀԱՐՈՒՄԸ

Ըստ Վիլյամ Շեքսպիրի

Իտալիայի գեղեցիկ քաղաքներից մեկում ապրում էր Բապտիստա անունով մի հարուստ մարդ: Նա ուներ երկու չքնաղ աղջիկ: Նրանցից ավագը՝ Կատարինան, քմահաճ ու կամակոր էր: Նա ոչ ոքի չէր ենթարկվում, և հաճախ կարելի էր լսել նրա գոռգոռոցը: Իսկ փոքր աղջիկը՝ Բիանկան, հեզ, համեստ ու սիրալիր մի էակ էր: Շատերն էին ուզում Բիանկայի հետ ամուսնանալ, իսկ կոպիտ Կատարինայից խուսափում էին: Բապտիստան սկսեց վախենալ, որ իր կամակոր «կատվիկ» Կատարինան տանը կմնա: Այդ պատճառով էլ հայտարարեց, որ մինչև մեծ դուստրը չամուսնանա, կրտսերին չի պսակի:

Բիանկայի փեսացուները որոշեցին գտնել մի մարդու, որը կհամաձայնի ամուսնանալ Կատարինայի հետ:

Հենց այդ ժամանակ հին և գեղեցիկ Վերոնա քաղաքից Պադուա եկավ Պետրուչիո անունով մի երիտասարդ, որի հայրը մահացել էր և նրան կտակել անբավ հարստություն: Պետրուչիոն որոշել էր ճամփորդել, աշխարհ տեսնել և իր համար մի լավ կին գտնել:

Պետրուչիոն կատակասեր ու սրամիտ երիտասարդ էր: Նա ցանկացած մարդու հետ լեզու էր գտնում և շահում բոլորի համակրանքը:

Բիանկայի փեսացուներից մեկը Պետրուչիոյի մտերիմ ընկերն էր: Երբ իմացավ, որ սա կին է փնտրում, նրան պատմեց Կատարինայի գեղեցկության և հարստության, բայց նաև կամակորության և կոպիտ բնավորության մասին:

- Եթե նույնիսկ ամպրոպից բարձր էլ որոտա, ես նրան կստիպեմ հնազանդվել և սիրել ինձ, - քմծիծաղ տվեց Պետրուչիոն:

Հենց հաջորդ օրը նա գնաց Բապտիստայի մոտ և ասաց.

- Դուք Կատարինա անունով համեստ և գեղեցիկ աղջիկ ունեք: Ես եկել եմ խնդրելու նրա ձեռքը:

Բապտիստան սկսեց հարցուփորձ անել երիտասարդին, և Պետրուչիոն նրան շատ դուր եկավ:

Մինչ նրանք զրուցում էին, սենյակ խուժեց մի մարդ՝ գունատ, վախեցած աչքերով և արյունոտ գլխով: Պարզվեց՝ մարդը Կատարինայի երաժշտության ուսուցիչն է: Նա փորձել էր ուղղել օրիորդի սխալը, իսկ սա ուսուցչի գլխին էր խփել վինը և հրաժարվել պարապելուց:

- Օ՜, այ սա հարսնացու՜ է, այ սա խիզախ օրիո՜րդ է, - հիացած բացականչեց Պետրուչիոն և կամեցավ րոպե առաջ հանդիպել իր ապագա կնոջը:

Ահա հպարտ ու չարացած դեմքով սրահ մտավ Կատարինան:

- Բարի լույս, Կատո՛, լսել եմ, որ ձեզ այդպես են կոչում, - դիմեց նրան երիտասարդը:

- Սխալ եք լսել, իմ անունը Կատարինա է, - խստորեն ընդհատեց օրիորդն անծանոթին:

- Դուք ստում եք, - ասաց Պետրուչիոն, - ձեզ իսկապես «Կատո» են կոչում, երբեմն էլ՝ «սիրունիկ և չար կատու»: Ես լսել եմ ձեր գեղեցկության և համեստու-

թյան մասին և եկել եմ խնդրելու ձեր ձեռքը:
Թյան մասին և եկել եմ խնդրելու ձեր ձեռքը:

Այսպես Պետրուչիոն անընդմեջ խոսում և սիրահետում էր Կատարինային: Օ-
րրորդը փորձում էր վիճել, կոպտում էր երիտասարդին: Բայց սա բնավ բանի տեղ
չէր դնում աղջկա կոպտությունները և շարունակում էր քաղցր ու անուշ բառերով
Հակահարված տալ իր սրտի ընտրյալին:

Հակահարված տալ իր սրտի ընտրյալին:
- Մենք կիրակի օրը ամուսնանում ենք, - Հայտարարեց Պետրուչիոն:
- Ես կուզեի մինչև կիրակի օրը ձեզ կախված տեսնել,- բղավեց Կատարինան:
- Ես կուզեի մինչև կիրակի օրը ձեզ կախված տեսնել, բայց բոլորից խռոված ու թթված`
Եկավ կիրակին: Կատարինան շքեղ Հագնված, բայց բոլորից խռոված ու թթված`
պատրաստվել էր Հարսանեկան Հանդեսին: Նշանակված ժամը եկավ, անցավ, բայց
փեսացուն չկար: Հյուրերը սկսեցին փսփսալ, իսկ Կատարինան Հոնգուր-Հոնգուր
լաց էր լինում, որովհետև ծաղրի և նշավակի առարկա էր դարձել:

Երբ Հյուրերն ուզում էին ցրվել, ներս ընկավ Պետրուչիոն՝ աղքատիկ Հագնված,
մի կաղ և ծեր ձի Հեծած: Բապտիստան շշմեց փեսայի տեսքից, առաջարկեց Հագուս-
տը փոխել:

- Կատոն ամուսնանում է ինձ Հետ, ոչ թե շորերիս, - առարկեց Պետրուչիոն:
Փեսացուն բռնեց Հարսի թևը, և գնացին եկեղեցի: Այստեղ Պետրուչիոն իրեն
իսկական խելագարի պես պահեց: Խեղճ Կատարինան, որ ոչ ոքից չէր վախենում,
Հիմա ահից դողում էր:

Վերջապես բոլորը տուն վերադարձան և ցանկացան սեղան նստել: Բայց Պետ-
րուչիոն Կատարինային թույլ չտվեց մոտենալ սեղանին և Հրամայեց ճամփա ընկ-
նել: Դեռ նորահարսը բերանը չէր բացել, երբ Հայտնվեց կաղ ձիու վրա: Նա գնում
էր իր խելագար ամուսնու Հետ:

Հաջորդ երկու օրերին Պետրուչիոն գրեթե տանջամահ արեց իր նորատի կնոջը:
Հետը շատ քաղցր էր վարվում, բայց որևէ պատրվակով Հատակին էր թափում ա-
ղախնի բերած ուտելիքը, ծեծում էր ծառաներին, ոտքերի տակ տրորում Կատարի-
նայի Համար կարված շքեղ Հագուստն ու գլխարկները:

Կատարինան քաղցած էր, տանջված ու Հոգնած: Վերջապես նա Հասկացավ, որ
չի կարելի Հակառակվել: Եվ ամուսնու բոլոր ասածներին անխոս Համաձայնում էր:

Անցավ մի քանի օր: Պետրուչիոն Կատարինային տարավ Հոր տուն: Ամուսնա-
նում էր Բիանկան: Հարսանյաց խնջույքից Հետո երիտասարդ փեսացուները Հա-
վաքվեցին Պետրուչիոյի շուրջը և սկսեցին նրան ծաղրել «վայրի կատու» Կատարի-
նայի Հետ ամուսնանալու Համար:

- Եկեք մարդ ուղարկենք մեր կանանց կանչելու, - առաջարկեց Պետրուչիոն, -
ում կինը ամենաՀեզն է, նա կգա առաջինը, իսկ ամուսինը կշահի Հարյուր կրոն:

Նախ Բիանկայի փեսացուն իր ծառային ուղարկեց նրան կանչելու: Բայց տիրու-
Հին ասել էր, որ զբաղված է և չի կարող գալ:

Նույն պատասխանը ստացավ նաև մյուս երիտասարդը: Այդ ժամանակ Պետրու-
չիոն ծառային ասաց.

- Գնա՛ տիրուՀուդ մոտ և ասա՛, որ Հրամայում եմ այստեղ գալ:

Ընկերները ծաղրում էին Պետրուչիոյին, ենթադրում, թե ի՛նչ տեսարանի ակա-
նատես կլինեն: Բայց Կատարինան Հեզ ու խոնարՀ կանգնեց իր ամուսնու դիմաց:

Ծեր Բապտիստան այդ օրը աշխարՀի ամենաերջանիկ մարդն էր. չէ՞ որ անսանձ
աղջիկը դարձել էր մեղմ ու Հեզ կին:

ՊԼԱՆ
1. Բապտիստան և նրա երկու աղջիկները:
2. Վերոնացի Պետրուչիոն և նրա հարսնախոսությունը:
3. Արյունոտ գլխով երաժշտության ուսուցիչը:
4. Պետրուչիոն սիրահետում է Կատարինային:
5. Հարսանիքի օրը Պետրուչիոյի մատուցած անակնկալները:
6. Պետրուչիոյի դաստիարակչական մեթոդները:
7. Հեզ ու խոնարհ Կատարինան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ձեռքը խնդրել, կամակոր կատվիկ, անդրանիկ դուստր, անբավ հարստություն, լեզու գտնել, մակրանք շահել, ամպրոպից էլ բարձր որոտալ, անընդմեջ խոսել և սիրահետել, քաղցր ու անուշ բառերով հակահարված տալ, սրտի ընտրյալ, ծաղրի և նշավակի առարկա դառնալ, տանջամահ անել, նոր բատի կին, հարսանյաց խնջույք, հարյուր կրոն, հեզ ու խոնարհ կանգնել.

բ) հատուկ անունները.

Իտալիա, Պադուա, Վերոնա, Բապտիստա, Բիանկա, Կատարինա, Պետրուչիո:

2. Կարդալ հատվածներ Վիլյամ Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը» կատակերգությունից:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Վիլյամ Շեքսպիր՝ անգլիացի հանճարեղ գրող:*

ԿԱՐՄՐԱՄՈՐԹ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՓՐԿԱԳԻՆԸ

Ըստ Օ՛ Հենրիի

Մտահղացումը հոյակապ էր թվում: Բիլը և ես որոշեցինք երեխա փախցնել: Դա պատահեց ինչ-որ խելացնոր պահի, բայց այդ բանը մենք ավելի ուշ հասկացանք:

Ես ու Բիլը վեց հարյուր դոլար միացյալ դրամագլուխ ունեինք, և մեզ պարզապես հարկավոր էր ևս երկու հազար, որպեսզի գլուխ բերեինք մի շահութաբեր գործ: Ամեն ինչի մասին ծանրութեթև արեցինք և առևանգման զոհ ընտրեցինք քաղաքի մեծահարուստներից մեկի՝ Դորսեթ Էբենեզերի մինուճար որդուն: Փոքրիկը տասը տարեկան, պեպենոտ դեմքով երեխա էր: Ես ու Բիլը ենթադրում էինք, որ Դորսեթը ուղղակի պարելով կտա պահանջվող փրկագինը: Քաղաքից երկու մղոն այն կողմ ոչ բարձր մի սար կար, որի քարանձավներից մեկը դարձրել էինք մեր որջը:

Երբ մոտեցանք Դորսեթի տիրույթներին, տղան, մարգագետնի մի ծայրում նըստած, քարերով խփում և տանջում էր կապոտած կատվին:

- Է՜յ, փոքրի՛կ, - կանչեց Բիլը, - ուզու՞մ ես մի մեծ փաթեթ քաղցրավենիք ստանալ և զբոսնել մեր կառքով:

Տղան աղյուսի կտորով մի դիպուկ հարված հասցրեց Բիլի աչքին և սկսեց կատաղի դիմադրել, երբ նրան քաշքշելով խցկում էինք կառքի մեջ:

Մենք նրան քարանձավ տարանք: Բիլն իր դեմքի չանգռոտված ու արնակալած մասերին թրջած լաթ դրեց: Հենց մութն ընկավ, ես կառքը տարա համձնելու տիրոջը:

Երբ վերադարձա, տղան կարմրաշեկ մազերի մեջ բազեի փետուրներ էր ամրացրել և պպզել օջախի մոտ: Նա իրեն հնդկական ցեղերից մեկի կարմրամորթ առաջնորդ էր երևակայում: Հենց մոտեցա, նա գոչեց.

- Է՜յ, դու՛, անիծյա՛լ մուլթ, ինչպե՞ս ես համարձակվում մտնել այս տափաստանների ահ ու սարսափի՝ կարմրամորթ առաջնորդի ճամբարը:

Պարսատիկը վնգաց, և ես հազիվ ցատկեցի մի կողմ՝ քարի հարվածից խուսափելու համար:

- Հիմա դեռ լա՛վ է, - ասաց Բիլը: - Մենք հնդկացի-հնդկացի էինք խաղում: Ես գերի ընկա, և լուսադեմին նա պիտի հանի իմ գանգամաշկը: - Օ՜ֆ, - տնքաց նա, - ինչ էլ ծանր ձեռք ունի այդ թզուկը:

Բիլի սրունքները ամբողջովին քերծված ու արյունոտված էին:

Երևում է՝ մանչուկը լիարժեք հաճույք էր զգում այն մտքից, որ իբր ճամբար է հիմնել, և մենք իր գերիներն ենք: Հավատացնում էր, որ մեզ ողջ-ողջ պիտի խորովի կրակի վրա, րոպեն մեկ ասում, որ ինքը սարսափազդու կարմրամորթ է և պիտի բռնի գարշելի սպիտակամորթ լրտեսներին: Այնպիսի թռիչքներ էր գործում ու ճիչեր արձակում, որ Բիլը սահմռկում էր:

- Կարմրամո՛րթ առաջնորդ, - դիմում եմ տղային, - ուզու՞մ ես տուն գնալ:

- Օ՜հ, չատ պետքս է: Տխուր է այնտեղ, դպրոցն էլ տանել չեմ կարողանում: Ինձ այստեղ դուր է գալիս: Տուն չես տանի, չէ՞, Օձի՛ աչք: Ամբողջ կյանքումս այսպես չէի ուրախացել:

Քնեցինք: Լուսաբացին արթնացա Բիլի զարհուրելի ծղրտոցներից: Վեր ցատկեցի, տեսա առաջնորդը նստել է նրա կրծքավանդակին, մի ձեռքով բռնել մազերը, մյուսով՝ միս կտրելու դանակը և փորձում է հանել գանգամաշկը:

Քնել այլևս հնարավոր չէր: Պետք էր տղայից մի կերպ ազատվել:

- Դուք երկուսով նախաճաշ պատրաստեցե՛ք, - ասացի Բիլին, - ես բարձրանամ բլրի գագաթը և տեսնեմ՝ ոչ ոք չի՞ երևում:

Քաղաքի մատույցներում հույս ունեի տեսնել զինված մարդկանց, որոնք եռանդով փնտրում են ստոր առևանգողներին: Սակայն ոչ ոքի չտեսա, որ դեսուդեն վազվզեր, չտեսա վշտից խելագարված ծնողներին: «Հավանաբար դեռ չգիտեն», - մտածեցի ես և իջա բլրից: Քարանձավին մոտենալով՝ տեսա, որ Բիլը մեջքով կպել է պատին ու ծանր է շնչում, իսկ տղան նշան է բռնել, որ հարվածի նրան կոկոսի մեծությամբ մի քարով:

- Նա խորոված կարտոֆիլ գցեց օձիքիցս ներս, - տնքաց Բիլը, - հետո էլ մեջքիս վրա ոտքերով տրորեց, իսկ ես նրան ապտակեցի:

Տղայի ձեռքից մի կերպ վերցրի քարը:

- Ես քեզ ցույց կտամ, - գալարվում էր նա, - ով փորձել է խփել կարմրամորթ առաջնորդին, էժան չի պրծել:

Վերջապես նամակ գրեցինք Դորսեթին և շարադրեցինք մեր պայմանները: Վերջում ավելացրինք. «Համաձայնվելու դեպքում Ձեր գրավոր պատասխանը դրե՛ք ցանկապատի դիմացի հաստաբուն ծառերից երրորդի տակ: Եթե փորձեք մեզ մատնել, Ձեր տղային այլևս չեք տեսնի»:

Մի քանի ժամ անց նշված տեղից վերցրինք հետևյալ գրությունը. «Պարոնա՛յք,
իմ որդուն վերադարձնելու համար Դուք փրկագին եք պահանջում: Բայց ես էլ ու-
նեմ իմ պահանջները: Դուք տուն եք բերում որդուս և ինձ կանխիկ վճարում հինգ
հարյուր դոլար: Միայն այդ դեպքում ես կհամաձայնվեմ Ձեզ ազատել նրանից»:
Տղային մի կերպ համոզելով և խոստումներ տալով տարանք տուն: Երբ Դորսե-
թի ափի մեջ դրեցինք հինգ հարյուր դոլարը և ցանկանում էինք հեռանալ, ման-
չուկն այնպիսի մի ոռնոց դրեց, ասես գալարափող էր փչում և տզի պես կպավ Բի-
լի ոտքերին: Հայրը մի կերպ պոկեց տղային և ձեռքերը պինդ բռնեց:

- Որքա՞ն ժամանակ կարող եք այդպես պահել նրան, - հարցրեց Բիլը:

- Ես առաջվա ուժը չունեմ, բայց կարծում եմ՝ տասը րոպե կարելի է խոստանալ:

- Դա բավական է, - ասաց Բիլը: - Տասը րոպեում ես կանցնեմ հարավային, կենտ-
րոնական և արևմտյան նահանգները և հանգիստ կմտնեմ Կանադա:

Եվ չնայած շատ մութ էր, և Բիլն էլ չափազանց հաստամարմին, ես նրան կարո-
ղացա հասնել միայն քաղաքից մեկուկես մղոն հեռավորության վրա:

ՊԼԱՆ

1. Խելացնոր մտահղացում:
2. Կարմրամորթ առաջնորդը:
3. Նամակ և պատասխան:
4. Սարսափից փախչողները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

խելացնոր պահ, վեց հարյուր դոլար միացյալ դրամագլուխ, գլուխ բերել մի շահութաբեր գործ, ծանրութեթև անել, առևանգման զոհ ընտրել, պարելով տալ, փրկագին, որջ, քաղցրավենիք, դիպուկ հարված, խցկել, թրջած լաթ, կարմրաշեկ մաղեր, պարսատիկ, գանգամաշկ, որունք, զարհուրելի ծղրտոցներ, քաղաքի մատույցներ, գալարափող, հաստամարմին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Օ՛ Հենրին 20-րդ դարի ամերիկացի խոշոր արձակագիր է:*

ՋՐՀՈՐԻ ՄՈՏ

Ըստ Ստ. Զորյանի

Դեպքը կատարվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:
Ավստրիայի կողմերում էինք: Շաբաթից ավելի կռվում էինք, կռվում առա-
վոտից իրիկուն: Մեկ ավստրիացիք էին վրա տալիս, մեկ մենք էինք հարձակվում,
բայց միշտ այնպես էր պատահում, որ մնում էինք միևնույն դիրքում: Կռիվը կռիվ,
բայց մյուս կողմից նեղում էր շոգը, և ամենից ավելի՝ ծարավը: Բաց դաշտ, կիզիչ
արև, ու ջուր չկա: Տակառով բերված ջուրն ի՞նչ էր մի ամբողջ զորամասի համար.
ոնց որ ուղտին գդալով ջուր տաս: Մի օր տակառի ջուրն էլ վերջացավ: Ծարավից
տոչորվում ենք, լեզուներս չորացել է:
Մեր ու ավստրիացիների դիրքերի արանքում մի ջրհոր կար: Ուղիղ մեջտեղում:
Բայց ո՞վ կհամարձակվեր մոտենալ: Իսկույն կկրակեին: Ջուրն էնքան մոտիկ ու էն-

քան Հեռու՞: Ծարավ մարդիկ ու ջրհոր: Նայում ենք, ինչպես սոված Հացին:

- Բա ջուրը քթներիս տակ լինի, ու մենք էսպես ծարա՞վ, - ասաց զինվորներից մեկը:

- Էդ ասա, է՛, - տնքացին տղերքը:

Էսպես խոսում էինք, մեկ էլ մեկը թե՝

- Ա՛յ մի կտրիճը լիներ, ջրհորից ջուր բերեր, Հա՛:

Էսքանը բավական էր: Ամեն կողմից վրա տվին.

- Տղե՛րք, կատակը մի կողմ, ո՛վ կգնա ինկապես:

Ասում են ու իրար նայում: Մի քանիսը թե՝ փորձե՛նք, մյուսները՝

- Վերջացրե՛ք, ո՛վ է կյանքից ձեռ քաշել:

Այնուամենայնիվ որոշեցինք, թե ինչ ուզում է լինի, պիտի գնանք: Բայց ո՞վ:

- Եկեք վիճակ գցենք, - առաջարկեցին:

Թղթերի վրա անուններս գրեցինք, ծալեցինք, գցեցինք մեկի գլխարկի մեջ: Վիճակն ինձ ընկավ: «Դե գնա Հիմի, - մտածում եմ ես, - երկու տարի ազատվեցիր կրակից, Հիմի ջրի ճամփին մեռի»: Բայց տղաների մոտ չուզեցի վախկոտ երևալ: Անունի, պատվի խնդիր էր: Վերցրի կաթսայիկս, պարան ու սողեսող, չոքեչոք գնում եմ: Լավ է դեռ՝ չուրջս բարձր խոտ է, կարող է չնկատեն:

Էսպես չոքեչոք Հասա ջրհորին: Բերանս այնպես է չորացել, որ թվում է՝ լեզուս կպել է քիմքիս, սիրտս խնոցու պես գցում է փորումս: Թշնամու դիրքերի կողմն եմ ծիկրակում: Շարժում չկա: «Ուրեմն չեն տեսել», - մտածում եմ: Մի քարի չվաքում մի քիչ շունչ քաշեցի, Հանգստացա: Հիմա ի՞նչ անեմ: Տեսնում եմ, որ դժվարը ոչ թե գալն էր, այլ ջրհորից ջուր քաշելը: Ջրհորի բերանը բարձր է, կանգնեմ թե չէ՝ թրը՛խկ: Ու վերջ ամեն ինչին: Բայց ճար չկար, պիտի բարձրանայի: Այդ պահին միտս ընկավ թաշկինակս: Հանեցի ու թափ տվեցի ավստրիացիների կողմը: Տեսնում եմ՝ սրանք իրար անցած ինձ են նայում: Մի կողմից թաշկինակս եմ թափ տալիս, մյուս կողմից կաթսայիկս իջեցնում ջրի մեջ: Ջուրը Հանեցի ու նորից թաշկինակս թափ տալով վազեցի դեպի մեր դիրքերը: Հիմի վազում եմ, ո՛նց եմ վազում: Իսկ ավստրիացիք, լսում եմ, ո՛նց են Հետևիցս ծիծաղում: Դեռ կես ճամփին եմ, մերոնք «ուռա՛» կանչեցին: Հասա ու տղերքի Հետ ինքս էլ ծիծաղում եմ արածիս վրա:

Մի Հինգ-վեց Հոգի խմեցին, ջուրը պրծավ: Տղերքը թե՝

- Արի էլի՛ գնա:

Մտածում եմ՝ գնա՞մ, թե ոչ: Հո ամեն անգամ պապը փլավ չի ուտի: Ավստրիացիք են, քեռուս տղերքը չեն: Մի անգամ թողին՝ լավ, բա երկրորդ անգա՞մ: Մտածեցի, մտածեցի ու ինձուինձ ասի՝ արի մեկ էլ գնամ, ինչ կլինի՝ կլինի:

Էլի թաշկինակս թափ տալով գնացի: Ավստրիացիք էլ նայում են: Առաջվա պես էլի բան չեն ասում: Հետ եկա: Նոր էի տեղ Հասել, տղերքը թե՝

- Հրե՛ն, մի ավստրիացի է գալիս:

Ի՞նչ տեսնեմ: Ճիշտ որ, մի սպիտակ շոր թափ տալով գալիս է՝ մի աման էլ ձեռքին: Էդ որ տեսան, մերոնք սիրտ առան:

- Տղե՛րք, - ասացին, - գնանք մենք մեզ Համար ջուր բերենք:

Տղերքը գնացին: Առաջ մեկ-մեկ, Հետո՝ երկու-երկու, վերջում՝ խմբով: Ավստրիացիք էդ որ տեսան, իրենք էլ նույնը արեցին: Հիմի ջրհորի մոտ խառնվել ենք

իրար: Խոսում ենք ձեռքով- ոտքով, ծիծաղում: Հետո սկսեցինք իրար վրա ջուր
լցնել, երես, ձեռքեր լվալ: Ավստրիացիք ինչ-որ բան են ասում, չենք հասկանում:
Նրանք՝ «գու՛թ, գու՛թ», մենք՝ «խարաշո, խարաշո»: Նրանք մեզ հաց են տալիս,
մենք նրանց՝ ծխախոտ: Ու էլի նայում ենք իրար, ժպտում, ծիծաղում, միմյանց
ձեռք սեղմում:

Վերջապես ծարավներս կոտրած վերադարձանք մեր դիրքերը: Իրիկնադեմին
խոսում, քննարկում էինք օրվա դեպքերը, թե ոնց պատահեց էս բանը: Մտածում
էինք, թե սրանից հետո ո՞նց պիտի դրանց հետ կռվենք: Ուրիշ բան, եթե դիմացի-
նիդ տեսած չես լինում: Այս խոհերի մեջ էինք, երբ լսվեց կտրուկ հրամանը.

- Կրակե՛լ:

ՊԼԱՆ

1. Ծարավ:
2. Ջրհորը:
3. Վիճակահանություն:
4. Հակառակորդները ջրհորի մոտ:
5. Մարդը պատերազմ չի ուզում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Առաջին համաշխարհային պատերազմ, ուղտին գդալով ջուր տալ, ծարավից տոչորվել, կատակը մի կողմ, կյանքից ձեռ քաշել, վիճակ գցել, անունի, պատվի խնդիր, չոքեչոք, սիրտը խնոցու պես փորում գցել, ծիկրակել, կաթսայիկ, ամեն անգամ պապը փլավ չի ուտի, միմյանց ձեռք սեղմել, ծարավը կոտրել:

Ստեղծագործական հավելումներով փոխադրություն

Ըստ հայկական ժողովրդական հեքիաթի

....

....

....

Գամված ծովափնյա ժայռին՝ աղջիկը աներևակայելի սոսկումով նայում էր ծո-
վին՝ սպասելով, որ ահա ուր որ է կերևա հրեշը և կպատառոտի իրեն: Արցունքնե-
րը գլոր-գլոր հոսում էին աչքերից: Սոսկումնահար էր անում նրան այն միտքը, որ
պիտի կորստյան մատնվի ծաղիկ հասակում՝ առանց կյանքի բերկրանքը ճաշակած
լինելու:

Եվ Արեգը տեսավ աղջկան, որին ձյունասպիտակ մարմարից կերտված գարմա-
նահրաշ արձանի տեղ կդներ, եթե ծովային զեփյուռը չծածաներ նրա վարսերը, և
գեղեցիկ աչքերից արցունքի խոշոր կաթիլներ չհոսեին: Խանդավառությամբ նրան
էր նայում պատանի հերոսը, և հանկարծահաս սերը բորբոքվում էր սրտում: Ա-
րեգն խկույն իջավ նրա մոտ ու քնքշությամբ հարցրեց.

- Օ՛, ասա՛ ինձ, չքնա՛ղ աղջիկ, ու՞մ է պատկանում այս երկիրը, ասա՛ քո անու-
նը: Պատմի՛ր, թե քեզ ինչու՞ են ժայռին գամել:

Եվ աղջիկն ասաց.

....

....

....

Դեռ չէր ավարտել խոսքը, երբ ալեկոծվեց ծովի հորձանուտը, և լեռնակուտակ ալիքների մեջ երևաց Հրեշը: Նա ալիքներից բարձր էր պահել գլուխը և բաց արել վիթխարի երախը: Աղջիկը սոսկումից ուժգին ճչաց: Վշտից խելակորույս՝ ծովափ վազեցին նրա ծնողները: Դառնագին լալիս էին նրանք՝ գրկելով իրենց դստերը:

Այդ ժամանակ խոսեց Արեգը.

- Արցունք հեղելու դեռ շա՜տ ժամանակ կունենաք, ձեր դստերը փրկելու համար է, որ քիչ ժամանակ է մնում: Ես Արեգն եմ, չար կախարդին սպանողը: Ինձ կնության տվեք ձեր դստերը, և ես կփրկեմ նրան:

Բերկրանքով համաձայնություն տվին աղջկա ծնողները:

- Պատրաստ եմ ամբողջ թագավորությունս քեզ տալու, միայն թե փրկի՛ր դստերս, - ասաց հայրը:

Մինչ այդ Հրեշն արդեն մոտեցել էր: Լայն կրծքով ճեղքելով ալիքները՝ նա սուրում էր դեպի ժայռը: Խելահեղ կատաղությամբ ջրին էր զարկում պոչը, և անհամար ցայտքերը թռչում էին դեպի առափնյա ժայռերի կատարները: Ծովը եռում էր Հրեշի գալարապտույտ շարժումներից, բարձրանում էին ալիքները՝ իրենց տակ գոյացնելով խոր անդունդներ:

Թագավորն ու թագուհին զարհուրած փաթաթվել էին իրենց դստերը, իսկ Արեգը ...

....

....

....

....

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Հանձնարարել աշակերտներին ստեղծագործական երևակայությամբ լրացնել տեքստը և ընտրել վերնագիր:

ՏՈՒՆԸ

Ըստ Անդրե Մորուայի

- Հիվանդության երկու տարիների ընթացքում, - ասաց նա, - ամեն գիշեր միևնույն երազն եմ տեսել: Իբր գրոսնում եմ քաղաքից դուրս, նկատում մի սպիտակ տուն՝ ցածր ու երկար, շրջապատված լորենիների պուրակով: Տան ձախ կողմում բարդիներով ոլորապատված մարգագետինն էր, որը հաճելիորեն խախտում էր շրջապատի համաչափությունը, և այն ծառերի գագաթները, որոնք տեսանելի էին հեռվից և ճոճվում էին լորենիների վերևում: Այդ տունը մի տեսակ ձգում էր ինձ, և ես գնում էի նրա կողմը: Սպիտակ ներկված մի դարպաս փակում էր մուտքը: Ապա սկսվում էր թեքությամբ գնացող ծառուղին, որը շատ գեղեցիկ էր: Այն երիզող ծառերի տակ ես գարնանային ծաղիկներ էի տեսնում՝ առաջնածաղիկներ, կուսածաղիկներ և հողմածաղիկներ, որոնք թառամում էին պոկվելուն պես: Տունը գտնվում էր ծառուղու ծայրից մի քանի քայլի վրա: Նրա առաջ փռված էր մի մեծ մարգագետին՝ անգլիական ձևով խուզված և համարյա մերկ: Միայն մանուշակագույն ծաղիկների մի գիծ էր անցնում: Տունը կառուցված էր սպիտակ քարից և թերթաքարե կտուր ուներ: Բաց գույնի կաղնեփայտե դուռը, որն ամբողջովին քանդակազարդ էր, գտնվում էր փոքրիկ սանդղամուտքի մոտ: Ես շատ էի ցանկանում տուն մտնել, բայց ոչ ոք չէր պատասխանում իմ կանչերին: Խորապես հիասթափված թակում էի դուռը, բղավում և վերջապես արթնանում: Այսպիսին էր ահա իմ երազը, և այն կրկնվում էր երկար ամիսներ այնպիսի ճշտությամբ, որ ես վերջապես սկսեցի մտածել, որ իրոք մանկության տարիներին տեսել եմ այդ այգին և դղյակը: Բայց և այնպես արթուն ժամանակ ոչ մի կերպ չէի կարողանում հիշել և տունը գտնելու գաղափարով այնպես տարվեցի, որ մի ամառ, սովորելով մեքենա վարել, որոշեցի արձակուրդս Ֆրանսիայի ճանապարհներին անցկացնել՝ իմ երազների տունը փնտրելու նպատակով: Ես ձեզ չեմ պատմի այդ ճանապարհորդության մասին: Ոտքի տակ տվի Նորմանդիան, Թուրենը, Պուատուն. ոչինչ չհասա, և դա ինձ այնքան էլ չզարմացրեց: Հոկտեմբերին վերադարձա Փարիզ և ամբողջ ձմեռը անցկացրի երազելով սպիտակ տան մասին:

Անցյալ գարնանը վերսկսեցի իմ պտույտները Փարիզի շրջակայքում: Մի օր Իսլ-Ադամի մոտ ձորով անցնելիս հանկարծ մի հաճելի ցնցում ապրեցի, այն հուզմունքը, որ ապրում ենք, երբ երկար բացակայությունից հետո ճանաչում ենք մեր սիրելի վայրերը կամ դեմքերը: Չնայած կյանքումս առաջին անգամ էի այդ տեղերում լինում, բայց աջ կողմում ընկած տեսարանը ինձ լավ ծանոթ էր: Բարդիների կատարները իշխում էին բազմաթիվ լորենիների վրա: Ոչ խիտ տերևների միջից երևում էր մի տուն: Համոզված էի, որ գտել եմ երազներիս տունը: Չէի կասկածում, որ հարյուր մետրից մի նեղ ճանապարհ հատելու է խճուղին: Ճանապարհն իր տեղում էր: Այն տարավ մինչև սպիտակ դարպասը: Ապա սկսվում էր ծառուղին, որով այնքա՜ն քայլել էի: Ես հիանում էի ծառերի տակ փռված առաջնածաղիկների, կուսածաղիկների և հողմածաղիկների գույնզգույն գորգով: Հասնելով լորենիներին՝ տեսա կանաչ մարգագետինը, փոքրիկ սանդղամուտքը և բաց գույնի կաղ-

նեփայտե դուռը: Դուրս եկա մեքենայից, արագ-արագ բարձրացա աստիճաններով և դուռը թակեցի: Վախենում էի, որ ոչ ոք չի պատասխանի: Բայց համարյա անմիջապես մի սպասավոր հայտնվեց: Տխուր դեմքով շատ ծեր մի մարդ էր՝ հագին սև բաճկոն: Ինձ տեսնելով կարծես զարմացավ և նայեց ուշադրությամբ, առանց խոսելու:

- Ես ցանկանում եմ, - ասացի,- ձեզանից մի քիչ տարօրինակ ծառայություն խնդրել: Չեմ ճանաչում այս տան տերերին, բայց երջանիկ կլինեի, եթե պատիվ անեին ինձ ընդունել:

- Դղյակը վարձու է տրվում, տիկի՛ն, - ասաց նա՝ կարծես ափսոսալով, - և ես այստեղ եմ, որպեսզի ցույց տամ:

- Վարձու է տրվո՞ւմ, - ասացի, - ինչպիսի՛ անսպասելի բախտավորություն: Տերերը չե՞ն ապրում նման գեղեցիկ տան մեջ:

- Տերերն այստեղ էին ապրում, տիկի՛ն: Հեռացան այն ժամանակ, երբ տունն սկսեց հալածվել:

- Հալածվե՞լ, - հարցրի, - ահա մի բան, որ ինձ երբեք չէր վախեցնի: Չէի իմանում, որ ֆրանսիական գավառներում դեռ հավատում են ուրվականներին:

- Ես էլ չէի հավատա, տիկի՛ն, - ասաց նա լրջորեն, - եթե ինքս գիշերը այգում տեսած չլինեի ուրվականին, որից փախան իմ տերերը:

- Այ քեզ պատմությու՜ն, - ասացի՝ փորձելով ժպտալ:

- Պատմությու՞ն, - ասաց ծերունին համդիմանական չեչտով, - համենայն դեպս դուք, տիկի՛ն, չպետք է ծիծաղեք, քանի որ այդ ուրվականը դուք էիք:

ՊԼԱՆ

1. Ամեն գիշեր՝ նույն երազը:
2. Սպիտակ տունը:
3. Տունը գտնելու որոշում:
4. Ծեր սպասավորը խոսում է ուրվականի հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

լորենիների պուրակ, բարդիներով ոլորապատված մարգագետին, թեքությամբ գնացող ծառուղի, առաջնածաղիկներ, կուսածաղիկներ, հողմածաղիկներ, անգլիական ձևով խուզված, մանուշակագույն ծաղիկներ, թերթաքարե կտուր, կաղնեփայտե դուռ, սանդղամուտք, փնտրել երազների տունը, հանելի ցնցում, համդիմանական չեչտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Անդրե Մորուան 20-րդ դարի ֆրանսիացի խոշորագույն արձակագիր է, վեպերի, պատմվածքների ու նովելների հեղինակ:*

նեփայտե դուռը: Դուրս եկա մեքենայից, արագ-արագ բարձրացա աստիճաններով և դուռը թակեցի: Վախենում էի, որ ոչ ոք չի պատասխանի: Բայց համարյա անմիջապես մի սպասավոր հայտնվեց: Տխուր դեմքով շատ ծեր մի մարդ էր՝ հագին սև բաճկոն: Ինձ տեսնելով կարծես զարմացավ և նայեց ուշադրությամբ, առանց խոսելու:

- Ես ցանկանում եմ, - ասացի,- ձեզանից մի քիչ տարօրինակ ծառայություն խնդրել: Չեմ ճանաչում այս տան տերերին, բայց երջանիկ կլինեի, եթե պատիվ անեին ինձ ընդունել:

- Դղյակը վարձու է տրվում, տիկի՛ն, - ասաց նա՝ կարծես ափսոսալով, - և ես այստեղ եմ, որպեսզի ցույց տամ:

- Վարձու է տրվու՞մ, - ասացի, - ինչպիսի՜ անսպասելի բախտավորություն: Տերերը չե՞ն ապրում նման գեղեցիկ տան մեջ:

- Տերերն այստեղ էին ապրում, տիկի՛ն: Հեռացան այն ժամանակ, երբ տունն սկսեց հալածվել:

- Հալածվե՞լ, - հարցրի, - ահա մի բան, որ ինձ երբեք չէր վախեցնի: Չէի իմանում, որ ֆրանսիական գավառներում դեռ հավատում են ուրվականներին:

- Ես էլ չէի հավատա, տիկի՛ն, - ասաց նա լրջորեն, - եթե ինքս գիշերը այգում տեսած չլինեի ուրվականին, որից փախան իմ տերերը:

- Այ քեզ պատմությու՜ն, - ասացի՝ փորձելով ժպտալ:

- Պատմությու՞ն, - ասաց ծերունին հանդիմանական շեշտով, - համենայն դեպս դուք, տիկի՛ն, չպետք է ծիծաղեք, քանի որ այդ ուրվականը դուք էիք:

ՊԼԱՆ	1. Ամեն գիշեր՝ նույն երազը: 2. Սպիտակ տունը:	3. Տունը գտնելու որոշում: 4. Մեր սպասավորը խոսում է ուրվականի հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

լորենիների պուրակ, բարդիներով ոլորապատված մարգագետին, թեքությամբ գնացող ծառուղի, առաջնածաղիկներ, կուսածաղիկներ, հողմածաղիկներ, անգլիական ձևով խուզված, մանուշակագույն ծաղիկներ, թերթաքարե կտուր, կաղնեփայտե դուռ, սանդղամուտք, փնտրել երազների տունը, հանելի ցնցում, հանդիմանական շեշտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Անդրե Մորուան 20-րդ դարի ֆրանսիացի խոշորագույն արձակագիր է, վեպերի, պատմվածքների ու նովելների հեղինակ:*

ՀՈԲ ԵՐԱՆԵԼՈՒ ՎԱՐՔԸ

Ըստ Աստվածաշնչի

(դատողական - ստեղծագործական փոխադրություն)

Հուս երկրում ապրում էր անբասիր վարքագծով, ուղղամիտ, արդար ու աստվածավախ մի հավատացյալ՝ Հոբ անունով: Հանապազօրյա իր աղոթքներում նա անընդհատ փառաբանում էր Աստծուն և ցանկանալով արժանանալ նրա ողորմածությանը՝ ապաշխարում էր, ողջակեզ մատուցում՝ անխաբ հավատով երկրպագելով Արարչի ամենազոր կամքին:

Հոբը ուներ տասը զավակ՝ յոթ որդի և երեք դուստր՝ մեկը մյուսից առողջ, փարթամ ու շնորհալի: Ուներ նաև անբավ հարստություն՝ հողեր, յոթ հազար ոչխար, երեք հազար ուղտ, եզների և կովերի նախիրներ, ձիերի երամակներ, փեթակներ՝ լեցուն քաղցրահամ մեղրով:

Մի անգամ, երբ սատանան նոր էր վերադարձել երկրից, Աստված հարցրեց, թե տեսել է իր ծառա Հոբին, նկատել է՝ որքան անբասիր կյանքով է նա ապրում:

Սատանան, ի բնե չար, պատասխանեց.

- Մի՞թե հավատում ես, թե Հոբը իսկապես քեզ պաշտում է: Ապա փորձի՛ր կրպչել նրա ունեցվածքին: Այն ժամանակ ամեն ինչ պարզորոշ կզգաս:

Աստված որոշեց ողջ մարդկության թշնամուն՝ սատանային, ապացուցել, որ նա սխալ է, և ասաց.

- Այն ամենը, ինչ ունի Հոբը, քո ձեռքում է: Միայն հոգուն չկպչես:

Անհագուրդ չարությունից խռացող սատանան խիկույն ևեթ փութաց դժբախտություն բերելու խեղճ Հոբի գլխին. Խլեց նրա ամբողջ ունեցվածքը, սպանեց ամենաթանկը՝ զավակներին:

Անակնկալ փորձանքներից թեև հույժ կարեվեր խոցված էր Հոբը, բայց նա, անխախտ հավատով լցված, ասում էր.

- Մի՞թե ճիշտ կլիներ Աստծո բարիքներն ընդունել, իսկ չարիքը՝ ոչ: Տերը տվեց, Տերը վերցրեց: Թող օրհնյալ լինի նրա անունը:

Զար ոգին դիմեց վատթարագույնի՛՝ Հոբի մարմինը ծածկեց թարախածին պալարներով: Ջախջախված հոգով, աղճատված կյանքով այդ վշտալլուկ մարդը կծկվել էր, կմախք դարձել. արցունքները թրջում էին նրա կնճռոտված այտերը, սիրտը մղկտում էր, ու կասկածը, թե ինչով է մեղանչել Տիրոջ դեմ, կրծում էր սիրտը: Սակայն պարձյալ ոչ մի խոսք՝ ընդդեմ Աստծու: «Անքննին են նրա գործերը», - մտածում էր նա՝ անձկությամբ հիշելով նախկին անհոգ կյանքը:

Փորձությունն ավարտվեց: Տեսնելով Հոբի անբասիր վարքը՝ Տերը վերականգնեց նրա ունեցվածքը և պարգևելով յոթ որդի և երեք աղջիկ՝ շնորհեց ուրախ կյանք:

«Ունեցե՛ք հավատ մանանեխի հատիկի չափ», - ասում է Աստվածաշունչը: Հոբին փրկեց հավատը:

ՊԼԱՆ 1. Բարեպաշտ Հայրը:
2. Սատանայի չարախոսությունը Հոբի հասցեին:
3. Փորձություն:
4. Հոբի աներեր հավատը:
5. Աստծո հատուցումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անբասիր վարքագիծ, ուղղամիտ, արդար ու աստվածավախ հավատացյալ, ապաշխարել, շնորհալի, անբավ հարստություն, անհագուրդ չարություն, կարեվեր, թարախածին պալարներ, վշտալլուկ, անբասիր վարք:

2. Հանձնարարել աշակերտներին շարադրել իրենց դատողությունները հավատի մասին:

ՀՈՒԴԱ

Ըստ տարբեր աղբյուրների

(դատողական - ստեղծագործական փոխադրություն)

Քաղաքի սակավամարդ նրբանցքներից մեկով քայլում էր մի երիտասարդ՝ ուսերից վար թափվող դարչնագույն զգեստով, ճերմակ մույկերով: Նա հաղթանդամ էր, փոքր-ինչ ուռած ակնակապիճներով ու սփրթնած դեմքով: Երևում է՝ պլպլված էր, ջղագրգիռ, ընկղմված հակոտնյա խառնիճաղանջ մտքերի օվկիանոսում: Անգամ չնկատեց կողքով անցնող հռոմեացի պարեկներին:

Անցնելով Անտոնիոսի աշտարակների մոտով՝ դուրս եկավ քաղաքից և քայլերն ուղղեց դեպի դիմացը սփռված անդաստանները: Քարից քար ցատկելով՝ անցավ մոտակա խոխոջուն առվակը և մտավ առվույտի արտերը: Հարավային մեղմ սյուքը բերում էր մրտենիների և լորենիների բույրը, որի թարմ հոսանքից երիտասարդը հավանաբար սթափվեց: Դարձյալ անդրադարձավ օրվա դեպքերին:

Ընդամենը կես ժամ առաջ քահանայապետների մոտ էր: Տարել էր նրանց երեսին շպրտելու ձեռքերը կրակի պես այրող այն երեսուն արծաթը, որի դիմաց ծախել էր Տիրոջը՝ Հիսուսին:

- Մեղանչեցի, - ասել էր, - որովհետև արդար արյուն թափեցի:

- Մեր հոգը չէ՛, - պատասխանել էին նողկանքով, - իսկույն ևեթ հեռացի՛ր:

Եվ այժմ, երբ Վարդապետն արդեն չկար, երիտասարդը՝ նույն ինքը Հուդան, ընկել էր հոգին կրծող տվայտանքների մեջ: Հիշում էր նրա քարոզները, թե սիրի՛ր ընկերոջդ, բարությո՛ւն արա, որովհետև «ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք»: Իսկ ի՞նքը: Դավաճա՛ն, մատնի՛չ, ծախու՛ հոգի, - ահա՛ իր խարանը: Եվ մի՞թե այսուհետ կարող է ապրել աշխարհում, նայել մարդկանց աչքերին:

Զղջման զգացումը խեղդում էր Հուդային, և նա անընդհատ ցնցվում էր՝ ասես ընկած դողէրոցքի մեջ: «Մա՛հ, շուտափույթ մա՛հ», - մրթմրթաց նա՝ արագացնելով քայլերը: Գրեթե վազելով դուրս եկավ արտից և խորդուբորդ ճանապարհով սկսեց

հևիհև բարձրանալ դարավանդը, որի զառիթափ կողի հարթության վրա մի հին ագարակ կար՝ գոտևորված բարձրուղեշ թխկիներով: Այդտեղ Հուդան կանգ առավ, գրպանից հանեց պարանը և ինքն իր համար կախաղան սարքեց: Քիչ անց նրա հաղթ մարմինը օրորվում էր օդում...

Լսելով կատարվածի մասին՝ մարդիկ գալիս էին ագարակ՝ աչքով տեսնելու կախված մատնիչին: Նայում էին, սակայն ոչ մեկի մտքով չէր անցնում վար բերել դիակը և հողին հանձնել: Մի քանի օր այդպես էլ մնաց, մինչև պատահարար պարա՞նը կտրվեց, թե՞ ճյուղը կոտրվեց, և կախվածն արդեն նեխած վիճակում ընկավ գետնին:

Այսպես սատակվեց բոլոր ժամանակների ամենամեծ մատնիչը, իսկ նրա անունը դարձավ նենգության, դավի, չարի խորհրդանիշ: Այն վայրը, ուր կախվեց Հուդան, մինչ այժմ էլ կա և կոչվում է «Արյան ագարակ»:

ՊԼԱՆ
1. Մտքերի մեջ խորասուզված մարդը:
2. Զղջում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

դարչնագույն, հաղթանդամ, ակնակապիճ, ջղագրգիռ, դուլզն-ինչ, պարեկ, անդաստաններ, քարից քար, ակացիա, անդրադառնալ, նողկանք, խարան, զղջալ, դողէրոցք, հևիհև, դարավանդ, գոտևորված, խորհրդանիշ, ճերմակ մույկեր, սփրթնած դեմք, հակոտնյա, խաղնիճաղանջ մտքեր, խոխոջուն առվակ, հարավային մեղմ սյուք, հոգին կրծող տվայտանքներ, խորդուբորդ ճանապարհ, բարձրուղեշ թխկիներ:

*2. Բացատրել **հակոտնյա, մույկ** բառերի իմաստը:*

3. Աշակերտներին հանձնարարել շարադրել իրենց դատողությունները դավաճանության և հավատարմության մասին:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ըստ Աստվածաշնչի

Մի մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը մի օր հորն ասաց.

- Ես արդեն չափահաս եմ: Տո՛ւր քո ունեցվածքից ինձ հասանելիք բաժինը: Ուզում եմ գնալ, աշխարհ տեսնել, բախտս փորձել:

Շատ վշտացավ հայրը, տվայտանքների մեջ ընկավ, բայց որդուն համոզել չկարողացավ: Նա համառորեն ուզում էր գնալ, ինքնուրույն կյանք վարել:

Ի՞նչ կարող էր անել խեղճ մարդը: Կանչեց զավակներին, հարստությունը հավասար բաժանեց:

հևիհև բարձրանալ դարավանդը, որի զառիթափ կողի հարթության վրա մի հին ագարակ կար՝ գոտևորված բարձրուղեշ թխկիներով: Այդտեղ Հուդան կանգ առավ, գրպանից հանեց պարանը և ինքն իր համար կախաղան սարքեց: Քիչ անց նրա հաղթ մարմինը օրորվում էր օդում...

Լսելով կատարվածի մասին՝ մարդիկ գալիս էին ագարակ՝ աչքով տեսնելու կախված մատնիչին: Նայում էին, սակայն ոչ մեկի մտքով չէր անցնում վար բերել դիակը և հողին հանձնել: Մի քանի օր այդպես էլ մնաց, մինչև պատահաբար պարա՞նը կտրվեց, թե՞ ճյուղը կոտրվեց, և կախվածն արդեն նեխած վիճակում ընկավ գետնին:

Այսպես սատակվեց բոլոր ժամանակների ամենամեծ մատնիչը, իսկ նրա անունը դարձավ նենգության, դավի, չարի խորհրդանիշ: Այն վայրը, ուր կախվեց Հուդան, մինչ այժմ էլ կա և կոչվում է «Արյան ագարակ»:

ՊԼԱՆ

1. Մտքերի մեջ խորասուզված մարդը:
2. Զղջում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

դարչնագույն, հաղթանդամ, ակնակապիճ, ջղագրգիռ, դույզն-ինչ, պարեկ, անդաստաններ, քարից քար, ակացիա, անդրադառնալ, նողկանք, խարան, գղջալ, դողէրոցք, հևիհև, դարավանդ, գոտևորված, խորհրդանիշ, ճերմակ մույկեր, սփրթնած դեմք, հակոտնյա, խաղնիճաղանջ մտքեր, խոխոջուն առվակ, հարավային մեղմ սյուք, հոգին կրծող տվայտանքներ, խորդուբորդ ճանապարհ, բարձրուղեշ թխկիներ:

*2. Բացատրել **հակոտնյա, մույկ** բառերի իմաստը:*

3. Աշակերտներին հանձնարարել շարադրել իրենց դատողությունները դավաճանության և հավատարմության մասին:

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ըստ Աստվածաշնչի

Մի մարդ երկու որդի ուներ: Նրանցից կրտսերը մի օր հորն ասաց.

- Ես արդեն չափահաս եմ: Տո՛ւր քո ունեցվածքից ինձ հասանելիք բաժինը: Ուզում եմ գնալ, աշխարհ տեսնել, բախտս փորձել:

Շատ վշտացավ հայրը, տվայտանքների մեջ ընկավ, բայց որդուն համոզել չկարողացավ: Նա համառորեն ուզում էր գնալ, ինքնուրույն կյանք վարել:

Ի՞նչ կարող էր անել խեղճ մարդը: Կանչեց զավակներին, հարստությունը հավասար բաժանեց:

Վերցնելով ունեցած-չունեցածը՝ կրտսեր որդին մեկնեց մի ուրիշ երկիր և ծնողական հսկողությունից հեռու՝ սկսեց անխնա շռայլել: Հոր՝ արյուն-քրտինքով կուտակածը վատնում էր զեխ գինարբուքներում, անբարո կանանց միջավայրում: Ահա եկավ մի օր, որ այլևս ոչ մի կոպեկ չուներ գրպանում: Ո՛չ արհեստ գիտեր, ո՛չ որևէ մասնագիտություն էր սովորել: Ստիպված սրա-նրա տանը բանվորություն էր անում, մի կերպ կիսաքաղց ապրում: Հետո սկսեց խոզեր արածեցնելով՝ մի կտոր հաց վաստակել: Այս դառը վիճակը նրան ուշքի բերեց: «Հայրս ագարակներ ու անասունների հոտեր, ծառաներ ու մշակներ ունի, իսկ ես այստեղ սովամահ եմ լինում, - մտածեց նա, - գնամ հորս մոտ, ասեմ՝ հա՛յր մեղանչեցի, և Տերը պատժեց: Գիտե՛մ, արժանի չեմ քո որդին կոչվելու, բայց ընդունի՛ր ինձ: Կաշխատեմ քո արտերում, մշակություն կանեմ, միայն մի՛ մերժիր, ների՛ր անառակ որդուդ»: Այսպես մտածեց ու ճամփա ընկավ: Այժմ նա բոլորովին նման չէր մաքուր, կոկիկ, շքեղ հագնված նախկին երիտասարդին: Ցնցոտիները մի կերպ ծածկել էին վտիտ մարմինը, կոշիկները քրքրված էին:

Հայրը հեռվից տեսավ որդուն և պատանու կայտառությամբ վազեց նրան ընդառաջ, փաթաթվեց. դառնության և ուրախության արցունքներն առվակ-առվակ սկսեցին հոսել խորշոմապատ դեմքի կնճիռներով:

- Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ և քո առաջ: Այլևս արժանի չեմ...

Հայրը ձեռքով փակեց որդու բերանը և դարձավ ծառային.

- Հագցրե՛ք որդուս շքեղ զգեստներ ու մույկեր: Ախոռից հանե՛ք ամենապարարտ եզը և մորթեցե՛ք: Բոլորին կանչե՛ք՝ միասին ուրախանանք, որովհետև որդիս մեռած էր, կենդանացավ, կորած էր, գտնվեց:

Մինչ տանը եռուզեռ էր, ուրախություն, արտից վերադարձավ ավագ որդին: Զարմանքով լսեց իրենց տնից եկող երգ ու պարի, զվարթ ծիծաղի ձայները:

- Այս ի՞նչ ուրախություն է, ի՞նչ է պատահել, - հարցրեց ծառային:

Իմանալով եղելությունը՝ ավագ որդին շատ զայրացավ և չմտավ ուրախության սրահը: Հայրը դուրս եկավ, աղաչեց, որ տղան ներս գա, բայց սա պատասխանեց.

- Հա՛յր, մանկությունից ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ առել: Բայց ինձ համար մի ուլ անգամ չես մորթել: Այնինչ անառակ որդիդ վատնել է ունեցվածքդ, անբարոյականությամբ զբաղվել, և դու նրա համար եզն ես մորթել տվել:

- Որդի՛ս, - պատասխանեց հայրը, - մի՛ դժգոհիր: Դրամը ձեռքի կեղտ է, կվացվի կգնա, մորթված անասունի տեղ մեկ ուրիշը կգնենք, բայց եղբորդ ոչնչով փոխարինել չենք կարող: Ուրեմն ուրա՛խ եղիր, որ թողնելով անառակ կյանքը՝ վերադարձել է հայրական տուն:

ՊԼԱՆ

1. Կրտսեր որդու պահանջը:
2. Անբարո կյանքով ապրող տղան:
3. Աղքատության ճիրաններում:
4. Ապաշխարանք:
5. Անառակ որդու վերադարձը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կրտսեր, ունեցվածք, ավյատանքների մեջ ընկնել, ունեցած-չունեցած, ծնողական հսկողությունից հեռու, անխնա շռայլել, արյուն-քրտինքով կուտակած, զեխ գինարբուք, անբարո կանանց միջավայր, վտիտ մարմին, պատանու կայտառությամբ, դառնության և ուրախության արցունքներ, խորշոմապատ դեմք:

ՁԱԽՈՒ 1

Ըստ Ռափայել Պատկանյանի

(ստեղծագործական փոխադրություն)

Թեև ապրիլ ամիսն էր, սակայն այնպիսի շոգեր էին սկսվել, որ հողն սկսել էր ճաքճքել: Եթե մի քանի օր էլ այդպես շարունակվեր, որ չորությունից բերքը կփչանար: Ուզեի-չուզեի Ջրկիր պիտի վարձեի, որ սայլով տակառ-տակառ ջուր կրեր ու պարտեզս ջրեր: Բացի դա, մի հին ծիրանենի ունեի, որին ցուրտը խփել-չորացրել էր: Կանչեցի Ջրկիր Մարտիրոսին, հանձնարարեցի ոչ միայն այգին ջրել, այլ նաև այդ ծառը արմատով հանել, իսկ ես սովորականի պես խանութս գնացի:

Երբ կեսօրին տուն վերադարձա, զարմանքով տեսա, որ Մարտիրոսը ձեռքերը կրծքին խաչած կանգնել է արմատահան արված ծառի փոսի մոտ, աչքերը անթարթ հառել ինչ-որ կետի, և խորշոմած այտերի վրայով գլոր-գլոր հոսում են արցունքի կաթիլները:

Ջրկիր Մարտիրոսը բնավորությամբ ծանրաբարո մարդ էր, ու թվում էր՝ հուզականությունից հեռու: Ահա թե ինչու անսպասելիությունից ճչացի.

- Մա՛րդ աստծո, ի՞նչ եղավ քեզ:

Լուռ էր: Ոչ մի ձայն:

- Ա՛յ տղա, հո չե՞ս գժվել: Այս հասակի մարդ՝ լաց ես լինում: Երեսիդ գույն չի մնացել:

Առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու՝ անձայն կռացավ, փոսի մոտից վերցրեց հողի հետ դուրս նետված ոսկորի մի կտոր, քարացած հայացքով նայեց, ապա դիվահարի պես կանչեց.

- Վարպե՛տ, վարպե՛տ Մկրտիչ, ահա ձեր չախուն, ահա էն չախուն... գտնվեց վերջապես: Մեռնե՛մ անունիդ, սու՛րբ Կարապետ, վերջը բացեցիր գաղտնիքը:

Կանգնած տեղս սառած մնացի. այսպիսի զարմանալի բան դեռ չէի տեսել: Ինչևէ: Մարդուն հազիվհազ խելքի բերի, բայց փտած ոսկորը ձեռքից բաց չէր թողնում: Վերջապես, երբ մի քիչ աթափվել էր, պատմեց հետևյալը. «Գիտե՛ս, որ այս տունը, որտեղ այժմ դու ես ապրում, ժամանակով տիրացու Մկրտիչինն էր: Հիսուն տարի առաջ իր տանը նա դպրոց էր բացել, գրել-կարդալ էր սովորեցնում: Տասը տարեկան էի, երբ հայրս ինձ տվեց վարպետ Մկրտիչի դպրոցը: «Վարպետ» ասածդ այն ժամանակ գյուղ-գավառից զարհուրելի էր: Նրա անունը որ լսեինք, լեղիներս կպատռեր, փախչող փախչողի կլինեինք: Այդպիսին էր տիրացու Մկրտիչը:

Սովորելու մեծ փափագ ունեի: Գրքերը ոչ թե կարդում, այլ կլանում էի մի շնչով: Դպրոցի առաջին աշակերտն էի, և բոլորը մեծ ապագա էին գուշակում ինձ համար: Այնքան լավ էի սովորում, այնպես հեշտությամբ էի ընկալում ամեն ինչ, որ վարպետս ակնհայտորեն նախանձում և չարանում էր ինձ վրա:

Մի օր՝ առավոտյան, սովորականից շուտ գնացի վարժատուն: Իրիցկինը պարտեզում կանաչեղեն էր հավաքում, իսկ վարպետս փոս էր փորում հենց այնտեղ, որտեղից հանեցինք չորացած ծառը: «Վարպե՛տ, - ասացի, - հոգնել ես, տու՛ր, մի քիչ էլ ես փորեմ»: Իրիցկինն այդ ժամանակ մոտեցավ՝ մառուցարանի մեջ կանաչի,

վրան՝ ճերմակ կոթով չախու: Դրեց գետնին՝ փոսի մոտ, ու ասաց. «Որ փորելդ վերջացնես, սա տար խոհանոց»: Ու ինքը գնաց հարևանի տուն:

Երբ գործս ավարտեցի և վերցրի կանաչիով լեցուն մատուցարանը, նկատեցի, որ դանակը չկա: Լսելով այդ՝ մարդ ու կին հարձակվեցին վրաս: «Անճ՛ղ էր, քոռ՛ց էր, որ կորավ: Լույս ցերեկով ահագին դանակը կորչի՞: Շու՛տ գնա գտի՛ր, թե չէ գլխիդ այնպիսի բան կբերենք, որ մինչև սև հող մտնելդ չմոռանաս», - ձայնը գլուխն էր գցել վարպետիս կինը:

Ասացին ու այդպես էլ արին»:

1. Չախու - դանակ

ՈՒՍՈՒՑԻՉԻՆ՝ Աշակերտներին հանձնարարել ստեղծագործարար շարունակել և ջրկիր Մարտիրոսի պատմությունը գրել տալ իրենց գրքում:

ՆԱՐԳԻԶ

Ըստ հունական դիցաբանության

Ով չէր մեծարում ոսկեծոր Աֆրոդիտեին, ով մերժում էր նրա շնորհները, ընդդիմանում իշխանությանը, նրան անողոքաբար պատժում էր աստվածուհին:

Այդպես նա պատժեց գետերի աստված Կեփալոսի և հավերժահարս Լավրիոնեի որդուն՝ գեղեցիկ, բայց սառն ու գոռոզամիտ Նարգիզին: Ոչ ոքի չէր սիրում նա, բացի իրենից. միմիայն իրեն էր համարում սիրո արժանի:

Մի անգամ, երբ որս անելիս Նարգիզը մոլորվեց սաղարթախիտ անտառում, հավերժահարս Էքոն տեսավ նրան: Աղջիկը չէր կարող խոսել Նարգիզի հետ: Նրան կաշկանդում էր Հերա աստվածուհու պատիժը. պարտավոր էր մշտապես լուռ մնալ Էքոն, իսկ հարցերին կարող էր պատասխանել միայն կրկնելով խոսողի վերջին բառերը:

Անտառի թավուտում թաքնված Էքոն հիացմունքով նայում էր բարեկազմ ու գեղեցկադեմ պատանուն:

Նարգիզը զննեց շուրջբոլորը՝ չիմանալով ուր գնալ, և բարձր ձայնով գոչեց.

- Հե՜յ, ո՞վ կա այստեղ:

- Այստե՜ղ, - լսվեց Էքոյի բարձրաձայն պատասխանը:

- Այստե՜ղ արի, - գոչեց Նարգիզը:

- Արի՜, - պատասխան տվեց Էքոն:

Զարմանքով շուրջը նայեց Նարգիզը: Ոչ ոք չկար: Եվ ապշած դրանից՝ բարձրաձայն բղավեց.

- Այստե՜ղ արի, ինձ մոտ:

Եվ Հրճվանքով արձագանք տվեց Էքոն.
- Ինձ մո՛տ:

Ասաց ու դեպի Նարգիզը շտապեց Հավերժահարսը, բայց գեղեցիկ պատանին զայրույթով Հետ մղեց նրան ու գոռոզաբար գոչեց.

- Հե՛տ տար ձեռքերդ: Ավելի լավ է մեռնել, քան մշտապես քեզ Հետ լինել:

Եվ շտապով Հեռացավ Հավերժահարսից ու անՀետացավ մութ անտառում: Նրա Հետևից Հնչեց վշտով լեցուն արձագանքը. «...քեզ Հետ լինե՜լ...»:

Մերժված Հավերժահարսը թաքնվեց անտառի թավուտում: Նա տառապում էր Նարգիզի Հանդեպ տածած սիրուց, ոչ ոքի աչքին չէր երևում և տխրությամբ արձագանքում էր ամեն կանչի:

Իսկ Նարգիզն առաջվա նման մնաց գոռոզ, ինքն իրեն սիրաՀարված: Նա մերժում էր բոլորի սերը: Շատերին ապերջանիկ դարձրեց նրա գոռոզությունը: Եվ մի անգամ մերժված Հավերժահարսներից մեկը նզովեց.

- Դու՛ էլ սիրաՀարվես, Նարգի՛զ: Եվ թող քեզ փոխադարձաբար չպատասխանի նա, ում կսիրես:

Կատարվեց Հավերժահարսի անեծքը:

Զայրացավ սիրո աստվածուՀի Աֆրոդիտեն, որ Նարգիզը մերժում է իր պարգևած շնորՀները, և պատժեց նրան:

Մի անգամ՝ որս անելիս, Նարգիզը մոտեցավ վտակին՝ կամենալով ծարավը Հագեցնել սառնորակ ջրով: Դեռ ոչ ոք շուրթերով չէր Հպվել այդ անաղարտ վտակին, ոչ ոք՝ ո՛չ Հովիվը, ո՛չ էլ լեռնային այծերը: Ոչ մի անգամ վտակի մեջ չէր ընկել որևէ կոտրված ճյուղ, մինչև անգամ քամին չէր նետել քնքուշ ծաղիկների թերթերը: Ջուրը վճիտ էր ու թափանցիկ: Հայելու նման այն իր մեջ արտացոլում էր շուրջը եղած ամեն ինչ՝ և՛ ափերին աճած թփերը, և՛ սլացիկ կիպարիսները, և՛ կապուտակ երկինքը:

Ձեռքերը Հենելով ջրից դուրս եկած քարին՝ կռացավ Նարգիզը վտակի վրա և Նրա մեջ արտացոլվեց իր ողջ գեղեցկությամբ: Հենց այստեղ էլ վրա Հասավ Աֆրոդիտեի պատիժը:

Ապշահար նայում էր Նարգիզն իր արտացոլմանը և Համակվում բուռն սիրով. Նարգիզը Հմայվում էր, կանչում, բազկատարած ձգտում դեպի նա: Կռանում է Նարգիզը ջրեղեն Հայելուն, որ Համբույր դրոշմի չքնաղ պատկերին, բայց Համբուրում է վտակի վճիտ ու սառնորակ ջուրը միայն: Ամեն ինչ մոռացած պատանին չի կարողանում Հեռանալ վտակից, անվերջ սքանչանում է իր արտացոլմամբ: Չի՛ ուտում, չի՛ խմում, չի՛ քնում: Ձեռքը Հուսահատությամբ մեկնելով ջրին՝ Նարգիզը բացականչում է.

- Օ՜, ո՞վ է տառապել այսքան դաժանաբար: Մեզ լեռները չեն բաժանում, ոչ էլ ծովերը, այլ միայն ջրի բարակ շերտը, բայց էլի մենք չենք կարող միասին լինել: Դու՛րս արի վտակից: Տեսնում եմ, որ ձեռքերդ ինձ ես մեկնում, երբ բազկատարած մղվում եմ դեպի քեզ: Երբ կռանում եմ քեզ Համբուրելու, դու էլ դեպի ինձ ես գալիս, և քո շուրթերն էլ են Համբույրի սպասում: Երբ ժպտում եմ, դու էլ ինձ ես ժպտում: Իսկ երբ վշտահար արցունք եմ թափում, դու՛ էլ ես լալիս, արտասուքը գլորում է նաև քո՛ սքանչելի աչքերում: Եմ տեսնում եմ, թե դու ինչպե՛ս ես պատասխանում ինձ, տեսնում եմ, թե ինչպե՛ս են շարժվում վարդագույն շուրթերդ. բայց չեմ լսում խոսքերդ:

Տվայտանքների մեջ ընկավ Նարցիսը: Եվ հանկարծ մի ահավոր միտք ծագեց գլխում, ու կռանալով ջրի վրա՝ կամացուկ շշնջաց իր արտացոլմանը.

- Օ՜, վա՜յ ինձ: Սարսափով եմ մտածում, թե արդյոք ինքս ինձ չեմ սիրահարվել: Ջե՞ որ դու հենց ես եմ: Ես հենց ինձ եմ սիրում: Օ՜, եթե կարողանայի երկու Նարցիս լինել: Օ՜, եթե կարողանայի բաժանվել իմ մարմնից: Տառապանքներս ինձ զրկում են ուժից: Զգում եմ՝ ինձ ապրելու քիչ ժամանակ է մնացել: Դեռ նոր միայն ծաղկած՝ կթոշնեմ և կգնամ ստվերների խավար թագավորությունը: Մահն ինձ չի աՀաբեկում. մահը վերջ կտա իմ սիրո տառապանքներին:

Նարցիսի ուժերը սկսում են աստիճանաբար լքել նրան: Նա գունատվում և արդեն զգում է վերահաս մահվան մոտենալը, բայց նաև անկարող է պոկվել իր պատկերից: Լալիս է Նարցիսը, և արցունքները թափվում են վտակի վճիտ ջրի մեջ: Հայելանման մակերևույթին օղակներ են առաջանում, և մի պահ կորչում է արտացոլումը: Նարցիսը ահաբեկված բացականչում է.

- Օ՜, որտե՞ղ ես դու: Հե՜տ արի: Մի՜ գնա, մի՜ լքիր ինձ, չէ՞ որ դա անգթություն է: Օ՜, թույլ տուր գոնե նայեմ քեզ:

Բայց ահա ջուրը հանդարտվում է, և կրկին երևում է արտացոլումը: Դարձյալ առանց հապաղելու նրան է նայում Նարցիսը: Հալվում է նա, ինչպես ծաղիկների ցողը արևի վառ ճառագայթներից: Տարաբախտ Էքոն տեսնում է Նարցիսի տանջանքները: Նա առաջվա պես սիրում է Նարցիսին և նրա տառապանքները տեսնելով՝ տանջվում սիրտը ճմլող ցավից:

- Վա՜յ ինձ, - բացականչում է Նարցիսը:

- Վա՜յ ինձ, - հառաչում է Էքոն:

Վերջապես մի կրկին անգամ նայելով իր արտացոլմանը՝ Նարցիսը նվաղուն ձայնով մրմնջում է.

- Մնա՜ս բարով:

Է՜լ ավելի կամացուկ, հազիվ լսելի հնչում է հավերժահարս Էքոյի արձագանքը.

- Մնա՜ս բարով:

Հակվեց Նարցիսի գլուխը առափնյա կանաչ խոտերին, և մահվան դալկությունը բոլոր աչքերը: Մեռավ Նարցիսը: Լաց եղան անտառում դեռատի հավերժահարսերը, լաց եղավ և Էքոն: Նրանք Նարցիսի համար շիրիմ փորեցին, բայց երբ եկան դին տանելու, չգտան: Այնտեղ, ուր խոտի վրա հակվել էր Նարցիսի գլուխը, աճել էր մի բուրավետ ծաղիկ՝ մահվան ծաղիկը: «Նարցիզ» են կոչում նրան:

ՊԼԱՆ

1. Գոռոզ ու եսասեր Նարցիսը:
2. Էքո հավերժահարսը:
3. Էքոյի սերը Նարցիսի նկատմամբ:
4. Նարցիսի դաժան վերաբերմունքը:
5. Նզովք:
6. Ինքնասիրահարություն և տառապանք:
7. Նարցիզ ծաղիկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառակապակցությունները.

սառն ու գոռոզամիտ, բարեկազմ ու սիրունատես պատանի, մերժված հավերժահարս, սլացիկ կիպարիսներ, սեփական արտացոլում, վշտահար արցունք թափել, վարդագույն շուրթեր.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Աֆրոդիտե, Կեֆալոս, Լավրիոնե, Էքո, Հերա:

Սիրելի՛ դպրոցական, հայոց պատմությունից դու գիտես, որ մեր անհաջողություններ֊ի, կորուստների, պարտությունների հիմնական պատճառը եղել է անմիաբանությունը: Արշակ Երկրորդը ցանկանում էր ստեղծել կենտրոնաձիգ ուժեղ պետություն: Արշակավանը պիտի դառնար այդ մեծ նպատակի խորհրդանիշը, սակայն կարճամիտ նախարարների դավերով, քաղաքը դեռ չկառուցված՝ կործանվեց: Նույն այդ նախարարների դրդմամբ Արշակը Վասակ սպարապետի հետ գնաց Պարսկաստան, և Շապուհը մեկին ճենցաբար բանտարկեց, մյուսին սպանեց: Պատմիչը գրում է. «... ստիպեցին, բռնադատեցին, շտապեցրին իրենց Արշակ թագավորին, որ վեր կենա, գնա Ներկայանա պարսից Շապուհ թագավորին»: Կարծում ենք՝ գիտես, թե ճակատագրական ինչ հետևանքներ ունեցավ այդ ամենը Հայաստանի համար:

Արդ, ազգային միաբանության շուրջ քո խոհերը շարադրելուց առաջ լսի՛ր պատմիչին, որ իր մտքերն արտահայտում է Ներսես Մեծի շուրթերով:

ԵՂԵՔ ՈՂՋԱԽՈՀ

Ըստ Փավստոս Բուզանդի

(դատողական - ստեղծագործական փոխադրություն)

Հայոց աշխարհի թագավորության բոլոր մարդիկ ժողովվեցին եկան մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ: Մեծամեծներ, նախարարներ, կուսակալներ, գործակալներ, սրանք բոլորը մի տեղ հավաքվելով՝ սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին.

- Տե՛ր, դու ինքդ գիտես, որ ահա երեսուն տարի է՝ մենք երբեք պատերազմից հանգիստ չենք ունեցել, շարունակ մեր երեսների քրտինքը սրբել ենք սրերով, սլաքներով, նիզակներով, տեգերով: Այլևս չենք կարող դիմանալ, ոչ էլ դուրս գալ պատերազմի: Ավելի լավ է՝ հպատակվենք պարսից թագավորին: Եթե Արշակը կամենում է Շապուհի հետ կռվել, թող Վասակի և իր անհրոջ՝ Անդոկի միջոցով պատերազմի: Հայոց աշխարհից ոչ ոք, ոչ մի մարդ նրան չի գնա օգնության: Մեր պետքը չէ, մենք նրան թողել ենք:

Սուրբ Ներսեսը խոսեց նրանց հետ, ինչպես հարկն էր:

- Լա՛վ մտածեցեք, - ասաց նա, - հիշեցե՛ք Տիրոջ պատվիրանը միաբանության մասին: Դուք ահա կաք ու վկա եք, որ բոլորդ Արշակունյաց ազգից եք ձեռք բերել ձեր դիրքը: Ձեզանից ոմանք նրա կողմից են նշանակվել գավառների տերեր, ոմանք՝ ձեր գանձերի աշխարհների մեծամեծներ, ոմանք՝ խոշոր ավանների և գյուղերի, ոմանք՝ գանձերի ու զանազան դաստակերտների: Արշակունյաց ազգը ձեզ բոլորիդ ազբից բարձրացրել է և ազատել: Իսկ դուք ահա կամենում եք հեթանոսների ծառայության տակ ընկնել, մերժել ձեր բնիկ տերերին, որոնք տրված են ձեզ Աստծուց, ծառայել օտար տերերի և նրանց անաստված կրոնին ցանկալ: Աստված չանի, որ դուք այդ կրոնը սիրեք ու հանձն առնեք՝ հեռանալով ձեր աստվածապաշտ թագավորից: Արշակը որքան էլ մեղավոր լինի, ձեր թագավորն է: Դուք ինքներդ ասացիք, թե այսքան տարի է, որ կռվում եք ձեր անձերի ու հոգիների համար, աշխարհի համար, ձեր կա-

նանց ու որդոց համար, ձեր հավատի, եկեղեցիների համար: Հիմա փոխանակ ձեր արարիչ Քրիստոսին, ուզում եք ծառայել անօրենների անաստված, մոգական կրոնին և նրա պաշտոնյաներին՝ թողնելով մեր Արարչին ու նրա պատվիրանները: Տեր Աստված էլ ձեզ վրա կբարկանա, ձեզ կմատնի հեթանոսների ձեռքը՝ հավիտյան ստրկաբար նրանց ծառայելու, և ծառայության լուծը երբեք ձեր վրայից չի վերանա: Եվ եթե դուք բողոքով դիմեք Տիրոջը, նա ձեզ չի լսի: Եվ շատ չարիքներ դուրս կգան ձեր առաջ, որոնցից չեք կարողանա ճողոպրել:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Հանձնարարել աշակերտներին շարադրել իրենց դատողությունները ըստ բնագրի պահանջի:

ԷՍՊԵՍ ՉԻ ՄՆԱ

(հին զրույց)

(դատողական-ստեղծագործական փոխադրություն)

Լինում է թե չէ, ո՞վ գիտի հաստատ.
Եվ ի՞նչն է հաստատ աշխարքի վըրա...--
Աշխարքում հաստատ մի բան կա մենակ,
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա: --
Լինում է իբրև գյուղացի մի մարդ,
Աղքատ, օրական ապրուստի կարոտ:
Ունենում է սա մի խելոք տըղա,
Տանում է ծառա տալի մեկի մոտ:

Տարիք են անցնում: Էս խելոք տըղեն
Էնպես է ազնիվ ու ժիր ծառայում,
Որ տերն էլ սըրա վարձը շատացնում.
Ինչպես իրենը՝ էնպես է նայում:
Հիշում է մի օր հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
- Հը՛, ո՞նց ես, որդի՛ս, հիմի էլ էնպես
Էլ մերկ ու տըկլոր, էլ քաղցած հո չե՞ս:
- Չէ՛, լավ եմ, հայրի՛կ, ապրուստս միշտ կա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա...

Գրնում է Հայրը: Տարիք են անցնում:
Առաջ է գրնում տղեն օրն օրին,
Վերջը բարձրանում, պալատն է հասնում,
Ու դառնում ծառա մեծ Թագավորին:
Հիշում է Հայրը մի օր իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
- Հը՞, ո՞նց ես, որդի՛ս, էլ ի՞նչ ես ուզում,
Լողում ես առատ էս լիքը ծովում:
- Հա՛, լի եմ, Հայրի՛կ, դու հանգիստ գրնա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա...

Գրնում է Հայրը: Տարիք են անցնում:
Էնքան է սիրվում մեր խելոք ծառան,
Որ Թագավորը բերում է սըրան
Իրեն տերության երկրորդն է անում:
Հիշում է մի օր Հայրը իր որդուն
Ու վեր է կենում գալի տեսության.
- Հը՞, ո՞նց ես, որդի՛ս, էլ ի՞նչ է մնում,
Քու խոսքովն են ողջ նըստում-վեր կենում:
- Հա՛, մեծ եմ, Հայրի՛կ, նազիր եմ ահա,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա...

Գրնում է Հայրը: Տարիք են անցնում:
Էս բարի երկրի Թագավորը ծեր
Մի օր անժառանգ ընկնում է մեռնում,
Գահն ու աշխարքը մնում են անտեր:
Ժողովք են կանչում երկրի մեծերին:
Ժողովք են գալի, խորհուրդ են անում,
Բերում են իրենց խելոք նազիրին
Առքով ու փառքով Թագավոր դընում:
Ու մեր գյուղացին լսում է մի օր,
Դարձել է իրեն որդին Թագավոր:
Գալիս է. - Որդի՛ս, էլ ի՞նչդ է պակաս,
Ամբողջ աշխարքում մի դու ես, որ կաս...
- Փա՛ռք աստծու, Հայրի՛կ, ունեմ թագ ու գահ,
Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մնա...

Գրնում է Հայրը: Տարիք են անցնում:
Իր գահին բազմած ինքնակալը նոր
Մահվան ու կյանքի վճիռ է անում՝
Բուռը հավաքած աշխարքը բոլոր:
Բուռդ հավաքի աշխարքը թեկուզ,
Թողնելու ես ողջ դարձյալ աշխարքին:

Մեր Թագավորն էլ մի անգամ էսպես
Մահիճ է ընկնում, ավանդում Հոգին:

Լըսում է ծերուկ Հայրը մի օր էլ,
Որ իր Թագավոր որդին չըմնաց:
Ի՞նչ ասել կուզի՝ գալիս է վրեն,
Էլ ի՜նչ մըղկտոց, էլ ի՜նչ սուգ ու լաց...
Զոռքով, աշխարքով, ծեսով, Հանդեսով
Արքային վայել Թաղում են անում,
Ու վեր են կենում՝ գրույց անելով՝
Ամենքը իրենց տներն են գնում:
Տարիք են անցնում: Հայրը մի անգամ
Գալիս է որդու շիրիմի վրա:
Գալիս է, տեսնում՝ մարմար մահարձան,
Բայց վըրեն գրած... «Էսպես չի մնա»

Գընում է Հայրը: Տարիք են անցել.
Ո՞վ կարա մեզնից Հաշիվն իմանա...
Էն օրից էսպես անվերջ, անդադար
Զրույցն ասում է՝ «Էսպես չի մնա...»
Ու չկա չքեղ արձանն արքայի,
Ոչ նրա քաղաքն աշխարքի վրա.
Մերն է աշխարքը ու կյանքը Հիմի,
Բայց մեր աշխարքն էլ... էսպես չի մընա...

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԻՆ՝ Շարունակի՛ր զրույցը՝ շարադրելով քո մտքերը մարդու անցողիկության և նրա լավ կամ վատ գործի Հավերժության, առՀասարակ ապրելու կերպի քո ընկալման մասին:

ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ

ՊԱՏԳԱՄ

Ըստ Հայկ Խաչատրյանի

Տիգրանակերտի Թագավորական պալատի գահասրահում լռություն էր: Ոչ ոք
չէր համարձակվում խանգարել արքայից արքա Տիգրան Մեծի միայնությունը:
Նա նստել էր գլխահակ, ձեռքերի մեջ սեղմած արծվենի ճակատը: Վերջապես բարձ-
րացրեց գլուխը, աչքերը հառեց դահլիճի կիսամութին: Հայացքի առջև կանգնեց
փառապանծ պապը՝ Արտաշեսը, որն ասես ինչ-որ բան էր պահանջում:
լռության մեջ լսվեց Տիգրանի ձայնը: - Մի՛ շտապեց-
- Զեկուցե՞մ, - գահասրահի լռության մեջ լսվեց Տիգրանի ձայնը: - Մի՛ շտապեց-
նու, աշխարհակա՛լդ Արտաշես, հիմա կզեկուցեմ: Կյանքումս առաջին անգամ ու-
րու, աշխարհակա՛լդ Արտաշես, հիմա կզեկուցեմ: Մինչև հիմա ուրիշներն են զե-
կուցել: Միայն այս անգամ և միայն քեզ: Մինչև հիմա ուրիշներն են զե-
զում եմ զեկուցել: Միայն ա՛յս անգամ և միայն քեզ:
կուցել: Այժմ լսի՛ր:

Քո մեծության շվաքի տակ ես չհանգստացա ոչ մի օր: Պաշտեցի աստվածներին
Հայոց և պապերին իմ հզոր, պաշտեցի երկիրն իմ Հայկյան և որդան կարմիրը: Ա-
քանազյան մեր նժույգները հասան Մեծ ծովի, Պոնտոսի և Վրկանայի ափերը: Քա-
նի՛-քանի բանակներ ելան իմ դեմ: Եկան, բախվեցին ու անցան, բայց ես Հայքից ոչ
մի շյուղ չզիջեցի: Չէի ապրի աշխարհի վրա, եթե բախտը ինձ ստիպեր զիջել: Ապ-
րեցի՝ կարծելով, թե աստվածները փառքի և վայելքի առատ բաժին են շնորհել ինձ:
Ավա՜ղ, ամեն ինչ խաբուսիկ էր: Ես զոհեր էի մատուցում աստվածներին, բայց
նրանք դավաճանում էին ինձ, գահեր էի կռում որդիներիս համար, դավաճանում
էին նաև նրանք: Կռվեցի օտարների դեմ, ապերախտ որդիների ու աստվածների
դեմ, բայց չգտա Հայոց բախտի բանալին: Ցավով համոզվեցի, որ հայն իրեն բաժին
ընկած բերկրանքը վայելում է տագնապով: Այժմ մահս մոտ է, և ես ազատ Հայք եմ
ժառանգում իմ հետնորդներին՝ առանց պահանջելու, որ նրանք ինձ հատուցեն
փառքի հուշայունով: Իմ միակ պատգամն է՝ պահել ու պահպանել Հայոց լեզուն:

Ով մե՛ծդ արքաներից, դու գիտես, որ հանուն Հայկյան աշխարհի սպանեցի երկու որդիներիս: Հայրական վշտի այսպիսի բեռով ի զորու չեմ ննջել Արտաշեսյաններիդ կողքին: Կհրամայեմ, որ ինձ համար դամբարան կառուցեն Մթին լեռներում՝ հեռու երկրից ու մարդկանցից: Ների՛ր, որ սրանով խախտում եմ աստվածային ավանդները:

Արքայից արքան մոտեցավ դռանը:

- Արտավա՛զդ, - կանչեց:

Որդին խոնարհ կանգնեց հոր առջև.

- Լսու՛մ եմ, արքայի՛ց արքա:

- Արտավա՛զդ, աստվածների կամքով շուտով հրաժեշտ կտամ մեր Հայկյան երկրին և բոլորիդ: Ինձնից հետո դու երկու՛ զենքով պիտի պահես երկիրը:

- Որո՞նք են այդ զենքերը, հա՛յր:

- Հայոց լեզուն և Հայկյան սուրը: Հիշի՛ր, տղա՛ս, դու կարող ես սուրը պատյանի մեջ դնել, վերստին հանել: Կոտրվելու դեպքում՝ նորը կռել: Սակայն եթե սխալվես և Հայոց լեզուն դնես պատյանի մեջ, այլևս չես կարող հանել և ոչ էլ ստեղծել նորը: Ամեն ինչ կարելի է կառուցել, վերադարձնել բոլոր կորուստները, բայց եթե կորցնես մայրենին, կկորցնես և՛ քեզ, և՛ վարքը Հայոց մեծաց, և՛ Հայքը համայն, և՛ ապագան մեր աքանազյան ազգի:

- Չե՛մ շեղվի քո իմաստուն խորհրդից, հա՛յր իմ:

Տիգրանը շարունակեց.

- Աղոթում եմ, որ աներեր մնա քո գահը, և Հայոց քաղաքամայրը չթափառի տերության այս ու այն կողմը:

Պայծառ առավոտ էր: Դեպի Մթին սարերն էր բարձրանում մի մարտակառք: Շուտով ժայռեղեն բարձունքները դարձան անհաղթահարելի: Տիգրանը և Արտավազդը ստիպված էին ճանապարհը շարունակել ոտքով: Արքայից արքան ցանկանում էր տեսնել իր դամբարանը:

Ընդգետնյա լեռնախորշում աշխատում էին քարգործ վարպետները: Դամբարանը գրեթե պատրաստ էր, իսկ խորքում շողշողում էր ոսկեձույլ մի կառք՝ զարդարված խոշոր ալմաստներով ու ադամանդներով: Կառքին լծված էր ոսկուց կերտված հսկա մի արծիվ՝ թռիչքի պատրաստ թևերով:

Նայում էր արքայից արքան: Այո՛, կառքի վրա ինքը կպառկի, և Մթին սարերի ամպամերձ այս բարձունքում ոչ ոք չի խանգարի իր հավիտենական քունը:

- Ոսկեգույն մարտակառքի մեջ պառկելով՝ դու կարող ես հարություն առնել աստվածային ուժով, ձգել ահա այս երասանը և աշխուժացնել քնած արծվին, - խոսեց վարպետներից մեկը: - Այն ժամանակ մարտակառքը դուրս կթռչի, և վա՜յ Հայքի թշնամիներին:

Քիչ անց հայր ու որդի իջնում էին լեռնալանջով: Արքայից արքան սուզվել էր լուռ մտորումների մեջ. «Եթե այս գիշեր մեռնեմ, վաղը իմ դին կամփոփվի ոսկեձույլ դամբարանում: Հավերժական լռության մեջ ոչինչ չեմ իմանա, ոչինչ չեմ լսի: Իսկ եթե Արտավազդը չկարողանա՞ կառավարել երկիրը: Քանի՛ Լուկուլլոս ու Պոմպեոս գլուխ կբարձրացնեն: Կասեն՝ Տիգրանը չկա, ու կգան: Իսկ ես, իմ աշխարհից ու ժողովրդից հեռու, չեմ իմանա՝ ինչ պատահեց Հայքին»:

Հաջորդ առավոտ Տիգրանը մեծ խորհուրդ հրավիրեց:

Վսեմափայլ ծիրանու մեջ, ադամանդակուռ թագը գլխին՝ նա այնպես էր բազմել գահին, որ աստվածային ներշնչանք էր ազդում բոլորի վրա: Դժգունած դեմքի վրա պատկառազդու էին արծվենի քիթն ու ահեղ հայացքը: Նա ուղղվեց գահի վրա, բարձրացրեց ձեռքն ու ասաց.

- Ա՛րք և տիկնա՛յք Հայոց աշխարհի, ես հրավիրել եմ ձեզ, որ լսեք, թե ինչ եմ պատգամում իմ որդուն և Հայքին համայն: Իսկ դուք, դպիրնե՛ր, քերթեցե՛ք իմ պատգամը մագաղաթներին, որոնք ավելի երկար կյանք ունեն, քան աստվածներն ու արքաները Հայոց աշխարհի:

Արտավա՛զդ, ահա քեզ եմ հանձնում իմ թագն ու ծիրանին: Իմ հոգին հովանի կլինի քեզ Հայոց բոլոր աստվածների հետ: Հրամայու՛մ եմ, որ հենց այսօր տուն վերադառնան Մթին լեռների բոլոր քարգործ վարպետները: Ջարդե՛ք ոսկեձույլ իմ կառք-դամբարանը և կարգադրե՛ք, որ Եկեղյաց գավառում այդ ոսկուց ձուլեն ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ աստվածուհու արձանը: Թող հողով ու քարով լցնեն իմ դամբարանը: Ինձ թաղե՛ք երկրի վրա՝ Հայքին ու հայերին մոտիկ: Իմ հոգին արթուն կմնա աշխարհում և կուղեկցի բոլոր հայերին, որտեղ էլ լինեն նրանք: Ես սիրտս կբաժանեմ բյուր անգամ հազար բյուր մասերի և կվերածնվեմ ամեն հայի հետ: Արթուն կպահեմ հայկյան ոգին մինչև գալիք դարերը և հավիտյան: Իսկ տապանաքարիս վրա ուզում եմ գրված լինի. «Նա այստեղ չէ: Փնտրեցե՛ք նրան ամեն հայի մեջ...»:

ՊԼԱՆ

1. Տիգրան Մեծի զրույցը Արտաշեսի հետ:
2. Արքայական պատգամ:
3. Մթին սարերի ընդգետնյա դամբարանը:
4. Մտորումներ Հայքի ապագայի մասին:
5. Արքայից արքայի վերջին կամքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

արքայից արքա, որդան կարմիր, մարտակառք, ընդգետնյա, ամպամերձ, խաբուսիկ, պատկառազդու, արծվենի ճակատ, փառապանծ պապ, մեծության շվաք, հայկյան երկիր, գահեր կռել, ապերախտ որդիներ, փառքի հուշասյուն, հայրական վշտի այսպիսի բեռ, աստվածային ավանդներ, իմաստուն խորհուրդ, աքանազյան ազգ, ոսկեձույլ կառք, արծիվ՝ թռիչքի պատրաստ թևերով, վսեմափայլ ծիրանի, ադամանդակուռ թագ, արծվենի քիթ, ահեղ հայացք.

բ) հետևյալ հատուկ անունները.

Պոնտոս, Վրկանա, Լուկուլլոս, Պոմպեոս, Եկեղյաց գավառ, ոսկեմայր ու ոսկեծղի Անահիտ.

գ) տապանաքարի արձանագրությունը.

«Նա այստեղ չէ: Փնտրեցե՛ք նրան ամեն հայի մեջ...»:

ՏԻԳՐԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՄԵՆ ԲԱՆՈՎ

Անցնենք այնուհետև գրելու Տիգրանի և նրա գործերի մասին: Որովհետև սա մեր թագավորներից ամենահզորը և ամենախոհեմն էր և նրանցից բոլորից քաջ...: Մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը. բոլոր ժամանակակիցներին նախանձելի, իսկ հետո եկողներին՝ ցանկալի էր թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը:

... Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց և մեզ, որ օտարների լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ: ... Հետևակ կռվողները ձիավոր դարձան, պարսերով կռվողները՝ հաջող աղեղնավորներ, փայտերով կռվողները զինվեցին սրերով ու տեգավոր նիզակներով, մերկերը պատսպարվեցին վահաններով ու երկաթե զգեստներով: Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու պահպանակների ու զենքերի փայլմունքը բավական էին թշնամիներին հալածելու ու վանելու: Նա խաղաղություն ու շենություն բերեց և բոլորին լիացրեց յուղով ու մեղրով:

Այս և այսպիսի շատ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը՝ գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ՝ պարկեշտ, ուրախությունների մեջ՝ օրինավոր:

... Եվ այս գրքում ի՞նչ կա ինձ համար ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարելը: Նա, ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով, ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով: Չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԱՐՏԱՎԱԶԴ ԵՎ ԿԼԵՈՊԱՏՐԱ

Ըստ տարբեր աղբյուրների

Մեր թվարկությունից առաջ 37 թվականին հռոմեացի զորավար Մարկոս Անտոնիոսը իր բազմամարդ լեգեոններով արշավանք է սկսում պարթևների դեմ:

Անտոնիոսի մեջ արարիչն ասես կուտակել էր մահկանացուներին բնորոշ այպանելի բոլոր գծերը: Նա ուխտադրուժ էր, արնախում և փառասեր: Պատմահայր Խորենացին վկայում է, որ «առյուծի պես մռնչացող գազան Անտոնիոսին» ամենից շատ հրապուրում էր Արմենիայի ոսկին:

Այդ ինքնահավան ու պարծենկոտ այրը, պարթևներից մի լավ ջարդ ստանալով, զորքերի փրկված մնացորդներով մի կերպ ճողոպրում է և խուճապահար համնում Հայաստան՝ հանգստանալու և կերակրվելու համար օթևան խնդրելով հայոց արքաների արքա Արտավազդ Երկրորդից: Եթե լիներ խորամանկ դիվանագետ, հայոց թագավորը ինքն էլ մի վճռական հարված կհասցներ և վերջնականապես կխորտակեր վաղեմի ոխերիմ թշնամուն՝ դաս տալով նաև նրա հաջորդներին: Բայց քանի որ բանաստեղծ էր, մարդկային խղճի ու կարեկցանքի, ազնվության ու վեհանձնության մարմնացում, ոչ միայն չի ջախջախում մազապուրծ թշվառականին, այլև ապաստան է տալիս, ամբողջ ձմեռ կերակրում զորքի սովահար մնացորդներին:

Անտոնիոսը իր պարտության մեջ մեղավոր էր համարում Արտավազդին այն պատճառով, որ վերջինս պահպանել էր չեզոք դիրք, չէր ուզել իր դեմ լարել պարթևներին:

- Պարթևապաշտ ես, Արտավա՛զդ, - ասել էր զորավարն իբրև մեղադրանք:

- Ես ոչ պարթևապաշտ եմ, ոչ հռոմեապաշտ, - պատասխանել էր արքան, - ես հայապաշտ եմ, թագավոր հայոց և կամենում եմ իմ աշխարհը պարթևների ու Հռոմի միջև բարձրացնել իբրև խաղաղ անկախության ամրոց:

Անտոնիոսը իր զորքերով հեռացավ Հայաստանից, բայց Արտավազդի խոսքերն ու վարմունքը չմոռացավ:

Մեր թվարկությունից առաջ 34 թվականին նա իբր բանակցելու նպատակով եկավ Արտաշատ:

Երեկո էր: Արտաշատի կիսաշրջանաձև թատրոնի դահլիճը լեցուն էր հանդիսականներով: Այդ օրը բեմադրվելու էր Արտավազդի՝ Տիգրան Մեծին նվիրված թականներով: Այդ օրը բեմադրվելու էր Արտավազդի՝ Տիգրան Մեծին նվիրված թատերգությունը: Ներկայացումը դիտելու էին հրավիրված նաև Անտոնիոսը և նրա զինակիցները:

Արտավազդի մտքով չէր էլ անցնում, որ դավադիրները ցանկանում են հենց թատերասրահում ձերբակալել իրեն:

Ներկայացումից հետո զուտ հռոմեական նենգությամբ նա Արտավազդին կնոջ և որդիների հետ հրավիրում է խնջույքի, ապա բոլորին շղթայում և տանում Եգիպտոս՝ իր հարճին՝ Կլեոպատրային նվեր: Ի լուր Եգիպտոսի՝ նա հայտարարում է, թե իբր նվաճել է Արմենիան և այդ առթիվ շքեղ հաղթահանդես է կազմակերպում:

Ծովեզրյա արքայական ճոխ պալատի պատշգամբում բացված է խրախճանքի սե-

ղան: Հարբած է Անտոնիոսը, հարբած են թագուհու կոչնականները:

Կլեոպատրան դառնում է իր քով նստած Արտավազդին.

- Ասա՛ ինձ, Արտավա՛զդ արքա, ինչպե՞ս վարվեմ քեզ հետ:

- Արքայաբա՛ր:

- Դու վաղը Ռոա Հրապարակում ինձ կերկրպագես ի տես բոլորի, և ես, շղթաներդ նույն պահին արձակելով, քեզ իմ կողքին կբազմեցնեմ: Կստանաս աստվածային պարգև՝ զորակցությունն ու սերը Կլեոպատրայի:

- Դու ինձ իմ կյանքն ես խոստանում, բայց ոչ տերությունը: Սակայն հիշի՛ր, իմ երկիրը տեր ունի՝ Արտաշես որդիս: Նա չի թողնի, որ մարմնացնես երազանքներդ սին:

- Բարբարո՛ս արմեն, ճանաչի՛ր չափդ, երբ խոսում ես ինքնակալ Կլեոպատրայի հետ: Շղթայեցե՛ք սրան: Ոսկյա՛ շղթաներով:

Կեսօր է: Ռոա Հրապարակում՝ արծաթազօծ պատվանդանի վրա, խայտում են ոսկեղեն երկու գահավորակ, որոնց վրա բազմել են Անտոնիոսը և Կլեոպատրան: Նրանց առջև դրված է երկու շքեղակազմ մատյան:

- Այդ ի՞նչ մատյաններ են, Մարկո՛ս, - հարցնում է Կլեոպատրան:

- Մեկը կոչվում է «Պատմություն Տիգրան Մեծի», մյուսը Արտավազդի հորինվածքներն են: Ահա՛, բերում են արքայից արքային: Կեցվածքի՞ն նայիր:

- Այո՛, արքայավայել է:

Դեպի Հրապարակ են քայլում շղթայված Արտավազդը, Հայոց թագուհին և նրանց երկու զավակները՝ Տիգրանն ու կրտսեր Արտավազդը, նաև հայ իշխաններ, զորականներ: Քայլում են գլուխները բարձր ու չեն նայում գահին՝ անտեսելով ոսոխներին: Բայց նրանց ստիպում են կանգնել:

- Երկրպագի՛ր և կապրես, - դիմում է Կլեոպատրան Արտավազդին:

- Ապրել կա, որ մահից խիստ առավել է, և կա մեռնել, որ առավել է ապրելուց: Ինչու՞ երկրպագեմ: Ինչպե՞ս: Ես՝ Արտավազդ Երկրորդս՝ որդին Տիգրան Մեծի, ես՝ արքայից արքա ու բանաստեղծ, ես՝ Հայոց բարձունքների արծիվ, ինչպե՞ս կարող եմ երկրպագել հռոմեական աղվեսի հարճին:

- Ի՞նչ, - ոտքի է ելնում ցասումնալից Կլեոպատրան, - կառափնատե՛լ բարբարոսին, այրե՛լ մատյանները՝ ջնջելով նրա հու՛շն անգամ աշխարհից:

- Դու կայրես իմ մատյանները, բայց պատմությունն անմահ է, չե՞ս այրի: Կպատմվի ամենն այս բերներբերան և հավիտյան կապրի:

- Կառափնատե՛լ, - ճչում է Կլեոպատրան:

Զինվորները տանում են հայերին:

Դա մեր թվարկությունից առաջ 31 թվականի սեպտեմբերի 2-ին էր:

ՊԼԱՆ

1. Անտոնիոսի պարտությունը և փախուստը Հայաստան:
2. Սրտաբաց ընդունելություն Արտավազդ Երկրորդի կողմից:
3. Մեղադրանք և հիշաչարություն:
4. Դավադրություն:
5. Արտավազդ և Կլեոպատրա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

բազմամարդ լեգեոններ, պարթևներ, այլանելի դեմքեր, ուխտադրուժ, մոլեռանդ, մարտակառք, ինքնահավան ու պարծենկոտ այր, օթևան, արքայից արքա, ճողոպրել, խորամանկ դիվանագետ, վաղեմի ոխերիմ թշնամի, մազապուրծ թշվառական, զորքի ավահար մնացորդներ, խաղաղ անկախության ամրոց, անբավ գանձեր, կիսաշրջանաձև թատրոն, հռոմեական նենգություն, հարճ, երկրպագել, աստվածային պարգև, սին երազանքներ, շքեղակազմ մատյան:

ՔԱՐԵՂԵՆ ԵՐԳ

Ըստ տարբեր աղբյուրների

Մեր թվագրությունից առաջ 65 թվականին դեպի Հռոմ տանող ճանապարհով սուրում էին մի խումբ ձիավորներ՝ 3000 հեծյալների ուղեկցությամբ:

Առջևից սլացող շքեղաշուք նժույգների՝ արծաթով ու ոսկով զարդանախշված թամբերին նստած էին փառահեղ կեցվածքով մի կին ու մի տղամարդ: Երիտասարդ էին նրանք, գեղեցիկ և ուժեղ: Թեև դժվարին էր ճանապարհը, և արդեն ամիսներ էր, որ միայն գիշերներն էին իջնում ձիերից և հանգստանում ճամփորդական թեթև վրաններում, բայց հոգնության նշույլ իսկ չկար դեմքերին: Տղամարդը հայոց արքա Տրդատ Առաջինն էր, կողքի հեծյալը՝ թագուհին:

Ահեղ Բյուզանդիոնի հետ հարաբերությունները բարեկամական դարձնելու նպատակով նրանք մեկնում էին Հռոմ՝ թագադրվելու Ներոնի ձեռքով:

Հռո՜մ... Աշխարհի մայրաքաղա՜ք: Որքա՜ն դավեր են նյութվել այստեղ, քանի՜ արքա է շնորհազուրկ եղել, ինչքա՜ն մարդ է գլխատվել տիրակալների կամքով: Ի՜նչ ճարտարապետական կոթողներ է ստեղծել այստեղ մարդկային հանճարը, որքա՜ն ոսկի ու գանձեր են հոսել այդ առասպելական քաղաքի դարպասներից ներս:

Շրջում է Տրդատը, դիտում տաճարները, հիանում հելլենիստական ոճով կառուցված հրաշալիքներով: Եվ որոշում է մտքում՝ երբ վերադառնա իր երկիրը, այդպիսի մի տաճար է կանգնեցնելու՝ ի մեծարումն արևի աստված Միհրի:

Երբ անցնում է երկարատև ճամփորդության հոգնությունը, հայտնում են, թե Ներոնը նշանակել է թագադրության օրը:

Հսկայական բացօթյա պայտաձև դահլիճում հավաքվել է Հռոմի ծերակույտը, կանգնած են զորքերը՝ շքեղ զինվորական հանդերձներով, և հարյուրավոր քաղաքացիներ՝ դիտելու հայոց արքայի թագադրության արարողությունը:

Վսեմաշուք թիկնոցը ուսերին, կարմիր մույկերը հագին՝ մտնում է Ներոնը: Նա գոհ է, ինքնաբավ ժպիտ է երևում դաժան դեմքին: Ինքն այսօր կթագադրի Արմենիայի թագավորին և կպահպանի կայուն ազդեցություն նրա վրա: Արմենիան հարուստ երկիր է և մուտքն է այլ աշխարհների, որոնց այնքա՜ն երազում է տիրանալ Հռոմը:

Դիմացի դռնից արժանապատիվ կեցվածքով մտնում է Տրդատը՝ ոսկյա թագը ձեռքին: Նրա մտքում հայրենիքն է՝ իր հեռավոր Հայաստանը, որի քարն անգամ չի փոխի այս շքեղ երկրի հետ: Շա՜տ գործեր ունի անելու: Վերաշինելու է Արտաշատը, մտապատկերում գծագրվող տաճարին է կյանք ու շունչ տալու:

- Կամքն աստվածների՝ այստեղ՝ աշխարհի մայրաքաղաքում, Արմենիայի թագավոր եմ հռչակում Տրդատին՝ վստահ, որ նրա երկիրը հետայսու կդառնա Արևելքի մեր ամուր պատվարը, - հայտարարում է Ներոնը:

Տրդատը խոնարհվում է, և կայսրը թագը դնում է նրա գլխին: Աղմկում է դահլիճը, ծափահարում և գոհություն հայտնում աստվածներին:

Ի նշանավորումն այս արարողության՝ երեկոյան Հռոմում սկսվում է ջահերով երթ, որոնց լույսի տակ շողշողում էր արևմուտքի դիցուհին: Իսկ ժողովրդի խան-

դավառ ձայները հասնում էին այն սրահը, ուր նոխ ճաշկերույթ էր տրվում Արմենիայի թագավորի պատվին:

Հաջորդ օրը Տրդատը իր շքախմբով թողնում է Հռոմը:

Գալով Հայրենիք՝ հայոց արքան ձեռնամուխ է լինում հեթանոսական տաճարի կառուցմանը: Գործի են անցնում հայ մեծահամբավ ճարտարապետները, գծագրում, նկարում, պատրաստում ապագա տաճարի մանրակերտը և ներկայացնում Տրդատին: Նայում է արքան և որպես գոհունակության նշան՝ շոյում մորուքը: Այո՛, դա այն է, ինչ ինքն է ուզում: Ընտրված տեղն էլ հրաշալի է՝ անառիկ, բարձրաբերձ, կանաչազարդ: Նահապետ Հայկի ծոռան՝ Գեղամի հիմնած ամրոցը թող շքեղանա այս նոր զարդով, իսկ խորունկ ձորում հոսող Ազատ գետի խլամրմունջ երգը թող ստեղծի հավերժական համերգի պատրանք:

Ու սկսում են կառուցել:

Հատակագծում ուղղանկյունի սրահով տաճարը բոլորեքյան շրջապատված է 24 սյուներով, որոնք խորհրդանշում են օրվա 24 ժամերը: Կապույտ որձաքարի վրա կերտված են նրբանուրբ քանդակներ, նախշազարդ խոյակներ: Բայց ինչպե՞ս, ի՞նչ հնարքով հսկա քարաբեկորները միացնել միմյանց, որ պատերը ամրակուռ լինեն, դիմանան հավերժությանը: Շաղախն այն չէ: Եվ որոշում է ճարտարապետը՝ քարերը միմյանց ամրացնել գամերով ու արճիճով:

Հասնում է այն բերկրալի օրը, երբ ավարտվում է տաճարի շինարարությունը: Եվ կանգնում է գետնից մեկ-երկու մետր բարձրությամբ հիմնապատվանդանին բազմած սրբատաշ ու մաքուր, բյուրեղյա ու դաշն, փոքրիկ ու վսեմ կոթողը:

Տաճարի դիմաց կանգնել է արդեն ալեզարդ արքան և խոնարհվում է արևի աստծուն: Ծավալվել է հեթանոսական մեծ ու փառահեղ տոնը: Ջոհասեղանին ճերմակ երինջներ են մորթվում, հնչում է գուսանների երգը՝ ի փառս հայոց աստվածների: Ու Գառնո ձորի վրա թառած բարձունքը թնդում է երգ ու պարից, և նորակառույց կոթողը օծվում է բերկրության արևոտ ալիքներով:

Շուրջ հազար վեց հարյուր տարի կանգուն մնաց Գառնո հրաշակերտը: Դիմացավ քամուն, անձրևին, արևին ու կարկուտին: Մի աղետալի օր, սակայն, զոհ գնաց երկրաշարժին: Պատմիչ Զաքարիա Սարկավագի հավաստմամբ՝ 1679 թվականի հունիսի 4-ի երկրաշարժն այնքան ուժեղ է եղել, որ մի քանի տոննա կշիռ ունեցող քարերը դյուրությամբ բեկվել են տաճարից, օդ բարձրացել փետուրի պես և թափվել անդնդախոր ձորը: Դրանից հետո մոտ երեք հարյուր տարի տաճարը մնացել է կիսավեր: Եվ միայն 1969-1975 թվականների ընթացքում այդ եզակի կառույցը ստացել է իր նախնական տեսքը:

Գառնո տաճարը այժմ կանգուն է: Բուրում է դարերի հնությամբ ու սահմ փառքի երգ մրմնջում մեր շինարար նախնիների ու նորօրյա վարպետների մասին:

ՊԼԱՆ

1. Դեպի Հռոմ:
2. Շքեղ ընդունելություն:
3. Աշխարհի մայրաքաղաքը:
4. Երկու արքա:
5. Թագադրում:
6. Գառնու տաճարի շինարարությունը:
7. Երկրաշարժ:
8. Գառնու տաճարը կանգուն է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

շքեղաշուք նժույգներ, արծաթով ու ոսկով զարդանախշված թամբեր, ճամփորդական թեթև վրաններ, շնորհազուրկ, մարդկային հանճար, վեհաշուք տաճարներ, հելլենիստական ոճ, բացօթյա դահլիճ, գինվորական հանդերձներ, ինքնաբավ ժպիտ, արժանապատիվ կեցվածք, արևմուտքի դիցուհի, խլամրմունջ երգ, հավերժական համերգ, պատրանք, կապույտ ործաքար, նրբանուրբ քանդակներ, նախշազարդ խոյակներ, հեթանոսական երգ:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ՏՐԴԱՏ

(ժողովրդական զրույց)

Հայաստանի թագավոր Տրդատը գալիս է Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու: Տեղի իշխանները նրան զարմացնելու համար ման են ածում քաղաքում և ցույց տալիս գեղեցիկ ու մեծ շենքերը, այդ թվում նաև այն հսկայական շենքը, ուր գտնվում էր ծերակույտը, և ուր պահվում էին օրենքների բազմաթիվ գրքերը:

Երբ Տրդատը ճաշի է նստում, Ներոնը նրան հարցնում է.

- Հայոց աշխարհու՞մ էլ այսպիսի օրենքներ կան:

- Հայոց աշխարհի օրենքները քիչ են, բայց լավն են, - պատասխանում է Տրդատը, - մեր երկրում ամեն մարդ պարտավոր է իմանալ դրանք: Եվ եթե Հայոց ազգն իր օրենքները լավ պահի, Հռոմեացիք չեն կարող մոտենալ Հայաստանին:

- Իսկ որո՞նք են Հայաստանի այդ օրենքները, որ մենք երբեք չենք լսել, - հարցնում է Ներոնը զարմանքով:

- Առաջին օրենքն այն է, որ մեր թուրը ժանգոտ լինի, իսկ մանգաղը՝ հայելու նման փայլուն: Երկրորդ օրենքն այն է, որ դատարանի դռանը չտրորված կանաչ խոտ լինի բուսած, և դրա փոխարեն տաճարի դուռը միշտ տրորված լինի: Եվ երրորդ՝ մեզ պարտադրված կռվի ժամին բոլորս միասին լինենք, խաղաղ օրերին՝ ամեն մեկս մեր գործին՝ վարենք, ցանենք ու կառուցենք, - պատասխանում է Տրդատը:

ՄԵԾ ՀԱՎԱՏԻ ՆԱԽԵՐԳԱՆՔԸ

Ըստ Մովսես Խորենացու

Նվիրվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Հայոց Թագավոր Աբգարը պետական գործերով Հռոմ էր ուղարկել իր իշխաններից երկուսին, ինչպես նաև իր հավատարիմ Անանին: Կայսեր հետ գործերը վերջացնելուց հետո նրանք մտան Երուսաղեմ` տեսնելու մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին: Լսել էին նրա սքանչելագործությունների համբավը և իրենք էլ ականատես լինելով` եկան և ապշանքով ու հիացմունքով պատմեցին Աբգարին:

- Տե՛ր թագավոր, - ասացին, - Քրիստոսը կատարում է հրաշքներ և սքանչելի գործեր. մինչև անգամ կենդանացնում է մեռած մարդկանց: Սրանք սովորական մահկանացուի զորություններ չեն, այլ Աստծո: Բայց հրեաները չեն հավատում նրան, ծաղրում են և չարաչար հալածում:

- Եթե կատարում է այդպիսի գործեր, ուրեմն ստուգիվ Աստված է կամ Աստծո որդի, - ասաց Աբգարը: - Արդ, մենք հրաման կտանք, որ ամեն ոք, ով կամենա, Հիսուսին ընդունի Աստված, և մահ կսպառնանք նրան, ով քրիստոնյաների վրա կչարախոսի: Անա՛ն, կանչի՛ր այստեղ դպիր Երեմիային: Աղաչանքի թուղթ պիտի հղեմ Քրիստոսին:

Ներկայացավ դպիրը` գրակալով, մելանով և գրիչով:

- Գրի՛ր, - կարգադրեց Աբգարը:

«Աբգար` Արշամի, աշխարհի իշխան. բարերար և փրկիչ Հիսուսիդ, որ երուսաղեմացոց աշխարհում երևեցար, ողջո՛ւյն:

Լսել եմ քո մասին և այն բժշկությունների մասին, որ կատարվում են քո ձեռքով` առանց դեղերի և արմատների, որովհետև, ինչպես ասում են, դու կույրերին տեսնել ես տալիս, կաղերին քայլեցնում ես, բորոտներին մաքրում ես, չար ոգիները և դևերը հանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարչարվողներին բժշկում ես, նաև մեռածներին կենդանացնում ես: Երբ այս ամենը քո մասին լսեցի, մտքումս դրի երկուսից մեկը` կա՛մ որ դու Աստված կլինես, որ երկնքից իջել ես և այս բաներն անում ես, կա՛մ Աստծո որդին կլինես, որ այդ անում ես: Այս պատճառով քեզ գրեցի, աղաչելով, որ նեղություն կրես, գաս ինձ մոտ և բժշկես իմ ունեցած հիվանդությունը: Նաև լսեցի, որ հրեաները քեզանից տրտնջում են և ուզում են քեզ չարչարել: Բայց ես մի փոքր և գեղեցիկ քաղաք ունեմ, երկուսիս էլ բավական է»:

Այս թուղթը տանողները Քրիստոսին պատահեցին Երուսաղեմում: Փրկիչը հանձն չառավ ինքը գնալ այն ժամանակ, երբ Աբգարը կանչում էր, բայց նրան արժանացրեց թղթի, որ հետևյալ բովանդակությունն ուներ.

«Երանի՜ նրան, ով ինձ հավատում է, թեպետ տեսած չլինի, որովհետև իմ մասին այսպես է գրված, թե ովքեր ինձ տեսնում են, ինձ չեն հավատա, իսկ ովքեր չեն տեսնում, կհավատան և կյանք կգտնեն: Դու ինձ գրեցիր, որ գամ քեզ մոտ, բայց ես այստե՛ղ պետք է կատարեմ այն բոլորը, որի համար ուղարկված եմ: Երբ այս բո-

լորը կկատարեմ, կՀամբառնամ նրա մոտ, ով ինձ ուղարկեց, և երբ Համբառնամ, քեզ մոտ կուղարկեմ իմ աշակերտներից մեկին, որ քո ցավերը բժշկի և կյանք շնորհի քեզ և քեզ Հետ եղողներին»:

Հիսուսի խաչվելուց և Համբառնալուց Հետո Հայաստան եկավ նրա տասներկու առաքյալներից մեկը՝ Թադեոսը, որպեսզի Աբգար Թագավորին բժշկի և Ավետարանը քարոզի Տիրոջ ասածի Համաձայն: «Դա այն մարդն է, որի Համար Հիսուսը գրեց», - մտածեց Աբգարը և Թադեոսին կանչեց պալատ: Երբ սա ներս մտավ, նրա երեսի վրա սքանչելի տեսիլք երևաց Աբգարին: Գահից վեր կացավ և երեսի վրա ընկնելով՝ երկրպագեց: Շուրջը գտնվող իշխանները զարմացան, որովհետև Հրաշքը չտեսան: Աբգարը Հարցրեց.

- Իսկապես դու օրՀնյալ Հիսուսի աշակե՞րտն ես, որին խոստացավ այստեղ ուղարկել, և կարո՞ղ ես իմ ցավերը բժշկել:

Թադեոսը նրան պատասխանեց.

- Եթե Հավատաս Հիսուս Քրիստոսին՝ Աստծո Որդուն, քո սրտի բոլոր ցանկացածները կստանաս:

- Ես Հավատացի նրան և նրա Հորը, - ասաց Աբգարը, - ուստի կամենում էի զորքերս առնել և գնալ կոտորել նրան խաչող Հրեաներին, եթե Հռոմեացիների Թագավորությունն այս բանը չարգելեր:

Թադեոս առաքյալը Աբգարին և ամբողջ քաղաքին քարոզեց Ավետարանը: Ձեռքը Թագավորի վրա դնելով՝ նրան բժշկեց, ինչպես և քաղաքի իշխանին ու առՀասարակ բոլոր Հիվանդներին և ախտավորներին: Եվ բոլորը Հավատացին ու մկրտվեցին: Առաջինը՝ ինքը՝ Աբգարը: Կուռքերի մեՀյանների դռները փակեցին և բագինի ու սյունի վրա եղած պատկերները եղեգով պատեցին: Աբգարը ոչ ոքի բռնությամբ չէր դարձնում Հավատի, բայց Հավատացյալների թիվն օր օրի ավելանում էր:

Աբգարի մահից Հետո Հայոց Թագավորությունը բաժանվեց երկու մասի. մեկը կառավարում էր նրա որդի Անանունը, մյուսը՝ քեռորդի Սանատրուկը: Սա ընդունեց քրիստոնեություն, բայց վախենալով նախարարներից՝ Հավատը թողեց: Իսկ Անանունը Հոր առաքինության Հետևորդը չեղավ: Նորից բացեց կուռքերի մեՀյանները և Հեթանոսական պաշտամունքն ընդունեց: Նույնիսկ սպանում էր Քրիստոսին Հավատացողներին:

Իսկ Հեղինեն, որ ամուսնու՝ Աբգարի նման զարդարված էր Հավատով, չՀանդուրժեց կռապաշտների մեջ բնակվել. գնաց Երուսաղեմ և իր բոլոր գանձերը ծախելով՝ մեծ քանակությամբ ցորեն գնեց ու բաժանեց կարոտյալներին: Նրա շիրիմը այժմ էլ գտնվում է Երուսաղեմում:

Թադեոսից Հետո Հայաստան եկավ Բարդուղիմեոս առաքյալը, որ այստեղ էլ կնքեց իր մահկանացուն:

Իսկ քրիստոնեությունը Հալածվեց Թագավորների, նախարարների և քրմերի կողմից: Դեռևս երկուսուկես դար էր պետք, որ Հայաստանը Քրիստոսի վարդապետությունը Հռչակեր պետական կրոն, որը և դարձավ Հայության գոյատևման ամենաՀզոր ազդակը:

Եվ քանի որ քրիստոնեություն առաջինը Հայաստանում քարոզեցին Հիսուսի առաքյալները, այդ պատճառով Հայկական եկեղեցին անվանվեց «Առաքելական»:

ՊԼԱՆ

1. Հայ իշխանների պատմածը Քրիստոսի մասին:
2. Աբգարի և Հեղինեի հավատալը:
3. Աբգարի Թուղթը Փրկչին և վերջինիս պատասխանը:
4. Թադեոսի մուտքը Հայաստան և քարոզիչը:
5. Աբգարի և ժողովրդի մկրտվելը:
6. Դարձյալ կռապաշտություն:
7. Հայ Առաքելական եկեղեցին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

աքանչելագործությունների համբավ, աղաչանքի Թուղթ, մեկան, համբառնալ, կենդանագիր պատկեր, աքանչելի տեսիլք, ախտավոր, կուռքերի մեհյաններ, բագին, առաքելության հետևորդ, հեթանոսության պաշտամունք, մահկանացուն կնքել, Քրիստոսի վարդապետություն, ամենահզոր աղդակ, հրեա.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Երուսաղեմ, Թադեոս, Անանուն, Սանատրուկ, Բարդուղիմեոս:

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

Ըստ Ագաթանգեղոսի

Նվիրվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Հայոց Խոսրով թագավորը դավաճանության մեղադրանքով հրամայեց ոչնչացնել Անակ Պարթևի ազգատոհմը: Սկսեցին սպանել ու կոտորել: Պարթևի որդիներից միայն երկու փոքրիկ մանուկ փրկվեցին. Նրանցից մեկին փախցրին պարսից կողմերը, մյուսին՝ Հունաց: Սա մեծացավ և ուսում ստացավ Կեսարիա քաղաքում: Մի մարդ տեր կանգնելով նրան՝ դաստիարակեց Քրիստոսի երկյուղով, և տղան, ուսանելով քրիստոնեության դպրության հանգամանքները, ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ հավատը: Նրա անունն էր Գրիգոր:

Երբ սա տեղեկացավ իր հոր կատարած գործերի մասին, ելավ ու գնաց Խոսրովի որդի Տրդատին կամավոր ծառայելու: Թաքցրեց իր անձը և հնազանդությամբ ծառայում էր նրան: Հենց որ Տրդատը զգաց, թե Գրիգորը հաղորդակից է քրիստոնեական պաշտամունքին, սկսեց պատուհասել և տեսակ-տեսակ արհավիրքներ պատճառել նրան:

Տանջանքներից, գանահարություններից ու բանտերից, գելարաններից ու կախաղաններից, ամեն խոշտանգումներից հետո, որոնք Գրիգորը մեծ համբերությամբ հանձն առավ մեր տեր Հիսուս Քրիստոսի անվան համար, Տրդատը հրաման տվեց կապել նրա ոտքերը, ձեռքերն ու պարանոցը: Ապա տարան Այրարատ գավառը, իջեցրին Խորվիրապ, որի անդունդից դուրս գալ անհնարին էր:

Գրիգորը Խորվիրապում մնաց տասներեք տարի: Մի այրի կին երազում հրաման

ԹԵՄԱ 1. Հայ իշխանների պատմածը Քրիստոսի մասին:
2. Աբգարի և Հեղինեի հավատալը:
3. Աբգարի Թուղթը Փրկչին և վերջինիս պատասխանը:
4. Թադեոսի մուտքը Հայաստան և քարոզը:
5. Աբգարի և ժողովրդի մկրտվելը:
6. Դարձյալ կռապաշտություն:
7. Հայ Առաքելական եկեղեցին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

աքանչելագործությունների համբավ, աղաչանքի Թուղթ, մեկնել, համբառնալ, կենդանագիր պատկեր, աքանչելի տեսիլք, ախտավոր, կուռքերի մեհյաններ, բագին, առաքելության հետևորդ, հեթանոսության պաշտամունք, ծաղկանացուն կնքել, Քրիստոսի վարդապետություն, ամենահզոր աղաչ, հրեա.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Երուսաղեմ, Թադեոս, Անանուն, Սանատրուկ, Բարդուղիմեոս:

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

Ըստ Ագաթանգեղոսի

Նվիրվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին

Հայոց Խոսրով Թագավորը դավաճանության մեղադրանքով հրամայեց ոչնչացնել Անակ Պարթևի ազգատոհմը: Սկսեցին սպանել ու կոտորել: Պարթևի որդիներից միայն երկու փոքրիկ մանուկ փրկվեցին. նրանցից մեկին փախցրին պարսից կողմերը, մյուսին՝ հունաց: Սա մեծացավ և ուսում ստացավ Կեսարիա քաղաքում: Մի մարդ տեր կանգնելով նրան՝ դաստիարակեց Քրիստոսի երկյուղով, և տղան, ուսանելով քրիստոնեության դպրության հանգամանքները, ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ հավատը: Նրա անունն էր Գրիգոր:

Երբ սա տեղեկացավ իր հոր կատարած գործերի մասին, ելավ ու գնաց Խոսրովի որդի Տրդատին կամավոր ծառայելու: Թաքցրեց իր անձը և հնազանդությամբ ծառայում էր նրան: Հենց որ Տրդատը զգաց, թե Գրիգորը հաղորդակից է քրիստոնեական պաշտամունքին, սկսեց պատուհասել և տեսակ-տեսակ արհավիրքներ պատճառել նրան:

Տանջանքներից, գանահարություններից ու բանտերից, գելարաններից ու կախաղաններից, ամեն խոշտանգումներից հետո, որոնք Գրիգորը մեծ համբերությամբ հանձն առավ մեր տեր Հիսուս Քրիստոսի անվան համար, Տրդատը հրամայեց կապել նրա ոտքերը, ձեռքերն ու պարանոցը: Ապա տարան Այրարատ գավառը, իջեցրին Խորվիրապ, որի անդունդից դուրս գալ անհնարին էր:

Գրիգորը Խորվիրապում մնաց տասներեք տարի: Մի այրի կին երազում հրաման

ստացավ, որ օրական Խոսրովիդուխտ նետի մի նկանակ: Այսպիսով, Աստծո հրամանով Գրիգորը կերակրվեց այնտեղ մնացած տարիներին:

Այդ ժամանակ Հեռավոր Հռոմ քաղաքում գտան կույսերի, որոնք լեռներում մեկուսացած պարկեշտ ու սրբամիտ կյանք էին՝ քրիստոնեական հավատքով լի: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ Հռիփսիմե անունով: Կռապաշտ Դիոկղետիանոս կայսրը տեսավ Հռիփսիմեի կերպարանքի հիասքանչ վայելչությունը և չտապեց հարսանիքի ուրախություն անել: Բայց երանելի Հռիփսիմեն, ընկերուհիների հետ փախուստ տալով, հասավ Վաղարշապատ:

Հունաց աշխարհում լարված որոնում էին կույսերին: Դիոկղետիանոսից դեսպան եկավ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և հրովարտակ մատուցեց նրան: Կայսրը գրում էր. «Փութաջան եղի՛ր, եղբա՛յր մեր, որպեսզի ուր էլ լինեն այդ կողմերում, կարողանաս նրանց հետքը գտնել և վրեժառությամբ մահվան արժանացնել»:

Նույն գիշերը շուտափույթ վրա հասան թագավորի իշխանները, դահճապետը և բռնեցին Հռիփսիմեին: Համդերձները հանեցին, կանթեղներով այրեցին մարմինը, փորեցին աչքերը:

Նահատակվեց սուրբ Հռիփսիմեն երեսուներեք նահատակակից ընկերուհիներով:

Վեց օր տրտմության մեջ էր թագավորը: Այնուհետև որսի ժամ որոշեց: Մինչդեռ կառքի վրա նստած քաղաքից դուրս էր գալիս, իսկույն նրա վրա Տիրոջ պատուհասը հասավ: Մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրի խոզի կերպարանքով մտավ եղեգնուտը և խոտաճարակ դարձավ: Նաև քաղաքի բոլոր մարդիկ նույնօրինակ դիվահար եղած մոլեգնում էին, ու սաստիկ կործանում հասավ երկրին:

Այդ ժամանակ Աստծուց տեսիլ երևաց թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտ: Նա մարդկանց պատմեց տեսիլքը՝ ասելով.

- Այս գիշեր մեկը՝ լույսի նմանությամբ, եկավ պատմեց ինձ, թե ձեզ վրա հասած հարվածներից բժշկություն չի լինի, եթե մարդ չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին: Նա կսովորեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը:

Շուտափույթ ուղարկեցին նախարարներից մեկին: Բերեցին երկայն ու հաստ պարաններ քաշեցին, վեր հանեցին Գրիգորին և խնդությամբ գնացին Վաղարշապատ: Երբ միահամուռ հավաքված էին աղոթավայրում, երանելի Գրիգորը սկսեց խոսել և ասաց.

- Ծո՛ւնր դրեք ամենքդ, որպեսզի Տերը ձեզ բժշկի հարվածներից:

Ամենքը ծունր դրին, և երանելի Գրիգորը մեծ աղոթքով ու պաղատանքով, ուժգին ճգնությամբ ու արտասուքով թագավորի և բոլոր մյուսների համար բժշկություն խնդրեց: Եվ նույն պահին մարդիկ թոթափվեցին ցավերից, իսկ թագավորը, որ խոզի կերպարանքով կանգնած էր ժողովրդի մեջ, հանկարծ դողի մատնվեց, և մարմնի վրայի խոզի մորթը՝ ժանտատեսիլ ժանիքով ու կնճիթաղեղ երեսով, վայր ընկավ: Դեմքն իր իսկական կերպարանքն ստացավ, մարմինը նորածին մանկան նման փափուկ, մատղաշ դարձավ և լրիվ բժշկվեց:

Տեսնելով Տիրոջ սքանչելի արաչագործությունները՝ թագավորը իսկույն տերունքար հրաման տվեց գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախնիների ու իր կողմից «աստված» անվանված նախկին չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից վերացնի: Իսկ երանելին իսկույն սկսեց քարոզել և ամենքին ծանուցեց Քրիստոսի հնազանդ ծառայությունը: Ապա եկավ մեհյանների վայրերը և

տացավ, որ օրական Խորվիրապ նետի մի նկանակ: Այսպիսով, Աստծո Հրամանով Գրիգորը կերակրվեց այնտեղ մնացած տարիներին:

Այդ ժամանակ Հեռավոր Հռոմ քաղաքում կային կույսեր, որոնք լեռներում մեկուսացած պարկեշտ ու սրբամիտ կյանք էին՝ քրիստոնեական Հավատքով լի: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ Հռիփսիմե անունով: Կռապաշտ Դիոկղետիանոս կայսրը տեսավ Հռիփսիմեի կերպարանքի Հիասքանչ վայելչությունը և ցանկացավ Հարսանիքի ուրախություն անել: Բայց երանելի Հռիփսիմեն, ընկերուհիների հետ փախուստ տալով, Հասավ Վաղարշապատ:

Հունաց աշխարհում լսված որոնում էին կույսերին: Դիոկղետիանոսից դեսպան եկավ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և Հրովարտակ մատուցեց նրան: Կայսրը գրում էր. «Փութաջան եղի՛ր, եղբա՛յր մեր, որպեսզի ուր էլ լինեն այդ կողմերում, կարողանաս նրանց Հետքը գտնել և վրիժառությամբ մաՀվան արժանացնել»:

Նույն գիշերը շուտափույթ վրա Հասան Թագավորի իշխանները, դաՀճապետը և բռնեցին Հռիփսիմեին: Հանդերձները Հանեցին, կանթեղներով այրեցին մարմինը, փորեցին աչքերը:

Նահատակվեց սուրբ Հռիփսիմեն երեսուներեք նահատակակից ընկերուհիներով:

Վեց օր տրտմության մեջ էր Թագավորը: Այնուհետև որսի ժամ որոշեց: Մինչդեռ կառքի վրա նստած քաղաքից դուրս էր գալիս, իսկույն նրա վրա Տիրոջ պատուհաս Հասավ: Մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրի խոզի կերպարանքով մտավ եղեգնուտը և խոտաճարակ դարձավ: Նաև քաղաքի բոլոր մարդիկ նույնօրինակ դիվահար եղած մոլեգնում էին, ու սաստիկ կործանում Հասավ երկրին:

Այդ ժամանակ Աստծուց տեսիլ երևաց Թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտ: Նա մարդկանց պատմեց տեսիլքը՝ ասելով.

- Այս գիշեր մեկը՝ լույսի նմանությամբ, եկավ պատմեց ինձ, թե ձեզ վրա Հասած Հարվածներից բժշկություն չի լինի, եթե մարդ չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին: Նա կսովորեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը:

Շուտափույթ ուղարկեցին նախարարներից մեկին: Բերեցին երկայն ու Հաստ պարաններ քաշեցին, վեր Հանեցին Գրիգորին և խնդությամբ գնացին Վաղարշապատ: Երբ միաՀամուռ Հավաքված էին աղոթավայրում, երանելի Գրիգորը սկսեց խոսել և ասաց.

- Ծունր դրեք ամենքդ, որպեսզի Տերը ձեզ բժշկի Հարվածներից:

Ամենքը ծունր դրին, և երանելի Գրիգորը մեծ աղոթքով ու պաղատանքով, ուժգին ճգնությամբ ու արտասուքով Թագավորի և բոլոր մյուսների Համար բժշկություն խնդրեց: Եվ նույն պաՀին մարդիկ Թոթափվեցին ցավերից, իսկ Թագավորը, որ խոզի կերպարանքով կանգնած էր ժողովրդի մեջ, Հանկարծ դողի մատնվեց, և մարմնի վրայի խոզի մորթը՝ ժանտատեսիլ ժանիքով ու կնճիթավոր երեսով, վայր ընկավ: Դեմքն իր իսկական կերպարանքն ստացավ, մարմինը նորածին մանկան նման փափուկ, մաքուր դարձավ և լրիվ բժշկվեց:

Տեսնելով Տիրոջ սքանչելի արարչագործությունները՝ Թագավորը իսկույն տիրաբար Հրաման տվեց գործը երանելի Գրիգորի ձեռքը Հանձնելու, որպեսզի նախնիների ու իր կողմից «աստված» անվանված նախկին չաստվածները անՀիշատակ դարձնի, մեջտեղից վերացնի: Իսկ երանելին իսկույն սկսեց քանդել և ամենքին մոտեցրեց Քրիստոսի Հնազանդ ծառայությանը: Այս եղավ մեհյանների ավերը և

ստացավ, որ օրական Խորվիրապ նետի մի նկանակ: Այսպիսով, Աստծո հրամանով Գրիգորը կերակրվեց այնտեղ մնացած տարիներին:

Այդ ժամանակ Հեռավոր Հռոմ քաղաքում գտան կույսեր, որոնք լեռներում մեկուսացած պարկեշտ ու սրբամվեր կանայք էին՝ քրիստոնեական հավատքով լի: Նրանց գլխավորի անունն էր Գայանե, որն ուներ մի սան՝ Հռիփսիմե անունով: Կռապաշտ Դիոկղետիանոս կայսրը տեսավ Հռիփսիմեի կերպարանքի հիասքանչ վայելչությունը և շտապեց հարսանիքի ուրախություն անել: Բայց երանելի Հռիփսիմեն, ընկերուհիների հետ փախուստ տալով, հասավ Վաղարշապատ:

Հունաց աշխարհում լարված որոնում էին կույսերին: Դիոկղետիանոսից դեսպան եկավ Մեծ Հայքի Տրդատ արքայի մոտ և հրովարտակ մատուցեց նրան: Կայսրը գրում էր, «Փութաջան եղի՛ր, եղբա՛յր մեր, որպեսզի ուր էլ լինեն այդ կողմերում, կարողանաս նրանց հետքը գտնել և վրիժառությամբ մահվան արժանացնել»:

Նույն գիշերը շուտափույթ վրա հասան թագավորի իշխանները, դահճապետը և բռնեցին Հռիփսիմեին: Հանդերձները հանեցին, կանթեղներով այրեցին մարմինը, փորեցին աչքերը:

Նահատակվեց սուրբ Հռիփսիմեն երեսուներեք նահատակակից ընկերուհիներով:

Վեց օր տրտմության մեջ էր թագավորը: Այնուհետև որսի ժամ որոշեց: Մինչդեռ կառքի վրա նստած քաղաքից դուրս էր գալիս, իսկույն նրա վրա Տիրոջ պատուհասը հասավ: Մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրի խոզի կերպարանքով մտավ եղեգնուտը և խոտաճարակ դարձավ: Նաև քաղաքի բոլոր մարդիկ նույնօրինակ դիվահար եղած մոլեգնում էին, ու սաստիկ կործանում հասավ երկրին:

Այդ ժամանակ Աստծուց տեսիլ երևաց թագավորի քրոջը, որի անունն էր Խոսրովիդուխտ: Նա մարդկանց պատմեց տեսիլքը՝ ասելով.

- Այս գիշեր մեկը՝ լույսի նմանությամբ, եկավ պատմեց ինձ, թե ձեզ վրա հասած հարվածներից բժշկություն չի լինի, եթե մարդ չուղարկեք Արտաշատ քաղաքը՝ այնտեղից բերելու կապյալ Գրիգորին: Նա կսովորեցնի ձեզ ցավերից բուժվելու դեղը:

Շուտափույթ ուղարկեցին նախարարներից մեկին: Բերեցին երկայն ու հաստ պարաններ քաշեցին, վեր հանեցին Գրիգորին և խնդությամբ գնացին Վաղարշապատ: Երբ միահամուռ հավաքված էին աղոթավայրում, երանելի Գրիգորը սկսեց խոսել և ասաց.

- Ծո՛ւնր դրեք ամենքդ, որպեսզի Տերը ձեզ բժշկի հարվածներից:

Ամենքը ծունր դրին, և երանելի Գրիգորը մեծ աղոթքով ու պաղատանքով, ուժգին ճգնությամբ ու արտասուքով թագավորի և բոլոր մյուսների համար բժշկություն խնդրեց: Եվ նույն պահին մարդիկ թոթափվեցին ցավերից, իսկ թագավորը, որ խոզի կերպարանքով կանգնած էր ժողովրդի մեջ, հանկարծ դողի մատնվեց, և մարմնի վրայի խոզի մորթը՝ ժանտատեսիլ ժանիքով ու կնճիթաղեմ երեսով, վայր ընկավ: Դեմքն իր իսկական կերպարանքն ստացավ, մարմինը նորածին մանկան նման փափուկ, մատղաշ դարձավ և լրիվ բժշկվեց:

Տեսնելով Տիրոջ սքանչելի արարչագործությունները՝ թագավորը իսկույն տերաբար հրաման տվեց գործը երանելի Գրիգորի ձեռքը հանձնելու, որպեսզի նախնիների ու իր կողմից «աստված» անվանված նախկին չաստվածները անհիշատակ դարձնի, մեջտեղից վերացնի: Իսկ երանելին իսկույն սկսեց քարոզել և ամենքին մոտեցրեց Քրիստոսի հնազանդ ծառայությամբ: Ապա եկավ մեհյանների վայրերը և

այնտեղ եկեղեցու հիմքեր դրեց ու Քրիստոսի փառքի սեղան կանգնեցրեց: Հետո առավ աշխարհաքանակ զորքը, իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին ու տարավ Եփրատ գետի ափը և այնտեղ մկրտեց ամենքին հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու:

Իսկ բարեպաշտ Տրդատ թագավորը ուխտ դրեց ամեն մարդու վրա, որ նրանք հաստատապես, անխորշ ու անխեթ, առանց երկմտության և ամբողջ սրտով հնազանդվեն աստվածահրաման պատվիրաններին, հավատան Հիսուս Քրիստոսին, փառավորեն այժմ և անվախճան հավիտենականության մեջ. ամեն և եղիցի, եղիցի:

ՊԼԱՆ

1. Անակ Պարթևի ազգատոհմի բնաջնջումը Խոսրով թագավորի կողմից:
2. Երկու մանուկների փրկվելը:
3. Քրիստոնեական՝ դաստիարակություն ստացած Գրիգորի վարքը:
4. Կռապաշտ Տրդատի վերաբերմունքը Գրիգորի նկատմամբ:
5. Հռիփսիմեի և մյուս բարեպաշտ կույսերի պատմությունը:
6. Տրդատի պատժվելը Տիրոջ կողմից:
7. Խոսրովիդուխտին հայտնված տեսիլը:
8. Տրդատի և ողջ երկրի դարձի գալը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Բացատրել **նկանակ** բառի իմաստը:

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ

Ըստ Րաֆֆու

(անավարտ փոխադրություն)

Աթենքի փիլիսոփայության և ճարտասանության ամբիոնի վարիչ մեծահռչակ հռետոր Պրոերեսիոսը հրապարակային հանդիսավոր ատյանում ատենախոսում էր բազմահազար ունկնդիրների առջև: Ատենախոսությունը այն աստիճան սքանչելի և իմաստալից էր, որ ներկաները, հափշտակված նրա ազդու պերճախոսությամբ, ոգևորված բացականչություններով ու ծափահարություններով թնդացնում էին ամֆիթատրոնի կամարները:

Նահանգապետն իր սեփական կառքով, զինվորական երաժշտությամբ և փառահեղ մեծարանքներով Պրոերեսիոսին տարավ մինչև տուն:

Նույն պահին, երբ Աթենքի փողոցները որոտում էին «կեցցեներից», և հուզված ամբոխը ուղեկցում էր կառքին, մի օտարական էր դեգերում հռետորի տան շուրջը: Նա ցանկանում էր, ինչ գնով էլ լինի, հանդիպել Պրոերեսիոսին: Դա նրան հաջողվեց միայն երկու օր անց:

- Ես առանձին խոսելիք ունեմ քեզ հետ: Այստեղ մեզ չե՞ն խանգարի:
- Բայց նախ պետք է իմանամ, թե ով եք դուք:

այնտեղ եկեղեցու հիմքեր դրեց ու Քրիստոսի փառքի սեղան կանգնեցրեց: Հետո առավ աշխարհաբանակ զորքը, իրեն՝ թագավորին, նրա տիկին Աշխենին, մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, ամենայն մեծամեծներին ու տարավ Եփրատ գետի ափը և այնտեղ մկրտեց ամենքին հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու:

Իսկ բարեպաշտ Տրդատ թագավորը ուխտ դրեց ամեն մարդու վրա, որ նրանք հաստատապես, անխորշ ու անխեթ, առանց երկմտության և ամբողջ սրտով հնազանդվեն աստվածահրաման պատվիրաններին, հավատան Հիսուս Քրիստոսին, փառավորեն այժմ և անվախճան հավիտենականության մեջ. ամեն և եղիցի, եղիցի:

ՊԼԱՆ

1. Անակ Պարթևի ազգատոհմի բնաջնջումը Խոսրով թագավորի կողմից:
2. Երկու մանուկների փրկվելը:
3. Քրիստոնեական՝ դաստիարակություն ստացած Գրիգորի վարքը:
4. Կռապաշտ Տրդատի վերաբերմունքը Գրիգորի նկատմամբ:
5. Հռիփսիմեի և մյուս բարեպաշտ կույսերի պատմությունը:
6. Տրդատի պատժվելը Տիրոջ կողմից:
7. Խոսրովիդուխտին հայտնված տեսիլը:
8. Տրդատի և ողջ երկրի դարձի գալը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Բացատրել **նկանակ** բառի իմաստը:

ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅԿԱԶՆ

Ըստ Րաֆֆու

(անավարտ փոխադրություն)

Աթենքի փիլիսոփայության և ճարտասանության ամբիոնի վարիչ մեծահռչակ հռետոր Պրոերեսիոսը հրապարակային հանդիսավոր ատյանում ատենախոսում էր բազմահազար ունկնդիրների առջև: Ատենախոսությունը այն աստիճան սքանչելի և իմաստալից էր, որ ներկաները, հափշտակված նրա ազդու պերճախոսությամբ, ոգևորված բացականչություններով ու ծափահարություններով թնդացնում էին ամֆիթատրոնի կամարները:

Նահանգապետն իր սեփական կառքով, զինվորական երաժշտությամբ և փառահեղ մեծարանքներով Պրոերեսիոսին տարավ մինչև տուն:

Նույն պահին, երբ Աթենքի փողոցները որոտում էին «կեցցեններից», և հուզված ամբոխը ուղեկցում էր կառքին, մի օտարական էր գեգերում հռետորի տան շուրջը: Նա ցանկանում էր, ինչ գնով էլ լինի, հանդիպել Պրոերեսիոսին: Դա նրան հաջողվեց միայն երկու օր անց:

- Ես առանձին խոսելիք ունեմ քեզ հետ: Այստեղ մեզ չե՞ն խանգարի:
- Բայց նախ պետք է իմանամ, թե ով եք դուք:

- Մովսես Խորենացին: Հայաստանից:

- Ես ձեր մասին լսել եմ, - գոչեց Հռետորը և քաղաքավարությամբ աթոռ առաջարկեց:

- Հայրենիքից վատ լուրեր ստացա և նախքան մեկնելս որոշեցի հանդիպել քեզ: Արքայական գահը և Հայրապետական աթոռը թափուր են մնացել: Մեր Հայրենիքը մահվան տագնապի մեջ է գտնվում, պետք է օգնության հասնել:

- Ինչպե՞ս: Գնում եք կռվելու՞ պարսիկների դեմ, - սառնությամբ հարցրեց Հռետորը: - Գնացե՛ք, գովում եմ ձեր եռանդը:

Խորենացին զայրացավ:

- Պարո՛ւյր, - գոչեց նա վրդովմունքով, - քո մեջ սառել է հայկական արյունը, դու մեր Հայրենիքի համար կորած մարդ ես: Քեզ պատմում եմ մեր երկրի թշվառ վիճակի մասին, իսկ դու լսում ես սառնությամբ: Մի՛ մոռացիր, որ դու այն երիտասարդներից մեկն ես, որոնք գիտության առաքելությամբ թողեցին Հայրենիքը, ուսուցիչ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի առջև՝ գնալ, աշխարհեաշխարհ պտտել և գիտության պաշար հավաքելով՝ վերադառնալ, Հայրենիքը լուսավորել: Այդպես վարվեցին Դավիթ Անհաղթը, Եզնիկը, Ղևոնդ Երեցը, Կորյունը: Այդպես պիտի վարվես նաև դու: Ես եկա քեզ մոտ, որ միասին մեկնենք մեր երկիրը: Գնա՛նք գիտություն և լուսավորություն տարածենք մեր աշխարհում: Դու այնպիսի զորեղ հանճար ունես, որ մնալով այստեղ՝ հավատացած եմ, ավելի ևս կբարձրանաս և դուցե առաջինը կլինես ժամանակի փիլիսոփաների մեջ: Բայց դրանից ի՞նչ օգուտ մեր հայրենիքին:

- Դրանից կօգտվի մարդկությունը, - պատասխանեց Հռետորը, - իմ Հայրենիքը ամբողջ աշխարհն է, իսկ հայրենակիցներս՝ ամբողջ մարդկությունը:

- Գիտության սերը և համամարդկային լուսավորություն տարածելու գաղափարը չէ, որ կապում են քեզ Աթենքի հետ, այլ սին փառքը: Ահա՛ այն մագաղաթի կտորը, որով կայսրը քեզ հրավիրում է իր մոտ: Մյուս կողմից անբախտ Հայրենիքն իր բերանով կանչում է քեզ: Դու մերժում ես նրա ձայնը, ուրեմն անարժան ես Հայաստանի զավակ կոչվելու:

Հռոմ: Կոստանդ կայսրի շքեղ արքունիքում ազատ ելումուտ ունի պատկառելի դեմքով մի բարձրահասակ մարդ: Նա ո՛չ երկրի կուսակալ է, ո՛չ մեծահռչակ զորավար: Պարզ, անշուք հագուստով մեկն է, որի առաջ, սակայն, ակնածանքով խոնարհվում է ողջ պալատը:

Այդ մարդը հյուր էր Հռոմում և կայսրի պալատը կենդանացնում էր իր իմաստուն պերճախոսությամբ, հռետորական ճառերով միտք ու հոգի տալիս քաղաքների թագուհուն:

Համարյա միևնույն օրերին, երբ Հռետորն ստացավ այդ մեծ պատիվը, նրան ներկայացան Հայոց Հայրապետ Վրթանեսի պատգամաբերները և Հանձնեցին վերջինիս նամակը: «Քո մի խոսքը, - գրված էր նամակում, - բավական է Հայրենիքը օրհասական վիճակից ազատելու համար: Ի սեր ազգի, ի սեր Հայրենիքի բարեխոսի՛ր կայսրի մոտ, հիշեցրու՛ նրան մեր փոխադարձ օգնության դաշնագրությունը և նրա օգնությունը խնդրի՛ր՝ Տրդատի որդի Խոսրովին հոր տեղը թագավոր դնելու: Դրանով դու կատարած կլինես քո սուրբ պարտականությունը դեպի Հայրենիքը և դեպի այն ազգը, որ մեծ պատիվ է համարում քեզ իր որդին կոչելու»:

Նամակը կարդալուց հետո ոչ մի մկան չշարժվեց Հռետորի սառը դեմքի վրա:

- Ես վստահաբար կխոսեի կայսրի հետ, - ասաց նա, - եթե Հռոմեացի լինեի: Բայց Հայ լինելս իմ լեզուն կաշկանդում է: Չեմ ցանկանում նրան դնել դժվարին կացության մեջ, թեև հաստատ գիտեմ՝ ինչ որ խնդրելու լինեմ, չի մերժի: Ինձ թույլ չեմ տա չարաշահել կայսրի՝ իմ նկատմամբ ունեցած սերն ու հավատը:

Հայ պատգամավորները ձեռնունայն հեռացան:

Մյուս օրը Պարույր Հայկազնը պետք է թողներ Հռոմը: Հրաժեշտից առաջ կայսրը ասաց նրան.

- Խնդրի՛ր ինձանից ինչ կկամենաս: Ես պատրաստ եմ կատարել:

Հռետորը համեստաբար հրաժարվեց: Երբ կայսրը երկար թախանձեց, նա ասաց.

ՈՒՍՈՒՑԻՉԻՆ՝ Րաֆֆու սույն պատմվածքի ավարտը թողնում ենք աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Իսկ պատմվածքն ավարտվում է այսպես.

- Աթենքը՝ իմաստության այդ քաղաքն է ինձ պարգևել հոգևոր սնունդ: Ես պարտական եմ նրան: Կցանկանայի քաղաք մտնող բոլոր ուտելիքները՝ ալյուր, ցորեն և այլ պաշարներ, ազատ լինեն մաքսից, որ դյուրանա աթենացոց մարմնական սննդի հարցը:

- Թող լինի այնպես, ինչպես կամենում ես, - պատասխանեց կայսրը:

Պարույր Հայկազնը վերադարձավ Աթենք: Ապրեց մինչև խոր ծերություն և մեռավ 95 տարեկան հասակում: Իր երկար ու ձիգ կյանքը նա ապրեց անարատ առաքինությամբ, թույլ չտվեց որևէ անազնիվ արարք, չշողոքորթեց աշխարհի հզորներին: Հունաց գրքերի մեջ նա փառավոր անուն թողեց, իսկ Հռոմը արձանը կանգնեցրեց: Բայց հայ մատենագիրներից ոչ մեկը չխոսեց նրա մասին: Նա ապրեց, գործեց գիտության և իմաստության համար, բայց հայրենիքի համար կորած մարդ էր…

Ժամանակի հետ նրա անվան փայլը խամրեց և անհետացավ: Սակայն եթե իր հայրենիքում գործեր, եզակի կլիներ, և հիշատակը չէր մոռացվի հավիտյան…

ՊԼԱՆ		
	1. Հրապարակային ատենախոսություն:	6. Հռոմում:
	2. Խորենացին Պարույր Հայկազնի տանը:	7. Պատվո արձան:
	3. Հայրենիքի օրհասական վիճակը:	8. Նամակ վեհափառից:
	4. Հայ երիտասարդների պարտքը:	9. Հայրենիքի համար կորած մարդը:
	5. Մերժում:	

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հրապարակային հանդիսավոր ատյան, ատենախոսություն, ազդու պերճախոսություն, ոգևորված բացականչություններ ու ծափահարություններ, փառահեղ մեծարանքներ, արքայական դահ և հայրապետական աթոռ, ուխտել, զորեղ հանճար, ձեռնունայն, անարատ առաքինություն, տոկուն և եռանդուն աշխատասիրություն:

Նամակը կարդալուց հետո ոչ մի մկան չշարժվեց Հռետորի սառը դեմքի վրա:

- Ես փառահարար կխոսեի կայսրի հետ, - ասաց նա, - եթե հռոմեացի լինեի: Բայց հայ լինելս իմ լեզուն կաշկանդում է: Չեմ ցանկանում նրան դնել դժվարին կացության մեջ, թեև հաստատ գիտեմ՝ ինչ որ խնդրելու լինեմ, չի մերժի: Ինձ թույլ չեմ տա չարաշահել կայսրի՝ իմ նկատմամբ ունեցած սերն ու հավատը:

Հայ պատգամավորները ձեռնունայն հեռացան:

Մյուս օրը Պարույր Հայկազնը պետք է թողներ Հռոմը: Հրաժեշտից առաջ կայսրը ասաց նրան.

- Խնդրի՛ր ինձանից ինչ կկամենաս: Ես պատրաստ եմ կատարել:

Հռետորը համեստաբար հրաժարվեց: Երբ կայսրը երկար թախանձեց, նա ասաց.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Րաֆֆու սույն պատմվածքի ավարտը թողնում ենք աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Իսկ պատմվածքն ավարտվում է այսպես.

- Աթենքը՝ իմաստության այդ քաղաքն է ինձ պարգևել հոգևոր սնունդ: Ես պարտական եմ նրան: Կցանկանայի քաղաք մտնող բոլոր ուտելիքները՝ ալյուր, ցորեն և այլ պաշարներ, ազատ լինեն մաքսից, որ դյուրանա աթենացոց մարմնական սննդի հարցը:

- Թող լինի այնպես, ինչպես կամենում ես, - պատասխանեց կայսրը:

Պարույր Հայկազնը վերադարձավ Աթենք: Ապրեց մինչև խոր ծերություն և մեռավ 95 տարեկան հասակում: Իր երկար ու ձիգ կյանքը նա ապրեց անարատ առաքինությամբ, թույլ չտվեց որևէ անազնիվ արարք, չշողոքորթեց աշխարհի հզորներին: Հունաց գրքերի մեջ նա փառավոր անուն թողեց, իսկ Հռոմը արձանը կանգնեցրեց: Բայց հայ մատենագիրներից ոչ մեկը չխոսեց նրա մասին: Նա ապրեց, գործեց գիտության և իմաստության համար, բայց Հայրենիքի համար կորած մարդ էր...

Ժամանակի հետ նրա անվան փայլը խամրեց և անհետացավ: Սակայն եթե իր Հայրենիքում գործեր, եզակի կլիներ, և հիշատակը չէր մոռացվի հավիտյան...

ՊԼԱՆ

1. Հրապարակային ատենախոսություն:
2. Խորենացին Պարույր Հայկազնի տանը:
3. Հայրենիքի օրհասական վիճակը:
4. Հայ երիտասարդների պարտքը:
5. Մերժում:
6. Հռոմում:
7. Պատվո արձան:
8. Նամակ վեհափառից:
9. Հայրենիքի համար կորած մարդը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հրապարակային հանդիսավոր ատյան, ատենախոսություն, ազդու պերճախոսություն, ոգևորված բացականչություններ ու ծափահարություններ, փառահեղ մեծարանքներ, արքայական գահ և հայրապետական աթոռ, ուխտել, զորեղ հանճար, ձեռնունայն, անարատ առաքինություն, տոկուն և եռանդուն աշխատասիրություն:

ԱՆՄԱՀ ՑԻՇԱՏԱԿ ԹՈՂՈՒԼ ՁԱՅՍ ՔԵԶ...

Ըստ Կարեն Մուսայելյանի

Օգոստոսյան շոգ կեսօր էր: Արեգակի կիզիչ ճառագայթները սփռվել էին խաղողի անծայր դաշտերի վրա՝ ասես ցանկանալով իրենց կենսատու ջերմությունը միանգամից ներարկել հյութեղ ողկույզների մեջ: Նազով բուրում էին արծաթավարս փշատենին, թավշյա սերկևլենին:

Օրվա այդ տոթ պահին ոչ ոք չէր երևում Հուռթի մշակույթններում: Համատարած լռության մեջ լսվում էին միայն ժրաջան մեղուների բզզոցը և մոտակա առվակի զվարթ կարկաչյունը:

Բայց ահա տալից ճաքճքած ճանապարհին երևաց մի երիտասարդ: Փոշոտ հագուստներն ու հոգնատանջ դեմքը ցույց էին տալիս, որ երկար ճանապարհ է կտրել: «Օչականը երևաց», - մրմնջաց նա ու արագացրեց քայլերը: Անցնելով գյուղամիջով՝ հասավ մի փոքրիկ մատուռի, սրտի դողով ներս մտավ և կարոտով փլվեց համեստ տապանաքարի վրա: Երիտասարդի ուսերը ցնցվում էին: Նա բարձրաձայն հեկեկում էր՝ ձեռքերով գրկած պաղ քարը: «Ինչպե՞ս դիմանամ այս ցավին, - շշընջում էր նա, և տաք արտասուքները այրում էին այտերը: - Ինչպե՞ս ամրապնդեմ միտքս ու լեզուս և պարտքս հատուցանեմ ուսուցչիս: Մինչ սպասում էր մեր դարձին, որ փառավորվի իմ ամենիմաստ արվեստով և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ, Բյուզանդիայից շտապ վերադառնալով, հույս ունեինք հարսանիքներում պարել և առագաստի երգեր երգել, այժմ այդ ուրախության փոխարեն գերեզմանի վրա ողբեր եմ ասում՝ ողորմելի հառաչելով...»:

Դեռ երկար կմնար թանկագին շիրմի առաջ չոքած, եթե գյուղից լսվող երեկոյան ժամերգությունը չհիշեցներ, որ հետ դառնալու ժամանակն է: Մատուռից դուրս եկավ գլխիկոր և ուղղվեց դեպի փոշոտ ճանապարհը: Ոչ ոք չիմացավ՝ ով է նա, որտեղից եկավ և ուր գնաց...

Անցան տարիներ:

Էջմիածնի գրատանը մագաղաթյա մատյանների վրա հակված՝ նստել էր մի փառահեղ ծերունի: Նա անծանոթ չէր գրատան գանձերին, դրանք կարդացել էր վաղուց՝ դեռ պատանի հասակում: Շատ բան էր սովորել Ալեքսանդրիայում: Հայոց անցյալի ու նախնիների գործերի մասին իր իմացածը հաստատցրել և որոշել էր երբևէ գրել Հայաստանի պատմությունը:

Ինքը դեռ աշակերտ էր, երբ Հայոց թագի վրա սև ամպեր կուտակվեցին. կործանվեց հինգուկես դար առաջ հիմնադրված Հայ Արշակունիների թագավորությունը: Սահակ Պարթև կաթողիկոսն էլ զրկվեց հայրապետական գահից, և Լուսավորչի աթոռը անցավ օտարներին: Լուսավորության այդ պայծառ ջահակիրը և Ուսուցչապետ Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատի կենտրոնական դպրանոցի պատանիների մեջ սերմանում էին գիտությունների առաջին սաղմերը: Ինքն էլ սովորեց նրանց ձեռքի տակ, սիրվեց և դարձավ Ուսուցիչների հոգեզավակը: Այնուհետև թողեց գահավորյակ երկիրը, գնաց հեռու վայրերից լույս բերելու, որ անմահ պահի պաշտելի Ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի վառած կանթեղը:

Աքսորավայրում 7-8 տարի ապրելուց հետո, ինչպես ինքը կասեր՝ «պես-պես գիտելիքներով» վերադարձավ Հայրենիք: Եկավ, որ նորոգի գիտության հանգած ճրագը և հալածի խավարը:

Ինչե՞ր էին կատարվել Հայրենիքում այդ ընթացքում: Ամենացավալին այն էր, որ վախճանվել էին սիրելի ուսուցիչները: Սառն ընդունելություն, նախանձ, բամբասանք: Պարսկական կողմնորոշում ունեցող հոգևորականները խոչընդոտում էին հունական քաղաքակրթության տարածմանը, հալածում օտար երկրներում կրթված առաջադեմ երիտասարդներին, որոնցից մեկն էլ ինքն էր: Հետապնդում, անօթևան կյանք, դեգերումներ: Այսպես՝ երեսուն տարի:

Բայց նա չէր հրաժարվում գրական ու գիտական աշխատանքից: Կատարում էր թարգմանություններ, հորինում շարականներ: Ապրում էր մեկուսի, Վաղարշապատի գյուղերից մեկում աշխատում որպես ջրաղացպան:

Օտարական ծերունին թեև աշխատեցնում էր ծորի ջրաղացը, բայց մեծ հեղինակություն ուներ շրջակա գյուղերում: Նրանից դասեր էին առնում ուսումնատենչ պատանիները:

Եվ հանկարծ պատահականությունը այդ գյուղ է տանում Գյուտ կաթողիկոսին: Նրա պատվին ճաշկերույթ են տալիս, հրավիրում նաև օտարական ծերունուն: Վերջինս դեռ մանկությունից գիտեր Գյուտին, նրա հետ կապված էր անմոռաց հիշողություններով: Ու երբ ծերունուն խնդրում են արտասանել իր շարականներից, նա դրա փոխարեն հանդես է գալիս քերթողական ճառով, որի իմաստալից բովանդակությունը ապշեցնում է կաթողիկոսին: «Ո՞վ է արդյոք այս իմաստուն մարդը և ինչ գործ ունի այս խուլ վայրերում, - մտածում է վեհափառը: - Դիմագծերը շատ ծանոթ են, որտեղ եմ արդյոք տեսել»:

Աշակերտները ներկայացնում են իրենց ուսուցչին, ու կաթողիկոսը հիշում է: Ոգևորված երբեմնի ընկերոջ խոր գիտելիքներով, լայն աշխարհայացքով՝ Գյուտ կաթողիկոսը նրան տանում է Վաղարշապատ ու ձեռնադրում Բագրևանդ և Արշարունյաց գավառների եպիսկոպոս:

Անհայտությունից ելած ծերունու փառքը շուտով տարածվում է Հայաստանով մեկ: Իսկ երբ նրա համբավը հասնում է Սահակ Բագրատունի իշխանին՝ հայրենասեր մի անձնավորության, նա այցելում է ծեր եպիսկոպոսին:

- Ժողովրդական բանավոր զրույցներից գիտեմ՝ ինչ ծագում ունի մեր ազգը: Գիտեմ, որ մեր նախահայրերը եղել են Բաբելոնի աշտարակաշինության դեպքերի ժամանակակիցները: Դա մեզ իրավունք է տալիս դասվելու հնագույն ազգերի շարքը: Գրի՛ր մեր նախնիների պատմությունը: Հայկի, Արամի, Տիգրանների, Վաղարշակի, Արտաշեսի և այլոց քաջության, հայրենասիրության օրինակով ոգևորի՛ր մեզ և սերունդներին:

Այսպես խոսեց իշխանը և հեռացավ ծերունուց:

- Սա իմ ճաշակին ու ախորժելի է և մանավանդ՝ իմ սովորություններին: Ուրախությամբ ընդունելով քո խնդիրքը, սիրով կաշխատեմ կատարել, - պատասխանեց ծերունին: - Հենց այն, որ դու չես բավարարվում միայն Բագրատունյաց տոհմի պատմությամբ, արդեն ասում է, որ վեր ես նեղ անձնական խնդիրներից և ապրում ես համայն ազգի հոգսերով: Սակայն գործ է ասածդ, որովհետև իմ ձեռքի տակ մատյաններ չկան: Բայց և այնպես կսկսեմ անմահ հիշատակ թողնելով քեզ և

Ալեքսանդրիայում 7-8 տարի սովորելուց հետո, ինչպես ինքը կասեր՝ «պես-պես գիտելիքներով» վերադարձավ հայրենիք: Եկավ, որ նորոգի գիտության համգած ճրագը և հալածի խավարը:

Ինչե՞ր էին կատարվել հայրենիքում այդ ընթացքում: Ամենացավալին այն էր, որ վախճանվել էին սիրելի ուսուցիչները: Սառն ընդունելություն, նախանձ, բամբասանք: Պարսկական կողմնորոշում ունեցող հոգևորականները խոչընդոտում էին հունական քաղաքակրթության տարածմանը, հալածում օտար երկրներում կրթված առաջադեմ երիտասարդներին, որոնցից մեկն էլ ինքն էր: Հետագայում, անօթևան կյանք, դեգերումներ: Այսպես՝ երեսուն տարի:

Բայց նա չէր հրաժարվում գրական ու գիտական աշխատանքից: Կատարում էր թարգմանություններ, հորինում շարականներ: Ապրում էր մեկուսի, Վաղարշապատի գյուղերից մեկում աշխատում որպես ջրաղացպան:

Օտարական ծերունին թեև աշխատեցնում էր ձորի ջրաղացը, բայց մեծ հեղինակություն ուներ շրջակա գյուղերում: Նրանից դասեր էին առնում ուսումնատենչ պատանիները:

Եվ հանկարծ պատահականությունը այդ գյուղ է տանում Գյուտ կաթողիկոսին: Նրա պատվին ճաշկերույթ են տալիս, հրավիրում նաև օտարական ծերունուն: Վերջինս դեռ մանկությունից գիտեր Գյուտին, նրա հետ կապված էր անմոռաց հիշողություններով: Ու երբ ծերունուն խնդրում են արտասանել իր շարականներից, նա դրա փոխարեն հանդես է գալիս քերթողական ճառով, որի իմաստալից բովանդակությունը ապշեցնում է կաթողիկոսին: «Ո՞վ է արդյոք այս իմաստուն մարդը և ի՞նչ գործ ունի այս խուլ վայրերում, - մտածում է վեհափառը: - Դիմագծերը շատ ծանոթ են, որտեղ եմ արդյոք տեսել»:

Աշակերտները ներկայացնում են իրենց ուսուցչին, ու կաթողիկոսը հիշում է: Ոգևորված երբեմնի ընկերոջ խոր գիտելիքներով, լայն աշխարհայացքով՝ Գյուտ կաթողիկոսը նրան տանում է Վաղարշապատ ու ձեռնադրում Բագրևանդ և Արշարունյաց գավառների եպիսկոպոս:

Անհայտությունից ելած ծերունու փառքը շուտով տարածվում է Հայաստանով մեկ: Իսկ երբ նրա համբավը հասնում է Սահակ Բագրատունի իշխանին՝ հայրենասեր մի անձնավորության, նա այցելում է ծեր եպիսկոպոսին:

- Ժողովրդական բանավոր զրույցներից գիտեմ՝ ինչ ծագում ունի մեր ազգը: Գիտեմ, որ մեր նախահայրերը եղել են Բաբելոնի աշտարակաշինության դեպքերի ժամանակակիցները: Դա մեզ իրավունք է տալիս դասվելու հնագույն ազգերի շարքը: Գրի՛ր մեր նախնիների պատմությունը: Հայկի, Արամի, Տիգրանների, Վաղարշակի, Արտաշեսի և այլոց քաջության, հայրենասիրության օրինակով ոգևորի՛ր մեզ և սերունդներին:

Այսպես խոսեց իշխանը և հեռացավ ծերունուց:

- Սա իմ ճաշակին էլ ախորժելի է և մանավանդ՝ իմ սովորություններին: Ուստի, ուրախությամբ ընդունելով քո խնդիրքը, սիրով կաշխատեմ կատարել, - պատասխանեց ծերունին: - Հենց այն, որ դու չես բավարարվում միայն Բագրատունյաց տոհմի պատմությամբ, արդեն ասում է, որ վեր ես նեղ անձնական խնդիրներից և ապրում ես համայն ազգի հոգսերով: Ծանր գործ է ասածդ, որովհետև իմ ձեռքի տակ մատյաններ չկան: Բայց և այնպես կսկսեմ՝ անմահ հիշատակ թողնելով քեզ և

հաջորդ սերունդներին, միայն թե մարդիկ շնորհակալ լինեն իմ կրած նեղությունների համար:

Որքա՜ն պատմական աղբյուրներ ուսումնասիրեց ծեր եպիսկոպոսը, որքա՜ն նյութեր հավաքեց: Եվ մի օր, երբ իրեն պատրաստ զգաց, վերցրեց Սահակ Բագրատունու ուղարկած ընտիր մագաղաթներից մեկը, խնամքով ամրացրեց գրակալին և հատ-հատ գրեց. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: Հետո շրջեց էջը և մյուս երեսին գրեց. ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅՈՑ ՄԵԾԵՐԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Սիրելի՛ աշակերտ, դու իհարկե ճանաչեցիր Էջմիածնի գրատան մագաղաթների վրա հակված ծերունուն, մարդ, որ ունեցավ երջանիկ պատանեկություն, երիտասարդությունն սկսեց հալածանքներով ու զրկանքներով, իսկ ծերության օրերին արժանացավ փառք ու հռչակի: Կարդա՛ նրա մատյանը ու կճանաչես քո նախնիներին և քեզ: Գրի՛ր հանճարեղ ծերունու անունը, գրի՛ր երկյուղածությամբ ու սիրով…

ՊԼԱՆ

1. Շոգ կեսօր:
2. Անծանոթ ճամփորդը:
3. Ուսուցչի տապանաքարի մոտ:
4. Գրքերի աշխարհում:
5. Վերադարձ հայրենիք, հալածանք, նախանձ:
6. Ջրաղացում ապրող ծերունին:
7. Հանդիպում Գյուտ կաթողիկոսի հետ:
8. Սահակ Բագրատունու խնդրանքը:
9. «Հայոց պատմության» անմահ հեղինակը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրե՛լ

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

շոգ կեսօր, կիզիչ ճառագայթներ, խաղողի անծայր դաշտեր, կենսատու ջերմություն, հյութեղ ողկույզներ, արծաթավարս փշատենի, թավշյա սերկևլենի, հուռթի մշակություններ, զվարթ կարկաչյուն, տափից ծածկված ճանապարհ, մառուռ, առագաստի երգեր, երեկոյան ժամերգություն, գրատուն, անհաց ծարավ, օրրան, կաթողիկոսական գավառ, հոգեզավակ, պարսկական կողմնորոշում, հունական քաղաքակրթություն, անօթևան կյանք, դեգերումներ, քրիստոնեական ճառ, ձեռնադրել.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Օշական, Բյուզանդիա, Էջմիածին, Արշակունիների թագավորություն, Սահակ Պարթև կաթողիկոս, Վաղարշապատ, Գյուտ կաթողիկոս, Բագրևանդ և Արշարունյաց գավառներ, Սահակ Բագրատունի:

2. Բացատրել գավառ բառի իմաստը:

ՄՐՄՈՒՆՋ ԱՌ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Վահագն Դավթյանի

Նարեկա վանքի բակում Վարդավառ է, «սիրաբորբոք տարփամբ լցյալ» առավոտ: Ալ ու կանաչ հագած աղջիկների երգ է, թուխ ու պարթև տղաների պար, ջրերի ցայտք է, որ բարձրանալով ու արևի դեմ շողշողալով՝ ծիծաղի նման թափվում է վար՝ թրջելով աղջիկների հագուստն ու իրանը, ցանկանալով ասես ընդգծել նրանց մարմնի գեղեցկությունները: Եվ հանկարծ այդ բոլորի մեջ մեկը՝ մի անչափ նազելին, կապուտաչը, զարմանալին, հրաշալին:

Ու քանի որ երիտասարդ քահանայի սիրտը շատ է մեծ, սկսում է ուժգնորեն բաբախել…

Ու քանի որ նյարդերը շատ են նուրբ, համարյա մերկ ու անպաշտպան, սկսում են մեղսամածորեն թրթռալ…

Ու քանի որ մեղքի զգացումը շատ է խոր նրա մեջ, թեքում է հայացքն ու սկսում դիտել արևից ցոլցլացող Վանա ծովի կապույտը…

Ու քանի որ այդ կապույտը շատ է նման աղջկա աչքերի կապույտին, թեքվում ու նորից է նայում այդ աչքերին: Աչքե՞ր, ի՞նչ աչքեր, ծովե՞ր… Այդպիսի աչքերի մասին տարիներ հետո մի այլ հայ մեծ բանաստեղծ պիտի ասի. «Ուր կուզվի մարդ հեշտին ու դուրս կելլե վիրավոր…»:

Եվ վիրավոր է երիտասարդ քահանան:

Եվ քանի որ վիրավոր քահանան հանճարեղ է նաև, շրթունքներին ինքնաբերաբար սկսում են տողեր թրթռալ.

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի նման ծիծաղախիտ…

Ծիծաղախի՞տ, ինչու՞ ծիծաղախիտ… Այդ Գրիգոր քահանան թեև ինքն իրեն համարում է «բանաստեղծ… մեջ հետին» և «վարժապետաց մեջ կրտսեր», բայց հայ համարում է «բանաստեղծ… մեջ հետին» և «վարժապետաց մեջ կրտսեր», բայց հայ

Ծիծաղախի՞տ, ինչու՞ ծիծաղախիտ… Այդ Գրիգոր քահանան թեև ինքն իրեն համարում է «բանահյուսաց մեջ հետին» և «վարժապետաց մեջ կրտսեր», բայց հայ ողջ գրականությունը, հայոց ողջ բառն ու բանը իր մտքի մաղով է անցկացրել ու գիտե, որ չկա այդպիսի բառ: Ինչպե՞ս ծնվեց, որտեղի՞ց ծնվեց… Նորից է նայում աղջկա աչքերին, որոնց մեջ ոսկու փշուրների նման թաքուն ծիծաղներ են փայլփլում, նայում է ծովին՝ նույնը, ու կարծես սկսում է հասկանալ, թե ինչպե՞ս և որտեղի՞ց ծնվեց նորը, անհայտը, գեղեցկորեն զարմանալին…

Իսկ աղջիկը հեռվում կանգնած շարունակում է ծիծաղել: Շալե շալիկի կիսաբաց օձիքից շողում է «ծոցն լուսափայլ»…

Գլխապտույտ է զգում երիտասարդ քահանան ու երերալով փախչում է վանք, մտնում իր կիսամութ խուցը: Եվ այնպես է թվում նրան, թե քիչ առաջ ոչ թե հողեղեն արարածի է հանդիպել, այլ ինչ-որ հրաշքով հենց իրեն՝ Աստվածամորն է տեսել առավոտվա շաղերի մեջ:

Իսկ տաղը շարունակում է անձայն թրթռալ շրթունքներին: Մոտ է քաշում գրակալը, մոմառախտակը դնում է վրան և սկսում շուրթերին թրթռացող տողերը քերթել մագաղաթին.

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի նման ծիծաղախիտ.
Ինչպես երկու փայլակնաձև արեգակներ.
Շողն է նման լուսացնցուղ այգարացի…
Թափվում էին ուսերից վար
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր,
Գեղաշիտակ իրանից սիրտն էր կարկաչում
Հուզավարար-կենսատու սեր:

Գրում, համարյա ոչինչ չի ջնջում, ու թվում է՝ ոչ թե իր մտքից են ծնունդ առնում այդ տողերը, այլ ինչ-որ տանջալի, երանելի, աստվածային դող է սողոսկել սիրտը ու տողեր է հուշում իրեն: Գրում, վերընթերցում է սկզբից: Որտեղի՞ց եկան ու իրար կողքի շարվեցին այդ «ծ» հնչյունները: Արդյոք ծով ծփանքի՞ց մտան իր տաղի մեջ, թե՞ այն աղջկա ծիծաղից, որ նման է ցնծալի ծնծղայի…

Կամար կապած թևերը գիրգ՝
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելևէջներն հյուսում իրար,
Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին…

Իսկ «գեղաշիտակն» ու մանավանդ այս «թիկնեթեկինը»… Չէ՛, հայոց բառ ու բանի մեջ չի հանդիպել ինքն այդ բառերին ու հաստատ գիտե, որ եթե հանկարծ սուրբ հայրերից որևէ մեկը կարդա սույն տաղը, պիտի ասի՝ ինքնահնար են այդ բառերը, ուրեմն և անօրեն ու մերժելի… Ա՛խ, այդ սուրբ հայրերը… Նրանք համարյա բոլորն էլ շարականներ են հորինում, սակայն այնքան անքանքար, այնքան իրար նման, ասես նույն կաղապարից են հանում: Չկա նրանց մեջ ո՛չ կյանքի շունչ ու ո՛չ բնության թրթիռ… Խոսքերը մեռյալ են այնտեղ, և այդ խոսքերից չեն հառնում գույներ ու պատկերներ, ինչպես այն գեղջկական տաղերում, որ քիչ առաջ հնչում էին վանքի բակում: Եվ աչքերի դեմ նորից այն աղջիկն է.

Բերանն երկթերթ, շրթունքներից վարդ էր կաթում,
Լեզվի տավիղն էր քաղցրերգում հուզումնահորդ,
Շողում էին նույն կենսավառ
Սիրով չքնաղ ու գինեբույր
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:

Այդ վարսերը համերամ զարդ, համօրեն զարդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են ուսերի շուրջ…

Դող անցավ երիտասարդ քահանայի նյարդերով, և դողի հետ ինչ-որ ահ բարձրացավ ու հասավ ուղեղին… Իր տաղով չի մեղանչում արդյոք Աստծո դեմ: Բայց ինչո՞ւ չգրել, երբ Սուրբ գիրքն է գովերգում կնոջը՝ համարելով նրան ակունքը կյանքի…

Լուսափայլ է ծոցը, կարմիր վարդով լցված,
Դաստակներն են մանուշակի, ծիրանի փունջ:
Բերում է նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառ.
Ձայնն անուշ էր, քաղցրանվագ:
Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի, կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում...
Գոտին կամար, արծաթափայլ,
Ոսկետառն ու նրբակերտ`
Պաճուճված էր ակնեղենով չափյուղայի:
Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտներից:

Ավարտեց տաղը, վերից վար կարդաց, ու հոգնության հետ մի զարմանալի երանություն իջավ վրան: Ո՛չ, ուրիշ է իր տաղը, անհունորեն տարբեր բոլոր դրանից առաջ գրվածներից: Կենարար կյանքն է թրթռում նրա մեջ, գեղեցկության գաղտնիքը, նրանից արարչական ինչ-որ շունչ է բարձրանում, ու մխում է մի տաք կարոտ...

Վերստին կարդաց, վերստին երանությամբ ու գոհությամբ լցվեց, բայց նաև թաքուն մի ահ սողաց սիրտը... Իսկ եթե այս տաղը ընկնի հավատաքննիչների ձեռքը, վերստին ատյան չե՞ն կանչելու իրեն, վերստին չե՞ն մեղադրելու թոնդրակյան պղծության մեջ, չե՞ն սպառնալու գելարանով... Չէ՞ որ մեկ անգամ արդեն այդպես պատահել է: Մի անքանքար աբեղայի հետ զրուցելիս անզգուշություն էր ունեցել ասելու, թե վանքերը հույժ շատ են լցված անբան տգետներով, որոնց սրտի մեջ ոչ թե Աստծո լույսն է, այլ արծաթի տենչն ու ագահությունը:

Ի՞նչ իմանար, որ այդ անքանքարը ոչ միայն նախանձ է, այլև մատնիչ: Եվ գնացել է ուր որ պետք է, ամբաստանել, թե այդ Գրիգոր քահանան թոնդրակյան է, գիժխտում է եկեղեցին:

Բայց, փառք Աստծո, երևի այդ պահին հենց ինքը` Ամենազորը, Ամենագութը, Ամենատեսը օգնության եկավ ու իր մտքին այնպիսի մի պայծառություն պարգևեց, այնպիսի ճարտարություն` լեզվին, որ ինքը կարողացավ իսպառ հերքել ամբաստանությունը, պարզել ճշմարտությունը և իր ճակատն ազատել աղվեսադրոշմից...

Արտագրելով տաղը մի այլ մագաղաթի վրա` այն վերնագրեց` «Մեղեդի ծննդյան» և վերջում ավելացրեց.

Քեզ պսակող Թագավորին
Ու Նորածին այն Փրկչին փառք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

ՊԼԱՆ

1. Վարդավառ:
2. Կապուտաչյա աղջիկը:
3. ... Առավոտվա ծովի նման ծիծաղախիտ...
4. Աստվածամայրը առավոտվա շաղերի մեջ:
5. Մեղանչման ահ:
6. «Մեղեդի ծննդյանը»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) «Մեղեդի ծննդյան» տաղն ամբողջությամբ.

բ) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները. «սիրաբողբոջ տարփամբ լցյալ», ալ ու կանաչ Վարդավառ, գրակալ, մոմատախտակ, անքանքար, «ուր կուզվի մարդ հնչուն ու հագած աղջիկների երգ, պարթև տղաներ, մեղսամածորեն թրթռալ, «ծոցն լուսադուրս կոյլն վիրավոր», «բանահյուսաց մեջ հետին», «վարժապետաց մեջ կրտսեր», «ծոցն լուսափայլ», ցնծալի ծնծղա, կենարար կյանք, գեղեցկության գաղտնիք. արարչական շունչ. տաք կարոտ, թունդրակյան պղծություն, արծաթի տենչ ու ագահություն, խապառ հերքել ամբաստանությունը:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ԱՍՈՒՅԹՆԵՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Նարեկացին որ կը գրե, խոսք կը գտնե: Ադ խոսք անոր միտք չի լմնցուներ: Ան ուրիշ զորավոր խոսք մը կուզե ու կերթա՛, կերթա՛... Կուզե յուր միտք բռնվի խոսքին մեջ, ու նորեն կերթա:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Հայ բանաստեղծներից առ այսօր վերստին նույն ինքն է բոլոր մեծերի մեջ մեծագույնը:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Ռուս կամ այլազգի գրասերը, ծանոթանալով Գրիգոր Նարեկացու պոեզիայի միայն մի փոքրիկ հատվածի թարգմանությանը՝ վեթխարի համքաշերտերից պոկած ու հեռուները տարած այդ բեկորին, հիացմունքից քար է կտրում ու զարմանում: Հայաստանում ահա 1000 տարի ժամանակի ու տարածության հաստ շերտերի տակ ծածկված՝ հանգչում է մի այսպիսի անհավանական հարստություն, մարդկային մտքի ու հոգու մի այսպիսի տիտան:

ՎԱՀԵ ԳՈԴԵԼ

Ես արբենում եմ այդ ողբերգական խոստովանանքներով, և լեռնային զառիթափերից ինձ վրա են փշրվում բանաստեղծական իմաստության ջրվեժները՝ շողշողալով ծիածանի բոլոր գույներով:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ԹԵՄԱ
1. Վարդավառ:
2. Կապուտաչյա աղջիկը:
3. ... Առավոտվա ծովի նման ծիծաղախիտ...
4. Աստվածամայրը առավոտվա շաղերի մեջ:
5. Մեղանչման ահ:
6. «Մեղեդի ծննդյանը»:

ՇԱՐԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) «Մեղեդի ծննդյան» տաղն ամբողջությամբ.

բ) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Վարդավառ, դրախտ, մամռապատ, անքանքար, «սիրաբողբոջ տարփամբ լցյալ», ալ ու կանաչ հագած աղջիկների երգ, պարթև տղաներ, մեղսամածորեն թրթռալ, «ուր կուզվի մարդ հեշտին ու դուրս կելլե վիրավոր», «բանահյուսաց մեջ հեռուն», «վարժապետաց մեջ կրտսեր», «ծոցն լուսափայլ», ցնծալի ծնծղա, կենարար կյանք, գեղեցկության գաղտնիք, արարչական շունչ, տաք կարոտ, թոնդրակյան պղծություն, արծաթի տենչ ու ագահություն, խաղաղ հերքել ամբաստանությունը:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ԱՍՈՒՅԹՆԵՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄԱՍԻՆ

Նարեկացին որ կը գրե, խոսք կը գտնե: Աղ խոսք անոր միտք չի լմնցուներ: Ան ուրիշ զորավոր խոսք մը կուզե ու կերթա՛, կերթա՛... Կուզե յուր միտք բռնվի խոսքին մեջ, ու նորեն կերթա:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Հայ բանաստեղծներից առ այսօր վերստին նույն ինքն է բոլոր մեծերի մեջ մեծագույնը:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Ռուս կամ այլազգի գրասերը, ծանոթանալով Գրիգոր Նարեկացու պոեզիայի միայն մի փոքրիկ հատվածի թարգմանությանը՝ վիթխարի հանքաշերտերից պոկված ու հեռուները տարած այդ բեկորին, հիացմունքից քար է կտրում ու զարմանում: Հայաստանում ահա 1000 տարի ժամանակի ու տարածության հաստ շերտերի տակ ծածկված՝ հանգչում է մի այսպիսի անհավանական հարստություն, մարդկային մտքի ու հոգու մի այսպիսի տիտան:

ՎԱՀԵ ԳՈԴԵԼ

Ես արբենում եմ այդ ողբերգական խոստովանանքներով, և լեռնային գահավիժափերից ինձ վրա են փշրվում բանաստեղծական իմաստության ջրվեժները՝ շողշողալով ծիածանի բոլոր գույներով:

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԵՏ

Ո՛վ ամենատես,
Այս գիշեր հոգիս մխում էր սաստիկ թախծության հրով,
Ու ես մատյանդ հույսի պես դրած
Տվայտանքներիս սև գրակալին,
Թերթում էի լուռ՝
Մու՜թ էի թերթում,
Լու՜յս էի թերթում,
Ծու՜խ էի թերթում
Ու թերթում կրակ...

Եվ, ո՛վ անքնին,
Ո՛վ զրուցակից ահեղ Աստծո,
Ես ամբողջ գիշեր
Զրուցում էի տառապյալիդ հետ,
Թեև զրույցս շշուկ էր միայն
Ծովի մոլեգին շառաչյունի դեմ,
Տերևի թեթև սոսափ էր միայն
Եվ հրդեհիդ դեմ՝ առկայծ մի կանթեղ...

Զրուցում քեզ հետ
Ու տաք շուրթերով շշնջում էի.
- Ո՛վ բարեբանյալ,
Դու, որ աշխարհի մեղքերը բոլոր
Քո ուսին առել,
Այդ բեռից ծալվել, հալվել, ծավալվել
Ու դարձել էիր ամեհի մի ծով,
Որ տառապագին ալեբախությամբ
Ինքդ քեզ զտես,
Դարձնես ցողի մաքուր ավազան,
Դարձնես լույսի անթախիծ ծփանք,
Խղճի անարատ ակունք դարձնես.
Արդ սատար եղիր,
Օգնակա՛ն ինձ լեր,
Քանզի դեռ պղտոր ալիքի նման
Զարկվում քարեքար
Ու չեմ կարենում մաքրության հասնել...
Դու, որ սքեմիդ սև ծալքերի մեջ
Հուր էիր դարձել,
Որ ինքնամվեր ողջակիզումով
Ինքդ քեզ այրես,

Դարձնես պայծառ ճառագայթ փառաց,
Դարձնես լույսի անհունն պատարագ
Եվ առավոտի լուսաստղ դարձնես,
Արդ սատա՛ր եղիր,
Օգնակա՛ն ինձ լեր,
Քանզի դեռ մնում ու չեմ կարենում
Հուրհրալ՝ որպես Թրթիռը բոցի,
Պտտվում անվերջ՝
Որպես մթին միգամածություն
Ու չեմ կարենում ցոլալ աստղի պես...
Ո՛վ Հավերժ ընթացք,
Դու, որ ընթացել, չես Հասել սակայն,
Ինձ սատա՛ր եղիր,
Օգնակա՛ն ինձ լեր,
Հեռվում ցոլում է մի խարտյաշ տեսիլք,
Ալեվետում է մի կապույտ կարոտ,
Հուրհրատում է մի բոսոր ցնորք,
Եվ սակայն որքան մոտենում եմ ես,
Այնքան կրկնակի Հեռանում նրանք,
Դառնում են անհաս...
Ու՛ժ տուր գնալու...
Այնտեղ՝ ոսկեոր Հեռաստաններում
Արտեր են ծփում անորոմ ու սուրբ,
Եվ Հասկերի մեջ Հասունանում է
Համը բարության ու արդարության...
Այնտեղ խաղողի վազերը ոսկե
Մայրակաթ Հողի ու արեգակի տաք առնչությամբ
Լույս են արարում
Եվ արարում են Աստծո ոգի...
Եվ աղբյուրներ կան այնտեղ՝ խղճի պես,
Եվ կաղնիներ կան՝ Հավատի նման,
Եվ ջրվեժներ կան՝ որպես բերկրություն,
Եվ ծաղիկներ կան՝ որ մարդու ոտքը
Կարող են օծել աստղի արցունքով...
Ու՛ժ տուր գնալու,
Ու՛ժ տուր Համնելու և ճաշակելու
Անծայր բարության խորհուրդը խորին...
Ո՛վ օրՀնաբերան,
Ըստ մարգարեիդ ու տառապյալիդ իմաստուն խոսքի,
Ես էլ եմ ամպել ու չեմ անձրևել,
Արդ սատա՛ր եղիր,
Օգնակա՛ն ինձ լեր:

Սիրելի՛ բարեկամ, հավանաբար բազմիցս լսել ես Թորոս Ռոսլինի անունը: Արդյոք մտածե՞լ ես, թե ով է նա, ինչու է նրա արձանը կանգնեցված Մատենադարանի արտաքին պատի որմնախորշերից մեկում՝ հայոց մեծերի կողքին: Կփորձենք քեզ ծանոթացնել այդ բացառիկ արվեստագետին, որին ճանաչել և որով հպարտանալ պարտավոր ենք բոլորս:

Ծննդյան և մահվան թվականներն անհայտ են: Կենսագրական տեղեկություններ համարյա չկան: Հայտնի է միայն, որ ապրել և ստեղծագործել է 13-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայի Հռոմկլա բերդաքաղաքում:

Մինչև 1292 թվականը Հռոմկլայում է եղել հայոց կաթողիկոսական աթոռը: Ամենայն հայոց հայրապետ Ներսես Շնորհալու օրոք (1166-1173 Սթթ.) Հռոմկլա բերդաքաղաքը դարձել է համահայկական մշակութային կենտրոն, որտեղ հավաքվել, բազմացվել և պատկերազարդվել են հարյուրավոր ձեռագրեր ու մատյաններ: Հռոմկլան հռչակված էր հատկապես իր մանրանկարչական դպրոցով: Թորոս Ռոսլինի ստեղծագործությունը այդ բացառիկ դպրոցի բարձրագույն արտահայտությունն է:

Թորոս Ռոսլինը աշխատել է Հռոմկլայի գրչատանը: Պահպանվել են նրա ծաղկած Ավետարանները, որոնց մի մասը գտնվում է Երևանի Մատենադարանում, մյուսները՝ աշխարհով մեկ սփռված հայկական մշակութային կենտրոններում: Իսկ Կիլիկիայի թագավոր Լևոն Երրորդի առանձին, ապա կնոջ՝ Կեռան թագուհու հետ դիմանկարները խոսում են մեծատաղանդ մի արվեստագետի մասին, որն այնպե՜ս վարպետորեն զուգակցել է գույները, այնպե՜ս ճաշակով համադրել ոսկու հետ, որ այժմ էլ, երբ դարեր են անցել, դրանք ապշեցնում են յուրօրինակ փայլով և անխաթար նրբերանգներով:

Պատանի՛ բարեկամ, այսուհետև քո հոգում կրի՛ր կերպարը մի մեծաքանքար հայի, որով հպարտ կլիներ աշխարհի ցանկացած ժողովուրդ:

Ո՞Վ ՋԱՐՄԱՆԱԼԻ

Ըստ Ռ. Դավոյանի

Ռոսլինը չէր հասկանում, թե Կեռան թագուհին ինչու է իրենց հանդիպումը նշանակել բերդապարսպից դուրս: Չէ՞ որ քաղաքադռնից այն կողմ ամայի տարածություններ են: Նա գրչատնից դուրս եկավ սովորականից շուտ, որ կարողանա մինչև մութն ընկնելը հասնել ժամադրության վայրը:

Խավարն անակնկալ վրա տվեց, և Թորոսը չկարողացավ գլխի ընկնել, թե իր կողքին որտեղից հայտնվեց սև թիկնոցի մեջ փաթաթված արարածը: - Ի սե՛ր

- Նորի՛ր, - ասաց կինը, և Թորոսն իսկույն ճանաչեց թագուհու ձայնը: - բամ-

Աստծո, ների՛ր, որ այս տեսքով եմ ներկայանում: Ավելորդ կասկածներից ու բամբասանքներից խուսափելու համար է միայն:

Թագուհու ձեռքին ձեթի ճրագ կար և բանալիների մի խուրձ:

- Ահա՛, - ասաց նա, - փորձի՛ր, թե սրանցից որով կբացվի այս դուռը:

Թորոսը ոչ մի դուռ չէր տեսնում, մինչև որ Կեռանը նրան ցույց տվեց հողագույն ինչ-որ բան: Բանալին չրխկաց, և բերդապարսպի տակ բացվեց մի դուռ: Ներ-

Սիրելի՛ բարեկամ, հավանաբար բազմիցս լսել ես Թորոս Ռոսլինի անունը: Արդյոք մտածե՞լ ես, թե ով է նա, ինչու է նրա արձանը կանգնեցված Մատենադարանի արտաքին պատի որմնախորշերից մեկում՝ հայոց մեծերի կողքին: Կփորձենք քեզ ծանոթացնել այդ բացառիկ արվեստագետին, որին ճանաչել և որով հպարտանալ պարտավոր ենք բոլորս:

Ծննդյան և մահվան թվականները անհայտ են: Կենսագրական տեղեկություններ համարյա չկան: Հայտնի է միայն, որ ապրել և ստեղծագործել է 13-րդ դարի երկրորդ կեսին Կիլիկիայի Հռոմկլա բերդաքաղաքում:

Մինչև 1292 թվականը Հռոմկլայում է եղել հայոց կաթողիկոսական աթոռը: Ամենայն հայոց հայրապետ Ներսես Շնորհալու օրոք (1166-1173 Սթթ.) Հռոմկլա բերդաքաղաքը դարձել է համահայկական մշակութային կենտրոն, որտեղ հավաքվել, բազմացվել և պատկերազարդվել են հարյուրավոր ձեռագրեր ու մատյաններ: Հռոմկլան հռչակված էր հատկապես իր մանրանկարչական դպրոցով: Թորոս Ռոսլինի ստեղծագործությունը այդ բացառիկ դպրոցի բարձրագույն արտահայտությունն է:

Թորոս Ռոսլինը աշխատել է Հռոմկլայի գրչատանը: Պահպանվել են նրա ծաղկած Ավետարանները, որոնց մի մասը գտնվում է Երևանի Մատենադարանում, մյուսները՝ աշխարհով մեկ սփռված հայկական մշակութային կենտրոններում: Իսկ Կիլիկիայի թագավոր Լևոն Երրորդի առանձին, ապա կնոջ՝ Կեռան թագուհու հետ դիմանկարները խոսում են մեծատաղանդ մի արվեստագետի մասին, որն այնպե՜ս վարպետորեն զուգակցել է գույները, այնպե՜ս ճաշակով համադրել ոսկու հետ, որ այժմ էլ, երբ դարեր են անցել, դրանք ապշեցնում են յուրօրինակ փայլով և անխաթար երբերանգներով:

Պատանի՛ բարեկամ, այսուհետև քո հոգում կրի՛ր կերպարը մի մեծաքանքար հայի, որով հպարտ կլիներ աշխարհի ցանկացած ժողովուրդ:

ՌՈՎ. ԶԱՐՄԱՆԱԼԻ

Ըստ Ռ. Դավոյանի

Ռոսլինը չէր հասկանում, թե Կեռան թագուհին ինչու է իրենց հանդիպումը նշանակել բերդապարսպից դուրս: Չէ՞ որ քաղաքադռնից այն կողմ ամայի տարածություններ են: Նա գրչատնից դուրս եկավ սովորականից շուտ, որ կարողանա մինչև մութն ընկնելը հասնել ժամադրության վայրը:

Խավարն անակնկալ վրա տվեց, և Թորոսը չկարողացավ գլխի ընկնել, թե իր կողքին որտեղից հայտնվեց սև թիկնոցի մեջ փաթաթված արարածը:

- Ների՛ր, - ասաց կինը, և Թորոսն իսկույն ճանաչեց թագուհու ձայնը: - Ի սե՛ր Աստծո, ների՛ր, որ այս տեսքով եմ ներկայանում: Ավելորդ կասկածներից ու բամբասանքներից խուսափելու համար է միայն:

Թագուհու ձեռքին ձեթի ճրագ կար և բանալիների մի խուրձ:

- Ահա՛, - ասաց նա, - փորձի՛ր, թե սրանցից որով կբացվի այս դուռը:

Թորոսը ոչ մի դուռ չէր տեսնում, մինչև որ Կեռանը նրան ցույց տվեց հողագույն ինչ-որ բան: Բանալին չրխկաց, և բերդապարսպի տակ բացվեց մի դուռ: Ներ-

[illegible]

– Մամլուքնե՞րը:

Վայրենի աղաղակը Թոալինին հետ պահեց դուռը բացելու մտքից: Նա հասկացավ, որ ինքը բանտարկված է քարե գերեզմանում:

Մամլուքների անհոգի բանակը շրջապատեց բերդաքաղաքը: Սարսափելին այն էր, որ վայրենի խուժանն ամեն կողմից սկսեց քանդել բերդապարիսպը: Առաջին իսկ օրը փուլ եկավ պարսպի այն հատվածը, որտեղ գաղտնարանի դուռն էր: Անհոգի գրգռումից Թոալինն սկզբում ոչինչ չհասկացավ, կարծեց՝ երկրաշարժ է, բայց երբ փորձեց գաղտնարանի դուռը բաց անել և չկարողացավ, հասկացավ, որ բերդապարսպի քարե հեղեղը ընդմիշտ փակել է մուտքը: «Սա վերջն է, – հուսահատ մտածեց նա, – բայց քանի կենդանի եմ, Կեռան Թագուհու Ավետարանը պիտի ավարտեմ»:

Անցան օրեր և ցցված պատուհաններով, սրված քթով, մագաղաթի փոշի արձակող մաշկով և կրակների պես ցոլցլացող աչքերով Վարպետը վերջին անգամ գրեց Տիրոջը. «Ինձ ընդունի՛ր, առաջնորդ եղի՛ր, Տե՛ր Ամենակալ»: Քարե հատակին նրա փայտե կոշիկների ձայները հնչեցին խորհրդավոր ու ահարկու:

Շատերը վկայում են, որ առայսօր լսվում են այդ ոտնաձայները, որովհետև Հայկա երկրի ընդերքով դեռ քայլում է Թորոս Թոալինը: Նա ներծծվում է երկրի ընդերքում, և նրա քայլերին ունկնդիր՝ հայ մարդը երգում է. «Երբ որ բացվին դռներն հուսո, և մեր երկրեն փախ տա ձմեռ …»:

ում ահավոր մթություն էր: Առկայծող ճեթի ճրագը հազիվ լուսավորում էր ներքև իջնող աստիճանները: Անցան քարե մի երկար միջանցք: Թագուհին բանալին ուղղակի մտցրեց պատի մեջ, և պատը ճռռալով հետ գնաց: Ռոսլինը խաչակնքեց: Նա ապշած ու այլայլված էր իր տեսածից:

- Խաչակնքվելդ ճիշտ էր, - ասաց Թագուհին, - չէ՞ որ մենք Մայր տաճարի տակ ենք: Լսու՞մ ես, վերևում ժամհարը դռներն է փակում:

Ռոսլինը հարցական նայում էր Թագուհուն:

- Ես ուզում եմ, - խոսեց Թագուհին, - որ Կիլիկիայի մանրանկարչության հռչակավոր վարպետը բարի և չար աչքերից, աշխարհիկ կյանքից հեռու այստեղ մի Ավետարան գրի ու ծաղկազարդի իր Թագուհու համար:

Թորոսը զարմացած նայեց շուրջը: Գրչության համար ամեն ինչ կար՝ սեղան, քարե նստարան, ջահեր, ներկեր, գործիքներ, մագաղաթներ:

- Այս է, - խոսեց Կեռան Թագուհին, - պալատ չէ, բայց այստեղ գրված Ավետարանն ուրիշ՝ միայն հոգու՛ համար կլինի:

Երկու տարի Թորոս Ռոսլինը մեն-մենակ աշխատում էր իր գաղտնարանում: Նա ինքնամոռաց ապրում էր այն Ավետարանի համար, որ մխիթարություն պիտի բերեր Թագուհուն:

Ու մի գիշեր, երբ մտքում կրկին ինքն իրեն համոզում էր համբերությամբ աշխատել, չշտապել, հանկարծ ահասարսուռ ու տագնապալի ղողանջեցին Մայր տաճարի զանգերը, ահազանգի ջահեր վառվեցին բերդապարսպի վրա, և մթի թանձր քողը պատռվեց սարսափելի ճչոցից.

- Մամլուքնե՛րը:

Վայրենի աղաղակը Ռոսլինին հետ պահեց դուռը բացելու մտքից: Նա հասկացավ, որ ինքը բանտարկված է քարե գերեզմանում:

Մամլուքների ահռելի բանակը շրջապատեց բերդաքաղաքը: Սարսափելին այն էր, որ վայրենի խուժանն ամեն կողմից սկսեց քանդել բերդապարիսպը: Առաջին իսկ օրը փուլ եկավ պարսպի այն հատվածը, որտեղ գաղտնարանի դուռն էր: Ահռելի գղրդյունից Ռոսլինն սկզբում ոչինչ չհասկացավ, կարծեց՝ երկրաշարժ է, բայց երբ փորձեց գաղտնարանի դուռը բաց անել և չկարողացավ, հասկացավ, որ բերդապարսպի քարե հեղեղը ընդմիշտ փակել է մուտքը: «Սա վերջն է, - հուսահատ մտածեց նա, - բայց քանի կենդանի եմ, Կեռան Թագուհու Ավետարանը պիտի ավարտեմ»:

Անցան օրեր և ցցված այտոսկրերով, սրված քթով, մագաղաթի փայլ արձակող մաշկով և կրակների պես ցոլցլացող աչքերով Վարպետը վերջին անգամ դիմեց Տիրոջը. «Ինձ ընդունի՛ր, առաջնորդ եղի՛ր, Տե՛ր Ամենակալ»: Քարե հատակին նրա փայտե կոշիկների ձայները հնչեցին խորհրդավոր ու ահարկու:

Շատերը վկայում են, որ առայսօր լսվում են այդ ոտնաձայները, որովհետև Հայկա երկրի ընդերքով դեռ քայլում է Թորոս Ռոսլինը: Նա ներծծվում է երկրի ընդերքում, և նրա քայլերին ունկնդիր՝ հայ մարդը երգում է. «Երբ որ բացվին դըռներն հուսո, և մեր երկրին փախ տա ձմեռ ...»:

ԴԱՍ

1. Հանդիպում քաղաքի [illegible] դուրս։
2. Խորհրդավոր [illegible]։
3. Կեռան Թագուհու խնդրանքը։
4. [illegible] քաղաքի վրա։
5. [illegible]։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները. [illegible] Թիկնոցի մեջ փաթաթված [illegible], գրչատուն, [illegible] վրա [illegible] [illegible]։

2. Երեխաներին ծանոթացնել Հայ մանրանկարչության նմուշներին։

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Կեռան թագուհու Ավետարանը այսօր էլ կա: Այն պահպանվում է Երուսաղեմում:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԸ

(զրույց)

Տասներեքերորդ դարում Հայկական Կիլիկիայի մեծահամբավ նկարիչը Թորոս Ռոսլինն էր: Նա ապրում էր Հռոմկլայում:

1262 թվականին արքունի բանբերը հասավ Հռոմկլա և Թորոս Ռոսլինին հայտնեց.

- Լևոն Թագավորը քեզ հրավիրում է իր հարսանյաց հանդեսին:

- Ոչ ոք հենց այնպես արքայի ուշադրությանը չի արժանանում, - ասաց նկարիչը:

- Այո՛, Թորո՛ս Ռոսլին, իրավացի ես, դու պետք է հարսանիքի ժամանակ պատկերահանես Թագավորին և Կեռան Թագուհուն:

- Չեմ կարող:

- Ինչու՞:

- Այս հացատակաս տարում ես սիրտ չունեմ ներկա լինել որևէ խրախճանքի:

Բանբերը վերադարձավ ձեռնունայն: Բայց ահա Սիս մայրաքաղաքից Հռոմկլա եկավ ինքը՝ Լևոն Թագավորը:

- Հարսանյաց հանդեսը պատկերահանելու համար քո քաշով մեկ ոսկի կստանաս, - ասաց արքան:

- Իմ ինչի՞ն է պետք ոսկին, - արձագանքեց նկարիչը:

- Իսկ ի՞նչ ես ուզում:

- Հիմա Կիլիկիայում սով է, հրամայի՛ր թող բացեն արքունի ամբարները և ցորենն բաշխեն ամենքին, միայն այդ դեպքում ես կհամաձայնեմ նկարել քեզ ու Կեռան Թագուհուն:

Լևոն Թագավորը գլխով համաձայնության նշան արեց:

ԿԱՐՈՏ

Ըստ Հայկանուշ Հովհաննիսյանի

Դա շա՛տ վաղուց էր՝ 406 Թվականին: Այն ժամանակ ես փոքրիկ աղջնակ էի: Լսել էի, որ Մեսրոպ Մաշտոցը վերադարձել է օտար երկրներից՝ իր հետ բերելով Հայերենի այբուբենը: Ամբողջ երկիրը ցնծության մեջ էր. չէ՞ որ գտնվել էր մեր Հարատևելու բանալին:

Երբ իմացա, որ Ուսուցիչը դպրոց է բացել՝ Հայոց նորագյուտ տառերը սովորեցնելու, ներկայացա նրան՝ Հաղթահարելով երկչոտությունս:

Նա նայեց ինձ և ժպտաց:

- Ի՞նչ է անունդ, դստրի՛կդ իմ սիրելի, - Հարցրեց:

- Հայուհի՛: Ուզում եմ նվիրվել դպրությանը:

- Հայուհի՛, կորովի՞ է Հոգիդ, ի զորու՞ ես դիմագրավելու ագիտության ու մնացյալ այլ արգելքներին, պատրա՞ստ ես մոռանալ անձդ: Հիշի՛ր Տիրոջ պատվիրանը. «Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ»:

- Այո՛, Ուսուցիչ:

- Օ՜ն, ուրեմն սկսենք այբ-ից:

Ու այդ օրվանից Մովսեսի, Եղիշեի, Եզնիկի ու Կորյունի Հետ ես էլ աշակերտեցի ուսուցչին:

Մեծ բերկրանք ապրեցինք այն օրը, երբ սովորելով բոլոր տառերը՝ գրեցինք Հայերեն առաջին նախադասությունը. «Ծանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս Հանճարոյ»:

Շատ բաներ սովորեցրեց մեզ Ուսուցիչը: Իմացանք, որ ոգին է սկիզբը ամեն գեղեցկի, և եղկելի են ագահությունն ու ընչաքաղցությունը: Նա խոսում էր աստվածային ներշնչանքով. «Ոգի առաւել է, քան զկերակուր, և մարմինն՝ քան զՀանդերձ»: Եվ ապա՝ «Ծրագ մարմնոյ ակն է: Եթե ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի»:

Ուսուցիչը իր մի քանի լավ աշակերտներին ուղարկեց արտասահման՝ բարձրագույն կրթություն ստանալու: Բաժանումից առաջ նա պատգամեց մինչ ի վերջին շունչը նվիրվել ազգին, բացել նոր դպրանոցներ, ցմաՀ ուսուցանել քաղցրաՀունչ մեր մայրենի, ստեղծել մատյաններ, ծաղկել դրանք և Հարկ եղած դեպքում կյանքը տալ, բայց ազգային Հարստությունները պաշտպանել Թշնամուց:

Չորս Հարյուր երեսունինը Թվականի մեհեկանի տասներեքն էր: Վաղարշապատում սուգ էր, նմանը չունեցող սուգ: Մենք Հրաժեշտ էինք տալիս աստվածակերպ մեր Ուսուցչին: Լսվում էր եկեղեցական ժամՀարություն, տխուր ղողանջում էին Մայր տաճարի զանգերը, խնկարկում բուրվառները, և ծորում էր պաստարագիչի Թախծալի ձայնը.

Փառք ի բարձունս... ՕրՀնե՛ա՜լ ես դու,
ՕրՀնեալ ես դու, զա՛ոն Աստուծոյ...
Գովեմք զքեզ, բարեբանե՛մք...

Անցան տարիներ: Անցան դարեր: Ես ապրեցի՝ իմ մեջ կրելով Ուսուցչիս և առաջնորդվելով նրա իմաստուն խորՀուրդներով: Այցելում էի գերեզմանին, մամ

վառում, խունկ ծխում և աղերսում սուրբ մարդուն՝ գեթ մեկ անգամ հայտնվել, խոսել ինձ հետ: Եվ ահա մի օր, անսալով իմ արտասուքներին և աղաչանքներին, նա հայտնվեց ինձ.

- Ինչպե՞ս է, դստրի՛կդ իմ, զարմը մեր Հայկազյան: Կատարու՞մ է պատգամները մեր: Ապրու՞մ է լեզուն մեր աստվածատաք:

- Քանի դու անմեռ ես, Ուսուցի՛չ, քանի քո անմահ հոգին մեզ հետ է, կապրի լեզուն մեսրոպատառ մեր մայրենի: Այդ նա՛ էր, որ հաղթեց նենգ Բյուզանդիոնին, փշրե՛ց ասորոց բաքանները բիրտ և պարսից մատյան գնդերը: Միով բանիվ՝ հաղթեց մեր բոլոր թշնամիներին: Թող խաղաղ լինի հոգին քո տառապյալ, քանզի, Ուսուցի՛չ, աշակերտներդ կատարեցին պատգամները քո ազնիվ: Խորենացին գրեց պատմությունը Հայոց՝ աշխարհին ազդարարելով, որ «թեև ածու ենք փոքրաթիվ, բայց մենք էլ շատ գործեր ունենք հիշատակության արժանի»: Մյուս աշակերտդ՝ Եղիշեն, դարձավ Ավարայրի երգիչը: Միշտ հավատարիմ մնալով հիշատակիդ՝ նա սերունդներին փոխանցեց քեզանից սովորածը. «Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումութենէ: Կոյր գրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն գրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք: Որպես մեծ է հոգի, քան զմարմին, այնպես մեծ է տեսաւորութիւն մտաց, քան զմարմնոց»: Քո գնալուց հետո շատ բան է փոխվել աշխարհում, Ուսուցի՛չ: Այժմ աշակերտներիդ թիվը հնարավոր չէ հաշվել: Դարեր են անցել, սակայն այսօր էլ նրանք շարունակում են պայքարը հանուն հայկյան բարբառի անաղարտության: Հիմա մենք ունենք պետականություն, դրոշ, զինանշան:

- Ուրեմն ես կարո՞ղ եմ խաղաղ ննջել հավիտենական օթևանում իմ: Երթամ ուրեմն խաղաղությամբ, և դուք ևս ապրեցե՛ք խաղաղությամբ: Սակայն, զավա՛կս, հրաժեշտից առաջ ուզում եմ դարձյալ հիշեցնել՝ շարունակեցե՛ք գործը բարի ձեր հանապազօրյա: Հիշեցե՛ք՝ զամենայն, որ միանգամ կամիջիք, թե արասցեն ձեզ մարդիկ, այնպես և դուք արարէք նոցա: Բազմացրե՛ք ցեղը Հայկա և սատար եղեք մեկմեկու, վասնզի ամենամեծ չարիքը անմիաբանությունն է: Ներեցե՛ք միմյանց հանցանքները: Մի՛ մոռացեք, թե ինչ էր ասում Տերը. «Զի՞ տեսանես զշիւղն ական եղբօր քո և ի քում ական զգերանդ ոչ տեսանես»: Թողե՛ք մեծամտությունն ու սին պարծենկոտությունը: Հիշեցե՛ք դարձյալ, թե ինչ ասացի հրաժեշտից առաջ. «Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք: Զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ»: Հետևեցե՛ք ընտրյալներին, նրանք ձեզ կմղեն արդար գործի:

Դստրի՛կդ իմ սիրեցյալ, մնա՛ս բարյավ: Տա՛ր պատգամներն ու հայրական օրհնանքն իմ ժողովրդիս Հայոց ամենայն:

Մինչ ուզում էի ծնկաչոք մոտենալ Ուսուցչիս ու կարոտով համբուրել նրա սուրբ աջը, նա անհետացավ այնպես անսպասելի, ինչպես հայտնվել էր: Կանգնել էի գլխահակ, կարկամած ու խռովված, իսկ շուրթերս երդում ու հավատարմություն էին մրմնջում:

ՊԼԱՆ

1. Մաշտոցի վերադարձը տուն երկնքից։
2. Հայուհու խնդրը։
3. Հայոցիր առաջին նախադասությունը։
4. Բարու և գեղեցիկի պատգամներ։
5. Ուսուցչի մահը։
6. Հանդիպում Ուսուցչի հետ։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ արտահայտությունները։*

1. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրեսցէ (Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. մեկին կատի, մյուսին կսիրի)։

2. Ճրագ մարմնոյ ակն է։ Եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի (Մարմնի ճրագը աչքն է։ Եթե աչքդ կուշտ է, ամբողջ մարմինդ լուսավոր կլինի)։

3. Ոգի առաւել է, քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ (Ոգին կերակուրից է կարևոր, մարմինը՝ հագուստից)։

4. Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք։ Որպէս մեծ է հոգի, քան զմարմին, այնպէս մեծ է տեսութիւն մտաց, քան զմարմնոյ (Բոլոր չարիքները մարդու գլուխն են մտնում անուսումնությունից։ Կույրը զրկված է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը՝ կատարյալ կյանքից։ Լավ է լինել աչքով կույր, քան մտքով։ Ինչպես հոգին է մարմնից մեծ, այնպես էլ մտքի թռիչքը մեծ է աչքի տեսողությունից)։

5. Զամենայն, որ միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա (Այն ամենը, որ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, այնպես էլ դուք արեք նրանց համար)։

6. Զի՞ տեսանես զշիւղն ական եղբօր քո և ի քում ական զգերանդ ոչ տեսանես (Ինչո՞ւ քո եղբոր աչքի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ)։

7. Մի՛ դատէք, զի մի դատիցիք։ Զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ (Մի՛ դատեք, որ չդատվեք։ Որովհետև ինչ դատաստանով դատեք, դրանով կդատվեք և ինչ չափով որ չափեք, դրանով էլ դուք կչափվեք)։

ՀԵՔԻԱԹ ԼԵՌԱՆ ՈՒ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Արեգ Թադևոսյան

Դեպքը կատարվեց հազարավոր տարիներ առաջ՝ այժմյան Արարատյան դաշտում։ Այդ ժամանակ այնտեղ տարածված էին վայրի խիտ անտառներ, ուր ազատ վազվզում էին փղերն ու այծյամը, հոսում էին լեռնային անհողդողդ գետեր։ Շրջակա դաշտերն ու հովիտները խաղաղ էին։ Կապույտ երկինքը շողշողում էր ժպտերես, և անտառների անդորրը ժամանակ առ ժամանակ խախտում էր թռչունների ուրախ ճռվողյունը։

Զանգվածեղ Լեռը, որ բազմել էր այդ չնաշխարհիկ վայրերի հարթավայրում, բոլորովին նման չէր մեզ ծանոթ ալեհեր ծերունուն։ Նա կրակոտ, բռնկուն երիտասարդ էր՝ միաժամանակ օժտված նախանձելի ծանրախոհությամբ և իմաստությամբ։

Մի օր, երբ Լեռը առավոտյան արև նայում էր իր առջև տարածված դաշտավայրին, զարմանալի բան կատարվեց. շրջապատի անդորրն ու խաղաղությունը միանգամից խախտվեցին։ Միահյուսված պատառիկների խիտ ամպեր ճեղքվեց, և այնտեղից դուրս եկան երկու արարած։ Նրանք նման էին կենդանու,

ՊԼԱՆ

1. Մաշտոցի վերադարձը օտար երկրներից:
2. Հայուհու խղճը:
3. Հայագիր առաջին նախադասությունը:
4. Բարու և գեղեցկի պատգամներ:
5. Ուսուցչի մահը:
6. Հանդիպում Ուսուցչի հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ արտահայտությունները.*

1. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ (Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. մեկին կատի, մյուսին կսիրի):

2. Ճրագ մարմնոյ ակն է: Եթե ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի (Մարմնի ճրագը աչքն է: Եթե աչքդ կուշտ է, ամբողջ մարմինդ լուսավոր կլինի):

3. Ոգի առաւել է, քան զկերակուր, և մարմինն՝ քան զհանդերձ (Ոգին կերակուրից է կարևոր, մարմինը՝ հագուստից):

4. Ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք: Որպէս մեծ է հոգի, քան զմարմին, այնպես մեծ է տեսաւորութիւն մտաց, քան զմարմնոց (Բոլոր չարիքները մարդու գլուխն են մտնում անուսումությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը՝ կատարյալ կյանքից: Լավ է լինել աչքով կույր, քան մտքով: Ինչպես հոգին է մարմնից մեծ, այնպես էլ մտքի թռիչքը մեծ է աչքի տեսողությունից):

5. Զամենայն, որ միանգամ կամիջիք, թե արասցէն ձեզ մարդիկ, այնպես և դուք արարէք նոցա (Այն ամենը, որ կամենում եք, որ մարդիկ անեն ձեզ համար, այնպես էլ դուք արեք նրանց համար):

6. Զի՞ տեսանես զշիւղն ական եղբօր քո և ի քում ական զգերանդ ոչ տեսանես (Ինչո՞ւ քո եղբոր աչքի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ):

7. Մի՛ դատեք, զի մի դատիցիք: Զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ (Մի՛ դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ դատաստանով դատեք, դրանով կդատվեք և ինչ չափով որ չափեք, դրանով էլ դուք կչափվեք):

ՀԵՔԻԱԹ ԼԵՌԱՆ ՈՒ ԼԵՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Արեգ Թադևոսյան

Դեպքը կատարվեց հազարավոր տարիներ առաջ՝ այժմյան Արարատյան դաշտի տեղում: Այդ ժամանակ այնտեղ տարածված էին վայրի խիտ անտառներ, ուր ազատ վազվզում էին վիթն ու այծյամը, հոսում էին լեռնային աճեղադոչ գետեր: Շրջակա դաշտերն ու հովիտները խաղաղ էին: Կապույտ երկինքը շողշողում էր ժպտերես, և անտառների անդորրը ժամանակ առ ժամանակ խախտում էր թռչունների ուրախ ճռվողյունը:

Զանգակաձև Լեռը, որ բազմել էր այդ չնաշխարհիկ վայրերի հորիզոնում, բոլորովին նման չէր մեզ ծանոթ սպիտակափառ ծերունուն: Նա կրակոտ, բռնկուն երիտասարդ էր՝ միաժամանակ օժտված նախապեսի ծանրախոհությամբ և իմաստնությամբ:

Մի օր, երբ Լեռը սովորականի պես նայում էր իր առջև տարածված դաշտավայրին, զարմանալի բան կատարվեց. շրջապատի անդորրն ու խաղաղությունը, միօրինակ համգստությունը խախտվեցին: Միահյուսված պատատուկների խիտ պատը ճեղքվեց, և այնտեղից դուրս եկան երկու արարած: Նրանք նման էին կենդանու,

բայց և ամենից ինչ-որ բան, որով տարբերվում էին Լեռան՝ մինչ այդ տեսած բոլոր արարածներից՝ Հաղորդակցվում էին Հնչյուններով: Այդ ձայները դեռևս Հնարավոր չէր «լեզու» անվանել, բայց դա արդեն խոսք էր, որը կենդանուն զատում է մարդուց:

Անցան Հազարամյակներ, բայց այս պատկերը մնաց Լեռան Հիշողության մեջ: Նա Համբերատարությամբ Հետևում էր, թե ինչպես անորոշ Հնչյունները վերածվում էին գեղեցիկ լեզվի, երգի, Հեքիաթի:

Բայց քանի Հազարամյակներ, բյուրեղանում էր Լեզուն, և ծնվում էին արվեստի նորանոր Հիասքանչ գործեր, մարդկանց էությունը այնքան աղարտվում, ապականվում էր: Լեռը տառապում էր մարդկային Հոգիների աղավաղությունից: Մինչ Արարիչը զայրացած էր: Իր իսկ ստեղծած անաղարտ էակների փոխակերպումը տեսնելով զզված ու ընչաքաղց մարդկանց՝ որոշեց մաքրել Հողը նրանցից, ստեղծել վերստին նոր ու ազնիվ արարածներ՝ այնքան անբասիր, այնքան անաղարտ, որ արժանի լինեին ապրելու իրենց տնօրինությանը Հանձնված Հողակտորի վրա:

Եվ աՀա մի անգամ Լեռն զգաց, որ իր փեշերը աստիճանաբար ողողվում են ջրով: Հեղե՞ղ: Ո՛չ, սա արդեն նման չէր այն սովորական անձրևներին, որոնցից շատ էր տեսել: Ջուրը, արագորեն բարձրանալով, Հասավ Լեռան լանջերին, ապա գագաթին: Խեղդվում էին անտառները, անզոր Հառաչում ցածրադիր սարերն ու բլուրները: Երկինքը տնքում էր կործանվող աշխարհի աղիողորմ ճիչերից: Լեռը միանգամից չընկալեց կատարվածի ահավորությունը... Եվ երբ ջրՀեղեղը դադարեց, նա Հասկացավ, որ պահպանվել է մի Հողակտոր-կղզյակ, և դա իր գագաթն է: Ջո՛ւր, ջո՛ւր: Լեռը սարսափում էր շուրջը տարածված լռությունից ու ամայությունից: Բայց մի օր Հեռվում՝ ջրերի վրա, նա մի փոքրիկ սև կետ նշմարեց, որը քանի գնում մեծանում, երկարում, տեսք էր առնում: Դա նավ էր, որ Հանգրվանեց կղզյակի վրա: Ու լեռը դարձյալ լսեց մարդկային ձայներ և իր գոյության ընթացքում երկրորդ անգամ ապշահար ու կարոտով սկսեց ականջ դնել: Խոսողը Նոյ նահապետն էր:

Կրկին անցավ որոշ ժամանակ, և ջուրն աստիճանաբար սկսեց Հետ քաշվել: Լեռան լանջերին ծաղիկներ բացվեցին, նրանց վրա թիթեռներ երևացին: Նոյի որդիները, թոռներն ու ծոռները ցրվեցին աշխարհով մեկ: Սակայն նրա զարմից «վայելչակազմ, թիկնավետ ու գեղագանգուր, վառվռուն աչքերով» Հայկը, տեսնելով շրջակայքի գեղեցկությունները և Հավանելով զովասուն օդը, բնակություն Հաստատեց Լեռան դիմաց գտնվող մի բարձրավանդակում և սկսեց ծաղկեցնել երկիրը՝ այն անվանելով «Հայք»:

Հայկը և նրա գերդաստանը խաղաղասեր մարդիկ էին. չէին նեղում ոչ ոքի, չէին խլում ուրիշի ունեցվածքը: Սակայն ճակատագրով նրանց Հանգիստ չէր տրված: Հայկա ցեղի վրա արշավողներն այնքան Հաճախակի էին թափվում, որ շունչ քաշելու ժամանակ չէր լինում: Բայց Հայկազուններն անպարտ էին:

Բնությունը տեսավ, որ ոչինչ չի ընկճում այդ քաջազուն զարմի ոգին, որոշեց վարձատրել Հոգով ուժեղ և կերտվածքով ազնիվ այդ մարդկանց:

- Ի՞նչ տամ նրանց, - Հարցրեց Բնությունը Լեռանը, - արծա՞թ, գի՞ր, ոսկի՞, Հզորությո՞ւն:

- Ո՛չ, - պատասխանեց Լեռը, - տո՛ւր արարելու ժամանակ, և նրանք ամեն ինչ կստեղծեն իրենց ձեռքերով:

բայց և ունեին ինչ-որ բան, որով տարբերվում էին Լեռան՝ մինչ այդ տեսած բոլոր արարածներից՝ հաղորդակցվում էին հնչյուններով: Այդ ձայները դեռևս հնարավոր չէր «լեզու» անվանել, բայց դա արդեն խոսք էր, որը կենդանուն դարձնում է մարդ:

Անցան հարյուրավոր տարիներ, բայց այս դեպքը մնաց Լեռան հիշողության մեջ: Նա համբերատարությամբ հետևում էր, թե ինչպես անորոշ հնչյունները վերածվում էին գեղեցիկ լեզվի, երգի, հեքիաթի:

Բայց քանի հարստանում, բյուրեղանում էր Լեզուն, և ծնվում էին արվեստի նորանոր հիասքանչ գործեր, մարդկանց էությունը այնքան աղտոտվում, ապականվում էր: Լեռը ապշում էր մարդկային հոգիների աղավաղումից: Մեծն Արարիչը ևս զայրացած էր: Իր իսկ ստեղծած անաղարտ էակների փոխարեն տեսնելով բիրտ ու ընչաքաղց մարդկանց՝ որոշեց մաքրել հողը նրանցից, որպեսզի ստեղծի նոր ու ազնիվ ադամորդիներ՝ այնքան անբասիր, այնքան անաղարտ, որ արժանի լինեին ապրելու իրենց տնօրինությանը հանձնված հողակտորի վրա:

Եվ ահա մի անգամ Լեռն զգաց, որ իր փեշերը աստիճանաբար ողողվում են ջրով: Հեղե՞ղ: Ո՛չ, սա արդեն նման չէր այն սովորական անձրևներին, որոնցից շատ էր տեսել: Ջուրը, արագորեն բարձրանալով, հասավ Լեռան լանջերին, ապա գագաթին: Խեղդվում էին անտառները, անզոր հառաչում ցածրադիր սարերն ու բլուրները: Երկինքը տնքում էր կործանվող աշխարհի աղիողորմ ճիչերից: Լեռը միանգամից չընկալեց կատարվածի ահավորությունը... Եվ երբ ջրհեղեղը դադարեց, նա հասկացավ, որ պահպանվել է մի հողակտոր-կղզյակ, և դա իր գագաթն է: Ջո՛ւր, ջո՛ւր: Լեռը սարսափում էր շուրջը տարածված լռությունից ու ամայությունից: Բայց մի օր հեռվում՝ ջրերի վրա, նա մի փոքրիկ սև կետ նշմարեց, որը քանի գնում մեծանում, երկարուկ տեսք էր ստանում: Դա նավ էր, որ հանգրվանեց կղզյակի վրա: Ու լեռը դարձյալ լսեց մարդկային ձայներ և իր գոյության ընթացքում երկրորդ անգամ ապշահար ու կարոտով սկսեց ականջ դնել: Խոսողը Նոյ նահապետն էր:

Կրկին անցավ որոշ ժամանակ, և ջուրն աստիճանաբար սկսեց հետ քաշվել: Լեռան լանջերին ծաղիկներ բացվեցին, նրանց վրա թիթեռներ երևացին: Նոյի որդիները, թոռներն ու ծոռները ցրվեցին աշխարհով մեկ: Սակայն նրա զարմից «վայելչակազմ, թիկնավետ ու գեղագանգուր, վառվռուն աչքերով» Հայկը, տեսնելով շրջակայքի գեղեցկությունները և հավանելով զովասուն օդը, բնակություն հաստատեց Լեռան դիմաց գտնվող մի բարձրավանդակում և սկսեց ծաղկեցնել երկիրը՝ այն անվանելով «Հայք»:

Հայկը և նրա գերդաստանը խաղաղասեր մարդիկ էին. չէին նեղում ոչ ոքի, չէին խլում ուրիշի ունեցվածքը: Սակայն ճակատագրով նրանց հանգիստ չէր տրված: Հայկա ցեղի վրա արհավիրքներն այնքան հաճախակի էին թափվում, որ շունչ քաշելու ժամանակ չէր լինում: Բայց հայկազուններն անպարտ էին:

Բնությունը տեսավ, որ ոչինչ չի ընկճում այդ քաջազուն զարմի ոգին, որոշեց վարձատրել հոգով ուժեղ և կերտվածքով ազնիվ այդ մարդկանց:

- Ի՞նչ տամ նրանց, - հարցրեց Բնությունը Լեռանը, - արվե՞ստ, գի՞ր, ոսկի՞, հզորությո՞ւն:

- Ո՛չ, - պատասխանեց Լեռը, - տո՛ւր արարելու ժամանակ, և նրանք ամեն ինչ կստեղծեն իրենց ձեռքերով:

համաձայնեց Բնությունը: Երկիրը բարգավաճեց, զորացավ, ծնեց պայծառ ուղեղներ: Դրանցից ամենահանճարեղը Մեսրոպ Մաշտոցն էր:

Երկրի համար նորից ստեղծվեց աղետալի վիճակ, և Մաշտոցը որոշեց միայնակ դիմագրավել Թշնամուն: Նա շատ աշխարհներում եղավ, որոնումների ճանապարհին շատ տառապեց և մի օր Հայրենի տուն վերադարձավ երեսունվեց քաջ մարտիկների անպարտելի զորաբանակով: Այդ օրվանից նոր դեպքերի ականատես եղավ արդեն զառամ Լեռը: Նա տեսավ Հայոց առաջին դպրոցների բացումը, նոր հանճարների ծնունդն ու արարչագործությունները, Հայերենի Առաջին Ուսուցչի Թաղման և Օշականում ամփոփելու տխուր ծիսակատարությունը: Այդ օրը ինքն էլ հեծեց արցունքներ, որոնք, հոսելով գագաթներից, հասան Մեծ գետին: Նա տեսավ նաև կեռ յաթաղանի կատարած ավերածությունները, ցանկացավ անհավասար մարտում սատարել իր ժողովրդին, սակայն ... ինքը գերի ընկավ: Ու նա տեսնում էր, թե ինչպես Թշնամին ձգտում է ոչնչացնել Հայկա տան հոգևոր գանձերը՝ Մագաղաթները: Նրանք ո՛ւմ ձեռքն ասես չընկան. մերթ զգացին Հայի ջե՛րմ, կարոտ ձեռքերի, մերթ օտարի սառն ու անհոգի մատների կոպիտ հպումը: Աշխարհում երկար դեգերելուց հետո նրանք մի օր հասան Վարդագույն քաղաքը: Ու այդտեղ նորից միմյանց գտան Մագաղաթներն ու ալեհեր Լեռը: Հասկացան Մագաղաթները, որ այդուհետև այստեղ է լինելու իրենց վերջին կացարանը: Եվ այն առեղծվածները, որ մինչ այդ այնպե՛ս խնամքով գաղտնի էին պահել օտարներից, շռայլորեն բացեցին հարազատների առաջ...

Փարվել են իրար Լեռն ու Լեզուն և այնպես ամուր են գրկախառնվել, որ ոչ ոք նրանց բաժանել չի կարողանում: Հենց այս միասնությունն է պահում ավերներ, Մեծ եղեռն, Մեծ երկրաշարժ տեսած, սակայն երբեք ծնկի չեկած Հայ ժողովրդին:

ՊԼԱՆ

1. Ջնաշխարհիկ դաշտավայրը և զանգակաձև Լեռը:
2. Զարմանալի արարածների հայտնվելը:
3. Անորոշ հնչյունների վերածվելը լեզվի:
4. Մարդկային հոգիների աղավաղումը:
5. Ջրհեղեղ:
6. Երկարուկ նավակը. Նոյ:
7. Հայկի գերդաստանը:
8. Մեսրոպ Մաշտոցի անպարտելի զորաբանակը:
9. Գերի Մագաղաթները:
10. Միմյանց փարված Լեռն ու Լեզուն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

վայրի խիտ անտառներ, վիթ, այծյամ, լեռնային ահեղագոչ գետեր, խախտել, անզոր, Թռչուննե-
րի ուրախ ճռվողյուն, զանգակաձև Լեռ, ալիտակափառ ծերունի, կրակոտ երիտասարդ, նահապետի
ծանրախոհություն և իմաստնություն, միահյուսված պատառուկներ, բյուրեղանալ, ազատվել, հոգի-
ների աղավաղում, բիրտ ու ընչաքաղց մարդիկ, անբասիր, անզոր հառաչել, տնքալ, աղիողորմ ճիչեր,
հանգրվանել, ապշահար ու կարոտով ականջ դնել, Հայկազուններ, պայծառ ուղեղներ, դիմագրավել
Թշնամուն, ծիսակատարություն, օտարի սառն ու անհոգի մատներ, դեգերել:

ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՆԵՏԻԿԸ

Ըստ Կիմ Բակշիի

1200 թվականն էր:

Անտառային նեղ կածանով զգուշությամբ առաջ էին ընթանում մի խումբ հեծյալներ: Ահա Աղստևի կիրճը սեղմվեց, գլխավերևում միահյուսվեցին ծառերի խիտ ճյուղերը՝ ստեղծելով բնական թունել: Թվում է՝ այդտեղ էլ սկսվեց փակուղին, և առաջանալու տեղ չկա: Բայց ոչ, ճանապարհը դեպի վեր խոյացավ, հետ գնացին կախված ժայռերը, անսպասելի շողշողաց կապույտ երկինքը, և սարերի փեշին երևաց բավական ընդարձակ մի հարթություն: Կարճահասակ, անմորուս, կրոնավորի սքեմով մարդը, որ հեծյալների առաջնորդն էր, կանգ առավ, զննող հայացքով դիտեց շուրջը:

«Սա հենց այն է, ինչ ուզում էի, - խոսեց նա ասես ինքնիրեն: - Անտառներից ու լեռներից այն կողմ, անհավատների աչքից հեռու: Այստեղ կարելի է ազատ գործել՝ չմտածելով անպաշտպան վիճակի, անարդյունքի ու թալանի մասին:»

Ու նրա անխոնջ, խոհուն հայացքի ներքո սկիզբ դրվեց հոյակերտ տաճարի շինարարությանը:

Սև սքեմով այդ մարդը Մխիթար Գոշն էր, որի անունով էլ վանքն անվանվեց «Գոշավանք»:

Գոշը շտապեցնում էր վարպետներին: Տաճարը պիտի ավարտվի մի տարում: Ինքը, որ գրել է արդեն Հայաստանի օրենքների ժողովածուն՝ հռչակավոր «Դատաստանագիրքը», այս հեռավոր մենաստանում իրավունքի համալսարան պիտի բացի: Աշխարհը լցվել է անարդարությամբ: Մի կողմից հայ իշխաններն ու մեծավորները, մյուս կողմից՝ սելջուկները…

Բայց չէ՞ որ Աստված մարդկանց հավասար ստեղծեց: Տվեց դրախտ այս երկիրը և ասաց. «Աճեցե՛ք ու բազմացե՛ք»: Ուրեմն որտեղի՞ց, ինչպե՞ս ծայր առան խտրականությունն ու ստրկությունը, ո՞ր օրենքով: Այո՛, աստվածային արարչագործության հիմքում արդարություն կար: Ինչպե՞ս պահպանել ի վերուստ շնորհված օրենքը:

Այս մտքերն էին տանջում Մխիթար Գոշին: Եվ նա ձեռնարկեց մի աննախադեպ աշխատանք՝ օրենքը ստեղծեց ըստ արդարության, ճանաչեց մարդու բնական իրավունքը՝ հավասարությունը ամենքի նկատմամբ: Եթե տերը ճորտին պարտադրում է ուժից վեր աշխատանք, ապա պիտի դատվի: Դատարանում չպետք է վիրավորեն ստրուկի կամ շինականի արժանապատվությունը, որովհետև նրանք ամենից առաջ մարդիկ են: Օրենքը պիտի պարտադիր լինի բոլորի համար՝ թե՛ իշխանի, թե՛ ռամիկի, թե՛ ճորտի: Ոչ ոք առավելություն չպետք է ունենա: Օրենքի առաջ բոլորը հավասար են: Ինչպե՞ս այս ամենը հասկացնել մարդկանց: Հազար կոկորդ է պետք, որ գոռան օրենքի ու արդարության մասին, դարձի բերեն այս անօրեն երկիրը:

Եվ Մխիթարը վճռում է սեփական դպրոց հիմնել: Թող կրթված երիտասարդները ցրվեն աշխարհով մեկ՝ տանելով իրենց հետ արդարության ձայնը: Միայն թե շուտ ավարտվի տաճարի շինարարությունը: Արդեն Հայաստանի լավագույն պատա-

նիները լուրի են սպասում, որ Հայտնվեն իր դպրոցում: Եվ արդեն չինակամների
տներ են քունսում մնկի պես. բնավորվում են մարդիկ այս նոր վայրում՝ տաճարի
չուրջը: Մե՛ծ է Գոշի Հեղինակությունը:
Եկավ 13-րդ դարի երկրորդ կեսը. փաղու՜ց օծվել է տաճարը, ու արդեն Հնարա-
վոր չէ Հաշվել աշակերտներին, որոնք դուրս են եկել վանքի պատերից և ուսուցա-
նում են «Դատաստանագիրքը»:
Բայց ի՞նչ փոխվեց աշխարհում: Արդարությու՞ն: Ամբողջ կյանքում դրան է
ձգտել ինքը: Նա մարդկանց օրենք տվեց արդարության կանոնների Համաձայն:
Բայց էլի ամեն ինչ նույնը մնաց: Առաջվա պես թագավորում է բիրտ ուժը, անօրի-
նականությունը: Չէ՛, Աստծու երազած անաղարտ մարդը ի բնե ամբարիշտ է:
Ինքը Հոգնել է ամեն ինչից և այժմ ուզում է կատարել վաղեմի ուխտը՝ գնալ
Երուսաղեմ և երկրպագել Տիրոջ մասունքներին:
Ու գնում է Գոշը՝ վանքը և միաբանությունը թողնելով Աստծո Հույսին:
Կիլիկիան պաշեցրեց Գոշին իր ազատ կյանքով: Չկան այստեղ առելի սելջուկ-
ները: Ամենուրեք Հայեր են ու ոչնչից չեն վախենում, ազատ քայլում են փողոցնե-
րով, շուկայում առևտուր անում: Վանքերում խաղաղ ժամերգություն է: Ի՜նչ տեղ
է դպրոց Հիմնելու, ուսուցանելու Համար:
Բայց չէ՞ որ ինքը երազեց մեկուսի, ապահով անկյուն և Աստծո օգնությամբ կա-
ռուցեց վանքը: Ի՞նչ է ուզում այլևս: Ո՛չ, Հարկավոր է շտապել, տուն դառնալ:
Ինքն արդեն երիտասարդ չէ, ութ տասնյակ տարեկան... Կատարեց ուխտը՝ եղավ Ե-
րուսաղեմում, էլ ի՞նչ է որոնում այստեղ: Չէ՞ որ ուխտ ունի նաև այն աղքատ միա-
բանների նկատմամբ: Ուրեմն տու՛ն, անՀապաղ տու՛ն:
Ու ճամփա ընկավ Մխիթար Գոշը:
Հասավ Սևան: ԱՀա սուր գմբեթով վանքի ուրվագիծը լճի կապտափայլ առա-
տաղին: Բայց այդ ի՞նչ ցնցոտիավոր խումբ է ճանապարհի եզրին: Սեփ-սև են, Հեռ-
վից ասես այրված թղթի էջեր լինեն: Ա՛, դրանք Գոշավանքի միաբաններն են, ո-
րոնք, լսելով իր վերադարձի մասին, եկել են ժամ առաջ դիմավորելու իրեն՝ ամբող-
ջովին քրջերի մեջ և սովից կմախքացած:
Երկարատև ճանապարհից Հոգնած, ասես միաբանների ողբալի վիճակը չնկատե-
լով, որի պատճառն իր բացակայությունն էր, Գոշը դիմավորողներից Հացի Համար
պյուր է խնդրում: Միաբանները Հոգոց Հանելով ողբաձայն ասում են.
- Որտեղի՞ց, ոչինչ չունենք:
- Գնացե՛ք, մեր վանքի ամբարներից վերցրե՛ք:
Եվ սևազգեստները վազում են, գնում տեսնում, որ իրենց շտեմարանները լի են
ցորենով, իսկ ամբարները՝ ալյուրով:
Նրանց մոտ էր վերադարձել մեծն Մխիթարը, սուրբ Մխիթար Գոշը:
ԱՀա և իր լուսատու ջահ տաճարը՝ սրբագործված ինկի ու կնդրուկի բույրերով:
Իր դպրո՞ցը, գրադարա՞նը: Ու աղոթում է Գոշը՝ գոՀություն մրմնջալով այս
Հրաշքների Համար:
Եվ մի օր էլ առավոտ կանուխ՝ մութը գետնին, աստղերի առկայծման ու ջաՀե-
րի ծխացող լույսերի ներքո վանքի միաբանության Հեծեծանքի ուղեկցությամբ Հե-
ռանում է իր ձեռքով կառուցած մենաստանից: Սուրբ Գոշը գնում էր դեպի Հա-
վերժություն...

նիները լուրի են սպասում, որ Հայոնվին իր դպրոցում: Եվ արդեն չինականների տներ են բուսնում սնկի պես. բնակվում են մարդիկ այս նոր վայրում՝ տաճարի շուրջը: Մե՜ծ է Գոշի հեղինակությունը:

Եկավ 13-րդ դարի երկրորդ կեսը. վաղու՜ց օծվել է տաճարը, ու արդեն հնարավոր չէ հաշվել աշակերտներին, որոնք դուրս են եկել վանքի պատերից և ուսուցանում են «Դատաստանագրքը»:

Բայց ի՞նչ փոխվեց աշխարհում: Արդարությու՞ն: Ամբողջ կյանքում դրան է ձգտել ինքը: Նա մարդկանց օրենք տվեց արդարության կանոնների համաձայն: Բայց էլի ամեն ինչ նույնը մնաց: Առաջվա պես թագավորում է բիրտ ուժը, անօրինականությունը: Չէ՜, Աստծու երազած անաղարտ մարդը ի բնե ամբարիշտ է: Ինքը հոգնել է ամեն ինչից և այժմ ուզում է կատարել վաղեմի ուխտը՝ գնալ Երուսաղեմ և երկրպագել Տիրոջ մասունքներին:

Ու գնում է Գոշը՝ վանքը և միաբանությունը թողնելով Աստծո հույսին:

Կիլիկիան պաշտպանեց Գոշին իր ազատ կյանքով: Չկան այստեղ առնել սելջուկները: Ամենուրեք հայեր են ու ոչնչից չեն վախենում, ազատ քայլում են փողոցներով, շուկայում առևտուր անում: Վանքերում խաղաղ ժամերգություն է: Ի՞նչ տեղ է դպրոց հիմնելու, ուսուցանելու համար:

Բայց չէ՞ որ ինքը երազեց մեկուսի, ապահով անկյուն և Աստծո օգնությամբ կառուցեց վանքը: Ի՞նչ է ուզում այլևս: Ո՛չ, հարկավոր է շտապել, տուն դառնալ: Ինքն արդեն երիտասարդ չէ, ութ տասնյակ տարեկան... Կատարեց ուխտը՝ եղավ Երուսաղեմում, էլ ի՞նչ է որոնում այստեղ: Չէ՞ որ ուխտ ունի նաև այն աղքատ միաբանների նկատմամբ: Ուրեմն տու՛ն, անհապաղ տու՛ն:

Ու ճամփա ընկավ Մխիթար Գոշը:

Հասավ Սևան: Ահա սուր գմբեթով վանքի ուրվագիծը լճի կապտաթափանց ստաղին: Բայց այդ ի՞նչ ցնցոտիավոր խումբ է ճանապարհի եզրին: Սև-սև են, հեռվից սև պատված թղթի էջեր լինեն: Այո՛, դրանք Գոշավանքի միաբաններն են, որոնք, լսելով իր վերադարձի մասին, եկել են ժամ առաջ դիմավորելու իրենց առաջնորդին՝ քրքրջի մեջ և սովից կմախքացած:

Երկարատև ճանապարհից հոգնած, սակայն միաբանների ողբալի վիճակը չնկատելով, որի պատճառն իր բացակայությունն էր, Գոշը դիմավորողներից հացի համար այլուր է խնդրում: Միաբանները հոգոց հանելով ողբաձայն ասում են.

- Որտեղի՞ց, ոչինչ չունենք:

- Գնացե՛ք, մեր վանքի ամբարներից վերցրե՛ք:

Եվ սևազգեստները փախչում են, գնում տեսնում, որ իրենց շտեմարանները լի են ցորենով, իսկ ամբարները՝ այլուրով:

Նրանց մոտ էր վերադարձել մեծն Մխիթարը, սուրբ Մխիթար Գոշը:

Ահա և իր լուսավոր ջահ տաճարը՝ սրբագործված խնկի ու կնդրուկի բույրերով: Իր դպրո՛ցը, գրադարա՛նը: Ու աղոթում է Գոշը՝ գոհություն մրմնջալով այս հրաշքների համար:

Եվ մի օր էլ առավոտ կանուխ՝ մութը չբացված, աստղերի առկայծման ու ջահերի ծխացող լույսերի ներքո վանքի միաբանության հետևանքի ուղեկցությամբ հեռանում է իր ճեպով կառուցած մենաստանից: Սուրբ Գոշը գնում էր դեպի հավերժություն...

ՊԼԱՆ

1. Գոյամարտի անդի բնորությունը:
2. Խոհեր արդարության մասին:
3. Ամեն ինչ որոշում է օրենքը:
4. Գոյամարտի կառուցումը և իրավաբանական համակարգի բացումը:
5. Կիլիկիայում:
6. Դեպի հայրենիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

անտառային նեղ կածաններ, բնական թունել, ընդարձակ հարթություն, ավեր, հոյակերտ տաճար, օրենքների ժողովածու, հեռավոր մենաստան, ի վերուստ շնորհված օրենք, արդարության ձայն, բիրտ ուժ, անօրինականություն, վաղեմի ուխտ, մեկուսի, ապահով անկյուն, աղքատ միաբաններ, ասր գրժբեթով վանքի ուրվագիծ, կապարափայլ առաստաղ, ցնցոտիավոր խումբ, քուրջ, կմախք, ամբար, լուսատու ջահ:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ԱՌԱԿՆԵՐ

Առյուծի ոտքը կոտրվեց. նա սկսեց տրտնջալ բոլոր կենդանիների վրա և ասաց.

- Դուք իմ հարկատուներն եք, որովհետև գազանների իշխանն եմ ես: Ինչու՞ ինձ համար զոհաբերություններ չեք անում, որ առողջանամ:

- Այն պատճառով, - պատասխանեցին կենդանիները, - որ մենք քեզանից պաշտպանություն չտեսանք ո՛չ արջի, ո՛չ գայլի, ո՛չ էլ գազանների ճանկից: Մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ: Մենք աստծուն պետք է զոհաբերություն անենք, որ այդպիսի փորձանքի բերեց քեզ:

* * *

Իմաստուններից մեկը հարցնում արավ ծառերին և ասաց.

- Ի՞նչն է պատճառը, որ դուք ինչքան բարձրանում եք, այնքան էլ խորը արմատներ եք գցում:

Եվ ծառերը պատասխանեցին:

- Ինքդ իմաստուն լինելով՝ ինչպե՞ս է որ չգիտես, որ մենք չենք կարող այսքան ճյուղեր կրելով մեզ վրա՝ դիմանալ հողմերի բռնությանը, եթե խոր արմատներ չգցենք: Տեսնու՞մ ես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որոնք թեպետև բազմաճյուղ են, բայց դաժան քամիներին ընդդիմադրել չեն կարող, որովհետև խորը արմատներ չունեն:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

ՊԼԱՆ

1. Գոշավանքի տեղի ընտրությունը:
2. Խոհեր արդարության մասին:
3. Ամեն ինչ որոշում է օրենքը:
4. Գոշավանքի կառուցումը և իրավաբանական համալսարանի բացումը:
5. Կիլիկիայում:
6. Դեպի հայրենիք:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անտառային նեղ կածաններ, բնական թունել, ընդարձակ հարթություն, աքեմ, հոյակերտ տաճար, օրենքների ժողովածու, հեռավոր մենաստան, ի վերուստ շնորհված օրենք, արդարության ձայն, ցիր-ում, անօրինականություն, վաղեմի ուխտ, մեկուսի, ապահով անկյուն, աղքատ միաբաններ, սուր գրչա-բերով վանքի ուրվագիծ, կապարափայլ առաստաղ, ցնցոտիավոր խումբ, քուրջ, կմախք, ամբոխ, լուսատու ջահ:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ԱՌԱԿՆԵՐ

Առյուծի ոտքը կոտրվեց. նա սկսեց տրտնջալ բոլոր կենդանիների վրա և ասաց.

- Դուք իմ հպատակներն եք, որովհետև գազանների իշխանն եմ ես: Ինչու՞ ինձ համար զոհաբերություններ չեք անում, որ առողջանամ:

- Այն պատճառով, - պատասխանեցին կենդանիները, - որ մենք քեզանից պաշտպանություն չտեսանք ո՛չ արջի, ո՛չ գայլի, ո՛չ էլ գազանների ձեռքից: Մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ: Մենք աստծուն պետք է զոհաբերություն անենք, որ այդպիսի փորձանքի բերեց քեզ:

* * *

Իմաստուններից մեկը հարցում արավ ծառերին և ասաց.

- Ի՞նչն է պատճառը, որ դուք ինչքան բարձրանում եք, այնքան էլ խոր արմատներ եք գցում:

Եվ ծառերը պատասխանեցին:

- Ինքդ իմաստուն լինելով՝ ինչպե՞ս է որ չգիտես, որ մենք չենք կարող այդքան ճյուղեր կրելով մեզ վրա՝ դիմանալ հողմերի բռնությանը, եթե խոր արմատներ չգցենք: Տեսնու՞մ ես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որոնք թեպետև բազմաճյուղ են, բայց դարձյալ քամիներին ընդդիմադրել չեն կարող, որովհետև խոր արմատներ չունեն:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

Պատերազմը խմբվեց Ջիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մատնյան:
երկնային օգնությամբ զորացած՝ (Հայերը) թշնամիների դիակներով բոլոր դաշտը
ցրին և մնացածներին հալածելով՝ փախցրին: Բայց ամբարիշտ Մերուժանի ձին, վի-
րավորված լինելով, չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ: Հայոց Սըմ-
բատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եղող զորքերը կոտո-
րեց և այն թշվառականին ձերբակալեց: Նա շամփուրը տաքացնելով բոլորեց պսա-
կի ձևով և շիկացնելով՝ ասաց.«Քեզ պսակում եմ, Մերուժա՛ն, որովհետև դու ձըգ-
տում էիր Հայոց վրա թագավորելու, և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ
հայրենի իշխանության կարգով»:

Եվ կրակի նման մեծ շամփուրը դրեց Մերուժանի գլխին, և այսպես այն չարը
սատկեց:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԿՐԱԿԱՊԱՇՏԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Ըստ Ստեփան Զորյանի

Գիշեր էր: Ջիրավի ընդարձակ դաշտավայրն օծված էր լուսնի անրջային լույ-
սով: Երեք կողմից շրջապատող լեռները, ասես ապահով շրջան կազմած,
հսկում էին դաշտը, և նա, դրանով կարծես հանգիստ, մեղկորեն փռվել էր կաթնա-
լույսի մեջ:

Խոր լռության մեջ էր թաղված Ջիրավը: Սակայն առաջին հայացքից հանգստա-
բած թվացող այդ անդորրը երևութական էր: Ուշադիր աչքը ակնակիր խավարում
կնկատեր բազմաթիվ վրաններ և զրահավոր ու սպառազեն պահակներ: Դա հայոց
բանակն էր, որ, երեք օրվա երկար ճամփա կտրելով, հասել էր Ջիրավ և այժմ
ընկղմված էր խոր քնի մեջ: Ու թեև ոչինչ չէր երևում անթափանց մթության խա-
վարում, հայերը գիտեին, որ այստեղ՝ շատ մոտիկ է պարսից բանակը:

Մի քանի ժամ հետո ճակատամարտն անխուսափելի էր, բայց առայժմ երկու բա-
նակները հանգստանում էին:

Լույսը բացվեց:

Արագ դասավորվում, տեղավորվում էին հայոց գնդերը: Հեծած իր սպիտակ
նժույգը՝ սրընթաց վարգով անցնում էր Մուշեղ սպարապետը, նայում, զննում,
կարգադրում: Երբ բոլոր զորագնդերը կազմ ու պատրաստ էին, նա բարձրացրեց
ձեռքը՝ ի նշան լռության, և դիմեց մարտիկներին.

Պատերազմը խմբվեց Ջիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան: Երկնային օգնությամբ զորացած` (Հայերը) Թշնամիների դիակներով բոլոր դաշտը լցրին և մնացածներին Հալածելով` փախցրին: Բայց ամբարիշտ Մերուժանի ձին, վիրավորված լինելով, չկարողացավ փախչողների Հետ արագ Հեռանալ: Հայոց Սմբատ սպարապետը աճապարելով Հասավ նրա մոտ, նրա Հետ եղող զորքերը կոտորեց և այն Թշվառականին ձերբակալեց: Նա շամփուրը տաքացնելով բոլորեց պսակի ձևով և շիկացնելով` ասաց.«Քեզ պսակում եմ, Մերուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա Թագավորելու, և իմ` ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ Հայրենի իշխանության կարգով»:

Եվ կրակի նման մեծ շամփուրը դրեց Մերուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԿՐԱԿԱՊԱՇՏԱԿԱՆ ՕԾՈՒՄ

Ըստ Ստեփան Զորյանի

Գիշեր էր: Ջիրավի ընդարձակ դաշտավայրն օծված էր լուսնի անրջային լույսով: Երեք կողմից շրջապատող լեռները, ասես ապահով շրջան կազմած, Հսկում էին դաշտը, և նա, դրանով կարծես Հանգիստ, մեղկորեն փռվել էր կաթնալույսի մեջ:

Խոր լռության մեջ էր Թաղված Ջիրավը: Սակայն առաջին Հայացքից Համատարած Թվացող այդ ամդորրը երևութական էր: Ուշադիր աչքը ականակիր խավարում կնկատեր բազմաթիվ վրաններ և գրաՀավոր ու սպառազեն պաՀակներ: Դա Հայոց բանակն էր, որ, երեք օրվա երկար ճամփա կտրելով, Հասել էր Ջիրավ և այժմ ընկղմված էր խոր քնի մեջ: Ու Թեև ոչինչ չէր երևում անԹափանց մԹության խավարում, Հայերը գիտեին, որ այստեղ` շատ մոտիկ է պարսից բանակը:

Մի քանի ժամ Հետո ճակատամարտն անխուսափելի էր, բայց առայժմ երկու բանակները Հանգստանում էին:

Լույսը բացվեց:

Արագ դասավորվում, տեղավորվում էին Հայոց գնդերը: Հեծած իր սպիտակ նժույգը` սրընթաց վարգով անցնում էր Մուշեղ սպարապետը, նայում, զննում, կարգադրում: Երբ բոլոր զորագնդերը կազմ ու պատրաստ էին, նա բարձրացրեց ձեռքը` ի նշան լռության, և դիմեց մարտիկներին.

- Իմ քաջե՛ր, ձեր դեմքերին նկատում եմ այնպիսի վճռականություն, վրեժի այնպիսի զգացում, որ ավելորդ եմ համարում ասել, թե ինչպես պետք վարվենք թշնամու հետ: Թշնամի, որի սրի ծայրին դեռ չի չորացել մեր հայրապետների արյունը: Նահատակները վրեժ են պահանջում: Շապուհն ուզում է ոչնչացնել մեզ և տեր դառնալ Հայոց երկրին: Մեր պապերն ու հայրերը պահել-պահպանել են այն ձեզ համար, դուք էլ պաշտպանեցե՛ք ձեր որդիների համար:

Հարձակումն սկսվեց: Միմյանց վրա սուրացին հակառակորդ բանակները: Նրանց բաժանող տարածությունը վայրկյան առ վայրկյան փոքրանում էր: Երկու կողմից սկսվեց նետաձգություն: Հազարավոր նետեր կտրատում էին օդը, գվվում չարագուշակ: Ընկնում էին մարդիկ, ձիեր:

Հենց սկզբից պարզ զգացվեց պարսիկների գերազանցությունը: Նրանք թե՛ մեծաթիվ էին, թե՛ վարժ, կռվում էին ավելի սառնասիրտ և հաստատուն առաջանում: Որոշ ժամանակ հայերը դիմադրում էին, սակայն չդիմանալով պարսից ճնշմանը՝ ահա ընկրկեցին, ապա խուճապային նահանջով դիմեցին դեպի Արածանի գետը: Հայոց զորքերը շարունակում էին փութով նետվել ջուրը և անցնել մյուս ափը:

Այնինչ բլրի վրա կանգնած ճերմակ ձիավորի թուխ դեմքին ոչ մի մկան չէր շարժվում: Թվում էր՝ նույնիսկ գոհ է ճակատամարտի ընթացքից: Եվ իրոք, սպարապետն ինքն էր հրամայել ձևացնել նահանջ և կեղծ փախուստ:

Քիչ անց, երբ մոտալուտ հաղթանակի բերկրանքով արբած պարսիկները գետն անցան, թիկունքից վրա տվին Սմբատ Բագրատունու և Սպանդարատ Կամսարականի գնդերը: Իսկ այս ափին Մուշեղն իր ճերմակով անցնում էր գնդից գունդ, մերթ աներևութանում նրանց արանքում, մերթ շողում՝ ինչպես ճերմակ կայծակ, որոտում՝ որպես ռազմի ահեղ ոգի.

- Օ՜ն, անվախ առա՜ջ: Զա՛րկ համարձակ:

Պարսից հեծյալ վաշտերը ղեկավարում էր մի սև ձիավոր: Դա ոտքից գլուխ սպառազեն, ձիգ կեցվածքով և գեղեցիկ իրանով տղամարդ էր՝ դեմքը ծածկած դիմկալով: Նիզակով ցուցումներ էր անում և ձին քշելով մի տեղից մյուսը՝ աշխատում էր կարգի բերել ցաքուցրիվ զինվորներին: Դիմկալը թույլ չէր տալիս որոշել, թե ով է նա:

Հանկարծ Բագրատունու մարտիկներից մեկը ճչաց շնչասպառ.

- Մերուժա՜նը, Մերուժա՜նը: Դավաճա՜նն է:

Սմբատ ասպետը նայեց ուշադիր և ճանաչելով՝ ինքն էլ գոչեց.

- Նա՛ է: Նզովյալ ուրացո՛ղն է: Ջոկատով գնա՛լ և շրջապատե՛լ: Չսպանե՛լ, կալանե՛լ անվնաս:

Մինչ այդ պարսից զորքն սկսեց անկանոն նահանջել: Պարտությունն անխուսափելի էր:

Գազանի հոտառությամբ զգալով վտանգը՝ դիմկալով զորականը թիկնապահների փոքրիկ խմբի հետ փորձեց ճողոպրել: Բայց Սմբատ ասպետի ջոկատը մրրիկի պես սլացավ՝ վախենալով ձեռքից բաց թողնել չարագործին: Սև ձիավորը սուրում էր քառասմբակ, անհավատալի արագությամբ և փոշու ամպեր բարձրացնելով:

Հեռվից նկատելով զորականի ճարպիկ խուսանավումները՝ Սմբատ ասպետն այլևս չհամբերեց, խթանեց նժույգը և հասավ իր զինվորներին: Երկար չտևեց հետապնդումը: Բագրատունու մարտիկներից մեկը թափով նետեց նիզակը, որը խըր-

- Իմ քաջե՛ր, ձեր դեմքերին նկատում եմ այնպիսի վճռականություն, վրեժի այնպիսի զգացում, որ ավելորդ եմ համարում ասել, թե ինչպես պիտի վարվեք թշնամու հետ: Թշնամի, որի սրի ծայրին դեռ չի չորացել մեր հարազատների արյունը: Նահատակները վրեժ են պահանջում: Շապուհն ուզում է ոչնչացնել մեզ և տեր դառնալ Հայոց երկրին: Մեր պապերն ու հայրերը պահել-պահպանել են այն ձեզ համար, դուք էլ պաշտպանեցե՛ք ձեր որդիների համար:

Հարձակումն սկսվեց: Միմյանց վրա սուրացին հակառակորդ բանակները: Նրանց բաժանող տարածությունը վայրկյան առ վայրկյան փոքրանում էր: Երկու կողմից սկսվեց նետաձգություն: Հազարավոր նետեր կտրատում էին օդը, գվվում չարագուշակ: Ընկնում էին մարդիկ, ձիեր:

Հենց սկզբից պարզ զգացվեց պարսիկների գերազանցությունը: Նրանք թե՛ մեծաթիվ էին, թե՛ վարժ, կռվում էին ավելի սառնասիրտ և հաստատուն առաջանում: Որոշ ժամանակ հայերը դիմադրում էին, սակայն չդիմանալով պարսից ճնշմանը՝ ահա ընկրկեցին, ապա խուճապային նահանջով դիմեցին դեպի Արածանի գետը:

Հայոց զորքերը շարունակում էին փութով նետվել ջուրը և անցնել մյուս ափը: Այնինչ բլրի վրա կանգնած ճերմակ ձիավորի թուխ դեմքին ոչ մի մկան չէր շարժվում: Թվում էր՝ նույնիսկ գոհ է ճակատամարտի ընթացքից: Եվ իրոք, սպարապետն ինքն էր հրամայել ձևացնել նահանջ և կեղծ փախուստ:

Քիչ անց, երբ մոտալուտ հաղթանակի բերկրանքով արբած պարսիկները գետն անցան, թիկունքից վրա տվին Սմբատ Բագրատունու և Սպանդարատ Կամսարականի գնդերը: Իսկ այս ափին Մուշեղն իր ճերմակով անցնում էր գնդից գունդ, մերթ աներևութանում նրանց արանքում, մերթ շողում՝ ինչպես ճերմակ կայծակ, որոտում՝ որպես ռազմի ահեղ ոգի.

- Օ՜ն, անվախ առա՜ջ: Զա՛րկ համարձակ:

Պարսից հեծյալ վաշտերը ղեկավարում էր մի սև ձիավոր: Դա ոտքից գլուխ սպառազեն, ձիգ կեցվածքով և գեղեցիկ իրանով տղամարդ էր՝ դեմքը ծածկած դիմկալով: Նիզակով ցուցումներ էր անում և ձին քշելով մի տեղից մյուսը՝ աշխատում էր կարգի բերել ցաքուցրիվ զինվորներին: Դիմկալը թույլ չէր տալիս որոշել, թե ով է նա:

Հանկարծ Բագրատունու մարտիկներից մեկը ճչաց շնչասպառ.

- Մերուժա՜նը, Մերուժա՜նը: Դավաճա՜նն է:

Սմբատ ասպետը նայեց ուշադիր և ճանաչելով՝ ինքն էլ գոչեց.

- Նա՛ է: Նզովյալ ուրացո՛ղն է: Ջոկատով գնա՛լ և շրջապատե՛լ: Զապանե՛լ, կալանե՛լ անվնաս:

Մինչ այդ պարսից զորքն սկսեց անկանոն նահանջել: Պարտությունն անխուսափելի էր:

Գազանի հոտառությամբ զգալով վտանգը՝ դիմկալով զորականը թիկնապահների փոքրիկ խմբի հետ փորձեց ճողոպրել: Բայց Սմբատ ասպետի ջոկատը մրրիկի պես սլացավ՝ վախենալով ձեռքից բաց թողնել չարագործին: Սև ձիավորը սուրում էր քառասմբակ, անհավատալի արագությամբ և փոշու ամպեր բարձրացնելով:

Հեռվից նկատելով զորականի ճարպիկ խուսանավումները՝ Սմբատ ասպետն այլևս չհամբերեց, խթանեց նժույգը և հասավ իր զինվորներին: Երկար չտևեց հետապնդումը: Բագրատունու մարտիկներից մեկը թափով նետեց նիզակը, որը խր-

վեց գավաճանի ձիու ազդրի մեջ, մնաց ցցված: Կենդանին ընկավ: Հեծյալը Հասկացավ, որ փախչելն արդեն անիմաստ է: Զինվորները վրա Հասան, Համեցին դիմակն ու սաղավարտը:

- Մերուժա՞նն է, Շապուհի ստրո՞ւկը, - բղավում էին, քաշքշում, թքում:

Բագրատունին մոտեցավ:

- Մի՛ տանջեք արյաց արքայի զորավարին, - խոսեց նա, - այսօր նրան պատվելու օր է: Այսպես ուրեմն, տե՛ր Արծրունյաց, Հայրենիքին մատուցած քո ծառայությունների Համար վերջապես կարժանանաս պատվի ու պսակի: Շապուհը քեզ խոստացավ Հայոց թագը, բայց չտվեց: Մի՛ մտածիր, ես ավելի առատաձեռն կլինեմ:

Նրա կարգադրությամբ զինվորներից մեկը բերեց պատկաձև ոլորած և շիկացած ձող:

- Պատիվ չի բերում քեզ, Սմբա՛տ ասպետ, գատատատն տեսնել կապանված իշխանի Հետ, - ասաց Մերուժանը:

- Պատի՞վ, - խնդաց Բագրատունին, - իսկ քեզ պատի՞վ էր բերում, որ այսպիսի շիկացած երկաթով վառում էիր քո Հայրենիքը:

Նա զինվորի ձեռքից վերցրեց շիկացած օղը և գոմքին խորշանքի արտաՀայտությամբ՝ դրեց Մերուժանի գլխին:

- Ահա՛, Արծրունյաց իշխան Մերուժան, խաբեբա Շապուհի տեղը ես՝ իբրև Բագրատունի թագադիր ասպետ, օծում եմ քեզ թագավոր քո սիրած կրակապաշտական ձևով:

*Մազերի խանձահոտի Հետ տարածվեց ծանր ճենճերահոտ:

Գործն ավարտեցին զինվորները՝ նիզակահարելով գավաճանին և նետելով ճահիճը: Զինվորներից մեկը ուզեց Հանել նրա ակնազարդ ոսկյա մատանին, բայց մի ուրիշը սաստեց.

- Զվերցնե՛ս ոչինչ: Պի՛ղծ է դրա ամեն ինչը:

Այդպես անփառունակ վախճան ունեցավ Մերուժան Արծրունին: Իսկ Ջիրավի դաշտում Հայերի Հաղթանակը դարձավ մեր պատմության գեղեցիկ էջերից մեկը:

ՊԼԱՆ

1. Ջիրավի դաշտը գիշերով:
2. Սպարապետի գիմումը զինվորներին:
3. Ճակատամարտ:
4. Սև գիմակավոր զորականը:
5. Անփառունակ վախճան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել Հետևյալ բառերն ու բառակապակցությունները. [illegible] անփառունակ վախճան:

2. Բացատրել [illegible] բառերի իմաստը:

վեց դավաճանի ձիու ագրի մեջ, մնաց ցցված: Կենդանին ընկավ: Հեծյալը հասկա-
ցավ, որ փախչելն արդեն անիմաստ է: Զինվորները վրա հասան, համեցին դիմկալն
ու սաղավարտը:
- Մերուժա՛նն է, Շապուհի սո՛ւկը, - բղավում էին, քաշքշում, թքում:
Բագրատունին մոտեցավ:
- Մի՛ տանջեք արյաց արքայի զորավարին, - խոսեց նա, - այսօր նրան պատվելու
օր է: Այսպես ուրեմն, տե՛ր Արծրունյաց, հայրենիքին մատուցած քո ծառայու-
թյունների համար վերջապես կարժանանաս պատվի ու պսակի: Շապուհը քեզ խոս-
տացավ Հայոց թագը, բայց չտվեց: Մի՛ մտածիր, ես ավելի առատաձեռն կլինեմ:
Նրա կարգադրությամբ զինվորներից մեկը բերեց պսակաձև ոլորած և շիկացած ձող:
- Պատիվ չի բերում քեզ, Սմբա՛տ ասպետ, դատաստան տեսնել կալանված իշխա-
նի հետ, - ասաց Մերուժանը:
- Պատի՞վ, - խնդաց Բագրատունին, - իսկ քեզ պատի՞վ էր բերում, որ այսպիսի
շիկացած երկաթով վառում էիր քո հայրենիքը:
Նա զինվորի ձեռքից վերցրեց շիկացած օղը և դեմքին խորշանքի արտահայտու-
թյամբ՝ դրեց Մերուժանի գլխին:
- Ահա՛, Արծրունյաց իշխան Մերուժա՛ն, խաբեբա Շապուհի տեղը ես՝ իբրև Բագ-
րատունի թագադիր ասպետ, օծում եմ քեզ թագավոր քո սիրած կրակապաշտական
ձևով:
Մազերի խանձահոտի հետ տարածվեց ծանր ճենճերահոտ:
Գործն ավարտեցին զինվորները՝ նիզակահարելով դավաճանին և նետելով ճա-
հիճը: Զինվորներից մեկը ուզեց հանել նրա ակնազարդ ոսկյա մատանին, բայց մի
ուրիշը սաստեց.
- Զզվելի՛ս ոչինչ: Պի՛ղծ է դրա ամեն ինչը:
Այդպես անփառունակ վախճան ունեցավ Մերուժան Արծրունին: Իսկ Ձիրավի
դաշտում հայերի հաղթանակը դարձավ մեր պատմության գեղեցիկ էջերից մեկը:

ՊԼԱՆ

1. Ձիրավի դաշտը գիշերով:
2. Սպարապետի դիմումը զինվորներին:
3. Ճակատամարտ:
4. Սև դիմկալով զորականը:
5. Անփառունակ վախճան:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները. անրջային, մեղկորեն, երևութական, գվվալ, ընկրկել, քառամբակ, ճողոպրել, ակնակիր խավար, անփառունակ վախճան:*

2. Բացատրել ***ընկրկել, մեղկորեն, ակնակիր*** *բառերի իմաստը:*

ՍԻՐՈ ՕՐԵՆՔԸ

Ըստ տարբեր աղբյուրների

Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի՜ յարեր վառել ես դու…

Ն. Զարյան

Վրաստանի Հերակլ արքան արդեն երեք տարի էր, ինչ պալատական երգիչ
Սայաթ-Նովային վտարել էր արքունիքից: Վտարել էր, բայց կարոտում էր
Նրա սրտաբուխ երգերը, հուր խաղերը:
Մի օր այլևս չհամբերելով՝ իր թիկնապահ Գորգունն ուղարկեց նրան գտնելու և
պալատ բերելու: Վերջինս երգչին գտավ Թիֆլիսի մեյդաններից մեկում՝ խալխի
պալատ բերելու: Վերջինս երգչին գտավ Թիֆլիսի մեյդաններից մեկում՝ խալխի
համար երգելիս: Հարմար պահ ընտրելով՝ մոտեցավ, ողջագուրվեց և ասաց.
- Սայա՛թ, թագավորը քեզ նորից պալատ է հրավիրում: Իմացի՛ր, սրտի վրա ծան-
բացած մեղքը քավելու համար քեզ թավադություն է շնորհել:
Երգիչը մի պահ լռեց: Հավանաբար հիշեց և վերապրեց այն բոլոր դառնություն-
ները, որ նախանձոտ իշխաններն էին պատճառել և Հերակլին իր հետ գժտեցրել:
Հոգում բորբոքվեց հին վիրավորանքը, և նա տրտում մրմնջաց.
- Ձեռը վի կալ, վատ մարթութին չի՛մ ուզում,
Յիս մարդ մարթ իմ, նամարդութին չի՛մ ուզում,
Յիս ռամիկ իմ, թավադութին չի՛մ ուզում,
Աղուհացիտ ախպերութին չի՛մ ուզում:
Այսպե՛ս պատասխանիր թագավորիդ, Գորգի՛, - դառնացած խոսեց Սայաթ-Նովան:
Հեշտ չէր համոզել վիրավորված երգչին, բայց, այնուամենայնիվ, նրան վերա-
դարձրին պալատ:
- Սայա՛թ, - ասաց Հերակլը, - դու գիտես, որ քեզ միշտ սիրել ու հովանավորել
եմ, բայց լեզվիդ վրա փակ դնել չկարողացա: Քո դեմ լարեցիր և՛ իշխաններին, և՛
պալատականներին, անգամ՝ Անտոն կաթողիկոսին, որովհետև կծու ծաղրով վիրա-
վորեցիր նրան: Սակայն ուզում եմ մոռանալ անցածը ու ցանկանում եմ, որ նորից
իմ կողքին լինես, բայց չափավորես խոսքդ ու ոճդ:
Արքային մերժել չէր կարելի: Գլուխ տվեց Սայաթ-Նովան, ապա պատասխանեց
բանաստեղծաբար.
- Ցավում եմ, արքա՛, որ՝
Ամեն մարթ չի՛ կանա կարթա, իմ գիրն ուրի՛շ գրեն է,
Ամեն մարթ չի՛ կանա խմի, իմ ջուրն ուրի՛շ ջրեն է.
Բունիաթս ավազ չիմանաս, քարա՛փ է, քարուկրեն է…
Ու նորից շարունակեց երգել Սայաթ-Նովան արքունի գևի խնջույքներում: Նրա
երգերից վարդ ու սուսամբար էր բուրում: Երբ խփում էր լարերին, կարծես խո-
սում էր քամանչան, խոսում մարդկանց սրտերի հետ ու արցունքներ քամում
նրանց աչքերից:

Բայց չգիտեր բանաստեղծը, որ իր վաղուց, հազարերանգ երգերով գերել, հրդեհել է արքայի քրոջ՝ գեղեցկուհի Աննայի սիրտը:

Արբշիռ գինարբուք է պալատում: Հոսում է վարդակարմիր գինին, փրփրում ոսկե գավաթներում: Վառ աչքերով նայում են Հերակլ արքան՝ ամենևին չնկատելով քրոջ արցունքոտ աչքերը, դողացող թարթիչները: Բայց սիրո անմրցելի երգիչը թատերական ոգով անհատնում սիրով՝ կարդում էր օրիորդի հոգին և նրա սիրուն պատասխանում յուրօրինակ խոստովանությամբ.

Աշխարումըս ախ չիմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա,

Անմահական ջրով լիքը օսկե փնջա՛ն իս ինձ ամա,

Նստիմ, վրես շվաք անիս, զարբաբ վրա՛ն իս ինձ ամա,

Սուչըս իմացի՛, էնենց սպանի, սուլթա՛ն ու խա՛ն իս ինձ ամա:

Ու մի լուսնկա գիշեր, երբ մեղկ քնի մեջ օրորվում էր պալատը, ու չնկչնկան զեփյուռից խշշում էին տերևները, Սայաթ-Նովան ծաղկանոցում գրկեց սիրած էակին, համբուրեց վարդագույն շուրթերը: Տարված միմյանցով՝ սիրահարները չնկատեցին, որ մի զույգ աչքեր հետևում են իրենց...

Հաջորդ օրը լուրը տարածվեց արքունիքում և հասավ Հերակլին:

- Բամբասանք կա պալատում, Սայա՛թ, - ասաց նա՝ կանչելով երգչին: - Լսել եմ՝ սիրում ես քրոջս՝ Աննային: Այսօր եսթ հեռացի՛ր և ականջիդ օ՛ղ արա՝ արքայի քույրը սազանդարի պատկանել չի կարող: Արդեն կարգադրել եմ. կգնաս Հաղպատի վանքը, սև աբեղ կհագնես ու հեռու մնալով Թիֆլիսից՝ կքավես մեղքերդ: Մոռացի՛ր աշխարհը և իմացի՛ր՝ հետդարձի ճանապարհ չունես: Ընդմի՛շտ: Մինչև մահ գերեզման:

Տրտում լսեց Սայաթ-Նովան և քամանչան կրծքին սեղմած իջավ սանդուղքներով ու մտամոլոր քայլեց դեպի Քուռը: Այո՛, իրեն կենդանի-կենդանի փակում են գերեզմանում: Եվ դրա՞ համար իր ամբողջ կյանքում արդարություն երգեց: Ինքը սխա՞լ էր ուրեմն, երբ ասում էր.

Աստված գիփունանցն մին հոգի էրիտ,

Աղկա՛տ սիրե, ղոնա՛ղ սիրե, տա՛ր սիրե...

«Մի՞թե սերը հարցնում է աղքատ ու հարուստ, - մտածում էր նա: - Ո՞վ հնարեց այդ օրենքը: Չէ՞ որ սիրո սուրբ օրենքների գիրքը մարդու սիրտն է»: Կսկիծը սրտում, քամանչան ուսին՝ մի օր էլ մեծ սիրահարը մտավ Հաղպատի վանքը: Հարգավ պարեգոտ, վեղար գրեց, բայց հոգու մեջ պահեց աշխարհը: Իսկ երբ Պարսկաստանի տիրակալներից մեկը՝ Աղա Մահմուդը, ասպատակեց Թիֆլիսը, Սայաթ-Նովան մի կողմ նետեց հոգևորականի հագուստը և հայտնվեց սիրած քաղաքում: 1795 թվականի սեպտեմբերի տասնմեկին քաղաքի համար զոհվածների մեջ գտան քամանչան սրտին սեղմած սառած մի մարդու: Դա Սայաթ-Նովան էր:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել՝

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները. ողջագուրվել, թախծություն, սրտի վրա փորել, սրտառուչ երգեր, հուր խաղեր, մեյդան, խալի, նախանձոտ իշխաններ, հին վիրավորանք, ծածկված մեղքը քավել, դառնությունները վերացրել, պատասխանել բանաստեղծաբար, լեզվի վրա փակ դնել, կծու ծաղր, չափավորել խոսքն ու լեզուն,

[illegible]

[illegible]

գ) [illegible]

2. Տալ հետևյալ բառերի բացատրությունը.

[illegible] - [illegible]

կանոն - [illegible]

[illegible] - [illegible]

[illegible] - [illegible]

[illegible] - [illegible]

[illegible] - բոլորին, ամենքին

[illegible] - [illegible]

[illegible] - հյուր

[illegible] - [illegible]

[illegible] - հրապարակ

[illegible] - ժողովուրդ

[illegible] - երաժիշտ

ՄԱԳԱՂԱԹՅԱ ՀՍԿԱՆ

Ըստ Կիմ Բակշիի

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր Լուվրը, Էրմիտաժը, Կրեմլը, Վերսալը, Թյուիլրին: Հայաստանում դա Մատենադարանն է՝ իր աշխարհահռչակ հազվագյուտ ձեռագրերով: Այնտեղ մտնում են ինչպես սրբատեղի և խոսում ակնածանքով ու շշուկով:

Ահա նա: Վեհաշքանչ մոտենում է, հառնում որպես բերդ, որպես քարե պատմություն: Լեռան պատատին նրա ճակատը նման է խորանի, հին ձեռագրերի սկզբնակչի:

Մատենադարան՝ այսինքն գրադարան, գրապահոց: Այնտեղ տասնվեց հազար ձեռագիր մատյան և պատառիկ կա՝ տասնինը գրամանոցից մինչև ամենամեծը՝ երկփեթանոց մագաղաթյա հսկան:

Որքա՜ն նման են հայ ժողովրդի և նրա ձեռքով ստեղծված մատյանների ճակատագրերը: Երբ գալիս էին թշնամիները, գրիչը՝ ձեռագրեր ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, մելանը, ներկերը և ընդօրինակման մատյանը, գնում էր ժողովրդի հետևից: Եվ որտեղ էլ որ դադար առներ, շարունակում էր արտագրել:

[illegible] գինի գիր խնձույքներ, եղջյուրաթաս, հագին կարգալ, [illegible] մեղր, [illegible] թեր, [illegible] ու ամեն, [illegible], ու աչեն, [illegible], [illegible].

բ) [illegible] բանաստեղծական հատվածները:

2. Տալ հետևյալ բառերի բացատրությունը.

Թավադություն - իշխանի կոչում

կանա - կարողանա, չի՛ կանա՝ չի՛ կարողանա

բունիաթ - հատկություն, բնավորություն

փնջան - բաժակ, գավաթ

զարբազ - [illegible], բռնեղ

գիֆունանց - բոլորին, ամենքին

էրիտ - [illegible]

գոնաղ - հյուր

տառ - [illegible]

մեյդան - հրապարակ

խալխ - ժողովուրդ

սաղանդար - երաժիշտ

ՄԱԳԱՂԱԹՅԱ ՀՍԿԱՆ

Ըստ Կիմ Բակչիի

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր Լուվրը, Էրմիտաժը, Կրեմլը, Վերսալը, Թյուիլրին: Հայաստանում դա Մատենադարանն է՝ իր աշխարհահռչակ հազվագյուտ ձեռագրերով: Այնտեղ մտնում են ինչպես սրբատեղի և խոսում ակնածանքով ու շշուկով:

Ահա նա: Վեհաշուք մոտենում է, հառնում որպես բերդ, որպես քարե պատմություն: Լեռան պատառին նրա ճակատը նման է խորանի, հին ձեռագրերի սկզբնատառի:

Մատենադարան՝ այսինքն գրադարան, գրապահոց: Այնտեղ տասնվեց հազար ձեռագիր կա՝ տասնինը գրամանոցից մինչև ամենամեծը՝ երկփեղկանի մատյան և պստլիկ [illegible] նախաթմաց մագաղաթյա հսկան:

Որքա՜ն նման են հայ ժողովրդի և նրա ձեռքով ստեղծված մատյանների ճակատագրերը: Երբ գալիս էին թշնամիները, գրիչը՝ ձեռագրեր ընդօրինակողը, շալակն առած մագաղաթյա ծանր թերթերի կապոցը, մելանը, ներկերը և ընդօրինակման մատյանը, գնում էր ժողովրդի հետևից: Եվ որտեղ էլ որ դադար առներ, շարունակում էր արտագրել:

Բազմաթիվ մատյաններ էջեր այրվել են հրդեհներից, ցողվել արյունով: Այրում էին հրապարակներում, գերի տանում: 1179 թվականին՝ սելջուկների արշավանքի ժամանակ, ոչնչացվել է տասը հազար հատոր, իսկ Լենկթեմուրը հրամայել է կրակի ճարակ դարձնել Տաթևի համալսարանը, բռնագրավել հսկայական մատենադարանը: Նա գիտեր, որ մատյանների համար լիուլի արծաթ ու ոսկի կստանա:

Հին ձեռագրերի վերջում կան հիշատակարաններ: Դրանք պատմում են պատերազմների, թշնամիների գիշերային հարձակումների, դաժան ճամփաների, գրիչների աշխատանքի մասին: Վերջիններս հիսուն-վաթսուն տարի զոր ու գիշեր արտագրել են ձեռագրերը և հարազատ աղջիկների նման թաքցրել թշնամուց: Այսպես է ծնվել մատյանը՝ բացառիկ երևույթ ո՛չ միայն իր հնության և հարուստ բովանդակության առումով, այլև այն տեղով, որ զբաղեցրել է իր ժողովրդի կյանքում, այն դերով, որ խաղացել է նրա պատմության մեջ: Մատյանը եղել է սուր, որով ժողովուրդը պայքարել է հանուն ազատության, ազգապահպանության և ինքնության հաստատման:

Հայ ժողովուրդը պաշտպանել է իր մատյանները, զենքը ձեռքին կռվել դրանց համար, թաքցրել, փրկագնել, ավելի մեծ համառությամբ նորանոր օրինակներ արտագրել:

Մատյանները թաղել են և դրանց վրա ողբացել, ինչպես զոհված մարտիկների վրա: Եթե երեխա չեն ունեցել, պատվիրել են մատյան ընդօրինակել և որդեգրել են այն:

Մատյանների ճակատագրերը մարդկանց ճակատագրերն են: Նրանք, ինչպես մարդիկ, ուր էլ որ թափառեն, երկար ճամփաներից հետո թակում են հայրենի տան դուռը:

Երևանի Մատենադարանի ցուցափեղկերից մեկում պահվում է մի վիթխարի մագաղաթյա ձեռագիր՝ ստեղծված 1200-1202 թվականներին: Դա նշանավոր «Մշո ճառընտիրն» է՝ հանդիսավոր ճառերի ժողովածուն: Այն հայտնի է իր վառ, հյութեղ մանրանկարներով և վիթխարի չափերով: Դրա պատրաստման համար օգտագործվել է յոթ հարյուր խոշոր հորթի կաշի: Կշռում է երկուսուկես փթից ավելի և աշխարհում ամենախոշոր մագաղաթյա մատյանն է:

«Մշո ճառընտիրն» ունի զարմանալի ճակատագիր:

Բաբերդում ապրող Աստվածատուր անունով մի այր ցանկանում է ունենալ մատյան՝ թանկարժեք մի մարգարիտ: Փնտրում է չնորհալի ընդօրինակողի և գտնում Վարդան անունով մեկին, որը երեք տարում ավարտում է հանդիսավոր ճառերի ժողովածուն:

1202 թվականին չարամիտ դավաճանությամբ թուրքերի ձեռքով սպանվում է Աստվածատուրը: Նրա ամբողջ ունեցվածքը բռնագրավվում է, իսկ «Մշո ճառընտիրը» ընկնում է թուրք դատավոր Բոցորի ձեռքը:

Բոցորն ապրում է Խլաթ քաղաքում: Մատյանը երկու տարի թաքցնելուց հետո նա ցանկանում է վաճառել, բայց այնպիսի գին է ասում, որ ոչ ոք վճարել չի կարողանում: Իսկ երբ տեսնում է մատյանը ձեռք բերելու հայերի բուռն ջանքերը, գինը կրկնապատկում է: Եվ, այդուհանդերձ, Խլաթի մոտ գտնվող Առաքելոց վանքից Սարգիս վարդապետը հինգ իմաստասերների հետ, ձմռան ցուրտն ու սառնամանիքը արհամարհելով, մեծ դժվարությամբ հասնում է Բոցորի մոտ, երկար բանակցում և գինը մի փոքր իջեցնելով՝ վերցնում ահագին գանձը ու մեծ ուրախությամբ վերադառնում վանք:

Հիշատակարանի հեղինակը այս իրադարձությունները շարադրելուց հետո երկար թվարկում է նրանց անունները, ովքեր օգնել են հավաքելու 4000 դրամ, այսինքն ավելի քան տասնութ կգ արծաթ:

Հաստատվելով Սուրբ Առաքելոց վանքում՝ «Մշո ճառընտիրը» շուրջ յոթ հարյուր տարի ջանադրաբար խնամվում է ու պահպանվում: Բայց 1915 թվականի եղեռնի ժամանակ այն իր ժողովրդի պես տեղահան եղավ: Գաղթականները, ինչպես միշտ արհավիրքի ժամանակ, իրենց հետ վերցրին ոչ թե իրեր, այլ մասունքը: Դրանք երկու կանայք էին, որոնք «Ճառընտիրը» տանում էին մեջքներին կապած: Դժվար էր քարշ տալ երկու փթանոց հսկային: Թուրքերը հասնում են թիկունքից, հապաղելու ժամանակ չկար: Կանայք մասունքը երկու կես են անում: Երկու կեսերը գաղթի ճամփաներին բաժանվում են միմյանցից և գնում աշխարհի տարբեր կողմերով: Թափառումների ժամանակ մագաղաթյա հսկան շատ էջեր և մանրանկարներ է կորցնում: Տասնյոթ էջ հայտնվում է Վենետիկում, մի քանի տասնյակ էջ անհետ կորչում է:

Ձեռքից ձեռք փոխանցվելով՝ «Ճառընտիրի» մի կեսը հասնում է Երևանի Մատենադարան: Պարզվում է, որ երկրորդ կեսը ուժասպառ մարդիկ գիշերով թաղել են Էրզրումի հայկական եկեղեցու բակում: Ձեռագիրը հայտնաբերվում է, և երկար դեգերումներից հետո գրքի երկու կեսերը ասես կարոտով փարվում են միմյանց՝ հանգրվանելով իրենց ապահով ու լուսե վերջին օթևանում:

ՊԼԱՆ

1. Երևանի Մատենադարանը:
2. Ժողովրդի և մասունքների ճակատագրերի նույնությունը:
3. «Մշո ճառընտիրը», նրա դեգերումները:
4. Վերջին հանգրվանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ հատուկ անունները.

ա) Լուվր, Էրմիտաժ, Կրեմլ, Վերսալ, Թյուիլրի, Մատենադարան, «Մշո ճառընտիր», Բաբերդ, Խլաթ, Սուրբ Առաքելոց վանք, Վենետիկ, Էրզրում:

Հիշատակարանի հեղինակը այս իրադարձությունները շարադրելուց հետո երկար թվարկում է նրանց անունները, ովքեր օգնել են հավաքելու 4000 դրամ, այսինքն ավելի քան տասնութ կգ արծաթ:

Հաստատվելով Սուրբ Առաքելոց վանքում՝ «Մշո ճառընտիրը» շուրջ յոթ հարյուր տարի ջանադրաբար խնամվում է ու պահպանվում: Բայց 1915 թվականի եղեռնի ժամանակ այն իր ժողովրդի պես տեղահան եղավ: Գաղթականները, ինչպես միշտ արհավիրքի ժամանակ, իրենց հետ վերցրին ոչ թե իրեր, այլ մատյանը: Դրանք երկու կանայք էին, որոնք «Ճառընտիրը» տանում էին մեջքներին կապած: Դժվար էր քարշ տալ երկու փթանոց հսկային: Թուրքերը հասնում են թիկունքից, հապաղելու ժամանակ չկար: Կանայք մատյանը երկու կես են անում: Երկու կեսերը գաղթի ճամփաներին բաժանվում են միմյանցից և գնում աշխարհի տարբեր կեռմաններով: Թափառումների ժամանակ մագաղաթյա հսկան շատ էջեր և մանրանկարներ է կորցնում: Տասնյոթ էջ հայտնվում է Վենետիկում, մի քանի տասնյակ էջ անհետ կորչում է:

Ձեռքից ձեռք փոխանցվելով՝ «Ճառընտիրի» մի կեսը հասնում է Երևանի Մատենադարան: Պարզվում է, որ երկրորդ կեսը ուժասպառ մարդիկ գիշերով թաղել են Էրզրումի հայկական եկեղեցու բակում: Ձեռագիրը հայտնաբերվում է, և երկար դեգերումներից հետո գրքի երկու կեսերը ասես կարոտով փարվում են միմյանց՝ համգրվանելով իրենց ապահով ու լուսե վերջին օթևանում:

ՊԼԱՆ

1. Երևանի Մատենադարանը:
2. Ժողովրդի և մատյանների ճակատագրերի նույնությունը:
3. «Մշո ճառընտիրը», նրա դեգերումները:
4. Վերջին համգրվանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ հատուկ անունները.*

ա) Լուվր, Էրմիտաժ, Կրեմլ, Վերսալ, Թյուիլրի, Մատենադարան, «Մշո ճառընտիր», Բաբերդ, Խլաթ, Սուրբ Առաքելոց վանք, Վենետիկ, Էրզրում:

ՀԱՅ ՄՈՒԿԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

(դատողական փոխադրություն)

Ժամանակով մի մուկ կար: Նա ապրում էր իր անձնական աշխարհում: Բայց մի օր թակարդն ընկավ իր շատ եղբայրների ու քույրերի, բարեկամների ու թշնամիների հետ: Մկներն ունեն թշնամիներ, ինչպես ամեն մեկը:

Այս արարածը, որ թակարդն ընկավ, անուն չուներ, բայց ուներ անհատականություն: Նա հպարտ մուկ էր: Երբեմն նույնիսկ մի քիչ կոպիտ էր, երբեմն՝ զայրացկոտ: Չնայած որ անուն չուներ, մյուս մկները նրան ճանաչում էին որպես Արտաշի: Ոչ ոք չգիտեր, թե ինչու: Դա նրան վայելում էր:

Է՛հ, եթե իրոք ուզում եք իմանալ ճշմարտությունը, Արտաշը նման չէր մյուս մկներին: Նա Հայ մուկ էր:

Բոլոր բռնված մկները թակարդն էին ընկել միայն մի պատճառով՝ կենդանաբանական այգին նրանց կարիքն ուներ: Օձերի՛ համար: Ամեն երեկո յուրաքանչյուր օձի տրվում էր մի կենդանի մուկ, որովհետև օձը նախընտրում էր, որ իր ընթրիքը ողջ վիճակում լինի:

Օձը իրեն լավ է զգում օձավարի ու աշխարհում ամեն ինչ լավ է համարում, երբ մուկն իր վանդակի մեջ դողդողում, ճստճստում և գութ է հայցում:

Ամեն երեկո լվացված, թակարդն ընկած մի մուկ էին բերում և գցում օձի վանդակը՝ որպես ընթրիք: Մկները չէին իմանում, թե ինչու են իրենց բերում կենդանաբանական այգի: Ոչ մեկը դեռ չէր վերադարձել, որ պատմեր մյուսներին:

Վերջապես մի իրիկուն մեր մկանը՝ Արտաշին, տեղավորեցին կենդանաբանական այգու ամենագեղեցիկ օձերից մեկի վանդակում: Օձին կոչում էին «Ռալֆ»:

Ռալֆն ուներ չորս ոտնաչափ բարձրություն, դեղին, կարմիր և սև պուտերով էր: Արդարև, իր տեսակի մեջ յուրահատուկ՝ օձերից օձագույնն էր կենդանաբանական այգում:

Ամբողջ մի տարի ամեն երեկո Ռալֆը զվարճացել էր՝ տեսնելով դողդողացող, ճստճստացող, գութ հայցող մկներին: Եվ առանց մի մխիթարական խոսքի, բարևելու, նույնիսկ «մնաք բարով» կամ գովասանական խոսքի՝ կերել էր նրանց:

Այսպես, այդ երեկո, երբ Ռալֆը տեսավ Արտաշին, ինքնիրեն քմծիծաղ տվեց քթի տակ, որովհետև կարծում էր, թե նա դողդողալով, ճստճստալով գթություն կհայցի իրենից, ինչպես վարվել էին բոլոր մյուս մկները:

Բայց հանկարծ Արտաշը տեսավ, թե ինչ է տեղի ունենում: Հասկացավ, թե ինչ է կատարվում այն օրից հետո, երբ ինքը բռնվել-բերվել է կենդանաբանական այգի: Արտաշը զայրացավ: Իրեն վիրավորված զգաց: Այնքան վիրավորվեց, որ մոռացավ, թե ինքը նման է մյուս մկներին: Նայեց օձին բացարձակ հարյուր տոկոսանոց ատելությամբ: Ավելին, քան ատելությունը, կատաղությամբ: Ինչի՞ տեղ է դնում օձն իրեն: Կարծում է Արտաշն իր համար մի հիմար ճա՞շ պիտի դառնա:

Արտաշն ուրիշ ծրագրեր ուներ: Ինչ-որ պատճառով հետաքրքրվում էր բարձրության հարցով: Ի՞նչ աստիճանի կարող է հասնել բարձրությունը: Արդյոք սահ-

Նա ուզում էր իմանալ հենց այդ և ուրիշ վեց-յոթ բաներ: Դրա
լի՞ն, քան մարդը: Նա ուզում էր իմանալ հենց այդ և ուրիշ վրա քմծիծաղելու գաղափարը, դողդողա-
համար էլ Արտաշին դուր չեկավ օձի՝ իր վրա քմծիծաղելու գաղափարը, դողդողա-
լով նրան սպասելը և մնացած բաները:

Արտաշը նետվեց Ռալֆի վրա մի այնպիսի ուժով, որ օձը անակնկալի եկավ, և
շունչը կտրվեց:

Արտաշը ցատկեց մեծ ճարպկությամբ. Նրան հետաքրքրում էր բարձրության
հարցը, ինչպես հիշում եք; և նա կարող էր ցատկել բարձր, շատ բարձր, ավելի, քան
մյուս մկները:

Արտաշը ցատկեց, նետվեց օձի վրա, պտտվեց նրա գլխի շուրջը, նորից ցատկեց,
ոտքերը մխրճեց և թրմփոցով խփեց ուղիղ Ռալֆի գագաթին:

Այո՛, դա նվաստացուցիչ էր: Շըրր՛մփ:

Ո՞վ է այս խենթ մուկը: Թըրր՛մփ:

Գուցե նա բոլորովին էլ մուկ չէ՞: Շըրր՛մփ:

Գուցե նա նմա՞ն է միայն մկան: Թըրր՛մփ:

Գուցե նա օձերի իսկական թշնամին է և շուտով ցու՞յց պիտի տա, թե ինչպես
է աշխարհում կործանելու ամեն մի օձի: Շըրր՛մփ:

Արտաշը ուղիղ Ռալֆի գլխին ցատկեց նորից ու նորից:

Իհարկե հիմա միակ բանը, որ Ռալֆի գլխում պտտվում էր, մի լավ ընթրիք ու-
նենալն էր: Շըրր՛մփ:

Այս արդեն բոլորովին անսպասելի էր: Թըրր՛մփ:

Ռալֆի գլուխն սկսեց ցավել:

Ամենից վատն այն էր, որ երբ նա շրջվում էր և աշխատում նայել Արտաշին,
միշտ ուշանում էր: Շըրր՛մփ:

Ռալֆին թվում էր, թե գլխին խփում են տասն անգամ ավելի մեծ բանով, քան
մուկն էր: Թըրր՛մփ:

Նրա գլուխն իհարկե զգացել էր, որ ծեծվում է շատ ճարպիկ թշնամու կողմից:
Շըրր՛մփ:

Այսպես շարունակվեց մոտ տասնհինգ դիպուկ, ուժեղ հարված: Ապա Ռալֆը
վճռեց, որ արդեն բավական է: Նա որոշեց՝ ավելի լավ է գտնել գլուխը պահելու մի
ապահով տեղ և ինչքան հնարավոր է՝ շուտ:

Այդպես էլ արեց:

Նա իրեն համարյա նետեց խցի ներսը և ուժգին փակեց դուռը: Հետո գաղտա-
գողի նայեց դուրս՝ հուսալով տեսնել, թե դա ինչ կատաղի կենդանի է: Սակայն տե-
սածը միայն Արտաշն էր, որը նույն չափն ու ծանրությունն ուներ, ինչ բոլոր մյուս
մկները:

Ոչ միայն այդ: Նա նայեց Արտաշին, բայց հայ մուկը չէր ճանճատում կամ գուշ
հայցում: Ռալֆը լսեց Արտաշի հայհոյանքները:

Կենդանաբանական այգու խնամատարներից մեկը պատահաբար սկզբից մինչև
վերջ ականատես էր այս բոլորին: Նա բացարձակապես պապանձվել, զարմացել, ապ-
շել ու հրճվում էր: Որքան հիշում էր, երբեք այդպիսի հարցերի մասնագետ՝ նման
բան առաջներում երբեք չէր պատահել:

Իրոք որ, մի մուկ կռվել էր օձի հետ իրավացի ու արդար ձևով և ծեծել էր նրան:

Եվ այսպես, խնամատարը Արտաշին վերցրեց օձի վանդակից և դրեց մի առան-

լի՞ն, քան մարդը: Նա ուզում էր իմանալ հենց այդ և ուրիշ վեց-յոթ բաներ: Դրա համար էլ Արտաշին դուր չեկավ օձի՝ իր վրա քմծիծաղելու գաղափարը, դողդողալով նրան սպասելը և մնացած բաները:

Արտաշը նետվեց Ռալֆի վրա մի այնպիսի ուժով, որ օձը անակնկալի եկավ, և շունչը կտրվեց:

Արտաշը ցատկեց մեծ ճարպկությամբ. նրան հետաքրքրում էր բարձրության հարցը, ինչպես հիշում եք, և նա կարող էր ցատկել բարձր, շատ բարձր, ավելի, քան մյուս մկները:

Արտաշը ցատկեց, նետվեց օձի վրա, պտտվեց նրա գլխի շուրջը, նորից ցատկեց, ոտքերը մտցրեց և թրմփոցով խփեց ուղիղ Ռալֆի գագաթին:

Այո՛, դա նվաստացուցիչ էր: Շըրը՛մփ:

Ո՞վ է այս խենթ մուկը: Թըրը՛մփ:

Գուցե նա բոլորովին էլ մուկ չէ՞: Շըրը՛մփ:

Գուցե նա նմա՞ն է միայն մկան: Թըրը՛մփ:

Գուցե նա օձերի իսկական թշնամին է և շուտով ցու՞յց պիտի տա, թե ինչպես է աշխարհում կործանելու ամեն մի օձի: Շըրը՛մփ:

Արտաշը ուղիղ Ռալֆի գլխին ցատկեց նորից ու նորից:

Իհարկե հիմա միակ բանը, որ Ռալֆի գլխում պտտվում էր, մի լավ ընթրիք ունենալն էր: Շըրը՛մփ:

Այս արդեն բոլորովին անսպասելի էր: Թըրը՛մփ:

Ռալֆի գլուխն սկսեց ցավել:

Ամենից վատն այն էր, որ երբ նա շրջվում էր և աշխատում նայել Արտաշին, միշտ ուշանում էր: Շըրը՛մփ:

Ռալֆին թվում էր, թե գլխին խփում են տասն անգամ ավելի մեծ բանով, քան մուկն էր: Թըրը՛մփ:

Նրա գլուխն իհարկե զգացել էր, որ ծեծվում է շատ ճարպիկ թշնամու կողմից: Շըրը՛մփ:

Այսպես շարունակվեց մոտ տասնհինգ դիպուկ, ուժեղ հարված: Ապա Ռալֆը վճռեց, որ արդեն բավական է: Նա որոշեց՝ ավելի լավ է գտնել գլուխը պահելու մի ապահով տեղ և ինչքան հնարավոր է՝ շուտ:

Այդպես էլ արեց:

Նա իրեն համարյա նետեց խցի ներսը և ուժգին փակեց դուռը: Հետո գաղտագողի նայեց դուրս՝ հուսալով տեսնել, թե դա ինչ կատաղի կենդանի է: Սակայն տեսածը միայն Արտաշն էր, որը նույն չափն ու ծանրությունն ուներ, ինչ բոլոր մյուս մկները:

Ոչ միայն այդ: Նա նայեց Արտաշին, բայց հայ մուկը չէր ճստճստում կամ գութ հայցում: Ռալֆը լսեց Արտաշի հայհոյանքները:

Կենդանաբանական այգու խնամատարներից մեկը պատահաբար սկզբից մինչև վերջ ականատես էր այս բոլորին: Նա բացարձակապես պապանձվել, զարմացել, ապշել ու հրճվում էր: Որքան հիշում էր, իբրև այդպիսի հարցերի մասնագետ՝ նման բան աշխարհում երբեք չէր պատահել:

Իրոք որ, մի մուկ կռվել էր օձի հետ իրավացի ու արդար ձևով և ծեծել էր նրան: Եվ այսպես, խնամատարը Արտաշին վերցրեց օձի վանդակից և դրեց մի առանձ-

ձին փախցնելուց։ Դրանից հետո Արտաշը ցուցադրվեց կենդանաբանական այգում, բայց ոչ որպես ձուկ։ Արտաշը ցուցադրվեց որպես հենց ինքը՝ որպես հանճար մրկ-ների մեջ։

Առ թող լինի դաս մեկին, և դու գուցե հասկանում ես, որ հենց քեզ եմ ակնարկում։

ԳՐԵԼ
1. Հայ ձուկ Արտաշը։
2. Մինչև ափի կերակուր։
3. Գեղեցիկ ճաշերը։
4. Օձաձկին հրճվանք։
5. Արտաշի բժրատակումը և հաղթանակը։
6. Համաշխարհ հայ ձուկը։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Տեքստի ընթերցումից հետո բացատրել պատմվածքի այլաբանական իմաստը։

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Ուշ գիշերով Ռուսաստանի Ռոստով քաղաքում մի գարեջրատան մոտով անցնում էի, երբ սպիտակ վերնազգեստով մի սպասավոր տեսա, որ անպայման հայ էր։ Եվ ուրեմն մոտեցա, հարցրի.

– Ինչո՞ւ ես, առավոտ մինչև ուշ, խմո՞ւմ ես։

– Խմո՞ւմ ես, առավոտ մինչև ուշ, խմում ես։ Պատասխանը միայն թույլ գլխով։

Չգիտեմ ինչից հասկացա, որ հայ է, բայց հասկացա։ Ոչ թանձր ու խիտ գանգուրներն ու խորաքը չէր, ոչ էլ բարձր ու ծուռ քիթը, ոչ էլ թանձր ու խիտ գանգուրները չտեսնված ուղեղ աչքերը։ Բարձր ու ծուռ քիթ, խորամանկ աչք, խիտ գանգուրներ շատերն ունեն, բայց հայ չեն։ Մեր ցեղը գործնականի ցեղ է, և ես ճանաչում էի ընկեր հայասանին, բայց հայ չեն։ Մեր ցեղը գործնականի ցեղ է, և ես ճանաչեցի նրան՝ սառը ուղխարկի ներ գանելու։

Մեր դեռ ուրեմն գարեջրատան՝ բարև տալու ինձ նման մեկին՝ սառը ուղխարկի մեջ մի սառնարանի։

– Վա՛յ, – ասավ գործարքի այն չկյանք, որ մեր լեզուն ու խոսքը հասավ ուրախություն է գարեջուր։ – Դո՞ւ։

Եվ այդ «դուն» ճիշտ ես էի՝ իմ հայրս, իմ եղբայրները, իմ զինակիցը ու թերես իմ ցեղի ամբողջ Ամերիկան։

– Ինչպե՞ս հաս ինկար։

– Գարուն, – ասացի խանդավառությամբ, – Եղել։ Ո՞րն է քու բաղադրը, ու՞ր ծնած ես։

– Մուշ, – ասաց։ – Ու՞ր կերթաս, հաս ի՞նչ կընես։ Դուն ամերիկացի ես, քու հայրդ ամերիկացի է։

ձին վանդակում: Դրանից հետո Արտաշը ցուցադրվեց կենդանաբանական այգում, բայց ոչ որպես մուկ: Արտաշը ցուցադրվեց որպես հենց ինքը՝ որպես հանճար մկների մեջ:

Սա թող լինի դաս մեկին, և դու գուցե հասկանում ես, որ հենց քեզ եմ ակնարկում:

ՊԼԱՆ

1. Հայ մուկ Արտաշը:
2. Մկները օձի կերակուր:
3. Գեղեցիկ Ռալֆը:
4. Օձային հրճվանք:
5. Արտաշի ըմբոստանալը և հաղթանակը:
6. Հանճարեղ հայ մուկը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Տեքստի ընթերցումից հետո բացատրել պատմվածքի այլաբանական իմաստը:*

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ՀԱՅԸ ԵՎ ՀԱՅԸ

Ըստ Վիլյամ Սարոյանի

Ուշ գիշերով Ռուսաստանի Ռոստով քաղաքում մի գարեջրատան մոտով անցնում էի, երբ սպիտակ վերնազգեստով մի սպասավոր տեսա, որ անպայման հայ էր, և ուրեմն մոտեցա, հարցրի.

- Իմա՞լ ես, աստված տունդ ավրե, իմա՞լ ես:

Չգիտեմ ինչից հասկացա, որ հայ է, բայց հասկացա: Պատճառը միայն թուխ դեմքը չէր, ոչ էլ բարձր ու ծուռ քիթը, ոչ էլ թանձր ու խիտ գանգուրներն ու խորագիր աչքերը: Բարձր ու ծուռ քիթ, խորագիր աչք, խիտ գանգուրներ շատերն ունեն, բայց հայ չեն: Մեր ցեղը զարմանալի ցեղ է, և ես ճամփա էի ընկել Հայաստանը գտնելու:

Ոտք դրի ուրեմն գարեջրատուն՝ բարև տալու ինձ նման մեկին՝ օտար աշխարհի մեջ մի օտարականի:

- Վա՜յ, - ասավ զարմանքի այն շեշտով, որ մեր լեզուն ու խոսքը համակ ուրախություն է դարձնում: - Դու՞:

Եվ այդ «դուն» ճիշտ ես էի՝ իմ հագուստը, իմ կոշիկները, իմ գլխարկը ու թերևս իմ դեմքի ամբողջ Ամերիկան:

- Ինչպե՞ս հոս ինկար:

- Գաղտուկ, - ասացի խանդաղատանքով, - կքալեի: Ո՞րն է քու քաղաքդ, ու՞ր ծնած ես:

- Մուշ, - ասաց: - Ու՞ր կերթաս, հոս ի՞նչ կընես: Դուն ամերիկացի ես, քու հագուստդ ամերիկացու է:

Մու՜շ…
Ես սիրում եմ այդ քաղաքը: Ես կարող եմ սիրել որևէ վայր, որ երբեք չեմ տե-
սել, վայր, որ այլևս գոյություն չունի, որի բնակիչները սպանված են:
Մու՜շ… Քաղաք, ուր Հայրս իր երիտասարդությամբ եղել է:
Տե՛ր Աստված, ի՜նչ լավ էր մշեցի այդ Հային հանդիպելը: Դուք անգամ չեք
պատկերացնի, թե որքան լավ է Հայի համար հանդիպումը մի ուրիշ Հայի հետ աշ-
խարհի կորած-մոլորած մի անկյունում, այն էլ գարեջրատանը՝ մի տեղ, ուր մարդիկ
խմում են: Մե՜ղ ինչ, թե գարեջուրն անհամ է, և մե՜ղ ինչ անգամ բռնապետու-
թյունները: Դրանք այդպես են ու այդպես էլ պիտի լինեն: Աշխարհում կան բաներ,
որ փոխելն անկարելի է:
- Վա՜յ, - ասավ կամաց ու մեղմ ուրախությամբ, - ու լեզուն կխոսիս ու չես մոռցած:
Ու երկու գավաթ տեղական անհամ գարեջուր բերեց:
Եվ Հայոց մեր շարժուձևը, որ այնքան բան է ասում, ծնկներին խփելն ու պայ-
թյուն ծիծաղը… Եվ կյանքի ու նրա մեծ-մեծ գաղափարների ծաղրը… Եվ Հայերեն
բառը. նայվածքը, ժպիտը և այս ամենի միջից զարմանալի հառնումը ցեղի՝ ուշա-
ցած, բայց դարձյալ զորավոր, թեև տարիներ են թավալվել, թեև քաղաքները կոր-
ծանվել, Հայրերը, եղբայրներն ու զավակները սպանվել, վայրերը մոռացվել, երազ-
ները փշրվել, Հոգիները ոխից սևացել են:
Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցե-
ղը, համառ ու Հպարտ մարդկանց այս ցեղը, որի պատմությունը պատմված, բոլոր
կռիվները մղված ու տանուլ են տրված, որի շենքերը խորտակված, գրքերը չըն-
թերցված, ու երգերը լռած են:
Փորձե՛ք կործանել այս ցեղը: Ասացե՛ք՝ դարձյալ 1915-ն է, ու աշխարհի աչքը
պատերազմի ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք: Ի-
րենց տներից քշեցե՛ք անապատ, մի՛ մոռացեք ձեռքներից խլել ճամփի հացն ու ջրի
վերջին ումպը, կրակի տվեք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսեք՝ նրանք դար-
ձյալ պիտի չապրե՞ն: Տեսեք՝ ցեղը դարձյալ պիտի չհառնի՞, երբ նրանցից երկուսը
քսան տարի հետո հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզվով:
Ջանացե՛ք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, չունչխանորդիներ, նրանց ալգելել, որ
չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, որ աշխարհում երկու Հայ չխոսեն իրար հետ,
փորձե՛ք ջնջել նրանց:

Աշխատի՛ր սիրել յուրաքանչյուր մարդու, ով կհանդիպի քո ճանապարհին…

* * *

Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ համարում եմ
Հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ,
ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու, Հայկական է: Ուրեմն ես Հայ գրող
եմ և պատկանում եմ Հայ գրողների ընտանիքին:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

Մու՛շ…

Ես սիրում եմ այդ քաղաքը: Ես կարող եմ սիրել որևէ վայր, որ երբեք չեմ տեսել, վայր, որ այլևս գոյություն չունի, որի բնակիչները սպանված են:

Մու՛շ… Քաղաք, ուր Հայրս իր երիտասարդությամբ եղել է:

Տե՛ր Աստված, ի՛նչ լավ էր մշեցի այդ Հային Հանդիպելը: Դուք անգամ չեք պատկերացնի, թե որքան լավ է Հայի Համար Հանդիպումը մի ուրիշ Հայի Հետ աշխարհի կորած-մոլորած մի անկյունում, այն էլ գարեջրատանը՝ մի տեղ, ուր մարդիկ խմում են: Մե՛զ ինչ, թե գարեջուրն անհամ է, և մե՛զ ինչ անգամ բռնապետությունները: Դրանք այդպես են ու այդպես էլ պիտի լինեն: Աշխարհում կան բաներ, որ փոխելն անկարելի է:

- Վա՛յ, - ասավ կամաց ու մեղմ ուրախությամբ, - ու լեզուն կխոսիս ու չես մոռցած:

Ու երկու գավաթ տեղական անհամ գարեջուր բերեց:

Եվ Հայոց մեր շարժուձևը, որ այնքան բան է ասում, ծնկներին խփելն ու պայթյուն ծիծաղը… Եվ կյանքի ու Նրա մեծ-մեծ գաղափարների ծաղրը… Եվ Հայերեն բառը. Նայվածքը, ժպիտը և այս ամենի միջից զարմանալի Հառնումը ցեղի՝ ուշացած, բայց դարձյալ զորավոր, թեև տարիներ են թավալվել, թեև քաղաքները կործանվել, Հայրերը, եղբայրներն ու զավակները սպանվել, վայրերը մոռացվել, երազները փշրվել, Հոգիները ոխից սևացել են:

Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը, Համառ ու Հպարտ մարդկանց այս ցեղը, որի պատմությունը պատմված, բոլոր կռիվները մղված ու տանուլ են տրված, որի շենքերը խորտակված, գրքերը չընթերցված, ու երգերը լռած են:

Փորձե՛ք կործանել այս ցեղը: Ասացե՛ք՝ դարձյալ 1915-ն է, ու աշխարհի աչքը պատերազմի ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսեք՝ կկարողանա՞ք: Իրենց տներից քշեցե՛ք անապատ, մի՛ մոռացեք ձեռքներից խլել ճամփի Հացն ու ջրի վերջին ումպը, կրակի տվեք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսեք՝ նրանք դարձյալ պիտի չապրե՞ն: Տեսեք՝ ցեղը դարձյալ պիտի չՀառնի՞, երբ նրանցից երկուսը քսան տարի Հետո Հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզվով:

Ջանացե՛ք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, շունչանորդինե՛ր, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, որ աշխարհում երկու Հայ չխոսեն իրար Հետ, փորձե՛ք ջնջել նրանց:

Աշխատի՛ր սիրել յուրաքանչյուր մարդու, ով կՀանդիպի քո ճանապարՀին…

* * *

Թեև գրում եմ անգլերեն և ծնունդով ամերիկացի եմ, բայց ինձ Համարում եմ Հայ գրող: Լեզուն, որով գրում եմ, անգլերեն է, միջավայրը, որ նկարագրում եմ, ամերիկյան է, իսկ ոգին, որ ինձ մղում է գրելու, Հայկական է: Ուրեմն ես Հայ գրող եմ և պատկանում եմ Հայ գրողների ընտանիքին:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ

ՍԱՐՈՅԱՆԻ ՀԵՏ

ՈՐՈ՞Ն ԶԱՐՄԱՑՆԵՄ

Դեռ Մոսկվայում նրա սեղանի վրա տեսա իր գործերի մի քանի անգլերեն հրատարակությունները:

- Ինչու՞ նկարդ չես դրեր, - հարցրի:

- Հայու բեղերես կամչնամ, - պատասխանեց նա կես լուրջ-կես կատակ, - բեղերս անգլիական չեն:

Երբ Երևանում հանդիպեցինք, չկարողացա չզարմանալ սարոյանական զարմանքով…

Բեղերը կրճատել էր հիսունհերեք տոկոսով:

- Զարմանալի մարդ ես, - քրթմնջացի, - պատվական բեղերդ բերիր հասցրիր մինչև այստեղ և Երևան մտար կրճատ բեղերով…

- Օղու՛լ, - գրեթե բարկացավ նա, - ես իմ հայու բեղերով ամերիքացիներուն, ֆրանսացիներուն կրնամ զարմացնել: Այստեղ՝ Հայաստանին մեջ, որու՞ն զարմացնեմ: Հայերեն չեմ գիտեր և հայու բեղեր կպահեմ: Կամչնամ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Թատերական դահլիճը լեցուն է:

Բայց մի քանի անգամ ավելի շատ են տոմսակ չունեցողները, ճնշող տոկոսը՝ երիտասարդություն:

Նրանք դուրս մնացին:

- Շնորհակալություն, որ եկաք և ինծի պատվեցիք, - ասաց նա, - բայց ես ձեր մասին քիչ կմտածեմ: Ես ավելի շատ կմտածեմ անոնց մասին, որոնք չկրցան ներս մտնալ: Ես միշտ հոգով, մտքով և սիրտով եղեր եմ դուրս մնացածներուն հետ…

- Գրողը ժողովուրդին նոր ոչինչ չի տար: Գրողը ժողովուրդեն կվերցնե ամեն ինչ և անոր կվերադարձնե:

- Կեցցե՛ մեր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան:

Հարցեր կա՞ն:

Եղան և հարցեր:

Մեկը հարցրեց.

- Ի՞նչ տարբերություն ձեր և Շեքսպիրի մեջ:

Վիլյամ Սարոյանը չկորցրեց իրեն.

- Ոչ մի տարբերություն, - պատասխանեց նա սարոյանական «լրջությամբ», - միակ տարբերությունը այն է, որ նա անգլիացի է, ես՝ հայ:

ՍԱՐՈՅԱՆԻ ՀԵՏ
ՈՐՈ՞Ն ԶԱՐՄԱՑՆԵՄ

Դեռ Մոսկվայում նրա սեղանի վրա տեսա իր գործերի մի քանի անգլերեն հրա-
տարակությունները:
- Ինչու՞ նկարդ չես դրել, - հարցրի:
- Հայու բեղերես կամչնամ, - պատասխանեց նա կես լուրջ-կես կատակ, - բեղերս
անգլիական չեն:
Երբ Երևանում հանդիպեցինք, չկարողացա չզարմանալ սարոյանական զարման-
քով...
Բեղերը կրճատել էր հիսուներեք տոկոսով:
- Զարմանալի մարդ ես, - քրթմնջացի, - պատվական բեղերդ բերիր հասցրիր
մինչև այստեղ և Երևան մտար կրճատ բեղերով...
- Օղու՛լ, - գրեթե բարկացավ նա, - ես իմ հայու բեղերով ամերիքացիներուն,
ֆրանսացիներուն կրնամ զարմացնել: Այստեղ՝ Հայաստանին մեջ, որու՞ն զարմաց-
նեմ: Հայերեն չեմ գիտեր և հայու բեղեր կպահեմ: Կամչնամ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Թատերական դահլիճը լեցուն է:
Բայց մի քանի անգամ ավելի շատ են տոմսակ չունեցողները, ճնշող տոկոսը՝ ե-
րիտասարդություն:
Նրանք դուրս մնացին:
- Շնորհակալություն, որ եկաք և ինձի պատվեցիք, - ասաց նա, - բայց ես ձեր
մասին քիչ կմտածեմ: Ես ավելի շատ կմտածեմ անոնց մասին, որոնք չկրցան ներս
մտնալ: Ես միշտ հոգով, մտքով և սիրտով եղեր եմ դուրս մնացածներուն հետ...
- Գրողը ժողովուրդին նոր ոչինչ չի տար: Գրողը ժողովուրդեն կվերցնե ամեն
ինչ և անոր կվերադարձնե:
- Կեցցե՛ մեր հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան:
Հարցեր կա՞ն:
Եղան և հարցեր:
Մեկը հարցրեց.
- Ի՞նչ տարբերություն ձեր և Շեքսպիրի մեջ:
Վիլյամ Սարոյանը չկրցրեց իրեն.
- Ոչ մի տարբերություն, - պատասխանեց նա սարոյանական «լրջությամբ», -
միակ տարբերությունը այն է, որ նա անգլիացի է, ես՝ հայ:

ԱՐԱՐԱՏ՝ ՁՅՈՒՆԸ ՎՐԱՆ

- Երբ գնացքը Արարատյան դաշտ մտավ, առավոտ էր: Պառուհանին Արարատը տեսա՝ ձյունը վրան: Շատ պատվական տեսարան էր: Դուք ամեն օր կնայի՞ք Արարատին: Ես Արարատը շատ կսիրեմ:

- Թագավորի պալատին առջև կկանգնի երիտասարդ մը և սազ կը չալե, կչալե ցերեկ ու գիշեր, կչալե մեկ շաբաթ, երկու շաբաթ, մեկ ամիս... Հաղուստները վար կթափին, ինքը կմաշտի, կնիհարնա, բայց կշարունակե ցերեկ-գիշեր չալել:

Վերջը թագավոր դուրս կուգա, կըսե.

- Օղու՛լ, կտեսնես, որ աղջիկս քեզի չի սիրեր, անօգուտ գործ ես բռներ, ինչու՞ զուր կտանջես քեզի, գնա՛ տուն, հանգստացիր:

- Թագավոր ապրած, - կպատասխանե տղան, - կարևորություն չունի, թե քու աղջիկը ինձի կսիրե, թե ոչ, կարևորն այն է, որ ես իրեն կսիրեմ ու պիտի սիրեմ:

Հիմա իմն ու Արարատինն է...

ԶԱՆԳ՝ ԲԵՐՆԱՐԴ ՇՈՈՒԻՆ

Երբ առաջին անգամ դողալով զանգ տվի Բերնարդ Շոուին, առանց բան պատահեցավ.

- Պարոն Բերնարդ Շոու, ձեզի կանհանգստացնե Ուիլյամ Սրո՛յըն: Այսպես ինձի կըսեին ամերիկացիներ, Սրոյըն... Շատ ամնչցա, երբ Բերնարդ Շոուն ըսավ,

- Որքան գիտեմ, դուն ոչ թե Սրոյըն ես, այլ Սա-րո-յան...

Շատ ամնչցա:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Թեպետ կարճ ժամանակով, բայց արդյունավետ և բովանդակալից չաբաթ ապրեց Համբավավոր գրողը Երևանում:

Եղավ մայրաքաղաքի տեսարժան վայրերում, Մատենադարանով հիացավ, եղավ գործարանում, պիոներների հետ ուրախացավ, եղավ գյուղում...

Եվ որտեղ նա եղավ, սիրեց մարդկանց, և մարդիկ սիրեցին նրան:

Գնաց բաղում հարազատներ և հայրենակիցներ, եղավ նրանց տներում և բաժակ բարձրացրեց.

- Ընտանիք, սեղան, պատիվ... և հաջողություն:

Շատ մարդիկ տեսան նրան, լսեցին առողջ ձայնը և բաժանեցին նա կենսուրախությունը:

Խորապես հիացավ Սունդուկյանի թատրոնով, Աճեմյանով և Հրաչյա Ներսիսյանով: Տաղանդավոր կոլեկտիվը խոստացավ բեմ հանել նրա «Իմ սիրտը լեռներում է» գողտրիկ պիեսը:

Սարոյանը խոստացավ գալ նույն ներկայացմանը...

- Հեռագրեցե՛ք ինձ, եկեմ, արագ գամ:

Նա գնաց, բայց սիրտը Երևանում էր և Հայաստանի լեռներում:

Պատվակա՞ն Վիլյամ...

ԱՐԱՐԱՏ՝ ՁՅՈՒՆԸ ՎՐԱՆ

- Երբ գնացքը Արարատյան դաշտ մտավ, առավոտ էր: Պատուհանեն Արարատը
տեսա՝ ձյունը վրան: Շատ պատվական տեսարան էր: Դուք ամեն օր կնայե՞ք Արա-
րատին: Ես Արարատը շատ կսիրեմ:

- Թագավորի պալատին առջև կկանգնի երիտասարդ մը և սազ կը չալե, կչալե
ցերեկ ու գիշեր, կչալե մեկ շաբաթ, երկու շաբաթ, մեկ ամիս... Հագուստները վար
կթափին, ինքը կմազոտի, կնիհարնա, բայց կշարունակե ցերեկ-գիշեր չալել:

Վերջը Թագավոր դուրս կուգա, կըսե.

- Օղո՛ւլ, կտեսնես, որ աղջիկս քեզի չի սիրեր, անօգուտ գործ ես բռներ, ինչու՞
զուր կտանջես քեզի, գնա՛ տուն, հանգստացիր:

- Թագավոր ապրած, - կպատասխանե տղան, - կարևորություն չունի, թե քու
աղջիկը ինձի կսիրե, թե ոչ, կարևորն այն է, որ ես իրեն կսիրեմ ու պիտի սիրեմ:

Հիմա իմն ու Արարատինն է...

ԶԱՆԳ՝ ԲԵՐՆԱՐԴ ՇՈՈՒԻՆ

Երբ առաջին անգամ դողալով զանգ տվի Բերնարդ Շոուին, ասանկ բան պատա-
հեցավ.

- Պարոն Բերնարդ Շոու, ձեզի կանհանգստացնե Ուիլյամ Սրո՛յըն: Այսպես ին-
ձի կըսեին ամերիկացիներ, Սրոյըն... Շատ ամնչցա, երբ Բերնարդ Շոուն ըսավ,

- Որքան գիտեմ, դուն ոչ թե Սրոյըն ես, այլ Սա-րո-յան...

Շատ ամնչցա:

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Թեպետ կարճ ժամանակով, բայց արդյունավետ և բովանդակալից շաբաթ ապրեց
համբավավոր գրողը Երևանում:

Եղավ մայրաքաղաքի տեսարժան վայրերում, Մատենադարանով հիացավ, եղավ
գործարանում, պիոներների հետ ուրախացավ, եղավ գյուղում...

Եվ որտեղ նա եղավ, սիրեց մարդկանց, և մարդիկ սիրեցին նրան:

Գտավ բազում հարազատներ և հայրենակիցներ, եղավ նրանց տներում և բաժակ
բարձրացրեց.

- Ընտանիք, սեղան, պատիվ... և հաջողություն:

Շատ մարդիկ տեսան նրան, լսեցին առողջ ձայնը և բաժանեցին նա կենսուրա-
խությունը:

Խորապես հիացավ Սունդուկյանի Թատրոնով, Աճեմյանով և Հրաչյա Ներսիսյա-
նով: Տաղանդավոր կոլեկտիվը խոստացավ բեմ հանել նրա «Իմ սիրտը լեռներում
է» գողտրիկ պիեսը:

Սարոյանը խոստացավ գալ նայել ներկայացումը...

- Հեռագրեցե՛ք ինձի, ելնեմ, արագ գամ:

Նա գնաց, բայց սիրտը Երևանում էր և Հայաստանի լեռներում:

Պատվակա՛ն Վիլյամ...

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐԻ ՈՐԴԵԳԻՐԸ

Ըստ Խաչիկ Դաշտենցի

1816 թվականի դեկտեմբերի մեկին մի նավակ հանդարտ լողում էր դեպի ծովախորշը, որ գտնվում է Վենետիկի հարավային կողմում: Թեև ձմեռ էր և ցուրտ, սակայն օդն այնքան մաքուր էր ու թափանցիկ, որ նավակում գտնվող գեղեցկադեմ երիտասարդը չէր կարող չնկատել հանդիպակաց կղզյակի աշտարակավոր շինությունը:

- Ազնվական ո՞ր ընտանիքին է պատկանում այս կղզին իր դղյակով, - դիմեց երիտասարդը նավավարին:

- Միլո՛րդ, կղզին կոչվում է Սուրբ Ղազար, շինությունը մենաստան է, որ պատկանում է հայերին:

- Իջեցրու՛ ինձ կղզու վրա, - խնդրեց անծանոթը:

Բարձրադիր ափին կանգնած՝ նա նայում էր չուրջը. խիտ ծառաստաններ, ձիթենիներ և կապու՜յտ, կապու՜յտ ծով: Բնության գողտրիկ, անկրկնելի անկյուն էր դա: Երևի երկար կհիանար իր առջև տարածված հեքիաթային գեղեցկությամբ, եթե մի թավ ձայն չընդհատեր նրա խորհրդածությունների շղթան:

- Ի՞նչ կուզես, որդյա՛կ:

Երիտասարդը հետ նայեց: Դիմացը կանգնած էր փարթամ մորուքով, ճաղատ գլխով պատկառելի մի վանական:

- Ձեր պատերի խաղաղությունը ձգեց ինձ, հա՛յր իմ: Ես օտարական եմ՝ անգլիացի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը: Ձեր թույլտվությամբ ուզում եմ ծանոթանալ միաբանությանը:

Վանականները սիրալիր ընդունելություն ցույց տվին, և այդ օրվանից Սուրբ Ղազարում հետաքրքիր մի աշխարհ բացվեց Բայրոնի առաջ: Նա հափշտակությամբ ծանոթացավ վանքի հարուստ գրադարանին, հնագույն մագաղաթներին, հայ բանաստեղծության, նկարչության, ճարտարապետության հատընտիրներին: Նրան չափազանց հուզեցին հայերի հարուստ մշակույթը և արյունալի պատմությունը:

Մի քանի այցելությունից հետո Բայրոնը այնքան սիրեց հայոց լեզուն, որ խնդրեց իր համար դասեր նշանակել: Բանաստեղծին ընդառաջեցին, և նրա ուսուցիչը դարձավ հմուտ լեզվաբան, թարգմանիչ, հայոց պատմության խոշոր գիտակ Հարություն Ավգերյանը՝ մի պայծառ, առինքնող անձնավորություն: Առաջին իսկ հանդիպումից աշակերտն ու ուսուցիչը սիրեցին միմյանց:

- Խենթս նորեն եկավ, - փաղաքշանքով ասում էր Ավգերյանը, երբ Բայրոնի նավակը մոտենում էր կղզուն:

Սկսվում են պարապմունքները:

- Ձեր լեզուն հեշտությամբ անձնատուր չի լինում, բայց ես պիտի սովորեմ, որ բնագրով կարդամ հայ բանաստեղծության ընտրանին, - ասում էր Բայրոնն Ավգերյանին:

Ուսուցիչը նրա համար բարձրաձայն կարդում էր, ավանդում հայոց պատմություն, որ Բայրոնը կլանված լսում էր՝ հայացքը հառած վեհատեսիլ Արարատի նկարին:

Հիսուն պարապմունքից հետո համառ անգլիացին սովորեց այբուբենը և սկսեց

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐԻ ՈՐԴԵԳԻՐԸ

Ըստ Խաչիկ Դաշտենցի

1816 Թվականի դեկտեմբերի մեկին մի նավակ հանդարտ լողում էր դեպի ծովա-
խորշը, որ գտնվում է Վենետիկի հարավային կողմում: Թեև ձմեռ էր և ցուրտ, սա-
կայն օդն այնքան մաքուր էր ու թափանցիկ, որ նավակում գտնվող գեղեցկադեմ երի-
տասարդը չէր կարող չնկատել հանդիպակաց կղզյակի աշտարակավոր շինությունը: - դիմեց ե-
- Ազնվական ո՞ր ընտանիքին է պատկանում այս կղզին իր դղյակով,
րիտասարդը նավավարին:

- Մի՛լորդ, կղզին կոչվում է Սուրբ Ղազար, շինությունը մենաստան է, որ պատ-
կանում է հայերին:

- Իջեցրու՛ ինձ կղզու վրա, - խնդրեց անծանոթը:

Բարձրադիր ափին կանգնած՝ նա նայում էր չուրջը. խիտ ծառաստաններ, ձիթե-
նիներ և կապու՜յտ, կապու՜յտ ծով: Բնության գողտրիկ, անկրկնելի անկյուն էր
դա: Երևի երկար կհիանար իր առջև տարածված հեքիաթային գեղեցկությամբ, եթե
մի թավ ձայն չընդհատեր նրա խորհրդածությունների շղթան:

- Ի՞նչ կուզես, որդյա՛կ:

Երիտասարդը հետ նայեց: Դիմացը կանգնած էր փարթամ մորուքով, ճաղատ
գլխով պատկառելի մի վանական:

- Ձեր պատերի խաղաղությունը ձգեց ինձ, հա՛յր իմ: Ես օտարական եմ՝ անգլիա-
ցի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը: Ձեր թույլտվությամբ ուզում եմ ծանոթա-
նալ միաբանությանը:

Վանականները սիրալիր ընդունելություն ցույց տվին, և այդ օրվանից Սուրբ
Ղազարում հետաքրքիր մի աշխարհ բացվեց Բայրոնի առաջ: Նա հափշտակությամբ
ծանոթացավ վանքի հարուստ գրադարանին, հնագույն մագաղաթներին, հայ բա-
նաստեղծության, նկարչության, ճարտարապետության հատընտիրներին: Նրան չա-
փազանց հուզեցին հայերի հարուստ մշակույթը և արյունալի պատմությունը:

Մի քանի այցելությունից հետո Բայրոնը այնքան սիրեց հայոց լեզուն, որ խնդ-
րեց իր համար դասեր նշանակել: Բանաստեղծին ընդառաջեցին, և նրա ուսուցիչը
դարձավ հմուտ լեզվաբան, թարգմանիչ, հայոց պատմության խոշոր գիտակ հարու-
թյուն Ավգերյանը՝ մի պայծառ, առինքնող անձնավորություն: Առաջին իսկ հանդի-
պումից աշակերտն ու ուսուցիչը սիրեցին միմյանց:

- Խենթս նորեն եկավ, - փաղաքշանքով ասում էր Ավգերյանը, երբ Բայրոնի նա-
վակը մոտենում էր կղզուն:

Սկսվում են պարապմունքները:

- Ձեր լեզուն հեշտությամբ անձնատուր չի լինում, բայց ես պիտի սովորեմ, որ
բնագրով կարդամ հայ բանաստեղծության ընտրանին, - ասում էր Բայրոնն Ավգե-
րյանին:

Ուսուցիչը նրա համար բարձրաձայն կարդում էր, ավանդում հայոց պատմություն,
որ Բայրոնը կլանված լսում էր՝ հայացքը հառած վեհատեսիլ Արարատի նկարին:

Հիսուն պարապմունքից հետո համառ անգլիացին սովորեց այբուբենը և սկսեց

կարգալ: Նա այնքան առաջադիմեց, որ փորձեց ուսուցչի հետ թարգմանություններ անել: Երկու տարվա համառոտ աշխատանքով ստեղծեցին Հայոց լեզվի դասագրքեր և բառարաններ, որոնք Բայրոնը հրատարակեց իր միջոցներով:

Նա գրում է նաև իր հայտնի հոդվածը Հայերի և Հայաստանի մասին, ուր մասնավորապես ասում է. «... Հայերի առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, Հայաստանը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, ուր զետեղված է դրախտը, և ուր Աստված ստեղծել է մարդուն իր պատկերի նման»:

1819 թվականի հուլիսյան պայծառ մի օր սրտառուչ արարողություն էր Սուրբ Ղազար կղզում: Բայրոնը հրաժեշտ էր տալիս բարի վանականներին, որոնք այնպե՛ս ներողամտորեն էին վերաբերվել իրենց խենթուկի քմահաճույքներին: Հուզված էր նաև բանաստեղծը: Որքա՜ն ջերմություն էր գտել բիրտ աշխարհից հեռու այս խաղա՜ղ, անաղարտ անկյունում, որքա՜ն էր երազել ծիծեռնակների սավերում: Այժմ մեկնում է: Փոթորկված աշխարհը կանչում է իրեն: Հունաստա՛ն, դեպի Հունաստա՛ն՝ մասնակցելու նրա ազատագրմանը: Փույթ չէ, որ արյունը հոսելու է ջրի պես: Միևնույն է, հաղթելու են ժողովուրդները: Առա՜ջ ուրեմն:

Հասավ բաժանման պահը: Բայրոնը գրպանից հանեց իր լուսանկարը և տակը հայերեն գրեց. «Լորդ Բայրոն»: Դա նրա թանկ նվերն էր միաբանությանը:

Այսօր էլ Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունում մի սրահ պահվում է հատուկ խնամքով: Դա Գրչանոց մատենադարանն է, ուր մի ժամանակ հայերեն է սովորել Բայրոնը: Այստեղ պահվում են հայերեն ստորագրությամբ նրա նկարը և այլ մասունքներ:

ՊԼԱՆ

1. Անծանոթի մուտքը Սուրբ Ղազար:
2. Մխիթարյան հայրերի սիրալիր վերաբերմունքը:
3. Հետաքրքիր աշխարհ:
4. Բայրոնի խնդրանքը:
5. Տքնաջան աշխատանք:
6. Բայրոնը Հայերի և Հայաստանի մասին:
7. Հրաժեշտ:
8. Մխիթարյան միաբանության նվիրական սրահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Ցուցադրել Հ. Այվազովսկու «Բայրոնի մուտքը Ս. Ղազար» նկարը:*

2. Գրատախտակին գրել՝

ա) հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ծովախորշ, աքբահայր, առինքնող, աշտարակավոր շինություն, խորհրդածությունների շղթա, փարթամ մորուք, ճաղատ գլուխ, հարուստ գրադարան, հնագույն մագաղաթներ, սրտառուչ արարողություն, անաղարտ անկյուն.

բ) հետևյալ հատուկ անունները.

Սուրբ Ղազար, Մխիթարյան միաբանություն, Ջորջ Գորդոն Բայրոն, Հարություն Ավգերյան, Գրչանոց մատենադարան:

Նա այնքան առաջադիմեց, որ փորձեց ուսուցչի հետ թարգմանություններ
կարդալ: Նա այնքան առաջադիմեց համատեղ աշխատանքով ստեղծեցին հայոց լեզվի դասագրքեր
անել: Երկու տարվա համատեղ աշխատանքով ստեղծեցին հայոց լեզվի դասագրքեր
և բառարաններ, որոնք Բայրոնը հրատարակեց իր միջոցներով:
Նա գրում է նաև իր հայտնի հոդվածը հայերի և Հայաստանի մասին, ուր մաս-
նավորապես ասում է. «... Հայերի առաքինությունները խաղաղասիրության արգա-
սիք են, իսկ թերությունները՝ ճնշման: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճա-
կատագիրը, Հայաստանը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր
երկրներից մեկը, ուր գետեղված է դրախտը, և ուր Աստված ստեղծել է մարդուն
իր պատկերի նման»:

1819 թվականի հուլիսյան պայծառ մի օր սրտառուչ արարողություն էր Սուրբ
Ղազար կղզում: Բայրոնը հրաժեշտ էր տալիս բարի վանականներին, որոնք այնպե՛ս
ներողամտորեն էին վերաբերվել իրենց խենթուկի քմահաճույքներին: Հուզված էր
նաև բանաստեղծը: Որքա՜ն ջերմություն էր զգացել բիրտ աշխարհից հեռու այս
խաղա՜ղ, անաղարտ անկյունում, որքա՜ն էր երազել ծիծեռնների ստվերում: Այժմ
մեկնում է: Փոթորկված աշխարհը կանչում է իրեն: Հունաստա՜ն, դեպի Հունաս-
տա՜ն՝ մասնակցելու նրա ազատագրմանը: Փույթ չէ, որ արյունը հոսելու է ջրի պես:
Միևնույն է, հաղթելու են ժողովուրդները: Առա՜ջ ուրեմն:

Հասավ բաժանման պահը: Բայրոնը գրպանից հանեց իր լուսանկարը և տակը հա-
յերեն գրեց. «Լորդ Բայրոն»: Դա նրա թանկ նվերն էր միաբանությանը:

Այսօր էլ Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանությունում մի սրահ պահ-
վում է հատուկ խնամքով: Դա Գրչանաց մատենադարանն է, ուր մի ժամանակ հա-
յերեն է սովորել Բայրոնը: Այդտեղ պահվում են հայերեն ստորագրությամբ նրա
նկարը և այլ մասունքներ:

ՊԼԱՆ
1. Անծանոթի մուտքը Սուրբ Ղազար:
2. Մխիթարյան հայրերի սիրալիր վերաբերմունքը:
3. Հետաքրքիր աշխարհ:
4. Բայրոնի խնդրանքը:
5. Տքնաջան աշխատանք:
6. Բայրոնը հայերի և Հայաստանի մասին:
7. Հրաժեշտ:
8. Մխիթարյան միաբանության նվիրական սրահը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Ցուցադրել Հ. Այվազովսկու «Բայրոնի մուտքը Ս.Ղազար» նկարը:*

2. Գրատախտակին գրել՝

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ծովախորշ, աքքահայր, առինքնող, աշտարակավոր շինություն, խորհրդածությունների շղթա, փարթամ մորուք, ճաղատ գլուխ, հարուստ գրադարան, հնագույն մագաղաթներ, սրտառուչ արարողություն, անաղարտ անկյուն.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Սուրբ Ղազար, Մխիթարյան միաբանություն, Ջորջ Գորդոն Բայրոն, Հարություն Ավգերյան, Գրչանաց մատենադարան:

ԲԱՅՐՈՆ

ՈՍԿԵ ՇՂԹԱ ՔԵԶ ՏՎԵՑԻ

Ոսկե շղթա քեզ տվեցի,
Շղթան էր այն մեր միության.
Եվ վինը այն, որ բերեցի
Սիրո երգեր գիտեր միայն:

Այդ սի՛րտն էր իմ Հավատարիմ,
Որ քեզ բերեց վին ու շղթա.
Արժանի՞ էր նա այս բախտին,
Այս սև բախտին արդյոք Հիմա:

Կախարդական մի Հմայքով
Պարուրեցի ընծաներն այն,
Որ կուաՀեն մտքերը քո,
Բառեր Հուշեն անկեղծության:

Կատարեցին պարտքը իրենց
Վինն ու շղթան միշտ անձնուրաց.
Բայց դու ինչու՞ չեղար անկեղծ,
Սիրտդ պարտքին օտար մնաց:

Օտար ձեռքի Հպմանն օտար
Զգիմացավ շղթան ամուր.
Եվ վինն Հնչեղ իմ ոսկելար
Օտարի մոտ մնաց տխուր:

Թող որ ձեռքն այն, այն, որ դողաց,
Երբ քո վզից Հանեց շղթան,
Լարեր կապի, լարեր պրկած,
Որ վինը այն լուռ չմնա:

Դու այն չես էլ, օ՛, իմ անգի՛ն,
Փոխվեց, անցավ շուրջն ամեն բան...
Մնա՛ք բարյավ, լռակյա՛ց վին,
Անզո՛ր շղթա, սի՛րտ դավաճան:

ԱՐՑՈՒՆՔ ԵՎ ԺՊԻՏ

Դու լալիս էիր, և արցունքը լի
Ծածկել էր կապույտ աչքերդ պայծառ.
Եվ ինձ թվաց, թե այդ հիմալի
Մանուշակներն են ծածկված ցողավառ:
Դու ժպտում էիր, և շափյուղայի
Փայլն անհետացավ և ցնդեց անդարձ.
Եվ կենսատու ցոլքն արդեն ավելի
Հզոր փողփողաց քո աչքերում թաց:

Այդպես ամպերն են առնում արևից
Փափուկ ու թանձր համբույրի թույրեր,
Որին երկնքի մութը մերձակից
Անզոր է արդեն երկնքից վանել:
Եվ արցունքից վերջ ժպիտն է ահա
Մաքրափայլ բերկրանք պարգևում մտքին,
Եվ որպես արև, մեր սրտի վրա
Հետևից թողնում մի լու՜յս խնդագին:

ԱՐԾՎԻ ՄԱՀԸ

Ըստ Անդրանիկ Չելեպյանի

Կուզեմ, որ աճյունս հանգչի Արաքսի կամ
Զանգվի ափին, իմ սիրելի ժողովրդի մեջ,
որի ազատության համար կռվեցի.
ԱՆԴՐԱՆԻԿ

Ե՞րբ կլինի գերեզմանների՝ հայրենադարձությունը...
ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հազար ինը հարյուր քառասունյոթ թվականի օգոստոսի 31-ին Հեռավոր Ֆրեզնոյի իր փոքրիկ բնակարանում մեռնում էր մեծ զորավար Անդրանիկը: Կյանքը համդարտ մարում էր նրա մեջ, և բառերը դժվարությամբ էին պոկվում շուրթերից: Մի կերպ հավաքելով վերջին ուժերը՝ մահամերձը դիմեց կողքին գլխահակ կանգնած մարտական ընկերոջը.

- Եթե իմ ժողովուրդը կուզե մահես ետք պատիվ ընել ինձի, արժանս չեմ ուզեր,

փառավոր թաղում չեմ ուզեր: Թող կանգնեցնեն ամերիկյան դրամով Աստվածոց վան-
քը և հոն հիմնեն ուսումնարան հայ ժառանգներու համար:

Խոսքը դարձավ ավելի կցկտուր.

– Երբ իրիկունը դուռներեն մարմինս կհանեք, որ ցնանաք, քիչ մը մոտեցեք հայ ազ-
գին մասին:

Նա լռեց, ապա ախտանքով ասաց.

– Մահը չեմ հոգար, այլ գործն, որ կիսատ մնաց...

Սրանք նրա վերջին բառերն էին:

Անդրանիկն այլևս չկար...

Սեպտեմբերի 7-ին ալեկոծված էր Ֆրեզնո քաղաքը: Հարյուր հազարավոր հայեր աշխարհի տարբեր ծայրերից հավաքվել էին հարգանքի վերջին տուրքը մատուցելու մեծ հային՝ հայոց լեռների արծիվին: Հայկական եկեղեցում կրոնական ծիսակարգի ավարտից հետո սգո թափորը շարժվեց դեպի «Արարատ» գերեզմանատուն: Զինվորական նվագախումբը հանդիսավոր հնչեցնում էր Շոպենի «Մահվան քայլերգը»: Հին կամավորներից երկու հոգի բռնել էին Անդրանիկի՝ թափորի առջևից ընթացող հռչակավոր սպիտակ նժույգի սանձերը: Նա տարիներ անբաժան էր եղել առյուծասիրտ տիրոջից, և այժմ խելացի կենդանու աչքերից գլորվում էին վճիտ արցունքները: Նժույգի մեջքին դրված էին զորավարի համազգեստը և ատամնավոր թուրը: Զենքի ընկերներն ուսերի վրա տանում էին պաշտելի հրամանատարի՝ ծաղիկներով ծածկված դագաղը, իսկ շատ ցածից թռչող մի ինքնաթիռ փունջ-փունջ ծաղիկներ էր սփռում նրա վերջին ճանապարհին:

Թափորը հասավ գերեզմանատուն: Ողջ բազմությունն արտասվում էր: Այդ ողբերգական պահին ասես կենդանացավ զորավարը, բոլորի գլխավերևում ասես ավառնեց նրա դյուցազնական ոգին, երբ զինվորական կեցվածքով նախկին ֆիդայիները երգեցին.

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ձոր,
Թնդացնում ես երկինք, գետին անընչավառ,
Քաջ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հակա լեռնից քեզ ապաստան, Անդրանի՛կ:

Բոլոր ազգակիրները միացան ֆիդայիններին, և շրջակայքը թնդաց հայոց ոգու վերալացումից:

Ֆրեզնոյի հայկական գերեզմանատան սգո արարողությունից մոտ հինգ ամիս հետո Անդրանիկի աճյունը պարփակող կապարապատ դագաղը ճամփա ելավ՝ հանգրվանելու Հայրենիքում: Բայց... Մոսկվան թույլ չտվեց: Այսպիսով, տարագիր արծվի երազը չիրականացավ: Հայրենիքը ի զորու չեղավ երկու քառակուսի մետր հող տրամադրել ամբողջ կյանքն իր ժողովրդին ի սպաս դրած նվիրյալին:

Հայրենի հողի կարոտով տոչորված Անդրանիկի աճյունը հասավ Փարիզ: Հազար ինը հարյուր քսանութ թվականի հունվարի 29-ին կատարվեց երկրորդ հուղարկավորությունը:

Առավոտյան Ժան Գուժոն փողոցում ասեղ գցելու տեղ չկար: Կրկին եկեղեցական ծիսակարգ և պատարագ: Պատվո պահակ էին կանգնում եվրոպական դաշնակից

պետությունների զինվորական պատվիրակություններ, Ֆրանսիացի պետական գործիչներ, սփյուռքահայ մտավորականներ: Իսկ Հայրենիքից՝ ոչ ոք...

Ժամը 14-ին եռագույնով ծածկված դագաղը դրվեց դիակառքին, որի առջևից քայլող հին կամավորները թավշե բարձիկների վրա տանում էին հերոսի շքանշանները: Ժամը տասնհինգն անց քառասունհինգ րոպեին թափորը մտավ Պեր Լաշեզի գերեզմանատուն, ուր նախօրոք պատրաստված էր դամբարան: Մարդկային ուսերի վրա ճոճվող նավակը մի պարզ դագաղ չէր, այլ խորհուրդ, խտացումը հայ կյանքի տառապանքների և պայքարի: Այս լույս աշխարհին երկրորդ հրաժեշտը տալու պահին Անդրանիկը հավանաբար լսեց իր զինվորների երդումը, որ հնչեց փակ դագաղի առջև. «Ո՛վ քաջ հերոս, խաչի և Ավետարանի վրա երդում ըրինք, որ պիտի կռվինք մինչև վերջին շունչ: Խոսք տվինք հայ ժողովրդին կռվել և մեռնել հայ դատին համար, հիմակ ալ ամենքս մեկ կերդնունք անշունչ մարմինիդ առջև, որ պիտի շարունակենք կես թողած գործդ, եթե մեկ հոգի ալ մնա մեզմե: Մենք վստահ ենք մեր հաղթանակին, քանի որ մեր մեջ կրակը դուն վառեցիր: Ննջե՛, մե՛ծ հերոս, ննջե՛ մինչև այն առեն, երբ գանք ու քեզ փոխադրենք այն երկիրը, որուն համար երկար տարիներ կռվեցար: Մինչ այդ ժամանակը նվիրական արձանդ կանգուն կոթող մը պիտի ըլլա մեր սրտերուն մեջ՝ որպես հավատք մեծ իդեալի իրականացման»:

Շուրջ յոթանասուներեք տարի Ֆրանսիացի հողը իր ծոցում պահեց հայոց լեռների արծվին: Բայց ներդաշնակու՞մ էր արդյոք զորավար Անդրանիկի՝ Փարիզում հանգրվանելու փաստը արդարության հետ:

Երկար էր սպասել Անդրանիկը: Նա պիտի գա՛ր: Դա բոլորիս կամքն էր:

Եվ մարդկանց ու Երկնայինի կամքով երկու հազար թվականի փետրվարի 21-ին Մեծ Զորավարի աճյունը ամփոփվեց Երևանում՝ Եռաբլուրի գերեզմանատանը:

ՊԼԱՆ

1. Զորավարի վախճանը:
2. Հուղարկավորություն Ֆրեզնո քաղաքում:
3. Հուղարկավորություն Փարիզում:
4. Երդում:
5. Անդրանիկի վերադարձը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրել Անդրանիկի հիշատակը հավերժացնելու երդման ինքնուրույն տեքստ:*

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՏԱԿԸ ԻՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Սիրելի՛ զինվորներս.

Երբ օտարներ կփորձեին անվանարկել հայ զինվորին արժանապատվությունը, դուք ձեր քաջությամբ, գործերով և հաղթանակներով արհամարհեցիք զանոնք, բարձր պահեցիք հայ ցեղին արժանապատվությունը: Դուք կրցաք պարտության մատնել թշնամին և հիացում հրավիրեցիք ձեզ վրա, որովհետև գիտեիք նվիրվել ու ծառայել հայրենիքին և անոր ազատության: Մեծ համբերությամբ կրեցիք չար-

չարանքները և մեծ հավատքով տարիք ձեզի հանձնված գործը: Ես չլսեցի տրտունջի որևէ բառ, ցավի որևէ արտահայտություն: Մերկ էիք, անոթի էիք և այդպես մնացիք օրերով: Ձմռան ցուրտը, բուքն ու քամին, ձյունն ու անձրևը ծեծեցին ձեզի, կարկուտը հարվածեց, բայց դուք արհամարհեցիք, ինչպես թշնամիին գնդակները: Ձեր այս կեցվածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս, և մենք կրցանք շահիլ փառավոր հաղթանակներ:

Սիրելի՛ զինվորներս, սա մեկ քանի տողերս իբր հարգանքի ու գնահատանքի նշան կթողում որպես կտակ և սրտաձոն ապրողներուդ և իբր տապանաքար անթաղ ու անշիրիմ զինվորներուս:

ԱՆԴՐԱՆԻԿ
ՖՐԵԶՆՈ, ՀՈՒՆԻՍ 18, 1924Թ.

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Պատմում են, որ երբ նորածին Անդրանիկին քահանան ուզում էր կնքել, հանկարծ լսվում է ձիու պայտերի դոփյուն: Ներս է գալիս մի մարդ, խլում մանկանը քահանայի ձեռքից, թաթախում սուրբ ջրի մեջ, հետո նորից տալիս քահանային, և ինքն անհայտանում: Մարդիկ նկատում են, որ երեխայի մեջքին խաչ է դաջվել, և գլխի են ընկնում, որ դա սուրբ Գևորգն էր: Ասում են նաև, որ հետո, երբ Անդրանիկը կռիվ էր գնում, գնդակները չէին խոցում նրան: Ամեն անգամ կռվից վերադառնալիս թափ էր տալիս շորերը, և գնդակները թափվում էին գետնին: Սուրբ Գևորգի խաչը պահում էր նրան:

* * *

Ասում են, որ երբ Անդրանիկն իր զորքով շարժվում էր գաղթողների հետևից, հանկարծ ճանապարհի փոսի մեջ տեսնում է մի բարուրած երեխա: Վերցնում է երեխային, մոտենում գաղթողների առաջին խմբին:

- Ո՞վ է այս երեխային թողել, - հարցնում է նա:

Ոչ ոք չի ուզում հանձն առնել: Անդրանիկը դիմում է խորամանկության:

- Եթե երեխան մայր չունի, թրատե՛ք, - հրամայում է վրդովված:

Դրանից սարսափած՝ մի կին ճչում է:

- Վերցրու՛, - դառնացած ասում է Անդրանիկը, - եթե այս երեխան չլինի, վաղը ո՞վ պիտի մեր երկիրը պահի:

* * *

Անդրանիկը երեք ընկերների հետ կանգնում է Տաճկաստանի Սոլուխա կամրջի վրա: Մի թուրք ձիավոր է գալիս, որ անցնի: Անդրանիկը ձիավորի ճանապարհը կտրում է, ասում.

- Կերթաս բինբաշուն կասես, թե Անդրանիկը երեք հոգով կամրջի վրա կանգնել է և կռվել է ուզում: Տղամարդ է՝ թող գա: Եթե ասածս չանես, չեմ թողնի՝ որևէ թուրք կամրջով անցնի:

[illegible]

Երևի կորածները, ոտ մեկ քաղաք կապում էին և գերմանների ու դաշնակցական...

ԱՆԴՐԱՆԻԿ

ՖՐԵՅՁՆՈ, ՀՈՒՆԻՍԻ 18, 1924թ.

ԶՐՈՒՅՑՆԵՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

Պատմում են, որ երբ նորածին Անդրանիկին քահանան ուզում էր կնքել, Հանկարծ լսվում է ձիու պայտերի դոփյուն: Նայում են դուրս, մի ձիավոր անցավ, և քահանան ասաց, թե այս երեխան մեծ քաջ է լինելու: Անդրանիկի երեխայության տարիներին պատմում են, որ նա սիրում էր Փալասին: Պատմում են նաև, որ Հետո, երբ Անդրանիկը մեծացավ, ձիերը նրա առջև ծունկ էին չոքում: Այդպես պատմում են նրա մասին: Ասում են, որ Անդրանիկը իր ձիու հետ խոսում էր, և ձին հասկանում էր նրան:

Փոքրիկ խաչով ավետում էր գյուղը:

* * *

Ասում են, որ երբ Անդրանիկը իր զորքով շարժվում էր թշնամիների Հետևից, Հանկարծ նստում էր ձիուց և մի քարի վրա նստում: Վերցնում է և ծխախոտ լցնում: Անդրանիկը զորքին հրամայում էր կանգ առնել:

- Ինչ է այս երեխայի Թողել, - Հարցնում է նա:

Ինչ որ մի տղա ձեռքը ցույց տվեց: Անդրանիկը վերցնում է երեխային:

- Երեխային տարեք, մայր չունի, Թողեք,- Հրամայում է Անդրանիկը:

Դրանից հետո անցավ, մի քիչ եղավ:

- Վերցրու,- պատասխանում է Անդրանիկը, - երեխային չթողնեք, վրան ու ձին երեխան պահեք:

* * *

Անդրանիկը երբ ընկերների Հետ կանգնում է Տաճկաստանի Սասունում կանգնելի վրա: Մի թուրք ձիավոր է գալիս, որ անցնի: Անդրանիկը ձիավորի ճանապարհը կտրում է, ասում.

- Եթե ձիդ չտաս, ես քեզ կսպանեմ, և Անդրանիկը երեք Հոգով կանգնեցին ճամփին,

է և կռիվ է սկսում: Տղաները է՝ Թող գա: Եթե ասած չանես, չեմ Թողնի, որ Թուրք կանգնած անցնի:

Ձիավորը ճարը կտրած գնում է, բինբաշուն հայտնում Անդրանիկի ասածը: Բինբաշին տեսնում է, որ հնար չկա, հեռագրում է սուլթանին, թե էսպես, էսպես: Սուլթանը պատասխանում է.

- Դու՛ ես հայի դահիճը, դու էլ գնա՛, պատասխանի՛ր:

Բինբաշին հազար ձիավորով ելնում գալիս է Սոլուխա կամուրջի մոտ: Նկատելով նրանց՝ Անդրանիկը ընկերներին թաքցնում է մոտակա թփերի մեջ, ինքը, երկու ձեռքին մաուզեր, թեւերը մեջքին դրած, չոքում է: Բինբաշին ձին քշում, առաջ է գալիս: Անդրանիկն ասում է.

- Շա՛ն որդի, էն ժամանակ եկար, որ ձեռ ու ոտս կապած է: Տղամարդ էիր, ուրիշ ժամանակ գայիր:

Բինբաշին էդ որ լսում է, ձին թափով քշում է Անդրանիկի վրա: Անդրանիկը քաշում է մաուզերն ու Թուրքի ճակատին շարում: Էն կողմից էլ տղաներն են սկըսում մաուզերները չխկչխկացնել:

Հայտնում են սուլթանին, թե Անդրանիկ չաուշը բինբաշուն սպանեց: Սուլթանն ասում է.

- Էլ Անդրանիկը չաուշ չէ, սրանից հետո փաշա է:

Էդ օրվանից Անդրանիկին «փաշա» են ասում:

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Բոլշևիկյան վարչակարգի էությունը հենց սկզբից ճանաչած և այն խորին ատելությամբ մերժած մարդը կարո՞ղ էր ընդունվել նույն այդ վարչակարգի կողմից: Չէ՛ր կարող: Այդպիսի մարդիկ, մե՛ծ մարդիկ, որոնցից մեկն էլ Նժդեհն էր, կա՛մ գնդակահարվում էին, կա՛մ աքսորվում, լավագույն դեպքում՝ երկրից վտարվում: Նրանք անգամ հետմահու իրավունք չունեին վերադառնալու հայրենիք և վերջին հանգրվան գտնելու մայր հողում: Ահա թե ինչու ստորև ներկայացվող պատմության գործող անձանց, ովքեր հետապնդման ու ահաբեկման դժվարին պայմաններում սխրանք գործեցին՝ Նժդեհի աճյունը գաղտնի տեղափոխելով հայրենիք, հերոս պիտի համարել, ճանաչել ու մեծարել: Հիշե՛ք նրանց անունները.

Վարագ Առաքելյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի լեզվի ինստիտուտի աշխատակից
Գարեգին Մխիթարյան - Երևանի ժողտնտեսության ինստիտուտի դասախոս
Արցախ Բունիաթյան - վիրաբույժ, հերոսացել է Արցախում
Ատոմ Կարապետյան - Գորիսի համալսարանի դասախոս
Պավել Անանյան - Նժդեհի թոռնուհու ամուսինը

Ձիավորը ճարը կտրած գնում է, բինբաշուն Հայտնում Անդրանիկի ասածը: Բինբաշին տեսնում է, որ Հնար չկա, Հեռագրում է սուլթանին, թե էսպես, էսպես: Սուլթանը պատասխանում է.

- Դու՛ ես Հայի դաՀիճը, դու էլ գնա՛, պատասխանի՛ր:

Բինբաշին Հազար ձիավորով ելնում գալիս է Սուլուխա կամուրջի մոտ: Նկատելով նրանց՝ Անդրանիկը ընկերներին թաքցնում է մոտակա թփերի մեջ, ինքը, երկու ձեռքին մաուզեր, թևերը մեջքին դրած, չոքում է: Բինբաշին ձին քշում, առաջ է գալիս: Անդրանիկն ասում է.

- Շա՛ն որդի, էն ժամանակ եկար, որ ձեռ ու ոտս կապած է: Տղամարդ էիր, ուրիշ ժամանակ գայիր:

Բինբաշին էդ որ լսում է, ձին թափով քշում է Անդրանիկի վրա: Անդրանիկը քաշում է մաուզերն ու Թուրքի ճակատին շարում: Էն կողմից էլ տղաներն են սկսում մաուզերները չխկչխկացնել:

Հայտնում են սուլթանին, թե Անդրանիկ չաուշը բինբաշուն սպանեց: Սուլթանն ասում է.

- Էլ Անդրանիկը չաուշ չէ, սրանից Հետո փաշա է:

Էդ օրվանից Անդրանիկին «փաշա» են ասում:

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Բոլշևիկյան վարչակարգի էությունը Հենց սկզբից ճանաչած և այն խորին ատելությամբ մերժած մարդը կարո՞ղ էր ընդունվել նույն այդ վարչակարգի կողմից: Չէ՛ր կարող: Այդպիսի մարդիկ, մե՛ծ մարդիկ, որոնցից մեկն էլ Նժդեհն էր, կա՛մ գնդակաՀարվում էին, կա՛մ աքսորվում, լավագույն դեպքում՝ երկրից վտարվում: Նրանք անգամ Հետմահու իրավունք չունեին վերադառնալու Հայրենիք և վերջին Հանգրվան գտնելու մայր Հողում: Ահա թե ինչու ստորև ներկայացվող պատմության գործող անձանց, ովքեր Հետապնդման ու աՀաբեկման դժվարին պայմաններում սխրանք գործեցին՝ Նժդեհի աճյունը գաղտնի տեղափոխելով Հայրենիք, Հերոս պիտի Համարել, ճանաչել ու մեծարել: Հիշի՛ր նրանց անունները.

Վարագ Առաքելյան - Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի լեզվի ինստիտուտի աշխատակից
Գարեգին Մխիթարյան - Երևանի Ժողտնտեսության ինստիտուտի դասախոս
Արցախ Բունիաթյան - վիրաբույժ, Հերոսացել է Արցախում
Ասոմ Կարապետյան - Գորիսի Համալսարանի դասախոս
Պավել Անանյան - Նժդեհի թոռնուհու ամուսինը

ՍՊԱՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հատ Արցախ Բունիաթյանի

1983 թվականի օգոստոսի 31-ին Իջևանով գնացքից՝ Դավիթ Անանյանը խոր շունչ քաշեց: Վերջապես հասնում էին մնացել լարված օրերը: Այդտեղից հողհունչյուն էր ծորում:

Դիմավորողները, առանց հարցեր տալու, նրա ձեռքից վերցրին ուսապարկը:

Դավիթը վերադառնում էր Վլադիմիր քաղաքից, որտեղից գաղտնի բերել էր Նժդեհի աճյունը: Նժդեհյան մարդկանց այս խիզախ խումբը ցանկանում էր իրագործել վաղեմի մի երազանք՝ կատարել մեծ սպարապետի կամքը: Կտակում նա պատգամել էր, որ իրեն թաղեն Հայաստանում:

Ահա և Հայրենիքը: Մի՞թե դյուցազնականերդ Հերոսի համար Հայրենիքում մի ափ հող չի գտնվելու:

Հոկտեմբերի սկիզբն էր: Պրոֆեսոր Վարազ Առաքելյանը, Գարեգին Մխիթարյանը և Արցախ Բունիաթյանը որոշեցին Նժդեհի սուրբ աճյունից մի մասունք հանձնել Խուստուփին՝ այն լեռանը, որն անբաժան է եղել Նժդեհից, լեռ, որ նրա անձնավորված հուշարձանն է: Դեռևս 1920 թվականին դիմելով Հայ ժողովրդին՝ Սպարապետը գրել էր. «Երբ ինձ սպանված տեսնեք, գիտցե՛ք Խուստուփի ամենաբարձր կատարին, որ ինձ երևան և՝ Կապանը, և՝ Գենվազը, և՝ Գողթանը, և՝ Գե[illegible]»:

1983 թվականի հոկտեմբերի 6-ին նժդեհյանների խումբը ուղևորվեց Զանգեզուր: Հուզված էին. Նժդեհն իրենց հետ էր: Նրա մասունքները վերադառնում էին Հայրենի երկիր՝ Լեռնահայաստան:

Խուստուփը, որ մեծ մասամբ մռայլ էր լինում, այդ օրը թևերը տարածած փարատում էր, ժպտում, կանչում գիրկը: Կարծես պատառնել արծվի նման սահում էր, բարձրանում էր Թռիչքի՝ բույն առավ գրկելու Հերոսին ու կարոտն առնելու:

Դժվար էր մեքենայով Հաղթահարել ժայռոտ վերելքները: Հարկ եղավ ոտքով բարձրանալ: Ահա և բարձունքների վրա ծածանվող կողմի կոչվող ալպյանը: Դրա լանջերին անհնարին էր: Տեղը գտնվեց: Փոքր ժայռեր էին, որոնց վրա Թևեր էին աճել: Քարերը հանեցին, փորքին խաչ սարքեցին և գոգավորված ձեռքերով ու ակնածանքով Նժդեհի մասունքները դրան ավելցին Խուստուփին: Սպարապետի կամքը կատարված էր Զանգեզուր:

- Վերջապես Նժդեհը վերադարձավ Զանգեզուր: Ամպագրում ու արքաների է գտնվել, - հուզված խոսեց Վարազ Առաքելյանը:

Բոլորն արտասվում էին...

Հրաժեշտի պահին մեկի եկան և Նժդեհին երգում շշնջացին.

Հրաժեշտի պահին ծնկի եկան և Նժդեհին երդում շշնջացին.

- Եթե չգամ, իմացի՛ր, որ չկամ...

Որոշեցին՝ քանի կան, միշտ պիտի գան:

Մասունքը՝ Խուստուփի բարձունքներում, բայց Նժդեհի անբռնազբոսիկան աճյունը տակավին գերեզման չուներ: Նույն չորս տարի այն գաղտնի ու սրբորեն պահվում էր այն, Նժդեհի նժդեհյանների ամենամեծ էր Վարազ Առաքելյանի գյուղական տանը:

ՍՊԱՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ըստ Արցախ Բունիաթյանի

1983 թվականի օգոստոսի 31-ին իջնելով գնացքից՝ Պավել Անանյանը խոր շունչ քաշեց: Վերջապես հետևում էին մնացել լարված օրերը: Աչքերից հոգնություն էր ծորում:

Դիմավորողները, առանց հարցեր տալու, նրա ձեռքից վերցրին ուսապարկը:

Պավելը վերադառնում էր Վլադիմիր քաղաքից, որտեղից գաղտնի բերել էր Նժդեհի աճյունը: Նվիրյալ մարդկանց այս խիզախ խումբը ցանկանում էր իրագործել վաղեմի մի երազանք՝ կատարել մեծ սպարապետի կամքը: Կտակում նա պատգամել էր, որ իրեն թաղեն Հայաստանում:

Ահա և Հայրենիքը: Մի՞թե դյուցազնակերպ հերոսի համար Հայրենիքում միափ հող չի գտնվելու:

Հոկտեմբերի սկիզբն էր: Պրոֆեսոր Վարագ Առաքելյանը, Գարեգին Մխիթարյանը և Արցախ Բունիաթյանը որոշեցին Նժդեհի սուրբ աճյունից մի մասունք հանձնել Խուստուփին՝ այն լեռանը, որն անբաժան է եղել Նժդեհից, լեռ, որ նրա անձեռակերտ հուշարձանն է: Դեռևս 1920 թվականին դիմելով հայ ժողովրդին՝ Սպարապետը գրել էր. «Երբ ինձ սպանված տեսնես, դիակս թաղի՛ր Խուստուփի ամենաբարձր կատարին, որ ինձ երևան և՛ Կապանը, և՛ Գինոսալը, և՛ Գողթանը, և՛ Գեղաձորը»:

1983 թվականի հոկտեմբերի 6-ին նվիրյալների խումբը ուղևորվեց Զանգեզուր: Հուզված էին. Նժդեհն իրենց հետ էր: Նրա մասունքները վերադառնում էին Հայրենի երկիր՝ Լեռնահայաստան:

Խուստուփը, որ մեծ մասամբ մռայլ էր լինում, այդ օրը թևերը տարածած փառահեղ արծվի նման առեն ճախրում էր, ժպտում, կանչում գիրկը: Կարծես պատրաստվում էր Թուրքի՝ բոլոր առաջ գրկելու հերոսին ու կարոտն առնելու:

Դժվար էր մեքենայով հաղթահարել ժայռոտ վերելքները: Հարկ եղավ ոտքով բարձրանալ: Ահա և բարձունքների վրա քչքչացող Կողնի կոչվող աղբյուրը: Դրանից վեր շարունակել անհնարին էր: Տեղը գտնվեց: Փոքր ժայռեր էին, որոնց վրա թփեր էին աճել: Քարերը հանեցին, փոքրիկ խոռոչ սարքեցին և գողգոթյուն ձեռքերով ու ալեկոծ սրտով Նժդեհի մասունքները պահ տվեցին Խուստուփին:

- Վերջապես Նժդեհը վերադարձավ Զանգեզուր: Սպարապետի կտակը կիսով չափ կատարվեց: Ապագայում սա սրբատեղի է դառնալու, - հուզված խոսեց Վարագ Առաքելյանը:

Բոլորն արտասվում էին...

Հրաժեշտի պահին ծնկի եկան և Նժդեհին երդում շշնջացին.

- Եթե չգամ, իմացի՛ր, որ չկամ...

- Պիտի գան:

Որոշեցին՝ քանի կան, միշտ պիտի գան:

Մասունքը՝ Խուստուփի բարձունքներում, բայց Նժդեհի ամբողջական աճյունը տակավին գերեզման չուներ: Շուրջ չորս տարի այն գաղտնի ու սրբորեն պահվում էր Վարագ Առաքելյանի գյուղական տանը: Նժդեհի նվիրյալներին տանջում էր այն

ու ամփոփեն, ո՞ր ապահով անկյունը պահ տան սուրբ ա-
միտքը, թե վերջապես ու՞ր ամփոփեն, ո՞ր ապահով անկյունը պահ տան սուրբ ա-
ճյունը:
Գտնվեցին հավատարիմ մարդիկ, որոնց օգնությամբ կատարվեց ընտրությունը՝ Աստվածածին եկեղեցու
Գտնվեցին Հավատարիմ մարդիկ, որոնց օգնությամբ կատարվեց ընտրությունը՝
լեռների բարձրության վրա Թառած Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու
բակը: Այս խաղաղ վայրում՝ ձորին նայող պատի ձախ կողմում, աճյունատուփը բե-
ցեցին: Եվ երբ օրն ավարտվեց, ու շրջապատում տիրեց թանձր լռություն, բերեցին
խնամքով փաթաթված թանկ բեռը: Նշխարները մայր հողում վերջապես գտան հա-
վերժական հանգստարան: Երբ փոսը փակվեց, թվաց, թե ծեր ընկուզենին խոնար-
հեց վիթխարի թևերը...
Որքան էլ գաղտնի, բայց գերեզմանը ասես գերբնական ուժով մատնում էր իր
տեղը, լուսարձակու՛մ, շողարձակու՛մ, կանչու՛մ: Այն անանուն ու կորած մնալ չէր
կարող: Եվ ահա 1989 թվականի հունիսի 17-ին, երբ արդեն հիմնովորապես խար-
խլվել էին կարմիր վարչակարգի խախուտ հիմքերը, վաղամեռիկ Մովսես Գորգիսյա-
նի ղեկավարությամբ Սպիտակավոր հասցվեց քանդակագործ Գեղամ Սահակյանի
կերտած տապանաքարը: Շիրմի վրա տեղադրելուց առաջ նրա տակ ամփոփեցին
պրոֆեսոր Վարագ Առաքելյանի կազմած մագաղաթագիրը՝ հասցեագրված գալիք
սերունդներին: Այն դրված էր շշի մեջ՝ հողից, խոնավությունից անվնաս պահելու
նպատակով: Մագաղաթին գրված էր. «Հա՛յ պարմանի, եթե երբևիցե ձեռքդ անցնի
այս փոքրիկ վկայությունը, իմացի՛ր, որ դու գտել ես հերոսանց հերոս Նժդեհի հա-
վետ սրբազան աճյունը: Սրա տիրոջ ձայնից թնդում էին Սյունյաց բարձր լեռները,
և հայ ազգի արյունարբու թշնամիները թաքնվում էին ձորերում ու ծերպերում:
Ծնկի՛ եկ աճյունի առջև, ինչպես այս նշխարները հայրենիք բերողներն ու հողին
հանձնողներն արին: Նժդեհի հոգին սավառնում է հայկական լեռնաշխարհի վրա,
այդ հոգին գալիք ազատագրական կռվում դարձյալ առաջնորդելու է մեզ»:
Տապանաքարը տեղադրվեց: Նրա վրա փորագրված էր.

ՆԺԴԵՀ

ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
1886-1955
ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՐԱՊԵՏ

Քահանան խնկաշունչ ձայնով օրհնեց շիրիմը: Օդն անգամ թրթռում էր հուզ-
մունքից...

ՊԼԱՆ

1. Գաղտնի արարք:
2. Նժդեհի մասունքի հանձնումը Խուստուփին:
3. Երդում:
4. Թաղում Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու բակում:
5. Պատգամ գալիք սերունդներին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

վաղեմի երազանք, դյուցազնակերպ հերոս, անձեռակերտ հուշարձան, փառահեղ արծիվ, ժայռոտ վերելքներ, կողնի աղբյուր, դողդոջուն ձեռքեր, ալեկոծ սիրտ, հավերժական հանգստարան, ծեր ընկուզենի, գերբնական ուժ, հերոսանց հերոս, խնկաշունչ ձայն::

2. Բացատրել ***մասունք, պարմանի, նշխար*** *բառերի իմաստը:*

միտքը, թե վերջապես ու՞ր ամփոփեն, ո՞ր ապահով անկյունը պահ տան սուրբ աճյունը:

Գտնվեցին հավատարիմ մարդիկ, որոնց օգնությամբ կատարվեց ընտրությունը՝ լեռների բարձրության վրա թառած Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու բակը: Այս խաղաղ վայրում՝ ձորին նայող պատի ձախ կողմում, անձրևափոս բացեցին: Եվ երբ օրն ավարտվեց, ու շրջապատում տիրեց թանձր լռություն, բերեցին խնամքով փաթաթված թանկ բեռը: Նշխարները մայր հողում վերջապես գտան հավերժական հանգստարան: Երբ փոսը փակվեց, թվաց, թե ծեր ընկուզենին խոնարհեց վիթխարի թևերը...

Որքան էլ գաղտնի, բայց գերեզմանը ասես գերբնական ուժով մատնում էր իր տեղը, լուսարձակու՛մ, շողարձակու՛մ, կանչու՛մ: Այն անանուն ու կորած մնալ չէր կարող: Եվ ահա 1989 թվականի հունիսի 17-ին, երբ արդեն հիմնավորապես խարխլվել էին կարմիր վարչակարգի խախուտ հիմքերը, վաղամեռիկ Մովսես Գորգիսյանի ղեկավարությամբ Սպիտակավոր հասցվեց քանդակագործ Գեղամ Սահակյանի կերտած տապանաքարը: Շիրմի վրա տեղադրելուց առաջ նրա տակ ամփոփեցին պրոֆեսոր Վարագ Առաքելյանի կազմած մագաղաթագիրը՝ հասցեագրված գալիք սերունդներին: Այն դրված էր շշի մեջ՝ հողից, խոնավությունից անվնաս պահելու նպատակով: Մագաղաթին գրված էր. «Հա՛յ պարմանի, եթե երբևիցե ձեռքդ անցնի այս փոքրիկ վկայությունը, իմացի՛ր, որ դու գտել ես հերոսանց հերոս Նժդեհի հավետ սրբազան աճյունը: Սրա տիրոջ ձայնից թնդում էին Սյունյաց բարձր լեռները, և հայ ազգի արյունարբու թշնամիները թաքնվում էին ձորերում ու ծերպերում: Ծնկի՛ եկ աճյունի առջև, ինչպես այս նշխարները հայրենիք բերողներն ու հողին հանձնողներն արին: Նժդեհի հոգին սավառնում է հայկական լեռնաշխարհի վրա, այդ հոգին գալիք ազատագրական կռվում դարձյալ առաջնորդելու է մեզ»:

Տապանաքարը տեղադրվեց: Նրա վրա փորագրված էր.

ՆԺԴԵՀ
ԳԱՐԵԳԻՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
1886-1955
ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՐԱՊԵՏ

Քահանան խնկաշունչ ձայնով օրհնեց շիրիմը: Օդն անգամ թրթռում էր հուզմունքից...

ՊԼԱՆ

1. Գաղտնի արարք:
2. Նժդեհի մասունքի հանձնումը Խուստուփին:
3. Երդում:
4. Թաղում Սպիտակավորի սուրբ Աստվածածին եկեղեցու բակում:
5. Պատգամ գալիք սերունդներին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

վաղեմի երազանք, դյուցազնակերպ հերոս, անձեռակերտ հուշարձան, փառահեղ արծիվ, ժայռոտ վերելքներ, Կողնի աղբյուր, դողդոջուն ձեռքեր, ալեկոծ սիրտ, հավերժական հանգստարան, ծեր ընկուզենի, գերբնական ուժ, հերոսանց հերոս, խնկաշունչ ձայն::

*2. Բացատրել **մասունք, պարմանի, նշխար** բառերի իմաստը:*

ՆԺԴԵՀԻ ՄՏՔԵՐԻՑ

Ինքն իրեն Հարգող ժողովուրդը ինքնապաշտպանության Հույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրա: Օտարին ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ Հայրենիք ունենալու, ազատ ապրելու:

* * *

Եղի՛ր այնքան ուժեղ, - խրատում է պատմությունը, - որ թշնամիդ չՀանդգնի Հարձակվել:

Զգացնե՛լ տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կՀրաժարվի զենքի ուժով քեզ անՀանգստացնելու մտքից. աՀա՛ սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստության:

* * *

Ժողովուրդներն իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Ժողովրդի ճակատագրի դարբինը մտավորականությունն է:

* * *

Իր Հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է: Իր երկրի սաՀմաններում պարտվող ժողովուրդն իրավունք չունի խոսելու անկախ Հայրենիքի մասին:

* * *

Հայրենիքը ընդՀանուր աստվածություն, Հայրենասիրություն է, կրոն:

* * *

Ցեղի Հոգին միակ ուժն է, որի առաջ անզոր են բոլոր ուժերը:

ՆԺԴԵՀԻ ՄՏՔԵՐԻՑ

Ինքն իրեն Հարգող ժողովուրդը ինքնապաշտպանության Հույսը դնում է նախ իր բազուկի, իր զենքի վրա: Օտարին ապավինող ժողովուրդն արժանի չէ անկախ Հայրենիք ունենալու, ազատ ապրելու:

* * *

Եղի՛ր այնքան ուժեղ, - խրատում է պատմությունը, - որ թշնամիդ չՀանդգնի Հարձակվել:

Զգացնե՛լ տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կՀրաժարվի զենքի ուժով քեզ անՀանգստացնելու մտքից. ահա՛ սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստության:

* * *

Ժողովուրդներն իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Ժողովրդի ճակատագրի դարբինը մտավորականությունն է:

* * *

Իր Հողի վրա պարտվելը կրկնակի և աններելի պարտություն է: Իր երկրի սաՀմաններում պարտվող ժողովուրդն իրավունք չունի խոսելու անկախ Հայրենիքի մասին:

* * *

Հայրենիքը ընդՀանուր աստվածություն, Հայրենասիրություն է, կրոն:

* * *

Ցեղի Հոգին միակ ուժն է, որի առաջ անզոր են բոլոր ուժերը:

ԱՐԴՅՈՔ ԱՊՐՈՒՄ Է, ԹԵ՞ ՄԵՌԵԼ Է ՆԱ

Ըստ Մարկ Տվենի

Ռիվերայում հանգստանալու ժամանակ ծանոթացա մի մեծահարուստի հետ: Մի օր նա ինձ հրավիրեց իր սենյակը՝ երեկոն միասին անցկացնելու և սալորօղիըմպելու: Երկրորդ բաժակից և ինքնագոհ շաղակրատանքից հետո ասաց.

- Արդեն տրամադրություններս լավ է, և ես քեզ կպատմեմ մի զարմանահրաշ պատմություն: Երկար տարիներ դա գաղտնիք է եղել իմ ու երեք ընկերներիս միջև, բայց այժմ պատմելու եմ քեզ: Հիշու՞մ ես այն մարդուն, որին այսօր հանդիպեցինք: Խոսքը նրա մասին է լինելու:

Շատ ժամանակ է անցել այն օրից, ինչ մենք՝ Կլոդը, Կարլը և ես երիտասարդ նկարիչներ էինք: Թափառում էինք Ֆրանսիայով մեկ, գծանկարներ անում: Որքան աղքատ էինք, նույնքան ուրախ: Ծիծաղում էինք աղքատության վրա, հրաշալի ժամանակ անցկացնում: Վերջապես, միջոցներից զուրկ, մի օր հասանք Բրետան գյուղը, որտեղ ապաստան գտանք մեզ նման մի աղքատ նկարչի՝ Ֆրանսուա Միլեի մոտ:

- Ի՞նչ, հռչակավոր Ֆրանսուա Միլե՞ի, - տեղից վեր թռչելով՝ ընդհատեցի ես:

- Նույն ինքը, միայն թե այն ժամանակ նա հռչակավոր չէր, նույնիսկ հարազատ գյուղում ճանաչված չէր և այնքան աղքատ էր, որ շաղգամից բացի ոչինչ չուներ մեզ կերակրելու: Զորս մտերմացանք և դարձանք անբաժան ընկերներ: Միասին գնում էինք նկարելու, ավելացնում կտավ կտավի վրա, բայց ի՞նչ օգուտ, նրանցից գեթ մեկն անգամ վաճառել չէինք կարողանում: Լինում էին պահեր, որ սովի էինք մատնվում: Այդպիսի ծայրահեղ մի օր Կարլն ասաց, որ դրությունից դուրս գալու ելք է գտել:

- Այս միտքը քաղել եմ պատմությանը հայտնի բազմաթիվ փաստերից, - ասաց նա, - հավատացնում եմ, որ իմ նախագիծը մեզ կհարստացնի:

Բոլորդ քաջ գիտեք, որ նշանավոր արվեստագետների մեծ մասը ճանաչում չի ունեցել այնքան ժամանակ, քանի դեռ չի մեռել: Իմ նախագծի համաձայն՝ պետք է վիճակ գցենք, և մեզնից մեկը պիտի մեռնի, որ մյուսներին փրկի: Զհասկացա՞ք: Մարդն իրականում չի մեռնում, այլ փոխում է իր անունը և չքվում: Մինչ նա կնըկարի, մնացած երեքը զբաղված կլինեն նրա համար փառք ստեղծելով: Կպատմենք, որ հեղինակը մահամերձ է, հետո, որ նա մեռել է, և ճոխ թաղում կկազմակերպենք ու վրան էլ լաց կլինենք ամբողջ աշխարհի հետ: Վստա՜հ եղեք, որ երբ հեղինակը չլինի, նրա ամենափոքրիկ գործն անգամ միլիոններ կարժենա:

Ընկերներս ոգևորվեցին: Մանրամասն ծրագիր մշակեցինք, հետո վիճակ գցեցինք: Այն բաժին ընկավ Միլեին:

Հաջորդ առավոտ երեք ընկերներով մեկնեցինք տարբեր ուղղություններով: Փարիզում ես իմ նկարակալը մի շքեղ առանձնատան մոտ տեղավորեցի և սկսեցի տունը նկարել, նաև սեփականատիրոջը՝ կանգնած պատշգամբում: Նա ինձ մոտ եկավ՝ տեսնելու՝ թե ինչ եմ անում: Հիացավ նկարով և ասաց, որ ես վարպետ եմ: Ցած դրի վրձինս, պայուսակից հանեցի Միլեի գործերից մեկը, ցույց տվի անկյունի ստորագրությունը և հպարտությամբ ավելացրի.

– Հուսով եմ՝ ճանաչեցիք այս վարպետին: Ես ընդամենը Նրա աշակերտն եմ և պետք է որ լավ իմանամ անելիքս:

Մարդը մեղավոր ու շփոթված տեսք ընդունեց: Նա լուռ էր:

– Դուք չեք ուզում ընդունել, – ասացի ես, – որ չգիտեք Ֆրանսուա Միլլեին:

Իհարկե՛ չգիտեր, բայց անհարմար դրությունից դուրս գալու համար ասաց.

– Ո՛չ, ինչու՞: Դա Միլլեն է, համոզված եմ: Ողղակի մի պահ շփոթվեցի: Գուցե վաճառե՞ք նկարը:

– Օ՛, ո՛չ, ի՞նչ եք ասում, ես հարուստ չեմ, բայց այնքան աղքատ էլ չեմ, որ այդպիսի գանձը վաճառեմ:

Նա սկսեց ինձ համոզել: Իսկ ափսոսանքով զիջեցի՝ ասելով.

– Ես հիմար եմ, որ ծախում եմ Միլլեի նկարը, քանի որ այդ մարդը երեք ամսվա կյանք ունի և երբ մեռնի, նրա գործերն անգին կլինեն:

Ու վաճառեցի ութ հարյուր ֆրանկով: Հաջող գործունեություն էին ծավալել նաև մյուս երկու ընկերներս: Հետո երկու հոդված տպագրեցինք «վարպետի» առողջության մասին: Նկարների պահանջարկը մեծացավ: Մենք արդեն վաստակել էինք վաթսունինը հազար ֆրանկ:

Վերջապես տխուր օրը հասավ: Հանդիսավոր թաղում կազմակերպեցինք: Ամբողջ Փարիզն իրար էր անցել: Երեքս, Միլլեն էլ մեզ հետ, ուսերի վրա տանում էինք դագաղը և ոչ մեկին չէինք թողնում օգնել մեզ. չէ՞ որ դագաղում մոմից պատրաստված մարմնից բացի այլ բան չկար: Պետք հիշեք, թե այդ օրերին որքան բարձրացավ Միլլեի նկարների արժեքը: Փարիզում մարդ կա, որ նրանից յոթանասուն կտավ ունի, որոնց համար վճարել է երկու միլիոն ֆրանկ: Վերջում ավելացնեմ, որ այն մարդը, որին այսօր տեսանք, Միլլեն էր: Երևի առաջին անգամ հանճարը սովա մահ չեղավ, և նրան հասանելիք վարձատրությունը ուրիշի գրպանը չմտավ: Մենք դրա ճարը տեսանք:

Ֆրանսուա Միլլեն աշխարհի այն եզակի արվեստագետն է, որ ինքը կենդանի՝ ականատեսը եղավ իր հետմահու փառքին և անմահությանը:

ՊԼԱՆ

1. Սանօթություն:
2. Աղքատ, բայց ուրախ նկարիչները:
3. Զորս ընկերները:
4. Հայտնի դառնալու մտահղացում:
5. Մտահղացումն իրագործվում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները. ... պատմություն, Բրետան գյուղը, ... տուն, չըղ-

Ռիվիերա, ալյուրոտ ընկել, ... վճռական գտնել, փոքր ... նկարակալ, վրձին, ... դրությունից դուրս գալու ... մեղավոր ու շփոթված տեսք, պահանջարկ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1. Ֆրանսուա Միլլեն ֆրանսիացի խոշոր նկարիչ է: Ծնվել է 1814 թվականին և մահացել 1875-ին: Միլլեի կտավները պահպանվում են Լուվրում, ինչպես նաև աշխարհի հայտնի այլ թանգարաններում:

2. Մարկ Տվենը 20-րդ դարի ամերիկացի մեծանուն արձակագիր է, մանկագիր:

- Հուսով եմ՝ ճանաչեցիք այս վարպետին: Ես ընդամենը նրա աշակերտն եմ և պետք է որ լավ իմանամ անելիքս:

Մարդը մեղավոր ու շփոթված տեսք ընդունեց: Նա լուռ էր:

- Դուք չեք ուզում ընդունել, - ասացի ես, - որ չգիտեք Ֆրանսուա Միլեին:

Իհարկե՛ չգիտեր, բայց անհարմար դրությունից դուրս գալու համար ասաց.

- Ո՛չ, ինչու՞: Դա Միլեն է, համոզված եմ: Ողղակի մի պահ շփոթվեցի: Գուցե վաճառե՞ք նկարը:

- Օ՜, ո՛չ, ի՛նչ եք ասում, ես հարուստ չեմ, բայց այնքան աղքատ էլ չեմ, որ այդպիսի գանձը վաճառեմ:

Նա սկսեց ինձ համոզել: Իբր ափսոսանքով զիջեցի՝ ասելով.

- Ես հիմար եմ, որ ծախում եմ Միլեի նկարը, քանի որ այդ մարդը երեք ամսվա կյանք ունի և երբ մեռնի, նրա գործերն անգին կլինեն:

Ու վաճառեցի ութ հարյուր ֆրանկով: Հաջող գործունեություն էին ծավալել նաև մյուս երկու ընկերներս: Հետո երկու հոդված տպագրեցինք «վարպետի» առողջության մասին: Նկարների պահանջարկը մեծացավ: Մենք արդեն վաստակել էինք վաթսունինը հազար ֆրանկ:

Վերջապես տխուր օրը հասավ: Հանդիսավոր թաղում կազմակերպեցինք: Ամբողջ Փարիզն իրար էր անցել: Երեքս, Միլեն էլ մեզ հետ, ուսերի վրա տանում էինք դագաղը և ոչ մեկին չէինք թողնում օգնել մեզ. չէ՞ որ դագաղում մոմից պատրաստված մարմնից բացի այլ բան չկար: Պիտի հիշեք, թե այդ օրերին որքան բարձրացավ Միլեի նկարների արժեքը: Փարիզում մարդ կա, որ նրանից յոթանասուն կտավ ունի, որոնց համար վճարել է երկու միլիոն ֆրանկ: Վերջում ավելացնեմ, որ այն մարդը, որին այսօր տեսանք, Միլեն էր: Երևի առաջին անգամ հանճարը սովամահ չեղավ, և նրան հասանելիք վարձատրությունը ուրիշի գրպանը չմտավ: Մենք դրա ճարը տեսանք:

Ֆրանսուա Միլեն աշխարհի այն եզակի արվեստագետն է, որ ինքը կենդանի՝ ականատեսը եղավ իր հետմահու փառքին և անմահությանը:

ՊԼԱՆ

1. Սանոթություն:
2. Աղքատ, բայց ուրախ նկարիչները:
3. Զորս ընկերները:
4. Հայտնի դառնալու մտահղացում:
5. Մտահղացումն իրագործվում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Ռիվերա, սալորօղի ըմպել, զարմանահրաշ պատմություն, Բրետան գյուղը, ապաստան տալ, չաղգամ, դրությունից դուրս գալու ելք, միտքը քաղել, վիճակ գցել, փառք ստեղծել, նկարակալ, վրձին, մեղավոր ու շփոթված տեսք, պահանջարկ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ *1. Ֆրանսուա Միլեն ֆրանսիացի խոշոր նկարիչ է: Ծնվել է 1814 թվականին և մահացել 1875-ին: Միլեի կտավները պահպանվում են Լուվրում, ինչպես նաև աշխարհի հռչակված այլ թանգարաններում:*

2. Մարկ Տվենը 20-րդ դարի ամերիկացի մեծանուն արձակագիր է, մանկագիր:

ՁՎԱՁԵՎ ԴԻՄԱՆԿԱՐԸ

Ըստ Էդգար Պոյի

Դղյակը, որտեղ օթևանեցինք մենք, աչքի էր ընկնում ճոխությամբ և արվեստի գործերի փառահեղ նմուշներով: Եվ որովհետև սպասավորները մեկնել էին ինչ-որ հեռավոր ճամփորդության, մենք որոշեցինք համգրվանել դղյակի կողմնակի ամենափոքր սենյակներից մեկում: Մեր կացարանի հարդարանքը շքեղ էր, բայց բավական հին ու մաշված: Գորգերով ծածկված պատերին կախված էին տեսակ-տեսակ զենքեր, ինչպես նաև նկարներ՝ ոսկեզօծ շրջանակներով: Նկարները, որոնք ամբացված էին պատերի տեսանելի հատվածներում, ինչպես նաև նման կառույցների համար անխուսափելի բազմաթիվ խորշերում, չափազանց հետաքրքրեցին ինձ: Սեղանին դրված էր շքեղակազմ մի գրքույկ, որտեղ թվարկվում էին ոչ միայն նկարներն ու տրվում տեղեկություններ հեղինակների մասին, այլ նաև դրանց մեկնաբանությունը: Ես երկար կլանված ընթերցում էի գրքույկը և ըստ այդմ դիտում այն նկարը, որի մասին հենց նոր կարդացել էի:

Արդեն մթնել էր: Մոմակալի դիրքն ուզեցի փոխել, և այդ տեղափոխությունն ինձ համար բոլորովին անսպասելի լուսավորեց մի փոքրիկ խորշ, ուր կախված էր գեղատի կնոջ մի դիմանկար՝ դրված ձվաձև շրջանակի մեջ: Նկարն այնքան աքանչելի էր, որ մի պահ աչքերս փակեցի՝ համոզվելու, որ տեսածս խաբկանք չէ: Դիմանկարը, հիրավի, անգերազանցելի էր որպես կերպարվեստի կատարյալ նմուշ, և նրա հմայքն իր ապշեցուցիչ շնչավորության մեջ էր: Թվում էր՝ կինն ուր որ է կթարթի աչքերը, և շրթունքները կբացվեն, ու գեղեցկուհին քնքուշ խոսքեր կշշնջա:

Ձեռքս հապճեպ մեկնեցի տեղեկությունների գրքույկին: Գտնելով ձվաձև դիմանկարի համարը՝ կարդացի հետևյալը. «Նա անզուգական գեղեցկությամբ օժտված օրիորդ էր՝ հմայիչ ու զվարթ: Չարաբաստ եղավ այն օրը, երբ նա տեսավ, սիրեց նկարչին ու դարձավ նրա կինը: Նկարիչը համառ էր, անզիջում ու մոլեռանդ և արդեն վաղուց պսակված էր ԱՐՎԵՍՏԻ հետ: Աղջիկն օժտված էր բացառիկ գեղեցկությամբ, ասես հյուսված լիներ օդից, լույսից, նեկտարից ու ժպիտներից: Եղնիկի պես կայտառ էակ էր նա և սիրում ու գուրգուրում էր ամեն բան՝ ատելով միմիայն իր ախոյանին՝ ԱՐՎԵՍՏԸ, սոսկալով միայն վրձնից, ներկապնակից և նման չարագուշակ պիտույքներից, որոնք խլում էին իրենից իր սիրելիին:

Մի օր նկարիչն իր ջահել կնոջը վրձնելու ցանկություն հայտնեց: Լինելով խոնարհ ու հնազանդ՝ կինը երկար շաբաթներ նստեց դղյակի բարձր աշտարակներից մեկի արվեստանոցում: Ստեղծագործելու մոլուցքով տարված նկարիչը չէր ուզում տեսնել, որ մենավոր աշտարակի ցուրտն ու խոնավությունը օրեցօր հյուծում են կնոջը: Բոլորն էին դա տեսնում, բացի նկարչից: Իսկ նրա կինը շարունակ ժպտում ու չէր տրտնջում, որովհետև զգում էր, որ ամուսինն ինքնամոռաց հաճույք է ստանում իր գործից՝ պատկերելով իրեն այդքան սիրող, սակայն օրըստօրե նվաղող ու մոմի պես հալվող էակին: Նրանք, ովքեր տեսել էին կտավը, շշուկով էին խոսում այդ ապշեցուցիչ ստեղծագործության մասին, որ վկայում էր նկարչի անհուն սերը դեպի նա, ով նկարում արդարև պատկերված էր անօրինակ ներշնչանքով: Սա-

կայն հետո, երբ գործն արդեն ավարտին էր մոտենում, ոչ ոք այլևս իրավունք չունեցավ աշտարակ մտնել: Իսկ նկարիչը, աշխատանքի մարմաջով բռնկված, սակայն էր հայացքը պոկում կտավից՝ նույնիսկ իր կնոջը նայելու համար: Նա չէր տեսնում, որ կտավին դրոշմած երանգներն ինքը խլում է դիմացը նստած էակի այտերից: Վերջապես, շատ շաբաթներ անց, երբ վրձնի սոսկ մեկ հարված էր մնացել շուրթերին տալու, և մի նուրբ երանգ՝ աչքի մոտ, տիկնոջ հոգին նորից մոմի բոցի պես մի պահ բռնկվեց: Հենց այդ պահին էր, որ վրձինը քսվեց կտավին, վերջին երանգը գտավ իր տեղը, և նկարիչը, գմայլված իր գործով, մի պահ անշարժացավ նկարի առջև: Հետո նա հանկարծ գունատվեց, երերաց ու բացականչելով «Հիրավի, սա ինքը կյանքն է»՝ կտրուկ դարձավ սիրելիի կողմը: Նա մեռած էր:

ՊԼԱՆ	1. Թափուր դղյակը:	4. Նկարի պատմությունը:
	2. Նկարազարդ սրահը:	5. Պատմվածքի մեկնաբանությունը:
	3. Զված դիմանկարը:	6. Դատողություններ կյանքի և արվեստի փոխհարաբերության մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

օթևանել, արվեստի գործերի փառահեղ նմուշներ, հանգրվանել, կողաշենք, հարդարանք, ոսկեզօծ շրջանակներ, խորան, շքեղակազմ գրքույկ, դեռատի կին, կերպարվեստի կատարյալ նմուշ, ընչավորություն, անզուգական գեղեցկությամբ օժտված օրիորդ, չարաբաստ, անգիշում, մոլեռանդ, ներկապնակ, վրձնել, հյուծել, ինքնամոռաց հանույք, նվաղել, անօրինակ ներշնչանք, մարմաջ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Էդգար Պո՝ 19-րդ դարի ամերիկացի ականավոր բանաստեղծ, արձակագիր և քննադատ:*

ՀԱՅԱԶԳԻ ՕՏԱՐԸ

Ըստ Հ. Ղուկասյանի

1666 թվականն էր, ու թեև շոգ ամառ էր, սակայն Պարսկաստանի Նոր Ջուղա հայաբնակ քաղաքի «Ամենափրկիչ» եկեղեցու կիսամութ սրահներում մրսեցնելու չափ սառն էր: Սրբավայրին բնորոշ մաքրության փոխարեն այդ սրահներում թափթփվածություն էր ու խառնաշփոթ: Բարձր փայտամածները, ներկերը, բանվորական արտահագուստներով վարպետների ներկայությունը վկայում էին, որ «Ամենափրկիչը» վերանորոգվում էր: Գմբեթի տակ ամրացված տախտակամածի վրա կանգնած՝ աշխատում էին նկարչապետ Հովհաննես Մրքուզն ու նրա աշակերտ Աստվածատուր Սալթանյանցը: Նրանց վրձնի տակից ծնվում էին գարմանահրաշ պատկերներ՝ Մարիամ Աստվածածինը՝ գրկած մանուկ Հիսուսին, առաքյալներ, հրեշտակներ ու մարգարեներ: Պատանի Աստվածատուրը ակնածանքով մերթընդմերթ նայում էր, թե ինչպես է ոսկեզօծում իր ուսուցիչը:

Անցան տարիներ: Ռուսական ցարի ընտանիքի հետ կապ ունեցող հայ վաճառական Զաքար Սահրադյանը Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովին, ի թիվս այլ նվերների, ընծայեց Աստվածատուր Սալթանյանցի «Խորհրդավոր ընթրիք» փորագրությունը: Երբ ցարն այն տեսավ, զարմացած բացականչեց.

- Հիանալի՛ է, աստվա՛ծ վկա, սա ուղղակի հայտնություն է: Ո՞վ է հեղինակը:

- Աստվածատուր անունով մի պատանի, Ձե՛րդ բարեխնամություն:

- Աստվածատու՞ր, - դժվարությամբ արտաբերեց ցարը, - ծանր անուն է:

- Դա, Ձե՛րդ բարեխնամություն, ձեր Բոգդանն է:

Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հրամանով Աստվածատուր Սալթանյանցը հրավիրվեց Մոսկվա՝ ռուս շնորհալի պատանիներին սովորեցնելու որմնազարդելու արվեստը: Մեկնեց Աստվածատուրը՝ Ջուղայում թողած մորը, եղբայրներին, հարսնացուին: Գնաց վեց ամսով: Այդպես էր որոշված: Բայց անքնին է Աստծո կամքը: Աստվածատուր Սալթանյանցը, որ մինչև ուղնուծուծը հայ էր, հայ նկարիչ, չգիտեր, չէր կարող գուշակել, որ այլևս երբե՛ք, երբե՛ք չի տեսնելու մորը, ծննդավայրը, «Ամենափրկիչը»: Եվ մտքով իսկ չէր անցնում, որ շատ տարիներ անց անհետ կորչելու է ռուսական տափաստանում, և որ մարդկության համար ընդմիշտ գաղտնի է մնալու այն մի ափ հողը, որն իր ծոցում ամփոփում է աշխարհի մեծագույն նկարիչներից մեկին՝ Բոգդան Սալթանովին:

Մի քանի օր անց քարավանը Աստվածատուրին տանում էր Աստրախան, որտեղից էլ Վոլգայի վրայով ուղղություն պիտի վերցներ դեպի Մոսկվա:

Մեծ գոսուդար Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովը բարեհաճեց ընդունել Աստվածատուր Սալթանյանցին:

Նստել է գահին մեծ գոսուդարը՝ ուսերին ոսկեթանված չքեղ շուրջառ, գլխին գոհարազարդ խաչակիր թագ: Եվ չորսբոլորը շողք է ու փայլ:

Աստվածատուրը, ինչպես նախօրոք սովորեցրել էին, խոնարհվել է ցարի ոտքերի առջև և չի համարձակվում բարձրացնել աչքերը:

- Բոգդա՛ն Սալթանով, - լսվում է ցարի թավշային ձայնը, - քեզ աշակերտներ կտրվեն, որպեսզի վարպետներ դարձնես փորագրական նրբին արվեստում: Կիտագործողում քեզ կտան առանձնատուն և ամսական աշխատավարձ՝ սկսած հայրական տնից քո դուրս գալու օրվանից:

Եվ այսպես, Աստվածատուրը դարձավ Բոգդան, Սալթանյանցը՝ Սալթանով: Այդ ճակատագրական պահից Ջուղայեցի մեծատաղանդ արվեստագետը ընդմիշտ հեռացավ հայ արվեստից և դարձավ ռուս նկարիչ: Ավելին, 1674 թվականին ընդունեց ուղղափառություն, որը նրան տվեց արքունիքից և եկեղեցուց պատվերներ ստանալու իրավունք:

Այժմ էլ Մոսկվայի պատմության պետական թանգարանում, Կրեմլում, Զինապալատում պահպանվել են Բոգդան Սալթանովի զարմանահրաշ սրբապատկերները՝ «Տիրամայրը», «Հովհաննես Ավետարանիչը», «Տիրամայրը երկու հրեշտակների հետ», «Խաչից իջնելը», «Հարություն», «Համբարձում», «Կենսահաստատ խաչը», «Ահեղ դատաստան» և այլն: Իսկ Մոսկվան զարդարող Կրեմլը և առաջին հաղթական կամարը իրենց վրա կրում են քանքարավոր արվեստագետի ձեռքի հետքերը:

Մնալով հայ նկարիչը դարձավ համամարդկային արվեստի սեփականություն:
Եվ եթե քեզ, պատանի՛ բարեկամ, երբևէ բախտ վիճակվի լինել Մոսկվայի, Պետեր-

Անցան տարիներ: Ռուսական ցարի ընտանիքի հետ կապ ունեցող հայ վաճառական Զաքար Սահրադյանը Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովին, ի թիվս այլ նվերների, ընծայեց Աստվածատուր Սալթանյանցի «Խորհրդավոր ընթրիք» փորագրությունը: Երբ ցարն այն տեսավ, զարմացած բացականչեց.

- Հիանալի՛ է, աստվա՛ծ վկա, սա ուղղակի հայտնություն է: Ո՞վ է հեղինակը:

- Աստվածատուր անունով մի պատանի, Ձե՛րդ բարեծնություն:

- Աստվածատու՞ր, - դժվարությամբ արտաբերեց ցարը, - ծանր անուն է:

- Դա, Ձե՛րդ բարեծնություն, ճեր Բոգդանն է:

Ալեքսեյ Միխայլովիչ ցարի հրամանով Աստվածատուր Սալթանյանցը հրավիրվեց Մոսկվա՝ ռուս շնորհալի պատանիներին սովորեցնելու ոսկեզօծելու արվեստը: Մեկնեց Աստվածատուրը՝ Ջուղայում թողած մորը, եղբայրներին, հարազատներին: Գնաց վեց ամսով: Այդպես էր որոշված: Բայց անքնին է Աստծո կամքը: Աստվածատուր Սալթանյանցը, որ մինչև ուղնուծուծը հայ էր, հայ նկարիչ, չգիտեր, չէր կարող գուշակել, որ այլևս երբե՛ք, երբե՛ք չի տեսնելու մորը, ծննդավայրը, «Ամենափրկիչը»: Եվ մտքով իսկ չէր անցնում, որ շատ տարիներ անց անհետ կորչելու է ռուսական տափաստանում, և որ մարդկության համար ընդմիշտ պատկանելու է միայն այն մի ափ հողը, որն իր ծոցում ամփոփում է աշխարհի մեծագույն նկարիչներից մեկին՝ Բոգդան Սալթանովին:

Մի քանի օր անց քարավանը Աստվածատուրին տանում էր Աստրախան, որտեղից էլ Վոլգայի վրայով ուղղությունը պիտի վերցներ դեպի Մոսկվա:

Մեծ գոսուդար Ալեքսեյ Միխայլովիչ Ռոմանովը բարեհաճեց ընդունել Աստվածատուր Սալթանյանցին:

Նստել է գահին մեծ գոսուդարը՝ ուսերին ոսկեհանված շքեղ շուրջառ, գլխին գոհարազարդ խաչակիր թագ: Եվ չորսբոլորը շողք է ու փայլ:

Աստվածատուրը, ինչպես նախօրոք սովորեցրել էին, խոնարհվել է ցարի ոտքերի առջև և չի համարձակվում բարձրացնել աչքերը:

- Բոգդա՛ն Սալթանով, - լսվում է ցարի թավշային ձայնը, - քեզ աշակերտներ կտրվեն, որպեսզի վարպետներ դարձնես փորագրական նրբին արվեստում: Կխազգո՛րդվում քեզ կտան առանձնատուն և ամսական աշխատավարձ՝ սկսած հայրական տնից քո դուրս գալու օրվանից:

Եվ այսպես, Աստվածատուրը դարձավ Բոգդան, Սալթանյանցը՝ Սալթանով: Այդ ճակատագրական պահից Ջուղայեցի մեծատաղանդ արվեստագետը ընդմիշտ հեռացավ հայ արվեստից և դարձավ ռուս նկարիչ: Ավելին, 1674 թվականին ընդունեց ուղղափառություն, որը նրան ավեց արքունիքից և եկեղեցուց պատվերներ ստանալու իրավունք:

Այժմ էլ Մոսկվայի պատմության պետական թանգարանում, Կրեմլում, Զինապալատում պահպանվել են Բոգդան Սալթանովի գարմանահրաշ սրբապատկերները՝ «Տիրամայրը», «Հովհաննես Ավետարանիչը», «Տիրամայրը երկու հրեշտակների հետ», «Խաչից իջնելը», «Հարություն», «Համբարձում», «Կենսահատատու խաչը», «Անեղ գառնառանը» և այլն: Իսկ Մոսկվան զարդարող Կրեմլը և առաջին հայթական կամարը իրենց վրա կրում են քանքարավոր արվեստագետի ձեռքի հետքերը:

Մոռանալով հայ նկարիչը դարձավ համաշխարհային արվեստի սեփականություն: Եվ եթե քեզ, պատանի՛ բարեկամ, երբևէ բախտ վիճակվի լինել Մոսկվայի, Պետեր-

փայտից
բուրգի, Փարիզի ու Դրեզդենի թանգարաններում և որևէ նկարի կամ
պատրաստված իրերի՝ հնագույն դրվագազարդ սեղանների, մահճակալների, զարդա-
տուփերի վրա կարդալ Բոգդան Սալթանովի անունը, մի՛ հեռացիր անտարբեր, քան-
գի քո և այդ անունը կրող մարդու արյունը միևնույնն է: Տարբերությամբ, որ
կտրված լինելով հայրենի հողից՝ նա դարձավ օտար և որքան էլ համամարդկային,
չդարձավ ազգային: Մի բան, որ արվեստագետի համար ամենակարևորն է:

ՊԼԱՆ

1. Վերանորոգվող «Ամենափրկիչը»:
2. Վարպետն ու աշակերտը:
3. Հրավեր:
4. Ցարն ընդունում է Աստվածատուր Սալթանյանցին:
5. Բոգդան Սալթանով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. *Գրատախտակին գրել՝*

ա) հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Նոր Ջուղա հայաբնակ քաղաք, թափթփվածություն ու խառնաշփոթ, բարձր փայտամածներ, բան-
վորական արտահագուստ, նկարչապետ Հովհաննես Մրքուզ, զարմանահրաշ պատկերներ, Մարիամ
Աստվածածին, առաքյալ, հրեշտակ, մարգարե, որմնազարդել, «Խորհրդավոր ընթրիք», փորագրու-
թյուն, որմնազարդելու արվեստ, անքնին, ռուսական տափաստան, մեծ դուսուդար Ալեքսեյ Միխայլո-
վիչ Ռոմանով, ոսկեբանված չքեղ շուրջառ, գոհարազարդ թագակիր խաչ, քանքարավոր արվեստագետ.

բ) Բոգդան Սալթանովի նկարների անվանումները:

2. Ցուցադրել «Բոգդան Սալթանով» ալբոմի նկարները:

ՄԻ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՆՃԱՐԸ

Ըստ Ստ. Ցվայգի

1722 թվականի ապրիլի 20-ին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Տասնվեցերորդը պատերազմ հայտարարեց երկրի դարավոր թշնամուն՝ Գերմանիային: Լուրը կայծակի արագությամբ տարածվեց, հասավ նաև Ստրասբուրգ: Փողոցներն ու հրապարակները լցվեցին հուզախռով մարդկանց հոծ բազմություններով: Գունդ առ գունդ դուրս եկավ քաղաքային կայազորը, որին ընդունեց Ստրասբուրգի քաղաքագլուխ Դիտրիխը: Արագ պատրաստված բեմահարթակի վրա կանգնած՝ նա դիտեց շքերթը, ապա արտասանեց բոցաշունչ ճառ՝ ուղղված քաղաքացիներին, բանակին.

- Հայրենիքը կանչում է մեզ: Ի զե՛ն: Մա՛հ թշնամուն, կեցցե՛ սրբազան հայրենասիրությունը:

Երեկոյան մեծ հրավերք էր Դիտրիխի շքեղ առանձնատանը: Ներկա էին Ֆրանսիայի ճանաչված գեներալներ, զինվորական անվանի գործիչներ, բարձրաստիճան սպաներ՝ բոլորն էլ համակված մոտալուտ կռվի տենչով ու անվերապահ հաղթանակի հավատով:

Դիտրիխի կողքին նստած էր Ստրասբուրգի ինժեներական գործերի կապիտան Ռուժե դը Լիլը: Համակրելի դեմքով այդ երիտասարդը, որ երբեմն բանաստեղծություններ էր գրում և ջութակ նվագում, մեկ տարի առաջ, ի պատիվ սահմանադրության հռչակման, ոչ վատ մի քայլերգ էր գրել, և այն կատարվել էր զինվորական երգչախմբի կողմից:

- Ի՞նչ եք կարծում, դը Լի՛լ, - նրան դիմեց Դիտրիխը, - օգուտ չքաղե՞նք հայրենասիրական պոռթկումներից, քայլերգ չգրե՞նք ֆրանսիական բանակի համար, որ վաղն առավոտ դուրս է գալու արշավանքի:

Բարոն Դիտրիխի՝ անփութորեն արված այս առաջարկությունը, որն ինքը նույն վայրկյանին էլ մոռացավ, Ռուժեն ընդունեց ամենայն լրջությամբ և տուն մտավ արտակարգ հուզված:

Կեսգիշեր է, բայց խնջույքից հենց նոր վերադարձած սպան, որ հոգնությունից ոտքերը հազիվ է շարժում, քնել չի կարողանում: Նա անհանգիստ քայլում է սենյակի մի անկյունից մյուսը՝ ականջներում բոցաշունչ ճառերի, հայրենասիրական կոչերի քաոսային ժխորը: Ապա վերցնում է գրիչը և գրեթե անգիտակցաբար թղթին հանձնում քայլերգի առաջին տողերը:

Ռուժեն կարդում է ու հիանում: Սկիզբը կա: Պահարանից հանում է ջութակը և աղեղը սահեցնում լարերի վրայով: Օ՜, հրա՜շք, առաջին իսկ տակտերից նրան հաջողվում է գտնել մեղեդին: Նորից է հափշտակում գրիչը և գրում՝ համակված մի անսպասելի խորհրդավոր զորությամբ: Զարմանալի բա՛ն: Ոչ մի ջանք, բայց միանգամից ներդաշնակում է ամեն ինչ՝ և՛ հրեղեն բառերը, և՛ հիասքանչ մեղեդին: Ուղղակի ապշեցուցիչ արագությամբ մի խենթ պոռթկումով գրում է ամբողջ տեքստը և հորինում երաժշտությունը: Եվ դա այնքա՜ն հեշտ, այնքա՜ն թեթև, մինչ այդ իրեն անծանոթ ներքին զորության այնքա՜ն անզուսպ թելադրանքով: Դյութական մեղեդու մեջ ասես դրված է բովանդակ ֆրանսիական ժողովրդի սիրտը, ատելությունը տիրակալների դեմ, թափը, ազնիվ ձգտումները: Օ՜, ո՛չ, այս կախարդական մեղեդու ստեղծողը ինքը չէ, իրեն թելադրվում է ի վերուստ, ինչ-որ գերհզոր ուժ ներշնչում է էությանը: Նա չգիտեր, որ այդ գիշերվանից իրեն վիճակված էր անմահների եղբայրը դառնալ: Գրեց վերջին նոտաները, հոգնած ընկավ մահճակալին և ընկղմվեց խորունկ քնի մեջ:

Սակայն երգը, որ հասցեագրված էր ժողովրդին, բանակին, այդպես էլ մոռացվեց: Մոռացվեց նույնիսկ իր՝ Ռուժե դը Լիլի կողմից:

Չորս ամիս անց Ֆրանսիայի հակառակ ծայրում՝ Մարսելում, կամավորական գնդի մի պատանի, հաղթանակից ոգևորված, իր ընկերների մոտ կատարեց երգը: Այգ էր: Ասես կայծ ընկավ վառոդի տակառը: Զինվորները երգի բառերի մեջ տեսան իրենց ամենանվիրական իղձերի, երազների մարմնավորումը: Իսկ մեղեդին, նրա մարտաշունչ ռիթմը վառեց բոլորի հոգիները: Խմբով միացան երգող տղային, և երգը կրկնվեց մեկ, երկու՛, բազու՛մ անգամներ: Դա բավական էր, որ հաջորդ օրը ամբողջ Մարսելը երգեր, ու աննշան երաժիշտ Ռուժե դը Լիլի ստեղծագործությունը դառնար մարսելյան կամավորների քայլերգը, ի պատիվ քաղաքի՝ անվանվեր «Մարսելյեզ»:

Այնուհետև ոչ մի հանդիսություն, տոնակատարություն, ճակատամարտ չէր սկսվում առանց «Մարսելյեզի»: Ամենուրեք, ուր մարտնչում էր Ֆրանսիան, թնդում էր հեղափոխության հիմնը: Մինչդեռ անհայտ ու անանուն Ռուժե դը Լիլը

Դիտրիխի կողքին նստած էր Ստրասբուրգի ինժեներական զորքերի կապիտան Ռուժե դը Լիլը: Համակրելի դեմքով այդ երիտասարդը, որ երբեմն բանաստեղծություններ էր գրում և ջութակ նվագում, մեկ տարի առաջ, ի պատիվ սահմանադրության հռչակման, ոչ վատ մի քայլերգ էր գրել, և այն կատարվել էր գնդվորական երգչախմբի կողմից:

- Ի՞նչ եք կարծում, դը Լի՛լ, - նրան դիմեց Դիտրիխը, - օգուտ չքաղե՞նք հայրենասիրական պոռթկումներից, քայլերգ չգրե՞նք ֆրանսիական բանակի համար, որ վաղն առավոտ դուրս է գալու արշավանքի:

Բարոն Դիտրիխի՝ անփութորեն արված այս առաջարկությունը, որն ինքը նույն վայրկյանին էլ մոռացավ, Ռուժեն ընդունեց ամենայն լրջությամբ և տուն մտավ արտակարգ հուզված:

Կեսգիշեր է, բայց խնջույքից հենց նոր վերադարձած սպան, որ հոգնությունից ոտքերը հազիվ է շարժում, քնել չի կարողանում: Նա անհանգիստ քայլում է սենյակի մի անկյունից մյուսը՝ ականջներում բոցաշունչ ճառերի, հայրենասիրական կոչերի քաոսային ժխորը: Ապա վերցնում է գրիչը և գրեթե անգիտակցաբար թղթին հանձնում քայլերգի առաջին տողերը:

Ռուժեն կարդում է ու հիանում: Սկիզբը կա: Պահարանից հանում է ջութակը և աղեղը սահեցնում լարերի վրայով: Օ՜, հրա՛նք, առաջին իսկ տակտերից նրան հաջողվում է գտնել մեղեդին: Նորից է հափշտակում գրիչը և գրում՝ համակված մի անսպասելի խորհրդավոր զորությամբ: Զարմանալի բա՛ն: Ոչ մի ջանք, բայց միանգամից ներդաշնակում է ամեն ինչ՝ և՛ հրեղեն բառերը, և՛ հիասքանչ մեղեդին: Ուղղակի սպշեցուցիչ արագությամբ մի խենթ պոռթկումով գրում է ամբողջ տեքստը և հորինում երաժշտությունը: Եվ դա այնքա՜ն հեշտ, այնքա՜ն թեթև, մինչ այդ իրեն անծանոթ ներքին զորության այնքա՜ն անզուսպ թելադրանքով: Դյութական մեղեդու մեջ ասես դրված է բովանդակ ֆրանսիական ժողովրդի սիրտը, ատելությունը տիրակալների դեմ, թափը, ազնիվ ձգտումները: Օ՜, ո՛չ, այս կախարդական մեղեդու ստեղծողը ինքը չէ, իրեն թելադրվում է ի վերուստ, ինչ-որ գերհզոր ուժ ներշնչում է նրան: Նա չգիտեր, որ այդ գիշերվանից իրեն վիճակված էր անմահների եղբայրը դառնալ: Գրեց վերջին նոտաները, հոգնած ընկավ մահճակալին և ընկղմվեց խորունկ քնի մեջ:

Սակայն երգը, որ հասցեագրված էր ժողովրդին, բանակին, այդպես էլ մոռացվեց: Մոռացվեց նույնիսկ իր՝ Ռուժե դը Լիլի կողմից:

Չորս ամիս անց Ֆրանսիայի հակառակ ծայրում՝ Մարսելում, կամավորական գնդի մի պատանի, հաղթանակից ոգևորված, իր ընկերների մոտ կատարեց երգը: Այդ էր: Ասես կայծ ընկավ վառոդի տակառը: Զինվորները երգի բառերի մեջ տեսան իրենց ամենանվիրական իղձերի, երազների մարմնավորումը: Իսկ մեղեդին, նրա մարտաշունչ ռիթմը վառեց բոլորի հոգիները: Խմբով միացան երգող տղային, և երգը կրկնվեց մե՛կ, երկու՛, բազու՛մ անգամներ: Դա բավական էր, որ հաջորդ օրը ամբողջ Մարսելը երգեր, ու անունն անծանոթ երաժիշտ Ռուժե դը Լիլի ստեղծագործությունը դառնար մարսելյան կամավորների քայլերգը, ի պատիվ քաղաքի՝ անվանվեր «Մարսելյեզ»:

Այնուհետև ոչ մի հանդիսություն, տոնակատարություն, ճակատամարտ չէր սկսվում առանց «Մարսելյեզի»: Ամենուրեք, ուր մտանում էր Ֆրանսիան, թևածում էր հեղափոխության հիմնը: Մինչդեռ անհայտ ու անանուն Ռուժե դը Լիլը

ջանասիրաբար գծում էր խրամատների և ամրությունների գծագրեր: Ամբողջ Ֆրանսիայում ոչ ոք չէր խոսում ինժեներական զորքերի կապիտանի մասին: Աննախադեպ փառքը բաժին էր ընկնում միայն երգին: Այն այնքան սատվածային էր, որ ոչ մեկի մտքով չէր անցնում վերագրել որևէ անհատի:

Այդպես էլ Ռուժե դը Լիլը մոռացված կմնար, եթե հենց ինքը իր վրա չհրավիրեր թշնամական ուշադրություն: Պարզվեց, որ հեղափոխական քայլերգ գրող կապիտանն ինքը ամենևին էլ հեղափոխական չէ: Ընդհակառակը, մոլի միապետական է, հեղափոխության անհաշտ թշնամի: Եվ երբ մարսելցիները, Փարիզի հասարակայնությունը և Ֆրանսիայի առաջադեմ մարդիկ գահընկեց էին անում թագավորին, Ռուժե դը Լիլը կանգնում է միապետության կողմնակիցների կողքին: Իր իսկ ստեղծած երգը դուրս էր եկել իր դեմ, խենթացրել ամբոխներին, սասանել գահը, կործանել հինը: Ռուժե դը Լիլը և «Մարսելյեզը» ատում էին իրար: Նրանք հակառակորդներ էին:

Բուրբոնները տապալվեցին, և հեղափոխական ամենահրաշալի երգի հեղինակին չարերի հետ բանտ նետեցին: Մեղադրելով նրան որպես հայրենիքի դավաճանի՝ խլեցին համազգեստը, պոկեցին ուսադիրները, գրկեցին թոշակից: Նա հրաշքով փրկվեց կախաղանից:

Բանտից դուրս գալուց հետո այդ չնչին մարդուկը սկսեց զբաղվել զանազան խծբծանքներով, անմաքուր գործերով: Նույնիսկ բանտ ընկավ խաբերայության, պարտքերը չտալու պատճառով: Տերը կամեցել էր, որ 76 տարիների ընթացքում Ռուժե դը Լիլը երեք ժամ միայն լինի հանճարեղ, իսկ հետո արգահատանքով նրան նետել էր նախկին ոչնչության գիրկը: Բոլորին սրտնեղություն պատճառող, պարտատերերից թաքնվող, ոստիկանության կողմից հետապնդվող պաշտոնանկ կապիտանը ի վերջո մեկուսացավ գավառական մի խուլ անկյունում՝ հեռվից միայն լսելով, թե իր երգը ինչպես է փոթորկում ողջ Եվրոպան:

Մենության մեջ էլ 1836 թվականին մեռավ: Նրա անունը երկար մնաց անհայտության մեջ, և միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ «Մարսելյեզը» վաղուց արդեն դարձել էր Ֆրանսիայի հիմնը, կառավարության հրամանով Ռուժե դը Լիլի աճյունը տեղափոխեցին Փարիզ և ամփոփեցին Նապոլեոն Բոնապարտի կողքին:

ՊԼԱՆ

1. Լյուդովիկոս Տասնվեցերորդը պատերազմ է հայտարարում:
2. Հրավերք Դիտրիխի տանը:
3. Դիտրիխի առաջարկությունը:
4. Երգի ստեղծումը:
5. Մարսելյան կամավորների քայլերգը:
6. Հեղափոխության անհաշտ հակառակորդը:
7. Արգահատելի մարդուկը:
8. Անմահություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

Հուզախառն մարդկանց հոծ բազմություններ, բոցաշունչ ճառ, համակվել անսպառելի խորհրդավոր զորությամբ, հրեղեն բառեր, խենթ պոռթկում, ներքին զորության անզուսպ թելադրանքով, գերհզոր ուժի ներշնչանք, կայծ ընկավ վառոդի տակառը, մարտաշունչ ռիթմ, մոլի միապետական, խծբծանք, արգահատանք, պաշտոնանկ կապիտան, գավառական մի խուլ անկյուն:

ջանասիրաբար գծում էր խրամատների և ամրությունների գծագրեր: Ամբողջ Ֆրանսիայում ոչ ոք չէր խոսում ինժեներական զորքերի կապիտանի մասին: Աննախանձելի փառքը բաժին էր ընկնում միայն երգին: Այն այնքան աստվածային էր, որ ոչ մեկի մտքով չէր անցնում վերագրել որևէ անհատի:

Այդպես էլ Ռուժե դը Լիլը մոռացված կմնար, եթե հենց ինքը իր վրա չհրավիրեր թշնամական ուշադրություն: Պարզվեց, որ հեղափոխական քայլերգ գրող կապիտանն ինքը ամենևին էլ հեղափոխական չէ: Ընդհակառակը, մոլի միապետական է, հեղափոխության անհաշտ թշնամի: Եվ երբ մարսելցիները, Փարիզի հասարակայնությունը և Ֆրանսիայի առաջադեմ մարդիկ գահընկեց էին անում թագավորին, Ռուժե դը Լիլը կանգնում է միապետության կողմնակիցների կողքին: Իր իսկ ստեղծած երգը դուրս էր եկել իր դեմ, խնճացրել ամբոխներին, սասանել գահը, կործանել հինը: Ռուժե դը Լիլը և «Մարսելյեզը» ատում էին իրար: Նրանք հակառակորդներ էին:

Բուրբոնները տապալվեցին, և հեղափոխական ամենահրաշալի երգի հեղինակին շատերի հետ բանտ նետեցին: Մեղադրելով նրան որպես հայրենիքի դավաճանի՝ խլեցին համազգեստը, պոկեցին ուսադիրները, զրկեցին թոշակից: Նա հրաշքով փրկվեց կախաղանից:

Բանտից դուրս գալուց հետո այդ չնչին մարդուկը սկսեց զբաղվել զանազան խծբծանքներով, անմաքուր գործերով: Նույնիսկ բանտ ընկավ խաբեբայության, պարտքերը չտալու պատճառով: Տերը կամեցել էր, որ 76 տարիների ընթացքում Ռուժե դը Լիլը երեք ժամ միայն լինի հանճարեղ, իսկ հետո արգահատանքով նրան նետել էր նախկին ոչնչության գիրկը: Բոլորին սրտնեղություն պատճառող, պարտատերերից թաքնվող, ոստիկանության կողմից հետապնդվող պաշտոնանկ կապիտանը ի վերջո մեկուսացավ գավառական մի խուլ անկյունում՝ հեռվից միայն լսելով, թե իր երգը ինչպես է փոթորկում ողջ Եվրոպան:

Մենության մեջ էլ 1836 թվականին մեռավ: Նրա անունը երկար մնաց անհայտության մեջ, և միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ «Մարսելյեզը» վաղուց արդեն դարձել էր Ֆրանսիայի հիմնը, կառավարության հրամանով Ռուժե դը Լիլի աճյունը տեղափոխեցին Փարիզ և ամփոփեցին Նապոլեոն Բոնապարտի կողքին:

ՊԼԱՆ

1. Լյուդովիկոս Տասնվեցերորդը պատերազմ է հայտարարում:
2. Հրավերք Դիտրիխի տանը:
3. Դիտրիխի առաջարկությունը:
4. Երգի ստեղծումը:
5. Մարսելյան կամավորների քայլերգը:
6. Հեղափոխության անհաշտ հակառակորդը:
7. Արգահատելի մարդուկը:
8. Անմահություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

Հուզախռով մարդկանց հոծ բազմություններ, բոցաշունչ ճառ, համակվել անսպասելի խորհրդավոր զորությամբ, հրեղեն բառեր, խենթ պոռթկում, ներքին զորության անզուսպ թևապտույտով, գերհզոր ուժի ներշնչանք, կայծ ընկավ վառոդի տակառը, մարտաշունչ ոիթմ, մոլի միապետական, խծբծանք, արգահատանք, պաշտոնանկ կապիտան, գավառական մի խուլ անկյուն:

Հոլանդացի հանճարեղ գեղանկարիչ Վինսենթ Վան-Գոգի (1853-1890) կյանքը անցել է կարիքի ու չքավորության մեջ: Նկարել է օրնիրուն, ստեղծել արևով, շլացուցիչ նարնջագույնով, մանուշակագույնով ու կապույտով լեցուն վառվռուն քնապատկերներ: Նրա նկարներից հորդել է պայծառ լույս, կիզող ջերմություն, կրա՛կ, բո՛ց: Սիրել է նկարել հատկապես վառ դեղին խոշոր արևածաղիկներ: Պատահական չէ, որ նրա շիրմին ընկերները տնկել են հատկապես այդ ծաղիկը:

Կենդանության օրոք Վան-Գոգը չգնահատվեց: Նա չկարողացավ վաճառել իր նկարներից գեթ մեկը: Եվ այդուամենայնիվ չբաժանվեց վրձնից ու ներկերից: Բնատուր անհեղլի տաղանդը ճնշում էր նրան, ստիպում երկնել, պոռթկալ, կտավին հանձնել արևով ողողված գույներ ու պատկերներ:

Վան-Գոգի կյանքի անձնվեր ուղեկիցը, միակ նեցուկը եղել է եղբայրը՝ Թեոն, որը զարմանալի քնքուշ հոգատարությամբ է վերաբերվել նկարչին, իր սուղ հնարավորությունների մի մասով հոգացել եղբոր կարիքները: Նա այն քչերից էր, որ զգում էր Վինսենթի մեծությունը: Ճակատագրի հետաքրքիր խաղով Թեոն եղավ նկարիչ եղբոր ոչ միայն կյանքի, այլ նաև մահվան ընկերը:

Հարատև ընչազրկությունը, չգնահատված լինելու դառնությունը, մենակությունը վերջնականապես քայքայեցին Վինսենթ Վան-Գոգի նյարդային համակարգը: Նա ստահասակում վերջ տվեց կյանքին՝ 47 տարեկան հասակում վերջ տվեց կյանքին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԵՏ

Ըստ Իրվինգ Սթոունի

Առավոտյան Վինսենթն արթնացավ արևածագի հետ: Տրամադրությունը աքանչելի էր: Նա թեթևակի խուզեց մորուքը, գլխին մնացած հատուկենտ մազերը սանրեց, հագավ միակ քիչ թե շատ տանելի բաճկոնը:

Դեղին կրակ ու բոց թափող արևի գունդը գլորվելով դուրս եկավ երկնակամար: Վինսենթին դուր եկած անտառակը Առլից երկու ժամվա ճանապարհ էր: Ծառերն իրար սեղմելով սաեւ վազում-բարձրանում էին բլրի լանջով վեր: Վինսենթն իր նկարակալը հաստատեց վարած հողի մեջ, հանեց բաճկոնակն ու ենթաշրջանակն ամրացրեց նկարակալին: Նա սևեռուն հայացքով նայեց բնապատկերին, մտքում կազմեց գունային բաղադրիչներն ու հայացքով նշեց գծերը: Համոզվելով, որ հասկացել է պատկերը, տրորեց ու փափկացրեց վրձինները, բացեց ներկերի սրվակները և մաքրեց դանակը, որով հարթում էր թանձր վրձնահարվածները: Նա մի անգամ էլ նայեց անտառակին, ճերմակ կտավի վրա ածուխով մի քանի գիծ քաշեց, ներկապնակի վրա խառնեց ներկերը և վրձինն արդեն բարձրացրել էր, երբ ...

- Այդքա՞ն շտապում ես, Վինսե՛նթ, - թիկունքում հնչեց մի ձայն:

Նկարիչը թափով շուռ եկավ:

- Դեռ շատ շուտ է, Թանկագի՛նս, ամբողջ մի օր ժամանակ ունես:

Վինսենթն ապշահար նայում էր անծանոթ կնոջը, որը ջահել էր, բայց ոչ աղջնակ: Նրա աչքերը կապո՞ւյտ, կապույտ էին, ինչպես Առլի գիշերների երկինքը. իսկ արևային մազերը ալիքված իջել էին ծոծրակին: Դիմագծերը նուրբ ու քնքուշ էին

և պտտահայտում էին հարավցու կրակոտ հասունությունը: Կնոջ հագին երկար սպի-
տակ շրջազգեստ կար, ոտքերին՝ հասարակ ճուլկեր:
- Այնքա՞ն երկար ժամանակ եմ քեզնից հեռու եղել, Վինսենթ, - ասաց կինը:
Նա կանգնեց նկարչի ու նկարակալի միջև, հենվեց սպիտակ կտավին՝ իրենով ծածկելով սատտատակը: Նա Վինսենթին էր նայում և ժպտում այնքա՜ն փաղաքուշ, այնպիսի՜ սիրով, որ նկարիչը ձեռքով թեթևակի շփեց աչքերը. սաստ ջանում էր հասկանալ, որ չի զառանցում կամ քնած չէ:
- Դու ինձ չես հասկանում, իմ սիրելի՛, իմ անուշի՛կ մանչուկ, - խոսեց կինը: - Ինչպե՞ս էիր ապրում, երբ ես հեռու էի քեզնից:
- Ո՞վ ես դու:
- Ես քո ամենալավ բարեկամն եմ աշխարհի երեսին, Վինսենթ:
- Ինչ գիտես իմ անունը: Ես քեզ երբեք չեմ տեսել:
- Այո՛, բայց ես քեզ շա՛տ, շա՛տ անգամ եմ տեսել:
- Ինչո՞ւ ես իմ հետևից դաշտ եկել:
- Այն բանի համար, ինչի համար որ անցել եմ ամբողջ Եվրոպան ... Որպեսզի քեզ հետ լինեմ ...
- Երևի ուրիշի տեղ ես դնում ինձ: Ես այն մարդը չեմ, որի մասին խոսում ես:
Կինն իր զով ձեռքը դրեց Վինսենթի խանձված, շիկակարմիր մազերին ու մի թեթև շարժումով հետ գցեց:
- Աշխարհի երեսին միայն մի Վինսենթ Վան Գոգ կա: Ես երբեք ուրիշի հետ չեմ շփոթի նրան:
- Եվ ինչ է, վաղո՞ւց ես ճանաչում ինձ:
- Այո՛: Առաջին անգամ, երբ նայեցի քեզ, դու անգործ նստած էիր: Ուզեցի անցնել մոտովդ ու գալ: Բայց դու գրպանիցդ հանեցիր ճմռթված մի ծրար ու մատիտ, սկսեցիր նկարել: Ես ուսիդ վրայից հետևում էի, թե ինչ կստացվի: Ու երբ տեսա ... սիրեցի քեզ:
- Ինչպե՞ս կարող ես սիրել ինձ սխր: Մի նայի՛ր, ընդերիցս արյուն է գալիս, ատամներս թափվել են, աչքերս կարմրած են, մազ չունեմ, ամբողջ դեմքս ցցված ոսկորներ են: Ես այլանդակ եմ, աշխարհի բոլոր տգեղներից ամենատգեղը:
- Դու այլանդակ չես, Վինսե՛նթ, գեղեցիկ ես: Իմ սերը քո նկատմամբ ոչ մի բանով չես սպանի:
- Ախր ինչի՞ համար ես սիրում: Կանայք միշտ էլ ինձ ատել են:
- Դու սիրո համար չես ստեղծված: Քո կոչումը աշխատանքն է:
- Աշխատա՞նքը: Դատարկ բան է: Ես խե՛նթ եմ: Ի՞նչ շահ ունեմ այս հարյուրավոր կտավներից, ո՞ւմ են պետք, ո՞վ պիտի առնի: Կլինի՞ արդյոք մեկը, որ գովասանքի գոնե ծլատ մի խոսք ասի ինձ:
- Կգա օրը, Վինսե՛նթ, և ամբողջ աշխարհը կճանաչի քեզ:
- Կգա՜ օրը ... Սին երազանք է, նման այն երազանքին, թե երբևէ առողջ մարդ կդառնամ, տուն, ընտանիք, գոյությունս պահպանելու միջոցներ կունենամ: Այսքան տարիների ընթացքում ոչ ոք չցանկացավ գնել իմ նկարներից գոնե մեկը:
- Երբ դու չես լինի աշխարհում, Վինսե՛նթ, ամբողջ երկրագունդը կհասկանա, թե ինչ ես ցանկացել ասել: Այն կտավները, որոնք չես կարողանում այսօր հարյուր ֆրանկով ծախել, միլիոններ կարժենան, կախված կլինեն Ամստերդամի և Հաագա-

և արտահայտում էին հարավցու կրակոտ համառությունը: Կնոջ հագին երկար սպիտակ շրջազգեստ կար, ոտքերին՝ հասարակ մույկեր:

- Այնքա՜ն երկար ժամանակ եմ քեզնից հեռու եղել, Վինսե՛նթ, - ասաց կինը:

Նա կանգնեց նկարչի ու նկարակալի միջև, հենվեց սպիտակ կտավին՝ իրենով ծածկելով անտառակը: Նա Վինսենթին էր նայում և ժպտում այնքա՜ն փաղաքուշ, այնպիսի՜ սիրով, որ նկարիչը ձեռքով թեթևակի շփեց աչքերը. ասես ջանում էր համոզվել, որ չի զառանցում կամ քնած չէ:

- Դու ինձ չես հասկանում, իմ սիրելի՛, իմ անուշի՛կ մանչուկ, - խոսեց կինը: - Ինչպե՞ս էիր ապրում, երբ ես հեռու էի քեզնից:

- Ո՞վ ես դու:

- Ես քո ամենալավ բարեկամն եմ աշխարհի երեսին, Վինսե՛նթ:

- Ի՞նչ գիտես իմ անունը: Ես քեզ երբեք չեմ տեսել:

- Այո՛, բայց ես քեզ շա՜տ, շա՜տ անգամ եմ տեսել:

- Ինչո՞ւ ես իմ հետևից դաշտ եկել:

- Այն բանի համար, ինչի համար որ անցել եմ ամբողջ Եվրոպան ... Որպեսզի քեզ հետ լինեմ ...

- Երևի ուրիշի տեղ ես դնում ինձ: Ես այն մարդը չեմ, որի մասին խոսում ես:

Կինն իր զով ձեռքը դրեց Վինսենթի խանձված, չիկակարմիր մազերին ու մի թեթև շարժումով հետ գցեց:

- Աշխարհի երեսին միայն մի Վինսենթ Վան Գոգ կա: Ես երբեք ուրիշի հետ չեմ շփոթի նրան:

- Եվ ինչ է, վաղո՞ւց ես ճանաչում ինձ:

- Այո՛: Առաջին անգամ, երբ նայեցի քեզ, դու անգործ նստած էիր: Ուզեցի անցնել մոտովդ ու գալ: Բայց դու գրպանիցդ հանեցիր ճմռթված մի ծրար ու մատիտ, սկսեցիր նկարել: Ես ուսիդ վրայից հետևում էի, թե ինչ կստացվի: Ու երբ տեսա ... սիրեցի քեզ:

- Ինչպե՞ս կարող ես սիրել ինձ ախր: Մի նայի՛ր, լնդերիցս արյուն է գալիս, ատամներս թափվել են, աչքերս կարմրած են, մազ չունեմ, ամբողջ դեմքս ցցված ոսկորներ են: Ես այլանդակ եմ, աշխարհի բոլոր տգեղներից ամենատգեղը:

- Դու այլանդակ չես, Վինսե՛նթ, գեղեցիկ ես: Իմ սերը քո նկատմամբ ոչ մի բանով չես սպանի:

- Ախր ինչի՞ համար ես սիրում: Կանայք միշտ էլ ինձ ատել են:

- Դու սիրո համար չես ստեղծված: Քո կոչումը աշխատանքն է:

- Աշխատա՞նքը: Դատարկ բան է: Ես խե՛նթ եմ: Ի՞նչ շահ ունեմ այս հարյուրավոր կտավներից, ո՞ւմ են պետք, ո՞վ պիտի առնի: Կլինի՞ արդյոք մեկը, որ գովասանքի գոնե մի խոսք ասի ինձ:

- Կգա օրը, Վինսե՛նթ, և ամբողջ աշխարհը կճանաչի քեզ:

- Կգա՜ օրը ... Սին երազանք է, նման այն երազանքին, թե երբևէ առողջ մարդ կդառնամ, տուն, ընտանիք, գոյությունս պահպանելու միջոցներ կունենամ: Այսքան տարիների ընթացքում ոչ ոք չցանկացավ գնել իմ նկարներից գոնե մեկը:

- Երբ դու չես լինի աշխարհում, Վինսե՛նթ, ամբողջ երկրագունդը կհասկանա, թե ինչ ես ցանկացել ասել: Այն կտավները, որոնք չես կարողանում այսօր հարյուր ֆրանկով ծախել, միլիոններ կարժենան, կախված կլինեն Ամստերդամի և Հաագա-

չի. Փարիզի և Դրեզդենի, Մյունխենի ու Բեռլինի, Մոսկվայի ու Նյու Յորքի ցուցահանդեսներում: Դրանց գին չեն ունենա, որովհետև անգին կլինեն: Քո արվեստի մասին, Վինսենթ, գրքեր կգրվեն: Վեպերից մարդիկ կիմանան քո կյանքը, Վինսենթ Վան Գոգը սրբազան անուն կլինի: Նստի՛ր իմ կողքին և ձեռքդ տու՛ր ինձ:

- Եթե այս պահին ձեռքերդ չշոշափեի, կկարծեի, թե զառանցում եմ կամ խելագարվում:

Նա կնոջը պատմեց այն հույսերի մասին, որ ուներ իր նկարների նկատմամբ, այն լուտանքների մասին, որ ամեն կողմից տեղացին իր վրա, այն հարվածների մասին, որ ճակատագիրը հասցրել է իրեն:

Վինսենթը լռեց: Ամբողջ մարմնով դողում էր: Կինը մոտ քաշեց նրան, նստեցրեց կողքին:

Ուժասպառ եղած նկարիչը քնեց՝ գլուխը կնոջ կրծքին:

Երբ արթնացավ, արդեն մենակ էր: Մինչ պառկած էր եղել դեմքը հողին, այտին կավահողի բլիթ էր կպել: Վինսենթը վերցրեց նկարակալը ու մաքուր, աննկար կտավը, քայլեց դեպի տուն: Նա մտովի կրկին վերապրեց բոլորը, ինչ տեղի ունեցավ այդ օրն իր կյանքում: «Տեսե՞լ եմ արդյոք երբևէ այդ կնոջը... Նշանակում է... Իսկ ի՞նչ է նշանակում...»

Հասնելով իր կացարանը՝ նա ձեռքի իրերը գցեց մահճակալին և դուրս եկավ փողոց: Մի գավաթ սուրճ խմեց սրճարանում և ոտքերը հազիվ շարժելով՝ վերադարձավ: Վառեց լամպը, և դեղին լույսը լուսավորեց սենյակը: Աչքի պոչով Վինսենթը նկատեց, որ մահճակալի վրա գունավոր բան կա, վառ գույներով լեցուն մի բան: Ապշահար մոտեցավ մահճակալին ու ձեռքն առավ այն կտավը, որ հետը տարել էր դաշտ՝ աշխատելու...

Հիասքանչ արևի փառահեղ ճաճանչների մեջ շողարձակում էր աշնանային անտառակը՝ շշապակու գույնի երկու կանաչ նոճի, որ ձևով նման էին շշերի, երեք ոչ շատ բարձր շագանակենի, որոնց տերևները ծխախոտագույն էին՝ նարնջագույն երանգով, մի կարմրածառ, որի պսակը բաց կիտրոնագույն է, բունը՝ մանուշակագույն, արնակարմիր ծիրանի և բոսոր սաղարթով երկու թուփ՝ առջևում մի քիչ ավազ, կանաչ խոտ, և այս ամենի վերևում՝ կապու՛յտ, կապույտ երկինք՝ խորքերում ծծմբակիտրոնագույն հրո ոլորված մի գունդ:

Վինսենթը քարացած նայում էր նկարին: Աչքերի առջև ամեն ինչ մշուշվել էր: Կինը... նկարը... ամբողջ օրը...

Վինսենթ Վան Գոգը չէր կռահում, որ այդ օրը ինքը հանդիպել է ճակատագրին և լսել նրա մարգարեական կանխագուշակումները...

ՊԼԱՆ

1. Արևոտ առավոտ:
2. Նկարելու տրամադրություն:
3. Անծանոթուհին:
4. Անծանոթուհու կանխագուշակությունը:
5. Ինքնամոռացման մեջ արված նկար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կրակ ու բոց թափող արևի գունդ, նկարակալ, սևեռուն հայացք, գունային բաղադրիչներ, թանձր վրձնահարվածներ, արևային մազեր, կրակոտ հասունություն, մույկեր, գովասանքի ժլատ մի խուրձ, լուտանքներ:

*2. Բացատրել **մույկ, լուտանք** բառերի իմաստը:*

յի, Փարիզի և Դրեզդենի, Մյունխենի ու Բեռլինի, Մոսկվայի ու Նյու Յորքի ցուցահանդեսներում: Դրանք գին չեն ունենա, որովհետև անգին կլինեն: Քո արվեստի մասին, Վինսենթ, գրքեր կգրվեն: Վեպերից մարդիկ կիմանան քո կյանքը, Վինսենթ Վան Գոգը սրբազան անուն կլինի: Նստի՛ր իմ կողքին և ձեռքդ տո՛ւր ինձ:

– Եթե այս պահին ձեռքերդ չշոշափեի, կկարծեի, թե զառանցում եմ կամ խելագարվում:

Նա կնոջը պատմեց այն հույսերի մասին, որ ուներ իր նկարների նկատմամբ, այն լուտանքների մասին, որ ամեն կողմից տեղացին իր վրա, այն հարվածների մասին, որ ճակատագիրը հասցրել է իրեն:

Վինսենթը լռեց: Ամբողջ մարմնով դողում էր: Կինը մոտ քաշեց նրան, նստեցրեց կողքին:

Ուժասպառ եղած նկարիչը քնեց՝ գլուխը կնոջ կրծքին:

Երբ արթնացավ, արդեն մենակ էր: Մինչ պառկած էր եղել դեմքը հողին, այտին կավահողի բլիթ էր կպել: Վինսենթը վերցրեց նկարակալը ու մաքուր, աննկար կտավը, քայլեց դեպի տուն: Նա մտովի կրկին վերապրեց բոլորը, ինչ տեղի ունեցավ այդ օրն իր կյանքում: «Տեսե՞լ եմ արդյոք երբևէ այդ կնոջը... Նշանակում է... Իսկ ի՞նչ է նշանակում...»

Հասնելով իր կացարանը՝ նա ձեռքի իրերը գցեց մահճակալին և դուրս եկավ փողոց: Մի գավաթ սուրճ խմեց սրճարանում և ոտքերը հազիվ շարժելով՝ վերադարձավ: Վառեց լամպը, և դեղին լույսը լուսավորեց սենյակը: Աչքի պոչով Վինսենթը նկատեց, որ մահճակալի վրա գունավոր բան կա, վառ գույներով լեցուն մի բան: Ապշահար մոտեցավ մահճակալին ու ձեռքն առավ այն կտավը, որ հետը տարել էր դաշտ՝ աշխատելու...

Հիասքանչ արևի փառահեղ ճաճանչների մեջ շողարձակում էր աշնանային անտառակը՝ շշապակու գույնի երկու կանաչ նոճի, որ ձևով նման էին շշերի, երեք ոչ շատ բարձր շագանակենի, որոնց տերևները ծխախոտագույն էին՝ նարնջագույն երանգով, մի կարմրածառ, որի պսակը բաց կիտրոնագույն է, բունը՝ մանուշակագույն, արնակարմիր ծիրանի և բոսոր սաղարթով երկու թուփ՝ առջևում մի քիչ ավազ, կանաչ խոտ, և այս ամենի վերևում՝ կապու՛յտ, կապույտ երկինք՝ խորքերում ծծմբակիտրոնագույն հրո ոլորված մի գունդ:

Վինսենթը քարացած նայում էր նկարին: Աչքերի առջև ամեն ինչ մշուշվել էր՝ կինը... նկարը... ամբողջ օրը...

Վինսենթ Վան Գոգը չէր կռահում, որ այդ օրը ինքը հանդիպել է ճակատագրին և լսել նրա մարգարեական կանխագուշակումները...

ՊԼԱՆ

1. Արևոտ առավոտ:
2. Նկարելու տրամադրություն:
3. Անծանոթուհին:
4. Անծանոթուհու կանխագուշակությունը:
5. Ինքնամոռացման մեջ արված նկար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կրակ ու բոց թափող արևի գունդ, նկարակալ, սևեռուն հայացք, գունային բաղադրիչներ, թանձր վրձնահարվածներ, արևային մաղեր, կրակոտ հասունություն, մույկեր, գովասանքի ժլատ մի խոսք, լուտանքներ:

*2. Բացատրել **մույկ, լուտանք** բառերի իմաստը:*

յի, Փարիզի և Դրեզդենի, Մյունխենի ու Բեռլինի, Մոսկվայի ու Նյու Յորքի ցուցասրահներում: Դրանք գին չեն ունենա, որովհետև անգին կլինեն: Քո արվեստի մասին, Վինսենթ, գրքեր կգրվեն: Վաղուց մարդիկ կիմանան քո կյանքը, Վինսենթ Վան Գոգը սրբության անուն կլինի: Նստի՛ր իմ կողքին և ձեռքդ տո՛ւր ինձ:

– Եթե այս պահին ձեռքերդ չշոշափեի, կկարծեի, թե զառանցում եմ կամ խելագարվում:

Նա կնոջը պատմեց այն հույսերի մասին, որ ունեցել էր նկարների նկատմամբ, այն լուտանքների մասին, որ ամեն կողմից տեղացել էին իր վրա, այն հարվածների մասին, որ ճակատագիրը հասցրել է իրեն:

Վինսենթը լռեց: Ամբողջ մարմնով դողում էր: Կինը մոտ քաշեց նրան, պառկեցրեց կողքին:

Ուժասպառ եղած նկարիչը քնեց՝ գլուխը կնոջ կրծքին:

Երբ արթնացավ, արդեն մթնել էր: Մինչ պառկած էր եղել դեմքը հողին, [illegible] կախաղանի բլիթ էր կախել: Վինսենթը վերցրեց նկարակալը ու ծալաթոռը, [illegible] կտավը, քայլեց դեպի տուն: Նա մտովի կրկին վերապրեց բոլորը, ինչ տեղի ունեցավ այդ օրն իր կյանքում: «Տեսե՞լ եմ արդյոք երբևէ այդ կնոջը... Նշանակում է... Իսկ ի՞նչ է նշանակում...»

Հասնելով իր կացարանը՝ նա ձեռքի իրերը դրեց մահճակալին և դուրս եկավ փողոց: Մի գավաթ սուրճ խմեց սրճարանում և ոտքերը հազիվ քարշ տալով՝ վերադարձավ: Վառեց լամպը, և դեղին լույսը լուսավորեց սենյակը: Աչքի պոչով Վինսենթը նկատեց, որ մահճակալի վրա գունավոր ինչ-որ բան կա, վառ գույներով լեցուն մի բան: Այնուհետ մոտեցավ մահճակալին ու ձեռքն առավ այն կտավը, որ հենց ավարտել էր դաշտում՝ աշխատելու...

Հիասքանչ արևի փառահեղ ճառագայթների մեջ շողարձակում էր [illegible]՝ շշմեցուցիչ դեղին երկու կանաչ [illegible], որ ձևով նման էին շշերի, երեք ոչ շատ բարձր շագանակենի, որոնց տերևները ծիրանագույնով էին նախշված, [illegible], մի կարմրավուն, որի պատը բաց կիտրոնագույն է, [illegible], [illegible] ծիրանի և բոսոր [illegible] երկու թուփ [illegible] մի քիչ [illegible], կանաչ խոտ, և այս ամենի վերևում՝ կապո՛ւյտ, կապույտ երկինք՝ խորքերում ծծմբակիտրոնագույն հրե ոլորված մի գունդ:

Վինսենթը քարացած նայում էր նկարին: Աչքերի առջև ամեն ինչ մշուշվել էր: Կինը... նկարը... ամբողջ օրը...

Վինսենթ Վան Գոգը չէր կռահում, որ այդ օրը ինքը հանդիպել է Ճակատագրին և լսել Նրա մարգարեական կանխագուշակումները...

ՊԼԱՆ

1. Արևոտ առավոտ:
2. Նկարչի տրամադրությունը:
3. Անծանոթուհին:
4. Անծանոթուհու կանխագուշակությունը:
5. Ինքնամոռացման մեջ արված նկար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները:

[illegible] նկարակալ, [illegible] հույսեր, [illegible], [illegible], [illegible] հավատարմություն, [illegible] լուսանցքներ:

2. Բացատրել մուգ տառերով բառերի իմաստը:

ԻՐՎԻՆԳ ՍԹՈՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԾԱՐԱՎԸ

(հատված վեպից)

Վինսենթը դուրս եկավ դղյակի հետևի հերկած դաշտը: Դա արդեն վերջն էր: Այդ խրոխտությունն ինքը գիտեր դեռևս Անլում, երբ առաջին անգամ զգաց, որ վառքան է կատարվում հողում: Բայց ուժ չունեցավ մի հարվածով հաշվեհարդար տեսնելու: Նա ցանկանում էր աշխարհին ասել՝ «Ներո՛ղ եղիր»: Ինչ ուզում է լինի, աշխարհն այնուամենայնիվ հրաշալի է: Եվ արդ, հեռանալով այդ աշխարհից, Վինսենթն ուզում էր հրաժեշտ տալ նրան, ուզում էր հրաժեշտ տալ բոլոր հարազատներին ու մտերիմներին, վրձնակից նկարիչներին, վերջապես հրաժեշտ տալ Թանկագին եղբորը՝ Թեոյին, որ այնքա՜ն շատ տառապեց, այնքա՜ն շատ սիրեց իրեն, աշխարհի բոլոր եղբայրներից ամենալավ, ամենաքնքուշ եղբորը:

Վինսենթը գլուխը բարձրացրեց ու նայեց արևին: Ատրճանակը սեղմեց կողքին, ձգանը քաշեց: Նա ընկավ՝ դեմքով թաղվելով հյութեղ, անուշ բույրերով հագեցած հողի մեջ, որը կակուղ ու առաձգական էր և փափկորեն իջավ նրա ծանրության տակ:

Թաղմանը Փարիզից ժամանեց Ռուսսոն, Տանգի հայրիկը, Օրյեն և Էմիլ Բեռնարը:

Ռավու սրճարանի դռները փակ էին, լուսամուտների շերտավոր վարագույրները իջեցված: Շքամուտքի մոտ կանգնած սպասում էր հուղարկավորության սև դիակառքը, որին սևաթույր ձիեր էին լծված:

Վինսենթի դագաղը դրված էր բիլիարդի սեղանին: Թեոն, բժիշկ Գաշեն, Ռուսսոն, Տանգի հայրիկը, Օրյեն, Բեռնարը և Ռավուն լուռումունջ շրջապատել էին դագաղը: Նրանք չէին կարողանում միմյանց աչքերի նայել: Ոչ ոքի մտքով չէր անցել քահանա հրավիրել: Կառապանը կառքից իջավ և դուռը թակեց:

- Արդեն ժամանակն է, պարոնա՛յք,- ասաց:

- Տե՛ր Աստված, մի՞թե նրան այդպես պիտի ճանապարհ դնենք, - բացականչեց Գաշեն:

Նա սրընթաց վազեց վերև՝ Վինսենթի սենյակը, ու ցած բերեց կտավները:

Վեց հոգի սկսեցին նկարները կախել սրճարանի պատերից:

Թեոն միայնակ էր դագաղի մոտ:

Վինսենթի արևավառ կտավները խամրած շագանակագույն, վհատություն ծնող սրճարանը սեես դարձրին շողարձակող մի տաճար:

Այնուհետև բոլորը նորից կանգնեցին բիլիարդի սեղանի շուրջը: Միայն Գաշեն կարողացավ հրաժեշտի խոսք ասել.

- Մենք Վինսենթի բարեկամներն ենք և հուսահատության չպետք է մատնվենք: Վինսենթը չի մեռել և երբեք չի՛ մեռնի: Նրա սերը, նրա հանճարը, այն վսեմ գեղեցկությունը, որ նա ստեղծել է, հավերժ կապրեն ու կհարստացնեն աշխարհը: Նա տիտա՜ն էր, մե՜ծ նկարիչ, մե՜ծ փիլիսոփա: Նա զոհ գնաց արվեստի նկատմամբ տածած իր սիրուն, ընկավ՝ որպես մարտիկ...

ԻՐՎԻՆԳ ՍԹՈՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԾԱՐԱՎԸ

(Հատված վեպից)

Վինսենթը դուրս եկավ գյուղի հետևի հերկած դաշտը: Դա արդեն վերջն էր: Այդ խռովությունն ինքը գիտեր դեռևս Արլում, երբ առաջին անգամ զգաց, որ վատ բան է կատարվում հոգում: Բայց ուժ չունեցավ մի հարվածով հաշվեհարդար տեսնելու: Նա ցանկանում էր աշխարհին ասել՝ «Ներո՛ղ եղիր»: Ինչ ուզում է լինի, աշխարհն այնուամենայնիվ հրաշալի է: Եվ արդ, հեռանալով այդ աշխարհից, Վինսենթն ուզում էր հրաժեշտ տալ նրան, ուզում էր հրաժեշտ տալ բոլոր հարազատներին ու մտերիմներին, վրձնակից նկարիչներին, վերջապես հրաժեշտ տալ Թանկագին եղբորը՝ Թեոյին, որ այնքա՜ն շատ տառապեց, այնքա՜ն շատ սիրեց իրեն, աշխարհի բոլոր եղբայրներից ամենալավ, ամենաքնքուշ եղբորը:

Վինսենթը գլուխը բարձրացրեց ու նայեց արևին: Ատրճանակը սեղմեց կողքին, ձգանը քաշեց: Նա ընկավ՝ դեմքով թաղվելով հյութեղ, անուշ բույրերով հագեցած հողի մեջ, որը կակուղ ու առաձգական էր և փափկորեն իջավ նրա ծանրության տակ:

Թաղմանը Փարիզից ժամանեց Ռուսսոն, Տանգի հայրիկը, Օրյեն և Էմիլ Բեռնարը:

Ռավու սրճարանի դռները փակ էին, լուսամուտների չերտավոր վարագույրները՝ իջեցված: Շքամուտքի մոտ կանգնած սպասում էր հուղարկավորության սև դիակառքը, որին սևաթույր ձիեր էին լծված:

Վինսենթի դագաղը դրված էր բիլիարդի սեղանին: Թեոն, բժիշկ Գաշեն, Ռուսսոն, Տանգի հայրիկը, Օրյեն, Բեռնարը և Ռավուն լուռումունջ շրջապատել էին դագաղը: Նրանք չէին կարողանում միմյանց աչքերի նայել: Ոչ ոքի մտքով չէր անցել քահանա հրավիրել: Կառապանը կառքից իջավ և դուռը թակեց:

- Արդեն ժամանակն է, պարոնա՛յք,- ասաց:

- Տե՛ր Աստված, մի՞թե նրան այդպես պիտի ճանապարհ դնենք, - բացականչեց Գաշեն:

Նա սրընթաց վազեց վերև՝ Վինսենթի սենյակը, ու ցած բերեց կտավները:

Վեց հոգի սկսեցին նկարները կախել սրճարանի պատերից:

Թեոն միայնակ էր դագաղի մոտ:

Վինսենթի արևավառ կտավները խամրած չագանակագույն, վհատություն ծնող սրճարանը ասես դարձրին շողարձակող մի տաճար:

Այնուհետև բոլորը նորից կանգնեցին բիլիարդի սեղանի շուրջը: Միայն Գաշեն կարողացավ հրաժեշտի խոսք ասել.

- Մենք Վինսենթի բարեկամներն ենք և հուսահատության չպետք է մատնվենք: Վինսենթը չի մեռել և երբեք չի՛ մեռնի: Նրա սերը, նրա հանճարը, այն վսեմ գեղեցկությունը, որ նա ստեղծել է, հավերժ կապրեն ու կհարստացնեն աշխարհը: Նա տիտա՜ն էր, մե՜ծ նկարիչ, մե՜ծ փիլիսոփա: Նա զոհ գնաց արվեստի նկատմամբ տածած իր սիրուն, ընկավ՝ որպես մարտիկ…

Թեոն փորձ արեց շնորհակալություն հայտնելու:

– Ես... ես...

Արցունքները խեղդում էին, խոսել չէր կարողանում:

Դագաղը ծածկեցին կափարիչով:

Վեց մտերիմները համբերությամբ գնում էին դիակառքի հետևից` արևով ողողված ճանապարհով: Կայարանին չհասած` դիակառքը շեղվեց ձախ և սկսեց բարձրանալ բլրալանջով: Ճամփան ոլոր-մոլոր ձգվեց ցորենի դաշտի միջով: Սև դիակառքը կանգ առավ գերեզմանատան դարպասի առաջ: Վեց մարդ բարձրացրին դագաղը ձեռքերի վրա և տարան դեպի գերեզման: Հետևից քայլում էր միայն Թեոն:

Դագաղն իջեցրին գերեզման, հող լցրին, ծածկեցին և բահերով տոփեցին: Թեոն մի անգամ էլ փորձեց ինչ-որ բան ասել, բայց մի բառ իսկ արտասանել չհաջողվեց:

Մի քանի օր անց բժիշկ Գաշեն կրկին եկավ գերեզմանատուն և շիրմի շուրջը արևածաղիկներ տնկեց:

Թեոն մեկնեց Փարիզ: Վիշտը բզկտում էր սիրտը, քրքրում անդադար, յուրաքանչյուր վայրկյան, գիշեր ու ցերեկ: Բանականությունը չդիմացավ այդ լարմանը: Կինը նրան տարավ հոգեբուժարան:

Վինսենթի մահվանից կես տարի անց` ճիշտ նույն օրը, Թեոն վախճանվեց: Իոհաննան ամուսնու մարմինը տեղափոխեց Օվեր և թաղեց Վինսենթի կողքին:

Երբ Օվերի թեժ արևն իր ճաճանչներով կիզում է ցորենի արտերում հազիվ նշմարելի գերեզմանատունը, Թեոն հանգիստ ննջում է Վինսենթի` փարթամորեն աճած արևածաղիկների զով ստվերում:

ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ՊԻԳՄԱԼԻՈՆ

Ըստ հին հունական դիցաբանության

Փափկակյաց ու թեթևամիտ Աֆրոդիտեն չէր խառնվում աստվածների վարած արյունահեղ մարտերին: Նա աստվածների ու մահկանացուների սրտերում սեր էր զարթնեցնում և այդ կարողության շնորհիվ տիրում ամբողջ աշխարհին:

Ոչ ոք չէր կարող խուսափել նրա իշխանությունից, մինչև իսկ` Օլիմպոսի բնակիչները:

Բարձրահասակ, բարեկազմ, քնքուշ դիմագծերով, մեղմ ալիք տվող ոսկեփայլ վարսերով, որ պսակի պես ծածկում էին նրա գեղանի գլուխը, Աֆրոդիտեն աստվածային գեղեցկության և անանց երիտասարդության մարմնացումն էր: Երբ նա քայլում էր` իր գեղեցկությամբ շողալով բուրումնավետ դաշտերի մեջ, արևն ավելի պայծառ էր շողում, ծաղիկներն ավելի փարթամորեն էին ծաղկում: Անտառի

Թեոն փորձ արեց խորհրդապահություն հայտնել:
- Նա... նա...
Արցունքները խեղդում էին, խոսել չէր կարողանում:
Դագաղը ծածկեցին կափարիչով:
Վեց ծառաները համբարձյալ գնում էին դիակառքի հետևից՝ արևով ողողված ճանապարհով: Կայարանից շրջանցող դիակառքը շրջվեց ձախ և սկսեց բարձրանալ բլրալանջով: Ճամփան ոլոր-մոլոր ձգվեց ցորենի դաշտերի միջով: Ու դիակառքը կանգ առավ գերեզմանատան դարպասի առաջ: Վեց մարդ բարձրացրին դագաղը ձեռքերի վրա և տարան դեպի գերեզմանը: Հետևից քայլում էր միայն Թեոն:
Դագաղն իջեցրին գերեզման, հող լցրին, ծածկեցին և բահերով հարթեցին:
Թեոն մի անգամ էլ փորձեց ինչ-որ բան ասել, բայց մի բառ իսկ արտասանել չկարողացավ:
Մի քանի օր անց բժիշկ Գաշեն կրկին եկավ գերեզմանատուն և շիրիմի շուրջը արևածաղիկներ տնկեց:
Թեոն մեկնեց Փարիզ: Վիշտը քայքայում էր սիրտը, քրքրում անդադար, յուրաքանչյուր վայրկյան, գիշեր ու ցերեկ: Բանականությունը չդիմացավ այդ լարմանը: Կինը նրան տարավ հոգեբուժարան:
Վինսենթի մահվանից կես տարի անց՝ ճիշտ նույն օրը, Թեոն վախճանվեց: Իոհաննան ամուսնու մարմինը տեղափոխեց Օվեր և թաղեց Վինսենթի կողքին:
Երբ Օվերի թեժ արևն իր ճառագայթներով կիզում է ցորենի արտերում հավերժ ննջող մարդկանց գերեզմանատունը, Թեոն հանգիստ ննջում է Վինսենթի՝ փարթամորեն աճած արևածաղիկների գոգ ստվերում:

ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ՊԻԳՄԱԼԻՈՆ

Ըստ հին հունական դիցաբանության

Փափկակյաց ու թեթևամիտ Աֆրոդիտեն չէր խառնվում աստվածների վարած արյունահեղ մարտերին: Նա աստվածների ու մահկանացուների սրտերում սեր էր զարթնեցնում և այդ կարողության շնորհիվ տիրում ամբողջ աշխարհին:
Ոչ ոք չէր կարող խուսափել նրա իշխանությունից, մինչև իսկ՝ Օլիմպոսի բնակիչները:
Բարձրահասակ, բարեկազմ, քնքուշ դիմագծերով, մեջքն ալիք տվող ոսկեփայլ վարսերով, որ պսակի պես ծածկում էին նրա գեղանի գլուխը, Աֆրոդիտեն աստվածային գեղեցկության և անանց երիտասարդության մարմնացումն էր: Երբ նա քայլում էր՝ իր գեղեցկությամբ շողալով բուրումնավետ դաշտերի մեջ, արևն ավելի պայծառ էր շողում, ծաղիկներն ավելի փարթամորեն էին ծաղկում: Անտառի

Թեոն փորձ արեց շնորհակալություն հայտնելու:

- Նա… նա…

Արցունքները խեղդում էին, խոսել չէր կարողանում:

Դագաղը ծածկեցին կափարիչով:

Վեց մոտրիմները համբերությամբ գնում էին դիակառքի հետևից՝ արևով ողողված ճանապարհով: Կայարանին չհասած՝ դիակառքը շեղվեց ձախ և սկսեց բարձրանալ բլրալանջով: Ճամփան ոլոր-մոլոր ձգվեց ցորյանի դեղին արտի միջով: Սև դիակառքը կանգ առավ գերեզմանատան դարպասի առաջ: Վեց մարդ բարձրացրին դագաղը ձեռքերի վրա և տարան դեպի գերեզման: Հետևից քայլում էր միայն Թեոն:

Դագաղն իջեցրին գերեզման, հող լցրին, ծածկեցին և բահերով տոփեցին: Թեոն մի անգամ էլ փորձեց ինչ-որ բան ասել, բայց մի բառ իսկ արտասանել չկարողացավ:

Մի քանի օր անց բժիշկ Գաշեն կրկին եկավ գերեզմանատուն և շիրմի շուրջը արևածաղիկներ տնկեց:

Թեոն մեկնեց Փարիզ: Վիշտը բզկտում էր սիրտը, քրքրում անդադար, յուրաքանչյուր վայրկյան, գիշեր ու ցերեկ: Բանականությունը չդիմացավ այդ լարմանը: Կինը նրան տարավ հոգեբուժարան:

Վինսենթի մահվանից կես տարի անց՝ ճիշտ նույն օրը, Թեոն վախճանվեց: Իոհաննան ամուսնու մարմինը տեղափոխեց Օվեր և թաղեց Վինսենթի կողքին:

Երբ Օվերի թեժ արևն իր ճաճանչներով կիզում է ցորենի արտերում հազիվ նշմարելի գերեզմանատունը, Թեոն հանգիստ ննջում է Վինսենթի՝ փարթամորեն աճած արևածաղիկների գով ստվերում:

ԱՖՐՈԴԻՏԵ ԵՎ ՊԻԳՄԱԼԻՈՆ

Ըստ հին հունական դիցաբանության

Փափկակյաց ու թեթևամիտ Աֆրոդիտեն չէր խառնվում աստվածների վարած արյունահեղ մարտերին: Նա աստվածների ու մահկանացուների սրտերում սեր էր զարթնեցնում և այդ կարողության շնորհիվ տիրում ամբողջ աշխարհին:

Ոչ ոք չէր կարող խուսափել նրա իշխանությունից, մինչև իսկ՝ Օլիմպոսի բնակիչները:

Բարձրահասակ, բարեկազմ, քնքուշ դիմագծերով, մեղմ աչքերով, ոսկեփայլ վարսերով, որ պսակի պես ծածկում էին նրա գեղանի գլուխը, Աֆրոդիտեն աստվածային գեղեցկության և անանց երիտասարդության մարմնացումն էր: Երբ նա քայլում էր՝ իր գեղեցկությամբ շողալով բուրումնավետ զգեստների մեջ, արևն ավելի պայծառ էր շողում, ծաղիկներն ավելի փարթամորեն էին ծաղկում: Անտառի

գազանները թավուտից դուրս էին գալիս ու վազում նրա մոտ, երամ-երամ դեպի Աֆրոդիտեն էին թռչում հավքերը: Առյուծները, հովազներն ու վագրերը հեզորեն գգվում էին նրան: Անսալչալ գնում էր Աֆրոդիտեն վայրի գազանների միջով՝ հպարտ իր ճանապարհայլ տեսքով: Գեղեցկության ու նազանքի աստվածուհիները ամենուրեք ուղեկցում էին նրան ու ծառայում. շքեղազարդ զգեստներ էին հագցնում, սանրում ոսկեփրփուր վարսերը, պսակում գլուխը շողշողուն ադամանդով:

Ծովի ալիքների ձյունաճերմակ փրփուրներից էր ծնվել Աֆրոդիտեն: Թեթևասահ, փաղաքուշ զեփյուռը նրան բերեց Կիպրոս: Այնտեղ դեռատի աստվածուհիները շրջապատեցին ծովային ալիքներից ելած սիրո աստվածուհի Աֆրոդիտեին՝ զուգելով նրան ոսկեհյուս զգեստներով և երփներանգ ծաղիկների պսակներով: Ուր ոտքը դներ նա, այնտեղ փարթամ ծաղիկներ էին բացվում, օդը լիուլի հագենում էր արբեցնող բույրերով: Աֆրոդիտեի սուրհանդակները՝ Էրոսն ու Հիմենեսը, հրաշագեղ աստվածուհուն տարան Օլիմպոս, որի գագաթին բնակվող Զևսն ու մյուս աստվածները ցնծագին ողջունեցին նրան: Ոսկեշող դիցուհին բնակություն հաստատեց աստվածային կացարանում:

Աֆրոդիտեն երջանկություն էր շնորհում նրան, ով հավատարմությամբ ծառայում էր իրեն: Այդպես նա երջանկություն պարգևեց նաև Պիգմալիոնին՝ Կիպրոսի մեծ արվեստագետին: Պիգմալիոնն ատում էր կանանց և ապրում առանձնացած՝ խուսափելով ամուսնությունից:

Մի անգամ նա շողշողուն փղոսկրից արտասովոր գեղեցիկ աղջկա արձան քանդակեց: Ասես կենդանի՝ կանգնած էր արձանն արվեստանոցում: Թվում էր՝ նա կանչում է, ահա ուր որ է կշարժվի, կքայլի, կխոսի: Ժամերով սքանչանում էր արվեստագետն իր ստեղծագործությամբ և ի վերջո սիրահարվեց անշունչ կերտվածքին: Փղոսկրյա գեղեցկուհուն մեծարժեք ապարանջաններ, մանյակներ ու ականջօղեր նվիրեց, զուգեց շքեղ զգեստներով, գլուխը զարդարեց ծաղկեպսակով և նրա համար սիդոնյան ծիրանուց մահիճ պատրաստեց: Որքա՜ն հաճախ էր կրկնում Պիգմալիոնը.

- Օ՜, եթե դու կենդանի լինեիր, եթե կարողանայիր պատասխանել ինձ, օ՜, որքա՜ն երջանիկ կլինեի:

Բայց արձանը համր էր:

Եկան Աֆրոդիտեի մեծարման տոնախմբությունների օրերը: Պիգմալիոնը սիրո աստվածուհուն մի ոսկեղջյուր ճերմակ երինջ զոհաբերեց: Աստվածուհուն կարկառեց ձեռքերն ու շշուկով աղոթեց.

- Օ՜, հավերժակա՛ն աստվածներ, և դու՛, ոսկեշո՛ղ Աֆրոդիտե: Եթե դուք կարող եք ամեն ինչ շնորհել աղերսողին, ապա տվե՛ք ինձ մի կին այնքան գեղեցիկ, որքան գեղեցիկ է իմ ձեռքով քանդակված այս աղջկա արձանը:

Պիգմալիոնը սիրտ չէր անում աստվածներին խնդրել, որ կենդանություն պարգևեն արձանին, երկյուղ էր կրում, որ այդպիսի խնդրանքով կզայրացնի նրանց:

Պայծառ բոցկլտում էին զոհաբերության խարույկի բոցերը սիրո աստվածուհու պատկերի առջև: Դրանով աստվածուհին ասես հասկացնում էր Պիգմալիոնին, որ Օլիմպոսում լսել են նրա աղաղակը:

Արվեստագետը տուն վերադարձավ: Նա մոտեցավ փղոսկրյա գեղեցկուհուն, և, օ՜, ուրախություն, օ՜, երջանկություն: Արձանը կենդանություն էր առել: Տրոփում էր նրա սիրտը, աչքերի մեջ փայլատակում էր կյանքը:

Փառաբանելով սիրո մեծ աստվածուհի Աֆրոդիտեին և լեցուն երախտագիտությամբ այն երջանկության համար, որ նա շնորհել էր իրեն, Պիգմալիոնը հրճվանքով փարվեց գեղանի աղջկան, որ պատվանդանից իջել և իր մոտ էր եկել:

Եվ այդպես, աստվածուհի Աֆրոդիտեն Պիգմալիոնին գեղեցկուհի կին պարգևեց:

ՊԼԱՆ

1. Աստվածների և մահկանացուների տիրակալուհի Աֆրոդիտեն:
2. Չնաշխարհիկ աստվածուհին:
3. Ցնծագին ընդունելություն Օլիմպոսում:
4. Կիպրոսի մեծարված քանդակագործը:
5. Տառապագին սեր արձանի նկատմամբ:
6. Արձանը կենդանանում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառակապակցությունները.

փափկակյաց ու ԹեԹևամիտ Աֆրոդիտե, քնքուշ դիմագծեր, մեղմ ալիք տվող ոսկեփայլ վարսեր, բուրումնավետ զգեստներ, ճաճանչափայլ գեղեցկություն, չքնաղազարդ զգեստներ, շողշողուն ապարոշ, փաղաքուշ զեփյուռ, հրաշագեղ աստվածուհի, շողշողուն փրփուրից արտասովոր գեղեցկության տեր աղջիկ, մեծարժեք ապարանջաններ, սիդոնյան ծիրանուց մահիճ, ոսկեղջյուր ճերմակ երինջ.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Էրոս, Հիմենեոս, Զևս, Օլիմպոս:

2. Կարդացե՛ք հունական առասպելը, ապա Գեղամ Սարյանի մշակումը: Համեմատե՛ք և բացատրե՛ք՝ ի՞նչ լուծում է գտել բանաստեղծը:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

ՄԱՐՄԱՐԱԿԵՐՏ ԳԵՂՈՒՀԻՆ

(Հունական առասպել)

Պիգմալիոնը՝ Կիպրոսի նկարիչը մեծարված,
Որ գեղեցիկ ոչ մի կին չգտավ իր ճաշակով,
Առեց կանանց ու քաշվեց հեռու գյուղն իր համեստ,
Ապրեց մենակ՝ իր հոգու երազների հմայքով:

Ապրեց մենակ: Բայց նրա խոհերի մեջ մշտավառ
Ծառացյալ էր չքնաղ ու անմարմին մի էակ,
Իր հանճարի պատկերած գեղեցկության մի տիպար
Լուռ, մենավոր իր հոգու այցելուն էր շարունակ:

Եվ մի գարնան առավոտ գեղուհին այդ խոհածին,
Երբ ծաղկոցներն արթնացան փարթամությամբ մի անբավ,
Աներևույթ ու հանդարտ, նկարչի հետ միասին
Սավերի պես հեղասահ, արվեստանոցը մտավ:

Եվ Պիգմալիոնն սկսեց մարմին տալ իր խոհերին. -
Առավ ծովի փրփուրի ճերմակությունն անարատ,
Առավ հասակը նոճու՝ երկնասլաց ու նրբին,
Առավ երկնի աստղերից նրանց հմայքը առատ:

Անմեղություն հավաքեց եղնիկներից անտառի,
Արեգակը պարգևեց ճառագայթներն իր գեղձան,
Եվ Պիգմալիոնը կերտեց, կերտեց տանց դադարի
Զքնաղագեղ աղջկա մարմարակերտ մի արձան:

Կերտեց, նայեց, հմայվեց նկարիչը խանդավառ,
Անհուն մի սեր բռնկվեց Պիգմալիոնի կրծքի տակ,
Ա՛խ, թե համկարծ ջերմանար գեղեցկուհու այտը սառ,
Ա՛խ, թե իրեն երկարեր բազուկներն իր սպիտակ:

- Ու՞մ աղոթեմ ես, չքնա՛ղ, որ քեզ տա շունչ ու արյուն,
Որ նախանձով չնայի Աֆրոդիտեն քո տեսքին,
Երբ խմանա քո հանդեպ ունեցած սերս անհուն,
Երբ խմանա՝ ուզում եմ ունենալ քեզ որպես կին:

Եվ լռությունն էր լինում Պիգմալիոնին պատասխան,
Գեղաքանդակ արձանը նայում էր համր ու լուռ,
Տառապանքով էր լցնում նկարչի սիրտը միայն
Իր համճարի ստեղծած մարմարակերտ գեղուհին:

Մերթ նա հանձնում էր իրեն անտառների կանաչին
Եվ կամ նստում էր երկար մենակ հեռու ծովափում,
Նա ունկնդիր ջրերի խռովահույզ շառաչին՝
Փոթորկահույզ իր հոգու սիրո վիշտն էր ամոքում:

Եվ մի անգամ, երբ հոգնած քնել էր նա անտառում,
Տեսավ համկարծ երազում երկնքի դուռը բացված,
Ինքը կանգնել էր չքնաղ գեղեցկուհուն էր նայում,
Երբ անսովոր մի լույսով Աֆրոդիտեն շողշողաց:

Եկավ անհուն բարությամբ, եկավ կանգնեց իր կողքին,
Նայեց արձան աղջկան, նայեց, տխրեց՝ սրտում ցավ,
Ասաց - որքա՛ն վեհություն, անմեղություն կա դեմքին,

Շոյեց գլուխն արձանի, Հեկեկալով Հեռացավ...
Եվ Պիգմալիոնը զարթնեց... ծառերն էին Հառաչում,
Ու խոնարՀում էին վար իրենց ճյուղերը ճկուն,
Թվաց, թե ծովը Հեռվից ինչ-որ երգ է շառաչում,
Նա վեր կացավ ու Հանդարտ վերադարձավ դեպի տուն:

Վերադարձավ ու նայեց մարմարակերտ գեղուՀուն,
Վերադարձավ ու տեսավ ժպտում էր նա Հերարձակ,
Տեսավ արձանն իր կերտած գորովանքով մի անՀուն
Դեպի իրեն է մեկնում բազուկներն իր սպիտակ:

Եվ Պիգմալիոնն անսաՀման խնդությունից արբեցած՝
Հրաշակերտ գեղուՀու փարթամ ուսերը գրկեց,
Պատվանդանի վրայից Համբուրելով բերեց ցած,
Նայեց... զղջաց սարսափով, դարձավ նրան ու գոչեց.

- Դարձի՛ր նորից դեպի քո պատվանդանի բարձունքին,
Այնտեղ արվեստ էիր դու, անմաՀ էիր ու անՀաս,
Հազար էիր՝ դարձար մեկ, մաՀկանացու, միայն կին,
Դարձի՛ր, ապրի՛ր դարերում, գեղեցկությա՛ն իմ երազ:

Եվ Հեզասահ քայլերով գեղեցկուՀին ելավ վեր,
Զգեստներն իր շրշյունով պատվանդանին թափվեցան,
Կանգնեց այնտեղ իբր անմաՀ գեղեցկություն, Հավերժ սեր
Ու վերստին դարձավ նա մարմարակերտ մի արձան:

Եվ Կիպրոսի նկարիչ Պիգմալիոնը մեծարվեստ,
Գեղեցկության ու սիրո աստվածուՀու լույս կամքով
Ապրեց նորից երջանիկ դղյակի մեջ իր Համեստ,
Ապրեց մենակ՝ իր Հոգու երազների Հմայքով:

Ցոլաց գլուխն արձանի, հեկեկալով հառաչով...
Եվ Պիգմալիոնը զարթնեց... ծառերն էին հառաչում,
Ու խոնարհում էին վար իրենց ճյուղերը ճկուն,
Թվաց, թե ծովը հեռվից ինչ-որ երգ է շառաչում,
Նա վեր կացավ ու հանդարտ վերադարձավ դեպի տուն:

Վերադարձավ ու նայեց մարմարակերտ գեղուհուն,
Վերադարձավ ու տեսավ ժպտում էր նա հերարձակ,
Տեսավ արձանն իր կերտած գորովանքով մի անհուն
Նայի իրեն է մեկնում բազուկներն իր սպիտակ:

Եվ Պիգմալիոնն անսահման խնդությունից արբեցած՝
Հրաշակերտ գեղուհու փարթամ ուսերը գրկեց,
Պատվանդանի վրայից համբուրելով բերեց ցած,
Նայեց... գլխապտույտ, դարձավ նրան ու գոչեց.

- Դարձի՛ր նորից դեպի քո պատվանդանի բարձունքին,
Այնտեղ արժեք էիր դու, անմահ էիր ու անհաս,
Հազար էիր՝ դարձար մեկ, մահկանացու, միայն կին,
Դարձի՛ր, աղբի՛ր դարերում, գեղեցկությո՛ւն իմ երազ:

Եվ հեզասահ քայլերով գեղեցկուհին ելավ վեր,
Ձգեստներն իր շրշյունով պատվանդանին թափվեցան,
Կանգնեց այնտեղ իբր անմահ գեղեցկություն, հավերժ սեր
Ու վերստին դարձավ նա մարմարակերտ մի արձան:

Եվ Կիպրոսի նկարիչ Պիգմալիոնը մեծարվեստ,
Գեղեցկության ու սիրո աստվածուհու լույս կամքով
Ապրեց նորից երջանիկ դղյակի մեջ իր համեստ,
Ապրեց մենակ՝ իր հոգու երազների հմայքով:

ՌԵՔՎԻԵՄ

Ըստ Բ. Կրեմնյովի

Ավստրիացի հանճարեղ կոմպոզիտոր Մոցարտի կյանքը երբեք հեշտ չի եղել: «Դոն Ժուան», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Կախարդական սրինգ» օպերաների և սքանչելի սիմֆոնիկ ստեղծագործությունների հեղինակը խեղդվում էր աղքատության ճիրաններում: Գիշեր-ցերեկ նրան հետապնդում էր փող հայթայթելու և ընտանիքը պահելու հոգսը: Տնական անհաջողությունները, պարտքերը, գրկանքը ժամանակից շուտ ծերացրել էին Մոցարտին: Երեսունչորս տարեկանում նա արդեն տարեց մարդու հոգնած ու տանջված տեսք ուներ: Սակայն կյանքի դժվարին պայմաններում էլ շարունակում էր ստեղծել մեծագույն գործեր՝ լի կենսուրախ, թրթռուն մեղեդիներով:

Մեծ, բազմամարդ քաղաք է Վիեննան: Մոցարտը նոր էր տեղափոխվել այնտեղ և ծանոթներ գրեթե չուներ: Փոքրիկ, անշուք բնակարանում կահ-կարասի չկար: Միակ զարդը դաշնամուրն էր, որի առաջ ժամերով նստում էր հանճարեղ երգահանը: Ձմռանը տանը շատ ցուրտ էր լինում: Որքան էլ շփում էր փայտացած մատները, դարձյալ դրանք հրաժարվում էին վազել ստեղների վրայով: Առողջությունն էլ վատացել էր: Ինչ-որ տարօրինակ մաշող թուլություն էր համակել նրան: Իսկ բժըշկի դիմելու միջոցներ չուներ:

- Զգում եմ, որ երկար չեմ ապրի, - մի օր ասաց կնոջը: - Վստահ եմ՝ ինձ թունավորել են: Այս մտքից ոչ մի կերպ ազատվել չեմ կարողանում:

Ամառային մի երեկո, երբ մթնշաղն իջել էր քաղաքի վրա, Մոցարտը նստած տեղը քնեց: Դա մի անհանգիստ, մղձավանջային քուն էր: Նինջի մեջ զգաց ինչ-որ մեկի ներկայությունը սենյակում: Չէր տեսնում, բայց վստահ էր՝ հետևում մեկը կար, որի հայացքը մեխված էր թիկունքին: Առանց վեր կենալու՝ Մոցարտը շրջեց գլուխը:

Դռան մոտ, խավարի մեջ պատին ձուլված, սևին էր տալիս մութ մի զանգված: Տձև ու սև մարմինը ճոճվելով պոկվեց պատից ու սկսեց մոտենալ: Տղամարդ էր՝ լայն, սև թիկնոցով, սև սերթուկով, սև փողկապով, սպիտակ, անարյուն դեմքով, ոչինչ չարտահայտող աչքերով: Մոցարտը լուռ էր: «Ահա մահն ինքը», - մտածեց սոսկումով, այս կամացուկ հարցրեց.

- Ինչո՞վ եմ պարտական ձեր այցին:

Անծանոթը լուռ մեկնեց մի ծրար: Դա հակիրճ նամակ էր, որով Մոցարտին տըրվում էր ռեքվիեմ գրելու պատվեր: Կատարման ժամկետը և գինը՝ պարոն մաեստրոյի հայեցողությամբ:

- Ու՞մ կողմից եք եկել, - հարցրեց Մոցարտը:

- Պատվիրատուն ցանկանում է, որ իր անունը գաղտնի մնա: Աշխատեցե՛ք ջանասիրությամբ: Պատվիրատուն գիտակ մարդ է: Ե՞րբ գամ:

- Չորս շաբաթից:

- Ահա ձեզ կանխավճար, - այցելուն տվեց Մոցարտի պահանջածի քառակին, - նույնքան էլ կստանաք ռեքվիեմն ավարտելուց հետո:

Մոցարտը ցնցվեց: Ռեքվիե՜մ: Հոգեհանգստի պատարա՜գ: Իզուր չէ, որ վերջերս

մանկան գաղափարը այնպե՜ս համառորեն հետապնդում է իրեն: Իսկ սևազգեստ մա՞րդը: Այո՛, դա հավանաբար հանդերձյալ աշխարհի պատվիրակն էր:

Չնայած օրեցօր սաստկացող հիվանդությանը, անդիմադրելի թուլությանը՝ Մոցարտը անընդհատ շտապողականությամբ աշխատում էր ռեքվիեմի վրա:

- Սա գրում եմ ինձ համար, սա իմ մահվան պատարագն է, - ասաց մի երեկո կնոջը:

Ռեքվիեմի մեջ Մոցարտը դրեց իր մեծ վիշտը, ապրելու տենչը, մարդկանցից հեռանալու թախիծը, մահվան սարսափը, կյանքին հրաժեշտ տալու անարտահայտելի կսկիծը:

Կոմպոզիտորը շատ լավ էր հասկանում՝ դա իր կարապի երգն է, որ միշտ ամենագեղեցիկն է լինում:

Ավա՜ղ, ռեքվիեմը մնաց կիսատ:

1791 թվականի դեկտեմբերն էր: Ցուրտ էր, ձյան փաթիլները հանդա՜րտ իջնում էին սառած հողին: Մոցարտը պառկած էր սենյակի մի անկյունում՝ անշարժ հայացքն ուղղած առաստաղին: Նրա աչքերի առջևով անցնում էին տարիները... Ահա մա՛յրը՝ սիրելի՛, անդառնալի՛: Հա՛յրը՝ ողջ էությամբ իր զավակով ապրող: Ահա ինքը՝ մի փոքրի՛կ մանչուկ՝ գանգրացված կեղծամով, ժանյակազարդ օձիքով: Նվագում է, ու զարմացած ունկնդիրները նրա մեջ տեսնում են հրաշքին: Մոր սպիտա՜կ, փափլիկ ձեռքը շոյու՜մ, փաղաքշում է իրեն: Համերգասրահնե՜ր, նվագավարական նոտակա՜լ, և մի կախարդ ձեռք, որի շարժումից հնչում են ջութակնե՜րը, շեփորնե՜րը, ծնծղանե՜րը: Ու ծափե՜ր, ծափե՜ր:

Մտքերն ընդհատվեցին: Սենյակ մտավ բարեկամուհին:

- Ա՜, սիրելի՛ Սոֆի, - խոսեց մեռնողը, - լավ է, որ այստեղ եք: Դուք պետք է գիշերը մնաք ինձ մոտ: Դուք պետք է տեսնեք, թե ես ինչպես եմ մեռնելու:

Սենյակի մեջտեղում, կոշտ ու անհարթ տախտակներից սարքված էժանագին դագաղում պառկած է մի ծեր մարդ: Դա երեսունվեցամյա Մոցարտն է: Կինը, որ համատեղ կյանքում երբեք էլ չգնահատեց հանճարեղ ամուսնուն, տանը չէ: Նա երեխաների հետ գնացել է բարեկամներից մեկի տուն՝ հավատարիմ մնալով իր սկզբունքին՝ հոգալ ոչ թե մեռածների, այլ ողջերի մասին:

Երկարաճիտ կոպիտ կոշիկներով գետինը դոփելով՝ ներս են մտնում երկու դագաղակիր: Նրանք դագաղը արագ տեղավորում են դիակառքին, որը շարժվում է դեպի Սուրբ Մարկոսի գերեզմանատուն: Կառքի հետևից քայլում է ինը մարդ, որ, ցրտին չդիմանալով՝ ճանապարհին աստիճանաբար ցրվում են: Դիակառքը հասնում է քաղաքի արվարձանը միակ հուղարկավորի՝ միջակ երաժիշտ Սալյերիի ուղեկցությամբ: Դա այն մարդն է, որ, նախանձից կուրացած, շատ է թունավորել Մոցարտի կյանքը: Եվ այժմ, երբ հանճարը չկա, ուզում է բարի բան արած լինել՝ ուղեկցել նրան վերջին հանգրվան: Թող բոլորը տեսնեն, թե ինքը որքան է հարգում հանգուցյալի հիշատակը: Գուցե այդ ժամանակ կլռի այն անհեթեթ խոսակցությունը, թե ինքն է թունավորել ընկերոջը:

Բայց տեսնող չկար: Բուքը տուն էր քշել բոլորին, և ամայի փողոցներում անտեր դիակառքն էր՝ իր միակ ուղեկցով:

Երբ կառքը դուրս եկավ քաղաքից, Սալյերին շրջվեց և գլուխն ուսերի մեջ առնելով՝ քայլեց հետ՝ դեպի տուն: Մոցարտի դագաղով բեռնված կառքը ճանապարհը շարունակեց մեն-մենակ...

մահվան պատարագը այնպե՞ս հանճարեղորեն հնչեցնում է իրեն։ Ինչ անսովորական հա՞րցը։ Այո՛, դա հավանաբար հանդերձյալ աշխարհի պատվիրատուն էր։

Ջնջված ուժերը սատանայական հիվանդության, անդիմադրելի թուլության՝ Մոցարտը անկողնուց չբաժանվելով աշխատում էր ընկերների վրա։

- Սա գրում եմ ինձ համար, սա իմ մահվան պատարագն է, - ասաց մի անգամ կնոջը։

Ընկերների մեջ Մոցարտը դրեց իր մեծ սիրտը, ազնիվ տենչը, մարդկանցից հեռանալու թախիծը, մահվան սարսափը, կյանքին հրաժեշտ տալու անապատահանդուրժելի կսկիծը։

Կոմպոզիտորը շատ լավ էր հասկանում՝ դա իր կյանքի երգն է, որ միշտ աննդադարելի է լինում։

Ավա՜ղ, ռեքվիեմը մնաց կիսատ։

1791 թվականի դեկտեմբերն էր։ Ցուրտ էր, ձյան փաթիլները համրը՞րեն իջնում էին սառած հողին։ Մոցարտը պառկած էր սենյակի մի անկյունում՝ անշարժ հայացքն ուղղած առաստաղին։ Նրա աչքերի առջևով անցնում էին տարիները... Ահա ինքը՝ մի փոքրի՜կ մանչուկ՝ զանգուրացված կեղծամով, ժանյակավոր օձիքով։ Նվագում է, ու զարմացած ունկնդիրները նրա մեջ տեսնում են հրաշքին։ Մեր ապիտոն է, փոքրիկ ձեռքը շոյու՞մ, փաղաքշում է իրեն։ Համերգասրահնե՞ր, նվագավորական փարթիկ ձեռքը շոյու՞մ, նոտակա՞լ, և մի կախարդ ձեռք, որի շարժումից հնչում են ջութակնե՞րը, շեփորնե՞րը, ծնծղանե՞րը։ Ու ծափե՞ր, ծափե՞ր։

Մտքերն ընդհատվեցին։ Սենյակ մտավ բարեկամուհին։

- Ա՜, սիրելի՛ Սոֆի, - խոսեց մեռնողը, - լավ է, որ այստեղ ես։ Դու պետք է գիշերը մնաս ինձ մոտ։ Դու պետք է տեսնես, թե ես ինչպես եմ մեռնելու։

Սենյակի մեջտեղում, կոշտ ու անհարթ տախտակներից սարքված էժանագին դագաղում պառկած է մի ծեր մարդ։ Դա երեսունվեցամյա Մոցարտն է։ Կինը, որ համատեղ կյանքում երբեք էլ չգնահատեց հանճարեղ ամուսնուն, տանը չէ։ Նա երեխաների հետ գնացել է բարեկամներից մեկի տուն՝ հավատարիմ մնալով իր սկզբունքին՝ հոգալ ոչ թե մեռածների, այլ ողջերի մասին։

Երկարաճիտ կոպիտ կոշիկներով գետինը դոփելով՝ ներս են մտնում երկու դագաղակիր։ Նրանք դագաղը արագ տեղավորում են դիակառքին, որը շարժվում է դեպի Սուրբ Մարկոսի գերեզմանատուն։ Կառքի հետևից քայլում է ինը մարդ, որ, ցրտին չդիմանալով՝ ճանապարհին աստիճանաբար ցրվում են։ Դիակառքը հասնում է քաղաքի արվարձանը միակ հուղարկավորի՝ միջակ երաժիշտ Սալյերիի ուղեկցությամբ։ Դա այն մարդն է, որ, նախանձից կուրացած, շատ է թունավորել Մոցարտի կյանքը։ Եվ այժմ, երբ հանճարը չկա, ուզում է բարի բան արած լինել՝ ուղեկցել նրան վերջին հանգրվան։ Թող բոլորը տեսնեն, թե ինքը որքան է հարգում հանգուցյալի հիշատակը։ Գուցե այդ ժամանակ կլռի այն անհեթեթ խոսակցությունը, թե ինքն է թունավորել ընկերոջը։

Բայց տեսնող չկար։ Բուքը տուն էր քշել բոլորին, և ամայի փողոցներում անտեր դիակառքն էր՝ իր միակ ուղեկցով։

Երբ կառքը դուրս եկավ քաղաքից, Սալյերին շրջվեց և գլուխն ուսերի մեջ առնելով՝ քայլեց հետ՝ դեպի տուն։ Մոցարտի դագաղով բեռնված կառքը ճանապարհը շարունակեց մեն-մենակ...

Սուրբ Մարկոսի գերեզմանատունը առանց ձևականությունների դագաղը գլորեց ընդհանուր փոսի մեջ, ուր թաղում էին թափառաշրջիկներին, աղքատներին, որբանոցներում ու անկյուններում մեռած անտեր-անտիրական մարդկանց: Տասնհինգ-քսան մեռել՝ մեկ ընդհանուր գերեզմանում:

Այդպես հավիտյան գաղտնի մնաց այն տեղը, ուր հանգչում է մարդկության անզուգական հանճարը...

ՊԼԱՆ

1. Աղքատության մեջ ապրող Մոցարտը:
2. Մոցարտի հիվանդությունը:
3. Ռեքվիեմ:
4. Մահը:
5. Հանճարի թաղումը:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.

տանջող ցավ, տարօրինակ մաշող թուլություն, մութ զանգված, տաք ու սև մարմին, անարյուն դեմք, ուժեղ չարչարվող ուղեղ, մահվան գաղափար, հոգեհանգստի պատարագ, փոքրիկ մանչուկ՝ զանգվածային գերեզման, մանկական ձայն, միակ հուղարկավոր, վերջին հանգրվան, անզուգական հանճար:

Խորհուրդ է տրվում դասի ընթացքում լսել Մոցարտի «Ռեքվիեմ» և «Գիշերային փոքրիկ սերենադ» ստեղծագործությունները:

ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այն ենթադրությունը, թե Մոցարտը մեռել է անբնական մահով, ծագեց նրա մահից անմիջապես հետո: Թաղումից դեռ մեկ շաբաթ էլ չէր անցել, Վիեննայի թերթերից մեկը թղթակցություն զետեղեց, որով այն կարծիքն էր հայտնվում, թե Մոցարտը թունավորված է եղել: Այդ լուրը շատ արագ տարածվեց Վիեննայում, այնուհետև՝ ողջ Եվրոպայում: Մարդասպանի դերը, այդ լուրերի համաձայն, վերագրվում էր Սալյերիին: Դրա համար, ըստ երևույթին, հիմք է ծառայել այն թշնամանքը, որ մի ժամանակ այդ անտաղանդ երաժիշտը տածում էր Մոցարտի նկատմամբ:

Թունավորողի պիտակը հետապնդում էր Սալյերիին ընդհուպ մինչև մահը, թեև նա վաղուց արդեն հեռացել էր թատրոնից ու առհասարակ հասարակական կյանքից: Զբաղվում էր միայն հոգևոր երաժշտություն գրելով ու աշխատում էր որպես ուսուցիչ:

1825 թվականին ընկերներից մեկը Բեթհովենին հաղորդել է, թե իբր Սալյերին, զգալով մոտալուտ մահը, խոստովանել է, որ ինքն է սպանել Մոցարտին և մտադիր է եղել այդ մասին պատմել իր խոստովանահորը:

Հարյուր քսանհինգ տարի հետո՝ 1953 թվականին, Մոսկվայում լույս տեսավ Ի. Բելզայի «Մոցարտ և Սալյերի: Պուշկինի ողբերգությունը: Ռիմսկի-Կորսակովի դրամատիկական պատկերները» վերնագրով գիրքը: Այն չափազանց հետաքրքիր նյութեր է պարունակում: Հենվելով ավստրիացի երաժշտագետ Գվիդո Ադլերի հրապարակումների վրա՝ հեղինակը հաղորդում է, թե Վիեննայի արխիվներում

Սուրբ Մարկոսի գերեզմանափորը առանց ձևականությունների դագաղը գլորեց ընդհանուր փոսի մեջ, ուր թաղում էին թափառաշրջիկներին, աղքատներին, որբանոցներում ու անկելանոցներում մեռած անտեր-անտիրական մարդկանց: Տասնհինգ-քսան մեռել՝ մեկ ընդհանուր գերեզմանում:

Այդպես հավիտյան գաղտնի մնաց այն տեղը, ուր հանգչում է մարդկության անգուգական հանճարը...

ՊԼԱՆ

1. Աղքատության մեջ ապրող Մոցարտը:
2. Մոցարտի հիվանդությունը:
3. Ռեքվիեմ:
4. Մահը:
5. Հանճարի թաղումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

տարեց մարդ, տարօրինակ մաշող թուլություն, մութ զանգված, տձև ու սև մարմին, անարյուն գեմք, ոչինչ չարտահայտող աչքեր, մահվան գաղափար, հոգեհանգստի պատարագ, փոքրիկ մանչուկ՝ գանգրացված կեղծամով, ժանեկազարդ օձիք, միակ հուղարկավոր, վերջին հանգրվան, անգուգական հանճար:

Խորհուրդ է տրվում դասի ընթացքում լսել Մոցարտի «Ռեքվիեմ» և «Գիշերային փոքրիկ սերենադը» ստեղծագործությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այն ենթադրությունը, թե Մոցարտը մեռել է անբնական մահով, ծագեց նրա մահից անմիջապես հետո: Թաղումից դեռ մեկ շաբաթ էլ չէր անցել, Վիեննայի թերթերից մեկը թղթակցություն զետեղեց, որով այն կարծիքն էր հայտնվում, թե Մոցարտը թունավորված է եղել: Այդ լուրը շատ արագ տարածվեց Վիեննայում, այնուհետև՝ ողջ Եվրոպայում: Մարդասպանի դերը, այդ լուրերի համաձայն, վերագրվում էր Սալյերիին: Դրա համար, ըստ երևույթին, հիմք է ծառայել այն թշնամանքը, որ մի ժամանակ այդ անտաղանդ երաժիշտը տածում էր Մոցարտի նկատմամբ:

Թունավորողի պիտակը հետապնդում էր Սալյերիին ընդհուպ մինչև մահը, թեև նա վաղուց արդեն հեռացել էր թատրոնից ու առհասարակ հասարակական կյանքից: Զբաղվում էր միայն հոգևոր երաժշտություն գրելով ու աշխատում էր որպես ուսուցիչ:

1825 թվականին ընկերներից մեկը Բեթհովենին հաղորդել է, թե իբր Սալյերին, զգալով մոտալուտ մահը, խոստովանել է, որ ինքն է սպանել Մոցարտին և մտադիր է եղել այդ մասին պատմել իր խոստովանահորը:

Հարյուր քսանհինգ տարի հետո՝ 1953 թվականին, Մոսկվայում լույս տեսավ Ի. Բելզայի «Մոցարտ և Սալյերի: Պուշկինի ողբերգությունը: Ռիմսկի-Կորսակովի դրամատիկական պատկերները» վերնագրով գիրքը: Այն չափազանց հետաքրքիր նյութեր է պարունակում: Հենվելով ավստրիացի երաժշտագետ Գվիդո Ադլերի հրապարակումների վրա՝ հեղինակը հաղորդում է, թե Վիեննայի արխիվներում

Հայտնաբերվել է Սալյերիի խոստովանության գրառումը, որտեղ ասված է. «Սալյերին ոչ միայն խոստովանել է, թե ինքն է թունավորել Մոցարտին, այլև պատմել է, թե որտեղ, ինչ պարագաներում է դանդաղ գործող թույն լցրել նրա գինու գավաթի մեջ»:

Սրան հակառակ՝ մի խումբ մոցարտագետներ կտրականապես ժխտում են թե՛ թունավորումը, թե՛ Սալյերիի մեղսակցությունը: Նրանց կարծիքով կոմպոզիտորը մահացել է երիկամների ծանր հիվանդությունից:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՄՈՑԱՐՏ ԵՎ ՍԱԼՅԵՐԻ

(պատկեր երկրորդ)

Առանձին սենյակ պանդոկում: Դաշնամուր:
Մոցարտը և Սալյերին նստած են սեղանի մոտ:

ՍԱԼՅԵՐԻ
Այսօր մթնած ես դու: Ինչու՞:

ՄՈՑԱՐՏ
Ե՞ս: Ո՛չ:

ՍԱԼՅԵՐԻ
Մի ինչ-որ բան քեզ վշտացրել է, Մո՛ցարտ:
Համեղ է ճաշը, և գինին՝ ընտիր,
Իսկ դու լռում ես ու մռայլվում:

ՄՈՑԱՐՏ
Խոստովանեմ:
Իմ «Ռեքվիեմն» է ինձ տանջում:

ՍԱԼՅԵՐԻ
Ահա՜ ...
Դու հորինում ես ռեքվիե՞մ: Վաղո՞ւց:

ՄՈՑԱՐՏ
Վաղո՛ւց: Արդեն երեք շաբա՜թ է: Ճա՛տ
Տարօրինակ մի դեպք էր ... Չե՞մ պատմել
Քե՛զ: Մի՞թե:

ՍԱԼՅԵՐԻ
Ո՛չ: Բնա՛վ:

Հայտնաբերվել է Սալյերիի խոստովանության գրառումը, որտեղ ասված է. «Սալյերին ոչ միայն խոստովանել է, թե ինքն է թունավորել Մոցարտին, այլև պատմել է, թե որտեղ, ինչ պարագաներում է դանդաղ գործող թույն ցրել նրա գինու գավաթի մեջ»:

Սրան հակառակ՝ մի խումբ մոցարտագետներ կտրականապես ժխտում են թե՛ թունավորումը, թե՛ Սալյերիի մեղսակցությունը: Նրանց կարծիքով կոմպոզիտորը մահացել է երիկամների ծանր հիվանդությունից:

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՄՈՑԱՐՏ ԵՎ ՍԱԼՅԵՐԻ

(պատկեր երկրորդ)

Առանձին սենյակ պանդոկում: Դաշնամուր:
Մոցարտը և Սալյերին նստած են սեղանի մոտ:

ՍԱԼՅԵՐԻ
Այսօր մթնած ես դու: Ինչու՞:

ՄՈՑԱՐՏ
Ե՞ս: Ո՛չ:

ՍԱԼՅԵՐԻ
Մի ինչ-որ բան քեզ վշտացրել է, Մո՛ցարտ:
Համեղ է ճաշը, և գինին՝ ընտիր,
Իսկ դու լռում ես ու մռայլվում:

ՄՈՑԱՐՏ
Խոստովանեմ:
Իմ «Ռեքվիեմն» է ինձ տանջում:

ՍԱԼՅԵՐԻ
Ահա՜ ...
Դու հորինում ես ռեքվիե՞մ: Վաղո՞ւց:

ՄՈՑԱՐՏ
Վաղո՛ւց: Արդեն երեք շաբաթ է: Շա՛տ
Տարօրինակ մի դեպք էր ... Չե՞մ պատմել
Քե՛զ: Մի՞թե:

ՍԱԼՅԵՐԻ
Ո՛չ: Բնա՛վ:

ՄՈՑԱՐՏ
Լսի՛ր, ուրեմն.
Երեք շաբաթ առաջ, ուշ գիշերով
Գալիս եմ տուն, և ինձ ասում են՝ ինչ-որ մեկը
Եկել հարցրել է ինձ: Եվ ողջ գիշերը,
Չգիտեմ ինչու, խորհել եմ դրա մասին.
Թե ո՞վ էր նա և ի՞նչ էր կամենում:
Մյուս օրն էլի՛ գալիս է նա մեզ մոտ,
Եվ մենք դարձյալ իրար չենք հանդիպում:
Մի օր էլ անց, երբ հատակին նստած
Խաղում էի տղայիս հետ, ինձ կանչում են:
Շտապում եմ ընդառաջ, և սևազգեստ մի մարդ
Խոնարհ ողջույն տալով՝ ինձ պատվիրում է
Մի ռեքվիե՛մ գրել, ապա անհետանում:
Իսկույն գրել եմ սկսում, բայց այն օրից
Նորից է սևավոր իմ այցելուն:
Ես էլ ուրախ եմ. ծանր կլիներ
Գործիցս բաժանվել, թեպետև ավարտված է
Իմ «Ռեքվիեմը»: Բայց մի բա՛ն կա ...

ՍԱԼԻԵՐԻ
Ի՞նչ:

ՄՈՑԱՐՏ
Խոստովանել ես ամաչում եմ ...

ՍԱԼԻԵՐԻ
Ի՞նչ:

ՄՈՑԱՐՏ
Օր ու գիշեր ինձ չի՛ տալիս հանգիստ
Այն մարդը սևավոր: Ինչպես մի ստվեր՝
Նա միշտ ինձ հետևում է: Հենց հիմա՛ էլ.
Թվում է, նա, որպես երրորդ մի անձ,
Այստեղ մեզ հետ նստած է ...

ՍԱԼԻԵՐԻ
Բավական է:
Ի՞նչ մանկական վախեր են, սիրելի՛ս:
Ցրի՛ր պարապ խոհերդ: Բոմարշեն
Ասում էր ինձ հաճախ. «Սալյե՛րի,
Եթե մռայլ մտքեր քեզ պաշարեն,
Բացի՛ր իսկույն մի շիշ փրփրուն շամպայն
Եվ կամ նորից կարդա իմ «Ֆիգարոն»:

ՄՈՑԱՐՏ
Լսի՛ր, ուրեմն.
Երեք շաբաթ առաջ, ուշ գիշերով
Գալիս եմ տուն, և ինձ ասում են՝ ինչ-որ մեկը
Եկել հարցրել է ինձ: Եվ ողջ գիշերը,
Չգիտեմ ինչու, խորհել եմ դրա մասին.
Թե ո՛վ էր նա և ի՛նչ էր կամեցել:
Մյուս օրն էլ՝ գալիս է նա մեզ մոտ,
Եվ մենք դարձյալ իրար չենք հանդիպում:
Մի օր էլ անց, երբ հատակին նստած
Խաղում էի տղայիս հետ, ինձ կանչում են:
Շտապում եմ ընդառաջ, և սևազգեստ մի մարդ
Խոնարհ ողջույն տալով՝ ինձ պատվիրում է
Մի ռեքվիե՛մ գրել, ապա անհետանում:
Իսկույն գրել եմ սկսում, բայց այն օրից
Կորել է սևավոր իմ այցելուն:
Ես էլ ուրախ եմ. ծանր կլիներ
Գործիցս բաժանվել, թեպետև ավարտված է
Իմ «Ռեքվիեմը»: Բայց մի բա՛ն կա ...

ՍԱԼՅԵՐԻ
Ի՞նչ:

ՄՈՑԱՐՏ
Խոստովանել ես ամաչում եմ ...

ՍԱԼՅԵՐԻ
Ի՞նչ:

ՄՈՑԱՐՏ
Օր ու գիշեր ինձ չի՛ տալիս հանգիստ
Այն մարդը սևավոր: Ինչպես մի ստվեր՝
Նա միշտ ինձ հետևում է: Հենց հիմա՛ էլ.
Թվում է, նա, որպես երրորդ մի անձ,
Այստեղ մեզ հետ նստած է ...

ՍԱԼՅԵՐԻ
Բավակա՛ն է:
Ի՞նչ մանկական վախեր են, սիրելի՛ս:
Ցրի՛ր պարապ խոհերդ: Բոմարշեն
Ասում էր ինձ հաճախ. «Սալյե՛րի,
Եթե մռայլ մտքեր քեզ պաշարեն,
Բացի՛ր իսկույն մի շիշ փրփուրն շամպայն
Եվ կամ նորից կարդա իմ «Ֆիգարոն»:

ՄՈՑԱՐՏ
Իրա՛վ, կարծեմ քեզ բարեկամ էր Բոմարշեն,
Դու նրա համար «Տարարան» ես գրել.
Պայծա՛ռ մի գործ: Այնտեղ մի եղանակ կա ...
Ես միշտ երգում եմ այն, երբ երջանիկ եմ ...
Լա-լա՛, լա-լա՛ ... Ա՛հ, ճի՞շտ է այն, Սալյե՛րի,
Որ Բոմարշեն ինչ-որ մեկին դեղե՛լ է:

ՍԱԼՅԵՐԻ
Չե՛մ կարծում. նման գործի համար
Նա շատ ծիծաղելի էր:

ՄՈՑԱՐՏ
Եվ նա հանճա՛ր էր,
Ինչպես որ դո՛ւ և ես: Իսկ չէ՞ որ անհարիր են
Հանճարը և ոճիրը: Այդպե՛ս է, չէ՞:

ՍԱԼՅԵՐԻ
Կարծու՞մ ես:
(Թույն է գցում Մոցարտի գավաթի մեջ):
Դե՛հ, խմի՛ր:

ՄՈՑԱՐՏ
Խմո՛ւմ եմ քո
Կենա՛ցը, բարեկա՛մ: Կենացն անկեղծ սիրո,
Որով կապված են Մոցարտն ու Սալյերին՝
Հարմոնիայի երկու զավակը:
(Խմում է):

ՍԱԼՅԵՐԻ
Կա՛ց...
Սպասի՛ր, սպասի՛ր... Դու խմեցի՞ր... Մենա՞կ...

ՄՈՑԱՐՏ
(Անձեռոցիկը մի կողմ նետելով)
Էլ բա՛վ է, կշտացա:
(Գնում է դեպի դաշնամուրը):
Լսի՛ր, Սալյե՛րի,
Իմ «Ռեքվիեմը»:
(Նվագում է)
Դու լալի՞ս ես:

ՍԱԼՅԵՐԻ
Այս արցունքը
Հոսում է առաջին անգամ. և՛ ցա՛վ է խոր,

Եվ հաճելի՛: Կարծես կատարեցի
Մի ծանր պարտք: Կարծես բուժիչ դանակը
Հատեց ինձնից մի տառապող անդամ...
Եղբա՛յր իմ Մո՛ցարտ... Այս արցունքը դու...
Մի՛ նկատիր: Շարունակի՛ր, շտապի՛ր
Հոգիս լցնել հնչյուններով էլի՛...

ՄՈՑԱՐՏ
Օ՛, թե զգային բոլորն այդպես մեծ ուժը
Հարմոնիայի: Բայց ո՛չ: Այն ժամանակ
Աշխա՛րհն էլ չէր կարող կանգուն մնալ,
Եվ չէր հոգա ոչ ոք տաղտուկ կյանքի կարիքը:
Բոլորն էլ կընտրեին ազատ արվեստը:
Սակա՛վ ենք մենք՝ ընտրյալ բախտավորներս,
Անգոսնելի օգուտն արհամարհող
Անզբաղ քուրմերս մե՛ն գեղեցկության:
Այդպես է, չէ՞: Բայց ես այսօր տկար եմ,
Ինձ ինչ-որ վատ եմ զգում... գնամ, քնեմ:
Մնա՛ս բարով:

ՍԱԼԻԵՐԻ
Ցտեսություն:
(Մենակ)
Այո՞...
Դու, Մո՛ցարտ, կննջես երկա՛ր... Բայց մի՞թե
Իրավը նա՛ է, և հանճար չեմ ես:
Հանճարը և ոճիրը անհամատե՞ղ են... Սու՛տ է:
Իսկ Բուոնարոտի՞ն: Թե՞ դա էլ մի հեքիաթ է,
Որ բութ ու մռայլ ամբոխն է հորինել,
Եվ մարդասպան չէ՞ր Վատիկան կերտողը:

ՕԹԵԼԼՈՅԻ ԹԻԿՆՈՑԸ

Ըստ Ռուբեն Զարյանի

Մեծ ու փոթորկալից կյանքով է ապրել հայ բեմի խոշորագույն վարպետ
Վահրամ Փափազյանը: Աշխարհի որ անկյունում ասես չի եղել: Եվ ամե-
նուրեք Փափազյանի անունը շրջապատվել է խոսք ու զրույցով, նրա դասական գե-
ղեցկության, աստվածային ներշնչանքի շուրջ հյուսված բազում ստասպեններով:
Վահրամ Փափազյանը կատարել է բազմաթիվ դերեր, բայց ամենից շատ սիրել է
իր Օթելլոն:
- Մի քանի հազար անգամ խաղացել եմ Օթելլո, և ամեն անգամ իմ մեջ առավել
կամ պակաս ճշտությամբ ծնվել և վախճանվել է նա, քանի որ ներկայացումն սկս-
վելիս նորովի եմ հղացել կերպարը, - ասում է Փափազյանը: - Դերասանը պետք է
չարունակ ձգտի հասնել կերպարին, բայց չկարողանա: Եթե հասավ և նույնացավ,
ստեղծագործությունը կդադարի: Իմ ամբողջ կյանքում նպատակ եմ դրել հասնել
Օթելլոյին, ամբողջ կյանքումս ընկել եմ այդ շանորդու հետևից, բայց չեմ հասել:
Երբեմն թվացել է, թե ահա հասնում եմ, անգամ բռնել եմ փեշերից, բայց նա հե-
ռացել է, փախել հեռու և եղել ավելի բարձր, ավելի կատարյալ, քան իմ անձնավո-
րումն է:
Օթելլոյի դերակատարման հետ կապված բազմաթիվ հուշեր ուներ Փափազյանը՝
բոլորն էլ իր համար թանկ ու սիրելի:
Երբ արդեն ծեր էր ու այլևս չէր խաղում, գրականության և արվեստի թանգա-
րանի տնօրինությունը Փափազյանին խնդրեց հանձնել այն թիկնոցը, որ միշտ հա-
գել էր Օթելլո խաղալիս:
Ծանր ապրումների մեջ ընկավ վարպետը, տատանվեց: Ինչպե՞ս բաժանվեր իր
էության մասը կազմող թանկագին թիկնոցից: Չէ՞ որ նրա մեջ էին ամփոփված իր
անցյալը, ներկան, նվիրական հույզերն ու հուշերը: Այդ թանկագին թիկնոցից նա
անբաժան էր. հագնում էր ուրախ ու տխուր պահերին, հյուր ընդունելիս, առանձ-
նասենյակում աշխատելիս: Նույնիսկ ճամփորդելիս ճամպրուկի խորքում խնամ-
քով տեղավորում էր, ապա դնում մնացած իրերը:
Ահա թե ինչու էր ընկել տվայտանքների մեջ: Բայց միաժամանակ գտնում էր, որ
թիկնոցն արժանի է դառնալու թանգարանի մասունք:
Երկար մտածելուց հետո Փափազյանը զիջեց: Թիկնոցը թանգարանում գրավեց
պատվավոր տեղ:
Թվում էր՝ այդ պատմությունն ավարտվեց: Բայց պարզվեց, որ ոչ:
Մի օր Փափազյանը հայտնվում է գրականության և արվեստի թանգարանի թա-
տերական բաժնում: Աշխատակիցներն անմիջապես ակնածանքով շրջապատում են
նրան: Աշխույժ հարց ու զրույցից հետո Փափազյանն ասում է, թե եկել է կարճ
ժամանակով խնդրելու իր թիկնոցը:
- Թանգարանից ոչինչ դուրս չի տրվում, - միանգամից պատասխանում են նրան:
- Ընդամենը մի շաբաթով, - խնդրում է Փափազյանը:
- Տնօրենին ասե՞լ եք:

- Խե՞նթ եմ, ինչ է: Ես նրան լավ գիտեմ: Մի բան, որ ընկավ ձեռքը, էլ հետ կտա՞: Դուք ավելի գթասիրտ եք, քան նա:

- Առանց տնօրենի թույլտվության չենք կարող, - պնդում է աշխատակցուհին:

- Այդ ճիշտ է: Բայց եթե նրա թույլտվությունը լիներ, էլ ինչու՞ էի ձեզ այսքան խնդրում:

Փափազյանի ասածը տրամաբանական է թվում, և այն, որ մեծ ողբերգակը դիմում է անմիջապես իրենց, շոյում է աշխատակցուհիների ինքնասիրությունը: Փափազյանը նկատում է այդ:

- Նա չի էլ իմանա, - ասում է, - Արտաշատում պետք է Օթելլո խաղամ: Մի շաբաթից կբերեմ, տեղը կդնեք:

Դարձյալ մի փոքր դիմադրում են, բայց ի վերջո ընդառաջում՝ չանդրադառնալով, որ Փափազյանը վաղուց արդեն բեմ չի բարձրանում:

Անցնում է մեկ ամիս. Թիկնոցից ոչ մի լուր: Դարձյալ ամիսներ են անցնում, Փափազյանը ո՛չ գալիս է, ո՛չ էլ թիկնոցն ուղարկում: Թանգարանի աշխատակիցներն անհանգստանում են, զանգահարում Վարպետին: Խոստանում է, բայց չի բերում: Նորից են զանգահարում, նորից է խոստանում: Այս անգամ էլ է խոստումը մնում խոստում:

Հասկանալով, որ սխալ են գործել, թիկնոցը այլևս երբեք հետ չեն ստանա, ամեն ինչ խոստովանում են տնօրենին՝ սպասելով, որ նա զայրացած կհանդիմանի իրենց: Տնօրենը, ի զարմանս աշխատակիցների, հանգիստ լսում է, մի երկու հարց տալիս, կշտամբող ոչ մի խոսք չի ասում և լուռ հեռանում է:

Մյուս օրը նորից է մտնում թատերական բաժին, հավաքում «մեղավոր» աշխատակիցներին:

- Այլևս չզանգահարեք Փափազյանին, - ասում է:

Բոլորը զարմացած նայում են նրան:

- Կարիք չկա:

Նկատում են, որ տնօրենի աչքերը թախծոտ են:

- Փափազյանը, - շարունակում է նա, - ինչպես գիտեք, վաղուց արդեն չի խաղում: Ու եթե թիկնոցը վերցրել է, ապա այն բանի համար, որ վերհիշի, վերապրի իր երբեմնի փառքը: Մի րոպե անգամ չեմ կասկածում, որ տանը միշտ այդ թիկնոցով է: Դա ոչ միայն պատրանք է, որ ինքն ստեղծում է իր համար, այլ հոգեբանական ճիգ՝ չբաժանվելու Օթելլոյից, որի կերպարը դարձել է նրա երկրորդ եսը: Մի՛ մեղադրեք և հասկացե՛ք արտիստին: Հարգե՛նք նրա «թուլությունը»:

Եվ իսկապես, Փափազյանի հագին միշտ նվիրական թիկնոցն էր:

Մահից մի քանի օր առաջ նա վեր կացավ անկողնուց, խնդրեց իրեն հագցնել թիկնոցը, տանել հայելու մոտ:

Նստեց հայելու առաջ, նայեց իրեն ուշադիր, հետո ձեռքը տարավ գլխի երեսը. շարժումներ արեց ճիշտ այնպես, ինչպես անում էր տարիներ առաջ գրիմ քսելիս: Ասես պատրաստվում էր ներկայացման, հավանաբար՝ «Օթելլոյին»:

Երբ թաղում էին Փափազյանին, դագաղի վրա անփույթ նետված էր Օթելլոյի թիկնոցը...

ՊԼԱՆ

1. Մեծ կյանք:
2. Վարպետը Օթելլոյի մասին:
3. Նվիրական թիկնոցը:
4. Խորամանկ արարք:
5. Կյանքի ու մահվան ընկերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

մեծ ու փոթորկալից կյանք, խոշորագույն վարպետ, դասական գեղեցկություն, առավածային ներշնչանք, թանկ ու սիրելի հուշեր, թանգարանային մասունք, երբեմնի փառք, հոգեհանգստյան ժամ:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ՀԻՇՈՒՄ Է ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԸ

Մի օր Փափազյանն ասաց.

- Ես չեմ ուզում մեռնել, երևի ոչ ոք էլ չի ուզում մեռնել: Բոլոր առողները, թե իրենց համար մեկ է՝ վաղը կմեռնեն, թե մի քանի տարի հետո, անկեղծ չեն: Ոչ ոք չի ուզում այս աշխարհից հօժարակամ գնալ: Նկատված է, որ իրենց վրա ձեռք բարձրացնողները վերջին պահին զղջում են, խնդրում փրկել:

Եվ միտքը շարունակեց այսպես.

- Բայց եթե մեռնել, ապա միայն այնպես, ինչպես պատահեց Համբարձումի հետ:

Խոսքը Խաչանյանի մասին է, որին շատ էր սիրում, և որը մահացել է «Երկիր հայրենի» ներկայացման ժամանակ՝ բեմադգեստը հագին, դիմահարդարված, բեմ մտնելուց մի քանի րոպե առաջ:

Ամենից ավելի նրա վրա տպավորություն էր թողել Միքայել Թավրիզյանի մահը, մահ՝ նվագախումբը ղեկավարելիս, վահանակի մոտ, բուռն շարժման պահին, երբ աջ ձեռքը մեկնել էր վեր՝ հնչյունի հետևից:

- Մարդ պետք է այդպես մեռնի: Ես շատ բան կտայի՝ բեմում խաղի ժամանակ մեռնելու համար:

Եվ մի օր Փափազյանի խաղի ժամանակ հիշեցի մեր այս զրույցը:

1967-ի դեկտեմբերի 14-ին էր, «Իմ սիրտը լեռներում է» ներկայացումը: Խաղում էր Մեք-Գրեգոր, որը, ինչպես հայտնի է, մեռնում է բեմում: Երբ նա «մահացավ», Վարդերեսյան-Ջոնին մոտեցավ և մի փոքր բարձրացրեց ձեռքը, որն ընկավ այնպես անկյանք, որ շատերը թատերասրահում, այդ թվում և ես, կարծեցինք, թե Փափազյանն իսկապես մահացել է: Իսկ ներկայացումը շարունակվում էր: Երբ Բեն-Ալեքսանդր-Բաբկեն Ներսիսյանն ասաց. «Այս մարդը մեր ժամանակի ամենամեծ չեքսպիրյան դերասանն էր», բարձրացավ այնպիսի ծափահարություն, ինչպես երբեք չէր եղել: Մեք-Գրեգորին չպակեցին ու տարան: Կյանքի ոչ մի նշույլ չկար: Այդպես միայն դիակն է լինում:

Վարդերեսյանի խաղում փախեցած չիբթ կար: Ու եթե դա համընկնում է և համապատասխանում այդ պահի բեմական ապրումին ըստ թատերախաղի, ապա Արուս

Առըյանը Հետագայում ասում էր, որ ինքը Հավատացել է, թե տեղի է ունեցել ամենասարսափելին, և խաղում էր՝ Հազիվ զսպելով արցունքները, զարմացած, թե ինչու վարագույրը չեն փակում:

Երբ ներկայացումը վերջացավ, և ծափաՀարությունների ներքո Փափազյանը բեմ եկավ, Հանդիսատեսը ազատ շունչ քաշեց և ապա ուրախացած, որ դերասանին Հաջողվել է դաշույնին խարկանքի մեջ պաՀել, որոտընդոստ ծափաՀարությամբ միացրեց ցնծագին կանչերը՝ «Բռավո՛»:

Դա Փափազյանի վերջին ներկայացումն էր Սունդուկյանի անվան թատրոնում...

ՍՈՒՍԵՐՈՎ ՊԱՐԸ

Ըստ Ռ. Նազարյանի

Արամ Խաչատրյանը այն քիչ արվեստագետներից է, որոնք կենդանության օրոք արժանացան Համաշխարհային փառքի ու ճանաչման: Նրա անզուգական մեղեդիները Հնչեցին աշխարՀի գրեթե բոլոր անկյուններում: Ու՞ր ասես չեղավ ինքը՝ մեծաՀռչակ մաեստրոն: Ավելի քան երեսուն երկրներում Հանդես եկավ մենաՀամերգներով՝ ամենուր ճաշակելով սիրված, մեծարված լինելու բերկրանքը: Նա երջանիկ էր, որ Հայկական մեղեդիներով ներծծված իր ստեղծագործությունները Հավասարապես մոտ են և՛ Եվրոպայի, և՛ Ասիայի ժողովուրդների սրտին: Բայց մի Հանգամանք զայրացնում էր Խաչատրյանին. որ երկրում էլ այցելեր, նախ և առաջ Հիշում էին և Հատուկ Հիացմունքով կատարում «Սուսերով պարը»՝ գրված «Գայանե» բալետի Համար:

- Թողած «Սպարտակը», իմ մյուս ստեղծագործությունները՝ Հենց միշտ պատաՀականորեն ստեղծված այդ պարի մասին են խոսում, - ասում էր նա՝ գրեթե վիրավորված:

Երբ Խաչատրյանը գրեց «Գայանեն», նախնական տարբերակում «Սուսերով պարը» չկար: Բալետը Մոսկվայում պատրաստվում էր բեմադրության, իսկ ինքը՝ Հեղինակը, այդ ժամանակ Կույբիշևում էր:

Մի օր կոմպոզիտորի տանը անսպասելի Հայտնվեցին Մեծ թատրոնի մի խումբ ղեկավար աշխատակիցներ: Պարզվեց՝ «Գայանեի» մեջ ընդգրկված մի անվանի մենապարուՀի դժգոՀ է, որ չունի անձամբ իր Համար գրված պար:

- Արա՛մ Իլյիչ, ձեզ Համար ի՞նչ դժվար բան է մի պար ես Հորինելը: Խնդրում ենք մտնել մեր վիճակի մեջ: Ինչպե՞ս մերժենք ամբողջ Միության մեջ ճանաչված պարուՀուն:

Խաչատրյանը զայրացավ: Բալետն ավարտել է, աշխատել յուրաքանչյուր նոտայի վրա: Դա արդեն քմաՀաճություն է: Բայց ի՞նչ կարող էր անել: Մարդիկ կտրել են երկար ճանապարՀ, Հույսով եկել...

Բարկացած նստեց դաշնամուրի մոտ և մատներով հենց այնպես, զայրույթը մեղմելու համար մի քանի անգամ հարվածեց ստեղներին: Ա՛յ քեզ հրաշք: Զգաց, որ բարկության պահին իջեցրած հարվածները յուրահատուկ չափով հնչեցին: Մեծ երաժիշտն անմիջապես մեղմացավ, սահեց ձուլվեց դաշնամուրին՝ մոռանալով հյուրերին: Գոհված չափը կլանեց ուշադրությունը, տարավ իր հետ:

Երկու օր անց թատրոնի աշխատակիցները թռան Մոսկվա՝ տանելով «Սուսերով պարի» նոտաները:

Այսպես ցույց տվեց, թե ինչպիսի համընդհանուր ընդունելության գտավ այդ մոլեգնող մեղեդին:

Պարի երաժշտությունը տարածվեց ողջ աշխարհում, նույնիսկ տարբեր ժողովուրդների կողմից մի տեսակ սեփականացվեց: Օրինակ՝ Գերմանիայում գտան, որ այն խիկ և խիկ համապատասխան է իրենց ոգուն և բարձրացնում է ազգի մարտունակությունը: Ահա թե ինչու այսօր էլ գերմանական ռադիոկայաններով ամեն օր կարող ենք լսել «Սուսերով պարի» ոգեկոչող, մրրկահույզ մեղեդին:

Ուր էլ մեկներ Խաչատրյանը, պարի մեղեդին ուղեկցում էր նրան:

Անգլիայում մեծանուն կոմպոզիտորը հրավեր ստացավ առաջին նախարարից: Երբ ուղեկցող անձանց հետ մտավ առանձնատան հսկայական հյուրասենյակը, ոչ ոք չդիմավորեց նրան: Շքեղաշուք դահլիճը դատարկ էր և լուռ: Սովոր լինելով աղմկալի ընդունելությունների՝ Խաչատրյանը ապշեց: Բայց կատարվեց անսպասելին. դիմացի պատին հանկարծ տեսավ իր մեծադիր նկարը՝ դիրիժորական փայտիկը ձեռքին, և ծաղիկների մեծ փնջեր՝ բյուրեղապակյա ծաղկամաններով դրված նկարի տակ: Դեռ ուշքի չէր եկել, նկարի հետևից բարձր հնչեց «Սուսերով պարը», որի հնչյունների ներքո ներս մտան տանտերերը և զուտ անգլիական ծիսակարգով ողջունեցին մեծանուն հյուրին:

Փարիզում Խաչատրյանին տարան Բուլոնյան անտառում զբոսնելու: Այստեղ ևս նրան դիմավորեց անակնկալը: Անտառ մտնելուն պես հանկարծ բոլոր կողմերից լսեց իր նշանավոր պարի մեղեդին: Պարզվեց, որ նրան ուրախացնելու նպատակով նախապես ծառերի ճյուղերին և թփերի մեջ տեղադրել են մի քանի բարձրախոս՝ «Սուսերով պարի» ձայներիզով:

Տոկիոյի օդանավակայանում ևս Խաչատրյանին անակնկալ էր սպասում: Ինքնաթիռից իջնելուն պես նրան առաջնորդեցին բացառիկ հյուրերի սրահը, և շքեղաշուք ճապոնուհիները՝ հայկական տարազներով, երկար հյուսքերի կեղծամներով, հայ տիկնանց նազելի շարժուձևով «Սուսերով պարի» հնչյունների տակ աղ ու հաց մատուցեցին աշխարհահռչակ կոմպոզիտորին:

Իսպանիայում Խաչատրյանի համերգները մեծ աղմուկ հանեցին: Երաժշտասեր իսպանացիները ցնծությամբ ընդունեցին նրան: Ի՜նչ պատիվների ասես չարժանացրին, արեցին ամե՛ն, ամե՛ն ինչ՝ աշխարհահռչակ երաժշտին կատարելապես մեծարելու համար: Վերջում էլ հարցրին, թե արդյոք ինչ կկամենար տեսնել կամ ունենալ Մադրիդում: Իրենք ուրախ կլինեն կատարել նրա բոլոր ցանկությունները:

Կյանքում և կենցաղում լինելով համեստ մարդ՝ Խաչատրյանը արժանապատվությամբ էր վայելում փառքը:

- Լինել Իսպանիայում և չհանդիպել 20-րդ դարի մեծանուն նկարիչ Սալվադոր

Դալիին, որին պաշտում եմ, կնշանակի շատ բան կորցնել: Շնորհակալ եմ ջերմ ընդունելության համար, միայն խնդրում եմ ծանոթացնել նրա հետ:

Իսպանացիներն ընկան տարակուսանքի մեջ:

Բանն այն էր, որ Սալվադոր Դալին հայտնի էր իր տարօրինակություններով, անհավասարակշիռ բնավորությամբ և քմահաճ արարքներով: Բացի այդ՝ Ամերիկայում էր: Ուրեմն անհնար էր կատարել Խաչատրյանի խնդրանքը:

Բայց ամեն ինչ հաջողվեց հեքիաթային արագությամբ:

Զանգահարեցին Դալիին, և նա պատասխանեց.

– Ես հանճարեղ կոմպոզիտորի երկրպագուն եմ և երջանիկ կզգամ վաղը ցանկացած պահի նրան ընդունել Մադրիդի իմ համեստ առանձնատանը: Ես՝ ծեր նկարարս, ինչպե՞ս կարող եմ հրաժարվել Խաչատրյանին տեսնելու փառքից: Շոյված եմ, որ իմ անձնական անձը հետաքրքրություն է առաջացրել փառաբանված մաեստրոյի մոտ:

Տեսակցությունը նշանակվեց հաջորդ օրը ժամը երկուսին:

Ճիշտ երկուսից երեք րոպե պակաս կառավարական ավտոմեքենան կանգնեց Դալիի ճերմակաքար, ատամնավոր աշտարակներով դղյակի առաջ: Շքեղ հագնված դռնապանը բացեց դարպասը և հայտարարեց, որ մոնսինյոր Դալին արդեն սպասում է, բայց ցանկանում է հանդիպել միայն մաեստրոյի հետ: Կարգադրել է բացի նրանից ոչ մեկին չընդունել:

Ուղեկիցներին ծանոթ էին նկարչի քմահաճությունները, և բոլորովին չզարմացան նրա արած կարգադրությամբ:

Խաչատրյանին մարմարյա ծառուղիով առաջնորդեցին պալատ: Մուտքի մոտ նրան դիմավորեց իսպանական բծախնդրությամբ հագնված արարողապետը և ուղեկցեց մի շքեղ դահլիճ:

– Նստեցե՛ք, խնդրում եմ, – խոնարհվելով ասաց նա, – հիմա այս դռնով կմտնի մոնսինյորը:

Խաչատրյանին թվաց, թե ընկել է առասպելների աշխարհը: Շուրջը թագավորում էր ոսկին, ամենուրեք աչքի էին զարնում անգին ճենապակյա սկահակներ ու անոթներ: Իսկ գրվագազարդ սեղանը ծանրաբեռնված էր աշխարհի տարբեր ծայրերից բերված բարիքներով, հայկական կոնյակներով:

Մինչ Խաչատրյանը զարմացած նայում էր շուրջը, ինչ-որ տեղ թաքցրած բարձրախոսից խլացուցիչ ձայնով հանկարծ հնչեց «Սուսերով պարը»: Նույն պահին դուռն աղմուկով բացվեց, և սուսերը օդում ճոճելով ու ռիթմին համապատասխան պարային շարժումներ անելով՝ փոթորկի պես ներս ընկավ Դալին, մեկ-երկու պտույտ գործեց դահլիճով մեկ և նույն դռնով, որով մտել էր, դուրս թռավ:

Հայտնվեց արարողապետը և բարեկիրթ խոնարհումներով հայտարարեց, թե ընդունելությունն ավարտված է:

Խաչատրյանը ապշած էր: Սանդղամուտքի մոտ նրան հանձնեցին Սալվադոր Դալիի նկարների ոսկեզօծ ալբոմը՝ հեղինակի սրտառուչ մակագրությամբ՝ որպես հուշ անմոռանալի հանդիպման...

Հանճարը հանճարին մեծարում է յուրովի...

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

Համաշխարհային փառք ու ճանաչում, անզուգական մեղեդիներ, մեծահռչակ մաեստրո, մեծարված լինելու բերկրանք, ավելորդ քմահաճություն, մոլեգին մեղեդի, աղմկալի ընդունելություններ, անգլիական ծխախոտ, բացառիկ հյուրերի սրահ, արժանապատվությամբ վայելել փառքը, ճենապակյա սկահակներ, զրնգացող սեղան, ոսկեզօծ ալբոմ, սրտառուչ մակագրություն:

ՀԱՐՑԵՐ 1. Արամ Խաչատրյանի ո՞ր ստեղծագործությունն ես ամենից շատ հավանում:

2. Ինչպե՞ս ես գնահատում Սալվադոր Դալիի ընդունելության ձևը:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

ՊԱՏՄՈՒՄ Է ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԸ

1975-ին էր: Մոսկվայում էի: Ուշ երեկոյան լսվեց հեռախոսի զանգը: Արամ Խաչատրյանն էր: Զրացատրեց, թե ումից է իմացել Մոսկվայում լինելս, հեռախոսիս համարը: Ես էլ հարմար չգտա հարցնելու, մանավանդ որ կարևոր չէր:

- Կարո՞ղ ենք հանդիպել:

- Իհարկե՛:

Հետաքրքրվեց, թե վաղը որ ժամին կլինեմ հյուրանոցում: Հայտնեցի իմ պատրաստակամությունը՝ գնալու իր մոտ:

Ոչ մի նախաբան: Չհարցրեց նույնիսկ, թե երբ եմ եկել և ինչպես եմ զգում: Կտրուկ սկիզբը մատնում էր հանդիպման կարևորությունն ու անհետաձգելիությունը: Իմ ենթադրությունն ավելի հաստատվեց, երբ ասաց, թե իր խոսելիքն այնպիսի նյութի շուրջ է, որ կգերադասեր հանդիպել ո՛չ իր տանը:

Պայմանավորված ժամին եկավ հյուրանոց:

- Երբ որոշվեց Մարտիրոս Սարյանի կենդանության օրոք բացել տուն-թանգարան, Երևանում տարակարծություններ կային, ողջունողներ և առարկողներ: Դուք ի՞նչ կարծիքի էիք:

- Ողջունողներից էի:

- Ուրախ եմ. ես այն համոզման եմ, որ արվեստագետի համար չի կարող լինել ավելի մեծ գնահատություն, քան կենդանության օրոք տուն-թանգարան ունենալը: Ճի՞շտ է:

- Միանգամայն:

- Գիտեմ, թե դուք ինչպես եք վերաբերվում ինձ: Ուստի խնդրում եմ միանգամայն անկեղծ լինել հետս. ես արժանի՞ եմ ունենալու իմ տուն-թանգարանը Երևանում հիմա, երբ դեռ ողջ եմ:

- Իհա՛րկե արժանի եք:

- Ուրախ եմ, որ այդպես եք կարծում:

- Ուրիշ կարծիք լինել չի կարող:

- Դե որ այդպես է, լսի՛ր ինձ: Փոքրին ես նայում եմ իրատես աչքերով: Ինձ ինչ որ բաժին է հասնում, ուզում եմ վերցնել առանց այն խաղի, որ կոչվում է` «չեմ ուզում, գրպանս գցիր»: Բայց ինձ զբաղեցնողը դա չէ:

Լռություն:

- Իմ արխիվը պետք է փոխադրվի Երևան: Ես հարուստ արխիվ ունեմ, դա ձեզ հայտնի է: Ամեն ինչ հավաքել, պահել եմ: Բայց եթե ինձ բան պատահի, կինս դեմ կլինի: Տուն-թանգարանը պատրվակ է: Լավ պատրվակ է: Այս մասին ուրիշները չիմանան: Լա՞վ: Թեև Երևանի ընկերներից մի երկուսի հետ խոսել եմ, նրանց էլ եմ զգուշացրել:

Նորից լռեց:

- Խնդրում եմ Երևանում ում հետ հարկն է խոսել և այնպես անել, որ գործը շուտ գլուխ գա, քանի ես կամ:

Խոստացա, թեև լավ չէի պատկերացնում, թե ինչ քայլեր պիտի անեմ այդ գծով, բայց պատվաբեր գործը գլուխ բերելու համար:

Անցավ երևի մի տարի, գուցե պակաս կամ ավելի. Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի հարցի լուծումն ընդունեց գործնական ընթացք:

Նրանից ստացա մի նամակ, որով հայտնում էր, թե 1977-ի մայիսին Երևանում եղել է Հանրապետության ղեկավարների հյուրը, որտեղ արծարծվել են տուն-թանգարանի ստեղծման և իր արխիվի հետ կապված խնդիրները:

Այդ նամակը միանգամայն գործնական էր. ուզում էր իմանալ, թե արդյոք ավելի լավ չի լինի, եթե թանգարանը ստեղծվի Արվեստի ինստիտուտին կից, քանի որ, իր պատկերացմամբ, այնտեղ ցուցադրությունից բացի պետք է գիտահետազոտական աշխատանք տարվի: Բացի այդ` այն կարծիքին էր, որ ոչ թե պետք է վերանորոգվի թանգարանի շենքը, որը որպես բնակարան նվիրել էր նրան կառավարությունը երեք տասնամյակ առաջ, այլ վերակառուցվի, հավելվի երկրորդ հարկ, որտեղ ինքը կապրի ու կստեղծագործի:

Նամակում հիշում էր Տոլստոյին, որն ասել է. «Պետք է նախապատրաստվել մահվան»: Եվ ավելացնում էր. «Ահա և ես պատրաստվում եմ»:

- Չեք կարող երևակայել, - ասաց մահից մի տարի առաջ, - թե ինձ հիմա ինչպես է քաշում Երևանը: Շատ եմ կարոտում: Ուզում եմ լինել ոչ թե մի քանի օրով, այլ ամիսներ շարունակ:

Հետո նայեց ինձ այնպես, կարծես իր դիմաց նստած լիներ Երևանի քաղխորհրդի նախագահը:

- Մի՞թե չի կարելի ավելի արագ լուծել նոր բնակարան տալու հարցը, որ ես հանգիստ ու խաղաղ տեղավորվեմ, ինչպես վայել է ստեղծագործող արվեստագետին, վերջապես զգամ, որ իմ տանն եմ, ունենամ տիրոջ հոգեբանություն: Չէ՞ որ դրա իրավունքը հիմա ավելի ունեմ, քան շատ տարիներ առաջ, երբ հայկական կառավարությունը առանձնատուն նվիրեց ինձ:

* * *

Լուր հասավ Երևան, թե Արամ Իլյիչին տարել են հիվանդանոց: Ասացին՝ վիճակը լուրջ է: Հայտնի դարձավ, որ վիրահատվելու է: Ինչո՞վ կվերջանա՝ հայտնի չէ: Երևանի երաժշտական աշխարհը խառնվեց իրար: Հայ մտավորականությունն անհանգստացավ: Մարդիկ հեռաձայնում էին իրար, զանգահարում Մոսկվա, հարցնում, թե ինչ նոր լուր կա: Ասում էին, թե օրերը հաշված են: Մարդկանց սրտերը կծկվեցին, իսկ նա հանկարծ հայտնվեց Երևանում: Այս անգամ իրեն չտեսա: Անցավ կես տարի, գուցե մի փոքր ավելի, և պարզվեց, որ նրան նորից տարել են հիվանդանոց: Երկու թե երեք վիրահատություն հաջորդել են իրար: Իմացանք բժիշկների կարծիքը՝ փրկություն չկա: Եվ հանկարծ պատմեցին, որ կինոյի մարդիկ այցելել են հիվանդին և պատմել, որ մտադիր են իրեն նվիրված վավերագրական կինոնկար պատրաստել:

- Միանգամայն ճիշտ որոշում է, - բացականչել էր կոմպոզիտորը ուրախացած:

- Բայց դուք հիվանդ եք, - տարակուսել էին նրանք:

- Ուրեմն առավել ևս պիտի նկարահանել ինձ: Մեկ էլ տեսար՝ վաղը չկամ, ինչ պատասխան եք տալու սերունդներին:

Կատակի էր տվել, ապա նորից լրջացել:

- Շտապ գործի՛ անցեք:

Պատմում էին, որ կինոյի մարդկանց հետ մշակել է «գաղտնի գործունեության» մի ամբողջ ծրագիր: «Փախել» է հիվանդանոցից, տուն է վերադարձել: Բժիշկներն իմացել են, և օրինականացվել է նկարահանումը:

Ասում էին, թե մահից մի քանի օր առաջ նրան այցելել է Խրեննիկովը: Եվ Արամ Իլյիչն ասել է.

- Տիխո՛ն Նիկոլաևիչ, քո ձեռքով ինձ կտանես Երևան: Ուզում եմ հայրենի հողին խառնվել: Շքեղ թաղում կանեք: Թող ծաղիկներ շատ լինեն, շատ երաժշտություն և շատ ճառեր...

Այս խոսքերի մեջ է Արամ Խաչատրյանն իր մարդկային ողջ խառնվածքով:

Ամենքին հայտնի էր, որ նա ծանր հիվանդ է, անբուժելի: Բոլորս սարսափով էինք մտածում, որ վաղը կարող է չլինել:

Երբ պատահում է ճակատագրականը, մարդիկ, որ համճարի երկրպագուներն են եղել, նոր են հասկանում, թե ինչ կատարվեց:

Այսպես եղավ չորս անգամ. մեկ, երբ այս աշխարհին հրաժեշտ տվեց Ավետիք Իսահակյանը, երկրորդ՝ Լենինգրադում աչքերը փակեց Վահրամ Փափազյանը, երրորդ՝ երբ կյանքից հեռացավ Մարտիրոս Սարյանը: Եվ մեկ էլ հիմա՝ երբ Արամ Խաչատրյանի մահվան բոթը Մոսկվայից հասավ Երևան:

Ոչ մի նշանակություն չուներ՝ նրանք իրենց կյանքի վերջին տարիներին արժեքներ ստեղծում էին, թե ոչ: Նրանց գոյությունն արդեն արժեք էր: Զորավոր հենարաններ էին: Ստեղծագործելին-չստեղծագործելին՝ կային, կայի՛ն, իբրև աշխարհով մեկ հայտնի դարձած անուններ՝ բանաստեղծ, դերասան, նկարիչ և կոմպոզիտոր: Նրանք մեծ արվեստագետներ չէին միայն: Նրանք մի ամբողջ ժամանակաշրջան էին, խորհրդանիշ, իրենց ժողովրդի դրոշը:

Նրանց մահով ասես ժողովուրդը մնում էր անհովիվ:

* * *

Լուր հասավ Երևան, թե Արամ Իլյիչին տարել են հիվանդանոց։ Ասացին՝ վիճակը լուրջ է։ Հայտնի դարձավ, որ վիրահատվելու է։ Ինչո՞վ կվերջանա՝ հայտնի չէ։ Երևանի երաժշտական աշխարհը խառնվեց իրար։ Հայ մտավորականությունն անհանգստացավ։ Մարդիկ հեռաձայնում էին իրար, զանգահարում Մոսկվա, հարցնում, թե ինչ նոր լուր կա։ Ասում էին, թե օրերը հաշված են։ Մարդկանց սրտերը կծկվեցին, իսկ նա հանկարծ հայտնվեց Երևանում։ Այս անգամ իրեն չտեսա։ Անցավ կես տարի, գուցե մի փոքր ավելի, և պարզվեց, որ նրան նորից տարել են հիվանդանոց։ Երկու թե երեք վիրահատություն հաջորդել են իրար։ Իմացանք բժիշկների կարծիքը՝ փրկություն չկա։ Եվ հանկարծ պատմեցին, որ կինոյի մարդիկ այցելել են հիվանդին և պատմել, որ մտադիր են իրեն նվիրված վավերագրական կինոնկար պատրաստել։

- Միանգամայն ճիշտ որոշում է, - բացականչել էր կոմպոզիտորը ուրախացած։

- Բայց դուք հիվանդ եք, - տարակուսել էին եկողները։

- Ուրեմն առավել ևս պիտի նկարահանել ինձ։ Մեկ էլ տեսաք՝ վաղը չկամ, ինչ պատասխան եք տալու սերունդներին։

Կատակի էր տվել, ապա նորից լրջացել։

- Շտապ գործի՛ անցեք։

Պատմում էին, որ կինոյի մարդկանց հետ մշակել է «գաղտնի գործունեության» մի ամբողջ ծրագիր։ «Փախել» է հիվանդանոցից, տուն է վերադարձել։ Բժիշկներն իմացել են, և օրինականացվել է նկարահանումը։

Ասում էին, թե մահից մի քանի օր առաջ նրան այցելել է Խրեննիկովը։ Եվ Արամ Իլյիչն ասել է.

- Տիխո՛ն Նիկոլաևիչ, քո ձեռքով ինձ կտանես Երևան։ Ուզում եմ հայրենի հողին խառնվել։ Շքեղ թաղում կանեք։ Թող ծաղիկներ շատ լինեն, շատ երաժշտություն և շատ ճառեր...

Այս խոսքերի մեջ է Արամ Խաչատրյանն իր մարդկային ողջ խառնվածքով։

Ամենքին հայտնի էր, որ նա ծանր հիվանդ է, անբուժելի։ Բոլորս սարսափով էինք մտածում, որ վաղը կարող է չլինել։

Երբ պատահում է ճակատագրականը, մարդիկ, որ համճարի երկրպագուներն են եղել, նոր են հասկանում, թե ինչ կատարվեց։

Այսպես եղավ չորս անգամ. մեկ, երբ այս աշխարհին հրաժեշտ տվեց Ավետիք Իսահակյանը, երկրորդ՝ Լենինգրադում աչքերը փակեց Վահրամ Փափազյանը, երրորդ՝ երբ կյանքից հեռացավ Մարտիրոս Սարյանը։ Եվ մեկ էլ հիմա՝ երբ Արամ Խաչատրյանի մահվան բոթը Մոսկվայից հասավ Երևան։

Ոչ մի նշանակություն չուներ՝ նրանք իրենց կյանքի վերջին տարիներին արժեքներ ստեղծում էին, թե ոչ։ Նրանց գոյությունն արդեն արժեք էր։ Զորսն էլ նահապետներ էին։ Ստեղծագործեին-չստեղծագործեին՝ կային, կային, իբրև աշխարհով մեկ հայտնի դարձած անուններ՝ բանաստեղծ, դերասան, նկարիչ և կոմպոզիտոր։ Նրանք մեծ արվեստագետներ չէին միայն։ Նրանք մի ամբողջ ժամանակաշրջան էին, խորհրդանիշ, իրենց բնագավառի դրոշը։

Նրանց մահով ասես բնագավառը մնում էր անհովիվ։

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՔԱՆ

Ըստ Ն. Կալասովայի

Բարուրի մեջ ամուր փաթաթված մանկիկը թեև կուշտ էր, բայց ոչ մի կերպ չէր հանդարտվում: Մի ձայնի ճչում էր, անհանգիստ շարժումներ անում: Չէին օգնում քնքուշ հորդորները, փաղաքուշ խոսքերը, մոր անուշ օրորոցայինը: Ծնողները չէին հասկանում փոքրիկի աղիողորմ լացի պատճառը: Գուցե բարու՞ր բացեն: Արձակեցին կապանքները, և նույն պահին երեխան լռեց ու խաղաղ փակեց աչքերը: Մայրը հասկացավ. նրան կաշկանդել չէր կարելի:

Այդ ըմբոստ մանկիկը Լյուդվիգ վան Բեթհովենն էր՝ ապագա հանճարեղ կոմպոզիտորը:

Այդ տարիներին Եվրոպայում թնդում էր պատանի հանճարի՝ Մոցարտի անունը: Բեթհովենի հայրը նախանձով էր լսում այդ զարմանահրաշ երեխայի հաջողությունների մասին և հացուրդ տալու համար իր փառասիրական նկրտումներին՝ ուզում էր որդուն դարձնել մի նոր Մոցարտ: Նա տեսնում էր տղայի բացառիկ ընդունակությունները և արգելում բացի երաժշտությունից որևէ այլ բանով զբաղվել: Լինում էին դեպքեր, երբ հարբած վերադառնալով տուն՝ արթնացնում էր երեխային և ստիպում նվագել:

Տաղանդավոր պատանու համար բախտորոշ եղավ հանդիպումը Մոցարտի հետ: Լսելով Բեթհովենին՝ համընդհանուր ճանաչում վայելող կոմպոզիտորը հայտարարեց.

– Ուշադրությու՛ն դարձրեք այս պատանուն: Նա բոլորին կստիպի խոսել իր մասին:

Բեթհովենը երաժշտության դասեր է վերցնում ժամանակի համբավավոր կոմպոզիտոր Հայդնից, միաժամանակ ստեղծագործում: Շուտով այնքան է հռչակվում, որ շատ ազնվականական տներից հրավիրվում է՝ դառնալու սալոնային երաժիշտ: Միշտ հավատարիմ իր ազատատենչ, ըմբոստ ոգու թելադրանքին՝ Բեթհովենը կտրականապես հրաժարվում է՝ նախընտրելով մնալ աղքատ, բայց չապրել որևէ մեկի հրամանի ներքո, չկատարել պատվեր, թելադրանք: Բնավորությամբ անկախ՝ նա սարսափում էր կաշկանդող, կախյալ վիճակից: Նույնիսկ գանգրացված կեղծամը, որ այն ժամանակ կրում էին մեծազարմ մարդիկ և արվեստագետները, Բեթհովենը դեն նետեց: Լինել ազա՛տ, ինքնիշխա՛ն, չխոնարհվե՛լ, մեջք չծռել, չշողոքորթել, – ահա նրա հավատամքը:

Մեծ կոմպոզիտորը հիացած էր ֆրանսիական հեղափոխության գաղափարներով և Նապոլեոն Բոնապարտով: Նա կարծում էր, թե Նապոլեոնը կդառնա հեղափոխական պայքարի հերոս և ժողովրդին կտանի ազգային-ազատագրական մարտերի: Ահա թե ինչու իր հռչակավոր երրորդ սիմֆոնիան անվանեց «Բոնապարտ»:

Խաբված զգաց Բեթհովենը, երբ լսեց, որ Նապոլեոնը իրեն կայսր է հռչակել:

– Հիմա նա կոտնահարի ժողովրդի իրավունքները, – որոտաց զայրացքին, – և իրեն բոլորից բարձր դասելով՝ կդառնա սովորական բռնակալ:

Նա պոկեց սիմֆոնիայի ընծայաթերթը, պատռեց և վերցնելով մի մաքուր թուղթ՝ գրեց. «Հերոսական սիմֆոնիա»: Կայսրը չէր կարող լինել նրա ստեղծագործության հերոսը: Հերոսը ժողովուրդն է:

Քանյոթ տարեկանում Բեթհովենին մեծ դժբախտություն պատահեց: Նա սկսեց խլանալ: Վիրահատությունները չօգնեցին, և հիվանդությունը վերջնականապես հաղթեց: Սակայն մեծ կոմպոզիտորը օժտված էր բացառիկ կամքով:

«Ես կբռնեմ ճակատագրի կոկորդից, և նա չի՛ կարող ինձ լիովին տապալել, - գրում էր բարեկամներին, - հաղթանակ՝ պայքարի միջոցով»:

Խուլ վիճակում նա հրաշքներ գործեց: Ներքին լսողությամբ գրեց իր և ընդհանրապես համաշխարհային երաժշտության ամենապայծառ էջը՝ «Իններորդ սիմֆոնիան»:

1824 թվականի մայիսի 7-ին Վիեննայի մեծ համերգասրահում ասեղ գցելու տեղ չկար: Անգամ աստիճաններն զբաղված էին: Առաջին անգամ կատարվելու էր Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիան»: Դիրիժորական նստակալի մոտ կանգնած էր ինքը՝ հեղինակը: Հանդիսականները գիտեին՝ կանգնած է նա ձևականորեն, առանց իրեն հեղինակ, ղեկավարել չի կարող: Չէ՞ որ խուլ է, չի լսում... Եվ իրոք, նրանից երեք քայլ հետ կանգնած էր իսկական նվագավարը: Ահա նա բարձրացրեց փայտիկը, և դահլիճը լցվեց հոգեպարար մեղեդիներով, անհավատալի՛, կախարդական, չլսված մեղեդիներով:

Քանդվում, դղրդում է դահլիճը ծափերից, սակայն թիկունքով կանգնած կոմպոզիտորը չի լսում, չի տեսնում ոտքի կանգնած հարյուրավոր մարդկանց հիացաքի գնահատականը: Այդ պահին նրան է մոտենում երգչուհիներից մեկը և բռնելով թևից՝ քնքշությամբ շրջում դեպի փոթորկվող սրահը: Ծափահարում էր դահլիճը, հոտնկայս ծափահարում էր կայսրը...

1827 թվականի գարնանը Բեթհովենը պառկած էր մահվան մահճում: Դրսում մոլեգնում էր գարնանային տարերքը, օձեղեն մտրակները թրատում էին երկինքը, ահազարհուր բախվում ամպերը: Հանկարծ զարմանալի բան կատարվեց. հոգեվարք ապրող կոմպոզիտորը բացեց աչքերը, ճիգով բարձրացավ և բռունցք ցույց տվեց երկնքին: Նա համակերպվել չէր ուզում: Հաղթանակ՝ միայն պայքարով: Եվ նա հաղթեց: Մահը ընկրկեց՝ տեղը զիջելով անմահությանը...

ՊԼԱՆ

1. Ըմբոստ մանչուկը:
2. Անուրախ մանկություն:
3. Ազատության տենչ:
4. Երրորդ սիմֆոնիան:
5. Խլություն և կամք:
6. Իններորդ սիմֆոնիան:
7. Հաղթանակ՝ պայքարով. անմահություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

քնքուշ հորդորներ, փաղաքուշ խոսքեր, աչխողորմ լաց, ժամեր տևող գինարբուք, համբավավոր կոմպոզիտոր, անուրախ մանկություն, գանգրացված կեղծամ, մեծապատիվ մարդիկ, ներքին լսողություն, հոգեպարար մեղեդիներ, փոթորկվող դահլիճ:

*2. Բացատրել **նկատում** բառի իմաստը:*

Խորհուրդ է տրվում դասաժամին լսել Բեթհովենի ստեղծագործությունները, հատկապես՝ Երրորդ, Հինգերորդ, Իններորդ սիմֆոնիաները, «Լուսնի սոնատ», «Ապասիոնատա» սոնատները:

Քսանյոթ տարեկանում Բեթհովենին մեծ դժբախտություն պատահեց: Նա սկսեց խլանալ: Վիրահատությունները չօգնեցին, և հիվանդությունը վերջնականապես հաղթեց: Սակայն մեծ կոմպոզիտորը օժտված էր բացառիկ կամքով:

«Ես կբռնեմ ճակատագրի կոկորդից, և նա չի՛ կարող ինձ լիովին տապալել, - գրում էր բարեկամներին, - հաղթանա՛կ՝ պայքարի միջոցով»:

Խուլ վիճակում նա հրաշքներ գործեց: Ներքին լսողությամբ գրեց իր և ընդհանրապես համաշխարհային երաժշտության ամենապայծառ էջը՝ «Իններորդ սիմֆոնիան»:

1824 թվականի մայիսի 7-ին Վիեննայի մեծ համերգասրահում ասեղ գցելու տեղ չկար: Անգամ աստիճաններն զբաղված էին: Առաջին անգամ կատարվելու էր Բեթհովենի «Իններորդ սիմֆոնիան»: Դիրիժորական նոտակալի մոտ կանգնած էր ինքը՝ հեղինակը: Հանդիսականները գիտեին՝ կանգնած է նա ձևականորեն, սոսկ իբրև հեղինակ, ղեկավարել չի կարող: Չէ՞ որ խուլ է, չի լսում... Եվ իրոք, նրանից երեք քայլ հետ կանգնած էր իսկական նվագավարը: Ահա նա բարձրացրեց փայտիկը, և դահլիճը լցվեց հոգեպարար մեղեդիներով, անհավատալի՛, կախարդակա՛ն, չլսված մեղեդիներով:

Քանդվում, դղրդում է դահլիճը ծափերից, սակայն թիկունքով կանգնած կոմպոզիտորը չի լսում, չի տեսնում ոտքի կանգնած հարյուրավոր մարդկանց հիացական դեմքերը: Վախենում է շրջվել, իմանալ իր երկարատև աշխատանքի արդյունքի գնահատականը: Այդ պահին նրան է մոտենում երգչուհիներից մեկը և բռնելով թևից՝ քնքշությամբ շրջում դեպի փոթորկվող սրահը: Ծափահարում էր դահլիճը, հոտնկայս ծափահարում էր կայսրը...

1827 թվականի գարնանը Բեթհովենը պառկած էր մահվան մահճում: Դրսում մոլեգնում էր գարնանային տարերքը, օձաձև կայծակները ճեղքում էին երկինքը, աղմկում, բախվում ամպերը: Հանկարծ զարմանալի բան կատարվեց. հոգեվարք ապրող կոմպոզիտորը բացեց աչքերը, ճիգով բարձրացավ և բռունցք ցույց տվեց երկնքին: Նա հանձնվել չէր ուզում: Հաղթանակ՝ միայն պայքարով: Եվ նա հաղթեց: Մահը ընկրկեց՝ տեղը զիջելով անմահությանը...

ՊԼԱՆ

1. Ըմբոստ մանչուկը:
2. Անուրախ մանկություն:
3. Ազատության տենչ:
4. Երրորդ սիմֆոնիան:
5. Խլություն և կամք:
6. Իններորդ սիմֆոնիան:
7. Հաղթանակ՝ պայքարով. անմահություն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

քնքուշ հորդորներ, փաղաքուշ խոսքեր, աղիողորմ լաց, ժամեր տևող գիններուք, համբավավոր կոմպոզիտոր, անուրախ մանկություն, ցանցրացված կեղծամ, մեծազարմ մարդիկ, ներքին լսողություն, հոգեպարար մեղեդիներ, փոթորկվող դահլիճ:

*2. Բացատրել **նկրտում** բառի իմաստը:*

Խորհուրդ է տրվում դասաժամին լսել Բեթհովենի ստեղծագործությունները, հատկապես՝ երրորդ, հինգերորդ, իններորդ սիմֆոնիաները, «Լուսնի սոնատ», «Ապասիոնատա» սոնատները:

ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Ըստ Պարույր Սևակի

(հատվածներ)

Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ: Էջմիածին:
Միրգ ու փոշի: Անխիղճ արև:
Շողամրցում Մասիսների, Արագածի:
Սրբագործված հին-հին քարեր:
Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
Հնչող,
Շնչող,
Կանչող զանգեր...
Եվ ճեմարան՝ մտքի կաճառ:

Ճեմարանի բակում արձակ,
Որտեղ էլ որ աչք ես ածում՝
Զարմանալի հավաքածու խոսվածքների, տարազների:
Ու բոլորի դեմքի վրա՝
Վա՛խ, սպասու՛մ, անքնությու՛ն,
Խոսուն հետքեր երազների:
Ամեն մեկը՝ մի գավառից,
Եվ բոլորը՝ դեռ աղվամազ:
Ամեն մեկը խիտ խավարից՝
Երազում է լույսի մի մաս,
Նույնն է ուզում.
Ուսու՛մ, ուսու՛մ...

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,
Հագին տարազ տաճկահայի.
Կարմիր չալիկ, կանաչ վարտիք՝
Վրան պնդած մազե գոտիկ,
Նախշուն գուլպա՝ վրան զոլեր
Ու պոչավոր մաշված սոլեր:
Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ քիլ՛ր-ցոլ՛ր...

Ամենքն իրար մոտիկ-մոտիկ,
Իսկ նա՝ անվերջ մեն ու մենակ:
Թե զարնեին սրտին դանակ՝
Մի պուտ արյուն դուրս չէր հոսի:
Ո՛նց չմնա նա մեկուսի,

Ո՞նց խառնվի, առ-խոսի,
Թե... հայերեն վատ է խոսում:
Բայց նա, մեկ էլ աստված գիտի,
Թե ինքն ինչպե՜ս, ոնց է ուզում
Ուսու՜մ, ուսու՜մ:

Սակայն նրան
Ո՞վ կընդունի, այն էլ... որտե՜ղ -
Մի հոգևոր ուսումնարան,
Որի սանը մի օր պիտի
Հագնի աքեմ վարդապետի:
Իսկ նա...
Եվ նա վաղը պիտի
Երգի ի լուր և ի վճիռ
Համայն Հայոց Հայրապետի...

* * *

Եվ նա սկսեց... թուրքերեն երգել:

Մանկական ձայնը՝ սկզբում կերկեր,
Վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ,
Հունի մեջ մտավ
Ու գնա՜ց-գնաց:
Կաթողիկոսը մթագնեց մնաց:
Մինչ հանկարծահաս զայրույթի ծնած
Կրակը վառվեց ծեր աչքերի մեջ՝
Հենց նոր սկսվող
Ժպիտը հանգավ:
Առաջի՜ն անգամ,
Առաջի՜ն անգամ
Ա՜ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,
Սրբապղծորեն թուրք երգ է մխում...
Ա՜ստ՝ Հայոց հոտի այս սուրբ փարախում,
Հովվապետն ինքը ականջ է կախում
Ինչ-որ մի մանկան անօրեն երգի...
Ա՜ստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի՝
«Հայր մեր», «Միայն սուրբ»,
«Արեգակն արդար»,
«Ով զարմանալի»
Կամ «Խորհուրդ խորին»,
Ուր գրաբարն է հնչել դարեդար,
Եվ շարականն է հուզել բոլորին, -
Ա՜ստ՝ Վեհարանի հին պատերի մեջ,

Առաջի՜ն անգամ,
Առաջի՜ն անգամ
Սրբապղծության մամանեխ ընկավ...
Բայց Վեհափառը իր վեհ դերի մեջ
Ինչպես վայել է՝ անայլայլ մնաց:
Իսկ մանկան ե՜րգը... Թափ առավ գնաց:
Գնա՜ց-բարձրացա՜վ,
Եկա՜վ-ցածրացա՜վ,
Քարեքար ընկավ, պատեպատ խփվե՜ց,
Եվ հետո կրկին պոկվե՜ց ու գնա՜ց,
Մի վայրկյան օդում կախ ընկավ մնաց,
Մի անտես թելով կարծես թե կապվեց
Եվ մի պահ հետո հանկարծ ցած թափվեց.
Թափվեց՝ նշենու ծաղկաթերթի պես,
Հին վանքի ծեփի ճաքած չերտի պես...

Բառե՜րը... եղու՜կ: Իսկ ձա՜յնը... զուլա՜լ,
Այդպես լեռնային վտակն է կարող
Քարերի վրա ծիծաղել ու լալ:
Բառե՜րը... եղու՜կ: Իսկ ձա՜յնը... գերո՜ղ.
Մերթ բողոքում է ու գանգատ անում,
Մերթ դառնում այնպես վսեմ ու բարի,
Կարծես հինավուրց այս Մայր Տաճարի
Երկինք խոյացած գանգակատնում
Կախել են մի նո՜ր, անլեզվա՜կ մի զանգ՝
Մի համակ հուզմունք...

Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թվաց՝ երկինքն է կապույտ ծիծաղում,
Թվաց, թե չոգը հանկարծ կոտրվեց,
Թվաց, թե մի հին երդում կատարվեց...

Կաթողիկոսը մի պահ մոռացավ,
Թե ինքը որտե՞ղ և ի՞նչ է անում,
Ովքե՞ր են շուրջը՝ իր Վեհարանում, -
Եվ այդքանի մեջ,
Ասես քնի մեջ,
Նա դանդաղ ժպտաց
Աչքերով իր թաց:
Հետո ժպիտը սկսեց հալվել
Ու հետզհետե անհետ վերացավ,
Մինչդեռ աչքերի թացն ավելացա՜վ,
Թացն ավելացա՜վ ու ավելացա՜վ...

Փղձկացող վեհը հազիվ բարբառեց.
- Որդյա՛կ իմ, ո՛րբ իմ...
Ու ձայնը մարեց...

Եվ վարանումից, վեհերից հետո
Իբրև եզակի մի բացառություն,
Կանոնագրքի խիստ զանցառություն,
Անհայտ օրենքի չգրված կետով
Լո՛կ ձայնի՛ համար
Համարվեց նա սան:

ՊԼԱՆ

1. Ութսունմեկ թիվ: Վաղարշապատ:
2. Ճեմարանի բակում:
3. Փոքրիկ տաճկահայը:
4. Խառնաշփոթ հոգեվիճակ:
5. Թուրք երգ՝ սրբասուրբ տաճարում:
6. Մանկան երգը:
7. Ճեմարանի սանը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

անխիղճ արև, հնչող, շնչող, կանչող զանգեր, զարմանալի հավաքածու խոսվածքների, տարազների, խիտ խավար, տաճկահայի տարազ, կարմիր շապիկ, կանաչ վարտիք, մազե գոտի, նախշուն գուլպա, պոչավոր մաշված սոլեր, հոգևոր ուսումնարան, մթագնել, վեհարանի հին պատեր, ոսկի մեղեդիներ՝ «Հայր մեր», «Միայն սուրբ», «Արեգակն արդար», «Ով զարմանալի», «Խորհուրդ խորին», շարական, սրբապղծության մանանեխ, լեռնային վտակ, երկինք խոյացած զանգակատուն, անլեզվակ մի զանգ, եզակի բացառություն:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ ԵՎ ԵՂԵՎ ԽԱՎԱՐ...

Ըստ Լ. Հախվերդյանի և Ա. Արիստակեսյանի

Մեծ անհատների մահը նույնպես ստեղծագործություն է և նման է իրենց: Այս միտքը լավագույնս հաստատել է Պարույր Սևակը, որ իր մահը երգել, իմաստավորել և կարծես ծրագրել էր պատանի հասակից ու այդպես երիտասարդ մեռավ՝ գրածը հաստատելու համար:

Ողբերգական բնավորություն էր Պարույրը, ունեցավ նաև ողբերգական վախճան: Համարձակ, ուղղամիտ, անողոքության հասնող ճշմարտախոս, դարի ճակատին նրա արատները կրքոտ կերպով նետող մեծ բանաստեղծին երևի չէր էլ սազի անկողնում հանգիստ մահանալ:

Դժբա՞խտ եղավ նա: Երբե՛ք: Դեռևս շա՛տ երիտասարդ՝ տեսավ իր առասպելվելը, որ չի վիճակվում հազարից մեկին, պաշտվեց այնպես, ինչպես հեթանոս աստվածներն էին պաշտվում, խնկարկվեց ու սիրվեց սրտաբու՛խ, ժողովրդի խորքերի՛ց ալիքվող սիրով: Մագնիսի ուժով այնքա՛ն դեպի ինքը ձգեց մարդկանց, որ հետո նրանցից օձիքն ազատելու համար ապավինեց հեռավոր գյուղական տանը: Դար-

ձյա՛լ չեղավ: Այդ հրաբո՛ւխը, այդ բո՛ցը, այդ անկիրթելի խարույկն ու տոչորվող հոգին ոչ մի կերպ չպատվեց իրեն հևիհև հետապնդող փառքից:

Ի վերուստ Պարույրին տրված չէր համակերպվելու և հանգիստ ապրելու կարողություն: Այրվում էր նա ներքին բոցերից ու ժայթքում մաքրագործող հեղեղի պես: Որքա՜ն դիպուկ է գրել. «... Թե արյանս լուցկի մոտեցնես, արյունս նույնպես... կարող է վառվել...»:

Պարույրն իր նուրբ էությամբ, բոլոր նյարդերով զգում էր դարի ոգին, կարդում մարդկանց խեղաթյուրված հոգիները, ատում կեղծիքի ու ստի վրա խարսխված պետական համակարգը: Այդ ամենը զգում և տեսնում էին նաև ուրիշները: Տարբերությամբ, որ Պարույրը չէ՛ր լռում, չէ՛ր հանդուրժում, չէ՛ր զգուշանում: Բացի նրանից էլ ո՞վ կհամարձակվեր ցասումով ասել. «Հանեցե՛ք ձեր դիմակները: Ուշացումի ամե՛ն պահից Իմ վիճակը ձեր փոխարեն լրջանում է, Որովհետև ինձ է տրված, դժբախտաբար, Հիշեցնել ձեզ վերըստին ու վերջապես, որ ուշացած արթնացումը կնմանվի մի պայթյունի՛, Որից հետո Լռությունն ու Փոշին պիտի գոտեմարտեն Զգոյության գահի համար...»: Ամենքը՝ բանաստեղծ թե ոչ բանաստեղծ, մտածում էին, բայց Պարույրի՛ն էր տրված ասել. «Թողությու՛ն տուր, Տե՛ր, ծանր խավարին, Միայն թե թող Նա թողնի հեռանա: Թող ծառերն անգամ (առանց և քամու), Հարգանքով նրա առջև կռանան, Միայն թե թող Նա թողնի հեռանա: Մենք պահանջ չունենք, Մենք գոհ ենք նույնիսկ, Միայն թե թող Նա թողնի հեռանա...»:

Իրականությունը մարդկանց զրկել էր անկաշկանդ մտածողությունից ու խոսքից, և միայն Պարույրին էր վիճակված գոչել. «Կարելի չէ՞, Հա՛յր Սուրբ, որ ոտքերը, Գեթ ոտքերը լինեն ինքնագլուխ, Գեթ ոտքերը, Հա՛յր Սուրբ, ո՛չ գլուխը... Թե՞ մեծ մեղք է դա էլ...»:

Մարգարե՛ էր Պարույր Սևակը, պայծառատե՛ս: Նա գիտեր, դեռ պատանությունի՛ց էր կանխորոշել իր կյանքի ուղին: Այլապես ինչո՞վ բացատրել, որ միշտ ունեցել է ոչ միայն ժամանակից շուտ, այլև ոչ բնական մահով մեռնելու ներքին տագնապ. «...Միամիտ եմ դառնում այնքան, Հավատում եմ արդարության, Ու թվում է, թե ես պիտի իմ... բնական մահով մեռնեմ...»:

Ի՞նչն էր դրդել դեռ պատանի Պարույրին իր «Աղոթքներում» գրելու. «Կմեռնեմ անդարձ ու կտանեմ այն, ինչ պարգև էի ստացել քեզնից...», ի՞նչն էր ստիպել, որ 1957-ի հունիսի պայծառ ու երջանիկ օրերին հպարտանա իր «...մկրատված կյանքի միջով...»: Ինչպե՞ս էր կանխագուշակել, որ իր կյանքը պիտի մկրատվի:

Բանաստեղծական մի շարք պատկերներում Պարույրը ավելի որոշակի, շոշափելի է գուշակում իր մահը. «Գուցե վթարվե՞լ մեքենայի պես - Մաշվում եմ անվերջ»: «Իսկ այս հուշե՛րը... Ինչու՞ չեն կարող հանկարծ ենթարկվել ավտոաղետի»: Անհավատալի՛ տողեր. «Մարդ պիտի մեռնելու էլ բախտ ունենա, ուր մնաց թե ապրելու: Որովհետև կա նաև սպանվել - Հիմար մահով՝ մեքենայի վթարից»:

Մարգարեացող Սևակը հետապնդվում էր մահվան գաղափարից, բայց և Արարչին կարծես աղերսում. «... Թող որ մեռնեմ հուր-կայծակից, միանգամի՛ց, մի վայրկյանում, հանկարծակի...»: Մի ուրիշ դեպքում՝ «Ինչ լինում է, թող որ լինի միանգամի՛ց»:

1971 թվականի հունիսի 3-ին, երբ Հայաստանի գրողների միության համագումարում կարդում էին այն անձանց անունները, ովքեր պիտի մեկնեին միութենա-

կամ Համագումարի, Պարույրը խնդրեց հանել իր թեկնածությունը՝ ասելով. «Ես ֆիզիկապես ի վիճակի չեմ լինի մասնակցելու»: Ո՞ւմ մտքով կանցներ, որ Պարույրի շուրթերով ինքը՝ ճակատագիրն է խոսում, բանաստեղծին ճիշտ երկու շաբաթ՝ տասնչորս օր էր մնացել ապրելու...

1971 թվականի հունիսի 17-ը արևոտ ու պայծառ էր: Ամեն օրվա նման բացվեց առավոտը հայրենի գյուղի վրա: Պարույրը, որ դեռ նոր էր գնել ավտոմեքենան և դեռ անվարժ էր, խնդրեց գյուղի վարորդին իրեն շտապ Երևան հասցնել:

- Կարող եմ միայն մեկ ժամից, - չմերժեց վարորդը:

Պարույրին ո՞վ էր տվել այդքան համբերություն:

- Փորձեմ մեքենան դուրս բերել ավտոտնակից, - ասաց կնոջը: - Եթե առանց դեսուդեն դիպցնելու հանեցի, ուրեմն գնու՛մ ենք:

Մեքենան դուրս բերեց շատ հաջող:

Վիճակը գցված էր: Այլևս ոչ մի ուժ Պարույրին հետ պահել չէր կարող:

Ժամը 12-ին քառորդ պակաս բացվեցին այգու դարպասները, և ավտոմեքենան սուրաց բանաստեղծի սիրած վայրերով: Անցան ճանապարհի դժվար մասը՝ կեռմաններն ու ոլորանները: Սկսվեց լայն մայրուղին, որ ձգվում է հարթ վայրերով: Թվում է՝ հաղթահարված է վտանգը, այլևս ոչինչ չի կարող պատահել: Բայց... պատահում է ոչ սովորականը՝ աղետը հարթավայրում, պատահում է անհավատալին: Մեքենան մի քանի պտույտով գահավիժում է ձորը... «Հե՛յ գիտի, ծովերից անցա ու հանկարծ խեղդվեցի... առվում», - ակամա մտաբերում ես իր՝ Սևակի խոսքերը: «Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է: Ա՛խ, երանի թե ես այնպես մեռնեմ, Որ դու... ինձ սգաս...», - դիմել է Պարույրը հայրենիքին մահից տասը տարի առաջ:

Այդպես էլ եղավ:

Չէր եղել դեպք, որ հայրենիքը այնպես սգար իր զավակի մահը, ինչպես սգաց Պարույրինը:

Պարույրը ապրեց հպարտ ու մեռավ հպարտ:

Կյանքով էլ, մահվամբ էլ հավատարիմ եղավ իրեն՝ իր կրքոտ, անհագ, անհամբեր, անկասելի բնավորությամբ: Մնաց այնպիսին, ինչպիսին մայր բնությունն էր ստեղծել: Եվ կնքեց իր մահկանացուն, ինչպես իր խառնվածքը կամեցավ: Մեծադժվար վարք, հերոսի վարք ու վարքագիծ՝ կյանքի ու գործի միասնությամբ: Դա հնարավոր դարձրեց, որ ի կատար ածվի Պարույրի մյուս մարգարեությունը ևս. «Ու գալու է մի ժամանակ, Երբ պիտի մարդիկ մերպեսներին երկրպագեն՝ Ո՛չ կուռքի պես, Ո՛չ էլ աստծու, Այլ... հերոսի՛...»:

Այդպես էլ եղավ:

ԱՆՀՆԱՐԻՆ Է...

Ցուրաքանչյուր մահ անակնկալ է, անհավատալի և սակայն հոգեկան առաջին ցնցումից ու կաթվածից հետո եթե ոչ սրտով, ապա գոնե ուղեղով հավատում կամ ստիպում ես քեզ հավատալ կատարվածին...

Բայց ա՛յս մահը, Պարույրի՛, Սևակի՛, Պարույր Սևակի՛, երիտասարդ, կրքոտ, այրող ու այրվող մարդու, բանաստեղծի ու ընկերոջ մահը, որի հետ համարյա երեսուն տարի նույն օդն ես շնչել, նույն հացը կիսել, հուզվել նույն հուզմունքով, ապրել նույն խոհերով, ատել նույնը, սիրել նույնը, եղել ես ոչ միայն գրչակից, այլև սրտակի՛ց, մտքակի՛ց, համախոհ ու համահույզ... (եթե նույնիսկ երբեմն հեռու լինեինք հազարավոր կիլոմետրերով ու նույնքան դարերով): Հավանաբար իսկապե՛ս Աստված չկա, որովհետև եթե լիներ այդ եղյալ ու չեղյալ արարիչը, ապա պիտի գոնե Մեծին Մեծ մահ տար, վսեմ ու խորհրդավոր մահ, Սևակին ու նրա մեծ ծիրքին ու կրքին արժանի մահ, բայց այսպիսի մահ, հենց այնպես, մի քանի րոպեում, ինչ-որ ավտոմեքենայի ինչ-որ վթարից, որպիսի՜ դաժան կատակ ու անհեթեթություն:

Անհնարի՜ն է, անտանելի՛, անհանդուրժելի՛, անիմա՛ստ, անհարի՛ր, ան...

Ես հիշում եմ բանաստեղծ Պարույր Սևակին՝ նրա բանաստեղծանալու առաջին օրից ու ժամից, երբ արդեն «Նախաշավիղի» 21-22 տարեկան հեղինակ՝ լսեցի Զանգեզուրի գյուղից եկած 17-18-ամյա մի պատանու՝ Պարույր Ղազարյանի մասին:

... Այն ժամանակ՝ 1943 թե 44 թվականին, ինձ բերեցին դեռևս պատանի Պարույր Ղազարյանի առաջին թոթովանքները, ո՛չ, առաջին իսկ արդեն հասուն, վավերական, իսկական բանաստեղծությունները՝ գրված ինչ-որ վատորակ թղթի վրա, տպագրված հաշվապահական երկար մատյանի էջերում (որտեղի՞ց էր ճարել, չգիտեմ, պատերազմ էր, թուղթ չկար): Ցնցեցին, և իսկույն գրեցի այդ օրը իմ հայտնաբերած պատանի բանաստեղծին նվիրված մի ոտանավոր, որը սկսվում էր այսպես.

Ծակատն եմ համբուրում սրա
Աստված է մանուկն այս, իրավ...

* * *

... Անհավատալի՛, անհեթե՛թ, անհնարի՛ն... Մեծ դաշնիծում նրա (հավատու՞մ եք, Պարույրի՛, Սևակի՛) դագաղն էր, ծաղիկնե՛ր, պսակնե՛ր, պատվո պահակ. հոսանքն ու սգածայն պատարագ, հեծկլտանք, դեպի նրա հայրենի տունն ու գյուղը ձգվող սգո թափոր, տան բակում իր իսկ ձեռքով տնկած ծառերի ստվերում փորված շիրիմ:

Չհանդիպե՛մ ու չտեսնե՛մ նրան կրքոտ վիճելիս, վայրագորեն ծխելիս, բորբոքվելիս ու քնքշանալիս, անհաշող հրդելիս ու անզգուշ ձևով պարելիս, չհանդիպեմ նրա նոր սերերին, իմաստուն ու կրքոտ հոդվածներին, բանաստեղծություններին, գրքերին... Անհնարի՛ն է:

Այո՛, չի՛ կարող պատահել, որ այդ ամենը չլինի, որովհետև ինչքան էլ շատ, նույնիսկ չափազանց շատ լինի Պարույր Սևակի տվածն ու թողածը, միևնույն է, նա իր

ԱՆՀՆԱՐԻՆ Է...

Յուրաքանչյուր մահ անակնկալ է, անհավատալի և սակայն հոգեկան առաջին ցնցումից ու կաթվածից հետո եթե ոչ սրտով, ապա գոնե ուղեղով հավատում կամ ստիպում ես քեզ հավատալ կատարվածին...

Բայց ա՛յս մահը, Պարույրի՛, Սևակի՛, Պարույր Սևակի՛, երիտասարդ, կրքոտ, այրող ու այրվող մարդու, բանաստեղծի ու ընկերոջ մահը, որի հետ համարյա երեսուն տարի նույն օդն ես շնչել, նույն հացը կիսել, հուզվել նույն հուզմունքով, ապրել նույն խոհերով, ատել նույնը, սիրել նույնը, եղել ես ոչ միայն գրչակից, այլև սրտակի՛ց, մտքակի՛ց, համախոհ ու համահույզ... (եթե նույնիսկ իրարից հեռու լինեինք հազարավոր կիլոմետրերով ու նույնքան դարերով): Հավանաբար իսկապե՛ս Աստված չկա, որովհետև եթե լիներ այդ եղյալ ու չեղյալ արարիչը, ապա պիտի գոնե Մեծին Մեծ մահ տար, վսեմ ու խորհրդավոր մահ, Սևակին ու նրա մեծ ձիրքին ու կրքին արժանի մահ, բայց այսպիսի մահ, հենց այնպես, մի քանի րոպեում, ինչ-որ ավտոմեքենայի ինչ-որ վթարից, որպիսի՛ դաժան կատակ ու անհեթեթություն:

Անհնարի՛ն է, անտանելի՛, անհանդուրժելի՛, անիմա՛ստ, անհարի՛ր, ան...

Ես հիշում եմ բանաստեղծ Պարույր Սևակին՝ նրա բանաստեղծանալու առաջին օրից ու ժամից, երբ արդեն «Նախաշավիղի» 21-22 տարեկան հեղինակ՝ լսեցի Զանախչի գյուղից եկած 17-18-ամյա մի պատանու՝ Պարույր Ղազարյանի մասին:

... Այն ժամանակ՝ 1943 թե 44 թվականին, ինձ բերեցին դեռևս պստանի Պարույր Ղազարյանի առաջին թոթովանքները, ո՛չ, առաջին իսկ արդեն հասուն, վավերական, իսկական բանաստեղծությունները՝ գրված ինչ-որ վատորակ թղթի վրա, տպագրված հաշվապահական երկար մատյանի էջերում (որտեղի՞ց էր ճարել, չգիտեմ, պատերազմ էր, թուղթ չկար): Ցնցեցին, և իսկույն գրեցի այդ օրը իմ հայտնաբերած պատանի բանաստեղծին նվիրված մի ոտանավոր, որը սկսվում էր այսպես.

Ծակատն եմ համբուրում սրա
Աստված է մանուկն այս, իրավ...

* * *

... Անհավատալի՛, անհեթե՛թ, անհնարի՛ն... Մեծ դահլիճում նրա (հավատու՞մ եք, Պարույրի՛, Սևակի՛) դագաղն էր, ծաղիկնե՛ր, պսակնե՛ր, պատվո պահակ. հուսահատ ու սգաձայն պատարագ, հեծկլտանք, դեպի նրա հայրենի տունն ու գյուղը ձգվող սգո թափոր, տան բակում իր իսկ ձեռքով տնկած ծառերի ստվերում փորված շիրիմ:

Ջհանդիպե՛մ ու չտեսնե՛մ նրան կրքոտ վիճելիս, վայրագորեն ծխելիս, բորբոքվելիս ու քնքշանալիս, անհաշիվ երգելիս ու անզերազանց ձևով պարելիս, չհանդիպեմ նրա նոր սերերին, իմաստուն ու կրքոտ հոդվածներին, բանաստեղծություններին, գրքերին... Անհնարի՛ն է:

Այո՛, չի՛ կարող պատահել, որ այդ ամենը չլինի, որովհետև ինչքան էլ շատ, նույնիսկ չափազանց շատ լինի Պարույր Սևակի տվածն ու թողածը, միևնույն է, նա իր

հետ տարավ ավելին, քան թողել է, և անըմռնական է, անհեթեթ. որ նա, նրա պես չուայլ տաղանդը այդ ամենը պահեր իրեն, տաներ իր հետ, ժամավաղ՝ ու՞ր տաներ և ինչու"...

Այո՛, անհավատալի, անհնարին է այդ ամենը, ուստի և այսօր կամ վաղը, ինչ էլ տեղն ու անեն, եկեք չհավատանք այդ Անհնարինին, հե՛տ վանենք մեզանից այդ մղձավանջը, որն անկասկած կանցնի, կցրվի:

Չհավատանք ոչ միայն սրտով, այլև մտքո՛վ, ուղեղո՛վ և անեծքի ու աղոթքի պես մրմնջանք.

- Թող չլինի՛, թող կորչի՛, թող չմոտենա՛ն նրան, նրա կյանքին ու հիշատակին մահն ու խավարը, և թող ելիցի՛ լույս՝ լույսը նրա պոեզիայի անմահության ու փառքի՝ այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՐՄԱՆՑ

ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՍԵՎԱԿ ԱՆՈՒՆ ...

Այն էլ զգացի, ցավո՛վ զգացի,
Որ կորվելուց հետո է միայն
Երևում ծառի բուն հաստությունը...
Պարույր Սևակ

Նախանձեցի՛ն...
Աստվածները նախանձեցին
Ու խանձեցին որթատունկը մեր քերթության,
Անմահ բառի ու դպրության
Ողկույզներով իր ծանրաբեռն,
Որ ելնում էր հավետուշեղ
Անմահության ծառն ի վեր...

Եվ որքա՛ն դեռ պիտի սպասենք,
Ասե՛ք, ասե՛ք,
Որ գա նորեն, ծնվի նորից
Այր մի սևաչ ու սևորակ՝
Բորբ անունով Պարույր Սևակ...
Դու խելոք խենթ, տագնապ ու տենդ խռովահույզ,
Մգլոտ ու հին թումբեր քանդող վարարուն գետ,
Նորը փնտրող դու կիրք ու հույզ,
Դու սևաչյա՛, սևագանգուր Սևա՛կ Պարույր...

Աստվածները նախանձեցին...
Նախանձեցին ու խլեցին այն բանալին,
Որ մեր բախտի դուռն էր բացում,

Հետ տարավ ավելին, քան թողել է, և անբնական է, անհեթեթ, որ նա, նրա պես շռայլ տաղանդը այդ ամենը պահեր իրեն, տաներ իր հետ, մանավանդ՝ ու՞ր տաներ և ինչու՞...

Այո՛, անհավատալի, անհնարին է այդ ամենը, ուստի և այսօր կամ վաղը, ինչ էլ ասեն ու անեն, եկեք չհավատանք այդ Անհնարինին, հե՛տ վանենք մեղանից այդ մղձավանջը, որն անկասկած կանցնի, կցրվի:

Չհավատանք ոչ միայն սրտով, այլև մտքո՛վ, ուղեղո՛վ և անեծքի ու աղոթքի պես մրմնջանք.

- Թող չլինի՛, թող կորչի՛, թող չմոտենա՛ն նրան, նրա կյանքին ու հիշատակին մահն ու խավարը, և թող եղիցի՛ լույս՝ լույսը նրա պոեզիայի անմահության ու փառքի՝ այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՐՄԱՆՏ

ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՍԵՎԱԿ ԱՆՈՒՆ ...

Այն էլ զգացի, ցավո՛վ զգացի,
Որ կտրվելուց հետո է միայն
Երևում ծառի բուն հասակությունը...
Պարույր Սևակ

Նախանձեցի՛ն...
Աստվածները նախանձեցին
Ու խանձեցին որթատունկը մեր քերթության,
Անմահ բառի ու դպրության
Ողկույզներով իր ծանրաբեռն,
Որ ելնում էր հավետուղեղ
Անմահության ծառն ի վեր...

Եվ որքա՜ն դեռ պիտի սպասենք,
Ասե՛ք, ասե՛ք,
Որ գա նորեն, ծնվի նորից
Այր մի սևաչ ու սևորակ՝
Բոցե անունով Պարույր Սևակ...
Դու խելոք խենթ, տագնապ ու տենդ խռովահույզ,
Մգլոտ ու հին թումբեր քանդող վարարուն գետ,
Նորը փնտրող դու կիրք ու հույզ,
Դու սևաչյա՛, սևագանգուր Սևա՛կ Պարույր...

Աստվածները նախանձեցին...
Նախանձեցին ու խլեցին այն բանալին,
Որ մեր բախտի դուռն էր բացում,

Երգը մեր հին նորոգում էր ու թարմացնում:
Եվ որքա՜ն դեռ պիտի սպասենք,
Որ գա՛ս նորեն, ծնվե՛ս նորից,
Դու նոր բառի ստեղծարար, կախարդող ուժ,
Դու բանալին մեծ անելի՝
Խորախորհուրդ մեր պատմության, սրտի՛, հոգու ու դպրության:
Դու մեր քնած բախտի զանգակ,
Օ՛, դու ա՛յր մի, խե՛նթ մի, տե՛նդ մի,
Սևագանգուր ու սևորակ,
Բոբ անունով Պարույր Սևակ...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՍԵԼ ԵՆ...

Անցած տարիները բավական քիչ են, որպեսզի սպիանա այնպիսի մի վերք, ինչպիսին Պարույր Սևակի ողբերգական կորուստն է: Այն ստորերկրյա ցնցման պես ճեղք տվեց ամբողջ հայության սրտում Սփյուռքից մինչև Հայաստան և դեռ մխում է ու մխում:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Դուն այնտեղ ես՝ հայ ժողովուրդի սիրտին ներս ու մեր գրականության գանձարանին մեջ: Դուն՝ «Անլռելի զանգակատուն» ու «Սայաթ-Նովա», դուն՝ «Եռաձայն պատարագ», դուն՝ անկրկնելի, դուն՝ անլռելի, դուն՝ անմոռանալի ու անկորչելի՝ այժմ և միշտ հավիտյանս հավիտենից:

ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐՅԱՆ

Մեր պարտքն է մասունք առ մասունք հավաքել, ամբողջացնել անգիր Սևակի առօրեական և աստվածային կերպարը և հանձնել սերունդներին:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒԺԸ

Ըստ Վլադիմիր Վարդանյանի

Էջմիածնի ճեմարանի երաժշտության ուսուցիչ Կոմիտաս աբեղան երազում էր մեկնել Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու: Բայց ո՞վ պիտի միջոցներ տրամադրեր, ո՞վ պիտի հոգար ուսման ծախսը:

Միակ մարդը, որից կարելի էր օգնություն հուսալ, կաթողիկոս Խրիմյան Հայրիկն էր:

Լինելով մեծ մտքի և պայծառ հոգու տեր, գնահատելով երիտասարդ աբեղայի բացառիկ ընդունակությունները՝ վեհափառը հայ մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանցին խնդրեց լինել նրա բարերարն ու հովանավորը: Համաձայնությունը կայացավ, և 1896 թվականին 27-ամյա Կոմիտասը ժամանեց Բեռլին:

Գերմանիայի մայրաքաղաքի բարձրագույն երաժշտական դպրոցի ռեկտոր Յոզեֆ Յոախիմը իր առանձնասենյակում քննում էր արևելցի հոգևորականին: Ռիթմի անբասիր զգացողությունը, բարդ երաժշտական կտորների մեղեդային գծի ճշգրիտ վերհիշումը, արագ ըմբռնումը և ձայնային արտակարգ հնարավորությունները խոսում էին ապագա ուսանողի առատաբուխ տաղանդի մասին:

Կոմիտասի հետ սկսեց պարապել անվանի երաժիշտ, պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտը: Երիտասարդի ընդունակությունները փայլուն էին, բայց կարո՞ղ էր քսանյոթ տարեկանում դաշնամուր նվագել սովորել: Չէ՞ որ մատներն արդեն կորցրել էին այնքա՜ն անհրաժեշտ ճկունությունը:

Բայց Կոմիտասը համառ էր. պարապում էր օր ու գիշեր, աշխատում երաժշտական յուրաքանչյուր կտորի վրա, դարձյալ հետ դառնում, կրկնում, ինքն իրեն ուղղում, շտկում:

Բեռլինի երաժշտական հարուստ ու բազմազան աշխարհը կլանեց Կոմիտասին: Ամեն ինչ նոր էր նրա համար, զարմանալի և ուսանելի: Պրոֆեսոր Շմիդտը օգնեց նրան դառնալու օպերային թատրոնի խմբերգիչ: Կոմիտասը և՛ երգում էր, և՛ ունկնդրում աշխարհահռչակ մեներգիչներին, նվագախմբերին:

Երբ ուսանողական առաջին տարին ավարտվեց, Կոմիտասի առաջադիմությունը ապշեցրեց ուսուցչին: Մեկ տարվա ընթացքում նա ձեռք էր բերել այնքան, որքան ուրիշները չէին կարողանում յուրացնել վեց տարում: Գիտելիքներն այնքան հիմնավոր ու հարուստ էին, որ երկրորդ տարվա սկզբին նա երաժշտանոց մտավ միաժամանակ որպես ուսանող և դասախոս: Զեկուցումներ էր կարդում արևելյան երաժշտության մասին, շարունակում ուսումնառությունը Շմիդտի մոտ, մասնակցում մեկ այլ նշանավոր հաստատության՝ Բեռլինի արքայական համալսարանի երաժշտական բաժնի դասընթացներին:

1899 թվականին Գերմանիայի մայրաքաղաքում հիմնվեց Միջազգային երաժշտական ընկերությունը, որի անդամներն արդեն ճանաչում և բարձր էին գնահատում Կոմիտասին: Նրան հրավիրեցին դասախոսություն կարդալու հայոց ժողովրդական և հոգևոր երաժշտության մասին: Մեծահամբավ երաժշտագետ, Բեռլի-

նի արքունական համալսարանի պրոֆեսոր Օսկար Ֆլայշերը այսպես գրեց դասախոսության մասին. «Միջազգային երաժշտական ընկերության սրահում Կոմիտասի կարդացած դասախոսությունը մեզ համար կմնա անմոռանալի: Առաջին անգամ էր Բեռլինում այդպիսի գիտական, մասնագիտական բարձրարժեք խոսք հնչում, որ գուցե մինչ այժմ Փարիզի աշխարհանդեսներում էլ չի լսվել»:

Մեկ ամիս հետո դասախոսությունը կրկնվեց մայրաքաղաքի երաժշտասեր հասարակության համար: Կոմիտասը ոչ միայն մատուցում էր նյութը, այլ իր հոգեթով ձայնով կատարում հայ ազգային երգերը:

Ջեկուցման ավարտից հետո Կոմիտասին շրջապատել էին ընկերներն ու անծանոթ ունկնդիրները: Շրջապատողների օղակը ճեղքելով՝ մոտեցավ օպերային թատրոնի տնօրենը և անսովոր ջերմությամբ ափերի մեջ առած Կոմիտասի ձեռքը՝ փայլուն գնահատականներից հետո ասաց.

- Ահա այն բարիտոնը, որ կարող է փառք բերել իմ թատրոնին: Ձեզ, պարո՛ն Կոմիտաս, առաջարկում եմ բարձր աշխատավարձ:

Համոզված, որ առարկություն չի լինի, նա գործնական շարժումով մեկնեց ձեռքը: Կոմիտասը հարգանքով ու սիրով սեղմեց իրեն պարզված աջը և հստակ գերմաներենով ասաց.

- Շա՛տ, չափազանց շատ զգացված եմ, գերազնի՛վ պարոն: Շնորհակալություն եմ հայտնում ձեր թատրոնին, որ ինձ համար երեք տարի դպրոց է եղել: Բայց պետք է մերժեմ ձեր այնքան հաճելի առաջարկը, որովհետև իմ երգչական կարողությունները միայն մեկ նպատակի են ծառայելու՝ հայրենիքիս ու ժողովրդիս:

Բազմաթիվ անվանի մարդկանցից շնորհավորանքի նամակներ ստացավ Կոմիտասը, ընտրվեց Միջազգային երաժշտական ընկերության անդամ, առաջարկեցին դասավանդել Բեռլինի երաժշտանոցներում: Ապարդյու՜ն: Այդ ամենը ոգևորում էր նրան, բայց հոգին շտապում էր հայրենիք: Երեք տարվա հեռավորությունից Հայաստանը անդիմադրելի զորությամբ կանչում էր նրան:

Հասավ ուղևորի օրը:

Պրոֆեսոր Շմիդտի տանը հրաժեշտի խնջույք էր: Ուսուցչի փոքրիկ ըմպանակի մեջ ղողդողում էր խմիչքը՝ մատնելով ազնիվ գերմանացու սրտի հուզմունքը:

- Ավարտական հանդեսի ժամանակ Կոմիտասին ներկայացնելով հասարակությանը՝ պարծանքով ասացի՝ Կոմիտասն արդեն վարպետ է, և ես հպարտ եմ նրանով, - խոսեց վերջապես պրոֆեսորը: - Զգում եմ, որ ապրելու եմ նրա մեջ: Իսկ այժմ նաև ավելացնում եմ. նա կվերադառնա իր հայրենիքը, և Եվրոպան կկորցնի ապագա մեծ երաժշտագետին, մեծ երգչին, մեծ կոմպոզիտորին: Բայց դրա փոխարեն հայ ժողովուրդը կգտնի իր նոր Մեսրոպ Մաշտոցին, իր նոր Խաչատուր Աբովյանին, իր նոր ռահվիրային, որի բացած երաժշտական ճանապարհով վաղ թե ուշ պիտի քայլեն Հայաստանում ապրող սերունդները: Գնա՛ս բարով, սիրելի՛ Կոմիտաս:

ՊԼԱՆ

1. Կոմիտաս աբեղայի երազանքը:
2. Խրիմյան Հայրիկի միջամտությունը և Մանթաշյանցի օժանդակությունը:
3. Քննություն Բեռլինում:
4. Ուսումնառության դժվար ամիսներ:
5. Ուսանողը դասախոս:
6. Գրավիչ առաջարկություններ:
7. Հայրենիքի ուժը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

Մեծ մտքի և պայծառ հոգու տեր, ռիթմի անբասիր զգացողություն, բարդ երաժշտական կտորների մեղեդային գծի ճշգրիտ վերհիշում, ձայնային արտակարգ հնարավորություններ, առատաբուխ տաղանդ, աշխարհահռչակ մեներգիչներ, ժողովրդական և հոգևոր երաժշտություն, հոգեթով ձայն, երգչական կարողություններ, անդիմադրելի զորություն:

*2. Բացատրել **առհավիրա** բառի իմաստը:*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Իմ գիտակցական ողջ կյանքում ես եղել եմ Կոմիտասի հետ, եթե կարելի է ասել, նրա մեջ, ինչպես բջիջը մարմնում, և այդպես էլ կգնա մինչև այն օրը, որ «վախճան» է կոչվում: «Ժողովուրդ» կոչվածը, ինչ խոսք, կույր չէ, բայց նա ինքնատես չէ ու չի էլ կարող լինել, քանի որ ժողովուրդը մի անձ չէ, որ կանգնի հայելու առջև և տեսնի իր կան ու չկան: Ժողովուրդն ինքն իրեն տեսնում է՝ նայելով իր այն զավակներին, որ սերել են նրա ոսկրից ու ծուծից, կաղապարվել ըստ նրա հավաքական կերպարի ու ժառանգել ամենայն ծնողականը: Ժողովուրդն է ստեղծում նրանց՝ ի մի հավաքելով իր ամբողջ ցանուցիր բազմանիստությունը, բայց հենց որ ծնեց՝ ինքը՝ ժողովուրդն էլ լուսավորվում է այդ բազմանիստ ներքին ճառագումից: Այս վերառումով էլ՝ ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, այլև նրանք են ժողովուրդ վերածնում:

Այսպիսի ծնունդ էր ամենից առաջ Մեսրոպ Մաշտոցը:

Այսպիսի ծնունդ էր նաև Կոմիտասը...:

Կան մեծություններ, որոնց դիմանկարի կերտումը վեր է ամեն մի՝ թեկուզև հանճարեղ նկարչի հնարավորություններից. մի պատկեր կամ քանդակ չի պարփակում նրանց ողջանությունը: Նրանց փոքրիշատե լրիվ պատկերելու համար հարկավոր է պատկերների ու քանդակների մի ամբողջ շարք:

Մեզ համար այդպիսի մեծություն է Կոմիտասը:

ՋՈՒԹԱԿՈՎ ՍԱՏԱՆԱՆ

Ըստ Ն. Վինոգրադովի

Իտալիայի Ջենովա քաղաքի խուլ թաղամասերից մեկում խաղում էին մի խումբ ցնցոտիավոր տղաներ: Նրանց մեջ ուշադրություն էր գրավում դուրս ցցված ծնոտով, երկար քթով, կեռ հոնքերով, սև, գանգուր մազերով յոթնամյա մի մանչուկ, որի ոտքերը ծուռ էին, իսկ թևերն ու ձեռքերի մատները՝ անբնական երկար: Դեմքը չափազանց տգեղ էր, բայց աչքերը պսպղում էին իրենց անսովոր փայլով ու արտահայտչականությամբ: Ինչ-որ տարօրինակ բան կար տղայի մեջ, որով անմիջապես առանձնանում էր խաղընկերներից: Նա աղքատ երաժիշտ Անտոնիո Պագանինիի որդին՝ Նիկոլո Պագանինին էր:

Հայրը սիրում էր հարբել, կռիվներ սարքել, հայհոյել և թղթախաղով տարվել: Նրա ամենամեծ պաշտամունքը փողն էր: Տղայի բացառիկ երաժշտական ընդունակություններից նա ուզում էր օգուտ քաղել և շատ փող դիզել:

Մի օր էլ մի հին ջութակ բերեց և ասաց որդուն.

- Նիկո՛լո, քեզ նվագել կսովորեցնեմ և քեզանից հրաշք կստեղծեմ: Դու շա՛տ փող կվաստակես:

Դաժան մարդ էր Անտոնիո Պագանինին: Յուրաքանչյուր սխալի համար ծեծում էր որդուն, փայտով խփում մատներին:

- Ես քեզ կստիպե՛մ նվագել, անիծյա՛լ կապիկ, - գոռում էր նա, - դու ծախված ես սատանային: Փո՛ղ պիտի աշխատես, փո՛ղ:

Տղան այնքան ծեծ կերավ, որ սկսեց արյուն թքել: Ջութակը տանջանքի գործիք էր դարձել նրա համար:

Շուտով հայրը նրան տարավ Ջենովայի եկեղեցական երգչախմբի դասատու Կոստայի մոտ: Լսելով երեխային՝ Կոստան ապշեց նրա հնչյունների հստակությունից, բացառիկ ընդունակությունից և աշխատելու արագությունից: Նա եկավ այն եզրակացության, որ տղայի տաղանդը, անհավատալի տեխնիկան ստորվածային միջամտությամբ բացատրվել չեն կարող, որ նրա մեջ ինչ-որ դիվային, սատանայական բան կա:

Այնուհետև «ջութակով սատանան» սկսեց դասեր վերցնել ժամանակի նշանավոր կոմպոզիտոր Ֆրանչեսկո Նիեկկոյից: Սա առաջադեմ մարդ էր և հասկացավ անմիջապես, որ տգետ ծնողների և մյուսների խավարամիտ միջավայրում տղան կարող է կործել հերետիկոսության մեղադրանքով:

Պագանինին, որ արդեն հասուն պատանի էր, զգում էր իր շուրջը մոլեգնող թշնամանքը: Նա մեկնեց հայրենի վայրերից և ընդունվեց Պարմի կոնսերվատորիան: Աշխատում էր օրնիբուն, բացահայտում ջութակի գաղտնիքները:

Սակայն կոնսերվատորիայում էլ նրան հանգիստ չթողեցին: Նրա տաղանդը համարում էին ոչ երկրային երևույթ: Այդպիսի թա՛փ, հզորությու՛ն: Ո՛չ, Աստծու ստեղ-
ծած էակի մեջ այսքան կրակ լինել չի՛ կարող: «Դա մարդ չէ, այլ ինքը՝ սատանան: Հա-
պա նայեցեք դեմքի՛ն, մատների՛ն: Ոտքից գլուխ չար ոգի է», - շշնջում էին հետևից:

Այն տարիներին կաթոլիկական եկեղեցու իշխանությունն անսահմանափակ էր,
բայց Պագանինին երբեք գլուխ չծռեց: Դա ավելի էր համոզում տգետ միջավայրին,
թե նա կապված է սատանային: Ուրեմն անպատիժ մնալ չէր կարող: Կաթոլիկ եկե-

ղեցու մոլի սպասավոր Նովին հանձնարարություն ստացավ կրնկակոխ հետևել նրան, խանգարել, վարկաբեկել: Մերթ համերգից առաջ գողանում էին կոշիկները, մերթ նվագախմբի անդամներին կարգադրում չնվագել, լքել ջութակահարին: Պատահեց նույնիսկ, որ բեմ դուրս գալուց առաջ կտրեցին նրա ջութակի երեք լարերը: Պագանինին չընկրկեց: Մեկ լարի վրա կատարեց իր իսկ ստեղծագործությունը, և ավարտին ունկնդիրներն ապշանքով լսեցին, թե ինչպես նվագարանը սահեց և պարզ արտաբերեց` Հի՜-մա՜ր-նե՜ր: Ջութակը խոսում էր, ջութակահարը` ծիծաղում իր թշնամիների վրա:

Մի անգամ Նովին այցելեց Պագանինիին:

- Որդյա՛կ, - ասաց, - պետք է իմանաս, որ բոլոր ժամանակների լավագույն երաժիշտները գրել և նվագել են եկեղեցու համար: Դու էլ պիտի այդպես անես, հակառակ դեպքում կզրկվես մեր բարեհաճությունից: Աստվածախնամ կաթոլիկական եկեղեցին գիտե քո բոլոր փողերի հաշիվը և արթուն հսկում է քեզ: Դու պիտի մեղքերի թողություն խնդրես, նվագես միայն եկեղեցու համար, դառնաս նրա ուղղամիտ զավակը: Մենք պետք է ստուգենք նաև, թե արդյոք չար ոգին բույն չի՞ դրել քո ջութակի լարերի մեջ:

Պագանինին պոռթկաց զայրույթից.

- Այո՛, ես կապված եմ սատանայի հետ, գերի եմ չար ոգու ձեռքում: Բայց այդ կեղտոտ ոգին տերտերներն են, իսկ սատանան` դու՛:

Ցանկանալով փախչել խավարամիտ միջավայրից` Պագանինին մեկնեց համերգային շրջագայության Վիեննա, Փարիզ:

Խենթացել, խելագարվել էր Փարիզի երաժշտասեր հասարակությունը: Պագանինիի ջութակը խոսում էր, ծիծաղում, լալիս, հեկեկում: Չլսվա՛ծ բան: Ահա թե ինչ է գրում երաժշտության տեսաբան Լյուդվիգ Բեռնեն. «Սա սատանայական տեսիլք է: Նրան լսողները բռնվում են ինչ-որ խելագարությամբ: Հենց որ նրա նվագարանը քսվում է լարերին, սեփական կյանքդ դադարում է: Մո՛գ է, կախա՛րդ, առասպե՛լ»:

Պագանինին համերգներից հսկայական եկամուտներ էր ստանում, որը ավելի էր գրգռում կաթոլիկական եկեղեցուն: Չէ՞ որ դրանց մի մասը կարող էր սուրբ հայրերի գրպանը մտնել: Զու՛ր հույսեր: Սատանայի անառակ որդին դարձի չէր գալիս: Բայց երկար էին եկեղեցու ձեռքերը: Խայտառակ հոդվածներ էին ջութակահարի մասին տպվում թերթերում, խափանվում համերգները: Նույնիսկ թունավորեցին, և նա ընդմիշտ զրկվեց ձայնից, խոսելու ընդունակությունից:

Հետմահու նույնպես հանգիստ չունեցավ Պագանինին: Նա մեռել էր առանց սուրբ հաղորդության, առանց զղջման ու թողության: Ուրեմն պիղծ էր և Աստծու ձեռքով ստեղծված հողում հանգչելու իրավունք չուներ: Անհավատալի է, բայց և փաստ, որ հիսունվեց տարի նրա ցինկե դագաղը շրջեց տեղից տեղ, գեգերեց Միջերկրականի ափերով: Որդին շատ երկրների դռներ բախեց, որ մի ափ հող տրամադրեն հանճարեղ հորը: Ապարդյու՜ն: Կաթոլիկական եկեղեցու խոսքը օրենք էր: Եվ միայն 1896 թվականին որդուց պոկելով Պագանինիի գրեթե ամբողջ ժառանգությունը` մեկ միլիոն հարյուր հազար ֆրանկ ոսկի` Հռոմի քահանայապետը թույլատրեց հետմահու թողություն տալ Պագանինիի մեղքերին և թաղել սեփական կալվածքի պարտեզում:

Հանճարեղ ջութակահարի աճյունը վերջապես խառնվեց հայրենի հողին:

ղեցու մոլի սպասավոր Նովին համձնարարություն ստացավ կրնկակոխ հետևել նրան, խանգարել, վարկաբեկել: Մերթ համերգից առաջ գողանում էին կոչիկները, մերթ նվագախմբի անդամներին կարգադրում չնվագել, լքել ջութակահարին: Պատահեց նույնիսկ, որ բեմ դուրս գալուց առաջ կտրեցին նրա ջութակի երեք լարերը: Պագանինին չընկրկեց: Մեկ լարի վրա կատարեց իր իսկ ստեղծագործությունը, և ավարտին ունկնդիրներն աղչանքով լսեցին, թե ինչպես նվագաողեղը սահեց և պարզ արտաբերեց՝ հի՛-մա՛ր-նե՛ր: Ջութակը խոսում էր, ջութակահարը՝ ծիծաղում իր թշնամիների վրա:

Մի անգամ Նովին այցելեց Պագանինիին:

- Որդյա՛կ, - ասաց, - պետք է իմանաս, որ բոլոր ժամանակների լավագույն երաժիշտները գրել և նվագել են եկեղեցու համար: Դու ևս պիտի այդպես անես, հակառակ դեպքում կզրկվես մեր բարեհաճությունից: Աստվածախնամ կաթոլիկական եկեղեցին գիտե քո բոլոր փողերի հաշիվը և արթուն հսկում է քեզ: Դու պիտի մեղքերի թողություն խնդրես, նվագես միայն եկեղեցու համար, դառնաս նրա ուղղամիտ զավակը: Մենք պետք է ստուգենք նաև, թե արդյոք չար ոգին բույն չի՞ դրել քո ջութակի լարերի մեջ:

Պագանինին պոռթկաց զայրույթից.

- Այո՛, ես կապված եմ սատանայի հետ, գերի եմ չար ոգու ձեռքում: Բայց այդ կեղտոտ ոգին տերտերներն են, իսկ սատանան՝ դու՛:

Ցանկանալով փախչել խավարամիտ միջավայրից՝ Պագանինին մեկնեց համերգային շրջագայության Վիեննա, Փարիզ:

Խենթացել, խելագարվել էր Փարիզի երաժշտասեր հասարակությունը: Պագանինիի ջութակը խոսում էր, ծիծաղում, լալիս, հեկեկում: Զարմա՛ծ բան: Ահա թե ինչ է գրում երաժշտության տեսաբան Լյուդվիգ Բեռնեն. «Սա սատանայական տեսիլք է: Նրան լսողները բռնվում են ինչ-որ խելագարությամբ: Հենց որ նրա նվագաողեղը քսվում է լարերին, սեփական կյանքդ դադարում է: Մո՛գ է, կախարդ, առասպե՛լ»:

Պագանինին համերգներից հսկայական եկամուտներ էր ստանում, որը ավելի էր գրգռում կաթոլիկական եկեղեցուն: Չէ՞ որ դրանց մի մասը կարող էր սուրբ հայրերի գրպանը մտնել: Զու՛ր հույսեր: Սատանայի անառակ որդին դարձի չէր գալիս: Բայց երկար էին եկեղեցու ձեռքերը: Խայտառակ հոդվածներ էին ջութակահարի մասին տպվում թերթերում, խափանվում համերգները: Նույնիսկ թունավորեցին, և նա ընդմիշտ զրկվեց ձայնից, խոսելու ընդունակությունից:

Հետմահու նույնպես հանգիստ չունեցավ Պագանինին: Նա մեռել էր առանց սուրբ հաղորդության, առանց զղջման ու թողության: Ուրեմն պիղծ էր և Աստծու ձեռքով ստեղծված հողում հանգչելու իրավունք չուներ: Անհավատալի է, բայց և փաստ, որ հիսունվեց տարի նրա ցինկե դագաղը շրջեց տեղից տեղ, դեգերեց Միջերկրականի ափերով: Որդին շատ երկրների դռներ բախեց, որ մի ափ հող տրամադրեն հանճարեղ հորը: Ապարդյու՜ն: Կաթոլիկական եկեղեցու խոսքը օրենք էր: Եվ միայն 1896 թվականին որդուց պոկելով Պագանինիի գրեթե ամբողջ ժառանգությունը՝ մեկ միլիոն հարյուր հազար ֆրանկ ոսկի՝ Հռոմի քահանայապետը թույլատրեց հետմահու թողություն տալ Պագանինիի մեղքերին և թաղել սեփական կալվածքի պարտեզում:

Հանճարեղ ջութակահարի աճյունը վերջապես խառնվեց հայրենի հողին:

ՊԼԱՆ

1. Իտալական աղքատ թաղամասի տղեկ մանչուկը:
2. Անտոնիո Պագանինին:
3. Ուսումնառություն և հալածանք:
4. Կաթոլիկական եկեղեցու վերաբերմունքը հանճարեղ ջութակահարի նկատմամբ:
5. Համերգներ Փարիզում:
6. Հետմահու դեգերումներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հերետիկոսություն, մոլի, վարկաբեկել, չընկրկել, նվագաղեղ, ուղղամիտ, Վիեննա, մոգ, Հաղորդություն, զղջում, մեղք, խավարամիտ միջավայր, կաթոլիկական եկեղեցի, համերգային շրջագայություն, սատանայական տեսիլք, սուրբ հաղորդություն, հետմահու թողություն տալ:

ԵՐԿՈՒ ԱՍՏՎԱԾ

Ըստ Նեյհարտի

Ալեկոծված էր Հելլադայի մայրաքաղաք Աթենքը: Փողոցներն ու հրապարակները ողողված էին հուզված մարդկանց հոծ խմբերով:

- Ազատե՛լ մեր հանճարեղ քանդակագործին: Ազատությու՛ն Ֆիդիասին, - բարձրագոչ աղաղակում էր ամբոխը:

Հելլադայի մեծաքանքար քանդակագործ Ֆիդիասը աթենացիների սիրելին էր: Նրա ճարտար ձեռքերով էին ստեղծվել քաղաքի բազմաթիվ սքանչելիքները: Ֆիդիասն էր կերտել Աթենքի գլխավոր սրբության՝ Աթենաս Կուսի նշանավոր արձանը, որ կանգնած էր հռչակավոր Պարթենոնի տաճարում: Բայց Ֆիդիասը անզգուշություն էր ունեցել Աթենաս աստվածուհու արձանի վրա քանդակված զինվորների մեջ պատկերել իրեն և աթենական պետության ղեկավար, իր մտերիմ ընկեր Պերիկլեսին: Վերջինիս քաղաքական հակառակորդները աղմուկ էին բարձրացրել, թե ինչպե՞ս է Ֆիդիասը համարձակվել մահկանացուների պատկերներ քանդակել պաշտամունքային արձանի վրա: Այսպիսի պատճառաբանությամբ քանդակագործին դատի էին տվել, ենթարկել տնային կալանքի:

Ահա թե ինչու հասարակ ժողովուրդը, որ պաշտում էր Ֆիդիասին և անհամբեր սպասում նրա հաջորդ գործին՝ Զևսի արձանին, ողողել էր Աթենքի փողոցները և պահանջում էր անհապաղ ազատ արձակել մեծ քանդակագործին:

Վախենալով ժողովրդի ցասումից՝ Պերիկլեսի հակառակորդները կատարեցին այդ պահանջը, և Ֆիդիասը մեկնեց Օլիմպոս՝ աշխատելու իր նոր մտահղացման՝ Զևսի արձանի վրա:

Քաղաքի կենտրոնական հրապարակում հանդող տաճարը, որ նվիրված էր շանթարձակ Զևսին, կառուցված էր ձյունաճերմակ մարմարից և արևի տակ շողշողում էր կուրացուցիչ փայլով: Բրոնզե դռներից երևում էր մի հսկայական սրահ, ուր Ֆիդիասը պիտի տեղադրեր Զևսի արձանը:

Երկար տարիներ տքնեց քանդակագործը արձանի վրա: Նրա հետ աշխատող ա-

չակերտներին սարսափեցնում էր կոթողի մեծությունը: Ամբողջ մի կյանք էր հարկավոր այն ավարտելու համար: Բայց Փիդիասը համառ էր:

Գահին բազմած Զևսը գլխով գրեթե կպչում էր տաճարի առաստաղին: Նրա բարձրությունը տասնյոթ մետր էր: Եթե հրաշքով այդ տիտանական արձանը ուղղվեր ամբողջ հասակով, ապա մի քանի անգամ կգերազանցեր տաճարի բարձրությանը:

Պայծառ շողացող ոսկուց էին պատրաստված աստծո հագուստները, գլխի պսակը, ժապավենները: Զևսը ձեռքին բռնել էր հաղթանակի աստվածուհու՝ Նիկեի արձանը: Ամբողջ կոթողը ազնիվ փղոսկրից էր: Զևսից բխում էր արտասովոր հմայք, խաղաղություն, անհուն իմաստնություն, բարություն, միաժամանակ՝ աստվածային հզորություն:

Փիդիասը երկար էր մտմտացել աստվածների հոր կերպարի վրա:

Նա ուզում էր նախ և առաջ ցույց տալ հզորագոր աստծու հսկա կերպարն ու ուժը:

Զևսի գահը նույնպես կերտված էր փղոսկրից: Բարձր թիկնակ, արմնկակալներ, գահի ստորին մասը զարդարող ուռուցիկ նախշեր, աստվածների ու աստվածուհիների ոսկյա պատկերներ: Զևսի՝ ոսկեձույլ մույկերով ոտքերը հանգչում էին առյուծներով զարդարուն աթոռակի վրա: Աստծո ոտքերի մոտ արված էր հետևյալ մակագրությունը. «Ինձ ստեղծել է Քարմիդասի որդի աթենացի Փիդիասը»:

Արձանի ավարտման վերջին աշխատանքներն էին կատարվում, և Փիդիասը ուզում էր դեռևս այն հեռու պահել հետաքրքրասերներից: Ցանկանում էր, որ մարդիկ Զևսին տեսնեն կատարյալ, ամբողջական ու անթերի:

Մի գեղեցիկ օր հանճարեղ քանդակագործն ավարտեց արձանը, աշակերտներին խնդրեց դուրս գալ տաճարից և իրեն մենակ թողնել: Ծանր աշխատանքից հոգնած, ուժասպառ վարպետը կանգնեց արձանի դիմաց, նայեց մոտիկից, հեռվից, պտտվեց նրա շուրջբոլորը, զննեց ամենայն մանրամասնությամբ: Մթնշաղ էր, և սրահի կիսախավարում ավելի վեհ, վսեմ ու խորհրդավոր էր թվում աստվածների ու մարդկանց հոր արձանը: Եվ, այնուամենայնիվ, Փիդիասը տվայտանքների մեջ էր. լավ էր արդյոք ստացվել, ա՞յն է, ինչին այնպե՛ս անհամբեր սպասում է ամբողջ Հելլադան: Բայց ո՞վ կարող է ավելի ստույգ պատասխանել քանդակագործի հոգին խռովող հարցին, եթե ոչ ինքը՝ ամենահեղինակավոր դատավորը՝ ամպրոպածին Զևսը:

Ու տաճարի խորախորհուրդ լռության մեջ յոթնապատիկ արձագանքում է Փիդիասի հարցը.

- Զև՛ս, դու գո՞հ ես:

Ասում են՝ տաճարի կիսախավարում հանկարծ կայծակներ են շողարձակում Զևսի աչքերը, և մարմարյա ճերմակաշող պատերն ու գրանիտյա հատակը ցնցվում են ամպրոպի ձայներից: Մեկ վայրկյան տևած շառաչյունը դադարում է, և աստծո աչքերը շարունակում են ճառագել բարություն ու ժպիտ: Զևսը գոհ էր. դա նրա դրական պատասխանն էր:

Արձանի ավարտման առթիվ Հելլադայում մեծ ցնծություն էր: Օլիմպոսի տիրակալի արձանը այցելել էր հրաշքների սովոր աթենացիներին:

Արձանի բացման կապակցությամբ Զևսի տաճարի հրապարակում հավաքվել էին հազարավոր մարդիկ, դրանց թվում՝ անտիկ աշխարհի անվանի արվեստագետներ, հռետորներ:

- Մտե՛ք տաճար, - իր ճառում ասաց նրանցից մեկը, - որպեսզի ապրեք Փիդի-

սի ստեղծագործությամբ: Մեծ դժբախտություն է այդ հրաշքը չտեսած մեռնելը:

Զևսի արձանը, որ համարվեց աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, պահպանվեց հազար տարի: Մեր թվարկության հինգերորդ դարում բյուզանդական Թեոդոսիոս Երկրորդ կայսեր հրամանով այն Օլիմպոսից տեղափոխեցին Կոստանդնուպոլիս թագավորական պալատը: Շատ չանցած՝ պալատում հրդեհ բռնկվեց, որին և զոհ գնաց հանճարեղ Ֆիդիասի անմահ Զևսը:

ՊԼԱՆ

1. Հուզումներ Հելլադայի մայրաքաղաքում:
2. Աթենաս Կույսի արձանը:
3. Մեղադրանք:
4. Զևսի տաճարը:
5. Զևսի արձանը:
6. Ցնծություն՝ Հելլադայում:
7. Զևսի արձանի ճակատագիրը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառակապակցությունները.

հուզված մարդկանց հոծ խմբեր, բարձրագոչ աղաղակներ, ճարտար ձեռքեր, պաշտամունքային արձան, ձյունաճերմակ մարմար, տիտանական արձան, արտասովոր հմայք, աստվածային հզորություն, ադամանդներով զարդարեն աթոռակ, հոգին խռովող հարց, Օլիմպոսի տիրակալ.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Հելլադա, Աթենք, Ֆիդիաս, Աթենաս Կույս, Պերիկլես, Զևս, Թեոդոսիոս Երկրորդ:

ՄԵԴԵԱ

Ըստ Եվրիպիդեսի

(դատողական-ստեղծագործական փոխադրություն)

Հին Հունաստանում ճանաչված հերոս էր Յասոնը: Նա իր «Արգո» նավով հասավ Կողքիս և բերեց ոսկե գեղմը, որին չէր տիրանա, եթե նրան չօգներ Կողքիսի արքայի դուստրը՝ կախարդուհի Մեդեան: Գեղեցկուհին Յասոնին տեսնելուն պես սիրահարվել էր նրան:

Յասոնը և Մեդեան ամուսնացան և բնակություն հաստատեցին Կորնթոս քաղաքում: Նրանք երկու գեղեցիկ տղա ունեցան:

Անցավ ժամանակ: Յասոնը, որ երախտագիտության զգացումից առաջնորդվելով էր ամուսնացել Մեդեայի հետ, մի օր տեսավ Կորնթոսի արքայի գեղանի դստերը՝ մանկամարդ Գլավքեին: Առաջին անգամ Յասոնի սիրտը նվաղեց սիրուց, առաջին անգամ կինը հերոսի աչքին երևաց որպես աստվածուհի:

Յասոնը մոռացավ ամեն ինչ՝ և՛ կնոջը, և՛ զավակներին, և՛ իր տված երդումները: Չէ՞ որ ժամանակին Կողքիսում Մեդեային երդվել էր միշտ սիրել և հավատարիմ մնալ նրան:

Նշանավոր հերոսը, սիրուց կուրացած, գնաց Կորնթոսի արքայի՝ Կրեոնի մոտ: Նա աղերսեց, որ իրեն կնության տա գեղանի Գլավքեին:

- Ինչպե՞ս, չէ՞ որ դու կին ունես, Մեդեան, - զարմացած հարցրեց արքան:

- Ես պատրաստվում եմ նրանից բաժանվել, - դողահար պատասխանեց Յասոնը:

Մեդեան իմացավ Յասոնի սիրո մասին: Նա առաջվա նման խնդանում էր ամուսնու համար: Խոր վշտից անզգայություն իջավ Մեդեայի վրա: Ոչ ուտում էր, ոչ խմում, ոչ էլ լսում սփոփիչ խոսքերը: Սակայն սարսափահարար ընդարմությունն իր տեղը զիջեց ցասումին: Ի՞նչ, դավաճանել Մեդեայի՞ն, նրա նման անսանձ կնո՞ջը: Չէ՞ որ նա ճաճանչափայլ Հելիոսի՝ Արևի թոռն է: Ոչ, Մեդեան վրեժ կլուծի իրեն անարգողներից:

Մինչ Մեդեան այսպիսի տվայտանքների մեջ էր, գալիս է Կրեոնը՝ Կորնթոսի արքան: Նա պահանջում է, որ կախարդ կինը անհապաղ հեռանա իր քաղաքից: Նա լավ էր հասկանում, որ Մեդեայի ցասումը կարող է կործանել թե՛ իրեն, թե՛ իր սիրեցյալ դստերը:

Մեդեան ձևացնում է, թե հնազանդ է արքայի խոսքին, կհեռանա, բայց ոչ այս պահին, այլ հաջորդ առավոտ: Կրեոնը համաձայնում է և մի վերջին անգամ էլ հախորտում, որ վաղ առավոտյան չհեռանալու դեպքում կմեռնեն Մեդեան և նրա զավակները:

Մեդեան աղախնին ուղարկում է Յասոնի հետևից: Երբ ամուսինը գալիս է, Մեդեան հնազանդ է ձևանում և ասում, որ կհեռանա Կորնթոսից, իսկ զավակները թող մնան հոր հետ:

- Հեռանալուց առաջ ես ուզում եմ բարեկամանալ Գլավքեի հետ: Նրա համար մի ընծա եմ պատրաստել, - քնքուշ ձայնով ասում է Մեդեան:

Նա ամուսնուն ցույց է տալիս մի չնաշխարհիկ զգեստ և ոսկե թագ: Կանչում է իսկույն ծառաներին և այդ ընծան ուղարկում գեղանի Գլավքեին: Զգեստը տեսնելուն պես աքանչացած աղջիկը անմիջապես որոշում է փորձել այն: Բայց Մեդեան թույն էր քսել հագուստին և թագի պսակին: Հենց հագնում է, թույնը թափանցում է մարմնի մեջ: Մեռնում է դեռատի Գլավքեն: Նրան օգնության է շտապում հայրը: Գրկում է սիրասուն դստերը, և զգեստը կպչում է նաև նրան: Շտապում է պոկել զգեստը իր մարմնից, բայց ծվատում է ինքն իրեն: Անշնչացած դստեր կողքին տապալվում է նաև հայրը:

Բայց դեռ բավարարված չէր Մեդեայի վրեժխնդրությունը: Յասոնը լսում է իր զավակների սարսափազդու ճիչերը: Այդ Մեդեան էր, որ սրախողխող էր անում իր երկու մանկիկներին:

Ծեծում է դուռը Յասոնը, խնդրում է, սպառնում Մեդեային: Ամեն ինչ անօգուտ էր:

Հանկարծ օդում հայտնվում է վիշապներ լծած մի կառք: Մեդեան էր կառքի մեջ, իսկ նրա ոտքերի մոտ սպանված զավակների մարմիններն էին:

Նշանավոր հերոսը, սիրուց կուրացած, գնաց Կորնթոսի արքայի՝ Կրեոնի մոտ: Նա աղերսեց, որ իրեն կնության տա գեղանի Գլավքեին:

- Ինչպե՞ս, չէ՞ որ դու կին ունես, Մեդեա, - զարմացած հարցրեց արքան:

- Ես պատրաստվում եմ նրանից բաժանվել, - դողահար պատասխանեց Յասոնը:

Մեդեան իմացավ Յասոնի սիրո մասին: Նա առաջվա նման խնկծխում էր ամուսնու համար: Խոր վշտից անզգայություն իջավ Մեդեայի վրա: Ո՛չ ուտում էր, ո՛չ խմում, ո՛չ էլ լսում սփոփիչ խոսքերը: Սակայն աստիճանաբար ընդարմությունն իր տեղը զիջեց ցասումին: Ի՞նչ, դավաճանել Մեդեայի՞ն, նրա նման անսանձ կնո՞ջը: Չէ՞ որ նա ճաճանչափայլ Հելիոսի՝ Արևի թոռն է: Ո՛չ, Մեդեան վրեժ կլուծի իրեն անարգողներից:

Մինչ Մեդեան այսպիսի տվայտանքների մեջ էր, գալիս է Կրեոնը՝ Կորնթոսի արքան: Նա պահանջում է, որ կախարդ կինը անհապաղ հեռանա իր քաղաքից: Նա լավ էր հասկանում, որ Մեդեայի ցասումը կարող է կործանել թե՛ իրեն, թե՛ իր սիրեցյալ դստերը:

Մեդեան ձևացնում է, թե հնազանդ է արքայի խոսքին, կհեռանա, բայց ոչ այս պահին, այլ հաջորդ առավոտ: Կրեոնը համաձայնում է և մի վերջին անգամ էլ հորդորում, որ վաղ առավոտյան չհեռանալու դեպքում կմեռնեն Մեդեան և նրա զավակները:

Մեդեան աղախնին ուղարկում է Յասոնի հետևից: Երբ ամուսինը գալիս է, Մեդեան հնազանդ է ձևանում և ասում, որ կհեռանա Կորնթոսից, իսկ զավակները թող մնան հոր հետ:

- Հեռանալուց առաջ ես ուզում եմ բարեկամանալ Գլավքեի հետ: Նրա համար մի ընծա եմ պատրաստել, - քնքուշ ձայնով ասում է Մեդեան:

Նա ամուսնուն ցույց է տալիս մի չնաշխարհիկ զգեստ և ոսկե թագ: Կանչում է իսկույն ծառաներին և այդ ընծան ուղարկում գեղանի Գլավքեին: Զգեստը տեսնելուն պես սքանչացած աղջիկը անմիջապես որոշում է փորձել այն: Բայց Մեդեան թույն էր քսել հագուստին և թագի պսակին: Հենց հագնում է, թույնը թափանցում է մարմնի մեջ: Մեռնում է դեռատի Գլավքեն: Նրան օգնության է շտապում հայրը: Գրկում է սիրասուն դստերը, և զգեստը կպչում է նաև նրան: Շտապում է պոկել զգեստը իր մարմնից, բայց ծվատում է ինքն իրեն: Անշնչացած դստեր կողքին տապալվում է նաև հայրը:

Բայց դեռ բավարարված չէր Մեդեայի վրեժխնդրությունը: Յասոնը լսում է իր զավակների սարսռազդու ճիչերը: Այդ Մեդեան էր, որ սրախողխող էր անում իր երկու մանկիկներին:

Ծեծում է դուռը Յասոնը, խնդրում է, սպառնում Մեդեային: Ամեն ինչ անօգուտ էր:

Հանկարծ օդում հայտնվում է վիշապներ լծած մի կառք: Մեդեան էր կառքի մեջ, իսկ նրա ոտքերի մոտ սպանված զավակների մարմիններն էին:

ՊԼԱՆ

1. Մեդեան օգնում է Յասոնին:
2. Ամուսնություն՝ երախտագիտությունից դրդված:
3. Կորնթոսի արքայի դուստրը:
4. Բուռն սեր, ամուսնության առաջարկ:
5. Մեդեայի վրեժը, ապա ցասումը:
6. Կրեոնը արտաքսում է Մեդեային:
7. Վրեժ. պերճ հագուստ:
8. Վրեժ. որդիների սպանությունը:
9. Փախուստ երկանիվ կառքով:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

ոսկե գեղմ, կախարդ գեղեցկուհի, գեղանի և մանկամարդ, սիրտը նվաղել սիրուց, սիրուց կուրացած, ոսկե գեղմ, կախարդ գեղեցկուհի, վշտից անզգայություն իջնել, սփոփիչ խոսք, ընդարմություն, նալ, պայծառ, դողահար պատասխանել, վշտից անզգայություն իջնել, սփոփիչ խոսք, ընդարմություն, ցասում, ճաճանչափայլ, անսանձ կին, անարգել, տվայտանք, անհապաղ հեռանալ, վաղ արշալույս, հոխորտալ, պերճ զգեստ, ոսկե թագ, սքանչացած, սիրասուն դուստր, ծվատել ինքն իրեն, սարսռազդու ճիչ, սրախողխող անել, վիշապներ լծած կառք.

բ) Հատուկ անունները.

Հին Հունաստան, «Արգո» նավ, Յասոն, Մեդեա, Կորնթոս քաղաք, Կողքիս, Կրեոն արքա, Գլավքե, Հելիոս աստված:

2. Նախօրոք կարդալ անտիկ դարաշրջանի հույն ողբերգակ Եվրիպիդեսի «Մեդեա» ողբերգությունը:

3. Աշակերտներին առաջարկել «Մեդեա» ողբերգության նյութը շարադրելիս գրել սեփական դատողությունները հերոսների, նրանց արարքների վերաբերյալ: Կարելի է նաև նախօրոք գրական դատ կազմակերպել, ապա գրել փոխադրություն՝ սեփական դատողություններով:

ԱՐՔԱՅԻ ԿԻՆԸ

Ըստ Ջեկ Լոնդոնի

(անավարտ փոխադրություն)

Մաղթաղենամ որբ էր: Աղջկա հայրը զոհվել էր արջի հետ մենամարտելիս, իսկ հնդկացուհի մայրը խեղդվել էր ծովում: Աղջիկը մեծացել էր կուսանոցում:

Մի օր կուսանոց բերեցին ծանր հիվանդ մի երիտասարդի: Քել Գալբրեյթ. այսպես էր նրա անունը: Երբ նա քիչ-քիչ առողջացավ, տեղնուտեղը նկատեց գեղեցիկ Մաղթաղենային: Նրանք ամուսնացան և հրաժեշտ տալով կույսերին՝ մեկնեցին Ալյասկա:

Որբուկը շատ շնորհալի կին դուրս եկավ: Համեղ կերակուրներ էր պատրաստում, ամուսնու բոլոր հոգսերը անտրտունջ կիսում: Նա սովորեցրեց ամուսնուն թեևերը քշտած աշխատել, մինչև որ այս մեծ երկխան ոսկու երակ հայտնաբերեց, հարստացավ և չքեղ առանձնատուն կառուցեց: Քելը հիմա ոսկի որոնողների մեջ արքա էր և շատ հարուստ:

Մի քանի տարի նրանք ապրում էին համերաշխ և շատ խաղաղ: Քելը լավ ամուսին էր և սիրող հայր: Սակայն առափեմանաբար նրան համակեց դժգոհության զգացումը: Նա սկսեց կարոտել իր հին ազատ կյանքը և իր նմաններին: Ոսկու արքան

ուզեց թոթափել ամուսնական շղթաները, ազատ լինել և վայելել կյանքի հաճույքները:

Հենց որ ոսկու ստացման ձմեռային աշխատանքներն ավարտվեցին, Քել Գալբրեյթը համբուրեց Մագթաղենային, հանքերի հսկողությունը հանձնեց գործերի կառավարչին և մեկնեց:

Մագթաղենան սպասեց: Սպասեց և աղոթեց: Ամուսինը չկար ու չկար: Երկար խորհրդածելուց հետո մի օր գրկեց փոքրիկին և ճանապարհ ընկավ՝ ամուսնուն գտնելու: Քելը մի ընկեր ուներ՝ Քիդ անունով: Նա Մագթաղենայի աչքում այնպիսի մարդ էր, որին կարելի էր անվերապահ կերպով վստահել: Նա կարծում էր, թե Քիդի մեջ ամփոփված է դարերի իմաստնությունը, թե նա իր խորաթափանց հայացքով տեսնում է ապագան:

Մի գիշեր Մագթաղենան հասավ Քիդի տունը: Վերջինս ուշադիր և առանց ընդհատելու լսեց հոգնած կնոջը: Հաջորդ օրը նա հրավիրեց իր երեք ընկերներին՝ խորհրդակցելու, թե ինչպես օգնեն դժբախտ Մագթաղենային: Այս չորս տղամարդիկ հղացան մի շատ համարձակ միտք և տեղնուտեղը գործի անցան: Նրանք Մագթաղենային սովորեցրին գեղեցիկ պարել, հեզաճեմ քայլել, իրանը ձիգ պահել, նազանքով ժպտալ, գլուխը քնքշորեն թեքել, ինչպես նաև խոսել մաքուր ու գեղեցիկ անգլերենով: Մագթաղենան չափազանց ընդունակ դուրս եկավ: Կարճ ժամանակ անց իր շարժուձևով նա չէր զիջում ցանկացած բարձրաշխարհիկ կնոջ: Փոխեցին նաև նրա հագուստը և կոշիկները: Երբ առաջին անգամ հնդկացուհին հանեց իր մոքասինը և բարձրակրունկ կոշիկ հագավ, տղամարդիկ զմայլված նայեցին իրենց սանուհուն: Մագթաղենայի դեմքը ողողվեց հպարտ շիկնանքով: Նա առաջին անգամ ապրեց սեփական հմայքի զգացումը:

Ծննդյան տոների կապակցությամբ մեծ դիմակահանդես էր կազմակերպված: Ուրախ երաժշտության հնչյունների տակ պտտվում էին դիմակներով ծպտված հրավիրյալները: Բոլորին ապշեցրել էր ռուս իշխանուհու հագուստով մի կին: Նա այնքան նազելի էր, այնքան գեղեցիկ էր պարում, այնպիսի կազմվածք ուներ, որ տղամարդիկ պտտվում էին միայն այս դիմակի շուրջը, հաճոյախոսություններ անում, պարի, ընթրիքի հրավիրում: Քել Գալբրեյթը, որ նույնպես դիմակահանդեսի մասնակիցների մեջ էր, փնտրում էր հույն պարուհուն, որի պատճառով մոռացել էր իր Մագթաղենային: Բայց շատ էր ուզում ծանոթանալ նաև «ռուս իշխանուհու» հետ, իմանալ, թե ով է նա: Սակայն նրան հերթ չէր հասնում, որովհետև երկրպագուները ձեռքից ձեռք էին խլում գեղեցկուհուն: Քել Գալբրեյթը չէր հուսահատվում և աչքը չէր կտրում անծանոթուհուց:

ՈՒՍՈՒՑՉԻՆ Փոխադրության տեքստի ավարտը թողնում ենք աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Իսկ պատմվածքն ավարտվում է այսպես.

Ճիշտ ժամը մեկին բոլոր զույգերը դահլիճի կենտրոն դուրս եկան: Ընդհանուր ծիծաղի, հիացմունքի ծափերի ներքո հանում էին դիմակները: Մնում էր միայն «ռուս իշխանուհին»: Մեկ էլ բոլորը «ախ» քաշեցին, երբ դիմակի տակից երևաց հնդկացուհու թուխ դեմքը:

Գազազած Քել Գալբրեյթը խոշոր քայլերով կտրեց դահլիճը և կանգնեց կնոջ առջև, բայց վերջինս ո՛չ վախ, ո՛չ նյարդայնություն էր արտահայտում: Ընդհակառակը, նրա շարժուձևը կհիացներ ուզածդ զտարյուն ազնվականին:

– Գնա՛նք, – գայրացած ասաց Քելը, – գնա՛նք տուն:

– Ներեցե՛ք, սը՛ր, – պատասխանեց կինը հմայիչ ժպիտով, – ես խոստացել եմ ընթրել մի իշխանի հետ: Բացի այդ, պարի եմ հրավիրված: Ձեզ համար ժամանակ չունեմ:

Ոսկու արքան շշմել էր անակնկալից: Նա և՛ ճանաչում, և՛ չէր ճանաչում սեփական կնոջը: Ողջ դահլիճը շունչը պահած հետևում էր դեպքերի ընթացքին:

– Ը՜ ... ը՜ ... Թույլ կտա՞ք ձեզ պարի հրավիրել, – հարցրեց «արքան»՝ թեթևակի կակազելով:

Կինը աչքի անցկացրեց իր պարահանդեսային գրքույկը և գլուխը խոնարհեց՝ ի նշան համաձայնության:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հնդկացուհի, կուսանոց, Ալյասկա, որբուկ, հոգսերը անտրտունջ կիսել, թևերը քշտած աշխատել, ոսկու երակ, թոթափել ամուսնական շղթաները, վայելել կյանքի հաճույքները, ոսկու ստացման ձեռ-ռային աշխատանքներ, անվերապահ կերպով վստահել, խորաթափանց հայացք, համարձակ միտք հղանալ, հեզաճեմ քայլել, իրանը ձիգ պահել, նազանքով ժպտալ, գլուխը քնքշորեն թեքել, բարձրաշխարհիկ կին, մոքասին, հպարտ չիկնանք, դիմակներով ծպտված, հաճոյախոսություններ անել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ջեկ Լոնդոնը 20-րդ դարի ամերիկացի խոշոր արձակագիր է:

ՀԱՐՍԻԿԸ

Ըստ Հակոբ Մնձուրու

(գրական դատ-փոխադրություն)

Արփիկ երեխա էր թեև, կզգար, որ քանի օրե ի վեր իրենց տան մեջ բան մը կըլլար:

Սողիկ մամը կուլար միշտ: Մարգար պապը, հորեղբայրները կբարկանային անոր: Իսկ ամենեն ավելի իր մորը՝ իր Հարսիկին բան մը եղած էր: Խոտհունձի ամիս էր. գիշեր կըլլար, հորեղբայրները, մյուս հարսիկները տուն կուգային ամենքը միասին: Իր Հարսիկը ամենեն ետքը, մինակը ներս կմտներ՝ քրտնած դեմքով, ձեռքերը խոտ քաղելեն բրտացած, հագուստները խոտ հոտելով: Ան մարդու հետ չէր խոսեր, կլռեր: Ու կարծես՝ տունով քեն ըրեր էին հետը, ոչ իսկ բան մը կհարցնեին: Պատժվածի մը կեցվածքը ուներ ան իրենց մեջ: Տնեցիք ալ չէին նկատեր զայն այլևս:

Թորոն ալ, որ իր մեծ եղբայրն էր ու մեծ տղա էր, չէր սիրեր Հարսիկը, թեպետ անոր ալ մայրն էր: «Ան իմ Հարսիկս չէ, ես Հարսիկ չունիմ», – կպոռար:

Արփիկ չէր հասկնար պատճառը, թե ինչու՞ իր Հարսիկին հետ չէին խոսեր պապը, մամը: Թորոն ինչու՞ կըսեր, թե ես Հարսիկ չունիմ: Մինչև հիմա իր ու Թորոյին մայրը ան էր, հիմա ինչու՞ չէր:

Արփիկ շատ կսիրեր իր Հարսիկը, որ իրեն պես գեղին ամենեն սևահոններեն էր:

– Ներեցե՛ք, սը՛ր, – պատասխանեց կինը հնազանդ ժպիտով, – ես խոստացել եմ ընթրել մի իշխանի հետ: Բացի այդ, պարի եմ հրավիրված: Ձեզ համար ժամանակ չունեմ:

Ոսկու արքան չշմել էր անակնկալից: Նա և՛ ճանաչում, և՛ չէր ճանաչում անփական կնոջը: Ողջ դահլիճը շունչը պահած հետևում էր դեպքերի ընթացքին:

– Ը՜ ... ը՜ ... Թույլ կտա՞ք ձեզ պարի հրավիրել, – հարցրեց «արքան»՝ թեթևակի կակազելով:

Կինը աչքի անցկացրեց իր պարահանդեսային գրքույկը և գլուխը խոնարհեց՝ ի նշան համաձայնության:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հնդկացուհի, կուսանոց, Ալյասկա, որբուկ, հոգսերը անտրտունջ կիսել, թևերը քշտած աշխատել, ոսկու երակ, թոթափել ամուսնական շղթաները, վայելել կյանքի հաճույքները, ոսկու առաջնահերթային աշխատանքներ, անվերապահ կերպով վստահել, խորաթափանց հայացք, համարձակ միտք հղանալ, հեզաճեմ քայլել, իրանը ձիգ պահել, նազանքով ժպտալ, գլուխը քնքշորեն թեքել, բարձրաշխարհիկ կին, մոդային, հպարտ շիկնանք, դիմակներով ծպտված, հաճոյախոսություններ անել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ջեկ Լոնդոնը 20-րդ դարի ամերիկացի խոշոր արձակագիր է:

ՀԱՐՍԻԿԸ

Ըստ Հակոբ Մնձուրու

(գրական դատ-փոխադրություն)

Արփիկ երեխա էր թեև, կզգար, որ քանի օրե ի վեր իրենց տան մեջ բան մը կըլլար:

Սողիկ մամը կուլար միշտ: Մարգար պապը, հօրեղբայրները կրրկամային անոր: Իսկ ամենէն ավելի իր մորը՝ իր Հարսիկին բան մը եղած էր: Խոտհունձի ամիս էր. գիշեր կըլլար, հօրեղբայրները, մյուս հարսիկները տուն կուգային ամենքը միասին: Իր Հարսիկը ամենէն ետքը, մինակը ներս կմտներ՝ քրտնած դեմքով, ձեռքերը խոտ քաղելէն բրտացած, հագուստները խոտ հոտելով: Ան մարդու հետ չէր խոսեր, կլռեր: Ու կարծես՝ տունով քեն ըրեր էին հետը, ոչ իսկ բան մը կհարցնեին: Պատժվածի մը կեցվածքը ուներ ան իրենց մեջ: Տնեցիք ալ չէին նկատեր զայն այլևս:

Թորոն ալ, որ իր մեծ եղբայրն էր ու մեծ տղա էր, չէր սիրեր Հարսիկը, թեպետ անոր ալ մայրն էր: «Ան իմ Հարսիկս չէ, ես Հարսիկ չունիմ», - կըսեր:

Արփիկ չէր հասկնար պատճառը, թե ինչու՞ իր Հարսիկին հետ չէին խոսեր պապը, մամը: Թորոն ինչու՞ կըսեր, թե ես Հարսիկ չունիմ: Մինչև հիմա իր ու Թորոյին մայրը ան էր, հիմա ինչու՞ չէր:

Արփիկ շատ կսիրեր իր Հարսիկը, որ իրեն պես գեղին ամենէն սևահոններեն էր:

Ան ալ զինքը շատ կսիրեր: Տեղ մը երթար, բան մը առներ, բերեր, այգիներեն գար՝ ի՛նչ պտուղ ունենար, իրեն կուտար: Գիշերները իր անկողինը, իր թևերուն մեջ կառներ ու կպառկեցներ: Ո՛չ, ինք շատ կախորժեր անկե: Մամը, պապը ամենքն ալ կսիրեին զինքը, բայց իր հարսիկը ուրիշ էր: Ու թեև պզտիկ էր, ու խելքը չէր հասներ, կմեղքնար հիմա՝ նայելով իր հարսիկին, որուն հետ մարդ չէր խոսեր:

Առտու մըն ալ Արփիկ արթնցավ որ՝ լուսցեր էր: Մինակ էր անկողնին մեջ, հարսիկը չկար քովը: Ականջ տվավ որ՝ դուրսի դուռեն շատ ձայներ կուգային: Մամն էր, պապը, հորեղբայրները, մեծ հորքուր մամը, դրացիները: Զարմացավ, որ խոտ քաղելու չէին գացեր անոնք այդ օրը ու իրենց տունն էին հավաքվեր: Ի՞նչ կար արդյոք: Բոլորն ալ բարձր ձայնով կխոսեին: Սողիկ մամը կուլար:

- Գիշերով ելավ գնաց: Ա՛լ չպիտի գա: Դշխուհին տունը գնաց, հոնկե պիտի առնեն ու տանին, - կըսեր մամը հեկեկալով:

- Թող կորսվի երթա, դժոխքը տեսնեմ, անոր երեսը չտեսնեմ, - կպոռար պապը:

- Կնիկմա՛րդ, լալով աչքերդ սև ջո՞ւր պիտի իջեցնես: Ան որ միտքը դրեր է, տղաքը կձգե ու կերթա, զոռո՞վ պիտի պահես: Էրիկ կուզե, ի՞նչ պիտի ընես, - կնեղանար հորքուր մամը:

Մամը կշարունակեր ողբալ ու եղանակել.

- Կենճ արևդ առիր, գացիր ու պառկեցար հողին տակը: Վեր ելլեիր ու տեսնեիր՝ էլի՛ն աղջիկը ինտո՞ր տղաքդ ձգեր է, ելեր է ու կերթա:

Արփիկ չէր հասկնար, թե մամը որո՞ւ վրա կխոսեր ու կուլար, թե ո՞վ էր գացեր ու ալ չպիտի գար:

Պզտիկ հարսիկը ներս մտավ հանկարծ ու տեսնելով, որ արթուն է, խանդաղատանքով ըսավ.

- Արթնցա՞ր, Արփի՛կ, պզտի՛կ հարսիկը քոլա ըլլա քեզի: Ելիր, որ հաց տամ՝ ուտես:

Պզտիկ հարսիկը հագվեցուց զինքը: Դուրսի տունը նստեր էին մեծ մամերը: Անոնք փայփայեցին, համբուրեցին զինքը, ու Արփիկը ամչնալեն՝ վար նայեցավ:

Արփիկ կարծեց, թե իր հարսիկը պիտի գար ամեն օրվան պես, բայց այդ իրիկունը, առաջին անգամ ըլլալով, չեկավ: Մութը կոխեց, սեղան դրին, ճաշեցին, նորեն չեկավ: Արփիկը տրտմեցավ: Ու երբ պզտիկ հարսիկը հանվեցուց զինքը ու ըսավ, թե իր անկողինը, իրեն հետ պիտի պառկեր, լացավ: Ո՛չ, իր հարսիկը կուզեր, միայն ան: Ուրիշին հետ չէր պառկեր: Մամը, պապը, հորեղբայրներն ու հարսիկները ջանացին հանդարտեցնել, թե իր հարսիկը հեռու տեղ գացեր է, այդ գիշեր չպիտի գա: Ան չհամոզվեցավ ու լացավ, լացավ: Ուշ ատեն քունը տարավ:

Հաջորդ գիշեր նորեն իր հարսիկը չեկավ հեռու տեղեն: Ու ոչ ալ անկե ետքը: Արփիկ ամեն օր կհարցներ ու կսպասեր: Վերջապես իրեն հայտնեցին, թե ալ չպիտի գար: Այդ օրը ամենեն շատ լացավ, բայց անկե ետքը վարժվեցավ ու պզտիկ հարսիկին հետ անոր անկողինը պառկեցավ:

Անցավ տարի մը, երկրորդ ամառ մը եկավ:

Թորոն այլևս բերանը անգամ չէր առներ մոր անունը, ու եթե ակնարկություն ըլլար՝ կհաչհոյեր անոր հասցեին: Արփիկն ալ փոխվեր էր: Ան ալ ոչ միայն չէր կարեկցեր, չէր սիրեր, այլ կատեր իր մորը, որ ձգեր էր զինքը ու գացեր էր, ու պզտիկ հարսիկին իր մայրը կհամարեր:

Խոտհունձքի ամիսն էր:

Արտը գացեր էին նորեն: Հարսիկները կքաղեին վայրի սավոլյոնները, տղաքն ալ իրենց մայրերուն հետ նույնպես կքաղեին, իսկ Արփիկը մինակը նստեր էր տաք արևին տակ ու կխաղար:

Հանկարծ ձորեն պզտիկ Հարսիկին ձայնը լսեց: Զինքը կկանչեր: Արփիկ վազեց: Ձորին մեջ կին մը պզտիկ Հարսիկին հետ կխոսեր. երկայն, ոլորված պեխերով մարդ մըն ալ քովը կայներ էր: Արփիկ վար իջավ ու մեկ անգամէն ճանչցավ: Պզտիկ Հարսիկին հետ խոսող սևահոն կինը իր մայրն էր:

Արփիկ կեցավ: Չշարժեցավ:

- Արփի՛կ, եկու՛ր նայիմ, եկու՛ր քովս պագնեմ քեզ մեկ մը, աչքի՛ս լույսը, - ըսավ Հարսիկը, որ տեսնելու եկեր էր զինքը:

Արփիկ չպատասխանեց, փախավ:

Պզտիկ Հարսիկը վազեց ետևեն ու բռնեց՝ իր Հարսիկին տանելու համար, բայց Արփիկ ճչաց որքան ձայն ուներ, մերժեց երթալ ու ազատվելով՝ նորեն փախավ:

Անկարելի եղավ համոզել:

Հարսիկը քիչ մըն ալ կայնեցավ ու ոլորուն պեխերով մարդուն հետ հեռացավ:

- Արփի՛կ, ինչո՞ւ չգացիր քովը, քու Հարսիկդ էր չէ՞, քեզի կարոտցեր էր, - ըսավ պզտիկ Հարսիկը՝ Արփիկին քով գալով:

Արփիկ գլուխը կախած վար կնայեր: Ու ուսերը ցնցեց:

ՊԼԱՆ

1. Տանը տիրող տարօրինակ տրամադրություն:
2. Փոքրիկ աղջկա սերը մոր նկատմամբ:
3. Մայրը հեռանում է ընտանիքից:
4. Օտարացում:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՆՈՐԴԸ

Ըստ Անրի Թրուայայի

Եվտերպ ամուսինների խանութը գտնվում էր քաղաքային գերեզմանատան մոտակայքում: Փայտյա շինության ճակատին ոսկեգույն տառերով գրված էր. «Սգո առարկաներ»:Եվտերպ ամուսիններն ամեն ինչ անում էին, որ հաճախորդին բավարարեն և՛ ցուցադրված ապրանքների գնով ու որակով, և՛ հաճելի սպասարկմամբ:

Մի երեկո, երբ տիկին Եվտերպը հաշվում էր օրվա եկամուտը, ներս մտավ յոթանասունին մոտ նիհար մի տղամարդ: Նրա մտազբաղ տեսքը վկայում էր, որ ինչ-որ բան է ուզում գնել:

- Ի՞նչ կկամենայիք, պարո՛ն, - քնքուշ ձայնով նրան դիմեց տիկին Եվտերպը:

- Կուզեի տեսնել ձեր ծաղկեպսակները:

Տիկինը անծանոթին հրավիրեց տեսնելու ապրանքը: Խանութի պատերի տակ

շարված էին հուղարկավորման պսակները: Մետաղյա գավինները, չթառամող վարդերը, անմոռուկներն ու բաղեղները ազդարարում էին մարդկային ոգի հավերժականությունը: Սգո մանուշակագույն ժապավեններին գրված էր. «Իմ քնքուշ մայրիկին», «Սիրելի եղբորս», «Անմոռանալի ամուսնուս», «Թանկագին հայրիկիս», «Իմ անզուգական քույրիկին», «Իմ անփոխարինելի փեսային» ... և այլն, և այլն:

- Տեսնու՞մ եք, - ասաց տիկին Եվտերպը, - մենք բավական մեծ ընտրություն ունենք: Դուք միայն ինձ ասեք՝ ձեր հանգուցյալը կին է, թե տղամարդ:

Այդ հարցից անծանոթի դեմքն ասես ֆիզիկական ցավից ջղաձգվեց, աչքերը պաղեցին: Նա խոր շունչ քաշեց ու շշնջաց.

- Տղամարդ:

- Ձեր ի՞նչն է: Այդ պիտի ասեք, որ իմանամ՝ ում է նվիրված պսակը՝ հո՞րը, զարմիկի՞ն, փեսայի՞ն:

- Ես կուզեի բոլորից մեկ-մեկ հատ՝ միայն արական սեռի համար:

Տիկին Եվտերպն ապշեց գնորդի պահանջից: Նրան թվաց, թե ճիշտ չհասկացավ:

- Այո՛, բոլորից մեկական, հասկացա՞ք, - գայրացած խոսեց անծանոթը, - և՛ թանկագին քեռի, և՛ թանկագին զարմիկ, և՛ թանկագին ընկեր, և՛ թանկագին վարձակալ, և՛ թանկագին աներ, և՛ թանկագին փեսա: Մի խոսքով՝ ամբողջ շարքը:

Տիկին Եվտերպը վախեցած հետ-հետ գնաց:

- Խնդրում եմ շտապեք, - խոսեց անծանոթը, - տաքսին սպասում է: Ամբողջ պատվերը մե՛ջը տեղավորեք:

Տիկինը պսակները հատ-հատ տեղավորեց մեքենայի հետևի նստարանին:

- Բերե՛ք նաև մի պապ, - պատվիրեց գնորդը:

Տիկին Եվտերպը բերեց պապի համար մի պսակ և հաշիվը՝ հաճախորդի համար: Վերջինս առանց խոսքի վճարեց, և մեքենան շարժվեց:

Միջադեպի մասին տիկին Եվտերպը հուզված պատմեց ամուսնուն: Քննարկեցին, շատ մտմտացին, բայց տարօրինակ հաճախորդի մտադրությունը մեկնաբանել չկարողացան: Վերջում եկան այն եզրակացության, որ այդ մարդն արյունարբու ոճրագործ է և անկասկած մոտ օրերս մտադիր է սպանել իր բոլոր բարեկամներին ու նախապես պսակներ է գնում:

Տիկին Եվտերպն իրար անցավ: Շատ ափսոսաց, որ չի վերցրել տաքսու համարը, ապա որոշեց կատարվածի մասին շտապ հայտնել ոստիկանությանը: Սակայն նրան պատասխանեցին, որ օրենսգրքի ոչ մի կետ չի արգելում քաղաքացուն գնել բազմաթիվ պսակներ:

Տիկին Եվտերպը չհանգստացավ: Հաջորդ օրը գնեց բոլոր թերթերը՝ սոսկալի եղեռնագործության մասին մի լուր կարդալու ակնկալիքով: Բայց ոչ մի նման ծանուցում չկար: Միևնույնն է, տիկինը որոշեց չթուլացնել հսկողությունը: Մեկ ամիս առավոտյան և երեկոյան թերթերը չունեին ավելի հավատարիմ ընթերցող:

Մի երեկո, երբ տիկին Եվտերպը նստել էր խանութի դռանը, հանկարծ դիմացի մայթին նկատեց «Հրեշին», որ քայլում էր պատերին քսվելով: Տիկնոջ աչքերը սուր ցավից գալարվեցին: Մինչ կհասներ անծանոթի հետևից, վերջինս մտավ մոտակա հյուրանոցը: Տիկինը ևս մտավ և սկսեց գնալ նրա հետևից: Այն է՝ անծանոթը բացելու էր համարի դուռը, տիկին Եվտերպը մի ցատկով հայտնվեց նրա դիմաց և գոռաց.

- Կանգնի՛ր:

Նփոթահար մարդը սկամա ճանապարհ տվեց կնոջը, որն անմիջապես մտավ ներս:

Դա մի սովորական համեստ սենյակ էր, որի պատերի տակ շարված էին սգո պսակները:

- Ի՞նչ եք ուզում, տիկի՛ն, - դուռը փակելով՝ կմկմաց մարդը:

- Զչարժվե՛ք, - կոկորդով մեկ ճչաց կինը, - չշարժվե՛ք: Կարծում եք՝ չգիտե՞մ, որ պատրաստվում եք ձեր բոլոր հարազատներին մորթոտել: Մտքներովդ էլ չանցնի: Ոստիկանությունը զգուշացված է:

- Պետք չէր զգուշացնել ոստիկանությանը, - մեղմ ձայնով խոսեց մարդը, և արցունքները հոսեցին դեմքի կնճիռներով: - Ես ոճրագործ չեմ: Գաղտնիք է, բայց ձեզ կասեմ: Ահա ... Ես ծեր եմ ... Սիրտս հիվանդ է: Բժիշկներն արդեն ինձ դատապարտել են ... Եվս երեք-չորս ամիս: Կարճ ասած՝ մտածում եմ թաղման մասին ... Իմ թաղման ... Չունեմ ոչ ոք: Պատկերացրեք՝ քաղաքով անցնող սգո կառք՝ առանց հուղարկավորների, առանց ծաղիկների, անանուն, մեկուսի: Այդ դաժան վախճանից խուսափելու համար մտածեցի ինձ համար ստեղծել մի ամբողջ բարեկամություն: Մեկի պապն եմ, մյուսի ամուսինը, հաջորդի փեսան, չորրորդի աները, հինգերորդի եղբայրը, վեցերորդի վարձակալը ... Նախապես ապահովեցի բոլորի չինծու վշտակցությունը: Այդ օրվանից ավելի հանգիստ եմ: Այնպես եմ զգում, կարծես շրջապատված լինեմ սիրելի մարդկանցով: Սիրտս ջերմանում է: Ինձ թվում է, թե իսկապես վրաս լացելու են:

Տիկին Եվտերպի կոկորդը խղճահարությունից սեղմվեց: Ահա թե ի՛նչ: Մարդուն ոճրագործ է կարծել, այնինչ իրականում նա բանաստեղծ է:

- Ներեցե՛ք ինձ, - շշնջաց նա, - ներեցե՛ք: Վաղը երեկոյան եկեք մեզ մոտ ընթրելու: Ավելի մոտիկից կծանոթանանք իրար հետ:

Այդպես Մորիս Բալոտենը դարձավ Եվտերպյանների ամենամտերիմ բարեկամը: Իսկ երբ մի քանի ամիս անց նա մահացավ, սգո կառքի հետևից գնում էին միայն Եվտերպ ամուսինները: Դիակառքը կորած էր մետաղյա դափնիների, չթառամող վարդերի, անմոռուկների ու բաղեղների մեջ, իսկ մանուշակագույն ժապավեններն արտահայտում էին մի բազմանդամ ընտանիքի վիշտը: Այդ անմխիթար շեղջակույտի վերևում գահակալում էր մի հսկայական պսակ, որի ժապավենին գրված էր. «Մեր լավագույն գնորդին՝ Եվտերպ ամուսիններից»:

ՊԼԱՆ

1. Սգո առարկաների խանութը:
2. Տարօրինակ գնորդը:
3. Տիկին Եվտերպի ապրումները:
4. Երկրորդ հանդիպումը:
5. Գաղտնիքը պարզվում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քաղաքային գերեզմանատուն, հաճելի սպասարկում, մոզաիկա տեսք, հուղարկավորման պսակներ, մետաղյա դափնիներ, անմոռուկներ, համգուցյալ, ֆիզիկական ցավ, վարձակալ, միջադեպ, արյունարբու ոճրագործ, օրինագիրք, ծանուցում:

2. Աշակերտներին թույլ տալ ցանկության դեպքում տեքստը շարադրել համառոտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Անրի Թրուայան 20-րդ դարի ֆրանսիացի գրող է: Ազգությամբ հայ է:*

Ջորդանո Բրունոն, որին Հռոմի ինկվիզիտորները 1600 թվականին հերետիկոսության մեղադրանքով այրեցին խարույկի վրա, մեծ մարդու համբավ էր վայելում ոչ միայն աստղերի շարժման մասին իր համարձակ և հետագայում ապացուցված վարկածներով, այլև ինկվիզիտորների դեմ ցուցաբերած վարմունքով: «Դուք ավելի շատ եք վախենում իմ դատավճիռը կարդալուց, քան ես, որ լսում եմ», - ասել է նա իր դատավորներին: Երբ ուսումնասիրում ենք նրա աշխատությունները և հրապարակային ելույթները, իսկապես հասկանալի է դառնում, թե որչափ արդարացի է նրան մեծ մարդ համարելը: Այսուհանդերձ գոյություն ունի մի պատմություն, որը թերևս ավելի կբարձրացնի նրա հարգը մեր աչքում: Դա նրա թիկնոցի պատմությունն է:

ՀԵՐԵՏԻԿՈՍԻ ԹԻԿՆՈՑԸ

Ըստ Բերթոլդ Բրեխթի

Վենետիկցի մի ազնվական իր տուն հրավիրեց Ջորդանո Բրունոյին, որպեսզի վերջինս իրեն ֆիզիկայի և մտավարժության դասեր տա: Նա մի քանի ամիս հյուրասիրեց գիտնականին և որպես վճար նրանից դասեր առավ: Ազնվականին թվում էր, թե նրանից ինքն ինչ-որ մոգական զորություն պիտի ստանա: Բայց երբ միայն ֆիզիկա սովորեց, սաստիկ դժգոհ մնաց և նրան մատնեց ինկվիզիցիայի ձեռքը: Մատնագիր գրեց, որ Բրունոն իբր իր ներկայությամբ հայհոյել է Հիսուս Քրիստոսին, հոգևորականներին անվանել «ժողովրդին բթացնողներ»:

Ինկվիզիտորները գիտնականին բանտ տարան: Մինչ այդ Բրունոն տաք թիկնոց էր պատվիրել մի դերձակի: Երբ բանտարկվեց, թիկնոցի արժեքը դեռ վճարված չէր:

Շուտով դերձակն իմացավ, որ Բրունոյին ձերբակալել են և սարսափեց. չէ՞ որ իրեն էլ կարող էին մեղադրել հերետիկոսի հետ կապ ունենալու մեջ: Սակայն այլ կերպ էր մտածում դերձակի կինը. նա բոլորովին մտադիր չէր տուժել: Հենց հաջորդ օրը շտապեց Սուրբ առյանի շենքը, ուր բանտարկված էր Բրունոն, և չարացած պահանջեց այն գումարը, որ նա իրեն պարտք էր մնացել: Պառավին խորհուրդ տվեցին թիկնոցը հետ վերցնել, բայց նա հայտարարեց, որ չի գոհանա թիկնոցով, որովհետև այն գործածված է: Պահանջեց դրամը:

Շուտով լուր տարածվեց, թե Հռոմի մեծ ինկվիզիտորը պահանջել է Բրունոյին հանձնել իր դատին: Պառավը գլուխը կորցրեց: Մի՞թե հերետիկոսին ուրիշ քաղաք են ուղարկելու՝ չթողնելով վճարել պարտքը: Սուրբ առյանը, որ արդեն հոգնել էր պառավի պահանջներից, առաջարկեց նրան տեսակցել Բրունոյի հետ և իր հարցը պարզել:

Տեսնելով գունատ, հյուծված բանտարկյալին՝ պառավը բացականչեց.

- Դուք չեք վճարել թիկնոցի վարձը:

Բրունոն մի քանի վայրկյան զարմացած նայեց կնոջը, հետո հիշեց և մեղմաձայն ասաց.

- Որքա՞ն եմ ձեզ պարտք:

- Երեսուներկու սկուդո, չէ՞ որ դուք հաշիվը գիտեք:

Բրունոն շրջվեց դեպի հաստլիկ ծառայողը, որ հսկում էր խոսակցությունը, և հարցրեց, թե արդյոք գիտե՞ իրենից բռնագրաված ունեցվածքը որքան է գնահատված: Սա անտեղյակ էր, բայց խոստացավ զբաղվել այդ հարցով:

- Ինչպե՞ս է ձեր ամուսինը, - հարցրեց բանտարկյալը՝ կրկին շրջվելով պառավի կողմը:

Կինը, փոքրամարմին մարդու սիրալիրությունից զգացված, խոնարհեց աչքերը և ինչ-որ բան փնթփնթաց:

Պայմանավորվեցին տեսակցել երկու օր հետո:

Բրունոն հայտնվեց խիստ տամջահար տեսքով: Նվաղ ձայնով հայտնեց, որ, ցավոք, թիկնոցի համար ի վիճակի չէ վճարել, բայց պառավը հույսը թող չկտրի:

- Եթե թույլ տան, - ասաց նա, - կգրեմ Ֆրանկֆուրտում ապրող ընկերոջս, նա կվճարի:

- Ձեր ինչի՞ն էր պետք թիկնոցը, եթե դրամ չունեիք, - չարությամբ խոսեց դերձակի կինը:

- Իմ վաստակը գրքերս ու դասերս են եղել, - մեղմ պատասխանեց Բրունոն: - Կարծում էի՝ էլի կաշխատեմ, որովհետև չէի մտածում, թե կբանտարկվեմ:

Պառավը չափեց նրան ոտքից գլուխ, սակայն խղճաց և առանց որևէ բան ասելու՝ դուրս եկավ:

Հաջորդ հանդիպման ժամանակ տիկինը դարձյալ շարունակեց ճղճղալ:

- Ես դրամ չունեմ, - մեղմ ձայնով խոսեց Բրունոն, - գուցե դուք թիկնո՞ցը հետ վերցնեիք:

Տիկինը խեցգետնի պես կարմրեց:

- Ես գիտեի, որ բանը դրան է հասնելու, - գոռաց նա, - բայց չէ՞ որ թիկնոցը կարված է ձեր վրայով և փոքր կլինի շատերի համար:

Նույնիսկ Բրունոյի կողքին կանգնած ինկվիզիտորը, որ հայտնի էր իր դաժանությամբ, այլևս չհամբերեց:

- Հարգելի՛ տիկին, - ասաց նա զայրացած, - փոքր-ինչ քրիստոնեական ներողամտությունը ձեզ ավելի կսազեր: Բանտարկյալը մի որոշման առաջ է կանգնած, որը նրա համար կենաց ու մահու խնդիր է: Դուք իրավունք չունեք պահանջելու, որ նա ամենից ավելի ձեր թիկնոցով զբաղվի:

Պառավը շրջվեց, որ հեռանա, երբ լսեց Բրունոյի ձայնը, որ ինկվիզիտորին ա․․․ում էր.

- Ես կարծում եմ, որ նա իրավացի է:

Ապա դառնալով կնոջը՝ ասաց.

- Դուք պետք է ներողամիտ լինեք, տիկի՛ն: Չկարծե՛ք, թե ինձ համար միևնույնն է: Կաշխատեմ անպայման պարտքս տալ:

Պառավը շփոթված իջավ սանդուղքներով:

Մեկ շաբաթ անց հաստլիկը բերեց թիկնոցն ու դերձակի կնոջն ասաց.

- Վերջին օրերին նրա միտքը միայն ու միայն ձեր պարտքով է զբաղված, չնայած մեկ շաբաթից պիտի ողջակիզվի խարույկի վրա:

Այդպես էլ եղավ: Մի քանի օր անց Հռոմի Կամպո դե Ֆիորի հրապարակում հսկայական շեղջակույտի մեջտեղում կանգնած էր Ջորդանո Բրունոն: Զանգած մի քանի րոպե՝ կրակի բոցերը լափում էին հանճարեղ գիտնականին:

ՊԼԱՆ

1. Մատնագիր և բանտ:
2. Ջորդանո Բրունոյի պարտքը:
3. Պառավի պահանջը:
4. Բրունոյի մարդկային վերաբերմունքը:
5. Երկրորդ հանդիպումը:
6. Ինկվիզիտորի միջամտությունը:
7. Ողջակեզ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ֆիզիկայի և մտավարժության դասեր, մոգական զորություն, ձերբակալել, հերետիկոս, Սուրբ ատյան, հանձնել դատին, գլուխը կորցնել, տեսակցել, սկուդո, սիրալիրությունից զգացվել, տանջահար տեսք, նվաղ ձայն, քրիստոնեական ներողամտություն, կենաց ու մահու խնդիր, ողջակիզվել, շղթակույտ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Բերթոլդ Բրեխտը 19-րդ դարի գերմանացի գրող է, հասարակական, թատերական գործիչ:*

ԿՐԱԿՈՑ

Ըստ Ա. Պուշկինի

(անավարտ վերջաբանով փոխադրություն)

Մեր գունդը տեղակայված էր Ռուսաստանի հեռավոր ավաններից մեկում, մի անբնակ վայրում: Զինվորական պարապմունքներից հետո հավաքվում էինք, թուղթ խաղում, գինարբուքներ սարքում: Մի մարդ կար միայն, որ պատկանում էր մեր հասարակությանը՝ առանց զինվորական լինելու: Նրան անվանում էին «Սիլվիո»: Ասում էին, որ նա հուսար էր եղել և անվրեպ հրաձիգ: Իր անցյալի մասին Սիլվիոն լռում էր, և ոչ ոք չէր համարձակվում ավելորդ հարցեր տալ նրան: Ապրում էր մի աղքատիկ հյուղակում, որի միակ շքեղությունը ատրճանակների հարուստ հավաքածուն էր:

Մի երեկո, երբ թուղթ էինք խաղում, Սիլվիոյի և մեր սպաներից մեկի միջև վեճ ծագեց: Սեղանի վրայից խլելով պղնձե մոմակալը՝ սպան շպրտեց Սիլվիոյի վրա, որը հազիվ կարողացավ խուսափել հարվածից: Մենք չէինք կասկածում հետևանքների մասին և մեր ընկերոջը համարում էինք սպանված: Բայց քանի որ հետագա օրերին սպան ողջ-առողջ շրջում էր զորամասում, Սիլվիոյի հեղինակությունն ընկավ մեր աչքում:

Մի անգամ նա ինչ-որ նամակ ստացավ և մեզ հայտնեց, որ հանգամանքների բերումով շտապ պետք է մեկնի: Իսկ երբ առանձին մնացինք, ասաց.

– Ձեզ համար տարօրինակ էր, որ այն օրը մենամարտի չկանչեցի այն հարբած խելացնորին: Բայց իմացե՛ք, որ իրավունք չունեմ ինձ մահվան վտանգի ենթարկելու, որովհետև վեց տարի առաջ ինձ վիրավորել են, և իմ թշնամին դեռ կենդանի է:

- Դուք նրա հետ չմենամարտեցի՞ք, - զարմանքով հարցրի ես:

- Մենամարտեցի: Ահա մեր մենամարտի հիշատակը:

Սիլվիոն ստվարաթղթե տուփից մի գդակ հանեց, որը ծակված էր գնդակով:

- Ծառայում էի հուսարական գնդում, - շարունակեց նա, - սովորել էի ամեն ինչում առաջինը լինել: Կովարար էի, միշտ որևէ մենամարտի վկա կամ մասնակից: Հանգիստ վայելում էի իմ փառքը, երբ մեր գնդում հայտնվեց մի երիտասարդ՝ հարուստ և անվանի տոհմից: Երևակայեցեք՝ խելք, գեղեցկություն, անհոգ ուրախություն, քաջություն, բարձր անուն, փող: Այս ամենը ուներ: Իմ առաջնությունը խախտված էր: Ու ես ատեցի նրան: Խայթելու առիթը բաց չէի թողնում: Վերջապես մի պարահանդեսի ժամանակ կոպիտ խոսք ասացի ականջին: Նա համբերությունից դուրս եկավ ու ինձ ապտակեց: Որոշվեց՝ մենամա՛րտ:

Լուսաբացին կանգնել էի նշանակված տեղում և ջղագրգիռ անհամբերությամբ սպասում էի հակառակորդիս: Հեռվից ճանաչեցի: Նա գալիս էր անփույթ քայլվածքով, համազգեստը թրի վրա գցած: Մոտեցավ՝ կեռասով լիքը գլխարկը ձեռքին: Առաջինը ես պիտի կրակեի, բայց չարության զգացումն այնքան էր համակել ինձ, որ ձեռքիս անվրեպությանը չվստահեցի և կրակոցը զիջեցի նրան: Նա նշան բռնեց, և գնդակը ծակեց ահա այս գդակը: Հերթն իմն էր: Ատելությամբ նայում էի հակառակորդիս՝ աշխատելով անհանգստության գեթ մի նշույլ որսալ դեմքին: Բայց ատրճանակի դիմաց կանգնած՝ նա անվրդով ուտում էր կեռասներն ու կորիզները թքում իմ ուղղությամբ: Նրա սառնասրտությունն ինձ կատաղեցրեց: «Ի՞նչ օգուտ նրան կյանքից զրկելուց, երբ նա բոլորովին չի գնահատում այն», - մտածեցի ես: Զարմանալի մի միտք ծագեց իմ գլխում: Իջեցրի ատրճանակս և հայտարարեցի, թե այսօր մտադիր չեմ կրակել, և մենամարտը դրանով էլ վերջացավ: Բայց այդ ժամանակից օր չի անցել, որ չմտածեմ վրեժ առնելու մասին: Ինձ գրել են, որ նա ամուսնացել է: Գնում եմ Մոսկվա: Տեսնենք՝ նույնքան սառնասրտությա՞մբ կընդունի մահը, ինչպես այն ժամանակ կեռաս ուտելով:

Սիլվիոն նույն օրը մեկնեց, և ես նրա մասին այլևս ոչինչ չիմացա:

Անցավ մի քանի տարի: Հանգամանքներն ինձ ստիպեցին ապրել գյուղում: Իմ տնից քիչ հեռու կար մի դղյակ, որ պատկանում էր ինչ-որ կոմսի: Որպես հարևան՝ մի օր գնացի ներկայանալու նրան: Կոմսն ինձ ընդունեց ամենասիրալիր ժպիտով: Զրուցում էինք դեսից-դենից, երբ հանկարծ ուշադրությունս գրավեց մի նկար, որ ծակված էր երկու գնդակով՝ իրար վրա:

- Ա՛յ լավ կրակո՜ց, - ասացի ես:

- Այո՛, սքանչելի կրակոց է:

- Ես գիտեի մի նշանառուի, - շարունակեցի, - որ նշան էր բռնում ճանճին ու անվրեպ խփում:

- Դա զարմանալի է, - ասաց կոմսը, - իսկ նրա անունն ի՞նչ էր:

- Սիլվիո:

- Սիլվիո՛, - բացականչեց կոմսը՝ տեղից վեր ցատկելով: - Չէր պատմել արդյոք նա ձեզ մի տարօրինակ դեպքի մասին:

- Ապտակի՞ մասին: Արդյոք դա ձեր մասին չէ՞ր, ձերդ պայծառափայլություն:

- Ես ինքս եմ: Կպատմեմ, թե ինչպես Սիլվիոն ինձանից վրեժ առավ:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Ա. Պուշկինի «Կրակոց» պատմվածքի վերջաբանը թողնում ենք աշակերտների ստեղծագործական երևակայությանը: Իսկ պատմվածքն ավարտվում է այսպես. «Հինգ տարի առաջ նա եկավ իմ դղյակը: Կանգնած էի այստեղ՝ բուխարու առջև: Երբ տեսա նրան, մազերս փշաքաղվեցին: «Ես եմ, - ասաց նա, - եկել եմ: Կրակելու հերթն իմն է: Պատրա՞ստ ես արդյոք»: Հանեց ատրճանակն ու նշան բռնեց: Համրում էի վայրկյանները: Մտածում էի կնոջս մասին: Սիլվիոն իջեցրեց ատրճանակը: «Ես սովոր չեմ անզեն մարդու վրա կրակելու, - ասաց, - սկսենք նորից. վիճակ գցենք, թե մեզնից ով առաջինը պիտի կրակի»: Ես հանեցի առաջին համարը: Կրակեցի, բայց վրիպեցի ու խփեցի պատի նկարին: Սիլվիոն դարձյալ նշան բռնեց: Ես շփոթված էի: Գլուխս պտտվում էր: «Չեմ կրակի, - հանկարծ ասաց Սիլվիոն: - Ես բավարարված եմ, որովհետև տեսա քո երկյուղը, քո շփոթմունքը: Կհիշես ինձ: Հանձնում եմ քեզ քո խղճին»: Նա ուզում էր դուրս գալ, բայց կանգ առավ դռան մեջ, նայեց իմ ծակած նկարին, գրեթե առանց նշան բռնելու կրակեց նրա վրա և անհայտացավ: Այլևս նրան չհանդիպեցի: Ասում են՝ զոհվել է ինչ-որ ճակատամարտում:»:

ՊԼԱՆ

1. Հեռավոր ավանում տեղակայված գունդը:
2. Սիլվիոն:
3. Ընդհարում թղթախաղի ժամանակ:
4. Սիլվիոյի պատմածը:
5. Այցելություն կոմսին:
6. Կոմսի պատմածը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

գինարբուք, հուսար, անվրեպ հրաձիգ, աղքատիկ հյուղակ, հարուստ հավաքածու, պղնձե մոմակալ, ողջ-առողջ, հանգամանքների բերումով, հարբած խելացնոր, անվանի տոհմ, ջղագրգիռ անհամբերություն, անփույթ քայլվածք, գիշել, անհանգստության նշույլ որսալ, չարանենգ միտք, դեսից-դենից:

ԿԱՆԱՉ ԾՈՑԱՏԵՏՐԸ

Ըստ Անրի Թրուայայի

(ստեղծագործական հանգուցալուծումով փոխադրություն)

Մարսել Գրինն քառասուն տարեկան էր: Ամբողջ կյանքում աշխատել էր որպես հաշվապահ ինչ-որ ընկերությունում և մխիթարվում էր այն մտքից, որ չնայած քիչ է վաստակում, ապրում է վատ, այնուամենայնիվ անգործ չէ, աշխատանք ունի:

Մարսել Գրինն սովորություն ուներ ամեն կիրակի զբոսնելու Բուլոնյան անտառում: Այդ առավոտ էլ, երբ նա դանդաղ քայլում էր դեպի լճակը, հանկարծ ավազի մեջ կիսով չափ թաղված ուղղանկյունի մի փոքրիկ իր նկատեց: Գրինն վերցրեց այն, մաքրեց փոշին: Դա գեղեցիկ ծոցատետր էր՝ մուգ կանաչ կազմով: Ծոցատետրը բացելուն պես Գրինի սիրտը սկսեց արագ տրոփել. Ներսի գրպանիկում երևում էին անփութորեն դրված թղթադրամներ: Հաշվեց: Ութ հատ՝ յուրաքանչյուրը հինգ հարյուր ֆրանկ: Բոլորը միասին՝ չորս հազար՝ իր երեք ամսվա աշխատավարձը: Մարսել Գրինն արագ նայեց շուրջը: Շրջակայքում ոչ մեկը չկար, և իրեն ոչ ոք չէր տեսել: Նա աչքի անցկացրեց ծոցատետրը ու շապիկի վրա կարդաց տիրոջ անունը և հասցեն. «Ժան դը Բիզ. ավենյու Ֆոշ, 50: Հեռախոս՝ 00-34»: Հասցեն ասում էր, որ ծոցատետրի տերը մեծահարուստ է, և նրա համար չորս հազար ֆրանկը դատարկ բան է:

Մարսել Գրիյեն նորից թերթեց ծոցատետրը՝ այն ավելի հանգամանալից ուսումնասիրելու նպատակով: Այնտեղ առանձնապես ոչինչ չկար, միայն ինչ-որ թվեր, անկապ նախադասություններ, երկրաչափական փոքրիկ գծանկարներ, տարօրինակ նշումներ: Գրիյեն մեկ անգամ ևս շուրջը նայեց, փողը դրեց գրպանը և խիղճը հանգստացրեց այն գիտակցությամբ, որ եթե գտածը որևէ աղքատ մարդու պատկաներ, ինքն անպայման կվերադարձներ:

Հաջորդ առավոտ Մարսել Գրիյեի առաջին գործը եղավ թերթեր գնել և նայել հայտարարությունների բաժինը: Աչքին անմիջապես զարնեց հետևյալը. «Ով սույն թվականի հունիսի 22-ին գտել է չորս հազար ֆրանկ պարունակող կանաչ ծոցատետր, խնդրում ենք այն վերադարձնել տիրոջը, որի հասցեն գտնողին հայտնի է: Հատուցումը՝ տասը հազար ֆրանկ»:

Հարվածի ուժգնությունից Մարսել Գրիյեն այնպես վեր թռավ, որ քիչ մնաց աթոռը կոտրվեր: Նորից կարդաց հայտարարությունը: Ոչ մի կասկած. եթե վերադարձներ չորս հազարը, խոստանում էին տասը հազար: Բայց ... Այստեղ Գրիյեն մատը դրեց քթարմատին: Իսկ եթե դա ծուղա՞կ է: Ժան դը Բիզը երևակայում է, թե ծոցատետրի նոր տերն այնքան միամիտ կգտնվի, որ գանձը կվերադարձնի մի խոստման դիմաց, որը ոչնչով երաշխավորված չէ: Եթե ինքը՝ Գրիյեն, գայթակղվի այդ առաջարկությամբ, ապա ավենյու Ֆոշի 50 բնակարանում իրեն ոչ թե Ժան դը Բիզը, այլ քաղաքացիական հագուստով ոստիկանները կդիմավորեն: Այդ պարոնները շատ արագ կհիմնավորեն, որ ինքը հանցավոր յուրացում է կատարել, և բանտ կնետեն: Ժան դը Բիզը, չնայած ազգանվան «դը» ազնվականական մասնիկին, կաչկա սրիկայի մեկն է:

Հաջորդ օրը Մարսել Գրիյեն թերթում գտավ նույն հայտարարությունը, բայց այս անգամ Ժան դը Բիզը խոստանում էր տասներեք հազար ֆրանկ: Ավելացված էր միայն մի փոքրիկ հայտարարություն. «Գաղտնիքը չի հրապարակվի»:

Կարդալով դրամական հավելումի մասին՝ Մարսել Գրիյեն եկավ այն եզրակացության, որ Ժան դը Բիզին հետաքրքրողը ոչ թե դրամն է, այլ ծոցատետրը: «Կա՛մ այն նվեր է սիրած կնոջից, կա՛մ որևէ հայտնագործություն է վստահված նրա էջերին, - մտածեց Գրիյեն, - այստեղ մի գաղտնիք կա, որը անպայման պիտի բացահայտեմ»: Այս վերջին կռահումը շատ խելամիտ թվաց նրան, թե չէ ինչ են նշանակում ծոցատետրում գրված անկապ նախադասությունները, խճճված թվերը, երկրաչափական պատկերները, ինչ-որ գաղտնի բանաձևեր, նշումներ, ինչպես օրինակ՝ «Հարավային լայնության 20 21 32, արևմտյան լայնության 920 241 172: Աղաչանքի կղզի: Քամիների ծովածոց: 37 աստիճան: 3ա+72+2ա»:

Մարսել Գրիյեն վստահ էր, որ այդ նշումները թաքցրած գանձի տեղն էին ակնարկում: Ինքն այնքան հիմար չէ, որ ծոցատետրը հենց այնպես վերադարձնի, մանավանդ, որ երրորդ հայտարարության մեջ Ժան դը Բիզը առաջարկում էր արդեն տասնհինգ հազար ֆրանկ:

Մարսել Գրիյեն կրքոտությամբ նետվեց քարտեզների վրա՝ գտնելու Աղաչանքի կղզին և չգտնելով՝ որոշեց, որ դա Խաղաղ օվկիանոսի անանուն փոքրիկ կղզիներից մեկը պիտի լինի հավանաբար: Խեղճ հաշվապահի ուղեղն այրվում էր, նյարդերը պրկված էին ջութակի լարի պես:

Հաջորդ օրը կանաչ ծոցատետրի գինը նորից բարձրացավ՝ հասնելով քսան հազար ֆրանկի: Մարսել Գրիյեն որոշեց չգայթակղվել և մնալ անսասան՝ ծոցատետրը չհանձնել տիրոջը և սպասել ավելի մեծ գումարների:

ՊԼԱՆ

1. Մարսել Գրիյեն:
2. Կանաչ ծոցատետրը:
3. Հայտարարություն թերթում:
4. Մարսել Գրիյեի ապրումները:
5. Ծոցատետրի գինն անընդհատ բարձրանում է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Բուլոնյան անտառ, ուղղանկյունի մի փոքրիկ իր, մուգ կանաչ, հանգամանալից ուսումնասիրել, հառուցում, քծթարմատ, համեստ յուրացում, հավելում:

2. Հանձնարարել աշակերտներին շարունակել և ավարտել պատմությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Անրի Թրուայան 20-րդ դարի ֆրանսիացի խոշոր գրող է: Ազգությամբ հայ է:*

(անվերնագիր)

Ըստ Օ՛ Հենրիի

Ցուրտ աշուն էր, և ահա ուր որ է ձմեռը կգար: Սոպին շուռումուռ եկավ Մեդիսոն պուրակի նստարանի վրա: Դեղին մի տերև ընկավ ծնկներին: Դա Ձմեռ պապի այցետոմսն էր: Տերևը բարի էր պուրակի մշտական բնակիչների նկատմամբ և ազնվորեն նախազգուշացնում էր նրանց իր մոտալուտ ժամանման մասին:

Սոպին հասկացավ, որ հասել է իր անձը վերահաս ցրտերից պաշտպանելու միջոցներ և ուղիներ որոնելու ժամանակը: Նրա ձմեռային պլաններն առանձնապես շքեղ չէին: Նա չէր երազում ո՛չ հարավ մեկնելու, ո՛չ էլ զբոսանավով Միջերկրական ծովում ճամփորդելու մասին: Եռամսյա բանտարկություն, - ահա թե ինչի էր ծարավի: Երեք ամիս ապահով պատսպարան և ուտելիք, հաճելի զրույցներ իր նմանների հետ:

Արդեն մի քանի տարի էր, ինչ հյուրընկալ բանտը ծառայում էր նրան իբրև ձմեռային կացարան: Քաղաքում կային բազմաթիվ բարեգործական հաստատություններ, որտեղ կարող էր սնունդ և կացարան ստանալ: Բայց Սոպիի համար բարեգործական նվերները ճնշող էին: Ավելի լավ չէ՞ր լինել բանտի կենվոր: Ուստի որոշելով ձմռան սկզբին բանտ ընկնել՝ Սոպին անմիջապես անցավ իր ծրագրերի կենսագործմանը:

Բանտ տանող ուղիները շատ էին ու հեշտ, բայց ամենահաճելի ճամփան անցնում էր ռեստորանի միջով: Այսպես, մի ճոխ ճաշ եք պատվիրում, ուտում մինչև տրաքվելը, ապա ձեզ հայտարարում անվճարունակ: Առանց ավելորդ քաշքշուկի ձեզ հանձնում են ոստիկանի ձեռքը, իսկ դատարանն ավարտում է այդ բարի գործը:

Սոպին դուրս եկավ զբոսայգուց, մտավ լույսերով ողողված Բրոդվեյ պողոտան և մոտեցավ մի պերճաշուք ռեստորանի: Նա սափրված էր, մաքուր բաճկոնով և փողկապով: Ա՜յ եթե չնկատեին մաշված տաբատն ու ծամված կոշիկները, և ինքը

բարեհաջող հասներ սեղանին, հաջողությունն ապահովված էր: Բայց հենց որ ոտքը ներս դրեց ռեստորանի դռնից, բարապանի փորձված աչքն իսկույն նկատեց նրա խղճուկ տարատն ու քրքրված կոշիկները: Ուժեղ, ճարպիկ ձեռքերն արագ դուրս մղեցին նրան, ու դուռն անաղմուկ փակվեց: Է՜հ, ինչ արած, պետք է դրախտ ընկնելու մի այլ ուղի որոնել:

Վեցերորդ փողոցի անկյունում անցորդների ուշադրությունը գրավում էին ցուցափեղկի լույսերն ու շքեղ ապրանքները: Սոփին մի քար վերցրեց և հենց ոստիկանի քթի տակ նետեց ապակու վրա:

- Ո՞վ արեց, - շտապ մոտեցավ ոստիկանը:

- Իսկ դուք չե՞ք կարծում, որ այստեղ խառն է իմ մատը, - ասաց Սոփին՝ դիտավորյալ լկտիաբար ժպտալով:

Ոստիկանը նրա կողմն անգամ չնայեց և արագ նետվեց մի մարդու հետևից, որ վազում էր տրամվային հասնելու: Երկրո՛րդ անհաջողությունը: Սոփին հուսահատված էր: Չլինի՞ կախարդված է և անխոցելի է դարձել ոստիկանության համար: Քիչ էր մնում խուճապի մատնվեր: Քայլելով հասավ Թատրոնի շենքին, որի մուտքի մոտ վեհապանծորեն կանգնած էր մի ոստիկան: Խուլ ու անդուր ձայնի ողջ ուժով Սոփին ինչ-որ երգ գլեց: Նա սկսեց պարել մայթի վրա, բղավել, ծամռվել, կպչել Թատրոն մտնողներին:

- Ուսանող է, - ասաց ոստիկանը, - նրանք այսօր տոնում են Հարֆորդի քոլեջի սաների դեմ տարած ֆուտբոլի առաջնությունը: Աղմկում են անշուշտ, բայց դա անվտանգ է: Հրահանգել են ձեռք չտալ նրանց:

Անմխիթար Սոփին դադարեցրեց իր ողորմելի հրավառությունը: Մի՞թե այդպես էլ ոչ մի ոստիկան չի բռնելու իր օձիքից: Բանտը նրան անհասանելի դրախտ սկսեց թվալ: Այս անգամ նա կպավ մի տղամարդու, որի ձեռքից քաշեց անձրևանոցը:

- Այդ անձրևանոցը իմն է, - խստությամբ ասաց անծանոթը:

- Մի՞թե, - լկտիորեն քմծիծաղեց Սոփին, - ուրեմն ինչու՞ ոստիկան չեք կանչում: Ահա՛ նա, կանգնած է անկյունում:

Ոստիկանը հետաքրքրությամբ հետևում էր նրանց:

- Անշու՜շտ, - ասաց մարդը, - իհարկե ..., դուք ...: Մի խոսքով այդպիսի սխալներ պատահում են: Եթե դա ձեր անձրևանոցն է ... Հուսով եմ կներեք ինձ: Ես առավոտյան այն վերցրի սրճարանում: Եթե դուք ճանաչեցիք, որ ձերն է ... դե ինչ ... վերցրեք:

Մարդն արագ ծլկեց: Անեծքներ տեղալով ոստիկանների հասցեին, որ ոչ մի կերպ իրեն չեն բռնում, Սոփին անձրևանոցը շպրտեց մի փոսի մեջ և թեքվեց կողքի պողոտան, որի անկյունում սրածայր աշտարակով մի հին եկեղեցի կար: Երգեհոնահարը մնացել էր եկեղեցում՝ հավանաբար փորձելու կիրակնօրյա պատարագը: Երաժշտության մաքրագործող մեղեդին հասավ Սոփիի լսելիքին, և նա քարացավ տեղում՝ սեղմված չուգունե ցանկապատի ճաղերին: Այդ եղանակն առաջ հաճախ էր լսել, այն ժամանակ, երբ նրա կյանքում կային մայրը, վարդերը, բարեկամները, համարձակ ծրագրերը, մաքուր ձգտումները: Հին եկեղեցու պատուհանից հոսող երաժշտությունը նրա հոգում անակնկալ ու հրաշալի փոփոխություն կատարեց: Նա սարսափով տեսավ այն անդունդը, ուր ընկել էր, հիշեց այն ամոթալի օրերը, մերժելի ցանկությունները, մեռած հույսերը, խորտակված անուրջներն ու ստոր

հակումները, որոնցից կազմված էր եղել իր կյանքը: Սոպլի սիրտը բաբախեց այդ նոր տրամադրությամբ ներդաշնակ: Համկարծ չար ճակատագրի դեմ պայքարելու ուժ զգաց իր մեջ: Այո՛, այո՛, ինքը դուրս կպրծնի կեղտի միջից, նորից մարդ կդառնա: Ժամանակը դեռ չի անցել: ... Ինքը դեռ ջահել է, հարություն կտա նախկին երազանքներին: Հենց վաղն առավոտյան կգնա, աշխատանք կփնտրի իր համար:

Այս մտքերի մեջ էր, երբ զգաց, թե ինչպես մի ձեռք իջավ ուսին: Սոպլին արագ հետ նայեց ու իր դիմաց տեսավ ոստիկանի լայն դեմքը:

- Ի՞նչ եք անում այստեղ,- հարցրեց ոստիկանը:

- Ոչինչ, - պատասխանեց Սոպլին:

- Այդ դեպքում՝ գնանք:

Հետևյալ առավոտ դատավորը որոշեց.

- Բա՛նտ, երեք ամսով:

ՊԼԱՆ

1. Ձմեռ պապի այցետոմսը:
2. Բանտ ընկնելու երազանք:
3. Ջուր հույսեր ու արարքներ:
4. Եկեղեցուց հնչող մաքրագործող մեղեդին:
5. Նորից դեպի բանտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *1.Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Ձմեռ պապի այցետոմս, պուրակի մշտական բնակիչներ, մոտալուտ ժամանում, վերահաս ցրտեր, զբոսանավով Միջերկրական ծովում ճամփորդել, ապահով պատսպարան, հյուրընկալ բանտ, ձմեռածածկ կոշիկներ, բարապան, փորձված աչք, անխոցելի դառնալ, խռպոտած ձայն, երգեհոնահար, կիրակնօրյա պատարագ, մաքրագործող մեղեդի, հարություն տալ:

Համձնարարել աշակերտներին ընտրել վերնագիր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Օ՛ Հենրին ամերիկացի գրող է, 300 պատմվածքի և «Թագավորներն ու կաղամբը» վեպի հեղինակը:*

ԱԿԱՄԱ ՄԱՏՆԻՉԸ

Ըստ Ժան-Պոլ Սարտրի

Մեզ քշեցին մի մեծ ճերմակ սենյակ: Տեսա մի սեղան՝ հետևում քաղաքացիական զգեստով չորս մարդ: Նրանցից մեկը նայեց դիմացը դրված թղթերին ու ինձ հարցրեց.

- Ձեր անունը Պաբլո Իբիե՞տա է:

- Այո՛:

- Որտե՞ղ է Ռամոն Գրիսը:

- Չգիտեմ:

- Ամսի 6-ից 19-ը դուք նրան թաքցրե՞լ եք ձեր տանը:

- Ո՛չ:

Նույնը պատասխանեցին նաև Թոմը և Խուանը:

Պահակները մեզ դուրս տարան:

- Մեզ ի՞նչ են անելու, - հարցրեց Խուանը պահակներին:
- Դատավճիռը բանտախցում կկարդան, - եղավ պատասխանը:

Նկուղում, ուր մեզ քշեցին, մեկ նստարան կար և չորս ներքնակ: Լուռ նստեցինք ու սկսեցինք սպասել:

- Գիտե՞ս ինչեր են անում այս ֆաշիստները Սարագոսայում, - լռությունը խախտեց Թոմը, - մարդկանց պառկեցնում են ճանապարհի վրա ու բեռնատարներով վրայից անցնում: Այնպես որ մեր երգը երգված է:

Երեկոյան ժամը 8-ի մոտ ներս մտավ մի մայոր երկու զինվորի ուղեկցությամբ: Մեկ-մեկ կարդաց երեքիս ազգանուններն ու հայտարարեց.

- Դուք դատապարտված եք մահվան: Վաղն առավոտյան ձեզ կգնդակահարեն:

Լիովին չէի կարողանում ըմբռնել մայորի ասածը: Մտածում էի, թե արդյոք շատ եմ տանջվելու և պատկերացնում էի գնդակների այրող տարափը: Թվում էր՝ խելագարվում եմ: Հոգնած էի ու գրգռված: Չէի ուզում հիշել, թե ինչ է լինելու արշալույսին, չէի ուզում մտածել մահվան մասին, բայց ինձ վրա ուղղված հրացաններ էի տեսնում: Երևի 20 անգամ անընդմեջ ես վերապրեցի իմ մահապատիժը: Եթե ցանկանայի, գուցե կարողանայի մի քիչ քնել: Երկու օր էր՝ աչք չէի փակել, ուժասպառ էի: Սակայն չէի ուզում հեռացող կյանքիցս թեկուզ երկու ժամ կորցնել: Բայց ինչու՞ պիտի մեռնեի, ի՞նչ էի արել ես: Միայն մի բան՝ կամեցել էի ազատագրել Իսպանիան:

Արևելքը շառագունեց: Ահա և լուսաբացը: Միջանցքից երկաթագամ կոշիկների թխկթխկոց լսվեց: Դուռն աղմուկով բացվեց, և զինվորների ուղեկցությամբ մի լեյտենանտ մտավ: Կարդաց երեքիս անունները, ապա Թոմին ու Խուանին կարգադրեց.

- Վե՛ր կացեք:

Հետո դառնալով ինձ՝ ասաց.

- Այստեղ սպասեցե՛ք, քիչ հետո ձեր հետևից էլ կգան:

Բոլորը դուրս եկան: Մնացի մենակ, անորոշության տանջանքի ճիրաններում: Ավելի լավ չէ՞ր միանգամից վերջս տային:

Իմ հետևից եկան մեկ ժամից ու տարան երկրորդ հարկի մի սենյակ, որ լցված էր ծխախոտի ծխով:

- Քո անունը Իբբիե՞տա է, - հարցրեց սպան:

- Այո՛:

- Որտե՞ղ է Ռամոն Գրիսը:

- Չգիտեմ:

Սպան վեր կացավ, մոտեցավ ինձ, ծուխը փչեց երեսիս:

- Քո կյանքը նրա կյանքի դիմաց: Եթե տեղն ասես, քեզ ողջ կթողնենք: Մտածելու համար՝ քառորդ ժամ:

Ռամոն Գրիսի տեղն իհարկե գիտեի: Նա թաքնվել էր զարմիկների տանը՝ քաղաքից չորս կիլոմետրի վրա: Գիտեի նաև, որ չպիտի հայտնեմ թաքստոցի տեղը: Գերադասում էի սատկել, քան մատնել Գրիսին: Նրան սիրելուս պատճառով չէր, որ հոժարակամ մեռնելու էի նրա փոխարեն: Պարզապես գիտակցում էի, որ Իսպանիայի համար Գրիսն ավելի օգտակար է, քան ես:

Տասնհինգ րոպե անց եկան իմ հետևից:

- Դե ի՞նչ, - հարցրեց սպան, - մտածեցի՞ր:

- Ես գիտեմ նրա տեղը, - ասացի, - նա թաքնվել է գերեզմանոցում: Դամբարաններից մեկում կամ էլ գերեզմանափորների խրճիթում:

Սոեսի, որ վրանները մի կուշտ ծիծաղեմ: Միևնույնն է, այսպես թե այնպես պիտի մեռնեի:

Նրանք ոտքի ցատկեցին՝ զենքերը վերցրած: Սպան դարձավ ինձ.

- Եթե չես ստել, խոսք չունեմ ասելու, բայց եթե ձեռ ես առել մեզ, թանկ կվճարես:

Իրար հրմշտելով դուրս եկան, իսկ ես քմծիծաղում էի հողուս խորքում: Պատկերացնում էի չիրիմների մեջ ջանասիրաբար վազվզող այդ համազգեստավորներին:

Երկու ժամից սպան եկավ մենակ: Տեսքն ամենևին էլ չփոթահար չէր:

- Տարե՛ք սրան բակ, մյուսների մոտ, - կարգադրեց նա:

Ինձ թվաց, թե ինչ-որ բան ճիշտ չհասկացա:

- Ուրեմն ինձ ... չե՞ն գնդակահարելու ..., - հարցրի:

- Համենայնդեպս` ոչ հիմա:

- Իսկ ինչու՞, - հարցրի:

Չպատասխանեց. միայն ուսերը թոթվեց, ու զինվորներն ինձ տարան:

Մեծ բակում հարյուրի չափ բանտարկյալներ կային, որոնց մեջ ճանաչեցի հացթուխ Գարսիային:

- Մտքովս չէր անցնի, թե քեզ ողջ-առողջ կտեսնեմ, - շշնջաց նա, - ովքեր իրենց պես չեն մտածում, բոլորին գնդակահարում են: Գիտե՞ս, - շարունակեց Գարսիան՝ ձայնը ավելի ցածրացնելով, - Ռամոն Գրիսին էլ են բռնել:

Սկսեցի դողալ:

- Ե՞րբ, - հարցրի:

- Այս առավոտ: Հիմարություն էր արել: Երկու օր առաջ զարմիկի հետ վիճել էր ու տնից գնացել: Իհարկե նրան ապաստան տվողներ կգտնվեին, բայց նա այլևս ոչ մեկին չէր ուզում պարտական լինել: Նա ասել էր. «Իբիետայի տանը կթաքնվեի, բայց քանի որ նրան բռնել են, կթաքնվեմ գերեզմանոցում»: Գերմանացիներն էլ այս առավոտ գերեզմանոցը տակնուվրա են արել և նրան գտել գերեզմանափորների խրճիթում:

Շուրջս ամեն ինչ սկսեց պտտվել: Ես նստեցի գետնին, որ չընկնեմ:

ՊԼԱՆ

1. Հարցաքննություն:
2. Նկուղում:
3. Մահապատժից առաջ:
4. Թոմն ու Խուանն տանում են մահապատժի:
5. Կյանք՝ մատնության գնով:
6. Ակամա մատնիչը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել՝*

ա) Հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

երգը երգվել, այրող տարափ, գրգռվել, վերապրել մահապատիժը, աչքերը շաղափել, անողոքության անձուկ ճիրաններ, քառորդ, զարմիկ, քմծիծաղել, ապաստան.

բ) Հետևյալ հատուկ անունները.

Պաբլո Իբիետա, Ռամոն Գրիս, Թոմ, Խուան, Սարագոսա, Գարսիա, Իսպանիա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ժան-Պոլ Սարտրը ֆրանսիացի խոշոր գրող է:*

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՔՐՄՈՒՀԻՆ

Ըստ տարբեր աղբյուրների

Փոքրիկ, կանաչազարդ գյուղ էր Դոմրեմին: Ֆրանսիայի գեղատեսիլ այդ անկյունը հեռու էր կենտրոնական ճանապարհներից. ապրում էր մեկուսի, խաղաղ էր՝ փռված ճերմակ մարգարտածաղիկներով ծածկված մարգագետնի վրա:

Հրաշեկ կեսօր էր: Գյուղից դուրս՝ Հուսթի արոտավայրում, երևում են ցանուցիր ոչխարներ, որոնք համգիստ արածում են: Քիչ այն կողմ՝ կանաչ խոտերի վրա, նստած է տասնհինգամյա մի աղջնակ՝ արևառ դեմքով, պայծառ, սևորակ աչքերով: Դա հովվուհին է, որ ամեն օր արածեցնելու է բերում գյուղացիների ոչխարները: Անհամգստության նշույլ չկա աղջկա աչքերում: Նա գիտե՝ ոչ ոք չի համարձակվի մոտենալ հոտին: Բոլորն են ճանաչում խիզախ պարմանուհուն, գիտեն ձեռքի թափը և մտածում են՝ ավելի լավ է գործ չունենալ հետը: Ուժեղ է, համարձակ, հրաշալի գիտե նժույգ վարել և սուր գործածել: Շատ է պատահել, որ կռվել է հասակակից տղաների հետ, բայց երբեք չի պարտվել: Անողոք է և գիտե պատժել իրեն վիրավորողին:

Այդ քաջազնուհուն անվանում են Ժաննա, ավելի լրիվ՝ Ժաննա դ՛ Արկ:

Դեռևս 1337 թվականից Անգլիայի և Ֆրանսիայի միջև սկսված պատերազմը շարունակվում էր և ժամանակ առ ժամանակ նոր թափով բորբոքվում: Երբ Ժաննա դ՛ Արկը 18 տարեկան էր, այն առանձնակի ուժով վերսկսվեց և իր հորձանքի մեջ առավ ողջ ազատատենչ Ֆրանսիան: Պատերազմի հուժկու ալիքը հասավ նաև Դոմրեմի և եկեղեցու զանգերի ահեկտուր ղողանջների միջոցով գյուղացիներին հրավիրեց ժողովի:

- Հավատացյա՛լ ժողովուրդ, - դիմեց հոգևոր հայրը հավաքվածներին, - թշնամին դարձյալ գլուխ է բարձրացրել: Սրբազնագույն կաթոլիկ եկեղեցին երկնային հոր անունով ձեզ կոչում է ընդդեմ թշնամու: Ի զե՛ն, հանուն Ֆրանսիայի:

Համագյուղացիների մեջ կանգնած Ժաննան զգաց ներքին անծանոթ մի սարսուռ: Ինչպե՞ս: Իր հայրենիքը օտարի լծի տա՞կ. իրենք ստրու՞կ: Վերցնելով տանը պահվող դրոշը՝ նա շտապեց եկեղեցու գավիթը և հայտարարեց.

- Այսուհետև իմ անձը պատկանում է հայրենիքին: Ովքեր ուզում են միանալ, թող հավաքվեն այս դրոշի տակ:

Շատ արագ Ժաննայի շուրջը համախմբվեցին Դոմրեմիի, ապա նաև մոտակա գյուղերի երիտասարդները: Օրեցօր նոր մարդկանցով համալրվող աշխարհազորը մեկը մյուսի հետևից տանում էր ապշեցուցիչ հաղթանակներ: Սակայն դա չէր բավարարում Ժաննային: Նա հասկանում էր, որ առանց կանոնավոր բանակի ինքը վերջնական հակահարված տալ թշնամուն չի կարող: Մեծ դժվարությամբ նրան հաջողվեց ներկայանալ Ֆրանսիայի թագավոր Կարլոս Յոթերորդին:

- Ձե՛րդ գերազանցություն, - խոսեց նա համարձակ, - իմ անվարժ զորագնդերով չեմ կարող հասնել մեծ հաղթանակի: Տու՛ր ինձ մարզված զինվորներ, և Ֆրանսիան ազատագրված կլինի:

Կարլոս 7-րդը հիացած էր քաջարի գեղջկուհի ժաննայով: Նրանից հորդացող հերոսականությունը, վճռականությունը այնքան վարակիչ և ներգործող էին, որ Կարլոսը ոգևորված կատարեց աղջկա խնդրանքը:

Շուտով ժաննայի մարտիկներին կարելի էր հաշվել հազարներով: Խիզախ զորապետուհին հմայել, սանձել, կախարդել էր ամենքին: Այդքա՞ն երիտասարդ, բայց արդեն առասպել էր դարձել ֆրանսիացիների շուրթերին: Նրա մասին հեքիաթներ ու լեգենդներ էին պատմում և մեծարում՝ ինչպես աստվածուհու: Նա դարձել էր Ֆրանսիայի կույսը, անգլիացիների՝ սարսափը:

Ժաննա դ՛ Արկի հաղթարշավի փառապսակը դարձավ պաշարված Օռլեանի ազատագրումը:

Կաթոլիկական եկեղեցին, որ մինչ այդ աչալուրջ հետևում էր աղջկա գործողությունններին, սկսեց անհանգստության նշաններ ցույց տալ: Օռլեանի հերոսամարտը սովորական հաղթանակ չէր: Մտածում էին՝ սա արդեն գեղջուկ կնոջ խելքի բանը չէ: Այստեղ խառն է սատանայի, պիղծ դևերի մասը: Այո՛, այո՛, ժաննան համագործակցում է նրանց և շարժվում չար ոգիների թելադրանքով: Ո՞վ է տեսել, որ կին ինչ-որ անբացատրելի զորությամբ իրեն ենթարկի այդքան տղամարդու, ո՞վ է լսել, որ կնոջից այդպես սարսափեն թշնամիները: Հաստատապես նա կախարդուհի է, գերբնական էակ, ուրեմն և՝ հերետիկոս: Սրբազնագույն կաթոլիկական եկեղեցին ամենազոր է և գիտե պատժել այդպիսիներին:

Սուրբ հայրերի՝ շշուկով արտահայտած մտքերը աստիճանաբար լսելի դարձան և շուտով հասան պալատ:

Թագավորն ու ազնվականներն էլ ունեին իրե՛նց հուզախռով մտատանջությունները: Իսկ եթե այդ դիվային կինը զորքը շրջի միապետությա՞ն դեմ: Ո՞վ կարող է ահեղ հեղեղի առաջն առնել: Բավական է, որ ժաննան հրամայի: Լուվրն ու Թյուիլրին գետնին կհավասարվեն, դրանց հետ էլ՝ տիրող գահը:

Եկեղեցու և պալատի շահերն ու կարծիքները զարմանալի ներդաշնակությամբ զուգադիպեցին:

Թիկունքում զգալով թագավորի հովանավորությունը՝ կաթոլիկական եկեղեցին շտապեց ժաննա դ՛ Արկին բացեիբաց հայտարարել հերետիկոս՝ մեղադրելով սատանայի հետ համագործակցելու մեջ:

1431 թվական: Ֆրանսիայի Ռուան քաղաքի հրապարակում հավաքված են հազարավոր մարդիկ: Կենտրոնում բոցկլտում է հավատաքննիչների հսկա խարույկը: Պահապաններով շրջապատված՝ հրապարակ է մտնում մի կին: Ժաննա դ՛ Արկն է: Նա պետք է ողջակիզվի խարույկի վրա, որպեսզի իր սատանայական պիղծ զորությամբ չվարակի ուրիշներին:

Ժաննան հերարձակ է, իրեն պահում է համարձակ և արհամարհական հայացքի իսկ չի արժանացնում հարթակի վրա կանգնած հավատաքննիչներին:

Խարույկի բոցերն արդեն լիզում են աղջկան, բայց նա չի ընկրկում:

- Կեցցե՛ պայծառ Ֆրանսիան, - գոչում է ընդոստ: - Կգա ժամանակ, որ չեն լինի այսօրվա տգետ իշխողները: Գալիք սերունդները անարգանքի սյունին կգամեն նրանց: Իսկ հանուն հայրենյաց մարտնչողի անունը հավերժ անմեռ կմնա:

Հավատաքննիչները թույլ չտվեցին ժաննային շարունակել խոսքը: Նրան նետեցին բոցերի մեջ...

Ժաննա դ՛ Արկի մահը ծնունդ տվեց նոր առասպելների ու լեգենդների: Ժողովուրդը նրան հռչակեց ազգային հերոսուհի, այնպես որ կաթոլիկական եկեղեցուն մնում էր լոկ հաշտվել իրողության հետ: Սակայն միայն հինգ դար անց նա ներեց իր «մոլորյալ» դստերը և դասեց սրբերի շարքը:

ՊԼԱՆ

1. Դոմրեմի գյուղը և նրա հովվուհին:
2. Պատերազմ Ֆրանսիայի և Անգլիայի միջև:
3. Ժաննան Հայրենիքի դրոշի տակ:
4. Հաղթարշավ:
5. Կաթոլիկ եկեղեցու և պալատական վերնախավի մտահոգությունը:
6. Ողջակեզ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կանաչազարդ գյուղ, ճերմակ մարգարտածաղիկներ, հուռթի մարգագետիններ, հրաշեկ, արևառ դեմք, սևորակ աչքեր, հովվուհի, խիզախ պարմանուհի, պատերազմի հուժկու ալիք, եկեղեցու զանգերի աղեկտուր ղողանջներ, ներքին անծանոթ մի սարսուռ, աշխարհազոր, քաջարի գեղջկուհի, հերետիկոս, ողջակեզ, ընկրկել:

2. Բացատրել ***պարմանուհի, հավատաքննություն, հերետիկոս, ընկրկել*** *բառերի իմաստը:*

ՁԱՅՆ

Ըստ Լուիջի Պիրանդելլոյի

(դատողական փոխադրություն)

Երիտասարդ մարկիզ Սիլվիոն արդեն մեկ տարի էր, ինչ կուրացել էր: Նրա մայրը շատ բժիշկներ հրավիրեց, շատ տառապեց, բայց ոչ մի հույս: Բոլոր ակնաբույժները միաբերան հաստատեցին, որ երիտասարդի կուրությունն անդառնալի է: Մարկիզուհին ցանկացավ խորհրդակցել մի ուրիշ բժշկի հետ էլ: Այս ակնաբույժը շատ ուշադիր զննեց երիտասարդին: Նա բացահայտ ոչինչ չասաց, միայն խոստացավ մեկ անգամ էլ գալ ու քննել հիվանդին:

Բժիշկը կատարեց իր խոստումը: Բայց երբ երկրորդ անգամ եկավ դղյակ, այստեղ տեսավ մարդկանց մեծ բազմություն: Վախճանվել էր մարկիզուհին, հանկարծամահ էր եղել:

«Խեղճ մարկիզուհի, - մտածեց ակնաբույժը, - եթե այն ժամանակ հայտնած լինեի, որ կարելի է հույս տածել հիվանդությունը բուժելու համար, նա կյանքից չէր հեռանա այն համոզմամբ, որ միակ որդուն թողնում է մշտապես կուրության դատապարտված»:

Քիչ անց նրան մոտեցավ ոտքից գլուխ սև հագած շիկահեր մի օրիորդ՝ մարկիզուհու նաժիշտը:

- Մարկիզն այժմ այնպիսի հոգեվիճակում է, որ հարմար չէ ձեր այցի մասին տեղեկացնել նրան: Ես հետո նրան կհայտնեմ, և նա ձեզ կհրավիրի:

Մարկիզուհու մահվանից անցել էր երեք ամիս: Երիտասարդ մարկիզի ֆիզիկական կուրությանն ավելացել էր նաև հոգու կուրությունը: Նրան թվում էր, թե այս լայնարձակ աշխարհում ինքը մնացել է մեն-մենակ, անօգնական ու արհամարհված բոլորի կողմից:

Այդ օրերին կույրի ուշադրությունը գրավեց նաժիշտի ձայնը: Այդ ձայնը գալիս էր ցրելու երիտասարդի հուսահատությունը, իր ջերմ թրթիռներով ափեափ լցնում սիրտը:

Մարկիզը՝ ազնվականի դալուկ դեմքով և կիրթ շարժուձևով, չէր կարող չշարժել նաժիշտի՝ Լիդիայի սիրտը:

- Ինձ միայնակ մի՛ թողեք, - հաճախ աղերսում էր մարկիզը՝ բռնելով Լիդիայի քնքուշ ձեռքը:

Ու մի անգամ էլ, երբ մենակ էին, շոյեց նրա դեմքը, մազերը և ասաց քաղցրությամբ.

- Շիկահեր եք, այնպես չէ՞, օրիո՛րդ:

- Այո՛, - պատասխանեց Լիդիան և էլ ոչինչ չավելացրեց:

Ի՞նչ ասեր: Այո՛, շիկահեր էր, բայց ուղիղ և նոսր մազեր ուներ: Այո՛, կապույտ աչքեր ուներ, բայց դրանք մանրիկ էին, թախծոտ, կողք կողքի ծվարել էին բարձր ճակատի տակ: Դեմքով գեղեցիկ չէր, բայց բարեկազմ էր, ուներ շատ գեղեցիկ ձեռքեր և սքանչելի ձայն, որոնք խիստ անհամատեղելի էին տգեղ դեմքի հետ:

Օր օրի Լիդիային սկսեց թվալ, թե ինքը մարկիզի երազների ստեղծած շիկահեր գեղեցկուհին է: Նա ջերմորեն սիրում էր իր կույր ասպետին: Սիրում էր և տառապում: Ի՞նչ կասեին մարդիկ, չէի՞ն մտածի, թե Լիդիան համաձայն է ամուսնանալ կույր մարդու հետ, որպեսզի հարստանա և մարկիզուհի կոչվի:

Լիդիան հասկանում էր, որ ինքը նման չէ մարկիզի մտապատկերներում եղած աղջկան, սակայն նրան ոչինչ չէր ասում:

Շուտով մարկիզը Լիդիային առաջարկություն արեց, և որոշվեց հարսանիքի օրը: Օրիորդը իր տրամադրության տակ մեկուկես ամիս ուներ: Դրանք երջանիկ օրեր էին՝ լի քնքշությամբ ու սպասումով:

Հենց այդ ժամանակ էլ ակնաբույժը նորից հայտնվեց:

- Իմ այս այցն էլ երևի անժամանակ է, - ասաց բժիշկը՝ ուղիղ Լիդիայի աչքերի մեջ նայելով: - Օրիո՛րդ, ես գիտեմ, որ սերը կույր է: Բայց մի՞թե դուք ուզում եք, որ ձեր սերը կույր լինի նաև ֆիզիկապես:

- Դուք համոզվա՞ծ եք, որ մարկիզը նորից կտեսնի, - հարցրեց Լիդիան:

- Բուժման ելքն այնքան հուսալի է, որ ես համարձակվել եմ ձեզ մոտ գալ առանց հրավերի, - ասաց բժիշկը:

Մի պահ զննելով օրիորդի դեմքը՝ ակնաբույժն ավելացրեց.

- Օրիո՛րդ, եթե ցանկանում եք, ես ձեզ մոտ կգամ ամուսնությունից հետո:

- Ո՛չ, - հպարտորեն ասաց Լիդիան և բժշկին տարավ մարկիզի մոտ:

Մղձավանջի պես անցավ երկու օր: Բուժարանից ուրախ լուր եկավ: Մարկիզը երազում էր տեսնել իր քնքուշ Լիդիային:

Օրիորդը տանն ամեն ինչ պատրաստեց մարկիզին ընդունելու համար: Հետո հավաքեց իրերը և հեռացավ դղյակից՝ արդեն տեսնող մարկիզի սրտում թողնելով միայն իր սքանչելի ձայնը:

ՊԼԱՆ

1. Կույր մարկիզը:
2. Ակնարույժի այցը:
3. Մարկիզուհու մահը:
4. Մարկիզի հուսահատությունը:
5. Նամիշտը:
6. Սեր և ամուսնության առաջարկ:
7. Ակնարույժի երրորդ այցը:
8. Վիրահատություն:
9. Փախուստ դղյակից:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

երիտասարդ մարկիզ, ակնարույժներ, միաբերան հաստատել, անդառնալի կուրություն, հանկարծահաս լինել, հույս տածել, մշտապես կուրության դատապարտված, նամիշտ, հոգու կուրություն, մեն-մենակ, անօգնական ու արհամարհված, լռությունը չոյել, ջերմ թրթիռներով ափեափ լցնել, ադնվական դալուկ դեմք, կիրթ շարժուձև, չիկահեր, ուղիղ և նոսր մազեր, մանրիկ, թախծոտ, կողք կողքի ծվարել բարձր ճակատի տակ, բարեկազմ, երազների ստեղծած չիկահեր գեղեցկուհի, քնքշությամբ ու սպասումներով լի, բուժման հուսալի ելք, մղձավանջի պես անցնել:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Լուիջի Պիրանդելլոն (1867 - 1935) իտալացի նշանավոր գրող է, բանաստեղծությունների, պատմվածքների, պիեսների հեղինակ: 1934 թվականին ստացել է Նոբելյան մրցանակ:*

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Ըստ Մոպասանի

Քահանա Մարինիոնը բարձրահասակ, նիհար մարդ էր՝ հավատարիմ իր կոչմանն ու առաքելությանը: Հավատում էր Աստծուն և վստահ էր, որ հասկանում է նրա կամքը և խորհուրդները: Նա այն մարդկանցից չէր, որոնք կուրորեն սիրում են կրկնել. «Անքնին են Աստծո գործերը»: Ո՛չ, քահանան վերլուծում էր բնության յուրաքանչյուր երևույթ, որոնում դրանց պատճառները: Նա այն կարծիքին էր, որ Արարիչն ամեն ինչ իր տեղում է ստեղծել: Օրինակ՝ արշալույսն ստեղծված է, որ մարդկանց բարի օր մաղթի, արևը՝ բերքը հասունացնելու համար, անձրևը՝ հողը ջրելու, գիշերը՝ քնելու և հանգստանալու: Կար մի բան սակայն, որ քահանան ոչ միայն չէր ընդունում, այլև մերժում էր կատարելապես: Դա կինն էր, սերը նրա նկատմամբ: Նրան թվում էր, թե Աստված ինքն էլ դժգոհ է իր այդ արարչագործությունից: Կինը չէ՞ր, որ խաբեց նախամարդուն և ողջ մարդկության գլխին կոտրեց Բարձրյալի զայրույթը և ճակատագրական վճիռը. «Հող էիք, հող դառնաք»: Կինն ստեղծվել է տղամարդուն դեպի իր գայթակղիչ թակարդը հրապուրելու և միայն ու միայն փորձանքի մեջ գցելու համար:

Այսպես էր մտածում քահանան և ըստ հնարավորին խուսափում կանանցից:

Քահանա Մարինիոնը ժամնա անունով մի քրոջաղջիկ ուներ, որն ուրախ ու վառվռուն օրիորդ էր: Խստաբարո մորեղբայրը շատ էր սիրում նրան և ցանկանում էր դաստիարակել իր ձևով: Բայց երբ փորձում էր խրատներ տալ, աղջիկը գրնգուն ծիծաղում էր, անհամբերության նշաններ ցույց տալիս, նայում խոտերին, ծաղիկներին, վազում թիթեռ բռնելու, ծաղիկ պոկելու: Իսկ երբ առիթի դեպքում քահանան բարկանում էր, աղջիկը գրկում էր նրան, ամուր փարվում և պինդ-պինդ համբուրում: Տերունին աշխատում էր խուսափել աղջկա գգվանքներից, սակայն հոգու

խորքում մի քաղցր ուրախություն էր զգում: Նրա մեջ արթնանում էր սրտում քնած հայրական զգացումը, որից ինքն իր կամքով զրկված էր եղել ողջ կյանքում:

Մի օր ժամհարի կինը, որ քահանայի տան տնտեսուհին էր, զգուշությամբ հայտնեց նրան, որ Ժաննան սիրահար ունի: Լուրն այնքան անսպասելի էր, որ քահանան մի պահ շնչահեղձ եղավ, կորցրեց մտածելու, հարց տալու, խոսելու կարողությունը: Քիչ անց, երբ մի փոքր սթափվեց, աղաղակեց.

- Ճշմարիտ չէ՛, սու՛տ ես խոսում, Մելանի՛:

- Թող Աստված ինձ պատժի, եթե սուտ եմ, պարո՛ն քահանա: Ամեն գիշեր, հենց որ ձեր քույրը քնում է, աղջիկը դուրս է գալիս, գնում: Նրանք հանդիպում են գետափին: Կարող եք ինքներդ գնալ տեսնել ժամը տասից մինչև կեսգիշեր:

Ամբողջ օրը քահանան պայթում էր բարկությունից: Չէ՞ որ նա իրեն համարել էր աղջկա հոգևոր հայրը, դաստիարակը, հոգին փրկողը: Այժմ զգում էր խաբված, կողոպտված, այդ երեխայի ձեռքին խաղալիք դարձած:

Երբ գիշերվա տասը խփեց, նա վերցրեց ձեռնափայտը և ատամները կրճտացնելով մոտեցավ դռանը: Դուրս եկավ պատշգամբ և հանկարծ կանգ առավ՝ լուսնյակ գիշերվա պայծառ լույսով հիացած: Փոքրիկ պարտեզում, որ ամբողջովին ողողված էր քաղցր լույսով, շարք-շարք կանգնած ծառերը ստեղծել էին լույսի և ստվերի զարմանալի խաղեր: Հսկա այծատերև թուփը, մագլցելով ծառի վրա, արձակում էր շաքարի պես անուշ բուրմունք. Քահանան շարժվում էր համրաքայլ, ափանչացած, գրեթե մոռացած քրոջ աղջկան:

Հասավ դաշտ: Նույն հիասքանչ պատկերը: Շրջակայքը ողողված էր մեղմ ու հեզիկ կաթնալույսով և ընկղմված պայծառ գիշերի քնքուշ ու անրջային քաղցրության մեջ: Գետի վրա շղարշի պես կախվել էր մի նոսր մշուշ, իջել ջրերին՝ որպես թեթև ու թափանցիկ ծուխ:

Քահանան հուզված կանգ առավ: Ու՞մ համար են նախասահմանված այդ լուսացնցուղ տեսարանը, երկնքից թափվող այդ օդեղեն բանաստեղծությունը: Ու՞մ համար: Չէ՞ որ քնած են մարդիկ, քնած է աշխարհը: Մի՞թե Աստված ինքն իր համար է դա ստեղծել:

Քահանան ուշքի չէր եկել այդ բոլոր գեղեցկություններից, երբ ահա գետափին՝ ծառերի կամարի տակ, տեսավ երկու ստվեր: Տղան հասակով ավելի բարձր էր և երբեմն-երբեմն կռանալով՝ փարվում էր աղջկան: Նրանց ներկայությունից անշարժ տեսարանն ասես միանգամից կենդանացավ, բնությունը դարձավ կատարյալ: Ա՛յ հիմա ամեն ինչ իր տեղն ընկավ, կյանքով լցվեց:

Քահանան ցնցվեց: Ահա թե ում համար էին լուսնյակ գիշերվա սքանչելիքները: Տղան ու աղջիկը կենդանի պատասխանն էին ծեր քահանայի լուռ հարցումի: Նա կանգնած էր շփոթված, հուզված: Նրան թվում էր, թե տեսնում է Աստվածաշնչի սիրո տեսարաններից մեկը, լսում «Երգ երգոցը»՝ կնոջ ու սիրո գովերգման աստվածաշնչյան պայծառ հիմնը: Թվում էր՝ լսում է Աստծո ձայնը. «Աշխարհը սեր է»:

Քահանա Մարինիոնը հետ-հետ գնաց, որ չխանգարի սիրահարներին, այլապես մի՞թե ինքը Աստծո կամքին դեմ չի գնա, և մի՞թե Աստված չէ, որ թույլատրել է սերը: Ո՞վ է ինքը, որ միջամտի Աստծո գործերին: Ու նա փախավ ինքն իրեն կորցրած, գրեթե ամոթահար: Կարծես մտած լիներ մի լուսե տաճար, ուր մտնելու իրավունք չուներ:

ՊԼԱՆ

1. Քաղանա Մարինիոնը:
2. Ժաննան:
3. Ցնցող լուր:
4. Լուսնյակ գիշեր:
5. Աշխարհը սեր է:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

կուրորեն կրկնել, անքնին, արարչագործություն, նախամարդ, Բարձրյալ, ճակատագրական վճիռ, գայթակղիչ Թակարդ, վաղվոուն օրիորդ, խստաբարո, զրնգուն ծիծաղել, անհամբերության նշաններ ցույց տալ, հայրական զգացում, ժամհար, շնչահեղձ լինել, հոգևոր հայր, լույսի և ստվերի զարմանալի խաղեր, մեղմ ու հեզիկ կաթնալույս, քնքուշ ու անրջային քաղցրություն, նոսր մշուշ, թեթև ու թափանցիկ ծուխ, լուսացնցուղ տեսարան, օդեղեն բանաստեղծություն, լուսե տաճար:

ԼԱՄՊԸ ՎԱՌՎՈՒՄ Է ՈՂՋ ԳԻՇԵՐ

Ըստ Ահմադ Արասի

Ծովի հեռուներում մայր էր մտնում արեգակը: Սլացիկ արմավենիների խիտ պսակները արտացոլվում էին ծովափնյա ջրերում և ուրվագծվում մայրամուտի մեղմ գույներով ներկված իրիկնային երկնքի խորքերում: Երկնքով լողում-անցնում էին բազմագույն ամպեր: Դրանց մեջ կային և՛ կրակի ցոլքեր, և՛ մահվան ստվերներ, և՛ ոսկու աղոտ փայլ, և՛ արյան կարմիր:

Զմայլվում էի այդ կախարդական երեկոյով: Նավակ վարձեցի, որ զբոսնեմ ծովի վրա: Նավավարը մռայլ ու հոգնաբեկ մի մարդ էր: Նրա տարիքը հնարավոր չէր որոշել. ո՛չ ծեր էր, ո՛չ էլ երիտասարդ:

Շուտով մութն իջավ, և ծովը թաղվեց խորհրդավոր խավարի մեջ: Հանկարծ հեռվում մի թույլ լույս առկայծեց:

- Այս ի՞նչ է, - զարմացա ես:

- Շուտով կիմանաք, պարո՛ն, - ասաց նավավարը:

Ինձ թվաց, թե նրա ձայնը դողդողաց:

Նավավարը զգույշ թիավարեց դեպի լույսը: Շուտով տեսա մի նավակ, որի մեջ նստած էր մի կին՝ վառվող մարխը ձեռքին: Կինը նավակը կանգնեցրեց: Այդտեղ ես տեսա ջրից դուրս ցցված ծառի մի բուն: Այդ ծառաբնին լամպ էր կապված: Նա լամպի մեջ նավթ լցրեց, հետո վառեց լույսը ու մոտեցրեց պատրույգին:

Կնոջ գլխանոցը սահեց, և ես տեսա նրա դեմքը: Գեղեցի՞կ էր, չգիտեմ: Բայց դա այն դեմքերից էր, որոնք երբեք չեն մոռացվում:

Կնոջ դեմքը լուսավորված էր ինչ-որ ներքին լույսով, իսկ բարակ շուրթերին ժպիտ էր խաղում: Նրա մեծ, պայծառ աչքերում անխախտ հավատ կար: Այդպիսի աչքեր ունենում են նահատակները և սիրահարված աղջիկները, որ ամեն բոպե սպասում են իրենց սիրելիի գալուն:

Հանկարծ կինը սկսեց երգել: «Ես ողջ գիշեր վառ եմ պահում լամպը, որ լուսավորեմ քո ճամփան, երբ դու գաս, իմ սիրելի՛», - լսում էի երգի բառերը:

Ես հասկացա՝ կինը լամպը վառում է, որ սիրեցյալը ճամփան չկորցնի ու իր մոտ գա:

- Ո՛չ, նա չի գա ո՛չ այսօր, ո՛չ վաղը: Նա մահացել է: Նա մահացել է մի քանի տարի առաջ, - նավավարի ձայնը բեկբեկուն էր: - Ես սեփական աչքով տեսա անմահ սերը. սերը, որի մասին գրում են հեքիաթներում, և որն այնքա՜ն հազվադեպ է պատահում կյանքում:

Կրիշնան գեղեցիկ ու քաջ տղամարդ էր: Նա գլխավորում էր նավավարների ապստամբությունը: Նա նաև սիրում էր, ջերմորեն սիրում էր իր Ռադխային: Ափից լողում էր դեպի այն կղզին, ուր ապրում էր սիրած աղջիկը: Ամեն գիշեր Ռադխան ծով էր դուրս գալիս, վառում լամպը, որ ճանապարհ ցույց տա Կրիշնային: Այն վառվում էր ճիշտ այնպես, ինչպես այսօր:

Մի անգամ գիշերը լամպը հանգցրին, հանգցրեց Կրիշնայի մոտ ընկերը, որը ևս խենթի պես սիրում էր Ռադխային, թեև գիտեր, որ Ռադխան բացի Կրիշնայից ոչ մեկին իր ուշադրությանը չի արժանացնի, որ Կրիշնայի մահն իրեն երջանկություն չի բերի: Այդպիսի գիշեր լամպը հանգցնելը հավասար էր սպանության: Նրա հանցագործությունը դարձավ մի դաշիճ, որ տանջում է հոգին՝ զրկելով հանգստից ու քնից, - նավավարի ձայնը գրեթե լալագին շեշտ ստացավ:

«Մի՞թե», - մտածեցի ու չուզեցի հավատալ:

- Կրիշնան խեղդվեց այդ գիշեր: Այդ դեպքից հետո նավավարները ոստիկանությունից վախեցան և դադարեցրին գործադուլը, - քիչ լռելուց հետո շարունակեց պատմել նա: - Իսկ Ռադխան մինչև հիմա էլ դրան չի հավատում: Ամեն գիշեր ծով է դուրս գալիս, վառում լամպը, վերադառնում կղզի, ողջ գիշեր նստում իր խրճիթի դռանն ու սպասում իր սիրելիին:

- Իսկ ի՞նչ եղավ այն սրիկան, որ սպանեց Կրիշնային: Նա հիմա ի՞նչ է անում, - գայրացած հարցրի ես:

Նավավարը լուռ էր: Նա նստել էր նավախելին՝ գլուխն ուսերի մեջ քաշած ու կորացած: Իմ դիմաց վշտի ու զղջման մարմնացումն էր նստած:

Նավավարի լռությունը ավելի քան պերճախոս էր:

Ես դուրս եկա նավակից: Քայլեցի ծովափով: Երկնքում աստղեր էին վառվում: Ծովի մեջ էլ մի աստղ կար: Դա Ռադխայի վառած աստղն էր, նրա սիրո և հույսի անմար աստղը ...

ՊԼԱՆ

1. Մայրամուտը ծովի վրա:
2. Զբոսանք նավակով:
3. Աղոտ լույս մթության մեջ:
4. Կինը վառում է ճրագը:
5. Կնոջ երգը:
6. Նավավարի պատմածը:
7. Կրիշնայի և Ռադխայի սերը:
8. Ոճրագործություն՝ հանուն սիրո:
9. Զղջացող նավավարը:
10. Սիրո անմար աստղը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.

Ծովի հեռուն, ալացիկ արմավենի, խիտ պսակ, ծովախորշի թափանցիկ ջրեր, մայրամուտի մեղմ գույներ, երկնային երկինք, լողալ-անցնել, կրակի ցոլքեր, մահվան ստվերներ, ոսկու աղոտ փայլ, արյան կարմիր, կախարդական երեկո, մռայլ ու հողնաբեկ մարդ, թույլ լույս առկայծել, ծառաբուն, նավթ, պատրույգ, ներքին լույս, ժպիտ խաղալ, անխախտ հավատ, բեկբեկուն ձայն, անմահ սեր, երեք մղոն լողալ, խենթի պես սիրել, լալագին շեշտ, վշտի ու զղջման մարմնացում, պերճախոս լռություն, սիրո և հույսի անմար աստղ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ահմադ Աբասը ժամանակակից հնդիկ գրող է:*

Ես հասկացա՝ կինը լամպը վառում է, որ սիրեցյալը ճամփան չկորցնի ու իր մոտ գա:

- Ո՛չ, նա չի գա ո՛չ այսօր, ո՛չ վաղը: Նա մահացել է: Նա մահացել է մի քանի տարի առաջ, - նավավարի ձայնը բեկբեկուն էր: - Ես սեփական աչքովս տեսա անմահ սերը. սերը, որի մասին գրում են հեքիաթներում, և որն այնքա՜ն հազվադեպ է պատահում կյանքում:

Կրիշնան գեղեցիկ ու քաջ տղամարդ էր: Նա գլխավորում էր նավավարների ապստամբությունը: Նա նաև սիրում էր, ջերմորեն սիրում էր իր Ռադխային: Ափից լողում էր դեպի այն կղզին, ուր ապրում էր սիրած աղջիկը: Ամեն գիշեր Ռադխան ծով էր դուրս գալիս, վառում լամպը, որ ճանապարհ ցույց տա Կրիշնային: Այն վառվում էր ճիշտ այնպես, ինչպես այսօր:

Մի անգամ գիշերը լամպը հանգցրին, հանգցրեց Կրիշնայի մոտ ընկերը, որը ևս խենթի պես սիրում էր Ռադխային, թեև գիտեր, որ Ռադխան բացի Կրիշնայից ոչ մեկին իր ուշադրությանը չի արժանացնի, որ Կրիշնայի մահն իրեն երջանկություն չի բերի: Այդպիսի գիշեր լամպը հանգցնելը հավասար էր սպանության: Նրա հանցագործությունը դարձավ մի դաշիճ, որ տանջում է հոգին՝ զրկելով հանգստից ու քնից, - նավավարի ձայնը գրեթե լալագին շեշտ ստացավ:

«Մի՞թե», - մտածեցի ու չուզեցի հավատալ:

- Կրիշնան խեղդվեց այդ գիշեր: Այդ դեպքից հետո նավավարները ոստիկանությունից վախեցան և դադարեցրին գործադուլը, - քիչ լռելուց հետո շարունակեց պատմել նա: - Իսկ Ռադխան մինչև հիմա էլ դրան չի հավատում: Ամեն գիշեր ծով է դուրս գալիս, վառում լամպը, վերադառնում կղզի, ողջ գիշեր նստում իր խրճիթի դռանն ու սպասում իր սիրելիին:

- Իսկ ի՞նչ եղավ այն սրիկան, որ սպանեց Կրիշնային: Նա հիմա ի՞նչ է անում, - գայրացած հարցրի ես:

Նավավարը լուռ էր: Նա նստել էր նավախելին՝ գլուխն ուսերի մեջ քաշած ու կորացած: Իմ դիմաց վշտի ու զղջման մարմնացումն էր նստած:

Նավավարի լռությունը ավելի քան պերճախոս էր:

Ես դուրս եկա նավակից: Քայլեցի ծովափով: Երկնքում աստղեր էին վառվում: Ծովի մեջ էլ մի աստղ կար: Դա Ռադխայի վառած աստղն էր, նրա սիրո և հույսի անմար աստղը ... .

ՊԼԱՆ

1. Մայրամուտը ծովի վրա:
2. Զբոսանք նավակով:
3. Աղոտ լույս մթության մեջ:
4. Կինը վառում է ճրագը:
5. Կնոջ երգը:
6. Նավավարի պատմածը:
7. Կրիշնայի և Ռադխայի սերը:
8. Ոճրագործություն՝ հանուն սիրո:
9. Զղջացող նավավարը:
10. Սիրո անմար աստղը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ծովի հեռուն, սլացիկ արմավենի, խիտ պսակ, ծովախորշի թափանցիկ ջրեր, մայրամուտի մեղմ գույներ, իրիկնային երկինք, լողալ-անցնել, կրակի ցոլքեր, մահվան ստվերներ, ոսկու աղոտ փայլ, արյան կարմիր, կախարդական երեկո, մռայլ ու հողնաբեկ մարդ, թույլ լույս առկայծել, ծառաքուն, նավթ, պատրույգ, ներքին լույս, ժպիտ խաղալ, անխախտ հավատ, բեկբեկուն ձայն, անմահ սեր, երեք մղոն լողալ, խենթի պես սիրել, լալագին շեշտ, վշտի ու զղջման մարմնացում, պերճախոս լռություն, սիրո և հույսի անմար աստղ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Սիմադ Արասը ժամանակակից հնդիկ գրող է:*

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱԽԹԱՄԱՐ

Ծիծաղախիտ Վանա ծովի
Փոքրիկ գյուղից առափնյա
Ծովն էր իջնում գաղտագողի
Ամեն գիշեր մի տղա:

Ծովն էր մտնում առանց նավակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող էր տալի
Դեպի կղզին դիմացի:

Խավար կղզուց պարզ ու պայծառ
Մի լույս կանչում է նրան,
Մի վառ փարոս նրա համար՝
Չմոլորի իր ճամփան:

Սիրուն Թամարն ամեն գիշեր
Այնտեղ կրակ է անում,
Եվ սպասում է անհամբեր
Այնտեղ՝ մոտիկ դարանում:

Ծփում է ծովն ալեծածան,
Ծփում է սիրտը տղի,
Գոռում է ծովն ահեղաձայն,
Նա կռվում է կատաղի:

Եվ Թամարը սրտատրոփ
Արդեն լսում է մոտիկ
Ջրի ճողփյուն, ու ողջ մարմնով
Սիրուց այրվում է սաստիկ:

Լռեց: Ծովի խավար ափին
Կանգնեց սև-սև մի ստվեր …
Ահա և նա … իրար գտան …
Խորհրդավո՛ր, լուռ գիշեր …

Միայն ալիքը Վանա ծովի
Մեղմ դիպչում է եզերքին
Եվ հեղհեղուկ հեռանում են
Շշունջներով անմեկին:

Նրանք ասես փսփսում են ...
Ու աստղերը կամարից
Ակնարկելով բամբասում են
Լիրբ, անամոթ Թամարից:

Բամբասում են. կույսի սրտում ...
Ժամն է արդեն ... ու կրկին
Մինն ալեկոծ ծովն է մտնում,
Մյուսն՝ աղոթում եզերքին ...

Բայց մի անգամ չարկամ մարդիկ
Նրանց գաղտնիքն իմացան,
Լույսը հանգցրին սև ու սաստիկ
Մի մութ գիշեր դիվական:

Մոլորվեցավ խավար ծովում
Լողորդ տղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերու՜մ
Հառաչանքներն՝ «Ա՜խ, Թամար ...»:

Մոտ է ձայնը. Սև խավարում
Ժայռերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,
Մերթ կորչում է խլացած
Ու մերթ լսվում ուժասպառ.
«Ա՜խ, Թամա՜ր ... »:

Առավոտյան ծովը ծփաց,
Ափը ձգեց մի դիակ,
Նրա շուրթին պա՜ղ, կարկամած,
Ասես մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՜խ, Թամա՜ր ... »:

ԵՐԿՈՒ ԱՆԲԱԺԱՆ ՍԻՐՏ

Ըստ Պեր Լագերկվիստի

(գրական դաս - փոխադրություն)

Մի քաղաքում երկու եղբայր էին ապրում: Միքայելն ավագն էր, իսկ Ստեֆանը մի քանի տարով փոքր էր նրանից: Դարբնոց ունեին նրանք, որ որպես ժառանգություն մնացել էր հորից:

Քանի դեռ կենդանի էր հայրը, ղեկավարում էր զավակներին, և նրանց բնավորության տարբերություններն այնքան ցայտուն չէին զգացվում: Բայց երբ ծերունը հրաժեշտ տվեց կյանքին, այդ տարբերությունները պարզորոշ դրսևորվեցին: Միքայելն առաջարկում էր քանդել հին դարբնոցը և փոխարենը ընդարձակ ժամանակակից արհեստանոց կառուցել: Թե՛ Ստեֆանը, թե՛ մայրը չխրախուսեցին այդ նախաձեռնությունը: Նրանց թվում էր, թե պապենական արհեստանոցի հետ կանհետանան նաև անցյալի հիշատակները:

Վեճը եղբայրների մեջ գնալով խորացավ, և համերաշխությունն այլևս անհետացավ նրանց ընտանիքից:

Անցավ երկու տարի, սակայն փոխադարձ գայրույթը միայն աճում էր: Միքայելն ամուսնացավ, հին դարբնոցից ոչ հեռու մի նոր արհեստանոց կառուցեց, շատ հաճախորդներ ունեցավ և ունևոր մարդ դարձավ: Իսկ դեպի հին դարբնոցը տանող ճանապարհը գրեթե բոլորը մոռացան: Ստեֆանը սկսեց օրերը քարշ տալ աղքատության մեջ և չարությամբ լցվեց ավագ եղբոր նկատմամբ, որն իրենից խլել էր օրվա հացը, կարիքի գիրկը նետել: Իր հերթին Միքայելը դառնացած էր ու տխուր: Ինչպե՞ս ուրախ լիներ, երբ ծեր մայրը երբևէ ոտք չէր դրել նրա շեմին, արդեն կուչ-տացած ձեռքերով ոչ մի անգամ չէր շոյել թոռներին:

Այդ ժամանակ էր, որ բռնկվեց պատերազմը, և եղբայրներին, որ արդեն քառասունին մոտ էին, զինծառայության կոչեցին:

Ուազմաճակատը մի անսովոր աշխարհ էր: Պայթում էին արկերը, հողը դղրդում էր, ծածկվում դիակներով: Եղբայրները, որ նույն զորամասում էին ծառայում, հազվադեպ էին տեսնում իրար, հանդիպելիս էլ չփոթված գլխով էին անում ու արագ հեռանում:

Պատերազմի քսաներորդ օրն էր: Զորագնդերը գրոհի էին նետվում, զինվորները զոհվում էին ամեն ինչ ոչնչացնող մետաղի հեղեղի ներքո: Ահա մեկը մյուսի հետևից առաջ նետվեցին երկու ջոկատ: Միքայելը առաջինում նկատեց Ստեֆանին և նույն պահին տեսավ հանկարծ, թե ինչպես նա օրորվեց և ընկավ: Քիչ էր մնում Միքայելի աչքերը դուրս թռչեին խոռոչներից: Ձեռքերը պարզեց, առաջ նետվեց, որ հենարան լինի եղբորը, բայց նույն պահին նրա առջև ևս մի արկ պայթեց: Նրան թվաց, թե ինքն ակնթարթորեն սուզվեց խավարի թագավորության մեջ: Քիչ անց, երբ նստեց հողին, սարսափով հասկացավ, որ կորցրել է տեսողությունը: Նա դառնորեն հեկեկաց, բայց վայրկենապես հիշեց Ստեֆանին: Այո՛, եղբայրը օրորվեց և

ընկավ: Միքայելը պատկերացրեց, որ եղբայրը պառկած է մոտակայքում ինչ-որ տեղ և ծանր վիրավորված՝ արնաքամ է լինում: Ականջ դրեց: Ամեն կողմից լսվում էին ճիչեր ու հառաչանքներ, որոնց մեջ փորձեց ճանաչել եղբոր ձայնը: Բայց աղաղակները միաձուլվում էին, դառնում անլսելի հեկեկանք: «Պետք է գտնեմ նրան», - մտածեց տենդագին և փորսող տալով շարժվեց դեպի անթափանց խավարը: Խարխափելով առաջ գնաց արկերի տարափի ներքո: Ահա գետնին փռված մի մարդ գտավ: Շոշափեց: Ո՛չ, եղբայրը չէր: Երկրորդը, երրորդը: Վերջապես խոնարհվեց մի ուրիշի վրա, շոշափեց: Մորուքավոր էր: Եղբոր նման: Գոռաց, եղբոր անունը տվեց: Ոչ մի ձայն: Ձեռքը տարավ դեպի վիրավորի դեմքը, շոշափեց յուրաքանչյուր կնճիռ: Փորձեց հիշողության մեջ վերականգնել եղբոր դիմագծերը, և հայտնաբերելով, որ դրանք սկսել են ջնջվել իր հիշողությունից՝ խղճի խայթից հեկեկաց: Վերհիշեց այն բոլոր տարիները, երբ ինքը ոչ մի անգամ սիրով չէր նայել Ստեփանի երեսին: Դառնորեն ափսոսաց, երբ հիշեց իր անիմաստ դաժանությունը նրա նկատմամբ, ու տաք արցունքներ հոսեցին կուրացած աչքերից: Արկերի ռռնոցի տակ Միքայելի մտապատկերներում կենդանացավ ոչ վաղ անցյալը: Նա հիշեց, թե ինչպես էին կողք կողքի տնկված մատղաշ ծառերի պես աճում իրար հետ, թե ինչպես ծնողները թողնում էին, որ քամին կոփի իրենց, բայց պաշտպանում էին ամեհի հողմերից: Եվ որքա՜ն միամտորեն երջանիկ էին, քանի դեռ չարացած չէին բաժանվել: Եվ այժմ չոքած անհայտ մարդու առջև՝ դողդողացող ձեռքերով փորձում էր ճանաչել հարազատի դիմագծերը: Ներքին ձայնն ասում էր, թե հենց Ստեփանի մոտ է ինքը ծնկի եկել: Մի անգամ էլ գոռալով տվեց եղբոր անունը: Իզուր: Ընկածի մարմինը դեռևս տաք էր, սիրտը խուլ տրոփում էր: Օգնե՛լ, օգնե՛լ է պետք, գուցե դեռ կարելի է փրկել: Միքայելն զգուշությամբ բարձրացրեց ընկածին և հենց այդ պահին լսեց. «Այդ դու՞ ես, Միքայե՛լ»: Վիրավորին սեղմած կրծքին՝ Միքայելը տնքաց. «Ե՛ս եմ, վերջապես գտա՛ քեզ»: Միքայելն զգաց, որ Ստեփանը թույլ ձեռքով շոյեց իր մազերը: Հետո խուլ խռխռոց լսեց: «Ստեփա՛ն», - բղավեց: Լռություն: Դիպչելով դիակներին՝ Միքայելն առաջ էր գնում՝ կրծքին ամուր սեղմած եղբորը: Մերթ ընկնում էր, մերթ բարձրանում: Հանկարծ սարսափից քար կտրած կանգ առավ: Արդյոք թվաց, թե իրոք սառչում էր եղբոր մարմինը: Ո՛չ, ինքը կփրկի նրան, դուրս կբերի մարտի դաշտից: Արնաքամ լինելով՝ նա առաջ էր գնում՝ ինչպես վիրավոր գազան: Հենց այդ ժամանակ մետաղե անտարբեր մի բեկոր պատառոտեց իրար այնքա՜ն սերտ կպած երկու եղբոր մարմինները: Բեկորը ճեղքեց նրանց կուրծքը, և երբ եղբայրներն ընկան գետնին, մնացին ամուր գրկախառնված: Նրանց արյունը միախառնվեց, իսկ սրտերը հայտնվեցին իրար շա՜տ մոտ: Մահվան քնի մեջ այնքա՜ն նման էին թվում նրանք: Ասես երկրի երեսին մի մարդ էր ապրել, միայն թե երկու տարբեր կերպարանքներով:

ՊԼԱՆ

1. Երկու եղբայր:
2. Վեճ և օտարացում:
3. Պատերազմի դաշտում:
4. Աղճի խայթ:
5. Երկու անքաժան սիրտ:

ՍՈՒՍՋԱՂՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Նախաձեռնությունը չխրախուսել, պապենական արհեստանոց, անցյալի հիշատակներ, օրերը քարշ տալ աղքատության մեջ, չարությամբ լցվել, կարիքի գիրկը նետել, կոշտացած ձեռքեր, ամեն ինչ ոչընչացնող մետաղի հեղեղ, խավարի թագավորություն, դառնորեն հեկեկալ, խարխափել, արկերի տարափ, ջնջվել հիշողությունից, կողք կողքի տնկված մատղաշ ծառեր, միամտորեն երջանիկ, ներքին ձայն, խախուտ, վիրավոր գազան, մետաղի անտարբեր մի բեկոր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Պեր Լագերկվիստը 20-րդ դարի շվեդ խոշորագույն գրող է, Նոբելյան մրցանակի դափնեկիր:*

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

ՄԵԾ

- Գնա՛, իմ որդյա՛կ, աշխարհքըս անցի՛ր.
Պանծալի անու՛ն Մեծի դու ստացի՛ր:

Ու գնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարըստություն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Չէ՛, չէ՛, թեև դու բորսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Նա գնաց մըտավ իմաստնոց տաճար,
Եղավ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Չէ՛, չէ՛, թեև դու գիտության ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Պահով, աղոթքով մտավ անապատ,
Քուրձ հագավ մարմնին, հրաշք գործեց շատ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

ՊԼԱՆ

1. Երկու եղբայր:
2. Վեճ և օտարացում:
3. Պատերազմի դաշտում:
4. Խղճի խայթ:
5. Երկու անբաժան սիրտ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Նախաձեռնությունը չխրախուսել, պալենական արհեստանոց, անցյալի հիշատակներ, օրերը քարշ տալ աղքատության մեջ, չարությամբ լցվել, կարիքի գիրկը նետել, կոշտացած ձեռքեր, ամեն ինչ ոչընչացնող մետաղի հեղեղ, խավարի թագավորություն, դառնորեն հեկեկալ, խարխափել, արկերի տարափ, ջնջվել հիշողությունից, կողք կողքի տնկված մատղաշ ծառեր, միամտորեն երջանիկ, ներքին ձայն, խուխուց, վիրավոր գազան, մետաղի անտարբեր մի բեկոր:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Պեր Լագերկվիստը 20-րդ դարի շվեդ խոշորագույն գրող է, Նոբելյան մրցանակի դափնեկիր:*

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹ

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆ

ՄԵԾ

- Գընա՛, իմ որդյա՛կ, աշխարհքըս անցի՛ր.
Պանծալի անու՛ն Մեծի դու ստացի՛ր:

Ու գընաց որդին, շատ քըրտինք թափեց,
Մեծ հարըստություն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Չէ՛, չէ՛, թեև դու բորսայի ես զարդ,
Բայց քեզ չեմ ասիլ տակավին մեծ մարդ:

Նա գընաց մըտավ իմաստնոց տաճար,
Եղավ խորիմաստ գիտուն ու հանճար,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Չէ՛, չէ՛, թեև դու գիտության ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Պաշտով, աղոթքով մտավ անապատ,
Քուրձ հագավ մարմնին, հրաշք գործեց շատ,
Ու դարձավ հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժըմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Եղեմա դրախտին էլ լինիս դու զարդ,
Ես քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին, դարձավ զորավար,
Խելքով, քաջությամբ տիրեց շատ աշխարհ
Ու դարձավ Հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Չէ՛, չէ՛, թեև դու զոռ դաշտին ես զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին մի երկիր օտար,
Հրեշք ու ցավերն մաքրեց այն աշխարհ,
Ու դարձավ Հորը, ասաց պարծանքով.
- Հա՛յր իմ, այժմ Մեծ չե՞մ քու կարծիքով:

- Օտար աշխարհի թեև եղար զարդ,
Բայց քեզ տակավին չեմ ասիլ մեծ մարդ:

Ու գնաց որդին գլխիկոր, տրտում,
Հոգին վրդովված, ցավ ու դարդ սրտում,
Մաշվում էր խեղճը, զոռ տալով խելքին՝
Հե՞ր չարժանացավ Հոր գովասանքին...

Նրա եղբայրը գերի էր տարված,
Թշնամու ձեռքով՝ տունը ավերված,
Ծեր արավ, գլուխը վտանգի ձգեց...
Ազատեց եղբորն, ու տունը կանգնեց...

Հանկարծ ... սար ու ձոր, ծով դղրդեցան,
Բյուրք բյուրոց բերնով գոչեց ազգ մարդկան.
«Մեծ մարդու անուն դու այժմ ըստացար,
Եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար»:

ՀՈԳԱՏԱՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Ըստ Ջոն Ափդայկի

(դատողական-ստեղծագործական փոխադրություն)

Ութերորդ դասարանը գերազանց գնահատականներով ավարտելուս կապակցությամբ հայրս ինձ առաջին անգամ տարավ Նյու Յորք: Մենք այնտեղ էինք գնում երեք հիմնական նպատակով՝ տեսնելու հորեղբայր Քուինսին, ինձ համար հոլանդացի գեղանկարիչ Վերմերի նկարների ալբոմը գնելու և շրջագայելու քաղաքում: Տարիներ առաջ Քուինսը անհետացել էր Չիկագոյի ուղղությամբ և բնատուր խելքի ու ճարպկության շնորհիվ դարձել մեծահարուստ:

Հայրս միշտ պնդում էր, որ ես ու հորեղբայրս իր ճանաչած ամենագործունյա մարդկանցից ենք: Նա մեզ անվանում էր «Հար չտապողներ»: Վերջին ժամանակներս հորս մեջ հանկարծ մի անդիմադրելի ցանկություն էր առաջացել, որ ես ու հորեղբայրս հանդիպեինք: Մենք ճանապարհ ընկանք՝ ունենալով հետդարձի տոմսերը և հինգ դոլար, որ նախատեսվում էր Վերմերի ալբոմը գնելու համար:

Մեզ ոչ ոք չդիմավորեց «Փենսիլվանիա» կայարանում, թեև հեռագրել էինք: Հայրս հուսախաբ էր, բայց ոչինչ չասաց: Քուինս հորեղբայրը պետք է որ հյուրանոցում լիներ, և մենք բռնեցինք այնտեղ տանող ճանապարհը:

Երբ տեղ հասանք, ադմինիստրատորը զանգեց Ավգուստ Քուինսին ու հայտնեց, որ եղբայրը եկել է: Այնուհետև մենք վերելակ նստեցինք և բարձրացանք 20-րդ հարկ: Համարում շքեղ հագնված երեք տղամարդ կային, որոնց մեջ անմիջապես տարբերեցի հորեղբորս: Նա մեզ ներկայացրեց իր խոսակիցներին, ապա դառնալով հորս՝ ասաց.

- Չէի՞ք ցանկանա լոգանք ընդունել:

- Շնորհակալություն, Քուի՛նս, - պատասխանեց հայրս, - իհա՛րկե կուզեինք:

Լոգարանում ինձ կարգի բերելուց հետո ուզում էի գնալ հորեղբորս մոտ, բայց հայրս թույլ չտվեց.

- Գնալու կարիք չկա: Նա ինչ-որ գործերով է զբաղված և չի ուզում, որ իրեն խանգարենք: Ես ճանաչում եմ նրան: Մեզ այստեղ ուղարկեց, որ իրեն չանհանգստացնենք: Նա շատ հետևողական մարդ է: Եթե որևէ բան է ցանկանում, անմիջապես մեծ եռանդով հետամուտ է լինում դրան: Նա շա՜տ հեռուն է տեսնում: Կզգաս, թե մտքով ինչքա՜ն առաջ է քեզանից:

Վերջապես հորեղբայր Քուինսը եկավ մեզ մոտ և ձայնին ափսոսանքի երանգ տալով՝ հորս ասաց.

- Մարտի՛ն, հույս ունեի, որ դու և որդիդ կգաք ու կմիանաք մեզ: Դե ոչինչ: Գուցե Ջորջը ցանկանում է տեսնե՞լ Նյու Յորքը: Չգնա՞նք շրջագայելու:

Բայց մենք տեսարժան վայրեր չայցելեցինք, քանի որ հյուրանոցից դուրս գալով՝ հորեղբայրս մտավ մոտակա ռեստորանը: Երբ ճաշեցինք, նա ասաց.

- Իսկ հիմա՞ ինչ կցանկանայիր:

- Տղաս ուզում է գրախանութ գնալ, - ասաց հայրս:

- Ափսո՛ս, որ գրախանութի տեղ չգիտեմ, - վշտացավ հորեղբայրս, - դրա փո-

խարեն բարձրանանք ահա այն երկնաքերը, որ 102 հարկանի է:

Մինչ նայում էի նրա ցույց տված ուղղությամբ, հանկարծ չոր ու կարծր մի բան ընկավ աչքիս մեջ: Գլուխս իջեցրի ու սկսեցի աչքս թարթել: Այն սկսեց ուժեղ ցավել:

- Ի՞նչ պատահեց, - ասաց հորեղբայրս:

- Աչքի մեջ ինչ-որ բան է ընկել:

- Մարտի՛ն, աչքի կամ ականջի նկատմամբ չպետք է թեթև վերաբերվել: Հյուրանոցը երկու քայլի վրա է: Գնա՛նք, պետք է բժիշկ կանչել:

Երբ հյուրանոց մտանք, հորեղբայրս ադմինիստրատորին պատվիրեց.

- Բժի՛շկ ուղարկեք իմ համարը:

- Դու չպետք է բժիշկ կանչեիր, Քուի՛նս, - ասաց հայրս, երբ բարձրանում էինք վերելակով: - Ինքս կարող էի տղային օգնել: Այդպիսի բան միշտ էլ պատահում է:

- Աչքերի հետ պետք է զգույշ վարվել, Մարտի՛ն, դրանք մեր ամենաթանկ զենքերն են:

Բժիշկը եկավ և անմիջապես կարողացավ հանել մետաղի փշուրը:

Երբ աչքս բացեցի, տեսա, որ հայրս փող է տալիս բժշկին: Վերջինս շնորհակալություն հայտնեց և գնաց: Հորեղբայրս, որ այդ ամբողջ ընթացքում լոգասենյակում էր, դուրս եկավ ու ինձ հարցրեց.

- Հը՛, երիտասա՛րդ, ինչպե՞ս ես քեզ զգում:

Մեկ ժամ անց դեպի կայարան գնալիս հորս հարցրի, թե կարո՞ղ ենք գրախանութ մտնել:

- Մենք փող չունենք, - ասաց նա: - Մեզ մոտ եղած հինգ դոլարը բժշկին տվի:

«Փենսիլվանիա» կայարանում իմացանք, որ գնացքը մեկնում է երեսուն րոպե հետո: Նստեցինք մի նստարանի: Հայրս նայեց ինձ բազմանշանակ հայացքով և ասաց.

- Տղա՛ս, հորեղբայրդ ճարպիկ մարդ է, չէ՞: Մտքով առնվազն երեսուն տարի առաջ է ինձնից: Նկատեցի՞ր, թե ինչպես թաքնվեց լոգասենյակում մինչև բժշկի գնալը: Ահա թե ինչպես են մարդիկ փող սարքում: Հարուստ մարդը դոլարանոցները հավաքում է այնպես, ինչպես կոլեկցիոները՝ դրոշմանիշները: Այդպես էլ գիտեի, որ նա չի վճարելու:

Հայրս հենվեց նստարանին, հայացքը հառեց առաջ, ձեռքերը խաչեց ու կռացավ ծնկների վրա: Նրա դեմքի մաշկը թորշոմել էր, քունքերը փոս էին ընկել:

- Ահա թե ինչու նա այդքան հարուստ է, իսկ ես՝ այդքան աղքատ, - ավելացրեց նա թախիծով:

Այս խոսակցությունը զայրույթ էր պատճառում ինձ ոչ թե նրա համար, որ ուզում էի մեղադրել հորս, այլ իմ ցանկությունն էր, որ նա իրեն ընկճված ու ծեր չզգար:

ՊԼԱՆ

1. Ուղևորություն դեպի Նյու Յորք:
2. Հորեղբայր Քուինսը:
3. Հյուրանոցում:
4. Պատահար:
5. Հարստանալու գաղտնիքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

Հոլանդացի գեղանկարիչ, ամենագործունյա, հար, հուսախաբ, հետամուտ լինել, ադմինիստրատոր, բազմանշանակ հայացք:

2. Աշակերտներին հանձնարարել տեքստը գրել համառոտ և շարադրել իրենց դատողությունները անկեղծ բարեկամության մասին:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ջոն Ափդայկը ամերիկացի արձակագիր է:

ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ըստ հունական դիցաբանության

(ընդհատված ընթացքով ստեղծագործական փոխադրություն)

Մեծազոր էր հին հույների Դեմետրա աստվածուհին: Նա՛ էր հողն արգավանդ դարձնում: Առանց նրա բարեհաճության ոչինչ չէր աճում ո՛չ անտառներում, ո՛չ մարգագետիններում, ո՛չ էլ արգասաբեր վարելահողերում:

Դեմետրա աստվածուհին մի դուստր ուներ՝ Պերսեփոնե անունով: Գեղեցկուհի էր նա՝ նման նազանի հավերժահարսերին: Դեմետրան պաշտում էր դստերը և ինքնամոռացության աստիճանի նվիրված էր նրան:

Մի անգամ, երբ գեղանի աղջնակը երփներանգ մարգագետնում թեթևաթև թիթեռնիկի նման թռչկոտում էր ծաղկից ծաղիկ...

....

....

....

Շատ որոնեց դստերը Դեմետրա աստվածուհին, բայց ոչ մի տեղ չգտնելով՝ սևեր հագավ, դառնաղի արցունք հեղեց, մոռացավ երկիրն ու մարդկանց: Կյանքը ասես դադարեց երկրում. բույսերի աճը դադարեց, ծառերի տերևները թոշնեցին, անտառները մերկացան, խոտ ու ծաղիկ չորացան: Երբեմնի բերքառատ արտերն ամայացան, մեռավ կյանքը թե՛ մարդկանց, թե՛ բնության համար: Սկսվեց դաժան սովը: Կործանում էր սպասվում ողջ մարդկային ցեղին: Բայց վշտամորմոք Դեմետրան անտարբեր էր այդ ամենի նկատմամբ: Նրա արցունքները, ճյան փաթիլներ դարձած, իջնում էին երկրի վրա:

Տեսնելով Դեմետրա աստվածուհու տառապանքները և լսելով փրկություն աղերսող մարդկանց աղոթքները՝ աստվածահայր Զևսը, որ չէր ուզում մահկանացուների կործանումը, Պերսեփոնեին վերադարձրեց մորը՝ պայմանով, որ աղջիկը տարվա կեսը մոր մոտ ապրի, մյուս կեսը՝ ստորերկրյա թագավորության մեջ:

Ուրախությունից խենթացած Դեմետրա աստվածուհին սիրասուն դստերը գրկից չէր իջեցնում: Նա երկար ամիսների տվայտանքներից հետո դուրս եկավ խոր ընդարմացումից, պայծառ տրամադրությամբ տոգորվեց և կրկին արգավանդություն պարգևեց հողին: Դարձյալ ծաղկեցին ծառ ու ծաղիկ, խոտ ու թուփ, զվարթ դայլայլեցին թռչունները, խոխոջացին գետերը: Բովանդակ բնությունն արթնացավ: Ցնծում էր ամենայն կենդանի արարած և փառաբանում աստվածուհի Դեմետրային ու նրա դստերը:

Բայց հասավ աղջկանից բաժանվելու օրը: Կրկին սևեր հագավ Դեմետրան, և նորից բնությունը տխրեց: Դեղնեցին տերևները, ծառերը մերկացան աշնանային քամուց: Սառած արցունքներ հեղեց երկրի վրա մեծ աստվածուհին, և հողը ծածկվեց ճյան հաստ շերտով: Խոր քուն մտավ բնությունը, որպեսզի հրճվանքի շողերով արթնանա գարնանը՝ այն ժամանակ, երբ Պերսեփոնեն նորից կվերադառնա մոր մոտ, և բարեբերության բարի աստվածուհին շռայլ ձեռքով կփռի իր պարգևները և լիառատ բերքով կպարգևատրի հողագործի աշխատանքը:

Ահա այսպես առաջացան տարվա չորս եղանակները՝ գարունը, ամառը, աշունը, ձմեռը:

ՏԱՐՎԱ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ըստ հունական դիցաբանության

(ընդհատված ընթացքով ստեղծագործական փոխադրություն)

Մեծազոր էր հին հույների Դեմետրա աստվածուհին: Նա՛ էր հողն արգավանդ դարձնում: Առանց նրա բարեհաճության ոչինչ չէր աճում ո՛չ անտառներում, ո՛չ մարգագետիններում, ո՛չ էլ արգասաբեր վարելահողերում:

Դեմետրա աստվածուհին մի դուստր ուներ՝ Պերսեփոնե անունով: Գեղեցկուհի էր նա՝ նման նազանի հավերժահարսերին: Դեմետրան պաշտում էր դստերը և ինքնամոռացության աստիճանի նվիրված էր նրան:

Մի անգամ, երբ գեղանի աղջնակը երփներանգ մարգագետնում թեթևաթև թիթեռնիկի նման թռչկոտում էր ծաղկից ծաղիկ...

....

....

....

Շատ որոնեց դստերը Դեմետրա աստվածուհին, բայց ոչ մի տեղ չգտնելով՝ սևեր հագավ, դառնաղի արցունք հեղեց, մոռացավ երկիրն ու մարդկանց: Կյանքը սաստ դադարեց երկրում. բույսերի աճը դադարեց, ծառերի տերևները թոշնեցին, անտառները մերկացան, խոտ ու ծաղիկ չորացան: Երբեմնի բերքառատ արտերն ամայացան, մեռավ կյանքը թե՛ մարդկանց, թե՛ բնության համար: Սկսվեց դաժան սովը: Կործանում էր սպասվում ողջ մարդկային ցեղին: Բայց վշտամորմոք Դեմետրան անտարբեր էր այդ ամենի նկատմամբ: Նրա արցունքները, ձյան փաթիլներ դարձած, իջնում էին երկրի վրա:

Տեսնելով Դեմետրա աստվածուհու տառապանքները և լսելով փրկություն աղերսող մարդկանց աղոթքները՝ աստվածահայր Զևսը, որ չէր ուզում մահկանացուների կործանումը, Պերսեփոնեին վերադարձրեց մորը՝ պայմանով, որ աղջիկը տարվա կեսը մոր մոտ ապրի, մյուս կեսը՝ ստորերկրյա թագավորության մեջ:

Ուրախությունից խենթացած Դեմետրա աստվածուհին սիրասուն դստերը գրկից չէր իջեցնում: Նա երկար ամիսների տվայտանքներից հետո դուրս եկավ խոր ընդարմացումից, պայծառ տրամադրությամբ տոգորվեց և կրկին արգավանդություն պարգևեց հողին: Դարձյալ ծաղկեցին ծառ ու ծաղիկ, խոտ ու թուփ, զվարթ դայլայլեցին թռչունները, խոխոջացին գետերը: Բովանդակ բնությունն արթնացավ: Ցնծում էր ամենայն կենդանի արարած և փառաբանում աստվածուհի Դեմետրային ու նրա դստերը:

Բայց հասավ աղջկանից բաժանվելու օրը: Կրկին սևեր հագավ Դեմետրան, և նորից բնությունը տխրեց: Դեղնեցին տերևները, ծառերը մերկացան աշնանային քամուց: Սառած արցունքներ հեղեց երկրի վրա մեծ աստվածուհին, և հողը ծածկվեց ձյան հաստ շերտով: Խոր քուն մտավ բնությունը, որպեսզի հրճվանքի շողերով արթնանա գարնանը՝ այն ժամանակ, երբ Պերսեփոնեն նորից կվերադառնա մոր մոտ, և բարեբերության բարի աստվածուհին չռայլ ձեռքով կսփռի իր պարգևները և լիառատ բերքով կպարգևատրի հողագործի աշխատանքը:

Ահա այսպես առաջացան տարվա չորս եղանակները՝ գարունը, ամառը, աշունը, ձմեռը:

ՀԻՆ ԱՄՐՈՑԸ

Ըստ Ավ. Իսահակյանի

Հի՜ն-հի՜ն ժամանակներից, հի՜ն-հի՜ն դարերից քառասուն չարք պարսպով, հազարգլխանի, հազարաչքանի մի ամրոց կար՝ կանգնած բարձրադիր մի վայրում։ Ամրոցի շուրջը փռված էին հազար-հազար գյուղեր ու քաղաքներ։ Այդ բոլորի տերը՝ Թագավորը, ապրում էր այդտեղ՝ գոռոզ ու մռայլ։ Հազար-հազար մարդիկ հլու-հնազանդ կանգնած էին նրա հրամանին։ Իսկ նրա ամեն մի խոսքը հրաման էր, ամեն քայլը՝ հրաման, ամեն ցանկությունը՝ հրաման։ Այդ ամրոցից նա իշխում էր կենդանիների, ջրերի, բյուր հազար բնակիչների վրա։ Եվ հին-հին ժամանակներից, հին-հին դարերից բոլոր բնակիչները համոզված էին, թե այդ ամրոցում ապրողը իրավունք ունի իշխելու մարդկանց վրա, իսկ իրենց պարտքն է միայն հպատակվել նրան։ Մարդիկ կարծում էին, թե Թագավորը Աստծո ստվերն է երկրի վրա, Թագավորի կամքը նրա՛ կամքն է, Թագավորի օրենքները՝ Աստծո ներշնչածը։ Եվ ստրուկ ու խեղճ ժողովուրդը հավատում էր այդ ամենին, օրհնում Թագավորին և հնազանդվում նրա կամքին։ Իսկ նրա կամքը արյու՛ն էր ու մա՛հ, տանջա՛նք ու կախաղա՛ն։ Գյուղերում ու քաղաքներում ժողովուրդը հեծում էր ու տառապում Թագավորի երկաթե շղթաների մեջ, նրա սպասավորների բռունցքների տակ։ Եվ եթե մի ուրիշ երկրի Թագավոր հարձակվեր ու ցանկանար նստել նրա ամրոցում, ժողովուրդը պարտավոր էր կռիվ մտնել նրա զորքերի դեմ, մեռնել մինչև վերջին մարդը, որ ապահով լիներ այն մռայլ ամրոցի տիրակալը։ Իսկ եթե մի ըմբոստ մարդ խոսեր Թագավորի օրենքների դեմ, թե դրանք մի քիչ խստասիրտ են, իսկույն բռնում էին այդ ըմբոստին և պոկում ազատախոս լեզուն, որովհետև հանդգնել էր Թագավորի աստվածային կամքին դե՛մ գնալու։

- Թող կորչե՛ն այդ ըմբոստները, - ասում էին մարդիկ, - նրանք կործանում են մեր Թագավորությունը։ Կեցցե՛ մեր Թագավորը։ Առանց նրա մենք կորած ենք։

Եվ հի՜ն-հի՜ն դարերից, հի՜ն-հի՜ն ժամանակներից համոզված էին, որ եթե Թագավորը չլինի, ժողովուրդը անսանձ կգնա, կընկնի մահի խորխորատը։

Եվ Թագավորը, իր աշխարհակալ ձեռքում բռնած բոլորի անտեսանելի սանձերը, կառավարում էր իմաստուն կերպով ու տանում մարդկանց դեպի բախտ, դեպի երջանկություն։ Այդպես էին հավատացած մարդիկ։

Մի օր անծանոթ մի մարդ՝ հպա՛րտ ու ազա՛տ ճակատով, ծիրանավառ դրոշը ձեռքին եկավ մի հեռավոր երկրից, բարձրացավ մի լեռան վրա և հզոր ու որոտալից հնչեցրեց շեփորը։ Ու երբ ժողովուրդը ծովացավ նրա շուրջը, նա ասաց.

- Վա՛յ քեզ, ժողովու՛րդ՝ հիմար և ստրուկ։ Հազար անգամ վա՛յ, որ դուք չեք զգում ձեր ստոր վիճակը։ Լու՛ծ է դրած ձեր վզին, շղթա է փաթաթած ձեր ոտքերին, և այդ ամենը դուք ձեր ձեռքով եք արել։ Խելքի՛ եկեք, միացե՛ք, փշրե՛ք շղթաները, գցե՛ք լուծը, սու՛ր վերցրեք և մեկ մարդու պես հարձակվե՛ք բռնակալի վրա։ Գնանք խլե՛նք մեր ազատությունը։ Կորչի՛ Թագավորը, կեցցե՛ ժողովուրդը։

Եվ հազա՛ր-հազա՛ր տարիների բռնության խավարը առաջին անգամ ցրվեց մարդկանց հոգուց, բացվեցին նրանց աչքերը, և զարթնեց միտքը։ Նա զգաց անարգ ստրկությունը, կեղեքումի և տառապանքի անծայրածիր աշխարհը։ Եվ ժողովրդի

սիրտը առաջին անգամ լցվեց վրեժի սոսկալիթխար փոթորիկներով:

Եվ նորից այն ծիրանավառ դրոշակակիրը հնչեցրեց շեփորը, և բոլորը զինվեցին ու գրահավորվեցին և շարժվեցին դեպի բռնության որջը: Բայց երբ մոտեցան այն բարձունքին, որի վրա կանգնած էր եղել դարավոր ամրոցը, իրենց աչքերին չհավատացին. այն ահարկու շինությունը չկար: Ո՛չ մի քար, ոչ մի բեկոր՝ այդ փլչատակման ամրոցից:

Եվ այն ժամանակ դրոշակակիր եկվորն ասաց.

- Դո՛ւք էիք ստեղծել այդ ամրոցը, այդ գալարաբարո բռնակալներին, այդ բոլոր սարսափները: Դո՛ւք էիք տվել նրանց իրավունք և սողացել նրանց ոտքերի տակ: Իսկ երբ դուք զարթնեցիք, նրանք չքացան, որովհետև իրապես չկային: Դո՛ւք էիք ստեղծել այդ ամենը՝ որպես ծանր երազ:

Եվ ժողովուրդը տեսավ, որ ինքը հի՛ն-հի՛ն դարերից, հի՛ն-հի՛ն ժամանակներից կապվել ու կաշկանդվել էր իր իսկ ստեղծած ծանր երազի մեջ, և հիմա փշրված են բոլոր շղթաները, որովհետև ինքը ցանկացավ ազատ լինել և եղա՛վ ազատ ու շղթայազերծ, և՛ երջանիկ, և՛ ինքնիշխան...

ՊԼԱՆ

1. Հին-հին դարերի ամրոցը և նրա տիրակալը:
2. Ժողովուրդը և իշխանությունը:
3. Ծիրանավառ դրոշով անծանոթը:
4. Բռնության որջի աներևութանալը:
5. Կամենալ՝ կարողանալ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

քառասուն շարք պարիսպ, հազարգլխանի, հազարաչքանի ամրոց, հլու-հնազանդ, Աստծո ստվեր, հեծել, երկաթե շղթաներ, ըմբոստ մարդ, աստվածային կամք, խորխորատ, անտեսանելի սանձեր, ծիրանավառ դրոշ, հզոր ու որոտալից հնչեցնել, ծովանալ, բռնության խավարը ցրվել, միտքը զարթնել, սոսկավիթխար փոթորիկներ, բռնության որջ, գալարաբարո բռնակալներ, ծանր երազ, շղթայազերծ:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Ըստ Ստ. Ցվայգի

Թուրքն է անցել այստեղով, ամեն ինչ ավերակ է այստեղ...
Վ. ՀՅՈՒԳՈ

1451 թվականի փետրվարի 5-ին փոքր Ասիա ուղարկված ծպտյալ սուրհանդակը սուլթան Մուրադի ավագ որդուն՝ 21-ամյա Մահմուդին բերում է հոր մահվան լուրը: Որքա՛ն էր սպասել Մահմուդը այդ երջանիկ պահին: Իր խորհրդականներին և մերձավորներին ոչ մի խոսք չասելով՝ խորամանկ, միաժամանակ հանդուն իշխանը թռչում է նժույգին և քառատրոփ սուրում հոր պալատը՝ կանխելու ամեն ոտնձգություն գահի նկատմամբ: Արյունակից հնարավոր մրցորդներին նախապես մեջտեղից վերացնելու համար նա հրամայում է լողարանում խեղդել անչափահաս եղբորը, որից հետո այն աշխարհ է ուղարկում նաև վարձու մարդասպանին:

Նստելով գահին՝ նա ծրագրում է նախ և առաջ գրավել Կոստանդնուպոլիսը՝ երբեմնի հզոր Բյուզանդիայի մայրաքաղաքը: Դարերի ընթացքում պարսիկների, արաբների, ռուսների, խաչակիրների և թուրքերի կողմից ասպատակությունների ենթարկվելով՝ Բյուզանդիան բաժան-բաժան էր եղել, և 15-րդ դարում նրա տարածքն այնքան էր փոքրացել, որ ամփոփվել էր լոկ մայրաքաղաքի մեջ: Երբեմնի հզոր երկիրը դարձել էր քաղաք-պետություն:

Մահմուդը որոշեց սեփականել նաև այդ վերջին բեկորը՝ բյուզանդական կայսրական թագի շքեղաշուք գոհարը: Եվ ի՞նչ մի դժվար բան էր դա Մահմուդի համար: Չէ՞ որ քաղաքի պարիսպներից դուրս ընկած բոլոր տարածքներն արդեն թուրքերինն էին:

Կոստանդինոս կայսրը իսկույն տեսնում է վտանգը և օգնություն խնդրում քրիստոնեական աշխարհից: Նրա աղերսը մնում է անպատասխան, և քաղաքի ճակատագիրը հանձնվում է Աստծո ողորմածությանն ու ճակատագրի քմահաճույքին:

1453 թվականի ապրիլի 5-ին սուլթան Մահմուդը հարյուր հիսուն հազարանոց բանակով հեղեղում է Կոստանդնուպոլսի աջև փռված հարթավայրը և ընդհուպ մոտենում պարիսպներին: Այո՛, դժվար կլինի կործանելը, բայց Մահմուդի համար անկարելի ոչինչ չկա:

Վճռական գրոհը նշանակում է մայիսի 29-ին:

Երեկոյան սուլթանը խրոխտ կեցվածքով անցնում է վրանից վրան, խրախուսում զորապետներին, ոգևորում ռազմիկներին: Բայց որպես հմուտ հոգեբան՝ գիտեր, թե ինչով կարող է բորբոքել հսկայական բանակի մարտական ոգին: Նժույգին նստած՝ Մահմուդը դիմում է զինվորներին.

- Երդվում եմ ալլահի, Մուհամմեդի և չորս հազար մարգարեների անունով, իմ հոր՝ սուլթան Մուրադի հոգով, զավակներիս կյանքով, այս անպարտ սրով, - նա բարձրացնում է սուրը, - որ քաղաքն առնելուց հետո բոլորիդ կշնորհեմ երեքօրյա անսահմանափակ կողոպուտի իրավունք: Այն ամենը, ինչ կա պարիսպների ներսում՝ տնային իրեր, զարդեղեն, փող, գանձ, տղամարդիկ ու կանայք, երեխաներ, բոլորը կպատկանեն ձեզ: Իսկ ես ոչինչ չեմ ուզում, բացի քաղաքը գրավելու պատվից:

Մոլեգին, խելահեղ ցնծություն է բանակում: Կողոպո՜ւտ: Այս բառն է հնչում թմբուկների կարկտահարության ժխորի մեջ:

Այնինչ դժբախտ քաղաքում բնակիչները սարսափում են՝ պարիսպների վրայից դիտելով թուրքերի ցնծությունը:

Բացվում է ճակատագրական առավոտը: Կայսր Կոստանդինոսի գլխավորությամբ կատարվում է հուզիչ մի արարողություն. քաղաքի ողջ բնակչությունը շարժվում է դեպի Սուրբ Սոֆյայի տաճարը: Թայլում է 8000 մարդ, մեծ ու փոքր, և բոլորը գիտեն, որ դատապարտված են անխուսափելի մահվան: Տաճարի ներսում և մերձ հրապարակում ծնկի են գալիս հազարավոր մարդիկ, նրանց հետ՝ կայսրը, և թնդագին ու հնչեղ ալիք է տալիս աղոթքի ձայնը: Դա չքնաղ Կոստանդնուպոլսի հոգեհանգստի պատարագն էր, պաշարյալների վերջին պատարագը: Ապա կայսրը թռչում է նժույգի վրա և սուրում դեպի պարիսպները՝ ոգեշնչելու իր զինվորներին: Եթե մահ՝ ուրեմն հերոսաբար:

Մինչդեռ Մահմուդի բանակատեղիում հնչում են ռազմական գալարափողերը: Հարձակումն սկսվում է: Արտաքին պարսպի վրա բացված անցքերից ներս են

թափվում թուրքերը: Ահա նրանք արդեն հասնում են երկրորդ պարսպին, որն անվնաս է մնացել: Երկու պարիսպների արանքում հեշտ է թուրքերին կոտորել, ու նետաձիգների եռանդը կրկնապատկվում է: Մահմուդը դարձյալ համոզվում է, որ ներս թափանցելն այնքան էլ դյուրին չէ: Բայց այդ ժամանակ կատարվում է անհավատալին. Թուրքերը հանկարծ զարմանքով նկատում են, որ քաղաքի դարպասներից մեկը, որից օգտվում էին հետիոտները, անըմբռնելի մի անփութությամբ բաց է մնացել: Ընդհանուր տագնապի մեջ փոքրիկ մուտքը մոռացության էր մատնվել:

Ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ թուրքերի մի ջոկատ խուժում է ներս, հանկարծակի նետվում անտեղյակ պաշտպանների վրա:

Կոստանդնուպոլիսը գրավված էր:

Մահմուդն իր խոստումը կատարեց: Քաղաքում սկսվեց անսանձ կողոպուտ:

Մեծ հաղթանակը նշանավորող օրվա երկրորդ կեսին, երբ ջարդն ու թալանը ավարտվել էին, սուլթան Մահմուդը հպարտ, բավարարված ու ինքնագոհ, շրջապատված թիկնապահների ու զորապետների շքախմբով, մտավ քաղաք: Նա նժույգն ուղղեց դեպի սուրբ Սոֆիայի տաճարը՝ վայրագ հայացքն ուղղած նրա շողշողուն ու անմատչելի գմբեթին:

Հիացմունքով ու հուզումով նա դիտեց հոյակերտ շինությունը, ապա կանչեց իմամին՝ քրիստոնեական տաճարում առաջին անգամ հնչեցնելու թուրքական նամազը...

Հաջորդ օրը հանվեց Սուրբ Սոֆիայի հսկա խաչը, որի ընկնելու տխուր ձայնը ասես արձագանքեց ողջ քրիստոնյա աշխարհում՝ ազդարարելով ավերիչ զորության մուտքը Եվրոպա: Ավերիչ զորություն, որ դարեր շարունակ պիտի դառնար մարդկության չարորակ ուռուցքը:

Ահա թե ինչպես թուրքերը Եվրոպայի հաշվին ընդարձակեցին իրենց տիրույթները, իսկ Կոստանդինի քաղաքը վերանվանեցին Ստամբուլ:

ՊԼԱՆ

1. Մահմուդը գրավում է գահը:
2. Մահմուդի որոշումը Կոստանդնուպոլիսը նվաճելու մասին:
3. Քրիստոնեական աշխարհի անտարբերությունը:
4. Կոստանդնուպոլսի պարիսպների մոտ:
5. Խոստում:
6. Մոլեգին հրձվանք:
7. Վերջին պատերազմը:
8. Քաղաքի գրավումը:
9. Թուրքերի մուտքը Եվրոպա:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառակապակցությունները.*

քառատրոփ սուրալ, կամխելու ամեն ունակություն, արյունակից հնարավոր մրցորդներ, վարձու մարդասպան, կայսերական թագի շքեղաշուք գոհար, ճակատագրի քմահաճույք, խելահեղ ցնծություն, թմբուկների կարկտահարություն, հոգեհանգստի պատարագ, շողշողուն և անմատչելի գմբեթ, ավերիչ զորություն, չարորակ ուռուցք:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՍՏԱՄԲՈԼ

(հատված պոեմից)

Լեգենդ է,
Բայց խո՛ր ու հստ:

Ձին
բարձած արծաթե թամբով՝
Քշե՛լ է սուլթան Ֆաթին
Ու հասել այստեղ - Ստամբոլ:

Քշել է հուր ձին դեպի դարը,
Մտել է Այա-Սոֆյա՛,
Ինչպես մահը՝ դաժան ու ահեղ,
Ինչպես մահը՝ միակ:

Զարկել է սուրը մարմարին -
Ճեղքել է սյունը:
Եվ նայի՛ր.
Անցել են դարե՛ր, դարե՛ր,
Իսկ իր կամքը խոսում ու հուզում է:

Կռացել է սուլթան Ֆաթին,
Թաթախել է ձեռքը արյան մեջ -
Ու խփե՛լ է մարմարե պատին՝
Տե՛ս:

Մնացել է հետքը ձեռքի
Եվ ահա -
Դարե՛ր, դարե՛ր -
Հեծում է ամբողջ մի երկիր,
Եվ ոչ թե մի պատ մարմարե:

Անցել են այն օրից դարեր.
Բայց դեռ հետքը սուլթանի ձեռքի
Մնացել է պատին այս քարե -
Ու մռայլ ճակատին երկրի…

Դու ապրում ես դեռ, սուլթա՛ն Ֆաթիհ,
Ես տեսնում եմ հետքը ձեռքիդ
Օ՛, ոչ թե այս մեռած պատին,
Այլ դեղին, որը ճակատին
Այս մռայլ, այս անտեր երկրի:

Դու մեռել ես, սուլթա՛ն Ֆաթիհ,
Բայց դարե՛ր շարունակ,
Մինչ օրս կենդանի՛ է սերած քո կաթից -
Քո դաժան,
Ժանտ Թուրքը:

Նստել է այսօր նա այստեղ,
Այս սունկի պես ուռած Ստամբոլում
Ու չի՛ ընդունում նա քեզ թե -
Բայց ոչինչ,
Ժառանգդ է հլու:

Իհարկե այլ է Պերան,
Ու այլ է հիմա Գալաթան,
Բայց նստած է Ստամբոլի վրա
Դեռ չունդը,
Հունդը քո տան:

Իհարկե, չկա էլ մեչետ,
Որին տա պետությունը տուրք,
Իհարկե, սուլթան Մեճիտի
Սարայները դատարկ են, թափուր.
Եվ գերի երկիրը հիմի
Դարձել է`
«Ռեփյուբլիկ Թյուրք»:

Այս բոլորը ճիշտ է, իհարկե՛,
Այս բոլորը հզոր է ու նոր,
Բայց նույնն է հղփացած այս քաղաքը,
Որ կոչվում է Պոլիս,
Ստամբոլ:

Մի ոտքը մեկնած Եվրոպա
Մի ոտքը Ասիո մեջքին`
Նստել է Ստամբոլը հպարտ,
Ինչպես դու կամ սուլթան Մեճիտ:

Էֆենդի՛,
Ցրա՛կ եք հագել դուք:
Միայն թե փեսն է ձեր այդ, որ հնից է:
Բայց գիտե՞ք -
Սուլթան Ֆաթուն
Դուք մի փոքր, մի քիչ... արնակից եք:

Ստամբո՛լ:
Դու պարում ես ջազբանդ:
Դու ուտում ես բար-մայոնեզ:
Նետում եմ ես ահա հուզված՝
Իմ քնքուշ կոմպլիմենտը քե՛զ:
Ինչքան էլ մի պրոլետ համբո
Այս խոսքիս նախատինք խառնի -
Մի անու՛ն ունես դու, Ստամբո՛լ,
Միջազգային պոռնի՛կ:

ԿՅԱՆՔԻ ՉԱՓԱՆԻՇԸ

Ըստ Սերգեյ Մանուկյանի

Մեր թվագրությունից առաջ 323 թվականին երեսնամյա Ալեքսանդր Մակեդոնացին նվաճում է Հնդկաստանը՝ մեկը մյուսի հետևից հնազանդեցնելով բազմաթիվ ռազմաշունչ ու ռազմատենչ ցեղերի: Մայիսին նա հասավ օքսիդրակների գլխավոր քաղաքը, որտեղ պատսպարվել էին այդ ցեղի հարյուրավոր քաջակոբով զինվորներ:

Մակեդոնացին հրամայեց սանդուղքները մոտեցնել պարիսպներին: Մի պահ թվաց նրան, թե զորապետները հապաղում են, ուստի խլեց ելարանը և վահանով պաշտպանվելով վերևից սուրացող նետերից՝ սկսեց մագլցել:

Նա հասավ պարսպի ատամնաշարին ու հանելով վահանը՝ հնդիկների մի մասին սրախողխող արեց՝ խուճապի ենթարկելով մյուսներին:

Իր շքեղ սպառազինությամբ ուշադրություն գրավող արքան մեն-մենակ կանգնած էր բազմաթիվ թշնամիների տեսադաշտում: Ասես իր զինվորներից լքված՝ նա հիանալի թիրախ էր հնդիկների համար: Բոլոր կողմերից սլանում էին նետերը: Վահանի ծածկույթից ծակծկված՝ արքայի ձախ թևն արդեն հոգնել էր: Ներքևից գոռում էին՝ պահանջելով ցած թռչել, ուր տասնյակ ձեռքեր պատրաստ էին բռնելու պաշտելի զորավարին:

Բայց Մակեդոնացին չլսեց, ավելին՝ կատարեց երբեւէ չլված, չտեսնված արարք՝ պարսպի վրայից ուղղակի թռավ թշնամիներով լի քաղաքը:

Ապշահար թշնամիները անակնկալից սարսափած հետ-հետ գնացին՝ չհավատալով աչքերին, բայց երբ տեսան, որ իրենց վրա է գրոհում միայն մեկ մարդ, շուռ եկան:

Հենվելով պատին, պաշտպանվելով թիկունքը՝ Մակեդոնացին ճարպկորեն սրախողխող արեց իր վրա նետված զինվորներին, որոնց թվում նաև՝ առաջնորդին: Տեսնելով այդ՝ հնդիկները վախեցան ու սկսեցին հեռվից նետահարել, հարվածել նիզակներով ու քարերով: Սկզբում Մակեդոնացին հաջողությամբ պաշտպանվում էր վահանով, բայց երբ ավելացավ հարձակվողների թիվը, հոգնածությունն անհաղթահարելի դարձավ: Նա արդեն կորցնում էր հավասարակշռությունը, երբ հնդիկներից մեկը այնպես հարվածեց, որ ծակեց զրահը, և արյունը ջրի պես սկսեց հոսել պատռվածքից: Այդ պահին վերջապես հասավ թիկնապահը, որին տեսնելուն պես զորավար արքան կորցրեց գիտակցությունը: Մեկը մյուսի հետևից պարսպից քաղաք թռչող մակեդոնացիները արիության պարիսպ ստեղծեցին իրենց ուշակորույս առաջնորդի չորս կողմը: Այնքան մեծ էր սերը նրա նկատմամբ, որ զինվորները իրենց մասին չէին մտածում:

Սիրեցյալ զորավարին սպառնացող վտանգը ասես խելագարեցրել էր հետզհետե ստվարացող մակեդոնացիներին: Նրանք մարմնով պաշտպանում էին մահամերձ առաջնորդին՝ չհաշտվելով այն մտքի հետ, որ նա կարող է մեռնել այս անանուն քաղաքում՝ բարբարոսների ձեռքով:

Վերջապես կացիններով ավերվեց պարսպի մի հատվածը, և Մակեդոնացու զորքերը խուժեցին քաղաք: Սկսվեց ահեղ կոտորածը:

Ալեքսանդր Մակեդոնացուն տեղափոխեցին վրան: Նրա մարմնի մեջ մխրճված նետի ծայրը ատամնավոր էր, հանելու համար անհրաժեշտ էր վերքը լայնացնել, իսկ բժիշկը վախենում էր դա անել: Վիրավորի փոքրիկ շարժումն անգամ կարող էր մահվան պատճառ դառնալ:

- Պետք է կապել նրան, - ասաց բժիշկը, և արցունքները հոսեցին աչքերից:

- Մի՛ կապեք, - խոսեց Մակեդոնացին, - և գործե՛ք ազատ, ոչ մի շարժում չեմ անի:

Ցոթ օր անց, երբ որոշ չափով առողջացած Մակեդոնացին, անհանգստություն նկատելով իր շուրջը խմբված զորապետների դեմքին, հարցրեց, թե արդյոք թշնամիներից վտանգ կա, նրանցից մեկն ասաց.

- Մի՞թե դու կարծում ես, թե մենք կարող ենք անհանգստանալ միայն թշնամու հարձակման պատճառով: Թող մեր դեմ ով ուզում է գավ նյութի, զինված մարդկանցով լցնեն աշխարհը, ծովերը ծածկեն նավերով, բերեն գազաններ: Քեզ հետ մենք անհաղթ ենք: Պահպանի՛ր քեզ՝ հանուն մեր փեմ գործի:

Շնորհակալությամբ նայելով զորապետներին՝ Ալեքսանդր Մակեդոնացին ասաց.

- Ես գնահատում եմ իմ գործերը ոչ թե ժամանակի, այլ փառքի չափանիշներով: Ոչ թե տարիներս եմ հաշվում, այլ հաղթանակներս, ուստի կարող եմ ասել, որ արդեն մեծ կյանքով եմ ապրել: Ձերդ պահեք ինձ ներքին թշնամիներից ու խարդավանքներից, և ես առանց վախի մարտի կելնեմ նույնիսկ պատերազմի աստծո դեմ:

ՊԼԱՆ 1. Ալեքսանդր Մակեդոնացու հաղթարշավը:
2. Թշնամու պարիսպների վրա:
3. Զլված սիրանք:
4. Կյանքի չափանիշը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

ռազմաշունչ ցեղեր, քաջակորով զինվորներ, սրախողխող, խուճապի ենթարկել, իր շքեղ զրահա-
զինությամբ ուշադրություն գրավող արքա, թիրախ դառնալ, պաշտելի զորավար, ահեղ կոտորած, մա-
համերձ առաջնորդ, փառքի չափանիշ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ *Հեղինակը տեքստը կազմել է ըստ Արիանոսի, Ռուֆուսի և Պլուտարքոսի աշխատությունների:*

ՀՍԿԱՆ

Ըստ Հ. Թումանյան

(դատողական սանդղագործական փոխադրություն)

Լավ չեմ հիշում, թե որ դարում,
Հին ժամանակ մեր աշխարհում
Ասում են, թե կար մի իշխան,
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ,
Որ թե մարդիկ նրա աչքում -
Թե հասարակ ճանճ ու մըժեղ:
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նըրա դիմաց:
Ուներ անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,
Երամակներ ձիու, ջորու.
Էս բոլորը ցըրված, փըռված
Մինչև ծովի ափը հեռու:
Մինչև ուր որ քըշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր.
Ո՞վ էր գլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգար նըրա դիմաց:
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նստած էր իրեն տանը,
Լեղապատառ ներս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.

- Ապրա՛ծ կենաս, մեր տե՛ր իշխան,
Հապա՛, էսպես Հրաշք մի բան.
Արածում էր ծովի ափին
Բազմությունը քո Հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին
Մի վիթխարի մարդ է գալի:
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք չընչին,
Ծովը մինչև ծունկն էր Հասնում,
Իսկ գլուխը՝ ամպի միջին:
Եկավ, կանգնեց մեր Հանդիման
Ու որոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ Հանդերում.
Կորե՛ք իսկույն, դուք մարդուկնե՛ր,
Ձեռըս քանի չի Հասել դեռ ...»
էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տըվի էսպես.
«էդ սևակնած, մութ ամպերում
Ջուր ես էդքան բարձըր գոռում.
Ով էլ լինես, ուսկից էլ գաս,
էս մի բանը լավ իմանաս,
Դու երկնաՀաս աՀե՛ղ Հըսկա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,
Ո՞վ է գըլխից ձեռ վեր կալած,
Ո՞վ դուրս կըգա նըրա դիմաց»:
Բայց ինձ իսկի չըլսեց էլ
էն անճոռնի աժդաՀակը,
էն ամպերից ցած կըռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,
Դուրս Հանեց մի ձուկն աՀագին
Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի ... » - Հազիվ էսքան
Պատմեց Հովիվն իշխանական
Ու վեր ընկավ, շունչը փչեց:
Խիստ զայրացավ իշխանը մեծ.
- Ո՞վ է, ասավ, Համարձակվել
Իմ տերության սաՀմանն եկել
Ու էդպես էլ վըրես Հաչում ...
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում
Ես ոչ մի տեղ և ոչ մեկին ...
էսպես ասավ ու զայրագին
Հըրամայեց՝ զորքերը գան:

Հըրամայեց՝ զորքերն եկան.
- Կեցցե՛ս մեր տեր, մեր Թագավոր,
Անհաղթ, անմահ, ամենազոր ...
- Այրե՛ք, - ասավ իշխանը սեգ,
Ելե՛ք իսկույն ու գընացե՛ք,
Մանուկ ու ծեր
Իմ աշխարհի ըննե՛ք,
Ո՞վ է, տեսե՛ք, վըրես հաչում
Ու իմ ուժը չի ճանաչում:
Ցու՛յց տըվեք դուք, որ ոչ մի տեղ
Չըկա ոչ ոք ինձնից ուժեղ ...
Ասավ. զորքերն իրենց կարգին,
Փող փըչեցին, թըմբուկ զարկին,
Շըըըխկոցով, զըըընգոցով
Ծամփա ընկան դեպի մեծ ծով:
Հասան, տեսան - ա՛յ քեզ հըսկա,
Գըլուխն էստեղ, ոտներ չըկա.
Գընա՛, գընա՛, թե որ գըտնես ...
Երկար ու մին ձըգված էսպես,
Հըսկայական քընով քընած:
Էստեղ, էնտեղ դիրքեր բըռնած՝
Դես չոքեցին, դեն պառկեցին,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժաժ չի գալի,
Խըըմփում է զարհուրելի,
Խըըմփոցից, ինչ որ խոսում,
Մարդիկ իրար ձեն չեն լսում:
Մոտ գընացին, էլի՛, էլի՛ ...
Դարձյալ տեղից ժաժ չի գալի:
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Գոռգոռալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքստներից,
Ելան վըրեն, դեսից, դենից,
Որը ոտին,
Որը քըթին,
Որը լանջին,
Որն ականջին,
Փորի վըրա, միջքի միջում
Չի են քըշում, նիզակ ճոճում,
Զարկում, զարկում,
Ջըգում, թըքում,
Հայհոյում են էսպես, էնպես .

Մին էլ հըսկան էն սարի պես
Վըրա նստեց - մե՜ծ, ահարկու,
Ինչ պատահեց - ոչ տեսնես դու:
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
Որն իր գլխից, քըթից, լանջից,
Կա՛մ ուսերից, կա՛մ ականջից:
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Նըրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացավ հըրեշ հըսկան,
Թե տե՛ր աստված, արդյոք էսքան
Մանըր-մունըր ի՞նչ բաներ են,
Որ եկել են թափվել վըրեն:
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գնան,
Բուռն առավ իր բըռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց,
Գրպանն ածավ
Ու վեր կացավ,
Լընգլընգալեն իրիկունը
Գընաց հասավ իրենց տունը:
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին:
Գընաց հըսկա մորը պատմեց,
Թե իրեն հետ ինչ պատահեց.
Ու գըրպանից հանեց բոլոր՝
Ահից խելառ ձին-ձիավոր:
Բարի կինը հենց որ տեսավ.
- Ամա՜ն, որդի, վա՜յ ինձ, - ասավ.
Ի՞նչ ես անում այս խեղճերին,
Բա չե՞ս տեսնում, թե քո ձեռին
Ոնց են դողում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես:
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծնվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խնդալ, ցավել:
Զըրպարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ ...

Մին էլ Հըսկան էն սարի պես
Վըրա նստեց - մե՛ծ, ահարկու,
Ինչ պատահեց - ոչ տեսնես դու:
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.
Որն իր գըլխից, քըթից, լանջից,
Կա՛մ ուսերից, կա՛մ ականջից:
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Նըրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացավ Հըրեշ Հըսկան,
Թե տե՛ր աստված, արդյոք էսքան
Մանըր-մունըր ի՞նչ բաներ են,
Որ եկել են թափվել վըրեն:
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գնան,
Բուռն առավ իր բըռնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց,
Գըրպանն ածավ
Ու վեր կացավ,
Լընգըլընգալեն իրիկունը
Գընաց հասավ իրենց տունը:
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին:
Գընաց Հըսկա մորը պատմեց,
Թե իրեն հետ ինչ պատահեց.
Ու գըրպանից հանեց բոլոր՝
Ահից խելառ ձին-ձիավոր:
Բարի կինը հենց որ տեսավ.
- Ամա՛ն, որդի, վա՛յ ինձ, - ասավ.
Ի՞նչ ես անում այս խեղճերին,
Բա չե՞ս տեսնում, թե քո ձեռին
Ոնց են դողում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես:
Մեծ թե փոքըր, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,
Որ ծնվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խնդալ, ցավել:
Զըպարծենա երբեք ոչ ոք,
Թե ինքն անհաղթ մի բան է չոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ ...

Բա՛ց թող, որդի՛ս,
Բա՛ց թող՝ գրնան,
Ապրեն ազատ,
Ուր կամենան:
Ու հնազանդ մոր խրատին,
Իսկույն համեց հսկա որդին
Իր գրպանից ձին-ձիավոր,
Իրար խառնած զորքը բոլոր.
Թողեց գրնան՝
Ուր կամենան:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Հանձնարարել աշակերտներին շարադրել սեփական դատողությունները ուժեղի և թույլի փոխհարաբերության մասին:

ՀԱՐԱԿԻՑ ՆՅՈՒԹԵՐ

ԵՍԱՍԵՐ ՀՍԿԱՆ

Ըստ Օսկար Ուայլդի

Մի հսկա ուներ մեծ, հրաշալի պարտեզ: Այդպիսի գեղեցիկ պարտեզ ոչ մի տեղ չկար: Գույնզգույն անուշահոտ ծաղիկները փռված էին մշտադալար կանաչների մեջ: Սիրուն թռչունները շարունակ ծլվլում ու երգում էին՝ ծառից ծառ թռչկոտելով: Գարնանը բոլոր ծառերը ծածկվում էին վարդագույն ու սպիտակ ծաղիկներով, և երեխաները, դպրոցից վերադառնալով, ուրախ-ուրախ խաղում էին նրանց ստվերի տակ:

- Որքա՜ն լավ է այստեղ, - ասում էին նրանք:

Երեխաները հսկայից չէին վախենում, որովհետև նա տանը չէր:

Ասում էին, որ նա գնացել է հյուսիս՝ իր բարեկամի մոտ, և այլևս չի վերադառնա:

Բայց ահա մի օր լուր տարածվեց, թե հսկան վերադարձել է:

Երբ երեխաները եկան պարտեզ, հսկան սաստիկ բարկացավ և գոռաց.

- Ինչպե՞ս եք համարձակվում ուրիշի պարտեզը մտնել: Այս պարտեզն իմն է, և բացի ինձանից ոչ ոք իրավունք չունի օգտվելու նրանից:

Եվ նա պարտեզի շուրջը բարձր պարիսպ շինեց և դռան վրա գրեց.

«Ուրիշի սեփականության ապահովությունը խանգարողը խիստ կպատժվի»:

Հսկան սաստիկ եսասեր էր, այսինքն՝ բացի իրենից ոչ ոքի չէր սիրում և ոչ ոքի մասին չէր մտածում:

Այդ օրվանից երեխաները զրկվեցին իրենց գեղեցիկ խաղերից: Փոշոտ փողոցը նրանց դուր չէր գալիս: Նրանք տխուր նայում էին պարտեզի բարձր պարիսպնե-

բին ու փակ դուռը և «ա՜խ» քաշելով՝ ասում. «Որքա՜ն լավ էր այնտեղ՝ պարտեզում»:

Գարունը եկավ. ամբողջ բնությունը զարդարվեց կանաչով ու գույնզգույն ծաղիկներով: Բայց Հսկայի պարտեզում ձյունը դեռ չէր հալվել: Թռչուններ չկային, որ երգեին, երեխաներ չկային, որ ուրախ ծիծաղեին ու խաղային: Պարտեզը լուռ էր ու մռայլ:

- Զարմանալի է՝ ինչու՞ գարունը մոռացել է իմ պարտեզը, - ասում էր եսասեր Հսկան՝ դուրս նայելով ամրոցի պատուհանից:

Գարունը չմտավ նրա պարտեզը և բարձր պարիսպների հետևից անցավ, գնաց: Հասավ ամառը. նա էլ մի կարճ ժամանակով ներս նայեց, տեղ-տեղ մի քիչ կանաչ երևացրեց ու նույնպես գնաց: Հսկայի պարտեզում շարունակ ձմեռ էր:

Նա զարմանում էր և չէր հասկանում դրա պատճառը:

Մի գարնանային առավոտ Հսկային թվաց, թե իր պատուհանի տակ նվագում են: Մոտեցավ, բաց արեց պատուհանը և սաստիկ ուրախացավ. դա երաժիշտ չէր, որ նվագեր, այլ մի փոքրիկ գեղեցիկ թռչուն էր ծլվլում նրա պարտեզում: Շատ ժամանակ է՝ նա թռչունի ձայն չէր լսել: Հսկան գլուխը հանեց լուսամուտից և ի՞նչ տեսավ: Կանաչ գարունը ներս էր մտել իր պարտեզը, ծառերը ծաղկել էին, գույնզգույն ծաղիկները տարածել էին իրենց անուշ հոտը:

- Վերջապես գարունը եկա՜վ, - բացականչեց Հսկան և իջավ պարտեզ. այստեղ զարմացած կանգ առավ: Պատի նեղ արանքից երեխաները ներս էին մտել և բարձրացել ծառերը: Ամեն մեկը մի ծառ էր ընտրել, բարձրացել, նստել էր նրա ճյուղին և թաքնվել նորաբողբոջ ծաղիկների ու տերևների հետևը: Պարտեզն այնպես էր ուրախացել սիրելի հյուրերի գալով, որ սիրտը բացվել էր կանաչով ու ծաղիկներով: Ծառերն ու ծաղիկները ժպտում էին, իսկ թռչունները՝ ուրախ ծլվլում: Սա մի հրաշալի տեսարան էր. Հսկան հիացած կանգնել էր և չէր կարող աչքը հեռացնել այդ գեղեցիկ պատկերից: Հանկարծ նա նկատեց, որ մի փոքրիկ մանուկ կանգնել է ծառի տակ և լաց է լինում: Նա չէր կարողացել բարձրանալ ծառը: Եվ այդ ծառը դեռ չէր կանաչել: Հսկան հուզվեց, նրա սիրտը մեղմացավ:

- Մի՞թե ես այնպես եսասեր եմ եղել, որ թույլ չեմ տվել երեխաներին մտնել իմ պարտեզը, - ասաց նա: - Այսուհետև ես կքանդեմ պարիսպը և իմ պարտեզը կդարձնեմ երեխաների մշտական խաղատեղի:

Հսկան մոտեցավ լացող մանկանը և բարձրացնելով նրան՝ նստեցրեց ծառի ճյուղին: Ծառն իսկույն կանաչեց և ծաղկեց: Մանկիկն ուրախացավ, ձեռքը մեկնեց, փարվեց Հսկային, համբուրեց:

Մյուս երեխաները, որոնք, Հսկային տեսնելով, վախեցել փախել էին, սիրտ առան և նորից ներս վազեցին:

Այդ օրվանից երեխաներն ամեն օր գալիս էին պարտեզ: Բարի Հսկան խաղում էր նրանց հետ, զբաղեցնում և զվարճացնում:

ՎՍԵՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ըստ Նվարդ Թումանյանի

1915 թվականն էր: Արհավիրք, կոտորած, գաղթականներով լեցուն ճանապարհներ, ահ ու սարսափ:

Աղետալի լուրերը հասան Թիֆլիս: Թումանյանի տունը դարձել էր հավաքատեղի: Խոսում էին, վիճում, քննարկում: Մեծ բանաստեղծը այդ ահասարսուռ օրերին կծկվել էր, կորցրել բնատուր զվարթությունը, վշտալլուկ դեմքին ի հայտ էին եկել նոր կնճիռներ: Իր ժողովրդի դժխեմ ճակատագիրը բզկտում էր նրա զգայուն հոգին: Սիրտը այնտեղ էր՝ մայր Հայաստանում:

Հունիս ամիսն էր: Էջմիածինը լեփ-լեցուն էր Արևմտահայաստանից փախած գաղթականներով, անթիվ-անհամար որբ ու անտերունչ երեխաներով: Կուչ եկած այս կամ այն պատի տակ՝ նրանք տանջալլուկ հայացքները հառում էին անցորդներին՝ մի կտոր հաց ստանալու ակնկալությամբ: Ցնցոտիավոր, բոկոտն կանայք տնից տուն էին գնում, մուրում՝ վախվորած պարզելով դողդոջուն ձեռքերը: Մի կողմից սովը, մյուս կողմից ժանտախտը իրենց սուր մանգաղով հնձում էին դժբախտ մարդկանց:

Ահա այդ օրերին Թումանյանը ժամանեց Էջմիածին:

Թեև գաղթականների ցնցող ողբերգության մղձավանջային պատկերները բանաստեղծի վրա թողեցին ծայրաստիճան ծանր տպավորություն, այնուամենայնիվ առանց հապաղելու նա գործի անցավ: Դժգոհ էր, որ տեղի կազմակերպությունները չէին կարողանում գաղթականներին օգնելու գործը արագ կարգավորել: Վրդովվում էր, որ պահեստներում եղած մթերքը, հագուստեղենը այդպես էլ չէին բաժանվում անօթևան մարդկանց: Ունենալով մեծ հեղինակություն՝ Թումանյանը իր վրա վերցրեց այդ դժվարին գործը: Ինքը գրեթե ոչինչ չէր ուտում: Ո՛չ ժամանակ ուներ, ո՛չ ախորժակ: Միակ բանը կոնյակով թեյն էր, որ խմում էր զանազան վարակներից զերծ մնալու համար:

Օգոստոսի 19-ի գիշերն էր՝ խավարչտին, ահազարհուր: Կայծակի օձերեն մըրրակները աչուելի որոտով կտրատում էին երկինքը: Քիչ անց մոլեգին մրրիկին փոխարինեց հորդառատ անձրևը: Թվում էր՝ ջուրը երկնքից թափվում է դույլերով՝ պղտոր հեղեղի տակ առնելով ամեն ինչ: Այդ ահեղ ժամին գաղթականները անձրևի տակ էին՝ բացօթյա, անօգնական:

Սև թիկնոցով, կեպին գլխին՝ Թումանյանը շտապ դուրս եկավ սենյակից՝ գաղթականներին որևէ տեղ պատսպարելու մտադրությամբ: Նա նկատի ուներ վեհարանի կիսավարտ շենքը, որ կաթողիկոսը մերժել էր գաղթականներին հատկացնել: Թումանյանը զայրացած էր: Հակառակ վեհափառի արգելքին՝ գաղթականներին տարավ այնտեղ: Տեղատարափ անձրևի տակ քայլում էր բանաստեղծը, և նրա հետևից գնում էին հարյուրավոր գաղթականներ՝ կապոցներով, երեխաներով, նույնիսկ հաշմանդամների բազմուսներով: Սարսափելի տեսարան էր: Այդ վսեմ առաքելությամբ Թումանյանը հիշեցնում էր աստվածատաչ մի մարգարեի, որ դեպի փրկություն է առաջնորդում իր ժողովրդին: Նա հոյատեսիլ էր այդ պահին, վեհորեն սքանչելի:

Կաթողիկոսին դուր չեկավ Թումանյանի վարմունքը: Հաջորդ օրը նրան կանչեց և ինքնագլուխ արարքի համար բացատրություն պահանջեց: Բանաստեղծի պատաս-

խամը չգոհացրեց, և նա ջղագրգիռ տոնով հիշեցրեց:
- Դուք գիտե՞ք, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ:
Թումանյանը դուրս եկավ համբերությունից:
- Իսկ դուք գիտե՞ք, - ասաց նա, - որ ես Ամենայն Հայոց բանաստեղծն եմ:
Երկու ամիս Էջմիածնի դժոխքում անցկացնելուց հետո Թումանյանը վերադարձավ Թիֆլիս: Ամիսներ էին պետք, որ նրա գրգռված նյարդերը հանգստանային, և կարողանար փոքրիշատե վերագտնել հոգու անդորրը:

ՀԱՐԱԶԱՏԻ ՍԵՐԸ

Ըստ Ջեյմս Ջոյսի

Նա նստել էր պատուհանի մոտ և դիտում էր փողոց ներխուժող երեկոն: Անցորդները քիչ էին: Ահա տուն գնաց շենքի վերջին բնակիչը, որի ոտնաձայները մարեցին շքամուտքում:

Բակը մեծ էր, կանաչապատ: Տարիներ առաջ որքա՜ն հաճույքով էր քույրերի և եղբայրների հետ այնտեղ խաղում: Խաղում էին մինչև հոր՝ աշխատանքից վերադառնալը: Նա շատ խիստ ու պահանջկոտ էր: Երեխաներին տուն էր քշում՝ հալածելով իր սև գավազանով: Բայց այն ժամանակ իրենք երջանիկ էին: Գլխավորը՝ մայրը կար: Դա շա՜տ վաղուց էր: Հիմա մայրը մահացել է, քույրերն ու եղբայրները՝ մեծացել, ցրվել են երկրով մեկ: Այժմ իրենք չորսով են՝ ինքը, հայրը, ավագ և կրտսեր եղբայրները: Բայց որոշված է. այսօր երեկոյան ինքն էլ կհեռանա, կլքի տունը: Տու՜ն: Նա աչք ածեց շուրջը, նայեց ծանոթ իրերին, որոնք ամեն օր մաքրում էր, դասավորում և չէր մտածում, թե երբևէ դրանցից կբաժանվի:

Աղջիկը համաձայնել էր հեռանալ տնից: Արդյոք դա ճիշտ քայլ էր: Տան հոգսն ամբողջովին իր վրա էր, չհաշված խանութի աշխատանքը: Հետաքրքիր է, ի՞նչ կմտածեն խանութում, երբ իմանան, որ ինքը փախել է մի երիտասարդի հետ: Բայց խանութից հեռանալն այնքան ցավալի չէր, որքան հարազատներին, տունը լքելը: Սակայն չէ՞ որ նոր տան մեջ՝ հեռավոր անծանոթ երկրում, իր դրությունը կփոխվի: Ինքը՝ Էվելինը, ամուսնացած կլինի, մոր դժբախտ ճակատագիրը չի ունենա խստաբարո ամուսնու ձեռքին: Անգամ հիմա, երբ տասնինն անց աղջիկ է, իրեն անպաշտպան է զգում հոր զայրույթից: Երբ ինքը փոքր էր, հայրը չէր հարձակվում իր վրա այնպես, ինչպես սովորություն ուներ հարձակվելու որդիների վրա, որովհետև ինքն աղջիկ էր: Բայց վերջերս սկսեց սպառնալ և ասում էր, որ միայն հանգուցյալ մոր անունն է նրան փրկում:

Վեճերը հիմնականում փողի շուրջ էին: Հայրն ասում էր, որ Էվելինն անխելք է, շռայլում է փողը, վատնում ավելորդ բաների վրա: Ինչպես էլ նա վարվեր, հայրը դժգոհ էր մնում: Ինքն արդեն հոգնել էր այդ ամենից և որոշել նոր կյանք սկ-

սել Ֆրենկի հետ, որը բարի է, սրտաբաց ու արի: Այսօր ինքը նրա հետ գիշերային նավով կմեկնի, կդառնա նրա կինը և կապրի Բուենոս Այրեսում, որտեղ Ֆրենկը տուն ունի: Ախր հայրը շա՜տ-շատ անգամներ էր իրեն վիրավորել: Երբ իմացավ Ֆրենկի մասին, արգելեց նրա հետ գործ ունենալ:

- Գիտե՛մ այդ նավաստիներին, - զայրացած նետեց նա: Մի օր էլ վիճեց տղայի հետ, և Էվելինը ստիպված էր դրանից հետո գաղտնի հանդիպել նրան:

Երեկոն թանձրացավ փողոցում: Էվելինը գրեց երեք նամակ՝ հորը և երկու եղբայրներին, որոնց շատ սիրում էր: Հորն էլ էր հոգու խորքում սիրում: Վերջին ժամանակներս սկսել էր նկատել նրա ծերությունը, և երբ ինքը գնա, հայրը կզգա իր բացակայությունը: Հակասական մարդ էր նա: Երբեմն կարող էր չափազանց բարի լինել: Օրինակ, երբ մի քանի օր առաջ ինքը հիվանդ էր, հայրն իր համար կարդաց մի պատմվածք, կրակի վրա հաց բովեց: Նախորդ գիշեր զգաց, թե ինչպես նա զգուշությամբ ծածկեց իրեն:

Մինչ Էվելինը տարված էր այս մտքերով, հասավ տնից փախչելու ժամանակը:

Մեկ ժամ անց նա կանգնած էր կառամատույցում: Ֆրենկը բռնել էր նրա ձեռքը, և Էվելինը միայն զգում էր, որ տղան նորից ու նորից համոզում, ինչ-որ բան է ասում ճամփորդության մասին: Աղջիկը լուռ էր, այտերը սառն էին ու գունատ: Ահա նավը սպասում է իրենց: Հա՜յրը, եղբայրնե՛րը, տու՛նը ... Էվելինը հուսահատ աղոթում էր Աստծուն, աղաչում ճիշտ ելքը ցույց տալ: Խարիսխն արդեն բարձրացված է, սուլում է շոգեմեքենան: Եթե մեկնի, առավոտյան բաց ծովում կլինի: Հապա հա՜յրը, եղբայրնե՛րը, տու՛նը: Հնչեց նավի զանգը՝ ասես իր հոգում:

- Գնա՛նք, - ասաց Ֆրենկը:

Աշխարհի բոլոր ծովերը փոթորկվեցին Էվելինի սրտում: Թվաց՝ Ֆրենկը նրան նետում է հորձանքի մեջ և ուզում է խեղդել: Էվելինը երկու ձեռքով կառչեց երկաթյա ճաղերից:

- Գնա՛նք:

Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Դա անհնար է: Նրա մատները խելագար ջղաձգումով սեղմեցին երկաթները:

- Էվելի՛ն, Է՛վի:

Ֆրենկը անցավ արգելագիծը և այժմ կանչում էր մյուս կողմից: Նրա վրա գոռում էին, որ ճանապարհ տա, մյուսներին չխանգարի: Բայց Ֆրենկը չէր լսում, շարունակում էր կանչել աղջկան: Էվելինն իր գունատ, անտարբեր դեմքը շրջել էր դեպի Ֆրենկը, և նրա աչքերը ոչինչ չէին ասում՝ ո՛չ սեր, ո՛չ հրաժեշտ, ո՛չ մտերմություն:

ՊԼԱՆ

1. Մանկության հուշեր:
2. Հեռանալու որոշում:
3. Անհետաքրքիր կյանք:
4. Վեճեր հոր և աղջկա միջև:
5. Հոր հակասական կերպարը:
6. Կառամատույցում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փողոց ներխուժող երեկո, ոտնաձայներ, պահանջկոտ, սև գավազան, խստաբարո ամուսին, տարիներ անց, Բուենոս Այրես, հակասական մարդ, կառամատույց, ճիշտ ելք, բոլոր ծովերը փոթորկվել, կառչել, արգելագիծ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջեյմս Ջոյսը 20-րդ դարի անգլիական գրականության խոշոր դասականներից է:*

սել Ֆրենկի հետ, որը բարի է, սրտաբաց ու արի: Այսօր ինքը նրա հետ գիշերային նավով կմեկնի, կդառնա նրա կինը և կապրի Բուենոս Այրեսում, որտեղ Ֆրենկը տուն ունի: Ախր Հայրը չա՛տ-չատ անգամներ էր իրեն վիրավորել: Երբ իմացավ Ֆրենկի մասին, արգելեց նրա հետ գործ ունենալ:

- Գիտե՛մ այդ նավաստիներին, - զայրացած նետեց նա: Մի օր էլ վիճեց տղայի հետ, և Էվելինը ստիպված էր դրանից հետո գաղտնի հանդիպել նրան:

Երեկոն թանձրացավ փողոցում: Էվելինը գրեց երեք նամակ՝ հորը և երկու եղբայրներին, որոնց շատ սիրում էր: Հորն էլ էր հոգու խորքում սիրում: Վերջին ժամանակներս սկսել էր նկատել նրա ծերությունը, և երբ ինքը գնա, Հայրը կզգա իր բացակայությունը: Հակասական մարդ էր նա: Երբեմն կարող էր չափազանց բարի լինել: Օրինակ, երբ մի քանի օր առաջ ինքը հիվանդ էր, Հայրն իր համար կարդաց մի պատմվածք, կրակի վրա հաց բովեց: Նախորդ գիշեր զգաց, թե ինչպես նա զգուշությամբ ծածկեց իրեն:

Մինչ Էվելինը տարված էր այս մտքերով, հասավ տնից փախչելու ժամանակը:

Մեկ ժամ անց նա կանգնած էր կառամատույցում: Ֆրենկը բռնել էր նրա ձեռքը, և Էվելինը միայն զգում էր, որ տղան նորից ու նորից համոզում, ինչ-որ բան է ասում ճամփորդության մասին: Աղջիկը լուռ էր, այտերը սառն էին ու գունատ: Ահա նավը սպասում է իրենց: Հա՛յրը, եղբայրնե՛րը, տու՛նը ... Էվելինը հուսահատ աղոթում էր Աստծուն, աղաչում ճիշտ ելքը ցույց տալ: Խարիսխն արդեն բարձրացված է, սուլում է շոգեմեքենան: Եթե մեկնի, առավոտյան բաց ծովում կլինի: Հապա հա՛յրը, եղբայրնե՛րը, տու՛նը: Հնչեց նավի զանգը՝ ասես իր հոգում:

- Գնա՛նք, - ասաց Ֆրենկը:

Աշխարհի բոլոր ծովերը փոթորկվեցին Էվելինի սրտում: Թվաց՝ Ֆրենկը նրան նետում է հորձանքի մեջ և ուզում է խեղդել: Էվելինը երկու ձեռքով կառչեց երկաթյա ճաղերից:

- Գնա՛նք:

Ո՛չ, ո՛չ, ո՛չ: Դա անհնար է: Նրա մատները խելագար ջղաձգումով սեղմեցին երկաթները:

- Էվելի՛ն, Է՛վի:

Ֆրենկը անցավ արգելագիծը և այժմ կանչում էր մյուս կողմից: Նրա վրա գոռում էին, որ ճանապարհ տա, մյուսներին չխանգարի: Բայց Ֆրենկը չէր լսում, շարունակում էր կանչել աղջկան: Էվելինն իր գունատ, անտարբեր դեմքը շրջել էր դեպի Ֆրենկը, և նրա աչքերը ոչինչ չէին ասում՝ ո՛չ սեր, ո՛չ հրաժեշտ, ո՛չ մտերմություն:

ՊԼԱՆ

1. Մանկության հուշեր:
2. Հեռանալու որոշում:
3. Անհետաքրքիր կյանք:
4. Վեճեր հոր և աղջկա միջև:
5. Հոր հակասական կերպարը:
6. Կառամատույցում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փողոց ներխուժող երեկո, ստնաձայներ, պահանջկոտ, սև զավզան, խստաբարո ամուսին, տասնինն անց, Բուենոս Այրես, հակասական մարդ, կառամատույց, ճիշտ ելք, բոլոր ծովերը փոթորկվել, կառչել, արգելագիծ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջեյմս Ջոյսը 20-րդ դարի անգլիական գրականության խոշոր դասականներից է:*

ԳԱԶԱՆԱՆՈՑԻ ՔՄԱՀԱԾ ԲՆԱԿԻՉԸ

Ըստ Ջերալդ Դարելի

(Նկարագրական փոխադրություն)

Մեր գազանանոցի ամենասիրելի, ամենաամոթխած և ամենահրապուրիչ արարածները կապիկներն էին: Մեզ մոտ դրանց թիվը հասնում էր քառասունի, իսկ կյանքը չորս տասնյակ կապիկների հետ նույն հարկի տակ՝ չի կարելի խաղաղ համարել: Տարեց կապիկները դեռ ոչինչ, բայց փոքրիկները մեզ շա՜տ-շատ էին չարչարում: Նրանք բարձր ճղճղում էին, տաք կաթով չէր պահանջում օրվա բոլոր ժամերին, չարություններ անում, իրար ծեծում: Մենք ստիպված էինք լինում մտածել փոքրիկներին զբաղեցնելու տարբեր հնարներ:

Կապիկների մեր հավաքածուում իրենց անկամխոսնելի բնավորությամբ աչքի էին ընկնում երկու շիմպանզե՝ Ջալին ու Մերին: Նախքան մեզ մոտ ընկնելը Ջալին իր նախկին տիրոջ սիրելին էր եղել և արդեն բավականին վարժեցրած էր: Նրա փոքրիկ, կնճռոտ դեմքն անսահման թախծոտ էր թվում, խաժ աչքերը երկյուղով էին նայում: Իր ամբողջ տեսքով նա ասես ասում էր, թե կյանքն իր նկատմամբ դաժան ու անարդարացի է, բայց ինքը բոլորին ներում է ու չի բողոքում: Սակայն թախծի ու վշտի այդ արտահայտությունը զուտ խաբկանք էր. իրականում Ջալին ամենևին էլ վիրավորված, չհասկացված կապիկ չէր, այլ ամենախականխ փողոցային, խուլիգան տղա՝ սուտլիկ ու խորամանկ:

Ջալին անհույս կերպով սիրահարված էր Մերիին, որը, սակայն, քիթը ցցում էր ու բանի տեղ չէր դնում իր ջերմեռանդ երկրպագուին՝ չնայած վերջինիս համառ սիրահետումներին:

Մենք ամեն օր Ջալիին վանդակից բաց էինք թողնում զբոսնելու, և նա շրջում էր ամբողջ ճամբարով մեկ՝ իր լուսաճաճանչ, միամիտ տեսքով ջանալով ցրել մեր զգոնությունը, և հավաստիացնել մեզ իր մտադրությունների անմեղության մեջ: Եվ հետո իբր պատահմամբ մոտենում էր սեղանին, ուր դասավորված էր ուտելիքը, արագ հայացք գցում շուրջը՝ արդյոք ոչ ոք չի տեսնում, և հա՜փ. Ջալիի ձեռքին է բանանների ամենամեծ կապը, և նա արդեն սլանում է դեպի մոտակա ծառը: Եթե նրա հետևից վազում էին, նա նետում էր բանանները և կանգ առնում: Նրան հանդիմանում էին, իսկ նա խեղճ-խեղճ նստում էր ու վշտահար նայում իրեն կշտամբողներին՝ ամբողջովին վիրավորված, անմեղություն դարձած: Եվ ստացվում էր, որ նրան իզուր տեղը կասկածել են գարշելի հանցանքի մեջ, որ նա չափից դուրս աղնըվաբարո է և արդարանալու կարիք չունի, իսկ դուք այդքան բթամիտ եք, ինքներդ չեք հասկանում ձեր ամբաստանության անհեթեթությունն ու անիրավացիությունը: Փորձե՛ք նրա քթի տակ թափահարել գողացած բանանների կապը, և նա կնայի ձեզ մի քիչ զարմացած ու գրեթե զզվանքով: Իբր որտեղի՞ց հնարեցիք, թե նա գողացել է այդ բանանները: Մի՞թե դուք չգիտեք, որ Ջալին բանան ուտել չի կարողանում: Իր ողջ կյանքում նրա մեջ նվազագույն ցանկություն անգամ չի առաջացել թեկուզ լեզվի ծայրով կպչել այդ զզվելի մրգին, իսկ գողության մասին իր մըտ-

ԳԱԶԱՆԱՆՈՑԻ ՔՄԱՀԱՃ ԲՆԱԿԻՉԸ

Ըստ Ջերալդ Դարելի

(Նկարագրական փոխադրություն)

Մեր գազանանոցի ամենազվարճալի, ամենաանտանելի և ամենահրապուրիչ աբարածները կապիկներն էին: Մեզ մոտ դրանց թիվը հասնում էր քառասունի, իսկ կյանքը չորս տասնյակ կապիկների հետ նույն հարկի տակ՝ չի կարելի խաղաղ համարել: Տարեց կապիկները դեռ ոչինչ, բայց փոքրիկները մեզ շա՜տ-շատ էին չարչարում: Նրանք բարձր ճղճղում էին, տաք կաթով չէր պահանջում օրվա բոլոր ժամերին, չարություններ անում, իրար ծեծում: Մենք ստիպված էինք լինում մտածել փոքրիկներին դաստիարակելու տարբեր հնարներ:

Կապիկների մեր հավաքածուում իրենց անկամխատեսելի բնավորությամբ աչքի էին ընկնում երկու շիմպանզե՝ Ջալին ու Մերին: Նախքան մեզ մոտ ընկնելը Ջալին իր նախկին տիրոջ սիրելին էր եղել և արդեն բավականին վարժեցրած էր: Նրա փոքրիկ, կնճռոտ դեմքն անսահման թախծոտ էր թվում, խամ աչքերը երկյուղով էին նայում: Իր ամբողջ տեսքով նա ասես ասում էր, թե կյանքն իր նկատմամբ դաժան ու անարդարացի է, բայց ինքը բոլորին ներում է ու չի բողոքում: Սակայն թախծի ու վշտի այդ արտահայտությունը զուտ խաբկանք էր. իրականում Ջալին ամենևին էլ վիրավորված, չհասկացված կապիկ չէր, այլ ամենախսկական փողոցային, խուլիգան տղա՝ սուտլիկ ու խորամանկ:

Ջալին անհույս կերպով սիրահարված էր Մերիին, որը, սակայն, քիթը ցցում էր ու բանի տեղ չէր դնում իր ջերմեռանդ երկրպագուին՝ չնայած վերջինիս համառ սիրահետումներին:

Մենք ամեն օր Ջալիին վանդակից բաց էինք թողնում զբոսնելու, և նա շրջում էր ամբողջ ճամբարով մեկ՝ իր լուսաճաճանչ, միամիտ տեսքով ջանալով ցրել մեր զգոնությունը, և հավաստիացնել մեզ իր մտադրությունների անմեղության մեջ: Եվ հետո երբ պատահմամբ մոտենում էր սեղանին, ուր դասավորված էր ուտելիքը, արագ հայացք գցում շուրջը՝ արդյոք ոչ ոք չի տեսնում, և հա՜փ. Ջալիի ձեռքին է բանանների ամենամեծ կապը, և նա արդեն սլանում է դեպի մոտակա ծառը: Եթե նրա հետևից վազում էին, նա նետում էր բանանները և կանգ առնում: Նրան հանդիմանում էին, իսկ նա խեղճ-խեղճ նստում էր ու վշտահար նայում իրեն կշտամբողներին՝ ամբողջովին վիրավորված, անմեղություն դարձած: Եվ ստացվում էր, որ նրան իզուր տեղը կասկածել են գարշելի հանցանքի մեջ, որ նա չափից դուրս ազնվաբարո է և արդարանալու կարիք չունի, իսկ դուք այդքան բթամիտ եք, ինքներդ չեք հասկանում ձեր ամբաստանության անհեթեթությունն ու անիրավացիությունը: Փորձե՛ք նրա քթի տակ թափահարել գողացած բանանների կապը, և նա կնայի ձեզ մի քիչ զարմացած ու գրեթե զզվանքով: Իբր որտեղի՞ց հնարեցիք, թե նա գողացել է այդ բանանները: Մի՞թե դուք չգիտեք, որ Ջալին բանան տանել չի կարողանում: Իր ողջ կյանքում նրա մեջ նվազագույն ցանկություն անգամ չի առաջացել թեկուզ լեզվի ծայրով կպչել այդ զզվելի մրգին, իսկ գողության մասին իր մըտ-

քով նույնիսկ չի անցել: Երբ դադարում էինք նրան պարսավելուց, Ջալլին վեր էր կենում նստած տեղից, խորը հառաչում, մի հայացք գցում մեզ վրա, որի մեջ տառապանք ու զզվանք կար, և ցատկոտելով ուղղվում դեպի խոհանոց՝ տեսնելու, թե էլի ինչ կարելի է թռցնել: Նա բոլորովին անուղղելի էր, իսկ մռութն այնքան արտահայտիչ էր, որ հենց միայն դիմախաղով կարող էր մասնակցել մեր խոսակցություններին:

Ջալլին ամենամեծ հաղթանակը տարավ, երբ մեզ այցելության եկավ քաղաքագլուխը: Նա շատ հավանեց կենդանիների մեր հավաքածուն, բայց նրա ուշադրությունն ամենից ավելի գրավեց Ջալլին: Մինչ մեր հյուրին կբացատրեինք, թե նա ինչ զզվելի կեղծավորն է, Ջալլին նստել էր վանդակում, բռնել ձողերի արանքից իրեն մեկնած մեծ մարդու ձեռքը և նրան էր նայում վշտոտ աչքերով, ասես աղերսում էր նորին գերազանցությանը չլսել չար բամբասանքները իր՝ խեղճ կապիկի մասին:

Հաջորդ առավոտ մեզ ներկայացավ քաղաքագլխի սուրհանդակը և հանձնեց մի գեղեցիկ բացիկ, որով նորին գերազանցությունը խնդրում էր իրեն հաճույք պատճառել և ներկայանալ ընդունելության՝ մեզ հետ տանելով նաև Ջալլիին: Մենք հրավերը ցույց տվինք իրեն՝ Ջալլիին, որ նստել էր վանդակում և ընկղմվել փիլիսոփայական խորհրդածությունների մեջ: Նա մի հայացք գցեց բացիկին և իսկույն էլ նրա մասին մոռացավ: Ամբողջ տեսքով նա ուզում էր հասկացնել, որ նման հրավերներն իր համար նորություն չեն, որ դրանք իր գլխին են թափվում գրեթե ամեն օր և ինչ-որ քաղաքագլխի ինչ-որ հրավեր իրեն չի կարող զարմացնել: Ի դեպ, այդ առավոտ նա հասցրել էր լինել խոհանոցում և այնտեղից թռցնել վեց ձու, մի ամբողջ հաց և մի խաշած հավ: Փորը կուշտ էր, և մենք ոչ մի կերպ չկարողացանք նրան մեզ հետ տանել: Նա չգալու մի ուրիշ պատճառ էլ ուներ. ընկել էր Մերիի հետևից և սկսել սիրո բուռն խոստովանություն:

ՊԼԱՆ	1. Գազանանոցի աղմկոտ բնակիչները:	3. Ջալլիի խորամանկությունները:
	2. Ջալլին:	4. Քաղաքագլխի հրավերը և Ջալլիի մերժումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փոքրիկներին դաստիարակելու տարբեր հնարներ, անկանխատեսելի բնավորություն, շիմպանզե, կնճռոտ դեմք, խաժ աչքեր, թախծի ու վշտի արտահայտություն, խաբկանք, համառ սիրահետումներ, ամբաստանություն, արտահայտիչ մռութ, դիմախաղ, նորին գերազանցություն, չար բամբասանքներ, փիլիսոփայական խորհրդածություն, սիրո բուռն խոստովանություն:

2. Դասարանում տեքստն ընթերցելիս աշխատեցե՛ք պահպանել հեղինակի մեղմ հումորը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ *Ջերալդ Դարելը 20-րդ դարի անգլիացի ճանաչված գրող է, բնախույզ-կենսաբան:*

քով նույնիսկ չի անցել: Երբ դադարում էինք նրան պարսավելուց, Ջալլին վեր էր կենում նստած տեղից, խորը հառաչում, մի հայացք գցում մեզ վրա, որի մեջ տառապանք ու զզվանք կար, և ցասկոտելով ուղղվում դեպի խոհանոց՝ տեսնելու, թե էլի ինչ կարելի է թռցնել: Նա բոլորովին անուղղելի էր, իսկ մռութն այնքան արտահայտիչ էր, որ հենց միայն դիմախաղով կարող էր մասնակցել մեր խոսակցություններին:

Ջալլին ամենամեծ հաղթանակը տարավ, երբ մեզ այցելության եկավ քաղաքագլուխը: Նա շատ հավանեց կենդանիների մեր հավաքածուն, բայց նրա ուշադրությունն ամենից ավելի գրավեց Ջալլին: Մինչ մեր հյուրին կբացատրեինք, թե նա ինչ զզվելի կեղծավորն է, Ջալլին նստել էր վանդակում, բռնել ձողերի արանքից իրեն մեկնած մեծ մարդու ձեռքը և նրան էր նայում վշտոտ աչքերով, ասես աղերսում էր նորին գերազանցությանը չլսել չար բամբասանքները իր՝ խեղճ կապկի մասին:

Հաջորդ առավոտ մեզ ներկայացավ քաղաքագլխի սուրհանդակը և հանձնեց մի գեղեցիկ բացիկ, որով նորին գերազանցությունը խնդրում էր իրեն հաճույք պատճառել և ներկայանալ ընդունելության՝ մեզ հետ տանելով նաև Ջալլին: Մենք հրավերը ցույց տվինք իրեն՝ Ջալլին, որ նստել էր վանդակում և ընկղմվել փիլիսոփայական խորհրդածությունների մեջ: Նա մի հայացք գցեց բացիկին և իսկույն էլ նրա մասին մոռացավ: Ամբողջ տեսքով նա ուզում էր հասկացնել, որ նման հրավերներն իր համար նորություն չեն, որ դրանք իր գլխին են թափվում գրեթե ամեն օր և ինչ-որ քաղաքագլխի ինչ-որ հրավեր իրեն չի կարող զարմացնել: Ի դեպ, այդ առավոտ նա հասցրել էր լինել խոհանոցում և այնտեղից թռցնել վեց ձու, մի ամբողջ հաց և մի խաշած հավ: Փորը կուշտ էր, և մենք ոչ մի կերպ չկարողացանք նրան մեզ հետ տանել: Նա չգալու մի ուրիշ պատճառ էլ ուներ. ընկել էր Մերիի հետևից և սկսել սիրո բուռն խոստովանություն:

ՊԼԱՆ

1. Գազանանոցի աղմկոտ բնակիչները:
2. Ջալլին:
3. Ջալլիի խորամանկությունները:
4. Քաղաքագլխի հրավերը և Ջալլիի մերժումը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ *1. Գրատախտակին գրել հետևյալ բառերն ու բառակապակցությունները.*

փոքրիկներին դաստիարակելու տարբեր հնարներ, անկանխատեսելի բնավորություն, շիմպանզե, կնճռոտ դեմք, խաժ աչքեր, թախծի ու վշտի արտահայտություն, խաբկանք, համառ սիրահետումներ, ամբաստանություն, արտահայտիչ մռութ, դիմախաղ, նորին գերազանցություն, չար բամբասանքներ, փիլիսոփայական խորհրդածություն, սիրո բուռն խոստովանություն:

2. Դասարանում տեքստն ընթերցելիս աշխատեցե՛ք պահպանել հեղինակի մեղմ հումորը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Ջերալդ Դարելը 20-րդ դարի անգլիացի ճանաչված գրող է, բնախույզ-կենսաբան:

ՄԵՂԱ՛, ՏԵ՛Ր

Ըստ Գրիգոր Զոհրապի

(գրական դասափոխադրություն)

Մարտիրոս աղան ուշ եկավ եկեղեցի այն առտուն: Դուրսը տիրող ցուրտին հակառակ՝ քրտնաթոր մտավ ներս՝ ծանրաշարժ ու պարարտ մարմնին բեռան տակ շնչասպառ: Երեսը խաչակնքեց, ծնրադրեց՝ ֆեսը վար առած, ցույց տալով յուղոտ ու հերաթափ գանգ մը: Հետո բարձրաձայն հառաչանք մը ելավ կուրծքին խորե՜ն, խորեն.

- Մեղա՛, Տե՛ր:

Վայրկյան մը նորեն մասնավորեց իր աղոթքը՝ անհամար ծնրադրություններու խառնված, համբուրելով գետնի աղտն ու փոշին ու լալագին և սրտաշարժ ձայնով մը վերադառնալով իր անձին.

- Մեղա՛, Տե՛ր:

Մարտիրոս աղան այսպես էր ամեն առտու՝ անպակաս եկեղեցիեն:

Քահանան այս աշխարհականին բարեպաշտութենեն կը դողար, քարոզիչն ու թաղական խորհուրդը կակնածեին իրմե, և գյուղացին կը մեծարեր այս հավատացյալ աղան, որ իր բոլոր հարստության հակառակ՝ աղքատի նման խոնարհ ու աստվածավախ կը թվեր:

Պոլիս, իր խանութին մեջ, Մարտիրոս աղան մեծազոր մարդ մըն էր: Հայր, մայր չուներ, այլ հորեղբայրներու ու հորեղբոր որդիներու անհատնում շարք մը, որոնք փոխնիփոխ կուգային իր քով՝ սորվելու դրամ շահելու արհեստը, հաճախորդներու հետ վարվելու կերպերը:

Հայրենիքեն գրեթե բոբիկ եկավ Պոլիս: Հավաքած հինգ հարյուր ղրուշով բացավ իր խանութը: Հայրենի քաղաքին մեջ, զոր Մարտիրոս «մեր երկիրը» կկոչեր, տիրացություն ըրած ու ժամասիրություն ժառանգած էր ադկե:

Երբ տասնութը տարին թևակոխեց, բռնի Պոլիս ղրկեցին զինքը՝ մարդ ըլլալու համար:

Ո՛չ, այս մայրաքաղաքը «երկրին» չէր նմանիր բնավ: Նոր աշխարհ մը նոր գաղափարներ արթնցուց: Վայելքի պետքը դրամի պետքը ցուցուց: Իր բարեպաշտությունը, որ մինչև այն ատեն անշահասեր էր, պահանջող, ուղղամ բերան դարձավ: Մայր եկեղեցվո մեկ անկյունին մեջ քաշված՝ ինք սոսկ և դարձյալ սոսկ ուզեց Աստուծմե և իր աղքատության փոխարեն առած չնչին գումարները աստվածային պարգևներ կը համարեր և իր աղոթքներուն վարձատրությունը: Այսպես իր առևտուրը աստվածասիրության հետ խառնված մնաց. այն բոլոր առիթները, ուսկից դրամ շահելու կարելիությունը նշմարեց, իր օգտին համար Աստծուն կողմե հատկապես կարգադրված նկատեց ու բան մը չը հարցուց ա՛լ իր խղճին: Աստված իր ըրածը չէ՞ր գիտեր միթե:

Անոր բարեպաշտ համբավին խաբված՝ իր մահամերձ բարեկամներեն մեկը մեծ, իր չտեսածին չափ մեծ գումար մը ավանդ հանձնեց իրեն՝ մահվընեն վերջը ազգին

ու ազգականներուն մեջ բաժնելու խնդիրքով:

Հիվանդը մեռավ, և հուղարկավորներուն մեջ Մարտիրոս աղա իր արցունքներովը անկեղծ ու անսահման կսկիծով մը ննջեցյալին ամենեն սրտագին բարեկամը համարվեցավ:

Հետո ալ ավանդը յուրացնելու համար խորհեցավ ամիսներով: Նախ ըսավ, որ իրավունք չուներ ուրիշին ինչքը գողնալու: Վերջը ինքն իրեն հարցուց, թե ինչու Աստված իրեն հանձնել տվավ այդ ավանդը և ոչ ուրիշի մը: Այս հարցումը իր տարակույսները վանեց: Աստված այս առիթը իրեն կը ներկայացներ հարստանալու համար, և ինք իբրև խելացի մարդ՝ առիթեն օգուտ կը քաղեր, մինչդեռ անխելք մը այդ բանը չպիտի մտածեր: Այսպես բացատրեց Աստծո կամքը և ճշմարիտ գոհունակությամբ մը ավելցուց.

- Կամք Տյառն օրհնեալ եղիցի: (Աստծո կամքը թող օրհնյալ լինի):

Ննջեցյալին ազգականները կարոտության, չքավորության մեջ մնացին. անոր այրին Մարտիրոս աղային կը դիմեր՝ պզտիկ օգնություն մը հայցելու համար՝ իբրև իր ամուսնին սրտակից բարեկամեն:

Մարտիրոս աղան չզլացավ այդ օգնությունը, բայց այս դիմումը իր տարակույսները նորեն արթնցուց: Պահ մը խորհեցավ, որ ըրածը ճշմարիտ գողություն մըն էր: Բայց ո՞ր մեղքը թողություն չի ստանար, եթե մարդ մեղայի գա: Ու այս հույսով սարաֆը թախանձագին ներում մը խնդրեց.

- Մեղա՛, Տե՛ր:

Այս վարանումներով կը պահեր, այսինքն կգործածեր ստակը, որ ճարպիկ ձեռքերուն մեջ արդյունաբեր կը դառնար, բարեբախտ դեպքերով կը կրկնապատկվեր, այնքան որ այս հաջողությունը իր գողության արդարացումը կըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացույցը, զղջում մը, զոր սովոր էր ա՛լ հայտնելու ամեն առթիվ՝ խորունկ հավատքի ձայնով մը.

- Մեղա՛, Տե՛ր:

ՊԼԱՆ

1. «Բարեպաշտ» Մարտիրոս աղան:
2. Աղքատ տիրացուն Պոլսում:
3. Խարված մահամերձը:
4. Իրարամերժ զգացումներ:
5. Թյուր պատկերացում Աստծո ներողամտության մասին:

Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար:

* * *

Գիտությունը և արվեստը ամեն վայրկյան կը նորոգեն ու կը վերաշինեն այս աշխարհը:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ու ազգականներուն մեջ բաժնելու խնդիրքով:

Հիվանդը մեռավ, և հուղարկավորներուն մեջ Մարտիրոս աղա իր արցունքներովը անկեղծ ու անսահման կսկիծով մը Ննջեցյալին ամենեն սրտագին բարեկամը համարվեցավ:

Հետո այդ ավանդը յուրացնելու համար խորհեցավ ամիսներով: Նախ ըսավ, որ իրավունք չուներ ուրիշին ինչքը գողնալու: Վերջը ինքն իրեն հարցուց, թե ինչու Աստված իրեն հանձնել տվավ այդ ավանդը և ոչ ուրիշի մը: Այս հարցումը իր տարակույսները վանեց: Աստված այս առիթը իրեն կը ներկայացներ հարստանալու համար, և ինք իբրև խելացի մարդ՝ առիթեն օգուտ կը քաղեր, մինչդեռ անխելք մը այդ բանը չպիտի մտածեր: Այսպես բացատրեց Աստծո կամքը և ճշմարիտ գոհունակությամբ մը ավելցուց.

- Կամք Տյառն օրհնեալ եղիցի: (Աստծո կամքը թող օրհնյալ լինի):

Ննջեցյալին ազգականները կարոտության, չքավորության մեջ մնացին. անոր այրին Մարտիրոս աղային կը դիմեր՝ պզտիկ օգնություն մը հայցելու համար՝ իբրև իր ամուսնին սրտակից բարեկամեն:

Մարտիրոս աղան չզլացավ այդ օգնությունը, բայց այս դիմումը իր տարակույսները նորեն արթնցուց: Պահ մը խորհեցավ, որ ըրածը ճշմարիտ գողություն մըն էր: Բայց ո՞ր մեղքը թողություն չի ստանար, եթե մարդ մեղայի գա: Ու այս հույսով սարաֆը թախանձագին ներում մը խնդրեց.

- Մեղա՜, Տե՛ր:

Այս վարանումներով կը պահեր, այսինքն կգործածեր ոսկը, որ ճարպիկ ձեռքերուն մեջ արդյունաբեր կը դառնար, բարեբախտ դեպքերով կը կրկնապատկվեր, այնքան որ այս հաջողությունը իր գողության արդարացումը կըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացույցը, զղջում մը, զոր սովոր էր ալ հայտնելու ամեն առթիվ՝ խորունկ հավատքի ձայնով մը.

- Մեղա՜, Տե՛ր:

ՊԼԱՆ

1. «Բարեպաշտ» Մարտիրոս աղան:
2. Աղքատ տիրացուն Պոլսում:
3. Խարված մահամերձը:
4. Իրարամերժ զգացումներ:
5. Թյուր պատկերացում Աստծո ներողամտության մասին:

Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար:

* * *

Գիտությունը և արվեստը ամեն վայրկյան կը նորոգեն ու կը վերաշինեն այս աշխարհը:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ու ազգականներուն մեջ բաժնելու խնդիրքով:

Հիվանդը մեռավ, և Հուղարկավորներուն մեջ Մարտիրոս աղա իր արցունքներո-վը անկեղծ ու անսահման կսկիծով մը ննջեցյալին ամենեն սրտագին բարեկամը հա-մարվեցավ:

Հետո ալ ավանդը յուրացնելու համար խորհեցավ ամիսներով: Նախ ըսավ, որ ի-րավունք չուներ ուրիշին ինչքը գողնալու: Վերջը ինքն իրեն հարցուց, թե ինչու՞ Աստված իրեն հանձնել տվավ այդ ավանդը և ոչ ուրիշի մը: Այս հարցումը իր տա-րակույսները վանեց: Աստված այս առիթը իրեն կը ներկայացներ հարստանալու համար, և ինք իբրև խելացի մարդ՝ առիթեն օգուտ կը քաղեր, մինչդեռ անխելք մը այդ բանը չպիտի մտածեր: Այսպես բացատրեց Աստծո կամքը և ճշմարիտ գոհու-նակությամբ մը ավելցուց.

- Կամք Տյառն օրհնեալ եղիցի: (Աստծո կամքը թող օրհնյալ լինի):

Ննջեցյալին ազգականները կարոտության, չքավորության մեջ մնացին. անոր այ-րին Մարտիրոս աղային կը դիմեր՝ պզտիկ օգնություն մը հայցելու համար՝ իբրև իր ամուսնին սրտակից բարեկամեն:

Մարտիրոս աղան չզլացավ այդ օգնությունը, բայց այս դիմումը իր տարակույ-սները նորեն արթնցուց: Պահ մը խորհեցավ, որ ըրածը ճշմարիտ գողություն մըն էր: Բայց ո՞ր մեղքը թողություն չի ստանար, եթե մարդ մեղայի գա: Ու այս հույ-սով սարաֆը թախանձագին ներում մը խնդրեց.

- Մեղա՛, Տե՛ր:

Այս վարանումներով կը պահեր, այսինքն կգործածեր ստակը, որ ճարպիկ ձեռ-քերուն մեջ արդյունաբեր կը դառնար, բարեբախտ դեպքերով կը կրկնապատկվեր, այնքան որ այս հաջողությունը իր գողության արդարացումը կըլլար և իր զղջման ընդունելի եղած ըլլալուն ապացույցը, զղջում մը, զոր սովոր էր ա՛լ հայտնելու ա-մեն առիթով՝ խորունկ հավատքի ձայնով մը.

- Մեղա՛, Տե՛ր:

ՊԼԱՆ

1. «Բարեպաշտ» Մարտիրոս աղան:
2. Աղքատ տիրացուն Պոլսում:
3. Խաբված մահամերձը:
4. Իրարամերժ զգացումներ:
5. Թյուր պատկերացում Աստծո ներո-ղամտության մասին:

Գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար:

* * *

Գիտությունը և արվեստը ամեն վայրկյան կը նորոգեն ու կը վերաշինեն այս աշ-խարհը:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՄԱՍԻՆ

Ամեն մարդ կը կարդա գիրքը հաճույքով, անհամբերությամբ, սքանչանքով: Ամենքը կը հասկնան, ամենքը կը փնտրեն գիրքը և իր կարոտը կը զգան:

ՍԻՊԻԼ

Զոհրապ հարազատ զավակ մըն է Ակնա զմայլելի ժողովրդական բանաստեղծներուն:

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

Ըստ Աստվածաշնչի

Հիսուսի համբավը տարածվեց, եվ շատ մարդիկ գնացին նրան լսելու: Եվ Նա ասաց ժողովրդին.

- Որպեսզի Աստծո արքայությունը գա, որպեսզի աշխարհում չարիք չլինի, պետք է մարդիկ ապրեն ոչ թե իրարից զատ, ամեն մեկն իր համար, այլ միասին, սիրեն իրար: Ուստի դուք ամենից առաջ պետք է փոխեք ձեր կյանքը: Արքայությունը ինքն իրեն չի գալիս: Եվ ոչ թե Աստված է ստեղծում այն, այլ դու՛ք, երբ ջանում եք փոխել ձեր կյանքը:

Մի՛ կարծեք, թե Աստծո արքայությունը գալու է առերևույթ: Այն անհնար է տեսնել: Եթե ձեզ ասեն, որ նա այստեղ է կամ այնտեղ, մի՛ հավատացեք ու մի՛ գնացե՛ք: Աստծո արքայությունը ժամանակի մեջ չէ և ոչ էլ ինչ-որ վայրում: Նա ամեն տեղ է և ոչ մի տեղ, քանի որ ձեր մեջ է, ձեր հոգու մեջ:

Եվ ավելի ու ավելի հասկանալի էր Հիսուսը բացատրում իր վարդապետությունը:

Մի անգամ, երբ նրա շուրջը շատ ժողովուրդ հավաքվեց, նա սկսեց խոսել այն մասին, թե ինչպես պետք է մարդիկ ապրեն, որպեսզի արժանանան երկնային արքայությանը:

- Աստծո արքայությունը բոլորովին ուրիշ է, քան երկրային թագավորությունը: Այնտեղ կգնան ո՛չ գոռոզամիտները, ո՛չ էլ ագահ հարուստները: Նրանք հիմա՛ են թագավորում, հիմա՛ են զվարճանում, և հիմա նրա՛նց են փառաբանում և հարգում: Բայց քանի դեռ գոռոզամիտ և ընչաքաղց կլինեն, նրանց հոգում երբեք չի հաստատվի Աստծո արքայությունը, բնավ չեն տեսնի այն: Այնտեղ կմտնեն խոնարհները և չքավորները: Բայց սրանք էլ կմտնեն այն դեպքում միայն, երբ խոնարհ ու չքավոր լինեն ոչ թե այն պատճառով, որ չեն կարողացել համբավ ձեռք բերել և ուրիշներին կողոպտելով հարուստ դառնալ, այլ որովհետև չեն ուզել մեղք գործել՝ համբավ ունենալու և ունևոր դառնալու նպատակով:

Որոնեցե՛ք Աստծո արքայությունն ու նրա ճշմարտությունը, և այն ամենը, ինչ հարկավոր է ձեզ, կունենաք:

Մի՛ կարծեք, թե ինչ-որ նոր բան եմ ձեզ սովորեցնում: Սովորեցնում եմ այն, ինչ արդեն քարոզել են իմաստունները և սուրբ մարդիկ: Բայց որպեսզի անեք այն, ինչ ձեզ սովորեցրել են, անհրաժեշտ է պահպանել Աստծո պատվիրանները: Եվ ոչ թե սոսկ խոսել դրանց մասին, ինչպես խոսում են սուտ ուսուցիչները, այլ կատարել: Որովհետև ով կատարում է և իր օրինակով ուրիշներին էլ սովորեցնում, միայն նա կմտնի երկնային արքայություն:

Հիսուսը շարունակեց.

- Առաջին պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Մի՛ սպանիր: Մեղավոր է նա, ով սպանում է»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ երբ մարդ զայրանում է եղբոր վրա, արդեն մեղավոր է Աստծո առաջ: Առավել մեղավոր է, եթե եղբորն ասում է կոպիտ, հայհոյական խոսք: Այնպես որ երբ աղոթելիս լինես և հիշես, որ զայրացած ես եղբորդ վրա, ապա առաջ գնա՛ և հաշտվի՛ր: Եթե ինչ-որ պատճառով չկարողանաս այդ անել, ապա հոգուդ մեջ մարի՛ր եղբորդ դեմ եղած չարությունը: Սա իմ առաջին պատվիրանն է:

Երկրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Սուտ մի՛ երդվիր, Աստծո առաջ պետք է կատարես այն, ինչ երդվել ես»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ բնավ պետք չէ երդվել: Երբ քեզ հարցում են անում, ապա ասա «այո՛», եթե այո է, և ասա «ո՛չ», եթե ոչ է: Ոչ մի բանով երդվել չի կարելի: Մարդն ամբողջովին Աստծո իշխանության տակ է, ուստի չի կարող խոստանալ, թե կանի այն, ինչ երդվել է:

Երրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Աչքի փոխարեն աչք և ատամի փոխարեն՝ ատամ»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ չարին մի՛ պատասխանեք չարությամբ: Պետք չէ՛ աչքի փոխարեն աչք, ատամի փոխարեն՝ ատամ: Եթե մեկը կուզենա վերցնել քո շապիկը, ապա ավելի լավ է բաճկոնն էլ տալ, քան թշնամանք ունենալ և կռիվ անել եղբոր հետ: Չի՛ կարելի չարին հակառակ կանգնել չարիքով:

Չորրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Սիրի՛ր քո ժողովրդի մարդուն, իսկ ատելությունդ պահի՛ր ուրիշ ժողովուրդների մարդկանց նկատմամբ»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ պետք է սիրել բոլոր մարդկանց: Եթե մարդիկ իրենց համարում են ձեր թշնամին, ատում և անիծում են ձեզ, հարձակվում ձեզ վրա, ապա այսուհանդերձ, սիրեցե՛ք նրանց և բարությու՛ն արեք: Աշխատեցե՛ք ձեր բարի օրինակով չարը հանել նրանց միջից:

Այս է չորրորդ ու վերջին պատվիրանը:

Ապրեցե՛ք այս վարդապետությամբ, և կգա Աստծո արքայությունը և այն ամենը, ինչ հարկավոր է ձեզ, կունենաք:

Որոնեցե՛ք Աստծո արքայությունն ու նրա ճշմարտությունը, և այն ամենը, ինչ հարկավոր է ձեզ, կունենաք:

Մի՛ կարծեք, թե ինչ-որ նոր բան եմ ձեզ սովորեցնում: Սովորեցնում եմ այն, ինչ արդեն քարոզել են իմաստունները և սուրբ մարդիկ: Բայց որպեսզի անեք այն, ինչ ձեզ սովորեցրել են, անհրաժեշտ է պահպանել Աստծո պատվիրանները: Եվ ոչ թե սոսկ խոսել դրանց մասին, ինչպես խոսում են սուտ ուսուցիչները, այլ կատարել: Որովհետև ով կատարում է և իր օրինակով ուրիշներին էլ սովորեցնում, միայն նա կմտնի երկնային արքայություն:

Հիսուսը շարունակեց.

- Առաջին պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Մի՛ սպանիր: Մեղավոր է նա, ով սպանում է»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ երբ մարդ զայրանում է եղբոր վրա, արդեն մեղավոր է Աստծո առաջ: Առավել մեղավոր է, եթե եղբորն ասում է կոպիտ, հայհոյական խոսք: Այնպես որ երբ աղոթելիս լինես և հիշես, որ զայրացած ես եղբորդ վրա, ապա առաջ գնա՛ և հաշտվի՛ր: Եթե ինչ-որ պատճառով չկարողանաս այդ անել, ապա հոգուդ մեջ մարի՛ր եղբորդ դեմ եղած չարությունը: Սա իմ առաջին պատվիրանն է:

Երկրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Սուտ մի՛ երդվիր, Աստծո առաջ պետք է կատարես այն, ինչ երդվել ես»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ բնավ պետք չէ երդվել: Երբ քեզ հարցում են անում, ապա ասա «այո՛», եթե այո է, և ասա «ո՛չ», եթե ոչ է: Ոչ մի բանով երդվել չի կարելի: Մարդն ամբողջովին Աստծո իշխանության տակ է, ուստի չի կարող խոստանալ, թե կանի այն, ինչ երդվել է:

Երրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Աչքի փոխարեն աչք և ատամի փոխարեն՝ ատամ»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ չարին մի՛ պատասխանեք չարությամբ: Պետք չէ՛ աչքի փոխարեն աչք, ատամի փոխարեն՝ ատամ: Եթե մեկը կուզենա վերցնել քո շապիկը, ապա ավելի լավ է բաճկոնն էլ տալ, քան թշնամանք ունենալ և կռիվ անել եղբոր հետ: Չի՛ կարելի չարին հակառակ կանգնել չարիքով:

Չորրորդ պատվիրանն այն է, որ հին օրենքով ասված է. «Սիրի՛ր քո ժողովրդի մարդուն, իսկ ատելությունդ պահի՛ր ուրիշ ժողովուրդների մարդկանց նկատմամբ»:

Իսկ ես ձեզ ասում եմ, որ պետք է սիրել բոլոր մարդկանց: Եթե մարդիկ իրենց համարում են ձեր թշնամին, ատում և անիծում են ձեզ, հարձակվում ձեզ վրա, ապա այսուհանդերձ, սիրեցե՛ք նրանց և բարությո՛ւն արեք: Աշխատեցե՛ք ձեր բարի օրինակով չարը հանել նրանց միջից:

Այս է չորրորդ ու վերջին պատվիրանը:

Ապրեցե՛ք այս վարդապետությամբ, և կգա Աստծո արքայությունը և այն ամենը, ինչ հարկավոր է ձեզ, կունենաք:

ԵՂԻ՛Ր ՆԵՐՈՂԱՄԻՏ

Ըստ Աստվածաշնչի

Պատահեց, որ Հիսուսը հեռացավ իր աշակերտներից ու սկսեց աղոթել: Եվ երբ աղոթքը վերջացրեց, աշակերտները մոտեցան ու ասացին.

- Վարդապե՛տ, մեզ աղոթե՛լ սովորեցրու:

Եվ Նա պատասխանեց.

- Ամենից առաջ պետք չէ, որ դուք աղոթեք այնպես, որ ուրիշները տեսնեն ու գովեն: Հոգու համար այդպիսի աղոթքից օգուտ չկա: Եթե ուզում եք աղոթել, մտե՛ք մի այնպիսի տեղ, ուր ձեզ ոչ ոք չի տեսնի: Աղոթե՛ք երկնային Հորը, և Նա կվարձատրի ձեզ:

Երբ աղոթում եք, շատախոս մի՛ եղեք: Հայրը գիտե, թե ինչ է ձեզ հարկավոր: Եթե չասեք էլ ամեն բան, միևնույն է, կտա այն ամենը, ինչ հարկավոր է ձեր հոգուն:

Ամենից առաջ պետք է աղոթել այն մասին, որ ձեր մեջ սուրբ լինի Աստծո Հոգին, որպեսզի տեսնեք Աստծո արքայությունը, ապրեք ոչ թե ձեր, այլ Աստծո կամքով: Ավելին չուզեք, քան միայն ամեն օրվա ուտելիքն է, որպեսզի Հայրը օգնի հեռու մնալ գայթակղություններից ու չարից:

Թող ձեր աղոթքը այսպես լինի. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը, թող Քո արքայությունը գա, և Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես երկնքում է, մեր հանապազօրյա հացը տու՛ր մեզ այսօր և թողությու՛ն տուր մեր մեղքերին, ինչպես և մենք ենք ներում բոլոր նրանց, ովքեր չարություն են արել մեր նկատմամբ: Եվ փրկի՛ր մեզ գայթակղությունից ու չարից»:

Պետք է այսպես աղոթել: Եթե ուզում եք աղոթել, ամենից առաջ մտածեք այն մասին, թե արդյոք ձեր հոգում որևէ մեկի նկատմամբ ոխ չունե՞ք, և եթե հիշեք, որ ունեք, ապա նախ գնացե՛ք ու հաշտվե՛ք նրա հետ, ում նկատմամբ չարացած եք: Եթե չկարողանաք գտնել այդ մարդուն, ապա ձեր սրտից պոկեցե՛ք ամեն ոխ, և հետո միայն աղոթեք: Այս դեպքում միայն աղոթքը նպատակին կհասնի:

Բոլոր գայթակղություններից ամենավնասակարը ցասման գայթակղությունն է: Մարդը եղբոր նկատմամբ չարանում է նրա մեղքերի համար և կարծում է, թե իր գայրույթով կարող է ուղիղ ճամփի բերել, բայց մոռանում է, որ ոչ ոք չի կարող լինել դատավոր, քանի որ ամեն ոք լի է մեղքերով: Եղբորը ուղիղ ճամփա դուրս բերելուց առաջ հարկ է, որ ինքը շտկվի: Թե չէ մենք տեսնում ենք մեր եղբոր աչքի շյուղը և չենք տեսնում մեր աչքի գերանը: Ուստի, եթե կարծում ես, թե քո եղբայրը վատ բան է արել, ապա գնա՛ նրա մոտ՝ ընտրելով այնպիսի ժամանակ ու տեղ, որ կարողանաս հետը դեմ դիմաց խոսել և խոնարհաբար ասա՛ այն, ինչ ունես սրտիդ մեջ: Եթե ականջ դնի, ապա թշնամիդ լինելու փոխարեն կդառնա քո բարեկամը: Եթե ականջ չդնի, ուրեմն խղճա՛ նրան և այլևս գործ մի՛ ունեցիր հետը:

Աշակերտներից մեկը հարցրեց.

- Իսկ եթե նա ականջ չդնի և դարձյա՞լ ինձ նեղացնի: Նորի՞ց պետք է ներող լինեմ: Եթե նեղացնի երրորդ, չորրորդ, յոթերորդ անգա՞մ: Պետք է ների՞մ:

Հիսուսն ասաց.

- Ոչ թե յոթ, այլ յոթանասուն անգամ յոթ, շարունա՛կ պետք է ներել, որովհետև

ԵՂԻ՛Ր ՆԵՐՈՂԱՄԻՏ

Ըստ Աստվածաշնչի

Պատահեց, որ Հիսուսը հեռացավ իր աշակերտներից ու սկսեց աղոթել: Եվ երբ աղոթքը վերջացրեց, աշակերտները մոտեցան ու ասացին.

- Վարդապե՛տ, մեզ աղոթե՛լ սովորեցրու:

Եվ նա պատասխանեց.

- Ամենից առաջ պետք չէ, որ դուք աղոթեք այնպես, որ ուլիշները տեսնեն ու գովեն: Հոգու համար այդպիսի աղոթքից օգուտ չկա: Եթե ուզում եք աղոթել, մտե՛ք մի այնպիսի տեղ, ուր ձեզ ոչ ոք չի տեսնի: Աղոթե՛ք երկնային Հորը, և Նա կվարձատրի ձեզ:

Երբ աղոթում եք, շատախոս մի՛ եղեք: Հայրը գիտե, թե ինչ է ձեզ հարկավոր: Եթե չասեք էլ ամեն բան, միևնույն է, կտա այն ամենը, ինչ հարկավոր է ձեր հոգուն:

Ամենից առաջ պետք է աղոթել այն մասին, որ ձեր մեջ սուրբ լինի Աստծո Հոգին, որպեսզի տեսնեք Աստծո արքայությունը, ապրեք ոչ թե ձեր, այլ Աստծո կամքով: Ավելին չուզեք, քան միայն ամեն օրվա ուտելիքն է, որպեսզի Հայրը օգնի հեռու մնալ գայթակղություններից ու չարից:

Թող ձեր աղոթքը այսպես լինի. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը, թող Քո արքայությունը գա, և Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես երկնքում է, մեր հանապազօրյա հացը տու՛ր մեզ այսօր և թողությու՛ն տուր մեր մեղքերին, ինչպես և մենք ենք ներում բոլոր նրանց, ովքեր չարություն են արել մեր նկատմամբ: Եվ փրկի՛ր մեզ գայթակղությունից ու չարից»:

Պետք է այսպես աղոթել: Եթե ուզում եք աղոթել, ամենից առաջ մտածեք այն մասին, թե արդյոք ձեր հոգում որևէ մեկի նկատմամբ ոխ չունե՞ք, և եթե հիշեք, որ ունեք, ապա նախ գնացե՛ք ու հաշտվե՛ք նրա հետ, ում նկատմամբ չարացած եք: Եթե չկարողանաք գտնել այդ մարդուն, ապա ձեր սրտից պոկեցե՛ք ամեն ոխ, և հետո միայն աղոթեք: Այս դեպքում միայն աղոթքը նպատակին կհասնի:

Բոլոր գայթակղություններից ամենավնասակարը ցասման գայթակղությունն է: Մարդը եղբոր նկատմամբ չարանում է նրա մեղքերի համար և կարծում է, թե իր գայրույթով կարող է ուղիղ ճամփի բերել, բայց մոռանում է, որ ոչ ոք չի կարող լինել դատավոր, քանի որ ամեն ոք լի է մեղքերով: Եղբորը ուղիղ ճամփա դուրս բերելուց առաջ հարկ է, որ ինքը շտկվի: Թե չէ մենք տեսնում ենք մեր եղբոր աչքի շյուղը և չենք տեսնում մեր աչքի գերանը: Ուստի, եթե կարծում ես, թե քո եղբայրը վատ բան է արել, ապա գնա՛ նրա մոտ՝ ընտրելով այնպիսի ժամանակ ու տեղ, որ կարողանաս հետը դեմ դիմաց խոսել և խոնարհաբար ասա՛ այն, ինչ ունես սրտիդ մեջ: Եթե ականջ դնի, ապա թշնամիդ լինելու փոխարեն կդառնա քո բարեկամը: Եթե ականջ չդնի, ուրեմն խղճա՛ նրան և այլևս գործ մի՛ ունեցիր հետը:

Աշակերտներից մեկը հարցրեց.

- Իսկ եթե նա ականջ չդնի և դարձյա՛լ ինձ նեղացնի: Քանի՞ց պետք է ներել նրան: Եթե նեղացնի երրորդ, չորրորդ, յոթերորդ անգա՞մ: Պետք է ներե՞մ:

Հիսուսն ասաց.

- Ոչ թե յոթ, այլ յոթանասուն անգամ յոթ, շարունա՛կ պետք է ներել, որովհետև

ինչպես Աստված է ներում մեր բոլոր մեղքերը, եթե զղջում ենք, նույնպես և մենք պետք է շարունակ ներենք մեր եղբայրներին:

Եվ այդ մասին Հիսուսը մի առակ պատմեց.

- Մի հարուստ մարդ իր և ծառաների միջև եղած հաշիվը փակում էր: Նրա մոտ բերեցին մեկին, որը պարտք էր հազար քանքար, սակայն ոչինչ չուներ պարտքը մարելու: Հարուստը կարող էր պարտքի դիմաց վաճառել թե՛ պարտապանի ունեցվածքը, թե՛ կնոջը, թե՛ երեխաներին և թե իրեն՝ պարտապանին:

Ծառան գթություն հայցեց, և հարուստը խղճաց նրան ու զիջեց պարտքը:

Այս ծառային էլ մի ուրիշն էր պարտք:

Սա եկավ հարուստի ծառային խնդրեց, որ պարտքը վերադարձնելու համար մի քիչ համբերի: Սակայն պարտապանը, որին ընդառաջել էին, չուզեց համբերել և պահանջեց, որ անմիջապես վճարի: Որքան խնդրեց, աղաչեց թշվառ մարդը, ներված պարտապանը չզիջեց, և խեղճին նստեցրին բանտ: Այս բանը մարդիկ տեսան, գնացին հարուստի մոտ և պատմեցին եղելությունը: Հարուստը կանչեց ու ասաց. «Քեզ ներեցի ամբողջ պարտքդ, որովհետև աղաչեցիր ինձ: Պետք է դու էլ ներեիր քո պարտապանին, որովհետև ներվել էիր:»:

Եվ հարուստը դատի տվեց նրան:

Նույնը պատահում է մեզ, եթե ամբողջ սրտով չենք ներում նրանց, ովքեր մեղավոր են մեր առաջ: Եղբոր հետ ամեն տեսակի վեճ կաշկանդում է մեզ և հեռացնում մեր Հորից: Ուստի որպեսզի չհեռանանք Աստծուց, պետք է ներենք մեր եղբայրներին և նրանց հետ հաշտ ու սիրով լինենք:

ՊԼԱՆ

1. Ինչպե՞ս աղոթել:
2. Ուրիշի աչքի շյուղը և մեր աչքի գերանը:
3. Եղե՛ք ներող:
4. Անխիղճ պարտապանի առակը:

ԹԱԳԱՎՈՐԻ ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏԸ

Ըստ Անդերսենի

Տատ ու շատ տարիներ առաջ կար մի թագավոր: Նա այնքան շատ էր սիրում նոր, գեղեցիկ հագուստ հագնել, որ իր ամբողջ փողը հագուստի վրա էր ծախսում: Չէր հետաքրքրվում զորքով, չէր սիրում թատրոն կամ զբոսայգի գնալ: Եվ եթե զորահանդեսի էր դուրս գալիս, թատրոն էր գնում կամ զբոսանքի, ապա միայն նրա համար, որ մարդկանց ցույց տար նոր հագուստը: Օրվա ամեն մի ժամվա համար նա առանձին շոր ուներ:

Մի անգամ այդ քաղաքը եկան երկու խաբեբա: Նրանք ձևացրին, թե ջուլհակ են, և հավատացնում էին, թե կարող են գործել այնպիսի հրաշալի կտոր, որպիսին ոչ ոք աշխարհում չի տեսել: Ապա ավելացրին, թե իրենց գործած կտորը ոչ միայն գե-

ղեցիկ գույներ ու նախշեր կունենա, այլև այն մարդը, որ հիմար է կամ իր պաշտոնին հարմար չէ, այդ կտորից կարված շորը չի տեսնի:

«Ա՜յ քեզ հրաշալի հագուստ, - մտածեց թագավորը, երբ լսեց այս լուրը: - Եթե ես այդ հագուստը հագնեմ, կիմանամ, թե իմ հպատակներից որը հարմար չէ իր պաշտոնին, բացի դրանից հիմարներին կջոկեմ խելոքներից: Հարկավոր է, որ այդ վարպետներն իսկույն սկսեն այդպիսի կտոր գործել ինձ համար»:

Եվ նա խաբեբաներին նախապես շատ փող տվեց, որպեսզի աշխատանքն սկսեն:

Խաբեբաները երկու դազգահ դրին և սկսեցին ձևացնել, թե աշխատում են: Նրանք շուտ-շուտ պահանջում էին նուրբ ոսկյա թելեր:

«Շատ կուզենայի իմանալ, թե ինչքան կտոր են գործել, - մտածեց թագավորը: - Արի ջուլհակների մոտ ուղարկեմ իմ ազնիվ նախարարին: Նա բոլորից լավ է հասկանում կտորի լավն ու վատը: Ե՛վ խելոք մարդ է, և՛ իր պաշտոնին համապատասխան»:

Նախարարը մտավ այն դահլիճը, որտեղ դատարկ դազգահների առաջ նստել էին խաբեբաները: Նայեց դազգահներին և աչքերը չռեց: «Ողորմա՛ծ աստված, - մտածեց նա, - ես ոչինչ չեմ տեսնում, ո՛չ մի կտոր»: Բայց ոչինչ չասաց:

Երկու խաբեբաները նրան խնդրեցին մոտենալ և ուշիուշով դիտել նախշերն ու գույները: Եվ սկսեցին մատներով ցույց տալ դատարկ տարածությունը: Խեղճ ծերունի նախարարը շարունակում էր աչքերը չռել, բայց ոչ մի կտոր չէր տեսնում, որովհետև ոչինչ չկար տեսնելու:

«Տե՛ր աստված, - մտածեց նա, - մի՞թե ես հիմար եմ: Երբեք այդպիսի բան մտքովս չի անցել: Բայց ոչ ոք չպետք է դա իմանա: Կամ գուցե ես իմ պաշտոնին համապատասխան չե՞մ: Չէ՛, չի կարելի խոստովանել, թե կտորը չեմ տեսնում»:

- Օ՜, սքանչելի կտոր է, - բարձրաձայն ասաց նա՝ ակնոցի միջից հայացքը հառելով դատարկ տարածությանը: - Ի՜նչ նախշեր են, ի՜նչ գույներ: Ես թագավորին կհաղորդեմ, որ կտորն ինձ շատ ու շատ դուր եկավ:

Խաբեբաները նորից փող, մետաքս ու ոսկի պահանջեցին, որ իբր գործելը շարունակեն:

Քաղաքում բոլորը հենց միայն այդ հիասքանչ կտորի մասին էին խոսում:

Եվ ահա ինքը՝ թագավորն էլ ցանկացավ տեսնել կտորը, քանի դեռ այն դազգահների վրա էր: Ընտրյալ պալատականների մի ամբողջ շքախմբով գնաց խորամանկ խաբեբաների մոտ: Իսկ նրանք գործում էին ամբողջ եռանդով ու թափով, բայց առանց թելի:

- Դե նայեցե՛ք, սքանչելի կտոր չէ՞, - ասացին խաբեբա ջուլհակները: - Ձերդ մեծությունը չի՞ բարեհաճի նայել գույներին ու նախշերին:

Եվ նրանք ցույց էին տալիս դատարկ դազգահները, որովհետև հավատացած էին, թե բոլոր ներկա եղողները կտոր են տեսնում:

«Այս ի՞նչ է, - մտածեց թագավորը: - Ես ոչի՜նչ չեմ տեսնում: Ի՜նչ սարսափելի բան: Նշանակում է՝ ես հիմա՞ր եմ կամ թե անպետք թագավո՞ր: Դա ամենավատը կլիներ»: Բայց բարձրաձայն ասաց.

- Օ՜, շատ ու շատ սիրուն է: Այդպիսի վարպետությունը մեծ գովասանքի է արժանի:

Եվ սկսեց գոհունակ ժպիտով գլուխը շարժել՝ ձևացնելով, թե հիանում է կտորով: Նա չէր ուզում խոստովանել, որ ոչինչ չի տեսնում: Շքախումբն էլ աչքերը չռած նայում էր դազգահներին և նույնպես ոչինչ չէր տեսնում, բայց բոլորն էլ

ղեցիկ գույներ ու նախշեր կունենա, այլև այն մարդը, որ հիմար է կամ իր պաշտոնին հարմար չէ, այդ կտորից կարված շորը չի տեսնի:

«Ա՜յ քեզ հրաշալի հագուստ, - մտածեց Թագավորը, երբ լսեց այս լուրը: - Եթե ես այդ հագուստը հագնեմ, կիմանամ, թե իմ հպատակներից որը հարմար չէ իր պաշտոնին, բացի դրանից հիմարներին կջոկեմ խելոքներից: Հարկավոր է, որ այդ վարպետներն իսկույն սկսեն այդպիսի կտոր գործել ինձ համար»:

Եվ նա խաբեբաներին նախապես շատ փող տվեց, որպեսզի աշխատանքն սկսեն:

Խաբեբաները երկու դազգահ դրին և սկսեցին ձևացնել, թե աշխատում են: Նրանք շուտ-շուտ պահանջում էին նուրբ ոսկյա թելեր:

«Շատ կուզենայի իմանալ, թե ինչքան կտոր են գործել, - մտածեց Թագավորը: - Արի ջուլհակների մոտ ուղարկեմ իմ ազնիվ նախարարին: Նա բոլորից լավ է հասկանում կտորի լավն ու վատը: Ե՛վ խելոք մարդ է, և՛ իր պաշտոնին համապատասխան»:

Նախարարը մտավ այն դահլիճը, որտեղ դատարկ դազգահների առաջ նստել էին խաբեբաները: Նայեց դազգահներին և աչքերը չռեց: «Ողորմա՜ծ աստված, - մտածեց նա, - ես ոչինչ չեմ տեսնում, ո՛չ մի կտոր»: Բայց ոչինչ չասաց:

Երկու խաբեբաները նրան խնդրեցին մոտենալ և ուշիուշով դիտել նախշերն ու գույները: Եվ սկսեցին մատներով ցույց տալ դատարկ տարածությունը: Խեղճ ծերունի նախարարը շարունակում էր աչքերը չռել, բայց ոչ մի կտոր չէր տեսնում, որովհետև ոչինչ չկար տեսնելու:

«Տե՛ր աստված, - մտածեց նա, - մի՞թե ես հիմար եմ: Երբեք այդպիսի բան մտքովս չի անցել: Բայց ոչ ոք չպետք է դա իմանա: Կամ գուցե ես իմ պաշտոնին համապատասխան չե՞մ: Չէ՛, չի կարելի խոստովանել, թե կտորը չեմ տեսնում»:

- Օ՜, սքանչելի կտոր է, - բարձրաձայն ասաց նա՝ ակնոցի միջից հայացքը հառելով դատարկ տարածությանը: - Ի՜նչ նախշեր են, ի՜նչ գույներ: Ես Թագավորին կհաղորդեմ, որ կտորն ինձ շատ ու շատ դուր եկավ:

Խաբեբաները նորից փող, մետաքս ու ոսկի պահանջեցին, որ իբր գործելը շարունակեն:

Քաղաքում բոլորը հենց միայն այդ հիասքանչ կտորի մասին էին խոսում:

Եվ ահա ինքը՝ Թագավորն էլ ցանկացավ տեսնել կտորը, քանի դեռ այն դազգահների վրա էր: Ընտրյալ պալատականների մի ամբողջ շքախմբով գնաց խորամանկ խաբեբաների մոտ: Իսկ նրանք գործում էին ամբողջ եռանդով ու թափով, բայց առանց թելի:

- Դե նայեցե՛ք, սքանչելի կտոր չէ՞, - ասացին խաբեբա ջուլհակները: - Ձերդ մեծությունը չի՞ բարեհաճի նայել գույներին ու նախշերին:

Եվ նրանք ցույց էին տալիս դատարկ դազգահները, որովհետև հավատացած էին, թե բոլոր ներկա եղողները կտոր են տեսնում:

«Այս ի՞նչ է, - մտածեց Թագավորը: - Ես ոչի՜նչ չեմ տեսնում: Ի՜նչ սարսափելի բան: Նշանակում է՝ ես հիմա՞ր եմ կամ թե անպետք Թագավո՞ր: Դա ամենավատը կլիներ»: Բայց բարձրաձայն ասաց.

- Օ՜, շատ ու շատ սիրուն է: Այդպիսի վարպետությունը մեծ գովասանքի է արժանի:

Եվ սկսեց գոհունակ ժպիտով գլուխը շարժել՝ ձևացնելով, թե հիանում է կտորով: Նա չէր ուզում խոստովանել, որ ոչինչ չի տեսնում: Շքախումբն էլ աչքերը չռած նայում էր դազգահներին և նույնպես ոչինչ չէր տեսնում, բայց բոլորն էլ

կրկնում էին, թե հրաշալի կտոր է, և թագավորին խորհուրդ էին տալիս այդ սքանչելի կտորից իր համար շոր կարել առաջիկա հանդիսավոր երթի համար:

Հանդեսի օրը թագավորն իր ամենաանվանի պալատականների հետ եկավ նրանց մոտ՝ հագնվելու, և երկու խաբեբաները ձեռքները վեր բարձրացրին, որպես թե բան են բարձրացնում ու ասացին.

- Ահա՛ վարտիքը: Ահա՛ կամզոլը1: Ահա՛ պատմուճանը: Բոլորն էլ թեթև, ինչպես ոստայն: Մարդուն այնպես կթվա, թե հագին ոչինչ չկա: Բայց հենց այդ է ամբողջ հրաշալիքը:

Թագավորը հանեց բոլոր շորերը, իսկ խաբեբաներն այնպես ձևացրին, թե նրան են մատուցում նոր կարված հագուստի յուրաքանչյուր մասն առանձին: Ապա երբ թե ամրացրին քղանցքի տուտը, իսկ թագավորը շուռումուռ էր գալիս հայելու առաջ, որպես թե տեսնում էր իր հագուստը:

- Տե՛ր աստված, ինչպես սազում է ձեզ, ինչքան լա՜վ է նստում, - ասում էին բոլորը: - Ի՜նչ նախշեր, ի՜նչ գույներ, ի՜նչ շքեղ հագուստ է:

Եվ ահա թագավորն առաջ էր քայլում ամպհովանու տակ, իսկ փողոցներում ու լուսամուտներում հավաքված մարդիկ ասում էին.

- Տե՛ր աստված, ի՜նչ անման է թագավորի այս նոր հագուստը: Ի՜նչ սքանչելի քղանցք ունի պատմուճանը: Ի՜նչ հիանալի է նստում:

Ոչ ոք չէր ուզում մյուսի մոտ խոստովանել, որ ինքը ոչինչ չի տեսնում, չէ՞ որ կմտածեին, որ անպետք է իր պաշտոնի համար կամ թե չափազանց հիմար է:

- Բայց ախր նա մե՜րկ է, - հանկարծ բացականչեց մի երեխա:

- Ճի՜շտ է, նրա հագին ոչինչ չկա՜, - վերջապես գոռաց ամբողջ ժողովուրդը:

Թագավորը ցնցվեց, որովհետև նրան թվում էր, թե մարդիկ ճիշտ են ասում: Բայց և այնպես որոշեց արարողությունը մինչև վերջ հասցնել: Եվ ավելի հպարտ դիրք ընդունեց: Իսկ սենեկապետները քայլում էին նրա հետևից, քայլում էին՝ ձևացնելով, թե բռնել են թագավորի քղանցքը, թեև իրականում ոչ մի քղանցք էլ գոյություն չուներ:

1. Կամզոլ - կարճ վերնազգեստ

ՊԼԱՆ

1. Պճնամոլ թագավորը:
2. Խաբեբաների հնարամտությունը:
3. Ծերունի նախարարի ճարահատյալ ստախոսությունը:
4. Թագավորի՝ գոյություն չունեցող զգեստը:
5. Միակ ճշմարտախոս մարդը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ *Մեկնաբանել հեքիաթի այլաբանական իմաստը:*

ՊՈՒՇԿԻՆԸ ՀԵՔԻԱԹԻ ՄԱՍԻՆ

Հինավուրց երգերի, հեքիաթների, առածների ուսումնասիրությունը անհրաժեշտ է լեզվի կատարյալ իմացության համար: Մարդ որքան շատ կարդա հեքիաթներ, այնքան հարուստ կլինի նրա բառապաշարը:

Ստեղծագործական փոխադրություն

Մի խրախճանքի ժամանակ հույն փիլիսոփա Քսանթոսն այնքան խմեց, որ հարբեց: Տեսնելով, որ նա հալից ընկել է, ընկերներից մեկը հարցրեց.

- Ի՞նչ ես կարծում, մարդ կարո՞ղ է ամեն ինչ անել, օրինակ՝ ծովը խմել:

Չհասկանալով, թե ինչ է խոսում, Քսանթոսն ասաց.

- Ծովը խմե՞լ: Այդ ի՞նչ է որ: Ես ինքս էլ կարող եմ:

- Հա՞: Իսկ եթե չխմե՞ս:

- Գրազ եմ գալիս, - հոխորտաց Քսանթոսը, - խաղասեղանին եմ դնում տունս և ունեցած-չունեցածս:

Հաջորդ առավոտ, երբ Քսանթոսն արդեն սթափվել էր՝ բոլորովին մոռացած գիշերվա անցուդարձը, նրա ստրուկ Եզոպոսն ասաց.

- Լավ կլինի, տե՛ր իմ, կամաց-կամաց հավաքես և թաքցնես այն ամենը, ինչ արժեքավոր է, որովհետև հիմա դու մուրացիկ ես:

- Ի՞նչ: Այդ ի՛նչ ես ասում, - սարսափած գոչեց փիլիսոփան:

Եզոպոսը նրան հիշեցրեց գրազը:

- Եզոպո՛ս, - բացականչեց Քսանթոսը, - աղաչում եմ, մի հնար արա, մի միջոց գտի՛ր, որ չխայտառակվեմ, փրկի՛ր պատիվս և հարստությունս:

- Լա՛վ, տե՛ր իմ, հիմա լսի՛ր, թե ինչ պիտի անես:

. . . .

. . . .

. . . .

Պատանի՛ բարեկամ, պատմությունն այստեղ ընդհատում ենք՝ մնացյալը թողնելով քո ստեղծագործական երևակայությանը: Գրածդ պետք է կազմի ոչ պակաս, քան աշակերտական տետրի 1 թերթ:

ՈՒՍՈՒՑՉԻՆ՝ Համոզվել, որ աշակերտները ընտրել վերնագիր:

Երևանի թիվ 119՝ ֆրանսերենի խորացված
ուսուցմամբ միջնակարգ դպրոցի տնօրեն
պարոն Հ.Կարապետյանին

Նույն դպրոցի IX դասարանի աշակերտ
Հայկ Ֆելեքյանից

ԴԻՄՈՒՄ

2000 թվականի փետրվարին դպրոցականների առարկայական հանրապետական օլիմպիադայում մաթեմատիկայից շահել եմ առաջին կարգի դիպլոմ և պարգևատրվել արտասահման մեկնելու տասնօրյա ուղեգրով:

Խնդրում եմ մեկնումս թույլատրել և բացակայությունս համարել հարգելի:

Դիմող՝ (ստորագրություն) Հ. Ֆելեքյան

1 ապրիլի 2000թ.

«Գեղարվեստական գրականություն» պետական
հրատարակչության ԽՍՀՄ ժողովուրդների
ստեղծագործությունների խմբագրությանը

Եղիշե Չարենցից

ԴԻՄՈՒՄ

Սույնին կցված «Երկիր Նաիրի» վեպի օրինակը նայված է իմ կողմից և կարող է դիտվել որպես տպագրության պատրաստ նյութ:

Հեղինակային մի շարք նկատառումներ ինձ ստիպեցին չմեծացնել գրքի ծավալը:

Թարգմանությունն ինձ լրիվ բավարարում է:

Ս/թ դեկտեմբերի 25-ի շտապ փոստով կուղարկեմ «Ռուս ընթերցողին» համառոտ նախաբան:

Ե.Չարենց

4 հունվարի 1934 թ.

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Մարիամ Սամվելի Բաղալյանս (անձնագիր՝ ԱԲ 01617752), «Ոսկան Երևանցի» տպարանի տնտեսական գծով փոխտնօրեն Ռուբեն Կարապետյանից ստացա «Մայրենին բոլորի համար» գրքի 200 (երկու հարյուր) օրինակ:

(ստորագրություն) Մ. Բաղալյան

19 հունվարի 2000թ.

ԱԿՏ

Մենք՝ ներքոստորագրյալներս, հաստատում ենք, որ 1999 թվականի ապրիլի 6-ին Երևանի թիվ 119 դպրոցի գրադարանավարուհի Ախդա Տեր-Հովհաննիսյանը գրադարանն իր գույքով և 3750 (երեք հազար յոթ հարյուր հիսուն) գրքով հանձնել է նոր աշխատակցուհի Սուսան Մարտիկյանին:

Հանձնող՝ (ստորագրություն)
Ընդունող՝ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝ (ստորագրություն) Ջ. Շահմուրադյան
(ստորագրություն) Թ. Հովհաննիսյան
(ստորագրություն) Ս. Գևորգյան

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Արմեն Մանուկյանը սովորել է Երևանի թիվ 292 դպրոցում և ուսումնառության տարիների ընթացքում ցուցաբերել օրինակելի վարք ու գերազանց առաջադիմություն:

Նկատի ունենալով Արմեն Մանուկյանի ընդունակություններն ու կայուն, հաստատակամ բնավորությունը և այն հանգամանքը, որ նա տիրապետում է երեք լեզվի՝ դպրոցի տնօրինությունը երաշխավորում է նրան՝ ուսումը շարունակելու Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտում:

Դպրոցի տնօրեն (ստորագրություն) Մ. Ավագյան

10 հունիսի 2000թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույնը ներկայացնող ընկ. Դերենիկ Դեմիրճյանը իսկապես որ պրոֆեսիոնալ ջութակահար է, այդ պատճառով էլ թույլատրվում է նրան Հայաստանի սահմաններից իր հետ դուրս տանել անձնապես իրեն պատկանող մի ջութակ՝ տուփով:

Արվեստի բաժնի վարիչ՝ (ստորագրություն) Եղիշե Չարենց
Քարտուղար՝ (ստորագրություն)

8 հունվարի 1921թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Մանե Աշոտի Նազարյանը սովորում է Երևանի թիվ 119 դպրոցի VII դասարանում:
Տեղեկանքը տրվում է ներկայացնելու Խնկո-Ապոր անվան գրադարանի տնօրինությանը:

Դպրոցի տնօրեն՝ (ստորագրություն) Հ.Կարապետյան

18 մարտի 2000 թ.

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ Երևանի թիվ 119 դպրոցի IX դասարանի աշակերտ Նորայր Սարգսի Հովհաննիսյանս, լիազորում եմ համադասարանցուս՝ Էդվարդ Արտավազդի Հովհաննիսյանին՝ դպրոցի գրադարանից ստանալու իմ անունով Ֆրանսիայից ուղարկված «Կենսաբանական բառարանը»:

(ստորագրություն) Ն.Հովհաննիսյան

1 փետրվարի 2000 թ.

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մուշեղ Աշոտի Մելիքյանը (ծնված 1973 թվականին Երևանում՝ ծառայողի ընտանիքում) 1998թ. զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի Երևանի թիվ 119 դպրոցը որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Աշխատանքային գործունեության ընթացքում Մուշեղ Մելիքյանն իրեն դրսևորել է իբրև հմուտ մասնագետ և մանկավարժ: Գերազանց տիրապետում է առարկային, այն մատուցում գիտականորեն և հետաքրքիր հնարքներով: Մուշեղ Մելիքյանը դասի ընթացքում հմտորեն փոխկապակցում է լեզուն և գրականությունը, որի շնորհիվ մատուցվող նյութը դառնում է հյութեղ և հուզական: Նա ձգտում է դասն այնպես վարել, որ աշակերտները մտածեն և կատարեն ինքնուրույն եզրահանգումներ: Երիտասարդ ուսուցիչը վարպետորեն թև է տալիս սովորողների ստեղծագործական մտքին, նպաստում նրանց մտածողության ձևավորմանը:

Պարոն Մելիքյանը աշխատասեր, պրպտող մասնագետ է, երբեք չի բավարարվում իմացածով և ձգտում է հարստացնել գիտելիքները:

Մուշեղ Մելիքյանը լավ հոգեբան է: Կարողանում է հրապուրել, հմայել աշակերտներին իր մաքուր, գրական հայերենով, արտիստական խառնվածքով: Աշխատասիրության, ընկերասիրության, ճշտակատարության, մարդկային անբասիր խառնվածքի շնորհիվ Մուշեղ Աշոտի Մելիքյանը վայելում է գործընկերների, աշակերտների և ծնողական հասարակայնության հարգանքն ու համակրանքը:

Դպրոցի տնօրեն՝ (ստորագրություն) Հ. Կարապետյան
Արհկոմի նախագահ՝ (ստորագրություն) Գ. Սերոբյան

20 դեկտեմբերի 1999թ.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան միջնակարգ դպրոցի
տնօրեն պարոն Հ. Կարապետյանին

Նույն դպրոցի X դասարանի աշակերտ Արա Պետրոսյանից

Բացատրագիր

Ես՝ Արա Գևորգի Պետրոսյանս, սույն թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացել եմ դպրոց դասերս պատրաստ և բարձր տրամադրությամբ: Երրորդ ժամից հետո սկսեցի վատ զգալ, և քանի որ դասղեկս դպրոցում չէր, առանց որևէ մեկին տեղյակ պահելու գնացի տուն: Երկու օր պառկած եմ եղել բարձր ջերմությամբ: Այսպիսով, բացակայել եմ հիվանդ լինելու պատճառով:

Ա. Պետրոսյան

13 հոկտեմբերի 1999թ.

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մուշեղ Աշոտի Մելիքյանը (ծնված 1973 թվականին Երևանում՝ ծառայողի ընտանիքում) 1998թ. զինվորական ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի Երևանի թիվ 119 դպրոցը որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Աշխատանքային գործունեության ընթացքում Մուշեղ Մելիքյանն իրեն դրսևորել է իբրև հմուտ մասնագետ և մանկավարժ: Գերազանց տիրապետում է առարկային, այն մատուցում գիտականորեն և հետաքրքիր հնարքներով: Մուշեղ Մելիքյանը դասի ընթացքում հմտորեն փոխկապակցում է լեզուն և գրականությունը, որի շնորհիվ մատուցվող նյութը դառնում է հյութեղ և հուզական: Նա ձգտում է դասն այնպես վարել, որ աշակերտները մտածեն և կատարեն ինքնուրույն եզրահանգումներ: Երիտասարդ ուսուցիչը վարպետորեն թև է տալիս սովորողների ստեղծագործական մտքին, նպաստում նրանց մտածողության ձևավորմանը:

Պարոն Մելիքյանը աշխատասեր, պրպտող մասնագետ է, երբեք չի բավարարվում իմացածով և ձգտում է հարստացնել գիտելիքները:

Մուշեղ Մելիքյանը լավ հոգեբան է: Կարողանում է հրապուրել, հմայել աշակերտներին իր մաքուր, գրական հայերենով, արտիստական խառնվածքով: Աշխատասիրության, ընկերասիրության, ճշտակատարության, մարդկային անբասիր խառնվածքի շնորհիվ Մուշեղ Աշոտի Մելիքյանը վայելում է գործընկերների, աշակերտների և ծնողական հասարակայնության հարգանքն ու համակրանքը:

Դպրոցի տնօրեն՝ (ստորագրություն) Հ. Կարապետյան
Արհկոմի նախագահ՝ (ստորագրություն) Գ. Սերոբյան

20 դեկտեմբերի 1999թ.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Երևանի Բենիամին Ժամկոչյանի անվան միջնակարգ դպրոցի
տնօրեն պարոն Հ. Կարապետյանին

Նույն դպրոցի X դասարանի աշակերտ Արա Պետրոսյանից

Բացատրագիր

Ես՝ Արա Գևորգի Պետրոսյանս, սույն թվականի հոկտեմբերի 10-ին ներկայացել եմ դպրոց դասերս պատրաստ և բարձր տրամադրությամբ: Երրորդ ժամից հետո սկսեցի վատ զգալ, և քանի որ դասղեկս դպրոցում չէր, առանց որևէ մեկին տեղյակ պահելու գնացի տուն: Երկու օր պառկած եմ եղել բարձր ջերմությամբ: Այսպիսով, բացակայել եմ հիվանդ լինելու պատճառով:

13 հոկտեմբերի 1999թ. Ա. Պետրոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

1999 թվականի հունիսի 25-ին տեղի ունեցավ Երևանի թիվ 119 դպրոցի մանկավարժական խորհրդի ժողովը՝ նախագահությամբ Հ.Կարապետյանի, քարտուղարությամբ՝ Շ.Վերդյանի:

Օրակարգ՝

1. 1998-99 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքերի ամփոփում:

Լսեցին՝ դպրոցի տնօրեն Հ.Կարապետյանի զեկուցումը 1998-99 ուստարվա փոխադրական և քննական դասարանների ընթացիկ աշխատանքների և քննությունների արդյունքների մասին:

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին՝

ա) Գ. Եղիազարյանը (տարրական դասարանների ուսմասվար)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)
բ) Մ. Հարությունյանը (դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)
գ) Շ. Վերդյան (հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)

Որոշեցին՝ 1998-99 ուստարում Երևանի թիվ 119 դպրոցի մանկավարժական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝ (ստորագրություն)
Ժողովի քարտուղար՝ (ստորագրություն)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ

1915, 7 - 21 Պետերբուրգ

Մեծարգո Ալեքսեյ Մաքսիմովիչ

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպոյի» թարգմանությունը: Բարի եղեք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ: Թարգմանությունն ուղարկեմ Ձե՞զ, թե՞ գամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե չեք մոռացել այդ): Դուք մտադիր եք այժմ նե՞րածանոթ ... խոստուցք թարգմանությանը: Եթե իմ ներկայությունն անհրաժեշտ համարեք, ես կարող եմ գալ շաբաթ օրը՝ հետս բերելով արդեն պատրաստ ձեռագիրը («Պեպոյի» բառացի թարգմանության): Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում: Այդ գործերը կընտրեմ և կներկայացնեմ թարգմանիչներին:

Ժողովածուի վերաբերյալ մնացած բոլոր հարցերի մասին անձամբ կհայտնեմ Ձեզ:

Վահան Տերյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

1999 թվականի հունիսի 25-ին տեղի ունեցավ Երևանի թիվ 119 դպրոցի մանկավարժական խորհրդի ժողովը՝ նախագահությամբ Հ.Կարապետյանի, քարտուղարությամբ՝ Շ.Վերդյանի:

Օրակարգ՝

1. 1998-99 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքերի ամփոփում:

Լսեցին՝ դպրոցի տնօրեն Հ.Կարապետյանի զեկուցումը 1998-99 ուստարվա փոխադրական և քննական դասարանների ընթացիկ աշխատանքների և քննությունների արդյունքների մասին:

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին

ա) Գ. Եղիազարյանը (տարրական դասարանների ուսմասվար)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)
բ) Մ. Հարությունյանը (դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)
գ) Շ. Վերդյան (հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ)
(գրել ելույթի համառոտ բովանդակությունը)

Որոշեցին՝ 1998-99 ուստարում Երևանի թիվ 119 դպրոցի մանկավարժական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝ (ստորագրություն)
Ժողովի քարտուղար՝ (ստորագրություն)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԱՄԱԿ

1915, 7 - 21 Պետերբուրգ

Մեծարգո Ալեքսեյ Մաքսիմովիչ

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպոյի» թարգմանությունը: Բարի եղեք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ: Թարգմանությունն ուղարկեմ Ձե՞զ, թե՞ գամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե չեք մոռացել այդ): Դուք մտադիր եք այժմ ևե՞թ ծանոթանալ թարգմանությանը: Եթե իմ ներկայությունն անհրաժեշտ համարեք, ես կարող եմ գալ շաբաթ օրը՝ հետս բերելով արդեն պատրաստ ձեռագիրը («Պեպոյի» բառացի թարգմանության): Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում: Այդ գործերը կընտրեմ և կներկայացնեմ թարգմանիչներին:

Ժողովածուի վերաբերյալ մնացած բոլոր հարցերի մասին անձամբ կհայտնեմ Ձեզ:

Վահան Տերյան

ՔԱՂՎԱԾՔ

Երևանի թիվ 119 դպրոցի մանկավարժական խորհրդի 1999թվականի մայիսի 25-ին կայացած ժողովի N 5 արձանագրությունից:

Լսեցին՝ 1998-99 ուսումնական տարվա առաջադիմության և դաստիարակչական աշխատանքների ամփոփումը:

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Գ.Եղիազարյանը, Մ.Հարությունյանը, Շ.Վերդյանը:

Որոշեցին՝ 1998-99 ուստարում դպրոցի մանկավարժական խորհրդի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ժողովի նախագահ՝ Հ. Կարապետյան (առանց ստորագրության)
Ժողովի քարտուղար՝ Գ. Մելքումյան (առանց ստորագրության)

Իսկականի հետ ճիշտ է՝
(քաղվածքը հանձնողի ազգանունն ու ստորագրությունը):

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ռուբեն Արտակի Օհանյանս, ծնվել եմ 1980 թվականին Երևանում՝ մտավորականի ընտանիքում: Հայրս՝ Սմբատ Օհանյանը, աշխատում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Մայրս՝ Ծովինար Օհանյանն ուսուցչուհի է Երևանի թիվ 2 դպրոցում: Քույրս և եղբայրներս դպրոցականներ են:

1987 թվականին ընդունվել և 1996-ին ավարտել եմ մայրաքաղաքի թիվ 71 միջնակարգ դպրոցը: Ուսումնառության տարիներին սովորել եմ գերազանց առաջադիմությամբ, հատուկ հետաքրքրություն եմ ցուցաբերել հումանիտար առարկաների, հատկապես մայրենի լեզվի նկատմամբ: Մասնակցել եմ թատերական խմբակի աշխատանքներին:

1997 թվականին զորակոչվել եմ և ծառայել Տավուշի շրջանի Իջևան քաղաքում: Պարգևատրվել եմ «Մարտական արիության համար» մեդալով:

Սիրում եմ մանկավարժի աշխատանքը և ցանկանում եմ ուսումս շարունակել Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքում:

(ստորագրություն) Ռ.Օհանյան

12 հուլիսի 1999թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 15-ին դպրոցում տեղի կունենա ամանորյա ուրախ դիմակահանդես, որին կմասնակցեն Ձմեռ պապը և Ձյունանուշը: VIII-X դասարանների բոլոր աշակերտների ներկայությունը ցանկալի է:

Աշակերտական խորհուրդ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրատարակվել և արդեն գրախանութներին է հանձնվել Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուն՝ հինգ հատորով:

Տեղեկությունների համար զանգահարել 52 - 13 - 95:

«Ոսկան Երևանցի» տպագրատան
տնօրինություն

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍ

Հարգելի տիկին (պարոն) Օվսաննա Բաբայան

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու Հովհաննես Թումանյանի ստեղծագործությանը նվիրված գրական-երաժշտական երեկոյին, որը տեղի կունենա 1999 թվականի նոյեմբերի 12-ին Անանիա Շիրակացու անվան ճեմարանի մեծ դահլիճում:

Սկիզբը ժամը 13-ին:
Մեր հասցեն՝ Արտեմ Միկոյանի 35: Հեռախոս՝ 64-01-02:

Դպրոցի տնօրինություն

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ

Սիրելինե՛ր, Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ հղում ենք ձեզ մեր շնորհավորանքներն ու սրտագին բարեմաղթանքները: Ցանկանում ենք երջանկությամբ և Աստծո շնորհներով լի տարի: Թող տևական խաղաղություն լինի աշխարհում, և Տիրոջ աջը՝ մեզ հովանի:

Կարոտով՝ Մարինե, Արմենուհի

28 դեկտեմբերի 1999թ.

ԾՆՆԴՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿ

Մեծարգո պարոն Հարությունյան

Շնորհավորում ենք Ձեր ծննդյան տարեդարձը, մաղթում քաջառողջություն, տոկունություն, նորանոր նվաճումներ գիտության անդաստաններում: Ցանկանում ենք, որ երկար տարիներ ապրեք Աստծո օրհնությամբ և հովանավորությամբ՝ ի փառս մեր ազգի և դպրության:

Ուղարկված համեստ նվերը թող լինի Ձեր նկատմամբ մեր սիրո և հարգանքի առհավատչյան:

Խորին ակնածանքով՝ Ձեր նախկին ուսանողներ
Մարինե Ավետիսյան
Համիկ Կարապետյան

23 նոյեմբերի 1999թ.

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻՆ

1902 թ. դեկտեմբերի 4, Աբաս-Թուման

Ազնի՛վ բարեկամ
պ. Ս. Շահազիզ

Ստացա Ձեր թանկագին նամակն Աբովյան - Նազարյան նպաստի չեկի հետ:

Լիասիրտ շնորհակալ եմ Ձեր սրտացավ վերաբերմունքի համար: Ինձ համար միշտ քաղցր է Ձեր բարեկամությունը ու միշտ բարձր` Ձեր խրախուսանքը:

Ինչպես արդեն գիտեք, ես հիվանդ եմ և երրորդ ամիսն է` ապրում եմ Աբաս- Թումանում: Այնինչ սիրտս քաշում է ուրիշ կողմ: Երկար ժամանակ է` չեմ եղել իմ հայրենիքում: Սաստիկ ցանկանում եմ գնալ, շնչել մանկության սիրած վայրերի օդը, ապրել մեր ժողովրդի մեջ:

Եվ առհասարակ ուզում եմ անցնել մեր գավառները, բայց հիվանդությունս կամ ընտանեկան հանգամանքները խանգարում են, ու միշտ հետաձգում եմ:

Այսպիսով, հեռու ենք մնում ու խորթանում մեր երկրին, մեր ժողովրդին, նրա սովորություններին, նրա լեզվին:

Իմ կարծիքով, այս հանգամանքը եղել է մեր բանաստեղծների ամենամեծ դժբախտությունը, մանավանդ մեր նախորդների - Ձեր հանգուցյալ Գամառ Քաթիպայի:

Մենակ տաղանդն ի՞նչ անի. հարկավոր են բարեհաջող պայմաններ:

Այս օրերս դեպք եղավ այդ մասին խոսելու մի նամակում:

Հիրավի, ճակատագրի ինչ տարօրինակ խաղ. հայոց բանաստեղծներն ընկնում են հյուսիս ու Կովկասը կարոտելով երգում են օտար աղջիկն ու օտար վայրերը, իսկ ռուս բանաստեղծներին բախտը հալածում է Կովկաս, և այս հալածականները երգում են Կովկասի սարերն ու ժողովրդին:

Գալով իմ գրքի տպագրությանը` պետք է ասեմ, որ իշխանուհին և նրա հետ իմ մի երկու մոտիկ բարեկամները իզուր են գործը այդքան մեծացրել: Ես նրանց խնդրել էի, որ այդ խնդիրը առայժմ թողնեն: Մեկ` որ ձեռքիս գրվածքներ ունիմ, որ դեռ չեն վերջացած, երկրորդ` ինքնըստինքյան այնքան մեծ բան չի լինելու, որ արժենար դիմումներ անել տպագրության համար, քանզի, նրանց հակառակ, ես չեմ ուզում վերատպել իմ եռախայրիքները: Պատանեկան անփորձ գործեր են և ավելի շատ պակասություններ ունեն, քան արժանիքներ:

Մի քանի օրից հետո վերադառնալու եմ Թիֆլիս: Եթե դեպք լինի ինձ նամակ գրելու, խնդրում եմ դրկեք այս հասցեով. Тифлис Бебутовск. 50: Խմբագրատանը շատ անգամ մոռացմամբ նամակը մնում է երկար ժամանակով ընկած:

Ձեր անձնվեր`
Հովհաննես Թումանյան

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻՆ

1902 թ. դեկտեմբերի 4, Աբաս-Թուման

Ազնի՛վ բարեկամ
պ. Ս. Շահազիզ

Ստացա Ձեր թանկագին նամակն Աբովյան - Նազարյան նպաստի չեկի հետ:

Լիասիրտ շնորհակալ եմ Ձեր սրտացավ վերաբերմունքի համար: Ինձ համար միշտ քաղցր է Ձեր բարեկամությունը ու միշտ բարձր՝ Ձեր խրախուսանքը:

Ինչպես արդեն գիտեք, ես հիվանդ եմ և երրորդ ամիսն է՝ ապրում եմ Աբաս- Թուման: Այնինչ սիրտս քաշում է ուրիշ կողմ: Երկար ժամանակ է՝ չեմ եղել իմ հայրենիքում: Սաստիկ ցանկանում եմ գնալ, շնչել մանկությանս սիրած վայրերի օդը, ապրել մեր ժողովրդի մեջ:

Եվ առհասարակ ուզում եմ անցնել մեր գավառները, բայց հիվանդությունս կամ ընտանեկան հանգամանքները խանգարում են, ու միշտ հետաձգում եմ:

Այսպիսով, հեռու ենք մնում ու խորթանում մեր երկրին, մեր ժողովրդին, նրա սովորություններին, նրա լեզվին:

Իմ կարծիքով, այս հանգամանքը եղել է մեր բանաստեղծների ամենամեծ դժբախտությունը, մանավանդ մեր նախորդների - Ձեր հանգուցյալ Գամառ Քաթիպայի:

Մենակ տաղանդն ի՞նչ անի. հարկավոր են բարեհաջող պայմաններ:

Այս օրերս դեպք եղավ այդ մասին խոսելու մի նամակում:

Հիրավի, ճակատագրի ինչ տարօրինակ խաղ. հայոց բանաստեղծներն ընկնում են հյուսիս ու Կովկասը կարոտելով երգում են օտար աղջիկն ու օտար վայրերը, իսկ ռուս բանաստեղծներին բախտը հալածում է Կովկաս, և այս հալածականները երգում են Կովկասի սարերն ու ժողովրդին:

Գալով իմ գրքի տպագրությանը՝ պետք է ասեմ, որ իշխանուհին և նրա հետ իմ մի երկու մոտիկ բարեկամները իզուր են գործը այդքան մեծացրել: Ես նրանց խնդրել էի, որ այդ խնդիրը առայժմ թողնեն: Մեկ՝ որ ձեռքիս գրվածքներ ունիմ, որ դեռ չեն վերջացած, երկրորդ՝ ինքնըստինքյան այնքան մեծ բան չի լինելու, որ արժենար դիմումներ անել տպագրության համար, քանզի, նրանց հակառակ, ես չեմ ուզում վերատպել իմ եթախայրիքները: Պատանեկան անփորձ գործեր են և ավելի շատ պակասություններ ունեն, քան արժանիքներ:

Մի քանի օրից հետո վերադառնալու եմ Թիֆլիս: Եթե դեպք լինի ինձ նամակ գրելու, խնդրում եմ ղրկեք այս հասցեով. Тифлис Бебутовск. 50: Խմբագրատանը շատ անգամ մոռացմամբ նամակը մնում է երկար ժամանակով ընկած:

Ձեր անձնվեր՝
Հովհաննես Թումանյան

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿԻ ՆՄՈՒՇ

Սիրելի՛ Անուշ և Անդրանիկ

Ուրախ ենք, որ ձեր փոխադարձ սերը պսակվեց երջանիկ ամուսնությամբ: Ցանկանում ենք, որ ձեզ կապող անարատ զգացմունքները հարատևեն և հիմքը դնեն մի լավ, ամուր հայկական օջախի: Ավելի դիպուկ ո՞վ կարող է ասել, եթե ոչ ժողովուրդը. «Մեկ բարձի ծերանաք»:

Անկեղծ սիրով՝ Սերոբյանների ընտանիք

10 հունվարի 2000թ.

ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԻ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՑԻԿԻ ՆՄՈՒՇ

Սուրբ Զատիկի առթիվ ավետում ենք Ձեզ հարությունը Քրիստոսի:
Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Ձեր՝ Մարիամ Հակոբյան

10.04.99թ.

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԵՐԿՏՈՂԻ ՆՄՈՒՇ

Սիրելի՛ Վահրամ, Հովհաննես, Անահիտ

Խոր վշտով, սրտի անհուն կսկիծով իմացանք Սրբուհի մայրիկի անժամանակ մահը: Աղոթում ենք նրա հոգու հանգստության համար և Ձեզ՝ նրա հարազատներին, մաղթում մխիթարություն և սփոփանք: Համոզված եղեք, որ հանդերձ ընտանյոք մասնակցում ենք Ձեր վշտին:

Խորին հարգանքով՝ Ստեփանյանների ընտանիք

18 հոկտեմբերի 1999թ.

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԻ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԵՐԿՏՈՂԻ ՆՄՈՒՇ

Մեծարգո՛ Արմենակ, Հայկ, Մուշեղ, Սոնա

Ես և զավակներս խորապես զգացված ենք մեր սիրեցյալ պապիկի մահվան կապակցությամբ Ձեր ցուցաբերած սրտագին վերաբերմունքից: Ձեր մխիթարական խոսքերն ու աղոթքները ծանր վշտի պահին ամոքեցին մեզ: Մեծապես երախտապարտ ենք Ձեր վշտակցության համար:

Խորին հարգանքով՝ Վարդանյանների ընտանիք

25 հոկտեմբերի 1999թ.

ՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Անծանոթ կնոջը, աղջկան - տիկին, օրիորդ
Անծանոթ տղամարդուն - պարոն, երիտասարդ

Հանրապետության նախագահին - Ձերդ գերազանցություն, պարոն նախագահ
Հանրապետության վարչապետին -- պարոն վարչապետ
Նախարարին - պարոն նախարար

Ուսուցչին - պարոն ....
Ուսուցչուհուն - տիկին ......

Կաթողիկոսին - Վեհափառ տեր (նամակ գրելիս՝ Նորին սուրբ օծություն
Տեր Տեր ....)

Պատրիարքին - ամենապատիվ տեր
Արքեպիսկոպոսին - գերաշնորհ տեր
Եպիսկոպոսին - սրբազան
Վարդապետին - հայր սուրբ
Քահանային - տեր հայր
Սարկավագին - եղբայր

ՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Անծանոթ կնոջը, աղջկան - տիկին, օրիորդ
Անծանոթ տղամարդուն - պարոն, երիտասարդ

Հանրապետության նախագահին - Ձերդ գերազանցություն, պարոն նախագահ
Հանրապետության վարչապետին -- պարոն վարչապետ
Նախարարին - պարոն նախարար

Ուսուցչին - պարոն ....
Ուսուցչուհուն - տիկին ......

Կաթողիկոսին - Վեհափառ տեր (նամակ գրելիս՝ Նորին սուրբ օծություն
Տեր Տեր ....)

Պատրիարքին - ամենապատիվ տեր
Արքեպիսկոպոսին - գերաշնորհ տեր
Եպիսկոպոսին - սրբազան
Վարդապետին - հայր սուրբ
Քահանային - տեր հայր
Սարկավագին - եղբայր

ՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Անծանոթ կնոջը, աղջկան - տիկին, օրիորդ
Անծանոթ տղամարդուն - պարոն, երիտասարդ

Հանրապետության նախագահին - Ձերդ գերազանցություն, պարոն նախագահ
Հանրապետության վարչապետին -- պարոն վարչապետ
Նախարարին - պարոն նախարար

Ուսուցչին - պարոն ....
Ուսուցչուհուն - տիկին ......

Կաթողիկոսին - Վեհափառ տեր (նամակ գրելիս՝ Նորին սուրբ օծություն
Տեր Տեր ....)

Պատրիարքին - ամենապատիվ տեր
Արքեպիսկոպոսին - գերաշնորհ տեր
Եպիսկոպոսին - սրբազան
Վարդապետին - հայր սուրբ
Քահանային - տեր հայր
Սարկավագին - եղբայր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Անի քաղաքը 13
Սարգիս Պիծակ 14
Դավիթ Անհաղթ 15
1. Իմաստուն Մանուկը 16
2. Իմաստուն Մանուկը 17
Լեզուն և ատամները 19
Թե ինչպես ուղտը դարձավ սապատավոր 20
Երախտամոռ առյուծը 21
Գորշ մկնիկը 22
Մոլախոտը 23
Արևի ծաղիկը 24
Մայրիկի ծաղիկը 25
Թիթեռնիկը 26
Հրաշք ծառը 27
Սոխակն ու ագռավը 28
Երգչախումբ 29
Խելացի դատավորը 30
Էշը և գիտնականները 31
Կատարված ուխտը 32
Ծույլ ծառան 33
Թուլնը 34
Բարեպաշտ մարդը 35
Արջառոս 36
Միայն մի մարդ 37
Կրիան 38
Մայրը 39
Արծիվները 40
Փիղը 41
Գուշակները 42
Թութակը 43
Որտեղ է ծնվում ձյունը 44
Ծաղկի գաղտնիքը 45
Նոր տարին սոճյաց անտառում 46

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Անի քաղաքը 13
Սարգիս Պիծակ 14
Դավիթ Անհաղթ 15
1. Իմաստուն Մամուկը 16
2. Իմաստուն Մամուկը 17
Լեզուն և ատամները 19
Թե ինչպես ուղտը դարձավ սապատավոր 20
Երախտամոռ առյուծը 21
Գորշ մկնիկը 22
Մոլախոտը 23
Արևի ծաղիկը 24
Մայրիկի ծաղիկը 25
Թիթեռնիկը 26
Հրաշք ծառը 27
Սոխակն ու ագռավը 28
Երգչախումբ 29
Խելացի դատավորը 30
Էշը և գիտնականները 31
Կատարված ուխտը 32
Ծույլ ծառան 33
Թույնը 34
Բարեպաշտ մարդը 35
Արջառս 36
Միայն մի մարդ 37
Կրիան 38
Մայրը 39
Արծիվները 40
Փիղը 41
Գուշակները 42
Թութակը 43
Որտեղ է ծնվում ձյունը 44
Ծաղկի գաղտնիքը 45
Նոր տարին սոսյաց անտառում 46

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Սասունցի Դավիթ և Խանդութ խանում 47
Տրդատ 49
Ճերմակաձին Թող գինի խմի 50
Մարդն անմահ է գործով 51
Վանի ջրանցքը 52
Քարի վկայությունը 53
Մի փոքրիկ սուտ 54
Ծաղկուն պարտեզ 56
Աստղերով սայլը 57
Ավգյան ախոռներ 59
Վաչագան 60
Լուսնի ծաղիկը 61
Գետն ու Թուչնակը 62
Ընկույզն ու զանգակատունը 63
Մայր Հավալուսնը 64
Թագավորը մերկ է 65
Օձամանուկ 66
Վաճառականի խիղճը 68
Խեղճ Հնակարկատը 69
Խրտվիլակը 70
Միդաս Թագավորը 71
Աղոթք 73
Մայրը 74
Արծիվը 75
Թութակի վիշտը 77
Եղնիկները 78
Ի՞նչ են քչփչում խեցգետինները 80
Կապիկները 81
Սուրբ Էլմայի կրակները 82
Աֆրոդիտեի արձանը 84
Մտքի բուրմունքը 85

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Նոյ նահապետ 87
Գեղարդավանք 88
Գողը 90
Խոսքի ուժը 91
Թորոս Ռոսլին 93
Կոմիտասը Փարիզում 94
Մարկ Տվեն 95
Շահ - Աբասն ու հայը 97
Գինի 98
Կույր խաբեբան 99
Կարապը 100
Վախի աչքերը մեծ են 101
Դափնե 102
Սիզիփոսյան աշխատանք 103
Ոտքը գետնին խփող Թիթեռնիկը 105
Հիմարի հետ գործ մի՛ բռնիր 106
Բարի ձկնորսը 107
Փառասեր եղջերուն 109
Շունը 110
Մայր արջը 112
Մայրը 113
Հպարտ գեղեցկուհին 114
Առաջարկություն 116
Նավաբեկություն 117
Տոբիչեկյան դատարկություն 119
Գյուտը 120
Խաղ երեխաների համար 122
Հիմնալի ժամացույցը 123
Հասարակական հակիչը 125

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հողի բույրը 127
Արշակ և Շապուհ 129
Արշակ և Դրաստամատ 130
Ամենալավ խոսքը 132
Ամենագետ մարդը 134
Երեք խրատ 136
Կոլիբրին 137
Ոսկին և ցորենը 139
Վիշապը 141
Ոսկի ուղեղը 143
Օրփեոս և Եվրիդիկե 144
Ժողովրդի սիրելին 146
Վենետիկի վաճառականը 148
Դանայան տակառ 150
Մարդու աչքը 152
Երկնքի զանգակը 153
Զորեքշաբթի օրվա մանուշակները 155
Անձնվեր բարեկամը 156
Սոխակն ու վարդը 158
Տրդատ և Նազենիկ 160
Սպասում 162
Խուպոտ ձայնով Հայը 164
Վերջին տերևը 166
Զարդը 168
Դեղ սիրո 169
Արյունոտ մատյանը 172
Երեք Հաստլիկ կանայք 174
Նավաստին 176
Մի քիչ կանաչ 177
Պրոֆեսորը 177
(անվերնագիր) 179
Մենամարտ 180
Կապիկը 182

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հողի բույրը 127
Արշակ և Շապուհ 129
Արշակ և Դրաստամատ 130
Ամենալավ խոսքը 132
Ամենագետ մարդը 134
Երեք խրատ 136
Կոլիբրին 137
Ոսկին և ցորենը 139
Վիշապը 141
Ոսկի ուղեղը 143
Օրփեոս և Եվրիդիկե 144
Ժողովրդի սիրելին 146
Վենետիկի վաճառականը 148
Դանայան տակառ 150
Մարդու աչքը 152
Երկնքի զանգակը 153
Զորեքշաբթի օրվա մանուշակները 155
Անձնվեր բարեկամը 156
Սոխակն ու վարդը 158
Տրդատ և Նազենիկ 160
Սպասում 162
Խուլ ու ձայնով Հայը 164
Վերջին տերևը 166
Ջարդը 168
Դեղ սիրո 169
Արյունոտ մատյանը 172
Երեք հաստլիկ կանայք 174
Նավաստին 176
Մի քիչ կանաչ 177
Պրոֆեսորը 177
(անվերնագիր) 179
Մենամարտ 180
Կապիկը 182

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հայկ և Բել 183
Հայոց հնագույն մայրաքաղաքը 185
Երկնէր երկիր 187
Շահանդուխտ 189
Իմաստուն Թագուհին 190
Հայերենի առաջին ուսուցիչը 192
Օշականի սուրբ ննջեցյալը 193
Դավիթ Անհաղթ 195
Զրույց ամենազոր սրբի մասին 197
Հեքիաթ երգի մասին 199
Գործն մնա հիշատակող 201
Զվարթնոց 203
(անվերնագիր) 205
Երջանիկ արքայազնը 207
Վանդակում երգել չի լինի 209
Անմահության դատապարտվածը 211
Մաթեո Ֆալկոնե 213
Ի փառս ճերմակաձիույն 216
Սամսոն և Դալիլա 218
Մոռանալ Հերոստրատին 219
Արդար վրեժի ոգին 222
Հարության հավատը 224
Սոսե 226
Տարագիր սպարապետը 228
Դանկոյի սիրտը 230
Պրոմեթևս 231
Արյան կանչով 233
Ազգային երգը 235
Ալմաստե գահը 236
Զղջում 238
Շան պատմածը 239
Մուլթիկ Ֆրեդին 242
Շչացող սկյուռը 244
Բոցարիս 245
Ուշինարա 248
Ծննդյան տոների նվերը 249
Զաբուղոն 251
Նեղ օրվա ընկերը 253
Գրազը 255
Կյանքի սերը 257
Կամակոր կնոջ սանձահարումը 259

Կարմրամորթ տաշնորդի փրկագինը 261
Չրհորի մոտ 263
Ստեղծագործական հավելումներով փոխադրություն 265
Տունը 267
Հոր Երանելու վարքը 269
Հուդա 270
Անառակ որդու վերադարձը 271
Չախու 1 273
Նարգիզ 274
Եղեք ողջախոհ 277
Էսպես չի մնա 278

ԱՎԱԳ ԴԴՐՈՑ

Պատգամ 281
Արտավազդ և Կլեոպատրա 285
Քարեղեն երգ 287
Մեծ Հավատի Նախերգանքը 290
Խորհուրդ խորին 292
Պարույր Հայկազն 294
Անմահ հիշատակ թողուլ զայս քեզ 297
Մրմունջ առ գեղեցկություն 300
Ո՞վ զարմանալի 306
Կարոտ 309
Հեքիաթ լեռան և լեզվի մասին 311
Արդարության մունետիկը 314
Կրակապաշտական օծում 317
Սիրո օրենքը 320
Մագաղաթյա հսկան 322
Հայ մուկը 325
Մխիթարյան հայրերի ողդեգիրը 331
Արծվի մահը 334
Սպարապետի վերադարձը 339
Արդյոք ապրո՞ւմ է, թե մեռել է նա 342
Ջվածև դիմանկարը 344
Հայազգի օտարը 345
Մի գիշերվա հանճարը 347
Համդիպում ճակատագրի հետ 350
Աֆրոդիտե և Պիգմալիոն 354
Ռեքվիեմ 359
Օթելլոյի թիկնոցը 366
Սուսերով պարը 369
Կախարդական հնչյունների արքան 375
Անլռելի զանգակատուն (հատված) 377
Հայրենիքի ուժը 386
Ջութակով սատանան 389
Երկու աստված 391
Մեդեա 393
Արքայի կինը 395
Հարսիկը 397
Լավագույն գնորդը 399
Հերետիկոսի թիկնոցը 402
Կրակոց 404
Կանաչ ծոցատետրը 406
(անվերնագիր) 408

Ակամա մատնիչը 410
Ազատության քրմուհին 413
Ձայն 415
Երգ երգոց 417
Լամպը վառվում է ողջ գիշեր 419
Երկու անբաժան սիրտ 423
Հոգատար բարեկամը 427
Տարվա եղանակները 429
Հին ամրոցը 430
Վերջին պատարագը 431
Կյանքի չափանիշը 436
Հական 438
Հարազատի սերը 445
Գազանանոցի քմահաճ բնակիչը 447
Մեղա՛, տե՛ր 449
Քրիստոսի պատվիրանները 451
Եղի՛ր ներողամիտ 453
Թագավորի նոր հագուստը 454
Ստեղծագործական փոխադրություն 457

Գործնական գրություններ 459

ՌՈՒԲԻՆԱ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ
ԹԱՄԱՐ ԿԱՐԱՊԵՏԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

IV-X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

НАЗАРЯН РУБИНА ХРИСТОФОРОВНА
АЛЕКСАНЯН ТАМАР КАРАПЕТОВНА

СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ИЗЛОЖЕНИЙ
(ДЛЯ IV-X КЛАССОВ)

Հրատարակչության տնօրեն՝ ՍՈԿՐԱՏ ՇԱՀՈՒՄԻ ՄԿՐՏՉՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝ ՄԱՇԱ ՎԱՐԴԳԵՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ ՆՈՒՆԵ ՌԱՖԻԿԻ ՄԱԿԱՐՅԱՆ
Կազմի ձևավորող՝ ԷՄԻՆ ՍՈԿՐԱՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳԻ ԳՅՈԴԱԿՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 70x100/16
Ծավալը՝ 30 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000
Գինը՝ պայմանագրային

«ԶԱՆԳԱԿ-97» հրատարակչություն,
Երևան, Վարդանանց փակուղի 8: Հեռ. 54-05-17
«Զանգակ-97» հրատարակչության տպարան
E-mail: zangak@arminco.com

12817
3.000

Ճանաչել զիմաստութիւն
և զխրատ, իմանալ
զբանս հանճարոյ:

ՌՈՒԲԻՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ
ԹԱՄԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ